

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

ՀԱՏՈՐ XIII

ԵՐԵՎԱՆ
2021

ՀՏԴ 347.992

ԳՄԴ 67.410

Հ 247

Կազմողներ՝

Աշխեն Ղարսյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության պետ,
իրավագիտության թեկնածու

Օքսանա Դիլբանդյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ

Սուրեն Գևորգյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ

Սոնա Եսայան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական
փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ

Հ 247 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ: ՀՈՒՆՎԱՐ-
ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019, ՀԱՏՈՐ XIII.- Եր.: «ԹԱՄԿ» ՍՊԸ, 2021.- 830 էջ:

ՀՏԴ 347.992

ԳՄԴ 67.410

ISBN 978-9939-1-1273-2

© Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, 2021

Partnership for Good Governance Գործընկերություն հանուն լավ կառավարման



Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով 2019 թվականի որոշումների ընտրանու տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) ծրագրային ձևաչափի շրջանակներում համաֆինանսավորվող «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագրի ֆինանսական աջակցությամբ: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով 2019 թվականի որոշումների ընտրանիում ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում կողմերի պաշտոնական տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (այսուհետ նաև՝ ԵԴԽԽ) «Արդարադատության և հասարակության մասին» 2005 թվականի թիվ 7 կարծիքի շրջանակներում ԵԴԽԽ-ն, քննարկելով դատարանների դերը ժողովրդավարական հասարակությունում, արձանագրել է, որ «Արդարադատությունը ժողովրդավարական հասարակության առանցքային բաղադրիչն է: Արդարադատության միջոցով փորձ է արվում լուծելու կողմերի միջև ծագած վեճերը, իսկ արդարադատության արդյունքում կայացրած որոշումների միջոցով՝ իրականացնելու թե՛ «կարգավորիչ» և թե՛ «կրթական» գործառույթ՝ քաղաքացիներին ուղղորդելով, տրամադրելով տեղեկություններ և նրանց մեջ ձևավորելով համոզվածություն օրենքի և դրա գործնական կիրառման հարցում»:

Վճռաբեկ դատարանն իր սահմանադրական գործառույթների շրջանակներում դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Արդյունքում վճռաբեկ բողոքների քննության և լուծման կապակցությամբ կայացվում են որոշումներ, որոնք ոչ միայն էական նշանակություն ունեն տվյալ գործով իրավական վեճի լուծման, գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առումով, այլև այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ուղենիշային նշանակություն ունեն նույնանման փաստերով այլ գործերով արդարադատություն իրականացնելիս: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն իր առանձնահատուկ գործունեությամբ ապահովում է կանխատեսելի արդարադատության գործընթացը, նպաստում է Հայաստանի Հանրապետության նախադեպային մշակույթի կայացմանը և զարգացմանը, ինչպես նաև իր նախադեպային որոշումներով խթանում է հանրության իրավական գիտակցության աստիճանի բարձրացմանը:

Վերոշարադրյալը վկայում է այն մասին, որ Վճռաբեկ դատարանի որոշումների թե՛ «կարգավորիչ» և թե՛ «կրթական» գործառույթը հնարավոր է ապահովել միայն հանրության լայն շրջանակներին իրագեղելու պայմաններում: Հետևապես, Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների հասանելիությունն ու մատչելիությունն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն, քանի որ այն նպաստում է իրավագիտակցության զարգացմանը, իրավակիրառ հանրության գործունեության արդյունավետության և դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը՝ ապահովելով իրավական որոշակիությունը և արդարադատության կանխատեսելիությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանու շարունակական դարձած հրատարակումը նպատակ է հետապնդում առավել ապահովել Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների, ինչպես նաև դատարանի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հասարակության լայն զանգվածներին՝ այդ կերպ ապահովելով նաև Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2005 թվականի թիվ 7 կարծիքում մատնանշված նպատակների իրագործումը:

2020 թվականի մարտահրավերների՝ համավարակի և պատերազմի պայմաններում Վճռաբեկ դատարանն անխոնջ կատարել է իր սահմանադրական առաքելությունը՝ ապահովելով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնելով մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Չնայած

առկա դժվարություններին՝ Վճռաբեկ դատարանը շարունակել է իրականացնել ոչ միայն իր արդարադատական գործառնությունները, այլ նաև արդյունավետ կերպով իրականացրել է ավանդույթ դարձած այլ գործողությունները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի աշխատակազմը 2020 թվականի ընթացքում զբաղվել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2019 թվականի որոշումների ընտրանու կազմման և հրապարակման աշխատանքներով: Իհարկե, 2020 թվականի դժվարությունները հնարավորություն չտվեցին, որպեսզի ընտրանին լույս տեսնի ավելի վաղ, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը շարունակում է տարիներ շարունակ ձգվող ավանդույթը և հանրության դատին է ներկայացնում արդեն իրավաբանական համայնքի կողմից սպասելի դարձած հերթական հատորյակը:

2019 թվականի որոշումների ընտրանում ներկայացված են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 2019 թվականի ընթացքում կայացված քաղաքացիական, վարչական և սնանկության գործերով արժեքավոր որոշումները և հատուկ կարծիքները (ընդ որում, ինչպես եզրափակիչ, այնպես էլ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման արդյունքում կայացված): Որոշումները ներկայացվում են համակարգված եղանակով՝ ըստ համապատասխան որոշման հիմքում ընկած վիճելի իրավահարաբերության, ինչն իրավաբանական համայնքի համար առավել դյուրին է դարձնում որոշումների որոնման գործընթացը: Ընտրանին ունի նաև որոշումների համառոտագրման բաժին, որի շնորհիվ ընթերցողը կարողանում է համառոտ պատկերացում կազմել, թե որոշումն ինչ իրավական հարցի է վերաբերել, և Վճռաբեկ դատարանն ինչ իրավական վերլուծություն է կատարել: Իհարկե Վճռաբեկ դատարանի ցանկացած որոշման պետք է ծանոթանալ ամբողջությամբ՝ վիճելի իրավահարաբերության և տվյալ գործի փաստական հանգամանքները և ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը լիարժեք հասկանալու համար, սակայն համառոտագրումներն օգնում են, որպեսզի կոնկրետ կարիքն առաջանալու պահին անձն առավել հեշտությամբ կարողանա գտնել իրեն անհրաժեշտ որոշումը:

Հուսով եմ, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների հերթական՝ թվով տասներեքերորդ ընտրանին դարձյալ կդառնա իրավաբանների գրադարանի անբաժանելի մասը և դատավորների սեղանի ամենօրյա գիրքը: Վստահ եմ, որ ընտրանին կօգնի ավելի որակյալ դարձնել կատարվող իրավական վերլուծությունները:

Միաժամանակ ուրախ եմ, որ Վճռաբեկ դատարանի ընտրանիները դարձել են նաև Հայաստանի տարբեր իրավաբանական բուհերի գրադարանների բաղկացուցիչ մասը և օգնում են դասընթացները դարձնել ավելի գործնական, հնարավորություն են տալիս ուսանողներին ծանոթանալ բարձրագույն դատական ատյանի դիրքորոշումներին, որոնք հաճախ հիմք են ստեղծում գիտական հետազոտություն իրականացնելու համար: Վստահ եմ, որ այս ժողովածուն նույնպես դառնալու է ուսանողների ամենապահանջված գրքերից մեկը:

Համոզված եմ, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2019 թվականի որոշումների ընտրանին ևս դասվելու է իրավաբանների կողմից հաճախ ընթերցվող մասնագիտական գրականության շարքին:

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 13

Հունվար-դեկտեմբեր 2019

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ
(ԵԶՐԱՓԱԿԻՉ) ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| | |
|--|------------|
| Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ | 1 |
| Հողի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները | 1 |
| Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը | 12 |
| Հայցային վաղեմություն | 26 |
| Պայմանագրերից ծագող պարտավորություններ | 78 |
| Վարձակալություն | 78 |
| Վարկ | 88 |
| Վնաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքներով ծագած պարտավորություններ | 97 |
| ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ | 111 |
| ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ | 135 |
| Ծաղկների ալիմենտային պարտավորությունները | 135 |
| Երեխաների իրավունքները | 176 |
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ | 189 |
| ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ | 215 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| Ինքնաբացարկը և բացարկը | 310 |
| Ապացուցումը | 320 |
| Դատական նիստի ընդհանուր կանոնները | 356 |
| Վարույթի ավարտն առանց գործն ըստ էության լուծելու | 364 |
| Օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը | 378 |
| Վարույթը վերաքննիչ դատարանում | 385 |

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

| | |
|----------------------------------|-----|
| Վարչական պատասխանատվություն..... | 400 |
| Հարկային իրավունք..... | 432 |
| Մաքսային իրավունք..... | 518 |

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|-----------------------|-----|
| Դատական ծախսերը | 568 |
|-----------------------|-----|

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

| | |
|---|-----|
| Դատական ծանուցումները: Դատավարական փաստաթղթերն ուղարկելու (հանձնելու) կարգը..... | 580 |
| Դատական ծախսերը | 590 |
| Վարույթը վերաքննիչ դատարանում | 617 |

| | |
|--------------------|-----|
| ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ | 649 |
|--------------------|-----|

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

| | |
|---|-----|
| Վարչական դատավարության մասնակիցները..... | 657 |
| Դատավարական ժամկետները | 665 |
| Դատական ծախսերը | 678 |
| Դատական ծանուցումները: Դատավարական փաստաթղթերն ուղարկելու (ներկայացնելու) կարգը..... | 686 |
| Վարույթը վարչական դատարանում..... | 695 |
| Վարույթը վերաքննիչ դատարանում..... | 725 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հողի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները

04.07.2019թ.

1. Երևան համայնքն ընդդեմ «Օդին» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/5085/02/16

էջ

1-11

Խնդիր. Արդյո՞ք կառուցապատման իրավունքի օտարման դեպքում գնորդին են փոխանցվում նաև այդ իրավունքի նախկին իրավատիրոջ կողմից կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նախ և առաջ քացահայտել է կառուցապատման իրավունքի բովանդակությունը՝ արձանագրելով, որ այդ իրավունքը կրող անձը հնարավորություն է ստանում այլ անձի սեփականությունը համարվող հողամասի վրա կատարելու որոշակի գործողություններ, մասնավորապես՝ կառուցելու շենքեր և շինություններ, դրանք վերակառուցելու կամ քանդելու: Կառուցապատման իրավունք ունեցող անձին տրված է նաև իրավունք տնօրինելու կառուցապատման իրավունքը, այսինքն՝ այդ իրավունքը փոխանցելու այլ անձի, ազատորեն օտարելու, գրավ դնելու, ինչպես նաև կատարելու այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: Միաժամանակ կառուցապատման իրավունք ունեցող անձին տրված իրավունքներին զուգահեռ նրա վրա դրված են որոշակի պարտականություններ, այդպիսիք են, օրինակ, կառուցապատման իրավունքի դիմաց որոշակի վարձավճար վճարելու պարտականությունը, շենքեր և շինություններ կառուցելիս, դրանք վերակառուցելիս կամ քանդելիս քաղաքաշինական տրամերի ու կանոնների, ինչպես նաև հողամասի նշանակության պահանջների պահպանման պարտականությունը և այլն:

Անդրադառնալով պետության կամ համայնքների հողերը կառուցապատման իրավունքով տրամադրելու դիմաց տրվող վարձատրությանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ պետության կամ համայնքի հողերի նկատմամբ կառուցապատման իրավունք ձեռք բերած անձը կրում է պարտականություն վճարելու վարձավճար, որի չափը չի կարող պակաս լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից, ընդ որում՝ եթե այդ հողերի նկատմամբ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ պայմանագիրը չի պարունակում վճարի չափի վերաբերյալ պայման, ապա նման պայմանագիրը համարվում է չկնքված:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ պայմանագրի հիման վրա կառուցապատման իրավունք ձեռք բերող անձը մի կողմից ունի օրենսդրությամբ տրված իրավունքներ, այն է՝ կառուցելու շենքեր և շինություններ, դրանք վերակառուցելու կամ քանդելու, կառուցապատման իրավունքը տնօրինելու, այսինքն՝ փոխանցելու այլ անձի, ազատորեն օտարելու, այն գրավ դնելու, ինչպես նաև կատարելու այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ և այլն: Մյուս կողմից նա կրում է հողամասի սեփականատիրոջը կառուցապատման իրավունքի համար որոշակի հատուցում տալու պարտականություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ կառուցապատման իրավունքի օտարման արդյունքում առաջացած իրավահարաբերությունների վրա տարածվում են նույն օրենսգրքով սահմանված պարտավորությունների մասին ընդհանուր դրույթները:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ որպես կանոն պարտավորական իրավահարաբերություններում պարտատերն ու պարտապանը մինչև պարտավորության դադարումը մնում են անփոփոխ: Միաժամանակ, օրենսդիրը նախատեսել է մինչև պարտավորության դադարումը պարտավորության մեջ անձանց փոփոխության հնարավորություն: Նման դեպքերում պարտավորական հարաբերություններում անձանց փոփոխությունը հանգեցնում է իրավահաջորդության, այն է՝ իրավունքների և պարտականությունների փոխանցում նոր մասնակցին:

Հիմք ընդունելով վերոնյադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա կառուցապատման

իրավունք ձեռք բերած անձի կողմից այդ իրավունքն օտարելիս տեղի է ունենում իրավահաջորդություն, այսինքն՝ առանց պարտավորությունը դադարելու տեղի է ունենում անձանց փոփոխություն, ուստի իրավունքի փոխանցման հետ միաժամանակ գնորդին են անցնում նույն պայմանագրով ստանձնած նրա պարտավորությունները, այսինքն՝ կառուցապատման իրավունք ձեռք բերած անձի կողմից այդ իրավունքը գնորդին օտարելու արդյունքում գնորդին է փոխանցվում նաև կառուցապատման իրավունք ձեռք բերած անձի՝ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա ծագած իրավունքների և պարտականությունների ամբողջական համալիրը: Այլ կերպ ասած, եթե գնորդը կառուցապատման իրավունքի օտարման պայմանագրով ձեռք է բերում հողամասի կառուցապատման իրավունք, ապա նրան են փոխանցվում նաև կառուցապատման իրավունքի նախկին իրավատիրոջ պարտավորությունները:

Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը

03.07.2019թ.

2. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵՄԳ/0462/02/13

էջ 12-25

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու (վինդիկացիոն) հայցի էական առանձնահատկություններին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցատեսակի բնույթին, արձանագրել է, որ վինդիկացիոն հայցն ունի «դաստիարակող-գզուշացնող» գործառնայթ, որի միջոցով գույքի սեփականատերը հնարավորություն է ձեռք բերում իր գույքը պաշտպանելու ապօրինի տիրապետումից, հետևաբար այն սեփականության իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցներից մեկն է: Սեփականատերը վինդիկացիոն հայցից կարող է օգտվել այն դեպքում, երբ գույքն ապօրինի տիրապետողի մոտ գտնվելու պատճառով զրկված է այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունից: Ընդ որում, հայցի այս տեսակը կարող է հարուցվել միայն այն դեպքում, երբ գույքը առկա է՝ պահպանվում է, և սեփականատերը պահանջում է վերացնել սեփականության իրավունքի խախտումը՝ գույքը բնեղենով իրեն վերադարձնելու միջոցով:

Վինդիկացիոն հայց կարող է հարուցվել բոլոր սեփականատերերի կողմից (ֆիզիկական, իրավաբանական անձինք, պետություն, համայնք և այլն), ինչպես նաև ցանկացած անձանց կողմից, որոնք գույքը տիրապետում են օրենքի կամ պայմանագրի ուժով: Վինդիկացիոն հայց կարող է հարուցվել ցանկացած անձի (ֆիզիկական, իրավաբանական անձ) դեմ, որը գույքը տիրապետում է առանց որևէ իրավական հիմքի:

Վինդիկացիայի միջոցով սեփականատերը, ինչպես նաև գույքի օրինական տիրապետողները ցանկանում են այլ անձի անօրինական տիրապետությունից բնեղենով հետ ստանալ այն գույքը, որի նկատմամբ զրկված են սուբյեկտիվ իրավունքներ իրականացնելու հնարավորությունից: Սեփականատիրոջ իրավունքի պաշտպանության հիմնական նպատակն է իր գույքի վերադարձման միջոցով վերականգնել իր իրավունքը, որպեսզի հնարավորություն ունենա շարունակելու անօրինականությամբ ընդհատված իրավագործությունների իրականացումը:

Վինդիկացիոն հայցի սուբյեկտը գույքի անօրինական տիրապետողն է, իսկ օբյեկտը՝ անհատապես կամ տեսականիչներով որոշվող գույքն է, որը գտնվում է ուրիշի ապօրինի տիրապետության ներքո, իսկ որպես պատասխանող սույն հայցատեսակով կարող է լինել միայն գույքի փաստացի տիրապետողը, որի տիրապետման անօրինականությունը պետք է ապացուցվի վինդիկացիայի ընթացքում:

Վինդիկացիոն հայցի առարկան նյութաիրավական պահանջն է, որը տվյալ դեպքում կարելի է բաժանել 2 մասի՝

1. ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը վերադարձնելու և
2. գույքը տիրապետելու իրավունքի հետ ստացումը և վերադարձը դրա օրինական սեփականատիրոջը կամ տիրապետողին:

Վինդիկացիոն հայցի առարկայի նման բաժանման հիմնական նպատակը գույքի փաստացի տիրապետման վերականգնումն է, որն իրականացվում է երկկազմ գործողու-

թյան միջոցով, այն է՝ գույքի վերադարձ և գույքի փոխանցում օրինական սեփականատիրոջը:

Վինդիկացիոն հայց հարուցելիս հայցվորն իրականում զրկված չէ իր սեփականության իրավունքից, այլ ուղղակի զրկվել է գույքը լիարժեքորեն տիրապետելու հնարավորությունից:

Վինդիկացիոն հայցը չտիրապետող սեփականատիրոջ հայցն է ընդդեմ տիրապետող ոչ սեփականատիրոջ: Սեփականատերն այս հայցի միջոցով առաջին հերթին պաշտպանում է իր տիրապետման իրավունքը, բայց տիրապետման իրավունքի հետ միասին պաշտպանում է նաև օգտագործման և տնօրինման իրավագործությունները:

Վինդիկացիոն հայցատեսակներով անհրաժեշտ է, որ դատարանը պարզի սեփականության իրավունքի ծագման հիմքի իրավաչափությունը, և եթե գործի նյութերից ակնհայտ է դառնում, որ սեփականության իրավունքի հիմքն անվավեր է ճանաչվել՝ օրենքին կամ իրավական այլ ակտերին չհամապատասխանելու հիմքով, ապա դատարանը պարտավոր է իր նախաձեռնությամբ կիրառել անվավերության հետևանքներ: Մինչդեռ, քանի դեռ սեփականության հիմքում դրված ակտի անվավերությունն առկա չէ, ապա դատարանը չի կարող կասկածի տակ դնել սեփականության իրավունքի հիմքում դրված ակտի իրավաչափությունը և պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ այդ ակտն իրավաչափ է:

Սույն դրոշման պատճառաբանական մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավոր Ե. Խոնդկարյանը ներկայացրել է հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հատուկ կարծիքի հեղինակը անհրաժեշտ է համարել անդրադառնալ իրավաբանական անձի կողմից ուրիշի գույքն ապօրինի տիրապետելու և այն հետ պահանջելու (վինդիկացիոն) հայցապահանջների բնության առանձնահատկություններին:

Վերահաստատելով և զարգացնելով Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ հատուկ կարծիքի հեղինակը հավելել է, որ իրավաբանական անձը, չհանդիսանալով նյութապես գոյություն ունեցող սուբյեկտ, ունի առանձնահատուկ կարգավիճակ, որը պայմանավորված է օրենսդրորեն նրան վերապահված հատկանիշներով և քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցելու առանձնահատկություններով: Իրավաբանական անձի կազմակերպական միասնությունն ապահովում է իրավաբանական անձի մնացած հատկանիշների փոխկապակցվածությունը և համադրումը մեկ սուբյեկտի ներքո: Այն հնարավորություն է ընձեռում միասնական շահով կոլեկտիվում միավորված անձանց ձևավորել ու արտահայտել մեկ միասնական կամք և քաղաքացիական շրջանառության մեջ հանդես գալ որպես մեկ միասնական սուբյեկտ: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձի վերը նշված բոլոր հատկանիշները գործում են սերտորեն փոխկապակցված, որպեսզի ապահովեն նրա հնարավորությունը մասնակցելու քաղաքացիաիրավական հարաբերություններին:

Ըստ այդմ էլ, որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ՝ իրավաբանական անձն ունի առանձնահատուկ բնույթ, այսինքն՝ **այն իր գործունեության բերումով դրանում միասնական շահով միավորված ֆիզիկական անձանց և իր առանձնացված գույքի մեկ միասնական միավոր է:** Սուբյեկտային այս առանձնահատկությունն էլ պայմանավորում է իրավաբանական անձի կողմից ուրիշի գույքն ապօրինի տիրապետելու և այն հետ պահանջելու (վինդիկացիոն) հայցապահանջների բնության առանձնահատկություններ: Մասնավորապես, հիմք ընդունելով իրավաբանական անձի բնորոշումը և նրա վերագրվող հատկանիշները՝ հատուկ կարծիքի հեղինակը գտել է, որ իրավաբանական անձի կողմից ուրիշի գույքի ապօրինի տիրապետումը կարող է դրսևորվել հետևյալ եղանակներով՝

1. իրավաբանական անձի գույքի առկայությամբ պայմանավորված ապօրինի տիրապետում (*երբ, օրինակ, իրավաբանական անձն իր գործունեության իրականացմանն ուղղված արարողական նշանակության գույքով ծանրաբեռնի այլ անձին պարկանտող փարածքը՝ առանց իր աշխատակիցների՝ համապարասխան փարածքում գրնվելու անհրաժեշտության և դրանով իսկ գրկի այլ անձի՝ իրեն պարկանտող գույքը նպարտկային նշանակությամբ օգտագործելու հնարավորությունից*),

2. իրավաբանական անձի կոլեկտիվում միավորված ֆիզիկական անձանց կողմից այլ անձի գույքի ապօրինի տիրապետում (*երբ, օրինակ, իրավաբանական անձը վարձակալի ուրիշին պարկանտող գույք, իսկ վարձակալության ժամկետի ավարտից հետո րվյալ իրավաբանական անձի աշխատակիցները, առաջնորդվելով գործարտ իրավաբանական անձի հանձնարարությամբ, հրաժարվեն ազատել համապարասխան փարածքը*),

3. վերոնշյալ երկու եղանակների համադրմամբ տիրապետում: Նշվածից հետևում է, որ եթե իրավաբանական անձի կողմից այլ անձի գույքի ապօրինի տիրապետումը դրսևորվում է իրավաբանական անձի գույքի առկայությամբ կամ իրավաբանական անձի կոլեկտիվում միասնական շահով միավորված ֆիզիկական անձանց առկայությամբ կամ այս երկուսի միաժամանակյա առկայությամբ, ապա վինդիկացիոն հայցի բովանդակությունը կարող է լինել հետևյալը՝

դակությունը ենթադրում է իրավաբանական անձի գույքից կամ միասնական շահով կոլեկտիվում միավորված ֆիզիկական անձանցից կամ միաժամանակ այս երկուսից այլ անձի գույքի ազատում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե տվյալ կոնկրետ իրավիճակում ապօրինի տիրապետման վերոնշյալ եղանակներից որն է առկա:

Սույն հետևությունը բխել է նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումից, ըստ որի՝ վտարումը համապատասխան շենքը վտարվողից (վտարվողներից) և նրա (նրանց) գույքից ազատելն ու ազատված շենքից օգտվելն արգելվել է: Այլ կերպ ասած՝ երբ վտարումը վերաբերում է իրավաբանական անձին, ապա համապատասխան շենքը (շինությունը, տարածքը) ենթակա է ազատման իրավաբանական անձի գույքից և դրանում միասնական շահով միավորված ֆիզիկական անձանցից կամ յուրաքանչյուրից առանձին-առանձին:

ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

04.06.2019թ.

3. «Ալյանս պլուս» ՍՊԸ-ն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (ներկայումս՝ «ՎեՈՆ Արմենիա» ՓԲԸ), քաղ. գործ թիվ ԵԱԶԳ/4524/02/15

էջ
26-41

Խնդիր. Արդյ՞՞ք հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կարող է սկսվել, եթե պատասխանողի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով հայցվորը գրկված է եղել դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ հայց ներկայացնելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ և 340-րդ հոդվածների իրավակարգավորումների կապակցությամբ առկա է իրավունքի գարգացման խնդիր: Այդ իսկ նկատառումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել հետևյալը. ինչպես բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից՝ օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը կապել է ոչ թե իրավունքի խախտման պահի, այլ այն օրվա հետ, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Օրենսդրի այս կարգավորումը բխում է այն տրամաբանությունից, ըստ որի՝ եթե անձն իր իրավունքի խախտման մասին չիմանա, ապա չի էլ կարող ձեռնամուխ լինել որևէ եղանակով՝ այդ թվում և հայց հարուցելու միջոցով իր խախտված իրավունքի պաշտպանությանը: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի ընթացքի մեկնարկի երկու նախապայմանների դեպքում էլ օրենսդիրը գործածել է «իմացել է» և «պետք է իմացած լիներ» արտահայտությունները, որոնց առաջի մեկնաբանությունը հանգեցնում է այն հետևության, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու համար անհրաժեշտ է, որ հայցվորը հաստատապես իմանա կամ իմացած լինի իր իրավունքի խախտման մասին: Վերոգրյալից բխում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի կարող սկսվել, եթե հայցվորին հասանելի տեղեկությունները նրան թույլ տան եզրակացնել միայն իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին: Իրավակիրառ պրակտիկայում շահագրգիռ անձը դատական պաշտպանության իր իրավունքն իրացնում է այն դեպքում, երբ համոզված է իր իրավունքի հաստատապես խախտման հարցում: Այլ կերպ ասած՝ շահագրգիռ անձը պետք է համոզված լինի իր իրավունքի խախտման հարցում՝ անկախ նրանից, թե իրականում իրավունքի խախտում տեղի ունեցել է, թե ոչ, ինչը դատարանի գնահատման առարկա է: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական պաշտպանության իրավունքն ունի իրացման որոշակի պայմաններ, որոնց չարաշահումը կարող է անբարենպաստ հետևանքներ առաջացնել այդ իրավունքից անբարեխիղճ օգտված անձի համար: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետում օրենսդիրի կողմից կիրառված «պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին» արտահայտությունը չպետք է սխալմամբ մեկնաբանվի այնպես, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կարող է սկսվել հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորություն ունենալու օրվանից, ընդհակառակը՝ «պետք է իմացած լիներ» ձևակերպմամբ, ինչպես և «իմացել է» ձևակերպման պարագայում օրենսդիրը կարևորել է հայցային վաղեմության ընթացքն սկսվելու հարցում հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ շահագրգիռ անձի կողմից իր իրավունքի

խախտման մասին հաստատապես իմանալու համար վերջինս պետք է տիրապետի խախտման վերաբերյալ բավարար տեղեկությունների, իսկ եթե այդ տեղեկությունները բավարար չեն, այսինքն՝ եթե հայցվորը կարող է միայն ենթադրություններ անել իր իրավունքի հնարավոր խախտման մասին, ապա նա չի էլ կարող հստակ պահանջ ներկայացնել իր իրավունքի խախտման վերացման վերաբերյալ: **Այսպիսով, օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետ-րի ընթացքն սկսվելու իրավական հեղևանքը պայմանավորել է հայցվորի կողմից ոչ թե իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորությանը, այլ այդ խախտման մասին հավաստի կերպով իմանալու կամ իմացած լինելու փաստերով:**

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հայց հարուցելով՝ շահագրգիռ անձը չի կարող պահանջել իր իրավունքի ենթադրյալ խախտման վերացում, քանի որ ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրությունը շահագրգիռ անձին իրավունք է վերապահել համապատասխան հայցով դիմելու դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ անձը կարող է պահանջել և դատարանն էլ իրականացնել անձի ոչ թե «վերացական», այլ կոնկրետ խախտված իրավունքի պաշտպանություն կամ այլ խոսքով՝ հայցով խախտված իրավունքի պաշտպանության համար հայցվորին առնվազն պետք է իմանա, թե ով է խախտել իր իրավունքը (ով է պատշաճ պատասխանողը) և ինչու է կայանում իր իրավունքի խախտումը, որպեսզի պատասխանողից պահանջի իր իրավունքի խախտման վերացում (ընտրի իր իրավունքի խախտման վերացման համար անհրաժեշտ և պիտանի հայցապահանջը): Բացի այդ, քաղաքացիադատավարական օրենսդրությունը հայցով իրավունքի պաշտպանության համար սահմանել է որոշակի պայմաններ, որոնց պահպանման դեպքում է միայն դատարանը պարտավոր ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ: Մասնավորապես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականի ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ, 88-րդ, 92-րդ հոդվածների պահանջների համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանական պահանջի դեպքում հայցադիմումում, ի թիվս այլնի, պարտադիր կերպով պետք է նշվեն պահանջվող գումարի չափը և հաշվարկը, իսկ այդ պահանջը չպահպանելու դեպքում հայցադիմումը ենթակա էր վերադարձման, այսինքն՝ դատարանը վարույթ կարող էր ընդունել միայն դատավարական օրենսգրքի պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը: Համանման իրավակարգավորումներ են սահմանված նաև 09.04.2018թ.-ից գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 125-րդ և 127-րդ հոդվածներով:

Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածը սահմանել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է **սահմանված կարգով հայրը հարուցելով:** Վերոգրյալ դատորություններից բխում է, որ հայցային վաղեմության ժամկետը չի ընդհատվում, եթե հայրը ներկայացվում է ոչ այն դատարան, որ պետք է ներկայացվի, ոչ այն պատասխանողի դեմ, ով պետք է պատասխան տա այդ հայցով և ոչ այն հայցապահանջով, որն ուղղված է անձի խախտված կոնկրետ սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությանը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել այն հանգամանքը, որ օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի հոսքի հարցում իր իրավակարգավորումներով հատուկ նշանակություն է տվել հետևյալ հանգամանքներին. հայցային վաղեմության ժամկետն ընդհատում է կոնկրետ իրավունքի պաշտպանության համար անհրաժեշտ և պիտանի հայցը, որը հարուցվել է դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով: Սահմանված կարգով հայց հարուցելու համար հայցվորին պետք է հայտնի լինեն այն նվազագույն տեղեկությունները, որոնք օրենքին համապատասխան պարտադիր կերպով պետք է նշվեն հայցադիմումում, իսկ դրանական պահանջի դեպքում այդ պարտադիր տեղեկություններն ընդգրկում են պահանջվող գումարի չափը և հաշվարկը: Այդ տեղեկություններին չտիրապետելու դեպքում հայցվորը չի կարող սահմանված կարգով հարուցել անհրաժեշտ և պիտանի հայցը՝ պահանջել կոնկրետ չափի գումարի բռնազանձում, հետևաբար գումարի չափին և հաշվարկին վերաբերող տեղեկություններին չտիրապետելը նշանակություն ունի նաև հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու հարցում: Այլ խոսքով, եթե պատասխանողի կողմից իր պայմանագրային պարտավորությունը չկատարելու, մասնավորապես՝ միայն իր կողմից տիրապետվող անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն չտրամադրելու հետևանքով հայցվորը հնարավորություն չի ունեցել բացահայտել իր իրավունքի իրապես խախտված լինելու փաստը, արդյունքում նաև չի տիրապետել դրանական պահանջի գործով պահանջվող գումարի չափի և հաշվարկի վերաբերյալ տեղեկություններին, ապա հայցային վաղեմության ժամկետի ընթացքի մեկնարկի մասին խոսք լինել չի կարող, քանի դեռ համապատասխան փաստերը

հասանելի չեն դարձել շահագրգիռ անձին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը ընդգծել է, որ վերոգրյալ հետևությունն ամեն-
ևնին չի նշանակում, որ հայցվորը դրամական պահանջով հայց ներկայացնելիս պետք է տի-
րապետի իր պահանջը հիմնավորող բոլոր տեղեկություններին, դրանք հաստատող բոլոր
ապացույցներին: Հայցային վաղեմության ժամկետը կմեկնարկի այն օրվանից, երբ շա-
հագրգիռ անձը տիրապետի անհրաժեշտ և բավարար տեղեկությունների՝ պատշաճ հայ-
ցադիմում դատարան ներկայացնելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն այս հար-
ցում կարևորում է կողմերի վարքագծի բացահայտումը և գնահատումը: Այսպես՝ Վճռաբեկ
դատարանի գնահատմամբ՝ եթե հայցվորն իր իրավունքի խախտված լինելու մասին ունի
որոշակի, սակայն դատարան պատշաճ հայց հարուցելու համար ոչ բավարար տեղեկու-
թյուններ, ապա նա պարտավոր է ձեռնարկել իրենից կախված բոլոր ողջամիտ միջոցները՝
պարզելու, թե իր իրավունքի խախտում իրականում տեղի ունեցել է, թե ոչ: Եթե հայցվորն
այդ ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկում, ապա սկսում է գործել «պետք է իմացած լինեիր իր
իրավունքի խախտման մասին» կանոնը: Իրավունքի խախտված լինելու մասին իմացած
լինելու կանխավարկածը գործում է այն դեպքում, երբ իր իրավունքի խախտման մասին
ենթադրություններ ունեցող հայցվորն օրենքին, այլ նորմատիվ իրավական ակտերին, պա-
մանագրին համապատասխան իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու
ուղղությամբ չի ձեռնարկում իրենից կախված բոլոր ողջամիտ միջոցները: Իսկ այդպիսի
միջոցների բավարար կամ անբավարար լինելը, դրանք ողջամիտ ժամկետում հայցվորի
կողմից ձեռնարկված լինելը յուրաքանչյուր գործով պետք է պարզեն և գնահատեն դատա-
րանները, քանի որ այդ հանգամանքներից կախված միայն հնարավոր կլինի որոշել, թե
երբվանից հայցվորը պետք է իմացած լինեիր իր իրավունքի խախտման մասին, այսինքն՝
հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը:

29.03.2019թ.

**4. Կարինե, Ասդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյաններն ընդդեմ Նարինե Էջ
Ասատրյանի, քաղ. գործ թիվ ԵՄԳ/1252/02/16**

Էջ
42-77

Խնդիր. Ո՞ր պահից պետք է սկսվի փոխառության պայմանագիրը գումարը չստանալու
կամ ավելի պակաս չափով ստանալու հիմքով վիճարկելու համար հայցային վաղեմության
ժամկետի ընթացքի սկիզբն այն պարագայում, երբ փոխառության պայմանագրով կողմերը
հաստատել են գումարը տալու և ստանալու փաստը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փո-
խառության պայմանագիրը կարող է կնքված համարվել միայն այն դեպքում, երբ առկա
են պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու վերաբերյալ գրավոր ապա-
ցույցներ: Այսինքն՝ օրենսդիրը փոխառության պայմանագրի կնքվածությունն անմիջակա-
նորեն կախվածության մեջ է դրել փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ
գույքը հանձնելու փաստից, ինչը ենթադրում է, որ նշված դրամը կամ գույքը ստացված չի-
նելու հանգամանքը ողջամտորեն պետք է հայտնի լինի փոխառուին անմիջապես այն պա-
հին, երբ վերջինս հավաստում է դրամը կամ գույքը ստանալու փաստը: Այսպես, բոլոր այն
դեպքերում, երբ փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը ստանալու
մասին փոխառության պայմանագրում կատարվում է հատուկ նշում, ապա պայմանագի-
րը ստորագրելու փաստով փոխառուն հաստատում է դրամը կամ գույքը ստանալու հան-
գամանքը: Ուստի, եթե դրամը կամ գույքը ստանալու մասին հատուկ նշում պարունակող
փոխառության պայմանագիրը ստորագրելու պահին փոխառուն չի ստանում դրամում նշ-
ված գումարը կամ գույքը, ապա այդ պահից սկսած վերջինիս հայտնի է դառնում իր իրա-
վունքների խախտման մասին, հետևաբար իր խախտված իրավունքների վերականգնման
նպատակով դատական պաշտպանության փոխառուն պետք է դիմի օրենքով սահմանված
հայցային վաղեմության ժամկետի ընթացքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ փոխառության պայմանագիրն ան-
փողության հիմքով վիճարկելու հայցային վաղեմության ժամկետը պետք է հաշվարկել փո-
խառությամբ սահմանված դրամը կամ գույքը փոխառուին հանձնելու փաստը որևէ եղանա-
կով ամրագրելու պահին հաջորդող օրվանից:

**Սույն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռա-
բեկ դատարանի դատավոր Ե. Խոնդկարյանը ներկայացրել է հատուկ կարծիք:**

Հատուկ կարծիքի հեղինակը անդրադարձ է կատարել հետևյալ հարցադրումներին՝
ա) արդյո՞ք նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած

դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կարող են ներմուծվել ապագայում կայացվելիք դատական ակտի բովանդակությամբ, եթե գործում առկա չեն նախադատելի համարվող վճիռը և դրա՝ օրինական ուժի մեջ մտած լինելը հավաստող ապացույցներ,

բ) որ փաստական հանգամանքների մասով է օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նախադատելի հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար,

գ) որ պահից պետք է հաշվարկել փոխառության պայմանագիրն անփողության հիմքով վիճարկելու հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի սկիզբը:

ա. Հատուկ կարծիքի հեղինակը գտել է, որ դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նույն անձանց միջև այլ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված փաստական հանգամանքներին: Այսինքն՝ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի համար նախադատելի են միայն այն հանգամանքները, որոնք հաստատվել են նույն անձանց միջև նախկինում քննված գործով կայացված դատական ակտով: Ընդ որում, որպեսզի արձանագրվի այս կամ այն դատական ակտի նախադատելիությունը, անհրաժեշտ է, որպեսզի նախկինում քննված գործով դատարանի կողմից կայացված դատական ակտը ստացած լինի օրինական ուժ՝ հաշվի առնելով, որ միայն այդ դեպքում է, որ դատական ակտը դառնում է վերջնական, իսկ դրանով հաստատված փաստերը չեն կարող դրվել կասկածի տակ: Այլ կերպ ասած՝ եթե դատական ակտը դեռևս չի մտել օրինական ուժի մեջ, կամ օրինական ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված հիմքերով բողոքարկվել և բեկանվել է, ապա դրանով հաստատված փաստերը չեն կարող դիտարկվել որպես նախադատելի նշանակություն ունեցող հանգամանքներ:

Բացի այդ, նախադատելի համարվող վճռով հաստատված փաստերի ներմուծումն ապագայում կայացվելիք դատական ակտի բովանդակություն իրենից ենթադրում է այդ ակտի բովանդակության ուսումնասիրություն, ըստ այդմ, նախադատելիության օբյեկտիվ և սուբյեկտիվ սահմանների որոշում, որից հետո միայն ներմուծում ապագայում կայացվելիք դատական ակտի բովանդակություն: Այլ կերպ ասած՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքներն ինքնաբերաբար չեն ներմուծվում ապագայում կայացվելիք դատական ակտի բովանդակություն, այլ գործում պետք է առկա լինի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որպիսի պայմաններում միայն դատարանը, հաշվի առնելով նախադատելիության ինստիտուտի կիրառման սահմանները, ապագայում կայացվելիք դատական ակտ իրավասու է ներմուծել նման հանգամանքները:

Վերոգրյալից հետևում է, որ դատավարության մասնակիցները, ազատված լինելով նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները կրկին ապացուցելու պարտականությունից, ազատված չեն համապատասխան ապացույցներ ներկայացնել նախկինում քննված քաղաքացիական գործով կայացված վճռի և դրա՝ օրինական ուժի մեջ մտած լինելու հանգամանքի վերաբերյալ:

բ. Հատուկ կարծիքի հեղինակը փաստել է, որ հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար քրեական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է միայն հանցագործության օբյեկտիվ կողմի և հանցագործության սուբյեկտի մասով հաստատված փաստերի շրջանակներում, իսկ այդ շրջանակներից դուրս պրեյտդիցիալ կապ գոյություն ունենալ չի կարող:

գ. Հատուկ կարծիքի հեղինակն արձանագրել է, որ փոխառության պայմանագիրը կարող է կնքված համարվել միայն այն դեպքում, երբ հիմնավորվում է պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու փաստը: Միաժամանակ պետք է հավելել, որ անփողության հանգամանքը ողջամտորեն կարող է հայտնի լինել փոխառուին պայմանագիրը ստորագրելիս, որում առկա է նշում փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը ստանալու մասին կամ այն փաստաթուղթը կազմելիս, երբ կողմերը փոխադարձաբար ամրագրում են փոխառությամբ սահմանված դրամը կամ գույքը փոխառուին հանձնելու փաստը: Ուստի փոխառության պայմանագիրն անփողության հիմքով վիճարկելու հայցապահանջի նկատմամբ կիրառման ենթակա հայցային վաղեմության ժամկետը պետք է հաշվարկել փոխառությամբ սահմանված դրամը կամ գույքը փոխառուին հանձնելու փաստը որևէ եղանակով ամրագրելու պահին հաջորդող օրվանից: Նման դատողությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մի կողմից օրենսդիրը փոխառության պայմանագրի կնքվածությունն անմիջականորեն կախվածության մեջ է դրել փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու փաստից, իսկ մյուս կողմից հայցային վաղեմության ժամկետների հոս-

քի սկիզբն օրենսդիրը պայմանավորել է այնպիսի հանգամանքների ուժով, որպիսի պայմաններում անձը հաստատապես իմացել է կամ պետք է իմացած լինել իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին: Վերոգրյալից հետևում է, որ պայմանագրում նշված դրամը կամ գույքը ստացված չլինելու հանգամանքը ողջամտորեն պետք է հայտնի լինի փոխառուին անմիջապես այն դեպքում, երբ վերջինս հավաստում է դրամը կամ գույքը ստանալու փաստը: Տվյալ պարագայում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորվում է փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու փաստն ամրագրելու (գրավոր ձևակերպելու) իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից:

Սույն որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավոր Ս. Անտոնյանը ներկայացրել է հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հատուկ կարծիքի հեղինակն արձանագրել է, որ փոխառության պայմանագիրը կարող է վիճարկվել և՛ անփողության հիմքով, և՛ որպես վիճահարույց գործարք: Կախված այն հանգամանքից, թե ինչ իրավական հիմքով է իրականացվում փոխառության պայմանագրի վիճարկումը, հնարավոր են տարբեր իրավական հետևանքներ:

Այսպես, փոխառության պայմանագրի վիճարկումը որպես վիճահարույց գործարք կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերության և անվավերության հետևանքների կիրառման:

Մինչդեռ փոխառության պայմանագիրն անփողության հիմքով վիճարկելու դեպքում պայմանագիրը ոչ թե անվավեր է ճանաչվում, այլ համարվում է չկնքված՝ հիմք հանդիսանալով փոխառուի կողմից փոխառության պարտավորության կատարման պահանջը մերժելու համար:

Հատկանշական է, որ անփողության հիմքով պայմանագրի վիճարկումը բացառում է փոխառության պայմանագրի անվավերության պահանջի քննարկումը և հետևաբար անվավերության հետևանքների կիրառումը: Դրա հետ մեկտեղ չպետք է անտեսել նաև ապացուցման ենթակա փաստերի շրջանակի էական տարբերությունը: Եթե գործարքի անվավերության համար էական է գործարքի՝ օրենքների և իրավական ակտերի հետ անհամապատասխանությունը, ապա փոխառության անփողության հիմքով վիճարկման դեպքում միակ փաստը, որը ենթակա է ապացուցման, դա պայմանագրով կամ պարտքային փաստաթղթով նշված գումարն իրականում ստացած չլինելու հանգամանքն է:

Այս առանձնահատկությունն էլ հաշվի առնելով պետք է տարբերակել հայցային վաղեմության հոսքի սկիզբը որոշելու պահը՝ փոխառության պայմանագիրը վիճարկելու տարբեր հիմքերի դեպքում:

Հայցային վաղեմության կիրառման համար առանցքային է խախտված իրավունքի առկայությունը և դրա սկիզբը որոշելը: Այս առումով անփողության հիմքով փոխառության պայմանագրի վիճարկման դեպքում, երբ այդպիսի վիճարկման արդյունքը պայմանագիրը չկնքված համարելն է և պարտավորության կատարման պահանջի մերժումը, խախտված իրավունքի պահ կարող է դիտվել փոխառուի կողմից դրամ կամ գույք չհանձնելու պայմաններում փոխառության պայմանագրով (ստացականով կամ այլ պարտքային փաստաթղթով) պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջ ներկայացնելը:

Այսինքն՝ չկնքված պայմանագրի դեպքում, երբ պահանջ չի ներկայացվել կատարելու փոխառության իրավահարաբերություններից բխող պարտավորություններ, չի կարելի խոսել իրավունքի հնարավոր խախտման մասին, եթե ինչպես պայմանագրի կնքումը հայցի առարկան չէ:

Ինչ վերաբերվում է այն դիրքորոշմանը, որ հայցային վաղեմության հոսքը պետք է հաշվել փոխառության պայմանագրով գումարի ստացումը հաստատող ապացույցի տրման պահից, ապա այդ մոտեցումը ընդունելի չէ, քանի որ անփողության հիմքով փոխառության վիճարկումն ուղղված է հենց փոխառության պայմանագրում կամ պարտքային փաստաթղթում նշված գումարը չստանալու կամ պակաս ստանալու փաստը հերքելուն:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարձակալություն

24.09.2019թ.

5. Ա/2 Ավետիք Աղաբեկյանն ընդդեմ «ՄՄԲԱՏԻ ՕՋԱԽ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵՉ ԵՇԳ/2308/02/15

Էջ 78-87

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրումներին.

- 1) գործարքը վավեր ճանաչելու առանձնահատկություններին,
- 2) վարձակալության պայմանագրի պայմանի փոփոխության վերաբերյալ համաձայնության անվավերության դեպքում գործարքով կողմերից յուրաքանչյուրի ստացածը վերադարձնելու առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրական դատարանի 15.05.2007 թվականի թիվ ՍԴՈ-702 որոշմամբ բացահայտված բովանդակությունից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածով սահմանված գործարքը վավեր ճանաչելու մասին կարելի է խոսել միայն որոշակի հանգամանքների [գործարքի օրինականությունը (իրավաչափությունը), գրավոր ձևի պահպանման փաստը, գործարքի նույնարական ձևը չպահպանելը և մեղավոր կողմին պարզելը, գործարքի նույնարական վավերացումից կողմի խուսափելը (գործողությանը կամ անգործությանը) և դրա հիմքերը, նույնարական վավերացում պահանջող գործարքը կողմերից մեկի լրիվ կամ մասնակի կատարելու փաստը և դրա օրինականությունը (իրավաչափությունը)]: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ թե պայմանագրային պարտավորության կատարումից կողմի՝ օրենքով նախատեսված կարգով հրաժարվելու ինստիտուտին, այլ՝ սահմանված կարգով իրավաչափ գործողություն կատարելուց խուսափելուն՝ առկայության դեպքում, որոնք միասին անհրաժեշտ են և բավարար, որպեսզի անգամ օրենսդրական պահանջի խախտման, այսինքն՝ նոտարական վավերացման բացակայության պայմաններում գործարքը դատական կարգով ճանաչվի վավեր:

2) Զարգացնելով «Այնաբար» ՍՊԸ-ն ընդդեմ «Մաքս Կոնսոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2917/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ փաստորեն այն դեպքում, երբ հաստատվում է վարձակալության պայմանագրի անվավերությունը, կիրառման են ենթակա գործարքի անվավերության հետևանքները՝ հաշվի առնելով վարձակալության պայմանագրով ստացվածը վերադարձնելու առանձնահատկությունները: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նմանատիպ դիրքորոշումը կիրառելի է նաև վարձակալության պայմանագրի պայմանի փոփոխության վերաբերյալ համաձայնության, մասնավորապես՝ վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափի փոփոխության նկատմամբ: Այսինքն՝ այն դեպքում, երբ վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի փոփոխության վերաբերյալ կողմերը կայացրել են համաձայնություն, սակայն այդ համաձայնությունն անվավեր է ճանաչվել (վիճահարույց գործարք) կամ անկախ ճանաչումից եղել է այդպիսին (առոչինչ), ապա վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ որպես այդ համաձայնության անվավերության իրավական հետևանք կողմերից յուրաքանչյուրը պետք է վերադարձնի այդ համաձայնությամբ իր ամբողջ ստացածը բնեղենով: Ընդ որում, այն դեպքում, երբ ստացածը բնեղենով վերադարձնելն անհնար է, կողմը պարտավոր է հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Ուստի, հաշվի առնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարձակալության պայմանագրի պայմանի փոփոխության վերաբերյալ համաձայնության անվավերության նկատմամբ գործարքի անվավերության հետևանքների կիրառումը պետք է իրականացվի վերը վկայակոչված իրավական դիրքորոշումներին համահունչ:

Վարկ

07.06.2019թ.

6. «Արդշինբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Վահե Աֆանյանի, քաղ. գործ թիվ էջ
ԵԿԴ/1209/02/16 88-96

Խնդիր. Արդյո՞ք բանկն իր նախաձեռնությամբ միակողմանիորեն կարող է սահմանել վարկի մարումների նոր հերթականություն այն պարագայում, երբ պայմանագրով արդեն իսկ սահմանված է վարկի մարումների այլ առաջնահերթություն:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով և զարգացնելով նախկինում հայտնած իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանը գտել է, որ ելնելով վարկի և փոխառության պայմանագրերի ընդհանրական հատկանիշներից՝ օրենսդիրը նախատեսել է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են փոխառության պայմանագրի համար նախատեսված կանոնները: Մինչև սույն ժամանակ, ընդունելով վերոհիշյալ երկու պայմանագրերի ընդհանրությունները՝ Վճարելի դատարանն ընդգծել է, որ ի տարբերություն փոխառության պայմանագրի՝ վարկային պայմանագրով կարող են տրամադրվել միայն դրամական միջոցներ և միայն որոշակի սուբյեկտների՝ քանկերի և վարկային կազմակերպությունների կողմից: Վճարելի դատարանը փաստել է, որ վարկային պայմանագրի կարևորագույն առանձնահատկությունն է նաև այն, որ այդ պայմանագրով բանկը կամ վարկային կազմակերպությունն ակնկալում է որոշակի հատուցում, այլ կերպ ասած՝ այն հատուցելի պայմանագիր է: Բանկը վարկային պայմանագրով որոշակի դրամական միջոցներ փոխառուին տրամադրելու դիմաց ակնկալում է, որ փոխառուն պետք է իրեն վերադարձնի այդ միջոցները և բացի դրանից նաև վճարի որոշակի տոկոսներ՝ տրամադրված միջոցների օգտագործման դիմաց որպես հատուցում: Նմանատիպ մոտեցումը բխում է վարկային պայմանագրի էությունից, քանի որ բանկը, իր ունեցած միջոցներից որոշակի մասը տրամադրելով կոնկրետ անձին, զրկվում է դրանց տնօրինման և այլ անձանց տրամադրելու միջոցով շահույթ ստանալու հնարավորությունից, ուստի ակնկալում է որոշակի վարձատրություն՝ տոկոսների տեսքով: Վճարելի դատարանը գտել է, որ նմանատիպ մոտեցումը բխում է հենց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի կարգավորումից, որի համաձայն՝ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Հիմք ընդունելով վարկային պայմանագրի՝ պարտավորական հարաբերությունների ծագման ինքնուրույն հիմք լինելու հանգամանքը և այդ հարաբերությունների դրամական բնույթը՝ Վճարելի դատարանը փաստել է, որ դրա նկատմամբ կիրառելի են դրամական պարտավորությամբ պահանջները մարելու հերթականության վերաբերյալ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածի կարգավորումները: Ուստի, եթե կողմերի միջև առկա չէ այլ համաձայնություն, առաջին հերթին մարվում են պարտավորության կատարման ստացմանն ուղղված՝ պարտատիրոջ ծախսերը, այնուհետև՝ տոկոսները, ներառյալ՝ նույն օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, իսկ մնացած մասով՝ պարտքի հիմնական գումարը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նմանատիպ կարգավորում նախատեսելը նպատակ է հետապնդել պարտավորության մարման հերթականության հարցում սահմանելու որոշակիություն: Վճարելի դատարանն ընդգծել է նաև, որ օրենսդիրը նախատեսել է նման հերթականությունից շեղվելու հնարավորություն, որպիսին կարող է լինել **կողմերի համաձայնությունը**: Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրել է, որ եթե կողմերն այլ բան չեն նախատեսել, ապա կաշկանդված են սույն կարգավորումը, և ցանկացած դեպքում առաջնահերթությունը փոփոխելիս պետք է առկա լինի նրանց համաձայնությունը: Նմանատիպ մոտեցումից բխում է, որ դրամական պարտավորության մարման առաջնահերթության վերաբերյալ պայմանը միակողմանիորեն չի կարող փոփոխվել: Ուստի, վարկային պայմանագրով նախատեսված դրամական պարտավորության մարման առաջնահերթության վերաբերյալ պայմանագրի պայմանը փոխառուի կողմից միակողմանի փոփոխելը և պարտավորության հիմնական գումարն առաջին հերթին մարելը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված կարգավորմանը:

ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԻՄՆ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18.10.2019թ.

7. Ժիրայր Սեֆիլյանն ընդդեմ «Արմենիա Թի-Վի» ՓԲԸ-ի, Վահե Ղազարյանի և Նելլի Հարությունյանի, քաղ. գործ թիվ ԵԱԳԳ/2612/02/16

էջ
97-110

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վիրավորանքի և զրպարտության միջոցով պատվին, արժանապատվությանը և բարի համբավին հասցված վնասի հատուցման առանձնահատկություններին այն դեպքում, երբ հանրային անձի (մասնավորապես՝ քաղաքական գործչի) վերաբերյալ արատավորող տեղեկությունները տարածվում են լրագրողի կողմից:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը *Վանո Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի թիվ ԼԳ/0749/02/10 քաղաքացիական գործով 27.04.2012 թվականի որոշմամբ* մանրամասն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի, բովանդակային առումով վերջինիս փոխկապված և պատվին, արժանապատվությանն ու գործարար համբավին պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական դրույթների մեկնաբանմանը:

Հետագա որոշումներով ՀՀ վճռաբեկ դատարանը զարգացրել է վերոգրյալ որոշմամբ իր հայտնած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես՝ *Մսիկ Դավթյանն ընդդեմ Տիգրան Վիրաբյանի թիվ ԱՎԳ/0179/02/13 քաղաքացիական գործով 08.05.2014 թվականի որոշմամբ* ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մարդու արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնական գոյության հիմնական պատճառներից մեկը: Մարդու արժանապատվության մասին նշված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, որոնց համաձայն՝ մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ է արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրությունը հռչակել է, որ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է: Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվությունը ճանաչվում է որպես բարձրագույն արժեք, որպես մարդու իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, ինչից հետևում է, որ յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը ենթակա է պաշտպանության պետության կողմից: Միաժամանակ ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության և իրավական պետության հիմքում, այն հանդիսանում է ժողովրդավարական հասարակության զարգացման հիմնական խթաններից մեկը և 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 27-րդ *[(2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ)]* և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի¹ 10-րդ հոդվածներն անվերապահորեն հետապնդում են վերը նշված նպատակը: Սակայն ինչպես նշված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում, այս ազատության իրականացումը կապված է պարտականությունների և պատասխանատվության հետ: Չպետք է անտեսել նաև այլ իրավունքները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային՝ մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող փաստաթղթերում նշված արժանապատվության և մասնավոր կյանքի իրավունքը, որոնք պակաս կարևոր չեն ժողովրդավարական հասարակության և իրավական պետության համար: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ այն դեպքերում, երբ մարդու արժանապատվության և արտահայտվելու ազատության իրավունքի բախում է տեղի ունենում, անհրաժեշտ է գտնել պարզ հավասարակշռություն սրանց միջև: Սրանցից յուրաքանչյուրն էլ ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ բաղադրամասեր են, և երկուսն էլ պետք է ներդաշնակորեն առկա լինեն ժողովրդավարական հասարակությունում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի արժանապատվության գործնականում ապահովման իրավական երաշխիք է:

Ամփոփելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելել է հետևյալը.

Անձի արժանապատվությունը և կարծիքի տարածման ազատությունը պետք է գտնվեն արդարացի հավասարակշռության մեջ: Բացառությամբ օրենքով սահմանված սահմանափակ դեպքերի՝ անթույլատրելի է անձի արժանապատվության ոտնահարումը՝ կարծիքի տարածման ազատության շղարշի ներքո:

1 Այսուհետ՝ սույն բաժնում Եվրոպական կոնվենցիա:

Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորել է այս հարցում լրագրողների գործունեությունը, ովքեր լրատվական գործունեություն իրականացնող (այսինքն՝ ըստ «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ օրենքի տրամաբանության՝ տեղեկատվություն տարածող) արհեստավարժ տուրյեկտներ են: Եթե հասարակության սովորական անդամի համար միգուցե կարող է ոչ միանշանակ լինել տեղեկատվության տարածման հարցում բարեխղճության սկզբունքի պահպանումը, ապա սույն սկզբունքը պետք է ընկած լինի լրագրողական գործունեության հիմքում:

Նշված դիրքորոշումը համադրելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի² և ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանը կարևորել է հետևյալը.

Հրապարակելով որևէ գնահատողական դատողություն՝ լրագրողը պարտավոր է ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար: Անգամ եթե լրագրողի դատողությունը հիմնվում է որևէ անձի հայտնած փաստերի վրա, ապա որպես իրավահարաբերության արհեստավարժ մասնակից՝ լրագրողը պարտավոր է առնվազն փորձել լսել տեղեկատվության հասցեատիրոջ կարծիքը, որից հետո միայն հրապարակել իր գնահատողական դատողությունը: Ընդ որում, անգամ գնահատողական դատողությունը պետք է հիմնվի բավարար փաստական կազմի վրա՝ պայմանավորված բարեխղճության սկզբունքի պահպանման անհրաժեշտությամբ: Հակառակ պարագայում արված արտահայտությունը կարող է որակվել որպես վիրավորանք (եթե իհարկե բավարարում է անհրաժեշտ մտացած պայմաններին):

Ինչ վերաբերում է զրպարտությանը, ապա Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ լրագրողի գործունեությունը չի կարող հետապնդել քողարկված կերպով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ: Եվրոպական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նմանատիպ դեպքերում կարևորվում է օբյեկտիվ ընկալումը, այսինքն՝ այն հանգամանքը, թե արդյոք հասարակության սովորական անդամն էլ կզգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն հայցվորին, կամ էլ որ հենց նա է հանդիսացել քննադատության թիրախ:

Փաստացի տվյալներ հրապարակող լրագրողը պետք է ապացուցի, որ մինչ հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք **հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության** այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին համապատասխանել իրականությանը: Բացի այդ, հրապարակող անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարեխիղճ և հավասարակշռված: Այս դեպքում բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալի (տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ թեև քաղաքական գործիչների մատով քննադատության սահմաններն ավելի լայն են, սակայն հանդուրժողականությունը վերաբերում է վերջիններիս քաղաքական գործունեության առնչությամբ տարածված տեղեկատվությանը, ընդ որում՝ ոչ բացարձակ ծավալներով: Այսինքն՝ անգամ քաղաքական գործունեության քննադատության արդյունքում հրապարակված տեղեկատվության կապակցությամբ քաղաքական գործիչներն օգտվում են պատվի և արժանապատվության պաշտպանությունից: Իսկ եթե քաղաքական գործիչը հանդես է գալիս որպես մասնավոր անձ, ապա վերջինիս վերաբերյալ քննադատության նկատմամբ ամբողջ ծավալով կիրառելի են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանափակումները, և հնչեցրած կարծիքը կամ տարածած տեղեկությունը որպես զրպարտություն գնահատելիս չպետք է հաշվի առնել անձի՝ պաշտոնատար անձ լինելու հանգամանքը:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԸ

20.02.2019թ.

8. «Զարգացման Հայկական Բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Վարդուհի և Խաչատուր Թադևոսյանների, քաղ. գործ թիվ ԵՇԳ/0397/02/15

էջ 111-123

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների կողմից ժառանգության ընդունման և ժառանգատուի պարտա-

2 Այսուհետ՝ սույն բաժնում Եվրոպական դատարան:

տերերի կողմից նրանց նկատմամբ պահանջ ներկայացնելու առանձնահատկություններին՝ միաժամանակ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Անդրադառնալով տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների կողմից ժառանգությունն ընդունելու առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ժառանգության ընդունումը միակողմ գործարք է, հետևաբար նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելի են տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների կողմից գործարք կնքելու վերաբերյալ կարգավորումները: Այսինքն, տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները ժառանգությունն ընդունում են՝ մասնավորապես նուտարին դիմում են ներկայացնում, ինքնուրույն, սակայն անպայմանորեն իրենց օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ:

Օրենսդրի կողմից նման կարգավորում նախատեսելը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները որոշակի ծավալով օժտված են քաղաքացիական գործունակությամբ, սակայն մասնավորապես տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ այն դեռևս բավարար չէ, որպեսզի նշված խմբի մեջ մտնող անչափահասները լիարժեքորեն ունակ լինեն ընկալելու սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու և իրացնելու իրավական հետևանքները: Հետևաբար դա է պատճառը, որ բացառությամբ որոշակի խումբ գործարքների, մնացած գործարքների դեպքերում օրենսդիրը պարտադիր է համարում նաև օրինական ներկայացուցիչ համաձայնությունը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ կարգավորումն արդարացիորեն գործում է նաև ժառանգման ընդունման դեպքում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները պետք է լիարժեքորեն պատկերացում կազմեն ժառանգության ընդունման իրավական հետևանքների՝ մասնավորապես այն հանգամանքի մասին, որ ժառանգության ընդունումը ենթադրում է ինչպես իրավունքների, այնպես էլ պարտականությունների ստանձնում, որից էլ ելնելով՝ հետագայում ժառանգները կարող են պատասխանատվություն կրել ժառանգատուի պարտատերերի առջև: Հետևաբար տրամաբանական է, որ նշված դեպքերում ևս պահանջվում է օրինական ներկայացուցիչների համաձայնությունը, որպեսզի արդյունավետ կերպով իրականացվի տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահաս ժառանգների իրավունքների և շահերի ապահովումը:

Անդրադառնալով պարտատերերի կողմից տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներին պահանջներ ներկայացնելու առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ քանի որ պահանջ ներկայացնելու նպատակն այն է, որ իր ժառանգման իրավունքն իրացնելիս ժառանգը հստակ պատկերացում ունենա ինչպես ժառանգության զանգվածի մեջ մտնող իրավունքների, այնպես էլ ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ, պահանջ ներկայացնելը պետք է իրականացվի այնպես, որ ժառանգը տեղյակ լինի և լիարժեքորեն պատկերացում կազմի ժառանգության ընդունման հետևանքների մասին: Նկատի ունենալով, որ քաղաքացիական հարաբերության սուբյեկտը տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասն է, իսկ օրինական ներկայացուցիչն ապահովում է վերջինին կողմից իր իրավունքների և պարտականությունների լիարժեք իրացումը՝ հավանություն տալով կամ չտալով անչափահասի կնքած գործարքներին՝ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ դատարանների կողմից ուշադրություն պետք է դարձվի այս երկու հանգամանքներին միաժամանակ: Մասնավորապես անհրաժեշտ է պարզել, թե արդյոք և՛ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, և՛ նրա օրինական ներկայացուցիչը տեղյակ են եղել պարտատիրոջ պահանջի մասին, և այդ հանգամանքը հաշվի առնելով՝ համապատասխանաբար ընդունել են ժառանգությունը կամ տվել համաձայնություն ժառանգության ընդունման մասին:

24.09.2019թ.

9. Նագիկ և Մանիկ Պողոսյաններն ընդդեմ Հոիփսիմն Թ-ազվորյանի, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/4912/02/15

էջ
124-134

Խնդիր. Ո՞ր պայմանների միաժամանակյա առկայությունն է անհրաժեշտ անձին փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար և ո՞վ է կրում այդ պայմանների առկայության ասպացուցման պարտականությունն ու դրանք չապացուցելու բացասական հետևանքները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշում. Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փաստացի տիրապետման եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար անհրաժեշտ է պարզել՝

- ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող **գույքի կազմը** (ժառանգական գանգվածը),
 - ժառանգի կողմից ժառանգական գանգվածի մեջ մտնող գույքը (դրա կազմի մեջ մտնող գույքերից որևէ մեկը) փաստացի տիրապետելուն և կառավարելուն ուղղված **տարաբնույթ ակտիվ գործողություններ ձեռնարկած լինելը**,
 - նշված գործողությունները ժառանգության բացման օրվանից **վեցամսյա ժամկետում** ձեռնարկած լինելը:
- Ընդ որում, նշված հանգամանքներն ապացուցելու պարտականությունը կրում է այդ փաստերը վկայակոչած կողմը, ուստի վերջինս էլ պետք է կրի նշված փաստերն ապացուցված չլինելու բացասական հետևանքները:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ծնողների ալիմենտային պարտավորությունները

19.02.2019թ.

10. Համիկ Բաղայանն ընդդեմ Նշան Իսախյանի, քաղ. գործ թիվ ԵՄԳ/3052/02/14

էջ
135-148

Խնդիր. Արդյո՞ք ալիմենտ վճարող ծնողի կողմից կանոնավոր վաստակ և (կամ) այլ եկամուտ ստանալու պարագայում դատարանը կարող է սահմանել կայուն դրամական գումարով ալիմենտի ամենամսյա չափ, եթե ծնողի վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտ սահմանելիս ալիմենտի չափը բավարար չէ երեխայի գոյության նվազագույն պայմաններն ապահովելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումները, հավելել է, որ և՛ ալիմենտ վճարող ծնողի, և՛ երեխայի բավարար կենսամակարդակի ապահովման, երեխայի լավագույն շահի և ալիմենտ վճարող ծնողի ուշադրության արժանի շահերի հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ օրենսդրի կողմից որոշակի ճկունություն է թույլատրված ալիմենտի վճարման տեսակը և ալիմենտի չափը որոշելու հարցում: Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է տալիս բաժիններով ալիմենտ բռնագանձելիս փոփոխելու (նվազեցնել կամ ավելացնել) օրենքով սահմանված բաժնի չափերը: Նմանապես օրենսդիրը հնարավորություն է տվել դատարաններին ալիմենտի չափ սահմանել ինչպես կայուն դրամական գումարով, այնպես էլ կայուն դրամական գումարով և բաժիններով: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նույն տրամաբանությամբ էլ հնարավորություն է տրվել անգամ ծնողի կողմից կանոնավոր եկամուտ ստանալու պայմաններում սահմանելու ալիմենտ՝ կայուն դրամական գումարի չափով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում եզրահանգել է, որ կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանվում է հետևյալ դեպքերում.

- 1) բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար է,
- 2) բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումը դժվար է,
- 3) բաժնային հարաբերակցության ալիմենտի բռնագանձումն էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին,
- 4) ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ,
- 5) ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը վաստակ և (կամ) այլ եկամուտ ստանում է բնամթերքի տեսքով կամ արտաբժույթով,
- 6) ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը վաստակ և (կամ) այլ եկամուտ չունի կամ չի ստանում:

Ընդ որում, վերը նշված 6-րդ կետը (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության «գ» կետը) վերլուծելով՝ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ օրենսդիրը, երեխայի լավագույն շահը հիմք ընդունելով, ալիմենտի վճարումից չի ազատում ծնողին անգամ այն դեպքում, երբ վերջինս եկամուտ չի ստանում: Նշված մոտեցումը պայմանավորված է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված՝ երեխաների ապրուստը հոգալու՝ ծնողների պարտականությամբ: Այսինքն՝ ծնողները պարտավոր են հոգալ երեխաների ապրուստն անգամ այն դեպքում, երբ վաստակ և (կամ) այլ եկամուտ չունեն:

15.04.2019թ.

11. Հերմինե Հովհաննիսյանն ընդդեմ Յուլյա Սաֆարյանի, քաղ. գործ թիվ ԱՎԳ-1/0347/02/11

էջ
149-175

Խնդիր. Ալիմենտ վճարելու՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելուց հետո ո՞ր ժամանակահատվածի համար է ենթակա բռնագանձման դատական ակտով սահմանված գումարը, եթե կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացվել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Վճարելի դատարանը փաստել է, որ «Բառական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 23-րդ հոդվածը դատական ակտով հաստատված՝ տարածամկետ կամ պարբերական կատարում ենթադրող պարտավորություններով կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետները չէր նախատեսում, իսկ նույն հոդվածի գործող խմբագրությամբ ՀՀ վճարելի դատարանի որոշումների հիման վրա այդ խնդիրը որոշակիորեն կարգավորվել է՝ նախատեսելով, որ եթե դատական ակտով հաստատված պարտավորությունը ենթադրում է տարածամկետ կամ պարբերական կատարում, ապա կատարողական թերթ կարող է տրվել պարտավորությունների կատարման ողջ ընթացքում, ինչպես նաև պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Մինևնույն ժամանակ Վճարելի դատարանը գտել է, որ վերոհիշյալ իրավակարգավորումն ալիմենտային պարտավորություններով չի կարող կիրառելի լինել հետևյալ պատճառներով.

Ջարգացնելով նախկինում հայտնած դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը հավելել է, որ երբ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) համարվում է վերականգնված և **կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացվել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարին անցնելուց հետո**, ապա ալիմենտ վճարելու՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելուց հետո դատական ակտով սահմանված գումարը պետք է բռնագանձվի կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացնելու պահից հետո ընկած ժամանակահատվածի համար, քանի որ պարտատիրոջ կողմից միայն որոշակի ժամանակահատվածից հետո կատարողական թերթ տրամադրելու մասին դիմում ներկայացնելն իրենից ենթադրում է, որ պարտապանը կամ մինչ այդ պահը կատարել է դատական ակտով սահմանված իր պարտավորությունը, կամ էլ պարտատերը դատական ակտի կատարում չի պահանջել իր կամքով, քանի որ ալիմենտի հարցը լուծվել է ծնողների համաձայնությամբ, եթե պարտատերը չի վկայակոչում և ապացուցում հարգելի պատճառների առկայությունը:

Վճարելի դատարանն իր վերը նշված դիրքորոշումը պայմանավորել է ալիմենտի՝ որպես անչափահաս երեխայի համար **յուրաքանչյուր ամիս վճարվող** ապրուստի միջոց լինելու հանգամանքով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ և 71-րդ հոդվածների համակարգված վերլուծությունից հետևում է, որ **ալիմենտը** որպես ապրուստի միջոց տրամադրվող **ամենամսյա վճարում** է: Հետևաբար ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ վճիռը՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտ, չի կարող նույնացվել, օրինակ, պարտավորական հարաբերություններում պարտքը մաս-մաս կամ պարբերաբար վճարելու համաձայնության հետ, քանի որ նման հարաբերություններում պարտապանն իր պարտատիրոջ առջև ունի ամբողջ պարտքը վճարելու անվիճելի պարտավորություն, ինչը փոխադարձ համաձայնությամբ կարող է կատարել մաս-մաս և տարածամկետ, իսկ ալիմենտը, ինչպես նշվեց, դատական կարգով որոշվելու դեպքում բռնագանձվում է ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով:

Բացի այդ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **ալիմենտ հատկացվում է դատարան դիմելու պահից**: Անցած ժամանակահատվածի համար ալիմենտ կարող է բռնագանձվել դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար, եթե դատարանով հաստատվել է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապրուստի միջոց առահայու համար, բայց ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից Վճարելի դատարանը հանգել է այն եզրակացության, որ ալիմենտը, որպես կանոն, բռնագանձվում է դատարան դիմելու պահից, իսկ եթե ալիմենտ հայցողն ապացուցում է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապ-

րուստի միջոց ստանալու համար, բայց **ալիմենտը չի ստացել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու** հետևանքով, ապա միայն այդ պարագայում կարող է դատարանն ալիմենտը բռնագանձել նաև դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ օրենսդիրը որպես սկզբունք ալիմենտի բռնագանձման հաշվարկի սկիզբը պայմանավորել է ալիմենտ հայցողի՝ դատարան դիմելու պահով՝ ղեկավարվելով այն կանխավարկածով, որ ալիմենտի բռնագանձման պահանջ ներկայացված չլինելը վկայում է ալիմենտ վճարելու վերաբերյալ ծնողների միջև առկա համաձայնության մասին, եթե այլ բան ապացուցված չէ:

Վերը նշված դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ալիմենտ վճարելու վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով բռնագանձվող գումարի ժամանակահատվածին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ **այն դեպքում, երբ ալիմենտ վճարելու՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտի հիման վրա կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացվել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարին անցնելուց հետո, դատական ակտով սահմանված գումարը պետք է բռնագանձվի կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացնելուց հետո ընկած ժամանակահատվածի համար, եթե պարտատերը չապացուցի, որ վճռի կայացումից հետո ինքը բոլոր միջոցները ձեռնարկել է ապրուստի միջոց ստանալու համար, սակայն ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով:** Հակառակ դիրքորոշման պարագայում կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ ծնողների փոխադարձ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող ծնողը որոշակի ժամանակահատված իր պարտավորությունը կամովին և պատշաճ կատարելուց հետո կարող է հարկադիր կարգով պարտավորեցվել կրկին կատարելու իր նույն պարտավորությունը, ինչը չի կարող իրավաչափ համարվել:

Սույն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավոր Ե. Խոնդկարյանը ներկայացրել է հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հատուկ կարծիքի հեղինակը հարկ է համարել անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. ալիմենտ վճարելու՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու դեպքում ո՞ր պահից է ենթակա վերականգման կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը:

Հատուկ կարծիքի հեղինակն արձանագրել է, որ ալիմենտային վճարների նկատմամբ նույնպես կիրառելի են դատական ակտով հաստատված պարբերական վճարումներ ենթադրող պարտավորության հարկադիր կատարման նկատմամբ տարածվող առանձնահատկությունները: Հետևաբար ալիմենտային վճարումների մասով կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի համարելու մասին հարցը *մինչև 21.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած խմբագրությանը գործող «Իսրայական ակտերի հարկադիր կատարման մասին»* ՀՀ օրենքի իրավակարգավորումների լույսի ներքո քննարկելիս դրա նկատմամբ կիրառելի են թիվ ԼԳ/0039/04/14 և թիվ ԵԱԲԻ/0515/02/10 քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումները: Հետևաբար ալիմենտային վճարումներ կատարելու պահանջի մասին վճռի առկայության պարագայում, երբ պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը, ներկայացրել է այդ վճռի հիման վրա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում՝ ուղղված այդ կատարողական թերթը տված դատարանին, և կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու պահին չի լրացել կատարման ենթակա դատական ակտով սահմանված պարտավորության(ների) կատարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո մեկ տարվա ժամկետը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը կատարողական թերթ տված դատարանի կողմից պետք է բավարարվի **իրավունքի ուժով (ex jure)**՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դրանով միայն կապահովվի երեխայի լավագույն շահը: Ընդ որում, հիմք ընդունելով վերոգրյալը՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը պետք է հարգելի համարվի կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահից: Նման դիրքորոշումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նախորդ իրավակարգավորման պայմաններում պարբերական կատարում են-

թաղրող դատական ակտով պարտատերը չունի այլ մեխանիզմ իր օգտին կայացված վճռի կատարում ստանալու, եթե բաց է թողել կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը:

Երեխաների իրավունքները

17.10.2019թ.

12. Նարինե Մելքոնյանն ընդդեմ Ալբերտ Ալավերդյանի, քաղ. գործ թիվ ԵԳ/1057/02/18

էջ

176-188

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է երեխայի բնակության վայր սահմանելու վերաբերյալ գործերի քննության ընթացքում երեխայի լաված լինելու իրավունքի իրացման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երեխայի լավագույն շահը պարզելու համար հարկ է հաշվի առնել նաև նրա լաված լինելու իրավունքի իրացման հնարավորությունը: Վճռաբեկ դատարանն ընդգծել է այն կարևոր հանգամանքը, որ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն ապահովելու իր հայացքները ձևակերպելուն ունակ երեխայի համար դրանք ազատորեն արտահայտելու իրավունքի իրացումը: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ միջազգային պայմանագրերով և թե՛ օրենսդրությամբ երեխային իրավունք է վերապահվել իր իրավունքներն ու շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս սեփական կարծիքն արտահայտել դատական և այլ մարմիններում: Այսինքն, երեխան իրավունք ունի ազատ արտահայտել իր կարծիքը, որը երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը սահմանել է որպես պարտադիր պահանջ, իսկ մինչև տասը տարեկան երեխայի կարծիքը հաշվի առնելը վերապահել է դատարանի հայեցողությանը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դատարանն այս հայեցողական լիազորությունն իրականացնելիս պետք է հաշվի առնի երեխայի տարիքը և հասունությունը, ինչպես նաև գործի հանգամանքները, մասնավորապես՝ արդյոք երեխայի նշված իրավունքն արդեն իսկ իրացվել է համապատասխան իրավասություն ունեցող այլ մարմինների կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երեխայի բնակության վայրը որոշելու իրավակարգավորման համատեքստում մինչև տասը տարեկան երեխայի կարծիքը պարտադիր չէ՝ դատարանի համար, և վերոնշյալ խնդիրը լուծելիս դատարանը պետք է եղի կոնկրետ գործի հանգամանքներից, երեխայի տարիքից և հասունության մակարդակից և առաջնորդվի երեխայի լավագույն շահերով՝ ապահովելով «երեխայի լավագույն շահերի» բովանդակությունը կազմող անհրաժեշտ պայմանների առկայությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

28.03.2019թ.

13. Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնին ընդդեմ «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» հիմնադրամի, քաղ. գործ թիվ ԵԿԳ/4054/02/16

էջ

189-214

Խնդիր. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրումներին.

- աշխատողին կարգապահական տույժի ենթարկելու մասին գործատուի կայացրած անհատական իրավական ակտը ընդ պահից է ուժի մեջ մտնում և ինչ ժամկետում կարող է բողոքարկվել դատարան, եթե որպես կարգապահական տույժ՝ կիրառվել է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը,
- արդյոք վերոգրյալ ժամկետն իր բնույթով հայցային վաղեմության ժամկետ է:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Զարգացնելով գործատուի կայացրած անհատական իրավական ակտն ուժի մեջ մտնելու և ուժի մեջ չմտած ակտի վիճարկման հնարավորության հարցերի վերաբերյալ *Խորեն Նասիբյանն ընդդեմ «Ինտերթավո» ՍՊԸ-ի* գործով 20.07.2017 թվականի կայացրած որոշմամբ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ աշխատանքի ընդունման և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահը պայմանավորված է տվյալ ակտի մեկ օրինակն աշխատողին հանձնելու պահով: Ընդ

որում, պատահական չէ, որ օրենսդրի կողմից կարևորվել է աշխատանքի ընդունման և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի պատշաճ ծանուցման հարցի դեպքում այդ իրավական ակտի **մեկ օրինակ**ն աշխատողին հանձնելու հանգամանքը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դա պայմանավորված է նշված իրավական ակտերի՝ աշխատողների հիմնական աշխատանքային իրավունքների ծագման կամ դադարման վրա ուղղակիորեն ազդելու հատկանիշով:

Այսպիսով՝ եթե աշխատողն ընդունվում է աշխատանքի կամ վերջինիս հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծվում է, ապա պատշաճ ծանուցում պետք է համարել բացառապես ակտի օրինակն աշխատողին հանձնելու պահը:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում օրենսդրի կողմից գործատուի համար սահմանվել է աշխատողի նկատմամբ ներգործության կիրառման երկու տարբերակ՝

1) գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծում՝ առանց աշխատողին նախապես ծանուցելու պարտականության, կամ

2) կարգապահական պատասխանատվության կիրառում՝ մասնավորապես որպես կարգապահական տույժ կիրառելով աշխատանքային պայմանագրի լուծումը, որի դեպքում գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական տույժի կիրառման ընթացակարգը:

Նման այլընտրանք նախատեսելու նպատակը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ աշխատողի և գործատուի շահերի հավասարակշռումն է՝ նկատի ունենալով, որ հնարավոր են իրավիճակներ, երբ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը պահպանելը և անհպաղ աշխատանքային պայմանագիրը չլուծելը կարող է լրացուցիչ վնասներ հասցնել գործատուին՝ անհարկի անհամաչափություն առաջացնելով աշխատողի և գործատուի շահերի միջև (օրինակ՝ եթե աշխատողը հրապարակել է գաղտնիք, կամ դրամական արժեքներ սպասարկելիս նյութական վնաս է հասցրել գործատուին):

Անդրադառնալով կիրառված կարգապահական տույժի բողոքարկման ժամկետներին՝ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ թեև կարգապահական տույժերի համար բողոքարկման ժամկետը մեկ ամիսն է, սակայն այս ժամկետը կիրառելի է միայն ավելի մեղմ տույժերի՝ նկատողության և խիստ նկատողության կիրառման դեպքերում: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ կիրառվել է կարգապահական տույժ աշխատանքային պայմանագրի լուծման տեսքով, ապա աշխատողն իրավունք ունի համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթ) ստանալու օրվանից հետո **երկու ամսվա ընթացքում** բողոքարկել այն՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բողոքարկման ժամկետը: Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է հետևյալ հանգամանքով.

Այն դեպքում, երբ աշխատողի նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ՝ աշխատանքային պայմանագրի լուծման տեսքով, աշխատանքային հարաբերությունները դադարում են, հետևաբար անձի՝ որպես աշխատողի կարգավիճակը դադարում է: Նման պարագայում, փաստորեն, կարգապահական տույժի նշանակման հետ կապված հարաբերությունը անմիջականորեն հանգեցնում է այլ հարաբերության՝ կապված աշխատանքային պայմանագրի լուծմամբ առաջացած իրավունքների և պարտականությունների հետ: Ուստի և տրամաբանական է՝ տարբերակված մոտեցում կիրառել կարգապահական տույժի (նկատողություն, խիստ նկատողություն) բողոքարկման ժամկետի (*մեկ ամիս*) և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ իրավական ակտի (այդ թվում՝ որպես կարգապահական տույժ կիրառելու դեպքում) բողոքարկման ժամկետի (*երկու ամիս*) միջև:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև աշխատողների հիմնական իրավունքների առավելագույնս պահպանման անհրաժեշտությամբ: Ինչպես արդեն նշվել է, օրենսդիրն առանձնահատուկ կարևորել է աշխատանքի ընդունման և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին իրավական ակտերի նշանակությունը՝ մասնավորապես դրանց ուժի մեջ մտնելու համար պարտադիր համարելով այդ ակտի մեկ օրինակն աշխատողին հանձնելը: Հետևաբար նույն տրամաբանությամբ անհրաժեշտ է կարևորել աշխատողների իրավունքները նաև այն դեպքում, երբ վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է՝ թեկուզև որպես կարգապահական տույժ: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ օրենսդիրը, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ իրավական ակտը բողոքարկելու ժամկետ սահմանելով երկու ամիսը, նպատակ ունի առավելագույնս ապահովել աշխատողների խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը: Ուստի նույն սկզբունքով պետք է առաջնորդվել նաև այն դեպքում, երբ աշխատանքային պայման-

նագրի լուծումը կիրառվել է որպես կարգապահական տույժ՝ հաշվի առնելով, որ աշխատողը պետք է հավասար հնարավորություն ունենա ապահովելու իր խախտված իրավունքների դատական պաշտպանությունը՝ անկախ նրանից, թե ինչ հիմքով է գործատուի կողմից լուծվել աշխատանքային պայմանագիրը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ նկատողության և խիստ նկատողության ձևով կիրառված կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իսկ այն դեպքերում, երբ կարգապահական տույժը կիրառվել է աշխատանքային պայմանագրի լուծման ձևով՝ համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

2) Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված ժամկետն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար այդ ժամկետն իր բնույթով համապատասխանում է հայցային վաղեմության ժամկետին: Հաշվի առնելով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը չի պարունակում հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ որևէ դրույթ, ուստի աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները (*զրեն, Ադիկ Արդարյանն ընդդեմ «Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մասնկապարանների մասնագիտացված մարզադպրոց» ՀՈԱԳ-ի թիվ 1, Կ/1071/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հետևությունը կիրառելի է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված՝ կարգապահական տույժի բողոքարկման ժամկետի նկատմամբ, քանի որ այս դեպքում նույնպես ՀՀ աշխատանքային օրենսգրքը հատուկ կարգավորում չի նախատեսում: Այսինքն՝ նշված ժամկետը նույնպես հայցային վաղեմության հատուկ ժամկետ է, որի նկատմամբ նույնպես կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները:

Վճռաբեկ դատարանը, մասնավորեցնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներն աշխատանքային հարաբերություններում գործող հայցային վաղեմության ժամկետների նկատմամբ, արձանագրել է, որ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ անհատական իրավական ակտը բողոքարկելու ժամկետի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու համար պատասխանողը մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը պետք է ներկայացնի հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում, այսինքն՝ դատարանն իրավասու չէ հայցային վաղեմության ժամկետ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

Մույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռ. Հակոբյանը և Գ. Հակոբյանը ներկայացրել են հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հատուկ կարծիքի հեղինակները, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական մասում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից որպես կիրառված կարգապահական տույժի տեսակ պայմանագիրը լուծելիս այդ տույժի բողոքարկման ժամկետի վերաբերյալ արտահայտած կարծիքի հետ, արձանագրել են, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի պահանջները: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմի մեկնաբանումը չպետք է փոփոխի դրա իմաստը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ այդ հոդվածների կարգավորման համատեքստից ելնելով՝ հեղինակները գտել են, որ օրենսդիրը նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերը, ըստ էության, առանձնացրել է նույն հոդվածում նշված մնացած վեց հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերից՝ միայն դրանք որակելով որպես աշխատողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժի տեսակ: Մինչև նույն ժամանակ օրենսդիրը տարբերակված մտեցրում է ցուցաբերել նաև գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրերը լուծելու մասին անհատական իրավական ակտը դատական կարգով բողոքարկելու ժամկետների առումով՝ դրանցից նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծման մասով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով սահման-

նելով մեկամսյա ժամկետ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո, իսկ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածում նշված մասցած վեց հիմքերով աշխատանքային պայմանագրերը լուծելու մասով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանելով երկամսյա ժամկետ անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո:

Հատուկ կարծիքի հեղինակները, նպատակ ունենալով բացահայտել նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը, արձանագրել են, որ մինչև 12.04.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը նաև սահմանել է, որ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան:

Մինչև 22.10.2015 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածը սահմանել է, որ կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Այսինքն՝ մինչև 12.04.2014 թվականը աշխատանքային պայմանագիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերում նշված հիմքերից մեկով լուծելու ձևով կիրառված կարգապահական տույժի համար, ըստ էության, ևս գործել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ այն դատական կարգով բողոքարկելու մեկամսյա ժամկետը, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածը դատական կարգով կարգապահական տույժի բողոքարկման որևէ ժամկետ չի նախատեսել:

Դրանից հետո օրենսդիրը փոփոխություն է կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածում, որն ուժի մեջ է մտել 12.04.2014 թվականին, որի համաձայն՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում դատարան դիմելու համար սահմանել է համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո երկամսյա ժամկետ: Նշված կարգավորումը, ըստ էության, վերաբերել է նաև վերը նշված կարգապահական տույժի դատական կարգով բողոքարկմանը, քանի որ այդ պահին ևս ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածը դատական կարգով կարգապահական տույժի բողոքարկման որևէ ժամկետ չի նախատեսել: Մինչդեռ տվյալ կարգավորումը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածի մասով գործել է մինչև 22.10.2015 թվականը, այսինքն՝ մինչև այն պահը, երբ օրենսդրի կողմից փոփոխություն է կատարվել այդ հոդվածում, և արդեն կարգապահական տույժը դատական կարգով բողոքարկելու համար սահմանվել է մեկամսյա ժամկետ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո:

Վերոգրյալից բխում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածում փոփոխություն կատարելու վերաբերյալ այդ ակտն ընդունող մարմնի նպատակը եղել է այն, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետից տարբերվող ժամկետ սահմանի գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրերը լուծելու մասին անհատական իրավական ակտը դատական կարգով բողոքարկելու ժամկետների առումով՝ դրանցից նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծման մասով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանելով մեկամսյա ժամկետ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո:

Այսինքն՝ տվյալ դեպքում օրենսդիրն ուղղակիորեն կարգավորել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով կիրառված կարգապահական տույժի բողոքարկման ժամկետի հետ կապված աշխատանքային հարաբերությունները՝ սահմանելով ինչպես հատուկ ժամկետը, այնպես էլ դրա հաշվարկման կարգը, որի պայմաններում հեղինակները վերը նշված դիրքորոշումների համատեքստում անթույլատրելի են համարել օրենքի անալոգիա կիրառելը՝ այդ հարաբերությունները ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հարաբերություններին նմանեցնելը և վերջինով նախատեսված երկամսյա ժամկետը վերը նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելու նաև այն պատճառաբանությամբ, որ դրանով տվյալ դեպքում խտացվում են իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմաններն ու կարգը:

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

07.06.2019թ.

14. Գագիկ Հակոբյանն ընդդեմ Արմեն Հակոբյանի, սնանկության գործ թիվ ԱԿԳ-1/0006/04/16

էջ
215-224

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- արդյո՞ք պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրով այլ կարգ նախատեսված լինելը կարող է խոչընդոտ հանդիսանալ կառավարչի կողմից պարտապահին պատկանող գույքի վաճառքն ուղղակի գործարքով իրականացնելու համար,

- արդյո՞ք սնանկության վարույթում պարտապահի պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկան իրացնելիս պետք է հիմք ընդունվեն նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով գրավի առարկայի իրացման վերաբերյալ սահմանված կանոնները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ և 77-րդ հոդվածները նախատեսում են պարտապահին պատկանող գույքի իրացման ընթացակարգերը: Այսպես՝ պարտատերերի պահանջները բավարարելու նպատակով սնանկության գործով կառավարչին է վերապահված ձեռնարկել պարտապահի գույքի վաճառքը՝ հրապարակային սակարկությունների կամ ուղղակի գործարքի միջոցով: Ընդ որում, պարտապահի գույքը հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով վաճառքի համար սնանկության գործով կառավարչի պետք է գույքագրման արդյունքներով կազմված **գույքի վաճառքի ծրագիրը** ներկայացնի պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի հաստատմանը, որից հետո էլ ստանա դատարանի թույլտվությունը գույքի վաճառքի վերաբերյալ: Ավելին, հաշվի առնելով, որ **պարտատերերի ժողովի (կամ խորհրդի) կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագիրն այն հիմքն է**, որի հիման վրա իրականացվում է գույքի վաճառքը, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտապահի գույքի վաճառքը պետք է տեղի ունենա բացառապես հաստատված ծրագրին համապատասխան:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստանալով կառավարչի միջնորդությունը՝ գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու և այնուհետև գույքի վաճառքը թույլատրելու մասին, դատարանը պետք է գնահատի գույքի վաճառքի ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին, որից հետո գնահատի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ նորմերով սահմանված ընթացակարգային նորմերի պահպանվածությունը:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալ այն դեպքերին, երբ վաճառքի է դրվում պարտապահի պարտավորությունների կատարման նպատակով սնանկության միջոց հանդիսացող գրավի առարկան: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել սնանկության վարույթում գրավի առարկայի իրացման գործընթացը դիտարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումների համատեքստում:

Հիմք ընդունելով նախկին արտահայտած իրավական դիրքորոշումները և զարգացնելով դրանք՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում է գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու արտադատական կամ դատական կարգ: Ընդ որում, արտադատական կարգի կիրառման դեպքում գրավի առարկան իրացվում է ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների, իսկ դատական կարգով բռնագանձման դեպքում՝ հրապարակային սակարկությունների միջոցով: Երկու դեպքում էլ գրավատուի և գրավառուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ կարգ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի և 47-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների համաձայն՝ պարտապահին կամ երրորդ անձին պատկանող գրավի առարկան ներառվում է պարտապահի գույքի կազմում, բացառությամբ նույն օրենքով սահմանված այն դեպքի, երբ պարտատերը ծանուցել է դատարանին նորատորիում չտարածելու մասին, իսկ դատարանը թույլատրել է արտադատական կարգով դրա իրացումը: Այդուհանդերձ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքը որևէ առանձնահատկություն չի նախատեսում գրավի առարկայի իրացման եղանակների վերաբերյալ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե սնանկության վարույթում սնանկ ճանաչված պարտապահի պարտավորությունն ապահովված է գրավով, ապա միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքը գործել չի կարող, քանի որ գրավի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված են այլ առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն սնանկության վարույթի ընթացքում: Նման եզրահանգման համար Վճռաբեկ

դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ եթե պարտապանի պարտավորությունն ապահովված է գրավով, ապա «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները ստորադասում են գրավատուի շահերը, որպիսի պայմաններում կիրառման ենթակա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնները՝ բացառելու համար գույքի սեփականատեր գրավատուի իրավունքների ոտնահարումը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները գրավով ապահովված պարտավորության նկատմամբ կիրառելիս և գրավի առարկա գույքի վաճառք իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև գրավատուի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված երաշխիքները՝ մասնավորապես գրավի առարկայի վրա դատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգավորումները:

07.06.2019թ.

15. Գագիկ Հակոբյանն ընդդեմ Արմեն Հակոբյանի, սնանկության գործ թիվ ԱՎԴ-1/0006/04/16

էջ
225-233

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ սնանկության վարույթում գրավատու հանդիսացող երրորդ անձի կողմից իր գույքի վաճառքին վերաբերող գործընթացին մասնակցելու իրական հնարավորության ապահովմանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Հիմք ընդունելով ինչպես ՀՀ սահմանադրական դատարանի 19.07.2016 թվականի թիվ ՄԴՈ-1294 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, այնպես էլ թիվ ԵՇԴ/0072/04/17 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2018 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունն ապահովված է երրորդ անձ գրավատուին պատկանող գույքի գրավով, ապա վերջինս ոչ միայն պետք է իրապես տեղեկացվի պահանջների ներկայացման և հաստատման ընթացակարգի, այլ նաև իր գույքի վաճառքին վերաբերող գործընթացի մասին, քանի որ հակառակ մտտեցման պարագայում ուղղակիորեն սահմանափակվում են երրորդ անձ գրավատուի սեփականության և դատական պաշտպանության իրավունքները, այդ թվում՝ վերջինս զրկվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված իր իրավունքից օգտվելու իրական հնարավորությունից:

07.06.2019թ.

16. «Կրիոսան» ՍՊԸ-ն ընդդեմ «Տորգտրանս» ՍՊԸ-ի, սնանկության գործ թիվ ԵԱԲԴ/0058/04/16

էջ
234-241

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ պարտապանի գույքի կազմից գույքային միավոր հանելու իրավական հնարավորության հարցին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառվում է պարտապանին պատկանող ցանկացած գույք՝ բացառությամբ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված իրավունքով պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար ապահովված իրավունքով պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարում ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ քաղաքացիական օրենսդրության սահմանված ընդհանուր կարգով, սակայն միայն այն դեպքում, երբ տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու վերաբերյալ՝ ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին: Այսինքն՝ օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռելով ապահովված պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարումը գրավադրված գույքի հաշվին՝ շրջանցելով սնանկության գործով վարույթը, միաժամանակ սահմանել է այն պարտադիր պայմանը, որի պահպանման դեպքում միայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը կարող է գործել: Նշված պայմանի չպահպանման դեպքում գրավադրված գույքը նույնպես ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում, և ապահովված

պարտատերը դրանից բավարարում կարող է ստանալ բացառապես սնանկության վարույթի շրջանակներում՝ ընդգրկվելով պարտատերերի ցանկում:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա կիրառվում են սահմանափակումներ՝ պարտատերերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով: Այդ սահմանափակումներն **առաջնահերթ ուղղված են պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն:** Տվյալ սահմանափակումները կարող են վերացվել միայն սնանկության գործի շրջանակներում պարտապանին սեփականության իրավունքով պատկանող կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում գույքի իրացման նպատակով՝ պարտատերերի պահանջների կատարումն ապահովելու համար:

Հետևաբար «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սնանկ ճանաչված **անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը** պարտապանի գույքի կազմից հանել հնարավոր է, **եթե գույքը գրավի առարկա է,** և պարտատերը դատարանին ծանուցել է տվյալ գույքի նկատմամբ մտրատրիում չտարածելու մասին: Ուստիև պարտապանին պատկանող այլ գույք չի կարող հանվել պարտապանի գույքի կազմից:

25.07.2019թ.

17. «Արդշինբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի, սնանկության գործ թիվ ԵԱԲԳ/0119/04/17

էջ
242-247

Խնդիր. Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելու թույլտվության մասին դեռևս չկատարված որոշման առկայության պայմաններում պարտապանի լուծարման վարույթ սկսելու իրավական հնարավորության հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը փաստել է, որ պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացվում է դատարանի որոշմամբ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո մինչև պարտապանի լուծարման գործընթացը սկսվելը (բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի): Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը կոնկրետ ժամկետային սահմանափակում չի նախատեսել պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելու թույլտվություն տալու համար: Այդուհանդերձ, նման կարգավորումը չի կարող մեկնաբանվել որպես դատարանի բացարձակ հայեցողություն: Դատարանը, թույլատրելով իրականացնել պարտապանի գործունեության ստուգում կամ ուսումնասիրություն, իր կայացրած որոշման կատարման հնարավորության ապահովման նպատակով պետք է պարտապանի լուծարման գործընթաց չսկսի այնքան ժամանակ, քանի դեռ ողջամիտ ժամկետում իր կայացրած դատական ակտի կատարման հնարավորություն չի ընձեռել դատական ակտի հասցեատիրոջը:

02.08.2019թ.

18. «Պայթարդ» ՍՊԸ-ն ընդդեմ «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի, սնանկության գործ թիվ ԵՇԳ/0111/04/16

էջ
248-259

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու հարցին այն դեպքում, երբ նշված ծրագիրը պարտատերերի ժողովում չի հաստատվել:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ պարտապանի գույքի վաճառքի միջնորդությունը դատարան ներկայացնելու և այդ միջնորդության դեմ պարտատերերի կողմից առարկություն ներկայացնելու ընթացակարգին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Անդրադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասի կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը սահմանել է որոշակի բացառություններ, որոնց դեպքում գույքի վաճառքի ծրագիրը դատարանը կարող է հաստատել՝ անկախ պարտատերերի խորհրդի կամ ժողովի որոշումից: Այդ բացառություններն են՝

1. գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից հաստատված չլինելը, կամ
2. ծրագրի հաստատման համար խորհրդի կամ ժողովի նիստերի անցկացման անհնարինությունը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ դեպքերի թվին է դասվում

Նաև պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից ծրագրի հաստատման համար որոշում կայացնելու անհնարինությունը՝ նկատի ունենալով, որ խորհրդի կամ ժողովի նիստերը կարող են հրավիրվել և անցկացվել՝ առանց դրանց ընթացքում որևէ որոշում կայացնելու: Մեծան հեղափոխությունը նույնպես են նիստերի անցկացման անհնարինության հետ՝ նկատի ունենալով, որ նիստի նպատակը որոշում կայացումն է, և եթե անհնար է որոշում կայացնել, ուստի նիստն էլ դառնում է իմաստագուրկ:

Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ օրենսդիրը գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու որոշման կայացման անհնարինության դրսևորման կոնկրետ չափորոշիչներ չի նախատեսել, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ անհնարինության համատեքստում կարող է ներառվել ցանկացած օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառ, ինչը հնարավորություն չի տալիս խորհրդի կամ ժողովի կողմից հաստատելու կառավարչի ներկայացրած վաճառքի ծրագիրը (պարտատերերի միջև տարաձայնություններ, պարտատերերի անհամաձայնություն կառավարչի ծրագրին, որոշման կայացման քվորումի անբավարարություն, նիստերի բազմակի հետաձգումներ և այլն): Նկատի ունենալով, որ կառավարչի գործառնությունների նպատակը սնանկության վարույթում պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռումն է (յուն. օրինակ, թիվ ԵՄԳ/0049/04/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը), օրենսդիրը անանատիպ դեպքերի համար կառավարչին հնարավորություն է տվել չկաշկանդվել պարտատերերի դիրքորոշումը (կամքով) և պարտապանի գույքի վաճառքի ծրագրի հաստատումն իրականացնել ուղղակիորեն դատական կարգով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված կարգավորումն այն մասին, որ ծրագրի փոփոխությունները կատարվում են ծրագրի ընդունման համար սահմանված կարգով, թույլ է տալիս եզրակացնել, որ պարտապանի գույքի վաճառքի հաստատված ծրագիրը, անկախ նրանից, թե որ ընթացակարգով է հաստատվել, անվերապահորեն վերջնական փաստաթուղթ չէ և կարող է ենթարկվել փոփոխության: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանել այն դեպքերը, որոնք հիմք կարող են ծառայել հաստատված ծրագիրը փոփոխության ենթարկելու համար: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ծրագրի փոփոխությունը կարող է վերաբերել ինչպես վաճառքի մեջ ներառվող գույքի կազմին, քանակին, գնին և այլն, այնպես էլ ծրագրով նախատեսված ընթացակարգերին:

Բացի այդ, նկատի ունենալով, որ ծրագրի փոփոխման համար քննարկվող իրավական դրույթը սահմանել է նույն իրավակարգավորումը, ինչ նախատեսված է ծրագրի հաստատման համար, Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ ծրագրի փոփոխությունը ենթակա է հաստատման պարտատերերի խորհրդի կամ ժողովի որոշմամբ, այնուհետև (այդ թվում՝ խորհրդի կամ ժողովի որոշման բացակայության դեպքում)՝ դատական կարգով: Հետևաբար եթե պարտապանի գույքի վաճառքի հաստատված ծրագրում բացակայում է գույքագրման ցանկում ներառված որևէ գույք, կամ ի հայտ է գալիս նախկինում չբացահայտված այլ գույք, ապա նման դեպքերի համար օրենսդիրը նախատեսել է ծրագրի փոփոխման ինստիտուտից օգտվելու իրավական հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ նաև կառավարչի կողմից գույքը վաճառելու թույլտվության վերաբերյալ միջնորդության ժամկետներին:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ սնանկության կառավարչի համար օրենսդիրը սահմանել է պարտականություն՝ մինչև վաճառքի թույլտվության միջնորդությունը դատարանին ներկայացնելը երեք օր առաջ այդ մասին պարտատերերին տեղեկացնել: Պարտատերերի կողմից կառավարչի միջնորդության դեմ դատարանին առարկություններ ներկայացնելու համար սահմանվելով յոթօրյա ժամկետ՝ օրենսդիրը փաստորեն նպատակ է հետապնդել կառավարչի միջնորդության վերաբերյալ դիրքորոշում ձևավորելու և դրան համապատասխան վարքագիծ դրսևորելու համար պարտատերերի համար նախատեսել բավարար ժամանակահատված, որն ընդհանուր թվով պետք է կազմի տասն օր:

Ինչ վերաբերում է սահմանված ժամկետի ընթացքում պարտատերերի կողմից գույքի վաճառքի վերաբերյալ միջնորդության դեմ առարկություն ներկայացնելու ընթացակարգին, ապա «Մանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ.

1. պարտատերերը կառավարչի կողմից վաճառքի թույլտվություն տալու միջնորդության վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առարկություններ,
2. այդ առարկությունները կարող են ներկայացնել դատարանի կողմից միջնորդու-

թյան կապակցությամբ որոշման կայացմանը նախորդած յոթնօրյա ժամանակահատվածում,
3. առարկությունում պետք է ներկայացվեն առաջարկվող գույքի մեկնարկային գնից ավելի բարձր մեկնարկային գին,

4. պարտատերերը պետք է սնանկության հատուկ հաշվին վճարեն իրենց կողմից առաջարկվող մեկնարկային գնի 5 տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ:

Վերոգրյալ իրավական նորմի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը ոչ միայն սահմանել է վաճառքի թույլտվության միջնորդության դեմ բերված առարկության հստակ ժամանակահատված, այլև նախատեսել է, որ առարկությունը պետք է վերաբերի կոնկրետ գույքի վաճառքի մեկնարկային գնին: Նշված վավերապայմաններին չբավարարող առարկությունները չեն կարող սույն իրավանորմի իմաստով գնահատվել որպես վաճառքի թույլտվության վերաբերյալ ներկայացված միջնորդության դեմ բերված առարկություն և դատարանի կողմից այդ կապակցությամբ չի կարող կիրառվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի կանոնը:

18.12.2019թ.

19. ՀՀ ֆինանսների նախարարության Կոտայքի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Մազանե» ՍՊԸ-ի, սնանկության գործ թիվ ԵՇԴ/0017/04/15

Էջ
260-276

Խնդիր. Արդյո՞ք պարտապանը կարող է սնանկ ճանաչվել պարտատիրոջ դիմումի հիման վրա այն դեպքում, երբ պարտատիրոջ օգտին կայացված դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով հարուցված կատարողական վարույթն ավարտվել է պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով այն պարագայում, երբ հարկադիր կատարողը և (կամ) պահանջատերն ձեռնարկել են օրենքով թույլատրելի բոլոր հնարավոր միջոցները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Ջարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտատիրոջ օգտին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում պարտատերն ինքն է որոշում ընտրել դատական ակտի կատարման ճանապարհը՝ հարկադիր կատարման, թե սնանկության վարույթի միջոցով: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտատիրոջ կողմից ընտրված եղանակն ինքնանպատակ չպետք է լինի, այսինքն՝ եթե պարտատերն ընտրել է սնանկության վարույթով իր պահանջի բավարարում ստանալու հնարավորությունը, ապա չի կարող դիմել նաև դատական ակտի հարկադիր կատարման, որպիսի արգելքը բխում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածից (այն է՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները, արգելվում են կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները, իսկ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում է պարտապանի վերաբերյալ հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կատարողական վարույթ): Նույն տրամաբանությամբ եթե պարտատերն ընտրել է դատական ակտի հարկադիր կատարման ճանապարհը, ապա քանի դեռ կատարողական վարույթն իր համար բացասական ելքով չի ավարտվել, պարտատերը չի կարող դիմել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով (վերոգրյալ պատճառաբանությունը կիրառելի չէ այն դեպքի նկատմամբ, երբ կատարողական վարույթն ավարտվել է պարտատիրոջ կողմից կատարողական թերթը վերադարձնելու մասին դիմումի հիմքով, քանի որ այս դեպքում կատարողական վարույթի ավարտը պայմանավորված է պարտատիրոջ կամահայտնությամբ, ինչն էլ օբյեկտիվորեն բացառում է կատարողական վարույթը պարտապանի համար բացասական ելքով ավարտված որակելու հնարավորությունը):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կատարողական վարույթը վերջնականապես, առանց վերսկսման հնարավորության ամփոփվում է կատարողական վարույթի կարճման դեպքում: Մինչդեռ կատարողական վարույթի ավարտի դեպքում պահպանվում է վերսկսման հնարավորությունը: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կատարողական վարույթի առկայության պայմաններում պարտատիրոջ կողմից սնանկության դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է գնահատել կատարողական վարույթի ավարտի հիմքերի գնահատմամբ: Այսինքն՝ եթե կատարողական վարույթն ավարտվել է այնպիսի հիմքով, որն այդ պահին պարտատիրոջ համար բացասական է թեկուզև այն իմաստով, որ պարտատերն իր պահանջի անմիջապես բավարարում չի ստանում (օրինակ, եթե անհաս-րին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահան-

ջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն), ապա պարտատերը չպետք է զրկվի սնանկության դիմում ներկայացնելու հնարավորությունից: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորվել է նաև այն հանգամանքով, որ սնանկության վարույթը, ի տարբերության կատարողական վարույթի, ավելի ճկուն է պարտատիրոջ պահանջների բավարարում ստանալու տեսանկյունից (մասնավորապես՝ սնանկության կառավարիչն ունի պարտապանի դերիտորական պարտքերը հավաքագրելու լիազորություն, անհատույց կատարված փոխանցումները հետ ստանալու լիազորություն և այլն):

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե կատարողական վարույթն ավարտվել է այնպիսի հիմքով, որը տվյալ պահին պարտատիրոջ համար կարող է գնահատվել որպես բացասական ելքով կատարողական վարույթի ավարտ, ապա պարտատերը չպետք է զրկվի սնանկության վարույթով իր պահանջի բավարարում ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով, որ հակառակ մեկնաբանության դեպքում կխախտվի պարտապանի և պարտատիրոջ շահերի հավասարակշռությունը, պարտատերը կզրկվի իր օգտին կայացված դատական ակտը կատարելու հնարավորությունից, որի արդյունքում կսահմանափակվեն վերջինիս դատական պաշտպանության և սեփականության իրավունքները:

Սույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորներ Ս. Անտոնյանը, Ա. Բարսեղյանը, Տ. Պետրոսյանը և Է. Մեղրակյանը ներկայացրել են հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հատուկ կարծիքի հեղինակներն արձանագրել են, որ *«Հ կառավարությանն առնաթեր պետական նվաճումների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչությունն ընդդեմ «Հիդրոէներգաշին» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0137/04/13 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի նախադեպային որոշմամբ արտահատված իրավական դիրքորոշումը կառուցված է եղել բացառապես դատական ակտի հարկադիր կատարման վարույթում պարտապանի՝ բռնագանձման ենթակա գույքի անբավարարության /բացակայության/, ինչպես նաև կատարողական թերթ ներկայացրած այլ պարտատերերի առկայությամբ պայմանավորված դատական ակտի /ակտերի/ ամբողջական կատարման հնարավորության հետ, որը բխում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից, և դատական ակտի հարկադիր կատարման վարույթում պարտատիրոջ համար «բացասական ելք» իրավական եզրույթն ըստ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման պայմանավորվել և մեկնաբանվել է բացառապես «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի և սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման համատեքստում:*

Հարկ է նշել, որ սույն գործով ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը կիրառել են թիվ ԵԿԴ/0137/04/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, հետևաբար սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, երբ հարկադիր կատարողը չի արձանագրել գույքի անբավարարություն կամ բացակայություն, Վճռաբեկ դատարանի նշված նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումը կիրառելի է անվերապահորեն, քանի որ չկա պարտատիրոջ պահանջի բավարարմանը սպառնացող բացասական ելք:

Սույն գործով կատարողական վարույթում պարտապան է հանդիսանում «Մազանե» ՍՊԸ-ն և ոչ թե «Մազանե» ՍՊԸ-ի տնօրենը, որի հետախուզումն ու չհայտնաբերումը որևէ աղերս չունեն գույքի բռնագանձման վարույթի հետ: Հետևաբար՝ սնանկ ճանաչելու դիմումը մերժելով՝ դատարանը չէր կարող դիմողին զրկել հարկադիր կատարման ներկայացրած վճռով որոշված գումարի բռնագանձման իրավունքից: Պետք է փաստել նաև, որ դիմողը լիարժեքորեն չի օգտվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով պահանջատիրոջը վերապահված իրավունքներից, որպիսի հանգամանքը չի կարող սեփականության իրավունքի պաշտպանության անվան տակ հիմք հանդիսանալ կատարողական վարույթում պարտապան ճանաչված «Մազանե» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու համար:

Վճռաբեկ դատարանը պետք իրավական գնահատական տար այն հանգամանքին, որ վճռաբեկ բողոքում դատարանների կողմից մինևսույն տարմի հակասական մեկնաբանություններով կիրառված լինելու հանգամանքը հիմնավորելու նպատակով ներկայացված դատական ակտերում «պարտատիրոջ համար բացասական ելք» իրավական եզրույթը ստորադաս դատարանները կիրառել են Վճռաբեկ դատարանի իրավական մեկնաբանությանը հակասող մեկնաբանությամբ, մինչդեռ սույն գործով այն ճիշտ էր մեկնաբանվել և կիրառվել, ուստիև սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման:

Ինչ վերաբերվում է Վճռաբեկ դատարանի որոշմամբ արված վերլուծությանը սույն

գործի և թիվ ԵԿԴ/0137/04/13 գործի փաստական հանգամանքների տարբերության վերաբերյալ, ապա պետք է նշել, որ տարբեր գործերով փաստական հանգամանքների տարբերությունները չեն ազդում իրավունքի, իրավական նորմի մեկնաբանման, այդ կապակցությամբ արտահայտված իրավական ընդհանրական դիրքորոշման վրա:

Հարկ է նշել, որ այս դեպքում ընդամենը պետք էր գնահատել, թե վկայակոչված դատական ակտերից, որն է հակասում Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշմանը կամ համապատասխանում դրան, քանի որ հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման առկայության պայմաններում ստորադաս դատարանները պարտավոր են կատարել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով իրենց վրա դրված պարտականությունը՝ հետևելու այդ իրավական դիրքորոշմանը:

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշմամբ պարտադիրք համար կատարողական վարույթի ավարտի բացասական ելք է գնահատել այն իմաստով, որ կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ կասեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով:

Պետք է նշել, որ Վճռաբեկ դատարանի եզրահանգումը կատարողական վարույթով պահանջի անմիջական բավարարում չստանալու յուրաքանչյուր դեպք պահանջատիրոջ համար բացասական ելք գնահատելը վտանգում է սնանկ ճանաչելու համար պարտադիր հիմքի՝ անվիճելիությունը և դրա կետանցի վերաբերյալ ձևավորված իրավակիրառական պրակտիկայի կայունությունն ու որոշակիությունը: Մինչդեռ հարկադիր կատարման ներկայացված դատական ակտի առկայության պայմաններում «պարտապանի կետանց» եզրույթը պայմանավորված է կետանցված պարտավորության հիման վրա կայացված դատական ակտի հարկադիր կատարման վարույթում բացառապես հարկադիր կատարողի գործողություններով:

Ինչ վերաբերվում է Վճռաբեկ դատարանի որոշման այն փաստարկին, որ սնանկության վարույթն ավելի ճկուն է, ապա պետք է ասել, որ դա բավարար հիմնավորում չէ այս հարցով ձևավորված դատական պրակտիկան փոխելու համար, քանի որ սնանկության վարույթի բնթացակարգերի ուսումնասիրությունը և դրա վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկան թույլ չեն տալիս նման եզրահանգում անել զուտ այն հիմնավորմամբ, որ ինչպես պարտապանի, այնպես էլ վերջինիս գույքի և դրա գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում ևս հետախուզումն իրականացվում է ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ընդ որում՝ գույքային և դրամական բռնագանձման վարույթներով պարտապանի գույքի առկայությունը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել, թույլ է տալիս շարունակել կատարողական գործողությունները նույնիսկ պարտապանի բացակայության պայմաններում:

Պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու դեպքում անվիճելի դրամական պարտավորության կետանց իրավական եզրույթը կիրառելի չէ, քանի որ պարտավորության կետանցն արդեն իսկ պայմանավորված է հարկադիր կատարման վարույթի գործընթացներով և չի կարող դրվել սնանկության դիմումի հիմքում, հետևաբար վճռաբեկ բողոքի փաստարկն այն մասին, որ առկա է դատական ակտով հաստատված անվիճելի դրամական պարտավորության 60-օրյա կետանց, հիմնավոր չէ, հաշվի առնելով, որ այդ պարտավորության վերաբերյալ դատական ակտը հարկադիր կատարման ներկայացված լինելու պայմաններում բացակայում են բռնագանձման ենթակա գույքի անբավարարության կամ բացակայության վերաբերյալ հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումներ:

26.12.2019թ.

20. Սարգիս Ռսկանյանի դիմումը՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ԼԴ4/0022/04/18

Էջ
277-289

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ հարցադրումներին.

1) արդյո՞ք կամավոր սնանկության վարույթում պարտատեր-վարկային կազմակերպության կողմից տրված հաճախողի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը կարող է բավարար գնահատվել պարտավորության բնույթը պարզելու համար,

2) արդյո՞ք դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճռի օրինակը կարող է որակվել պարտավորության առկայությունը և դրա չափը հիմնավորող թույլատրելի ապացույց:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը սահմանել է պարտապանին սնանկ ճանաչելու երկու ընթացակարգ՝ **սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում)** կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում):

Սեփական սնանկությունը ճանաչելու դիմումի ձևը և բովանդակությունը սահմանված են «Մասնկության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ օրենսդիրը, հաշվի առնելով սեփական սնանկության ճանաչման նպատակով դատարան դիմելու պարտականության ծագման հիմքերը և սեփական նախաձեռնությամբ սնանկ ճանաչվելու հիմքերը, իմպերատիվ ձևով ամրագրել է կամավոր սնանկության դիմողի կողմից պարտատիրոջ դրամական պահանջի չափի, պարտքի, վստահների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերի՝ համապատասխան հաշվարկներով, պարտավորության կամ դրա մասի (մասերի) կատարման ժամկետի, ժամանակավոր կատարչի թեկնածության վերաբերյալ առաջարկության կամ դատարանի ընտրությանը թողնելու վերաբերյալ համաձայնության մասին դիմումում նշելու պարտականությունը: Օրենսդիրը դիմողի վրա է դրել նաև **առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային արտավորությունների բնույթի և չափի վերաբերյալ** դիմումին կից ապացույց ներկայացնելու պարտականություն՝ չմասնավորեցնելով ապացույցի այն տեսակը, որով կարող են հավաստվել դիմումի քննության համար նշանակություն ունեցող վերոգրյալ փաստական հանգամանքները: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ կամավոր սնանկության դիմումին կից ներկայացված՝ պարտատիրոջ կողմից տրված տեղեկանքը, որը պարունակում է պարտավորության **ծագման հիմքի** վերաբերյալ համապատասխան տեղեկություններ, և որով **բացահայտվում է պարտավորության բնույթը**, ևս կարող է բավարար ապացույց գնահատվել: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սնանկության վարույթի այս փուլում օրենսդիրը կարևորել է միայն պարտավորության բնույթի և չափի բացահայտումը, ինչը պայմանավորված է սնանկության վարույթի հետագա փուլերի, մասնավորապես՝ պարտատերերի կողմից պահանջների ներկայացման փուլի առանձնահատկություններով: Պահանջի հիմքում ընկած փաստական հանգամանքները հիմնավորելու առավել խիստ ապացուցողական շեմ օրենսդիրը սահմանել է այս փուլում՝ պահանջատիրոջ վրա դնելով իր պահանջը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ապացուցման բեռը («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մաս):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ կամավոր սնանկության վարույթի առանձնահատկություններից ելնելով գործում է այն կանխավարկածը, որ **դիմողը չի առարկում** իր՝ պարտատիրոջ հանդեպ ստանձնած պարտավորության գոյության կապակցությամբ, երբ կամավոր սնանկության դիմումին կից դատարան է ներկայացնում պարտավորությունը հավաստող համապատասխան ապացույցներ: Այդ ապացույցները վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից գնահատելուց հետո դատարանը դրանք գնահատում է իրենց համակցության մեջ բավարարության տեսանկյունից՝ պարզելու համար պարտապանին սնանկ ճանաչելու «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով սահմանված հատկանիշների առկայությունը:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ կամավոր սնանկության վարույթում պարտատիրոջ կողմից տրված տեղեկանքը, որը պարունակում է նաև պարտավորության հիմքի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ, բավարար է պարտավորությունների բնույթը պարզված համարելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ նաև կամավոր սնանկության դիմումն արդեն իսկ վարույթ ընդունված լինելու պարագայում դիմումին կից ներկայացված՝ դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճռի օրինակի՝ որպես պարտավորության առկայությունը հիմնավորող ապացույցի թույլատրելիության և արժանահավատության հարցին ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ ՄԻՌ-1293 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը, վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքում հրատարակելով, այն հասանելի է դարձնում ինչպես դատավարության մասնակիցներին, այնպես էլ ցանկացած այլ անձի՝ այդ թվում այլ դատարաններին: Այսինքն՝ դատարանն ունի իրական հնարավորություն վճիռը նույնականացնող համապատասխան բավարար տեղեկությունների (մասնավորապես, վկայակցվող դատական ակտն ընդունած մարմնի անվանումը, դատական ակտի անվանումը, ընդունման ամսաթիվը, գործի համարը) առկայության դեպքում ստուգել վճռի բովանդակությունը և օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքը: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է,

որ այն դեպքում, երբ կամավոր սնանկության վարույթում որպես պարտավորության առկայությունը հիմնավորող ապացույց դիմումին կից ներկայացվում է դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճռի օրինակը, դատարանը՝ դրա արժանահավատությունը գնահատելիս զրկված չէ ՀՀ դատական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատական իշխանության պաշտոնական կայքից օգտվելու և դրա միջոցով վճռի իսկությունը ստուգելու հնարավորությունից:

Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ դատարանի կողմից դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճիռը՝ որպես պարտավորության առկայությունը հիմնավորող ապացույց, ներկայացնելու հնարավորության բացառումը՝ այն ամեն դեպքում անթույլատրելի ապացույց գնահատելով, փաստորեն, ոչ իրավաչափ կերպով ծանրաբեռնում է կամավոր սնանկության դիմողին:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ կամավոր սնանկության դիմումը վարույթ ընդունված լինելու և դիմումին կից՝ ի հիմնավորումս վճարային պարտավորության դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճիռ ներկայացվելու դեպքում, դատարանը պետք է այն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս օգտվի դատական իշխանության պաշտոնական կայքից և տվյալ ապացույցը մյուս թույլատրելի և վերաբերելի ապացույցների հետ միասին գնահատի դրանց բավարարության տեսանկյունից, պարզելու համար պարտապանի սնանկության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը՝ կայացնելու համար պարտապանին սնանկ ճանաչելու մասին կամ կամավոր սնանկության դիմումը մերժելու մասին վճիռ:

27.12.2019թ.

21. «Մանտրա Մակինա Լիմիթեդ» ընկերությունն ընդդեմ «Աշտարակ Կաթ» ՓԲԸ-ի, սնանկության գործ թիվ ԵԱԲԳ/0462/04/16

էջ
290-299

Խնդիր. Վճռաբեկ դատարանը բացահայտել է «ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գին» և «գրավի առարկայի արժեք» հասկացությունների բովանդակությունն այն իրավիճակում, երբ պարտատերերի ցուցակում ընդգրկված պարտատերը միջնորդել է դատարանին որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին փոխանցել գրավի առարկան:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը սնանկության վարույթում առանձնահատուկ ուշադրության է արժանացրել ապահովված պահանջների և դրանց բավարարման հարցը՝ առանձին նորմերով նախատեսելով դրանց հետ կապված հարաբերությունների կարգավորումը: Մասնավորապես, վերը թվարկված կարգավորումների ուժով սնանկության վարույթում ապահովված պահանջատերերն օժտված են իրավական հնարավորությամբ՝ ստանալու գրավի առարկան կամ իրենց նշած անձի օգտին, կամ որպես իրենց սեփականություն: Նման կարգավորումը բխում է ապահովված իրավունքի բնույթից, քանի որ պարտատերը, որը սնանկության վարույթում դարձել է պահանջատեր, պարտապանի հետ որոշակի քաղաքացիաիրավական՝ մասնավորապես պարտավորական հարաբերությունների մեջ մտնելիս ձեռնարկել է միջոցներ ապահովելու իր պահանջի կատարումը՝ հիմնական պարտավորության հետ միասին պարտապանի հետ մտնելով նաև գրավից ծագող հարաբերությունների մեջ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ արժևորելով այն հանգամանքը, որ պահանջատերը (ապահովված իրավունքով պարտատերը) ի սկզբանե ձեռնամուխ է եղել իր պահանջի կատարումն ամբողջությամբ կամ մասամբ ապահովելու այլ միջոցներով, մասնավորապես՝ գրավով, օրենսդիրը նրա համար որոշակի գործիքակազմ է սահմանել իր պահանջի բավարարումը հենց այդ ապահովված իրավունքի առարկայի հաշվին ստանալու համար՝ միաժամանակ նախատեսելով որոշակի պահանջներ այդ իրավունքի իրացման համար:

Անդրադառնալով այդ պահանջներին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ որպեսզի ապահովված պահանջով պահանջատերն օգտվի վերոնշյալ կարգավորմամբ ամրագրված իր հնարավորությունից, նախ և առաջ հարկավոր է, որ ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գինը հավասար լինի ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր լինի դրանից: Այդ նախապայմանին համապատասխանելու դեպքում արդեն պարտատիրոջ առջև դրվում են հետևյալ պահանջները՝

1. փոխհարուցել այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը,
2. փոխհարուցել կառավարչի վարձարությունը՝ գրավի առարկայի արժեքի հինգ

տրոկոսի չափով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրատ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանություններ են ձևավորվել երկրորդ պահանջի կապակցությամբ, մասնավորապես՝ տվյալ իրավիճակում կառավարչի վարձատրությունը հաշվարկելիս *գրավի ստարկայի* արժեքի որոշման կապակցությամբ, ուստի միասնական դատական պրակտիկա ապահովելու նկատառումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում տեղ գտած՝ *«գրավի ստարկայի արժեքի հինգ տրոկոսի չափով կառավարչի վարձատրություն»* արտահայտության մեկնաբանությանը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով ամրագրված իրավանորմի մեկնաբանման կանոնով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում տեղ գտած՝ *«գրավի ստարկայի արժեքի հինգ տրոկոսի չափով կառավարչի վարձատրություն»* արտահայտության բովանդակությունը հարկավոր է բացահայտել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի մի շարք կարգավորումների լույսի ներքո՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելիս կառավարչի կողմից առաջարկվում է մեկնարկային գին, որը, սակայն, աճուրդը չկայանալու դեպքում փոփոխվում է, այն է՝ յուրաքանչյուր հերթական աճուրդը կազմակերպվում է չկայացած աճուրդի մեկնարկային գնի 10 տոկոսի նվազեցմամբ: Վերոգրյալից հետևում է, որ մեկնարկային գինը՝ որպես հրապարակային սակարկության իրականացման համար անհրաժեշտ պայման, հաստատուն չէ և օրենքով նախատեսված դեպքերում ենթակա է փոփոխման:

Մտորադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել այն հանգամանքը, որ վկայակցված հոդվածում խոսվածով գույքի արժեքի նվազումից՝ օրենսդիրը փաստորեն նկատի է ունեցել գույքի մեկնարկային գնի նվազումը, քանի որ վկայակցված կարգավորման մեջ նույնացվել են «ապահովված իրավունքի առարկայի արժեք» և «մեկնարկային գին» հասկացությունները: Այլ կերպ ասած՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրն «ապահովված իրավունքի առարկայի արժեք» հասկացության ներքո նկատի է ունեցել ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գինը:

Այսպիսով, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորման վերլուծության արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ նախ՝ հրապարակային սակարկություններով գույքի իրացման ժամանակ գույքի արժեքը կարող է նվազել, և երկրորդ՝ գույքի արժեքի նվազում ասելով՝ օրենսդիրը փաստորեն նկատի է ունեցել գույքի մեկնարկային գնի նվազումը, քանի որ վերը վկայակցված կարգավորման մեջ օրենսդիրը նույնացրել է «ապահովված իրավունքի առարկայի արժեք» և «մեկնարկային գին» հասկացությունները:

Մտորադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված հոդվածով նույն հերթում գտնվող պահանջատերերի (չապահովված պահանջներով պահանջատերեր) համար օրենսդիրը նախատեսել է հնարավորություն մի շարք պահանջների իրականացման դեպքում գույքը վերցնել որպես տվյալ խմբի բոլոր պարտատերերի ընդհանուր բաժնային սեփականություն **չկայացած աճուրդի մեկնարկային գնով**: Մույն կարգավորումից Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը նախատեսել է նաև մեկ այլ դեպք, երբ հնարավոր է հրապարակային սակարկություններով վաճառվող գույքը վերցնել ի սեփականություն, ընդ որում՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել այն, որ օրենսդիրը նպատակ է հետապնդել որոշակի պահանջների բավարարման դեպքում հանձնել գույքը պարտատերերին ի սեփականություն ոչ թե դրա շուկայական արժեքով, այլ **չկայացած աճուրդի մեկնարկային գնով**: Նշվածից կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը հրապարակային սակարկություններով վաճառվող գույքը պարտատերերին ի սեփականություն հանձնելու դեպքում որևէ իրավական արժեք չի տվել այդ գույքի շուկայական արժեքին, այլ կարևորել է **չկայացած, այսինքն՝ վերջին աճուրդի մեկնարկային գինը**:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի մի շարք կարգավորումների բովանդակության լույսի ներքո վերհանելով օրենսդրի կողմից դրանցում ներդրված նպատակը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում տեղ գտած *«գրավի ստարկայի արժեքի հինգ տրոկոս»* արտահայտության ներքո պետք է նկատի ունենալ իրացվող գույքի *մեկնարկային գնի հինգ տրոկոսը*, և հաշվի առնելով այն

հանգամանքը, որ յուրաքանչյուր հաջորդ աճուրդի դեպքում մեկնարկային գինը փոփոխվում է՝ նվազում է 10 տոկոսով, «գրավի առարկայի արժեքի հինգ տոկոս» ներքո պետք է նկատի ունենալ գրավի առարկայի՝ վերջին չկայացած աճուրդով առաջարկված մեկնարկային գնի հինգ տոկոսը:

Վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում տրված «մեկնարկային գին» եզրույթը վերաբերում է վերջին չկայացած աճուրդում առաջարկված մեկնարկային գնին, որը, եթե հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր է դրանից, ապա հնարավորություն է տալիս պարտատերերի ցանկում ընդգրկված պարտատիրոջն իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու գրավի այդ առարկան: Ինչ վերաբերում է նշված իրավունքն իրացնելու համար կառավարչի վարձատրության հարցին, ապա այն պետք է վճարվի գրավի առարկայի՝ վերջին չկայացած աճուրդով սահմանված «գրավի առարկայի արժեքի» հինգ տոկոսից, որտեղ «գրավի առարկայի արժեք» եզրույթը վերը նշված վերլուծությունների համատեքստում նույնանում է «չկայացած աճուրդում գույքի համար սահմանված մեկնարկային գին» հասկացության հետ, որպիսի մեկնաբանությունը բխում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի ընդհանուր տրամաբանությունից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում նկարագրված իրավիճակում պարտատիրոջ պահանջը ենթակա է նվազեցման միայն գրավի առարկա հանդիսացող գույքի մեկնարկային գնի չափով, իսկ գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարների չափով պահանջի նվազեցում չի իրականացվում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի այն կարգավորումից, համաձայն որի՝ ... այդ դեպքում տվյալ պարտատիրոջ պահանջի չափը չի նվազեցվում գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարի չափով:

Ամփոփելով վերոնշարդյալը՝ Վճռաբեկ դատարանը գրել է, որ պարտավերերի ցուցակում ընդգրկված պարտավերեր կարող է իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալ գրավի առարկա հանդիսացող գույքը՝ հերկյալ պայմանների առկայության դեպքում.

1. Եթե իրացվող գույքի վերջին չկայացած աճուրդի համար առաջարկվող մեկնարկային գինը հավասար է ապահովված պարտավերից պահանջի գումարին կամ ցածր է դրանից,
2. Եթե ապահովված պարտավերը փոխհատուցում է այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև
3. Եթե փոխհատուցում է կառավարչի վարձատրությունը՝ գրավի առարկայի արժեքի, այսինքն՝ վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի հինգ տոկոսի չափով:

04.11.2019թ.

22. «Հայրիզնեսքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Կապա ՀԷԿ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԳ/3928/02/16

էջ
300-309

Խնդիր. Արդյո՞ք սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավի առարկան հավասարաբեժ գույքով փոխարինելու պահանջը կարող է քննվել առանձին քաղաքացիական գործի շրջանակներում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով հարուցվող քաղաքացիական հայցերով քաղաքացիական գործերը պետք է քննվեն սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակներում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր: Ընդ որում, նշված գործերը քննելիս կիրառման ենթակա են ինչպես «Մասնկության մասին» ՀՀ օրենքի դրույթները, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավակարգավորումները, եթե դրանք չեն հակասում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներին:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար կարևորել է այն, որ սնանկության գործերն առաջին ատյանի դատարանում վարվում են դատավորի կողմից միանձնյա: Հետևաբար գործը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումն այն մասին, որ գործը հանձնվում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը ենթակա է քննու-

թյան սնանկության դատարանում, նշանակում է, որ գործը պետք է հանձնվի հենց սնանկության գործը վարող դատավորին՝ հիմք ընդունելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը՝ պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը նույն սնանկության գործի շրջանակում քննելու վերաբերյալ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ սնանկության վարույթի առկայության պայմաններում պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը պետք է քննի պարտապանի սնանկության գործը վարող դատավորը: Եկատի ունենալով, որ «Մնանկության մասին» ՀՀ օրենքը հատուկ կարգավորում չունի այդ վեճերի լուծման ընթացակարգի վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ վեճերը պետք է քննվեն որպես առանձին քաղաքացիական գործեր՝ գործի առանձին համարով՝ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոնները:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՔՆԱԲԱՅԱՐԿԸ ԵՎ ԲԱՅԱՐԿԸ

07.06.2019թ.

23. Գրիգորի Սաֆարյանն ընդդեմ Սարգիս Ավետիսյանի, քաղ. գործ թիվ ԵԱԴԴ/2408/02/14

Էջ 310-319

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այլ դատարանում տվյալ գործի քննությանը մասնակցելու հիմքով դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որպես դատարանի անաչտությունն ապահովող կառուցակարգ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է ինքնաբացարկի և բացարկի ինստիտուտը, որի հիմքերն ամրագրված են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ինքնաբացարկ հայտնելու հիմքերից՝ տվյալ գործի քննությանն այլ դատարանում դատավորի մասնակցության հիմքին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում դատավորի կողմից ստորագրած դատական ատյանում նույն գործով ունեցած մասնակցությունը՝ որպես ինքնաբացարկի հիմք, ենթակա է գնահատման՝ հաշվի առնելով ստորագրած դատարանում դատավորի կողմից կատարված գործողությունների շրջանակը և քնույթը, կոնկրետ գործի հանգամանքներն ու առանձնահատկությունները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ ատյանում օրենքով սահմանված կարգով տվյալ գործով քննությունը պետք է իրականացվի և տվյալ հարցով որոշումը պետք է կայացվի կողեգիալ՝ երեք դատավորի կազմով, ապա կոլեգիալ կազմում ընդգրկված դատավորներից առնվազն մեկի կողմից ինքնաբացարկ հայտնելու անհրաժեշտությունը բավարար է արձանագրելու համար, որ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է.

1. *յուրաքանչյուր դեպքում դատավորը չպետք է մասնակցի իր իսկ կողմից կայացված դատական ակտերի դեմ բերված բողոքների քննությանը, նույնիսկ այն պարագայում, երբ այդ բողոքը քննվում է կոլեգիալ կարգով, քանի որ իր իսկ որոշումների դեմ բերված բողոքները քննելով՝ դատավորն իր անաչտության վերաբերյալ առաջացնում է օրյեկտիվ կասկած թե՛ գործի մասնակցի, և թե՛ օրյեկտիվ դիրքորոշի մուր:*

2. *այն դեպքում, երբ բողոքարկված չէ նույն դատավորի կողմից նախկինում կայացված դատական ակտը, ասկայն բողոքում բարձրացվում է տվյալ գործին այլ դատարանում մասնակցելու հիմքով այդ դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ հարց, հարկավոր է գնահատել դատավորի մասնակցությունը, ստորագրած դատական արյանում նրա կողմից կատարված դատավարական գործողությունները:*

ԱՊԱՑՈՒՑՈՒՄԸ

15.11.2019թ.

24. «Էքսպրես Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ն ընդդեմ Համլետ Հովսեփյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԵԱԳԳ/3172/02/15

էջ
320-355

Խնդիր. Արդյո՞ք իրավաչափ է դատարանի կողմից կրկնակի փորձաքննություն նշանակելու միջնորդության մերժումն այն դեպքում, երբ փորձագիտական եզրակացությունը թեև չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին, այդուհանդերձ, եզրակացություն ներկայացրած փորձագետները կիրառված մեթոդների վերաբերյալ դատական նիստում տվել են անհրաժեշտ բացատրություն:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները արձանագրել է, որ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրքը) իրավակարգավորման պայմաններում դատարանները փորձագետի եզրակացությունը որպես ապացույց հետազոտելիս և գնահատելիս պետք է հաշվի առնեն, որ մի դեպքում փորձագետի եզրակացության վերաբերելիությանը, թույլատրելիությանը և արժանահավատությանն առնչվող խոչընդոտները կարող են հաղթահարվել միայն կրկնակի փորձաքննություն նշանակելու միջոցով, մեկ այլ դեպքում՝ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու միջոցով, իսկ մյուս դեպքում էլ՝ Նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով՝ գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար դատարան հրավիրելու եղանակով: Ուստի բոլոր այն դեպքերում, երբ դատական կարգով փորձաքննություն նշանակելուց և փորձագետի եզրակացությունն ստանալուց հետո դատարանը փորձագետի եզրակացությունը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից գնահատելիս բավական է որևէ խոչընդոտի և միաժամանակ կողմերը կամ կողմերից մեկը բարձրացնում է այդ խոչընդոտը վերացնելու անհրաժեշտության հարցը (համապատասխան միջնորդություն ներկայացնելու եղանակով), ապա դատարանի պարտականությունն է պարզել, թե տվյալ խոչընդոտը հաղթահարելու համար օրենսդրի սահմանած դատավարական որ գործողությունն է կիրառման ենթակա և, ըստ այդմ էլ, որոշել կողմի ներկայացրած միջնորդության հիմնավորվածության հարցը:

Վճռաբեկ դատարանը նախկինում արտահայտած դիրքորոշումների համառոտագրում գտել է, որ կրկնակի փորձաքննությունը՝ որպես փորձագետի եզրակացության արժանահավատությանն առնչվող խոչընդոտները հաղթահարելուն ուղղված դատավարական գործողություն, կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ.

1. դատարանի կամ դատավարության մասնակիցների մոտ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված առաջացել են կասկածներ փորձագետի եզրակացության հիմնավորվածության վերաբերյալ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ փորձագիտական եզրակացության հիմնավորվածության վերաբերյալ կասկածների համար օբյեկտիվ հիմք կարող են հանդիսանալ հետևյալ հանգամանքները.

ա) փորձագետի եզրակացությունը հակասում է գործով ձեռք բերված մյուս ապացույցներին,

բ) փորձագետի եզրահանգումները ձևակերպված են առանց գործի հանգամանքները հաշվի առնելու,

գ) փորձագիտական եզրակացությունը կազմվել է գիտական տեսանկյունից անթույլատրելի մեթոդների կիրառմամբ,

դ) եզրակացությունը տրվել է այն անձի կողմից, որը նշված բնագավառում եզրակացություն տալու իրավասություն չունի,

ե) եզրակացությամբ հաստատված փաստական հանգամանքները հակասության մեջ են գտնվում գործով ձեռք բերված մյուս ապացույցների ամբողջությամբ հաստատված այլ փաստական հանգամանքների հետ և այլև,

2. մի քանի փորձագետներին եզրակացություններում առկա են հակասություններ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոհիշյալ ցանկը սպառիչ չէ և յուրաքանչյուր գործով առկա այս կամ այն հանգամանքը դատարանը պարտավոր է գնահատման ենթարկել և միայն դրանից հետո որոշել կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցը: Ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ փորձագիտական եզրակացությունը կազմվել է գիտական տեսանկյունից անթույլատրելի մեթոդների կիրառմամբ, ապա նման եզրակացությունն անարժանահավատ է և չի կարող դրվել դատական ակտի հիմքում:

Հետևաբար նման իրավիճակում առկա խոչընդոտը հնարավոր է հաղթահարել միայն կրկնակի փորձաքննություն նշանակելու միջոցով: Մինչդեռ այն դեպքերում, երբ փորձագիտական եզրակացությունում բացակայում է նշումը՝ կիրառված մեթոդների մասին, ապա նման խոչընդոտը վերացնելու համար դատարանն իրավասու է ղեկավարվել Նախկին օրենսգրքի համապատասխան նորմով և դատարան իրավիճակ գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին՝ եզրակացությունը կազմելիս կիրառված մեթոդների վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում կարևոր է այն հանգամանքը, որ դատարան իրավիճակ փորձագետը նախագրուցացվի ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, քանի որ տվյալ դեպքում փորձագետի կողմից դատական նիստում տրված բանավոր բացատրությունը դատարանի կողմից պետք է հետազոտման և գնահատման ենթարկվի փորձագետի եզրակացության հետ միաժամանակ՝ որպես մեկ ամբողջություն: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարան իրավիճակ փորձագետի կողմից փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների վերաբերյալ բանավոր բացատրություն տալուց հետո կողմերը կամ կողմերից որևէ մեկը կներկայացնի փաստարկներ այդ մեթոդների անթույլատրելի լինելու, գիտական հիմնավորվածություն չունենալու կամ նշված մեթոդով փորձագետին առաջադրված հարցի վերաբերյալ եզրահանգման գալու անհնարինություն վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան ապացույցներով կհիմնավորի այդ փաստարկների ողջամտությունը, ապա այս դեպքում արդեն փորձագետի եզրակացությունը գնահատելը կառաջացնի այնպիսի խոչընդոտներ, որոնք հնարավոր կլինի հաղթահարել միայն կրկնակի փորձաքննության նշանակմամբ: Մինչդեռ բոլոր այն դեպքերում, երբ դատարան իրավիճակ փորձագետի բանավոր բացատրությանը պարզվում են փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդները, հաստատվում են այդ մեթոդների թույլատրելի լինելու, գիտական հիմնավորվածություն ունենալու և նման փորձաքննությունների ժամանակ սովորաբար կիրառման ենթակա լինելու հանգամանքները, ապա տվյալ դեպքում փորձագետի եզրակացությունում կիրառված մեթոդների մասին նշման բացակայությունն ինքնին այդ եզրակացությունն անարժանահավատ չի դարձնում, հետևաբար նաև բացակայում է կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը:

Սույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանը ներկայացրել է հարուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հատուկ կարծիքի հեղինակը արձանագրել է, որ եթե փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս հնարավոր չէ հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը՝ դրանց վերաբերյալ եզրակացության մեջ նշման բացակայության պատճառով, որի պայմաններում կողմերը և դատարանը գրկվում են փորձաքննության ընթացքում անթույլատրելի մեթոդների կիրառման դեպքերը բացահայտելու հնարավորությունից, ուստի նաև անհնարին է հետևություն անել այդ եզրակացության արժանահավատության վերաբերյալ: Նման պայմաններում ինչպես դատարանի, այնպես էլ դատավարության մասնակիցների մոտ կարող են կասկածներ առաջանալ առնվազն այդ եզրակացության արժանահավատության վերաբերյալ:

Այսինքն՝ գործի քննության ժամանակ գործած Նախկին օրենսգրքով սահմանված դատավարական կարգի համաձայն՝ կրկնակի փորձաքննություն նշանակելու հիմք է հանդիսացել նաև այն, որ դատարանի կամ դատավարության մասնակիցների մոտ կասկածներ են առաջացել փորձագիտական եզրակացության արժանահավատության վերաբերյալ, որը, նախկինում արտահայտած դիրքորոշումների համատեքստում, կարող է պայմանավորված լինել փորձագետի եզրակացության մեջ նաև կիրառված մեթոդների մասին նշման բացակայությամբ:

Մինչևայն ժամանակ անհրաժեշտ համարելով անդրադառնալ գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դատարան իրավիճակում հիմքերին՝ հեղինակը նշել է, որ Նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետն այդ մասով նախատեսել է որոշակի դատավարության կարգ, որի համաձայն՝ օրենսդիրը դատարաններին իրավունք է վերապահել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դատարան իրավիճակում **բացառապես իր տված եզրակացության վերաբերյալ** բանավոր բացատրություններ տալու համար: Ինչ վերաբերում է գրավոր փորձագետի եզրակացությունը տալուց կիրառված մեթոդի մասին նշման բացակայության հիմքով փորձագետին դատարան իրավիճակում և այդ «բացը» դատական կարգով լրացնելուն՝ ենթադրյալ մեթոդների մասին նրա բացատրությունը լսելուն, ապա նման դատավարության կարգ գործի քննության ժամանակ գործած Նախկին

օրենսգրքով սահմանված չի եղել: Ընդ որում, նման կարգավորումը բխել է նաև հենց Նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետի տրամաբանությունից, որի համաձայն՝ գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետը չէր կարող դատարան հրավիրվել գոյություն չունեցող նշման վերաբերյալ բացատրություն տալու համար, և նոր միայն դատարանում փորձեր բացատրել, թե ինչ մեթոդ է կիրառել:

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

26.07.2019թ.

25. Անի Հովհաննիսյանն ընդդեմ «Սպուտնիկ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԳ/2080/02/16

էջ
356-363

Խնդիր. Վճռարեկ դատարանն անդրադարձել է քաղաքացիական գործում էլեկտրոնային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրումների և՛ բացակայությանը, և՛ այն թերություններին, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը՝ վերահաստատելով նաև նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանը նշել է, որ Կարեն Ստեփանյանն ընդդեմ Ջուլետտա Սմբատյանի թիվ ԵԱԲԳ/2279/02/11 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականին կայացրած որոշմամբ ՀՀ վճռարեկ դատարանն անդրադարձել է դատավարության ընթացքում դատական նիստի արձանագրության ունեցած դերին և նշանակությանը, սակայն նշված որոշմամբ ՀՀ վճռարեկ դատարանի կողմից հայտնած դիրքորոշումներն արտահայտվել են 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի կապակցությամբ, որը, որպես վճռի պարտադիր բեկանման հիմք, միայն նախատեսում էր գործից դատական նիստի արձանագրության բացակայությունը: Մինչդեռ գործնականում հնարավոր էին իրավիճակներ, երբ դատական նիստի արձանագրումը կատարվել էր այնպիսի թերություններով, որոնք հնարավորություն չէին տալիս վերադաս դատական ասյանին լիարժեք ստուգելու ստորադաս դատական ասյանում կատարված գործողությունների իրավաչափությունը: Այս նկատառումով օրենսդիրը 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում որպես դատական ակտի պարտադիր բեկանման հիմք սահմանել է նաև այն դեպքը, երբ դատական նիստի արձանագրումը կատարվել է այնպիսի թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռարեկ դատարանը գտել է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում դատական նիստի արձանագրումը ենթադրում է ձայնային արձանագրում՝ ամրագրված լազերային կրիչի վրա, և համառոտագրում՝ արտատպված թղթի վրա: Վճռարեկ դատարանի գնահատմամբ ձայնային արձանագրումը հանդիսանում է դատական նիստի բոլոր տվյալների անընդմեջ արձանագրման հիմնական միջոցը, հետևաբար նաև դատավարության հրապարակայնության ապահովման միջոցը: Ինչ վերաբերում է թղթային համառոտագրմանը, ապա վերջինս ուղղակի դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են, որն ունի ուղղորդիչ բնույթ, հետևաբար առանց ձայնային արձանագրման այն չի կարող բավարար պատկեր ստեղծել դատական նիստի ընթացքի վերաբերյալ, չի կարող բավարար չափով ապահովել դատավարության հրապարակայնությունը և ծառայել որպես անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման երաշխիք:

Վճռարեկ դատարանը գտել է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում լազերային կրիչի վրա ամրագրված ձայնային արձանագրման և համակարգչային համառոտագրման միաժամանակյա առկայությունը պարտադիր է յուրաքանչյուր դատական նիստով, և դրանցից որևէ մեկի բացակայությունը ենթադրում է դատական նիստի արձանագրության բացակայություն: Միաժամանակ, Վճռարեկ դատարանը նշել է, որ ոչ միայն լազերային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրությունների բացակայությունն է հանդիսանում դատական ակտի պարտադիր բեկանման հիմք, այլ նաև դատական նիստերի ձայնային արձանագրություններում առկա այն թերությունները, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը: Այսինքն, լազերային կրիչի վրա ամրագրված դատական նիստերի ձայնային արձանագրությունների միայն

առկայությունը բավարար չէ, անհրաժեշտ է, որ դրանք լինեն պիտանի և բավարար բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար: Հետևաբար լազերային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրությունների խոտանումը, որն անհնարին է դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը, ipso facto հանգեցնում է վերանայվող դատական ակտի անվերապահ բեկանման՝ անկախ բողոքում այդ հիմքի վերաբերյալ որևէ վկայակոչումից:

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏՆ ԱՌԱՆՑ ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԵԼՈՒ

08.01.2019թ.

26. Արտակ Գալստյանն ընդդեմ Արթուր Անդրեասյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԵԱԲԳ/1107/02/16

էջ
364-377

Խնդիր. Արդյո՞ք նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով կարող է կարճվել գործի վարույթը, եթե գործին մասնակցել են նույն անձինք՝ տարբեր դատավարական կարգավիճակներով:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանի գնահատմամբ օրենսդրի կողմից նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճռի պարագայում դատարան դիմելու իրավունքի սահմանափակումն ինքնանպատակ չէ, այլ նպատակաուղղված է դատավարական իրավունքների չարաշահման կանխարգելմանը, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի, իրավական որոշակիության, դատական խնայողության սկզբունքների ապահովմանը: Շահագրգիռ անձը, դատարան դիմելով, իրացնում է դատական պաշտպանություն, արդար դատաքննության իր իրավունքը, որը միաժամանակ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունք է նաև դատավարության մյուս կողմի համար: Հետևաբար չնայած հայցվորի տնօրինչական իրավունքն է հայց հարուցելը, սակայն այս իրավունքն ուղղակիորեն առնչվում է նաև պատասխանողի դատավարական իրավունքների հետ, ուստի օրենսդիրը նախատեսել է որոշակի երաշխիքներ նաև պատասխանողի համար՝ դատական պաշտպանության իր իրավունքն իրացնելու հարցում: Մասնավորապես՝ դատական պաշտպանության իրավունքը Վճռարեկ դատարանի գնահատմամբ ենթադրում է նաև իրավականորեն որոշակի, կանխատեսելի դատական ակտի առկայություն:

Հետևաբար նաև իրավական որոշակիության սկզբունքի հաշվառմամբ է, որ օրենսդիրն արգելում է նույն հայցով կրկին դատարան դիմելն օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում՝ օրենքով սահմանված որոշակի բացառություններով հանդերձ:

Վճռարեկ դատարանը, հաշվի առնելով սույն գործով բարձրացված հարցադրումը, վերստին հարկ է համարել անդրադառնալ «նույն անձինք» արտահայտության բովանդակության բացահայտմանը: Թիվ ԵԿԳ/0407/02/11 որոշմամբ ՀՀ վճռարեկ դատարանը «նույն անձինք» արտահայտությունը մեկնաբանել է որպես քաղաքացիական վարույթում հակադիր շահերով օժտված անձինք: Հաշվի առնելով դատական պրակտիկայի միտումները՝ Վճռարեկ դատարանը հարկ է համարել զարգացնել իր մեկնաբանությունը՝ արձանագրելով, որ տվյալ իրավիճակում հակադիր շահերով օժտված անձինք բացառապես չեն նույնանում դատավարությունում կողմերի՝ հայցվորի և պատասխանողի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց հետ: Գործին մասնակցող անձինք են նաև երրորդ անձինք, որոնք ևս վեճի էլքով կարող են ունենալ նյութական և դատավարական շահագրգռվածություն, իսկ առանձին դեպքերում նաև ընդհանուր շահ՝ հայցվորի կամ պատասխանողի կողմում հանդես եկող սուբյեկտի հետ: Հետևաբար «նույն անձինք» արտահայտության մեկնաբանությունը չի կարող սահմանափակվել միայն դատավարության կողմերով և պետք է ներառի նաև երրորդ անձանց, իսկ որպես ուղղորդող չափանիշ պետք է դիտարկվի հակադիր շահերի առկայությունը գործին մասնակցող անձանց միջև: Նման մեկնաբանությունն արդարացված է, քանի որ դատական պրակտիկայում հանդիպում են իրավիճակներ, երբ վեճի կողմերը, ցանկանալով վերաբացել նախկինում քննված գործը, ձևականորեն փոփոխում են քաղաքացիական դատավարության մասնակիցների դատավարական կարգավիճակը

և նոր հայց հարուցում:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին մինևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու հարցը լուծելիս դատարանը չպետք է միայն հաշվի առնի հայցվորի և պատասխանողի կողմում հանդես եկող անձանց նույնական լինելու հանգամանքը, այլ գործին մասնակցող անձանց կազմը համընկնելու պարագայում, անկախ դատավարական կարգավիճակից, հաշվի առնելով նյութաիրավական հարաբերության բնույթը, պաշտպանության ենթակա օբյեկտը՝ պետք է պարզի, թե արդյոք նույնն են նախկինում քննված և տվյալ պահին քննվող գործերով հակադիր շահերով օժտված անձինք:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

01.10.2019թ.

27. Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության Պոլևայա պոչտա թիվ 04436 գործմասի՝ դատական ակտը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու մասին միջնորդություն, քաղ. գործ թիվ ՇԴ/0024/16/17

էջ
378-384

Խնդիր. Արդյո՞ք օտարերկրյա պետության դատական ակտը Մինսկի կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարող է ճանաչվել և թույլատրվել կատարման, եթե այն կայացվել է ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կամ գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օտարերկրյա պետության դատական ակտը ճանաչելիս և կատարման թույլատրելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ՀՀ ներպետական օրենսդրության, այնպես էլ միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 16.03.1995 թվականին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիրը, որի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 արձանագրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմաբազայի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերը կարգավորվում են կողմերի առանձին համաձայնագրով:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 09.08.1997 թվականին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ» համաձայնագիրը, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ կողմերի իրավասու մարմինները միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի գտնվելու հետ կապված քաղաքացիական, ընտանեկան, քրեական գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով: Համաձայն [Մինսկի] կոնվենցիայի՝ իրավական օգնությունն իր մեջ ներառում է փաստաթղթերի հանձնման մասին խնդրանքների կատարումը և դատավարական, հետախուզական և այլ գործողությունների վարույթը: Նշված համաձայնագիրը մասնավորապես անշարժ գույքի հետ կապված քաղաքացիաիրավական վեճերի իրավասության մասով դրույթներ չի պարունակում:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև քաղաքացիական գործերով իրավական օգնության հետ կապված հարաբերություններում գործում է Մինսկի կոնվենցիան, Վճռաբեկ դատարանը անդրադարձել է տվյալ կոնվենցիայի կարգավորումներին:

Այսպես, Մինսկի կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 21.12.1994 թվականին և, ի թիվս այլնի, կարգավորում է պայմանավորվող կողմերի միջև քաղաքացիական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների հետ կապված հարցերը:

Մինսկի կոնվենցիայի 6-րդ բաժինը վերաբերում է որոշումների ճանաչմանը և կատար-

մանր: Մասնավորապես՝ Մինսկի կոնվենցիայի 51-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, նույն կոնվենցիայով նախատեսված պայմաններով, ճանաչում և կատարում է այլ Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունված հետևյալ որոշումները՝

ա) քաղաքացիական և ընտանեկան գործերով արդարադատության մարմինների որոշումները, ներառյալ՝ նման գործերով դատարանի հաստատած հաշտության համաձայնագրերն ու դրանական պարտավորությունների վերաբերյալ նոտարական ակտերը (այսուհետ՝ որոշումներ) (...):

Մինսկի կոնվենցիայի 54-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ 51-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունները քննվում են այն Պայմանավորվող կողմի դատարաններում, որի տարածքում պետք է իրականացվի հարկադիր կատարումը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունները քննող դատարանը սահմանափակվում է պարզելով, որ պահպանված են նույն Կոնվենցիայով նախատեսված պայմանները: Եթե այդ պայմանները պահպանված են, դատարանը որոշում է կայացնում հարկադիր կատարման մասին:

Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «դ» կետի համաձայն՝ 52-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչումը և հարկադիր կատարման թույլտվությունը կարող են մերժվել, եթե գործը, նույն կոնվենցիայի դրույթների համաձայն, իսկ նրանով չնախատեսված դեպքերում՝ այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում որոշումը պետք է ճանաչվի և կատարվի, պատկանում է այդ կողմի մարմնի բացառիկ իրավասությանը:

Մինսկի կոնվենցիայի 20-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը **բացառապես ընդդատյա են գույքի գտնվելու վայրի դատարաններին:** (...)

Վերը նշված կոնվենցիան և ներպետական իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օտարերկրյա պետության դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու հարցը լուծելիս ՀՀ դատարանները չունեն նշված դատական ակտն ըստ էության վերանայելու իրավասություն և պետք է սահմանափակվեն միայն այն պայմանների առկայության ստուգմամբ, որոնց դեպքում թույլատրվում է համապատասխան որոշման ճանաչումն ու կատարումը, և միաժամանակ պարզեն այն պայմանների բացակայությունը, որոնք հիմք են ճանաչումը մերժելու համար: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ Մինսկի կոնվենցիայով նախատեսված անհրաժեշտ պայմանների առկայության և մերժման հիմքերի բացակայության դեպքում է միայն դատարանը որոշում կայացնում կատարում պահանջող օտարերկրյա պետության դատական ակտը ճանաչելու և հարկադիր կատարումը թույլատրելու մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ, ի թիվս օտարերկրյա պետության դատական ակտի ճանաչումը և հարկադիր կատարումը մերժելու այլ հիմքերի, Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված է, որ օտարերկրյա պետության դատական ակտի ճանաչումը և հարկադիր կատարման թույլտվությունը կարող է մերժվել, եթե գործը պատկանում է այն պետության մարմնի բացառիկ իրավասությանը, որի տարածքում պետք է ճանաչվի և կատարվի համապատասխան դատական ակտը:

Վերոգրյալի հիման վրա նկատի ունենալով, որ Մինսկի կոնվենցիայի 20-րդ հոդվածի հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը տվյալ գույքի գտնվելու վայրի դատարանների բացառիկ ընդդատության են պատկանում, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ եթե օտարերկրյա պետության դատական ակտը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների վերաբերյալ, ապա տվյալ դատական ակտի ճանաչումը և հարկադիր կատարումը ենթակա է մերժման:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

16.04.2019թ.

28. Հայկ Զավախյանն ընդդեմ Վարդան Աբրահամյանի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0612/04/16

էջ 385-393

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերաքննիչ դատարանի կողմից գրավոր ընթացակարգով վերաքննիչ բողոքի քննությունն իրականացնելիս դատավարության

մասնակցի կողմից վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի իրացման ապահովման խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով և զարգացնելով թիվ ԵԿԳ/0368/02/13 քաղաքացիական գործով 02.12.2016 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է վերաքննության փուլում դատավարության մրցակցության և դատավարության մասնակիցների իրավահավասարության սկզբունքների պահպանությանն այն դեպքերում, երբ բողոքի քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով:

Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 11.04.2012 թվականի թիվ ՄԴՌ-1020 որոշումը, փաստել է ՀՀ սահմանադրական դատարանը գրավոր ընթացակարգով գործի քննությունը չի համարում արդար դատաքննության իրավունքի սահմանափակում, եթե գործի քննության ընթացքում ապահովվում է դատավարության մասնակիցների կողմից իրենց իրավունքների արդյունավետ իրացումը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ Եվրոպական դատարանը նույնպես մի շարք որոշումներով արտահայտված դիրքորոշումներով կարևորել է գրավոր ընթացակարգով գործի քննության ժամանակ դատավարության մասնակիցներին իրենց **իրավունքների արդյունավետ իրացման** հնարավորություն տալու հանգամանքը (*յրե'ս, օրինակ, Sancaklı v. Turkey* գործով (գանձադր թիվ 1385/07) Եվրոպական դատարանի 15.05.2018 թվականի վճիռը, կետ 51):

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ եթե անգամ վերադաս դատական ատյանն ունի լիազորություն վերանայելու գործի ինչպես փաստերի, այնպես էլ օրենքի հիմքով, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածը ոչ միշտ է պարտադրում հրապարակային քննություն և առավել ևս անձամբ ներկայանալու անհրաժեշտություն (*յրե'ս, Fejde v. Sweden* գործով 29.10.1991 թվականի վճիռ, գանձադր թիվ 12631/87, կետ 31): Կարևոր է հաշվի առնել բողոքարկման քննության առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, թե **դիմումատուի շահերն ինչպես են փաստացի ներկայացվել և պաշտպանվել բողոքարկման առաջնում**, ընդ որում՝ հատկապես այն հարցերը, որոնք պետք է որոշի տվյալ բողոքարկման դատարանը (*յրե'ս, օրինակ, Helmert v. Sweden* գործով 29.10.1991 թվականի վճիռը, գանձադր թիվ 11826/85, կետեր 31-32 կամ *Kremzow v. Austria* գործով 21.09.1993 թվականի վճիռը, գանձադր թիվ 12350/86, կետ 59):

Եվրոպական դատարանի արտահայտած վերագրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վերաքննիչ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրն ապահովել է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտ նախադրյալներ դատավարության մասնակցի համար՝ սահմանելով, որ վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու մասին վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում **վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո**: Միաժամանակ, որպես վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետ՝ օրենսդիրը սահմանել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ կամ 5-րդ օրը՝ կախված բողոքարկվող դատական ակտի տեսակից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ վերաքննիչ դատարանն իր հայեցողական լիազորությունն իրականացնելիս (տվյալ դեպքում՝ բողոքի քննությունը դատական նիստում կամ գրավոր ընթացակարգով քննելու մասին որոշում կայացնելիս) պարտավոր է այնպես կազմակերպել բողոքի քննության համար նախատեսված ժամկետները (այդ թվում՝ դատական ակտի հրապարակման օրը որոշելիս), որպեսզի դատավարության որևէ մասնակից մյուսի համեմատ չգտնվի եականորեն նվազ բարենպաստ վիճակում:

09.09.2019թ.

29. «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանն ընդդեմ ԱԶ Արմեն Մանուկյանի, քաղ. գործ թիվ ԱՎԳ/1617/02/18

էջ
394-399

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելիս դատավարության մասնակցի կողմից վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի իրացման ապահովման խնդրին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ *Հայկ Զավախյանն ընդդեմ Վարդան Աբրահամյանի* թիվ ԵԿԳ/0612/04/16 սնանկության գործով 16.04.2019 թվականի որոշմամբ գրավոր ընթացակարգով վերաքննիչ բողոք-

քի քննությունն իրականացնելիս դատավարության մասնակցի կողմից վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի իրացման խնդրի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի քննությունն իրականացվում է դատական նիստում: Հետևաբար վերաքննիչ դատարանը բողոքի քննությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի իրացումը՝ ընդ որում, դատավարության մասնակցի համար ապահովվելով օրենքով սահմանված ժամկետի ամբողջ ընթացքում պատասխան ներկայացնելու հնարավորությունը:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

22.03.2019թ.

30. Գառնիկ Վերմիշյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԳ/0150/05/16

էջ

400-411

Խնդիր. Արդյո՞ք ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտման արձանագրությունը պետք է կազմվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կանոնների, մասնավորապես՝ ենթադրյալ իրավախախտի մասնակցության պահանջի պահպանմամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարույթի ժամանակ օրենսդրի կողմից առաջադրված խնդիրների լուծման համար վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննող համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ յուրաքանչյուր գործ քննության նախապատրաստելիս պարտավոր է պարզել, ի թիվս այլնի, նաև այն հարցը, թե արդյո՞ք ճիշտ է կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ընդհանուր կանոնները, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները նախատեսված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ և 255-րդ հոդվածներով:

Վերոգրյալ իրավադրույթներից բխում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը պետք է կազմեն ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ, և վերջինս պետք է ստորագրի այն, իսկ եթե նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու իրավասություն ունեցող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) դրա մասին համապատասխան նշում է կատարում արձանագրության մեջ: Անձը, որին վերագրվում է ենթադրյալ վարչական իրավախախտումը, իրավունք ունի ներկայացնել բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, որոնք կցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը, իսկ այն դեպքերում, երբ նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա կարող է արձանագրությունում շարադրել այն շարժառիթները, որոնք իր կարծիքով հիմք են հանդիսացել արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու համար: Բացի այդ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն կազմելիս անձին պետք է բացատրեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ նրա իրավունքներն ու պարտականությունները, և դրա մասին նույնպես համապատասխան նշում կատարեն արձանագրության մեջ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վարչական մարմինը (պաշտո-

նատար անձը) իրավասու է իրավախախտին ենթարկել վարչական պատասխանատվության միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու վերոգրյալ ընդհանուր կանոնների, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջների պահպանման պայմաններում:

Երևան քաղաքի ավագանին, ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությամբ, 25.12.2012 թվականին ընդունել է «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանելու մասին» թիվ 563-Ն որոշումը:

Նշված որոշման վերաբերելի իրավադրույթներից հետևում է, որ Երևան քաղաքի ավագանին, սահմանելով Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը, նախատեսել է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտման արձանագրության կազմման այլ կարգ, որը տարբերվում է այդպիսի արձանագրության կազմման՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով ամրագրված կանոններից: Մասնավորապես՝ Երևան քաղաքի ավագանու վերոգրյալ որոշման համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտման արձանագրությունը կազմվում է առանց իրավախախտի մասնակցության և կազմվելուց հետո ուղարկվում է այդ անձին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում կիրառելի է ոչ թե Երևան քաղաքի ավագանու 25.12.2012 թվականի թիվ 563-Ն որոշմամբ սահմանված՝ վարչական իրավախախտման արձանագրությունն իրավախախտի բացակայությամբ կազմելու և հետո վերջինիս ուղարկելու կանոնը, այլ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման արձանագրությունն իրավախախտի ներկայությամբ կազմելու և առձեռն վերջինիս հանձնելու կանոնը: Նշված դատորությունը հիմնված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գործող՝ իրավական ակտերի աստիճանակարգության վրա, որի համաձայն՝ օրենքը (տվյալ դեպքում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը) ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, քան համայնքի ավագանու որոշումը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ արձանագրության կազմման գործընթացին ենթադրյալ իրավախախտին մասնակից դարձնելու, արձանագրությունը վերջինիս ներկայությամբ կազմելու օրենքի պահանջը ձևական բնույթ չի կրում, քանի որ ենթադրյալ իրավախախտին իր իրավունքներն ու պարտականությունները բացատրելու՝ արձանագրությունը կազմող պաշտոնատար անձի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում ողջ վարչական վարյույթի ընթացքում ենթադրյալ իրավախախտի իրավունքների իրացումն ապահովելու համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ կազմելու իմպերատիվ պահանջը նպատակ է հետապնդում նաև ապահովելու վարչական իրավախախտման պատշաճ սուբյեկտի պարզման հնարավորությունը: Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ կազմելու պայմաններում հնարավոր կլինի պարզել վարչական իրավախախտման սուբյեկտին, որից հետո վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում վերջինիս հնարավոր կլինի ենթարկել վարչական պատասխանատվության:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտման արձանագրությունը պետք է կազմվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կանոնների, մասնավորապես՝ ենթադրյալ իրավախախտի մասնակցության պահանջի պահպանմամբ:

25.12.2019թ.

31. Արմինե Պետրոսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԳ/1176/05/17

Էջ 412-421

Խոյիդր. Տրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար տրանսպորտային

միջոցի սեփականատիրոջը (այն անձին, որին ամրակցված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցը) վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը կարող է արդյոք անվավեր ճանաչվել այն հիմքով, որ տրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանվել է այլ անձի կողմից:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված է ավտոկայանատեղի համար տուրքի վճարման պարտականությունը կրող սուբյեկտների հետևյալ շրջանակը. տեղական տուրքը վճարելու պարտականությունը, որպես կանոն, կրում են ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած ֆիզիկական և իրավաբանական անձինք, սակայն եթե ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի տուրքը չի վճարվում, ապա ավտոկայանատեղի տուրք վճարող է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը): Այսինքն՝ ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի տուրքը չվճարվելու դեպքում այն վճարելու պարտականությունը կրող սուբյեկտն ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերն է (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը), ով էլ ենթակա է վարչական պատասխանատվության օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ ավտոտրանսպորտային միջոցը հանձնելով այլ անձի շահագործմանը՝ դրա սեփականատերը (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը) պետք է ապահովի, որ ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանվելու պայմաններում ավտոկայանատեղի համար սահմանված տեղական տուրքը վճարվի, և կրում է դրա չվճարման բացասական հետևանքների ռիսկը՝ վարչական պատասխանատվության ենթարկվելու ձևով: Փաստորեն, տվյալ դեպքում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը) ենթարկվում է վարչական պատասխանատվության ոչ թե այլ անձի կողմից, այլ իր կողմից մեղավորությամբ կատարված արարքի՝ օրենքով սահմանված տեղական տուրքը վճարելու պարտականությունը չկատարելու համար, ինչը համապատասխանում է «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքներին:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունն օրենսդիրն առանց որևէ բացառության դրել է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ վրա (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձի վրա, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը): Այսինքն՝ մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ անկախ այն հանգամանքից, թե տրանսպորտային միջոցի սեփականատերն անձամբ է օգտվել վճարովի ավտոկայանատեղից, թե՛ ոչ, տրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու պայմաններում որպես ավտոկայանատեղի տուրք վճարող, և ըստ այդմ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության սուբյեկտ օրենսդիրը դիտել է միայն տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձին, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը):

25.12.2019թ.

32. Ռուսար Սալիմուլլին ընդդեմ Պետական եկամուտների կոմիտեի (իրավանախորդ՝ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե), վարչ. գործ թիվ ՎԳ/3166/05/17

Խնդիր. Արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենը են-

թակա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.2-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության՝ ընկերության վրա դրված վիճակագրական տեղեկությունները (հաշվետվությունները) մաքսային մարմին ներկայացնելու պարտականությունը չկատարելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ օրենսդիրը վարչական պատասխանատվություն է սահմանել պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով (սահմանված ժամկետների կամ ամբողջ ծավալի խախտումներով կամ աղավաղումներով) ներկայացնելու համար: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությունում ամրագրված զանցակազմի հատկանիշները հանգում են հետևյալին. 1. զանցանքի օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում պետական վիճակագրության կազմակերպման կարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են. 2. զանցանքի սուբյեկտը որևէ մեկով. (-) պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելը, (-) պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը սահմանված կարգի խախտումով, այսինքն՝ սահմանված ժամկետների կամ ամբողջ ծավալի խախտումներով կամ աղավաղումներով, ներկայացնելը. 4. զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքի առկայությունն է, որը դրսևորվում է դիտավորությամբ կամ անզուգուրությամբ:

Իրավահարաբերության պահին գործող «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև իրավահարաբերության պահին գործող Կառավարության 23.04.2014 թվականի թիվ 447-Ն որոշման վերաբերելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտուր իրականացնող սուբյեկտները պարտավոր էին Կառավարության հաստատած կանոններին համապատասխան կարգով, ձևով և ժամկետներում մաքսային մարմին ներկայացնել հավաստի վիճակագրական տեղեկություններ: Ընդ որում, վիճակագրական տեղեկությունների չներկայացնելու կամ սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացնելու կամ ոչ հավաստի տվյալներ պարունակող վիճակագրական ձևով ներկայացնելու համար առաջանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված վարչական պատասխանատվություն, այն է՝ նախագուշացում կամ տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

Այսպիսով, իրավահարաբերության պահին գործող «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև իրավահարաբերության պահին գործող Կառավարության 23.04.2014 թվականի թիվ 447-Ն որոշման վերաբերելի իրավական նորմերի համակարգային վերլուծությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի վերաբերյալ Կառավարության սահմանած վիճակագրական տեղեկատվությունը՝ որպես պետական վիճակագրական փաստաթուղթ, մաքսային մարմին ներկայացնելու պարտականությունը կրում է փոխադարձ առևտրով զբաղվող իրավաբանական անձը: Միևնույն ժամանակ, տվյալ իրավաբանական անձի կողմից քննարկվող պարտականությունը չկատարելու համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտը ոչ թե իրավաբանական անձն է, այլ այդ իրավաբանական անձի համապատասխան պաշտոնատար անձը:

Վճռաբեկ դատարանի նշված դատողությունը հիմնված է այն իրողության վրա, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել միայն ֆիզիկական անձը, այլ ոչ երբեք իրավաբանական անձը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքը չի նախատեսում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ իրավաբանական անձի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության սուբյեկտ չհանդիսանալու հանգամանքը հաստատված է նաև կայուն իրավախախտ պրակտիկայով: Այսպես, օրինակ, դեռևս 2006 թվականին կայացված որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ և 11-րդ հոդվածների բովանդակության վերլուծությունից հետևում է, որ վարչական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական անձինք: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ իրավաբանական անձը չի կարող համարվել վարչական իրավախախտման սուբյեկտ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իմաստով և ենթարկվել պատասխանատվության նույն օրենսգրքով սահմանված կարգով (*Կրև, Աշխարհաբնի պետական պաշտպանության ընդդեմ «Թովմասյան Համլեյթ» ՍՊԸ-ի թիվ 3-1787(SԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի որոշումը*):

Այսպիսով, իրավաբանական անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգի բացակայության պատճառով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ օրենսդիրը պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով ներկայացնելու գանձակազմի սուբյեկտ է համարել ոչ թե իրավաբանական անձին, այլ դրա համապատասխան պաշտոնատար անձին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերաբերելի իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ընթացիկ ղեկավարությունն իրականացվում է գործադիր մարմնի կողմից: Ընկերության գործադիր մարմինը կարող է հանդես գալ գլխավոր տնօրենի, նախագահի կամ այլ պաշտոնների տեսքով: Ընդ որում, որպես կանոն, գործադիր մարմին կարող է լինել ֆիզիկական անձը: Միաժամանակ, օրենքում, ի թիվս այլ իրավասությունների, սահմանված է, որ ընկերության գործադիր մարմինն առանց համապատասխան լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը այլ սուբյեկտների հետ հարաբերություններում:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրով զբաղվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ այդ առևտրի վերաբերյալ Կառավարության սահմանած վիճակագրական տեղեկատվությունը մաքսային մարմին ներկայացնելու պարտականությունը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի դերում հանդես եկող ֆիզիկական անձն է (գլխավոր տնօրեն, նախագահ և այլն):

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԲ

22.03.2019թ.

33. «Անիկոմ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԴ/0602/05/16

էջ

432-444

Խնդիր. Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի ուժով համարվում է արդյոք ավելացված արժեքի հարկ վճարող, եթե դրա միակ մասնակիցը, ում միաժամանակ պատկանում է մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսից ավել բաժնեմասը, մինչև հաշվետու տարվա սկիզբը վաճառել է առաջին ընկերությունում իրեն պատկանող 20 տոկոսից ավել բաժնեմասը, սակայն մինչև հաշվետու տարվա սկիզբը բաժնեմասի օտարման պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմ-

բազրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված կարգավորումը կիրառելի չլինելու համար անհրաժեշտ փաստակազմ էր նախատեսված նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետում: Այս կետի համաձայն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթները չեն տարածվում այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին) սեփականատեր անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին միաժամանակ չի պատկանում մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին): Փաստորեն, կազմակերպության նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված իրավական հետևանքը կիրառելի է միայն այն դեպքում, եթե տվյալ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին) սեփականատեր անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին միաժամանակ չի պատկանում մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին): Հետևաբար ցանկացած իրավասու մարմին մինչև կոնկրետ կազմակերպության նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված իրավական հետևանքի կիրառելիության հարցը լուծելը, պետք է պարզել՝ արդյոք տվյալ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված իրավադրույթի ուժով կազմակերպության նկատմամբ ավելացված արժեքի հարկի շեղում չի կիրառվում, և այդ կազմակերպությունը համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում. 1) կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին, 2) այդ ֆիզիկական անձին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված վերոգրյալ կանոնի ճիշտ կիրառության համար կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե որ պահից է անձը համարվում կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի սեփականատեր (կազմակերպության մասնակից, բաժնետեր կամ փայաբաժին)՝ հատկապես կազմակերպության բաժնետոմսերի, բաժնետնասերի կամ փայաբաժինների օտարման դեպքում: Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել քննարկման առարկա դարձնել վերոնշյալ հարցը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների կողմից իրենց պատկանող բաժնետնասերի օտարման համատեքստում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցն օտարում է իր բաժնետնասը, ապա բաժնետնասի օտարման գործարքի հիման վրա ընկերության բաժնետնասը ձեռք բերած անձը համարվում է ընկերության բաժնետնասի սեփականատեր (մասնակից) իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պահից: Փաստորեն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից համարվելու հանգամանքը կախված է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում անձի՝ որպես ընկերության մասնակից գրանցված լինելու փաստի առկայությունից կամ բացակայությունից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մինչև

01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի ուժով համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող այն դեպքում, երբ իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից կատարված գրանցման համաձայն՝ այդ ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնեմասը) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այնպիսի ֆիզիկական անձի, որն իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրանցված է որպես մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) սեփականատեր: Ընդ որում, այդ ֆիզիկական անձին պատկանող՝ նշված իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի օտարման գործարքի առկայությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ նշված իրավաբանական անձանց նկատմամբ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված իրավադրույթի կիրառությունը բացառելու համար, քանի որ իրավաբանական անձանց մասնակիցների փոփոխությունը՝ որպես իրավաբանական փաստ, ծագում է ոչ թե իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի որոշակի մասի օտարման գործարքի կցման, այլ միայն այդ գործարքից բխող իրավունքների պետական գրանցման պահից: Փաստորեն, մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված իրավադրույթի կիրառության համար սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնեմասի) սեփականատեր ֆիզիկական անձի կողմից իր բաժնեմասի օտարման գործարքը որևէ իրավաբանական նշանակություն չունի, եթե այդ գործարքից բխող իրավունքները (մասնակիցների փոփոխությունը) օրենքով սահմանված կարգով չեն ստացել պետական գրանցում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

01.08.2019թ.

34. «Այ Լանոա Ռիել Իսթեյթ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/0930/05/16

էջ
445-467

Խնդիր. Վճարել դատարանն անդրադարձել է տնտեսվարող սուբյեկտի կողմից հաշվետու տարում իր գործունեությունից առաջացած ծախսերի և վնասների փոխանցման առանձնահատկություններին:

Վճարանկ դատարանի դիրքորոշումը. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետով օրենսդիրը սահմանել էր, որ շահութահարկ հաշվարկելիս տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտից թույլատրելի նվազեցում է համարվում նաև հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը: Ընդ որում, նույն օրենքի իմաստով ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման: Այսինքն՝ մինչև 01.01.2013 թվականը գործող իրավակարգավորումներով սահմանված էր, որ եթե տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարվա շահութահարկը հաշվարկելիս հայտնաբերում է այնպիսի ծախսեր (հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը հանգեցնող) ակտիվների արտահոսք, նվազում կամ պարտավորությունների աճ, որոնք պակաս են ցույց տրվել այլ տարվան անմիջապես նախորդող երեք տարիներում, ապա այդ ծախսերը ևս կարող են նվազեցվել հաշվետու տարվա համախառն եկամտից: Այսպես, օրինակ՝ եթե տնտեսվարող սուբյեկտը 2010 թվականի շահութահարկը հաշվարկելիս հայտնաբերում էր այնպիսի ծախսեր, որոնք պակաս են ցույց տրվել 2007, 2008 և 2009 թվականների շահութահարկի հաշվարկներում, ապա այդ ծախսերը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով ևս կարող էին նվազեցվել 2010 թվականի համախառն եկամտից:

Օրենսդիրն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում նախատեսել է այնպիսի իրավիճակների առաջացման հնարավորությունը, երբ հաշվետու տարվա համար համախառն եկամտից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումները գերազանցում են տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը, այսինքն՝ տվյալ տարվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտը շահույթ չի ստանում,

այլ, դրա փոխարեն, վստահություն է կրում: Այնուհայտ է, որ նմանատիպ իրավիճակներում շահութահարկ չի կարող հաշվարկվել ու վճարվել, քանի որ հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է. բացակայում է շահութահարկի օբյեկտը՝ հարկվող շահույթը:

Մինևույն ժամանակ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում օրենսդիրը սահմանել է, որ տնտեսվարող սուբյեկտի մոտ նախորդ տարիներին առաջացած վստահ կարող է փոխանցվել վստասի ստացման տարվան հաջորդող հինգ տարիների՝ նվազեցվելով այդ տարիների համախառն եկամտից: Փաստորեն, քննարկվող իրավադրույթների ուժով իր գործունեության որևէ տարվա ընթացքում շահույթ չստացած և վստահներ կրած տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն է ընձեռվում վստասի առաջացմանը հաջորդող հինգ տարիների շահութահարկերը հաշվարկելիս այդ տարիների համախառն եկամտներից նվազեցնել նաև այդ վստահ, այսինքն՝ այդ տարիների շահութահարկերը հաշվարկել ու վճարել՝ հարկվող շահույթներից հանելով նախկինում ստացված վստահ: Նման իրավակարգավորման նպատակն է հարկային քաղաքականության միջոցով խթանել տարվա արդյունքներով շահույթ չստացած և դրա փոխարեն վստահներ կրած տնտեսվարող սուբյեկտին շարունակելու իր տնտեսական գործունեությունը նաև հաջորդ տարիների ընթացքում և վերջիվերջո իր գործունեությունը հասցնելու շահութաբերության մակարդակի:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորման համար էական նշանակություն ունի տնտեսվարող սուբյեկտի՝ իր գործունեությունից կրած վստասի առաջացման տարին, քանի որ այդ վստահ կարող է նվազեցվել միայն դրա առաջացման տարվան հաջորդող հինգ տարիների շահութահարկերը հաշվարկելիս:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի իմաստով վստասի առկայության մասին կարող է խոսվել միայն այն դեպքում, երբ տվյալ հաշվետու տարվա շահութահարկի հաշվարկի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է: Այսինքն՝ քննարկվող վստասն առաջանում է այն հաշվետու տարում, որի շահութահարկի հաշվարկի համաձայն՝ համախառն եկամտից կատարվող նվազեցումները գերազանցում են համախառն եկամտի չափը: Հետևաբար տնտեսվարող սուբյեկտի՝ իր գործունեությունից կրած վստասի առաջացման տարին այն հաշվետու տարին է, որի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումները: Այլ կերպ ասած՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի իմաստով հարկատուի մոտ վստասի առաջացման տարին այն հաշվետու տարին է, որի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է:

Համադրելով կատարված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով և նույն օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետով սահմանված իրավադրույթները մեկնաբանել է հետևյալ կերպ. 1) տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարվա շահութահարկը հաշվարկելիս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով կարող էր հաշվետու տարվա համախառն եկամտից նվազեցնել նաև այդ տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը, այսինքն՝ հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը հանգեցնող՝ ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, 2) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը նվազեցնելու արդյունքում հաշվետու տարվա նվազեցումների ընդհանուր գումարը կարող է գերազանցել տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը, այսինքն՝ կարող է առաջանալ վստահ, 3) հաշվետու տարվան նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը հաշվետու տարվա համախառն եկամտից նվազեցնելու արդյունքում առաջացած վստահ՝ հաշվետու տարվա համախառն եկամտի և կատարված բոլոր նվազեցումների (ներառյալ նաև՝ հաշվետու տարվան նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերի) բացասական տարբերությունը, կարող է փոխանցվել այդ հաշվետու տարվան անմիջապես հաջորդող հինգ տարիների՝ նվազեցվելով այդ տարիների համախառն եկամտից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի գործողության տիրույթում տնտեսվարող սուբյեկտը կարող է հաշվետու տարում իր գործու-

նեությունից առաջացած վնասը փոխանցել այդ տարվան հաջորդող 5 տարիներ, եթե այդ վնասն առաջացել է այն պատճառով, որ հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան ան-միջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը «Շահութահար-կի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով նվազեցվել են հաշվետու տարվա համախառն եկամտից, ինչի արդյունքում հաշվետու տարվա նվազեցումները գերազանցել են համախառն եկամու-տը:

Սույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռ. Հակոբյանը և Գ. Հակոբյանը ներկայացրել են հատուկ կարծիք, որում, մասնավորապես, ընդգծել են, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի և՛ սույն օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմ-բագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» կետի իրավակարգավորումների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները համընկնում են իրենց իրավական դիրքորոշումների հետ, սակայն իրենք համաձայն չեն սույն գործի փաստերի նկատմամբ այդ իրավանորմերի կիրառման Վճռաբեկ դատարանի հիմնավորումների հետ:

25.12.2019թ.

35. Տիգրան Սահակյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամտունների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/6067/05/16

Էջ
468-498

Խնդիր. Արդյո՞ք անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կա-տարված գույքի օտարման անհատույց գործարքները կարող են համարվել ապրանքի մա-տակարարում և առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն :

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև այն հարցին, թե արդյո՞ք վարչական մար-մինն իրավապես է չանցկացնել լուումներ «Վարչարարության հիմունքների և վարչական վա-րույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված՝ լուումներ չանցկացնելու հայե-ցողական և պարտադիր հիմքերի բացակայության պայմաններում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ավե-լացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որի առանձնահատկություններից է այն, որ վերջինս կիրառվում է տնտեսական գործունեության բավականին լայն շրջանակում ընդ-գրկված գործարքների նկատմամբ, որոնք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են ապրանքի մատակարարում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆի-զիկական անձի կողմից իրականացված՝ ապրանքի մատակարարում համարվող գործարք-ներ են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությամբ սահ-մանված գործարքները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով անհատ ձեռնար-կատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գոր-ծարք, եթե վերջինս օտարել է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդեր-բօցուագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույքի սեփականություն ունեցող պատկանող բաժնեմաս: Ընդ որում, վերը նշված գործարքների մատով ավե-լացված արժեքի հարկի շեմ է սահմանվել 58,35 մլն ՀՀ դրամ: Այն դեպքում, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված՝ ապրանքի մա-տակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանա-ռությունը նախորդ տարում չի գերազանցել ավելացված արժեքի հարկի շեմը (58,35 մլն ՀՀ դրամ), ապա վերը նշված գործարքների մատով ավելացված արժեքի հարկի պարտավորու-թյան մեծությունը որոշվում է գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գոր-ծարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ավելացված արժեքի հարկի շեմը (58,35 մլն ՀՀ դրամ) գերազանցող գումարից:

Հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել բացահայտել իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերու-

թյան «ա» ենթակետում կիրառված «օտարում» բառի նշանակությունը:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքների (գործառնություններ) թվին դասելով ապրանքների մատակարարումը, միաժամանակ բացահայտում է նաև դրա հասկացությունը: Մասնավորապես, օրենսդիրն ապրանքների մատակարարում է համարել այն գործարքը, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով: Փաստորեն, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքի մատակարարում են միայն հատուցելի գործարքները, այսինքն՝ այն գործարքները, որոնցով ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվում հատուցման դիմաց:

Միևնույն ժամանակ օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությամբ սահմանել է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող, ապրանքի մատակարարում համարվող գործարքները՝ դրանց թվին դասելով նաև ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնետնստի օտարման գործարքները:

Վճարելի դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով սահմանված՝ վերը նշված դրույթն անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե այդ հոդվածի ընդհանուր համատեքստից դուրս, այլ հաշվի առնելով նաև դրանով սահմանված մնացած իրավակարգավորումները, մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությամբ ամրագրված դրույթը, համաձայն որի՝ ապրանքի մատակարարում կարող են համարվել բացառապես հատուցելի գործարքները: Փաստորեն, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով սահմանված գույքի օտարումը համարվում է ապրանքի մատակարարում միայն այն դեպքում, երբ այդ գործարքով գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվել որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Ընդ որում, Վճարելի դատարանի գնահատմամբ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված հատուցելի կարգավորումը նպատակ է հետապնդում սահմանափակել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող այն գործարքները, որոնք վերջինիս համար առաջացնում են ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի համաձայն՝ ապրանքի մատակարարում է համարվում ոչ թե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կնքված գույքի օտարման հատուցելի ցանկացած գործարք, այլ միայն գույքի օտարման այն գործարքները, որոնց առարկան ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնետնստի է:

Այսպիսով, Վճարելի դատարանն արձանագրել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնետնստի օտարումը իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի ուժով համարվում է ապրանքի մատակարարում և անձի մոտ կարող է առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն միայն այն դեպքում, երբ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվել հատուցելի գործարքով, այսինքն՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Հետևաբար, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարված՝ վերոգրյալ գույքի

օտարման անհատույց գործարքները չեն կարող համարվել ապրանքի մատակարարում և չեն կարող առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

Սույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռ. Հակոբյանը, Մ. Դրեմյանը և Գ. Հակոբյանը ներկայացրել են հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հատուկ կարծիքի հեղինակները նշել են, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք, եթե օտարվել է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմաս: Ընդ որում, օրենսդիրը նշված գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի օտարումն ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք համարելը չի պայմանավորել այդ գույքը կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի օտարումը որևէ հատուցելի եղանակով օտարելու հետ: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը նշված գույքը կամ դրանում իրեն պատկանող բաժնեմասն օտարել է որևէ հատուցելի եղանակով (օրինակ՝ վաճառք, փոխանակություն), թե՛ անհատույց (օրինակ՝ նվիրատվություն), մինչև սույն է այդ գործարքն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, և ըստ այդմ՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք:

Հատուկ կարծիքում ընդգծվել է, որ այն դեպքերում, երբ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետում նշված գործարքը կատարվել է անհատույց, այսինքն՝ գույքը կամ դրանում անձին պատկանող բաժնեմասն օտարվել է ոչ հատուցելի եղանակով, այդ գործարքի մասով ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով՝ գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետում նշված գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի ցանկացած եղանակով (հատուցելի կամ անհատույց) օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք առնվազն պետք է ընդունվի տվյալ գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի կադաստրային արժեքը:

25.12.2019թ.

36. «Ինեսա և Իրինա քույրեր» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ-2/0073/05/16

էջ

499-517

Խնդիր. Արդյո՞ք տնտեսավարող սուբյեկտի վրա կարող է դրվել էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պարտականություն, եթե այդ հարկային հաշիվների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկություններն արդեն իսկ հայտնի են հարկային մարմնին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ օրենսդիրը սահմանել է, որ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման, inter alia, այն դեպքում, երբ այդ հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին չեն ներկայացվել նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները: Փաստորեն, օրենսդիրը հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման հնարավորությունը պայմանավորել է այդ հարկային հաշիվների վերաբերյալ իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները հարկային մարմնին ներկայացվելու կամ չներկայացվելու հանգամանքով:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ պետական բյուջե վճարվող հարկատեսակ հա-

մարվող ավելացված արժեքի հարկ վճարող անձինք, եռամսյակի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը, ներկայացնում են տեղեկանք եռամսյակի ընթացքում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում տվյալ եռամսյակի ընթացքում ստացված կամ տրամադրված հաշիվներում ներառված հարկվող շրջանառության արժեքը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափը: Ընդ որում, այդ տեղեկությունը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով: Այսինքն՝ օրենսդիրը տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն է ընձեռել ընտրելու նշված տեղեկությունը հարկային մարմնին ներկայացնելու եղանակը:

Վճարել դատարանը գտել է, որ եթե հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով տեղեկություններ ներկայացնելու կարգի միջոցով վերջինս էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ ստանում է ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն, ապա հարկային մարմնին ներկայացվող էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները տեղեկանքում ներառելու պահանջը կարող է հակասել վարչարարության՝ ձևական պահանջները չարաշահելու արգելքի և առավելագույնի հիմնարար սկզբունքներին:

Համադրելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերելի հոդվածների պահանջներն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջների հետ, միաժամանակ կատարելով դրանց բովանդակային վերլուծություն՝ Վճարել դատարանը եզրահանգել է, որ եթե տնտեսվարողի կողմից իրեն հասանելի ու արդյունավետ եղանակով հարկային մարմնին է ներկայացվում համապատասխան տեղեկություններ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ, որոնք թույլ են տալիս հարկային մարմնին ամբողջական տիրապետել էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությանը, ապա արդեն իսկ ներկայացված համապատասխան տեղեկատվությունն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված տեղեկանքում ներառելու՝ ԱԱՀ վճարող անձանց ուղղված հարկային մարմնի պահանջը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածներում ամրագրված վարչարարության հիմնարար սկզբունքների լույսի ներքո չի կարող գնահատվել որպես համաչափ միջամտություն, որպիսի հիմքով այդպիսի միջամտությունը չի կարող համարվել իրավաչափ:

Միևնույն ժամանակ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում օրենսդիրը, ելնելով ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքից, էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պահանջից կատարել է որոշ բացառություններ: Այդ բացառությունները վերաբերում են հետևյալ դեպքերին. 1) էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվները դուրս են գրվել ինտերնետային կայքի միջոցով, 2) էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտն էլեկտրոնային եղանակով ներկայացվել է հարկային մարմնին, 3) էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների ստացումը մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտն էլեկտրոնային կարգով հավաստել է ստացողը:

Վճարել դատարանը փաստել է, որ վերը թվարկված դեպքերում տնտեսվարող սուբյեկտը, ըստ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի՝ չունի էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պարտականություն: Այլ կերպ, եթե առկա է էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պահանջից կատարված վերագրյալ բացառություններից որևէ մեկը, ապա տնտեսվարող սուբյեկտը պարտավոր չէ այդ հարկային հաշիվների մասին իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկանք ներկայացնել հարկային մարմնին:

Վճարել դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը

պետք է հիմնավորված լինեն. օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավական հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ վարչական ակտն ընդունելու համար:

Հիմք ընդունելով վարչական ակտերի հիմնավորվածության պահանջի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների ապօրինի հաշվանցման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը (մասնավորապես՝ ստուգման ակտը) պետք է պարունակի հիմնավորում կատարված հաշվանցման՝ ապօրինի լինելու վերաբերյալ: Եթե ստուգման ակտով տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունն առաջադրվել է այն հիմքով, որ վերջինս էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին չի ներկայացրել իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկանքը, ապա այդ վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, *inter alia*, այն մասին, որ տնտեսվարող սուբյեկտն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի ուժով ուներ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պարտականություն՝ բացառելով նշված հոդվածով նախատեսված բոլոր այն դեպքերը, երբ տնտեսվարող սուբյեկտն ազատվում է այդ պարտականությունից: Քննարկվող իրավիճակում հարկային մարմինը պարտավոր է իր ստուգման ակտում հիմնավորել և այդ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում ապացուցել, որ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը հարկային մարմնին չներկայացնելու պայմաններում տնտեսվարող սուբյեկտն իրավունք չուներ կատարելու այդ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցում՝ հաշվի առնելով վարչարարության՝ ձևական պահանջները չարաշահելու արգելքի և առավելագույնի հիմնարար սկզբունքները, ինչպես նաև իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված բացառությունները: Վերոգրյալն այն էական փաստական և իրավաբանական հանգամանքներից մեկն է, որը հիմք է հանդիսանում իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի երկրորդ պարբերության կիրառմամբ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 28.04.2015 թվականի թիվ ՄԴՈ-1203 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների ընդհանուր տրամաբանությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու համար հարկային պատասխանատվություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե այդ իրավախախտումն հանգեցրել է ԱԱՀ-ի գծով պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման, այսինքն՝ պետությանը հասցվել է գույքային վնաս: Իսկ այն դեպքում, երբ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների ապօրինի հաշվանցման արդյունքում ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների մասով պետությանը գույքային վնաս փաստացի չի հասցվել, տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումն իրավաչափ չի կարող համարվել:

Ի վերջո, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրման իրավաչափությունը քննարկել նաև Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության

1-ին հոդվածով սահմանված սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտության լույսի ներքո՝ հաշվի առնելով այդ իրավադրույթի վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն օրենքով նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու արդյունքում պետությունը որևէ գույքային վնաս չի կրում, ապա այդ իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումը չի համապատասխանում Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականության իրավունքի երաշխավորման վերաբերյալ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին:

Վճռաբեկ դատարանի այդ դատողությունը հիմնված է այն իրողության վրա, որ նկարագրված իրավիճակում տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումը չի համապատասխանում հարկային պատասխանատվության նպատակին: Հարկային պատասխանատվությունը նպատակաուղղված է տնտեսվարող սուբյեկտի՝ հարկ վճարելու պարտականության պատշաճ և բարեխիղճ կատարումը և պետությանը հասցված գույքային վնասի վերականգնումն ապահովելուն: Մինչդեռ քննարկվող իրավիճակում տնտեսվարող սուբյեկտը չի խախտում հարկ վճարելու իր պարտականությունը և պետությանը որևէ գույքային վնաս չի պատճառում:

Ակնհայտ է, որ եթե էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն օրենքով նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու արդյունքում պետությունը որևէ գույքային վնաս չի կրում, ապա այդ իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումը չի կարող հետապնդել տնտեսվարող սուբյեկտի՝ հարկ վճարելու պարտականության պատշաճ և բարեխիղճ կատարումը և պետությանը հասցված գույքային վնասի վերականգնումն ապահովելու նպատակ: Տվյալ դեպքում պետության կողմից կիրառվող պատասխանատվության նպատակը էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները օրենքով նախատեսված տեղեկանքում ներառելու պահանջի պահպանման ու այդ խախտումների կանխման ապահովումն է: Իսկ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումը չի կարող համարվել համաչափ միջոց այդ նպատակին հասնելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ քննարկվող իրավիճակում տնտեսվարող սուբյեկտը կրում է անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն, քանի որ ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումը տվյալ դեպքում չի կարող համարժեք լինել իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված տեղեկանքը ներկայացնելու պարտականության պատշաճ կատարումն ապահովելու նպատակին: Եթե էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն օրենքով նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու արդյունքում պետությունը որևէ գույքային վնաս չի կրում, ապա այդ իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումը անհամաչափ բեռ է սահմանում հարկ վճարողի նկատմամբ և անհամաչափ կերպով է միջամտում նրա ֆինանսական վիճակին:

Ամփոփելով վերոգրյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ եթե էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն օրենքով նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու արդյունքում պետությունը որևէ գույքային վնաս չի կրում, ապա այդ իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումը խախտում է տնտեսվարող սուբյեկտի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը:

Մույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորներ Ս. Անտոնյանը, Ա. Բարսեղյանը, Տ. Պետրոսյանը և Էդ. Մեդրակյանը ներկայացրել են հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Ավելացված արժեքի հարկի վճարման, հաշվանցման, հաշվետվությունների ներկայացման ժամկետները, կարգն ու պայմանները սահմանվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով և դրան համապատասխան ընդունված նորմատիվ իրավական այլ ակտերով: Հետևաբար՝ հարկ վճարող սուբյեկտի մոտ այս հարկատեսակով առկա պարտավորությունները կարող են բովանդակային առումով պատշաճ կատարված համարվել, եթե հարկ վճարողի գործողությունները համապատասխանում են օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին: Միայն այս դեպքում կարելի է ասել, որ պարտավորությունը բովանդակային

առումով կատարված է:

Հատուկ կարծիքի հեղինակները նշել են, որ օրենքի պահանջներին ուղղակիորեն հակառոտ գործողությունների կատարման փաստն արձանագրելը չի կարող որակվել ձևական պահանջի չարաշահում:

Վճռաբեկ դատարանի որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՌ-1230 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին կատարված հղման կապակցությամբ հատուկ կարծիքի հեղինակները նշել են, որ այդ դիրքորոշումները չեն կարող կիրառելի լինել անուղղակի հարկատեսակ համարվող ավելացված արժեքի հարկին առնչվող իրավահարաբերությունների նկատմամբ, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իրավական գնահատականներ են տրվել ուղղակի հարկատեսակ համարվող շահութահարկի հետ կապված հարցին՝ «հարկային վսասին»: Մինչդեռ անուղղակի հարկատեսակ համարվող ավելացված արժեքի հարկի դեպքում «վսաս» իրավական եզրույթը բացարձակապես կիրառելի չէ, քանի որ այս դեպքում հարկ վճարողի կողմից կատարվող գործողությունները առնչվում են ավելացված արժեքի հարկի առանձնացմանը, վճարմանը և հաշվանցներին: Ըստ հատուկ կարծիքի հեղինակների՝ տեղին չէ նաև սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված Կոնվենցիայի և դրա հետ կապված Եվրոպական դատարանի դատական ակտերի վկայակոչումը, քանի որ Սահմանադրությամբ և դրան համապատասխան օրենքով հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների կատարումը չի կարող դիտվել որպես անձի սեփականության իրավունքի խախտում կամ սահմանափակում:

Հատուկ կարծիքի հեղինակները նշել են նաև, որ ինչ վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար հարկային օրենսդրության խախտման հետևանքներին օրենքով նախատեսված չափով նշանակված վարչական պատասխանատվության համապատասխանության հարցին, ապա նման հարցադրման իրավաչափությունը դուրս է վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների քննարկման տիրույթից՝ այն առումով, որ բողոք բերած անձը վիճարկել է ավելացված արժեքի հարկի մասով ստուգման ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտը ուժի մեջ թողնելու մասին վերաքննիչ վարչական դատարանի որոշման հիմնավորումները և այս դեպքում հակասահմանադրական չճանաչված նորմատիվ իրավական ակտի կիրառումը բացառող հանգամանքներ առկա չեն:

ՄԱՔՍԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

01.08.2019թ.

37. Աբդուլմաջիդ Աբդուլգաֆգ Ֆավազ Ալիոկաիրին ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/3530/05/14

էջ

518-527

Խնդիր. Արդյո՞ք իրավաչափ է փակ բաժնետիրական ընկերության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելը Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մաքսային հայտարարագրերում այդ ապրանքների իրացման համար անհրաժեշտ պայման հանդիսացող ռոյալթիների դիմաց վճարման ենթակա գումարների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու համար, եթե այդ ռոյալթիների գումարի մեծությունը հայտնի չէր ներմուծված ապրանքների մաքսային ձևակերպումների իրականացման ժամանակ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը ՀՀ մաքսային օրենսգրքի մի շարք իրավադրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար հայտարարատուն պարտավոր է ներկայացնել այդ ապրանքների մաքսային հայտարարագիր, որը պարունակում է ապրանքների ու ընտրված մաքսային ընթացակարգի վերաբերյալ տվյալներ և այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են ապրանքների բացթողման համար:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրման պարտականության նախատեսումն ինքնանպատակ չէ: Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը, ըստ էության, մաքսային մարմիններին որոշակի տեղեկատվություն տրամադրելու օրենսդրորեն սահմանված եղանակ է: Նման իրավակարգավորման նպատակը հարկեր, տուրքեր վճարելու, պարտադիր այլ վճարումներ կատարելու անձի սահմանադրաիրավական պար-

տակնության պատշաճ կատարման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ապահովումն է, քանի որ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրելու միջոցով լուծվում է տվյալ ապրանքի կամ տրանսպորտային միջոցի ներմուծման կամ արտահանման համար գանձվող մաքսատուրքի վճարման հարցը, ինչպես նաև պարզվում է գանձման ենթակա մաքսատուրքի չափը (յրեն, նաև ՀՀ կառավարության առընթեր պելուական եկամուրների կոմիտեի Վահե Հարությունյանի և Վահե Հարությունյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պելուական եկամուրների կոմիտեի թիվ ՎԳ/5170/05/12 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):

Վճարելի դատարանն արձանագրել է, որ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքի բաղկացուցիչ տարրերից է նաև այդ ապրանքի վաճառքի անհրաժեշտ պայման հանդիսացող ռոյալթիների դիմաց մատակարարին ուղղակի կամ անուղղակի վճարված կամ վճարման ենթակա վճարները: Ապրանքները և տրանսպորտային միջոցները վերադառա մաքսային մարմնի սահմանած կարգով հայտարարագրման ժամանակ հայտարարագրման է ենթակա մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը, որի մեջ ներառված է ռոյալթիների դիմաց վճարված կամ վճարման ենթակա վճարը: Այսինքն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ ներկայացվող հայտարարագրում պետք է նշվի նաև ապրանքների վաճառքի անհրաժեշտ պայման հանդիսացող ռոյալթիների դիմաց վճարված կամ վճարման ենթակա վճարների մասին:

Օրենսդիրը նախատեսել է մաքսային հայտարարագրերի ներկայացման արդյունքում վրա հասնող հետևանքների կարգավորման մի քանի եղանակ: Այսպես՝ մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ մաքսային մարմնին ներկայացման ենթակա է մաքսային հայտարարագրի, որում ներառման են ենթակա ռոյալթիների դիմաց վճարված կամ վճարման ենթակա վճարների վերաբերյալ տեղեկություններ: Այնուհետև, ներկայացված հայտարարագրում անճշտության կամ սխալի առկայության դեպքում մաքսային մարմնի ընդունած մաքսային հայտարարագրի կարող է փոփոխվել: Նշվածից հետևում է, որ ներկայացված հայտարարագրում սխալի կամ անճշտության հայտնաբերման պարագայում օրենսդիրը նշված թերություններն ուղղելու հնարավորություն է ընձեռել: Փաստորեն, իրավահարաբերության ծագման պահին գործող մաքսային օրենսդրությամբ հայտարարատուին հնարավորություն է ընձեռվել մաքսային մարմնին նախօրոք հայտնել վճարման ենթակա ռոյալթիի դիմաց վճարումների մասին, ինչպես նաև հետագայում դիմել մաքսային մարմնին և մաքսային մարմնի կողմից ընդունված հայտարարագրերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ներկայացնելով մաքսային արժեքների վերաբերյալ ճշգրտված տեղեկություններ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը (տվյալ ապրանքը ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության սահման հասցնելու համար վճարված կամ վճարման ենթակա գումարը) ենթակա է հայտարարագրման: Այն դեպքերում, երբ տվյալ ապրանքի առուվաճառքի գնից գատ առուվաճառքի պայմանագրով ռոյալթի վճարելու պայման է նախատեսված, ռոյալթին ևս կազմում է մաքսային արժեքի բաղկացուցիչ մաս և ենթակա է հայտարարագրման: Բացի այդ, օրենսդրորեն ամրագրված է, որ մաքսային արժեքի մաս է կազմում նաև հետագայում վճարման ենթակա ռոյալթիի գումարը:

Վճարելի դատարանն արձանագրել է, որ քննարկվող մաքսային կանոնների խախտման համար օրենսդիրը ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսել է վարչական պատասխանատվություն: Այսինքն՝ հայտարարատուն կարող է ենթարկվել պատասխանատվության, եթե տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չի հայտարարագրել կամ ոչ իր նախվար է հայտարարագրել կամ հայտարարագրման ժամանակ նշել է ոչ ճշգրիտ տեղեկություններ: Նշված վարչական իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի դեմ և դրսևորվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ ոչ իրենց անվանամբ հայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու եղանակով: Թվարկված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված մաքսային վճարների հիսուն տոկոսի չափով: Ընդ որում, այս պատասխանատվության միջոցը վրա է հասնում այն դեպքում, երբ մաքսային մարմնին ոչ ճշգրիտ տեղեկություններ ներկայացնելու արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում:

Վճարելի դատարանն արձանագրել է, որ փակ բաժնետիրական ընկերության կողմից

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հայտարարագրելիս ռոյալթին՝ որպես մաքսային արժեքի բաղկացուցիչ մաս, օրենքով սահմանված կազով ևս ենթակա էր հայտարարագրման: Այսինքն՝ նույնիսկ եթե փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարագիր ներկայացնելու պահի դրությամբ քաջատեղյակ չի եղել գոյացած ռոյալթիների հստակ չափի մասին, այնուամենայնիվ պարտավոր էր ներկայացվող հայտարարագրում տեղեկացնել դրանց առկայության մասին:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը տվյալ դեպքում հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ դուրս գրված ռոյալթիների վճարման հաշիվների դուրս գրման ժամանակ փակ բաժնետիրական ընկերությունն ուներ հնարավորություն դիմելու մաքսային մարմնին և մաքսային մարմնի կողմից ընդունված հայտարարագրերում կատարելու համապատասխան փոփոխություններ՝ ներկայացնելով մաքսային արժեքների վերաբերյալ ճշգրտված տեղեկություններ, որոնց մեջ կներառվեին նաև ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 83-րդ հոդվածի «ե» կետով նախատեսված վճարները: Մինչդեռ տվյալ դեպքում փակ բաժնետիրական ընկերությունը ոչ միայն չի կատարել օրենքով սահմանված իր պարտականությունը, այլ նաև չի օգտվել վճարման ենթակա ռոյալթիների առկայության վերաբերյալ տեղեկությունները նախապես հայտնելու, հայտարարագրում տեղ գտած անճշտությունները և սխալներն ուղղելու օրենսդրությամբ թույլատրելի համարվող եղանակներին: Այդ պարագայում իրավաչափորեն վրա է հասել ներմուծված ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ մաքսային մարմնին ոչ ճշգրիտ տեղեկություն ներկայացնելու արդյունքում առաջացած մաքսային վճարների պակաս հաշվարկման համար ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված համապատասխան պատասխանատվության միջոցի կիրառումը:

25.12.2019թ.

38. «ՊԼՊԻԻՌՈՒՄ ԳԼՈՒԱԼ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/4724/05/17

էջ
528-567

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 22.11.1950 թվականի Նյու-Յորքյան համաձայնագրի արձանագրության «Ը» հավելվածի առարկա ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո դրանց նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ կիրառելու պարտադիր պայմաններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունը վերը նշված միջազգային պայմանագրով 23.02.2011 թվականից պարտավորություն է ստանձնել մաքսային տուրք և ներմուծման հետ կապված այլ վճարներ չկիրառելու Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ստորև նշված հետևյալ ապրանքների համար՝ ցելյուլոզային զանգված, թափոնների վերամշակումից ստացված թուղթ, թերթային և այլ թուղթ՝ տպագրության համար, տպագրական ներկեր, սոսինձ և այլն, ինչպես նաև ցելյուլոզային զանգվածի և թղթի մշակման համար նախատեսված մեքենաներ, ինչպես նաև տպագրական և կազմարարական մեքենաներ՝ պայմանով, որ ներմուծող երկրում տվյալ պահին համարժեք տեխնիկական որակի մեքենաներ չեն արտադրվում, հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ 1) եթե դրանք օգտագործվում են գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար, 2) 1-ին կետում նշված ապրանքները հանդիսանում են այլ Պայմանավորվող պետության արտադրանք:

ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով վերը նշված միջազգային պայմանագիրը, 05.02.2015 թվականին ընդունել է «Առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» թիվ 112-Ն որոշումը, որի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմնին վերապահվել է վերը նշված ապրանքների ներմուծման նպատակային նշանակության վերաբերյալ եզրակացություն տրամադրելու իրավունք՝ նույն որոշման 3-րդ կետով այդ եզրակացությունը համարելով ներմուծման մաքսատուրքից ազատվելու հիմք:

Նախկինում գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի համապատասխան դրույթների մեկնաբանությունից բխում է, որ մաքսային մարմին իրականացնում է մաքսային ստուգում՝ նպատակ ունենալով ստուգելու նաև հայտարարատուների կողմից Մաք-

սային միության մաքսային օրենսդրությամբ և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետություն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ներմուծվել են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, որոնց դեպքում վերը նշված միջազգային պայմանագրի ուժով տրամադրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնությունների՝ զուգակցված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով, այսինքն՝ այդ ապրանքները կարող են օգտագործվել բացառապես արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով, ապա մաքսային մարմինը ստուգում է դրանց օգտագործման և տնօրինման հետ կապված սահմանափակումների պահպանումը հայտարարատուների կողմից, քանի որ այդ ապրանքները համարվում են մաքսային հսկողության տակ գտնվող:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարել վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ արտոնության կիրառման անհրաժեշտությունը կախված է ներմուծված նյութերի (ապրանքների) բնույթից և (կամ) նպատակային նշանակությունից, այլ ոչ թե ներմուծողի կողմից դրանց օգտագործման նպատակից:

Մույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավոր Ե. Խունդկարյանը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռ. Հակոբյանը, Ն. Տավարացյանը և Ս. Միքայելյանը ներկայացրել են հատուկ կարծիքներ:

Վճռաբեկ դատարանի դատավոր Ե. Խունդկարյանի կողմից ներկայացված հատուկ կարծիքում, մասնավորապես, նշվել է, որ համաձայնագրի անդամ պետությունն ունի Համաձայնագրով սահմանված չափանիշներին բավարարող՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծումը մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելու պոզիտիվ պարտավորություն՝ այն պայմանով, որ այդ նյութերը պետք է վերջնվերջո օգտագործվեն տպագրական գործունեության մեջ: Այդ պարտավորությունը բխում է Համաձայնագրով մատնանշված հայեցակարգից առ այն, որ Համաձայնագիրն արդյունավետ միջոց է գաղափարների և գիտելիքների փոխանակումը խոչընդոտող մաքսային արգելքների նվազեցման և տնտեսական բնույթի այլ սահմանափակումների կրճատման համար:

Հատուկ կարծիքի հեղինակը նշել է, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունների կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, թե ներկրվող ապրանքը վերջնվերջո որևէ սուբյեկտի (կամ ներմուծողի, կամ այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից) կողմից օգտագործվել է իր նպատակային նշանակությամբ, թե՛ ոչ:

Ելնելով Համաձայնագրով հետապնդվող նպատակից՝ հատուկ կարծիքի հեղինակը հանգել է այն եզրակացության, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունները կիրառելի են հետևյալ դեպքերում. 1) ներկրված ապրանքն օգտագործվել է անմիջականորեն ներմուծողի կողմից իր նպատակային նշանակությամբ, 2) ներկրված ապրանքը ներմուծողի կողմից օտարվել է այլ անձանց, որոնք այդ ապրանքը հետագայում օգտագործել են իր նպատակային նշանակությամբ:

Մյուս կողմից, կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունները կիրառելի չեն հետևյալ դեպքերում. 1) ներկրված ապրանքն օգտագործվել է անմիջականորեն ներմուծողի կողմից, սակայն ոչ իր նպատակային նշանակությամբ, 2) ներկրված ապրանքը ներմուծողի կողմից օտարվել է այլ անձանց, որոնք այդ ապրանքը հետագայում չեն օգտագործել իր նպատակային նշանակությամբ:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռ. Հակոբյանի, Ն. Տավարացյանի և Ստ. Միքայելյանի կողմից ներկայացված հատուկ կարծիքում, մասնավորապես, նշվել է, որ Համաձայնագրի անդամ պետությունն ունի Համաձայնագրով սահմանված չափանիշներին բավարարող կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծումը մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելու պոզիտիվ պարտավորություն՝ անկախ այն հանգամանքից, թե այդ նյութերը ներմուծողի կողմից անմիջականորեն օգտագործվում են հրատարակչական գործունեության մեջ, թե օտարվում են այլ սուբյեկտների: Այդ պարտավորությունը բխում է Համաձայնագրով մատնանշված հայեցակարգից առ այն, որ Համաձայնագիրն արդյունավետ միջոց է գաղափարների և գիտելիքների փոխանակումը խոչընդոտող մաքսային արգելքների նվազեցման և տնտեսական բնույթի այլ սահմանափակումների կրճատման համար:

Հատուկ կարծիքի հեղինակները հանգել են այն եզրակացության, որ Համաձայնագրով նախատեսված կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերը, որոնց ներմուծման

դեպքում կիրառվում են մաքսատուրքերի և այլ վճարների գծով արտոնություններ, չեն համարվում պայմանականորեն բաց թողնված ապրանքներ՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ ենթակետերի իմաստով: Հետևաբար Համաձայնագրով նախատեսված կրթական, գիտական և մշակութային բնույթի կուլթերը ներմուծվելուց հետո դրանք անմիջականորեն ներմուծողի կողմից նպատակային նշանակությամբ օգտագործվելու կամ այլ անձանց օտարվելու հանգամանքները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ այդ նյութերի ներմուծման համար գանձվող մաքսատուրքի և ներմուծման հետ կապված այլ վճարների գծով արտոնության կիրառելիության համար: Ասվածն էլ իր հերթին նշանակում է, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունների կիրառումը պայմանավորված չէ այն հանգամանքով, թե ներկրվող ապրանքը հետագայում օգտագործվել է իր նպատակային նշանակությամբ անմիջականորեն այն ներմուծողի կողմից, թե իրացվել է այլ անձանց:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՍԵՐԸ

25.12.2019թ.

39. Վարդան Մամիկոնյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, վարչ. գործ թիվ ՎԴ/1984/05/17

էջ

568-579

Խնդիր. Արդյո՞ք պատասխանող վարչական մարմինը պարտավոր է պետությանը հատուցել հարկադիր կատարողի գործողությունների բողոքարկման նպատակով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով, եթե վարչական գործի վարույթը կարճվում է այդ գործի քննության ընթացքում վարչական մարմնի կողմից կիրառված արգելանքը վերացվելու և կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով կարճվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով:

Վճռարեկ դատարանի դիրքորոշումը. Վճռարեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կատարողական վարույթի ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս հարկադիր կատարողը ոչ միայն կատարում է փաստացի գործողություններ, այլև ընդունում է որոշումներ, որոնք հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարումը, գտնել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 5-րդ պարբերության իմաստով «գործողություն» եզրույթը ներառում է նաև հարկադիր կատարողի կողմից ընդունվող որոշումները, որոնց իրավաչափությունը վիճարկելու նպատակով հայցադիմում ներկայացնելու համար նույնպես ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք ազատված են պետական տուրքի վճարումից: Ընդ որում, պահանջելով ճանաչել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը՝ անձն, ըստ էության, դատական քննության առարկա է դարձնում վիճելի կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը (յո՛ւն, Վարսման Ավերիբջյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը): Հետևաբար, նշված պահանջով դատարան դիմելու դեպքում ևս ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 5-րդ պարբերության ուժով ազատված են պետական տուրքի վճարումից:

Վկայակոչելով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքի համար դատական ծախսերի հատուցման առանձնահատկությունների վերաբերյալ թիվ ՎԴ/4084/05/15 վարչական գործով 07.04.2017 թվականի որոշումը արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքերում, երբ գործի քննության ընթացքում պատասխանող վարչական մարմինը վերացնում է կիրառված արգելանքը և կատարողական վարույթը կարճում է այն հիմքով, որ անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ բացակայում է «Վարչարա-

րության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական ակտն անբողոքարկելի դառնալու հիմքը («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ), ապա այդ պարագայում դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա: Քննարկվող հիմքով կատարողական վարույթը կարճվելու հետևանքով վարչական գործի վարույթը կարճվելու դեպքում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դնելու վերաբերյալ եզրահանգում կատարելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու հիմքի բացակայության պայմաններում հանրային իրավական դրամական պահանջները հարկադիր կատարման չեն կարող ենթարկվել: Հետևաբար, գործի դատական քննության ընթացքում պատասխանող վարչական մարմնի կողմից արգելանքի վերացումը և քննարկվող հիմքով կատարողական վարույթի կարճումը հաստատում են, որ անձի դատական պաշտպանության դիմելը եղել է արդարացիված, ուստի դատական ծախսերի հատուցման պարտականությունը պետք է կրի պատասխանող վարչական մարմինը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ դեպքում պատասխանող վարչական մարմնի վրա կարող են դրվել միայն այն դատական ծախսերը, որոնք կատարվել են կամ կատարվելու են հայցվորի կողմից: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված այն օրենսդրական կանոնը, որի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, պարտավոր է հատուցել այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կատարել է: Ընդ որում, կողմը պարտավոր է հատուցել մյուս կողմի կրած դատական ծախսերը ողջամիտ չափով, այսինքն՝ միայն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նշված կարգավորումը հստակորեն ընդգծում է դատական ծախսերի հատուցման պարտականության սահմանները, որոնք հանգում են հետևյալին. 1) որպես կանոն՝ դատական ծախսերի հատուցման պարտականությունը կրում է այն կողմը, որը գործի ելքում դատավարական իմաստով պարտվել է, այսինքն՝ այն կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կամ այն կողմը, որի վրա դատարանի կողմից օրենքով սահմանված դեպքերում դրվում է այդ պարտականությունը, օրինակ՝ պատասխանող վարչական մարմինը՝ գործի քննության ընթացքում վարչական մարմնի կողմից կիրառված արգելանքը վերացվելու և կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով կարճվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում, 2) դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կրել է կամ կրելու է դատարան դիմելու (դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու) համար, 3) դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են եղել դատական ծախս կատարած կողմի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործի քննության ընթացքում վարչական մարմնի կողմից կիրառված արգելանքը վերացվելու և կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով կարճվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դրվելու պարագայում վերջինս պարտավոր է հայցվորին հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են եղել հայցվորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Մինչդեռ հարկադիր կատարողի գործողությունները բողոքարկելիս (ներառյալ հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով) հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում հայցվորի դատական պաշտպանության իրավունքն արդյունավետորեն իրականացնելու համար պետական տուրքի գծով դատական ծախս կատարելու անհրաժեշտությունը ողջամտորեն բացակայում է: Հետևաբար, քննարկվող իրավիճակում դատարանը գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ պարտավոր է լուծված համարել հարկադիր կատարողի գործողություն-

ները բողոքարկելու նպատակով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի բաշխման հարցը:

Անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է հետևյալ եզրակացության. 1) եթե գործի քննության ընթացքում վարչական մարմինը վերացնում է կիրառված արգելանքը և կատարողական վարույթը կարճում է այն հիմքով, որ անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ բացակայում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական ակտը անբողոքարկելի դառնալու հիմքը («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ), և ըստ էության վեճը սպառվում է, ապա այդ պարագայում դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա, 2) եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելիս դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա, ապա վերջինս պարտավոր չէ պետությանը հատուցել հարկադիր կատարողի գործողությունները բողոքարկելու նպատակով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ: ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ (ՀԱՆՁՆԵԼՈՒ) ԿԱՐԳԸ

30.05.2019թ.

1. «Եղիցի Լույս-ԲՀ» ՍՊԸ-ն ընդդեմ «Արմինե» Ա/Կ-ի, քաղ. գործ թիվ ԿԳ/0412/02/18

էջ

580-589

Խնդիր. Դատարանի կողմից դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելը դիտարկվում է արդյո՞ք դատարանի կողմից դատական ակտը գործին մասնակցող անձին հանձնելու լիազորության պատշաճ կատարում այն պարագայում, երբ դատարանը դատական ակտի օրինակը հրապարակման հաջորդ օրը չի ուղարկել գործին մասնակցող անձին կամ մինչ այդ առձեռն չի հանձնել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի բողոքարկման իրավունքը, հանդիսանալով դատարանի մատչելիության իրավունքի բաղկացուցիչ տարր, կարող է իրացվել այն դեպքում, երբ անձն իրական հնարավորություն է ձեռք բերել ծանոթանալու դատարանի որոշման հետ: Ներպետական օրենսդրությամբ դատական ակտը հրապարակելու, գործին մասնակցող անձանց հանձնելու և նրանց ուղարկելու ընթացակարգեր սահմանելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում այդ միջոցներով ստեղծել բավարար հիմքեր և երաշխիքներ, որպեսզի անձինք կարողանան անխաթար կերպով օգտվելու իրենց դատական պաշտպանության իրավունքից: Ուստի ելնելով այդ նպատակներից՝ դատավարական նորմերով սահմանված՝ դատական ակտը հրապարակելու և գործին մասնակցող անձանց հանձնելու կամ նրանց ուղարկելու ընթացակարգերը պետք է ուղղված լինեն պաշտպանության միջոցներն ավելի հասանելի դարձնելուն, այլ ոչ դրանք ոչ իրավաչափորեն սահմանափակելուն: Վճռաբեկ դատարանը, ամփոփելով Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումները, եզրահանգում է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածը հստակ չի սահմանում, թե դատարանի կայացրած ակտն ինչ կերպով պետք է հանձնվի անձին, սակայն միանշանակ է այն, որ դատական ակտը պետք է հանձնվի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա իրապես պարզելու ինչպես դատական ակտի՝ փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը: Դատական ակտի հանձնման կոնկրետ եղանակ չսահմանելով հանդերձ՝ Կոնվենցիան և դրա կիրառումը պահանջում են, որպեսզի անձի բողոքարկման իրավունքի իրացումը սերտորեն փոխկապակցված լինի դատարանի կայացրած ակտին ծանոթանալու իրական հնարավորության հետ: Այսինքն՝ դատավարական նորմերը պետք է սահմանվեն այնպես, որպեսզի գործին մասնակցող անձանց համար իրական հնարավորություն ապահովեն տիրապետելու դատական ակտի բովանդակությանը, և չարդարացված կերպով չսահմանափակվի նրանց բողոք բերելու իրավունքը:

Ելնելով վերոշարադրյալից՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հանդիսանալով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների բաղադրատարրերից մեկը՝ բողոքարկման իրավունքը կարող է սահմանափակվել պետության կողմից, սակայն այդ սահմանափակումները՝ ներառյալ ժամկետայինները, չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Վճռաբեկ դատարանը, համեմատական վերլուծության ենթարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին և գործող օրենսգրքերի համարժեք կարգավորումները, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքը սահմանում էր, որ դատական ակտի եզրափակիչ մասը հրապարակվում է դատական նիստում, և հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց, իսկ եթե գործին մասնակցող անձանցից որևէ մեկը չի ներկայացել, ապա վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան: Փաստորեն, սույն կարգավորման համաձայն՝ դատարանի կողմից վճռին անձին հանձնելու պարտավորությունը պատշաճ կատարված էր համարվում, եթե առձեռն հանձնվում էր գործին մասնակցող անձին, իսկ դրա կատարման անհնարինության դեպքում, որպես այլընտրանք, սահմանված էր պատվիրված նամակով գործին մասնակցող անձանց վճռին ուղարկելը: Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքը նախատեսում էր վճռի օրինակը գործին մասնակցող անձանց հանձնելու երկու եղանակ, որոնցից երկրորդն օրենսդիրը դիտարկում էր որպես կատարման ևս մեկ հավասարազոր և հնարավոր տարբերակ առաջինի անհնարինության դեպքում: Գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

համաձայն՝ վճիռը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով և վճռի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել: Փաստորեն՝ եթե վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելուց հետո դրա օրինակը չի հանձնվել անձին, ապա հրապարակման հաջորդ օրն այն պետք է ուղարկվի պատվիրված նամակով: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքից ևս որդեգրել է այն մոտեցումը, համաձայն որի՝ առձեռն հանձնվելու եղանակի իրագործված չլինելու պայմաններում պատվիրված նամակով վճռի օրինակն ուղարկելը դիտարկվում է որպես առաջինին համարժեք, դրան փոխարինող միջոց: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի համաձայն վճռի հրապարակումը կատարվում էր դատական նիստով, ապա գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պայմաններում այն իրականացվում է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով, այսինքն՝ դատական նիստ հրավիրելու և նիստում դատական ակտի եզրափակիչ մասը հրապարակելու փոխարեն դատական ակտը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքում: Վճռաբեկ դատարանը գտել է, որ հրապարակման նոր կարգ սահմանելն ուղղված է հանրության ավելի լայն շրջանակներին դատական ակտին հաղորդակից դարձնելուն, ինչպես նաև դատարանների ծանրաբեռնվածության բեռնաթափմանը: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքով սահմանել է նախկինում գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից տարբերվող հրապարակման նոր կարգ, սակայն դատարաններին չի ազատել դատական ակտի օրինակն անձին առձեռն հանձնելու կամ ուղարկելու պարտականությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը նախատեսել է հրապարակման նոր կարգ, քայց միաժամանակ պահպանել է դատական ակտի առձեռն հանձնման կամ ուղարկման՝ դատարանի պարտականությունը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելը չի դիտարկել դատական ակտին հաղորդակից դարձնելու դատարանի պարտականության պատշաճ իրականացում, քանի որ հակառակ պարագայում իմաստագուրկ է դառնում հրապարակման այդ կարգին գուրգահեռ դատական ակտի հանձնման կամ ուղարկման եղանակների պահպանումը: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներից բխող հրապարակման նոր կարգը չի բացառում և չի դադարեցնում դատարանի՝ վճռի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրը գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականությանը, եթե մինչ այդ այն առձեռն նրանց չի հանձնվել:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորմանը, գտել է, որ վերոնշյալ մոտեցումը կիրառելի է նաև պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտի նկատմամբ, այսինքն՝ այն դեպքում, երբ առկա է պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտ, դրա օրինակն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն կողմերին չի հանձնվել: Իսկ ինչ վերաբերում է դատական իշխանության կայքի միջոցով պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտի հրապարակմանը, ապա այս եղանակը չի կարող դադարեցնել վճռի օրինակն առձեռն հանձնելու կամ պատվիրված նամակի միջոցով գործին մասնակցող անձանց ուղարկելու դատարանի պարտականությանը՝ հինգ ընդունելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը նաև ընդգծել է, որ դատական ակտերի հրապարակման գործող եղանակը, ուղղված լինելով հրապարակայնության սկզբունքի երաշխավորմանը, արդարադատության արդյունավետության բարձրացմանը, առաջնահերթ նպատակաուղղված է բողոքարկման իրավունքի իրականացման համար նախադրյալներ ապահովելուն: Էլեկտրոնային կայքի միջոցով դատական ակտի հրապարակման պայմաններում դատական ակտն անմիջապես հրապարակումից հետո կարող է հասանելի լինել գործին մասնակցող անձանց և ապահովել վերջիններին բողոքարկման իրավունքի իրականացման համար իրական երաշխիքներ: Այդուհանդերձ, օրենսդիրը, հաշվի առնելով էլեկտրոնային ռեսուրսի հասանելիության օբյեկտիվ սահմանափակումները (մասնավորապես՝ միացնող-անջատող կամ ուղղորդող սարքավորումների և այլ ռեսուրսների անհրաժեշտությունը, **էլեկտրոնային հաղորդակցության ծառայության** վճարովի բնույթը և այլն), դատական ակտի հրապարակման լիազորությանը գուրգահեռ սահմանել է նաև գործին մասնակցող անձանց դատական ակտն առձեռն հանձնելու կամ ուղարկելու դատարանի պարտականությունը: Վճռաբեկ դատարանը, բացահայտելով օրենսդրի կամքը, գտել է, որ միայն նշված պար-

տականությունների միաժամանակյա և օրենքով սահմանված կարգով իրականացման պայմաններում կարող են լիարժեք նախադրյալներ ստեղծվել բողոքարկման իրավունքի իրականացման համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, արժևորելով դատական իշխանության պաշտոնական կայքում դատական ակտի հրապարակումը՝ որպես դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու միջոց, ընդգծել է, որ բողոքարկման իրավունքի իրականացման լիարժեք նախադրյալներ ստեղծելու տեսանկյունից դատարանի վրա դրված է նաև դատական ակտը գործին մասնակցող անձանց առձեռն հանձնելու կամ ուղարկելու պարտականություն, որպիսի պայմաններում դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու պարտականության պատշաճ իրականացման մասին կարելի է եզրահանգումներ կատարել միայն այն դեպքում, երբ դատարանը պատշաճ իրագործել է վերոնշյալ երկու պարտականությունները, այն է՝

ա) հայտարարված օրը դատական ակտը հրապարակել է դատական իշխանության պաշտոնական կայքում,

բ) դատական ակտի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկել է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ այն առձեռն չի հանձնվել նրանց:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՄԵՐԸ

07.06.2019թ.

2. Սևակ Արզարունին ընդդեմ Նարեգ և Սարո Հարթունյանների, քաղ. գործ թիվ ԵԿԳ/2711/02/10

Էջ
590-597

Խնդիր. Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վարույթով կայացված վճիռը բողոքարկելիս արդյո՞ք անձը պարտավոր է վճարել դրամական պահանջի գործերի համար սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման համար անձը ևս պարտավոր է վճարել օրենքով սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք՝ վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման համար՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 36-րդ գլխի 202-204-րդ հոդվածներով սահմանվել են հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման վարույթը կարգավորող նորմերը, միաժամանակ նշված վարույթն ընդգրկվել է հատուկ վարույթի կարգով քննվող գործերի կազմում:

Համանման կարգավորում է սահմանված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, համաձայն որի՝ դատարանը հատուկ վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը. հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ գործերը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը դատարան դիմելու համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը սահմանելիս որոշակի տարբերակված մոտեցում է ցուցաբերել դատարաններ տրվող հայացիմունների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար՝ հաշվի առելով մի շարք հանգամանքներ, ինչպիսին են՝ ներկայացված հայցապահանջի տեսակը, քննվող գործով վարույթի տեսակը, բողոքարկման ենթակա ակտը և դրա բողոքարկման ծավալը: Մասնավորապես՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ վարույթի կարգով է քննվում տվյալ գործը՝ տարբերակվել են հայցային և հատուկ վարույթի կարգով քննվող գործերի համար սահմանված պետական տուրքի գանձման դրույքաչափերը: Տարբերակված մոտեցում է ցուցաբերվել նաև հայցային վարույթի կարգով քննվող գործերի դեպքում դրամական և ոչ դրամական պահանջների համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր գործով վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի գանձման դրույքաչափը որոշե-

լիս Վերաքննիչ դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն *վարույթի տեսակը, պահանջի բնույթը, բողոքարկվող դատական ակտի տեսակը և բողոքարկման ծավալը*: Վճարել դատարանը փաստել է, որ միայն նշված հանգամանքները պարզելու պարագայում է հնարավոր որոշել վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված և գանձման ենթակա պետական տուրքի դրույքաչափը, ըստ այդմ՝ լուծել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը: Նման պայմաններում Վճարել դատարանը գտել է, որ հարկադիր կատարողի դիմումով վճռի հարկադիր կատարման ընթացքում կողմերի միջև կնքված հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վարույթով կայացված վճիռը բողոքարկելիս անձը պարտավոր է վճարել հատուկ վարույթի գործերով վերաքննիչ բողոքների համար սահմանված դրույքաչափով պետական տուրք՝ *քազային տուրքի ութսպասրիկի չափով*:

26.07.2019թ.

3. «ԱրմենՏել» ՓԲԸ-ը (իրավահաջորդ՝ «Վեոն Արմենիա» ՓԲԸ), քաղ. գործ թիվ ԱՎԳ-2/1046/03/16

էջ
598-606

Խնդիր. Արդյո՞ք օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրության հիման վրա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմումի և դրա կապակցությամբ կայացված որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքի համար բողոք բերող անձի վրա կարող է դրվել պետական տուրք վճարելու պարտականություն:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Անդրադառնալով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարան ներկայացվող դիմումների և դրանց կապակցությամբ կայացված որոշումների դեմ բերված բողոքների համար պետական տուրքի գանձման հարցին՝ Վճարել դատարանը արձանագրել է, որ օրենսդիրը սահմանել է հատուկ ընթացակարգ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարան տրվող դիմումների համար: Մասնավորապես՝ պայմանավորված այդ դիմումների քննության առանձնահատկությամբ՝ տվյալ դիմումի քննության համար օրենսդիրը սահմանել է առավել սեղմ ժամկետ՝ 10 օր, դիմումը ստանալու օրվանից՝ միաժամանակ իրավունք վերապահելով գործին մասնակցող անձանց բողոքարկելու տվյալ գործերով կայացված դատական ակտը (տվյալ դեպքում՝ դատարանի որոշումը): Ընդ որում, Վճարել դատարանի գնահատմամբ վերը նշված վարույթն անմիջականորեն ուղղված չէ որևէ վեճի լուծմանը կամ գործի փաստական հանգամանքների պարզմանը: Տվյալ դեպքում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով գործի քննությունն արդեն իսկ ավարտվել է և դատարանի միակ գործողությունը կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու հարցի պարզումն ու գնահատումն է: Այսինքն՝ վերը նշվածը վկայում է, որ տվյալ վարույթի ընթացքում դատարանի կողմից կատարվող դատավարական գործողությունները կրում են սահմանափակ բնույթ, բացակայում է պետական տուրքի գանձման օբյեկտը, ըստ այդմ՝ նաև պետական տուրք վճարելու պարտականությունը:

Նման պայմաններում Վճարել դատարանը գտել է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումներով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով առկա չէ պետական տուրքի գանձման օբյեկտը, որպիսի պայմաններում դիմողների վրա չի կարող դրվել վերը նշված գործերով կայացված դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու համար պետական տուրքի վճարման պարտականություն:

Վճարել դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածում սպառիչ սահմանել է հատուկ վարույթի կարգով քննվող գործերի ցանկը, որոնց շարքում կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումները չեն ներառվել, այսինքն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելը և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումը չի հանդիսանում հատուկ վարույթի կարգով քննվող գործ: Հետևաբար Վճարել դատարանը գտել է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնող անձի վրա չի կարող դրվել հատուկ

վարույթի գործերի համար սահմանված դրույքաչափով պետական տուրք վճարելու պարտականություն:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը ընդգծել է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում առաջին աստիճանի դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի համար պետական տուրքը վճարված չլինելը, ինչպես նաև պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության առկայությունը կամ բացակայությունը որևէ նշանակություն չունեն վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման համար, քանի որ վերը շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում պետական տուրքի վճարման պարտականությունը բացակայում է՝ բողոքարկման ենթակա դատական ակտի տեսակով և հայցվող գործողությամբ պայմանավորված՝ պետական տուրքի վճարման օբյեկտի բացակայության հիմքով:

20.06.2019թ.

4. Կարեն Սուրյանն ընդդեմ Հրանուշ Երիցյանի, քաղ. գործ թիվ ԵԱՆԳ/2525/02/16

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն դեպքերին, երբ որպես պետական տուրքի գծով արտոնության կիրառում անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը տարածամկետելու միջնորդություն:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, պետական տուրքի վճարումը դասելով դատական ծախսերի թվին, միաժամանակ սահմանել է, որ դրա վճարման չափը և կարգը, այդ թվում՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը, անդրադառնալով պետական տուրքի գծով արտոնությունների կիրառմանը, սպառիչ սահմանել է պետական տուրքի արտոնության կիրառման տեսակները, այն է՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում: Այսինքն՝ օրենսդրորեն հստակ սահմանվել են պետական տուրքի գծով այն բոլոր արտոնությունները, որոնք կարող են կիրառվել դատարանների կողմից, ինչն իր հերթին նշանակում է, որ բացի սահմանված արտոնություններից՝ պետական տուրքի գծով այլ արտոնություն կիրառման ենթակա չէ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ պետական տուրքի գծով արտոնությունները կոչված են երաշխավորելու յուրաքանչյուրի՝ սահմանադրորեն երաշխավորված արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքը և նպատակ են հետապնդում վերացնել արդարադատության մատչելիության այնպիսի խոչընդոտները, որոնք պայմանավորված են անձի մոտ համապատասխան միջոցների բացակայության պատճառով դատարան դիմելու, վերադաս աստիճանի բողոք ներկայացնելու անհնարինությամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ի տարբերություն նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրքը), որն ընդունվել է 17.06.1998 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականին և ուժը կորցրել է 09.04.2018 թվականին, պետական տուրքի վճարումը «տարածամկետելը» որպես պետական տուրքի գծով արտոնություն, գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներում առկա չէ: Այսինքն՝ որպես պետական տուրքի գծով արտոնություն՝ «պետական տուրքի վճարումը տարածամկետելը», չի կարող կիրառվել դատարանների կողմից: Օրենսդրական նշված զարգացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Նախկին օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում էր, որ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, *պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ վարածամկետելու* և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, մինչդեռ այդ ժամանակահատվածում գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, սպառիչ սահմանելով պետական տուրքի գծով արտոնությունները, *«պետական տուրքի վճարումը տարածամկետելու»* արտոնության կիրառում նույնպես չէր նախատեսում, ինչի հետևանքով պետական տուրքի վճարումը տարածամկետելու արտոնության կիրառումը դատական պրակտիկայում տարաբնույթ մեկնա-

էջ
607-616

բանման տեղիք էր տալիս: Ըստ այդմ էլ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներով անդրադառնալով «*պերական ցուրքի վճարումը տարածամկետելու*» արտոնության կիրառման հասկացությանը, արձանագրել էր, որ օրենսդիրը, ի տարբերություն պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելուն, դատարանի համար առավել լայն հայեցողական լիազորություն է սահմանել պետական տուրքի վճարումը տարածամկետելու կամ հետաձգելու հարցում: Վերջինս պայմանավորված է դատարանի դերով՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի, որը միաժամանակ պետք է ապահովի անձի արդարադատության մատչելիության իրավունքը (*Կոնս. Դավիթ Մասկյանն ընդդեմ Լյուսա Մահակյանի և մյուսների, թիվ ԵԲԳ/0820/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.05.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով իր դիրքորոշումը, միաժամանակ արձանագրել է, որ ի տարբերություն Նախկին օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի, որով նախատեսվում էր, որ (...) պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, գործող՝ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասով այլևս նախատեսված չէ պետական տուրքի վճարումը տարածամկետելու՝ պետական տուրքի գծով արտոնություն: Այսինքն՝ գործող իրավակարգավորման պայմաններում օրենսդիրը, ի թիվս այլնի, սահմանել է միայն պետական տուրքի վճարումը հետաձգելու արտոնությունը: Հետևաբար վերը նշվածը հաշվի առնելով և նպատակ ունենալով ապահովելու արդարադատության մատչելիության իրավունքի լիարժեք իրականացումը, ինչպես նաև հաշվի առնելով, որ «տարածամկետել» բառը մեկ այլ բացատրությամբ կիրառվում է նաև որպես *հետաձգել, երկարաձգել, վճարման կամ կատարման ժամկետը հետաձգել ավելի ուշ ժամանակի* նշանակությամբ³ Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվել է պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդություն, դատարաններն այն պետք է քննարկեն և այդ հարցով որոշում կայացնեն՝ ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունն ամբողջության մեջ՝ գնահատելով դրա բովանդակությունը: Եվ այն դեպքերում, երբ նման միջնորդության բովանդակությունից հետևում է, որ անձի կամքն ի վերջո ուղղված է պետական տուրքի հետաձգմանը, ապա դատարանների կողմից ենթակա է կիրառման պետական տուրքի վճարումը հետաձգելու՝ օրենքով սահմանված արտոնությունը: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գործող իրավակարգավորումներում, ի թիվս այլնի, նախատեսվել է միայն պետական տուրքի վճարումը հետաձգելու պետական տուրքի գծով արտոնության տեսակը, իսկ «պետական տուրքի վճարումը տարածամկետելը» որպես կիրառման ենթակա պետական տուրքի գծով արտոնություն սահմանված չէ:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

06.12.2019թ.

5. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ընդդեմ Սարգիս Նաջարյանի և Սևակ Տոնոյանի, քաղ. գործ թիվ ԱՐԴ/2077/02/16

էջ
617-629

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերով սահմանվել են վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Ընդ որում, օրենսդիրն ամրագրել է այն բացասական հետևանքները, որոնք կարող են վրա հասնել այն պարագայում, երբ բողոք բերած անձը չի պահպանել վերաքննիչ բողոքի ներկայացման կարգին կամ ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը բողոք բերող անձին հնարավորություն է տվել օրենքով սահմանված ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված խախտումները և վերաքննիչ բողոքը կրկին

3 Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Հրայր Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայկական ՄՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1980, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Աշոտ Մուրադի Մուրիսյան, Հայկական ՄՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1967:

ներկայացնել վերաքննիչ դատարան:

Ի հավելումս վերը նշվածին՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը՝ խախտումները վերացնելու համար որոշակի ժամկետի տրամադրմամբ վերադարձնելը նպատակ է հետապնդում հնարավորություն տալ դատական ակտը բողոքարկած անձին վերացնելու մատանշված խախտումները և բողոքը կրկին ներկայացնել դատարան: Ընդ որում, օրենսդիրը, վերաքննիչ վարույթում սահմանելով վերաքննիչ բողոքը վերադարձնելու վերաքննիչ դատարանի լիազորությունը, միաժամանակ նախատեսել է պարտականություն՝ բողոք բերած անձին ուղարկելու վերաքննիչ դատարանի որոշումը, վերաքննիչ բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու պայմաններում վերաքննիչ դատարանի կողմից բողոք բերած անձին պետք է ուղարկվեն **միայն** վերը նշված փաստաթղթերի **բնօրինակները**՝ գործին կցելով դրանց պատճենները:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է վերաքննիչ վարույթի առանձնահատկությամբ: Վերաքննության վարույթը բաղկացած է մի քանի փուլերից, որոնցից է՝ վերաքննիչ վարույթի հարուցման փուլը, ինչն իր մեջ ներառում է վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացմանը և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուն ուղղված դատավարական գործողությունների ամբողջությունը:

Ըստ այդմ, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման կայացման դեպքում վերաքննության վարույթն այդպես էլ չի հարուցվում, ինչն իր հերթին պահանջում է վերաքննիչ բողոքարկման իրավունքից օգտված անձին վերադարձնելու այն **բոլոր փաստաթղթերի բնօրինակները**, որոնք անհրաժեշտ են նրան հետագայում՝ օրենքով սահմանված ժամկետում և կարգով իր բողոքարկման իրավունքը կրկին իրացնելու համար:

Շեռտևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանի կողմից չի պահպանվել վերը նշված օրենսդրական պահանջը, դատական ակտը բողոքարկած անձը չի կարող կրել դրանից բխող բացասական հետևանքները:

Մույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորներ Ս. Անտոնյանը և Ա. Բարսեղյանը ներկայացրել են հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հատուկ կարծիքի հեղինակներն արձանագրել են, որ վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումներն այն մասին, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թերությունները շտկված նոր բողոքը չի ստորագրվել և ներկայացվել է պատճենի ձևով՝ Վերաքննիչ դատարանի կողմից սկզբնական բողոքի ու կից փաստաթղթերի բնագրերը չվերադարձնելու պատճառով, բավարար հիմքեր չեն վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վերացնելու համար, քանի որ թերությունները շտկված նոր վերաքննիչ բողոքը ստորագրելու համար և օրենքի պահանջին համապատասխան ստորագրված բողոքը Վերաքննիչ դատարան կրկին ներկայացնելու համար չի կարող էական լինել վերաքննիչ դատարանի կողմից վերադարձված բողոքի բնօրինակի գտնվելու վայրը:

Այլ հարց կարող էր լինել, եթե Վերաքննիչ դատարանը բողոքին կից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները չվերադարձնելով, կրկին ներկայացված բողոքը վերադարձնելու, որպես թերություն նշելով դրանց բնօրինակների բացակայությունը, ինչը չէնք կարող ասել չստորագրելու դեպքում:

Վերաքննիչ բողոքը, բողոք բերած անձի ստորագրության պատճենի ձևով ներկայացնելը, թույլ չի տալիս դատարանին եզրահանգելու դատական ակտի կողմի բողոքարկելու դատավարական իրավունքն իրացնելու հստակ ցանկության մասին, որն իրականացվում է բացառապես բողոքը ստորագրելով (այդ թվում նաև օրենքով թույլատրելի էլեկտրոնային ձևով):

27.12.2019թ.

6. Երևան համայնքն ընդդեմ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԳ/3194/02/17

էջ

630-638

Խնդիր. Այն դեպքում, երբ բողոքարկելի կողմից թույլ տրված խախտումը չի առնչվում բողոքի բովանդակությանը, արդյոք խախտումը շտկելուց հետո նոր բողոք ներկայացնելիս վերջինս պարտավոր է բողոքի պատճենները կրկին ուղարկել գործին մասնակցող անձանց:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները հավելել է, որ օրենսդիրը, ի թիվս այլնի, վերաքննիչ բողոքին պարտադիր կցվող փաստաթղթերի ցանկում ներառել է նաև վերաքննիչ բողոքը և

դրան կից փատաթղթերի պատճենները՝ դատական ակտը կայացրած դատարանին և գործին մասնակցող անձանց ուղարկելու վերաբերյալ ապացույցները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված օրենսդրական կարգավորումը բխում է քաղաքացիական դատավարությունում գործող մրցակցության սկզբունքի էությունից և նպատակ է հետապնդում ապահովելու մյուս կողմի՝ իր գործը հավասար պայմաններում ներկայացնելու դատավարական ընթացակարգը: Այսպես, ստանալով վերաքննիչ բողոքը և ծանոթանալով դրա բովանդակությանը՝ գործին մասնակցող անձն օրենքով սահմանված կարգով իրականացնում է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իր դատավարական իրավունքը: Ուստի ցանկացած պարագայում դատարանը պարտականություն է կրում ստուգելու՝ արդյոք բողոք բերած անձը բողոքն ուղարկել է գործին մասնակցող այլ անձանց, և արդյոք այն ուղարկվել է ճիշտ հասցեով, քանի որ դրա հիման վրա է դատարանն ապահովում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների պատշաճ իրականացումը:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքին, այն է՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝ չեն պահպանվել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները, ՀՀ սահմանադրական դատարանը փաստել է, որ «վերոհիշյալ հիմքով (...) վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում սույն գործով վիճարկվող դրույթները **չպետք է մեկնաբանվեն տատացի՝ զրկելով անձին վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրականացման հնարավորությունից:** (...) կրկին ներկայացվող վերաքննիչ բողոքի հետ կապված կառուցակարգերը չպետք է անհարկի ծանրաբեռնեն անձանց: Այս առումով (...) կիրառելի է նաև Սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 18-ի ՍԴՌ-1363 որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի. «(...) երբ Վճռաբեկ դատարանի մատնանշած թերությունները չեն առնչվի վճռաբեկ բողոքի տեքստին, նույն բողոքի պատճենն [իրավահարաբերության ծագման պահին գործող] օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց կրկին ուղարկելու մասին ապացույցներ ներկայացնելու պահանջն անհարկի ծանրաբեռնում է ոչ միայն բողոքաբերին, այլ նաև համապատասխան կողմերին, որոնք ստիպված են լինելու կրկին ուսումնասիրել նույնաբովանդակ բողոքը: Այդ տեսանկյունից վերադարձնելուց հետո կրկին ներկայացված նույն տեքստն ունեցող բողոքի պատճենը կողմերին կրկին ուղարկելը չի բխում ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից և չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ»:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է և Վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված խախտումը չի վերաբերել վերաքննիչ բողոքի բովանդակությանը, ապա վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել օրենսդրի նպատակը: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանը, 24.09.2019 թվականի ՍԴՌ-1477 որոշմամբ վերլուծելով նշված իրավանդությունը, արձանագրել է, որ «վերոհիշյալ հիմքով (...) վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում սույն գործով վիճարկվող դրույթները չպետք է մեկնաբանվեն տատացի՝ զրկելով անձին վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրականացման հնարավորությունից: (...)»: Վճռաբեկ դատարանի վերը նշված հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նույն բողոքը (բողոքի պատճենը) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց կրկին ուղարկելու մասին ապացույցներ ներկայացնելու պահանջն անհարկի ծանրաբեռնում է ոչ միայն բողոքաբերին, այլ նաև համապատասխան կողմերին, որոնք ստիպված են կրկին ուսումնասիրել նույնաբովանդակ բողոքը:

19.02.2019թ.

7. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ «Ամիգո Արմեն» ՍՊԸ-ի, սնանկ գործ թիվ ՍԴ՝2/0037/04/16

էջ 639-648

Խնդիր. 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունելության հարցը լուծելիս կարող են արդյոք կիրառվել 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999

թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի իրավադրույթներով ամրագրված են նորմատիվ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության կանոնները: Ըստ այդմ, ընդհանուր կանոնի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա: Այսինքն՝ նորմատիվ իրավական ակտը փաստացի իրավական հետևանքներ է առաջացնում դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած կամ գործող հարաբերությունների համար: Այս ընդհանուր կանոնից կարող է նախատեսվել բացառություն միայն ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով: Օրենսդիրը միաժամանակ սահմանել է, որ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մասի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը գործող հարաբերությունների վրա, եթե օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Այսինքն՝ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը չի կարող իրավական ազդեցություն ունենալ դրա՝ ուժը կորցնելուց հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Նման իրավակարգավորումը նպատակ ունի պաշտպանել հասարակական հարաբերությունների այն մասնակիցներին, ովքեր արդեն իսկ մտել են որոշակի իրավահարաբերությունների մեջ մինչև նոր իրավական ակտի ընդունումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս իրենց վարքագիծն արդեն իսկ համապատասխանեցրել են ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իմպերատիվ պահանջներին:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը որդեգրել է այն սկզբունքը, համաձայն որի՝ իրավական ակտերը կարգավորում են հասարակական հարաբերություններն այնքան ժամանակ, քանի դեռ չեն կորցրել իրենց իրավաբանական ուժը: Իրավաբանական ուժի մեջ գտնվելու հանգամանքով է պայմանավորված իրավական ակտի՝ հասարակական հարաբերությունների վրա ներագրելու հնարավորությունը: Այն ժամանակ, երբ նման ակտը կորցնում է իր իրավաբանական ուժը, դադարում է կարգավորել հասարակական հարաբերություններ, և այդ հարաբերությունների հնարավոր մասնակիցները դադարում են ունենալ իմպերատիվ պարտականություն՝ իրենց վարքագիծը համապատասխանեցնելու արդեն իսկ ուժը կորցրած իրավական ակտի պահանջներին: Միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ օրենսդիրը նշված ընդհանուր կանոնից թույլատրել է շեղում միայն այն դեպքում, երբ օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով անմիջականորեն այլ բան է նախատեսվել: Նման պայմաններում ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը կամ դրա մի մասը կարող է իրավական ազդեցություն ունենալ դրա՝ ուժը կորցնելուց հետո գործող իրավահարաբերությունների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ուժը կորցրած է ճանաչվել 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի: Մինևույն ժամանակ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Անցումային և եզրափակիչ դրույթներ» վերտառությամբ 439-րդ հոդվածը նախատեսել է որոշակի իրավակարգավորումներ, որոնք վերաբերում են արդեն իսկ ուժը կորցրած՝ 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի գործողությանը: Ըստ այդմ, օրենսդիրն անմիջականորեն նախատեսել է միայն երկու դեպք, որպիսի պարագայում կարող են կիրառվել ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը: Մասնավորապես՝ այդ նորմերը կիրառվում են 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերը քննելիս, ինչպես նաև մինչև նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների, դիմումների և բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս: Այդ շրջանակներից դուրս 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը չեն կարող կիրառվել, քանի որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ուժը կորցրած նորմատիվ ակտի կամ դրա մի մասի դրույթներն իրավական ազդեցություն չեն կարող ունենալ դրա՝ ուժը կորցնելուց հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ համադրելով նորմատիվ ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնները 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի անցումային և եզրափակիչ դրույթների հետ՝

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 09.04.2018 թվականի դրությամբ առաջին ատյանի դատարանում քննվող գործերի նկատմամբ ենթակա են կիրառման 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը, սակայն այդ գործերով 09.04.2018 թվականից հետո վերաքննիչ բողոքարկում իրականացված լինելու պայմաններում պետք է կիրառվեն արդեն 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը: Միաժամանակ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բողոքարկված դատական ակտը կայացվել է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի շրջանակներում, ենթադրյալ դատական սխալի առկայությունը պետք է գնահատվի տվյալ դատական ակտի կայացման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի լույսի ներքո՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասում հստակ նախատեսել է այն դատավարական ժամկետը, որի ընթացքում սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել վերաքննության կարգով, այն է՝ դրանք կայացվելուց հետո 15-օրյա ժամկետում: Այդ ժամկետից հետո դատական ակտի բողոքարկումը հնարավոր է, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի: Ըստ այդմ, վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները, գտել է, որ այն դեպքում, երբ բողոքարկման իրավունքի իրացման ժամկետի բացթողումը պայմանավորված է ստորադաս դատարանի անգործությամբ, բաց թողված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս վերադաս դատարանը պետք է առաջնորդվի անձի իրավունքների դատական պաշտպանության ապահովման անհրաժեշտության և դատարանի մատչելիության սկզբունքներով:

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

31.07.2019թ.

8. Գայանե Կիրակոսյան, սնանկ գործ թիվ ՇԴ/0016/04/18

էջ

649-656

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է կամավոր սնանկության դիմումի հիման վրա հարուցված գործով կայացված եզրափակիչ դատական ակտը պարտատիրոջ կողմից բողոքարկելու իրավական հնարավորության հարցին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտապահին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել բացառապես տվյալ գործով պարտապան և/կամ պարտատեր հանդիսացող անձի կողմից, այսինքն՝ որպեսզի անձը կարողանա բողոքարկել իր շահերին առնչվող և իր իրավունքների ու պարտականությունների հետ անմիջականորեն կապված սնանկության գործով կայացված վճիռը, նա պետք է տվյալ գործով հանդիսանա կամ պարտապան, կամ պարտատեր:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրական նման կարգավորումն ինքնանպատակ չէ, այն բխում է սնանկության վարույթի առանձնահատկությունից: Մասնավորապես՝ անձին սնանկ ճանաչելը պայմանավորված է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի և անվճարունակության հատկանիշների առկայությամբ կամ բացակայությամբ, ինչն իր հերթին անդրադառնում է պարտապանի և պարտատիրոջ իրավունքների և օրինական շահերի վրա, որպիսի պայմաններում օրենսդրի կողմից սահմանված կարգավորումը կրում է ինպերատիվ բնույթ, այսինքն՝ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճիռը բողոքարկելու իրավունքը վերապահված է բացառապես պարտապանին կամ պարտատիրոջը:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ

12.12.2019թ.

9. Գավիթ Մելքոնյանը և Նորա Խաչատրյանն ընդդեմ ՀՀ կառավարության առնաթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/5503/05/18

էջ
657-664

Խնդիր. Արդյո՞ք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ճանաչման հայցի (մասնավորապես՝ իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցի) հիման վրա հարուցված վարչական գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով կարող են շոշափվել նաև այլ անձանց իրավունքներ, ինչով պայմանավորված է դատավարության մեջ վերջիններիս որպես երրորդ անձիք ներգրավելու հարցի լուծումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանել է վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողության վիճարկման հնարավորություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողության ոչ իրավաչափ ճանաչումը կարող է առաջացնել, փոփոխել կամ դադարեցնել որոշակի իրավահարաբերություն, կամ ապահովել անհրաժեշտ նախադրյալներ՝ որոշակի իրավահարաբերության ծագման, փոփոխման կամ դադարեցման համար: Վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցը, ինչպես և վարչական դատավարությունում սուկա մյուս բոլոր հայցատեսակները, միոված են անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովմանը: Այսինքն՝ վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողությամբ ևս կարող են խախտվել (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով) անձի իրավունքներն ու ազատությունները, որոնց պաշտպանության համար էլ հենց այդ անձը դիմում է դատարան:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողության ոչ իրավաչափ ճանաչումը առաջացնում է իրավական հետևանքներ վարչական դատավարության մասնակիցների համար: Որպես կանոն՝ այդ իրավական հետևանքներն առաջանում են կողմերի՝ հայցվորի և պատասխանողի համար: Մինևոյն ժամանակ, վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողության ոչ իրավաչափ ճանաչմամբ կարող են շոշափվել նաև գործով հայցվոր և պատասխանող չհանդիսացող անձանց իրավունքները: Հետևաբար վերջիններս պետք է ներգրավվեն վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի հիման վրա հարուցված գործում՝ որպես երրորդ անձ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն հանգամանքը, որ հայցվորների կողմից ներկայացվել է իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ, դեռևս չի նշանակում, որ տվյալ գործով կայացվելիք դատական ակտը չի կարող առնչվել որևէ անձի իրավունքներին կամ օրինական շահերին:

Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը, ի թիվս այլնի, նախատեսում է կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հնարավորություն նաև այն դեպքի համար, երբ հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում: Փաստորեն, իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու նպատակ ունեցող անձը կարող է հետագայում պահանջել գույքային վնասի հատուցում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական մարմնիների կողմից ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտերի, նրանց կատարած ոչ իրավաչափ գործողությունների կամ ոչ իրավաչափ անգործության հետևանքով, այսինքն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով հայցվորի կողմից ներկայացված ճանաչման հայցի բավարարման դեպքում հայցվորը հնարավորություն է ստանում վարչական մարմնից պահանջել ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցում, որը, ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի, իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նախկին կամ այլ դրության վերականգնումը՝ որպես ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման եղանակ, կարող

է հանգեցնել սեփականության իրավունքով անձին պատկանող գույքի կազմի կամ կարգավիճակի փոփոխության:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրենց համար բարենպաստ դատական ակտ կայացվելու պարագայում հայցվորները ձեռք կբերեն ոչ իրավաչափ վարչարարությանը վստահ հատուցում պահանջելու իրավունք, որպիսին կարող է հանդիսանալ նաև նախկին դրության վերականգնումը: Վնասի հատուցման այդ եղանակի իրացումն էլ իր հերթին կարող է հանգեցնել հայցվորներին և այլ անձի համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կազմի կամ կարգավիճակի փոփոխության: Հետևաբար այդ անձի կողմից ներկայացված՝ երրորդ անձ ներգրավելու մասին միջնորդությունը ենթակա էր բավարարման:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

14.05.2019թ.

10. «Փարիզյան սուրճ ֆակտորի» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության մտավոր սեփականության գործակալության (իրավահաջորդ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության), վարչ. գործ թիվ ՎԳ/3317/05/17

էջ
665-677

Խնդիր. (1) ապրանքային նշանի գրանցումը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված նյութաիրավական հիմքերով անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցն ինչ ժամկետներում կարող է ներկայացվել վարչական դատարան, (2) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետը պահպանված լինելու փաստը կարող է արդյո՞ք ինքնին (per se) հիմք հանդիսանալ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումները՝ ըստ հայցատեսակների ամրագրելով այն իրավադարեցնող դատավարական ժամկետները, որոնց ընթացքում համապատասխան սուբյեկտը կարող է դիմել վարչական դատարան:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ, նույն օրենսգրքի 72-րդ հոդվածում նախատեսել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Ամրագրելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները՝ օրենսդիրը հատուկ նախատեսել է նաև բաց թողնված ժամկետները վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել է, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդիրն ապրանքային նշանի գրանցումը որպես վարչական ակտ, անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական հայց ներկայացնելու ժամկետների կապակցությամբ այլ իրավակարգավորում է սահմանել ապրանքային և սպասարկման նշանների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտում՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերի համակարգային վերլուծությունը Վճռաբեկ դատարանին թույլ է տվել կատարելու հետևյալ դատողությունները. 1) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը ամրագրում է ապրանքային նշանի գրանցումը դատական կարգով անվավեր ճանաչելու նյութաիրավական հիմ-

քերը, 2) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը կանխորոշում է ապրանքային նշանի գրանցումն այդ նյութաիրավական հիմքերով անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու շահագրգիռ սուբյեկտների շրջանակը, 3) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը սահմանում է նույն օրենքով ամրագրված նյութաիրավական հիմքերով և նույն օրենքով կանխորոշված շահագրգիռ սուբյեկտների կողմից ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու իրավունքի իրացման ժամկետային սահմանը, որը հանգում է հետևյալին. (-) օրենքով կանխորոշված շահագրգիռ սուբյեկտները կարող են ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայց ներկայացնել դատարան 5 տարվա ընթացքում, (-) այդ հնգամյա ժամկետի սկիզբը է համարվում ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրը կամ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանին առանց գրանցման պահպանություն տրամադրելու օրը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու համար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգամյա ժամկետն այն առավելագույն ժամկետային սահմանն է, որի ընթացքում շահագրգիռ անձը կարող է դիմել դատարան՝ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու համար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգամյա ժամկետը նյութաիրավական իրավադադարեցնող ժամկետ է, որի լրանալուց հետո շահագրգիռ անձը գրկվում է ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու համապատասխան հայցով դատարան դիմելու իրավունքից: «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով այդպիսի ժամկետ նախատեսելն ունի գործնական կարևոր նշանակություն. այն հնարավորություն է տալիս վարչական դատարանին ժամանակին բացահայտելու գործի հանգամանքները և կայացնելու ճիշտ դատական ակտ, պաշտպանում է ապրանքային նշանների օգտագործման հետ կապված քաղաքացիական հարաբերությունների կայունությունը, ինչպես նաև ապահովում է մի կողմից՝ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու հայցով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտներին և մյուս կողմից՝ վիճելի ապրանքային նշանի իրավատիրոջ ու երրորդ անձանց շահերի հավասարակշռումը: Սահմանելով ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետը՝ օրենսդիրն առաջնորդվել է այն կանխադրությամբ, որ այդ ժամկետի ընթացքում շահագրգիռ անձը պետք է ողջամտորեն տեղյակ լինի այնպիսի ապրանքային նշանի գրանցման մասին, որի գրանցումն առերևույթ խախտում է իր իրավունքները, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանը պետական գրանցամատյանում գրանցելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական լիազոր մարմինն ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները հրապարակում է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետը լիովին բավարար է շահագրգիռ անձի կողմից իր խախտված իրավունքների պաշտպանության հայց հարուցելու համար:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ դատավարական գործողություններ կատարելու ժամկետները կարող են սահմանվել ոչ միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, այլ նաև ուրիշ օրենքներով, սակայն դատավարական գործողություններ կատարելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետները գերակայում են այլ օրենքներով սահմանված ժամկետների նկատմամբ: Նշված դատողությունը հիմնված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն իրավադրույթի վրա, որի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է նույն օրենսգրքով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Նշված իրավակարգավորումից հետևում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական կարգը (ձևը) և, մասնավորապես, այդ կարգի մեջ մտնող՝ դատավարական ժամկետները վարչադատավարական գործընթացի համար ունեն առաջնային նշանակություն և որևէ դեպքում չեն կարող անտեսվել կամ չկիրառվել՝ այլ նյութաիրավական օրենքներում դրանցից տարբերվող ժամկետներ սահմանված լինելու պատճառով:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու ժամկետների վերաբերյալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ առաջին հայացքից հակասական թվացող կարգավորումների միջև իրականում որևէ հակա-

սուբյեկտն առկա չէ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված՝ վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը և ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու համար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգամսյա ժամկետն ունեն զուգահեռ կիրառություն ու փյունյանց հետ հակասության մեջ չեն մտնում: Այսպես՝ շահագրգիռ անձն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամսյա ժամկետի ընթացքում իրավունք ունի դատական կարգով վիճարկելու այդ ապրանքային նշանի գրանցումը՝ պահպանելով վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը, իսկ այդ դատավարական ժամկետը բաց թողնված լինելու դեպքում՝ այն վերականգնելու ընդհանուր կառուցակարգը:

Նշված կառուցակարգն առաջին հերթին ենթադրում է, որ վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը բաց թողած անձը պարտավոր է ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն: Նման միջնորդության ներկայացումն օբյեկտիվ իրավական անհրաժեշտություն է և հետապնդում է վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու հարցը քննարկելու և լուծելու միջոցով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովելու իրավաչափ նպատակ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված հնգամսյա ժամկետը պահպանված լինելու փաստը չի կարող ինքնին (per se) հիմք հանդիսանալ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու համար: Նշված փաստն ընդամենը հանդիսանում է այն նվազագույն պայմանը, որի առկայության դեպքում դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ձևով քննարկման առարկա դարձնել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդության հիմքում դրված հանգամանքները և որոշել դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառի՝ հարգելի լինելու կամ չլինելու հարցը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, համադրելով ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու ժամկետների վերաբերյալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված վերոգրյալ իրավակարգավորումները, հանգել է այն եզրակացության, որ այդ իրավակարգավորումները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն հետևյալ կերպ. 1) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նյութաիրավական հիմքերով և նույն հոդվածի 1.1-րդ մասով կանխորոշված շահագրգիռ անձինք ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան կարող են դիմել ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրվանից կամ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանին առանց գրանցման պահպանություն տրամադրելու օրվանից հետո 5 տարվա ընթացքում, 2) բացի վերը նշված հնգամսյա ժամկետից, շահագրգիռ անձը պարտավոր է պահպանել նաև վիճարկման հայցով դատարան դիմելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը, որը հաշվարկվում է վիճարկվող վարչական ակտի, այսինքն՝ ապրանքային նշանի գրանցման ուժի մեջ մտնելու պահից, 3) եթե ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմած անձը բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը, ապա վերջինս ամեն դեպքում պարտավոր է ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն, 4) ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմած անձի կողմից ներկայացված այդ միջնորդությունը կարող է բավարարվել, եթե անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, 5) վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը կարող է հարգելի համարվել միայն այն պայմաններում, երբ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամսյա ժամկետը հայցադիմումը ներկայացնե-

լու պահի դրությամբ լրացած չի եղել, սակայն նշված պայմանի առկայությունն ինքնին (per se) բավարար չէ այդ միջնորդությունը բավարարելու համար, 6) նշված պայմանի առկայության դեպքում, այսինքն՝ եթե «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված հնգամյա ժամկետը լրացած չէ, վարչական դատարանը պարտավոր է քննարկել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդության հիմքում դրված հանգամանքները և որոշել դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառի՝ հարգելի լինելու կամ չլինելու հարցը՝ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդհանուր իրավակարգավորումներով և դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումներով, 7) վիճարկման հայց ներկայացնելու երկամյա ժամկետը բաց թողնելու պատճառը չի կարող հարգելի համարվել, եթե «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարանն ընդունելու հնգամյա ժամկետը հայցադիմումը ներկայացնելու պահի դրությամբ լրացած է եղել, 8) եթե «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարանն ընդունելու հնգամյա ժամկետը հայցադիմումը ներկայացնելու պահի դրությամբ լրացած է եղել, ապա բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին հայցվորի միջնորդությունն ամեն դեպքում ենթակա է մերժման՝ ժամկետը բաց թողնելու պատճառն անհարգելի համարվելու հիմքով:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

13.03.2019թ.

11. «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Անի Գևորգյանն ընդդեմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի և թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի, վարչ. գործ թիվ ՎԳ/7479/05/16

էջ
678-685

Խնդիր. Արդյո՞ք պարտավորեցման հայցով դատարանն ընդունելի առկա է պետական տուրքի վճարման պարտականություն նաև այն վարչական ակտի վիճարկման պահանջի համար, որով մերժվել է բարենպաստ վարչական ակտի ընդունումը, եթե այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է պարտավորեցման հայցում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատավարության շրջանակներում հայցադիմում ներկայացնելու համար, որպես կանոն, անհրաժեշտ է վճարել պետական տուրք, որի վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը դատարան ներկայացվող հայցադիմումների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափը որոշելիս ելակետային է համարել հայցապահանջների բնույթը, այսինքն՝ պետական տուրքի դրույքաչափը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք ներկայացված հայցապահանջը գույքային բնույթի է, թե՛ ոչ գույքային (ոչ դրամական): Այսպես, ոչ գույքային բնույթի պահանջների հիման վրա հարուցված գործերով դատարան ներկայացվող հայցադիմումների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափը սահմանված է կայուն դրամական միավորի տեսքով, որը հաշվարկվում է բազային տուրքի (1.000 ՀՀ դրամ) հիման վրա և գանձվում է յուրաքանչյուր ոչ գույքային պահանջի համար առանձին:

Վկայակոչելով թիվ ՎԳ/1707/05/15 վարչական գործով 24.03.2017 թվականի որոշմամբ և թիվ ՎԳ/2191/05/16 վարչական գործով 20.06.2017 թվականի որոշմամբ արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ միջամտող վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջն իրավունքի ուժով ներառվում է սկզբնական վարչական ակտի վիճարկման հայցում՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք միջամտող վարչական ակտի վերացման պահանջով դատարանն ընդունելով հայցվորի կողմից այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ ներկայացված է, թե՛ ոչ: Հետևաբար, բողոք այն դեպքերում, երբ միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով և այդ բողոքարկման արդյունքում ևս կայացվել է միջամտող վարչական ակտ, ապա սկզբնական միջամտող վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով դատարանը

պարտավոր է սկզբնական վարչական ակտի իրավաչափության հարցի հետ մեկտեղ քննել և լուծել նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի իրավաչափության հարցը:

Զարգացնելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ նշված կառուցակարգը գործում է նաև այն դեպքում, երբ հայցորդի կողմից ներկայացվել է պարտավորեցման հայցատեսակ: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ որ այն դեպքում, երբ ներկայացվել է պարտավորեցման հայցատեսակ, ապա այն ներառում է նաև վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջը: Այսինքն՝ պարտավորեցման հայցատեսակն իր բովանդակությամբ ներառում է նաև վիճարկման պահանջ, ընդ որում, անկախ նրանից՝ հայցվորը ներկայացրել է նմանաբնույթ պահանջ, թե՛ ոչ: Այլ կերպ ասած՝ վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջն օրենքի ուժով ներառված է պարտավորեցման հայցապահանջի մեջ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայցով դատարան դիմելիս վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի՝ որպես ոչ գույքային պահանջի համար պետական տուրք վճարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում՝ անկախ հայցվորի կողմից ներկայացված լինելու կամ չլինելու հանգամանքից: Նշված կառուցակարգը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ հայցվորի կողմից ներկայացվել է պարտավորեցման հայցատեսակ: Այս դեպքում վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջն օրենքի ուժով ներառված է պարտավորեցման հայցապահանջի մեջ: Հետևաբար այս դեպքում նույնպես բացակայում է անհրաժեշտությունը՝ վճարել պետական տուրքի գումար պարտավորեցման հայցատեսակում ներառված վիճարկման հայցի մասով:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ: ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ (ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ) ԿԱՐԳԸ

15.01.2019թ.

12. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ «ԾՈՓՔ ԱՐԱԾՄՆԻ» ՍՊԸ-ի, վարչ. գործ թիվ ՎԳ/4167/05/10

էջ
686-694

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ծանուցումները և դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակից իրավաբանական անձին պատշաճ կարգով հանձնելու առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 28.11.2007 թվականին ընդունված, 01.01.2008 թվականին ուժի մեջ մտած և 07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի և «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի վերաբերելի նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ դատական ծանուցագրի և դատավարական փաստաթղթերի հանձնումն իրականացվում էր «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե դատական ծանուցագրի պարագայում այդ կարգն ուղղակիորեն ամրագրված էր դատավարական օրենսգրքով, ապա դատավարական փաստաթղթերի պարագայում Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի իրավակարգավորումից, որը սահմանում է, որ նշված օրենքն ընդհանրական կարգով սահմանում է փաստաթղթերի ընդունման, ձևակերպման, հանձնման ընդհանուր կարգը: Հետևաբար դատավարական փաստաթղթերի պատշաճ հանձնման մասին կարելի է եզրահանգում կատարել, եթե այն կատարվել է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի դրույթների պահպանմամբ: Համապատասխանաբար՝ դատավարական փաստաթղթերը հանձնելու ապացույցը՝ հետադարձ ծանուցման վերաբերյալ փոստային անդորրագիրը, պետք է պարունակի «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված վավերապայմանները, մասնավորապես՝ իրավաբանական անձանց դեպքում՝ վկայակոչված հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված վավերապայմանները:

Վերոգրյալից հետևում է, որ իրավաբանական անձին դատավարական փաստաթղ-

թերը հանձնելու պարագայում այն պետք է հանձնվի իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարին կամ գրագրության ընդունման համար պատասխանատու անձին, իսկ այդ փաստն ապացուցող հետադարձ ծանուցման վերաբերյալ փոստային անդորրագիրը պետք է պարունակի իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ գրագրության ընդունման համար պատասխանատու անձի՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները, անունը, ազգանունը և հայրանունը, ստացման ամսաթիվը, ստացված էջերի քանակը, ինչպես նաև նշված անձի ստորագրությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված վավերապայմանների միաժամանակյա առկայության պարագայում միայն կարելի է հետևություն անել դատավարական փաստաթղթերի՝ պատշաճ կարգով հանձնված լինելու հանգամանքի վերաբերյալ:

ՎԱՐՈՒՅՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

30.09.2019թ.

13. Գագիկ Սիմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԳ/Ռ117/05/18

էջ 695-706

Խնդիր. (1) սխալ հայցատեսակով ձևակերպված պահանջ ունենալու համար վերադարձվելուց հետո կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը կարող է արդյոք մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ հայցադիմումի սխալները չվերացնելու հիմքով, եթե կրկին ներկայացված հայցադիմումն ունի պահանջի այն նույն ձևակերպումը, ինչ սկզբնական հայցադիմումը, (2) արդյոք դատարանն իրավասու է մերժել հայցադիմումի ընդունումն այն դեպքում, երբ հայցադիմումը վերադարձնելիս հայցվորին առաջարկվել է ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով և այդ փոփոխությանը պայմանավորված ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն, սակայն հայցվորը հայցադիմումը կրկին ներկայացնելիս շարունակել է պնդել ի սկզբանե ներկայացված հայցատեսակը և հայցատեսակի փոփոխություն չկատարելու պայմաններում չի ներկայացրել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն, (3) արդյոք դատարանն իրավասու է հայցադիմումի սխալը չվերացնելու հիմքով մերժել հայցադիմումի ընդունումը, եթե այդ սխալն արձանագրված (մատնանշված) չի եղել հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկը դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքն է, որը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատարանը ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու իր պարտականությունը կարող է կատարել նաև հայցադիմումի ընդունելության փուլում՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ: Այդ որոշմամբ վարչական դատարանը հայցվորի կողմից ոչ ճիշտ հայցատեսակի ընտրությունը որակում է որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով հայցադիմումի բովանդակությանը ներկայացվող պահանջի չպահպանում, այն է՝ բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված հայցապահանջի ներկայացում:

Վճռաբեկ դատարանը, ելնելով վարչական դատավարությունում մեկ այլ հիմնարար դրոշմի՝ տնօրինչականության սկզբունքի էությունից, արձանագրել է, որ ստանալով սխալ հայցատեսակով ձևակերպված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը՝ հայցվորը կարող է կատարել, *inter alia*, հետևյալ դատավարական գործողությունները. 1) ընդունել ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ դատարանի առաջարկը և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպել դատարանի կողմից մատնանշված պատշաճ հայցատեսակին հա-

մահունչ, 2) չընդունել դատարանի առաջարկը և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպել նույն կերպ, ինչպես որ այն ձևակերպված է եղել սկզբնապես ներկայացված հայցադիմումի մեջ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատարանն իրավասու է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով մերժել հայցադիմումի ընդունումը միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում. 1) հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ դատարանն արձանագրել է (մատնանշել է) հայցադիմումում առկա համապատասխան սխալը, 2) հայցվորը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո կրկին ներկայացրել է հայցադիմումը՝ չվերացնելով դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ արձանագրված սխալը, 3) տվյալ սխալը չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու համար պարտադիր պայման է հայցադիմումում առկա՝ հայցվորի կողմից չվերացված և գործի քննության համար արգելք հանդիսացող սխալ դատարանի կողմից դեռևս հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ արձանագրված լինելու հանգամանքը:

Փաստորեն, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ նշված սխալները (հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի թերությունները) չշտկելու դատավարական հետևանքն այն է, որ դատարանը կարող է այդ սխալները չվերացնելը գնահատել որպես գործի քննության համար արգելք և այդ հիմքով մերժել կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, եթե հայցվորը չի ընդունում հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ դատարանի կողմից կատարված առաջարկը՝ ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ, և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպում է նույն կերպ, ինչպես որ այն ձևակերպված է եղել սկզբնապես ներկայացված հայցադիմումի մեջ, ապա դա չի նշանակում, որ հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի սխալները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար: Այլ կերպ ասած՝ ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ կատարված առաջարկը չընդունելը և հայցապահանջի ձևակերպման թերությունը չվերացնելը չեն կարող ընկալվել և դիտարկվել որպես գործի քննության համար արգելք: Այդ դեպքում կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով:

Վերոհիշյալ դատողությունները հիմնված են ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված և հետևողականորեն պաշտպանվող այն իրավական դիրքորոշման վրա, որ սխալ հայցատեսակի ընտրությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ հայցադիմումի ընդունումը մերժելու համար (օրինակ՝ թիվ ՎԳ/0229/05/15 վարչական գործով 20.07.2017թ. որոշում):

Վերոգրյալ գաղափարը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ներդրվել է իրավակիրառ պրակտիկայի հիմքում՝ ելնելով այն նկատառումից, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական հայցի տեսակները և դրանց օրենսդրական բնորոշումները չեն կարող խոչընդոտել անձանց արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը: Վարչական հայցի տեսակների գոյության նպատակն այն է, որ հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերն արդյունավետ կերպով քննության առնվելն վարչական դատարանի կողմից՝ հաշվի առնելով միայն տվյալ հայցատեսակին բնորոշ առանձնահատուկ հատկանիշները: Այլ կերպ ասած՝ վարչական հայցի տեսակներն ուղղված են անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովմանը: Վարչական հայցի տեսակների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված բնորոշումները չեն կարող մեկնաբանվել կամ կիրառվել որպես գործիք՝ անձին դատական պաշտպանություն փաստացի չտրամադրելու և վարչական արդարադատությունից հրաժարվելու համար: Նման մոտեցումը Վճռաբեկ դատարանը գնահատել է որպես դատավարական նորմերի մեխանիկական ընկալման և կիրառման հետևանք, ինչի արդյունքում խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը:

Այսպիսով, ամփոփելով վերոհիշյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ սխալ հայցատեսակով ձևակերպված պահանջ ունենալու հա-

մար վերադարձնելուց հետո կրկին ներկայացված և նույն պահանջը պարունակող հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել հայցադիմումի վստախոսող չվերացնելու հիմքով, քանի որ հայցապահանջի ձևակերպման թերությունը չվերացնելը գործի քննության համար արգելք չէ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իմաստով:

29.03.2019թ.

14. Գավիթ Մարիբելյանը և Ռաֆայել Առաքելյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, վարչ. գործ թիվ ՎԳ/3973/05/15

էջ
707-724

Խնդիր. (1) ո՞ր դատարանին է ընդդատյա կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող քնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը, (2) ի՞նչ կարգով և ի՞նչ ժամկետներում է քնվում այդ դիմումը, (3) այդ դիմումի քննության արդյունքում կայացված դատական ակտը ենթակա՞մ է արդյոք բողոքարկման, (4) դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա՞մ է արդյոք բողոքարկման վերաքննության կարգով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և Կոնվենցիան ուղղակիորեն չեն ամրագրում դատական ակտերի կատարման իրավունքը՝ որպես դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքների բաղադրիչ, սակայն դատական ակտերի կատարումը դիտարկվում է որպես այդ հիմնարար իրավունքների կարևոր տարր. այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտերի կատարման վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվող հայեցակարգային մոտեցման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է. այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն տույլեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ չնայած Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ուղղակիորեն չի ամրագրում դատական ակտի կատարման իրավունքը, այնուամենայնիվ, այն համարվում է արդար դատաքննության իրավունքի անօտարելի տարրը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ մարդու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ու օգտակար՝ երաշխավորելով մարդու խախտված տույլեկտիվ իրավունքի գործնականում վերականգնումը: Այս տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի վերջնական դատական ակտի կատարման ապահովումը, որը՝ որպես դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բաղկացուցիչ տարր, այդ հիմնարար իրավունքների միջոցով անձանց շնորհիվ մնացած երաշխիքների (օրինակ՝ գործի արդարացի, հրապարակային և ռեզամիտ ժամկետում քննություն, և այլն) հետ հավասարապես պետք է ապահովվի պետության կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատական ակտերի հարկադիր կատարման միջոցով ապահովվում է պահանջատիրոջ ոչ միայն դատական պաշտպանության և արդար դատաքննության, այլ նաև սեփականության իրավունքը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների, ինչպես նաև դատական ակտի վրա հիմնված՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքի իրացումն ապահովելու՝ պետության պարտականությունը կարող է լիարժեք կերպով կատարված համարվել միայն այն դեպքում, երբ պետության իրավական համակարգում սահմանված են վերջնական դատական ակտի պատշաճ կատարումն ապահովելու համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք հնարավորություն են ընձեռում վերջնական դատական ակտի հասցեատիրոջը հասնելու իր խախտված իրավունքի փաստացի վերականգնմանը: Հայատանի Հանրապետության իրավական համակարգում այդ նպատակին է ծառայում դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ դատական ակտերի, այդ թվում նաև՝ վարչական դատարանի դատական ակտերի հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու հիմքը համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը:

Օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանել է կատարողական գործողությունների կատարման վայրի վերաբերյալ կանոնները, որոնց համաձայն՝ պարտապահին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող դատական ակտը կատարվում է այն վայրում, որտեղ, որոշակի իրավաբանորեն նշանակալի հանգամանքների առկայությամբ պայմանավորված, պետք է կատարվեն այդ գործողությունները: Ընդ որում, օրենսդիրը կարգավորումներ է նախատեսել այն իրավիճակի համար, երբ կատարողական գործողությունները, օրինակ՝ բռնագանձումը, վտարումը, բնակեցումը և այլն, պետք է կատարվեն բնակարանում կամ այլ շինությունում՝ սահմանելով հարկադիր կատարողի կողմից այդ բնակարան կամ շինություն մուտք գործելու թույլատրելիության պայմանները: Այսպես, նշված օրենսդրական կարգավորումներով սահմանված են կատարողական գործողությունների կատարման նպատակով հարկադիր կատարողի կողմից բնակարան կամ շինություն մուտք գործելու հետևյալ կանոնները. 1) հարկադիր կատարողը կարող է անարգել մուտք գործել այն բնակարան կամ այլ շինություն, որը սեփականության իրավունքով պատկանում է պարտապահին. այսինքն՝ հարկադիր կատարողի կողմից պարտապահին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելու համար որևէ թույլտվություն կամ համաձայնություն չի պահանջվում, 2) հարկադիր կատարողը կարող է մուտք գործել պարտապահից տարբերվող որևէ անձի պատկանող բնակարան կամ շինություն միայն այդ բնակարանի կամ շինության սեփականատիրոջ կամ ժամանակավոր տիրապետողի համաձայնությամբ. այսինքն՝ հարկադիր կատարողի կողմից պարտապահին չպատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելու համար պահանջվում է այդ բնակարանի կամ շինության սեփականատիրոջ կամ ժամանակավոր տիրապետողի համաձայնությունը, 3) հարկադիր կատարողի կողմից պարտապահին չպատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելու համար պահանջվող համաձայնության բացակայության դեպքում հարկադիր կատարողը կարող է մուտք գործել այդ բնակարան կամ շինություն միայն դատարանի համապատասխան որոշման հիման վրա. այսինքն՝ եթե կատարողական վարույթում ձեռք չի բերվել պարտապահին չպատկանող բնակարանի կամ շինության սեփականատիրոջ կամ ժամանակավոր տիրապետողի համաձայնությունը, ապա հարկադիր կատարողի կողմից այդ բնակարան կամ շինություն մուտք գործելու համար պահանջվում է դատարանի թույլտվություն:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածում ամրագրված համապատասխան իրավադրույթի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը կատարողական թերթով պարտապահ չհանդիսացող անձի համաձայնության բացակայությամբ վերջինիս պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելու համար պարտադիր է համարում դատարանի թույլտվության առկայությունը: Մինևս ժամանակ օրենսդիրը նշված իրավադրույթով, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի այլ նորմերով կամ որևէ այլ իրավական ակտով չի սահմանել, թե կոնկրետ որ դատարանի կողմից պետք է տրվի կատարողական թերթով պարտապահ չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին որոշումը: Օրենսդրական կարգավորումներ առկա չեն նաև կատարողական թերթով պարտապահ չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննության կարգի, ժամկետների, ինչպես նաև կայացված դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ: Այլ կերպ՝ օրենսդիրը չի կարգավորել, թե որ դատարանի քննությանն է ընդդատյա և ինչ կարգով ու ինչ ժամկետում պետք է քննվի կատարողական թերթով պարտապահ չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումը, ինչպես նաև այդ դիմումների քննության արդյունքում կայացված դատական ակտերի բողոքարկման ենթակա լինելու կամ չլինելու հարցը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավակարգավորման վերը նկարագրված բացն արհեստական խոչընդոտներ է ստեղծում վերջնական դատական ակտի կատարումը պատ-

շան ապահովելու համար: Օրենսդրական նման թերի կարգավորման պատճառով վերջնական դատական ակտի հասցեատերը կարող է գրկվել իր խախտված իրավունքի փաստացի վերականգնման հնարավորությունից, քանի որ օրենսդիրը, չկարգավորելով կատարողական թերթով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությունը, քննության կարգը, ժամկետները ու կայացված դատական ակտի բողոքարկման հարցը, դրանով իսկ չի ապահովել անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր այնպիսի դատական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար, որոնց կատարումը ենթադրում է որոշակի կատարողական գործողությունների իրականացում պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարանում կամ շինությունում՝ առանց այդ անձի համաձայնության: Նման պայմաններում քննարկվող դիմումի ընդդատության, քննության կարգի, ժամկետների ու կայացված դատական ակտի բողոքարկման հարցում ծագում է իրավական անորոշություն, ինչն էլ առաջացնում է նույն հարցի կապակցությամբ ստորադաս դատարանների կողմից ոչ միատեսակ մոտեցում ցուցաբերելու վտանգ: Ըստ այդմ, վերջնական դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի օրենսդրական կարգավորման վերոգրյալ թերությունը վերացնելու և անձի դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքների, ինչպես նաև դատական ակտի վրա հիմնված՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքի երաշխավորված իրացումն ապահովելու համար անհրաժեշտ նախադրյալներն ամբողջականացնելու նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նույն որոշումը հաղթահարել օրենսդրական կարգավորման նշված բացը և որոշակիացնել կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությունը, քննության կարգը, ժամկետներն ու կայացված դատական ակտի բողոքարկման հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրությանը սահմանված են համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմեր: Խոսքը վերաբերում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների ընդդատության արդյունքում Վճռաբեկ դատարանը կատարել է հետևյալ ընդհանրացումները. 1) օրենսդիրը հստակ սահմանել է վերոգրյալ դիմումների ընդդատությունը. այդ դիմումները ներկայացվում են կատարողական թերթ տված դատարան և քննվում են կատարողական թերթ տված դատարանի կողմից, 2) օրենսդիրը սահմանել է վերոգրյալ դիմումների քննության կարգին ներկայացվող նվազագույն պահանջները. դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացվում են պահանջատերը և պարտապանը (կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների դեպքում՝ նաև հարկադիր կատարողը), դիմումը քննվում է անկախ ծանուցված անձանց ներկայանալուց կամ չներկայանալուց, 3) օրենսդիրը սահմանել է վերոգրյալ դիմումների քննության ժամկետները. այդ դիմումները քննվում են դրանք ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում, 4) օրենսդիրը սահմանել է դատական ակտի այն տեսակը, որը կայացվում է վերոգրյալ դիմումների քննության արդյունքում. այդ դիմումների քննության արդյունքում դատարանը կայացնում է որոշում, 5) օրենսդիրը սահմանել է վերոգրյալ դիմումների քննության արդյունքում դատարանի կայացրած որոշումների բողոքարկման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտի բողոքարկմանը վերաբերող հասարակական հարաբերություններն էլայես չեն տարբերվում (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ)

Վճռաբեկ դատարանը գտել է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտի բողոքարկմանը վերաբերող հասարակական հարաբերություններն էլայես չեն տարբերվում (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ)

կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների ընդդատությամբ, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող վարույթային հարաբերություններից:

Թե՛ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի, թե՛ (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունները ծագում են դատական ակտերի հարկադիր կատարման փուլում վարույթի մասնակիցների կամ այլ շահագրգիռ անձանց իրավունքների պատշաճ իրացման կամ պարտականությունների պատշաճ կատարման ապահովման համար՝ վերջիվերջո նպատակ ունենալով դատական ներգործությամբ հավասարակշռելու հարկադիր կատարման վարույթի մասնակիցների կամ այլ շահագրգիռ անձանց շահերն ու այդ հավասարակշռության միջոցով նպաստելու հարկադիր կատարման ենթակա դատական ակտի պատշաճ կատարմանը: Հիշատակված դիմումների քննությանը վերաբերող հասարակական հարաբերություններն իրենց բնույթով ընթացակարգային (վարույթային) են. այդ ընթացակարգերի էությունն այն է, որ դրանց միջոցով ապահովվում է հարկադիր կատարման ենթակա դատական ակտի հարկադիր կատարման փուլում որոշակի հարցերի կապակցությամբ օրենքով պահանջվող դատական ակտերի կայացումը, ինչը հնարավորություն է տալիս հաղթահարելու հարկադիր կատարման ենթակա դատական ակտի հարկադիր կատարումը սկսելու, շարունակելու կամ ավարտին հասցնելու իրավաբանական կամ փաստացի խոչընդոտները: Այսինքն՝ նշված դիմումների քննության ընթացակարգերում հաշվի է առնվում կատարողական վարույթում ներգրավված հակադիր սուբյեկտների կամ այլ շահագրգիռ անձանց ուշադրության արժանի շահերի ու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը:

Այդ իսկ պատճառով (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունները կարգավորող կանոնները, որոնք վերաբերում են այդ դիմումների ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը, հավասարապես կարող են կիրառելի լինել նաև կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությանը վերաբերող հարաբերությունները, քննության կարգը, ժամկետներն ու կայացված դատական ակտի բողոքարկումը կարող են կանոնակարգվել այն նույն կերպով, ինչպես որ կանոնակարգված են (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների ընդդատությունը, քննության կարգը, ժամկետներն ու կայացված դատական ակտերի բողոքարկումը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող վկայակոչված իրավական նորմերի կիրառումը կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող հասարակական հարաբերությունների նկատմամբ չի հակասում դրանց էությանը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ կատարողական գործողությունների կա-

տարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը, քննության կարգին, ժամկետների ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող հասարակական հարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվեն համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը, այսինքն՝ (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունները կարգավորող կանոնները: Ըստ այդմ, հիմք ընդունելով վերը նշված դիմումների քննությանը վերաբերող՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 24-րդ և 35-րդ հոդվածներով նախատեսված իրավական նորմերի բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը, քննության կարգին, ժամկետների ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող հասարակական հարաբերությունները պետք է կարգավորվեն հետևյալ կերպ. 1) այդ դիմումը ներկայացվում է կատարողական թերթ տված դատարան և քննվում է կատարողական թերթ տված դատարանի կողմից, 2) դիմումը քննվում է դատական նիստում, 3) դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացվում են հարկադիր կատարողը, պահանջատերը և պարտապանը, ինչպես նաև տվյալ բնակարանի կամ շինության սեփականատերը, իսկ դիմումը քննվում է անկախ ծանուցված անձանց ներկայանալուց կամ չներկայանալուց, 4) դիմումը քննվում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում, 5) դիմումի քննության արդյունքում դատարանը կայացնում է որոշում, 6) դիմումի քննության արդյունքում դատարանի կայացրած որոշումը ենթակա է բողոքարկման:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունների նկատմամբ սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումից բխում է, որ նշված դիմումի կապակցությամբ կատարողական թերթ տված դատարանի կայացրած որոշումները ենթակա են բողոքարկման:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործող օրենսդրական կարգավորումները չեն նախատեսում կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորություն՝ ինչպես հետաձգված, այնպես էլ անմիջական բողոքարկման շրջանակներում: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը չի նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը: Նման պայմաններում, փաստորեն, բացառվում է վերադաս դատական աստիճանի կողմից այդպիսի դատական ակտերի իրավաչափությունը ստուգելու հնարավորությունը, ինչը, սակայն, անհրաժեշտ է կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությանը պատշաճ կարգով քննելու և դրա կապակցությամբ իրավաչափ որոշում կայացնելու միջոցով հարկադիր կատարման ենթակա դատական ակտի հարկադիր կատարման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգի լիարժեք կենսագործման նպատակով:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը ևս պետք է ենթակա լինի բողոքարկման վերաքննության կարգով:

Կրկին հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև առաջնորդվելով նախկինում արտահայտված սեփական իրավական դիրքորոշումներով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող

անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը ոչ միայն արգելափակում է վերաքննիչ դատական ատյանի մատչելիության իրավունքը, այլև անձին ոչ իրավաչափորեն գրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքից: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունների կարգավորման կառուցակարգը չի կարող ամբողջական տեսք ունենալ, եթե նշված դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը դիտարկվում է որպես վերաքննության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ: Միայն խնդրո առարկա դատական ակտի բողոքարկման իրավական հնարավորության հետևողական իրացման դեպքում է հնարավոր երաշխավորել կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումը կարևոր դատավարական երաշխիք է վերադաս դատական ատյանների կողմից ստորադաս դատարանի թույլ տված հնարավոր դատական սխալները վերացնելու և դրա միջոցով դատական ակտի հարկադիր կատարման իրավաչափությունը, ինչպես նաև պարտապան չհանդիսացող անձի՝ տվյալ բնակարանի կամ շինության նկատմամբ սեփականության իրավունքի դատական պաշտպանությունն ապահովելու համար:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումը և բողոքի քննությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կանոններով, քանի որ հիշյալ որոշումն իր բնույթով ու իրավաբանական հետևանքներով նման է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին վարչական դատարանի դատական ակտերին:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

27.02.2019թ.

15. Արմեն Նավոյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության, վարչ. գործ թիվ ՎԳ-7711/05/17

էջ
725-734

Խնդիր. Արդյո՞ք դատական ակտի վերտառությունը կարող է պայմանավորել դատական ակտի էությունը և դրա բողոքարկման հնարավորության առկայությունը կամ բացակայությունը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը քննարկել է այն իրավիճակը, երբ «Դիմումը վերադարձնելու մասին» վերտառությամբ վարչական դատարանի որոշմամբ, ըստ էության վերադարձվել է ուղեկցական դիմումով կրկին ներկայացված հայցադիմումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ կողմերն անմիջական կարգով իրավունք ունեն բողոքարկելու միայն այն միջանկյալ դատական ակտերը, որոնց բողոքարկման հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է այն միջանկյալ դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Ընդ որում, նշված միջանկյալ դատական ակտերի շարքը սպառիչ է, ինչը նշանակում է, որ այն դատական ակտերը, որոնք նախատեսված չեն այդ ցանկում, չեն կարող բողոքարկվել վերաքննության կարգով: Նշված շարքում նախատեսված չէ միայն դատական տուգանք կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը, սակայն դրա՝ վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 101.2-րդ հոդվածի 3-րդ մասով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի հստակ նախատեսումն ինքնանպատակ չէ. այն մի կողմից ապահովում է իրավական որոշակիության սկզբունքն այնքանով, որքանով դատավարության մասնակիցներին որոշակի է դառնում, թե որ միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով, իսկ մյուս կողմից նման սահմանափակումն ապահովում է դատավարության բնականոն ընթացքը, քանի որ հակառակ պարագայում յուրաքանչյուր միջանկյալ դատական ակտի բողոքարկման դեպքում դատավարության բնականոն ընթացքը կարող է խաթարվել: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նման սահմանափակումը հաղթահարելի է հետաձգված բողոքարկման կառուցակարգի միջոցով:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը, որի նպատակն արդարադատության պատշաճ իրականացման ապահովումն է: Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման անմիջական և հետաձգված կարգեր: Անմիջական բողոքարկման են ենթակա այն միջանկյալ դատական ակտերը, որոնց չբողոքարկման արդյունքում օբյեկտիվ արգելքներ են առաջանում գործի հետագա քննության համար, և կարող են հանգեցնել արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման: Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված միջանկյալ դատական ակտերի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101.2-րդ հոդվածով սահմանված դատական ակտի համար սահմանել է անմիջական բողոքարկման կարգ: Իսկ նշված դրույթներով չնախատեսված մնացած բոլոր միջանկյալ դատական ակտերի համար կարող է գործել «հետաձգված բողոքարկման» կարգը, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Հետևաբար այն պարագայում, երբ բողոքարկվել է այնպիսի միջանկյալ դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման և ընդգրկված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ցանկում կամ դրա համար ուղղակի բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ, վերաքննիչ դատարանն իրավասու է կայացնել որոշում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցադիմում ներկայացվելու պարագայում դատարանը լիազորված է կայացնել չորս բնույթի որոշում, այն է՝ հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերահասցեագրելու մասին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել փաստել, որ նշվածը վերաբերում է նաև կրկին ներկայացված հայցադիմումների դեպքերին: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի ձևակերպումից, որի բովանդակությունից բխում է, որ օրենսդիրը հայցադիմումը վերադարձնելու անհրաժեշտությունը պայմանավորել է դրանում որոշ թերությունների առկայությամբ, որոնք շտկելուց հետո հայցադիմումը կրկին կարող է ներկայացվել դատարան: Այսինքն՝ դատարանը նման պայմաններում նույնպես ստանում է հայցադիմում, որը կրկին է ներկայացվել թերությունները շտկելուց հետո: Նշվածից հետևում է, որ այն պարագայում, երբ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումից հետո հայցադիմումը կրկին է ներկայացվել, սպա այդ դեպքում ևս դատարանը լիազորված է կայացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ևս մեկ անգամ ընդգծել, որ հայցադիմումը կրկին ներկայացվելու պարագայում դատարանն իրավագոր է կայացնել որոշում այն վարույթ ընդունելու, վերադարձնելու, ընդունումը մերժելու կամ վերահասցեագրելու վերաբերյալ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանի կողմից կայացվող որոշումների էությունը կարող է բացահայտվել միայն դրա բովանդակության ուսումնասիրության արդյունքում: Մասնավորապես, հարկ է պարզել հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվել, շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, եզրահանգումը քննարկվող հարցի վերաբերյալ: Ընդ որում, օրենսդիրը որպես դատական ակտի բովանդակային տարր չի սահմանել տվյալ դատական ակտի վերտառությունը, հետևաբար դրա առկայությունը որևէ կերպ չի կարող պայմանավորել դատական ակտի էությունը:

Վերոգրյալը վերաբերում է նաև նշված ակտերի բողոքարկման հնարավորությունը որոշելուն: Այլ կերպ ասած՝ դատական ակտի բողոքարկման հնարավորությունը և ըստ այդմ, ի թիվս այլնի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահ-

մանված որոշումների ցանկով նախատեսված լինելու հանգամանքը նույնպես պետք է բացահայտվի՝ ելնելով այդ որոշման ամբողջությունից և երկերային հիմք ընդունելով որոշման բովանդակությունը:

Նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը վարչական դատարանի «Դիմումը վերադարձնելու մասին» որոշման բովանդակության ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ վարչական դատարանը, ըստ էության, վերադարձրել է ուղեկցական դիմումով կրկին ներկայացված հայցադիմումը: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարչական դատարանը որոշման պատճառաբանական մասում անդրադարձել է հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը կրկին ներկայացնելու հնարավորությանը, վերլուծություններ է կատարել հայցադիմումը կրկին ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետի վերաբերյալ: Հետևաբար նշված որոշումը ենթակա է բողոքարկման՝ որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դատական ակտ:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ (ԵԶՐԱՓԱԿԻՉ) ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/5085/02/16
 դատարանի որոշում 2019թ.
 Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/5085/02/16
 Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
 Դատավորներ՝ Տ. Նազարյան
 Ս. Թորոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
 և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահող
 զեկրոցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
 Մ. ԴՐՄԵՅԱՆ
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
 Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
 Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հուլիսի 04-ին

գրավոր ընթացակարգով քննելով Երևան համայնքի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Երևան համայնքի ընդդեմ «Օդին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Երևան համայնքը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 583.483 ՀՀ դրամ, որից 218.541 ՀՀ դրամը՝ կառուցապատման վճարի պարտքի գումար,

364.942 ՀՀ դրամը՝ հաշվարկված տույժի գումար, ինչպես նաև 01.12.2016 թվականից շարունակել Ընկերությունից բռնագանձել պայմանագրի 6-րդ կետի 6.2-րդ ենթակետով սահմանված տույժը՝ վարձավճարի չվճարված գումարի 0,15 տոկոսի չափով՝ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիաթյան) (այսուհետ՝ Դատարան) 24.11.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.05.2018 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 24.11.2017 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևան համայնքը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204¹-րդ, 345-րդ, 347-րդ, 352-րդ, 408-րդ հոդվածները և ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն, Ընկերությանն օտարելով հողամասի նկատմամբ ունեցած իր կառուցապատման իրավունքը, վերջինիս փոխանցել է նաև օրենքով և պայմանագրով նախատեսված ու կառուցապատման իրավունքի հետ անմիջականորեն կապված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում նաև՝ կառուցապատման վճար վճարելու պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.05.2018 թվականի որոշումը, փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի համայնքի, ի դեմս Երևանի քաղաքապետի և «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի միջև Երևանի քաղաքապետի 07.06.2010 թվականի թիվ 2233-Ա որոշման հիման վրա 15.06.2010 թվականին կնքվել է հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 31/4 պայմանագիրը, որով Երևան համայնքը պարտավորվել է վճարի դիմաց «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի հետ 03.11.2003 թվականին կնքված թիվ 22040 վարձակալության պայմանագրի պայմաններով կառուցապատման իրավունք ունեցող անձին տրամադրել Երևան համայնքի սեփականության իրավունքով պատկանող 1.748քմ մակերեսով հողամաս, որը գտնվում է Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածում՝ Խանջյան փողոցի 2/4 հասցեում կառուցապատման իրավունքի ժամկետը սահմանելով մինչև 03.11.2028 թվականը:

Նշված պայմանագրի 4.1.2-րդ, 4.3.5-րդ, 4.4.1-րդ կետերով սահմանվել է, որ սեփականատերն իրավունք ունի կառուցապատման իրավունք ունեցող անձի կողմից վճարը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջելու վաղաժամկետ կատարել

վճարումը: Կառուցապատման իրավունք ունեցող անձն իրավունք ունի տնօրինելու կառուցապատման իրավունքը՝ փոխանցելու այլ անձի, ազատորեն օտարելու, գրավ դնելու այն, ինչպես նաև կատարելու այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: Կառուցապատման իրավունք ունեցող անձը պարտավոր է ժամանակին վճարել կառուցապատման իրավունքի համար վճարը:

Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմել է տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասարեցված տարեկան վարձավճարը, որը կառուցապատման իրավունք ձեռքբերող անձի կողմից կատարվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը, իսկ 6.2-րդ կետի համաձայն՝ կառուցապատման իրավունք ունեցող անձի կողմից պայմանագրով սահմանված ժամկետներում վճարումներ չկատարվելու դեպքում վերջինս կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ տարեկան վճարի գումարի 0,15 տոկոսի չափով **(գ.թ. 6-8)**.

2) Երևան համայնքի 15.07.2010 թվականի թիվ 3132-Ա որոշմամբ որոշվել է Երվանդ Քոչարի փողոցի թիվ 4/4 հասցեում [Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածում] գտնվող 1.748 քմ մակերեսով հողամասի նկատմամբ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի կառուցապատման իրավունքն օտարել Ընկերությանը **(գ.թ. 11)**.

3) «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի և Ընկերության միջև 31.07.2010 թվականին կնքված, նոտարական կարգով վավերացված կառուցապատման իրավունքի առուվաճառքի մասին պայմանագրով «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ն վաճառել է Երևանի Երվանդ Քոչար փողոցի թիվ 4/4 հասցեում [Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածում] գտնվող 1.748քմ մակերեսով հողամասի նկատմամբ ունեցած կառուցապատման իր իրավունքը, իսկ Ընկերությունը 3.800.000 ՀՀ դրամով գնել է տվյալ հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը **(գ.թ. 9-10)**.

4) ՀՀ կառավարության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից 11.08.2010 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման թիվ 2668904 վկայականի համաձայն՝ Երևանի Երվանդ Քոչարի փողոց թիվ 4/4 հասցեի [Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածում] գտնվող 1.748քմ մակերեսով հողամասի նկատմամբ մինչև 03.11.2028 թվականը գրանցվել է Ընկերության կառուցապատման իրավունքը **(գ.թ. 12-14)**.

5) Երևանի քաղաքապետարանի կողմից Ընկերությանն ուղարկվել է ծանուցում առ այն, որ Երևանի օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածում գտնվող 1.748քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի վճարը չի վճարվել, ուստի պահանջվել է ծանուցումը ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել վարձավճարի և տույժի պարտքն ամբողջությամբ **(գ.թ. 49)**.

6) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամտոտների հաշվառման և գանձման վարչության կողմից 30.11.2016 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերության պարտքը 30.09.2010 թվականից մինչև 30.11.2016 թվականն ընկած ժամանակահատվածի համար Երևան համայնքի նկատմամբ կազմել է ընդհանուր 583.483 ՀՀ դրամ, որից 218.541 ՀՀ դրամը՝ վարձավճարի պարտք, 364.942 ՀՀ դրամը՝ տույժի գումար **(գ.թ. 16)**:

4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդ-

վածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք կառուցապատման իրավունքի օգտարման դեպքում գնորդին են փոխանցվում նաև այդ իրավունքի նախկին իրավաբիրոջ կողմից կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրով սրանձնած պարտավորությունները:

ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ անձի պատկանող հողամասում անձը կարող է պայմանագրով ձեռք բերել կառուցապատման իրավունք՝ քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաև հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ՝ սահմանված կարգով կառուցել շենքեր և շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել և կառուցապատման ժամկետի ընթացքում տիրապետել և օգտագործել այդ գույքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կառուցապատման իրավունքով հողամասն օգտագործելու իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաև կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: Կառուցապատման իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ համապարփակ իրավահաջորդության կարգով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կառուցապատման իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի չափը չի կարող պակաս լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից:

ՀՀ հողային օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը հողերին վերաբերող մատուլ հողային հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ հողային օրենսգրքի դրույթների հաշվառմամբ:

ՀՀ հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերի տարեկան վարձավճարի և (կամ) կառուցապատման իրավունքի վճարի չափը չի կարող պակաս լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հողամասերի վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքի պայմանագիրը համարվում է չկնքված, եթե դրանում չեն սահմանվել հողամասի նկատմամբ կողմերի գույքային իրավունքները, օգտագործման նկատմամբ սահմանափակումները, վճարի չափը և վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքի ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204¹-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այլ անձի պատկանող հողամասում անձը կարող է պայմանագրով ձեռք բերել կառուցապատման իրավունք՝ քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաև հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ՝ սահմանված կարգով կառուցել շենքեր և շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել և կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել և օգտագործել այդ գույքը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաև կատարել

այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: (...) Նույն հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ կառուցապատման իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 439-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը ենթադրվում է հատուցելի, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրի բովանդակությունից կամ էությունից:

Վճռաբեկ դատարանը նախնառաջ հարկ է համարում անդրադառնալ կառուցապատման իրավունքի էությանը: Հիմք ընդունելով վերը վկայակոչված նորմերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կառուցապատման իրավունքի էությունը հանգում է նրան, որ այդ իրավունքը կրող անձը հնարավորություն է ստանում այլ անձի սեփականությունը համարվող հողամասի վրա կատարելու որոշակի գործողություններ, մասնավորապես՝ կառուցելու շենքեր և շինություններ, դրանք վերակառուցելու կամ քանդելու: Կառուցապատման իրավունք ունեցող անձին տրված է նաև իրավունք տնօրինելու կառուցապատման իրավունքը, այսինքն՝ այդ իրավունքը փոխանցելու այլ անձի, ազատորեն օտարելու, գրավ դնելու, ինչպես նաև կատարելու այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: Վկայակոչված հոդվածների վերլուծությունից նաև բխում է, որ կառուցապատման իրավունք ունեցող անձին տրված իրավունքներին զուգահեռ նրա վրա դրված են որոշակի պարտականություններ, այդպիսիք են, օրինակ, կառուցապատման իրավունքի դիմաց որոշակի վարձավճար վճարելու պարտականությունը, շենքեր և շինություններ կառուցելիս, դրանք վերակառուցելիս կամ քանդելիս քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաև հողամասի նշանակության պահանջների պահպանման պարտականությունը և այլն:

Անդրադառնալով պետության կամ համայնքների հողերը կառուցապատման իրավունքով տրամադրելու դիմաց տրվող վարձատրությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ և 81-րդ հոդվածների կարգավորումները՝ պետության կամ համայնքի հողերի նկատմամբ կառուցապատման իրավունք ձեռք բերած անձը կրում է պարտականություն վճարելու վարձավճար, որի չափը չի կարող պակաս լինել հողի հարկի տարեկան դրույքաչափից, ընդ որում՝ եթե այդ հողերի նկատմամբ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ պայմանագիրը չի պարունակում վճարի չափի վերաբերյալ պայման, ապա նման պայմանագիրը համարվում է չկնքված:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրի հիման վրա կառուցապատման իրավունք ձեռք բերող անձը մի կողմից ունի օրենսդրությամբ տրված իրավունքներ, այն է՝ կառուցելու շենքեր և շինություններ, դրանք վերակառուցելու կամ քանդելու, կառուցապատման իրավունքը տնօրինելու, այսինքն՝ փոխանցելու այլ անձի, ազատորեն օտարելու, այն գրավ դնելու, ինչպես նաև կատարելու այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ և այլն: Մյուս կողմից նա կրում է հողամասի սեփականատիրոջը կառուցապատման իրավունքի համար որոշակի հատուցում տալու պարտականություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204¹-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ կառուցապատման իրավունքի օտարման արդյունքում առաջացած իրավահարաբերությունների վրա տարածվում են նույն օրենսգրքով սահմանված պարտավորությունների մասին ընդհանուր դրույթները: Այսպես.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին

կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վսաս պատճառելու հետևանքով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 346-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունում որպես կողմ՝ պարտատեր կամ պարտապան, կարող է մասնակցել մեկ կամ միաժամանակ մի քանի անձ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վսաս է պատճառվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Անդրադառնալով վերոնշյալ հոդվածների վերլուծությանը՝ ՀՀ վճարել դատարանն արձանագրել է, որ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջելու կատարել իր պարտականությունը: Ընդ որում, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, հակառակ դեպքում պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ (*տե՛ս, Լիլիթ Գրիգորյանն ընդդեմ Աղվան Կարսպեյանի քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 27.12.2017 թվականի թիվ ԳԳ4/0019/02/16 որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճարել դատարանն արձանագրել է, որ պարտավորությունների պատշաճ կատարումը, որպես պարտավորությունների կատարման ընդհանուր և հիմնարար սկզբունք, ենթադրում է պարտավորության բովանդակությունը կազմող գործողությունների կատարում՝ պարտավորության պայմաններին, օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան (*տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույ-*

քի կատավարման վարչությունն ընդդեմ «Լճակ» ԼՏԸ-ի, Հրաչյա Պետրոսյանի քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի թիվ ԵԿԴ/0020/02/08 որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկով անդրադառնալով պարտավորական հարաբերությունների էությանը, արձանագրել է, որ ձևավորված պարտավորարավական հարաբերությունների շրջանակում կողմերից մեկը հանդես է գալիս իրավագործ անձ՝ «պարտատեր», իսկ մյուս կողմը՝ պարտավոր անձ՝ «պարտապան»: Ուստի իրավագործ անձի՝ պահանջի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է պարտապանի՝ պարտավորությունը պատշաճ կատարելու պարտականությունը: Այսպիսով, պարտավորական իրավահարաբերության մեջ պարտատիրոջ սուբյեկտիվ իրավունքը պահանջի իրավունքն է, որը կարող է իրացվել միայն այն ժամանակ, երբ պարտապանը պատշաճ կատարի իր վրա դրված պարտավորությունը (*յրեն, Քարոլին Բաղդամյանն ընդդեմ Նոնուֆար Հովհաննիսյանի թիվ ԵԿԴ/1447/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ պարտապանը կարող է իր պարտքն այլ անձի փոխանցել միայն պարտատիրոջ համաձայնությամբ, բացառությամբ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի: Պարտքի փոխանցման ձևի նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում ամրագրված կանոնները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ հասարակ գրավոր կամ նոտարական ձևով կնքված գործարքի վրա հիմնված պահանջը պետք է զիջվի նույն ձևով: Այն գործարքով, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, պահանջի զիջումը պետք է գրանցվի այդ իրավունքների գրանցման համար սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ դիրքորոշում արտահայտելով պարտավորական իրավահարաբերություններում պարտատիրոջ և (կամ) պարտապանի անձերի փոփոխության վերաբերյալ, արձանագրել է, որ պարտավորության մեջ անձերի փոփոխության դեպքում պարտավորությունը չի դադարում, այլ տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների փոխանցում մեկ անձից մյուսին: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 406-րդ հոդվածի հիմքով օրենսդիրը հնարավորություն է ընձեռել պարտապանին իր պարտքն այլ անձի փոխանցելով՝ դուրս գալ պարտավորություններից և իր փոխարեն ներգրավելու պարտավորության մեջ այլ անձի (*յրեն, Կարեն Քալանթարյանն ընդդեմ Մոշեղ Շախկույանի, երրորդ անձ Մարգարիտ Մարտիրոսյանի թիվ ԱԿԴ/0412/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերը շարադրված իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես կանոն պարտավորական իրավահարաբերություններում պարտատերն ու պարտապանը մինչև պարտավորության դադարումը մնում են անփոփոխ: Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է մինչև պարտավորության դադարումը պարտավորության մեջ անձանց փոփոխության հնարավորություն: Նման դեպքերում պարտավորական հարաբերություններում անձանց փոփոխությունը հանգեցնում է իրավահաջորդության, այն է՝ իրավունքների և պարտականությունների փոխանցում նոր մասնակցին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա կառուցապատման իրավունք ձեռք բերած անձի կողմ

մից այդ իրավունքն օտարելիս տեղի է ունենում իրավահաջորդություն, այսինքն՝ առանց պարտավորությունը դադարելու տեղի է ունենում անձանց փոփոխություն, ուստի իրավունքի փոխանցման հետ միաժամանակ գնորդին են անցնում նույն պայմանագրով ստանձնած նրա պարտավորությունները, այսինքն՝ կառուցապատման իրավունք ձեռք բերած անձի կողմից այդ իրավունքը գնորդին օտարելու արդյունքում գնորդին է փոխանցվում նաև կառուցապատման իրավունք ձեռք բերած անձի՝ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա ծագած իրավունքների և պարտականությունների ամբողջական համալիրը: Այլ կերպ ասած, եթե գնորդը կառուցապատման իրավունքի օտարման պայմանագրով ձեռք է բերում հողամասի կառուցապատման իրավունք, ապա նրան են փոխանցվում նաև կառուցապատման իրավունքի նախկին իրավատիրոջ պարտավորությունները:

Վճուրբեկ դապարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան համայնքի և «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի միջև կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրով Երևան համայնքը «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ին տրամադրել է Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1.748քմ մակերեսով հողամաս, որը գտնվում է Օղակաձև գրոսայգու 6-րդ հատվածում: Նշված պայմանագրով սահմանվել է, որ կառուցապատման իրավունք ունեցող անձն իրավունք ունի տնօրինել կառուցապատման իրավունքը՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաև կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: Նույն պայմանագրով սահմանվել է, որ կառուցապատման իրավունք ունեցող անձը պարտավոր է ժամանակին վճարել կառուցապատման իրավունքի համար վճարը, որը կազմում է տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասարեցված տարեկան վարձավճարը: Պայմանագրով նախատեսվել է նաև, որ տարեկան վարձավճարները կառուցապատման իրավունք ձեռքբերող անձի կողմից կատարվում են հավասար չափերով ըստ տարվա օրացուցային եռամսյակների ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը, իսկ կառուցապատման իրավունք ունեցող անձի կողմից պայմանագրով սահմանված ժամկետներում վճարումներ չկատարվելու դեպքում վերջինս կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ տարեկան վճարի գումարի 0,15 տոկոսի չափով:

«Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի և Ընկերության միջև 31.07.2010 թվականին կնքված, նոտարական կարգով վավերացված կառուցապատման իրավունքի առուվաճառքի մասին պայմանագրով «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ն վաճառել է, իսկ Ընկերությունը 3.800.000 ՀՀ դրամով գնել է նշված հողամասի նկատմամբ ունեցած կառուցապատման իրավունքը:

Դատարանը հայրը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ կառուցապատման իրավունք ունեցող անձն իրավունք ունի ազատորեն տնօրինելու իր իրավունքը, իսկ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի համար սահմանված է վարձավճար, ուստի ելնելով սույն գործում առկա ապացույցներից՝ Ընկերությունն իրեն տրամադրված կառուցապատման իրավունքի դիմաց պարտավոր էր վճարել պայմանագրով նախատեսված վարձավճարը և սահմանված տույժը՝ տարեկան վճարի գումարի 0,15 տոկոսի չափով՝ պարտավորությունը պատշաճ չկատարելու համար:

Վերաքննիչ դատարանը բավարարել է վերաքննիչ բողոքն այն պատճառաբանությամբ,

որ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի և Ընկերության միջև կնքված կառուցապատման իրավունքի առուվաճառքի մասին պայմանագրի ուժով կողմերի միջև ծագած պարտավորության հիման վրա Ընկերությունը ստանձնել է քացառապես «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ին 3.800.000 ՀՀ դրամի չափով կառուցապատման իրավունքի ձեռքբերման գինը վճարելու պարտավորություն, որն էլ Ընկերության կողմից ամբողջությամբ վճարվել է պայմանագրի ստորագրման պահին, իսկ կառուցապատման իրավունքի համար վճար վճարելու պարտականությունը «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ից Ընկերությանը փոխանցված լինելու մասին դրույթ առուվաճառքի մասին պայմանագրով չի նախատեսվել:

Ելնելով վերը շարադրված վերլուծություններից, համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով կառուցապատման իրավունքի օտարումն արտահայտվել է առուվաճառքի միջոցով, այն է՝ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ն վաճառել է, իսկ Ընկերությունը գնել է Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1.748քմ մակերեսով հողամասում կառուցապատում իրականացնելու իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության կողմից «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ին պատկանող կառուցապատման իրավունքի գնման արդյունքում Երևանի համայնքի և «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի միջև կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրով ծագած պարտավորական հարաբերությունների մեջ տեղի է ունեցել անձանց փոփոխություն, այն է՝ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրով «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ն փոխարինվել է Ընկերությունով:

«Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ն կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրով ձեռք բերված կառուցապատման իրավունքի հետ միաժամանակ ստանձնել է նաև որոշակի պարտավորություններ, ուստի կառուցապատման իրավունքն օտարելիս գնորդին են փոխանցվել ինչպես իրավունքները, այնպես էլ՝ պարտականությունները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ից գնել է Երևան համայնքի հետ կնքված պայմանագրով ձեռք բերված կառուցապատման իրավունքը՝ այդ պայմանագրի հիման վրա ծագած իրավահարաբերությունների մեջ դառնալով նաև պարտապան: Այսինքն՝ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի հիմքով ձեռք բերված իրավունքների փոխանցման հետ միաժամանակ Ընկերությանն են փոխանցվել նաև նույն պայմանագրով «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի ստանձնած պարտավորությունները, այդ թվում նաև՝ կառուցապատման իրավունքի համար վճարումներ կատարելու և սահմանված ժամկետներում վճարումներ չկատարվելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ վճարելու պարտականությունները:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի և Ընկերության միջև կնքված կառուցապատման իրավունքի առուվաճառքի մասին պայմանագրով արդեն իսկ վճարվել է կառուցապատման համար վարձավճարի գումարը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առուվաճառքի պայմանագրով 3.800.000 ՀՀ դրամը սահմանվել է որպես կառուցապատման իրավունքը գնելու գումար, իսկ մյուս, մասնավորապես՝ կառուցապատման իրավունքի տարեկան վար-

ձավճար, ներառյալ տույժեր վճարելու պարտավորություններն Ընկերությանը փոխանցվել են կառուցապատման իրավունքը գնելու հետևանքով:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը խախտել է 15.06.2010 թվականին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 31/Կ պայմանագրի 5.1-րդ և 6.2-րդ կետերով սահմանված տարեկան վարձավճար վճարելու և վճարումներ չկատարվելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ վճարելու պարտավորությունները, որպիսի իրավաչափ հետևության հանգել է Դատարանը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համա-

ձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Ընկերությունից հոգուտ Երևան համայնքի ենթակա է բռնագանձման 18.500 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.05.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.11.2017 թվականի վճռին:

2. «Օդին» ՍՊԸ-ից հոգուտ Երևան համայնքի բռնագանձել 18.500 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0462/02/13
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0462/02/13

Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան

Դատավորներ՝ Լ. Գրիգորյան

Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Մ. ԴՐՍԵՅԱՆ

Ե. ԽՈՒՆԴԿՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հուլիսի 03-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ «Դանսիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի՝ անշարժ գույքից վտարելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությանը, Կազմակերպությանը և Վաղարշակ Համբարձումյանին վտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեի շինությունից և տարածքն ազատել նրանց պատկանող գույքից:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 19.11.2015 թվականի արձանագրային որոշմամբ Կազմակերպության սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանը ներգրավվել է որպես երրորդ անձ:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվայան) (այսուհետ՝ Դատարան) 09.12.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ քաղաքացիական գործի վարույթը՝ պատասխանողներ Կազմակերպության, Վաղարշակ Համբարձումյանի մասով, կարճվել է հայցից հրաժարվելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 09.12.2016 թվականի վճիռը՝ Ընկերությանը Երևանի Ծ. Իսակովի պողոտա թիվ 48/5 հասցեում գտնվող շինությունից և տարածքից վտարելու մասով, բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչ Վահե Հովսեփյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականի ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը հաստատել է, որ վեճի առարկա տարածքը հանդիսանում է հայցվորի սեփականությունը՝ համաձայն սեփականության իրավունքի գրանցման վկայականի, հետևաբար այն տիրապետելու իրավունքը նույնպես պատկանում է հայցվորին:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ Դատարանը չի պարզել, թե արդյոք Ընկերությունը վիճելի տարածքի որևէ մասը տիրապետում է օրինական հիմքերով, քանի որ հիշյալ տարածքը մինչև Բանկի սեփականություն դառնալը 3.444,3քմ մակերես է ունեցել, իսկ Բանկի սեփականությունը դարձել է 3.704,7քմ մակերես, հաշվի չի առել, որ վիճելի տարածքն ավելացած չափով հայցվորի սեփականությունը լինելու հանգամանքը չի կարող պատասխանողին հնարավորություն տալ վիճելի տարածքի որևէ մաս տիրապետել օրինական հիմքով:

Ավելին՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն քաղաքացիաիրավական վեճը վերաբերում է Երևանի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեից վտարմանը և թիվ 48, թիվ 48/3 հասցեների՝ Ընկերության կողմից տիրապետման հանգամանքը սույն գործի լուծման համար չի կարող էական նշանակություն ունենալ, հատկապես այն պարագայում, որ սույն քաղաքացիական գործով 25.11.2016 թվականի դատական նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ վեճի առարկա տարածքը տիրապետում է և այնտեղ առկա է որոշակի շարժական գույք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.10.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 09.12.2016 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատրասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն հանգել է հետևության, որ Դատարանը վճռով հաստատել է ընդամենը մեկ փաստ, այն է՝ Բանկի սեփականատեր լինելու հանգամանքը, մինչդեռ Դատարանը պետք է պարզեր նաև պատասխանողի կողմից վեճի առարկա գույքն ապօրինի տիրապետելու փաստը:

Բացի այդ, գործում առկա չէ որևէ ապացույց, որ պատասխանողը հայցը ներկայացնելու պահին հայցվորին սեփականության իրավունքով պատկանող տարածքում որևէ գույք ունի և այն ենթակա է դուրսբերման: Հետևաբար Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտել է գործում առկա ապացույցները և հանգել է ճիշտ եզրահանգման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ 0,1744հա մակերեսով հողատարածքի և 3.704,7քմ մակերեսով արտադրական նշանակության շինությունների նկատմամբ 27.03.2013 թվականին գրանցվել է Բանկի սեփականության իրավունքը: Ըստ սեփականության իրավունքի գրանցման վկայականի՝ գրանցման հիմք է հանդիսանում 24.11.2011 թվականի հիփոթեքի պայմանագիրը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը (**հատոր 1-ին, գ.թ. 5-6**).

2) Բանկի ներկայացուցչի կողմից 22.09.2014 թվականին ներկայացված պահանջագրի համաձայն՝ Բանկն Ընկերությանը տեղեկացրել է, որ 19.09.2014 թվականին փոխել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքի մուտքերի փականները, և նկատի ունենալով, որ նշված անշարժ գույքում առկա է Ընկերությանը պատկանող շարժական գույք, պահանջել է նշված պահանջագիրը ստանալուց 10 օրվա ընթացքում հանել այդ գույքը, իսկ տարածք մուտք գործելու և գույքը հանելու օրվա և ժամի մասին համաձայնեցնել Բանկի հետ (**հատոր 2-րդ, գ.թ.119**).

3) Ի պատասխան Բանկի ներկայացուցչի պահանջագրի՝ Ընկերության տնօրենը հայտնել է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48 և թիվ 48/3 հասցեներում, իսկ ինչ վերաբերում է թիվ 48/5 հասցեի անշարժ գույքին, ապա Ընկերությունը նման գույք չի տիրապետում (**հատոր 2-րդ, գ.թ. 118**).

4) 25.11.2016 թվականի դատական նիստի ընթացքում Ընկերության տնօրենը հայտնել է, որ վեճի առարկա տարածքում առկա է նաև Ընկերությանը պատկանող որոշակի շարժական գույք (**հատոր 5-րդ, գ.թ. 86, էլեկտրոնային կրիչ**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու վերաբերյալ, կարևոր նշանակություն

կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի, իրավահարաբերության ծագման պահին գործող 17.06.1998 թվականի ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետո պահանջելու (վինդիկացիոն) հայցի էական առանձնահատկություններին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի և այլ ձևերով: Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վերոհիշյալ հոդվածից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը հետ պահանջել միայն ապօրինի տիրապետողից: Տիրապետումն ապօրինի է, եթե այն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի: Ապօրինի տիրապետման փաստն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում է տիտղոսային տիրապետումը, այլև երբ տիրապետումը հիմնված է օրինական հիմքի (տիտղոս) վրա, որը հետագայում վերանում է:

Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի առարկա գույքը ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից սովյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են: Հետևաբար ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնող կողմը կրում է նշված երկու փաստերի ապացուցման բեռը (*տես, Միսակ-Նոսրար Թեբեյեկյանի ընդդեմ Ռոսբեն Քոչարի և մյուսների թիվ ԵԿԴ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցատեսակի բնույթին, արձանագրում է, որ վինդիկացիոն հայցը ունի «դատտիրակող-զգուշացնող» գործառնայթ, որի միջոցով գույքի սեփականատերը հնարավորություն է ձեռք բերում իր գույքը պաշտպանելու ապօրինի տիրապետումից, հետևաբար

այն սեփականության իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցներից մեկն է: Սեփականատերը վինդիկացիոն հայցից կարող է օգտվել այն դեպքում, երբ գույքը ապօրինի տիրապետողի մոտ գտնվելու պատճառով զրկված է այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունից: Ընդ որում, հայցի այս տեսակը կարող է հարուցվել միայն այն դեպքում, երբ գույքը առկա է՝ պահպանվում է, և սեփականատերը պահանջում է վերացնել սեփականության իրավունքի խախտումը՝ գույքը բնեղենով իրեն վերադարձնելու միջոցով:

Վինդիկացիոն հայց կարող է հարուցվել բոլոր սեփականատերերի կողմից (ֆիզիկական, իրավաբանական անձինք, պետություն, համայնք և այլն), ինչպես նաև ցանկացած անձանց կողմից, որոնք գույքը տիրապետում են օրենքի կամ պայմանագրի ուժով: Վինդիկացիոն հայց կարող է հարուցվել ցանկացած անձի (ֆիզիկական, իրավաբանական անձ) դեմ, որը գույքը տիրապետում է առանց որևէ իրավական հիմքի:

Վինդիկացիայի միջոցով սեփականատերը, ինչպես նաև գույքի օրինական տիրապետողները ցանկանում են այլ անձի անօրինական տիրապետությունից բնեղենով հետ ստանալ այն գույքը, որի նկատմամբ զրկված են սուբյեկտիվ իրավունքներ իրականացնելու հնարավորությունից: Սեփականատիրոջ իրավունքի պաշտպանության հիմնական նպատակը՝ իր գույքի վերադարձման միջոցով վերականգնել իր իրավունքը, որպեսզի հնարավորություն ունենա շարունակելու անօրինականությամբ ընդհատված իրավագործությունների իրականացումը:

Վինդիկացիոն հայցի սուբյեկտը գույքի անօրինական տիրապետողն է, իսկ օբյեկտը՝ անհատապես կամ տեսականիշներով որոշվող գույքն է, որը գտնվում է ուրիշի ապօրինի տիրապետության ներքո, իսկ որպես պատասխանող սույն հայցատեսակով կարող է լինել միայն գույքի փաստացի տիրապետողը, որի տիրապետման անօրինականությունը պետք է ապացուցվի վինդիկացիայի ընթացքում:

Վինդիկացիոն հայցի առարկան նյութաիրավական պահանջն է, որը տվյալ դեպքում կարելի է բաժանել 2 մասի՝

1. ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը վերադարձնելու և
2. գույքը տիրապետելու իրավունքի հետ ստացումը և վերադարձը դրա օրինական սեփականատիրոջը կամ տիրապետողին:

Վինդիկացիոն հայցի առարկայի նման բաժանման հիմնական նպատակը գույքի փաստացի տիրապետման վերականգնումն է, որն իրականացվում է երկկազմ գործողության միջոցով, այն է՝ գույքի վերադարձ և գույքի փոխանցում օրինական սեփականատիրոջը:

Վինդիկացիոն հայց հարուցելիս հայցվորն իրականում զրկված չէ իր սեփականության իրավունքից, այլ ուղղակի զրկվել է գույքը լիարժեքորեն տիրապետելու հնարավորությունից:

Վինդիկացիոն հայցը չտիրապետող սեփականատիրոջ հայցն է ընդդեմ տիրապետող ոչ սեփականատիրոջ: Սեփականատերն այս հայցի միջոցով առաջին հերթին պաշտպանում է իր տիրապետման իրավունքը, բայց տիրապետման իրավունքի հետ միասին պաշտպանում է նաև օգտագործման և տնօրինման իրավագործությունները:

Վինդիկացիոն հայցատեսակներով անհրաժեշտ է, որ դատարանը պարզի սեփականության իրավունքի ծագման հիմքի իրավաչափությունը, և եթե գործի նյութերից ակնհայտ է դառնում, որ սեփականության իրավունքի հիմքն անվավեր է ճանաչվել՝ օրենքին կամ իրավական այլ ակտերին չհամապատասխանելու հիմքով, ապա դատարանը պարտավոր է իր նախաձեռնությամբ կիրառել անվավերության հետևանքներ: Մինչդեռ, քանի դեռ սեփակա-

նության հիմքում դրված ակտի անվավերություն առկա չէ, ապա դատարանը չի կարող կասկածի տակ դնել սեփականության իրավունքի հիմքում դրված ակտի իրավաչափությունը և պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ այդ ակտն իրավաչափ է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 0,1744հա մակերեսով հողատարածքը և 3.704,7քմ մակերեսով արտադրական նշանակության շինությունները, 27.03.2013 թվականից սեփականության իրավունքով պատկանում են Բանկին: Բանկը 22.09.2014 թվականին ներկայացրած պահանջագրով Ընկերությանը հայտնել է, որ 19.09.2014 թվականին փոխել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքի մուտքերի փականները, և նկատի ունենալով, որ նշված անշարժ գույքում առկա են Ընկերությանը պատկանող շարժական գույքեր, պահանջել է նշված պահանջագիրը ստանալուց 10 օրվա ընթացքում հանել այդ գույքերը: Ի պատասխան Բանկի պահանջագրի՝ Ընկերության տնօրենը հայտնել է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48 և թիվ 48/3 հասցեներում, իսկ ինչ վերաբերում է թիվ 48/5 հասցեի անշարժ գույքին, ապա Ընկերությունը նման գույք չի տիրապետում: Սույն գործով 25.11.2016 թվականի դատական նիստի ընթացքում Ընկերության տնօրենը հայտնել է, որ վիճելի հասցեում առկա է նաև պատասխանողին պատկանող շարժական գույք:

Դատարանը, բավարարելով հայցը, պատճառաբանել է, որ վեճի առարկա գույքը սեփականության իրավունքով պատկանում է Բանկին և Ընկերությունը որևէ օրինական հիմք չունի տիրապետելու վեճի առարկա գույքը, ինչն էլ վկայում է այն մասին, որ Ընկերությունը խախտել է Բանկի սեփականության իրավունքով պատկանող գույքը սեփական հայեցողությամբ տիրապետելու և օգտագործելու իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ընկերության վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռն այն պատճառաբանությամբ, որ Դատարանի հետևությունները վերաբերում են միայն Բանկի սեփականատեր լինելու հանգամանքին, մինչդեռ Դատարանը պետք է պարզեր նաև Ընկերության կողմից վեճի առարկա գույքը ապօրինի տիրապետելու փաստը: Դատարանը չի մատնանշել և քննության առարկա չի դարձրել, թե վիճելի հասցեում որքան տարածքն է պատկանում Բանկին և արդյոք Ընկերությունն այդ տարածքում որևէ մակերես չի տիրապետում օրինական հիմունքներով: Բացի այդ գործի նյութերից երևում է, որ Ընկերությունը հայտնել է, որ տիրապետում է միայն Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտա թիվ 48 և թիվ 48/3 հասցեների տարածքները, իսկ Դատարանը չի պարզել, թե արդյոք չեն համադրվում վեճի առարկա հասցեների տարածքները, ինչպես նաև չի պարզել, թե արդյոք Ընկերությունն այդ տարածքում ունի գույք, որի պայմաններում էլ գործն ուղարկել է նոր քննության:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում

եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*լրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Սկրոչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*լրեն, Սվետլանա Ժոլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Տվյալ դեպքում Բանկն ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու հայց է ներկայացրել ընդդեմ Ընկերության, այն պատճառաբանությամբ, որ Երևանի Ծ. Իսակովի պողոտա թիվ 48/5 հասցեի տարածքը Ընկերությունը տիրապետում է առանց որևէ իրավական հիմքի:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա սեփականության իրավունքի գրանցման վկայականից պարզ է դառնում, որ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ((կադաստրային ծածկագիր՝ թիվ 01-007-0461-0084) 0,1744հա մակերեսով հողատարածք և 3704,7քմ արտադրական նշանակության շինություններ) 27.03.2013 թվականից գրանցված է Բանկի սեփականության իրավունքը: Հետևաբար Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունները, որ Դատարանը չի պարզել, թե վեճի առարկա հասցեում որքան տարածք է պատկանում Բանկին, անհիմն են, քանի որ վեճի առարկա հասցեի ամբողջ գույքի նկատմամբ գրանցված է Բանկի սեփականության իրավունքը, ավելին՝ գործում առկա չէ ապացույց վերոնշյալ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչված լինելու վերաբերյալ, ուստի այդ պայմաններում գործում է սեփականատիրոջ սեփականության իրավունքի օրինական հիմքի վրա տրված լինելու կանխավարկածը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից վիճելի տարածքի նկատմամբ անձի սեփականության իրավունքը գրանցելու վերաբերյալ ակտն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ նշված ակտն իրավաչափ է և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմին, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը (*լրեն՝ նաև Երևանի քաղաքապետարանի հայցն ընդդեմ Հրաչյա Զարամյանի՝ ինքնակամ շինությունը քանդելուն պարտավորեցնելու և 200.000 ՀՀ դրամ վարչական փուզանքը բռնագանձելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի թիվ ՎԴ/2068/05/08 որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով ապացուցված է այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտա թիվ 48/5 հասցեի ամբողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Բանկին, որի պայմաններում ապացուցված է նաև այն հանգամանքը, որ Ընկերությունը վեճի առարկա գույքը տիրապետում է ապօրինի՝ առանց որևէ իրավական հիմքի:

Իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն հիմնավորումներին, որ Բանկի պահանջագրի և Ընկերության պատասխան գրությունից հետևում է, որ Ընկերությունը չի տիրապետում վեճի առարկա գույքը և իր գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտա թիվ 48 և թիվ 48/3 հասցեներում, ապա նշվածը հերքվում է Ընկերության տնօրենի 25.11.2016 թվականի դատական նիստի ընթացքում հայտնած տեղեկությամբ, որով վերջինս պնդել է, որ 1996 թվականից առ այսօր տիրապետում է վեճի առարկա տարածքը: Տվյալ դեպքում էական չեն դառնում նաև Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտա թիվ 48 և թիվ 48/3 հասցեների տարածքների առանձնացված լինելու հարցի հետ կապված, քանի որ սույն գործով վեճի առարկան Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտա թիվ 48/5 հասցեի գույքն է, որն անօրինական կերպով տիրապետում է սեփականատեր չհանդիսացող և որևէ իրավական հիմք չունեցող անձը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործով առկա վիճելի գույքի նկատմամբ Բանկի սեփականության իրավունքի հիմքն անվիճելի է, հետևաբար Վերաքննիչ դատարանի հետևությունը Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտա թիվ 48/5 հասցեի տարածքն Ընկերության կողմից ապօրինի տիրապետելու փաստը վիճելի մնալու վերաբերյալ, Վճռաբեկ դատարանը գնահատում է անհիմն: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում հայցը պետք է բավարարվեր, որպիսի իրավաչափ եզրահանգման էր եկել Դատարանը:

Վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճառաբանությամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Ընկերությունից հօգուտ Բանկի ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.12.2016 թվականի վճիռ:

2. «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵՄԴ/0462/02/13 քաղաքացիական գործով 03.07.2019 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան), քննելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ «Դանսիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) սնանկության գործով կատարված Գևորգ Ավագյանի՝ անշարժ գույքից վտարելու պահանջի մասին, 2019 թվականի հուլիսի 3-ին որոշել է. «Վճարելի բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.12.2016 թվականի վճիռն: «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար»:

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Ե. Խոնդկարյանս, համաձայն լինելով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 03.07.2019 թվականին թիվ ԵՄԴ/0462/02/13 քաղաքացիական գործով կայացված որոշման եզրափակիչ մասի հետ, սակայն համաձայն չլինելով նույն որոշման պատճառաբանությունների հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում են իմ հատուկ կարծիքը նույն որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ.

«Մայն բողոքի քննության շրջանակներում գտնում եմ, որ անհրաժեշտ է անդրադառնալ իրավաբանական անձի կողմից ուրիշի գույքն ապօրինի փրկապետելու և այն հետ պահանջելու (վիճակագրում) հայցապահանջների քննության առանձնահատկություններին:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածիլի և այլ ձևերով: Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Նշված իրավադրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ սեփականատիրոջ՝ իր գույքը տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու իրավագործություններ

րը մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրաիրավական բնույթ: Վերագրյալով է պայմանավորված օրենսդրորեն ամրագրված յուրաքանչյուր սեփականատիրոջ իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, որն ուղղված է նշված իրավագործությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն:

Այսպես, սեփականության իրավունքի պաշտպանության ձևերից է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի ուժով վիճակացիոն հայց ներկայացնելը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վերոհիշյալ հոդվածից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը հետ պահանջել միայն ապօրինի տիրապետողից: Տիրապետումն ապօրինի է, եթե այն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի: Ապօրինի տիրապետման փաստն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում է տիրողուսային տիրապետումը, այլն երբ տիրապետումը հիմնված է օրինական հիմքի (տիրողոս) վրա, որը հետագայում վերանում է: Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վճճի առարկա գույքը ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են (*լրեն, Միսակ-Նուբար Թերելեկյանն ընդդեմ Ռուբեն Քոչարի և մյուսների թիվ ԵԿԿ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն բողոքի քննության կապակցությամբ բարձրացված հարցադրմանը՝ հարկ է արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքին, այլ իրավական ակտերին ու նրա կանոնադրությանը համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է իրավաբանական անձի հասկացության իրավական բնորոշմանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավաբանական անձին որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի, բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ **կազմակերպական միասնությունը, գույքային առանձնացվածությունը, քաղաքացիական շրջանառությունում իր անունից հանդես գալու իրավունքը և ինքնուրույն գույքային պատասխանատվությունը**: Ընդ որում, գույքային առանձնացվածությունը և ինքնուրույն գույքային պատասխանատվությունն անմիջականորեն փոխկապակցված են և իրենց բովանդակությամբ հանգում են հետևյալին. իրավաբանական անձի գույքն առանձնացված է իր հիմնադիրների կամ մասնակիցների գույքից և իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է միայն այդ գույքով: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձը պատասխանատու չէ իր մասնակիցների

պարտավորությունների համար, իսկ իրավաբանական անձի մասնակիցները պատասխանատու չեն վերջինիս պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդի արժեքի սահմաններում կրում են իրավաբանական անձի գործունեության հետ կապված վսասնների ռիսկը: Բացառություն կարող են կազմել միայն այն դեպքերը, երբ համապատասխան պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ (*տես*, «Ասի-96» ՄՊԸ-ն ընդդեմ «Ար.Ֆարմացիա» ՓԲԸ-ի թիվ ԵՄԴ/3367/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Վերահաստատելով և զարգացնելով նշված դիրքորոշումը՝ անհրաժեշտ է հավելել, որ իրավաբանական անձը, չհանդիսանալով նյութապես գոյություն ունեցող սուբյեկտ, ունի առանձնահատուկ կարգավիճակ, որը պայմանավորված է օրենսդրորեն նրան վերապահված հատկանիշներով և քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցելու առանձնահատկություններով: Իրավաբանական անձի կազմակերպական միասնությունն ապահովում է իրավաբանական անձի մնացած հատկանիշների փոխկապակցվածությունը և համադրումը մեկ սուբյեկտի ներքո: Այն հնարավորություն է ընձեռում միասնական շահով կոլեկտիվում միավորված անձանց ձևավորել ու արտահայտել մեկ միասնական կամք և քաղաքացիական շրջանառության մեջ հանդես գալ որպես մեկ միասնական սուբյեկտ: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձի վերը նշված բոլոր հատկանիշները գործում են սերտորեն փոխկապակցված, որպեսզի ապահովեն նրա հնարավորությունը մասնակցելու քաղաքացիաիրավական հարաբերություններին:

Ըստ այդմ էլ, որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ՝ իրավաբանական անձն ունի առանձնահատուկ բնույթ, այսինքն՝ **այն իր գործունեության բերումով դրանում միասնական շահով միավորված ֆիզիկական անձանց և իր առանձնացված գույքի մեկ միասնական միավոր է:** Սուբյեկտային այս առանձնահատկությունն էլ պայմանավորում է իրավաբանական անձի կողմից ուրիշի գույքն ապօրինի տիրապետելու և այն հետ պահանջելու (վիճակագրություն) հայցապահանջների քննության առանձնահատկություններ: Մասնավորապես, հիմք ընդունելով իրավաբանական անձի բնորոշումը և նրա վերագրվող հատկանիշները՝ կարելի է եզրակացնել, որ իրավաբանական անձի կողմից ուրիշի գույքի ապօրինի տիրապետումը կարող է դրսևորվել հետևյալ եղանակներով՝

1. իրավաբանական անձի գույքի առկայությամբ պայմանավորված ապօրինի տիրապետում (*երբ, օրինակ, իրավաբանական անձն իր գործունեության իրականացմանն ուղղված արտադրական նշանակության գույքով ծանրաբեռնի այլ անձին պատրկանող տարածքը՝ առանց իր աշխատակիցների՝ համապատասխան տարածքում գրնվելու անհրաժեշտության և դրանով իսկ գրկի այլ անձի՝ իրեն պատրկանող գույքը նպատակային նշանակությամբ օգրագործելու հնարավորությունից*),

2. իրավաբանական անձի կոլեկտիվում միավորված ֆիզիկական անձանց կողմից այլ անձի գույքի ապօրինի տիրապետում (*երբ, օրինակ, իրավաբանական անձը վարձակալի ուրիշին պատրկանող գույք, իսկ վարձակալության ժամկետի ավարտից հետո րվյալ իրավաբանական անձի աշխատակիցները, առաջնորդվելով գործարտու իրավաբանական անձի հանձնարարությամբ, հրաժարվեն ազատել համապատասխան տարածքը*),

3. վերոնշյալ երկու եղանակների համադրմամբ տիրապետում:

Նշվածից հետևում է, որ եթե իրավաբանական անձի կողմից այլ անձի գույքի ապօրինի տիրապետումը դրսևորվում է իրավաբանական անձի գույքի առկայությամբ կամ իրավա-

բանական անձի կոլեկտիվում միասնական շահով միավորված ֆիզիկական անձանց առկայությամբ կամ այս երկուսի միաժամանակյա առկայությամբ, ապա վիճակագրության հայցի բովանդակությունը ենթադրում է իրավաբանական անձի գույքից կամ միասնական շահով կոլեկտիվում միավորված ֆիզիկական անձանցից կամ միաժամանակ այս երկուսից այլ անձի գույքի ազատում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե տվյալ կոնկրետ իրավիճակում ապօրինի տիրապետման վերոնշյալ եղանակներից որն է առկա:

Սույն հետևությունը բխում է նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումից, ըստ որի՝ վտարումը համապատասխան շենքը վտարվողից (վտարվողներից) և նրա (նրանց) գույքից ազատելն ու ազատված շենքից օգտվելն արգելվել է: Այլ կերպ ասած՝ երբ վտարումը վերաբերում է իրավաբանական անձին, ապա համապատասխան շենքը (շինությունը, տարածքը) ենթակա է ազատման իրավաբանական անձի գույքից և դրանում միասնական շահով միավորված ֆիզիկական անձանցից կամ յուրաքանչյուրից առանձին-առանձին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 0,1744հա մակերեսով հողատարածքը և 3.704,7քմ մակերեսով արտադրական նշանակության շինությունները, 27.03.2013 թվականից սեփականության իրավունքով պատկանում են Բանկին: Բանկը 22.09.2014 թվականին ներկայացրած պահանջագրով Ընկերությանը հայտնել է, որ 19.09.2014 թվականին փոխել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքի մուտքերի փականները, և նկատի ունենալով, որ նշված անշարժ գույքում առկա են Ընկերությանը պատկանող շարժական գույքեր, պահանջել է նշված պահանջագիրը ստանալուց 10 օրվա ընթացքում հանել այդ գույքերը: Ի պատասխան Բանկի պահանջագրի՝ Ընկերության տնօրենը հայտնել է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48 և թիվ 48/3 հասցեներում, իսկ ինչ վերաբերում է թիվ 48/5 հասցեի անշարժ գույքին, ապա Ընկերությունը նման գույք չի տիրապետում: Սույն գործով 25.11.2016 թվականի դատական նիստի ընթացքում Ընկերության տնօրենը հայտնել է, որ վիճելի հասցեում առկա է նաև պատասխանողին պատկանող շարժական գույք:

Դատարանը, հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ վիճելի հասցեն սեփականության իրավունքով պատկանում է Բանկին և Ընկերությունը որևէ օրինական հիմք չունի տիրապետելու վեճի առարկա գույքը, ինչն էլ վկայում է այն մասին, որ Ընկերությունը խախտել է Բանկի՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը սեփական հայեցողությամբ տիրապետելու և օգտագործելու իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը բեկանելով, պատճառաբանել է, որ Դատարանի հետևությունները վերաբերում են միայն Բանկի սեփականատեր լինելու հանգամանքին, մինչդեռ Դատարանը պետք է պարզեր նաև Ընկերության կողմից վեճի առարկա գույքն ապօրինի տիրապետելու փաստը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ ըստ գործում առկա՝ Ընկերության գրավոր պատասխանի՝ Ընկերությունը չի տիրապետում 48/5 հասցեի տարածքը, այլ տիրապետում է միայն Երևանի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48 և թիվ 48/3 հասցեների տարածքները, հետևաբար Դատարանի կողմից պետք է պարզվեր՝ արդյոք Ընկերությունը թիվ 48/5 հասցեում ունի գույք, թե՛ ոչ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ հարկ է նշել հետևյալը.

Տվյալ դեպքում Բանկն ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու հայց է ներկայացրել ընդդեմ Ընկերության այն պատճառաբանությամբ, որ Երևանի Ծ. Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեի տարածքը սեփականության իրավունքով պատկանում է Բանկին, մինչդեռ Ընկերությունն այն տիրապետում է առանց որևէ օրինական հիմքի:

Հարկ է փաստել, որ թեև Ընկերությունը, ի պատասխան Բանկի գրավոր պահանջագրի, նշել է, որ Ընկերությունը Երևանի Ծ. Իսակովի պողոտայում գտնվող թիվ 48/5 հասցեի անշարժ գույքը չի տիրապետում, այնուամենայնիվ, 25.11.2016 թվականի դատական նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը (տնօրենը) հայտնել է, որ սույն գործով վեճի առարկա հասցեում առկա է նաև Ընկերությանը պատկանող շարժական գույք: Այսինքն՝ ըստ էության պատասխանող իրավաբանական անձն ընդունել է, որ հայցվորին սեփականության իրավունքով պատկանող վեճի առարկա տարածքում առկա է նաև իրեն պատկանող շարժական գույք, ինչը ևս ուրիշին սեփականության իրավունքով պատկանող գույքն իրավաբանական անձի կողմից ապօրինի տիրապետելու դրսևորում է՝ ըստ վերը շարադրված իրավական վերլուծությունների: Միաժամանակ սույն գործում առկա չեն Ընկերության կողմից վեճի առարկա տարածքը (տարածքները) օրինական հիմքով տիրապետելու վերաբերյալ ապացույցներ: Նման պայմաններում հիմնավորվում է սույն գործով պատասխանողի կողմից հայցվորին սեփականության իրավունքով պատկանող տարածքն առանց իրավական հիմքի տիրապետելու փաստը, որպիսի պայմաններում անհիմն է Վերաքննիչ դատարանի եզրահանգումը՝ նշված փաստը պարզված չլինելու և այդ հիմքով՝ գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտության վերաբերյալ: Հետևաբար Բանկի հայցը հիմնավոր է և ենթակա էր բավարարման, որպիսի իրավաչափ եզրահանգման և եկել էր Դատարանը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից»:

Վերոգրյալ հանգամանքներից ելնելով՝ գտնում եմ, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2017 թվականի որոշումը պետք է քննանել և ուժ տալ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.12.2016 թվականի վճռին՝ սույն կարծիքում արտահայտված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ե. Խոնդկարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/4524/02/15
 դատարանի որոշում 2019թ.
 Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/4524/02/15
 Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան
 Դատավորներ՝ Ա. Խառատյան
 Մ. Հարթենյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հունիսի 04-ին գրավոր ընթացակարգով քննելով «Ալյանս պլուս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Կարո Միքայելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.07.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (ներկայումս՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 150.359.300 ՀՀ դրամ, ինչպես նաև նշված գումարի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները՝ սկսած 20.07.2008 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը՝ որպես 02.07.2007 թվականին կնքված պայմանագրով չվճարված միջնորդավճարներ՝ 2008 թվականի հունիս, հուլիս, օգոստոս և

սեպտեմբեր ամիսների համար:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 09.04.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է՝ Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձել 97.821.800 ՀՀ դրամ՝ որպես թիվ ARM-C323/7 պայմանագրի շրջանակներում չվճարված միջնորդավճարի գումար, ինչպես նաև 97.821.800 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկել տոկոսները՝ վճռի ուժի մեջ մտնելու պահից մինչև պարտավորության դադարման օրը: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.07.2018 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 09.04.2018 վճիռը՝ հայցը բավարարելու մասով, բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարված մասով մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչ Ցոլակ Գրիգորյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ, 335-րդ, հողվածները, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ, 345-րդ, 347-րդ, 411-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը, 66-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերության և Կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ միջնորդավճարի վճարման, ինչպես նաև դրա չափի և հաշվարկման համար հիմք են հանդիսանում Կազմակերպության կողմից տրամադրվող վարչաբիլինգային տվյալները, ինչը նշանակում է, որ Ընկերությունը չէր կարող իմանալ և հաշվարկել, թե արդյոք Կազմակերպությունն իրեն պակաս է վճարել, թե ոչ, եթե այո, ապա որքան է պակաս վճարել: Վերոնշյալ խախտված իրավունքի պաշտպանության համար Ընկերությունը 2011 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ վարչաբիլինգային տվյալները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով, որի արդյունքում հայցային վաղեմության ժամկետն ընդհատվել է, 25.02.2013 թվականի վճիռն օրինական ուժ է ստացել 21.08.2013 թվականին, որի հիման վրա Կազմակերպության կողմից վարչաբիլինգային տվյալների տրամադրման արդյունքում Ընկերությունը կատարել է հաշվարկ և պարզել, որ Կազմակերպությունն Ընկերությանը պայմանագրով սահմանված միջնորդավճարները պակաս է վճարել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ 2011 թվականից մինչև 2013 թվականի սեպտեմբեր ամիսը հայցային վաղեմության ժամկետը համարվել է ընդհատված, այսինքն՝ 2013 թվականի սեպտեմբերից մինչև 2016 թվականի սեպտեմբերը հայցվորն իրավունք ուներ իր խախտված իրավունքների պաշտպանության համար կրկին դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով, ինչը և արել է 2015 թվականին՝ հայցային վա-

ղեմության 3 տարվա ժամկետը լրանալուց առնվազն 1 տարի առաջ:

Բացի այդ, Ընկերությունը 2013 թվականի թիվ ԵԱԲԳ/1745/02/11 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտից է տեղեկացել իր իրավունքի խախտման մասին, մասնավորապես, որ իրեն չի վճարվել համապատասխան միջնորդավճարը, որից հետո 2015 թվականի սեպտեմբերին դիմել է դատարան՝ պահպանելով հայցային վաղեմության երեք տարվա ժամկետը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.07.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 09.04.2018 թվականի վճիռն:

2.1. Վճուրքի բողոքի պարասիսանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանը հայցային վաղեմության վերաբերյալ նորմերը կիրառել է իրավաչափորեն: Գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ կողմերը 15.10.2008 թվականին կազմել և ստորագրել են ակտ՝ 2008 թվականի հուլիսից մինչև սեպտեմբերն ընկած հատվածում դիլերական ծառայությունների մատուցման միջնորդավճարների հաշվարկման վերաբերյալ, որով Ընկերության կողմից մատուցված ծառայությունների համար Կազմակերպության կողմից վճարման ենթակա գումարը կազմել է 103.909.586 ՀՀ դրամ, որն ամբողջությամբ Կազմակերպությունը վճարել է Ընկերությանը: Հետևաբար Ընկերությունն իր խախտված իրավունքի մասին պետք է իմացած լիներ առնվազն 15.10.2008 թվականից, քանի որ հենց Ընկերությունն է կրել բաժանորդների հետ պայմանագրեր կնքելու և դրանք Կազմակերպությանը փոխանցելու պարտավորությունը:

3. Վճուրքի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճուրքի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կազմակերպության և Ընկերության միջև 02.07.2007 թվականին կնքված թիվ ARM-C323/07 պայմանագրի 2.1. կետի համաձայն՝ Կազմակերպությունը հանձնարարել է, իսկ Ընկերությունը պարտավորվել է Կազմակերպության անունից, ինչպես նաև օգտվելով երրորդ անձանց ծառայություններից, կատարել իրավաբանական կամ այլ գործողություններ՝ կապված Կազմակերպության ցանցում բջջային ռադիոհեռախոսային կապի ծառայությունների մատուցման հետ առանց լիցենզիոն իրավունքների փոխանցման, բացառապես ՀՀ տարածքում: Նույն պայմանագրի 5.8 կետի համաձայն՝ Կազմակերպությունը նույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման համար վճարում է միջնորդավճար: Ընկերության կողմից բաժանորդին փոխանցված SIM քարտերի դիմաց միջնորդավճարը հաշվեգրվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության կողմից ձևակերպված բաժանորդային պայմանագրերի՝ Կազմակերպության վարչաբիլինգային համակարգում գրանցման և բաժանորդի կողմից տվյալ SIM քարտի մեկնարկային գումարի ակտիվացման պայմաններով: Նույն պայմանագրի 1.6 կետի համաձայն՝ «Համակարգ» հասկացությունը սահմանված է որպես Կազմակերպությանը պատկանող ծրագրային ապահովման փաթեթ, որը նախատեսված է Ընկերության կողմից կնքված բաժանորդային պայմանագրերի գրանցումն իրականացնելու համար: Պայմանագրի 10.7 կետի համաձայն՝ կողմերը պետք է միմյանց ուղարկեն նույն պայմանագրի հետ կապված կամ դրանից բխող բոլոր տեղեկություններն ու հայտարարությունները: Նույն պայմանագրի թիվ 5 հավելվածի 1.3. կետի համաձայն՝ կողմերի միջև փոխհաշվարկների ժամանակ հաշվետու ժամանակաշրջանի

ընդունվում է օրացուցային մեկ ամսվան հավասար (ամսվա վերջին օրը՝ Հաշվետու ժամանակաշրջանի վերջը) (**հատոր 1-ին, գ.թ. 114-124**):

2) Ի լրումն 02.07.2007 թվականին կնքված թիվ ARM-C323/07 պայմանագրի՝ 30.04.2008 թվականին կնքված թիվ 15 լրացուցիչ համաձայնագրի 1.1. կետի համաձայն՝ Ընկերությունը և Կազմակերպությունը պայմանավորվել են Գովազդային ակցիայի անցկացման մասին՝ ուղղված նոր Բաժանորդների ներգրավմանը, «Beeline»-ի բջջային կապի ծառայությունների ճանաչմանը և 01.05.2008-31.07.2008 թվականներին ընկած ժամանակահատվածում բոնուսային ծրագրի իրականացմանը: Նույն համաձայնագրի համատեքստում Բաժանորդը 01.05.2008-31.07.2008 թվականներին ընկած ժամանակահատվածում «Beeline»-ի ցանցին միացած ֆիզիկական անձն է: Նույն համաձայնագրի 2.2.1., 2.2.3 և 2.2.4. կետերի համաձայն՝ Կազմակերպությունը պարտավորվել է հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից ձևակերպված բաժանորդային պայմանագրերի դիմաց նրան վճարել լրացուցիչ միջնորդավճար՝ ըստ սահմանված պլանների և պայմանով, որ բաժանորդային պայմանագրերը լինեն գրանցված Կազմակերպության Համակարգում, իսկ դրանցով նախնական հաշվեկշիռները՝ լինեն ակտիվացված հաշվետու ժամանակաշրջանում: Նույն համաձայնագրի 2.2.5 կետի համաձայն՝ բաժանորդային պայմանագրերի (կանխավճարային) հաշվարկն իրականացվում է Կազմակերպության բիլինգային համակարգից ստացվող տվյալների հիման վրա: **Հաշվետու ժամանակաշրջանի համար լրացուցիչ միջնորդավճարի հաշվեգրման համար հաշվի են առնվում միայն հաշվետու ժամանակաշրջանում կնքված և ընկերության բիլինգային համակարգում գրանցված բաժանորդային պայմանագրերը (կանխավճարային) (հատոր 1-ին, գ.թ. 74-76):**

3) Կազմակերպության տնօրենի 12.06.2009 թվականի գրությամբ Ընկերության տնօրենին, մասնավորապես, հայտնվել է հետևյալը. «(...) Ինչ վերաբերում է 2008 թվականի ընթացքում Ձեր կողմից իրացված մոտ 51,000 SIM քարտերի դիմաց միջնորդավճարը «չվճարված» լինելուն, ապա հայտնում ենք, որ մեր ընկերությունում առկա են 2008 թվականի բոլոր հաշվետու ժամանակահատվածների համար իրացված քարտերի և դրանց դիմաց հաշվարկված և վճարված միջնորդավճարների վերաբերյալ ակտեր ու հաշիվներ (...) Ձեր կողմից պահանջվող տեղեկատվության ամբողջական տրամադրումը բավականին ծավալուն և ժամանակատար աշխատանք է ենթադրում, ինչի անհրաժեշտությունը դեռևս չենք տեսնում» (**հատոր 1-ին, գ.թ. 92**):

4) Ըստ Ընկերության հայցի ընդդեմ Կազմակերպության՝ պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու՝ վարչաբիլինգային տվյալների տրամադրման պահանջի մասին, թիվ ԵԱԲԴ/1745/02/11 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 25.02.2013 թվականին կայացված և 21.08.2013 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով Ընկերության հայցը բավարարվել է. Կազմակերպությանը պարտավորեցվել է՝ Ընկերությանը տրամադրել կողմերի միջև 02.07.2007 թվականին կնքված թիվ ARM-C323/07 պայմանագրի կից՝ 30.04.2008 թվականին կնքված թիվ 15 լրացուցիչ համաձայնագրով նախատեսված ակցիայի շրջանակներում 2008 թվականի հունիս, հուլիս և օգոստոս հաշվետու ժամանակաշրջանի բաժանորդային պայմանագրերի (կանխավճարային) հաշվարկի վարչաբիլինգային տվյալները: Միաժամանակ տվյալ վճռով հաստատվել է այն, որ թիվ 15 համաձայնագրով նախատեսված ակցիայի ընթացքում Ընկերության կողմից Կազմակերպության համակարգում 2008 թվականի հունիս ամսից մինչև 2008 թվականի օգոստոս ամիսն ընկած

ժամանակահատվածում գրանցվել է 252 463 բաժանորդային պայմանագիր: Այդ փաստն ընդունել է պատասխանողը՝ իր և հայցվորի հետ ունեցած էլեկտրոնային նամակագրությամբ (հիմք՝ թիվ 15 թղթապանակում առկա գրառումներ և թիվ 1 թվային սկավառակ): Հիմնավորվել է նաև, որ պատասխանող Կազմակերպության միջնորդավճարի հաշվարկման համար բիլինգային համակարգի տվյալները հայցվորին տրամադրվել է թվով 200.868 բաժանորդային պայմանագրերի համար, այսինքն՝ թվով 51 595 բաժանորդային պայմանագրի բիլինգային համակարգից տվյալներ պակաս են տրամադրվել (**հատոր 3-րդ, գ.թ. 81-83**):

5) ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 28.08.2017 թվականի թիվ 20951709 եզրակացության «Հետևություններ թիվ 2-րդ հարցի վերաբերյալ» բաժնի համաձայն՝ «Ներկայացված նյութերի հիման վրա կատարված հաշվարկներով 01.06.2008 թվականից մինչև 01.10.2008 թվականն ընկած ժամանակահատվածի համար կամ 01.10.2008 թվականի դրությամբ Կազմակերպությունը միջնորդավճարի մասով Ընկերության հանդեպ ունի չկատարված վճարային պարտավորություններ ընդամենը 138.692.300 ՀՀ դրամի չափով, իսկ ԱԱՀ-ով հանդերձ՝ 166.430.760 ՀՀ դրամի չափով (...)» (**հատոր 3-րդ, գ.թ. 3-24**):

6) Ընկերությունը սույն գործով հայցադիմումը դատարան է ներկայացրել 28.09.2015 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 5-11**):

7) Կազմակերպությունը 11.08.2016 թվականին միջնորդություն է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ (**հատոր 2-րդ, գ.թ. 31-33**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ և 340-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ, 340-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կարող է սկսվել, եթե պարասխանողի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով հայցվորը զրկված է եղել դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով պարտաճ հայց ներկայացնելու հնարավորությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը, եթե օրենքով դիմում տալու համար այլ ժամկետ նախատեսված չէ: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնց կատարման ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապանին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, հայցային վաղեմության հաշվարկն սկսվում է այդ ժամկետի ավարտից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով**, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով վերոգրյալ նորմերին, արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*տե՛ս, Ռեզոլյուցիայի Վարչության ընդդեմ Դատարանի Դատարանի թիվ ԵԿԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանների օրակարգային խնդիրն է դառնում պարզել այն իրական ժամանակահատվածը, երբ հայցվորը հետամուտ է եղել իր իրավունքների դատական կարգով պաշտպանությանը (*տե՛ս, Սերգեյ Սարգսյանն ընդդեմ Արա Սարգսյանի թիվ ԵԿԴ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի վերլուծությանը, արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման համար անհրաժեշտ է սահմանված կարգով (օրենքով սահմանված կարգով) հայցը հարուցած լինելու հանգամանքի առկայությունը, այսինքն՝ երբ հայցը հարուցվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի պահանջներին համապատաս-

խան և ընդունվել է դատարանի կողմից: Ինչ վերաբերում է հայցային վաղեմության ընթացքի ընդհատմանը, ապա վերջինիս յուրահատկությունը կայանում է նրանում, որ օրենքով մատնանշված հիմքերի առկայության դեպքում հայցային վաղեմության արդեն իսկ անցած ժամանակահատվածն այլևս հաշվի չի առնվում և հայցային վաղեմության ժամկետը սկսում է հոսել վերստին (տե՛ս, «Հովհաննես Իսպիրևսեյշյ» ՄՊԸ-ն ընդդեմ Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի թիվ ԵԿԴ/0526/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2015 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով բողոքի հիմքում բարձրացված իրավական խնդիրը, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ և 340-րդ հոդվածների իրավակարգավորումների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր: Այդ իսկ նկատառումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել հետևյալը. ինչպես բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից՝ օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը կապել է ոչ թե իրավունքի խախտման պահի, այլ այն օրվա հետ, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Օրենսդրի այս կարգավորումը բխում է այն տրամաբանությունից, ըստ որի՝ եթե անձն իր իրավունքի խախտման մասին չիմանա, ապա չի էլ կարող ձեռնամուխ լինել որևէ եղանակով՝ այդ թվում և հայց հարուցելու միջոցով իր խախտված իրավունքի պաշտպանությանը: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի ընթացքի մեկնարկի երկու նախապայմանների դեպքում էլ օրենսդիրը գործածել է «իմացել է» և «պետք է իմացած լիներ» արտահայտությունները, որոնց տառացի մեկնաբանությունը հանգեցնում է այն հետևության, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու համար անհրաժեշտ է, որ հայցվորը հաստատապես իմանա կամ իմացած լինի իր իրավունքի խախտման մասին: Վերոգրյալից բխում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի կարող սկսվել, եթե հայցվորին հասանելի տեղեկությունները նրան թույլ տան եզրակացնել միայն իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին: Իրավակիրառ պրակտիկայում շահագրգիռ անձը դատական պաշտպանության իր իրավունքն իրացնում է այն դեպքում, երբ համոզված է իր իրավունքի հաստատապես խախտման հարցում: Այլ կերպ ասած՝ շահագրգիռ անձը պետք է համոզված լինի իր իրավունքի խախտման հարցում՝ անկախ նրանից, թե իրականում իրավունքի խախտում տեղի ունեցել է, թե ոչ, ինչը դատարանի գնահատման առարկա է: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական պաշտպանության իրավունքն ունի իրացման որոշակի պայմաններ, որոնց չարաշահումը կարող է անբարենպաստ հետևանքներ առաջացնել այդ իրավունքից անբարեխիղճ օգտված անձի համար: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետում օրենսդիրի կողմից կիրառված «պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին» արտահայտությունը չպետք է սխալմամբ մեկնաբանվի այնպես, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կարող է սկսվել հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորություն ունենալու օրվանից, ընդհակառակը՝ «պետք է իմացած լիներ» ձևակերպմամբ, ինչպես և «իմացել է» ձևակերպման պարզապարզ օրենսդիրը կարևորել է հայցային վաղեմության ընթացքն սկսվելու հարցում հայցվորի կողմից իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ շահագրգիռ անձի կողմից իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու համար վերջինս պետք է տիրապետի խախտման

վերաբերյալ բավարար տեղեկությունների, իսկ եթե այդ տեղեկությունները բավարար չեն, այսինքն՝ եթե հայցվորը կարող է միայն ենթադրություններ անել իր իրավունքի հնարավոր խախտման մասին, ապա նա չի էլ կարող հստակ պահանջ ներկայացնել իր իրավունքի խախտման վերացման վերաբերյալ: *Այսպիսով, օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու իրավական հետևանքը պայմանավորել է հայցվորի կողմից ոչ թե իր իրավունքի խախտման մասին ենթադրելու հնարավորությամբ, այլ այդ խախտման մասին հավաստի կերպով իմանալու կամ իմացած լինելու փաստերով:*

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հայց հարուցելով՝ շահագրգիռ անձը չի կարող պահանջել իր իրավունքի ենթադրյալ խախտման վերացում, քանի որ ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրությունը շահագրգիռ անձին իրավունք է վերապահել համապատասխան հայցով դիմելու դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ անձը կարող է պահանջել և դատարանն էլ իրականացնել անձի ոչ թե «վերացական», այլ կոնկրետ խախտված իրավունքի պաշտպանություն կամ այլ խոսքով՝ հայցով խախտված իրավունքի պաշտպանության համար հայցվորն առնվազն պետք է իմանա, թե ով է խախտել իր իրավունքը (ով է պատշաճ պատասխանողը) և ինչու է կայանում իր իրավունքի խախտումը, որպեսզի պատասխանողից պահանջի իր իրավունքի խախտման վերացում (ընտրի իր իրավունքի խախտման վերացման համար անհրաժեշտ և պիտանի հայցապահանջը): Բացի այդ, քաղաքացիադատավարական օրենսդրությունը հայցով իրավունքի պաշտպանության համար սահմանել է որոշակի պայմաններ, որոնց պահպանման դեպքում է միայն դատարանը պարտավոր ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ: Մասնավորապես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականի ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ, 88-րդ, 92-րդ հոդվածների պահանջների համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանական պահանջի դեպքում հայցադիմումում, ի թիվս այնի, պարտադիր կերպով պետք է նշվեին պահանջվող գումարի չափը և հաշվարկը, իսկ այդ պահանջը չպահպանելու դեպքում հայցադիմումը ենթակա էր վերադարձման, այսինքն՝ դատարանը վարույթ կարող էր ընդունել միայն դատավարական օրենսգրքի պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը: Համանման իրավակարգավորումներ են սահմանված նաև գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 125-րդ և 127-րդ հոդվածներով:

Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածը սահմանել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է **սահմանված կարգով հայցը հարուցելով**: Վերոգրյալ դատողություններից բխում է, որ հայցային վաղեմության ժամկետը չի ընդհատվում, եթե հայցը ներկայացվում է ոչ այն դատարան, ուր պետք է ներկայացվի, ոչ այն պատասխանողի դեմ, ով պետք է պատասխան տա այդ հայցով և ոչ այն հայցապահանջով, որն ուղղված է անձի խախտված կոնկրետ տույնեկտիվ իրավունքի պաշտպանությանը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի հոսքի հարցում իր իրավակարգավորումներով հատուկ նշանակություն է տվել հետևյալ հանգամանքներին. հայցային վաղեմության ժամկետն ընդհատում է կոնկրետ իրավունքի պաշտպանության համար անհրաժեշտ և պիտանի հայցը, որը հարուցվել է դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով: Սահմանված

կարգով հայց հարուցելու համար հայցվորին պետք է հայտնի լինեն այն նվազագույն տեղեկությունները, որոնք օրենքին համապատասխան պարտադիր կերպով պետք է նշվեն հայցադիմումում, իսկ դրամական պահանջի դեպքում այդ պարտադիր տեղեկություններն ընդգրկում են պահանջվող գումարի չափը և հաշվարկը: Այդ տեղեկություններին չտիրապետելու դեպքում հայցվորը չի կարող սահմանված կարգով հարուցել անհրաժեշտ և պիտանի հայցը՝ պահանջել կոնկրետ չափի գումարի բռնագանձում, հետևաբար գումարի չափին և հաշվարկին վերաբերող տեղեկություններին չտիրապետելը նշանակություն ունի նաև հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվելու հարցում: Այլ խոսքով, եթե պատասխանողի կողմից իր պայմանագրային պարտավորությունը չկատարելու, մասնավորապես՝ միայն իր կողմից տիրապետվող անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն չտրամադրելու հետևանքով հայցվորը հնարավորություն չի ունեցել բացահայտել իր իրավունքի իրապես խախտված լինելու փաստը, արդյունքում նաև չի տիրապետել դրամական պահանջի գործով պահանջվող գումարի չափի և հաշվարկի վերաբերյալ տեղեկություններին, ապա հայցային վաղեմության ժամկետի ընթացքի մեկնարկի մասին խոսք լինել չի կարող, քանի դեռ համապատասխան փաստերը հասանելի չեն դարձել շահագրգիռ անձին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերոգրյալ հետևությունն ամենևին չի նշանակում, որ հայցվորը դրամական պահանջով հայց ներկայացնելիս պետք է տիրապետի իր պահանջը հիմնավորող բոլոր տեղեկություններին, դրանք հաստատող բոլոր ապացույցներին: Հայցային վաղեմության ժամկետը կմեկնարկի այն օրվանից, երբ շահագրգիռ անձը տիրապետի անհրաժեշտ և բավարար տեղեկություններին՝ պատշաճ հայցադիմում դատարան ներկայացնելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն այս հարցում կարևորում է կողմերի վարքագծի բացահայտումը և գնահատումը: Այսպես՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ եթե հայցվորն իր իրավունքի խախտված լինելու մասին ունի որոշակի, սակայն դատարան պատշաճ հայց հարուցելու համար ոչ բավարար տեղեկություններ, ապա նա պարտավոր է ձեռնարկել իրենից կախված բոլոր ողջամիտ միջոցները՝ պարզելու, թե իր իրավունքի խախտում իրականում տեղի ունեցել է, թե ոչ: Եթե հայցվորն այդ ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկում, ապա սկսում է գործել «պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին» կանոնը: Իրավունքի խախտված լինելու մասին իմացած լինելու կանխավարկածը գործում է այն դեպքում, երբ իր իրավունքի խախտման մասին ենթադրություններ ունեցող հայցվորն օրենքին, այլ նորմատիվ իրավական ակտերին, պայմանագրին համապատասխան իր իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու ուղղությամբ չի ձեռնարկում իրենից կախված բոլոր ողջամիտ միջոցները: Իսկ այդպիսի միջոցների բավարար կամ անբավարար լինելը, դրանք ողջամիտ ժամկետում հայցվորի կողմից ձեռնարկված լինելը յուրաքանչյուր գործով պետք է պարզեն և գնահատեն դատարանները, քանի որ այդ հանգամանքներից կախված միայն հնարավոր կլինի որոշել, թե երբվանից հայցվորը պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին, այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործով Դատարանը, հայցը մասնակիորեն բավարարելով և բռնագանձելով Կագմակերպությունից հօգուտ Ընկերության 2008 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսների համար չվճարված միջնորդավճարների՝ 97.821.800 ՀՀ դրամի չափով և վճիռն օրինական

ուժի մեջ մտնելու պահից այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիման վրա հաշվեգրման ենթակա տոկոսները, և ըստ այդմ մերժելով պատասխանող Կազմակերպության միջնորդությունը վերը նշված ամիսների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, պատճառաբանել է, որ «(...) հայցվորը չի ունեցել 2008 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսների վարչաբիլինգային տվյալները, որպիսի հանգամանքը ապացուցվել է արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած թիվ ԵԱԲԴ/1745/02/11 վճռով, հետևաբար և վերջինս չէր կարող իմանալ իր իրավունքների խախտման մասին, իսկ իրավունքի խախտման մասին տեղեկացել է 25.02.2013 թվականի վճռի արդյունքում ձեռք բերված վարչաբիլինգային տվյալների հիման վրա, որպիսի պայմաններում 2015 թվականին հայց է ներկայացրել դատարան: Այսինքն, հայցվորի համար 2008 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսների մասով չվճարված միջնորդավճարների համար հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվել է 25.02.2013 թվականի թիվ ԵԱԲԴ/1745/02/11 վճռի օրինական ուժ ստանալու պահից՝ 2013 թվականի սեպտեմբերից, ինչը նշանակում է, որ վերը թվարկված ամիսների մասով հայցային վաղեմության ժամկետի բացթողում տեղի չի ունեցել»: Միաժամանակ Դատարանը 2008 թվականի սեպտեմբեր ամսվա համար չվճարված միջնորդավճարների և պակաս վճարված գումարների մասով հայցը մերժել է հայցային վաղեմության կիրառմամբ:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բավարարված մասով բեկանելիս պատճառաբանել է հետևյալը.

1) «Կազմակերպության չկատարված վճարային պարտավորությունների առկայության մասին տեղեկացված Ընկերությունը գրկված չի եղել 2008 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին հաջորդած երեք տարիների ընթացքում Կազմակերպության դեմ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ հայց հարուցելու հնարավորությունից (իր հանդեպ Կազմակերպության վճարային պարտավորությունների առկայության մասին Ընկերության իրազեկված լինելու մասին վկայում է ոչ միայն 2008 թվականի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների 20-րդ օրերը հայցադիմումում, որպես Կազմակերպությանը վերագրվող կետանցի օրեր նշված լինելու իրողությունը, այլև տվյալ հայցադիմումում նշված 51.000 SIM քարտերի համար վճարումներ կատարված չլինելու առնչությամբ կողմերի միջև դեռևս 12.06.2009 թվականի դրությամբ վեճի առկայությունը (հիմք՝ Կազմակերպության տնօրենի 12.06.2009 թվականի գրությունը Ընկերությանը), սակայն 2011 թվականին դատարան է դիմել ոչ թե այդ պարտավորության կատարումն ապահովելու, այլ դրա իրական չափը պարզելու նպատակով միայն, իսկ բռնագանձման ենթակա գումարի իրական չափը հայցվորը 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի հիման վրա կարող էր պարզել և ներկայացնել գումարի բռնագանձման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում՝ 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա համապատասխան ապացույցները դատական կարգով պատասխանողից պահանջելուց հետո, հետևաբար չկատարված վճարային պարտավորության առկայության մասին իրազեկված լինելու պայմաններում դատարան դիմելու իրավունքի իրացումը չի կարող կախվածության մեջ դրվել հայցագնի իրական ու ստույգ չափը պարզման ենթակա լինելու հանգամանքից:

2) 15.04.2016 թվականին Դատարան ներկայացված գրավոր առարկությամբ Ընկերությունն ընդունել է, որ 2008 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսների համար միջնորդավճարներ վճարված չլինելու մասին տեղեկացել է թիվ 19 համաձայնագրի շրջանակներում

իրականացվող ակցիայի ընթացքում: Հետևաբար իր «խախտված» իրավունքների մասին իմացել է առնվազն 2008 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում (թիվ 19 համաձայնագրի շրջանակներում իրականացվող ակցիայի ժամանակահատված), հետևաբար սույն գործի փաստական կազմի պարագայում հայցային վաղեմության եռամյա ժամկետի ընթացքը սկսվել է առնվազն 2009 թվականի հունվարի 1-ից և ավարտվել է 2012 թվականի հունվարի 1-ին՝ սույն գործով հայցադիմումը ներկայացնելուց երեք տարի առաջ, որպիսի փաստը բավարար էր հայցը մերժելու մասին դատական ակտ կայացնելու համար:

3) Պայմանագրի թիվ 5 հավելվածի 1.12 կետով սահմանվել է, որ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո կողմերը կազմում և ստորագրում են ակտ, որով կողմերի փոխհաշվարկների հիման վրա որոշվում է պարտքի գումարը: Սույն գործով կողմերը 15.10.2008 թվականին կազմել և ստորագրել են ակտ՝ 2008 թվականի հուլիսից մինչև սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում դիլերական ծառայությունների մատուցման միջնորդավճարների հաշվարկման վերաբերյալ, որով Ընկերության կողմից մատուցված ծառայությունների համար պատասխանողի կողմից վճարման ենթակա պարտքի գումարը կազմել է 103.909.586 դրամ, և այդ գումարն ամբողջությամբ վճարվել է Կազմակերպության կողմից: Ակնհայտ է, որ Պայմանագրի թիվ 5 հավելվածի 1.12 կետով սահմանված կանոնի պահպանմամբ պատշաճ հաշվարկ կատարելու պարագայում Ընկերությունն իր «խախտված» իրավունքների մասին պետք է իմացած լիներ առնվազն 15.10.2008 թվականին, առավել ևս, որ Պայմանագրի հիման վրա հենց Ընկերությունն է կրել բաժանորդների հետ պայմանագրեր կնքելու և դրանք Կազմակերպությանը փոխանցելու պարտավորությունը, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջինս համապատասխան հաշվարկներ կատարելու համար տիրապետել է անհրաժեշտ և բավարար տեղեկությունների, ինչը բավարար էր հայցային վաղեմություն կիրառելու և հայցն ամբողջությամբ մերժելու համար»:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա պայմանագրի և լրացուցիչ համաձայնագրի դրույթների ուսումնասիրությունից հետևում է, որ միջնորդավճարների հաշվեգրման և հետագայում նաև վճարման պարտադիր պայման է եղել հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության կողմից կնքված բաժանորդային պայմանագրերը Կազմակերպության համակարգում գրանցված լինելը և դրանցով նախնական հաշվեկշիռները հաշվետու ժամանակաշրջանում ակտիվացված (վերալիցքավորված) լինելը, որպիսի (ակտիվացված (վերալիցքավորված)) տվյալները գտնվել են Կազմակերպության վարչաբիլինգային համակարգում, որն անհասանելի է եղել Ընկերությանը: Ըստ այդմ էլ՝ նշված Պայմանագրով Կազմակերպությունը պարտավորվել է Ընկերությանը տրամադրել համապատասխան տեղեկությունները՝ վերը նշված տվյալները: Այսինքն՝ միայն Կազմակերպության կողմից տրամադրված վարչաբիլինգային տվյալների հիման վրա Ընկերությունը կարող էր իմանալ, թե որքան SIM քարտեր են ակտիվացվել կամ վերալիցքավորվել, որպիսի պայմաններում միայն կարող էր հաշվարկել իրեն վճարման ենթակա միջնորդավճարները, և ըստ այդմ էլ՝ իմանալ իրեն պակաս չափով վճարված միջնորդավճարների մասին:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն անհրաժեշտ տվյալները Ընկերությանը հայտնի և հասանելի դառնալու պահից վերջինս կարող էր կատարել հաշվարկներ, այնուհետև փոխադարձ հաշվարկների արդյունքում իմանալ Կազմակերպության կողմից իրեն պակաս վճարված միջնորդավճարների մասին, այն է՝ իր իրավունքի

խախտման մասին:

Այսպիսով, միայն Ընկերության չհարատված կասկածները, անհրաժեշտ տվյալների բացակայության պայմաններում բավարար չէին հաստատված համարելու, որ վերջինս գիտեր կամ կարող էր իմանալ իր իրավունքների խախտման մասին: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերը նշված տվյալները Ընկերությանը հասանելի են դարձել միայն 25.02.2013 թվականին կայացրած և 21.08.2013 թվականին օրինական ուժի մեջ մտած թիվ ԵԱԲԳ/1745/02/11 վճռից, որով բավարարվել է Ընկերության հայցն ընդդեմ Կազմակերպության՝ վարչաբիլինգային տվյալները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջը: Մասնավորապես՝ տվյալ վճռով պարտավորեցվել է Կազմակերպությանը տրամադրել կողմերի միջև 02.07.2007 թվականին կնքված թիվ ARM-C323/07 պայմանագրին կից՝ 30.04.2008 թվականին կնքված թիվ 15 լրացուցիչ համաձայնագրով նախատեսված ակցիայի շրջանակներում 2008 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսների հաշվետու ժամանակաշրջանի բաժանորդային պայմանագրերի (կանխավճարային) հաշվարկի վարչաբիլինգային տվյալները: Միաժամանակ տվյալ վճռով հաստատվել է, որ Կազմակերպությունը միջնորդավճարի հաշվարկման համար բիլինգային համակարգի տվյալները Ընկերությանը տրամադրել է թվով 200.868 բաժանորդային պայմանագրերի համար, այսինքն՝ թվով 51.595 բաժանորդային պայմանագրերի բիլինգային համակարգից տվյալներ պակաս են տրամադրվել:

Միաժամանակ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Վերաքննիչ դատարանի առաջին երկու դատողությունների համար ելակետային հիմք է ծառայել այն հանգամանքը, որ Ընկերությունը Կազմակերպության չկատարած վճարային պարտավորությունների մասին հստակ տեղեկացված է եղել մի դեպքում՝ առնվազն 2008 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում /հետևության հիմքում ընկած է կետանցի օրերը հայցադիմումում նշելը/, մյուս դեպքում՝ պատասխանող Կազմակերպության տնօրենի 12.06.2009 թվականի գրությունից, որով հաստատվում է կողմերի միջև այդ ժամանակ արդեն իսկ վեճի առկայությունը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ կետանցի օրերը հայցադիմումում նշելն ինքնին չի կարող հաստատել այն հանգամանքը, որ չկատարված պարտավորության մասին Ընկերությունը հաստատապես իմացել է դեռևս 2008 թվականին, այն պարզ պատճառով, որ Ընկերությունը կետանցի օրերը հայցադիմումում կարող էր նշել նաև չկատարված պարտավորության մասին հետագայում՝ մինչև հայցադիմում ներկայացնելն իմանալով:

Ինչ վերաբերում է Կազմակերպության տնօրենի 12.06.2009 թվականի գրությամբ հաստատվող գործի հանգամանքներին, ապա այդ գրության բովանդակությամբ ևս մեկ անգամ հաստատվել է, որ Ընկերությունը չկատարված պարտավորության կապակցությամբ տուկ ունեցել է կասկածներ և պարտավորության առկայությունը ցանկացել է ճշտել պատասխանողից վարչաբիլինգային համակարգից ստացվող տվյալները ձեռք բերելով, քանի որ ըստ պայմանագրի թիվ 15 լրացուցիչ համաձայնագրի՝ հաշվարկը պետք է իրականացվեր միայն դրանց հիման վրա, սակայն Կազմակերպությունն ակնհայտորեն խուսափել է այդ տվյալները տրամադրելուց, պատճառաբանելով, որ «Ձեր կողմից պահանջվող տեղեկատվության ամբողջական տրամադրումը բավականին ծավալուն և ժամանակատար աշխատանք է ենթադրում, ինչի անհրաժեշտությունը դեռևս չենք տեսնում» այն դեպքում, երբ Պայմանագրի

10.7 կետով սահմանված է հետևյալը. «կողմերը պետք է միմյանց ուղարկեն սույն պայմանագրի հետ կապված կամ նրանից բխող բոլոր տեղեկություններն ու հայտարարությունները...»:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 25.02.2013 թվականի թիվ ԵԱԲԴ/1745/02/11 գործով օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանք է համարվել այն, որ պատասխանողը թվով 51.595 բաժանորդային պայմանագրի բիլինգային համակարգից տվյալներ պակաս է տրամադրել հայցվորին և այդ տվյալները տրամադրել է միայն նշված վճռի կատարման արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատասխանողի չկատարած վճարային պարտավորությունների մասին հայցվորի՝ դեռևս 2008 կամ 2009 թվականներին տեղեկացված լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի հետևությանն այն մասին, որ պարտավորության չափը ճշտելուն ուղղված հայց ներկայացնելու փոխարեն հայցվորը կարող էր 2011 թվականին պարտավորության կատարումն ապահովող հայց ներկայացնել, ապա դա ևս հիմնավոր չէ, քանի որ 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 6-րդ կետերին համապատասխան՝ ներկայացվող հայցադիմումում պարտադիր կերպով պետք է նշվեին հայցագիրը (քանի որ հայցը ենթակա էր գնահատման), ինչպես նաև բռնագանձման ենթակա գումարի հաշվարկը, իսկ հայցադիմումի ձևին և բովանդակությանը վերաբերող այդ պահանջները հայցվորի կողմից չապահանջվելու դեպքում հայցադիմումը նույն օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ենթակա կլիներ վերադարձման: Ընդ որում, նշված թերություններով հայցադիմումը վերադարձվելու դեպքում հայցվորը չէր կարող շտկել այդ թերությունները և հայցադիմումը կրկին ներկայացնել դատարան, քանի դեռ չէր ճշտել հայցագիրը և բռնագանձման ենթակա գումարի հաշվարկը, իսկ նման պայմաններում հայցվորը կհայտնվեր իրավական փակուղում: Դա նշանակում է, որ հայցվորը գրկված էր դատարան պատշաճ հայցադիմում ներկայացնելու հնարավորությունից, նրա ներկայացրած հայցադիմումը չէր կարող վարույթ ընդունվել, իսկ պարտավորության չափը Վերաքննիչ դատարանի մատնանշած եղանակով՝ ապացույցներ պահանջելու միջոցով, կարող էր ճշտվել միայն հայցադիմումը վարույթ ընդունվելուց հետո:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության կիրառման հիմք չէր կարող հանդիսանալ նաև Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Ընկերությունն իր 15.04.2016 թվականին ներկայացված առարկությունում ընդունել է, որ միջնորդավճարի չվճարված լինելու մասին ինքն իմացել է թիվ 19 համաձայնագրի շրջանակներում իրականացվող ակցիայի ընթացքում՝ 2008 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է Ընկերության կողմից ներկայացված 15.04.2016 թվականի «Առարկության վերաբերյալ դիրքորոշում» փաստաթղթի ուսումնասիրությամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունն այդ փաստաթղթով ընդունել է միայն, որ այդ ժամանակահատվածում Կազմակերպության տրամադրած սիմ-քարտերին վերաբերող տվյալների ուսումնասիրությամբ «նկատել է» տասնյակ հազարավոր սիմ-քարտեր, որոնց վերաբերյալ Կազմակերպությունը չի տրամադրել վարչաբիլինգային տվյալներ՝ «գրկելով հայցվորին իրեն հասանելիք միջնորդավճարների համար հաշիվ ներկայացնելու հնարավորությունից»: Ընկերության «ընդունած» վերոհիշյալ հանգամանքը չէր կարող հիմք

հանդիսանալ նրա պահանջի իրավունքն իրացնելու համար, քանի որ Ընկերության կողմից վճարում պահանջելու համար անհրաժեշտ էր, որպեսզի Կազմակերպությունը նրան ներկայացնէր վարչաբիլինգային տվյալները, ինչն էլ կարող էր Ընկերության կողմից իր խախտված իրավունքի մասին հաստատապես իմանալու և պահանջի իր իրավունքն իրացնելու հիմք հանդիսանալ: Այսինքն՝ նշված առարկայամբ Ընկերությունն ըստ էության պնդել է, որ 2009 թվականին ոչ թե հաստատապես իմացել է իր իրավունքի խախտման մասին, այլ բացահայտելով, որ պատասխանողի կողմից թաքցված վարչաբիլինգային տվյալներ կան, պարզել է միայն նրանից այդ տվյալները պահանջելու և պարտավորության առկայությունը և չափը ճշտելու անհրաժեշտությունը:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ Պայմանագրի թիվ 5 հավելվածի 1.12 կետով սահմանված կանոնի պահպանմամբ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում փոխհաշվարկներով պարտքի գումարն ակտով որոշելու պարագայում Ընկերությունն առնվազն 15.10.2008 թվականին կազմված ակտից պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին, քանի որ Պայմանագրի թիվ 15 լրացուցիչ համաձայնագրի համաձայն՝ բաժանորդային պայմանագրերի հաշվարկը պետք է իրականացվեր Կազմակերպության բիլինգային համակարգից ստացվող տվյալների հիման վրա: Տվյալ դեպքում պատասխանողի կողմից համապատասխան բիլինգային տվյալները թերի ներկայացնելու և հետագայում էլ դրանք լրիվ ներկայացնելուց խուսափելու պայմաններում Ընկերությունը չէր կարող իմանալ, որ իր իրավունքը խախտված է:

Վերը նշվածը հաշվի առնելով և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 25.02.2013 թվականին կայացված և 21.08.2013 թվականին օրինական ուժի մեջ մտած թիվ ԵԱԲԳ/1745/02/11 վճռի կատարման արդյունքում է միայն Ընկերությունը հաստատապես տեղեկացել ինչպես Կազմակերպության՝ իր հանդէպ ունեցած պարտավորության, այնպես էլ դրա չափի մասին, և 28.09.2015 թվականին գումարի բռնագանձման հայց ներկայացնելով դատարան՝ հայցային վաղեմության եռամյա ժամկետը բաց չի թողել, որպիսի պայմաններում հայցային վաղեմության կիրառման հիմքով հայցը մերժվել չէր կարող: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը սույն գործի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հանգել է ճիշտ եզրակացության՝ հայցը մասնակիորեն բավարարելով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ և 340-րդ հոդվածների սխալ մեկնաբանության արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ հայցային վաղեմության ժամկետի մեկնարկը սխալ որոշելով՝ կիրառել է հայցային վաղեմություն և մերժել է հայցապահանջը՝ սահմանափակելով հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքը՝ նկատի ունենալով, որ նշված իրավունքը ենթադրում է ոչ միայն դատարան հայց հարուցելու, այլև արդեն իսկ հարուցված հայցով գործի ըստ էության քննության և լուծման իրավունքը, ինչն իր հերթին հանգեցրել է նաև Ընկերության սեփականության իրավունքի խախտմանը:

Նշված պարզադատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճարել դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճարել դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական ուժ տալիս Վճարել դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճարել դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճարել դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [«Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ վճարել բողոքների համար պետական

տուրքը գանձվում է՝ դրամական պահանջի գործերով հայցագնի երեք տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճարել բողոքը ենթակա է բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ րեկանման, ինչպես նաև հաշվի առնելով, որ սույն վճարել բողոքի համար Ընկերության կողմից վճարվել է 1.100.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումար, Վճարել դատարանը, հաշվի առնելով նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի «ա» ենթակետի սահմանափակումը, գտնում է, որ Կազմակերպությունից հոգուտ Ընկերության ենթակա է գանձման 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի հատուցման գումար:

Միաժամանակ նկատի ունենալով, որ Ընկերությունը վճարել բողոքի համար վճարել է օրենքով սահմանվածից ավել պետական տուրքի գումար, Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով վճարված ավել վճարված պետական տուրքի գումարը համապատասխան դիմումի առկայության դեպքում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.07.2018 թվականի որոշումը և «Ալյանս Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը մասնակիորեն բավարարելու, այն է՝ «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունից հոգուտ «Ալյանս Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 97.821.800 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)՝ որպես թիվ ARM-C323/7 պայմանագրի շրջանակներում չվճարված միջնորդավճարի գումար բռնագանձելու, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով տոկոսները հաշվարկելու և բռնագանձելու, համապատասխանաբար պետական տուրքի և մյուս դատական ծախսերի բաշխման մասերով օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 09.04.2018 թվականի վճիռ:

2. «ԱրմենՏել» ՓԲԸ (ներկայումս «Վեոն Արմենիա» ՓԲԸ)-ից հոգուտ «Ալյանս պլյուս» ՍՊԸ-ի բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վերջինիս կողմից վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական ֆաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/1252/02/16**
 դատարանի որոշում 2019թ.
 Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/1252/02/16**
 Նախագահող դատավոր՝ **Ա. Հունանյան**
 Դատավորներ՝ **Կ. Հակոբյան**
Ա. Մկրտչյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի մարտի 29-ին գրավոր ընթացակարգով քննելով Նարինե Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանների ընդդեմ Նարինե Ասատրյանի, երրորդ անձինք ՀՀ նոտարական պալատի, Արտակ Մարտիրոսյանի՝ 12.03.2011 թվականին կնքված փոխառության պայմանագիրը 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամ գումարի չափով կնքված, իսկ 4.300.000 ՀՀ դրամ գումարի մատով չկնքված համարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանները պահանջել են 12.03.2011 թվականին կնքված փոխառության պայմանագիրը կնքված համարել 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամի չափով, իսկ 4.300.000 ՀՀ դրամի մատով համարել չկնքված:

Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասու-

թյան դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 13.07.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ 12.03.2011 թվականին Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյանների և Նարինե Ասատրյանի միջև կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության խառը պայմանագիրը կնքված է համարվել 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամ գումարի չափով, իսկ 4.300.000 ՀՀ դրամ գումարի մասով համարվել է չկնքված:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.11.2017 թվականի որոշմամբ Նարինե Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.07.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նարինե Ասատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կարինե Երեմյանի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ հոդվածները, 337-րդ հոդվածի 1-ին կետը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, հաշվի չի առել այն հանգամանքը, որ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռով արդեն իսկ հաստատվել են այնպիսի հանգամանքներ, որոնք նախադատելի են սույն գործի համար և դրանց հակառակ փաստեր չէին կարող ապացուցվել:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով կայացված դատավճռով հաստատված փաստերը նախադատելի չէին կարող լինել սույն գործի համար, քանի որ նախկինում քննված թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով արդեն իսկ հաստատվել է այն հանգամանքը, որ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանները ստացել են փոխառության գումարը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել հայցային վաղեմության ժամկետները կարգավորող իրավանդությունը և այդ ժամկետի հաշվարկը սկսելով թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով կայացված դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցվորներն իրենց իրավունքների ենթադրյալ խախտման մասին իմացել են ավելի վաղ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.11.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանների հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանը կատարել է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննու-

թյուն, ճիշտ է որոշել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը և սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի օրենսդրությունը: Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են և պատճառաբանված, ուստի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանների և Նարինե Ասատրյանի միջև 12.03.2011 թվականին կնքվել է բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիր, որով Նարինե Ասատրյանը Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններին փոխառությամբ տվել է 5.475.000 ՀՀ դրամ, որը վերջիններս պարտավորվել են վերադարձնել երկու ամսվա ընթացքում, և ի ապահովումն նշված պարտավորության կատարման՝ գրավադրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ Երևանի Մոլդովական փողոց, 50/1 շենք, թիվ 41 հասցեում գտնվող 66,7քմ ընդհանուր մակերեսով անշարժ գույքը: Նշված պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ «փոխառուն փոխառուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը (...) **(հատոր 1-ին, գ.թ. 20-21)**.

2) թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ Արտակ Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 12.03.2011 թվականին Շենգավիթի նոտարական գրասենյակում միջնորդել է Վալերի, Անդրանիկ, Կարինե և Էդուարդ Երեմյաններին գրավի (հիպոթեքի) փոխառության պայմանագիր կնքել Նարինե Ասատրյանի հետ, որով գրավադրվել է Երեմյաններին պատկանող Երևան քաղաքի Մոլդովական փողոցի 50/1 շենքի 41-րդ բնակարանը, որից հետո պայմանագրով նախատեսված և Նարինե Ասատրյանի կողմից տրված 11.000 ԱՄՆ դոլարից 3.300 ԱՄՆ դոլարը տվել է Ա. Երեմյանին, իսկ մնացած 7.700 ԱՄՆ դոլարը խաբեությամբ և Ա. Երեմյանի վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել է նրանից՝ վերջինիս պատճառել 2.871.484 ՀՀ դրամի գույքային վնաս: Նշված դատավճռով հաստատվել է Արտակ Մարտիրոսյանի կողմից 12.03.2011 թվականին խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով Կարինե Երեմյանին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու փաստը, որի համար Արտակ Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով **(հատոր 1-ին, գ.թ. 32-34)**.

3) սույն գործով հայցադիմումը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 28.04.2016 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 3-6)**.

4) Նարինե Ասատրյանը 01.08.2016 թվականին Դատարան է ներկայացրել հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու հիմքով հայցը մերժելու մասին միջնորդություն՝ պատճառաբանելով, որ հայցվորների իրավունքների ենթադրյալ խախտման մասին վերջիններս իմացել են առնվազն 12.03.2011 թվականին պայմանագիրը կնքելիս, բացի այդ, արդեն իսկ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործի շրջանակներում վերջիններս ձեռնամուխ են եղել իրենց իրավունքների պաշտպանությանը **(հատոր 1-ին, գ.թ. 65-67)**:

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին

գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ փոխառության պայմանագիրն անփոփոխության հիմքով վիճարկելու հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու առանձնահատկությունների մասին, կարևոր նշանակություն կունենա նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ հոդվածների, 337-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. ո՞ր պահից պետք է սկսվի փոխառության պայմանագիրը գումարը չստանալու կամ ավելի պակաս չափով ստանալու հիմքով վիճարկելու համար հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբն այն պարագայում, երբ փոխառության պայմանագրով կողմերը հասարարել են գումարը տալու և ստանալու փաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է վիճող կողմի դիմումի հիման վրա: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն **իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին**: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով, գործարքով սահմանված կամ դատարանի նշանակված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ **այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը**:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս

դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*յրեն, Սերգեյ Սարգսյանն ընդդեմ Արա Սարգսյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: **Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից **փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածների վերլուծությանը՝ դիրքորոշում հայտնելով այն մասին, որ փոխառության պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով փոխատուն փոխառուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխատուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: **Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրանով նախատեսված դրամը կամ այլ գույքը հանձնելու պահից** (*յրեն, Վահե Սահակյանն ընդդեմ Լեոնիդ Ներսիսյանի թիվ ԵԲԴ/0916/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով վերոգրյալ դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ օրենսդիրը, փոխառության պայմանագրի համար պարտադիր համարելով գրավոր ձևը, ապացույցների թույլատրելիության շրջանակը սահմանափակել է միայն **գրավոր ապացույցներով** (...): Օրենսդիրը, պարտադիր համարելով փաստաթղթի ներկայացումը, չի սահմանել գրավոր ապացույցների սպառիչ ցանկ՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող ցանկացած գրավոր ապացույց, որը կհաստատի փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը (*յրեն՝ ս, Հրանտ Ավետիսյանն ընդդեմ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի*

թիվ ԵԿԴ/4542/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոխառության պայմանագիրը կարող է կնքված համարվել միայն այն դեպքում, երբ առկա են պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու վերաբերյալ գրավոր ապացույցներ: Այսինքն՝ օրենսդիրը փոխառության պայմանագրի կնքվածությունն անմիջականորեն կախվածության մեջ է դրել փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու փաստից, ինչը ենթադրում է, որ նշված դրամը կամ գույքը ստացված չլինելու հանգամանքը ողջամտորեն պետք է հայտնի լինի փոխառուին անմիջապես այն պահին, երբ վերջինս հավաստում է դրամը կամ գույքը ստանալու փաստը: Այսպես, բոլոր այն դեպքերում, երբ փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը ստանալու մասին փոխառության պայմանագրում կատարվում է հատուկ նշում, ապա պայմանագիրը ստորագրելու փաստով փոխառուն հաստատում է դրամը կամ գույքը ստանալու հանգամանքը: Ուստի, եթե դրամը կամ գույքը ստանալու մասին հատուկ նշում պարունակող փոխառության պայմանագիրը ստորագրելու պահին փոխառուն չի ստանում դրանում նշված գումարը կամ գույքը, ապա այդ պահից սկսած վերջինիս հայտնի է դառնում իր իրավունքների խախտման մասին, հետևաբար իր խախտված իրավունքների վերականգնման նպատակով դատական պաշտպանության փոխառուն պետք է դիմի օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետի ընթացքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ փոխառության պայմանագիրն անփողության հիմքով վիճարկելու հայցային վաղեմության ժամկետը պետք է հաշվարկել փոխառությամբ սահմանված դրամը կամ գույքը փոխառուին հանձնելու փաստը որևէ եղանակով ամրագրելու պահին հաջորդող օրվանից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանների և Նարինե Ասատրյանի միջև 12.03.2011 թվականին կնքվել է բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիր, որով Նարինե Ասատրյանը Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններին փոխառությամբ տվել է 5.475.000 ՀՀ դրամ, որը վերջիններս պարտավորվել են վերադարձնել երկու ամսվա ընթացքում, և ի սպառնալու մասին նշված պարտավորության կատարման՝ գրավադրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ Երևանի Մոլդովական փողոց, 50/1 շենք, թիվ 41 հասցեում գտնվող 66,7քմ ընդհանուր մակերեսով անշարժ գույքը: Նշված պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ «փոխառուն փոխառուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը (...):»:

Նարինե Ասատրյանը 01.08.2016 թվականին Դատարան է ներկայացրել հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու հիմքով հայցը մերժելու մասին միջնորդություն՝ պատճառաբանելով, որ հայցվորների իրավունքների ենթադրյալ խախտման մասին վերջիններս իմացել են առնվազն 12.03.2011 թվականին պայմանագիրը կնքելիս, բացի այդ, արդեն իսկ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործի շրջանակներում վերջիններս ձեռնամուխ են եղել իրենց իրավունքների պաշտպանությանը:

Դիմելով դատարան՝ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյանները պահանջել են 12.03.2011 թվականին կնքված փոխառության պայմանագիրը կնքված համարել 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամի չափով, իսկ 4.300.000 ՀՀ դրամի մասով համարել չկնքված:

Դատարանը, հայցը բավարարելով, նշել է, որ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված և 16.05.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները, այն է՝ «(...) անշարժ գույքի գրավի դիմաց կողմերի միջև կնքվել է փոխառության պայմանագիր, և որպես փոխառությամբ վերցված գումարի վերադարձնելիության երաշխիք Երևանի Մոլդովական փողոցի 50/1 շենքի թիվ 41 բնակարանը համասեփականատերերի կողմից գրավ է դրվել, ինչի հիման վրա էլ Նարինե Ասատրյանը հայցվորներին հանձնել է 5.475.000 դրամ՝ Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Փոխառուն փոխառուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը», «(...) ինչ վերաբերվում է հայցվորների այն պնդմանը, որ ստացել են միմիայն 3.300 ԱՄՆ դոլար, իսկ մնացած 10.000 ԱՄՆ դոլարը Նարինե Ասատրյանը խոստացել է իրենց հանձնել որոշ ժամանակ անց, դատարանը գտավ, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, մինչդեռ տվյալ դեպքում հայցվորները դատարանին չեն ներկայացրել որևէ ապացույց վերը նշվածի կապակցությամբ», ինչպես նաև թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքները նախադատելի նշանակություն ունեն սույն գործի համար: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ հիմնավորվում է այն փաստը, որ Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանները Նարինե Ասատրյանից ստացել են 1.200.000 ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, իսկ պայմանագրով նախատեսված մնացած՝ 4.300.000 ՀՀ դրամը, չեն ստացել, ուստի այդ մասով պայմանագիրը պետք է համարվի չկնքված: *Բացի այդ, Դատարանը, անդրադառնալով հայցային վաղեմության ժամկետն անցնելու հիմքով հայցը մերժելու մասին Նարինե Ասատրյանի կողմից ներկայացված միջնորդությանը, գրել է, որ այն ենթակա է մերժման, քանի որ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններն իրենց իրավունքների խախտման մասին խնայել են թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված դատավճռից, որի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ 08.08.2014 թվականից պետք է հաշվարկել հայցային վաղեմության եռամսյա ժամկետը, որպիսի պայմաններում հայցվորները բաց չեն թողել հայցային վաղեմության ժամկետը:*

Վերաքննիչ դատարանը, մերժելով Նարինե Ասատրյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններն 12.03.2011 թվականին կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագրի 1.2-րդ կետով հավաստել են փոխառության գումարը ստանալու փաստը՝ արձանագրելով, որ փոխառուն փոխառուից վերցրեց 5.475.000 ՀՀ դրամը, որը պարտավորվում է վերադարձնել:

Դատարանը հայցային վաղեմության ժամկետն անցնելու հիմքով հայցը մերժելու մասին Նարինե Ասատրյանի կողմից ներկայացված միջնորդությունը մերժել է՝ գտնելով, որ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններն իրենց իրավունքների խախտման

մասին իմացել են թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված դատավճռից, որի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ 08.08.2014 թվականից պետք է հաշվարկել հայցային վաղեմության եռամյա ժամկետը, որպիսի պայմաններում հայցվորները բաց չեն թողել հայցային վաղեմության ժամկետը, ինչը հիմնավոր է համարել նաև Վեռաքնիչ դատարանը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված պատճառաբանությանը, հարկ է համարում նշել, որ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններն 12.03.2011 թվականին կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագրով հավաստել են գումարը ստանալու փաստը՝ արձանագրելով, որ փոխառուն փոխառուից վերցրեց 5.475.000 ՀՀ դրամը, որը պարտավորվում է վերադարձնել: Այսինքն՝ նշված փաստի արձանագրման պահին, եթե իրականում փոխառուն ստացել է պայմանագրով նշված փոխառության գումարից ավելի պակաս գումար, ապա փոխառուն իր իրավունքի խախտման մասին իմացել է հենց այդ ժամանակ: Ավելին, թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է Արտակ Մարտիրոսյանի կողմից 12.03.2011 թվականին խաբեությանը և վստահությունը չարաշահելու եղանակով Կարինե Երեմյանին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու փաստը, ինչի հետևանքով էլ վերջինս այդ քրեական գործով ճանաչվել է տուժող: Այսինքն՝ նշված դատավճիռը վերաբերել է Արտակ Մարտիրոսյանի կողմից Կարինե Երեմյանի գույքը հափշտակելուն, այլ ոչ Նարինե Ասատրյանի կողմից հանձնվող գույքին, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արտակ Մարտիրոսյանի կողմից Կարինե Երեմյանի գույքը հափշտակելու փաստը հաստատված լինելն ինքնին վկայում է այն մասին, որ հանցագործությանը վնասը պատճառվել է հենց Կարինե Երեմյանին, իսկ դատավճռով հաստատված հանցագործությանը պատճառված վնասի չափի, ինչպես նաև այդ վնասի հատուցման պահանջի առկայության կամ բացակայության մասով դատավճիռը սույն գործով նախադատելի չէ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 12.03.2011 թվականին կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիրը դրանում նշված գումարը հայցվորների կողմից ստանալու փաստը հաստատող ուղղակի ապացույց է հանդիսանում, որի 1.2-րդ կետի համաձայն՝ «փոխառուն փոխառուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը (...)», իսկ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պայմանագրում նշված գումարը հայցվորների կողմից ստանալու փաստը հաստատող անուղղակի ապացույց է, քանի որ դրանից ակնհայտ է դառնում, որ Արտակ Մարտիրոսյանը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել Կարինե Ասատրյանին՝ հափշտակելով Նարինե Ասատրյանի կողմից 12.03.2011 թվականի պայմանագրով տրված գումարի մի մասը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե 12.03.2011 թվականի պայմանագիրը ստորագրելու պահին հայցվորներն իսկապես չեն ստացել դրամում նշված գումարն ամբողջությամբ, ապա այդ պահից սկսած նրանց հայտնի է դարձել գումարի մի մասը ստացած չլինելու մասին:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին, որը կարող է պայմանավորված լինել այս կամ այն

իրադարձության վրա հասնելու հետ: Տվյալ պարագայում պայմանագրի կողմերի կողմից գումարը ստանալու փաստի ամրագրումը գրավոր եղանակով կարող է դիտարկվել գումարը հանձնելու իրադարձություն, որով էլ օրենսդիրը պայմանավորել է փոխառության պայմանագրի կնքված լինելու հանգամանքը, և դրա հաջորդ օրվանից պետք է հաշվարկվի փոխառուի կողմից փոխառության պայմանագրի՝ անփողության հիմքով վիճարկման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վալերիի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանները և Նարինե Ասատրյանը, 12.03.2011 թվականին կնքելով բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիրը, դրանում ամրագրել են նաև գումարը հանձնելու և ստանալու իրողությունը, որի հաջորդ օրվանից՝ 13.03.2011 թվականից, պետք է հաշվարկվի փոխառուի՝ անփողության հիմքով փոխառության պայմանագիրը վիճարկելու նկատմամբ հայցային վաղեմության եռամյա ժամկետի սկիզբը: Այսինքն՝ տվյալ պարագայում հայցային վաղեմության եռամյա ժամկետը լրացել է 13.03.2014 թվականին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանների կողմից հայցադիմումը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 28.04.2016 թվականին, այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո, ինչն արդեն բավարար հիմք է հայցը մերժելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով հայցը ենթակա է մերժման՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում Վերաքննիչ դատարանի կողմից գործում առկա ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ քննություն չիրականացնելու և թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռով (որը սույն գործից բացակայում է) արդեն իսկ հաստատված նախադատելի հանգամանքներն անտեսելու վճռաբեկ բողոքում նշված հիմքերին և հիմնավորումներին:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար արագատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դա-

տարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, գտնում է, որ Կարինե, Անդրանիկ, Վալերի, Էդուարդ Երեմյաններից համապարտության կարգով հոգուտ Նարինե Ասատրյանի ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումարներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2. Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյաններից համապարտության կար-

գով հոգուտ Նարինե Ասատրյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵՄԴ/1252/02/16 քաղաքացիական գործով 29.03.2019 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան), գրավոր ընթացակարգով քննելով Նարինե Ասատրյանի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանների ընդդեմ Նարինե Ասատրյանի, երրորդ անձինք ՀՀ նոտարական պալատի, Արտակ Մարտիրոսյանի՝ 12.03.2011 թվականին կնքված փոխառության պայմանագիրը 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամի չափով կնքված, իսկ 4.300.000 ՀՀ դրամի մասով չկնքված համարելու պահանջների մասին, 2019 թվականի մարտի 29-ին որոշել է «Վճարելի բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայք մերժել: Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյաններից համապարտության կարգով հոգուտ Նարինե Ասատրյանի բռնագանձել 8.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար»:

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Ե. Խունդկարյանս, համաձայն չլինելով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 29.03.2019 թվականին թիվ ԵՄԴ/1252/02/16 քաղաքացիական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում են հատուկ կարծիքս նույն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանները պահանջել են 12.03.2011 թվականին կնքված փոխառության պայմանագիրը կնքված համարել 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամի չափով, իսկ 4.300.000 ՀՀ դրամի մասով համարել չկնքված:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 13.07.2017 թվականի վճարելի հայցը բավարարվել է՝ 12.03.2011 թվականին Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյանների և Նարինե Ասատրյանի միջև կնքված բնակարանի գրավի /հիփոթեքի/ և փոխառության խառը պայմանագիրը կնքված է համարվել 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամ գումարի չափով, իսկ 4.300.000 ՀՀ դրամ գումարի մասով համարվել է չկնքված:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.11.2017 թվականի որոշմամբ Նարինե Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.07.2017 թվականի վճարելի թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նարինե Ասատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կարինե Երեմյանի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հեղրկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, հաշվի չի առել այն հանգամանքը, որ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռով արդեն իսկ հաստատվել են այնպիսի հանգամանքներ, որոնք նախադատելի են սույն գործի համար և դրանց հակառակ փաստեր չէին կարող ապացուցվել: Մասնավորապես՝ նախկինում քննված թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով արդեն իսկ հաստատվել է այն հանգամանքը, որ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանները ստացել են փոխառության գումարը:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հեղրկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, հաշվի չի առել այն հանգամանքը, որ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով կայացված դատավճռով հաստատված փաստերն ամբողջությամբ նախադատելի չէին կարող լինել սույն գործի համար, քանի որ նշված գործով նախադատելի կարող էին լինել բացառապես հանցագործության օբյեկտիվ կողմի և այն կատարած անձի վերաբերյալ հաստատված փաստերը:

3) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ հոդվածները, 337-րդ հոդվածի 1-ին կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հեղրկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել հայցային վաղեմության ժամկետները կարգավորող իրավանորմերը և այդ ժամկետի հաշվարկը սկսելով թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով կայացված դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցվորներն իրենց իրավունքների ենթադրյալ խախտման մասին իմացել են ավելի վաղ՝ պայմանագիրը կնքելիս: Ավելին, հայցվորները դեռևս 2011 թվականին թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործի շրջանակներում արդեն իսկ հանդես են եկել իրենց իրավունքների պաշտպանությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.11.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանների հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանը կատարել է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ճիշտ է որոշել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը և սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի օրենսդրությունը: Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են և պատճառաբանված, ուստի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանների և Նարինե Ասատրյանի միջև 12.03.2011 թվականին կնքվել է բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիր, որով Նարինե Ասատրյանը Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններին փոխառությամբ տվել է 5.475.000 ՀՀ դրամ, որը վերջիններս պարտավորվել են վերադարձնել երկու ամսվա ընթացքում, և ի ապահովումն նշված պարտավորության կատարման՝ գրավադրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ ք. Երևան, Միլոդվական փողոց, 50/1 շենք, թիվ 41 հասցեում գտնվող 66,7 քմ ընդհանուր մակերեսով անշարժ գույքը: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ փոխառուն փոխատուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը (**հատոր 1-ին, գ.թ. 20-21**).

2) Թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ հաստատված է համարվել Արտակ Մարտիրոսյանի կողմից 12.03.2011 թվականին խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով Կարինե Երեմյանի՝ խոշոր չափերի՝ 2.871.484 ՀՀ դրամին համարժեք 7.700 ԱՄՆ դոլարը հափշտակելու փաստը, որի համար Արտակ Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (**հատոր 1-ին, գ.թ. 29-31**).

3) Սույն գործով հայցադիմումը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 28.04.2016 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 3-6**).

4) Նարինե Ասատրյանը 01.08.2016 թվականին Դատարան է ներկայացրել հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու հիմքով հայցը մերժելու մասին միջնորդություն՝ պատճառաբանելով, որ հայցվորների իրավունքների ենթադրյալ խախտման մասին վերջիններս իմացել են առնվազն 12.03.2011 թվականին պայմանագիրը կնքելիս (**հատոր 1-ին, գ.թ. 65-67**).

5) Թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռի վերաբերյալ վկայակոչվել է թե՛ Նարինե Ասատրյանի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանում, թե՛ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանների կողմից ներկայացված հայցի հիմքի լրացումում (**հատոր 1-ին, գ.թ. 65-67, 86-89**).

6) Սույն գործում առկա ապացույցների կազմից բացակայում է թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականի վճռի օրինակը:

4. Հարուկ կարծիքը հիմնավորող պարճառաբանությունները և եզրահանգումները.

Սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարու-

թյան օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ փոխառության պայմանագիրն անփոփոխության հիմքով վիճարկելու հայցապահանջների դեպքում հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ հոդվածների, 337-րդ հոդվածի 1-ին կետի, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում հարկ է անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կարող են ներմուծվել ապագայում կայացվելիք դատական ակտի բովանդակություն, եթե գործում առկա չեն նախադարձի համարվող վճիռը և դրա՝ օրինական ուժի մեջ մտած լինելը հավաստող ապացույցներ,

- ո՞ր փաստական հանգամանքների մասով է օրինական մեջ մտած դատավճիռը նախադարձի հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար,

- ո՞ր պահից պելք է հաշվարկել փոխառության պայմանագիրն անփոփոխության հիմքով վիճարկելու հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի սկիզբը:

ա) Վճռաբեկ բողոքի առաջին հիմքի վերաբերյալ հարկ է արձանագրել հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերոնշյալ իրավական նորմի վերլուծությանը, նշել է, որ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նույն անձանց միջև այլ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին:

Գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի

ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն՝ ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով՝ թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա: Հետևաբար նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ նախադատելիության օբյեկտիվ սահմանների որոշման համար էական նշանակություն ունի հետևյալ երկու դատավարական կանոնների պահպանումը՝

1) վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը դատարանը պարզում է միայն օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված և հետազոտված ապացույցների միջոցով (բացառություն են կազմում միայն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերը)։

2) դատարանը պարզում է միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ): Այս կանոնը կիրառելիս դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, որի փոփոխման բացառիկ իրավունքը պատկանում է հայցվորին (*տե՛ս, «Մաթնե՛» ՄԳԸ-ն ընդդեմ Աշուր և Հենրիկ Այվազյանների թիվ 3-93(ՎԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ զարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ համաձայն ընդհանուր կանոնի՝ նախադատելիությունն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ սահմաններ: Նախադատելիության օբյեկտիվ սահմանները կազմում են այն փաստական հանգամանքները, որոնք հաստատվել են ավելի վաղ քննված գործով օրինական ուժի մեջ մտած վճռով: Նախադատելիության սուբյեկտիվ սահմաններն այն անձինք են, որոնց համար դատական ակտով հաստատված հանգամանքներն ունեն նախադատելի նշանակություն: Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ փաստերը կարող են նախադատելի նշանակություն ունենալ այն անձանց համար, որոնք մասնակցել են գործի քննությանը (*տե՛ս, Մանյա Մանուկյանն ընդդեմ Աշխարակի քաղաքապետարանի թիվ ԱՐԱԴ/0209/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների համատեքստում հարկ է նշել, որ դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նույն անձանց միջև այլ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված փաստական հան-

գամանքներին: Այսինքն՝ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի համար նախադատելի են միայն այն հանգամանքները, որոնք հաստատվել են նույն անձանց միջև նախկինում քննված գործով կայացված դատական ակտով: Ընդ որում, որպեսզի արձանագրվի այս կամ այն դատական ակտի նախադատելիությունը, անհրաժեշտ է, որպեսզի նախկինում քննված գործով դատարանի կողմից կայացված դատական ակտը ստացած լինի օրինական ուժ՝ հաշվի առնելով, որ միայն այդ դեպքում է, որ դատական ակտը դառնում է վերջնական, իսկ դրանով հաստատված փաստերը չեն կարող դրվել կասկածի տակ: Այլ կերպ ասած՝ եթե դատական ակտը դեռևս չի մտել օրինական ուժի մեջ, կամ օրինական ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված հիմքերով բողոքարկվել և բեկանվել է, ապա դրանով հաստատված փաստերը չեն կարող դիտարկվել որպես նախադատելի նշանակություն ունեցող հանգամանքներ:

Բացի այդ, նախադատելի համարվող վճռով հաստատված փաստերի ներմուծումն ապագայում կայացվելիք դատական ակտի բովանդակություն իրենից ենթադրում է այդ ակտի բովանդակության ուսումնասիրություն, ըստ այդմ, նախադատելիության օբյեկտիվ և սուբյեկտիվ սահմանների որոշում, որից հետո միայն ներմուծում ապագայում կայացվելիք դատական ակտի բովանդակություն: Այլ կերպ ասած՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքներն ինքնաբերաբար չեն ներմուծվում ապագայում կայացվելիք դատական ակտի բովանդակություն, այլ գործում պետք է առկա լինի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որպիսի պայմաններում միայն դատարանը, հաշվի առնելով նախադատելիության ինստիտուտի կիրառման սահմանները, ապագայում կայացվելիք դատական ակտ իրավասու է ներմուծել նման հանգամանքները:

Վերոգրյալից հետևում է, որ դատավարության մասնակիցները, ազատված լինելով նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները կրկին ապացուցելու պարտականությունից, ազատված չեն համապատասխան ապացույցներ ներկայացնել նախկինում քննված քաղաքացիական գործով կայացված վճիռի և դրա՝ օրինական ուժի մեջ մտած լինելու հանգամանքի վերաբերյալ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռի վերաբերյալ վկայակոչվել է թե՛ Նարինե Ասատրյանի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանում, թե՛ Կարինե, Անդրանիկ, Վլադերի և Էդուարդ Երեմյանների կողմից ներկայացված հայցի հիմքի լրացումով, որոնցով յուրաքանչյուրն իր դիրքորոշման տեսանկյունից նշել է, որ այդ քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռով արդեն իսկ հաստատվել են այնպիսի հանգամանքներ, որոնք նախադատելի են սույն գործի համար և դրանց հակառակ փաստեր չէին կարող ապացուցվել:

Դատարանը, հայցը բավարարելով, նշել է, որ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված և 16.05.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները, այն է՝ «...անշարժ գույքի գրավի դիմաց կողմերի միջև կնքվել է փոխառության պայմանագիր, և որպես փոխառությամբ վերցված գումարի վերադարձնելիության երաշխիք Երևանի Մոլդովական փողոցի 50/1 շենքի թիվ 41 բնակարանը համասեփականատերերի կողմից գրավ է դրվել, ինչի հիման վրա էլ Նարինե Ասատրյանը հայցվորներին հանձնել է 5.475.000 դրամ՝ Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Փոխառուն փոխառուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումար»:

րը»», «...ինչ վերաբերվում է հայցվորների այն պնդմանը, որ ստացել են միմիայն 3.300 ԱՄՆ դոլար, իսկ մնացած 10.000 ԱՄՆ դոլարը Նարինե Ասատրյանը խոստացել է իրենց հանձնել որոշ ժամանակ անց, դատարանը գտավ, որ [իրավահարաբերության ծագման պահին գործող] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, մինչդեռ տվյալ դեպքում հայցվորները դատարանին չեն ներկայացրել որևէ ապացույց վերը նշվածի կապակցությամբ», սույն գործի համար ունեն նախադատելի նշանակություն և ներառել է սույն գործով կայացված վճռի բովանդակության մեջ:

Վերաքննիչ դատարանը, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ է նշել, որ ստորադաս դատարանները, նախադատելի համարելով թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռով հաստատված հանգամանքները, հաշվի չեն առել, որ նշված դատական ակտը, ինչպես նաև դրա՝ օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ ապացույցներ սույն քաղաքացիական գործում առկա չեն: Մասնավորապես՝ դատավարության մասնակիցները, իրենց դիրքորոշումներում վկայակոչելով նշված դատական ակտը, կատարել են հղում այդ ակտի բովանդակությանը, սակայն նրանցից որևէ մեկը դատարան չի ներկայացրել վկայակոչվող դատական ակտը և ապացույց դրա՝ օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ: Ինչպես արդեն իսկ նշվել է՝ դատավարության մասնակիցները, ազատված լինելով կրկին ապացուցել նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև մեկ այլ գործ քննելու ընթացքում, ազատված չեն ապացույցներ ներկայացնել նախկինում քննված քաղաքացիական գործով կայացված վճռի, ինչպես նաև դրա՝ օրինական ուժի մեջ մտած լինելու վերաբերյալ: Հետևաբար սույն պարագայում պետք է Դատարան ներկայացվելին համապատասխան ապացույցներ վճռի և դրա՝ օրինական ուժի մեջ մտած լինելու վերաբերյալ, որպիսի պայմաններում միայն Դատարանն իրավասու կլիներ ապագայում կայացվելիք դատական ակտի բովանդակության մեջ ներառել նախադատելի համարվող փաստական հանգամանքները՝ նախադատելիության սահմանների որոշմամբ, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Ավելին՝ ստորադաս դատարաններն անտեսել են նաև այն հանգամանքը, որ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռի բովանդակության ուսումնասիրության արդյունքում կարող էր հաստատապես հիմնավորվել հայցային վաղեմության ժամկետի սկիզբը, որին անդրադարձ կկատարվի ստորև շարադրվելիք պատճառաբանություններում:

բ) Վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի վերաբերյալ հարկ է արձանագրել հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վկա-

յակոչված հողվածի մեկնաբանությանը, նշել է, որ [իրավահարաբերության ծագման պահին գործող] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նախադատելի (պրեյտիզիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար՝ հետևյալ շրջանակներում.

1. կատարվել են արդյոք որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը),

2. արդյոք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից:

Այլ հարցերով դատավճիռը քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով պարտադիր չէ: Օրինակ՝ դատավճռով հաստատված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, ինչպես նաև այդ վնասի հատուցման պահանջի առկայությունը կամ բացակայությունը նախադատելի չէ, և այդ հարցը ենթակա է ապացուցման ընդհանուր հիմունքներով, չնայած որ դրանք հաստատված են դատավճռով (*տե՛ս, Կարասյեյր Գրայսյանն ընդդեմ Արոմ Դազազյանի թիվ 3-1091(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Այլ կերպ ասած՝ հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար քրեական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է միայն հանցագործության օբյեկտիվ կողմի և հանցագործության սուբյեկտի մասով հաստատված փաստերի շրջանակներում, իսկ այդ շրջանակներից դուրս պրեյտիզիալ կապ գոյություն ունենալ չի կարող:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանների և Նարինե Ասատրյանի միջև 12.03.2011 թվականին կնքվել է բնակարանի գրավի (հիփոթեքի) և

փոխառության պայմանագիր, որով Նարինե Ասատրյանը Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններին փոխառությամբ տվել է 5.475.000 ՀՀ դրամ, որը վերջիններս պարտավորվել են վերադարձնել երկու ամսվա ընթացքում, և ի սպառնալուծում նշված պարտավորության կատարման՝ գրավադրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ ք. Երևան, Մոլդովական փողոց, 50/1 շենք, թիվ 41 հասցեում գտնվող 66,7 քմ ընդհանուր մակերեսով անշարժ գույքը: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ փոխառուն փոխատուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը:

Թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ հաստատված է համարվել Արտակ Մարտիրոսյանի կողմից 12.03.2011 թվականին խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով Կարինե Երեմյանի՝ խոշոր չափերի՝ 2.871.484 ՀՀ դրամին համարժեք 7.700 ԱՄՆ դոլարը հափշտակելու փաստը, որի համար Արտակ Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, ի թիվս այլնի նշել է, որ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՇԴ/0092/01/12 օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք, այն է՝ կատարվել է հանցագործություն, նշված արարքը կատարել է Արտակ Մարտիրոսյանը, Նարինե Ասատրյանի կողմից տրվել է 11.000 ԱՄՆ դոլար, այդ գումարից 3.300 ԱՄՆ դոլար գումարն է Արտակ Մարտիրոսյանը տվել Անդրանիկ Երեմյանին, իսկ մնացած 7.700 ԱՄՆ դոլարը խաբեությամբ և վստահությունը չարաշահե-

լու եղանակով հափշտակել», արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերը նշված օրինական ուժի մեջ մտած դատավճռով սույն վեճի լուծման համար արդեն իսկ հաստատվել են հանգամանքներ, որոնք այլևս կրկին ապացուցման ենթակա չեն, հետևաբար «սման պայմաններում Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի կողմից 12.03.2011 թվականի փոխառության պայմանագիրը 4.300.000 ՀՀ դրամ գումարի չափով չկնքված համարելու եզրահանգումը»:

Մինչդեռ վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ հարկ է նշել, որ սույն գործի փաստերից հետևում է, որ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ հաստատված է համարվել Արտակ Մարտիրոսյանի կողմից 12.03.2011 թվականին խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով Կարինե Երեմյանի՝ խոշոր չափերի՝ 2.871.484 ՀՀ դրամին համարժեք 7.700 ԱՄՆ դոլարը հափշտակելու փաստը, որի համար Արտակ Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Վերոգրյալ քրեական գործով կայացված դատավճիռը նախադատելի նշանակություն ունի միայն հանցագործության օբյեկտիվ կողմի մասով, այսինքն՝ տեղի է ունեցել Կարինե Երեմյանից հափշտակություն 2.871.484 ՀՀ դրամին համարժեք 7.700 ԱՄՆ դոլարի չափով՝ խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով, ինչպես նաև հանցագործության սուբյեկտի մասով, այն է՝ հանցագործությունը կատարվել է Արտակ Մարտիրոսյանի կողմից: Այսինքն՝ հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար քրեական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է միայն հանցագործության օբյեկտիվ կողմի և հանցագործության սուբյեկտի մասով հաստատված փաստերի շրջանակներում, իսկ այդ շրջանակներից դուրս պրեյդիկտիվ կապ գոյություն ունենալ չի կարող: Ուստի ստորադաս դատարանները, հղում կատարելով թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքներին, չէին կարող կատեգորիկ հետևություններ անել Կարինե Երեմյանի կողմից փոխառությամբ ստացված գումարի հստակ չափի վերաբերյալ, քանի որ դատավճռով հաստատված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, ինչպես նաև այդ վնասի հատուցման պահանջի առկայությունը կամ բացակայությունը նախադատելի չէ, և այդ հարցը ենթակա է ապացուցման ընդհանուր հիմունքներով, որպիսի հանգամանքը նույնպես անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Ավելին՝ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճիռը վերաբերել է Արտակ Մարտիրոսյանի կողմից Կարինե Երեմյանի գույքը հափշտակելուն, այլ ոչ Նարինե Ասատրյանի կողմից հանձնվող գույքին, որպիսի փաստը նույնպես անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Բացի այդ, թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռի բովանդակությունից հետևում է, որ հափշտակությունը տեղի է ունեցել 2.871.484 ՀՀ դրամին համարժեք 7.700 ԱՄՆ դոլարի չափով, այսինչ սույն քաղաքացիական գործով վեճը վերաբերում է 4.300.000 ՀՀ դրամի մասով փոխառության գումարը հանձնված չլինելուն, ինչը նույնպես վկայում է այն մասին, որ հանձնված գումարների չափը ենթակա էր ապացուցման այլ թույլատրելի և վերաբերելի ապացույցների միջոցով, իսկ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով դատավճռից հստակ հետևություններ անել ենթադրաբար հանձնված գու-

մարի հստակ չափի մասին, հնարավոր չէ, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

զ) Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքի վերաբերյալ հարկ է արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել մինևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առոչինչ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե փոխառության պայմանագիրը նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերով վիճարկելիս պարզվում է, որ փոխառուն դրամը կամ այլ գույքն իրականում չի ստացել փոխատուից, փոխառության պայմանագիրը համարվում է չկնքված: Եթե դրամը կամ այլ գույքը փոխառուն փոխատուից ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով, պայմանագիրը կնքված է համարվում ստացված քանակի գումարի կամ գույքի չափով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերոգրյալ նորմերի վերլուծությանը, նշել է, որ փոխառության պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով փոխատուն փոխառուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխատուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: **Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրանով նախատեսված դրամը կամ այլ գույքը հանձնելու պահից:** Փոխառության պայմանագրից բխող իրավահարաբերություններում փոխառուին իրավունք է վերապահված վիճարկել փոխառության պայմանագիրն այն դեպքում, երբ նա ապացուցում է, որ փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով (*յրեն, Վահե Սահակյանն ընդդեմ Լեոնիդ Ներսիսյանի թիվ ԵՔԳ/0916/02/08 գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը):

Այսպիսով փոխառության պայմանագիրը կարող է վիճարկվել, ի թիվս այլնի, անփողության հիմքով, որպիսի փաստը հաստատվելու պարագայում փոխառության պայմանագիրը

կհանարվի չկնքված, կամ այն պարագայում, երբ կհիմնավորվի, որ պայմանագրում նշվածից ավելի պակաս չափով գումար կամ գույք է ստացվել, ապա պայմանագիրը կնքված կհամարվի ստացված գումարի չափով կամ գույքի մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է վիճող կողմի դիմումի հիման վրա: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն **իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին**: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով, գործարքով սահմանված կամ դատարանի նշանակած ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ **այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը**:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*տես, Մերգելյ Սարգսյանն ընդդեմ Արա Սարգսյանի և մյուսների թիվ ԵԿԿ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հիման վրա հարկ է արձանագրել, որ փոխառության պայմանագիրը կարող է կնքված համարվել միայն այն դեպքում, երբ հիմնավորվում է պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու փաստը: Միաժամանակ պետք է հավելել, որ անփողության հանգամանքը ողջամտորեն կարող է հայտնի լինել փոխառուին պայմանագիրը ստորագրելիս, որում առկա է նշում փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը ստանալու մասին կամ այն փաստաթուղթը կազմելիս, երբ կողմերը փոխադարձաբար ամրագրում են փոխառությամբ սահմանված դրամը կամ գույքը փոխառուին հանձնելու փաստը: Ուստի փոխառության պայմանագիրն անփողության հիմքով վիճարկելու հայցապահանջի նկատմամբ կիրառման ենթակա հայցային վաղեմության ժամկետը պետք է հաշվարկել փոխառությամբ սահմանված դրամը կամ գույքը փոխառուին հանձնելու փաստը որևէ եղանակով ամրագրելու պահին հաջորդող օրվանից: Նման դատողությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մի կողմից օրենսդիրը փոխառության պայմանագ-

րի կնքվածությունն անմիջականորեն կախվածության մեջ է դրել փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու փաստից, իսկ մյուս կողմից հայցային վաղեմության ժամկետների հոսքի սկիզբն օրենսդիրը պայմանավորել է այնպիսի հանգամանքների ուժով, որպիսի պայմաններում անձը հաստատապես իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին: Վերոգրյալից հետևում է, որ պայմանագրում նշված դրամը կամ գույքը ստացված չլինելու հանգամանքը ողջամտորեն պետք է հայտնի լինի փոխառուին անմիջապես այն դեպքում, երբ վերջինս հավաստում է դրամը կամ գույքը ստանալու փաստը: Տվյալ պարագայում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորվում է փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու փաստն ամրագրելու (գրավոր ձևակերպելու) իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից:

Սույն գործով 28.04.2016 թվականին դիմելով դատարան՝ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյանները պահանջել են 12.03.2011 թվականին կնքված փոխառության պայմանագիրը կնքված համարել 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամի չափով, իսկ 4.300.000 ՀՀ դրամի մասով համարել չկնքված: Նարինե Ասատրյանը 01.08.2016 թվականին Դատարան է ներկայացրել հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու հիմքով հայցը մերժելու մասին միջնորդություն՝ պատճառաբանելով, որ հայցվորների իրավունքների ենթադրյալ խախտման մասին վերջիններս իմացել են առնվազն 12.03.2011 թվականին փոխառության պայմանագիրը կնքելիս:

Դատարանը, հայցը բավարարելով, ի թիվս այլնի, նշել է, որ «հայցվորներն իրենց իրավունքի խախտման մասին իմացել են Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 2014 թվականի մարտի 31-ին կայացված դատավճռից, որն ուժի մեջ է մտել 08.08.2014 թվականին, հետևաբար հայցվորների համար սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումը դատարան ներկայացնելու հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվել է այդ օրվանից, այսինքն՝ 08.08.2014 թվականից, ուստի հայցադիմումը կարող էր ներկայացվել մինչև 08.08.2017 թվականը, հետևաբար այն ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետի ընթացքում»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Նարինե Ասատրյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ հարկ է արձանագրել հետևյալը.

Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններն 12.03.2011 թվականին կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագրի 1.2 կետով հավաստել են փոխառության գումարը ստանալու փաստը՝ արձանագրելով, որ փոխառուն փոխառուից վերցրեց 5.475.000 ՀՀ դրամը, որը պարտավորվում է վերադարձնել: Եվս մեկ անգամ անհրաժեշտ է ընդգծել, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ **պետք է իմացած լիներ** իր իրավունքի խախտման մասին, **որը կարող է պայմանավորված լինել այս կամ այն իրադարձության վրա հասնելու հետ**: Այսինքն՝ օրենսդիրն իրավունքի խախտման մասին անձի տեղեկացված լինելը պայմանավորել է տվյալ անձի կողմից այդ մասին հաստատապես իմանալու հանգամանքով կամ

որոշակի հիմքերի առկայության դեպքում այդ մասին ողջամտորեն տեղեկացված լինելու կանխավարկածով: Ընդ որում, եթե առաջին դեպքում շահագրգիռ անձի իրազեկվածության փաստը կարող է հաստատվել ուղղակի ապացույց(ներ)ով, ապա մյուս դեպքում նման հետևությունը կարող է բխեցվել նաև գործի հանգամանքներից: Տվյալ պարագայում պայմանագրի կողմերի կողմից գումարը ստանալու փաստի ամրագրումը գրավոր եղանակով **կարող է** դիտարկվել գումարը հանձնելու իրադարձություն, որով էլ օրենսդիրը պայմանավորել է փոխառության պայմանագրի կնքված լինելու հանգամանքը, և դրա հաջորդ օրվանից հնարավոր է հաշվարկվի փոխառուի կողմից փոխառության պայմանագրի՝ անփողության հիմքով վիճարկման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետը: Այսինքն՝ նշված փաստի արձանագրման պահին, եթե փոխառուն փաստացի ստացել է պայմանագրով նշված փոխառության գումարից ավելի պակաս գումար, ողջամտորեն պետք է իմանար իր իրավունքների ենթադրյալ խախտման մասին: Սույն դեպքում Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանները և Նարինե Ասատրյանը, 12.03.2011 թվականին կնքելով բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիրը, դրանում ամրագրել են նաև գումարը հանձնելու և ստանալու իրողությունը, որի հաջորդ օրվանից՝ 13.03.2011 թվականից, ողջամտորեն ենթադրվում է, որ հայցվորները պետք է իմանային նաև իրենց իրավունքների խախտման փաստի վերաբերյալ:

Միաժամանակ, ըստ բողոքաբերի փաստարկների՝ Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանները ձեռնամուխ են եղել իրենց ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանությանը դեռևս 2011 թվականին թիվ ԵՄԴ/0722/02/011 քաղաքացիական գործի շրջանակներում՝ դատարանից պահանջելով անվավեր ճանաչել իրենց և Նարինե Ասատրյանի միջև 12.03.2011 թվականին կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիրը: Վերոգրյալ փաստարկից հետևում է, որ սույն գործով հայցվորների կողմից իրենց իրավունքների խախտման փաստի իրազեկվածությունը կարող է հիմնավորվել ոչ միայն ողջամտորեն հիմնավորվող կանխավարկածով, այլև ուղղակի ապացույցով՝ թիվ ԵՄԴ/0722/02/011 քաղաքացիական գործով կայացված վճռով, որով կարող է հաստատուպես հիմնավորվել հայցային վաղեմության ժամկետի սկիզբը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է սակայն, որ նշված վճիռն առկա չէ սույն գործում, այն դեպքում, երբ կողմերը փաստարկել են դրա գոյությունը, ինչն այդուհանդերձ անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն նշված վճռի առկայության և հետագոտման պայմաններում է հնարավոր պարզել՝ արդյոք սույն գործով և նախկինում քննված գործով հայցվորները մինևս անձինք են, ինչ փաստական և իրավական հիմքերով է հայցը հարուցվել և ինչ պահանջ է ներկայացվել նախկինում քննված գործի շրջանակներում: Վերը նշված հանգամանքների բացահայտումն էական նշանակություն կարող է ունենալ սույն գործով հայցվորների կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտման փաստի իրազեկվածությունը հաստատուպես պարզելու և գնահատելու համար:

Նման պայմաններում սույն գործով առկա էր նոր քննության անհրաժեշտություն՝ վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո հայցային վաղեմության ժամկետի սկիզբը հաստատուպես որոշելու համար:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է՝ սույն վճռաբեկ բողոք-

քը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Հատուկ կարծիքը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում գործը պետք է ուղարկվեր նոր քննության, այդ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէր անդրադառնալ գործի քննության ներկա փուլում:

Վերոգրյալ պատճառաբանություններից ելնելով՝ գտնում են, որ սույն գործով վճռաբեկ բողոքը ենթակա էր բավարարման, այն է՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2017 թվականի որոշումը պետք է բեկանվեր և գործն ուղարկվեր Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության, իսկ դատական ծախսերի բաշխման հարցին պետք էր անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ե. Խունդկարյան

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵՄԴ/1252/02/16 քաղաքացիական գործով 29.03.2019 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան), գրավոր ընթացակարգով քննելով Նարինե Ասատրյանի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանների ընդդեմ Նարինե Ասատրյանի, երրորդ անձինք ՀՀ նոտարական պալատի, Արտակ Մարտիրոսյանի՝ 12.03.2011 թվականին կնքված փոխառության պայմանագիրը 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամի չափով կնքված, իսկ 4.300.000 ՀՀ դրամի մասով չկնքված համարելու պահանջների մասին, 2019 թվականի մարտի 29-ին որոշել է «Վճարելի բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայք մերժել: Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյաններից համապարտության կարգով հոգուտ Նարինե Ասատրյանի բռնագանձել 8.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար»:

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Ս. Անտոնյանս, համաձայն չլինելով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 29.03.2019 թվականին թիվ ԵՄԴ/1252/02/16 քաղաքացիական գործով կայացված որոշման պատճառաբանական մասի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում են հատուկ կարծիքս նույն որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ:

1. Գործի դարավարական նախապայմանությունը.

Ինչպես վճարարան՝ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանները պահանջել են 12.03.2011 թվականին կնքված փոխառության պայմանագիրը կնքված համարել 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամի չափով, իսկ 4.300.000 ՀՀ դրամի մասով համարել չկնքված:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 13.07.2017 թվականի վճարելի հայցը բավարարվել է՝ 12.03.2011 թվականին Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյանների և Նարինե Ասատրյանի միջև կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության խառը պայմանագիրը կնքված է համարվել 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամ գումարի չափով, իսկ 4.300.000 ՀՀ դրամ գումարի մասով համարվել է չկնքված:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.11.2017 թվականի որոշմամբ Նարինե Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.07.2017 թվականի վճարելի թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճարելի բողոք է ներկայացրել Նարինե Ասատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կարինե Երեմյանի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ հոդվածները, 337-րդ հոդվածի 1-ին կետը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, հաշվի չի առել այն հանգամանքը, որ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռով արդեն իսկ հաստատվել են այնպիսի հանգամանքներ, որոնք նախադատելի են սույն գործի համար և դրանց հակառակ փաստեր չէին կարող ապացուցվել:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով կայացված դատավճռով հաստատված փաստերը նախադատելի չէին կարող լինել սույն գործի համար, քանի որ նախկինում քննված թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով արդեն իսկ հաստատվել է այն հանգամանքը, որ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանները ստացել են փոխառության գումարը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել հայցային վաղեմության ժամկետները կարգավորող իրավանորմերը և այդ ժամկետի հաշվարկը սկսելով թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով կայացված դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցվորներն իրենց իրավունքների ենթադրյալ խախտման մասին իմացել են ավելի վաղ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.11.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանների հայրը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանը կատարել է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ճիշտ է որոշել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը և սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի օրենսդրությունը: Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են և պատճառաբանված, ուստի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանների և Նարինե Ասատրյանի միջև 12.03.2011 թվականին կնքվել է բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիր, որով Նարինե Ասատրյանը Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյանների փոխառությամբ տվել է 5.475.000 ՀՀ դրամ, որը վերջիններս պարտավորվել են վերադարձ-

նել երկու ամսվա ընթացքում, և ի ապահովումն նշված պարտավորության կատարման՝ գրավադրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ Երևանի Մոլդովական փողոց, 50/1 շենք, թիվ 41 հասցեում գտնվող 66,7քմ ընդհանուր մակերեսով անշարժ գույքը: Նշված պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ «փոխառուն փոխատուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը...» (**հատոր 1-ին, գ.թ. 20-21**).

2) Թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճի համաձայն՝ Արտակ Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 12.03.2011 թվականին Շենգավիթի նոտարական գրասենյակում միջնորդել է Վալերի, Անդրանիկ, Կարինե և Էդուարդ Երեմյանների գրավի (հիպոթեքի) փոխառության պայմանագիր կնքել Նարինե Ասատրյանի հետ, որով գրավադրվել է Երեմյաններին պատկանող Երևան քաղաքի Մոլդովական փողոցի 50/1 շենքի 41-րդ բնակարանը, որից հետո պայմանագրով նախատեսված և Նարինե Ասատրյանի կողմից տրված 11.000 ԱՄՆ դոլարից 3.300 ԱՄՆ դոլարը տվել է Ա. Երեմյանին, իսկ մնացած 7.700 ԱՄՆ դոլարը խաբեությամբ և Ա.Երեմյանի վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել է նրանից՝ վերջինիս պատճառել 2.871.484 ՀՀ դրամի գույքային վնաս: Նշված դատավճռով հաստատվել է Արտակ Մարտիրոսյանի կողմից 12.03.2011 թվականին խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով Կարինե Երեմյանին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու փաստը, որի համար Արտակ Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (**հատոր 1-ին, գ.թ. 32-34**).

3) Սույն գործով հայցադիմումը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 28.04.2016 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 3-6**).

4) Նարինե Ասատրյանը 01.08.2016 թվականին Դատարան է ներկայացրել հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու հիմքով հայցը մերժելու մասին միջնորդություն՝ պատճառաբանելով, որ հայցվորների իրավունքների ենթադրյալ խախտման մասին վերջիններս իմացել են առնվազն 12.03.2011 թվականին պայմանագիրը կնքելիս, բացի այդ՝ արդեն իսկ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործի շրջանակներում վերջիններս ձեռնամուխ են եղել իրենց իրավունքների պաշտպանությանը (**հատոր 1-ին, գ.թ. 65-67**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ փոխառության պայմանագիրն անփոփոխյան հիմքով վիճարկելու հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու առանձնահատկությունների մասին, կարևոր նշանակություն կունենա նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ հոդվածների, 337-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. ո՞ր պահից պետք է սկսվի փոխառության պայմանագիրը գումարը չստանալու կամ ավելի պակաս չափով ստանալու հիմքով վիճարկելու համար հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբն այն պարագայում, երբ փոխառության պայմանագրով կողմերը հասարարել են գումարը տրալու և ստանալու փաստը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է վիճող կողմի դիմումի հիման վրա: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն **իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին**: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով, գործարքով սահմանված կամ դատարանի նշանակած ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ **այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը**:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ժամկետը, սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*տե՛ս, Սերգեյ Սարգսյանն ընդդեմ Արա Սարգսյանի և մյուսների թիվ ԵԿԿ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուսկողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխատուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ

փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: **Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից **փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխառուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխառուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածների վերլուծությանը՝ դիրքորոշում հայտնելով այն մասին, որ փոխառության պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով փոխառուն փոխառուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխառուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: **Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամով նախատեսված դրամը կամ այլ գույքը հանձնելու պահից** (*Կրևս, Վահե Մահակյանն ընդդեմ Լեոնիդ Ներսիսյանի թիվ ԵԲԴ/0916/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով վերոգրյալ դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ օրենսդիրը, փոխառության պայմանագրի համար պարտադիր համարելով գրավոր ձևը, ապացույցների թույլատրելիության շրջանակը սահմանափակել է միայն **գրավոր ապացույցներով...**: Օրենսդիրը, պարտադիր համարելով փաստաթղթի ներկայացումը, չի սահմանել գրավոր ապացույցների սպառիչ ցանկ՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող ցանկացած գրավոր ապացույց, որը կհաստատի փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը (*Կրևս, Հրանտ Ավերիսյանն ընդդեմ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/4542/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փոխառության պայմանագիրը կարող է կնքված համարվել միայն այն դեպքում, երբ առկա են պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու վերաբերյալ գրավոր ապացույցներ: Այսինքն՝ օրենսդիրը փոխառության պայմանագրի կնքվածությունն անմիջականորեն կախվածության մեջ է դրել փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը հանձնելու փաստից, ինչը ենթադրում է, որ նշված դրամը կամ գույքը ստացված չլինելու հանգամանքը ողջամտորեն պետք է հայտնի լինի փոխառուին անմիջապես այն պահին, երբ վերջինս հավաստում է դրամը կամ գույքը ստանալու փաստը: Այսպես, բոլոր այն դեպքերում, երբ

փոխառության պայմանագրով սահմանված դրամը կամ գույքը ստանալու մասին փոխառության պայմանագրում կատարվում է հատուկ նշում, ապա պայմանագիրը ստորագրելու փաստով փոխառուն հաստատում է դրամը կամ գույքը ստանալու հանգամանքը: Ուստի, եթե դրամը կամ գույքը ստանալու մասին հատուկ նշում պարունակող փոխառության պայմանագիրը ստորագրելու պահին փոխառուն չի ստանում դրամում նշված գումարը կամ գույքը, ապա այդ պահից սկսած վերջինիս հայտնի է դառնում իր իրավունքների խախտման մասին, հետևաբար իր խախտված իրավունքների վերականգնման նպատակով դատական պաշտպանության փոխառուն պետք է դիմի օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետի ընթացքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ փոխառության պայմանագիրն անփողության հիմքով վիճարկելու հայցային վաղեմության ժամկետը պետք է հաշվարկել փոխառությամբ սահմանված դրամը կամ գույքը փոխառուին հանձնելու փաստը որևէ եղանակով ամրագրելու պահին հաջորդող օրվանից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանների և Նարինե Ասատրյանի միջև 12.03.2011 թվականին կնքվել է բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիր, որով Նարինե Ասատրյանը Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններին փոխառությամբ տվել է 5.475.000 ՀՀ դրամ, որը վերջիններս պարտավորվել են վերադարձնել երկու ամսվա ընթացքում, և ի սպառնալու մասին նշված պարտավորության կատարման՝ գրավադրել են սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ Երևանի Մոլդովական փողոց, 50/1 շենք, թիվ 41 հասցեում գտնվող 66,7քմ ընդհանուր մակերեսով անշարժ գույքը: Նշված պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ փոխառուն փոխառուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը:

Նարինե Ասատրյանը 01.08.2016 թվականին Դատարան է ներկայացրել հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու հիմքով հայցը մերժելու մասին միջնորդություն՝ պատճառաբանելով, որ հայցվորների իրավունքների ենթադրյալ խախտման մասին վերջիններս իմացել են առնվազն 12.03.2011 թվականին պայմանագիրը կնքելիս, բացի այդ՝ արդեն իսկ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործի շրջանակներում վերջիններս ձեռնամուխ են եղել իրենց իրավունքների պաշտպանությանը:

Դիմելով դատարան՝ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյանները պահանջել են 12.03.2011 թվականին կնքված փոխառության պայմանագիրը կնքված համարել 3.300 ԱՄՆ դոլարին համարժեք 1.200.000 ՀՀ դրամի չափով, իսկ 4.300.000 ՀՀ դրամի մասով համարել չկնքված:

Դատարանը, հայցը բավարարելով, նշել է, որ թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված և 16.05.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները, այն է՝ «...անշարժ գույքի գրավի դիմաց կողմերի միջև կնքվել է փոխառության պայմանագիր, և որպես փոխառությամբ վերցված գումարի վերադարձնելիության երաշխիք Երևանի Մոլդովական փողոցի 50/1 շենքի թիվ 41 բնակարանը համասեփականատերերի կողմից գրավ է դրվել, ինչի հիման վրա էլ Նարինե Ասատրյանը հայցվորներին հանձնել է 5.475.000 դրամ՝ Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Փոխառուն փոխառուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը», «...ինչ վերաբերվում է հայցվորների այն պնդմանը, որ ստացել են միմիայն 3.300 ԱՄՆ դոլար, իսկ մնացած 10.000 ԱՄՆ դոլարը Նարինե Ասատրյանը խոստացել

է իրենց հանձնել որոշ ժամանակ անց, դատարանը գտավ, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, մինչդեռ տվյալ դեպքում հայցվորները դատարանին չեն ներկայացրել որևէ ապացույց վերը նշվածի կապակցությամբ», ինչպես նաև թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքները նախադատելի նշանակություն ունեն սույն գործի համար: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ հիմնավորվում է այն փաստը, որ Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանները Նարինե Ասատրյանից ստացել են 1.200.000 ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, իսկ պայմանագրով նախատեսված մնացած՝ 4.300.000 ՀՀ դրամը, չեն ստացել, ուստի այդ մասով պայմանագիրը պետք է համարվի չկնքված: *Քացի այդ, Դատարանը, անդրադառնալով հայցային վաղեմության ժամկետն անցնելու հիմքով հայցը մերժելու մասին Նարինե Ասատրյանի կողմից ներկայացված միջնորդությանը, գրել է, որ այն ենթակա է մերժման, քանի որ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններն իրենց իրավունքների խախտման մասին իմացել են թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված դատավճռից, որի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ 08.08.2014 թվականից պետք է հաշվարկել հայցային վաղեմության եռամյա ժամկետը, որպիսի պայմաններում հայցվորները բաց չեն թողել հայցային վաղեմության ժամկետը:*

Վերաքննիչ դատարանը, մերժելով Նարինե Ասատրյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններն 12.03.2011 թվականին կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագրի 1.2-րդ կետով հավաստել են փոխառության գումարը ստանալու փաստը՝ արձանագրելով, որ փոխառուն փոխառուից վերցրեց 5.475.000 ՀՀ դրամը, որը պարտավորվում է վերադարձնել:

Դատարանը հայցային վաղեմության ժամկետն անցնելու հիմքով հայցը մերժելու մասին Նարինե Ասատրյանի կողմից ներկայացված միջնորդությունը մերժել է՝ գտնելով, որ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններն իրենց իրավունքների խախտման մասին իմացել են թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված դատավճռից, որի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ 08.08.2014 թվականից պետք է հաշվարկել հայցային վաղեմության եռամյա ժամկետը, որպիսի պայմաններում հայցվորները բաց չեն թողել հայցային վաղեմության ժամկետը, ինչը հիմնավոր է համարել նաև Վերաքննիչ դատարանը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված պատճառաբանությանը, հարկ է համարել նշել, որ Վալերի, Կարինե, Անդրանիկ և Էդուարդ Երեմյաններն 12.03.2011 թվականին կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագրով հավաստել են գումարը ստանալու փաստը՝ արձանագրելով, որ փոխառուն փոխառուից վերցրեց 5.475.000 ՀՀ դրամը, որը պարտավորվում է վերադարձնել: Այսինքն՝ նշված փաստի արձանագրման

պահին, եթե իրականում փոխառուն ստացել է պայմանագրով նշված փոխառության գումարից ավելի պակաս գումար, ապա փոխառուն իր իրավունքի խախտման մասին իմացել է հենց այդ ժամանակ: Ավելին, թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է Արտակ Մարտիրոսյանի կողմից 12.03.2011 թվականին խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով Կարինե Երեմյանին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու փաստը, ինչի հետևանքով էլ վերջինս այդ քրեական գործով ճանաչվել է տուժող: Այսինքն՝ նշված դատավճիռը վերաբերել է Արտակ Մարտիրոսյանի կողմից Կարինե Երեմյանի գույքը հափշտակելուն, այլ ոչ Նարինե Ասատրյանի կողմից հանձնվող գույքին, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արտակ Մարտիրոսյանի կողմից Կարինե Երեմյանի գույքը հափշտակելու փաստը հաստատված լինելն ինքնին վկայում է այն մասին, որ հանցագործությամբ վնասը պատճառվել է հենց Կարինե Երեմյանին, իսկ դատավճռով հաստատված հանցագործությամբ պատճառված վնասի չափի, ինչպես նաև այդ վնասի հատուցման պահանջի առկայության կամ բացակայության մասով դատավճիռը սույն գործով նախադատելի չէ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 12.03.2011 թվականին կնքված բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիրը դրանում նշված գումարը հայցվորների կողմից ստանալու փաստը հաստատող ուղղակի ապացույց է հանդիսանում, որի 1.2-րդ կետի համաձայն՝ «փոխառուն փոխատուից վերցրեց սույն պարտավորության էությունը կազմող 5.475.000 ՀՀ դրամ գումարը», իսկ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պայմանագրում նշված գումարը հայցվորների կողմից ստանալու փաստը հաստատող անուղղակի ապացույց է, քանի որ դրանից ակնհայտ է դառնում, որ Արտակ Մարտիրոսյանը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել Կարինե Ասատրյանին՝ հափշտակելով Նարինե Ասատրյանի կողմից 12.03.2011 թվականի պայմանագրով տրված գումարի մի մասը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե 12.03.2011 թվականի պայմանագիրը ստորագրելու պահին հայցվորներն իսկապես չեն ստացել դրամում նշված գումարն ամբողջությամբ, ապա այդ պահից սկսած նրանց հայտնի է դարձել գումարի մի մասը ստացած չլինելու մասին:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձ իմացել է կամ պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին, որը կարող է պայմանավորված լինել այս կամ այն իրադարձության վրա հասնելու հետ: Տվյալ պարագայում պայմանագրի կողմերի կողմից գումարը ստանալու փաստի ամրագրումը գրավոր եղանակով կարող է դիտարկվել գումարը հանձնելու իրադարձություն, որով էլ օրենսդիրը պայմանավորել է փոխառության պայմանագրի կնքված լինելու հանգամանքը, և դրա հաջորդ օրվանից պետք է հաշվարկվի փոխառուի կողմից փոխառության պայմանագրի՝ անփոփոխության հիմքով վիճարկման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Վալերի, Կարինե, Անդրանիկ, Էդուարդ Երեմյանները և Նարինե Ասատրյանը, 12.03.2011 թվականին կնքելով բնակարանի գրավի (հիփոթեքի) և փոխառության պայմանագիրը, դրանում ամրագրել են նաև գումարը հանձնելու և ստանալու իրողությունը, որի հաջորդ օրվանից՝ 13.03.2011 թվականից, պետք է հաշվարկվի

փոխառուի՝ անփողության հիմքով փոխառության պայմանագիրը վիճարկելու նկատմամբ հայցային վաղեմության եռամյա ժամկետի սկիզբը: Այսինքն՝ տվյալ պարագայում հայցային վաղեմության եռամյա ժամկետը լրացել է 13.03.2014 թվականին: Վճարել դատարանն արձանագրել է, որ Կարինե, Անդրանիկ, Վալերի և Էդուարդ Երեմյանների կողմից հայցադիմումը Երևան քաղաքի Մայրթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 28.04.2016 թվականին, այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո, ինչն արդեն բավարար հիմք է հայրը մերժելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով հայցը ենթակա է մերժման՝ Վճարել դատարանը չի անդրադարձել Վերաքննիչ դատարանի կողմից գործում առկա ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ քննություն չիրականացնելու և թիվ ԵՄԴ/0722/02/11 քաղաքացիական գործով 15.11.2011 թվականին կայացված վճռով (որը սույն գործից բացակայում է) արդեն իսկ հաստատված նախադատելի հանգամանքներն անտեսելու վճարել բողոքում նշված հիմքերին և հիմնավորումներին:

Վճարել բողոքի պարասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պատճառարանություններով:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտել է բավարար՝ սույն վճարել բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Գտնում են որ բողոքը ենթակա էր բավարարման բացառապես հայցն անհիմն լինելու հիմքով հետևյալ պատճառարանությամբ.

Հարցը կայանում է նրանում, որ փոխառության պայմանագիրը կարող է վիճարկվել և անփողության հիմքով և որպես վիճահարույց գործարք: Կախված այն հանգամանքից, թե ինչ իրավական հիմքով է իրականացվում փոխառության պայմանագրի վիճարկումը, հնարավոր են տարբեր իրավական հետևանքներ:

Այսպես, փոխառության պայմանագրի վիճարկումը որպես վիճահարույց գործարք կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերության և անվավերության հետևանքների կիրառման:

Մինչդեռ փոխառության պայմանագիրը անփողության հիմքով վիճարկելու դեպքում պայմանագիրը ոչ թե անվավեր է ճանաչվում, այլ համարվում է չկնքված՝ հիմք հանդիսանալով փոխառուի կողմից փոխառության պարտավորության կատարման պահանջը մերժելու համար:

Հատկանշական է, որ անփողության հիմքով պայմանագրի վիճարկումը բացառում է փոխառության պայմանագրի անվավերության պահանջի քննարկումը և հետևաբար անվավերության հետևանքների կիրառումը: Դրա հետ մեկտեղ չպետք է անտեսել նաև ապացուցման ենթակա փաստերի շրջանակի էական տարբերությունը: Եթե գործարքի անվավերության համար էական է գործարքի՝ օրենքների և իրավական ակտերի հետ անհամապատասխանությունը, ապա փոխառության անփողության հիմքով վիճարկման դեպքում միակ փաստը, որը ենթակա է ապացուցման, դա պայմանագրով կամ պարտքային փաստաթղթով նշված գումարն իրականում ստացած չլինելու հանգամանքն է:

Այս առանձնահատկությունն էլ հաշվի առնելով պետք է տարբերակել հայցային վաղեմության հոսքի սկիզբը որոշելու պահը՝ փոխառության պայմանագիրը վիճարկելու տարբեր հիմքերի դեպքում:

Հայցային վաղեմության կիրառման համար առանցքային է խախտված իրավունքի առկայությունը և դրա սկիզբը որոշելը: Այս առումով անփողության հիմքով փոխառության պայմանագրի վիճարկման դեպքում, երբ այդպիսի վիճարկման արդյունքը պայմանագիրը չկնքված համարելն է և պարտավորության կատարման պահանջի մերժումը, խախտված իրավունքի պահ կարող է դիտվել փոխատուի կողմից դրամ կամ գույք չհանձնելու պայմաններում փոխառության պայմանագրով (ստացականով կամ այլ պարտքային փաստաթղթով) պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջ ներկայացնելը:

Այսինքն՝ չկնքված պայմանագրի դեպքում, երբ պահանջ չի ներկայացվել կատարելու փոխառության իրավահարաբերություններից բխող պարտավորություններ, չի կարելի խոսել իրավունքի հնարավոր խախտման մասին, եթե իհարկե պայմանագրի կնքումը հայցի առարկան չէ:

Ինչ վերաբերվում է այն դիրքորոշմանը, որ հայցային վաղեմության հոսքը պետք է հաշվել փոխառության պայմանագրով գումարի ստացումը հաստատող ապացույցի տրման պահից, ապա այդ մոտեցումը ընդունելի չէ, քանի որ անփողության հիմքով փոխառության վիճարկումն ողոված է հենց փոխառության պայմանագրում կամ պարտքային փաստաթղթում նշված գումարը չստանալու կամ պակաս ստանալու փաստը հերքելուն:

Կարծում եմ, որ հայցը ենթակա է մերժման անհիմն լինելու հիմքով, քանի որ սույն գործի փաստերից հետևում է, որ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ հաստատված է համարվել Արտակ Մարտիրոսյանի կողմից 12.03.2011 թվականին խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով Կարինե Երեմյանի՝ խոշոր չափերի՝ 2.871.484 ՀՀ դրամին համարժեք 7.700 ԱՄՆ դոլարը հափշտակելու փաստը, որի համար Արտակ Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Վերոգրյալ քրեական գործով կայացված դատավճիռը նախադատելի նշանակություն ունի միայն հանցագործության օբյեկտիվ կողմի մասով, այսինքն՝ տեղի է ունեցել Կարինե Երեմյանից հափշտակություն 2.871.484 ՀՀ դրամին համարժեք 7.700 ԱՄՆ դոլարի չափով՝ խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով, ինչպես նաև հանցագործության սուբյեկտի մասով, այն է՝ հանցագործությունը կատարվել է Արտակ Մարտիրոսյանի կողմից: Այսինքն՝ հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար քրեական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է միայն հանցագործության օբյեկտիվ կողմի և հանցագործության սուբյեկտի մասով հաստատված փաստերի շրջանակներում, իսկ այդ շրջանակներից դուրս պրեյտյուդիցիալ կապ գոյություն ունենալ չի կարող: Ուստի ստորադաս դատարանները, հղում կատարելով թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքներին, չէին կարող կատեգորիկ հետևություններ անել Կարինե Երեմյանի կողմից փոխառությամբ ստացված գումարի հատակ չափի վերաբերյալ, քանի որ դատավճռով հաստատված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, ինչպես նաև այդ վնասի հատուցման պահանջի առկայությունը կամ բացակայությունը նախադատելի չէ, և այդ հարցը ենթակա է ապացուցման ընդհանուր հիմունքներով, որպիսի հանգամանքը նույնպես անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Ավելին՝ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճիռը վերաբերել է Արտակ Մարտիրոսյանի կողմից Կարինե Երեմյանի գույքը հափշ-

տակելուն, այլ ոչ Նարինե Ասատրյանի կողմից հանձնվող գույքին, որպիսի փաստը նույնպես անտեսվել է ստորադաս դատարանների կողմից: Բացի այդ, թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով 31.03.2014 թվականին կայացված և 08.08.2014 թվականին օրինական ուժի մեջ մտած դատավճիռի բովանդակությունից հետևում է, որ հափշտակությունը տեղի է ունեցել 2.871.484 ՀՀ դրամին համարժեք 7.700 ԱՄՆ դոլարի չափով, այնինչ սույն քաղաքացիական գործով վեճը վերաբերում է 4.300.000 ՀՀ դրամի մասով փոխառության գումարը հանձնված չլինելուն, ինչը նույնպես վկայում է այն մասին, որ հանձնված գումարների չափը ենթակա էր ապացուցման այլ թույլատրելի և վերաբերելի ապացույցների միջոցով, իսկ թիվ ԵՇԴ/0092/01/12 քրեական գործով դատավճիռից հստակ հետևություններ անել ենթադրաբար հանձնված գումարի հստակ չափի մասին, հնարավոր չէ, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Փոխառության պայմանագրի անփոդողության ապացուցումը դա փոխառուի պարտականությունն է, որը պետք է իրականացվի օրենքով թույլատրված ապացույցներով:

Սույն գործով ներկայացված դատավճիռով այդ հանգամանքը չի հիմնավորվում, հետևաբար հայցը ենթակա է մերժման անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. Անտոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/2308/02/15** 2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/2308/02/15
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Ս. Թորոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի 24-ին գրավոր ընթացակարգով քննելով «ՍՄԲԱՏԻ ՕՋԱԽ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Հակոբ Սաֆարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.02.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի հայցի ընդդեմ Ընկերության՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու և գումար բռնագանձելու պահանջի մասին, և ըստ Ընկերության հակընդդեմ հայցի ընդդեմ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի՝ համաձայնագիրը վավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանը պահանջել է կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ Ընկերությունից բռնագանձել 3.510.000 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված վարձավճարի գումար, ինչպես նաև 3.672.000 ՀՀ դրամ՝ որպես Ընկերության փոխարեն իր կողմից վճարված կոմունալ վճարների գումար:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վավեր ճանաչել իր և Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի միջև 24.08.2009 թվականի տարածքի մասի վարձակալու-

թյան պայմանագրում վարձավճարի փոփոխման վերաբերյալ իր և Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի միջև 2012 թվականի հունիսին կնքված համաձայնագիրը:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Զիչոյան) (այսուհետ՝ Դատարան) 31.10.2017 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.02.2018 թվականի որոշմամբ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 31.10.2017 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ընկերությունից հօգուտ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի բռնագանձվել է 3.510.000 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված վարձավճարի գումար, իսկ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ, 303-րդ, 304-րդ և 426-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 53-րդ, 220-րդ և 220.1-րդ հոդվածները: Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անհիմն հետևություն է արել այն մասին, որ հակընդդեմ հայցով հայցվորը չի ապացուցել այն հանգամանքը, որ Ընկերությունը՝ որպես վարձատու, ձեռնարկել է վարձավճարի ավելացման համաձայնության գրավոր ձևակերպմանը և նոտարական վավերացմանն ուղղված, ողջամտորեն իրենից կախված միջոցները, իսկ մյուս կողմը խուսափել է խնդրո առարկա գործարքի նոտարական վավերացումից: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանն ինչպես Դատարանում, այնպես էլ Վերաքննիչ դատարանում երբևէ չի վիճարկել իր կողմից գործարքի նոտարական վավերացումից խուսափելու հանգամանքը, հաշվի չի առել այն, որ Ընկերությունն իր հաշվետվություններում ամբողջությամբ ներառել է վարձավճարի գումարները և վճարել է դրանցից գոյացող բոլոր հարկերը, ինչպես նաև այն, որ հակընդդեմ հայցով հայցվորը շարունակել է տիրապետել վարձակալության հանձնված գույքը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ որպես գործարքի անվավերության հետևանք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի և Ընկերության միջև առաջացել է գործարքով ստացվածը դրամով վերադարձնելու միատեսակ հանդիպակաց պարտավորություն, որի պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 426-րդ հոդվածի հիմքով պարտավորությունն ամբողջությամբ պետք է համարվեր դադարած:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 02.02.2018 թվականի որոշումը՝ «Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի հայցը մերժելու մասով օրինական ուժի մեջ թողնել Դատարանի 30.10.2017 թվականի վճիռը, Ընկերության հակընդդեմ հայցը բավարարել՝ վավեր ճանաչել 24.08.2009 թվականի տարածքի մասի վարձակալության պայմանագրի վարձավճարի փոփոխման վերաբերյալ Ընկերության և Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի միջև 2012 թվականի հունիս ամսին կնքված համաձայնագիրը»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Ս. Տարոնցի փողոցի թիվ 3 շենքի 142-րդ շինությունը սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը (**հատոր 7-րդ, գ.թ. 117, 118**).

2) Ընկերության և Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի միջև 24.08.2009 թվականին կնքվել է Երևանի Ս. Տարոնցի փողոցի թիվ 3 շենքի 142-րդ հասցեում գտնվող տարածքի մասը վարձակալության տալու մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) (**հատոր 1-ին, գ.թ. 7-10**).

3) Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ վարձավճարի չափը կազմում է ամսական 1.250.000 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը: Պայմանագրով սահմանված վարձավճարի չափը կարող է փոփոխվել, եթե 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 370 ՀՀ դրամից նվազի կամ ավելանա 30 ՀՀ դրամով, որի վերաբերյալ կողմերը պետք է կնքեն լրացուցիչ համաձայնագիր (**հատոր 1-ին, գ.թ. 7-10**).

4) Ընկերության և Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի միջև 31.08.2009 թվականին կնքվել է Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր, որի համաձայն՝ Պայմանագրի 2.2.4 կետը սահմանվել է հետևյալ կերպ՝ Վարձակալը պարտավոր է վճարել միայն հեռախոսի վճարումները: Վարձատուրն պարտավոր է վճարել կոմունալ բոլոր վճարումները, այդ թվում՝ հոսանքի, ջրի, գազի և հեռախոսի վճարները և գույքահարկը (բացի հեռախոսավճարից) (**հատոր 1-ին, գ.թ. 11**).

5) Պայմանագրի 6.1 կետով նախատեսվել է, որ այն կնքվում է հինգ տարի ժամկետով՝ մինչև 24.08.2014 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 7-10**).

6) Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո՝ 06.09.2014 թվականին Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանը՝ ներկայությամբ Գագիկ Միմոնյանի, Արա և Արտակ Հակոբյանների, կազմել է արձանագրություն այն մասին, որ Երևանի Ս. Տարոնցի փողոցի թիվ 3 շենքի 142-րդ տարածքում Ընկերության տնօրեն Սմբատ Հարությունյանին է հանձնել նույն տարածքի բանալիները և տարածքը, սակայն վերջինս հրաժարվել է այն ընդունել, և արագ հեռանալով ասել է, որ «(...) տարածքը, բանալիներն էլ ձեզ լինի» (**հատոր 1-ին, գ.թ. 12**).

7) 01.04.2013, 01.05.2013, 01.06.2013, 01.07.2013, 01.08.2013, 01.09.2013, 01.10.2013, 01.11.2013, 01.12.2013, 01.01.2014, 08.01.2014, 01.02.2014, 01.04.2014, 01.05.2014, 01.06.2014, 02.06.2014 և 01.07.2014 թվականների վճարային փաստաթղթերի համաձայն՝ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանը Ընկերությանը վճարել է 1.380.000 ՀՀ դրամ՝ որպես վարձավճար (**հատոր 1-ին, գ.թ. 48-67**).

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետի և Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով.

Սույն վճարքի բողոքի քննության շրջանակներում Վճարքի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) գործարքը վավեր ճանաչելու առանձնահատկություններին,

2) վարձակալության պայմանագրի պայմանի փոփոխության վերաբերյալ համաձայնության անվավերության դեպքում գործարքով կողմերից յուրաքանչյուրի սրացածը վերադարձնելու առանձնահատկություններին:

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի համաձայն՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է: Եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի, գործարքը կատարած կողմի պահանջով, այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում: Գործարքի նոտարական վավերացումից անհիմն խուսափող կողմը պետք է մյուս կողմին հատուցի գործարքը կնքելու ուշացման հետ կապված վնասները:

ՀՀ սահմանադրական դատարանը, 15.05.2007 թվականի թիվ ՍԴՈ-702 որոշմամբ անդրադառնալով գրավոր գործարքները նոտարական վավերացման ենթարկելու օրենսդրության պահանջին, արձանագրել է, որ գրավոր գործարքի նոտարական վավերացմամբ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգի շրջանակներում նախապես անվիճելի են ճանաչվում իրավաբանական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, ինչպիսիք են՝

ա) գրավոր ձևով գործարքի կնքումը և դրա՝ օրենքով նախատեսված կարգի պահպանումը,

բ) պայմանագրի կողմերի ինքնության հաստատումը, նրանց իրավագործությունը և ազատ կամաարտահայտությունը,

գ) գործարքի պայմանների համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին և միջազգային պայմանագրերի դրույթներին, ինչպես նաև կողմերի իրական մտադրությանը:

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման, դրանց իրականացման, գործարքների (պայմանագրերի) կնքման, կատարման ու խախտված իրավունքների պաշտպանության, դրա հետ կապված վեճերով դատական հայեցողական լիազորության իրավաչափ շրջանակների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի դատական մեկնաբանման, ինչպես նաև միջազգային իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ լուծելով նոտարական վավերացում պահանջող գործարքը վավեր ճանաչելու վերաբերյալ վեճ, յուրաքանչյուր դեպքում դատարանի խնդիրն է պարզել.

- գործարքի օրինականությունը (իրավաչափությունը), գրավոր ձևի պահպանման փաստը,
 - գործարքի նոտարական ձևը չպահպանելը և մեղավոր կողմին,
 - գործարքի նոտարական վավերացումից կողմի խուսափելը (գործողությամբ կամ ան-
 գործությամբ) և դրա հիմքերը,

- նոտարական վավերացում պահանջող գործարքը կողմերից մեկի լրիվ կամ մասնա-
 կի կատարելու փաստը և դրա օրինականությունը (իրավաչափությունը): Ընդ որում, խոս-
 քը վերաբերում է ոչ թե պայմանագրային պարտավորության կատարումից կողմի՝ օրենքով
 նախատեսված կարգով հրաժարվելու ինստիտուտին, այլ՝ սահմանված կարգով իրավաչափ
 գործողություն կատարելուց խուսափելուն:

Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրական դա-
 տարանի կողմից բացահայտված բովանդակությունից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ
 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածով սահմանված՝ գործարքը վավեր ճանաչե-
 լու մասին կարելի է խոսել միայն վերոնշյալ հանգամանքների առկայության դեպքում, որոնք
 միասին անհրաժեշտ են և բավարար, որպեսզի անգամ օրենսդրական պահանջի խախտ-
 ման, այսինքն՝ նոտարական վավերացման բացակայության պայմաններում գործարքը դա-
 տական կարգով ճանաչվի վավեր:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր
 գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանք-
 ների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է
 կնքվելու պահից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում
 կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ
 ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ,
 երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուց-
 ված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության
 այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավո-
 րության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին
 կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխա-
 տանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատա-
 րելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պար-
 տականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են
 պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայ-
 մանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տի-
 րապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 608-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակա-
 լության կարող են հանձնվել հողամասեր և մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինու-
 թյուններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որոնք օգտագործման
 ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները (չսպառվող գույք): Օրենքով կա-
 րող են սահմանվել գույքի տեսակներ, որոնց վարձակալության հանձնելը չի թույլատրվում
 կամ սահմանափակված է:

Վերոնշյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ
 դատարանը եզրահանգում է, որ գործարքն անվավեր է դատարանի կողմից այն այդպիսին

ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք), այդպիսի գործարքն անվավեր է կնքելու պահից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներից մեկում արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսել է ընդհանուր կանոն գործարքի անվավերության հետևանքների վերաբերյալ, այն է՝ կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը: Մինևն այն ժամանակ օրենսդիրը նախատեսել է բացառություն այն դեպքերի համար, երբ ստացածը բնեղենով վերադարձնելն անհնար է: Նման դեպքերում կողմը պարտավոր է հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով: Որպես բացառություն՝ օրենսդիրն ինքնին նախատեսել է գույքից օգտվելը, այսինքն՝ կողմը, որն անվավերությանը նախորդող ժամանակահատվածում օգտվել է գույքից, որպես գույքից օգտվելը բնեղենով վերադարձնելու անհնարինություն՝ պարտավոր է հատուցել գույքից օգտվելու արժեքը: Փաստորեն, գույքի օգտագործման պայմանագրերի դեպքում «գործարքով սրացածը» հասկացությունը ենթակա է ավելի լայն մեկնաբանման: Նման մեկնաբանության պայմաններում «գործարքով սրացածը» նշանակում է ոչ միայն գործարքով ստացված գույքը բնեղենով, այլ նաև գույքի օգտագործման ողջ գործընթացը ներառյալ, հակառակ դեպքում՝ նշված հասկացությանը տրված ոչ համապատասխան մեկնաբանումը կարող է խեղաթյուրել իրավական նորմի բուն էությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք: Վարձակալության պայմանագրի դեպքում վարձակալի ստացածը դրսևորվում է վարձակալության պայմանագրով վարձատուի կողմից տրամադրված գույքից օգտվելով, որի վերադարձը ևս չի կարող արտահայտվել բնեղենով: Հետևաբար վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու դեպքում գույքն օգտագործողի կողմից գործարքով ստացածը վերադարձնելն անհնար է, քանի որ վարձակալության դեպքում գույքը հանձնվում է օգտագործման, ուստի գործարքով ստացածը դրսևորվում է գույքից օգտվելով: Այսինքն՝ վարձակալության դեպքում վարձակալը փաստացի օգտվում է պայմանագրի առարկա հանդիսացող գույքից, և անվավերության հետևանքներ կիրառելիս վերջինս պարտավոր է սեփականատիրոջը հատուցել այդ գույքի օգտագործման արժեքը:

Վերոնշյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարձակալության պայմանագրի անվավերության հետևանքների կիրառումն ունի հետևյալ առանձնահատկությունները՝

1. *վարձակալության պայմանագրով վարձակալի սրացածը դրսևորվում է գույքի օգտագործմանը, հետևաբար՝ այն բնեղենով վերադարձնելն անհնար է,*
2. *վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում վարձակալը պարտավոր է սեփականատիրոջը հատուցել գույքից օգտվելու արժեքը,*
3. *վարձակալության պայմանագրով վարձակալի սրացածը՝ գույքից օգտվելու արժեքը, որոշվում է փյվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով (տե՛ս, «Այմաբար» ՄՊԸ-ն ընդդեմ «Սաքս Կոնցեռն» ՄՊԸ-ի թիվ ԵԿԿ/2917/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը):*

Զարգացնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փաստորեն այն դեպքում, երբ հաստատվում է վարձակալության պայմանագրի անվավերությունը, կիրառման են ենթակա գործարքի անվավերության հետևանքները՝ հաշ-

վի առնելով վարձակալության պայմանագրով ստացվածը վերադարձնելու առանձնահատկությունները: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նմանատիպ դիրքորոշումը կիրառելի է նաև վարձակալության պայմանագրի պայմանի փոփոխության վերաբերյալ համաձայնության, մասնավորապես՝ վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի չափի փոփոխության նկատմամբ: Այսինքն՝ այն դեպքում, երբ վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի փոփոխության վերաբերյալ կողմերը կայացրել են համաձայնություն, սակայն այդ համաձայնությունն անվավեր է ճանաչվել (վիճահարույց գործարք) կամ անկախ ճանաչումից եղել է այդպիսին (առոչինչ), ապա վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ որպես այդ համաձայնության անվավերության իրավական հետևանք կողմերից յուրաքանչյուրը պետք է վերադարձնի այդ համաձայնությամբ իր ամբողջ ստացածը բնեղենով: Ընդ որում, այն դեպքում, երբ ստացածը բնեղենով վերադարձնելն անհնար է, կողմը պարտավոր է հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարձակալության պայմանագրի պայմանի փոփոխության վերաբերյալ համաձայնության անվավերության նկատմամբ գործարքի անվավերության հետևանքների կիրառումը պետք է իրականացվի վերը վկայակոչված իրավական դիրքորոշումներին համահունչ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի միջև 24.08.2009 թվականին կնքվել է Երևանի Ս. Տարոնցի փողոցի թիվ 3 շենքի 142-րդ հասցեում գտնվող տարածքի մասը վարձակալության տալու մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունն ամսական 1.250.000 ՀՀ դրամի դիմաց Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնել վերոնշյալ տարածքը: Ըստ կողմերի՝ իրենց միջև բանավոր համաձայնություն է կայացվել վարձավճարի չափի ավելացման վերաբերյալ: Համաձայն 01.04.2013, 01.05.2013, 01.06.2013, 01.07.2013, 01.08.2013, 01.09.2013, 01.10.2013, 01.11.2013, 01.12.2013, 01.01.2014, 08.01.2014, 01.02.2014, 01.04.2014, 01.05.2014, 01.06.2014, 02.06.2014 և 01.07.2014 թվականների վճարային փաստաթղթերի՝ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանը Ընկերությանը վճարել է 1.380.000 ՀՀ դրամ՝ որպես վարձավճար:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, գտել է, որ գործարքն առոչինչ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերը չեն պահպանել վարձավճարի փոփոխության նուտարական ձևը: Միաժամանակ Դատարանը գտել է, որ սույն գործով կիրառելի չեն անհիմն հարստացման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսդրության նորմերը, քանի որ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանը տեղյակ է եղել Ընկերությանը վարձակալության պայմանագրով սահմանված չափը գերազանցող մասով վարձավճարի վճարման պարտավորության բացակայության մասին: Հակընդդեմ հայցը մերժելով՝ Դատարանը գտել է, որ վարձատուի կողմից վարձավճարի ավելացման համաձայնության կատարման որևէ գործողության առկայություն չի հիմնավորվել, ուստի հակընդդեմ հայցը ելթակա է մերժման:

Վերաքննիչ դատարանը, Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի վերաքննիչ բողոքը բավարարելով և Ընկերության վերաքննիչ բողոքը մերժելով, գտել է, որ Ընկերությունը չի ներկայացրել որևէ ապացույց, որը թույլ տար հաստատված համարել այն փաստերը, որ մի կողմից

Ընկերությունը վարձավճարի պայմանագրային չափը փոփոխելու վերաբերյալ համաձայնության գրավոր ձևակերպմանը և նոտարական վավերացմանն ուղղված կամահայտնություն է դրսևորել ու Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի մասնակցությամբ այդ վավերացումն ապահովելու համար ձեռնարկել է ողջամտորեն իրենից կախված միջոցները, մյուս կողմից՝ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանը խուսափել է խնդրո առարկա գործարքի նոտարական վավերացումից: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման համար պահանջվող բոլոր պայմանների միաժամանակյա առկայությունը սույն գործով չի ապացուցվել, ինչը բացառում էր նշված նորմի կիրառմամբ հակընդդեմ հայցը բավարարելու իրավաչափ հնարավորությունը, ուստի Դատարանն իրավամբ մերժել է Ընկերության բողոքը՝ տվյալ մասով ճիշտ լուծելով գործը: Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանն առանց որևէ պատճառաբանության ձեռնպահ է մնացել առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման վերաբերյալ հայցվորի պահանջը բավարարելուց և այդ մասով հայցը մերժել է բացառապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածի 4-րդ կետի սխալ կիրառմամբ՝ անտեսելով, որ հայցի իրավական հիմքում դրվել են նաև առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառմանը վերաբերող նորմերը: Վերոշարադրյալ պատճառաբանություններով Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրահանգման, որ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման շրջանակներում պատասխանողից 3.510.000 ՀՀ դրամ բռնագանձելու մասին հայցվորի պահանջը Դատարանի կողմից ոչ իրավաչափորեն է մերժվել:

Համադրելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործարքն առոչինչ համարելու դեպքում կիրառման են ենթակա անվավերության հետևանքները, իսկ անվավերության հետևանքների կիրառումը ենթադրում է ոչ այլ ինչ, քան կողմերից յուրաքանչյուրի կողմից գործարքով ամբողջ ստացածը մյուս կողմին վերադարձնելու պարտավորություն: Ուստի, դատարանի կողմից գործարքի անվավերության հետևանք կիրառելու դեպքում պետք է քննարկման առարկա դարձվի վիճարկվող գործարքով կողմերից յուրաքանչյուրի ստացածը մյուս կողմին վերադարձնելու հարցը, և համապատասխանաբար կողմերը պետք է բնեղենով վերադարձնեն այն ամենը, ինչ ստացել են գործարքով, իսկ այն դեպքում, երբ ստացածը բնեղենով վերադարձնելն անհնար է, կողմը պարտավոր է հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը հաստատել է գործարքի առոչինչ լինելու հանգամանքը՝ չանդրադառնալով անվավերության հետևանքներին, իսկ Վերաքննիչ դատարանը, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ գործարքն առոչինչ է, որպես անվավերության հետևանք՝ անդրադարձել է Ընկերության կողմից Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանին վերադարձման ենթակա գույքին՝ չքննարկելով գործարքի մյուս կողմի՝ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի կողմից գործարքով ստացածը Ընկերությանը վերադարձնելու հարցը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, կիրառելով գործարքի անվավերության հետևանքները, գնահատման չի ենթարկել գործարքով մյուս կողմի, այն է՝ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի կողմից գործարքով ստացածը Ընկերությանը վերադարձնելու հարցը, ուստի եկել է սխալ եզրահանգման:

Ինչ վերաբերում է գործարքը վավեր ճանաչելուն, ապա Վճռաբեկ դատարանը, հիմնվելով վերը շարադրված իրավական վերլուծությունների վրա, գտնում է, որ սույն գործով

գործարքը վավեր ճանաչելն անհնարին է հետևյալ պատճառաբանությամբ. ևս մեկ անգամ ընդգծելով գործարքը վավեր ճանաչելու համար անհրաժեշտ և բավարար պայմանների կարևորությունը՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ սույն գործի փաստերով չի հիմնավորվում անշարժ գույքի վարձակալության պայմանագրի պայմանի՝ վարձավճարի փոփոխության վերաբերյալ գործարքի գրավոր ձևի պահպանման փաստը, քանի որ գործով չի ներկայացվել որևէ ապացույց, որը թույլ տար հաստատված համարելու Ընկերության կողմից վարձավճարի պայմանագրային չափը փոփոխելու վերաբերյալ համաձայնության գրավոր ձևակերպմանն ուղղված գործողությունների կատարումը: Անդրադառնալով գործարքը վավեր ճանաչելու համար անհրաժեշտ մյուս պայմաններին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի փաստերի համաձայն չեն հիմնավորվել այն հանգամանքները, որ մի կողմից՝ Ընկերությունը կամահայտնություն է դրսևորել և ձեռնարկել է գործողություններ գործարքի նոտարական վավերացումն իրականացնելու համար, իսկ մյուս կողմից՝ Ա/Չ Ավետիք Աղաբեկյանը գործողությամբ կամ անգործությամբ խուսափել է գործարքի նոտարական վավերացումից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործարքը վավեր ճանաչելու համար անհրաժեշտ և բավարար պայմաններից որևէ մեկի բացակայությունը բացառում է այն վավեր ճանաչելու իրավական հնարավորությունը: Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով միաժամանակ բացակայում են գործարքը վավեր ճանաչելու համար անհրաժեշտ մի քանի պայմաններ, մասնավորապես՝ գործարքի գրավոր ձևի պահպանվածություն, գործարքի նոտարական վավերացմանն ուղղված գործողությունների կատարում, մյուս՝ մեղավոր կողմի խուսափելը գործարքի նոտարական վավերացումից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սկզբնական հայցով պատասխանող և հակընդդեմ հայցով հայցվոր Ընկերությունը չէր կարող հավակնել գործարքը վավեր ճանաչելուն, որպիսի հիմնավոր եզրահանգման էլ ելել են ստորադաս դատարանները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մի կողմից՝ Դատարանը, հակընդդեմ հայցը մերժելով, իսկ Վերաքննիչ դատարանը, հակընդդեմ հայցի մերժումը հիմնավոր համարելով, հանգել են իրավաչափ եզրահանգման: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները լրիվ և բազմակողմանի քննություն չեն իրականացրել սկզբնական հայցի մասով գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը պարզելու ուղղությամբ, հետևաբար առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն՝ վարձակալության պայմանագրի պայմանի փոփոխության վերաբերյալ համաձայնության անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրի «գործարքով ստացվածը» և դրա արժեքը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո բացահայտելու և գնահատելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու և գործը՝ հայցի մասով, նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դարարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դարարական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործը՝ հայցի մասով, ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում հայցի մասով դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի մասով դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Միաժամանակ նկատի ունենալով, որ հակընդդեմ հայցի մասով բողոքաբերը վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքը նախապես վճարել է, իսկ հակընդդեմ հայցի մասով վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակընդդեմ հայցի մասով դատական ծախսերի հարցը անհրաժեշտ է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.02.2018 թվականի որոշման՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու և Ընկերությունից հօգուտ Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի 3.510.000 ՀՀ դրամ բռնագանձելու մասին հայցը մասնակի բավարարելու մասը, և գործն ըստ հայցի Ա/Ձ Ավետիք Աղաբեկյանի ընդդեմ «ՄՄԲԱՏԻ ՕՋԱԽ» ՍՊԸ-ի՝ գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջի մասով, ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ սահմանված ծավալով նոր քննության:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Հայցի մասով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում, իսկ հակընդդեմ հայցի մասով դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1209/02/16** 2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1209/02/16
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Տ. Նազարյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հունիսի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով Վահե Աֆանդյանի ներկայացուցիչ Արմինե Ավետիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.04.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (իրավանախորդ՝ «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ) (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Վահե Աֆանդյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Վահե Աֆանդյանից բռնագանձել 72.214,90 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես հաշվեգրված տոկոսի և տույժի գումար:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Մազմանյան) (այսուհետ՝ Դատարան) 04.07.2017 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.04.2018 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի

04.07.2017 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վահե Աֆանդյանի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Բանկը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ, 358-րդ, 408-րդ և 424-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հաճախորդի պարտականությունների մեջ մտնում է պարտավորության գումարի փոխանցումը Բանկին, իսկ մնացած բոլոր գործողությունները կատարվում են Բանկի կողմից իր ներքին կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: Այսինքն՝ այն դեպքում, երբ Բանկը խախտում է պարտավորության մարման հերթականությունը, ապա վերջինս էլ կրում է դրա բացասական հետևանքը: Այլապես, եթե առաջնորդվենք Վերաքննիչ դատարանի որդեգրած այն տրամաբանությամբ, որ պարտավորությունների մարման հերթականության խախտումը պատասխանողին չի կարող ազատել դրա մի մասի կատարումից, ապա կհանգենք այն եզրակացության, որ օրենսդրի կողմից սահմանված պարտավորությունների կատարման հերթականությունն ինքնանպատակ է և դրա խախտումը չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանք:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել այն փաստը, որ Բանկի կողմից թույլ է տրվել օրենքի և պայմանագրի խախտում, սակայն անհասկանալի կերպով հետևություն է արել այն մասին, որ այդ խախտումը որևէ իրավական հետևանք չի կարող առաջացնել և չի կարող պարտավորությունների դադարման հիմք հանդիսանալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.04.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 04.07.2017 թվականի վճիռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Եթե նույնիսկ ընդունենք, որ Բանկը միակողմանի փոփոխել է իր և Վահե Աֆանդյանի միջև կնքված պայմանագրի 3.2-րդ կետը՝ սահմանելով պարտավորության կատարման նոր հերթականություն, այնուամենայնիվ, հաշվի առնելով Բանկի և պատասխանողի միջև պարտավորության առկայության փաստը, վարկառուն ոչ միայն պետք է վերադարձներ ստացված գումարը, այլև տոկոսներ վճարեր, հետևաբար վարկի մարման նոր հերթականության սահմանումը չի կարող դիտարկվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտավորության դադարում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի և Վահե Աֆանդյանի միջև 02.04.2013 թվականին կնքված թիվ O02975 վճարային քարտերով տրամադրվող վարկային գծի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Վահե Աֆանդյանին տրամադրվել է 200.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ: Պայմանագրի 3.2-րդ կետի համաձայն՝ մարումներ կատարելիս առաջնահերթության կարգով

վճարվում են՝ գերաճախար, տուժանքները, տոկոսները, այնուհետև՝ վարկային գծի հիմնական գումարը: Պայմանագրի 4.2.3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Բանկն իրավունք ունի վարկառուից պահանջել հետ վերադարձնել վարկային գիծը, հաշվեգրված տոկոսներն ու Պայմանագրով Բանկին վճարման ենթակա այլ գումարները և միակողմանիորեն վաղակետ լուծել Պայմանագիրը և դադարեցնել վարկային գծի գործողությունը, եթե վարկառուն ունի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների որևէ խախտում կամ կետանց (**հատոր 1-ին, գ.թ. 31-34**):

2) Բանկի 19.02.2014 թվականի թիվ ՎՆ15/544 պահանջագրի համաձայն՝ Վահե Աֆանդյանի ստանձնած պայմանագրային պարտավորությունները 17.02.2014 թվականի դրությամբ կազմել է 229.543,16 ԱՄՆ դոլար ժամկետանց պարտք, որից՝ 196.395,87 ԱՄՆ դոլարը՝ ժամկետանց վարկի, 20.941,72 ԱՄՆ դոլարը՝ ժամկետանց տոկոսագումարների և 12.205,57 ԱՄՆ դոլարը՝ տույժերի, տուգանքների պարտք (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

3) Բանկի 18.06.2014 թվականի վարկային կոմիտեի նիստի թիվ 036 արձանագրության համաձայն՝ Բանկի հաճախորդ «Բյուրակն» ՍՊԸ-ի վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոց գրավադրված՝ Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի Մասիսի խճուղու թիվ 105/15 հասցեում գտնվող 74,3հա ընդհանուր մակերեսով հողամասը՝ 1.188.800.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, Բանկին՝ որպես սեփականություն անցնելու հաշվին մարվել են «Բյուրակն» ՍՊԸ-ի կողմից երաշխավորված անձանց վարկային պարտավորությունները, մասնավորապես՝ մարվել է քաղաքացի Վահե Աֆանդյանի վարկային պայմանագրով նախատեսված մայր գումարն ամբողջությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 35**):

4) Բանկի գործառնական վարչության պետի կողմից 11.01.2016 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ վարկառու Վահե Աֆանդյանի պարտավորության չափը 10.01.2016 թվականի դրությամբ կազմել է 72.214,92 ԱՄՆ դոլար, որից 20.941,72 ԱՄՆ դոլարը՝ որպես տոկոսագումար, 11.106,02 ԱՄՆ դոլարը՝ որպես ԲՏՀԴ տոկոսագումար, 33.780,57 ԱՄՆ դոլարը՝ որպես վարկի տույժի գումար, 6.386,61 ԱՄՆ դոլարը՝ որպես տոկոսի տույժի գումար (**հատոր 1-ին, գ.թ. 89**):

5) Թիվ 002975 քաղվածքի համաձայն՝ վարկառու Վահե Աֆանդյանի պարտավորության չափը 14.11.2016 թվականի դրությամբ կազմել է 72.214,92 ԱՄՆ դոլար, որից 20.941,72 ԱՄՆ դոլարը՝ որպես հաշվարկված տոկոսագումար, 11.106,02 ԱՄՆ դոլարը՝ որպես ԲՏՀԴ հաշվարկված տոկոսագումար, 33.780,57 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց վարկի տույժի գումար, 6.386,61 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց տոկոսի տույժի գումար (**հատոր 1-ին, գ.թ. 76-77**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածի վերաբերյալ կարող են էական նշանակություն ունենալ տվյալ իրավադրույթի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածի և 424-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք բանկն իր նախաձեռնությամբ միակողմանիորեն կարող է սահմանել վարկի մարումների նոր հերթականություն այն պարագայում, երբ պայմանագրով արդեն իսկ սահմանված է վարկի մարումների այլ առաջնահերթություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է նույն օրենսգրքով, օրենքով կամ կանոնադրությամբ ստանձնած պարտավորությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով (հոդված 438):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝ դրամական պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում, եթե այլ համաձայնություն չի կայացվել, առաջին հերթին մարվում են պարտավորության կատարման ստացմանն ուղղված՝ պարտատիրոջ ծախսերը, այնուհետև՝ տոկոսները, ներա-

ոյալ՝ նույն օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, իսկ մնացած մասով՝ պարտքի հիմնական գումարը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքի 46-րդ գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ նույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով վարկային պայմանագրի վերաբերյալ վկայակոչված իրավաբազավորումների վերլուծությանը, նշել է, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք է նաև վարկային պայմանագիրը, որը, լինելով երկկողմանի պայմանագիր, սահմանում է փոխառուի (պարտապանի) հիմնական պարտականությունը, այն է՝ վարկատուին (պարտատիրոջը) վերադարձնել փոխառությամբ ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է, որ վարկային իրավահարաբերությունների վրա տարածվում են փոխառության իրավահարաբերությունների ընդհանուր կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ վարկային պայմանագրով և փոխառության իրավահարաբերությունների ընդհանուր կանոններով (*տե՛ս*, «Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Յուրի Ջալալովի և մյուսների թիվ ԵԷԿ/0230/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):

Վերահաստատելով և զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ելնելով վարկի և փոխառության պայմանագրերի ընդհանրական հատկանիշներից՝ օրենսդիրը նախատեսել է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են փոխառության պայմանագրի համար նախատեսված կանոնները: Մինևնույն ժամանակ, ընդունելով վերոհիշյալ երկու պայմանագրերի ընդհանրությունները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ի տարբերություն փոխառության պայմանագրի՝ վարկային պայմանագրով կարող են տրամադրվել միայն դրամական միջոցներ և միայն որոշակի սուբյեկտների՝ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վարկային պայմանագրի կարևորագույն առանձնահատկությունն է նաև այն, որ այդ պայմանագրով բանկը կամ վարկային կազմակերպությունն ակնկալում է որոշակի հատուցում, այլ կերպ ասած՝ այն հատուցելի պայմանագիր է: Բանկը վարկային պայմանագրով որոշակի դրամական միջոցներ փոխառուին տրամադրելու դիմաց ակնկալում է, որ փոխառուն պետք է իրեն վերադարձնի այդ միջոցները և բացի դրանից նաև վճարի որոշակի տոկոսներ՝ տրամադրված միջոցների օգտագործման դիմաց որպես հատուցում: Նմանատիպ մտեցումը բխում է վարկային պայմանագրի էությունից, քանի որ բանկը, իր ունեցած միջոցներից որոշակի մասը տրամադրելով կոնկրետ անձին, զրկվում է դրանց տնօրինման և այլ անձանց տրամադրելու միջոցով շահույթ ստանալու հնարավորությունից, ուստի ակնկալում է որոշակի վարձատրություն՝ տոկոսների տեսքով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նմանատիպ մտեցումը բխում է հենց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի կարգավորումից, որի համաձայն՝ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրա-

նից:

Հիմք ընդունելով վարկային պայմանագրի՝ պարտավորական հարաբերությունների ծագման ինքնուրույն հիմք լինելու հանգամանքը և այդ հարաբերությունների դրամական բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրա նկատմամբ կիրառելի են դրամական պարտավորությանը պահանջները մարելու հերթականության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածի կարգավորումները: Ուստի, եթե կողմերի միջև առկա չէ այլ համաձայնություն, առաջին հերթին մարվում են պարտավորության կատարման ստացմանն ուղղված՝ պարտատիրոջ ծախսերը, այնուհետև՝ տոկոսները, ներառյալ՝ նույն օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, իսկ մնացած մասով՝ պարտքի հիմնական գումարը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նմանատիպ կարգավորում նախատեսելը նպատակ է հետապնդել պարտավորության մարման հերթականության հարցում սահմանելու որոշակիություն: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել, որ օրենսդիրը նախատեսել է նման հերթականությունից շեղվելու հնարավորություն, որպիսին կարող է լինել **կողմերի համաձայնությունը**: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե կողմերն այլ բան չեն նախատեսել, ապա կաշկանդված են սույն կարգավորմամբ, և ցանկացած դեպքում առաջնահերթությունը փոփոխելիս պետք է առկա լինի նրանց համաձայնությունը: Նմանատիպ մոտեցումից բխում է, որ դրամական պարտավորության մարման առաջնահերթության վերաբերյալ պայմանը միակողմանիորեն չի կարող փոփոխվել: Ուստի, վարկային պայմանագրով նախատեսված դրամական պարտավորության մարման առաջնահերթության վերաբերյալ պայմանագրի պայմանը փոխատուի կողմից միակողմանի փոփոխելը և պարտավորության հիմնական գումարն առաջին հերթին մարելը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված կարգավորմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Վահե Աֆանդյանի միջև 02.04.2013 թվականին կնքվել է Պայմանագիր, որով Վահե Աֆանդյանին տրամադրվել է 200.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ: Պայմանագրի 3.2-րդ կետով սահմանվել է, որ մարումներ կատարելիս առաջնահերթության կարգով վճարվում են գերաձայսը, տուժանքները, տոկոսները, այնուհետև՝ վարկային գծի հիմնական գումարը: Բանկի 18.06.2014 թվականի վարկային կոմիտեի նիստի թիվ 036 արձանագրության համաձայն՝ Բանկի հաճախորդ «Բյուրակն» ՍՊԸ-ի վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոց գրավադրված՝ Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի Մասիսի խճուղու թիվ 105/15 հասցեում գտնվող 74,3 հա ընդհանուր մակերեսով հողամասը՝ 1.188.800.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, Բանկին՝ որպես սեփականություն անցնելու հաշվին մարվել են «Բյուրակն» ՍՊԸ-ի կողմից երաշխավորված անձանց վարկային պարտավորությունները, մասնավորապես՝ մարվել է քաղաքացի Վահե Աֆանդյանի վարկային պայմանագրով նախատեսված մայր գումարն ամբողջությամբ: Բանկի գործառնական վարչության պետի կողմից 11.01.2016 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ վարկատու Վահե Աֆանդյանի պարտավորության չափը 10.01.2016 թվականի դրությամբ կազմել է 72.214,92 ԱՄՆ դոլար, որից 20.941,72 ԱՄՆ դոլարը՝ որպես տոկոսագումար, 11.106,02 ԱՄՆ դոլարը՝ որպես ԲՏՀԴ տոկոսագումար, 33.780,57 ԱՄՆ դոլարը՝ որպես վարկի տույժի գումար, 6.386,61 ԱՄՆ դոլարը՝ որպես տոկոսի տույժի գումար: 19.02.2014 թվականին Բանկը Վահե Աֆանդյանին ներկայացրել է պահանջագիր՝ վճարելու պարտավորությամբ նախատեսված հիմնական գումարը և տոկոսները, սակայն Վահե Աֆանդյանի կողմից դրանք չկատարվելու հետևանքով Բանկը պարտավորությունը հիմնական գումարի մասով մարել է երաշխավորության հաշվին՝ խախտելով դրամական պարտա-

վորության սահմանված հերթականությունը:

Սույն գործով Դատարանը, մերժելով հայցը, նշել է, որ պատասխանողն ի սկզբանե իմացել և գիտակցել է, որ գրավի առարկայի օտարումից պետք է մարվեն Բանկի հանդեպ իր ունեցած պարտավորությունները՝ պայմանագրի և օրենքի պահանջների համաձայն, սկզբում պետք է մարվեն տոկոսագումարը, ԲՏՀԴ տոկոսագումարը, վարկի տույժը և տոկոսի տույժը, որից հետո՝ մայր գումարը: Հետևաբար Դատարանը գտել է, որ կատարմամբ Բանկի հանդեպ պատասխանողի ունեցած պարտավորությունը դադարել է:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ պատասխանողը պատշաճ չի կատարել վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները՝ պայմանագրով սահմանված ժամկետներում չի վճարել վարկի գումարները, հաշվեգրված տոկոսները և տույժերը, իսկ Բանկը գրավադրված գույքի հաշվին մարել է միայն պարտավորության մայր գումարը, իսկ տոկոսները և տույժերը մնացել են չմարված, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գտել է, որ խոսք չի կարող լինել կատարման միջոցով պարտավորության դադարման մասին:

Համադրելով վերոշարադրյալ իրավական վերլուծությունները սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարկային պայմանագրի էությունից բխում է վարկատուի՝ հատուցում ստանալու իրավունքը: Բացի այդ, սույն գործով կողմերի միջև կնքված Պայմանագրի 4.2.3-րդ կետի «ա» ենթակետից հետևում է նաև, որ վարկային գծով տրամադրված հիմնական գումարը և հաշվեգրվող տոկոսները պահանջելու իրավունք առկա է նաև այն իրավիճակում, երբ վարկառուի կողմից կատարվում է պայմանագրի խախտում կամ կետանց: Ելնելով վերոշարադրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև վարկային պայմանագրի էությունից բխում է հատուցելիությունը և գործով ներկայացված պայմանագրի համաձայն նաև՝ դրա խախտման դեպքում Բանկն իրավունք է ունենում պահանջելու համապատասխան դրամական միջոցները, մինչդեռ սույն գործով հաշվի առնելով այն, որ Բանկը միակողմանիորեն է փոփոխել Պայմանագրի 3.2-րդ կետը, այն է՝ առաջնահերթ մարել է դրամական պարտավորության հիմնական գումարը՝ խախտելով պայմանագիրը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածը, ուստի Վճռաբեկ դատարանի կողմից Բանկի նմանատիպ վարքագիծը գնահատվում է որպես ոչ իրավաչափ, քանի որ դրամական պարտավորության մարման առաջնահերթության վերաբերյալ պայմանը միակողմանիորեն չի կարող փոփոխվել: Ելնելով վերոգրյալից Վճռաբեկ դատարանը հավելում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ և 887-րդ հոդվածների իրավակարգավորման համաձայն՝ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից, և պարտապանի դրամական պարտավորությունը լրիվ կատարելու համար պայմանագիրը կնքած կողմերի միջև այլ համաձայնության բացակայության պայմաններում առաջին հերթին ամեն դեպքում մարվում են պարտավորության կատարման ստացմանն ուղղված՝ պարտատիրոջ ծախսերը, այնուհետև՝ տոկոսները, վերջում միայն պարտքի հիմնական գումարը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ըստ Բանկի 19.02.2014 թվականի թիվ ՎՆ15/544 պահանջագրի՝ Վահե Աֆանդյանի ստանձնած պայմանագրային պարտավորությունները՝ հիմնական գումարի մասով, 17.02.2014 թվականի դրությամբ կազմել է 196.395,87 ԱՄՆ դոլար, որը մարվել է Բանկի հաճախորդ «Բյուրակն» ՍՊԸ-ի վարկային պարտավորությունների կատարման համար որպես ապահովման միջոց գրավադրված՝ Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի Մասիսի խճուղու թիվ 105/15 հասցեում գտնվող 74,3-հա ընդհանուր մակերեսով հողամասը 1.188.800.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով Բանկին՝

որպես սեփականություն անցնելու հաշվին, այնինչ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358-րդ, 887-րդ հոդվածների և Պայմանագրի 3.2-րդ կետի իրավակարգավորումից բխում է, որ վարկային պայմանագրով որպես ապահովման միջոց գրավադրված՝ Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի Մասիսի խճուղու թիվ 105/15 հասցեում գտնվող 74,3 հա ընդհանուր մակերեսով հողամասը 1.188.800.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով Բանկին՝ որպես սեփականություն անցնելու հաշվին առաջնահերթության կարգով պետք է մարված համարել Վահե Աֆանդյանի վարկային պարտավորությունը՝ Բանկի կողմից հաշվերգրված տոկոսի և տույժի գումարի՝ 72.214,92 ԱՄՆ դոլարի չափով, որից 20.941,72 ԱՄՆ դոլարը՝ որպես հաշվարկված տոկոսագումար, 11.106,02 ԱՄՆ դոլարը՝ որպես ԲՏՀԻ հաշվարկված տոկոսագումար, 33.780,57 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց վարկի տույժի գումար, 6.386,61 ԱՄՆ դոլարը՝ որպես ժամկետանց տոկոսի տույժի գումար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վահե Աֆանդյանից 72.214,92 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ տոկոսներ և տույժեր բռնագանձելու մասին Բանկի պահանջը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ ելել է Դատարանը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերը նշված պարզառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխառում նշված փաստարկները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոքք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Բանկից հոգուտ Վահե Աֆանդյանի ենթակա է բռնագանձման 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.04.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.07.2017 թվականի վճռին:

2. «Արդշինքանկ» ՓԲԸ-ից (իրավանախորդ՝ «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶԴՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ) հոգուտ Վահե Աֆանդյանի բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/2612/02/16

2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/2612/02/16

Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան

Դատավորներ՝ Գ. Խանդանյան

Ա. Սմբատյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հոկտեմբերի 18-ին

գրավոր ընթացակարգով քննելով Ժիրայր Սեֆիլյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.01.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ժիրայր Սեֆիլյանի ընդդեմ «Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն), Վահե Ղազարյանի և Նելլի Հարությունյանի՝ վիրավորանքի և զրպարտության միջոցով պատվին, արժանապատվությանը և բարի համբավին հասցված վնասի հատուցման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատարավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Ժիրայր Սեֆիլյանը պահանջել է պարտավորեցնել պատասխանողներին հրապարակային ներողություն խնդրել և «Սուր անկյուն» հաղորդաշարի առաջիկայում հեռարձակվելիք առաջին իսկ թողարկման մեջ հերքել զրպարտություն համարվող տվյալները, ինչպես նաև հրապարակել դրանց վերաբերյալ Ժիրայր Սեֆիլյանի պատասխանը՝ 12.06.2016 թվականի 197-րդ թողարկման՝ նրան վերաբերող հատվածներին հավա-

սար ժամանակամիջոցում և ձևաչափով:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ն. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 11.08.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ Դատարան) 25.01.2018 թվականի որոշմամբ Ժիրայր Սեֆիլյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.08.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ժիրայր Սեֆիլյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ և 10-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ, 1087.1-րդ հոդվածները, 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է իրավունքի բուն էությունը՝ անտեսելով, որ հրապարակայնորեն արված արտահայտությունները կատարվել են Ժիրայր Սեֆիլյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու նպատակով՝ փորձելով նսեմացնել վերջինիս հեղինակությունն ու նվաստացնել նրան:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը չի կատարել գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն՝ անտեսելով, որ գործի քննության ընթացքում հարցաքննվել են վկաներ Անդրանիկ Ներսիսյանը և Վահան Գեղամյանը, որոնք երկուսն էլ պնդել են, որ տեսանյութում ներկայացված փաստերը չեն համապատասխանում իրականությանը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ լրագրողական հետաքննության ընթացքում ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չեն ձեռնարկվել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար, ավելին՝ Ժիրայր Սեֆիլյանը լավաճ չի եղել և նրանից չեն ճշտել իրականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.01.2018 թվականի որոշումը և հայցը բավարարել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- 1) 12.06.2016 թվականին Ընկերության կողմից հեռարձակվել է «Սուր անկյուն» հաղորդաշարի 197-րդ թողարկումը, որի մի մասում՝ «Հաղթանակը շատ հայրեր ունի» խորագրով հաղորդմամբ՝ հետաքննությանը վերաբերող 26:25-37:10 ժամանակահատվածում և դրա մասին անոնսներում, հնչել են Ժիրայր Սեֆիլյանին վերաբերող տեղեկություններ: Մաս-

նավորապես՝ հաղորդավար Վահե Ղազարյանը, խոսելով Կարո Քահքեջյանի և Վարդան Ստեփանյանի հերոսական արարքների մասին, այնուհետև նշում է հետևյալը. «Ցավոք այս պատմությունների կողքին կան րիսուր այլ դեպքեր, որոնք մեզ, այսպես ասեմ, պարզապես սազական չեն: Օրերս լսեցի 92-ի ամռանը րեղի ունեցած դեպքի մասին, երբ Ժիրայր Մէֆիլյանի գլխավորած 168 հոգանոց ջոկատը հրաման էր սրացել խլելու թշնամու րեխնիկան, որով պէտք է հրեարակոծվեին Մարտակերպի հյուսիսային բնակավայրերը: (...) Նոսակի պայթյունից զինվորներից մեկը զոհվում է, մեկ ուրիշը ծանր վիրավորվում, սակայն բոլորը կարծում են, թե նա նոյնպես զոհվել է: Ունենալով ընդամենը երկու ձի, երկար-բարակ մրսածում են, թե ում րեղափոխեն, վերջում որոշում է կայացվում, որ մեկով պէտք է րեղափոխվի զոհվածը, մյուսով՝ Մէֆիլյանը: Մինչդեռ արնաշաղախ զինվորը մուր երեք օր սողալով մի կերպ հասել է Մարտի: **Էրոք որ, հրամանատարը էլ կա, հրամանատար էլ»:**

Այնուհետև լրագրող Նելլի Հարությունյանը ռեպորտաժը սկսում է Կարո Քահքեջյանի հրամանատարական սխրանքների մասին խոսելով, որից հետո նշում է հետևյալը. «Բայց եղել են նաև վերապրելու անհավանական պատմություններ: Գրանցից առնվազն մեկը, որքան էլ որ փրկվելու, սարելու պատմություն է, կարող էր և չլինել, կարող էին չլինել նաև այն րանջանքները, որոնց միջով էր զինվորը հասնելու դեպի երկրորդ կյանք, եթե բոլոր հրամանատարները ըստ արժանվոյն գիրակցեին իրենց դերը, պարասիսանարվությունը և առաջին հերթին հոգային իրենց զինվորների մասին(...)»: Լրագրողը տեսանյութի ընթացքում նաև նշում է. «...Ջոկատի հրամանատար Ժիրայր Մէֆիլյանը որոշել էր երկրորդ ձիու վրա ինքը բարձրանալ: Ըստ էության սա երկու իրողության մասին է վկայում. առաջին՝ որ հրամանատարի խոսքը բավականաչափ կշիռ չի ունեցել, որպեսզի երկրորդ ձիու վրա էլ թեկուզ զոհված համարվող զինվորին րեղափոխեն, կամ պարզապես նախընտրել է հոգայ սեփական կյանքի մասին: (...) **Միայն իրական հրամանատարին է րնորոշ հասկանալ զինվորի արժեքը, քանի որ նա զիրի՝ ով է հող ու սահման պահողը և ում զորակցությամբ կարելի է հաղթանակի հասնել: Մենք արդյո՞ք կարող ենք մեզ թույլ տալ՝ թողնել ու կորցնել թեկուզ մեկ զինվոր: Մարտական ընկերներին օգնելը թե պարերազմի, թե խաղաղության գրված ու չգրված օրենք է, յուրաքանչյուր զինվորականի պարտքը՝ և՛ մարտական, և՛ բարոյական, բայց **գործնականում պարտքի զհրակցումն ու բարոյականության դրսևորումները ոչ բոլորին են հարուկ՝ շարքային, թե հրամանատար»:** Ռեպորտաժի վերջնամասում լրագրողը սկսում է խոսել Վարդան Ստեփանյանի հերոսական արարքների մասին:**

Նշված արտահայտությունները Վահե Ղազարյանն ու Նելլի Հարությունյանը օգտագործել են 29.06.1992 թվականին Արցախի Մարտակերտի շրջանում Ժիրայր Մէֆիլյանի գլխավորած հատուկ գործողության ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները նկարագրելիս՝ ներկայացված փաստերը համադրելով Կարո Քահքեջյանի և Վարդան Ստեփանյանի հերոսական արարքների հետ (**հատոր 1-ին, գ.թ. 21**):

2) Ժիրայր Մէֆիլյանը հերքման մասին դիմում է ներկայացրել Ընկերությանը (**հատոր 1-ին, գ.թ. 113-114**), սակայն հերքում չի տրվել:

3) Վկա Անդրանիկ Ներսիսյանը նշել է, որ վերոնշյալ իրադարձության օրն իրենց ուղեկցորդները տեղեկացրել են, որ առջևում ական չկա: Խումբն առաջ է շարժվել գիշերով: Լսվել է պայթյուն, այնուհետև երկրորդը, որից հետո առջևից իրենց մոտ են բերել մոտավորապես տասը վիրավորի և մեկ զոհի: Վիրավորներից մեկը եղել է Ժիրայր Մէֆիլյանը, ով ազդրից է վիրավոր եղել, իսկ վերքը շատ խորն է եղել, անգամ մտածել են, որ վնասվել է աոտան: Արարատ Սարգսյանի *[(ռեպորտաժում նշվող արնաշաղախ զինվորը)]* համագյուղացի զին-

վորները հայտնել են, որ Արարատ Սարգսյանը զոհվել է, նրան ծածկել են թփերով, որպեսզի հետո վերադառնան և հուղարկավորեն, քանի որ իրենց գյուղն է, ծանոթ են տեղանքին: Վկան հայտնել է, որ ունեցել են երկու ձի, որոնցից մեկով տեղափոխել են զինամթերքը, իսկ մյուսով՝ զոհվածին: Ժիրայր Մեֆիլյանին սկզբում փորձել են դնել ձիու վրա, սակայն հասկացել են, որ ձիու վրա դնել հնարավոր չէ, քանի որ վերքը թույլ չէր տալիս: Իրենք ինքնաձիգներով պատգարակ են պատրաստել և տեղափոխել վիրավորներին: Երրորդ օրը, հասնելով հայկական դիրքերին, տեղեկացել են, որ Արարատ Սարգսյանը ոչ թե զոհվել էր, այլ՝ վիրավորվել, և վիրավորվելուց հետո առավոտյան արթնացել է ու տեղանքին ծանոթ լինելով, իրենցից ավելի շուտ հասել հայկական դիրքերին: Վկան միաժամանակ հայտնել է, որ Ժիրայր Մեֆիլյանի վերքն այնպիսին էր, որ վերջինս ի վիճակի չէր որոշում կայացնել:

Վկա Վահան Գեղամյանը հայտնել է, որ Ժիրայր Մեֆիլյանը ո՛չ ձի է նստել ու փախել, ո՛չ որոշել Արարատ Սարգսյանին թողնել: Ժիրայր Մեֆիլյանը ծանր վիրավորված է եղել, անգամ չի իմացել, որ Արարատ Սարգսյանն էլ է վիրավոր: Արարատ Սարգսյանին իր համագյուղացիներն են թփերով ծածկել՝ մտածելով, որ զոհված է: Վկան նաև հայտնել է, որ ակառնի պայթյունի ժամանակ ինքը եղել է Ժիրայր Մեֆիլյանի կողքին, ով վիրավորվելուց հետո փորձել է անգամ ինքնասպան լինել, որպեսզի բեռ չլինի իրենց համար, սակայն իրենք թույլ չեն տվել: Վկան հայտնել է, որ սկզբից փորձել են վիրավորներին ու զոհվածին տեղափոխել ձիերով, սակայն հասկացել են, որ ձիու շարժման ժամանակ վիրավորների համար ավելի դժվար է: Ուստի վիրավորներին տեղափոխել են պատգարակներով (**հատոր 2-րդ, գ.թ. 37-40, դատական նիստի արձանագրություն**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վիրավորանքի և գրպարտության միջոցով պատվին, արժանապատվությանը և բարի համբավին հասցված վնասի հատուցման առանձնահատկությունների մասին, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ կետի և Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիրավորանքի և գրպարտության միջոցով պատվին, արժանապատվությանը և բարի համբավին հասցված վնասի հատուցման առանձնահատկություններին այն դեպքում, երբ հանրային անձի (մասնավորապես՝ քաղաքական գործչի) վերաբերյալ արարավորող տեղեկությունները տարածվում են լրագրողի կողմից:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից (...): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև **այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու**, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ նույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է: Նույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, **եթե այն հիմնված է սպոյզ փաստերի վրա** (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատաս-

խանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Վանո Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի թիվ ԼԳ/0749/02/10 քաղաքացիական գործով 27.04.2012 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի, բովանդակային առումով վերջինիս փոխկապված և պատվին, արժանապատվությանն ու գործարար համբավին պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական դրույթների մեկնաբանմանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանների հայեցողական լիազորության ճիշտ կենսագործման համար անհրաժեշտ է հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից սահմանված չափորոշիչները խոսքի ազատության իրավունքի և դրա սահմանափակումների վերաբերյալ, մասնավորապես.

1. խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները պետք է նախատեսված լինեն օրենքով,
2. դրանք պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում,
3. դրանք պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ,
4. կիրառված սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող իրավաչափ նպատակներին:

Եվրոպական դատարանի դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով «հետապնդում է իրավաչափ նպատակ» պայմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ գործերով իրավաչափ են այն նպատակները, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ կամ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված արժեքների՝ *անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության համար*:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ՝

1. արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, որպիսի փաստը ապացուցելու դատավարական բեռը կրում է հայցվորը,

2. արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստաց-

ներու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը,

3. արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով, որպիսի փաստի ապացուցման դատավարական բեռը դարձյալ կրում է հայցվորը (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված դրույթում ամրագրված վիրավորանքի սահմանումը չի կարող ենթադրել, որ անձի համբավին վնաս պատճառող ցանկացած բացասական կարծիք կամ որոշակի փաստական հիմք ունեցող գնահատող դատողություն պաշտպանված չէ օրենքով: Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է բացասական կարծիքի կամ գնահատող դատողության արտահայտումը այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա: Ի տարբերություն փաստերի, որոնք կարող են ներկայացվել և հիմնավորվել, գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել: Գնահատող դատողության ապացուցման պարտականությունն անհնար է իրականացնել և ինքնին խախտում է կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված իրավունքի հիմնարար մասն է կազմում: Այնուամենայնիվ, երբ հայտարարությունը որակվում է որպես գնահատող դատողություն, անհրաժեշտ է, որ վերջինս հիմնվի քաղաքական փաստական կազմի վրա (տե՛ս, Պեդերսենը և Բասադազարդն ընդդեմ Դանիայի գործով Եվրոպական դատարանի 17.12.2004 թվականի վճիռը, կետ 76): Գնահատողական դատողությունը կարող է անընդունելի համարվել, քանի որ այն առանց փաստական հիմքի կարող է չափազանցված համարվել (տե՛ս, Ռիզոսը և Դասկանն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 27.05.2004 թվականի վճիռը, կետ 45):

Անդրադառնալով «Ստույգ փաստեր» եզրույթին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այդպիսիք հանդիսանում են այն փաստերը, որոնք հիմնավորվում են ապացույցներով տեղեկատվության հրապարակման հետ միաժամանակ կամ հանդիսանում են հանրահայտ փաստեր (ապացուցման անհրաժեշտություն չունեցող): Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փաստերի և գնահատող դատողությունների տարբերակման խնդրին, քանի որ դրանք մեծ կարևորություն են ներկայացնում գործի քննության համար և մեծապես կարող են ազդել գործի ելքի վրա: Եվրոպական դատարանը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում անդրադառնալով նշված խնդրին, հստակ տարանջատում է կատարում **փաստերի և գնահատող դատողությունների** միջև, որի վերաբերյալ ձևավորել է հետևյալ ընդհանուր սկզբունքը. «Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել. գնահատող դատողությունների ապացուցումն անհնարին խնդիր է, և նման պահանջը խախտում է կարծիքի արտահայտման ազատությունը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնարար մասերից է» (տե՛ս Լիսգեյանն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը, կետ 46):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ գնահատող դատողությունը, դիտարկելով որպես կարծիքի ազատ արտահայտման, այլ ոչ թե տեղեկություններ տարածելու իրավունքի դրսևորում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում

պետք է գնահատման առարկա դարձնել այն, ***թե արդյոք ԿՎԿԿ դատողությունը հիմնված է որոշակի փաստերի վրա:*** Փաստական հիմքից զուրկ գնահատող դատողությունը պաշտպանված չէ պետական միջամտությունից: ՀՀ վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է նաև նրանով, որ անդրադառնալով նշված հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ անձնական կարծիքը կարող է չափազանցված համարվել՝ հատկապես փաստացի հիմքի բացակայության պայմաններում (*Կե 'ս, Օբերշլիքս ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 01.07.1997 թվականի վճիռը, կետ 33*):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե՞ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ ***միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում:***

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ զրպարտություն գնահատելու չափանիշներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

1. անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,

2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային,

3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,

4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Որպեսզի միջամտությունը խոսքի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքին լինի համաչափ օրինական նպատակներին՝ այլ մարդկանց հեղինակության պաշտպանությանը, անհրաժեշտ է օբյեկտիվ կապի առկայություն գնահատող դատողությունների և այն անձի միջև, ով դիմել է դատարան: Հրապարակումների զրպարտչական բնույթի մասին միայն ենթադրելը և կասկածելը բավարար չէ հաստատելու այն հանգամանքը, որ որևիցե կոնկրետ անձի հասցվել է վնաս: Գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի հանգամանք, որ սովորական ընթերցողն էլ զգա, որ ***ԿՎԿԿ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատիրին, կամ էլ որ հենց ինքն է հանդիսացել քննադատության թիրախ (Կե 'ս, Եյուդին և Կիպուլը ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 31.10.2007 թվականի վճիռը, կետ 44):***

Անդրադառնալով փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը զրպարտություն չհամարելու պայմաններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը «պայմանավորված են գերակա հանրային շահով» պայմանի կապակցությամբ հայտնել է հետևյալը.

Ի տարբերություն վիրավորանքի, երբ տեղեկատվության՝ գերակա հանրային շահով պայմանավորված լինելու հանգամանքի առկայությունը բացառում է տվյալ տեղեկատվությունը վիրավորանք համարելը, զրպարտության դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ փաստական կազմի առկայություն: Մասնավորապես՝ փաստացի տվյալներ հրապարակված անձը պետք է ապացուցի, որ մինչև հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք **հնարա-**

վորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին համապատասխանել իրականությանը: Բացի այդ, հրապարակող անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարեխիղճ և հավասարակշռված: Այս դեպքում բարեխիղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալի (տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք: Ինչ վերաբերում է «հավասարակշռված» եզրույթին, ապա ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ հավասարակշռվածություն պետք է լինի ներկայացվող փաստացի տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության առումով: Փաստացի տվյալների հրապարակումը, պայմանավորված լինելով գերակա հանրային շահով, չպետք է պարունակի զրպարտող այլ տեղեկություններ, որոնք չեն առնչվում տվյալ խնդրին:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ ևս մեկ իրավական խնդրի՝ քաղաքական խոսքին կամ հանրությանը հետաքրքրող հարցերի շուրջ բանավեճին և պաշտոնատար անձանց քննադատությանը:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քաղաքական խոսքը կամ հանրությանը հետաքրքրող հարցերի շուրջ բանավեճը սահմանափակելու առումով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառման նեղ ոլորտ ունի (*Իրե 'ս, Ուինգրոֆս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 25.11.1996 թվականի վճիռը, կետ 58*): Բացի այդ, թույլատրելի քննադատության սահմաններն ավելի լայն են կառավարության, քան թե մասնավոր քաղաքացու կամ նույնիսկ քաղաքական գործչի նկատմամբ: Ժողովրդավարական հասարակարգում պետության գործողությունները կամ բացթողումները պետք է ենթարկվեն խիստ վերահսկողության ոչ միայն օրենսդիր և դատական մարմինների, այլև մամուլի և հանրային կարծիքի կողմից (*Իրե 'ս, Բնկայն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 09.06.1999 թվականի վճիռը, կետ 54*): Քաղաքական գործիչների նկատմամբ ընդունելի քննադատության սահմանները, հետևաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց պարագայում: *Ի փարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչներն անհուսափելիորեն և գիտակցաբար իրենց հասանելի են դարձնում արված յուրաքանչյուր խոսքի և գործի նկատմամբ լրագրողների և հանրության լայն խավերի արված ուշադրության համար, և նրանք այդ կապակցությամբ պարտավոր են հանդուրժողականության ավելի մեծ աստիճան դրսևորել: Անկասկած, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը թույլ է տալիս պաշտպանել այնոց, այսինքն՝ բոլոր անհատների հեղինակությունը, և այս պաշտպանությունը փարածվում է քաղաքական գործիչների նկատմամբ ևս, եթե նույնիսկ նրանք հանդես չեն գալիս իրենց մասնավոր կարգավիճակում, սակայն նման դեպքերում այդպիսի պաշտպանության պահանջները պետք է կշեռքի նժարին դնել՝ մյուս նժարին դնելով քաղաքական հարցերը բաց կերպով քննարկելու շահերը* (*Իրե 'ս, Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը, կետ 42*):

Վերոնշյալի հաշվառմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման, հետևաբար և կարծիքի ազատ արտահայտման և տեղեկություններ տարածելու իրավունքի միջամտության ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն, որ քաղաքական գործիչների, հանրային ծառայողների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ քննադատության սահմաններն ավելի լայն են, քան մասնավոր անձանց դեպքում: Այդուհանդերձ նման քննադատությունն ընդունելի կարող է

համարվել, եթե այն արտահայտվել է վերջիններսի գործունեության ստեղծմանը և չի գերազանցում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված վերոնշյալ սահմանափակումները: Հակառակ դեպքում քաղաքական գործչի՝ որպես մասնավոր անձի վերաբերյալ քննադատության նկատմամբ ամբողջ ծավալով կիրառելի են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանափակումները, և հնչեցրած կարծիքը կամ տարածած տեղեկությունը որպես գրպարտություն գնահատելիս չպետք է հաշվի առնել անձի՝ պաշտոնատար անձ լինելու հանգամանքը:

Հետագա որոշումներով ՀՀ վճռաբեկ դատարանը զարգացրել է վերոգրյալ որոշմամբ իր հայտնած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես՝ *Անիկ Դավթյանն ընդդեմ Տիգրան Վիրաբյանի թիվ ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով 08.05.2014 թվականի որոշմանը* ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մարդու արժանապատվությունը մարդու իրավունքների հիմնական աղբյուրն է, պետության գոյության հիմնական պատճառներից մեկը: Մարդու արժանապատվության մասին նշված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, որոնց համաձայն՝ մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ է արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրությունը հռչակել է, որ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական և իրավական պետություն է: Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվությունը ճանաչվում է որպես բարձրագույն արժեք, որպես մարդու իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, ինչից հետևում է, որ յուրաքանչյուր մարդու արժանապատվությունը ենթակա է պաշտպանության պետության կողմից: Միաժամանակ ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության և իրավական պետության հիմքում, այն հանդիսանում է ժողովրդավարական հասարակության զարգացման հիմնական խթաններից մեկը և 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 27-րդ [(2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ)] և Կոնվենցիայի 10-րդ հոդվածներն անվերապահորեն հետապնդում են վերը նշված նպատակը: Սակայն ինչպես նշված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում, այս ազատության իրականացումը կապված է պարտականությունների և պատասխանատվության հետ: Չպետք է անտեսել նաև այլ իրավունքները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային՝ մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող փաստաթղթերում նշված արժանապատվության և մասնավոր կյանքի իրավունքը, որոնք պակաս կարևոր չեն ժողովրդավարական հասարակության և իրավական պետության համար: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ այն դեպքերում, երբ մարդու արժանապատվության և արտահայտվելու ազատության իրավունքի բխում է տեղի ունենում, անհրաժեշտ է գտնել պարզ հավասարակշռություն սրանց միջև: Սրանցից յուրաքանչյուրն էլ ժողովրդավարական հասարակության անհրաժեշտ բաղադրամասեր են, և երկուսն էլ պետք է ներդաշնակորեն առկա լինեն ժողովրդավարական հասարակությունում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի արժանապատվության գործնականում ապահովման իրավական երաշխիք է:

Ամփոփելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել հետևյալը.

Անձի արժանապատվությունը և կարծիքի տարածման ազատությունը պետք է գտնվեն արդարացի հավասարակշռության մեջ: Բացառությամբ օրենքով սահմանված սահմանա-

փակ դեպքերի՝ անթույլատրելի է անձի արժանապատվության ոտնահարումը՝ կարծիքի տարածման ազատության շղարշի ներքո:

Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորում է այս հարցում լրագրողների գործունեությունը, ովքեր լրատվական գործունեություն իրականացնող (այսինքն՝ ըստ «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ օրենքի տրամաբանության՝ տեղեկատվություն տարածող) արհեստավարժ սուբյեկտներ են: Եթե հասարակության սովորական անդամի համար միգուցե կարող է ոչ միանշանակ լինել տեղեկատվության տարածման հարցում բարեխղճության սկզբունքի պահպանումը, ապա սույն սկզբունքը պետք է ընկած լինի լրագրողական գործունեության հիմքում:

Նշված դիրքորոշումը համադրելով Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է հետևյալը.

Հրապարակելով որևէ գնահատողական դատողություն՝ լրագրողը պարտավոր է ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար: Անգամ եթե լրագրողի դատողությունը հիմնվում է որևէ անձի հայտնած փաստերի վրա, ապա որպես իրավահարաբերության արհեստավարժ մասնակից՝ լրագրողը պարտավոր է առնվազն փորձել լսել տեղեկատվության հասցեատիրոջ կարծիքը, որից հետո միայն հրապարակել իր գնահատողական դատողությունը: Ընդ որում, անգամ գնահատողական դատողությունը պետք է հիմնվի բավարար փաստական կազմի վրա՝ պայմանավորված բարեխղճության սկզբունքի պահպանման անհրաժեշտությամբ: Հակառակ պարագայում արված արտահայտությունը կարող է որակվել որպես վիրավորանք (եթե իհարկե բավարարում է անհրաժեշտ մնացած պայմաններին):

Ինչ վերաբերում է գրպարտությանը, ապա Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ լրագրողի գործունեությունը չի կարող հետապնդել քողարկված կերպով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ: Եվրոպական դատարանի հայտնած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ նմանատիպ դեպքերում կարևորվում է օբյեկտիվ ընկալումը, այսինքն՝ այն հանգամանքը, թե արդյոք հասարակության սովորական անդամն էլ կզգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն հայցվորին, կամ էլ որ հենց նա է հանդիսացել քննադատության թիրախ:

Փաստացի տվյալներ հրապարակող լրագրողը պետք է ապացուցի, որ մինչ հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք **հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության** այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին համապատասխանել իրականությանը: Բացի այդ, հրապարակող անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարեխիղճ և հավասարակշռված: Այս դեպքում բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալի (տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ թեև քաղաքական գործիչների մասով քննադատության սահմաններն ավելի լայն են, սակայն հանդուրժողականությունը վերաբերում է վերջիններիս քաղաքական գործունեության առնչությամբ տարածված տեղեկատվությանը, ընդ որում՝ ոչ բացարձակ ծավալներով: Այսինքն՝ անգամ քաղաքական գործունեության քննադատության արդյունքում հրապարակված տեղեկատվության կապակ-

ցությանը քաղաքական գործիչներն օգտվում են պատվի և արժանապատվության պաշտպանությունից: Իսկ եթե քաղաքական գործիչը հանդես է գալիս որպես մասնավոր անձ, ապա վերջինիս վերաբերյալ քննադատության նկատմամբ ամբողջ ծավալով կիրառելի են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանափակումները, և հնչեցրած կարծիքը կամ տարածած տեղեկությունը որպես զրպարտություն գնահատելիս չպետք է հաշվի առնել անձի՝ պաշտոնատար անձ լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 12.06.2016 թվականին Ընկերության կողմից հեռարձակվել է «Սուր անկյուն» հաղորդաշարի 197-րդ թողարկումը, որի մի մասում՝ «Հաղթանակը շատ հայրեր ունի» խորագրով հաղորդմամբ՝ հետաքննությանը վերաբերվող 26:25-37:10 հատվածում և դրա մասին անոնսներում, հնչել են Ժիրայր Սէֆիլյանին վերաբերող տեղեկություններ: Մասնավորապես՝ հաղորդավար Վահե Ղազարյանը և լրագրող Նելլի Հարությունյանը, խոսելով Կարո Քահքեյանի և Վարդան Ստեփանյանի հերոսական արաքների մասին, հնչեցրել են հետևյալ արտահայտությունները. «*Իրոք որ, հրամանատար էլ կա, հրամանատար էլ*», «*Միայն իրական հրամանատարին է բնորոշ հասկանալ զինվորի արժեքը*», «*(...) գործնականում պարզի գիրակցումն ու բարոյականության դրսևորումները ոչ բոլորին են հայրուկ՝ շարքային, թե հրամանատար*»:

Գործով որպես վկա հարցաքննված Անդրանիկ Ներսիսյանը և Վահան Գեղամյանը հայտնել են, որ Ժիրայր Սէֆիլյանը չի որոշել Արարատ Սարգսյանին թողնել վիրավոր (ենթադրաբար՝ զոհված) վիճակում: Բացի այդ, հայտնել են, որ Ժիրայր Սէֆիլյանի ստացած վերքն այնպիսին էր, որ վերջինիս հնարավոր չէր նստեցնել ձիու վրա, ուստի ձիերով տեղափոխել են զինամթերքը և զոհված զինվորին:

Դատարանը հայցը մերժել է՝ մասնավորապես պատճառաբանելով, որ Ժիրայր Սէֆիլյանը քաղաքական գործիչ է և իր գործողություններին վերաբերող քննադատության նկատմամբ պետք է դրսևորի առավել հանդուրժողականություն: Բացի այդ, ներկայացված փաստացի տվյալները հիմնված են եղել այդ գործողություններին մասնակցած անձանց հայտարարությունների վրա, որոնք ևս ներկայացվել են այդ հաղորդման ընթացքում, վերաբերում են հանրային կարևորություն ունեցող հարցի, ինչպիսին տվյալ դեպքում Արցախյան գոյամարտին վերաբերող իրադարձությունն է, որն առավել կարևորվում է 2016 թվականի ապրիլին տեղի ունեցած իրադարձություններից հետո, և դա նույնպես նշվել է հաղորդման սկզբում, իսկ լրատվության ազատության պաշտպանության ներքո է գտնվում նաև որոշակի աստիճանի չափազանցված կամ հրահրող խոսքը: Տվյալ դեպքում թողարկման ժամանակ ներկայացված փաստացի տվյալները չեն կարող համարվել զրպարտություն, իսկ դատողությունները գնահատող դատողություններ են, դրանք որևէ փաստացի տվյալ չեն պարունակում: Քննարկվող արտահայտությունները չեն կարող համարվել վիրավորանք, քանի որ դրանք ակնհայտորեն չեն գերազանցում իրավաչափության սահմանները:

Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, պատճառաբանել է, որ «Սուր անկյուն» հաղորդաշարի 12.06.2016 թվականի թիվ 197 թողարկման ընթացքում հայտնած տվյալները հիմնված են եղել հաղորդմանը հրավիրված և այդ գործողություններին մասնակցած և վերոնշյալ իրադարձություններին ակնատես դարձած անձանց հարցազրույցների վրա, իսկ տվյալ փաստական տվյալների վերաբերյալ կատարված արտահայտությունները գնահատողական են, կրում են ընդհանրական բնույթ և վերաբերում են

նման երևույթներին ընդհանրապես, իսկ գնահատողական դատողությունը կարող է ունենալ որոշակի աստիճանի չափագանցվածություն, ինչը գտնվում է լրատվության ազատության պաշտպանության ներքո:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը, սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով դատարանները չեն իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված պատշաճ քննություն, մասնավորապես՝ հիշատակված հաղորդման ժամանակ հնչեցված՝ Ժիրայր Սէֆիլյանին վերաբերող տեղեկությունները չեն գնահատել վկաների ցուցմունքների համակցության մեջ: Դատարանը, մերժելով հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը՝ վերաքննիչ բողոքը, ըստ էության հիմնական պատճառաբանությունը կառուցել են Ժիրայր Սէֆիլյանի՝ քաղաքական գործիչ հանդիսանալով պայմանավորված հանդուրժողականության ավելի լայն սահմանների, ինչպես նաև ռեպորտաժում հնչեցված արտահայտություններն այլ անձանց կողմից հայտնած լինելու հանգամանքի վրա: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ դատարանները պարտավոր էին սույն գործով վիրավորանքի և գրպարտության առկայության համար անհրաժեշտ պայմանները և ըստ այդմ Ժիրայր Սէֆիլյանի պատվի և արժանապատվության պաշտպանության սահմանները գնահատել սույն որոշմամբ վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ այդ թվում բացահայտելով լրագրողների վարքագծի բարեխղճությունը սույն գործով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն՝ սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի փաստական հանգամանքները գնահատելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող Նախկին օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատարանի ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապ-

ված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Դատական ծախսերը» վերտառությամբ 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճարել բողոքը ենթակա է բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճարել դատարանը գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում՝ ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.06.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.01.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման, այդ թվում՝ ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.06.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0397/02/15
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0397/02/15

Նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ա. Հունանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի փետրվարի 20-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Դավիթ Ազիզյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.06.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ Վարդուհի և Խաչատուր Թադևոսյանների՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Վարդուհի և Խաչատուր Թադևոսյաններից բռնագանձել 44.483,46 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ բռնագանձումը տարածելով 28.10.2009 թվականին կնքված թիվ 349-Հ/2009 առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման համար Բանկի օգտին գրավադրված՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 բնակելի տան վրա, պայմանագրային տոկոսների և տույժերի հաշվեգրումը շարունակել մինչև պարտավորության փաստացի կա-

տարման օրը, ինչպես նաև Վարդուհի և Խաչատուր Թառլանյաններից բռնագանձել 430.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Կուբանյան) (այսուհետ՝ Դատարան) 12.03.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանը վճռել է Խաչատուր Թառլանյանից հօգուտ Բանկի բռնագանձել 44.483 ԱՄՆ դոլար 46 ԱՄՆ ցենտին համարժեք ՀՀ դրամ, որից 41.540 ԱՄՆ դոլար 9 ցենտին համարժեք ՀՀ դրամը՝ որպես վարկի մնացորդ, 2.641 ԱՄՆ դոլար 49 ցենտին համարժեք ՀՀ դրամը՝ որպես հաշվարկված տոկոսագումար, 148 ԱՄՆ դոլար 45 ցենտին համարժեք ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց վարկի գծով միանվագ տուգանք և չվճարված տույժ, 153 ԱՄՆ դոլար 43 ցենտին համարժեք ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց տոկոսի գծով չվճարված տույժ, բռնագանձել 430.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը, ինչպես նաև մինչև պարտքի փաստացի մարումը 28.10.2009 թվականին կնքված թիվ 349-Շ/2009 վարկային պայմանագրով հաշվեգրվող տոկոսները և տույժերը՝ բռնագանձումը տարածելով գրավի առարկա հանդիսացող՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 հասցեի անշարժ գույքի՝ Խաչատուր Թառլանյանին սեփականության իրավունքով պատկանող 1/2 բաժնեմասի վրա: Դատարանը նաև վճռել է Խաչատուր Թառլանյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել մինչև պարտքի փաստացի մարումը 28.10.2009 թվականին կնքված թիվ 349-Շ/2009 վարկային պայմանագրով հաշվեգրվող տոկոսների և տույժերի ընդհանուր գումարի 2 տոկոսը՝ որպես պետական տուրքի գումար: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.06.2016 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.03.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ, 30-րդ, 242-րդ, 1243-րդ, 1244-րդ հոդվածները, խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերքել փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ժառանգության բացման պահին ժառանգատու (պարտապան) Բաբկեն Թառլանյանի ժառանգներից Վարդուհի Թառլանյանը եղել է անչափահաս և այդ պարագայում Բանկը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածին համապատասխան 12.11.2013 թվականի գրությամբ ծանուցել է Վարդուհի Թառլանյանի օրինական ներկայացուցիչ Խանում Նիկոյանին (Վարդուհի Թառլանյանի մորը): Հետևաբար Վարդուհի Թառլանյանի օրինական ներկայացուցիչ Խանում Նիկոյանին ծանուցելու փաստը հաստատում է Բանկի կողմից օրենքով սահմանված ժամկետում Բաբկեն Թառլանյանի իրավահաջորդ Վարդուհի Թառլանյանին պահանջ ներկայացնելու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ժառանգության ընդունումը միակողմ գործարք է, որը Վարդուհի Թառլանյանն ինքնուրույն իրականացնելու իրավասություն չի ունեցել, իսկ

Խանում Նիկոյանը, օրենքի հիման վրա հանդիսանալով Վարդուհի Թաղանյանի օրինական ներկայացուցիչը, տեղեկացված է եղել Բաբկեն Թաղանյանի ժառանգների նկատմամբ Բանկի ունեցած պահանջի մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.06.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել ամբողջությամբ:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բանկի և վարկառու Բաբկեն Թաղանյանի միջև 28.10.2009 թվականին կնքված թիվ 349-Ը/2009 վարկային պայմանագրով վերջինիս տրամադրվել է 60.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ տարեկան 16% տոկոսադրույքով, մինչև 28.10.2019 թվականը մարման ժամկետով: Պայմանագրի 1.10-րդ կետի համաձայն՝ նույն պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի գումարի և հաշվարկված տոկոսագումարների չմարման դեպքում չմարված վարկի գումարը և հաշվարկված տոկոսագումարները համարվում են ժամկետանց: Պայմանագրի 1.11-րդ կետի համաձայն՝ վարկառուն Բանկին միանվագ վճարում է տուգանք՝ ժամկետանց վարկի գումարի 5%-ի չափով, և կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ ժամկետանց վարկի գումարի 0,1%-ի չափով: Տույժի հաշվարկումը կատարվում է մինչև ժամկետանց վարկի փաստացի մարումը: Պայմանագրի 1.12-րդ կետի համաձայն՝ Վարկառուն ժամկետանց տոկոսագումարներ առաջանալու դեպքում Բանկին վճարում է տույժ՝ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ 0,1%-ի չափով՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար: Նույն պայմանագրի հավելվածով սահմանված է վարկի մայր գումարների և տոկոսների մարման ժամանակացույցը (**հատոր 1-ին, գ.թ. 8-11**):

2. Բանկի և Բաբկեն Թաղանյանի միջև 28.10.2009 թվականին կնքված թիվ 349-Ը/2009 առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրով Բաբկեն Թաղանյանը, ի սպառնալույս վերոնշյալ վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման՝ գրավադրել է Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 հասցեի անշարժ գույքը (**հատոր 1-ին, գ.թ. 12-13**):

3. 30.10.2009 թվականին տրված թիվ 0194112 գրավի, հիփոթեքի իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է Բանկի գրավի իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 14-15**):

4. 09.10.1996 թվականին տրված թիվ ԱԱ 070682 ծննդյան վկայականի համաձայն՝ 04.07.1996 թվականին ծնված Վարդուհի Թաղանյանի հայրը Բաբկեն Թաղանյանն է, մայրը՝ Խանում Նիկոյանը (**հատոր 1-ին, գ.թ. 157**):

5. 23.08.2013 թվականին տրված ԱԲ N131420 մահվան վկայականի համաձայն՝ Բաբկեն Թաղանյանը մահացել է 22.08.2013 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 159**):

6. Բանկի կողմից 12.11.2013 թվականին Խաչատուր Թաղանյանին ու Խանում Նիկոյանին ուղղված և վերջիններիս կողմից 14.11.2013 թվականին ստացված ծանուցումների համաձայն՝ «Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Դուք հանդիսանում եք Բաբկեն Թաղանյանի հնարավոր ժառանգ, հայտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների համաձայն՝ ժառանգները ժառանգության վկայագիրը ստանալուց հետո իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Բաբկեն Թաղանյանի ժառանգությունն ընդունելուց հետո քայլեր ձեռնարկել Բանկի նկատմամբ ժառանգատուի

պարտավորությունների պատշաճ կատարման ուղղությամբ» (**հատոր 1-ին, գ.թ. 162-163**):

7. 07.03.2014 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Բաբկեն Թաղանյանի գույքի նկատմամբ հավասարապես ժառանգներ են համարվում որդին՝ Խաչատուր Թաղանյանը (ծնված՝ 03.12.1993 թվականին), և դուստրը՝ Վարդուհի Թաղանյանը (ծնված՝ 04.07.1996 թվականին) (**հատոր 1-ին, գ.թ. 17**):

8. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին ուղղված Բանկի 13.03.2014 թվականի գրությամբ Բանկը չի առարկել, որպեսզի Խաչատուր և Վարդուհի Թաղանյաններին պատկանող, Բանկում գրավադրված Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 հասցեում գտնվող անշարժ գույքը (բնակելի տունը) բաժանվի մասերի՝ պահպանելով գրավի իրավունքը բաժանված բոլոր մասերի նկատմամբ (**հատոր 1-ին, գ.թ. 164**):

9. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին կողմից 03.04.2014 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03042014-01-0159 վկայականի համաձայն՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 հասցեի բնակելի տան նկատմամբ գրանցված է Խաչատուր Թաղանյանի (1/2 բաժնեմաս) և Վարդուհի Թաղանյանի (1/2 բաժնեմաս) սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 18**):

10. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին կողմից 03.04.2014 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03042014-01-0160 վկայականի համաձայն՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/3 հասցեի ավտոտնակի նկատմամբ գրանցված է Խաչատուր Թաղանյանի (1/2 բաժնեմաս) և Վարդուհի Թաղանյանի (1/2 բաժնեմաս) սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 169**):

11. Բանկի, գնորդ Հրանուշ Վիրաբյանի և վաճառողներ Խաչատուր և Վարդուհի Թաղանյանների միջև 04.04.2014 թվականին կնքվել է եռակողմ էսքրոու պայմանագիր՝ որպես գնորդի և վաճառողների միջև կնքվող գույքի առուվաճառքի պայմանագրի գնի վճարման երաշխավորված ապահովման միջոց, որի համաձայն՝ գնորդը գնում է Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/3 հասցեի ավտոտնակը (**հատոր 1-ին, գ.թ. 197**):

12. 07.04.2014 թվականին Բանկի կողմից տրված եզրակացությամբ Բանկը նպատակահարմար է գտել բավարարել Խաչատուր Թաղանյանի դիմումը և գրավից ազատել Խաչատուր և Վարդուհի Թաղանյաններին պատկանող՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/3 հասցեի ավտոտնակը՝ Բաբկեն Թաղանյանի վարկային պայմանագրից բխող պարտքի մի մասը վճարելու պայմանով (**հատոր 1-ին, գ.թ. 167**):

13. Խանում Նիկոյանի, Խաչատուր և Վարդուհի Թաղանյանների անձնագրերի պատճենների համաձայն՝ վերջիններիս հաշվառման հասցեն է՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 տունը (**հատոր 1-ին, գ.թ. 146-148, 150**):

14. Բանկի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Բաբկեն Թաղանյանի պարտքը Բանկի հանդեպ 02.02.2015 թվականի դրությամբ կազմում է ընդամենը 44.483,46 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 16**):

15. Բաբկեն Թաղանյանի վերաբերյալ բանկային քաղվածքի համաձայն՝ պարտքի վերջնական մնացորդը 22.02.2016 թվականի դրությամբ կազմում է 41.540,09 ԱՄՆ դոլար՝ որպես վարկի մնացորդ, 8.958,1 ԱՄՆ դոլար՝ որպես հաշվարկված տոկոս, 2.259,78 ԱՄՆ դոլար՝ որպես ժամկետանց գումարի տույժ, 2.330,19 ԱՄՆ դոլար՝ որպես ժամկետանց տոկոսի

տույժ (հատոր 1-ին, գ.թ. 204):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների կողմից ժառանգության ընդունման և նրանց նկատմամբ պարտատերերի կողմից պահանջ ներկայացնելու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ փասնչորսից մինչև փասնութ տարեկան անչափահասների կողմից ժառանգության ընդունման և ժառանգաբաժնի պարտատերերի կողմից նրանց նկատմամբ պահանջ ներկայացնելու առանձնահատկություններին՝ միաժամանակ վերահասարակելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ կետում նշված գործարքների: Այդպիսի անչափահասի կնքած գործարքը վավեր է նաև նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի՝ հետագայում տված գրավոր հավանության դեպքում: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները, առանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության, իրավունք ունեն (1) տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտները. (2) իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքի հեղինակի իրավունքներ. (3) օրենքին համապատասխան՝ ավանդներ մուծել վարկային հաստատություններ և տնօրինել դրանք. (4) կնքել կենցաղային մանր գործարքներ և նույն օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված այլ գործարքներ: Տասնվեց տարեկան դառնալիս՝ անչափահասներն իրավունք ունեն նաև, կոռպորատիվների մասին օրենքներին համապատասխան, լինել կոռպորատիվի անդամ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ միակողմ գործարքների նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են պարտավորությունների և պայմանագրերի մասին ընդհանուր դրույթները, եթե դրանք չեն հակասում օրենքին, գործարքի միակողմանի բնույթին և էությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքի կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1234-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ըստ կտակի ժառանգության դեպքում, եթե գույքը կտակված է երկու կամ մի քանի ժառանգների՝ առանց նշելու նրանցից յուրաքանչյուրի կողմից ժառանգվող կոնկրետ գույքն ու իրավունքները և, ըստ օրենքի ժառանգության դեպքում, եթե գույքն անցնում է երկու կամ ավելի ժառանգների, ժառանգության բացման օրվանից գույքը վերաձվում է ժառանգների ընդհանուր բաժնային

սեփականության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին հատուցվում են մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած և ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը.

երկրորդ հերթին հատուցվում են ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը պահպանելու և կտավարելու, ինչպես նաև կտակը կատարելու հետ կապված ծախսերը.

երրորդ հերթին բավարարվում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները.

չորրորդ հերթին բավարարվում են պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների պահանջները.

հինգերորդ հերթին հատուցվում են կտակային հանձնարարությունը կատարելու հետ կապված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ իրենց անցած ժառանգության արժեքի սահմաններում ժառանգները կրում են համապարտ պատասխանատվություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալուց հետո ժառանգը ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև իրեն անցած գույքի սահմաններում կարող է կրել պարտավորություններ, **եթե ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում պարտատերերի կողմից իրեն պահանջ է ներկայացվել:** Պահանջների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, ենթակա չեն բավարարման, քանի որ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը պահանջի ներկայացման դեպքում միայն ժառանգը կարող էր որոշել ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը (*Կրե 'ս, Սեդա Սոնյանն ընդդեմ Իդա Էբգիմյանի թիվ 3-1778(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերը շարադրված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին կետով օրենսդրի կողմից ժառանգատուի պարտատերերի համար պահանջներ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանելն ինքնանպատակ չէ. այն կոչված է ապահովելու քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը և որոշակիությունը՝ պայմանավորված ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով:

Ընդունելով ժառանգությունը՝ ժառանգը ոչ միայն ձեռք է բերում համապատասխան

իրավունքներ, այլ նաև պարտավորություն է ստանձնում իրեն անցած գույքի արժեքի սահմաններում պատասխանատվություն կրելու ժառանգատուի պարտավորությունների համար: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում իր ժառանգման իրավունքն իրացնելիս ժառանգը **պետք է հստակ պատկերացում ունենա ինչպես ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի կազմի, այնպես էլ ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ:** Եթե ժառանգության զանգվածի կազմը, որպես կանոն, պարզ է լինում ժառանգի համար, այլ է իրավիճակը ժառանգատուի պարտավորությունների պարագայում: Վերջիններիս վերաբերյալ որոշակի պատկերացում ժառանգը կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ օրենքով սահմանված ժամկետում պարտատերերի կողմից ներկայացվեն համապատասխան պահանջներ: Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը, ժառանգատուի պարտատերերի համար սահմանելով պահանջների ներկայացման վերջնաժամկետ, ըստ էության, նախադրյալներ է ապահովել ժառանգի համար ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի և ժառանգատուի պարտավորությունների հաշվառմամբ որոշելու իր՝ ժառանգման իրավունքի իրացման հարցը: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ժամկետը դասվում է իրավադադարեցնող ժամկետների շարքին, ինչը նշանակում է, որ այդ ժամկետի բացթողումը հանգեցնում է պարտատիրոջ իրավունքի կորստի: Այսպես՝ գործնականում չի բացառվում, որ ժառանգությունը բացվելուց հետո ժառանգատուի պարտատերը կարող է որոշակի տևական ժամանակ օբյեկտիվորեն չիմանալ պարտապանի մահվան մասին: Մինչդեռ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածը, այնպես էլ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելուն վերաբերող մյուս իրավանորմերն այդ կապակցությամբ որևէ բացառություն չեն նախատեսում: Ավելին, ՀՀ օրենսդրությունը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող որոշակի իրավահարաբերությունների, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի (*Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը*) և 1228-րդ հոդվածի 2-րդ կետի (*Ժառանգությունն ընդունելը սահմանված ժամկետի ավարտից հետո*) կարգավորումների, չի նախատեսում նաև համապատասխան անձի մահվան մասին տեղյակ չլինելու հիմքով պահանջատիրոջ կողմից ժառանգներին պահանջ ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու և (կամ) այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն: Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, **որ ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում պարտատերերի կողմից պահանջները չներկայացնելու դեպքում նրանք զրկվում են հետագայում պարտապանի ժառանգների դեմ իրենց պահանջները ներկայացնելու իրավունքի իրացման հնարավորությունից:**

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով օրենսդիրը սահմանափակել է նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնց ժառանգատուի պարտատերերը կարող են ներկայացնել իրենց պահանջները, մասնավորապես՝ պարտատերն իրավունք ունի իր պահանջը բացառապես ներկայացնելու ժառանգությունն ընդունած ժառանգներին, կտակակատարին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Օրենսդիրը, ամրագրելով նշված սուբյեկտների շրջանակը և նրանց պահանջ ներկայացնելու ժամանակահատվածը, այդուհանդերձ, չի կարգավորել այդ պահանջների ներկայացման կարգը: Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում պարտատերն իր իրավունքը պետք է իրացնի այնպիսի եղանակով, որով հնարավոր է ապացուցել վերը թվարկված սուբյեկտներին ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ տեղեկացնելու փաս-

տը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների փոխկապակցված վերլուծությամբ անդրադառնալով ժառանգությունն ընդունած ժառանգին պահանջ ներկայացնելու կարգին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ նման պահանջ կարող է ներկայացվել ժառանգման իրավունք ունեցող այն անձանց, որոնց վարքագիծը վկայում է ժառանգության հնարավոր ընդունման փաստի մասին: Ընդ որում, նման պահանջը կարող է ինչպես անմիջականորեն հասցեագրվել ժառանգին, այնպես էլ վերջինիս ներկայացվել դատարան հայց հարուցելու միջոցով: ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է հայցի ինստիտուտի էությունից, մասնավորապես՝ հայցը նյութափրավական և դատավարական հասկացություն է, որի նյութափրավական կողմն արտահայտվում է հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող իրավական պահանջի մեջ, իսկ դատավարական կողմը դատարանին հասցեագրված պահանջն է՝ քննել և լուծել կողմերի միջև ծագած վեճը: Հետևաբար ժառանգատուի պարտատերը, վերջինիս հետ ունեցած պարտավորությունից բխող պահանջ ներկայացնելով դատարան ընդդեմ ժառանգման իրավունք ունեցող անձի, հայցի նյութափրավական կողմի տեսանկյունից իրացնում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով իրենց վերապահված իրավունքը (*տես, Գյուլփերի Սրեփանյանն ընդդեմ Անահիտ Մկրտչյանի և մյուսների թիվ ԱՐԱԿ/0416/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի սահմանափակում դնելը նպատակաուղղված է ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու իր իրավունքի իրացման համար բավարար հստակություն և որոշակիություն մտցնելուն, որպեսզի սահմանված ժամկետի ընթացքում ժառանգը հնարավորություն ունենա որոշել՝ ընդունել ժառանգությունը, թե՛ ոչ, կամ օրինակ՝ պարտատերերի կողմից նշված ժամկետում պահանջ ներկայացվելու դեպքում հրաժարվել ժառանգությունից, թե՛ ոչ: Ընդ որում, նման կարգավորումը կիրառելի է ինչպես նոտարին դիմում ներկայացնելու, այնպես էլ փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգությունն ընդունելու պարագայում: Երկու դեպքում էլ ժառանգը պետք է իրական պատկերացում ունենա ժառանգության զանգվածի վերաբերյալ (*տես, «Յունիբանկ» ԲԲԸ-ն ընդդեմ Անիկ Սրեփանյանի իրավահաջորդ Սիմոն Արզումանյանի թիվ ԵԱԲԿ/2190/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների կողմից ժառանգությունն ընդունելու առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ժառանգության ընդունումը միակողմ գործարք է (*տես, օրինակ, Սուսաննա Նեմչինովան ընդդեմ Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շարոյանի և Սուրեն Առաքելյանի թիվ ԵԿԿ/2472/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*), հետևաբար նշված հարաբերությունների սկստմամբ կիրառելի են տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների կողմից գործարք կնքելու վերաբերյալ կարգավորումները: Այսինքն՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները ժառանգությունն ընդունում են՝ մասնավորապես նոտարին դիմում են ներկայացնում ինքնուրույն, սակայն անպայմանորեն իրենց օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ:

Օրենսդրի կողմից նման կարգավորում նախատեսելը պայմանավորված է այն հանգա-

մանքով, որ թեև տասնչորսից մինչև տասնույթ տարեկան անչափահասները որոշակի ծավալով ժտված են քաղաքացիական գործունակությամբ, սակայն մասնավորապես տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ այն դեռևս բավարար չէ, որպեսզի նշված խմբի մեջ մտնող անչափահասները լիարժեքորեն ունակ լինեն ընկալելու սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու և իրացնելու իրավական հետևանքները: Հետևաբար դա է պատճառը, որ բացառությամբ որոշակի խումբ գործարքների, մնացած գործարքների դեպքերում օրենսդիրը պարտադիր է համարում նաև օրինական ներկայացուցչի համաձայնությունը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ կարգավորումն արդարացիորեն գործում է նաև ժառանգման ընդունման դեպքում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տասնչորսից մինչև տասնույթ տարեկան անչափահասները պետք է լիարժեքորեն պատկերացում կազմեն ժառանգության ընդունման իրավական հետևանքների՝ մասնավորապես այն հանգամանքի մասին, որ ժառանգության ընդունումը ենթադրում է ինչպես իրավունքների, այնպես էլ պարտականությունների ստանձնում, որից էլ ելնելով՝ հետագայում ժառանգները կարող են պատասխանատվություն կրել ժառանգատուի պարտատերերի առջև: Հետևաբար տրամաբանական է, որ նշված դեպքերում ևս պահանջվում է օրինական ներկայացուցիչների համաձայնությունը, որպեսզի արդյունավետ կերպով իրականացվի տասնչորսից մինչև տասնույթ տարեկան անչափահաս ժառանգների իրավունքների և շահերի ապահովումը:

Անդրադառնալով պարտատերերի կողմից տասնչորսից մինչև տասնույթ տարեկան անչափահասներին պահանջներ ներկայացնելու առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քանի որ պահանջ ներկայացնելու նպատակն այն է, որ իր ժառանգման իրավունքն իրացնելիս ժառանգը հստակ պատկերացում ունենա ինչպես ժառանգության զանգվածի մեջ մտնող իրավունքների, այնպես էլ ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ, պահանջ ներկայացնելը պետք է իրականացվի այնպես, որ ժառանգը տեղյակ լինի և լիարժեքորեն պատկերացում կազմի ժառանգության ընդունման հետևանքների մասին: Նկատի ունենալով, որ քաղաքացիական հարաբերության սուբյեկտը տասնչորսից մինչև տասնույթ տարեկան անչափահաս է, իսկ օրինական ներկայացուցիչն ապահովում է վերջինիս կողմից իր իրավունքների և պարտականությունների լիարժեք իրացումը՝ հավանություն տալով կամ չտալով անչափահասի կնքած գործարքներին, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ դատարանների կողմից ուշադրություն պետք է դարձվի այս երկու հանգամանքներին միաժամանակ: Մասնավորապես անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ն տասնչորսից մինչև տասնույթ տարեկան անչափահասը, ն՝ նրա օրինական ներկայացուցիչը տեղյակ են եղել պարտատիրոջ պահանջի մասին, և այդ հանգամանքը հաշվի առնելով՝ համապատասխանաբար ընդունել են ժառանգությունը կամ տվել համաձայնություն ժառանգության ընդունման մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և վարկառու Բաբկեն Թառլանյանի միջև 28.10.2009 թվականին կնքված վարկային պայմանագրով վերջինիս տրամադրվել է 60.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ, տարեկան 16% տոկոսադրույքով՝ մինչև 28.10.2019 թվականը մարման ժամկետով: Ի ապահովումն նշված պայմանագրի՝ նույն անձանց միջև 28.10.2009 թվականին կնքվել է առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիր, որով գրավադրվել է Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 հասցեի անշարժ գույքը: Բանկի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Բաբկեն Թառլանյանի պարտքը Բանկի հանդեպ 02.02.2015 թվականի

դրությամբ կազմում է ընդամենը 44.483,46 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Բարեկեն թաղանթի վերաբերյալ բանկային քաղվածքի համաձայն՝ պարտքի վերջնական մնացորդը 22.02.2016 թվականի դրությամբ կազմում է 41.540,09 ԱՄՆ դոլար՝ որպես վարկի մնացորդ, 8.958,1 ԱՄՆ դոլար՝ որպես հաշվարկված տոկոս, 2.259,78 ԱՄՆ դոլար՝ որպես ժամկետանց գումարի տույժ, 2.330,19 ԱՄՆ դոլար՝ որպես ժամկետանց տոկոսի տույժ:

Բարեկեն թաղանթի մահացել է 22.08.2013 թվականին: 07.03.2014 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Բարեկեն թաղանթի գույքի նկատմամբ հավասարապես ժառանգներ են համարվում որդիին՝ Խաչատուր թաղանթյանը (ծնված՝ 03.12.1993 թվականին), և դուստրը՝ Վարդուհի թաղանթյանը (ծնված՝ 04.07.1996 թվականին): Բանկի կողմից 12.11.2013 թվականին պահանջ է ներկայացվել Խաչատուր թաղանթյանին ու Խանում Նիկոյանին (Վարդուհի թաղանթյանի մորը):

13.03.2014 թվականի գրությամբ Բանկը չի առարկել, որպեսզի Խաչատուր և Վարդուհի թաղանթյաններին պատկանող, Բանկում գրավադրված՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 հասցեում գտնվող բնակելի տունը բաժանվի մասերի՝ պահպանելով գրավի իրավունքը բաժանված բոլոր մասերի նկատմամբ: 03.04.2014 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/2 հասցեի անշարժ գույքի և նույն փողոցի 1/3 հասցեի ավտոտնակի նկատմամբ գրանցված է Խաչատուր թաղանթյանի (1/2 բաժնեմաս) և Վարդուհի թաղանթյանի (1/2 բաժնեմաս) սեփականության իրավունքը:

Բանկի, գնորդ Հրանուշ Վիրաբյանի և վաճառողներ Խաչատուր և Վարդուհի թաղանթյանների միջև 04.04.2014 թվականին կնքվել է եռակողմ էսքրոու պայմանագիր: Բանկի 07.04.2014 թվականի եզրակացությամբ Բանկը նպատակահարմար է գտել գրավից ազատել Խաչատուր և Վարդուհի թաղանթյաններին պատկանող՝ Երևանի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 1/3 հասցեի ավտոտնակը՝ Բարեկեն թաղանթյանի վարկային պարտավորության մի մասը մարելու պայմանով:

Դատարանը, Վարդուհի թաղանթյանի մասով հայցը մերժելով, պատճառաբանել է, որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Բանկը Վարդուհի թաղանթյանին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված կարգով պահանջ է ներկայացրել, հետևաբար Բանկի պահանջի իրավունքը Վարդուհի թաղանթյանի նկատմամբ չի ծագել:

Վերաքննիչ դատարանը, ըստ էության համաձայնելով Դատարանի եզրահանգման հետ, հավելել է, որ Խաչատուր թաղանթյանին և Խանում Նիկոյանին ուղղված ծանուցմամբ Բանկը Խանում Նիկոյանին դիտել է ոչ թե որպես Վարդուհի թաղանթյանի օրինական ներկայացուցիչ, այլ ժառանգատուի ամուսին:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ

հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տե՛ս, Ռուզաննաս Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տե՛ս, Սվերլանաս Ժոյիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԳ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Սույն գործով թեև Բանկն ուղղակիորեն պահանջ է ներկայացրել ժառանգներից միայն Խաչատուր Թառլանյանին, սակայն գործում առկա ապացույցներից ակնհայտ է, որ Վարդուհի Թառլանյանը ևս տեղյակ է եղել Բանկի պահանջից, ավելին՝ իր գործողություններով ընդունել է ժառանգության մաս կազմող պարտավորությունը՝ մասնավորապես կնքելով էսքրոտ պայմանագիր, որից հետո Բանկը համաձայնել է գրավից ազատել Խաչատուր և Վարդուհի Թառլանյանների սեփականություն հանդիսացող ավտոտնակը՝ Բաբկեն Թառլանյանի պարտավորության մի մասը մարելու նպատակով: Բանկի պահանջի մասին Վարդուհի Թառլանյանի տեղյակ լինելու մասին են վկայում նաև այլ ապացույցներ՝ մասնավորապես ժառանգների նույն հաշվառման հասցեում բնակվելը, Բանկի ծանուցումը Վարդուհի Թառլանյանի մոր՝ Խանում Նիկոյանի կողմից ստանալը, ժառանգության իրավունքի վկայագիր ստանալուց հետո ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը գրանցելու համար Բանկի համաձայնությունը ստանալը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա անուղղակի ապացույցների համադրության արդյունքում հիմնավորվում է, որ Վարդուհի Թառլանյանը տեղեկացվել է Բանկի ունեցած պահանջի մասին, այսինքն՝ ըստ էության Բանկը պահանջ է ներկայացրել նաև Վարդուհի Թառլանյանին: Ուստի ընդունելով հոր ժառանգությունը՝ Վարդուհի Թառլանյանն ընդունել է նաև ժառանգության գանգվածի մաս կազմող Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկի պահանջն ընդդեմ Վարդուհի Թառլանյանի նույնպես հիմնավոր է եղել: Մինչդեռ Դատարանը վերը թվարկված փաստերի անտեսման արդյունքում սխալ եզրահանգման է եկել Բանկի պահանջի հիմնավորվածության վերաբերյալ, ինչն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի քննության ժամանակ առարկություն է ներկայացվել դրամական պարտավորության չափի դեմ, որը պատշաճ քննության չի ենթարկվել: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրամական պարտավորության չափը ճշտելու համար անհրաժեշտ է գործի նոր քննություն Վարդուհի Թառլանյանի դեմ պահանջի չափի հիմնավորվածության գնահատման համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վե-րաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Միա-ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործը նոր քննության է ուղարկվում միայն Վարդուհի Թաղանյանի դեմ ներկայացված հայցապահանջների մասով՝ նկատի ունենա-լով, որ Խաչատուր Թաղանյանի դեմ ներկայացված հայցապահանջների մասով Դատարա-նի վճիռը չի բողոքարկվել և ըստ այդմ՝ մտել է օրինական ուժի մեջ:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դա-տական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համա-ձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համա-ձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապ-ված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքա-ցիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դա-տավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագա-յում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարա-նի 23.06.2016 թվականի որոշումը և գործը՝ ըստ հայցի «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության ընդդեմ Վարդուհի Թաղանյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասով, ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ըն-թացքում:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և են-թակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/4912/02/15
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/4912/02/15

Նախագահող դատավոր՝ Ն. Մարգարյան

Դատավորներ՝ Ա. Մխիթարյան
Ա. Սմբատյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի 24-ին

գրավոր ընթացակարգով քննելով Հոնիսիմե Թագվորյանի ներկայացուցիչ Մինաս Մալխասյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.12.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Նազիկ և Մանիկ Պողոսյանների (այսուհետ՝ Համահայցվորներ) ընդդեմ Հոնիսիմե Թագվորյանի՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգներ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Համահայցվորները պահանջել են փաստացի տիրապետման հիմքով իրենց ճանաչել Նվարդ Պողոսյանի (մահացած՝ 29.10.2005 թվականին) ժառանգական գույքի, այն է՝ Երևանի Արաբկիր թիվ 21 փողոցի 24-րդ տան բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգների:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 04.07.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.12.2018 թվականի որոշմամբ Հռիփսիմե Թագվորյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.07.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հռիփսիմե Թագվորյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համահայցվորների ներկայացուցիչ Գևորգ Դավթյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածը, 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերը, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-1227-րդ հոդվածները: Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Համահայցվորները Նվարդ Պողոսյանի ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետում դիմում չեն ներկայացրել նոտարական գրասենյակ և նշված ժամկետում չեն կատարել ժառանգական գույքի տիրապետման և պահպանման գործողություններ, ինչը նշանակում է, որ Համահայցվորները չեն ընդունել իրենց մոր ժառանգությունը: Վերջիններիս կողմից վկայակոչված՝ գոյություն չունեցող փաստերի ապացուցված չլինելու բացասական հետևանքները պետք է կրեին հենց իրենք, այլ ոչ թե պատասխանող կողմը: Համահայցվորների վկայակոչյալ իրերից որևէ մեկը չէր կարող հանդիսանալ իրենց կողմից Նվարդ Պողոսյանի ժառանգությունն ընդունած լինելու ապացույց, քանի որ դրանցից որևէ մեկը ժառանգատուին երբևէ չի պատկանել, հետևաբար և չէր կարող մտնել նրա ժառանգության գանգվածի մեջ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.12.2018 թվականի որոշումը և հայցն ամբողջությամբ մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները.

Համահայցվորների ցուցմունքներով, դատարանին ներկայացված լուսանկարներով, իրենց հորը և ժառանգատուին պատկանող այլ իրերի՝ ժառանգատուի մահից հետո տիրապետելու, ինչպես նաև գրավոր այլ ապացույցներով՝ մասնավորապես տնատիրությանը սպասարկող թիվ 19 տեղամասի կողմից տված տեղեկանքով, հաստատվում է, որ Համահայցվորները ժառանգությունը փաստացի տիրապետելու հիմքով ընդունել են իրենց մոր ժառանգությունը: Հռիփսիմե Թագվորյանը չի վիճարկել նաև ժառանգատուի մահվանից հետո Երևանի տանը բնակվելու հանգամանքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- 1) Համահայցվորները Նվարդ և Պողոս Պողոսյանների զավակներն են՝ հիմք ծննդյան վկայականները (**հատոր 1-ին, գ.թ. 7-8**)
- 2) 29.12.1992 թվականի թիվ 6116 սեփականության վկայագրի համաձայն՝ Երևան քաղաքի Արաբկիրի 21-րդ փողոցի թիվ 24 բնակելի տան նկատմամբ գրանցված է եղել Պողոս

Կարապետի Պողոսյանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 12)**.

3) 03.11.1985 թվականին տրված I-ՇԼ թիվ 490206 մահվան վկայականի համաձայն՝ Պողոս Պողոսյանը մահացել է 02.11.1985 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 9)**.

4) Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից 28.10.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Պողոս Կարապետի Պողոսյանի գույքի նկատմամբ ժառանգներ են հանդիսանում հավասար բաժիններով կինը՝ Նվարդ Պողոսյանը, որդին՝ Կարապետ Պողոսյանը, դուստրերը՝ Նազիկ և Մանիկ Պողոսյանները: Ժառանգական գույքը, որի համար տրվել է նշված վկայագիրը, բաղկացած է Երևան քաղաքի Արաբկիրի 21-րդ փողոցի թիվ 24 բնակելի տան 1/2 բաժնից **(հատոր 1-ին, գ.թ. 13)**.

5) Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից 28.10.2004 թվականին տրված սեփականության իրավունքի վկայագրի համաձայն՝ Նվարդ Պողոսյանը, ով հանդիսանում է Պողոս Պողոսյանի ամուսինը, սեփականության իրավունք ունի հիշյալ ամուսինների գույքի 1/2 բաժնի նկատմամբ: Ընդհանուր համատեղ գույքը, որի համար տրվել է նշված վկայագիրը, բաղկացած է ք. Երևան, Արաբկիրի 21-րդ փողոցի թիվ 24 բնակելի տան 1/2 բաժնից **(հատոր 1-ին, գ.թ. 14)**.

6) 30.10.2005 թվականին տրված ԱԱ թիվ 031822 մահվան վկայականի համաձայն՝ Նվարդ Պողոսյանը մահացել է 29.10.2005 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 10)**.

7) 13.01.2015 թվականին տրված ԱԲ թիվ 209510 մահվան վկայականի համաձայն՝ Կարապետ Պողոսյանը մահացել է 12.01.2015 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 11)**.

8) Կենտրոն նոտարական տարածքի նոտար Իննա Շահնազարյանը 08.10.2015 թվականի «Նոտարական գործողության կատարումը մերժելու մասին» որոշմամբ Համահայցվորների դիմումը՝ ժառանգություն ձևակերպելու և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր տրամադրելու մասին, մերժել է այն պատճառաբանությամբ, որ Համահայցվորների կողմից սահմանված ժամկետներում չի ներկայացվել համապատասխան դիմում, նաև որևէ ապացույց ժառանգական գույքի փաստացի տիրապետման կամ կառավարման մասին **(հատոր 1-ին, գ.թ. 15-17)**.

9) Սեփական տնատիրությունը սպասարկող թիվ 19 տեղամասի ներկայացուցչի կողմից 18.04.2017 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Նազիկ Պողոսյանը ներկա դրությամբ բնակվում է Արաբկիրի Ռ. Սևակի թիվ 24 տանը **(հատոր 1-ին, գ.թ. 140)**.

10) Սույն գործով չի վիճարկվել փաստն առ այն, որ Կարապետ Պողոսյանի մահից նրա գույքը փաստացի տիրապետում է կինը՝ Հռիփսիմե Թագվորյանը:

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել գործի քննության պահին կիրառման ենթակա՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրքը) 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում նախկինում արդարադատության իրավական դիր-

որոշումների համարեքարում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին. ո՞ր պայմանների միաժամանակյա առկայությունն է անհրաժեշտ անձին փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար և ո՞վ է կրում այդ պայմանների առկայության ապացուցման պարտականությունն ու դրանք չապացուցելու բացասական հետևանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության գանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով ժառանգությունն ընդունելու եղանակներից ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու եղանակին, նշել է, որ **ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (տե՛ս, Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նորարարական փարածքի նորարար Ալվարո Մելքոնյանի և մյուսների թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը)**: Ընդ որում, **նմանատիպ գործեր քննելիս կարևոր է դատարանի կողմից այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով**

ընդունել է ժառանգությունը (տե՛ս, օրինակ, Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոբյանի և մյուսների թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը), որը կարող է ապացուցվել [գործի քննության պահին գործող] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով (գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը կամ այլ ապացույցներ), որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգատուի մահից հետո ժառանգը փաստացի տիրապետել և կառավարել է ժառանգական գույքը (տե՛ս, Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի և մյուսների թիվ 3-938 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ հավելել է, որ **փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը** (տե՛ս, Կինա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի և մյուսների թիվ 3-1224 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Ընդ որում, **ժառանգի կողմից փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունմանն ուղղված ամենատարբեր բնույթի ակտիվ գործողությունները պետք է տեղի ունենան** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետում, այն է՝ ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադառնալով Նախկին օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի վերլուծությանը, արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: **Ընդ որում, այդ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը** (տե՛ս, Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Սարգսյանի թիվ ԵԱԵԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ապացույցների գնահատմանը, փաստել է, որ ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապն-

դում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ **փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները**: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա (*Կրեն, «Շենքերի կատավարում» համատրիբությունն ընդդեմ Մասիս Ղազանչյանի թիվ ԵԱԲԳ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*Կրեն, Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյրեփան և Անասիար Մարությանների թիվ 3-54 (ՎԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փաստացի տիրապետման եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար անհրաժեշտ է պարզել՝

➤ ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող **գույքի կազմը** (ժառանգական զանգվածը),

➤ ժառանգի կողմից ժառանգական զանգվածի մեջ մտնող գույքը (դրա կազմի մեջ մտնող գույքերից որևէ մեկը) փաստացի տիրապետելուն և կառավարելուն ուղղված **տարաբնույթ ակտիվ գործողություններ ձեռնարկած լինելը**,

➤ նշված գործողությունները ժառանգության բացման օրվանից **վեցամսյա ժամկետում** ձեռնարկած լինելը:

Ընդ որում, նշված հանգամանքներն ապացուցելու պարտականությունը կրում է այդ փաստերը վկայակոչած կողմը, ուստի վերջինս էլ պետք է կրի նշված փաստերն ապացուցված չլինելու բացասական հետևանքները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 29.12.1992 թվականի թիվ 6116 սեփականության վկայագրի համաձայն՝ Երևան քաղաքի Արաբկիրի 21-րդ փողոցի թիվ 24 բնակելի տան նկատմամբ գրանցված է եղել Պողոս Պողոսյանի սեփականության իրավունքը: Պողոս Պողոսյանը մահացել է 02.11.1985 թվականին և վերջինիս գույքի՝ Երևան քաղաքի Արաբկիրի 21-րդ փողոցի թիվ 24 բնակելի տան 1/2 բաժնի նկատմամբ ժառանգներ են հանդիսացել հավասար բաժիններով կինը՝ Նվարդ Պողոսյանը, որդին՝ Կարապետ Պողոսյանը, դուստրերը՝ Նազիկ և Մանիկ Պողոսյանները: Ժառանգներից Նվարդ Պողոսյանը, ով հանդիսացել է Պողոս Պողոսյանի ամուսինը, համաձայն 28.10.2004 թվականին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականի՝ սեփականության իրավունք է ունեցել վերոհիշյալ ամուսինների գույքի 1/2 բաժնի նկատմամբ: Նվարդ Պողոսյանը մահացել է 29.10.2005 թվականին, իսկ Կարապետ Պողոսյանը՝ 12.01.2015 թվականին: Սույն գործով չի վիճարկվել փաստն առ այն, որ Կարապետ Պողոսյանի մահից նրա գույքը փաստացի տիրապետում է կինը՝ Հռիփսիմե Թագվորյանը:

Կենտրոն նոտարական տարածքի նոտար Իննա Շահնագարյանը, ուսումնասիրելով

Համահայցվորների դիմումը ժառանգության իրավունքի վկայագրեր տրամադրելու վերաբերյալ, 08.10.2015 թվականին կայացրած «Նոտարական գործողության կատարումը մերժելու մասին» որոշմամբ վերջիններիս դիմումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ նրանք Նվարդ Պողոսյանի մահվանից հետո վեցամսյա ժամկետում չեն ներկայացրել դիմում ժառանգությունն ընդունելու կամ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու մասին, ինչպես նաև չեն ներկայացրել որևէ ապացույց ժառանգական գույքի փաստացի տիրապետման կամ կառավարման մասին:

Սույն գործով Դատարանը, որպես հայցի բավարարման հիմնավորում, նշել է, որ Համահայցվորների կողմից դատարանին ներկայացվել են ժառանգական գույք հանդիսացող՝ Համահայցվորների պապենական գորգի, ժառանգատուին պատկանող մեխանիկական և էլեկտրական կարի մեքենաների, վերջինիս նշանադրության հագուստի, ժառանգատուի մոր ամուսնության մատանու, ժառանգատուի հոր արծաթե ծխախոտատուփի, ժառանգատուի ավետարանի, պահարանի և սպասքի, Բուլղարիայից բերված արծաթե դրամների (այսուհետ՝ Գույք) լուսանկարները, և որ Գույքը ժառանգատուի մահից անմիջապես հետո գտնվում է իրենց տիրապետման տակ: Դատարանն արձանագրել է նաև, որ նշված փաստի դեմ պատասխանողի կողմից առարկություն չի ներկայացվել, իսկ Համահայցվորների ներկայացուցիչը դատարանին հայտնել է, որ պատասխանողի հետ ունեցած հեռախոսագրույցի ժամանակ նա ընդունել է, որ իր ամուսինը՝ Կարապետ Պողոսյանը, մորը պատկանող ամուսնական մատանին նվիրել է Նազիկ Պողոսյանին, սակայն չի հիշում, թե երբ: Միաժամանակ հայտնել է, որ չի ընդունում, որ նշված գույքերը պատկանել են ժառանգատուին: Նկատի ունենալով, որ Նվարդ Պողոսյանն ունեցել է երեք ժառանգներ, ովքեր փաստացի տիրապետման փաստով ընդունել են ժառանգական գույքը, իսկ ժառանգական գույքը բաղկացած է վիճելի հասցեի 5/8 բաժնեմասից, Դատարանը գտել է, որ Համահայցվորներին պետք է ճանաչել ժառանգական գույքի՝ 5/24-ական բաժնեմասի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Դատարանի պատճառաբանությունները, Հռիփսիմե Թագվորյանի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Սույն որոշմամբ արտահայտված իրավական վերլուծությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համահայցվորներին փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու համար վերջիններս պետք է ապացուցեին, որ՝

1. Գույքը ժառանգատու Նվարդ Պողոսյանի ժառանգության բացման օրը՝ 29.10.2005 թվականին, պատկանել է վերջինիս,
2. Համահայցվորները ժառանգության բացման օրվանից սկսած ձեռնարկել են տարբեր բնույթի ակտիվ գործողություններ՝ ուղղված ժառանգատուին պատկանող գույքը փաստացի տիրապետելուն կամ կառավարելուն,
3. նշված գործողությունները Համահայցվորները ձեռնարկել են ժառանգության բացման օրվանից սկսած **վեցամսյա ժամկետում:**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համահայցվորների՝ փաստացի տիրապետ-

ման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ լինելու փաստը ստորադաս դատարանները բխեցրել են Գույքը վերջիններիս կողմից փաստացի տիրապետելու հանգամանքից՝ նշելով, որ այդ հանգամանքը հանգեցրել է ժառանգական գույք հանդիսացող բնակելի տան փաստացի տիրապետմանը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում առկա չեն եղել փաստացի տիրապետման հիմքով Համահայցվորներին՝ Նվարդ Պողոսյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու եզրահանգում կատարելու համար բավարար ապացույցներ, հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով պատասխանող կողմը վիճարկել է ինչպես Գույքը ժառանգատուին պատկանելու, այնպես էլ այն ժառանգատուի մահից հետո օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում Համահայցվորների կողմից տիրապետելու փաստերը: Մասնավորապես՝ 11.01.2017 թվականին Դատարանին ներկայացված գրավոր առարկություններով (**հատոր 1-ին, գ.թ. 99-111**) պատասխանողի ներկայացուցիչը վիճարկել է Համահայցվորների՝ վիճելի բնակելի տանը բնակվելու, ոսկեղենը, անկողնային պարագաները, սպասքը և մինչև մահը ժառանգատուին պատկանած իրերը Համահայցվորների կողմից փաստացի տիրապետելու փաստերը՝ նշելով, որ Նվարդ Պողոսյանի մահից հետո՝ 29.10.2005 թվականից մինչև իր մահը՝ 12.01.2015 թվականը, ժառանգատուի որդու՝ Կարապետ Պողոսյանի կողմից և բացառապես նրա միջոցների հաշվին են ձեռնարկվել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելուն ուղղված միջոցներ, նրա հաշվին կատարվել են գույքը պահպանելու ծախսեր, այն է՝ վճարվել են տան գույքահարկը, հողի հարկը, աղբահանության, գազամատակարարման, էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման վճարները, ինչպես նաև ժառանգական գույքի հասցեով հաշվառված ֆիքսված հեռախոսահամարների վճարները: Նվարդ Պողոսյանի մահվանից հետո Համահայցվորները Երևան քաղաքի Արաբկիրի 21-րդ փողոց, թիվ 24 տուն հասցեում չեն բնակվել, ինչը հիմնավորվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 02.11.2016 թվականի գրությամբ, որի համաձայն՝ Արաբկիր 21 փողոց թիվ 24 հասցեի տան դուռը մշտապես եղել է փակ վիճակում, իսկ դուռը փակ վիճակում է գտնվել, քանի որ տան միակ տիրապետողն ու տնօրինողը՝ Հռիփսիմե Թագվորյանը, 2015 թվականից գտնվում է ԱՄՆ-ում:

Պատասխանողի ներկայացուցիչը պնդել է նաև, որ Նվարդ Պողոսյանի մահվանից հետո Համահայցվորները նրա ժառանգությունը չեն ընդունել, իսկ ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է Կարապետ Պողոսյանը՝ միանձնյա: Վերջինիս մահից հետո նրա առաջին հերթի ժառանգներ են հանդիսանում կինը՝ Հռիփսիմե Թագվորյանը, որդին՝ Հայկ Պողոսյանը, և դուստրը՝ Նվարդ Պողոսյանը, որոնցից ժառանգությունն ընդունել է միայն պատասխանողը՝ Հռիփսիմե Թագվորյանը, իսկ նրա որդին և դուստրը հրաժարվել են ժառանգության իրենց հասանելիք բաժնից՝ հօգուտ պատասխանողի, ինչի վերաբերյալ 26.11.2015 թվականին տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համահայցվորների կողմից ներկայացված լուսանկարները հաստատում են միայն տվյալ նկարներում արտացոլված իրերի գոյությունը, բայց դրանց բովանակությամբ չի հաստատվում, որ Գույքը ժառանգության բացման օրվա դրությամբ պատկանել է Նվարդ Պողոսյանին, ավելին՝ անգամ Գույքը ժառանգատուին պատկանելու փաստը հաստատված լինելու պարագայում չի հաստատվում Համահայցվորների կողմից Գույքը ժառանգության բացման օրվանից սկսած վեցամսյա ժամկետում փաստացի տիրապետելու կամ կառավարելու փաստը, որպիսի պայմաններում ստորադաս

դատարանները չէին կարող անվերապահ հետևության հանգել փաստացի տիրապետման հիմքով Համահայցվորների կողմից Նվարդ Պողոսյանի ժառանգությունն ընդունած ճանաչելու մասին՝ առանց անդրադառնալու այդ փաստերը հաստատող բավարար ապացույցների առկայության հարցին:

Ավելին, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Համահայցվորները Նվարդ Պողոսյանի ժառանգությունն ընդունելու նպատակով ակտիվ գործողություններ սկսել են կատարել ժառանգության բացման օրվանից՝ 29.10.2005 թվականից տասը տարի անց միայն՝ 06.10.2015 թվականին, որն արտահայտվել է Կենտրոն նոտարական տարածքի նոտար Իննա Շահնազարյանին դիմում ներկայացնելով, որին ի պատասխան, սակայն, ստացել են 08.10.2015 թվականի մերժումն այն պատճառաբանությամբ, որ դիմումատուների կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել համապատասխան դիմում, ինչպես նաև որևէ ապացույց ժառանգական գույքի փաստացի տիրապետման կամ կառավարման մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանն օրենքով սահմանված կարգով չի գնահատել Կենտրոն նոտարական տարածքի նոտար Իննա Շահնազարյանի «Նոտարական գործողության կատարումը մերժելու մասին» 08.10.2015 թվականի որոշումը, անտեսելով դրանում ամկա այն տեղեկությունները, ըստ որի՝ չեն ներկայացվել ժառանգական գույքը ժառանգության բացման օրվանից սկսած վեցամսյա ժամկետում փաստացի տիրապետելու կամ կառավարելու մասին ապացույցներ: Ընդ որում, Համահայցվորների կողմից չի ներկայացվել նաև որևէ փաստարկ այն մասին, որ իրենք վարչադատական կարգով վիճարկել են «Նոտարական գործողության կատարումը մերժելու մասին» 08.10.2015 թվականի որոշումը:

Ինչ վերաբերում է թիվ 19 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից տրված տեղեկանքին, ապա դրա բովանդակությամբ որևէ կերպ չի հաստատվում ժառանգատուի մահից հետո Նազիկ Պողոսյանի կողմից ժառանգության բացման պահից վեցամսյա ժամկետում ժառանգատուին պատկանող գույքը փաստացի տիրապետելու և կառավարելու հանգամանքը:

Համահայցվորների մորը պատկանող ամուսնական մատանին Կարապետ Պողոսյանի կողմից Նազիկ Պողոսյանին նվիրելու փաստարկի առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Դատարանն անտեսել է, որ վիճելի է մնացել մատանին Կարապետ Պողոսյանի կողմից քրոջը նվիրելու ժամանակը, որպիսի պարագայում չէր կարող հետևություն արվել այն մասին, որ Համահայցվորները փաստացի տիրապետման հիմքով ընդունել են ժառանգությունը: Ավելին, նվեր ստացված գույքը չի կարող վկայել ժառանգությունն ընդունելու մասին, քանի որ ժառանգության ընդունումը ենթադրում է ժառանգների կողմից կամային գործողության դրսևորում, որը պետք է ուղղված լինի ժառանգությունը փաստացի տիրապետելուն կամ կառավարելուն, իսկ մեկ այլ ժառանգից ստացված նվերը չի վկայում և չէր կարող վկայել ժառանգությունն ընդունելու ժառանգների կամքի առկայության մասին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով Համահայցվորների կողմից իրենց մոր ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով ընդունելու փաստը հաստատող ապացույցների բացակայության պարագայում գործի հանգամանքների վերաբերյալ Դատարանը կատարել է ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ Դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա, ինչն անտեսվել է Վե-

րաքննիչ դատարանի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների կողմից Նախկին օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի խախտման հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը, քանի որ Գույքը Նվարդ Պողոսյանին պատկանելու և Համահայցվորների կողմից ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով ընդունելու փաստերը ապացուցված չլինելու պարագայում, առանց բավարար իրավական և փաստական հիմքերի հայցը բավարարելով, խաթարվել է պատասխանողի արդար դատաքննության իրավունքը, ըստ այդմ խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Վճռաբեկ բողոքի դեմ Համահայցվորների ներկայացուցչի վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի սույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն

այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Մանիկ և Նազիկ Պողոսյաններից հոգուտ Հռիփսիմե Թագվորյանի պետք է բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.12.2018 թվականի որոշումը և այն փոփոխել. Նազիկ և Մանիկ Պողոսյանների հայցն ընդդեմ Հռիփսիմե Թագվորյանի՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգներ ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Նազիկ և Մանիկ Պողոսյաններից հոգուտ Հռիփսիմե Թագվորյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի և 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/3052/02/14
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/3052/02/14

Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան

Դատավորներ՝ Մ. Հարթենյան

Ա. Հունանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի փետրվարի 19-ին

գրավոր ընթացակարգով քննելով Նշան Իսախրյանի ներկայացուցիչ Կարեն Աղաջա-
նյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2015 թվականի
որոշման դեմ՝ ըստ հայցի Հասմիկ Բադալյանի ընդդեմ Նշան Իսախրյանի՝ հայրության ճա-
նաչման, ալիմենտի բռնագանձման և Նշան Իսախրյանին որոշակի ժամանակահատվածում
երեխայի խնամքով և դաստիարակությամբ զբաղվելուն պարտավորեցնելու պահանջների
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Հասմիկ Բադալյանը պահանջել է հաստատել 11.07.2014 թվակա-
նին ծնված Դավիթ Բադալյանի՝ Նշան Իսախրյանից սերված լինելու հանգամանքը՝ հայրու-
թյունը, բռնագանձել ալիմենտ՝ ամսական 50.000 ՀՀ դրամի չափով, և պարտավորեցնել որո-
շակի ժամանակահատվածում զբաղվել երեխայի խնամքով և դաստիարակությամբ:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատա-

րանի (դատավոր՝ Լ. Կատվայան) (այսուհետ՝ Դատարան) 17.09.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ դատական կարգով հաստատվել է 11.07.2014 թվականին ծնված Դավիթ Բաղայանի՝ պատասխանող Նշան Իսախրյանից սերված լինելու փաստը (հայրությունը): Վճռվել է՝ պատասխանող Նշան Իսախրյանից հայցվոր Հասմիկ Բաղայանի օգտին կողմերի անչափահաս երեխա Դավիթ Բաղայանի համար (ծնված 11.07.2014 թվականին)՝ սկսած 21.11.2014 թվականից բռնագանձել կայուն դրամական գումարով ալիմենտ՝ ամսական 30.000 ՀՀ դրամի չափով՝ մինչև Դավիթ Բաղայանի չափահաս դառնալը: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.12.2015 թվականի որոշմամբ Նշան Իսախրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.09.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.03.2016 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 23.12.2015 թվականի որոշման դեմ Նշան Իսախրյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.06.2018 թվականի որոշմամբ Նշան Իսախրյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը բավարարվել է. նոր հանգամանքի հիմքով վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.03.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, և այն վերացվել է: Միաժամանակ թիվ ԵՄԴ/3052/02/14 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 23.12.2015 թվականի որոշման դեմ Նշան Իսախրյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նշան Իսախրյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հասմիկ Բաղայանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասը, որը չպետք է կիրառել, չի կիրառել նույն հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառել, սխալ է մեկնաբանել նույն օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ կայուն դրամական գումարով ալիմենտ կարող է սահմանվել բացառապես ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված դեպքերից որևէ մեկի դեպքում, ինչը սույն գործով բացակայում է: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանի վճռի հիմքում դրված՝ Հասմիկ Բաղայանի աշխատանք չունենալու, երեխային միայնակ խնամելու, ինչպես նաև Նշան Իսախրյանի խնամքին այլ երեխաներ չլինելու և վերջինիս ամուրի լինելու փաստերը չեն ապացուցվել սույն գործում առկա որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույցներով: Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել Նշան Իսախրյանի աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքը, որի արդյունքում հանգել է սխալ եզրահանգման՝ անտեսելով, որ 56.397 ՀՀ դրամ աշխատավարձի պայմաններում 30.000 ՀՀ դրամ կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանելու դեպքում

խախտվում է Նշան Իսպիրյանի բավարար կենսամակարդակի իրավունքը:

Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի թիվ 3-1519 (ՎԴ), 12.12.2007 թվականի թիվ 3-1580 (ՎԴ) և 04.12.2009 թվականի թիվ ԵԱՆԴ/2775/02/08 որոշումներին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը 150.000 ՀՀ դրամի չափով դատական ծախսի առկայությունը հիմնավորող պատշաճ ապացույց է դիտել հայցվորի և նրա ներկայացուցչի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրն այն դեպքում, երբ այն չի կարող համարվել վավեր պայմանագիր, քանի որ կնքվել է ոչ թե վատահորդի և փաստաբանական գրասենյակի, այլ վատահորդի և անհատ փաստաբանի միջև:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.12.2015 թվականի որոշումը և այն փոփոխել՝ «սահմանելով ալիմենտի բռնագանձումը պատասխանող Նշան Իսպիրյանի կայուն դրամական վաստակի՝ աշխատավարձի և այլ եկամուտների մեկ քառորդի չափով, ինչպես նաև մերժել հայցվորի կողմից իր փաստաբանին վճարված փաստաբանական վարձատրությունը՝ որպես դատական ծախս դիտելու պահանջը (...) կամ գործն ուղարկել նոր քննության»:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Դատարանը և Վերաքննիչ դատարանը, իրականացնելով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, գնահատելով գործում առկա բոլոր ապացույցները, ճիշտ են մեկնաբանել և կիրառել կիրառման ենթակա օրենսդրական ակտերով սահմանված համապատասխան դրույթները: Միաժամանակ դատաքննության ընթացքում թույլ չեն տրվել դատավարական նորմերի խախտումներ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Մալաթիա-Սեբաստիա ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից 14.07.2014 թվականին տրված ԱԲ թիվ 357594 ծննդյան վկայականի համաձայն՝ Դավիթ Նշանի Բաղալյանը ծնվել է 11.07.2014 թվականին, որի վերաբերյալ 14.07.2014 թվականին ծննդյան վերաբերյալ ակտերի գրանցման գրքում կատարվել է թիվ 1163 գրանցումը: Որպես հայր նշվել է Նշան Բաղալյանը, իսկ որպես մայր՝ Հասմիկ Բաղալյանը (**հատոր 1-ին, գ.թ. 9**).

2) 13.11.2014 թվականին Երևանի Կուրդինյան փողոցի թիվ 13 շենքի լիազորագրային կառավարիչ Ռ. Մարտիրոսյանի կողմից տրված թվով 2 տեղեկանքների համաձայն՝ Հասմիկ Բաղալյանը 08.12.2013 թվականից բնակվում է հայրական տանը՝ Երևանի Կուրդինյանի փողոցի թիվ 13 շենքի թիվ 17 բնակարան հասցեում, և իր խնամքին ունի մեկ երեխա՝ Դավիթ Նշանի Բաղալյանը (**հատոր 1-ին, գ.թ. 10-11**).

3) Անհատ ձեռնարկատեր Կարեն Սարգսյանի կողմից 29.12.2014 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Նշան Իսպիրյանը 02.05.2008 թվականից աշխատում է անհատ ձեռնարկատեր Կարեն Սարգսյանին պատկանող՝ Երևանի Շիրակի փողոցի 68-րդ շենքի թիվ 1ա հասցեում գտնվող առամնաբուժարանում որպես առամնաբույժ, և նրա միջին ամսական, առձեռն ստացված աշխատավարձը կազմում է 56.397 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 31**).

4) Փաստաբան Աստղիկ Պապիկյանի (արտոնագիր թիվ 1737) և Հասմիկ Բաղալյանի միջև 13.11.2014 թվականին կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր, որի համաձայն՝ փաստաբանական ծառայությունների գինը կազմում է

150.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 15-18**).

5) Դավիթ Նշանի Բադալյանի՝ Նշան Իսպիրյանից սերված լինելու փաստը (հայրությունը) դատական կարգով հաստատվել է Դատարանի 17.09.2015 թվականի վճռով: Վճիռն այդ մասով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 140-149**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ և 71-րդ հոդվածների կիրառության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք այիմենսր վճարող ծնողի կողմից կանոնավոր վստարակ և (կամ) այլ եկամուտ սրանալու պարագայում դատարանը կարող է սահմանել կայուն դրամական գումարով այիմենսրի ամենամսյա չափ, եթե ծնողի վստարակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ այիմենսր սահմանելիս այիմենսրի չափը բավարար չէ երեխայի գոյության նվագագույն պայմաններն ապահովելու համար:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: (...)

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: (...)

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուր երեխայի՝ իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծնողը(ները) կամ երեխայի համար պատասխանատու այլ անձինք, իրենց կարողությունների և ֆինանսական հնարավորությունների շրջանակներում կրում են երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններն ապահովելու հիմնական պատասխանատվությունը:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին (...): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե ծնողներն ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով՝ հետևյալ չափերով ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով՝

- ա) մեկ երեխայի համար ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի մեկ քառորդը.
- բ) երկու երեխաների համար՝ մեկ երրորդը.
- գ) երեք և ավելի երեխաների համար՝ կեսը:

Նույն մասով նախատեսված ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բաժինների չափերը կարող են դատարանով նվազեցվել կամ ավելացվել՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողների միջև երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում դատարանն իրավունք ունի բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանելու կայուն դրամական գումարով կամ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով:

Նույն մասի առաջին պարբերության նորմերը կիրառվում են, եթե այդ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին, ինչպես նաև այն դեպքերում, երբ երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը՝

- ա) ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ.
- բ) վաստակ և (կամ) այլ եկամուտ է ստանում բնամթերքի տեսքով կամ արտարժույթով.
- գ) վաստակ և (կամ) այլ եկամուտ չի ստանում կամ չունի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կայուն դրամական գումարի չափը որոշում է դատարանը՝ ելնելով երեխայի նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունից՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

ՀՀ վճարել դատարանը բազմիցս արձանագրել է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարության արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Երեխաների և ծնողների նշված իրավունքների լիարժեք իրականացման և ծնողների նշված պարտականությունների պատշաճ կատարման հրամայականից ելնելով՝ ծնողների համար երաշխավորված է նաև այլ անձանց հանդեպ իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունքը: Նշվածի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ (*տե՛ս, օրինակ, Մարգարիտ Հովհաննիսյանն ընդդեմ Արթուր Թորոսյանի թիվ ԵԱԳԳ/1513/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճարել դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ նաև արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը (*տե՛ս, Անի Մարտիրոսյանն ընդդեմ Գուրգեն Խալաթյանի թիվ ԵԱԲԳ/0474/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 23.03.2012 թվականի որոշումը*):

Անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում նաև՝ դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից (*տե՛ս, C. v. Finland գործով Եվրոպական դատարանի 09.05.2006 թվականի վճիռը, 52-րդ կետ, գանգապ թիվ 18249/02*):

ՀՀ վճարել դատարանը գտել է, որ «երեխայի շահ» կամ «երեխայի լավագույն շահեր» հասկացություններն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվեն ու կիրառվեն հետևյալ երեք իմաստներով.

1) որպես երեխայի իրավունք. երեխան ունի իր լավագույն շահերի բացահայտման և դրանց առաջնային նշանակության տրամադրման իրավունք այն դեպքում, երբ իրավասու մարմնի կողմից կայացվող որոշումն առնչվում է երեխայի և այլ անձանց իրավունքներին ու շահերին, և առկա է դրանց հավասարակշռման անհրաժեշտություն,

2) որպես իրավական-մեկնաբանողական սկզբունք. երեխայի իրավական վիճակին առնչվող տարբեր մեկնաբանությունների և ընկալումների տեղիք տվող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի՝ ելնելով երեխայի լավագույն շահերի առավել

ապահովման նկատառումից,

3) որպես ընթացակարգային կարգավորման կանոն. երեխային առնչվող որոշումների ընդունման ընթացքում պետք բացահայտվի նաև երեխայի իրավունքների և շահերի վրա այդ որոշման հնարավոր ազդեցությունը (*Կրեն, Անի Սարգսյանն ընդդեմ Արմեն Փերոյանի թիվ ԵԱՆ-Դ/4073/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը երեխայի ծնողից ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ գործեր քննելիս բռնագանձման ենթակա ալիմենտի չափը որոշելու համար նախևառաջ պետք է պարզի և գնահատման առարկա դարձնի ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի առկայությունը և դրա չափը: Այսինքն՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ալիմենտի չափի որոշման կանոնը կիրառվում է այն բոլոր դեպքերում, երբ դատարանի կողմից հաստատվում է ծնողի վաստակի և (կամ) այլ եկամտի կամ դրանցից որևէ մեկի առկայությունը, իսկ կայուն դրամական գումարով ալիմենտի բռնագանձման հնարավորությունը նախատեսվում է բացառիկ դեպքերում, այն է՝ եթե այդ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին, ինչպես նաև, երբ երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը՝

-ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ,

-վաստակ և (կամ) այլ եկամուտ ստանում է բնամթերքի տեսքով կամ արտարժույթով,

-վաստակ և (կամ) այլ եկամուտ չի ստանում կամ չունի (*Կրեն, Գոհար Կիրակոսյանն ընդդեմ Լևոն Զազյանի թիվ ԵԱՆ-Դ/2775/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի չափը որոշելը հանդիսանում է երեխայի ապրուստի միջոցի սահմանման հիմնական և առավել տարածված եղանակն այն դեպքերում, երբ ծնողներն ունեն կայուն վաստակ (եկամուտ): Ի տարբերություն բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի չափը սահմանելուն՝ կայուն դրամական գումարի չափը դատարանը որոշում է՝ ելնելով երեխայի նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունից: Կայուն դրամական գումարով ալիմենտի բռնագանձման չափը սահմանելիս դատարանների կողմից պետք է հաշվի առնվի ալիմենտ վճարող ծնողի իրական գույքային հնարավորությունները, ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ կամ շահեր (օրինակ՝ ընտանիքի անդամի անաշխատունակությունը, որին ալիմենտ վճարող կողմը պարտավոր է տրամադրել ապրուստի միջոց, հաշմանդամության ձեռքբերումը կամ երեխայի կողմից աշխատանքի անցնելը կամ ձեռնարկատիրությամբ զբաղվելը), որոնք նաև անհրաժեշտ են ալիմենտ վճարող ծնողի և նրա ընտանիքի մյուս անդամների գոյության նվազագույն պայմաններն ապահովելու համար: Ընդ որում, նման գործերով կողմերի գույքային դրությունը պարզելու համար դատարանները պետք է միաժամանակ հաշվի առնեն բոլոր աղբյուրները, որոնցից գոյանում է անձի ընդհանուր եկամուտը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե բաժնային հարաբերակցությամբ ալիմենտ սահմանելիս դատարանը հիմք է ընդունում միայն օրենսդրի կողմից սահմանված բաժնային չափը, ապա կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանելիս հաշվի են առն-

վում մի շարք գործոններ, ընդ որում, ինչպես երեխայի լավագույն շահը, այնպես էլ ալիմենտ վճարող անձի բավարար կենսամակարդակն ապահովելու անհրաժեշտությունը: Հաշվի առնելով կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանելիս գումարի չափը որոշելու նշված առանձնահատկությունը՝ օրենսդիրը որոշ դեպքերում հնարավորություն է տվել կանոնավոր վաստակ և (կամ) այլ եկամուտ ստանալու պայմաններում նույնպես սահմանելու կայուն դրամական գումարի չափով ալիմենտ: Մասնավորապես՝ այդ դեպքերից է, երբ ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը ստանում է ալիմենտ արտարժույթով, կամ եթե բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին: Նման կարգավորման նպատակն անձանց բավարար կենսամակարդակի ապահովումն է, երեխայի լավագույն շահի և ալիմենտ վճարող ծնողի ուշադրության արժանի շահերի հավասարակշռությունը:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողի կողմից կայուն վաստակի և (կամ) այլ եկամտի առկայության պայմաններում օրենսդիրը հնարավորություն է տալիս բռնագանձելու ալիմենտ նաև կայուն դրամական գումարով, որի դեպքում դատարանը պետք է հաշվի առնի կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը (*տե՛ս, Ղազար Գեորգևսն (Ղազար Ջորջ) ընդդեմ Մարալ Քեշիշոյլյանի թիվ ԵԱԴԿ/0473/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Ջարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ն՝ ալիմենտ վճարող ծնողի, ն՝ երեխայի բավարար կենսամակարդակի ապահովման, երեխայի լավագույն շահի և ալիմենտ վճարող ծնողի ուշադրության արժանի շահերի հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ օրենսդրի կողմից որոշակի ճկունություն է թույլատրված ալիմենտի վճարման տեսակը և ալիմենտի չափը որոշելու հարցում: Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է տալիս բաժիններով ալիմենտ բռնագանձելիս փոփոխելու (նվազեցնել կամ ավելացնել) օրենքով սահմանված բաժնի չափերը: Նմանապես օրենսդիրը հնարավորություն է տվել դատարաններին ալիմենտի չափ սահմանել ինչպես կայուն դրամական գումարով, այնպես էլ կայուն դրամական գումարով և բաժիններով: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նույն տրամաբանությամբ էլ հնարավորություն է տրվել անգամ ծնողի կողմից կանոնավոր եկամուտ ստանալու պայմաններում սահմանելու ալիմենտ՝ կայուն դրամական գումարի չափով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում եզրահանգում է, որ կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանվում է հետևյալ դեպքերում.

- 1) բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար է,
- 2) բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումը դժվար է,
- 3) բաժնային հարաբերակցության ալիմենտի բռնագանձումն էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերին,
- 4) ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ,
- 5) ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը վաստակ և (կամ) այլ եկամուտ ստանում է քնամթերքի տեսքով կամ արտարժույթով,
- 6) ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը վաստակ և (կամ) այլ եկա-

մուտ չունի կամ չի ստանում:

Ընդ որում, վերը նշված 6-րդ կետը (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության «գ» կետը) վերլուծելով՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ օրենսդիրը, երեխայի լավագույն շահը հիմք ընդունելով, ալիմենտի վճարումից չի ազատում ծնողին անգամ այն դեպքում, երբ վերջինս եկամուտ չի ստանում: Նշված մոտեցումը պայմանավորված է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված՝ երեխաների ապրուստը հոգալու՝ ծնողների պարտականությամբ: Այսինքն՝ ծնողները պարտավոր են հոգալ երեխաների ապրուստն անգամ այն դեպքում, երբ վաստակ և (կամ) այլ եկամուտ չունեն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դավիթ Նշանի Բաղայանը ծնվել է 11.07.2014 թվականին, որի վերաբերյալ 14.07.2014 թվականին ծննդյան վերաբերյալ ակտերի գրանցման գրքում կատարվել է թիվ 1163 գրանցումը: Որպես հայր նշվել է Նշան Բաղայանը, իսկ որպես մայր՝ Հասմիկ Բաղայանը: Դավիթ Նշանի Բաղայանի՝ Նշան Իսախիյանից սերված լինելու փաստը (հայրությունը) դատական կարգով հաստատվել է Դատարանի 17.09.2015 թվականի վճռով: Անհատ ձեռնարկատեր Կարեն Սարգսյանի կողմից 29.12.2014 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Նշան Իսախիյանի միջին ամսական աշխատավարձը կազմում է 56.397 ՀՀ դրամ:

Սույն գործով Դատարանը, մասնակիորեն բավարարելով հայցապահանջը, պատճառաբանել է, որ համաձայն անհատ ձեռնարկատեր Կարեն Սարգսյանի կողմից տրված տեղեկանքի՝ Նշան Իսախիյանի միջին ամսական աշխատավարձը կազմում է 56.397 ՀՀ դրամ, այսինքն՝ վերջինս ունի մշտական եկամուտ՝ վաստակ, սակայն դրա մեկ քառորդը չնչին գումար է, որով անհնարին է հոգալ անչափահաս Դավիթ Բաղայանի կարիքները: Հաշվի առնելով վերջինիս նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունը, կողմերի գույքային և ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը, մասնավորապես՝ այն, որ երեխան մանկահասակ է և գտնվում է մոր խնամքին, և վերջինս հնարավորություն չունի աշխատելու և ինքնուրույն հոգալու երեխայի բոլոր կարիքները, գտել է, որ ալիմենտը պետք է սահմանել ոչ թե բաժիններով, այլ կայուն դրամական գումարով՝ ամսական 30.000 ՀՀ դրամի չափով, մինչև երեխայի չափահաս դառնալը: Դատարանը, անդրադառնալով դատական ծախսերին, խելամիտ է համարել իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրով նախատեսված վարձատրության չափը՝ 150.000 ՀՀ դրամը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ պատասխանողի աշխատավարձից ալիմենտ բռնագանձելու դեպքում այն կկազմի 14.099 ՀՀ դրամ, որը բավարար չէ երեխայի ապրուստը հոգալու համար, բացի այդ, այն ցածր կլինի նաև աշխատանք չունենալու դեպքերում վճարվելիք ալիմենտի՝ դատական պրակտիկայում ընդունված չափից: Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարել վերաքննիչ բողոքը՝ նաև փաստաբանի վարձատրության մասով՝ խելամիտ համարելով Դատարանի սահմանած փաստաբանի վարձատրության չափը:

Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գտնում է, որ ստորադաս դատարանների եզրահանգումները հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականի ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակ-

ցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*Կրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*Կրեն, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիր Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թեն առկա է ապացույցն այն մասին, որ Նշան Իսայիրյանն ունի կայուն եկամուտ, և առերևույթ առկա է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման պայմանը, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով առկա է օրենսդրի կողմից սահմանված այն իրավիճակը, երբ դատարանը կարող է կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանել անգամ այն դեպքում, երբ ալիմենտ վճարող ծնողը ստանում է կանոնավոր եկամուտ: Ելնելով երեխայի լավագույն շահերի առավել ապահովման, երեխայի նախկին կենսաապահովման մակարդակի առավելագույն պահպանման և երեխայի նվազագույն կարիքները հոգալու անհրաժեշտությունից՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստորադաս դատարաններն իրավամբ եկել են այն հիմնավոր եզրահանգման, որ սույն գործով 30.000 ՀՀ դրամից պակաս ալիմենտ վճարելու դեպքում կտուժի երեխայի լավագույն շահը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նշան Իսայիրյանի եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն էականորեն կվնասի երեխայի շահերին և չի ապահովի նրա անհրաժեշտ կենսապայմանների իրավունքը:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքի այն հիմնավորմանը, որ կայուն դրամական գումարով ալիմենտ սահմանված լինելու դեպքում Նշան Իսայիրյանի՝ որպես ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող ծնողի համար կստեղծվի բավարար կենսամակարդակում ապրելու իրավունքի խախտման իրական վտանգ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ երեխայի մասին հոգ տանելը, այդ թվում՝ նվազագույն պահանջմունքները բավարարելը, յուրաքանչյուր ծնողի՝ ՀՀ Սահմանադրությամբ, կոնվենցիոն և օրենսդրական նորմերով սահմանված պարտականությունն է՝ անկախ ծնողի եկամուտ ունենալու հանգամանքից, և ծնողի ցածր աշխատավարձը կամ ոչ բավարար եկամուտը չպետք է ենթադրի, որ երեխան կարող է գրկվել ապրուստի միջոցից՝ նվազագույն պահանջմունքներն ու կարիքները հոգալուց, ինչից էլ հետևում է, որ կայուն դրամական գումարով ալիմենտի բռնագանձման չափը սահմանելիս դատարանների կողմից հաշվի պետք է առնվեն ալիմենտ վճարող ծնողի իրական գույքային

հնարավորությունները և ուշադրության արժանի այլ հանգամանքներ կամ շահեր՝ նշանակելով ալիմենտի այն չափը, որն անհրաժեշտ է երեխայի գոյության նվազագույն պայմաններն ապահովելու համար: Ընդ որում, օրենսդրի նման կարգավորման նպատակն անձանց (և՛ ծնողի, և՛ երեխայի) բավարար կենսամակարդակի ապահովումն է, երեխայի լավագույն շահի և ալիմենտ վճարող ծնողի ուշադրության արժանի շահերի հավասարակշռությունը:

Անդրադառնալով բողոքի այն հիմնավորմանը, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի թիվ 3-1519 (ՎԴ), 12.12.2007 թվականի թիվ 3-1580 (ՎԴ) և 04.12.2009 թվականի թիվ ԵԱՆԴ/2775/02/08 որոշումներին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնաման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և ՀՀ վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը (*տե՛ս*, «Մարակիր Ալկո Լիկյոր-Օդո գործարան» ՍՊ ընկերություն ընդդեմ Մոս Բադդասարյանի թիվ 3-480(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բողոքաբերի կողմից վկայակոչված դատական գործերի և սույն դատական գործի փաստերի միջև առկա են էական տարբերություններ: Մասնավորապես, թիվ 3-1519 (ՎԴ) քաղաքացիական գործի էական փաստական առանձնահատկությունն այն է, որ սահմանված ալիմենտի չափը գերազանցել է պատասխանողի աշխատավարձը, որպիսի հանգամանք սույն գործով առկա չէ:

Թիվ 3-1580 (ՎԴ) քաղաքացիական գործի և սույն քաղաքացիական գործի փաստերի միջև առկա էական տարբերությունն այն է, որ թիվ 3-1580 (ՎԴ) քաղաքացիական գործով ստորադաս դատարանի կողմից սահմանված ալիմենտի պայմաններում թոշակառու ծնողի հետ բնակվող պատասխանողի գոյության ապահովման համար մնում էր ընդամենը 5.000 ՀՀ դրամ՝ խախտելով պատասխանողի բավարար կենսաապահովման իրավունքը, որպիսի հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել էր ստորադաս դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության: Մինչդեռ սույն քաղաքացիական գործի պայմաններում պատասխանողի աշխատավարձը բաշխվում է գրեթե հավասարաչափ պատասխանողի և երեխայի միջև՝ ապահովելով արդարացի հավասարակշռություն

երեխայի շահերի և ծնողի բավարար կենսամակարդակում ապրելու իրավունքի միջև:

Վկայակոչված մյուս՝ թիվ ԵԱՆԴ/2775/02/08 քաղաքացիական գործով ընդհանրապես խնդիր չի առաջացել բավարար կենսամակարդակում ապրելու իրավունքի ապահովման հետ կապված: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ բողոք բերող անձի վկայակոչած գործերի և սույն քաղաքացիական գործի փաստական հանգամանքների միջև առկա են էական տարբերություններ:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն հիմնավորմանը, որ ստորադաս ատյանները, գնահատելով փաստաբան Աստղիկ Պապիկյանի և Հասմիկ Բադալյանի միջև 13.11.2014 թվականին կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիրը, անհիմն կերպով խելամիտ են համարել փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագրով նախատեսված վարձատրության չափը՝ 150.000 ՀՀ դրամը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորվում են յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքնության հիմնարար իրավունքները, որոնց բաղկացուցիչ տարրերից մեկն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն է. այդ իրավունքը երաշխիք է իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ իրացման համար:

ՀՀ սահմանադրական դատարանը 08.10.2008 թվականի թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության հարցին՝ նշելով, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախևառաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և թե՛ հայցվորը, և թե՛ պատասխանողը դատական քնության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բոնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը, որպես դատական ծախսի, վճռով անդրադառնալու համար (*չլեն, անհայր ձեռնարկարեր Նարինե Ռոստոմյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱՐԴ/1401/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ներկայացուցչի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

- 1) փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը),
- 2) գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը),
- 3) նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության

մատուցման դիմաց վճարվող գումարի չափը,

4) դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*տե՛ս, Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Վերը նշված դիրքորոշման լույսի ներքո գնահատելով սույն գործի բարդությունը և փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը՝ մասնավորապես հայցադիմում ներկայացնելու, դատական նիստերին մասնակցելու հանգամանքը, համադրելով գործում առկա՝ Հասմիկ Բադալյանի և Աստղիկ Պապիկյանի միջև 13.11.2014 թվականին կնքված «Փաստաբանական ծառայություն մատուցման մասին» պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարի չափի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից Նշան Իսախրյանից հոգուտ Հասմիկ Բադալյանի 150.000 ՀՀ դրամ՝ որպես գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության հատուցման ենթակա գումար նույնպես հիմնավոր է:

Ինչ վերաբերում է փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիրը ոչ պատշաճ կողմի հետ կնքված լինելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմնավորմանը, ապա Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ բողոքաբերը փաստաբան Աստղիկ Պապիկյանի և Հասմիկ Բադալյանի միջև կնքված պայմանագիրը համարում է ոչ պատշաճ պայմանագիր՝ նշելով, որ այն ստորագրվել է ոչ պատշաճ անձի՝ անհատ փաստաբանի հետ: Այսինքն՝ բողոքաբերը նշված պայմանագիրը՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրությունը հիմնավորող ապացույց, համարում է ոչ պատշաճ և անթույլատրելի ապացույց վավերության տեսանկյունից: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քանի դեռ սույն գործով ներկայացված չէ ապացույց այն մասին, որ վերոնշյալ պայմանագիրը վիճարկված է դատական կարգով որպես անվավեր պայմանագիր, այն պետք է դիտել պատշաճ ապացույց՝ փաստաբանի կողմից ծառայություններ մատուցված լինելու վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, կայացրել է ճիշտ դատական ակտ:

Վերոնշյալ պարճատաբանություններով հիմնավորվում են վճռաբեկ բողոքի պարտախանում բերված փաստարկները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի առկայությունը, որպիսի պայմաններում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը մերժելիս հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկվել և համապատասխանաբար վերանայվել է միայն ալիմենտի բռնագանձման հայցապահանջի, ինչպես նաև փաստաբանի վարձատրության գումար բռնագանձելու մասով:

5. Վճռաբեկ դատարանի պարունատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ բողոք բերած անձը վճարել է վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումարը, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2015 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴԻ/0347/02/11
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴԻ/0347/02/11

Նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան

Ա. Հունանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2019 թվականի ապրիլի 15-ին

գրավոր ընթացակարգով քննելով Ցոլակ Սաֆարյանի ներկայացուցիչ Համլետ Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հերմինե Հովհաննիսյանի ընդդեմ Ցոլակ Սաֆարյանի՝ ալիմենտ բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Հերմինե Հովհաննիսյանը պահանջել է Ցոլակ Սաֆարյանից՝ որպես կողմերի երեխաներ Էդուարդ Սաֆարյանի (ծնված՝ 23.09.2007 թվականին) և Լատուրա Սաֆարյանի (ծնված՝ 04.06.2010 թվականին), բռնագանձել կայուն դրամական գումարով ալիմենտ՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 30.000 ՀՀ դրամի չափով մինչև երեխաների չափահաս դառնալը:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 07.12.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ցոլակ Սաֆարյանից՝ որ-

պես կողմերի երեխաներ Էդուարդ Սաֆարյանի (ծնված՝ 23.09.2007 թվականին) և Լատուրա Սաֆարյանի (ծնված՝ 04.06.2010 թվականին), բռնազանձվել է կայուն դրամական գումարով ալիմենտ՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 20.000 ՀՀ դրամի չափով մինչև երեխաների չափահաս դառնալը: Մնացած մասով հայրը մերժվել է:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) 22.04.2016 թվականի որոշմամբ Հերմինե Հովհաննիսյանի դիմումը՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.11.2016 թվականի որոշմամբ Ցուլակ Սաֆարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 22.04.2016 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ցուլակ Սաֆարյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հերմինե Հովհաննիսյանը:

2.1 Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ և 130-132-րդ հոդվածները, կիրառել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, չի կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 95-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պահանջատիրոջ համար կատարողական թերթ ստանալու և այն կատարման ներկայացնելու ժամկետն ավարտվել է 08.12.2012 թվականին, սակայն նշված ժամկետում Հերմինե Հովհաննիսյանը կատարողական թերթ տրամադրելու դիմում չի ներկայացրել:

Ավելին՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողած ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմումը Հերմինե Հովհաննիսյանը ներկայացրել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց շուրջ 5 տարի անց, սակայն չի ներկայացրել ժամկետի բացթողումը հիմնավորող որևէ ապացույց: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը դիմումը բավարարելիս հիմք է ընդունել միայն Հերմինե Հովհաննիսյանի փաստարկումները:

Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ Հերմինե Հովհաննիսյանն ընդունել է այն փաստը, որ բողոք բերած անձն օգնել է Հերմինե Հովհաննիսյանին երեխաների կարիքները հոգալու հարցում:

Բացի այդ, կողմերը նշված ժամանակաշրջանում շուրջ մեկ տարի բնակվել են համատեղ, իսկ երեխաներից Էդուարդ Սաֆարյանը 2014 թվականի մայիսից մինչև 2015 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում բնակվել է բողոք բերած անձի հետ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ նման պայմաններում բողոք բերած անձին շուրջ 2.000.000 ՀՀ դրամ վճարելուն պարտավորեցնելն իրավաչափ չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատա-

քանի 10.11.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Հերմինե Հովհաննիսյանի դիմումը՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, մերժել:

2.2 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և մերժման ենթակա, քանի որ կողմերի միջև ժամանակավորապես կայացած հաշտությունը (08.01.2012-08.01.2013թթ.) բացառել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում այն կատարման ներկայացնելու անհրաժեշտությունը:

Վերաքննիչ դատարանը կատարել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում ու գնահատում, ինչի հիման վրա էլ կայացրել է արդարացի և հիմնավորված որոշում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) **Դատարանի 07.12.2011 թվականի վճռով** Հերմինե Հովհաննիսյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ցոլակ Սաֆարյանից՝ որպես կողմերի երեխաներ Էդուարդ Սաֆարյանի (ծնված՝ 23.09.2007 թվականին) և Լատրա Սաֆարյանի (ծնված՝ 04.06.2010 թվականին), բռնագանձվել է կայուն դրամական գումարով ալիմենտ՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 20.000 ՀՀ դրամի չափով մինչև երեխաների չափահաս դառնալը՝ ալիմենտի բռնագանձման սկիզբը հաշվելով 18.10.2011 թվականից: Մնացած մասով հայցը մերժվել է: **Նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 08.01.2012 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 28-29):**

2) Հերմինե Հովհաննիսյանը կատարողական թերթ տրամադրելու և **կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը** Դատարան ներկայացրել է **08.12.2015 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 38-39):**

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ սովյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ալիմենտ վճարելու՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո ներկայացնելու դեպքում բռնագանձման ենթակա ժամանակահատվածի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատ-

ճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճուրեկ դալարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ հերկյալ իրավական հարցադրմանը. ալիմենար վճարելու որպես պարբերական վճարումների վերաբերյալ դալարական ակտի հիման վրա փրված կալարողական թերթն առաջին անգամ կալարումն ներկայացնելուց հետո իր ժամանակահատվածի համար է ենթակա բնագանձման դալարական ակտով սահմանված գումարը, եթե կալարողական թերթ փրամադրելու մասին դիմումը ներկայացվել է դալարական ակտին օրինական ուժի մեջ մտնելուց մեկ փարի հետո:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը (...):

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը (...):

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման բովանդակությամբ իրավադրոյթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասով, 60-րդ հոդվածի 1-ին մասով, 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (...) դատական ակտերի (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.04.2018 թվականը գործող խմբագրությամբ 23-րդ հոդվածի համաձայն՝

1. Կատարողական թերթը առաջին անգամ կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ՝

- 1) օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը.
- 2) արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ.
- 3) լրացել է դատական ակտի կատարումը հետաձգելու սահմանված ժամկետը.

4) դատարանը որոշում է կայացրել կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.

5) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր է դարձել կողմերի համար:

2. Քաղաքացու գույքի բացակայության կամ անբավարարության հետևանքով պահանջատերերի չբավարարված պահանջներով կատարողական թերթերը պահպանում են իրենց ուժը մինչև դրանց կատարումը:

3. Նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով պահանջատիրոջը վերադարձված կատարողական թերթը չի կարող կրկին կատարման ներկայացվել նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացի-պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված խմբագրությանը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածին, մասնավորապես՝ պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավական կառուցակարգին, արձանագրել է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված ժամկետը մեկ տարի է, որի հաշվարկը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, իսկ այդ պահանջի անտեսմամբ ընդունված կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը համարվում է օրենքի խախտմամբ ընդունված (յրե՛ս, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս գյուղի գյուղապետարանն ընդդեմ՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Էջմիածնի բաժանմունքի թիվ ՎԴ-4/0104/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):

Օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23րդ հոդվածի 1-ին մասում սահմանել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետները՝ ամրագրելով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կարող է կատարման ներկայացվել տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված մեկամյա ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31րդ հոդ-

վածի հիմքով հարկադիր կատարողը պարտավոր է վերադարձնել պահանջատիրոջը, եթե բացակայում է կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Վկայակոչված հողվածների վերլուծությունից հետևում է, որ դատական ակտից բխող պահանջի իրացման իրավունքը սահմանափակված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ կատարողական թերթը մեկ տարվա ընթացքում կատարման ներկայացնելու ժամկետով:

Նախկին որոշումներից մեկում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ հարկադիր կատարման ենթակա վերջնական դատական ակտի կատարումը պետք է տեղի ունենա դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո, կամ պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարումն առանց կատարողական վարույթի հարուցման ընդհատվում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված մեկ տարվա ժամկետից հետո:

Իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրության պայմաններում նման դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը ևս պետք է կատարման ներկայացվեր այդ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: Նման իրավակարգավորումը չի բխել վերջնական դատական ակտի կատարման պահանջատիրոջ իրավունքի երաշխավորված իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման պետության պարտականության էությունից: Դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետների հարցում առկա իրավական խնդիրը լուծելու օրենսդրությամբ նախատեսված միակ միջոցը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու կառուցակարգն է, որը սահմանված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով և կատարվում է հետևյալ ընթացակարգով.

1) կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում է ներկայացնում կատարողական թերթ տված դատարան,

2) կատարողական թերթ տված դատարանը քննում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը՝ այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում,

3) այդ դիմումի քննության արդյունքներով կատարողական թերթ տված դատարանը կայացնում է որոշում՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ դիմումը մերժելու մասին:

Վերոգրյալից հետևում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը համապատասխան դատարանի կողմից վերականգնվում է միայն այն դեպքում, երբ այդ ժամկետը բաց թողնելու պատճառը նույն դատարանի կողմից ճանաչվում է հարգելի: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձին կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորություն է ընձեռել ոչ թե բոլոր, այլ միայն այն դեպքերում, երբ պահանջատերը նշված ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը,

ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումն առկայության պայմաններում կատարողական թերթ տված դատարանը պարտավոր է հաշվի առնել կատարողական թերթը կատարման չներկայացնելու հիմքում ընկած բոլոր փաստական հանգամանքները (*լրե'ս*, «Յնսիրանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԴ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ որոշ դեպքերում կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը կատարողական թերթ տված դատարանի կողմից պետք է բավարարվի իրավունքի ուժով (*ex jure*)՝ հաշվի առնելով այդ ժամկետը բաց թողնելու պատճառները: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ նշված կանոնը գործում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը,

2) կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու պահին չի լրացել կատարման ենթակա դատական ակտով սահմանված պարտավորության (ների) կատարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո մեկ տարվա ժամկետը,

3) առկա է այդ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում՝ ուղղված այդ կատարողական թերթը տված դատարանին:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված պայմանների առկայության դեպքում դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (*ex jure*) վերականգնելու միջոցով հնարավոր կլինի ապահովել այդ դատական ակտով պահանջատեր հանդիսացող անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված դատական պաշտպանության, արդար դատաքննության և սեփականության իրավունքների երաշխավորված իրացումը: Նման պայմաններում չի բացառվում նաև պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարման հնարավորությունը (*լրե'ս*, ըստ «Ինելկոբանկ» ՓԲԸ-ի դիմումի թիվ ԵԱԲԴ/0515/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Արդյունքում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-9-Ն ՀՀ օրենքով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի՝

1. Կատարողական թերթ ստանալու համար դիմումը ներկայացվում է մեկ տարվա ընթացքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ՝ սկսած այն օրվանից, երբ՝

1) օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը.

2) արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ.

3) լրացել է դատական ակտի կատարումը հետաձգելու սահմանված ժամկետը.

4) դատարանը որոշում է կայացրել կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.

5) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր է դարձել կողմերի

համար:

2. Նույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում դատարանը կատարողական թերթ տալիս է՝ այն անհապաղ էլեկտրոնային եղանակով ուղարկելով հարկադիր կատարման ծառայություն:

3. Դատարանը պահանջատիրոջ դիմումի հիման վրա եռօրյա ժամկետում նրան է տրամադրում հարկադիր կատարման ծառայություն ուղարկած կատարողական թերթի պատճենը:

4. Եթե դատական ակտով հաստատված պարտավորությունը ենթադրում է տարածամկետ կամ պարբերական կատարում, ապա կատարողական թերթ կարող է տրվել պարտավորությունների կատարման ողջ ընթացքում, ինչպես նաև պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

5. Կատարողական մակագրության թերթը կարող է ներկայացվել հարկադիր կատարման այն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

6. Քաղաքացու գույքի բացակայության կամ անբավարարության հետևանքով պահանջատերերի չբավարարված պահանջներով կատարողական թերթերը պահպանում են իրենց ուժը մինչև դրանց կատարումը:

7. Նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով պահանջատիրոջ դիմումով վերադարձված կատարողական թերթը չի կարող կրկին կատարման ներկայացվել նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

8. Պահանջատիրոջ դիմումի հիման վրա վերադարձված կատարողական թերթը դատարանի կողմից նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով կարող է կրկին կատարման ներկայացվել պահանջատիրոջ՝ դատարան ներկայացված դիմումի հիման վրա:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 23-րդ հոդվածը դատական ակտով հաստատված՝ տարածամկետ կամ պարբերական կատարում ենթադրող պարտավորություններով կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետներ չէր նախատեսել, իսկ նույն հոդվածի գործող խմբագրությամբ Վճռաբեկ դատարանի որոշումների հիման վրա այդ խնդիրը որոշակիորեն կարգավորվել է՝ նախատեսելով, որ եթե դատական ակտով հաստատված պարտավորությունը ենթադրում է տարածամկետ կամ պարբերական կատարում, ապա կատարողական թերթ կարող է տրվել պարտավորությունների կատարման ողջ ընթացքում, ինչպես նաև պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Մինչնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոհիշյալ իրավակարգավորումն ալիմենտային պարտավորություններով չի կարող կիրառելի լինել հետևյալ պատճառներով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում ամբարգել է, որ ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման

վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*յրե՛ս, Մյուսթինգար և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22083/93 22095/93 գանգադուր Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, պարբ. 51, 55*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատավարական բաց թողնված ժամկետները հարգելի համարելու իրավակարգավորումներին, իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կունկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Այնուամենայնիվ, ժամկետը բաց թողնելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության կամ գործուղման մեջ գտնվելու պատճառով (*յրե՛ս, «Հայրիզնեսթանկ» ՓԲԸ-ի ընդդեմ «ՄԻԼԼԱՐ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԳ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (*յրե՛ս, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Գայասնե Մելքոնյանի թիվ ՎԳ/0059/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2014 թվականի որոշումը*):

Ջարգացնելով վերը նշված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ երբ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (*ex jure*) համարվում է վերականգնված և **կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացվել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարին անցնելուց հետո**, ապա ալիմենտ վճարելու՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելուց հետո դատական ակտով սահմանված գումարը պետք է բռնագանձվի կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացնելու պահից հետո ընկած ժամանակահատվածի համար, քանի որ պարտատիրոջ կողմից միայն որոշակի ժամանակահատվածից հետո կա-

տարողական թերթ տրամադրելու մասին դիմում ներկայացնելն իրենից ենթադրում է, որ պարտապանը կամ մինչ այդ պահը կատարել է դատական ակտով սահմանված իր պարտավորությունը, կամ էլ պարտատերը դատական ակտի կատարում չի պահանջել իր կամքով, քանի որ ալիմենտի հարցը լուծվել է ծնողների համաձայնությամբ, եթե պարտատերը չի վկայակոչում և ապացուցում հարգելի պատճառների առկայությունը:

Վճարել դատարանի վերը նշված դիրքորոշումը պայմանավորված է ալիմենտի՝ որպես անչափահաս երեխայի համար **յուրաքանչյուր ամիս վճարվող** ապրուստի միջոց լինելու հանգամանքով:

Այսպես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով՝ հետևյալ չափերով **ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով (...):**

Նույն մասով նախատեսված **ամենամսյա վճարումների** չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողների միջև երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում դատարանն իրավունք ունի բռնագանձվող **ալիմենտի ամենամսյա** չափը սահմանելու կայուն դրամական գումարով կամ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ և 71-րդ հոդվածների համակարգված վերլուծությունից հետևում է, որ **ալիմենտը** որպես ապրուստի միջոց տրամադրվող **ամենամսյա վճարում է**: Հետևաբար ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ վճիռը՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտ, չի կարող նույնացվել, օրինակ, պարտավորական հարաբերություններում պարտքը մաս-մաս կամ պարբերաբար վճարելու համաձայնության հետ, քանի որ նման հարաբերություններում պարտապանն իր պարտատիրոջ առջև ունի ամբողջ պարտքը վճարելու անվիճելի պարտավորություն, ինչը փոխադարձ համաձայնությամբ կարող է կատարել մաս-մաս և տարաժամկետ, իսկ ալիմենտը, ինչպես նշվեց, դատական կարգով որոշվելու դեպքում բռնագանձվում է ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով:

Բացի այդ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **ալիմենտ հատկացվում է դատարան դիմելու պահից**: Անցած ժամանակահատվածի համար ալիմենտ կարող է բռնագանձվել դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար, եթե դատարանով հաստատվել է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապրուստի միջոց ստանալու համար, բայց ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով:

Նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ ալիմենտը, որպես կանոն, բռնագանձվում է դատարան դիմելու պահից, իսկ եթե ալիմենտ հայցողն ապացուցում է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապրուստի միջոց ստանալու համար, բայց **ալիմենտը չի ստացել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու** հետևանքով, ապա միայն այդ պարագայում կարող է դատարանն ալիմենտը բռնագանձել նաև դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ օրենսդիրը որպես սկզբունք ալիմենտի բռնագանձման հաշվարկի սկիզբը պայմանավորել է ալիմենտ հայցողի՝ դատարան դիմելու պահով՝ ղեկավարվելով այն կանխավարկածով, որ ալիմենտի բռնագանձման պահանջ ներկայացված չլինելը վկայում է ալիմենտ վճարելու վերաբերյալ ծնողների միջև առկա համաձայնության մասին, եթե այլ բան ապացուցված չէ:

Վերը նշված դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ալիմենտ վճարելու վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով բռնագանձվող գումարի ժամանակահատվածին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **այն դեպքում, երբ ալիմենտ վճարելու՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտի հիման վրա կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացվել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարին անցնելուց հետո, դատական ակտով սահմանված գումարը պետք է բռնագանձվի կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացնելուց հետո ընկած ժամանակահատվածի համար, եթե պարտատերը չապացուցի, որ վճռի կայացումից հետո ինքը բոլոր միջոցները ձեռնարկել է ապրուստի միջոց ստանալու համար, սակայն ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով:** Հակառակ դիրքորոշման պարագայում կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ ծնողների փոխադարձ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավորություն ունեցող ծնողը որոշակի ժամանակահատված իր պարտավորությունը կամովին և պատշաճ կատարելուց հետո կարող է հարկադիր կարգով պարտավորեցվել կրկին կատարելու իր նույն պարտավորությունը, ինչը չի կարող իրավաչափ համարվել:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ **Դատարանի 07.12.2011 թվականի վճռով** Հերմինե Հովհաննիսյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ցոլակ Սաֆարյանից՝ որպես կողմերի երեխաներ Էդուարդ Սաֆարյանի (ծնված՝ 23.09.2007 թվականին) և Լաուրա Սաֆարյանի (ծնված՝ 04.06.2010 թվականին), բռնագանձվել է կայուն դրամական գումարով ալիմենտ՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 20.000 ՀՀ դրամի չափով մինչև երեխաների չափահաս դառնալը՝ ալիմենտի բռնագանձման սկիզբը հաշվելով 18.10.2011 թվականից: Մնացած մասով հայցը մերժվել է: **Նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 08.01.2012 թվականին:** Հերմինե Հովհաննիսյանը կատարողական թերթ տրամադրելու և **կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը** Դատարան ներկայացրել է **08.12.2015 թվականին:**

Դատարանը 22.04.2016 թվականի որոշմամբ Լաուրա Սաֆարյանի դիմումը՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու մասին, բավարարել է՝ պատճառաբանելով, որ տվյալ դեպքում Ցոլակ Սաֆարյանն ինքնակամ չի վճարում դատարանի վճռով սահմանված՝ երկու երեխայի խնամքի համար նախատեսված 40.000 ՀՀ դրամ ալիմենտը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ցոլակ Սաֆարյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի 22.04.2016 թվականի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ *«(...) երբ կողմերի միջև նորից փոխաձայնություններ են առաջացել, Ցոլակ Սաֆարյանը հրաժարվել է ալիմենտի վճարումից, որի հետևանքով Հայցվորը գրկվել է իր երեխաներին փրամադրվող ապրուստի միջոց ստանալու հնարավորությունից և խոչընդոտվել է նրա օրի-*

Նակյան ուժի մեջ մտնած վճռի հիման վրա իրավունքների իրականացումը (...)»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, սույն գործի փաստական հանգամանքները համադրելով վերոգրյալ իրավական դիրքորոշումների հետ, արձանագրում է, որ հայցվորն իր դիմումով և դիմումի հիման վրա հրավիրված դատական նիստերի ընթացքում հայտնել է, որ կողմերը սույն գործով կայացված վճռից հետո շուրջ մեկ տարի բնակվել են համատեղ, իսկ երեխաներից Էդուարդ Սաֆարյանը 2014 թվականի մայիսից մինչև 2015 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում բնակվել է բողոք բերած անձի հետ: Ավելին՝ Հերմինե Հովհաննիսյանն ընդունել է այն փաստը, որ Ցուլակ Սաֆարյանն օգնել է իրեն երեխաների կարիքները հոգալու հարցում՝ միաժամանակ նշելով, որ նշված պարագայում կատարողական թերթ ստանալու դիմում ներկայացնելու անհրաժեշտություն էլ չի եղել: Փաստորեն, Հերմինե Հովհաննիսյանը կատարողական թերթը կատարման չներկայացնելու հանգամանքը պայմանավորել է ծնողների միջև որոշակի ժամանակահատվածում երեխաների ապրուստը հոգալու վերաբերյալ համաձայնության առկայությամբ և այդ առթիվ հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությամբ, իսկ կատարողական թերթ ստանալու համար ուշ դիմելը պատճառաբանել է ծնողների միջև կրկին տարաձայնություններ առաջանալու հանգամանքով: Նման պայմաններում ժամկետի բացթողումը կապված է եղել ոչ թե դիմողի կամքից անկախ հանգամանքների առկայության, այլ որոշակի ժամանակահատվածում երեխաների ապրուստի միջոցների հարցը ծնողների փոխադարձ համաձայնությամբ լուծված լինելու, հետևաբար և տվյալ ժամանակահատվածում այդ հարցով կողմերի միջև վեճի բացակայության հետ:

Վերը նշված եզրահանգումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշվածը հիմք է հանդիսանում Հերմինե Հովհաննիսյանի՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասով դիմումը մերժելու համար:

Անդրադառնալով Հերմինե Հովհաննիսյանի՝ կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումին, Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կատարողական թերթը տրվում է **դատարանի վճիռների**, դատավճիռների, որոշումների և դատարանի արձակած վճարման կարգադրությունների հիման վրա:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կատարողական թերթը տալիս է ակտն ընդունած առաջին ատյանի դատարանը՝ **պահանջատիրոջ կամ դրա համար հատուկ լիազորված նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա:**

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **կատարողական թերթը տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից ետոքյա ժամկետում**, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անհապաղ:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ կատարողական թերթը տրվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա պարտատիրոջ դիմումով՝ այն ստանալու օրվանից ետոքյա ժամկետում, այսինքն՝ կատարողական թերթ տրամադրելու մասին դիմում ներկայացնելու համար նախատեսված է միայն դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ներկայացնելու ժամկետ և որևէ այլ սահմանափակում չկա: Ավելին՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պահանջատիրոջ կողմից կա-

տարողական թերթ տրամադրելու մասին ներկայացրած դիմումի առկայությունն արդեն իսկ բավարար է կատարողական թերթ տրամադրելու համար, իսկ կատարողական թերթի պահանջների կատարումն իրականացվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Տվյալ դեպքում սույն գործով վճիռն օրինական ուժի մեջ է մտել 08.01.2012 թվականին, իսկ Հերմինե Հովհաննիսյանը կատարողական թերթ տրամադրելու դիմումը ներկայացրել է 08.12.2015 թվականին, այսինքն՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, որպիսի պայմաններում Դատարանը պարտավոր էր դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում Հերմինե Հովհաննիսյանին տրամադրել կատարողական թերթ: Հետևաբար Վերաքննիչ դատարանի որոշումը՝ Դատարանի՝ կատարողական թերթ տրամադրելու մասով որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասով հիմնավոր է և այդ մասով վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Վճռաբեկ բողոքի դեմ Հերմինե Հովհաննիսյանի կողմից վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտը մասնակի բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի

Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [«Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» մասի 4-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձինք դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են (...) բաց թողնված ժամկետները վերականգնելու (...) դիմումներով:

Սույն գործով հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը շարադրված պատճառաբանության հիմքով վճռաբեկ բողոք բերած անձը չի կրում պետական տուրք վճարելու պարտականություն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետական տուրքի վճարման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 22.04.2016 թվականի «Կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին» որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասով, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2016 թվականի որոշումը և նշված մասով փոփոխել այն՝ դիմումն այդ մասով մերժել: Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԱՎԴ1/0347/02/11 քաղաքացիական գործով 15.04.2019 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան), քննելով Ցոլակ Սաֆարյանի ներկայացուցիչ Համլետ Մնացականյանի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հերմինե Հովհաննիսյանի ընդդեմ Ցոլակ Սաֆարյանի՝ ալիմենտ բռնագանձելու պահանջի մասին, 2019 թվականի ապրիլի 15-ին որոշել է «Վճարելի բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասով, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2016 թվականի որոշումը և նշված մասով փոփոխել այն՝ դիմումն այդ մասով մերժել: Որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ: Պետական տուրքի հարցը համարել լուծված»:

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Ե. Խոնդկարյանս, համաձայն չլինելով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 15.04.2019 թվականին թիվ ԱՎԴ1/0347/02/11 քաղաքացիական գործով կայացված որոշման պատճառաբանական մասում կատարված՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասով դիմումը մերժելու մասին եզրահանգման և այս մասով եզրափակիչ մասի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում են իմ հատուկ կարծիքը նույն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Գործի դարավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Հերմինե Հովհաննիսյանը պահանջել է Ցոլակ Սաֆարյանից հոգուտ կողմերի երեխաներ Էդուարդ Սաֆարյանի (ծնված՝ 23.09.2007 թվականին) և Լաուրա Սաֆարյանի (ծնված՝ 04.06.2010 թվականին) բռնագանձել կայուն դրամական գումարով ալիմենտ՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 30.000 ՀՀ դրամի չափով մինչև երեխաների չափահաս դառնալը:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 07.12.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Ցոլակ Սաֆարյանից հոգուտ կողմերի երեխաներ Էդուարդ Սաֆարյանի և Լաուրա Սաֆարյանի բռնագանձել ալիմենտ կայուն դրամական գումարով՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 20.000 ՀՀ դրամի չափով մինչև երեխաների չափահաս դառնալը՝ ալիմենտի բռնագանձման սկիզբը հաշվելով 18.10.2011 թվականից, իսկ հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

Հերմինե Հովհաննիսյանը 08.12.2015 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ կատարողական թերթ տալու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջների մասին:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 22.04.2016 թվականի որոշմամբ Հերմի-

նե Հովհաննիսյանի դիմումը՝ կատարողական թերթ տալու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջների մասին, բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ա. Սմբատյան, Կ. Հակոբյան, Ա. Հունանյան) (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.11.2016 թվականի որոշմամբ Ցոլակ Սաֆարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 22.04.2016 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ցոլակ Սաֆարյանի ներկայացուցիչը՝ Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հերմինե Հովհաննիսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Դատարանի ակտիվի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 23-րդ հոդվածը, նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-3-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պահանջատիրոջ համար կատարողական թերթ ստանալու և այն կատարման ներկայացնելու ժամկետն ավարտվել է «08.12.2012 թվականին», սակայն նշված ժամկետում Հերմինե Հովհաննիսյանը կատարողական թերթ տրամադրելու մասին դիմում չի ներկայացրել:

Ավելին՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմումը Հերմինե Հովհաննիսյանը ներկայացրել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց շուրջ 5 տարի անց, սակայն չի ներկայացրել ժամկետի բացթողումը հարգելի լինելու հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց:

Բացի այդ, նշված 5 տարիների ընթացքում բողոք բերած անձն օգնել է երեխաների խնամքի հարցում, ինչից հետևում է, որ ալիմենտային պարտքը չի կարող բռնագանձվել անցած 5 տարիների համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.11.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Լաուրա Սաֆարյանի դիմումը՝ կատարողական թերթ տալու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջների մասին, մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները.

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ կողմերի միջև ժամանակավորապես կայացած հաշտությունը բացառել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում այն կատարման ներկայացնելու անհրաժեշտությունը:

Վերաքննիչ դատարանը կատարել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում ու գնահատում, ինչի հիման վրա էլ կայացրել է արդարացի և հիմնավորված որոշում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՎԴ1/0347/02/11 քաղաքացիական գործով 07.12.2011 թվականի վճռով Լաուրա Սաֆարյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Ցոլակ Սաֆարյանից հոգուտ կողմերի երեխաներ Էդուարդ Սաֆարյանի և Լաուրա Սաֆարյանի բռնազանձել ալիմենտ կայուն դրամական գումարով՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 20.000 ՀՀ դրամի չափով մինչև երեխաների չափահաս դառնալը, իսկ հայցը՝ մնացած մասով, մերժվել է: Դատարանի վճիռը օրինական ուժի մեջ է մտել 09.01.2012 թվականին **(գ.թ. 28-29)**:

2) Հերմինե Հովհաննիսյանը 08.12.2015 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ կատարողական թերթ տրամադրելու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջների մասին՝ հայտնելով, որ նախկինում կատարողական թերթ ստանալու համար դիմում չի ներկայացրել, քանի որ Ցոլակ Սաֆարյանը երեխաներին ժամանակ առ ժամանակ օգնություն էր ցույց տալիս՝ հիմնականում բնամթերքի տեսքով՝ միաժամանակ խոստանալով, որ կվճարի ալիմենտային գումարները **(գ.թ. 38-39)**:

4. Հայրուկ կարծիքը հիմնավորող պարճատարանությունները.

Սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ սովորաբար դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պարբերական վճարումների՝ ալիմենտի բռնազանձման վերաբերյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու դեպքում բաց թողնված ժամկետի վերականգման պահի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ հարկ է անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. ալիմենտ վճարելու՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտի հիման վրա արված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու դեպքում՝ ո՞ր պահից է ենթակա վերականգման կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը (...):

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը (...):

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման բովանդակությամբ իրավադրույթներ են նախատեսված նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասով, 60-րդ հոդվածի 1-ին մասով, 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (...) դատական ակտերի (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական թերթը տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անհապաղ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում դատարանը կատարողական թերթ տալիս է՝ այն անհապաղ էլեկտրոնային եղանակով ուղարկելով հարկադիր կատարման ծառայություն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին անգամ կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել **մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից**, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31րդ հոդվածի համաձայն՝ (...) եթե լրացել է [կատարողական թերթը] կատարման ներկայացնելու ժամկետը և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին կատարողական թերթ տված դատարանի որոշումը, (...) հարկադիր կատարողը կատարողական թերթը վերադարձնում է պահանջատիրոջը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ քաղաքացի-պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու

դեպքում դատարանը կարող է այն վերականգնել: Պահանջատերը բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը ներկայացնում է կատարողական թերթ տված դատարան: Դատարանը դիմումը քննում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Պահանջատերը և պարտապանը պատշաճ ձևով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար: Դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

Փաստորեն, օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանել էր, որ կատարողական թերթն առաջին անգամ կարող էր կատարման ներկայացվել տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: Նշված ժամկետը լրանալուց հետո ներկայացված կատարողական թերթը ենթակա էր վերադարձման պահանջատիրոջը, եթե բացակայում էր կատարողական թերթ տված դատարանի որոշումը՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Այսինքն՝ դատական ակտից բխող պահանջի իրավունքը սահմանափակված էր իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ կատարողական թերթը մեկ տարվա ընթացքում կատարման ներկայացնելու ժամկետով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.12.2017 թվականի թիվ ՀՕ-9-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով խմբագրվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած խմբագրությամբ 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կատարողական թերթ ստանալու համար դիմումը ներկայացվում է մեկ տարվա ընթացքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ՝ սկսած այն օրվանից, երբ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե դատական ակտով հաստատված պարտավորությունը ենթադրում է տարածամկետ կամ **պարբերական կատարում**, ապա կատարողական թերթ կարող է տրվել պարտավորությունների կատարման ողջ ընթացքում, ինչպես նաև պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Հատկանշական է, որ օրենսդիրը սահմանել է կատարողական թերթ ստանալու համար դիմումը դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում ներկայացնելու ընդհանուր պահանջ, սակայն նախատեսել է առանձնահատուկ կարգավորումներ այն դեպքերի համար, երբ դատական ակտով հաստատված պարտավորությունը ենթադրում է տարածամկետ կամ պարբերական կատարում: Այդ դեպքերում օրենսդիրը թույլ է տվել տրամադրել կատարողական թերթ պարտավորությունների կատարման ողջ ընթացքում, ինչպես նաև պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Նշված նորմի սահմանումը նպատակ է հետապնդել լիարժեքորեն ապահովել անձի դատական պաշտպանության իրավունքը, ապահովել դատական ակտի կատարելիությունը և համապարտադիրությունը, ինչպես նաև նպատակ է հետապնդել բացառել դատական ռեսուրսների վատնումը, քանի որ այս դեպքերում պարտատերը լրացուցիչ պարտականություն չի կրում դատարան ներկայացնել միջնորդություն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի հա-

մարելու և կատարողական թերթ տրամադրելու մասին, այլ նման դիմում ներկայացնելու ժամկետների պահպանվածության դեպքում դատարանը տրամադրում է կատարողական թերթ՝ դրա էլեկտրոնային օրինական ուղարկելով հարկադիր կատարման ծառայություն:

««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.12.2017 թվականի թիվ ՀՕ-9-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված են նույն օրենքի եզրափակիչ և անցումային դրույթները: Մասնավորապես նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելու օրը տրված կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ (1) օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը, (2) արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ, (3) լրացել է դատական ակտի կատարումը հետաձգելու սահմանված ժամկետը, (4) դատարանը որոշում է կայացրել կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, (5) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր է դարձել կողմերի համար:

Ուստի, հիմք ընդունելով նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի իրավակարգավորումը (*ընդ որում, նմանատիպ կարգավորում նախատեսում էր նաև 03.04.2002 թվականին ընդունված, 31.05.2002 թվականին ուժի մեջ մտած և 07.04.2018 թվականին ուժը կորցրած «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածը*), կարելի է եզրակացնել, որ 21.12.2017 թվականի թիվ ՀՕ-9-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունները տարածվում են դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա՝ նկատի ունենալով, որ օրենքին հետագարձ ուժ չի տրվել:

Այդուհանդերձ, ՀՀ վճռաբեկ դատարանը դեռևս «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ՝ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի գործով 22.07.2016 թվականի որոշմամբ մանրամասն անդրադարձել է պարբերական վճարումների բռնագանձման վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավական կառուցակարգին՝ դիտարկելով այն ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշված որոշմամբ արձանագրել է, որ իրավակիրատ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ հարկադիր կատարման ենթակա վերջնական դատական ակտի կատարումը պետք է տեղի ունենա դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո, կամ պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարումն առանց կատարողական վարույթի հարուցման ընդհատվում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար սահմանված մեկ տարվա ժամկետից հետո: Իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրության պայմաններում նման դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը ևս պետք է կատարման ներկայացվել այդ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում: Նման իրավակարգավորումը չէր բխում վերջնական դատական ակտի կատարման պահանջատիրոջ իրավունքի երաշխավորված իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման պետության պարտականության էությունից: Դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետների հարցում առկա իրավական խնդիրը լուծելու օրենսդրությամբ նախատեսված **միակ միջոցը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու կառուցակարգն էր**, որը սահմանված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ

հողվածով և կատարվում է հետևյալ ընթացակարգով.

1) կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում է ներկայացնում կատարողական թերթ տված դատարան,

2) կատարողական թերթ տված դատարանը քննում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը՝ այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում,

3) այդ դիմումի քննության արդյունքներով կատարողական թերթ տված դատարանը կայացնում է որոշում՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ դիմումը մերժելու մասին:

Վերոգրյալից հետևում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը համապատասխան դատարանի կողմից վերականգնվում է միայն այն դեպքում, երբ այդ ժամկետը բաց թողնելու պատճառը նույն դատարանի կողմից ճանաչվում է հարգելի: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը կատարողական թերթով պահանջատեր հանդիսացող անձին կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորություն է ընձեռել ոչ թե բոլոր, այլ միայն այն դեպքերում, երբ պահանջատերը նշված ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումի առկայության պայմաններում կատարողական թերթ տված դատարանը պարտավոր է հաշվի առնել կատարողական թերթը կատարման չներկայացնելու հիմքում ընկած բոլոր փաստական հանգամանքները և վերականգնել բաց թողած ժամկետը, եթե դա պայմանավորված է եղել դատական ակտով որոշված պարտավորությունը դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկ տարին գերազանցող ժամկետով, կամ պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարման ընդհատմամբ, երբ պարտատիրոջ կարծիքով սպառվել է դատական ակտի կամավոր կատարման հնարավորությունը: Նշված մոտեցման ցուցաբերման դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել պարտատիրոջ և պարտապանի շահերի հավասարակշռված պաշտպանությունը (*լրե'ս, թիվ ԼԳ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ հանգել է այն եզրակացության, որ որոշ դեպքերում կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը կատարողական թերթ տված դատարանի կողմից պետք է բավարարվի իրավունքի ուժով (*ex jure*)՝ հաշվի առնելով այդ ժամկետը բաց թողնելու պատճառները: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ նշված կանոնը գործում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը,

2) կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու պահին չի լրացել կատարման ենթակա դատական ակտով սահմանված պարտավորության (ներքի) կա-

տարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո մեկ տարվա ժամկետը,

3) առկա է այդ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում՝ ուղղված այդ կատարողական թերթը տված դատարանին:

ՀՀ վճարելի դատարանը գտել է, որ վերը նշված պայմանների առկայության դեպքում դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) վերականգնելու միջոցով հնարավոր կլինի ապահովել այդ դատական ակտով պահանջատեր հանդիսացող անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված դատական պաշտպանության, արդար դատաքննության և սեփականության իրավունքների երաշխավորված իրացումը: Նման պայմաններում, չի բացառվում նաև պարտապանի կողմից դատական ակտի կամավոր կատարման հնարավորությունը (տե՛ս, ըստ «Ինտելոքուալ» ՓԲԸ-ի դիմումի թիվ ԵԱԲՆ/0515/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Նախկինում արտահայտած դիրքորոշումները կիրառելով երեխայի օգտին ալիմենտի բռնագանձման վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու ընթացակարգի նկատմամբ՝ անհրաժեշտ է արձանագրել հետևյալը.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով (...):

Նույն մասով նախատեսված ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողների միջև երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում դատարանն իրավունք ունի բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանելու կայուն դրամական գումարով կամ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ և 71-րդ հոդվածների համակարգված վերլուծությունից հետևում է, որ ալիմենտը որպես ապրուստի միջոց տրամադրվող ամենամսյա վճարում է: Հետևաբար ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ վճիռը՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտ, չի կարող նույնացվել, օրինակ, պարտավորական հարաբերություններում պարտքը պարբերաբար վճարման եղանակով համաձայնության հետ, քանի որ նման հարաբերություններում պարտապանն իր պարտատիրոջ առջև ունի պարտքը վճարելու պարտականություն, որը փոխադարձ համաձայնությամբ կարող է վճարել մասմաս, իսկ ալիմենտը, ինչպես նշվեց, որպես ապրուստի միջոց տրամադրվող ամենամսյա վճարում է:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ալիմենտ հատկացվում է դատարան դիմելու պահից: Անցած ժամանակահատվածի համար ալիմենտ կարող է բռնագանձվել դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար, եթե դատարանով հաստատվել է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապրուստի միջոց

ստանալու համար, բայց ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով:

Նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ ալիմենտը, որպես կանոն, բռնագանձվում է դատարան դիմելու պահից, իսկ եթե ալիմենտ հայցողն ապացուցում է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ է ձեռնարկվել ապրուստի միջոց ստանալու համար, բայց **ալիմենտը չի ստացել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու** հետևանքով, ապա միայն այդ պարագայում կարող է դատարանն ալիմենտը բռնագանձել նաև դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար:

Այսպիսով՝ օրենսդիրը որպես սկզբունք ալիմենտի բռնագանձման հաշվարկի սկիզբը պայմանավորել է ալիմենտ հայցողի՝ դատարան դիմելու պահով՝ ղեկավարվելով այն կանխավարկածով, որ ալիմենտի բռնագանձման պահանջ ներկայացված չլինելը վկայում է ալիմենտ վճարելու վերաբերյալ ծնողների միջև առկա համաձայնության մասին, եթե այլ բան ապացուցված չէ:

Վերը նշված դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ալիմենտ վճարելու վերաբերյալ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով բռնագանձվող գումարի ժամանակահատվածին, հարկ է նշել, որ այն դեպքում, երբ ալիմենտ վճարելու՝ որպես պարբերական վճարումների վերաբերյալ դատական ակտի հիման վրա կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացվել է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո, **դատական ակտով սահմանված գումարը պետք է բռնագանձվի կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը ներկայացնելուց հետո ընկած ժամանակահատվածի համար, եթե պարտատերը չապացուցի, որ վճռի կայացումից հետո ինքը բոլոր միջոցները ձեռնարկել է ապրուստի միջոց ստանալու համար, սակայն ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով:** Հակառակ դիրքորոշման պարագայում կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ ծնողների փոխադարձ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը որոշակի ժամանակահատված իր պարտականությունը կամովին և պատշաճ կատարելուց հետո կարող է հարկադիր կարգով պարտավորեցվել կրկին կատարելու իր նույն պարտականությունը, ինչը չի կարող իրավաչափ համարվել:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն խնդրին, թե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի **նախկին իրավակարգավորման պայմաններում** իրավունքի պաշտպանության ինչ մեխանիզմներ ունի պարտատերը, եթե ալիմենտի բռնագանձման մասին դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման չի ներկայացրել դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Նախ պետք է նշել, որ ալիմենտը որպես ապրուստի միջոց տրամադրվող ամենամսյա վճարում է: Այս երաշխիքը եկթադրում է յուրաքանչյուր անձի առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ, միջազգայնորեն ընդունված, ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ պարենային ապրանքների նվազագույն քանակի ապահովման իրավունք (*տե՛ս, Զոյա Զախարյանն ընդդեմ Սամվել Զախարյանի թիվ 3-2300(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2006 թվականի որոշումը*): Այսինքն՝ պետությունը, երաշխավորելով երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավուն-

քը, ի ապահովումն նշված իրավունքի սահմանել է պարտականություն՝ երեխայի ծնողների համար՝ պահելու իրենց երեխաներին: Նշվածը ենթադրում է, որ ծնողներն այն սուբյեկտներն են, որոնք անմիջականորեն կրում են պարտականություն՝ պահելու իրենց երեխաներին, այդ թվում նաև՝ վերջիններիս պահելու համար միջոցներ (ալիմենտ) տրամադրելու միջոցով: Ընդ որում, եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից կարող են բռնագանձվել դատական կարգով:

Այսպիսով՝ ալիմենտը՝ որպես **պարբերական (ամենամսյա) վճարման տեսակ**, ապրուստի միջոց է, որն ապահովում է երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքը, ինչը բխում է նաև երեխայի լավագույն շահերից: Հետևաբար այն ունի կենսական նշանակություն երեխայի համար և ենթակա է պաշտպանության, ինչը նշանակում է, որ ալիմենտային պարտավորությունների կատարումը պետք է ապահովվեն նաև հարկադիր կարգով՝ բացառելով ծնողներից որևիցե մեկի ոչ բարեխիղճ վերաբերմունքը դրա կատարման նկատմամբ:

Նման վերլուծության պայմաններում կարելի է եզրահանգել, որ ալիմենտային վճարների նկատմամբ նույնպես կիրառելի են դատական ակտով հաստատված պարբերական վճարումներ ենթադրող պարտավորության հարկադիր կատարման նկատմամբ տարածվող առանձնահատկությունները: Հետևաբար ալիմենտային վճարումների մասով կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի համարելու մասին հարցը *մինչև 21.12.2017 թվականին ընդունված և 01.04.2018 թվականին ուժի մեջ մտած խմբագրությամբ գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների լույսի ներքո քննարկելիս* դրա նկատմամբ կիրառելի են թիվ ԼԴ/0039/04/14 և թիվ ԵԱԲԴ/0515/02/10 քաղաքացիական գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները: Հետևաբար ալիմենտային վճարումներ կատարելու պահանջի մասին վճռի առկայության պարագայում, երբ պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը, ներկայացրել է այդ վճռի հիման վրա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում՝ ուղղված այդ կատարողական թերթը տված դատարանին և կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու պահին չի լրացել կատարման ենթակա դատական ակտով սահմանված պարտավորության(ների) կատարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո մեկ տարվա ժամկետը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը կատարողական թերթը տված դատարանի կողմից պետք է բավարարվի **իրավունքի ուժով (ex jure)**՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դրանով միայն կապահովվի երեխայի լավագույն շահը: Ընդ որում, հիմք ընդունելով վերոգրյալը՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը պետք է հարգելի համարվի կատարողական թերթը տրամադրելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահից: Նման դիրքորոշումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նախորդ իրավակարգավորման պայմաններում պարբերական կատարում ենթադրող դատական ակտով պարտատերը չունի այլ մեխանիզմ իր օգտին կայացված վճռի կատարում ստանալու, եթե բաց է թողել կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի թիվ ԱՎԴ1/0347/02/11 քաղաքացիական

գործով 07.12.2011 թվականի վճռով Լատուրա Սաֆարյանի հայրը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Ցուլակ Սաֆարյանից հօգուտ կողմերի երեխաներ Էդուարդ Սաֆարյանի և Լատուրա Սաֆարյանի բռնագանձել ալիմենտ կայուն դրամական գումարով՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 20.000 ՀՀ դրամի չափով մինչև երեխաների չափահաս դառնալը, իսկ մնացած մասով հայրը մերժվել է: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 09.01.2012 թվականին:

Հերմինե Հովհաննիսյանը 08.12.2015 թվականին դիմում է ներկայացրել Դատարան՝ կատարողական թերթ տալու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջների մասին:

Դատարանը 22.04.2016 թվականի որոշմամբ Հերմինե Հովհաննիսյանի դիմումը՝ կատարողական թերթ տալու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջների մասին, բավարարել է՝ պատճառաբանելով, որ տվյալ դեպքում Ցուլակ Սաֆարյանն ինքնակամ չի վճարում դատարանի վճռով սահմանված՝ երկու երեխայի խնամքի համար նախատեսված 40.000 ՀՀ դրամ ալիմենտը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ցուլակ Սաֆարյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի 22.04.2016 թվականի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ «(...) Ցուլակ Սաֆարյանը հրաժարվել է ալիմենտի վճարումից, որի հետևանքով Հայցվորը գրկվել է իր երեխաներին փրամադրվող ապրուստի միջոց ստանալու հնարավորությունից և խոչընդոտվել է նրա՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա իրավունքների իրականացումը (...):»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ հարկ է արձանագրել, որ այս պարագայում թիվ ԱՎԳՆ/0347/02/11 քաղաքացիական գործով 07.12.2011 թվականի վճռով հաստատվել է Ցուլակ Սաֆարյանի՝ ալիմենտային պարտավորություններ ունենալու հանգամանքը, ընդ որում՝ նման պարտավորությունը ենթադրում է պարբերական վճարումների կատարում: Հետևաբար հաշվի առնելով, որ Հերմինե Հովհաննիսյանին կատարողական թերթ տրամադրվել է 22.04.2016 թվականի որոշման հիման վրա, նշված իրավահարաբերության նկատմամբ կիրառելի են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի նախկին իրավակարգավորումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ այս պարագայում պահանջատերը բաց է թողել այդ կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու՝ օրենքով նախատեսված մեկամյա ժամկետը, ներկայացրել է այդ վճռի հիման վրա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմում և կատարողական թերթն առաջին անգամ կատարման ներկայացնելու պահին չի լրացել կատարման ենթակա դատական ակտով սահմանված պարտավորության(ների) կատարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո մեկ տարվա ժամկետը, ապա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը կատարողական թերթ տված դատարանի կողմից պետք է բավարարվեր իրավունքի ուժով (ex jure):

Միաժամանակ սույն գործով էական է այն հանգամանքը, որ հայցվորն իր դիմումով հայտնել է, որ Ցուլակ Սաֆարյանը երեխաներին ժամանակ առ ժամանակ օգնություն է ցույց տվել: Այսինքն, ըստ էության, Հերմինե Հովհաննիսյանը կատարողական թերթը կատարման չներկայացնելու հանգամանքը պայմանավորել է ծնողների միջև որոշակի ժամանակահատվածում երեխաների ապրուստը հոգալու վերաբերյալ համաձայնության առկայությամբ և

այդ առթիվ հարկադիր կատարման անհրաժեշտության բացակայությամբ, իսկ կատարողական թերթ ստանալու համար ուշ դիմելը պատճառաբանել է ծնողների միջև կրկին տարածայնություններ առաջանալու հանգամանքով: Նման պայմաններում ժամկետի բացթողումը կապված է եղել ոչ թե դիմողի կամքից անկախ հանգամանքների առկայության, այլ որոշակի ժամանակահատվածում երեխաների ապրուստի միջոցների հարցը ծնողների փոխադարձ համաձայնությամբ լուծված լինելու, հետևաբար տվյալ ժամանակահատվածում կողմերի միջև վեճի բացակայության հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը ենթակա էր հարգելի ճանաչման, որպիսի իրավաչափ եզրահանգման հանգել էին ստորադաս դատարանները, սակայն կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը ենթակա է վերականգնման միայն կատարողական թերթ ստանալու դիմում ներկայացնելու պահից՝ 08.12.2015 թվականից սկսած:

Վճռաբեկ բողոքի պատասխանում քերված փաստարկները հիմնավորվում են վերոհիշյալ պարճառաբանություններով:

Այսպիսով՝ Հերմինե Հովհաննիսյանի կողմից ներկայացված դիմումը՝ կատարողական թերթ տալու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջների մասին, ենթակա էր բավարարման իրավունքի ուժով (ex jure)՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դրանով միայն կապահովվեն երեխայի լավագույն շահերը, հետևաբար ստորադաս դատարանները եկել են ճիշտ եզրահանգման: Այդուհանդերձ, ստորադաս դատարանների եզրահանգումը թերի է վերականգնման ժամկետի պահի վերաբերյալ: Կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը ենթակա է վերականգնման 08.12.2015 թվականից սկսած:

Վերոնշյալ հիմնավորմամբ պետք է արձանագրել, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի առկայությունը, ուստի վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի դատական ակտը թերի է պատճառաբանված, այն պետք էր թողնել օրինական ուժի մեջ վերը շարադրված պատճառաբանություններով հանդերձ:

5. Հարուկ կարծիքը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց

կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ Ցուլակ Սաֆարյանը նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցը պետք էր համարել լուծված:

6. Հայրուկ կարծիքի եզրահանգումները.

4-րդ և 5-րդ կետերում շարադրված հիմնավորումներից և պարճառաբանություններից ելնելով՝ գրնում եմ, որ վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2016 թվականի որոշումը պետք է թողնվեր օրինական ուժի մեջ՝ սույն կարծիքում շարադրված պարճառաբանություններով, իսկ դատական ծախսերի բաշխման հարցը՝ համարվեր լուծված:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ե. Խունդկարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/1057/02/18
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/1057/02/18
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան
Ս. Թորոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2019 թվականի հոկտեմբերի 17-ին
գրավոր ընթացակարգով քննելով Նարինե Մելքոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Նարինե Մելքոնյանի ընդդեմ Ալբերտ Ալավերդյանի, երրորդ անձ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի խնամակալության ու հոգաբարձության մարմնի՝ երեխաների բնակության վայրը մոր բնակության վայրով սահմանելու, ալիմենտի բռնագանձման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Նարինե Մելքոնյանը պահանջել է երեխաների բնակության վայրը սահմանել մոր բնակության վայրը և պատասխանողից բռնագանձել ալիմենտ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Փիլոսյան) (այսուհետ՝ Դատարան) 04.07.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 30.11.2018 թվականի որոշմամբ Ալբերտ Ալավերդյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 04.07.2018 թվականի վճիռը՝ երեխաների բնակության վայրը մոր բնակության

վայրով սահմանելու պահանջի մատով, բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ սահմանված ծավալով նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նարինե Մելքոնյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ երեխայի լավագույն շահից է բխում սույն վեճի արագ լուծումը, քանի որ որքան այն ձգձգվում է, այնքան երկար է շարունակում երեխայի մոտ մնալ լարված, անհանգիստ և անորոշ վիճակը, ինչը հստակ հետևում է ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 07.05.2018 թվականի եզրակացությունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն, որ դատական նիստի ժամանակ պատասխանող կողմը չի կարողացել հիմնավորել այն, թե ինչու Դատարանում սույն գործի քննության ժամանակ չի ներկայացրել երեխային լսելու միջնորդություն, իսկ փաստաբան չունենալու պատճառաբանությամբ չարաշահել է իր իրավունքները:

Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել, թե ինչպես է գնահատել երեխայի հասունությունը, կամ արդյոք միայն հասունությունը բավարար է նման որոշում կայացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 04.07.2018 թվականի վճիռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ռոբերտ Ալբերտի Ալավերդյանը ծնվել է 27.02.2010 թվականին, հայրը Ալբերտ Ալավերդյանն է, մայրը՝ Նարինե Մելքոնյանը (հիմք՝ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի կողմից 03.03.2010 թվականին տրված թիվ ԱԲ 054073 ծննդյան վկայական և թիվ ԱԲ 004250 հայրության ճանաչման վկայական) **(գ.թ. 14, 39):**

2) Դավիթ Ալբերտի Ալավերդյանը ծնվել է 20.12.2016 թվականին, հայրն Ալբերտ Ալավերդյանն է, մայրը՝ Նարինե Մելքոնյանը (հիմք՝ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի կողմից 14.04.2017 թվականին տրված թիվ ԱԲ 514776 ծննդյան վկայական և թիվ ԱԲ 085791 հայրության ճանաչման վկայական) **(գ.թ. 38, 40):**

3) ՀՀ Գյումրի քաղաքի Անի թաղամասի Մ. Խորենացու 6-րդ շենքի թիվ 59ա հասցեում փաստացի բնակվում են Նարինե Ստեփանի Մելքոնյանը, Ռոբերտ Ալբերտի Ալավերդյանը, Դավիթ Ալբերտի Ալավերդյանը, Ստեփան Վազգենի Մելքոնյանը և Ռոզա Գառնիկի Մելքոնյանը (հիմք՝ «Բարձրաբերդ» համատիրության 05.02.2018 թվականի թիվ 0113 գրություն) **(գ.թ. 11):**

4) ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 07.05.2018 թվականի թիվ 05/06 «ԵԴ/1057/02/18 քաղաքացիական գործով կողմերի կյանքի պայմանների հետազոտության ակտ և վեճի էության մասին եզրակացություն» ակտի համաձայն՝ Նարինե Մելքոնյանը ծնողների հետ բնակվում է ք. Գյումրի, Անի թաղամաս, Մ. Խորենացու փողոց 6 շենք թիվ 59ա հասցեում, որը 4 սենյականոց բնակարան է՝ վերանորոգված, կահավորված, գազաֆիկացված, կոմունալ բոլոր հարմարություններով:

Երեխաներն առանձին սենյակ ունեն՝ մեծ, լուսավոր և կահավորված. դասապատրաստումների համար հարմարավետ կահույքով, դպրոցական անհրաժեշտ պարագաներով: (...) Տունայցի պահին ընտանիքի բոլոր անդամները, բացի Ռոբերտ Ալավերդյանից, տանն էին: Վերջինիս 2018 թվականի հունվարի վերջին օրերին հայրը վերցրել է Գյումրու թիվ 11 դպրոցից և իր հետ բերել է Երևան, ուր մինչ այժմ բնակվում են: Փոքր որդին չափազանց կապված է մոր հետ: Ընտանիքում տիրում է ջերմ ու բարի մթնոլորտ:

Նարինե Մելքոնյանն աշխատում է Յոլյանի անվան արյունաբանական ինստիտուտում որպես արտաքին կապերի ծրագրի համակարգող: Հարևանների և գործընկերների կողմից բնութագրվում է որպես առաքինի, դրական հատկանիշներով օժտված անձնավորություն, համեստ և պարկեշտ կին է, ուշադիր և հոգատար մայր:

Ալբերտ Ալավերդյանը որդու և մոր հետ բնակվում է ք. Երևան, Հր. Ներսիսյան փողոց, 6 շենք, բնակարան թիվ 4 հասցեում, որը 3 սենյականոց բնակարան է՝ մաքուր, վերանորոգված, գազաֆիկացված: Առկա են կոմունալ բոլոր հարմարությունները: Երեխան առանձին սենյակ ունի՝ հարմարավետ, լուսավոր և ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները դասապատրաստման և հանգստի համար: Մովորում է Լ. Տոլստոյի անվան թիվ 128 հիմնական դպրոցի 2-րդ դասարանում: Տունայցի պահին տանն էր: Շատ կապված է հոր հետ: Առանձնագրույցի ժամանակ նշել է, որ շատ սիրում է մայրիկին և եղբորն ու ժամանակ առ ժամանակ հյուրընկալում է նրանց ու նաև կարոտում:

Եզրակացությամբ՝ խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ, 43-րդ, 52-րդ հոդվածների և 53-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով, 1989 թվականին ՄԱԿ-ի կողմից ընդունված «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի համապատասխան դրույթներով, ՀՀ կառավարության 02.06.2016 թվականի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հիմք ընդունելով երեխաների գերակա շահերը, երկու եղբայր մի հարկի տակ ապրելու և դաստիարակվելու իրավունքը, նպատակահարմար է գտել երեխաների բնակության վայրը սահմանել մոր բնակության վայրը (գ.թ. 51-53):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ երեխայի լավ լինելու իրավունքի իրացման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և

կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ երեխայի բնակության վայր սահմանելու վերաբերյալ գործերի քննության ընթացքում երեխայի լաված լինելու իրավունքի իրացման առանձնահատկություններին:

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան: Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր (...) ընտանեկան կյանքի (...) նկատմամբ հարգանքի իրավունք:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների (...) իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխան (...) ծնողյան պահից ձեռք է բերում, (...) որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մասնակից պետությունները հարգում են ծնողներից մեկից կամ երկուսից բաժանված երեխայի իրավունքը՝ կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ լրիվ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին:

Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, իր շահերի ապահովության, համակողմանի զարգացման, իր մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք: (...)

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի իր իրավունքներն ու շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքը ընտանիքում, դատական և այլ մարմիններում:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինը օրենքով նախատեսված դեպքերում ներգրավում է մանկական հոգեբանի կամ մանկավարժի կամ սոցիալական աշխատողի:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերը քննելիս գործին պետք է մասնակից դարձնի խնամակալության և հոգաբարձության մարմինն, անկախ նրանից, թե ով է ներկայացրել երեխայի պաշտպանության մասին հայց: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, որը (որոնք) հավակնում է (են) երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը և դատարան ներկայացնել

հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս արձանագրել է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Երեխաների և ծնողների նշված իրավունքների լիարժեք իրականացման և ծնողների նշված պարտականությունների պատշաճ կատարման հրամայականից ելնելով՝ ծնողների համար երաշխավորված է նաև այլ անձանց հանդեպ իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունքը: Նշվածի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ (*տե՛ս, օրինակ՝ Մարգարիտ Հովհաննիսյանն ընդդեմ Արթուր Թորոսյանի թիվ ԵԱԴԿ/1513/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ ևս արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը (*տե՛ս, Անի Մարտիրոսյանն ընդդեմ Գուրգեն Խաչատրյանի թիվ ԵԱԴԿ/0474/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում գտել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու և երեխաների բնակության վայրի շուրջ ծնողների համաձայնության բացակայության դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը պետք է համեմատական գնահատական տա և պատճառաբանի, թե որ ծնողի հետ բնակվելն է բխում երեխայի շահերից և նպաստում երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը (*տե՛ս, Արա Միրզախանյանն ընդդեմ Դիանա Խաչատրյանի թիվ 3-432(ՏԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*):

Անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարանը) ևս արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում նաև՝ դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից (*տե՛ս, C. v. Finland գործով Եվրոպական դատարանի 09.05.2006 թվականի վճիռը, 52-րդ կետը*):

Եվրոպական դատարանը մեկ այլ վճռով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածն արգելում է ծնողի շահերից ելնելով թույլատրել նրան կատարելու այնպիսի գործողություններ, որոնք կվնասեն երեխայի առողջությանն ու զարգացմանը (*տե՛ս, Johansen v. Norway գործով Եվրոպական դատարանի 07.08.1996 թվականի վճիռը, 78-րդ կետը*):

Երեխայի դաստիարակությունը մասնակցելու և նրա հետ շփվելու ծնողի իրավունքը

բխում է նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված՝ ընտանեկան կյանքի նկատմամբ յուրաքանչյուրի հարգանքի իրավունքի էությունից, որի վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից երեխայի և ծնողների՝ միմյանց հետ շփվելու իրավունքն ընտանեկան կյանքի հիմնարար տարրերից մեկն է (*յրեն, Eriksson v. Sweden գործով Եվրոպական դատարանի 22.06.1989 թվականի վճիռը, 58-րդ կետ*): Ավելին, ըստ Եվրոպական դատարանի՝ բնականոն ընտանեկան հարաբերությունները չեն դադարում ծնողներից մեկի առանձնապես կամ նրանց ամուսնալուծվելու դեպքում, անգամ եթե դրա արդյունքում երեխան դադարում է բնակվել ծնողներից մեկի հետ (*յրեն, Mustafa and Armağan Akin v. Turkey գործով Եվրոպական դատարանի 06.04.2010 թվականի վճիռը, 19-րդ կետ*):

Բացի այդ, Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պաշտպանության ներքո է գտնվում նաև ծնողի՝ իր երեխայի հետ վերամիավորվելու իրավունքը, և անդամ պետությունները պոզիտիվ պարտականություն են կրում օժանդակելու այդ վերամիավորմանը: Ընդ որում, պետության վերոհիշյալ պոզիտիվ պարտականությունը տարածվում է նաև երեխայի հետ շփվելու և բնակության վայրի վերաբերյալ ծնողների և (կամ) երեխայի ընտանիքի այլ անդամների միջև ծագած վեճերի վրա (*յրեն, Gluhaković v. Croatia գործով Եվրոպական դատարանի 12.04.2011 թվականի վճիռը, 56-րդ կետ*):

05.10.2010 թվականի թիվ ՄԴՌ-919 որոշմամբ անդրադառնալով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ընտանեկան իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և հանդիսանում է ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշման՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավադրույթում «ընդ որում» բառակապակցությունից հետո ամրագրված պայմանները, այն է՝ «երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունն)» այն նվազագույն պայմաններն են, որոնք ճշգրտում և բացահայտում են վիճարկվող դրույթներում «երեխաների շահերից» հասկացության բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը: Ընդ որում, վերը նշված պայմանները սպառիչ չեն, և երեխայի շահը գնահատելիս օրենսդիրը դատարանների հայեցողությանն է վերապահում նաև այլ պայմաններ հաշվի առնելը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաև այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան: Հետևաբար ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով

տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 05.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-919 որոշմամբ արտահայտած դիրքորոշումները, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և ՀՀ ընտանեկան օրենսդրությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «երեխայի շահ» կամ «երեխայի լավագույն շահեր» հասկացություններն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվեն ու կիրառվեն հետևյալ երեք իմաստներով.

1) որպես երեխայի իրավունք. երեխան ունի իր լավագույն շահերի բացահայտման և դրանց առաջնային նշանակության տրամադրման իրավունք այն դեպքում, երբ իրավասու մարմնի կողմից կայացվող որոշումն առնչվում է երեխայի և այլ անձանց իրավունքներին ու շահերին, և առկա է դրանց հավասարակշռման անհրաժեշտություն,

2) որպես իրավական-մեկնաբանողական սկզբունք. երեխայի իրավական վիճակին առնչվող տարբեր մեկնաբանությունների և ընկալումների տեղիք տվող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի՝ ելնելով երեխայի լավագույն շահերի առավել ապահովման նկատառումից,

3) որպես ընթացակարգային կարգավորման կանոն. երեխային առնչվող որոշումների ընդունման ընթացքում պետք բացահայտվի նաև երեխայի իրավունքների և շահերի վրա այդ որոշման հնարավոր ազդեցությունը (*տրեն, Անի Սարգսյանն ընդդեմ Արմեն Փերոյանի թիվ ԵՄԵԴ/4073/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով օրենսդրորեն սահմանված հետևյալ պայմանները.

- 1) երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ,
- 2) երեխայի տարիքը,
- 3) ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները,
- 4) ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները,
- 5) երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երեխայի բնակության վայրը որոշելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործեր քննելիս դատարանը կարող է բացահայտել երեխայի լավագույն շահերը՝ հիմք ընդունելով ոչ միայն երեխայի լավագույն շահերը որոշելու օրենսդրորեն կանխորոշված վերոգրյալ չափանիշները, այլ նաև տվյալ գործով դատարան ներկայացված և դատարանին հայտնի այլ պայմաններ: Ընդ որում, երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի բացահայտման հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում առկա յուրաքանչյուր ապացույցի անմիջական գնահատման արդյունքում: Այլ կերպ ասած՝ երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի դիրքորոշումը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետա-

գտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը (*լրեն, Մննս Աստարյանն ընդդեմ Դավիթ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0124/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վերահաստատել վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ միաժամանակ անդրադառնալով երեխայի՝ դատարանում լաված լինելու իրավունքի իրացման առանձնահատկություններին վերջինիս բնակության վայրը որոշելու իրավակարգավորման համատեքստում:

Եվրոպական դատարանը բազմիցս վերահաստատել է այն դիրքորոշումը, որ երեխան ունի լաված լինելու իրավունք իրեն վերաբերող հարցերի շուրջ: Մասնավորապես, երբ երեխաները բավականաչափ հասուն են և ունակ են ձևավորելու իրենց սեփական կարծիքը, դատարանները պետք է գնահատեն նրանց տեսակետները և զգացմունքները, ինչպես նաև անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը (*լրեն 'u, N.TS. and Others v. Georgia գործով Եվրոպական դատարանի 02.02.2016 թվականի վճիռը, 72-րդ կետ*): Իրավիճակն այլ է, երբ երեխաները դեռ շատ մանկահասակ են և անկարող են արտահայտել իրենց տեսակետը: Մասնավորապես *Sahin v. Germany գործով Եվրոպական դատարանի 08.07.2003 թվականի վճռով (§§ 72-75)* դատարանը իրավաչափ է համարել հնգամյա երեխային դատարանում չլսելը՝ հաշվի առնելով վերջինիս տարիքը և հասունությունը: Եվրոպական դատարանը եկել է նման եզրահանգման՝ հաշվի առնելով այն փաստը, որ համապատասխան մասնագետը հանդիպել է երեխային և ծնողներին և ուսումնասիրել է ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները (*լրեն 'u, նաև Petrov and X v. Russia գործով Եվրոպական դատարանի 23.10.2018 թվականի վճիռը, 108-րդ կետ*):

Եվրոպական դատարանը, անդրադառնալով դատարանում երեխայի լաված լինելու խնդրին, գտել է, որ որպես ընդհանուր կանոն՝ ներպետական դատարաններն իրենք են գնահատում ներկայացված ապացույցները, ներառյալ համապատասխան փաստերը պարզելու միջոցները: Եվրոպական դատարանը գտել է, որ ներպետական դատարանում երեխային լսելու պարտադիր պահանջ սահմանելը չափազանց ծայրահեղ մոտեցում է և սույն հարցի լուծումը կախված է յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքներից՝ հաշվի առնելով երեխայի տարիքը և հասունությունը (*լրեն 'u, Sahin v. Germany գործով Եվրոպական դատարանի 08.07.2003 թվականի վճիռը, 73-րդ*):

Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը ևս արձանագրում է, որ երեխայի լավագույն շահը պարզելու համար հարկ է հաշվի առնել նաև նրա լաված լինելու իրավունքի իրացման հնարավորությունը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն ապահովելու իր հայացքները ձևակերպելուն ունակ երեխայի համար դրանք ազատորեն արտահայտելու իրավունքի իրացումը: Հարկ է փաստել, որ թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ միջազգային պայմանագրերով և թե՛ օրենսդրությամբ երեխային իրավունք է վերապահվել իր իրավունքներն ու շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս սեփական կարծիքն արտահայտել դատական և այլ մարմիններում: Այսինքն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտել իր կարծիքը, որը երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը սահմանել է որպես պարտադիր պահանջ, իսկ մինչև տասը տարեկան երեխայի

կարծիքը հաշվի առնելը վերապահել է դատարանի հայեցողությանը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դատարանն այս հայեցողական լիազորությունն իրականացնելիս պետք է հաշվի առնի երեխայի տարիքը և հասունությունը, ինչպես նաև գործի հանգամանքները, մասնավորապես՝ արդյոք երեխայի նշված իրավունքն արդեն իսկ իրացվել է համապատասխան իրավասություն ունեցող այլ մարմինների կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երեխայի բնակության վայրը որոշելու իրավակարգավորման համատեքստում մինչև տասը տարեկան երեխայի կարծիքը պարտադիր չէ դատարանի համար, և վերոնշյալ խնդիրը լուծելիս դատարանը պետք է ելնի կոնկրետ գործի հանգամանքներից, երեխայի տարիքից և հասունության մակարդակից և առաջնորդվի երեխայի լավագույն շահերով՝ ապահովելով «երեխայի լավագույն շահերի» բովանդակությունը կազմող անհրաժեշտ պայմանների առկայությունը:

Սույն գործով Դատարանը, Նարինե Մելքոնյանի հայցը բավարարելով, երեխաների բնակության վայրը մոր բնակության վայրը սահմանելու պահանջի մասով պատճառաբանել է, որ երեխաների բնակության վայրը որոշելիս հատուկ կարևորում և առանցքային է համարում Դավիթ Ալավերդյանի տարիքը, վերջինս ծնվել է 23.12.2016 թվականին, գործի դատաքննության ընթացքում մոտ մեկ ու կես տարեկան է, ծնողների առանձին ապրելու պահից ի վեր բնակվել է մոր հետ, մանկահասակ տարիքով պայմանավորված կենսական կարևոր ֆունկցիաների իրականացման համար (կերակրում, սանիտարափոխանակի խնամք և այլն) վերջինիս առավել անհրաժեշտ է մոր կողմից իրականացվող խնամքը: Միաժամանակ Դատարանը խիստ կարևորել է անչափահասներ Դավիթ և Ռոբերտ Ալավերդյաններին միմյանցից չհեռացնելու, համատեղ բնակվելու և դաստիարակվելու անհրաժեշտությունը, որպիսի հանգամանքը հատկապես կարևորվել է՝ պայմանավորված նրանով, որ երեխաների ծնողները հեռացել են միմյանցից, ինչն ինքնին սթրեսաձին հանգամանք է նրանց համար և միմյանցից առանձնացնելը կարող է հանգեցնել առավել ծանր և խորը հոգեբանական խնդիրների և ճշումների:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ալբերտ Ալավերդյանի վերաքննիչ բողոքը՝ երեխաների բնակության վայրը մոր բնակության վայրը սահմանելու պահանջի մասով, Դատարանի վճիռը բեկանել է և գործն ուղարկել է նույն դատարան նոր քննության՝ պատճառաբանելով, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանվել է, որ երեխան, իրեն վերաբերող հարցերում, իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը՝ ըստ վերջինիս տարիքի և հասունության մակարդակի, այսինքն՝ նշված հոդվածով հնարավորություն է տրվել հաշվի առնել նաև տասը տարին չլրացած երեխայի կարծիքը, ուստի նման պայմաններում բողոքաբերի միջնորդությունը՝ երեխայի կարծիքը լսելու վերաբերյալ, պետք է բավարարել և գործն ուղարկել նոր քննության, որի ընթացքում էլ, երեխայի համաձայնությամբ, մանկական հոգեբանի, մանկավարժի կամ սոցիալական աշխատողի ներգրավմամբ պետք է լսել 27.02.2010 թվականին ծնված Ռոբերտ Ալավերդյանի կարծիքը, որից հետո նոր անդրադառնալ նրա բնակության վայրը սահմանելու հարցին:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդու-

նելով ոչ միայն երեխայի լավագույն շահերը որոշելու օրենսդրորեն կանխորոշված չափանիշները, այլ նաև տվյալ գործով դատարան ներկայացված և դատարանին հայտնի մյուս բոլոր պայմանները: Երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի դիրքորոշումը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը: Հետևաբար երեխայի բնակության վայրը որոշելու պահանջի հիման վրա հարուցված սույն քաղաքացիական գործի շրջանակներում Վերաքննիչ դատարանը պարտավոր էր գործում առկա բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատել գործում առկա յուրաքանչյուր ապացույց՝ պարզելու համար երեխայի լավագույն շահերը որոշելու բոլոր չափանիշներն ու պայմանները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ռոբերտ Ալավերդյանը ծնվել է 27.02.2010 թվականին, Դավիթ Ալավերդյանը՝ 20.12.2016 թվականին, հայրն Ալբերտ Ալավերդյանն է, մայրը՝ Նարինե Մելքոնյանը: Նարինե Մելքոնյանը և Ալբերտ Ալավերդյանը համատեղ բնակվել են մինչև 2017 թվականի դեկտեմբեր ամիսը, որից հետո Նարինե Մելքոնյանը երեխաների հետ հեռացել է, վերջիններիս հետ միասին բնակվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամասի Մ. Խորենացի փողոցի 6-րդ շենք թիվ 59ա հասցեում: Անչափահաս երեխաներից Ռոբերտ Ալավերդյանը սկսած 2018 թվականի հունվար ամսից հոր հետ միասին բնակվում է նրա բնակության վայրում, իսկ Դավիթ Ալավերդյանը՝ մոր հետ միասին մոր բնակության վայրում: Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովի կողմից կատարված հետազոտությունների համաձայն՝ «Նարինե Մելքոնյանը ծնողների հետ միասին բնակվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամասի Մ. Խորենացի 6-րդ շենքի 59ա հասցեում գտնվող չորսենյականոց բնակարանում, որը վերանորոգած է, կահավորված, գազաֆիկացված, կոմունալ բոլոր հարմարություններով, երեխաներն ունեն առանձին սենյակ՝ մեծ, լուսավոր և կահավորված դասապատրաստումների համար հարմարավետ կահույքով, դպրոցական անհրաժեշտ պարագաներով: Ունեն նաև առանձնացված սենյակ: Փոքր որդին չափազանց կապված է մոր հետ: Ալբերտ Ալավերդյանը որդու և մոր հետ բնակվում է Երևան քաղաքի Հր. Ներսիսյան փողոցի 6-րդ շենքի թիվ 4 հասցեում, որը երեքենյականոց բնակարան է, մաքուր, վերանորոգված, գազաֆիկացված, առկա են կոմունալ բոլոր հարմարությունները: Երեխան առանձին սենյակ ունի՝ հարմարավետ, լուսավոր և ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները դասապատրաստման և հանգստի համար: Սովորում է Լ. Տոլստոյի անվան թիվ 128 հիմնական դպրոցի 2-րդ դասարանում: Տունայցի պահին տանն էր, շատ կապված է հոր հետ: Առանձնագրույցի ժամանակ նշել է, որ շատ սիրում է մայրիկին և եղբորը և ժամանակ առ ժամանակ հյուրընկալում է նրանց ու նաև կարոտում»:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, մասնավորապես՝ անտեսել է ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի դեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 07.05.2018 թվականի թիվ 05/06 եզրակացությունը: Մինչդեռ նշված եզրակացությամբ կարևորվել է մի հարկի տակ երկու եղբայրների համատեղ ապրելու հանգամանքը: Հանձնաժողովը գտել է, որ երեխանե-

րի առանձին ապրելու դեպքում կանտեսվեն երկու եղբայրների՝ միմյանց հետ անընդհատ և անարգել շփվելու, համատեղ ապրելու և դաստիարակվելու լավագույն շահերը: Բացի այդ, եզրակացությամբ արձանագրված է նաև այն փաստը, որ Ռոբերտ Ալավերդյանն առանձնագրույցի ժամանակ նշել է, որ «շատ է սիրում մայրիկին և եղբորը և ժամանակ առ ժամանակ հյուրընկալում է նրանց և կարոտում»: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ պետք է լսել 27.02.2010 թվականին ծնված Ռոբերտ Ալավերդյանի կարծիքը՝ նկատի ունենալով, որ երեխային դատարանում լսելու անհրաժեշտությունն այդպես էլ չի հիմնավորվել այն պարագայում, երբ խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովն արդեն իսկ ապահովել է տասը տարին չըրացած երեխայի՝ Ռոբերտ Ալավերդյանի լաված լինելու իրավունքը, այլ կերպ ասած՝ վերջինս իրականացրել է այն բոլոր անհրաժեշտ և բավարար գործողությունները, որոնք կիրականացվեին երեխայի՝ դատարանում լաված լինելու պարագայում:

Վճռաբեկ դատարանը, ելնելով երեխաների լավագույն շահերից և հաշվի առնելով երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի ու եղբոր հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը, հետազոտելով գործով ձեռք բերված բոլոր ապացույցները, գտնում է, որ ներկայումս անչափահասներ Դավիթ և Ռոբերտ Ալավերդյանների բնակության վայրը մոր՝ Նարինե Մելքոնյանի հետ սահմանելը բխում է երեխաների լավագույն շահերից: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում հայցը պետք է բավարարվեր, որպիսի իրավաչափ եզրահանգման և եկել է Դատարանը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը Դատարանի վճռին օրինական ուժ է տալիս երեխաների բնակության վայրը մոր բնակության վայրը սահմանելու պահանջը բավարարելու մասով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով, համապատասխանաբար նաև վճռաբեկու-

թյան կարգով բողոքարկվել է միայն այդ մասով:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Ալբերտ Ալավերդյանից հոգուտ Նարինե Մելքոնյանի ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

4. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2018 թվականի որոշումը և երեխաների բնակության վայրը մոր բնակության վայրով սահմանելու պահանջը բավարարելու մասով օրինական ուժ տալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 04.07.2018 թվականի վճիռն:

5. Ալբերտ Ալավերդյանից հոգուտ Նարինե Մելքոնյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԳ/4054/02/16**
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/4054/02/16
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ա. Սմբատյան
Հ. Ենոքյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի մարտի 28-ին

գրավոր ընթացակարգով քննելով Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնի ներկայացուցիչ Կարեն Տոնոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.03.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնի ընդդեմ «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին թիվ 25-Ա հրամանը, Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ 26-Ա հրամանն անվավեր ճանաչելու և վերջինիս նախկին աշխատանքում վերականգնելու, ինչպես նաև հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար սկսած 22.08.2016 թվականից օրական 132.085,31 ՀՀ դրամ աշխատավարձի գումարի բռնագանձման պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնին պահանջել է անվավեր ճանաչել Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին թիվ 25-Ա հրամանը, Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնի հետ

կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ 26-Ա հրամանը և Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնին վերականգնել նախկին աշխատանքում, ինչպես նաև Հիմնադրամից հոգուտ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվո Ժոլիվե Բյուռնիի սկսած 22.08.2016 թվականից բռնագանձել միջին աշխատավարձ՝ օրական 132.085,31 ՀՀ դրամի չափով՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքունյան) (այսուհետ՝ Դատարան) 19.09.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.03.2018 թվականի որոշմամբ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.09.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 122-րդ, 220-րդ, 222-րդ, 223-րդ, 228-րդ, 265-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թեև կարգապահական տույժի բողոքարկման համար սահմանված է հայցային վաղեմության հատուկ՝ մեկամսյա ժամկետ, սակայն այն դեպքերում, երբ այդ կարգապահական տույժն առաջացնում է աշխատանքային պայմանների փոփոխում, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի դադարեցում կամ լուծում, ապա այդ դեպքերում բողոքարկման ժամկետը երկու ամիս է: Ընդ որում, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հիմնադրամի կողմից չի ներկայացվել հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն, սակայն Դատարանն իր նախաձեռնությամբ գտել է, որ հայցային վաղեմության ժամկետը լրացել է:

Բացի այդ, հայցային վաղեմության ժամկետի սկզբի մատով որպես օրենքով սահմանված կարգով ազատման հրամանի մասին ծանուցված լինելու հիմք մատնանշելով Հայցվորի կողմից իր ներկայացուցչին լիազորագիր տալու օրը՝ 29.08.2016 թվականը, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորը պատշաճ կարգով իրագրված չէր իրավական ակտի մասին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ աշխատողը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության միայն աշխատանքային պարտականությունները կատարելու հետ կապված գործողություններ իրականացնելիս թույլ տրված խախտումների համար: Ավելին, բողոքաբերի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց չէր կարող կիրառվել նաև այն պատճառով, որ լրացել էին դրա կիրառման ժամկետները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.03.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 17.08.2016 թվականի թիվ 25-Ա հրամանի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ **(հատոր 1-ին, գ.թ. 11-12):**

2) Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծում:

Նշված հրամանի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնն ԱՄՆ-ում դատապարտվել է դավադրություն և էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ խարդախություն կատարելու համար (հիմք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների 8-րդ շրջանի վերաքննիչ դատարանի կողմից կայացված թիվ 99-2886 դատական ակտ) **(հատոր 1-ին, գ.թ. 13-19):**

3) Սույն քաղաքացիական գործում բացակայում է ապացույց, որի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնն օրենքով սահմանված կարգով իրազեկվել է Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի մասին:

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ և 265-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի, 228-րդ և 265-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, վերահասարակելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- աշխատողին կարգապահական տույժի ենթարկելու մասին գործարտի կայացրած անհատական իրավական ակտը որ պահից է ուժի մեջ մտնում և ինչ ժամկետում կարող է բողոքարկվել դատարան, եթե որպես կարգապահական տույժ կիրառվել է գործարտի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը,

- արդյո՞ք վերոգրյալ ժամկետն իր բնույթով հայցային վաղեմության ժամկետ է:

1) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուի ներքին և անհատական իրավական ակտերն ընդունվում են հրամանների կամ կարգադրությունների, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այլ իրավական ակտերի տեսքով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու նպատակով գործատուն ընդունում է անհատական իրավական ակտեր: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործատուի ընդունած ներքին և անհատական

իրավական ակտերն ուժի մեջ են մտնում այդ ակտի մասին համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու պահից, եթե այդ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ: Աշխատանքի ընդունման, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

Գործատուի կայացրած անհատական իրավական ակտն ուժի մեջ մտնելու և ուժի մեջ չմտած ակտի վիճարկման հնարավորության հարցերին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Խորեն Նասիբյանն ընդդեմ «Ինտերսայկո» ՍՊԸ-ի* գործով կայացրած որոշմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ իրավական ակտերի՝ մասնավորապես անհատական իրավական ակտերի կատարման կամ կիրառման հնարավորությունն օրենսդիրը պայմանավորել է դրանց ուժի մեջ մտնելու հանգամանքով, այսինքն՝ եթե այդ իրավական ակտերն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով ուժի մեջ չեն մտել, ապա դրանք ի սկզբանե առոչինչ են, իրավական առումով գոյություն չունեն և կատարման կամ կիրառման ենթակա չեն: Ավելին, առոչինչ իրավական ակտերի կատարման կամ կիրառման համար օրենսդիրը սահմանել է պատասխանատվություն: Դա նշանակում է, որ ուժի մեջ չմտած իրավական ակտերը որևէ իրավական հետևանք չեն կարող առաջացնել իրավական ակտերի հասցեատերերի, ինչպես նաև այլ իրավակիրառողների համար, բացի դրանց կատարման կամ կիրառման համար պատասխանատվությունից: Ընդ որում, նման կարգավորումը կիրառելի է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի տեսանկյունից գործատու հանդիսացող իրավաբանական անձի ընդունած ակտերի նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ գործատուի՝ օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող անհատական իրավական ակտի վիճարկման համար նախ անհրաժեշտ է, որպեսզի այդ իրավական ակտն իրավաբանական ուժի մեջ մտած լինի: Իրավական ակտի հասցեատիրոջ պահանջով ակտն անվավեր ճանաչելը վերջինիս համար իրավական նշանակություն ունի այն դեպքում, երբ վիճարկվող ակտի կատարմամբ կամ կիրառմամբ խախտվել են կամ կարող են խախտվել նրա իրավունքներն ու օրինական շահերը, իսկ դա կարող է առկա լինել միայն իրավաբանական ուժի մեջ մտած ակտի պարագայում՝ նկատի ունենալով, որ եթե անհատական իրավական ակտի մասին հասցեատերը սահմանված կարգով չի իրազեկվել, ապա անկախ այն հանգամանքից՝ այդ իրավական ակտն իր բովանդակությամբ համապատասխանում է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին, թե՛ ոչ, այդ իրավաբանական ակտն ուժի մեջ չմտնելու հետևանքով ենթակա չէ կատարման կամ կիրառման: Նման դեպքում դատարաններն աշխատողների իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացնեն ոչ թե ուժի մեջ չմտած անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելով, այլ պարզապես այդ իրավական ակտը չկիրառելով, ինչը կառաջացնի աշխատողի ակնկալված բարենպաստ իրավական հետևանքը: ՀՀ վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի սկզբանե գոյություն չունեցող, իրավաբանական ուժ չստացած իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջն առարկայագուրկ է, այսինքն՝ չի կարող վիճարկվել իրավական առումով գոյություն չունեցող ակտը: Հետևաբար իրավաբանական ուժ չունեցող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջը բավարարվել չի կարող (*Կրեն, Թիվ ԵԿԴ/3295/02/15 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Ջարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ աշխատանքի ընդունման և աշխատանքային

պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահը պայմանավորված է տվյալ ակտի մեկ օրինակն աշխատողին հանձնելու պահով: Ընդ որում, պատահական չէ, որ օրենսդրի կողմից կարևորվել է աշխատանքի ընդունման և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի պատշաճ ծանուցման հարցի դեպքում այդ իրավական ակտի **մեկ օրինակն** աշխատողին հանձնելու հանգամանքը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դա պայմանավորված է նշված իրավական ակտերի՝ աշխատողների հիմնական աշխատանքային իրավունքների ծագման կամ դադարման վրա ուղղակիորեն ազդելու հատկանիշով:

Այսպիսով՝ եթե աշխատողն ընդունվում է աշխատանքի կամ վերջինիս հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծվում է, ապա պատշաճ ծանուցում պետք է համարել բացառապես ակտի օրինակն աշխատողին հանձնելու պահը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս.

2) ուսումնադաստիարակչական գործառնություններ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է

աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում օրենսդրի կողմից գործատուի համար սահմանվել է աշխատողի նկատմամբ ներգործության կիրառման երկու տարբերակ՝

1) գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծում՝ առանց աշխատողին նախապես ծանուցելու պարտականության, կամ

2) կարգապահական պատասխանատվության կիրառում՝ մասնավորապես որպես կարգապահական տույժ կիրառելով աշխատանքային պայմանագրի լուծումը, որի դեպքում գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական տույժի կիրառման ընթացակարգը:

Նման այլընտրանք նախատեսելու նպատակը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ աշխատողի և գործատուի շահերի հավասարակշռումն է՝ նկատի ունենալով, որ հնարավոր են իրավիճակներ, երբ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը պահպանելը և անհապաղ աշխատանքային պայմանագիրը չլուծելը կարող է լրացուցիչ վնասներ հասցնել գործատուին՝ անհարկի անհամաչափություն առաջացնելով աշխատողի և գործատուի շահերի միջև (օրինակ՝ եթե աշխատողը հրապարակել է գաղտնիք, կամ դրամական արժեքներ սպասարկելիս նյութական վնաս է հասցրել գործատուին):

Անդրադառնալով կիրառված կարգապահական տույժի բողոքարկման ժամկետներին՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ թեև կարգապահական տույժերի համար բողոքարկման ժամկետը մեկ ամիսն է, սակայն այս ժամկետը կիրառելի է միայն ավելի մեղմ տույժերի՝ նկատողության և խիստ նկատողության կիրառման դեպքերում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ կիրառվել է կարգապահական տույժ աշխատանքային պայմանագրի լուծման տեսքով, ապա աշխատողն իրավունք ունի համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո **երկու ամսվա ընթացքում** բողոքարկել այն՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բողոքարկման ժամկետը: Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է հետևյալ հանգամանքով.

Այն դեպքում, երբ աշխատողի նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ՝ աշխատանքային պայմանագրի լուծման տեսքով, աշխատանքային հարաբերությունները դադարում են, հետևաբար անձի՝ որպես աշխատողի կարգավիճակը դադարում է: Նման պարագայում, փաստորեն, կարգապահական տույժի նշանակման հետ կապված հարաբե-

րությունը անմիջականորեն հանգեցնում է այլ հարաբերության՝ կապված աշխատանքային պայմանագրի լուծմամբ առաջացած իրավունքների և պարտականությունների հետ: Ուստիև տրամաբանական է տարբերակված մոտեցում կիրառել կարգապահական տույժի (նկատողություն, խիստ նկատողություն) բողոքարկման ժամկետի (*մեկ ամիս*) և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ իրավական ակտի (այդ թվում՝ որպես կարգապահական տույժ կիրառելու դեպքում) բողոքարկման ժամկետի (*երկու ամիս*) միջև:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև աշխատողների հիմնական իրավունքների առավելագույնս պահպանման անհրաժեշտությամբ: Ինչպես արդեն նշվել է, օրենսդիրն առանձնահատուկ կարևորել է աշխատանքի ընդունման և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին իրավական ակտերի նշանակությունը՝ մասնավորապես դրանց ուժի մեջ մտնելու համար պարտադիր համարելով այդ ակտի մեկ օրինակն աշխատողին հանձնելը: Հետևաբար նույն տրամաբանությամբ անհրաժեշտ է կարևորել աշխատողների իրավունքները նաև այն դեպքում, երբ վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է՝ թեկուզև որպես կարգապահական տույժ: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ օրենսդիրը, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ իրավական ակտը բողոքարկելու ժամկետ սահմանելով երկու ամիսը, նպատակ ունի առավելագույնս ապահովել աշխատողների խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը: Ուստի նույն սկզբունքով պետք է առաջնորդվել նաև այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագրի լուծումը կիրառվել է որպես կարգապահական տույժ՝ հաշվի առնելով, որ աշխատողը պետք է հավասար հնարավորություն ունենա ապահովելու իր խախտված իրավունքների դատական պաշտպանությունը՝ անկախ նրանից, թե ինչ հիմքով է գործատուի կողմից լուծվել աշխատանքային պայմանագիրը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ նկատողության և խիստ նկատողության ձևով կիրառված կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իսկ այն դեպքերում, երբ կարգապահական տույժը կիրառվել է աշխատանքային պայմանագրի լուծման ձևով՝ համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմությունը իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Պահանջների որոշ տեսակների համար օրենքներով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար՝ հատուկ ժամկետներ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քաղաքացիական

դատավարության օրենսգրքերի հայցային վաղեմության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել աշխատանքային հարաբերությունների նկատմամբ՝ աշխատանքային օրենսդրությամբ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթների բացակայության դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված ժամկետն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար այդ ժամկետն իր բնույթով համապատասխանում է հայցային վաղեմության ժամկետին: Հաշվի առնելով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը չի պարունակում հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ որևէ դրույթ, ուստի աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները (*տես, Ադիկ Արդարյանն ընդդեմ «Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մանկապարտնեկան մասնագիտացված մարզադպրոց» ՀՈԱԿ-ի թիվ ԼԳ/1071/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հետևությունը կիրառելի է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված՝ կարգապահական տույժի բողոքարկման ժամկետի նկատմամբ, քանի որ այս դեպքում նույնպես ՀՀ աշխատանքային օրենսգրքը հատուկ կարգավորում չի նախատեսում: Այսինքն՝ նշված ժամկետը նույնպես հայցային վաղեմության հատուկ ժամկետ է, որի նկատմամբ նույնպես կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի՝ 09.02.2018 թվականի փոփոխություններից հետո գործող խմբագրության համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը, եթե օրենքով դիմում տալու համար այլ ժամկետ նախատեսված չէ: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:

Նախկինում կայացրած որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով

մինչև 09.02.2018 թվականի խմբագրությունը գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասը, նշել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է կարգ, որի առկայության դեպքում դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի հայցային վաղեմության հարցը: Այն է՝ պետք է առկա լինի հայցային վաղեմություն կիրառելու մասին գործին մասնակցող անձի կողմից դիմում, և այդ դիմումը պետք է ներկայացվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Այսինքն՝ օրենսդրի կողմից հստակ սահմանվել է ժամկետ, այն է՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը ներկայացնել մինչև վճռի կայացումը (*տե՛ս, Ռադիկ Ենգիբարյանի սնանկության գործով կառավարիչն ընդդեմ «Վանակն Ապակի» ՍՊԸ-ի և մյուսների թիվ ՇԴ/0376/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Մասնավորեցնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներն աշխատանքային հարաբերություններում գործող հայցային վաղեմության ժամկետների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ անհատական իրավական ակտը բողոքարկելու ժամկետի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու համար պատասխանողը մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը պետք է ներկայացնի հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում, այսինքն՝ դատարանն իրավասու չէ հայցային վաղեմության ժամկետ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստական հանգամանքների նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուռնի նկատմամբ 17.08.2016 թվականի հրամանով հարուցվել է կարգապահական վարույթ, որի արդյունքում 22.08.2016 թվականի հրամանի հիման վրա կիրառվել է կարգապահական տույժ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով՝ աշխատանքային պայմանագրի լուծում: Սույն քաղաքացիական գործում բացակայում է ապացույց, որի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուռնն օրենքով սահմանված կարգով իրազեկվել է Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի մասին: Սույն գործով հայցադիմում է ներկայացվել 03.10.2016 թվականին:

Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանն օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում չի բողոքարկվել, ուստի Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուռնը բաց է թողել դատարան դիմելու՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը՝ զրկվելով հրամանը դատարանում վիճարկելու հնարավորությունից: Միաժամանակ Դատարանը եզրահանգել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուռնի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճիռը, հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումը և հավելել է նաև, որ թեև գործում առկա չէ հայցվորի կողմից հրամանն անձամբ ստանալու վերաբերյալ որևէ ապացույց, սակայն 29.08.2016 թվականին փաստաբան Կարեն Տոնոյանին տրված լիազորագրից ակնհայտ է դառնում, որ հայցվորն առնվազն այդ օրվա դրությամբ իրազեկված է եղել Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի մասին, սակայն սահմանված մեկամսյա

Ժամկետում հրամանը չի բողոքարկել: Անդրադառնալով հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ պատասխանողի կողմից դիմում չներկայացնելու հարցին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված ժամկետը հայցային վաղեմության ժամկետ չի կարող համարվել, քանի որ այն ըստ էության սահմանում է հայցվորի դատարան դիմելու իրավունքի իրականացման ժամկետը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը վերահաստատել է Դատարանի եզրահանգումը և նույնպես արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նկատի ունենալով, որ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուտնի նկատմամբ կարգապահական տույժի կիրառումը հանգեցրել է աշխատանքային պայմանագրի լուծման, վերջինս գործատուի կայացրած անհատական իրավական ակտը կարող էր բողոքարկել պատշաճ կարգով դրա մասին իրազեկվելու պահից հաշվված երկամսյա ժամկետում, որը պետք է դիտարկվի որպես հայցային վաղեմության ժամկետ: Մինչդեռ Դատարանը, գործում 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի մասին գործատուի կողմից աշխատողին իրազեկելու վերաբերյալ ապացույցի բացակայության պայմաններում արձանագրելով, որ նշված հրամանն օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում չի բողոքարկվել, իսկ Վերաքննիչ դատարանն էլ հիմնավոր համարելով Դատարանի նշված եզրահանգումը և հավելելով, որ նշված ժամկետը հայցային վաղեմության ժամկետ չի կարող համարվել, նյութական իրավունքի նորմի սխալ մեկնաբանման արդյունքում թույլ են տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը՝ ազդելով գործի ելքի վրա, քանի որ առանց հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության առկայության մերժելով հայցապահանջն այն հիմքով, որ լրացել է հրամանի վիճարկման ժամկետը՝ ըստ էության չանդրադառնալով դրա իրավաչափության գնահատմանը, ստորադաս դատարանները սահմանափակել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ նկատի ունենալով, որ նշված իրավունքը ենթադրում է ոչ միայն հայց հարուցելու, այլև արդեն իսկ հարուցված հայցով գործի ըստ էության քննության և լուծման իրավունքը:

Միաժամանակ նկատի ունենալով, որ Դատարանի կողմից հայցը մերժվել է 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի բողոքարկման մեկամսյա ժամկետը լրացած լինելու հիմքով, և բողոքարկվող իրավական ակտի իրավաչափությունն ըստ էության չի գնահատվել, իսկ Վերաքննիչ դատարանն էլ անփոփոխ է թողել Դատարանի վճիռը, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկների հիմնավորվածությանը և գտնում է, որ սույն գործով առկա է նոր քննության անհրաժեշտություն՝ պարզելու համար ինչպես գործատուի իրավական ակտն ուժի մեջ մտած լինելու հանգամանքը, այնպես էլ այդ հանգամանքը հաստատվելու դեպքում՝ գործատուի իրավական ակտի իրավաչափությունը և հիմնավորվածությունն ըստ էության ստուգելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործը նոր քննության է ու-

ղարկվում աշխատանքային պայմանագիրը լուծելու ձևով կարգապահական տույժ կիրառելու մասին 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանն անվավեր ճանաչելու, Կաթին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուռնին նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումար բռնագանձելու պահանջների մատով՝ հաշվի առնելով, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով, համապատասխանաբար նաև վճռաբեկության կարգով բողոքարկվել է միայն այդ մատով:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.03.2018 թվականի որոշումը և գործը՝ Կաթին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուռնի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանն անվավեր ճանաչելու և վերջինիս նախկին աշխատանքում վերականգնելու, ինչպես նաև հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար սկսած 22.08.2016 թվականից օրական 132.085,31 ՀՀ դրամ աշխատավարձի գումարի բռնագանձման պահանջների մատով, ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵԿԴ/4054/02/16 քաղաքացիական գործով 28.03.2019 թվականին կայացված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2019 թվականի մարտի 28-ին գրավոր ընթացակարգով քննելով Կաթրին Աննի Ժաննին ժողիվե ժողիվե Բյուռնի սերկայացուցիչ Կարեն Տոնոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.03.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կաթրին Աննի Ժաննին ժողիվե ժողիվե Բյուռնի ընդդեմ «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ կարգապահական վարույթ հարուցելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամաններն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, ինչպես նաև հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար գումար բռնագանձելու պահանջների մասին, նույն պալատի ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է Վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.03.2018 թվականի որոշումը և գործը՝ Կաթրին Աննի Ժաննին ժողիվե ժողիվե Բյուռնի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանն անվավեր ճանաչելու և վերջինիս նախկին աշխատանքում վերականգնելու, ինչպես նաև հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար սկսած 22.08.2016 թվականից օրական 132.085,31 ՀՀ դրամ աշխատավարձի գումարի բռնագանձման պահանջներին մատով, ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռ. Հակոբյանս և Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կաթրին Աննի Ժաննին ժողիվե ժողիվե Բյուռնին պահանջել է անվավեր ճանաչել Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին թիվ 25-Ա հրամանը, Կաթրին Աննի Ժաննին ժողիվե ժողիվե Բյուռնի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին թիվ 26-Ա հրամանը և Կաթրին Աննի Ժաննին ժողիվե ժողիվե Բյուռնին վերականգնել նախկին աշխատանքում, ինչպես նաև Հիմնադրամից հոգուտ Կաթրին Աննի Ժաննին ժողիվե ժողիվե Բյուռնիի սկսած 22.08.2016 թվականից բռնագանձել միջին աշխատավարձ՝ օրական 132.085,31 ՀՀ դրամի չափով՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 19.09.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.03.2018 թվականի որոշմամբ Կաթրին Աննի Ժաննին ժողիվե ժողիվե Բյուռնի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.09.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հերկյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

«Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 122-րդ, 220-րդ, 222-րդ, 223-րդ, 228-րդ, 265-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թեև կարգապահական տույժի բողոքարկման համար սահմանված է հայցային վաղեմության հատուկ՝ մեկամսյա ժամկետ, սակայն այն դեպքերում, երբ այդ կարգապահական տույժն առաջացնում է աշխատանքային պայմանների փոփոխում, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի դադարեցում կամ լուծում, ապա այդ դեպքերում բողոքարկման ժամկետը երկու ամիս է: Ընդ որում, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հիմնադրամի կողմից չի ներկայացվել հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն, սակայն Դատարանն իր նախաձեռնությամբ գտել է, որ հայցային վաղեմության ժամկետը լրացել է:

Բացի այդ, հայցային վաղեմության ժամկետի սկզբի մասով որպես օրենքով սահմանված կարգով ազատման հրամանի մասին ծանուցված լինելու հիմք մատնանշելով Հայցվորի կողմից իր ներկայացուցչին լիազորագիր տալու օրը՝ 29.08.2016 թվականը, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորը պատշաճ կարգով իրագրված չէր իրավական ակտի մասին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ աշխատողը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության միայն աշխատանքային պարտականությունները կատարելու հետ կապված գործողություններ իրականացնելիս թույլ տրված խախտումների համար: Ավելին, բողոքաբերի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց չէր կարող կիրառվել նաև այն պատճառով, որ լրացել էին դրա կիրառման ժամկետները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.03.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել»:

3. Որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռաբեկ դատարանը նշել է, որ՝

«1) Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 17.08.2016 թվականի թիվ 25-Ա հրամանի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ **(հատոր 1-ին, գ.թ. 11-12).**

2) Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծում.

Նշված հրամանի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնն ԱՄՆ-ում դատապարտվել է դավադրություն և էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ խարդախություն կատարելու համար (հիմք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների 8-րդ շրջա-

նի վերաքննիչ դատարանի կողմից կայացված թիվ 99-2886 դատական ակտ) (**հատոր 1-ին, գ.թ. 13-19**).

4) Սույն քաղաքացիական գործում բացակայում է ապացույց, որի համաձայն՝ Կաթրին Աննի ժաննին ժողովե ժողովե Բյուտեն օրենքով սահմանված կարգով իրազեկվել է Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի մասին»:

4. Որպես Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններ և եզրահանգումներ նշվել են, որ՝

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ և 265-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի, 228-րդ և 265-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, վերահասարակելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- *աշխատողին կարգապահական րոյժի ենթարկելու մասին գործարտուի կայացրած անհատական իրավական ակտը ո՞ր պահից է ուժի մեջ մտնում և ի՞նչ ժամկետում կարող է բողոքարկվել դատարան, եթե որպես կարգապահական րոյժ կիրառվել է գործարտուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը,*

- *արդյո՞ք վերոգրյալ ժամկետն իր բնույթով հայցային վաղեմության ժամկետ է:*

1) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուի ներքին և անհատական իրավական ակտերն ընդունվում են հրամանների կամ կարգադրությունների, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այլ իրավական ակտերի տեսքով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու նպատակով գործատուն ընդունում է անհատական իրավական ակտեր: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործատուի ընդունած ներքին և անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում այդ ակտի մասին համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու պահից, եթե այդ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ: Աշխատանքի ընդունման, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

Գործատուի կայացրած անհատական իրավական ակտն ուժի մեջ մտնելու և ուժի մեջ չմտած ակտի վիճարկման հնարավորության հարցերին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Խորեն Նասիրյանն ընդդեմ «Ինտերպլո» ՍՊԸ-ի* գործով կայացրած որոշմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ իրավական ակտերի՝ մասնավորապես անհատական իրավական ակտերի կատարման կամ կիրառման հնարավորությունն օրենսդիրը

պայմանավորել է դրանց ուժի մեջ մտնելու հանգամանքով, այսինքն՝ եթե այդ իրավական ակտերն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով ուժի մեջ չեն մտել, ապա դրանք ի սկզբանե առոչինչ են, իրավական առումով գոյություն չունեն և կատարման կամ կիրառման ենթակա չեն: Ավելին, առոչինչ իրավական ակտերի կատարման կամ կիրառման համար օրենսդիրը սահմանել է պատասխանատվություն: Դա նշանակում է, որ ուժի մեջ չմտած իրավական ակտերը որևէ իրավական հետևանք չեն կարող առաջացնել իրավական ակտերի հասցեատերերի, ինչպես նաև այլ իրավակիրառողների համար, բացի դրանց կատարման կամ կիրառման համար պատասխանատվությունից: Ընդ որում, նման կարգավորումը կիրառելի է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի տեսանկյունից գործատու հանդիսացող իրավաբանական անձի ընդունած ակտերի նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի եզրահանգմամբ գործատուի՝ օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող անհատական իրավական ակտի վիճարկման համար նախ անհրաժեշտ է, որպեսզի այդ իրավական ակտն իրավաբանական ուժի մեջ մտած լինի: Իրավական ակտի հասցեատիրոջ պահանջով ակտն անվավեր ճանաչելը վերջինիս համար իրավական նշանակություն ունի այն դեպքում, երբ վիճարկվող ակտի կատարմամբ կամ կիրառմամբ խախտվել են կամ կարող են խախտվել նրա իրավունքներն ու օրինական շահերը, իսկ դա կարող է առկա լինել միայն իրավաբանական ուժի մեջ մտած ակտի պարագայում՝ նկատի ունենալով, որ եթե անհատական իրավական ակտի մասին հասցեատերը սահմանված կարգով չի իրազեկվել, ապա անկախ այն հանգամանքից՝ այդ իրավական ակտն իր բովանդակությամբ համապատասխանում է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին, թե՛ ոչ, այդ իրավաբանական ակտն ուժի մեջ չմտնելու հետևանքով ենթակա չէ կատարման կամ կիրառման: Նման դեպքում դատարաններն աշխատողների իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացնեն ոչ թե ուժի մեջ չմտած անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելով, այլ պարզապես այդ իրավական ակտը չկիրառելով, ինչը կառաջացնի աշխատողի ակնկալած բարենպաստ իրավական հետևանքը: ՀՀ վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի սկզբանե գոյություն չունեցող, իրավաբանական ուժ չստացած իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջն առարկայագուրկ է, այսինքն՝ չի կարող վիճարկվել իրավական առումով գոյություն չունեցող ակտը: Հետևաբար իրավաբանական ուժ չունեցող անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու պահանջը բավարարվել չի կարող (*տես, թիվ ԵԿԴ/3295/02/15 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Ջարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ աշխատանքի ընդունման և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահը պայմանավորված է տվյալ ակտի մեկ օրինակն աշխատողին հանձնելու պահով: Ընդ որում, պատահական չէ, որ օրենսդրի կողմից կարևորվել է աշխատանքի ընդունման և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի պատշաճ ծանուցման հարցի դեպքում այդ իրավական ակտի մեկ օրինակն աշխատողին հանձնելու հանգամանքը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դա պայմանավորված է նշված իրավական ակտերի՝ աշխատողների հիմնական աշխատանքային իրավունքների ծագման կամ դադարման վրա ուղակիորեն ազդելու հատկանիշով:

Այսպիսով՝ եթե աշխատողն ընդունվում է աշխատանքի կամ վերջինիս հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծվում է, ապա պատշաճ ծանուցում պետք է համարել բա-

ցառապես ակտի օրինական աշխատողին հանձնելու պահը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս.

2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանք-

քի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում օրենսդրի կողմից գործատուի համար սահմանվել է աշխատողի նկատմամբ ներգործության կիրառման երկու տարբերակ՝

1) գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծում՝ առանց աշխատողին նախապես ծանուցելու պարտականության, կամ

2) կարգապահական պատասխանատվության կիրառում՝ մասնավորապես որպես կարգապահական տույժ կիրառելով աշխատանքային պայմանագրի լուծումը, որի դեպքում գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական տույժի կիրառման ընթացակարգը:

Նման այլընտրանք նախատեսելու նպատակը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ աշխատողի և գործատուի շահերի հավասարակշռումն է՝ նկատի ունենալով, որ հնարավոր են իրավիճակներ, երբ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը պահպանելը և անհավաղ աշխատանքային պայմանագիրը չլուծելը կարող է լրացուցիչ վնասներ հասցնել գործատուին՝ անհարկի անհամաչափություն առաջացնելով աշխատողի և գործատուի շահերի միջև (օրինակ՝ եթե աշխատողը հրապարակել է գաղտնիք, կամ դրամական արժեքներ սպասարկելիս նյութական վնաս է հասցրել գործատուին):

Անդրադառնալով կիրառված կարգապահական տույժի բողոքարկման ժամկետներին՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ թեև կարգապահապական տույժերի համար բողոքարկման ժամկետը մեկ ամիսն է, սակայն այս ժամկետը կիրառելի է միայն ավելի մեղմ տույժերի՝ նկատողության և խիստ նկատողության կիրառման դեպքերում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ կիրառվել է կարգապահական տույժ աշխատանքային պայմանագրի լուծման տեսքով, սպա աշխատողն իրավունք ունի համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում բողոքարկել այն՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բողոքարկման ժամկետը: Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է հետևյալ հանգամանքով.

Այն դեպքում, երբ աշխատողի նկատմամբ կիրառվում է կարգապահական տույժ՝ աշխատանքային պայմանագրի լուծման տեսքով, աշխատանքային հարաբերությունները դադարում են, հետևաբար անձի՝ որպես աշխատողի կարգավիճակը դադարում է: Նման պարագայում, փաստորեն, կարգապահական տույժի նշանակման հետ կապված հարաբերությունը անմիջականորեն հանգեցնում է այլ հարաբերության՝ կապված աշխատանքային պայմանագրի լուծմամբ առաջացած իրավունքների և պարտականությունների հետ: Ուստիև տրամաբանական է տարբերակված մոտեցում կիրառել կարգապահական տույժի (նկատողություն, խիստ նկատողություն) բողոքարկման ժամկետի (*մեկ ամիս*) և աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ իրավական ակտի (այդ թվում՝ որպես կարգապահական տույժ կիրառելու դեպքում) բողոքարկման ժամկետի (*երկու ամիս*) միջև:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև աշխատողների հիմնական իրավունքների առավելագույնս պահպանման անհրաժեշտությամբ: Ինչպես արդեն նշվել է, օրենսդիրն առանձնահատուկ կարևորել է աշխատանքի ընդունման և աշխա-

տանքային պայմանագիրը լուծելու մասին իրավական ակտերի նշանակությունը՝ մասնավորապես դրանց ուժի մեջ մտնելու համար պարտադիր համարելով այդ ակտի մեկ օրինակն աշխատողին հանձնելը: Հետևաբար նույն տրամաբանությամբ անհրաժեշտ է կարևորել աշխատողների իրավունքները նաև այն դեպքում, երբ վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է՝ թեկուզև որպես կարգապահական տույժ: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ օրենսդիրը, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ իրավական ակտը բողոքարկելու ժամկետ սահմանելով երկու ամիսը, նպատակ ունի առավելագույնս ապահովել աշխատողների խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը: Ուստի նույն սկզբունքով պետք է առաջնորդվել նաև այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագրի լուծումը կիրառվել է որպես կարգապահական տույժ՝ հաշվի առնելով, որ աշխատողը պետք է հավասար հնարավորություն ունենա ապահովելու իր խախտված իրավունքների դատական պաշտպանությունը՝ անկախ նրանից, թե ինչ հիմքով է գործատուի կողմից լուծվել աշխատանքային պայմանագիրը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ նկատողության և խիստ նկատողության ձևով կիրառված կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իսկ այն դեպքերում, երբ կարգապահական տույժը կիրառվել է աշխատանքային պայմանագրի լուծման ձևով՝ համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմությունը իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Պահանջների որոշ տեսակների համար օրենքներով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար՝ հատուկ ժամկետներ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի հայցային վաղեմության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել աշխատանքային հարաբերությունների նկատմամբ՝ աշխատանքային օրենսդրությամբ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթների բացակայության դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված ժամկետն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է հայց ներկայացնելու միջոցով ակնկալել խախտված իրավունքների պաշտպանություն: Հետևաբար այդ ժամկետն իր բնույթով համապատասխանում

է հայցային վաղեմության ժամկետին: Հաշվի առնելով, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը չի պարունակում հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ որևէ դրույթ, ուստի աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները (*տե՛ս, Արիկ Արդարյանն ընդդեմ «Վանաձորի պղերիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մասնկապարանեկան մասնագիտացված մարզադպրոց» ՀՈԱԿ-ի թիվ ԼԴ/1071/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հետևությունը կիրառելի է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված՝ կարգապահական տույժի բողոքարկման ժամկետի նկատմամբ, քանի որ այս դեպքում նույնպես ՀՀ աշխատանքային օրենսգիրքը հատուկ կարգավորում չի նախատեսում: Այսինքն՝ նշված ժամկետը նույնպես հայցային վաղեմության հատուկ ժամկետ է, որի նկատմամբ նույնպես կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ դրույթները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի՝ 09.02.2018 թվականի փոփոխություններից հետո գործող խմբագրության համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը, եթե օրենքով դիմում տալու համար այլ ժամկետ նախատեսված չէ: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:

Նախկինում կայացրած որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանը, վերլուծելով մինչև 09.02.2018 թվականի խմբագրությունը գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասը, նշել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է կարգ, որի առկայության դեպքում դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի հայցային վաղեմության հարցը: Այն է՝ պետք է առկա լինի հայցային վաղեմություն կիրառելու մասին գործին մասնակցող անձի կողմից դիմում, և այդ դիմումը պետք է ներկայացվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Այսինքն՝ օրենսդրի կողմից հստակ սահմանվել է ժամկետ, այն է՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը ներկայացնել մինչև վճռի կայացումը (*տե՛ս, Ռադիկ*

Ենգիբարյանի անանկության գործով կատավարիչն ընդդեմ «Վանասկն Ապակի» ՍՊԸ-ի և մյուսների թիվ ՇԴ/0376/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը):

Մասնավորեցնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներն աշխատանքային հարաբերություններում գործող հայցային վաղեմության ժամկետների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ անհատական իրավական ակտը բողոքարկելու ժամկետի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու համար պատասխանողը մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը պետք է ներկայացնի հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում, այսինքն՝ դատարանն իրավասու չէ հայցային վաղեմության ժամկետ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնի նկատմամբ 17.08.2016 թվականի հրամանով հարուցվել է կարգապահական վարույթ, որի արդյունքում 22.08.2016 թվականի հրամանի հիման վրա կիրառվել է կարգապահական տույժ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով՝ աշխատանքային պայմանագրի լուծում: Սույն քաղաքացիական գործում բացակայում է ապացույց, որի համաձայն՝ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնն օրենքով սահմանված կարգով իրագնելվել է Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի մասին: Սույն գործով հայցադիմում է ներկայացվել 03.10.2016 թվականին:

Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հիմնադրամի տնօրեն Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանն օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում չի բողոքարկվել, ուստի Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնը բաց է թողել դատարան դիմելու՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը՝ գրկվելով հրամանը դատարանում վիճարկելու հնարավորությունից: Միաժամանակ Դատարանը եզրահանգել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճիռը, հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումը և հավելել է նաև, որ թեև գործում առկա չէ հայցվորի կողմից հրամանն անձամբ ստանալու վերաբերյալ որևէ ապացույց, սակայն 29.08.2016 թվականին փաստաբան Կարեն Տոնոյանին տրված լիազորագրից ակնհայտ է դառնում, որ հայցվորն առնվազն այդ օրվա դրությամբ իրագնելված է եղել Արմեն Տեր Կյուրեղյանի 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի մասին, սակայն սահմանված մեկամսյա ժամկետում հրամանը չի բողոքարկել: Անդրադառնալով հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ պատասխանողի կողմից դիմում չներկայացնելու հարցին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված ժամկետը հայցային վաղեմության ժամկետ չի կարող համարվել, քանի որ այն ըստ էության սահմանում է հայցվորի դատարան դիմելու իրավունքի իրականացման ժամկետը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը վերահաստատել է Դատարանի եզրահանգումը և նույնպես արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը տվյալ դեպքում

կիրառելի չէ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նկատի ունենալով, որ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնի նկատմամբ կարգապահական տույժի կիրառումը հանգեցրել է աշխատանքային պայմանագրի լուծման, վերջինս գործատուի կայացրած անհատական իրավական ակտը կարող էր բողոքարկել պատշաճ կարգով դրա մասին իրազեկվելու պահից հաշվված երկամսյա ժամկետում, որը պետք է դիտարկվի որպես հայցային վաղեմության ժամկետ: Մինչդեռ Դատարանը, գործում 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի մասին գործատուի կողմից աշխատողին իրազեկելու վերաբերյալ ապացույցի բացակայության պայմաններում արձանագրելով, որ նշված հրամանն օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում չի բողոքարկվել, իսկ Վերաքննիչ դատարանն էլ հիմնավոր համարելով Դատարանի նշված եզրահանգումը և հավելելով, որ նշված ժամկետը հայցային վաղեմության ժամկետ չի կարող համարվել, նյութական իրավունքի նորմի սխալ մեկնաբանման արդյունքում թույլ են տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը՝ ազդելով գործի ելքի վրա, քանի որ առանց հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության առկայության մերժելով հայցապահանջն այն հիմքով, որ լրացել է հրամանի վիճարկման ժամկետը՝ ըստ էության չանդրադառնալով դրա իրավաչափության գնահատմանը, ստորադաս դատարանները սահմանափակել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ նկատի ունենալով, որ նշված իրավունքը ենթադրում է ոչ միայն հայց հարուցելու, այլև արդեն իսկ հարուցված հայցով գործի ըստ էության քննության և լուծման իրավունքը:

Միաժամանակ նկատի ունենալով, որ Դատարանի կողմից հայցը մերժվել է 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանի բողոքարկման մեկամսյա ժամկետը լրացած լինելու հիմքով, և բողոքարկվող իրավական ակտի իրավաչափությունն ըստ էության չի գնահատվել, իսկ Վերաքննիչ դատարանն էլ անփոփոխ է թողել Դատարանի վճիռը, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկների հիմնավորվածությանը և գտնում է, որ սույն գործով առկա է նոր քննության անհրաժեշտություն՝ պարզելու համար ինչպես գործատուի իրավական ակտն ուժի մեջ մտած լինելու հանգամանքը, այնպես էլ այդ հանգամանքը հաստատվելու դեպքում՝ գործատուի իրավական ակտի իրավաչափությունը և հիմնավորվածությունն ըստ էության ստուգելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործը նոր քննության է ուղարկվում աշխատանքային պայմանագիրը լուծելու ձևով կարգապահական տույժ կիրառելու մասին 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանն անվավեր ճանաչելու, Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուռնին նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումար բռնագանձելու պահանջների մասով՝ հաշվի առնելով, որ Դատարանի վճիռը վերաքննության կարգով, համապատասխանաբար նաև վճռաբեկության կարգով բողոքարկվել է միայն այդ մասով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.03.2018 թվականի որոշումը և գործը՝ Կաթրին Աննի Ժաննին Ժողիվե Ժողիվե Բյուռնի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանն անվավեր ճանաչելու և վերջինիս նախկին աշխատանքում վերականգնելու, ինչպես նաև հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար սկսած 22.08.2016 թվականից օրական 132.085,31 ՀՀ դրամ աշխատավարձի գումարի բռնագանձման պահանջների մասով, ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռ. Հակոբյանս և Գ. Հակոբյանս, համաձայն չի նկելով վերը նշված որոշման պարճատարանական մատում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամանություն կողմից որպես կիրառված կարգապահական տույճի տեսակ պայմանագիրը լուծելիս այդ տույճի բողոքարկման ժամկերի վերաբերյալ արտահայտած կարծիքի հեր, շարտորում ենք մեր հատուկ կարծիքը դրա վերաբերյալ:

Այսպես՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է նորմատիվ իրավական ակտի հանրային քննարկման, կարգավորման ազդեցության գնահատման, փորճաքննության, հրապարակման, ուճի մեջ մտնելու, գործողության, փոփոխման, լրացման և գործողության դադարեցման, ինչպես նաև իրավական հակասությունների (իրավական կոլիզիաների) և օրենսդրական բացերի դեպքում իրավական ակտերի նորմերի կիրառման, մեկնաբանման, պարզաբանման հետ կապված հարաբերությունները և օրենսդրական տեխնիկայի կանոնները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաճնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ իրավական ակտերի համապատասխան նորմերը ենթակա են մեկնաբանման և(կամ) պարզաբանման միայն այն դեպքում, երբ առկա է իրավական հակասություն (իրավական կոլիզիա) և(կամ) օրենսդրական բաց: Ընդ որում, նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանելիս պարտադիր պետք է հաշվի առնել նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով այդ նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի կարգավորման համատեքստից:

Համանման կարգավորում է նախատեսված նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով, որի 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի պահանջները: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմի մեկնաբանումը

չպետք է փոփոխի դրա իմաստը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում.

2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.

6) աշխատողի նկատմամբ վատահոյությունը կորցնելու դեպքում.

7) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով).

8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում.

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.

10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.

11) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի վաթսուհինգ տարին լրանալու դեպքում, եթե համապատասխան հիմքը նախատեսված է աշխատանքային պայմանագրով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մա-

սին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: (...)

Նշված նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ այդ հոդվածների կարգավորման համատեքստից ելնելով՝ գտնում ենք, որ օրենսդիրը նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերը, ըստ էության, առանձնացրել է նույն հոդվածում նշված մնացած վեց հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերից՝ միայն դրանք որակելով որպես աշխատողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժի տեսակ: Մինչև նույն ժամանակ օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել նաև գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրերը լուծելու մասին անհատական իրավական ակտը դատական կարգով բողոքարկելու ժամկետների առումով՝ դրանցից նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծման մասով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանելով մեկամյա ժամկետ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո, իսկ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածում նշված մնացած վեց հիմքերով աշխատանքային պայմանագրերը լուծելու մասով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով սահմանելով երկամյա ժամկետ անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո:

Նպատակ ունենալով կատարելու նորմատիվ իրավական ակտը մեկնաբանելիս օրենսդրի կողմից այն մեկնաբանող անձի վրա դրված մյուս պարտադիր պայմանը՝ անհրաժեշտ ենք համարում այդ առումով բացահայտել նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը:

Այսպես՝

Մինչև 12.04.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը նաև սահմանել է, որ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան:

Մինչև 22.10.2015 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածը սահմանել է, որ կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Այսինքն՝ մինչև 12.04.2014 թվականը աշխատանքային պայմանագիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերում նշված հիմքերից մեկով լուծելու ձևով կիրառված կարգապահական տույժի համար, ըստ էության, ևս գործել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ այն դատա-

կան կարգով բողոքարկելու մեկամսյա ժամկետը, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածը դատական կարգով կարգապահական տույժի բողոքարկման որևէ ժամկետ չի նախատեսել:

Դրանից հետո օրենսդիրը փոփոխություն է կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածում, որն ուժի մեջ է մտել 12.04.2014 թվականին, որի համաձայն՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում դատարան դիմելու համար սահմանել է համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո երկամսյա ժամկետ: Նշված կարգավորումը, ըստ էության, վերաբերել է նաև վերը նշված կարգապահական տույժի դատական կարգով բողոքարկմանը, քանի որ այդ պահին ևս ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածը դատական կարգով կարգապահական տույժի բողոքարկման որևէ ժամկետ չի նախատեսել: Մինչդեռ տվյալ կարգավորումը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածի մասով գործել է մինչև 22.10.2015 թվականը, այսինքն՝ մինչև այն պահը, երբ օրենսդրի կողմից փոփոխություն է կատարվել այդ հոդվածում, և արդեն կարգապահական տույժը դատական կարգով բողոքարկելու համար սահմանվել է մեկամսյա ժամկետ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո:

Վերոգրյալից բխում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածում փոփոխություն կատարելու վերաբերյալ այդ ակտն ընդունող մարմնի նպատակը եղել է այն, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետից տարբերվող ժամկետ սահմանի գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրերը լուծելու մասին անհատական իրավական ակտը դատական կարգով բողոքարկելու ժամկետների առումով՝ դրանցից նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծման մասով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանվելով մեկամսյա ժամկետ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո:

Այսինքն՝ տվյալ դեպքում օրենսդիրն ուղղակիորեն կարգավորել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով կիրառված կարգապահական տույժի բողոքարկման ժամկետի հետ կապված աշխատանքային հարաբերությունները՝ սահմանելով ինչպես հատուկ ժամկետը, այնպես էլ դրա հաշվարկման կարգը, որի պայմաններում վերը նշված դիրքորոշումների համատեքստում անթույլատրելի ենք համարում օրենքի անալոգիա կիրառելը՝ այդ հարաբերությունները ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հարաբերություններին նմանեցնելը և վերջինով նախատեսված երկամսյա ժամկետը վերը նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելը նաև այն պատճառաբանությամբ, որ դրանով տվյալ դեպքում խստացվում են իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմաններն ու կարգը:

Համաձայն լինելով Վճռաբեկ դատարանի 28.03.2019 թվականի որոշման պատճառաբանական մասի մնացած մասերի և եզրափակիչ մասի հետ՝ գտնում ենք, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.03.2018 թվականի որոշումը պետք է բեկանել և գործը՝ Կաթրին Աննի Ժաննին Ժոլիվե Ժոլիվե Բյուոնի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 22.08.2016 թվականի թիվ 26-Ա հրամանն անվավեր ճանաչելու և վերջինիս

նախկին աշխատանքում վերականգնելու, ինչպես նաև հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար սկսած 22.08.2016 թվականից օրական 132.085,31 ՀՀ դրամ աշխատավարձի գումարի բռնագանձման պահանջների մատով, ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության՝ Վճռաբեկ դատարանի 28.03.2019 թվականի որոշմամբ սահմանված ծավալով քննություն իրականացնելու համար:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Գ. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ ԱՎԴԻ/0006/04/16

2019թ.

Մասնկության գործ թիվ ԱՎԴԻ/0006/04/16
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Ս. Թորոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հունիսի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով Գագիկ Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Գագիկ Հակոբյանի ընդդեմ Արմեն Հակոբյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գագիկ Հակոբյանը պահանջել է Արմեն Հակոբյանին ճանաչել սնանկ:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 17.02.2016 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան), քննելով Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի միջնորդությունը, 15.08.2016 թվականին կայացրել է որոշում՝ «Արմեն Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվության մասին»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.12.2016 թվականի որոշմամբ Գագիկ Հակոբյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.08.2016 թվականի «Արմեն Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվության մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Հակոբյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, կիրառել է նույն օրենքի 75-րդ և 77-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը, մինչև Արմեն Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառքի վերաբերյալ որոշում կայացնելը, պետք է պարզեր, թե արդյոք վերոնշյալ գույքն աճուրդով վաճառվել է, թե՛ ոչ, և միայն դրա ընթացքում այդ գույքի չվաճառվելու դեպքում անդրադարձ կատարեր վերջինիս՝ ուղղակի գործարքով վաճառքի հնարավորությանը: Գույքը հրապարակային սակարկություններով վաճառելիս հնարավոր է նաև գույքի մեկնարկային գնի աճ, ինչը բարենպաստ իրավիճակ կստեղծեր ինչպես Գագիկ Հակոբյանի, այնպես էլ պարտապան Արմեն Հակոբյանի համար:

Ավելին՝ սույն գործով հաստատված փաստերով հիմնավորվում է, որ 23.09.2016 թվականին Գագիկ Հակոբյանի կողմից Բանկ այցելելիս պարզվել է, որ հենց վերջինս է վարկավորել Երևանի Թավրիզյան թիվ 17 հասցեի բնակիչ Շուշանիկ Ղազարյանին, որպեսզի վերջինս ձեռք բերի Արմեն Հակոբյանի գույքը, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ ուղղակի գործարքի իրականացման համար առկա են եղել նախապես համաձայնեցված գործողություններ Շուշանիկ Ղազարյանի, Բանկի և Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի միջև:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 15.12.2016 թվականի որոշումը և կայացնել նոր՝ Դատարանի 15.08.2016 թվականի որոշումը բեկանելու մասին դատական ակտ»:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ օրենսդիրը հստակ նախատեսել է, որ պարտապանի գույքի վաճառքը տեղի է ունենում կամ հրապարակային սակարկություններով, կամ ուղղակի գործարքով, հետևաբար առկա չէ որևէ պարտադիր պայման գույքի վաճառքի մեկ եղանակից մյուսին անցնելու համար: Սույն գործի պարագայում հարկ է նշել նաև, որ ուղղակի վաճառքի միջոցով օտարված Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի թիվ 1/2 շենքի 230-րդ բնակարանը վաճառքի է հանվել գույքի վաճառքի ծրագրով և վաճառքի ծրագրում սահմանվել է, որ նշված գույքը ներկայացվել է ուղղակի գործարքով օտարման:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Շուշանիկ Ղազարյանը սնանկության գործով կառավարչի կամ Բանկի հետ փոխկապակցված անձ է, ապա դատարանները գործի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննության արդյունքում հերքել են նման փաստարկի հիմնավորվածությունը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Շուշանիկ Ղազարյանի կողմից 06.07.2016 թվականին ներկայացված դիմումի համաձայն՝ վերջինս Դատարանին խնդրել է 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով ուղղակի գործարքի միջոցով իրեն վաճառել Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը **(հավելված, գ.թ. 27)**.

2. 13.07.2016 թվականի պարտատերերի երկրորդ ժողովի արձանագրության համաձայն՝ պարտատերերի ժողովը հավանություն է տվել Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Շուշանիկ Ղազարյանին օտարելու հարցին: Գազիկ Հակոբյանի ներկայացուցիչ Վ. Փաշայանը դեմ է քվեարկել նշված հարցին **(հավելված, գ.թ. 22-26)**.

3. Մասնկության գործով կատավարիչ Գևորգ Ավագյանը 18.07.2016 թվականին Դատարան է ներկայացրել Արմեն Հակոբյանի վարկային պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող, Բանկում գրավադրված՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Շուշանիկ Ղազարյանին վաճառել թույլատրելու և նշված բնակարանի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքները և սահմանափակումները վերացնելու մասին միջնորդություն **(հավելված, գ.թ. 20-21)**.

4. «ՖԻՆԼՈՌԻ» ՍՊԸ-ի կողմից 23.06.2016 թվականին կատարված թիվ Հ-06-0060 գնահատման հաշվետվության համաձայն՝ Գազիկ Հակոբյանին և Մուսաննա Բազիկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանի շուկայական արժեքը գնահատվել է 50.500.000 ՀՀ դրամ **(հավելված, գ.թ. 36-37)**.

5. 03.08.2016 թվականի պարտատերերի երրորդ ժողովի արձանագրության և ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է գույքի վաճառք՝ նույն օրենքի 76-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային սակարկություններով, և նույն օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ ուղղակի գործարքով: Ծրագրով նախնական փուլում նախատեսվում է գույքի վաճառք՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի համաձայն, **եթե աճուրդների կազմակերպման ժամանակահատվածում գույքը չի հաջողվում օտարել** և ստացվում է համապատասխան բարձր գնային առաջարկություն, ապա գույքի օտարումը կիրականացվի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ պահպանելով տվյալ հոդվածի ընթացակարգը: Ծրագրի համաձայն՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը ներկայացվել է ուղղակի գործարքով օտարման **(հավելված հատոր 1-ին, գ.թ. 21, 23-24)**:

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ, 76-րդ և 77-րդ հոդվածների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- արդյոք պարտավորների ժողովի կողմից հասարակված գույքի վաճառքի ծրագրով այլ կարգ նախատեսված լինելը կարող է խոչընդոտ հանդիսանալ կառավարչի կողմից պարտավորանքի պարկանող գույքի վաճառքն ուղղակի գործարքով իրականացնելու համար,

- արդյոք սնանկության վարույթում պարտապանի պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկան իրացնելիս պետք է հիմք ընդունվեն նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով գրավի առարկայի իրացման վերաբերյալ սահմանված կանոնները,

- արդյոք գրավի պայմանագրի կողմ չհանդիսացող գրանցված պարտավորները կարող են որոշել գրավի առարկայի իրացման ձևը.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: Ի ապահովումն պարտապանի՝ նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մոբատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված իրավունքով պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար ապահովված իրավունքի առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում նույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և դատարանի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով: Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ գույքի վաճառքի ծրագիրը պետք է ներառի պարտապանի ամբողջ գույքի, ներառյալ՝ պահանջի իրավունքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ (անվանումները, նկարագրությունը, քանակը, հաշվեկշռային արժեքը), վաճառքի նախատեսվող ձևը, նախնական գնահատված արժեքները՝ ըստ գույքի տեսակի: Գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից չհաստատվելու դեպքում կառավարիչն իրավունք ունի դիմելու դատարան և պահանջելու հաստատել գույքի վաճառքի ծրագիրը՝ կցելով պարտատերերի ժողովի կամ խորհրդի որոշումները կամ ժողովի կամ խորհրդի նիստի անցկացման անհնարինության հիմքերը: Ծրագրի փոփոխությունները կատարվում են ծրագրի ընդունման համար սահմանված կարգով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **պարտապանի գույքը** հրապարակային սակարկություններով վաճառելու իր միջնորդությունը կառավարիչը ներկայացնում է դատարան՝ այդ մասին երեք օր առաջ տեղեկացնելով պարտատերերին նույն օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կարգով: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, աճուրդի առաջարկվող մեկնարկային գինը, աճուրդի անցկացման օրը: Միջնորդությանը կից ներկայացվում է գույքի գնահատման ակտը (անկախ գնահատողի կողմից գնահատված լինելու դեպքում՝ եզրակացությունը): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն հրապարակային սակարկություններով պարտապանի գույքի վաճառքը թույլատրելու մասին

կառավարչի միջնորդության դեմ յոթնօրյա ժամկետում գրավոր առարկություն ներկայացնելու դատարան և առաջարկելու աճուրդի ավելի բարձր մեկնարկային գին՝ գույքի վաճառքի իր կողմից առաջարկվող մեկնարկային գնի 5 տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ վճարելով սնանկության հատուկ հաշվին: Առարկությանը կցվում է դեպոզիտի վճարումը հավաստող փաստաթուղթը: Եթե առարկություն են ներկայացրել մեկից ավելի պարտատերեր, ապա հրապարակային սակարկություններով գույքի իրացումը թույլատրվում է առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարչի միջնորդությունն ստանալու ութերորդ օրը դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) գույքի վաճառքը թույլատրելու մասին՝ բավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն չի ներկայացրել դատարան:

բ) գույքի վաճառքը պարտատիրոջ առաջարկած գնով թույլատրելու մասին՝ չբավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն չի ներկայացրել դատարան:

գ) կառավարչի միջնորդությունը մերժելու մասին, եթե կառավարչի կողմից չեն պահպանվել նույն օրենքով սահմանված պահանջները:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կառավարիչը մտադիր է **պարտապանին պատկանող գույքի** վաճառքն իրականացնել ուղղակի գործարքով, ապա նա հրավիրում է խորհրդի նիստ, իսկ վերջինս ձևավորված չլինելու դեպքում՝ ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Խորհրդի կամ ժողովի որոշումը՝ ուղղակի գործարքի վերաբերյալ կառավարչի մտադրությանը հավանություն տալու կամ չտալու վերաբերյալ, և խորհրդի նիստի արձանագրությունը կառավարիչն իր միջնորդության հետ ներկայացնում է դատարան: Միջնորդության մեջ նշվում են գույքի գանվելու վայրը, գույքի նկարագրությունը, վաճառքի գինը և հնարավոր գնորդը: Դատավորն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ այն մերժելու մասին: Դատավորը մերժում է միջնորդությունը, **եթե առկա է խորհրդի որոշումը՝ ուղղակի գործարքի վերաբերյալ կառավարչի մտադրությանը հավանություն չտալու մասին**: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարչի կամ որևէ պարտատիրոջ նկատմամբ փոխկապակցված անձին գույքի ուղղակի գործարքով վաճառքն արգելվում է:

Վերոնշյալ նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ և 77-րդ հոդվածները նախատեսում են պարտապանին պատկանող գույքի իրացման ընթացակարգերը: Այսպես՝ պարտատերերի պահանջները բավարարելու նպատակով սնանկության գործով կառավարչին է վերապահված ձեռնարկել պարտապանի գույքի վաճառքը՝ հրապարակային սակարկությունների կամ ուղղակի գործարքի միջոցով: Ընդ որում, պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով վաճառքի համար սնանկության գործով կառավարիչը պետք է գույքագրման արդյունքներով կազմված **գույքի վաճառքի ծրագիրը** ներկայացնի պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի հաստատմանը, որից հետո էլ ստանա դատարանի թույլտվությունը գույքի վաճառքի վերաբերյալ: Ավելին, հաշվի առնելով, որ **պարտատերերի ժողովի (կամ խորհրդի) կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագիրն այն հիմքն է**, որի հիման վրա իրականացվում է գույքի վաճառքը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապանի գույքի վաճառքը պետք է տեղի ունենա բացառապես հաստատված ծրագրին համապատասխան:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստանալով կառավարչի միջնորդությունը՝ գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու և այնուհետև գույքի վաճառքը թույլատրելու մասին, դատարանը պետք է գնահատի գույքի վաճառքի ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին, որից հետո գնահատի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ նորմերով սահմանված ընթացակարգային նորմերի պահպանվածությունը:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալ այն դեպքերին, երբ վաճառքի է դրվում պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկան: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում սնանկության վարույթում գրավի առարկայի իրացման գործընթացը դիտարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումների համատեքստում:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (...) գրավատուի գույքի նկատմամբ գրավատուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավատուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավատուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի **առանց դատարան դիմելու** գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավատուին կամ գրավատուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝

1) դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ

2) առկա է գրավատուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է գրավի առարկայի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու ընթացակարգը: Մասնավորապես նախատեսվում է, որ բռնագանձման ծանուցումը գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) (...) հանձնելուց երկու ամիս հետո գրավատուն նույն օրենսգրքի ուժով իրավունք ունի նույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան **ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով**, եթե գրավատուն և գրավատուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենսգրքի 249 հոդվածի 1-ին կետում նշված համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավատուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են **դատարանի վճռով**:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ գրավ դրված գույքն իրացվում (վաճառվում) է **հրապարակային սակարկություններով**՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով: Նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրով կամ գրավատուի և գրավատուի միջև կնքված ու նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ (...) կարող է սահմանվել

գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) այլ կարգ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ գրավի իրավունքը կամ գրավը պարտավորությունների՝ իրային-իրավական ապահովման միջոց է, որը գրավատուին իրավունք է վերապահում հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալու գրավի առարկայի արժեքից: Վերոգրյալ բնորոշումից բխում է, որ գրավով ապահովված պարտավորության պարտատերը գրավի առարկայի արժեքից իր պահանջի բավարարման նախապատվության իրավունք ունի մյուս պարտատերերի նկատմամբ, այսինքն՝ գրավով ապահովված պարտավորության պարտապանի մյուս պարտատերերի համեմատությամբ գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ պահանջը ենթակա է բավարարման նախապատվության իրավունքով (տե՛ս, «Սեյվր» ՍՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարում ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն միայն այն դեպքում, երբ տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու վերաբերյալ՝ ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին: Այսինքն՝ օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռելով ապահովված պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարումը գրավադրված գույքի հաշվին՝ շրջանցելով սնանկության գործով վարույթը, միաժամանակ սահմանել է այն պարտադիր պայմանը, որի պահպանման դեպքում միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը կարող է գործել: Նշված պայմանի չպահպանման դեպքում՝ **գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում** և ապահովված պարտատերը դրանից բավարարում կարող է ստանալ բացառապես սնանկության վարույթի շրջանակներում՝ ընդգրկվելով պարտատերերի ցանկում: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ, վերը նշված կարգավորումները հավասարապես կիրառելի են նաև այն դեպքերում, երբ սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունների ապահովման համար **գրավադրվել է երրորդ անձին պատկանող գույք**: Նման եզրահանգումը բխում է ինչպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի, նույն օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ, 11-րդ մասերի իրավակարգավորումից, այնպես էլ գրավի ինստիտուտի էությունից: Հետևաբար այն դեպքում, երբ ի ապահովումն սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունների կատարման՝ գրավադրված է երրորդ անձին պատկանող գույք և պարտատերը դատարանին չի ծանուցել մորատորիում չտարածելու մասին, վերջինս չի կարող գրավադրված գույքից բավարարում ստանալ ընդհանուր կարգով՝ շրջանցելով սնանկության վարույթը: Նմանատիպ փաստական հանգամանքների դեպքում ապահովված պարտատերը կարող է բավարարում ստանալ միայն սնանկության վարույթի շրջանակներում՝ ընդգրկվելով պարտատերերի ցանկում (տե՛ս, «ՎՏՐ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Կալպա» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով նախկին արտահայտած իրավական դիրքորոշումները և զարգացնելով դրանք՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում է գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու արտադատական կամ դատական կարգ: Ընդ որում, արտադատական կարգի կիրառման դեպքում գրավի առարկան իրացվում է ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների, իսկ դատական կարգով բռնագանձման դեպքում՝ հրապարակային սակարկությունների միջոցով: Երկու դեպքում էլ գրավատուի և գրավատուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ կարգ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի և 47-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների համաձայն՝ պարտապանին կամ երրորդ անձին պատկանող գրավի առարկան ներառվում է պարտապանի գույքի կազմում, բացառությամբ նույն օրենքով սահմանված այն դեպքի, երբ պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին, իսկ դատարանը թույլատրել է արտադատական կարգով դրա իրացումը: Այդուհանդերձ, «Մասնկության մասին» ՀՀ օրենքը որևէ առանձնահատկություն չի նախատեսում գրավի առարկայի իրացման եղանակների վերաբերյալ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե սնանկության վարույթում սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունն ապահովված է գրավով, ապա միայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքը գործել չի կարող, քանի որ գրավի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված են այլ առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն սնանկության վարույթի ընթացքում: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ եթե պարտապանի պարտավորությունն ապահովված է գրավով, ապա «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները ստորադասում են գրավատուի շահերը, որպիսի պայմաններում կիրառման ենթակա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնները՝ բացառելու համար գույքի սեփականատեր գրավատուի իրավունքների ոտնահարումը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները գրավով ապահովված պարտավորության նկատմամբ կիրառելիս և գրավի առարկա գույքի վաճառք իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև գրավատուի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված երաշխիքները՝ մասնավորապես գրավի առարկայի վրա դատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգավորումները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ պարտատերերի ժողովի կողմից հաստատվել է երրորդ անձին պատկանող գույքի վաճառքի ծրագիրը, ըստ որի՝ նախնական փուլում նախատեսվում է գույքի վաճառք՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի համաձայն, **եթե աճուրդների կազմակերպման ժամանակահատվածում գույքը չի հաջողվում օտարել** և ստացվում է համապատասխան բարձր գնային առաջարկություն, ապա գույքի օտարումը կիրականացվի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ պահպանելով տվյալ հոդվածի ընթացակարգը: Ծրագրի համաձայն՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը ներկայացվել է ուղղակի գործարքով օտարման: Նշված ծրագիրն Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանը ներկայացրել է Դատարան՝ միջնորդելով թույլատրել գույքը վաճառել ուղղակի գործարքով Շուշանիկ Ղազարյանին:

Դատարանը բավարարել է միջնորդությունը՝ արձանագրելով, որ պահպանված են «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջները, և առկա է ժողովի որոշում ուղղակի գոր-

ծարքին հավանություն տալու մասին:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ գույքի վաճառքի ծրագրին համապատասխան՝ եթե աճուրդների կազմակերպման ժամանակահատվածում գույքը չի հաջողվում օտարել, և ստացվում է համապատասխան բարձր գնային առաջարկություն, ապա գույքի օտարումը պետք է իրականացվի ուղղակի գործարքով, իսկ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը ներկայացվել է ուղղակի գործարքով օտարման: Ընդ որում, պարտատերերի ժողովը տվել է իր համաձայնությունը գույքն ուղղակի գործարքով վաճառելու մասին: Վերաքննիչ դատարանը գտել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրը դատարանի իրավասությունը նման միջնորդությունը մերժելու մասով սահմանափակել է բացառապես խորհրդի կողմից կառավարչի մտադրությանը հավանություն չտալու մասին որոշմամբ, որպիսի կարգավորումը բխում է սնանկության առանձնահատկություններից, քանի որ իրենց պահանջների բավարարման համար առկա գույքի ճակատագիրը որոշելու իրավասությունը վերապահված է բացառապես պարտատերերին: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել, որ Դատարանը թույլ չի տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերջիններս նյութական իրավունքի նորմի սխալ մեկնաբանման արդյունքում հաշվի չեն առել այն հանգամանքը, որ սնանկության վարույթում վաճառքի է դրվել երրորդ անձանց՝ գրավատուներ Գագիկ Հակոբյանին և Սուսանա Բագիկյանին պատկանող գույքը, որպիսի պայմաններում կիրառման էր ենթակա ոչ միայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքը, այլ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, քանի որ վերջինիս կարգավորումների կիրառման պայմաններում է հնարավոր լիարժեք ապահովել գրավատուների շահերի պաշտպանությունը նաև սնանկության վարույթում:

Ավելին, գույքի վաճառքի ծրագրի համաձայն՝ նախնական փուլում նախատեսվել է գույքը վաճառել հրապարակային սակարկություններով, և եթե այդ ընթացքում չհաջողվի օտարել և ստացվի բարձր գնային առաջարկություն, ապա գույքի օտարումը պետք է իրականացվի ուղղակի գործարքով: Այսինքն՝ պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրով նախատեսված չի եղել պարտապանի գույքի ուղղակի վաճառք՝ բացառելով հրապարակային սակարկությունները, հետևաբար պարտապանի գույքի վաճառքը պետք է տեղի ունենա հրապարակային սակարկություններով: Ընդ որում, կարևոր է նաև այն հանգամանքը, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ գույքի վաճառքի ծրագրին համապատասխան տեղի են ունեցել պարտապանի գույքի հրապարակային սակարկություններ, որպիսի հանգամանքը ևս բացառում է պարտապան Արմեն Հակոբյանի գույքի ուղղակի վաճառքի իրականացումը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ, ըստ որի՝ «օրենսդիրը դատարանի իրավասությունը նման միջնորդությունը մերժելու մասով սահմանափակել է բացառապես հավանություն չտալու մասին որոշմամբ», Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը կառավարչի միջնորդությունը գնահատելիս պետք է գնահատի ոչ միայն պարտատերերի ժողովում «կողմ» կամ «դեմ» քվեարկելու հանգամանքը, այլ նաև միջնորդության համապատասխանությունը գործող օրենսդրությանը և սնանկության վարույթում ընդունված իրավա-

կան ակտերին: Այսինքն՝ եթե անգամ պարտատերերի ժողովը հավանություն է տվել գույքի վաճառքի ծրագրի, որը, սակայն, հակասում է գործող օրենսդրությանը, ապա դատարանն այն հաստատել չի կարող:

Վճարեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները նշված եզրահանգումների մասով հերքվում են վերոգրյալ պատճառաբանություններով:

Ինչ վերաբերում է վճարեկ բողոքի մյուս փաստարկին՝ այն մասին, որ ուղղակի գործարքի իրականացման համար առկա են եղել նախապես համաձայնեցված գործողություններ Շուշանիկ Ղազարյանի, Բանկի և Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի միջև, ապա Վճարեկ դատարանը փաստում է, որ բողոքի նշված փաստարկը հիմնավորող ապացույց չի ներկայացվել գործի քննության ընթացքում, որպիսի պայմաններում Վճարեկ դատարանն անհիմա է համարում բողոքի նշված փաստարկը՝ միաժամանակ հիմնավոր համարելով այս մասով վճարեկ բողոքի պատասխանի փաստարկները:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ վճարեկ բողոքի հիմքի առկայությունը Վճարեկ դատարանը դիտում է բավարար՝ Վերաքննիչ դատարանի 15.12.2016 թվականի որոշումը բեկանելու և գործը՝ Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի ներկայացրած՝ Արմեն Հակոբյանի վարկային պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող, Բանկում գրավադրված՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի թիվ 1/2 շենքի 230-րդ բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Շուշանիկ Ղազարյանին վաճառել թույլատրելու և նշված բնակարանի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքները և սահմանափակումները վերացնելու մասին միջնորդությունը քննարկելու մասով, նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ Վճարեկ դատարանը, նկատի ունենալով, որ ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 20-րդ մասի հիմքով 01.01.2019 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ սնանկության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել ՀՀ սնանկության դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2016 թվականի որոշումը և գործը՝ Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի ներկայացրած՝ Արմեն Հակոբյանի վարկային պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գրավադրված՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Շուշանիկ Ղազարյանին վաճառել թույլատրելու և նշված բնակարանի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքները և սահմանափակումները վերացնելու մասին միջնորդությունը քննարկելու մասով, ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ ԱՎԴԻ/0006/04/16

2019թ.

Մասնկության գործ թիվ ԱՎԴԻ/0006/04/16
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Ս. Թորոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հունիսի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով Սուսանա Բազիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ քաղաքացիական դատարանի 02.02.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի
Գազիկ Հակոբյանի ընդդեմ Արմեն Հակոբյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գազիկ Հակոբյանը պահանջել է Արմեն Հակոբյանին ճանաչել
սնանկ:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի
17.02.2016 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը (դատա-
վոր՝ Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան), քննելով Արմեն Հակոբյանի սնանկության
գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի միջնորդությունը, 15.08.2016 թվականին կայացրել
է որոշում՝ «Արմեն Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվության մա-
սին»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.02.2017 թվականի որոշմամբ Սուսաննա Բազիկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.08.2016 թվականի «Արմեն Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառելու թույլտվության մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուսաննա Բազիկյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ):

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 10-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ, 75-րդ, 77-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանի համասեփականատեր է նաև Սուսաննա Բազիկյանը, և վերջինս իրեն համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի ճակատագրի վերաբերյալ տեղյակ չի եղել՝ դրանով իսկ զրկվելով իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը մինչև Արմեն Հակոբյանի գույքն ուղղակի գործարքով վաճառքի վերաբերյալ որոշում կայացնելը պետք է պարզեր, թե արդյոք վերոնշյալ գույքն աճուրդով վաճառվել է, թե՛ ոչ, և միայն դրա ընթացքում այդ գույքի չվաճառվելու դեպքում անդրադարձ կատարեր վերջինիս՝ ուղղակի գործարքով վաճառքի հնարավորությանը: Գույքը հրապարակային սակարկություններով վաճառելիս հնարավոր է նաև գույքի մեկնարակային գնի աճ, ինչը բարենպաստ իրավիճակ կստեղծեր ինչպես Գազիկ Հակոբյանի, այնպես էլ պարտապան Արմեն Հակոբյանի համար:

Ավելին՝ սույն գործով հաստատված փաստերով հիմնավորվում է, որ 23.09.2016 թվականին Գազիկ Հակոբյանի կողմից Բանկ այցելելիս պարզվել է, որ հենց վերջինս է վարկավորել Երևանի Թավրիզյան թիվ 17 հասցեի բնակիչ Շուշանիկ Ղազարյանին, որպեսզի վերջինս ձեռք բերի Արմեն Հակոբյանի գույքը, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ ուղղակի գործարքի իրականացման համար առկա են եղել նախապես համաձայնեցված գործողություններ Շուշանիկ Ղազարյանի, Բանկի և Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի միջև:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 02.02.2017 թվականի որոշումը և կայացնել նոր՝ Դատարանի 15.08.2016 թվականի որոշումը բեկանելու մասին դատական ակտ»:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոքաբերի այն փաստարկը, թե տեղյակ չի եղել իրեն համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ կայացվող որոշումներից, որի արդյունքում

խախտվել են իր իրավունքները, անհիմն է, քանի որ Դատարանը ծանուցելու պարտականություն ունի միայն դատական նիստի կամ առանձին դատավարական գործողությունների վերաբերյալ, մինչդեռ գույքն ուղղակի գործարքով վաճառելու միջնորդությունը քննարկվում է առանց դատական նիստ հրավիրելու: Ավելին՝ բողոքաբերը չի ներկայացրել որևէ փաստարկ այն մասին, որ ցանկացել է օգտվել իր գույքով պահանջի ապահովումը դադարեցնելու՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված իր իրավունքից:

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ օրենսդիրը հստակ նախատեսել է, որ պարտապանի գույքի վաճառքը տեղի է ունենում կան հրապարակային սակարկություններով, կան ուղղակի գործարքով, հետևաբար առկա չէ որևէ պարտադիր պայման գույքի վաճառքի մեկ եղանակից մյուսին անցնելու համար: Սույն գործի պարագայում հարկ է նշել նաև, որ ուղղակի վաճառքի միջոցով օտարված Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը վաճառքի է հանվել գույքի վաճառքի ծրագրով, և վաճառքի ծրագրում հստակ սահմանվել է, որ նշված գույքը ներկայացվել է ուղղակի գործարքով օտարման:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Շուշանիկ Ղազարյանը սնանկության կատարչի կամ Բանկի հետ փոխկապակցված անձ է, ապա դատարանները գործի բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննության արդյունքում հերքել են նման փաստարկի հիմնավորվածությունը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանի համասեփակատերեր են Գագիկ Հակոբյանը և Սուսաննա Բագիկյանը (**անվիճելի փաստ**).

2. 10.09.2014 թվականին Բանկի և Գագիկ Հակոբյանի ու Սուսաննա Բագիկյանի միջև կնքվել է թիվ 243257 «Պարտապան չհանդիսացող անձին պատկանող անշարժ գույքի գրավի մասին» պայմանագիրը, որի համաձայն՝ Բանկի հանդեպ Արմեն Հակոբյանի պարտավորությունների համար գրավադրվել է Գագիկ Հակոբյանին և Սուսաննա Բագիկյանին պատկանող Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը (**անվիճելի փաստ**).

3. Պարտատերերի 13.07.2016 թվականի երկրորդ ժողովի արձանագրության համաձայն՝ պարտատերերի ժողովը հավանություն է տվել Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Շուշանիկ Ղազարյանին օտարելու հարցին: Գագիկ Հակոբյանի ներկայացուցիչ Վ. Փաշայանը դեմ է քվեարկել նշված հարցին (**հավելված, գ.թ. 22-26**).

4. Մասնկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանը 18.07.2016 թվականին Դատարան է ներկայացրել Արմեն Հակոբյանի վարկային պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող, Բանկում գրավադրված՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Շուշանիկ Ղազարյանին վաճառել թույլատրելու և նշված բնակարանի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքները և սահմանափակումները վերացնելու մասին միջնորդություն (**հավելված, գ.թ. 20-21**).

5. «ՖԻՆԼՈՌ» ՍՊԸ-ի կողմից 23.06.2016 թվականին կատարված թիվ Հ-06-0060 գնահատման հաշվետվության համաձայն՝ Գագիկ Հակոբյանին և Սուսաննա Բագիկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանի շուկայական արժեքը գնահատվել է 50.500.000 ՀՀ

դրամ (**հավելված, գ.թ. 36-37**).

6. 03.08.2016 թվականի պարտատերերի երրորդ ժողովի արձանագրության և ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է գույքի վաճառք՝ նույն օրենքի 76-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային սակարկություններով և նույն օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ ուղղակի գործարքով: Ծրագրով նախնական փուլում նախատեսվում է գույքի վաճառք՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի համաձայն, **եթե աճուրդների կազմակերպման ժամանակահատվածում գույքը չի հաջողվում օտարել** և ստացվում է համապատասխան բարձր գնային առաջարկություն, ապա գույքի օտարումը կիրականացվի «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ պահպանելով տվյալ հոդվածի ընթացակարգը: Ծրագրի համաձայն՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը ներկայացվել է ուղղակի գործարքով օտարման (**հավելված հատոր 1-ին, գ.թ. 21, 23-24**).

7. Գործում առկա չէ ապացույց այն մասին, որ Սուսաննա Բազիկյանը տեղեկացվել է գույքի վաճառքի ծրագրի, այդ ծրագիրը հաստատելու մասին սնանկության գործով կառավարչի ներկայացրած միջնորդության, ինչպես նաև Դատարանի կողմից այդ ծրագիրը հաստատելու մասին որոշման վերաբերյալ:

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 10-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, ինչպես նաև «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է ամերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սնանկության վարույթում գրավաբու հանդիսացող երրորդ անձի կողմից իր գույքի վաճառքին վերաբերող գործընթացին մասնակցելու իրական հնարավորության ապահովմանը:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային

դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: (...)

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է երրորդ անձի գույքով, ապա այդ անձն իրավունք ունի դադարեցնելու իր գույքով պահանջի ապահովումը՝ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ փոխանցելով՝ (1) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափը գերազանցելու դեպքում՝ ապահովված պահանջի, գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, (2) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափից պակաս լինելու դեպքում՝ վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի չափով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապահի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և դատարանի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կառավարիչը մտադիր է պարտապանին պատկանող գույքի վաճառքն իրականացնել ուղղակի գործարքով, ապա նա հրավիրում է խորհրդի նիստ, իսկ վերջինս ձևավորված չլինելու դեպքում՝ ժողով՝ քննարկման դնելով այդ հարցը: Խորհրդի կամ ժողովի որոշումը՝ ուղղակի գործարքի վերաբերյալ կառավարչի մտադրությանը հավանություն տալու կամ չտալու վերաբերյալ, և խորհրդի նիստի արձանագրությունը կառավարիչն իր միջնորդության հետ ներկայացնում է դատարան: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, վաճառքի գինը և հնարավոր գնորդը: Դատավորն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ այն մերժելու մասին: Դատավորը մերժում է միջնորդությունը, եթե առկա է խորհրդի որոշումը՝ ուղղակի գործարքի վերաբերյալ կառավարչի մտադրությանը հավանություն չտալու մասին:

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքներ

րի և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց անցել է քսան տարի:

ՀՀ վճռաբեկ դատարանն ըստ *Գարիկ Բարսեղյանի դիմումի թիվ ԵՇԴ/0072/04/17 գործով 04.10.2018 թվականի որոշմամբ* անդրադարձել է ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովող գույքի (այդ թվում՝ գրավի առարկա հանդիսացող) սեփականատեր հանդիսացող անձանց սնանկության վարույթում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշման բողոքարկման հնարավորությանը:

Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) և ՀՀ սահմանադրական դատարանի՝ մի շարք որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, մասնավորապես, արձանագրել է, որ թեև «Սնանկության մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն չի պարտավորեցնում սնանկության գործով կառավարչին՝ ապահովված պահանջների դեպքում ծանուցելու նաև երրորդ անձանց, ում գույքով է ապահովված համապատասխան պահանջը, իսկ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը նախատեսում է միայն կառավարչի, պարտապանի և պարտատերերի կողմից պահանջների նախնական ցուցակի դեմ առարկություն ներկայացնելու հնարավորություն, այդուհանդերձ անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ երրորդ անձը (մասնավորապես գրավատուն) **պետք է իրական հնարավորություն ունենա տեղեկացված լինելու ներկայացված պահանջի մասին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով առարկություն՝ նկատի ունենալով, որ ապահովված պահանջի հաստատումն ուղղակիորեն առնչվում է երրորդ անձի սեփականության իրավունքին և այդ իրավունքի դատական պաշտպանությանը:**

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե օբյեկտիվորեն գրավատուն հնարավորություն չի ունեցել տեղեկացված լինելու սնանկության վարույթում ներկայացված պահանջի վերաբերյալ, ապա վերջինիս պետք է տրվի հնարավորություն ներկայացնելու իր առարկությունները ներկայացված պահանջի վերաբերյալ: Հակառակ իրավական դիրքորոշման պարագայում սահմանափակվում է ոչ միայն անձի սեփականության, այլ նաև դատական պաշտպանության իրավունքը:

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ Մարետա Առաքելյանի դիմումը, 19.07.2016 թվականի թիվ ՄԴՈ-1294 որոշմամբ արձանագրել է. «(...) ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «գրավատու» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ տվյալ իրավահարաբերություններում «գրավատու» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև այդ հարաբերություններում հանդես եկող **երրորդ անձ գրավատուին:** Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերություններում «պարտապան» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ «պարտապան» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող **երրորդ անձ գրավատուին:**

Խնդիրն այն է, որ «Բնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո» ձևակերպման բովանդակային ծավալում այլ գրավատուններին չներառելով՝ օրենսդիրը երրորդ անձ հանդիսացող գրավատուի համար հստակ ու միանշանակ չի երաշխավորում այդ երկամսյա ժամկետը, ինչը խախտում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս ամենի արդյունքում երրորդ անձ հանդիսացող գրավատուն կարող է զրկվել ոչ միայն գրավադրված գույքի բռնագանձումը և դրա իրացումը դադարեցնելու իր իրավունքից՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է, այլ՝ նաև բռնագանձման օրինականությունը վիճարկելու իրավունքից»:

Հիմք ընդունելով ինչպես ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումը, այնպես էլ թիվ ԵՇԴ/0072/04/17 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2018 թվականի որոշմամբ Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումների լույսի ներքո արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունն ապահովված է երրորդ անձ գրավատուին պատկանող գույքի գրավով, ապա վերջինս ոչ միայն պետք է իրապես տեղեկացվի պահանջների ներկայացման և հաստատման ընթացակարգի, այլ նաև իր գույքի վաճառքին վերաբերող գործընթացի մասին, քանի որ հակառակ մտեցման պարագայում ուղղակիորեն սահմանափակվում են երրորդ անձ գրավատուի սեփականության և դատական պաշտպանության իրավունքները, այդ թվում՝ վերջինս զրկվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված իր իրավունքից օգտվելու իրական հնարավորությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 03.08.2016 թվականի պարտատերերի երրորդ ժողովի կողմից հաստատվել է Գագիկ Հակոբյանին և Սուսաննա Բազիկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող և Արմեն Հակոբյանի պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկա գույքի վաճառքի ծրագիրը: Մասնկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանը Դատարան է ներկայացրել նշված գույքն ուղղակի գործարքով վաճառել թույլատրելու և նշված բնակարանի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքները և սահմանափակումները վերացնելու մասին միջնորդություն:

Դատարանը բավարարել է միջնորդությունը՝ արձանագրելով, որ պահպանված են «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջները, և առկա է ժողովի որոշում ուղղակի գործարքին հավանություն տալու մասին:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ գույքի վաճառքն ուղղակի գործարքով իրականացնելու համար օրենսդիրը չի պահանջում երրորդ անձ գրավատուի համաձայնությունը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանը կողմին ծանուցելու պարտականություն ունի միայն դատական նիստ հրավիրելու կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու դեպքում: Վերաքննիչ դատարանը գտել է, որ «(...) բողոքաբերն օժտված է դադարեցնելու իր գույքով պահանջի ապահովումը, որը կարող էր իրացնել: Տվյալ դեպքում բացակայում է Դատարանի կողմից նշված նորմի խախտման իրավական հնարավորությունը, քանի որ բողոքաբերը չի նշում որևէ փաստարկ, այն մասին, որ իր իրավունքը ցանկացել է իրացնել, սակայն չի իրացրել Դատարանի կողմից որևէ նորմի խախտման հետևանքով»: Վերաքննիչ դատարանը հավելել է, որ «(...) սույն գործով բողոքաբեր Սուսաննա Բազիկյանը սնանկության վարույթի ընթացքում որպես երրորդ անձ զրկված չի եղել սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ համապատասխան չափի գումար փոխանցելու միջոցով իր գույքով պահանջի ապահովումը դա-

դարեցնելու հնարավորությունից»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Սուսաննա Բազիկյանը տեղեկացված չի եղել իրեն համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի վաճառքի գործընթացի վերաբերյալ, քանի որ գործում բացակայում են ապացույցներ ինչպես սնանկության գործով կառավարչի, այնպես էլ Դատարանի կողմից այդ գործընթացի մասին Սուսաննա Բազիկյանին տեղեկացնելու վերաբերյալ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ Սուսաննա Բազիկյանը, լինելով գրավի առարկա գույքի համասեփականատեր, պետք է իրական հնարավորություն ունենար մասնակցելու գրավի առարկա գույքի վաճառքին վերաբերող գործընթացին, այդ թվում՝ իրական հնարավորություն ստանալով օգտվելու «Մասնկության մասին» ՀՀ օրենքով կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով իր համար սահմանված երաշխիքներից:

Այսպիսով, նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի 15.08.2016 թվականի որոշումն ուղղակիորեն շոշափել է Սուսաննա Բազիկյանի իրավունքները և օրինական շահերը, մինչդեռ վերջինիս համար չի ապահովվել նշված որոշման կայացմանը նախորդող գործընթացին մասնակցելու իրական հնարավորություն, որպիսի հանգամանքն էլ անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սուսաննա Բազիկյանը սնանկության վարույթում իր գույքի վաճառքի վերաբերյալ գործընթացին մասնակից չդարձվելու հետևանքով զրկվել է իր իրավունքներից իրապես օգտվելու հնարավորությունից, ինչի արդյունքում սահմանափակվել է նրա՝ ինչպես ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածով և Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականության իրավունքը:

Վճռաբեկ բողոքի պարտախանում բերված փաստարկները նշված եզրահանգումների մասով հերքվում են վերոգրյալ պարճառարանություններով:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քանի որ Սուսաննա Բազիկյանը զրկվել է իր իրավունքներին առնչվող դատավարական գործընթացին մասնակցելու իրական հնարավորությունից, որն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից, նման խախտման պայմաններում հնարավոր չէ գնահատել վճռաբեկ բողոքի հիմնավորվածությունը մյուս հիմքերով: Ուստի սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության՝ ապահովելու համար Սուսաննա Բազիկյանի իրավունքների արդյունավետ իրացումը:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի 02.02.2017 թվականի որոշումը բեկանելու և գործը՝ Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի ներկայացրած՝ Արմեն Հակոբյանի վարկային պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող, Բանկում գրավադրված՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Շուշանիկ Ղազարյանին վաճառ-

ոել թույլատրելու և նշված բնակարանի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքները և սահմանափակումները վերացնելու մասին միջնորդությունը քննարկելու մասով, նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ՀՀ դատական օրենսգիրքը սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 20-րդ մասի հիմքով 01.01.2019 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ սնանկության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել ՀՀ սնանկության դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.02.2017 թվականի որոշումը և գործը՝ Արմեն Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի ներկայացրած՝ Արմեն Հակոբյանի վարկային պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գրավադրված՝ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2 շենքի թիվ 230 բնակարանը 110.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Շուշանիկ Ղազարյանին վաճառել թույլատրելու և նշված բնակարանի նկատմամբ կիրառված բոլոր արգելանքները և սահմանափակումները վերացնելու մասին միջնորդությունը քննարկելու մասով, ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ ԵԱԲԴ/0058/04/16

2019թ.

Մասնկության գործ թիվ ԵԱԲԴ/0058/04/16
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ա. Սմբատյան
Հ. Ենոքյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

2019 թվականի հունիսի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Կրիտասան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Մելինե Համբարձումյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.01.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության դիմումի՝ «Տորգտրանս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Կազմակերպություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունը ճանաչել սնանկ: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.04.2016 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.07.2016 թվականի որոշմամբ հաստատվել է Կազմակերպության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը:

«Յունիբանկ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) և «Գուդոենտ» ՍՊԸ-ն 22.06.2017 թվականին միջնորդություններ են ներկայացրել դատարան՝ Երևանի Անդրանիկի թիվ 73/1 հասցեում գտնվող առևտրի սրահը պարտապանի գույքի կազմից հանելու պահանջի մասին:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Դանիելյան) (այսուհետ՝ Դատարան) 15.09.2017 թվականի որոշմամբ Բանկի և «Գուդոնետ» ՍՊԸ-ի միջնորդությունները մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.01.2018 թվականի որոշմամբ Բանկի և «Գուդոնետ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 15.09.2017 թվականի «Պարտապանի գույքի կազմից գույքը հանելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը բեկանվել և փոփոխվել է՝ Բանկի և «Գուդոնետ» ՍՊԸ-ի միջնորդությունները՝ Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 73/1 հասցեում գտնվող առևտրի սրահը պարտապան Կազմակերպության գույքի կազմից հանելու մասին, բավարարվել են, և Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 73/1 հասցեում գտնվող առևտրի սրահը հանվել է պարտապան Կազմակերպության գույքի կազմից:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Բանկը և «Գուդոնետ» ՍՊԸ-ն:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին կետը, 449-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հարկադիր կատարող Վ. Բարսեղյանը 23.11.2015 թվականին, հաշվի չառնելով դեռևս 11.09.2015 թվականին հարկային մարմնի կողմից կիրառված արգելանքը, կազմակերպել է աճուրդ, որում «Գուդոնետ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող: Աճուրդով իրացվել է այնպիսի գույք, որի տնօրինումն արգելված է եղել ՀՀ ֆինանսների նախարարության 11.09.2015 թվականի թիվ 031003 որոշմամբ: Հետևաբար գույքը չէր կարող իրացվել առանց դրանց վրա կիրառված սահմանափակումների վերացման, և հենց այդ է պատճառը, որ առ այսօր ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հրաժարվում է գրանցել «Գուդոնետ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է միայն պետական գրանցման պահից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ բողոք բերած անձինք վերաքննիչ բողոքների օրինակները չեն ուղարկել գործին մասնակցող անձ դիմումատու Ընկերությանը՝ գրկելով վերջինիս վերաքննիչ բողոքների վերաբերյալ դիրքորոշում հայտնելու և առարկելու իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.01.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 15.09.2017 թվականի «Պարտապանի գույքի կազմից գույքը հանելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը:

2.1 Բանկի և «Գուդոնետ» ՍՊԸ-ի ներկայացրած վճռաբեկ բողոքի պատասխանների հիմնավորումները

Բանկի և «Գուդոնետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են վճռաբեկ բողոքի՝ ըստ էության

նույնարժեքի պատասխաններ հետևյալի մասին.

Վճռաբեկ բողոքում չի նշվել Վերաքննիչ դատարանի թույլ տված որևէ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի պատճեններն ուղարկելուն, ապա «Գուդոենտ» ՍՊԸ-ի և Բանկի կողմից վերաքննիչ բողոքների պատճենները պատշաճ կարգով ուղարկվել են Ընկերությանը, իսկ վերջինս, չարաշահելով իր դատավարական իրավունքները, անհիմն ձգձգում է դատական գործընթացը: Բացի այդ, անգամ վերաքննիչ բողոքը չստանալու պարագայում էլ Ընկերությունը Վերաքննիչ դատարանի կողմից ևս պատշաճ ծանուցվել է և, հետևաբար, հնարավորություն ունի ծանոթանալու գործի նյութերին, վերաքննիչ բողոքին և ներկայացնելու վերաքննիչ բողոքի պատասխան:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ-ի՝ ի դեմս Ծառայության հարկադիր կատարող Վահագն Բարսեղյանի (վաճառող), և «Գուդոենտ» ՍՊԸ-ի՝ ի դեմս տնօրեն Լևոն Գասպարյանի (գնորդ), մինչև 27.11.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ վաճառողը՝ Ծառայության հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին 23.11.2015 թվականի թիվ 0103fbc006526/14-15/01 արձանագրության (լոտի կոդը՝ 235741) հիման վրա վաճառել, իսկ գնորդը գնել է ք.Երևան Անդրանիկի փողոցի թիվ 73/1 հասցեում գտնվող անշարժ գույքը: Պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ նշված անշարժ գույքը վաճառվել է 216.272.500 ՀՀ դրամով, և պայմանագրի կնքման պահին ամբողջ գումարը վճարվել է գնորդի կողմից: Պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ նշված անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Կազմակերպությանը՝ համաձայն Կոմիտեի կողմից տրված 08.08.2013 թվականի թիվ 08082013-01-0189 վկայականի: Պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման (**հավելված, հատոր 4-րդ, գ.թ. 7**):

2) Կոմիտեի 18.01.2016 թվականի թիվ Մ-13/01/2016-1-0284 և 16.02.2016 թվականի թիվ Մ-11/02/2016-1-0089 որոշումների համաձայն՝ «Գուդոենտ» ՍՊԸ-ի տնօրեն Լևոն Գասպարյանի դիմումը՝ Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 73/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ «Գուդոենտ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու վերաբերյալ, մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Ծառայության 28.10.2014 թվականի, 10.01.2015 թվականի, 29.07.2015 թվականի, 24.12.2015 թվականի որոշումներով արգելանք է դրվել նշված գույքի սեփականատեր Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա (**հավելված, հատոր 4-րդ, գ.թ. 5-6**):

3) 03.10.2017 թվականի թիվ RR248622469AM փոստային անդորրագրի համաձայն՝ Բանկը վերաքննիչ բողոքի օրինակն Ընկերությանն ուղարկել է «Երևան Խուղյակով 1/2 20» հասցեով, որը, ըստ գործի նյութերի, Ընկերության ծանուցման հասցեն է (**հավելված, հատոր 4-րդ, գ.թ. 68-69, 89**):

4) 03.10.2017 թվականի թիվ RR248622353AM փոստային անդորրագրի համաձայն՝ «Գուդոենտ» ՍՊԸ-ն վերաքննիչ բողոքի օրինակն Ընկերությանն ուղարկել է «Երևան Խուղյակով 1/2 20» հասցեով, որը, ըստ գործի նյութերի, Ընկերության ծանուցման հասցեն է (**հավելված, հատոր 4-րդ, գ.թ. 68-69, 131**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունե-

լը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար, քանի որ տվյալ դեպքում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմից գույքը հանելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իրավունքի պետական գրանցում պահանջող գործարքով իրավունքի պետական գրանցման պահանջը չպահպանելու հետևանքների սնանկության վարույթում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր կառավարչի կամ պարտատիրոջ միջնորդությամբ դատարանի որոշմամբ կարող է կիրառվել պարտապանի կամ նրա տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման ցանկացած անհրաժեշտ սահմանափակում, եթե դրանց չկիրառման արդյունքում **կարող է էապես նվազել պարտապանի գույքը**: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումն ստանալու պահից դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը կասեցնում է պարտապանի գույքի բռնագանձման վերաբերյալ բոլոր կատարողական վարույթները:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանն արգելանք է դնում պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա (...):

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովված են համարվում գրավով (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող գույքի գրավով), երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված պահանջներ ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման (այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու) հաշվին: Այդ դեպքում պարտատերը, անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետա-

գայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մորատորիում չտարածելու մասին դատարանին չծանուցած գրավով ապահովված պարտատերն ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցանկում և իր ապահովված պահանջների բավարարումն ստանում է նույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պարտատերերի ցանկում ընդգրկված գրավով ապահովված պարտատերը կարող է պահանջել իր՝ գրավով ապահովված պարտավորությունը առաջնահերթ կերպով բավարարել գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի **գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք**, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: **Ի ապահովումն պարտապանի՝ նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված իրավունքով պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար ապահովված իրավունքի առարկան (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում**, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում նույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտապանին պատկանող **գույքի տնօրինումը նրա լուծարման մասին որոշում կայացնելուց հետո** իրականացնում է կառավարիչը՝ նույն օրենքով սահմանված կարգով: Պարտապանի ղեկավարը լուծարումից հետո գրկվում է գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքներից:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառվում է պարտապանին պատկանող ցանկացած գույք՝ բացառությամբ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած ապահովված իրավունքով պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար ապահովված իրավունքի առարկայի: Այլ կերպ ասած՝ ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարումն ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն **միայն այն դեպքում, երբ տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու վերաբերյալ՝ ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին**: Այսինքն՝ օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռելով ապահովված պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարումը գրավադրված գույքի հաշվին՝ շրջանցելով սնանկության գործով վարույթը, միաժամանակ սահմանել է այն պարտադիր պայմանը, որի պահպանման դեպքում միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը կարող է գործել: Նշված պայմանի չպահպանման դեպքում գրավադրված գույքը նույնպես ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում, և ապահովված պարտատերը դրանից բավարարում կարող է ստանալ բացառապես սնանկության վարույթի շրջանակներում ընդգրկվելով պարտատերերի ցանկում:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանի գույքի և դրա-

մական միջոցների վրա կիրառվում են սահմանափակումներ՝ պարտատերերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով: Այդ սահմանափակումներն **առաջնահերթ ուղղված են պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն**: Տվյալ սահմանափակումները կարող են վերացվել միայն սնանկության գործի շրջանակներում պարտապանին սեփականության իրավունքով պատկանող կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում գույքի իրացման նպատակով՝ պարտատերերի պահանջների կատարումն ապահովելու համար:

Հետևաբար «Մանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սնանկ ճանաչված **անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը** պարտապանի գույքի կազմից հանել հնարավոր է, **եթե գույքը գրավի առարկա է**, և պարտատերը դատարանին ծանուցել է տվյալ գույքի նկատմամբ մոբատորիում չտարածելու մասին: Ուստիև պարտապանին պատկանող այլ գույք չի կարող հանվել պարտապանի գույքի կազմից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ-ի՝ ի դեմս Ծառայության հարկադիր կատարող Վահագն Բարսեղյանի, և «Գուդոնետ» ՍՊԸ-ի միջև 27.11.2015 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով Ծառայությունը վաճառել, իսկ «Գուդոնետ» ՍՊԸ-ն գնել է Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 73/1 հասցեում գտնվող անշարժ գույքը: Կոմիտեի 18.01.2016 թվականի և 16.02.2016 թվականի որոշումների համաձայն՝ «Գուդոնետ» ՍՊԸ-ի տնօրենի դիմումը՝ Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 73/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մասին, մերժվել է գույքի նկատմամբ արգելանք առկա լինելու հիմքով:

Բանկը և «Գուդոնետ» ՍՊԸ-ն 22.06.2017 թվականին միջնորդություններ են ներկայացրել Դատարան՝ Երևանի Անդրանիկի թիվ 73/1 հասցեում գտնվող առևտրի սրահը պարտապանի գույքի կազմից հանելու պահանջի մասին:

Դատարանը, մերժելով միջնորդությունները, պատճառաբանել է, որ վիճելի գույքի նկատմամբ դեռևս գրանցված է պարտապան Կազմակերպության սեփականության իրավունքը, ուստի գույքն ընդգրկված է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում: Պարտապանի գույքի կազմում ընդգրկվում է պարտապանին պատկանող ցանկացած գույք, և տվյալ դեպքում դատարանը լիազորություն չունի որևէ գույք ներառելու այդ կազմում կամ հանելու դրանից:

Վերաքննիչ դատարանը բողոքը բավարարել է՝ պատճառաբանելով, որ գործարքի արդյունքում «Գուդոնետ» ՍՊԸ-ն ձեռք է բերել վիճելի գույքի նկատմամբ սեփականության իրավունք, քանի որ կողմերը կատարել են գործարքով վերապահված գործողությունները և փաստացի ձեռք են բերել գործարքով նախատեսված ակնկալիքը: Ուստի վիճելի՝ Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 73/1 հասցեում գտնվող անշարժ գույքը չէր կարող ընդգրկվել պարտապանի գույքի կազմի մեջ: Միաժամանակ ընդգծել է նաև, որ Կազմակերպությունը սնանկ է ճանաչվել Դատարանի 28.04.2016 թվականի վճռով: Վիճելի անշարժ գույքն էլեկտրոնային աճուրդով իրացվել է 23.11.2015 թվականին, իսկ առուվաճառքի պայմանագիրը կնքվել է 27.11.2015 թվականին: Այսինքն՝ նախքան պարտապանին սնանկ ճանաչելը վիճելի գույքն արդեն իսկ դուրս է եկել Կազմակերպության տիրապետումից: Հետևաբար այն ի սկզբանե չէր կարող ներառվել պարտապանի գույքի կազմում:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականու-

թյան իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

Վերոգրյալ իրավական նորմերի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ-ի՝ ի դեմս Ծառայության հարկադիր կատարող Վահագն Բարսեղյանի, և «Գուդոենտ» ՍՊԸ-ի միջև 27.11.2015 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը չի ստացել պետական գրանցում, ուստի «Գուդոենտ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը չի ծագել անշարժ գույքի նկատմամբ: Դատարանի կողմից Կազմակերպությանը սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելու պահին տվյալ հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցված է եղել Կազմակերպության սեփականության իրավունքը, հետևաբար «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Կազմակերպությանը սնանկ ճանաչելուց հետո պատկանող՝ Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 73/1 հասցեում գտնվող անշարժ գույքը ներառվել է պարտապանի գույքի կազմում: Նկատի ունենալով, որ նշված գույքը պատկանում է Կազմակերպությանը, և «Գուդոենտ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը չի ծագել դրա նկատմամբ, այն չէր կարող հանվել պարտապանի գույքի կազմից: Հետևաբար վճռաբեկ բողոքի նշված հիմքը հիմնավոր է:

Վճռաբեկ բողոքների պատասխաններում քերված փաստարկները նշված եզրահանգումների մասով հերքվում են վերոգրյալ պարզառարանություններով:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի մյուս փաստարկին այն մասին, որ Ընկերությանը չեն ուղարկվել վերաքննիչ բողոքների պատճենները, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործում առկա փոստային անդորրագրերով հիմնավորվում է Բանկի և «Գուդոենտ» ՍՊԸ-ի կողմից Ընկերությանը բողոքների պատճեններն ուղարկելու հանգամանքը, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում բողոքի նշված փաստարկը՝ միաժամանակ հիմնավոր համարելով այս մասով վճռաբեկ բողոքների պատասխանների փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով ան-

հրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.01.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.09.2017 թվականի «Պարտապանի գույքի կազմից գույքը հանելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Մասնկության գործ թիվ
Նախագահող դատավոր՝

Մասնկության գործ թիվ ԵԱԲԴ/0119/04/17
2019թ.
ԵԱԲԴ/0119/04/17
Գ. Խանդանյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հուլիսի 25-ին
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝
Կոմիտե) ներկայացուցիչ Արման Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղա-
քացիական դատարանի 25.06.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի «Արդշինբանկ»
ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)
սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ:
Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ընդհանուր իրավասության
դատարանի 01.12.2017 թվականի վճռով Բանկի դիմումը բավարարվել է:
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիայան)
(այսուհետ՝ Դատարան) 05.03.2018 թվականի որոշմամբ սնանկ ճանաչված Ընկերության
նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ Դատարան)
25.06.2018 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի
05.03.2018 թվականի «Ընկերության նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին» որոշու-
մը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 70-րդ հոդվածի 1-ին մասը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը լուծարման վարույթ սկսելու մասին որոշում կայացնելիս հաշվի չի առել, որ դեռևս 21.02.2018 թվականի որոշմամբ բավարարել է Կոմիտեի միջնորդությունը՝ ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնելու մասին: Արդյունքում Դատարանը չի ապահովել Կոմիտեի կողմից այդ որոշման կատարման հնարավորությունը: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ լուծարման վարույթ սկսելու որոշման կայացումից հետո այլևս ստուգում իրականացվել չէր կարող: Փաստորեն, Դատարանը նախ թույլատրել է Կոմիտեին իրականացնել ստուգում, այնուհետև կայացրել է լուծարման վարույթ սկսելու մասին որոշում՝ անտեսելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության պահանջը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, եզրահանգելով, որ Դատարանը լուծարային վարույթ սկսելու իրավունք ունի առանց ժամկետային սահմանափակման, այդ հայեցողական լիազորությանը, ըստ էության, վերագրել է բացարձակ բնույթ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.06.2018 թվականի որոշումը և այն փոփոխել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 31.01.2018 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը (**գործի հավելված, գ.թ. 30-31**):

2. 21.02.2018 թվականի «Պարտապանի մոտ ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնելու մասին» որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով Կոմիտեի՝ պարտապան Ընկերությունում ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմիններին վերապահված իրավասության սահմաններում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ճշտության ստուգում իրականացնելու վերաբերյալ միջնորդությունը, գտել է, որ Ընկերությունն ընդգրկված է հարկային մարմնի կողմից իրականացվելիք ստուգումների ծրագրում և անհրաժեշտ է կատարել պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Նշված հիմնավորմամբ բավարարվել է Կոմիտեի ներկայացրած միջնորդությունը և թույլատրվել է Կոմիտեին՝ Ընկերությունում իրականացնել ուսումնասիրություն կամ ստուգում (**գործի հավելված, գ.թ. 33-34**):

3. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 21.02.2018 թվականի «Պարտապանի մոտ ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնելու մասին» որոշումը Կոմիտեին ուղարկելու համար փոստային ծառայությանն է հանձնվել 23.04.2018 թվականին և նույն օրը ստացվել է Կոմիտեում (**գործի հավելված, գ.թ. 36**):

4. Դատարանի 05.03.2018 թվականի որոշմամբ կասեցվել է Ընկերության գործունեու-

թյունը, գույքը կառավարելու և տնօրինելու պարտապանի բոլոր իրավունքները (**գործի հավելված, գ.թ. 40-41**):

4. Վճռարեկ դատարանի պայմանադրությունները և եզրահանգումները

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից բողոքարկվող դատական ակտը կայացնելիս թույլ է տրվել «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռարեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ պարտապանի մուր սրուզում կամ ուսումնասիրություն իրականացնելու թույլտվության մասին դեռևս չկատարված որոշման առկայության պայմաններում պարտապանի լուծարման վարույթ սկսելու իրավական հնարավորության հարցին:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: (...) Պարտապանի լուծարման գործընթացը սկսվելուց հետո ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելն արգելվում է, բացառությամբ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության և հանդիպակաց ուսումնասիրությունների:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու, ներկայացված ծրագրի հաստատումը մերժվելու, ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվելու, ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժվելու դեպքում դատարանը որոշում է կայացնում պար-

տապան իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթ սկսելու մասին (այսուհետ՝ պարտապանի լուծարում): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտապանին լուծարելու մասին որոշման հրապարակումից հետո կատարարիչը նույն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պարտապանի գույքի վաճառքը:

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերոգրյալ նորմերի լույսի ներքո մեկնաբանելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վկայակոչված կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ցանկացած դատական ակտ (այդ թվում՝ սնանկության վարույթում կայացված), որը մտել է օրինական ուժի մեջ, ձեռք է բերում պարտադիրության հատկանիշ: Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) բազմիցս արձանագրել է, որ ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս (*յրե'ս, օրինակ, Burdov v. Russia գործով Եվրոպական դատարանի 04.09.2002 թվականի վճիռը, կետ 34*):

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկության վարույթում կայացված և կատարում ենթադրող դատական ակտերը նույնպես ենթակա են կատարման, հակառակ պարագայում դատական ակտի կայացումը կկրի ձևական բնույթ: Ընդ որում, եթե դատական ակտի կատարման հնարավորությունը պայմանավորված է դատարանի որևէ հայեցողական լիազորության կիրառմամբ, ապա այդ լիազորությունը պետք է կիրառվի այնպես, որ չբացառվի դատական ակտը ողջամիտ ժամկետներում փաստացի կատարելու հնարավորությունը (*դատարանի հայեցողական լիազորության կիրառման պայմանների մասին յրե'ս, օրինակ, Ալբերտ Հակոբյանն ընդդեմ «Դավիթ Երթուղային Տարախ» ՓԲԸ-ի թիվ 3-346(ՏԴ) ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի որոշումը*):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացվում է դատարանի որոշմամբ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո մինչև պարտապանի լուծարման գործընթացը սկսվելը (բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի): Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը կոնկրետ ժամկետային սահմանափակում չի նախատեսել պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելու թույլտվություն տալու համար: Այդուհանդերձ, նման կարգավորումը չի կարող մեկնաբանվել որպես դատարանի բացարձակ հայեցողություն: Դատարանը, թույլատրելով իրականացնել պարտապանի գործունեության ստուգում կամ ուսումնասիրություն, իր կայացրած որոշման կատարման հնարավորության ապահովման նպատակով պետք է պարտապանի լուծարման գործընթաց չսկսի այնքան ժամանակ, քանի դեռ ողջամիտ ժամկետում իր կայացրած դատական ակտի կատարման հնարավորություն չի ընձեռել դատական ակտի հասցեատիրոջը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 01.12.2017 թվականի վճռով ճանաչվել է սնանկ: 21.02.2018 թվականի «Պարտապանի մոտ ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնելու մասին» որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը թույլատրել է Կոմիտեին՝ Ընկերությունում իրականացնել ուսումնասիրություն կամ ստուգում: Նշված որոշումը Կոմիտեին ուղարկելու համար փոստային ծառայությանն է հանձնվել 23.04.2018 թվականին և նույն օրը ստացվել է Կոմիտեում: Դատարանի 05.03.2018 թվականի որոշմամբ Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ չնայած այն հանգամանքին, որ սնանկ ճանաչված Ընկերությունում ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնելու թույլտվության վերաբերյալ որոշումն ուշ ուղարկելու պատճառով Կոմիտեն գործնականում զրկվել է այդ որոշմամբ նախատեսված իր իրավունքն իրացնելու հնարավորությունից, սակայն Կոմիտեն բավականաչափ հետևողական մոտեցում չի ցուցաբերել ներկայացրած միջնորդության արդյունքների նկատմամբ, ինչի հետևանքով առաջացել է որոշման կատարման անհնարինություն: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի 05.03.2018 թվականի որոշումը կայացվել է բացառապես օրենքի շրջանակներում, և Դատարանը նշված որոշմամբ դատական սխալ թույլ չի տվել:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է Դատարանի կողմից իր իսկ կայացրած որոշման կատարման հնարավորությունը որոշման հասցեատիրոջ համար սահմանափակելու հանգամանքը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը 21.02.2018 թվականի որոշմամբ Կոմիտեի միջնորդությունը բավարարել է, այնուհետև 05.03.2018 թվականի որոշմամբ Ընկերության նկատմամբ սկսել է լուծարման վարույթ, դրանից հետո միայն 21.02.2018 թվականի որոշումը հասանելի է դարձել Կոմիտեին, այն է՝ Կոմիտեն 21.02.2018 թվականի որոշումը ստացել է 23.04.2018 թվականին, երբ արդեն իսկ օրենսդրական կարգավորումների հիման վրա սպառվել էր 21.02.2018 թվականի որոշման կատարման հնարավորությունը՝ ընդ որում Կոմիտեի կամքից անկախ: Այլ կերպ ասած, 05.03.2018 թվականի որոշումը կայացնելիս Դատարանն անտեսել է, որ կայացնելով Ընկերության լուծարման վարույթ սկսելու մասին որոշում՝ Դատարանը բացառում է 21.02.2018 թվականի որոշման կատարման հնարավորությունը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է վերոգրյալ հանգամանքները և փաստորեն Դատարանի կողմից լուծարային վարույթ սկսելու լիազորության կիրառման հայեցողությանը վերագրել է բացարձակ բնույթ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեի բողոքը հիմնավոր է, քանի որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված խախտումը խաթարել է արդարադատության բուն էությունը՝ նկատի ունենալով, որ Կոմիտեի կողմից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 21.02.2018 թվականի «Պարտապանի մոտ ուսումնասիրություն կամ ստուգում իրականացնելու մասին» որոշումը ստացված չլինելու և այս որոշումը կատարելու հնարավորություն չունենալու պայմաններում Դատարանը սնանկ ճանաչված Ընկերության նկատմամբ սկսել է լուծարման վարույթ՝ բացառելով 21.02.2018 թվականի դատական ակտի կատարման հնարավորությունը և արդյունքում խախտելով դատական ակտի պարտադիրության հատկանիշը, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի 25.06.2018 թվականի որոշումը բեկանելու և գործը՝ Ընկերության նկատմամբ լուծարման վարույթ սկսելու հարցի քննարկման մասով, նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 20-րդ մասի հիմքով 01.01.2019 թվականից

Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ սնանկության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել ՀՀ սնանկության դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.06.2018 թվականի որոշումը և գործը՝ «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու հարցի քննարկման մասով, ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ **ԵՇԴ/0111/04/16**

2019թ.

Մասնկության գործ թիվ **ԵՇԴ/0111/04/16**
Նախագահող դատավոր՝ **Ա. Հունանյան**
Դատավորներ՝ **Ա. Մկրտչյան**
Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 02-ին
գրավոր ընթացակարգով քննելով «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառա-
վարիչ Անդրանիկ Ելիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարա-
նի 25.04.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի «Պայթարդ» ՍՊԸ-ի ընդդեմ «Շեն Հոլ-
դինգ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ «Պայթարդ» ՍՊԸ-ն պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ:
Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի
29.08.2016 թվականի վճռով «Պայթարդ» ՍՊԸ-ի դիմումը բավարարվել է:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի
02.09.2017 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Անդրանիկ
Ելիսյանը:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (այ-
սուհետ՝ Դատարան) (դատավոր՝ Ա. Կուրանյան) 06.07.2017 թվականի որոշմամբ հաստատ-

վել է Ընկերության սնանկության գործով գույքի վաճառքի ծրագիրը:

Դատարանի 14.07.2017 թվականի որոշմամբ թույլատրվել է Ընկերության սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանին հրապարակային սակարկություններով վաճառել Ընկերության պարտավորությունների կատարման համար գրավադրված, ինչպես նաև գրավի առարկա չհանդիսացող անշարժ և շարժական գույքերը (բացառությամբ 6-րդ լոտի):

Դատարանի 17.07.2017 թվականի որոշմամբ մերժվել են Ընկերության սնանկության գործով պարտատերեր «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի» և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչների կողմից սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի գործողությունների դեմ բերված բողոքները:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2018 թվականի որոշմամբ «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի» և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 06.07.2017 թվականի «Ընկերության սնանկության գործով գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու մասին», 14.07.2017 թվականի «Ընկերության սնանկության գործով գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու թույլտվություն տալու մասին», 17.07.2017 թվականի «ԵՇԴ/0111/04/16 սնանկության գործով կառավարչի գործողությունների դեմ պարտատերերի կողմից բերված բողոքները քննության առնելու մասին» որոշումները վերացվել են, և սնանկության գործն այդ հարցերի մասով ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասը և 76-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

«Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի այն պնդումը, որ կառավարիչը ժողովին չի ներկայացրել 12 լոտով գույքն աճուրդի ներկայացնելու առաջարկ, չի համապատասխանում իրականությանը: Իրականում Ընկերության սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանն այդ առաջարկը ներկայացրել է ժողովի քննարկման արդյունքում և առավելագույնս պահպանել է բոլոր պարտատերերի շահերը՝ հաշվի առնելով գույքերի նշանակությունն ու վաճառքի առանձնահատկությունները, այդ թվում՝ դրանք լուծելու միավորելու նպատակահարմարությունը:

Բողոքաբերը 2017 թվականի ապրիլ ամսից պարտատերերի ժողովին ներկայացրել է վաճառքի նախատեսվող գույքերը, դրանց գնահատված գները և լոտավորումը: Մի քանի ժողովների ընթացքում քննարկվել են թե՛ գները, թե՛ լոտավորման (ըստ տեսակների գույքի խմբավորման) հարցերը: 30.06.2017 թվականին ժողովի ընթացքում Ընկերության սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանը ներկայացրել է առաջարկ՝ լոտերը պարտապանի գույքի կազմում ընդգրկված տարբեր գույքի տեսակների առանձնահատկությունների

հաշվառմամբ կազմելու մասին, որի վերաբերյալ մասնակիցները հրաժարվել են քվեարկել՝ առաջարկելով ժողովն անցկացնել հուլիսի 14-ին: Նման պայմաններում ակնհայտ է, որ արհեստականորեն հարցի քննարկումը ձգձգվել է, և որ անհնար է եղել ողջամիտ ժամկետում ժողովի կողմից համապատասխան որոշում ընդունելը, ինչը հիմք է հանդիսացել վաճառքի ծրագիրը Դատարանի հաստատմանը ներկայացնելու համար:

Ինչ վերաբերում է պահանջի իրավունքը որպես վաճառքի ենթակա գույք ներկայացնելու խնդրին, ապա Ընկերության դեբիտորական պարտքերը նույնպես ներկայացվել են պարտատերերին, սակայն վաճառքի ծրագրում չեն ներառվել, քանի որ հայտնի չի եղել, թե այս կամ այն պահանջն արդյոք ենթակա է վաճառքի, թե դատական կամ արտադատական կարգով հնարավոր է պարտապաններից ստանալ պարտքի գումարները: Այսինքն՝ անհիմն է նաև ամբողջ գույքը չներառելու խախտման մասին արված հետևությունը:

Հրապարակային սակարկություններով գույքի վաճառքը թույլատրելու միջնորդությունը կառավարիչը հրապարակել է 03.07.2017 թվականին, և թեև միջնորդությունը Դատարանին ներկայացվել է հաջորդ օրը, սակայն պարտատերերից ոչ մեկը չի գրկվել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հնարավորությունից, քանի որ Դատարանն օրենքով սահմանված յոթնօրյա ժամկետի հաշվարկը կատարել է 07.07.2017 թվականից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ վերաքննիչ բողոքները մերժել»:

2.1 Վճարել բողոքի պարտախանի հիմնավորումները.

Մասնկության գործով կառավարիչը 03.07.2017 թվականին azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրել է հայտարարություն՝ Ընկերության գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը թույլատրելու վերաբերյալ դատարան միջնորդություն ներկայացնելու մասին՝ հայտարարության մեջ նշելով, որ 04.07.2017 թվականին գույքը վաճառելու միջնորդություն է ներկայացնելու Դատարան: Այսինքն՝ սնանկության գործով կառավարիչը չի պահպանել պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իր միջնորդությունը Դատարան ներկայացնելու վերաբերյալ պարտատերերին տեղեկացնելու եռօրյա ժամկետը: Նշված միջնորդությանը կցել է այլ վաճառքի ծրագիր, որով նախատեսվել է պարտապանի գույքի հրապարակային սակարկություններով վաճառքն իրականացնել 12 առանձին լոտերով, ինչը կառավարչի կողմից չէր ներկայացվել պարտատերերի ժողովի հաստատմանը: Մասնկության գործով կառավարչի կողմից Դատարանին ներկայացված վաճառքի ծրագիրը չի պարունակել պարտապանի ամբողջ գույքի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Դատարանի 26.12.2016 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը (**հավելված, հատոր 1-ին, գ.թ. 9-13**):

2) Դատարանի 09.02.2017 թվականի որոշմամբ Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ: Նույն թվականի մեկ այլ որոշմամբ կասեցվել է Ընկերության գործունեությունը (**հավելված, հատոր 1-ին, գ.թ. 14, 15**):

3) 24.03.2017 թվականին հրավիրված պարտատերերի ժողովը հետաձգվել է «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի ներկայացուցչի առաջարկով՝ քն-

նարկելու համար գույքերն ամբողջությամբ կամ մաս-մաս գնահատելու և վաճառելու հարցը **(հավելված, հատոր 1-ին, գ.թ. 19-20):**

4) 05.04.2017 թվականին հրավիրված պարտատերերի ժողովը հետաձգվել է այն հիմքով, որ ժողովին ներկա մասնակիցներն առաջարկել են «գնահատման աշխատանքներն Ընկերությունում շարունակել և հասցնել ամբողջական գնահատման, բացի արտադրության հետ կապ չունեցող պահեստում և խանութում գտնվող ապրանքներից, այնուհետև ներկայացնել քննարկման» աճուրդի ծրագրի հաստատման համար և սահմանել գնահատման ժամկետ մինչև նույն թվականի հունիսի 15-ը» **(հավելված, հատոր 1-ին, գ.թ. 24-25):**

5) 19.06.2017 թվականին հրավիրված պարտատերերի ժողովը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցչի առաջարկով հետաձգվել է այն հիմքով, որ «նյութերը պետք է ներկայացվեն բանկի ղեկավարությանը և նոր քվեարկվի»: Առաջարկության հետ համաձայնվել են նաև մյուս բանկերի ներկայացուցիչները **(հավելված, հատոր 1-ին, գ.թ. 26):**

6) 30.06.2017 թվականին հրավիրված պարտատերերի ժողովը հետաձգվել է, քանի որ բանկերն առաջարկել են ամբողջ գույքը մեկ լոտի մեջ ընդգրկել: Լոտերը հնարավորինս մեկ լոտի մեջ խմբավորելու առաջարկն ընդունվել է, սակայն որոշվել է ժողովը հետաձգել մինչև 04.07.2017 թվականը, այնուհետև՝ 14.07.2017 թվականը, քանի որ «պետք է ներկայացնեն բանկերի ղեկավարներին ծրագրերը» **(հավելված, հատոր 1-ին, գ.թ. 28-29):**

7) Ընկերության սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանը 04.07.2017 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ խնդրելով հաստատել սնանկության գործով գույքի վաճառքի ծրագիրը՝ նշելով, որ 30.06.2017 թվականին անցկացված ժողովի արդյունքում վաճառքի ծրագրի վերաբերյալ որոշում չի ընդունվել և առաջարկվել է ժողովը շարունակել 14.07.2017 թվականին գույքը մեկ լոտով աճուրդի ներկայացնելու հարցը հերթական անգամ քննարկելու համար:

Սնանկության գործով կառավարիչը, որպես միջնորդության հիմնավորում, նշել է, որ ստեղծված իրավիճակում վաճառքի ծրագիրն անորոշ ժամանակով ձգձգվում է՝ ավելացնելով նաև, որ հաշվի առնելով գրավառու բանկերի առաջարկությունները՝ աճուրդային վաճառքը նախատեսվում է իրականացնել 12 լոտով: Վկայակոչելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասը՝ խնդրել է հաստատել սնանկության գործով գույքի վաճառքի ծրագիրը **(հավելված, հատոր 1-ին, գ.թ. 17-18):**

8) Ընկերության սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանը 04.07.2017 թվականին Դատարան ներկայացրած միջնորդությամբ միջնորդել է թույլատրել վաճառել Ընկերությանը պատկանող գրավադրված և գրավի առարկա չհանդիսացող գույքերը՝ կից ներկայացնելով 03.07.2017 թվականին Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում նշված միջնորդության մասին տեղադրված հայտարարության արտատպումը **(հավելված, հատոր 1-ին, գ.թ. 133-135):**

9) 13.07.2017 թվականին սնանկության գործով պարտատերեր «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչները բողոքարկել են սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի գործողությունները՝ մասնավորապես առարկելով վաճառքի ծրագիրն առանց պարտատերերի ժողովի քննարկման Դատարանի հաստատմանը ներկայացնելու և գույքի վաճառքը թույլատրելու մասին կառավարիչի միջնորդությունների դեմ՝ այդ թվում հայտնելով, որ ծրագիրը չի պարունակում գույքի հաշվեկշռային արժեքները, ինչպես նաև պարտապանի պահանջի իրավունքների և շրջանառու միջոցների վերաբերյալ տեղեկությունները: Ընդ որում, «Էյչ-Էս-

Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն նաև միջնորդել է վաղաժամկետ դադարեցնել Ընկերության սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի լիազորությունները (**հավելված, հատոր 1-ին, գ.թ. 140-145, հատոր 2-րդ, գ.թ. 49-52**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ սնանկության վարույթում պարտապանի գույքի վաճառքի ծրագիրն առանց պարտատերերի ժողովի կողմից որոշման կայացման դատարանի հաստատմանը ներկայացնելու, ինչպես նաև պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու միջնորդությունը քննարկելու հարցի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) ստորադաս դատարանների կողմից «Մանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասի և 76-րդ հոդվածի 1-ին մասի խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի գույքի վաճառքի ծրագիրը հասարակելու հարցին այն դեպքում, երբ նշված ծրագիրը պարտավորների ժողովում չի հասարակվել:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ պարտապանի գույքի վաճառքի միջնորդությունը դատարան ներկայացնելու և այդ միջնորդության դեմ պարտավորների կողմից առարկություն ներկայացնելու ընթացակարգին:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և դատարանի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով: Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ գույքի վաճառքի ծրագիրը պետք է ներառի պարտապանի ամբողջ գույքի, ներառյալ՝ պահանջի իրավունքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ (անվանումները, նկարագրությունը, քանակը, հաշվեկշռային արժեքը), վաճառքի նախատեսվող ձևը, նախնական գնահատված արժեքները՝ ըստ գույքի տեսակի: Գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից չհաստատվելու դեպքում կառավարիչն իրավունք ունի դիմելու դատարան և պահանջելու հաստատել գույքի վաճառքի ծրագիրը՝ կցելով պարտատերերի ժողովի կամ խորհրդի որոշումները կամ ժողովի կամ խորհրդի նիստի անցկացման անհնարինության հիմքերը: Ծրագրի փոփոխությունները կատարվում են ծրագրի ընդունման համար սահմանված կարգով:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իր միջնորդությունը կառավարիչը ներկայացնում է դատարան՝ այդ մասին երեք օր առաջ տեղեկացնելով պարտատերերին նույն օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կարգով: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, աճուրդի առաջարկվող

մեկնարկային գինը, աճուրդի անցկացման օրը: Միջնորդությանը կից ներկայացվում է գույքի գնահատման ակտը (անկախ գնահատողի կողմից գնահատված լինելու դեպքում եզրակացությունը): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն հրապարակային սակարկություններով պարտապանի գույքի վաճառքը թույլատրելու մասին կառավարչի միջնորդության դեմ յոթնօրյա ժամկետում գրավոր առարկություն ներկայացնելու դատարան և առաջարկելու աճուրդի ավելի բարձր մեկնարկային գին՝ գույքի վաճառքի իր կողմից առաջարկվող մեկնարկային գնի 5 տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ վճարելով սնանկության հատուկ հաշվին: Առարկությանը կցվում է դեպոզիտի վճարումը հավաստող փաստաթուղթը: Եթե առարկություն են ներկայացրել մեկից ավելի պարտատերեր, ապա հրապարակային սակարկություններով գույքի իրացումը թույլատրվում է առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարչի միջնորդությունն ստանալու ութերորդ օրը դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) գույքի վաճառքը թույլատրելու մասին՝ բավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն չի ներկայացրել դատարան.

բ) գույքի վաճառքը պարտատիրոջ առաջարկած գնով թույլատրելու մասին՝ չբավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն չի ներկայացրել դատարան.

գ) կառավարչի միջնորդությունը մերժելու մասին, եթե կառավարչի կողմից չեն պահպանվել նույն օրենքով սահմանված պահանջները:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ պարտապանի գույքի վաճառքն իրականացվում է հետևյալ գործողությունների հաջորդական պահպանմամբ.

1. կառավարիչը գույքագրում է պարտապանի գույքը, կազմում գույքի վաճառքի ծրագիրը և այն ներկայացնում պարտատերերի խորհրդի, իսկ դրա բացակայության դեպքում՝ ժողովի հաստատմանը,

2. գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից հաստատվելու, ինչպես նաև «Մանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված դեպքում կառավարիչը գույքի վաճառքի ծրագիրը ներկայացնում է դատարանի հաստատմանը,

3. գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իր միջնորդությունը կառավարիչը ներկայացնում է դատարան՝ այդ մասին երեք օր առաջ տեղեկացնելով պարտատերերին, որոնք յոթնօրյա ժամկետում կարող են ներկայացնել իրենց առարկությունները,

4. դատարանը որոշում է կայացնում ինչպես գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու, այնպես էլ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու միջնորդությունները բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:

Անդրադառնալով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասի կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է որոշակի բացառություններ, որոնց դեպքում գույքի վաճառքի ծրագիրը դատարանը կարող է հաստատել՝ անկախ պարտատերերի խորհրդի կամ ժողովի որոշումից: Այդ բացառություններն են՝

1. գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից հաստատված չլինելը, կամ

2. Ծրագրի հաստատման համար խորհրդի կամ ժողովի նիստերի անցկացման անհնարինությունը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ դեպքերի թվին է դասվում նաև պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից ծրագրի հաստատման համար որոշում կայացնելու անհնարինությունը՝ նկատի ունենալով, որ խորհրդի կամ ժողովի նիստերը կարող են հրավիրվել և անցկացվել՝ առանց դրանց ընթացքում որևէ որոշում կայացնելու: Նման դեպքերը նույնանուն են նիստերի անցկացման անհնարինության հետ՝ նկատի ունենալով, որ նիստի նպատակը որոշման կայացումն է, և եթե անհնար է որոշում կայացնել, ուստի նիստն էլ դառնում է իմաստագուրկ:

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ օրենսդիրը գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու որոշման կայացման անհնարինության դրսևորման կոնկրետ չափորոշիչներ չի նախատեսել, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ անհնարինության համատեքստում կարող է ներառվել ցանկացած օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառ, ինչը հնարավորություն չի տալիս խորհրդի կամ ժողովի կողմից հաստատելու կառավարչի ներկայացրած վաճառքի ծրագիրը (պարտատերերի միջև տարաձայնություններ, պարտատերերի անհամաձայնություն կառավարչի ծրագրին, որոշման կայացման քվորումի անբավարարություն, նիստերի բազմակի հետաձգումներ և այլն): Նկատի ունենալով, որ կառավարչի գործառնությունների նպատակը սնանկության վարույթում պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռումն է (*լրե՛ս, օրինակ, թիվ ԵՄԴ/0049/04/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*), օրենսդիրը նմանատիպ դեպքերի համար կառավարչին հնարավորություն է տվել չկաշկանդվել պարտատերերի դիրքորոշմամբ (կամքով) և պարտապանի գույքի վաճառքի ծրագրի հաստատումն իրականացնել ուղղակիորեն դատական կարգով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված կարգավորումն այն մասին, որ ծրագրի փոփոխությունները կատարվում են ծրագրի ընդունման համար սահմանված կարգով, թույլ է տալիս եզրակացնել, որ պարտապանի գույքի վաճառքի հաստատված ծրագիրը, անկախ նրանից, թե որ ընթացակարգով է հաստատվել, անվերապահորեն վերջնական փաստաթուղթ չէ և կարող է ենթարկվել փոփոխության: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանել այն դեպքերը, որոնք հիմք կարող են ծառայել հաստատված ծրագիրը փոփոխության ենթարկելու համար: Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծրագրի փոփոխությունը կարող է վերաբերել ինչպես վաճառքի մեջ ներառվող գույքի կազմին, քանակին, գնին և այլն, այնպես էլ ծրագրով նախատեսված ընթացակարգերին:

Բացի այդ, նկատի ունենալով, որ ծրագրի փոփոխման համար քննարկվող իրավական դրույթը սահմանել է նույն իրավակարգավորումը, ինչ նախատեսված է ծրագրի հաստատման համար, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ ծրագրի փոփոխությունը ենթակա է հաստատման պարտատերերի խորհրդի կամ ժողովի որոշմամբ, այնուհետև (այդ թվում՝ խորհրդի կամ ժողովի որոշման բացակայության դեպքում)՝ դատական կարգով: Հետևաբար եթե պարտապանի գույքի վաճառքի հաստատված ծրագրում բացակայում է գույքագրման ցանկում ներառված որևէ գույք, կամ ի հայտ է գալիս նախկինում չբացահայտված այլ գույք, ապա նման դեպքերի համար օրենսդիրը նախատեսել է ծրագրի փոփոխման ինստիտուտից օգտվելու իրավական հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև կառավարչի կողմից գույքը վաճառելու թույլտվության վերաբերյալ միջնորդության ժամկետներին:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ սնանկության կառավարչի համար օրենսդիրը սահմանել է պարտականություն՝ մինչև վաճառքի թույլտվության միջնորդությունը դատարանին ներկայացնելը երեք օր առաջ այդ մասին պարտատերերին տեղեկացնել: Պարտատերերի կողմից կառավարչի միջնորդության դեմ դատարանին առարկություններ ներկայացնելու համար սահմանելով յոթնօրյա ժամկետ՝ օրենսդիրը փաստորեն նպատակ է հետապնդել կառավարչի միջնորդության վերաբերյալ դիրքորոշում ձևավորելու և դրան համապատասխան վարքագիծ դրսևորելու համար պարտատերերի համար նախատեսել բավարար ժամանակահատված, որն ընդհանուր թվով պետք է կազմի տասն օր:

Ինչ վերաբերում է սահմանված ժամկետի ընթացքում պարտատերերի կողմից գույքի վաճառքի վերաբերյալ միջնորդության դեմ առարկություն ներկայացնելու ընթացակարգին, ապա «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ.

1. պարտատերերը կառավարչի կողմից վաճառքի թույլտվություն տալու միջնորդության վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առարկություններ,
2. այդ առարկությունները կարող են ներկայացնել դատարանի կողմից միջնորդության կապակցությամբ որոշման կայացմանը նախորդած յոթնօրյա ժամանակահատվածում,
3. առարկությունում պետք է ներկայացվեն առաջարկվող գույքի մեկնարկային գնից ավելի բարձր մեկնարկային գին,
4. պարտատերերը պետք է սնանկության հատուկ հաշվին վճարեն իրենց կողմից առաջարկվող մեկնարկային գնի 5 տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ:

Վերոգրյալ իրավական նորմի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը ոչ միայն սահմանել է վաճառքի թույլտվության միջնորդության դեմ բերված առարկության հստակ ժամանակահատված, այլև նախատեսել է, որ առարկությունը պետք է վերաբերի կոնկրետ գույքի վաճառքի մեկնարկային գնին: Նշված վավերապայմաններին չբավարարող առարկությունները չեն կարող սույն իրավանորմի իմաստով գնահատվել որպես վաճառքի թույլտվության վերաբերյալ ներկայացված միջնորդության դեմ բերված առարկություն և դատարանի կողմից այդ կապակցությամբ չի կարող կիրառվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի կանոնը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ սնանկության գործով կառավարիչը պարտատերերի ժողովի հաստատմանն է ներկայացրել պարտապանի գույքի վաճառքի ծրագիրը, որը լուտերի բաժանման հետ կապված առարկվել է պարտատերերի կողմից: Պարտատերերի առարկությունները հաշվի առնելով՝ սնանկության գործով կառավարիչը ներկայացրել է պարտապանի գույքի վաճառքի նոր ծրագիր, ըստ որի պարտապանի գույքը բաժանված է եղել 12 լուտի, որը կրկին առարկվել է պարտատերերի կողմից: Պարտատերերի կողմից ներկայացվել են գույքի վաճառքի այլ առաջարկներ, որոնք սնանկության գործով կառավարչի կարծիքով ըստ էության կարող էին դժվարացնել գույքի վաճառքը, ինչպես նաև դժվարություններ առաջացնել միջոցների հետագա բաշխման հարցում, քանի որ դրանց մի մասի համար անհրաժեշտ կլինեին պահանջել հատուկ թույլտվություն, բացի այդ, գույքերի մի մասը գրավադրված են եղել տարբեր գրավառուների մոտ: Արդյունքում անցկացվել են թվով երեք նիստեր, որոնց արդյունքում պարտապանի գույքի վաճառքի ծրագիրը ժողովի կողմից չի հաստատվել: Նման պայմաններում կառավարիչը, ղեկավարվելով «Մասնկության մասին»

ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասի իրավակարգավորմամբ, ծրագիրը ներկայացրել է Դատարանի հաստատմանը՝ նշելով, որ ստեղծված իրավիճակում վաճառքի ծրագիրն անորոշ ժամանակով ձգձգվում է: Միաժամանակ կառավարիչը 04.07.2017 թվականի միջնորդությանը միջնորդել է թույլատրել վաճառել Ընկերությանը պատկանող գրավադրված և գրավի առարկա չհանդիսացող գույքերը՝ ներկայացնելով 03.07.2017 թվականին Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքում նշված միջնորդության մասին տեղադրված հայտարարության պատճենը: 13.07.2017 թվականին սնանկության գործով պարտատերեր «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչները բողոքարկել են սնանկության գործով կառավարչի գործողությունները:

Դատարանը, 06.07.2017 թվականի որոշմամբ հաստատելով ծրագիրը, գտել է, որ այն ներկայացվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ինչպես նաև հաստատված է համարել, որ պարտատերերի ժողովներ են հրավիրվել 24.03.2017 թվականին, 05.04.2017 թվականին, 19.06.2017 թվականին և 30.06.2017 թվականին, սակայն վաճառքի ծրագիրն այդպես էլ չի հաստատվել:

14.07.2017 թվականի որոշմամբ թույլատրելով կառավարչին պարտապանի գույքը վաճառել հրապարակային սակարկություններով՝ Դատարանը փաստել է, որ կառավարիչը ծանուցումը հրապարակել է 03.07.2017 թվականին, իսկ միջնորդությունը ներկայացրել 04.07.2017 թվականին, ուստի Դատարանը պարտատերերի կողմից առարկություններ ներկայացնելու ժամկետը հաշվարկում է 07.07.2017 թվականից: Դատարանն արձանագրել է, որ «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից չեն պահպանվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի պահանջները, քանի որ չի առաջարկվել աճուրդի ավելի բարձր մեկնարկային գին, չեն նշվել առաջարկվող մեկնարկային գնի վերաբերյալ առարկության հիմքերը, ինչպես նաև չի ներկայացվել սնանկության հատուկ հաշվին կատարված վճարումը հավաստող փաստաթուղթ: Դատարանը նաև եզրահանգել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը պարտատերերին այլ հիմքով առարկություն ներկայացնելու իրավունք չի վերապահում:

Դատարանը, 17.07.2017 թվականի որոշմամբ մերժելով կառավարչի գործողությունների դեմ «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքները, արձանագրել է, որ թեև պարտատերերը նշել են, որ վաճառքի ծրագիրը չի պարունակում պարտապանի ողջ գույքի մասին տեղեկություններ, սակայն դա չի բացառում հետագայում դրանք վաճառքի ներկայացնելու հնարավորությունը՝ վաճառքի ծրագրում փոփոխություն կատարելու եղանակով: Անդրադառնալով գույքի վաճառքի ծրագիրն առանց պարտատերերի կողմից հաստատման Դատարան ներկայացնելու հարցին՝ Դատարանը գտել է, որ պարտատերերի ժողովի կողմից ծրագիրը չհաստատելը կարող է իրականացվել ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ գործողություններով: Անդրադառնալով գույքի վաճառքի միջնորդության ներկայացման համար սահմանված եռօրյա ժամկետի պահպանված չլինելու հարցին՝ Դատարանը նշել է, որ այդ փաստարկին անդրադարձել է 14.07.2017 թվականի որոշմամբ՝ երաշխավորելով պարտատերերի իրավունքների արդյունավետ իրականացման հնարավորությունը, ուստի պարտատերերի իրավունքները չեն խախտվել:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքները, արձա-

նագրել է, որ կառավարիչը Դատարանին ներկայացրել է գույքի վաճառքի ծրագիր 12 լոտով, ինչը չէր քննարկվել պարտատերերի ժողովում: Բացի այդ, գույքի վաճառքի ծրագիրը պարտապանի ամբողջական գույքը չի ներառել: Կառավարիչը չի հիմնավորել պարտարերների ժողովի կողմից ծրագիրը չհաստատելը կամ ժողովն անցկացնելու անհնարինությունը: Նման պայմաններում հաստատելով գույքի վաճառքի ծրագիրը՝ Դատարանը թույլ է տվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի խախտում:

Անդրադառնալով պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու թույլտվության վերաբերյալ կառավարչի միջնորդության կապակցությամբ Դատարանի որոշման հիմնավորվածությանը՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանն անտեսել է, որ կառավարիչը թույլ է տվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պարտատերերին տեղեկացնելու եռօրյա ժամկետի խախտում՝ գրկելով պարտատերերին յոթնօրյա ժամկետում առարկություն ներկայացնելու հնարավորությունից: Միաժամանակ Դատարանն անտեսել է, որ հրապարակային սակարկություններով պարտապանի գույքը վաճառելու միջնորդությունը 04.07.2017 թվականին ներկայացնելու պահին առկա չի եղել պարտատերերի ժողովի կողմից հաստատված ծրագիր:

Ինչ վերաբերում է կառավարչի գործողությունների դեմ բերված բողոքների քննության արդյունքում Դատարանի կայացրած որոշմանը, ապա Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանը, առանց քննելու 13.07.2017 թվականին կառավարչի գործողությունների դեմ բերված բողոքները, 14.07.2017 թվականին որոշում է կայացրել թույլատրել վաճառել պարտապանի գույքը և միայն 17.07.2017 թվականին է քննության առել բողոքները՝ արձանագրելով, որ կառավարչի կողմից «Մասնկության մասին» ՀՀ օրենքի խախտում թույլ չի տրվել, որպիսի եզրահանգումը Վերաքննիչ դատարանը գնահատել է անհիմա:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում, գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կառավարչի մոտ ողջամտորեն կարող էր ձևավորվել հանդգնուք այն մասին, որ պարտատերերի ժողովների հետաձգման արդյունքում պարտապանի գույքի վաճառքի ծրագիրը չի հաստատվելու, որպիսի պայմաններում կառավարիչն իրավասու էր գույքի վաճառքի ծրագիրը ներկայացնել Դատարանի հաստատմանը՝ առանց պարտատերերի ժողովի հաստատման: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ մոտ չորս անվազ ընթացքում ժողովները հետաձգվել են չորս անգամ այդպես էլ պարտատերերի կողմից ընդհանուր համաձայնության չգալով պարտապանի գույքի վաճառքի ծրագրի վերաբերյալ: Նկատի ունենալով, որ կառավարիչը պարտավոր է սնանկության վարույթում հաշվի առնել ինչպես բոլոր պարտատերերի, այնպես էլ պարտապանի շահերը, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում կառավարչի կողմից առանց պարտատերերի ժողովի հաստատման գույքի վաճառքի ծրագիրը Դատարան ներկայացնելու լիազորության կիրառումը՝ եզրահանգելով, որ սույն գործով առկա է եղել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված բացառությունը, որպիսի իրավաչափ եզրահանգման հանգել է Դատարանը, և որն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքի վաճառքի ծրագրում պարտապանի որոշակի գույքի բացակայությունը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ ծրագրի

հաստատմանը՝ նկատի ունենալով, որ կառավարիչը գույքի վաճառքը նախատեսում էր իրականացնել 12 լոտերով՝ ըստ յուրաքանչյուր լոտում ներառված գույքի որոշակի նպատակային նշանակության, և որոշակի գույքի բացակայությունը տվյալ վաճառքի ծրագրում ինքնին չի բացառում հետագայում վաճառքի ծրագրում կատարվող փոփոխություններով դրանց վաճառքի կազմակերպումը:

Ինչ վերաբերում է գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին միջնորդության քննության արդյունքներով Դատարանի կայացրած որոշման կապակցությամբ Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, ապա Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանն արձանագրել է կառավարչի կողմից ժամկետի խախտմամբ միջնորդություն ներկայացնելու հանգամանքը և առարկություն ներկայացնելու յոթնօրյա ժամկետի սկիզբ է սահմանել 07.07.2017 թվականը՝ դրանով իսկ ապահովելով ընդհանուր առմամբ պարտատերերի համար նախատեսված տասնօրյա (մինչև դատարան միջնորդություն ներկայացնելը երեք և դատարան ներկայացնելուց հետո յոթ օր) ժամանակահատվածը՝ փաստորեն «շտկելով» կառավարչի թույլ տված խախտումը: Նկատի ունենալով, որ տվյալ դեպքում պահպանվել է պարտատերերի կողմից առարկություն ներկայացնելու տասնօրյա ժամկետը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտատերերի իրավունքների խախտում թույլ չի տրվել: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ը և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն առարկել են կառավարչի գործողությունների դեմ Դատարան ներկայացված երկու միջնորդությունների մասով էլ, իսկ Դատարանի կայացրած երեք որոշումները փոխկապակցված են, որպիսի պայմաններում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով սահմանված՝ պարտատերերի կողմից առարկություն ներկայացնելու բովանդակային սահմանափակումը կիրառելի չէ:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ կառավարչի գործողությունների դեմ «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ը և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն առարկել են գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու և գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին միջնորդությունների՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի դրույթներին չհամապատասխանելու մասով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանն իրավացիորեն նախ քննարկել է կառավարչի միջնորդությունները, այնուհետև մերժել է կառավարչի գործողությունների դեմ բողոքները՝ նկատի ունենալով, որ գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու և գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին միջնորդությունները համապատասխանել են «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ բողոքի պարտասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պարճառարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ ստորադաս դատարանի կողմից թույլ տված նյութական իրավունքի խախտումը հանգեցրել է վեճի սխալ լուծման: Բացի այդ, թույլ տրված խախտման արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը, այն է՝ Վերաքննիչ դատարանը, սահմանափակելով կառավարչի կողմից գույքի վաճառքի ծրագիրը Դատարանի հաստատմանը ներկայացնելու լիազորությունը, հաշվի չի

առել կառավարչի լիազորություններն ի շահ **բողոք պարտատերերի և պարտապանի** իրականացնելու հանգամանքը, ինչպես նաև, բեկանելով Դատարանի որոշումը գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու միջնորդությունը բավարարելու մասին, հաշվի չի առել, որ Դատարանն արդեն իսկ ապահովել էր պարտատերերի իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը՝ դրանով իսկ Դատարանի որոշումը բեկանելով ձևական հիմքով: Վերոգրյալի արդյունքում բեկանելով նաև Դատարանի 17.07.2017 թվականի որոշումը՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է կառավարչի՝ իր գործառույթները «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված հայեցողական լիազորությունների շրջանակներում իրականացնելու իրավունքը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և առաջին ատյանի դատական ակտերին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից առաջին ատյանի դատական ակտին ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2017 թվականի ««Շեն Հոլդինգ» ՓԲ ընկերության սնանկության գործով գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու մասին», 14.07.2017 թվականի ««Շեն Հոլդինգ» ՓԲ ընկերության սնանկության գործով գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու թույլտվություն տալու մասին», 17.07.2017 թվականի «ԵՇԴ/0111/04/16 սնանկության գործով կառավարչի գործողությունների դեմ պարտատերերի կողմից բերված բողոքները քննության առնելու մասին» որոշումներին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ ԵՇԴ/0017/04/15
2019թ.

Մասնկության գործ թիվ ԵՇԴ/0017/04/15

Նախագահող դատավոր՝ Ն. Մարգարյան

Դատավորներ՝ Ա. Մխիթարյան

Ն. Կարապետյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 18-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ ՀՀ ֆինանսների նախարարության Կոտայքի տարածքային հարկային տեսչության դիմումի ընդդեմ «Մազանե» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2019 թվականի որոշման դեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ ՀՀ ֆինանսների նախարարության Կոտայքի տարածքային հարկային տեսչությունը պահանջել է Ընկերությունը ճանաչել սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ա. Կուրանյան) (այսուհետ՝ Դատարան) 09.01.2019 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.05.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի

09.01.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ (դատավոր Ն. Կարապետյանը ներկայացրել է հատուկ կարծիք):

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը: Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ կատարողական վարույթի ավարտը կամ կասեցումը պարտատիրոջ համար բացասական հետևանք դիտարկելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյոք նշված կատարողական վարույթի միջոցով իրական հնարավորություն գոյություն ունի պարտատիրոջ պահանջների բավարարման համար:

Տվյալ գործով պարտապանի վճարային պարտավորությունն անվիճելի է, քանի որ այն ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով, իսկ կատարողական վարույթն ավարտվել է պարտատիրոջ համար բացասական ելքով, այսինքն՝ առկա են պարտապանին սնանկ ճանաչելու բոլոր հիմքերը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.05.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ստորագրած դատարան նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/1938/05/13 վարչական գործով 14.06.2013 թվականի վճռով բավարարել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կոտայքի տարածքային հարկային տեսչության հայցը և վճռել է Ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 3.405.600 ՀՀ դրամ: Վճռի հիման վրա 17.07.2013 թվականին տրվել է կատարողական թերթ **(հատոր 1-ին, գ.թ. 11-14):**

2) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Կ. Հովհաննիսյանի 27.12.2014 թվականի «Կատարողական վարույթն ավարտելու մասին» որոշման համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Ընկերության տնօրենը չի հայտնաբերվել, և անհնարին է եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը: Կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով **(հատոր 1-ին, գ.թ. 15):**

3) Պետական բյուջեի նկատմամբ Ընկերության պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի, ինչպես նաև անձնական հաշվի քարտերի համաձայն՝ 04.02.2015 թվականի դրությամբ Ընկերության պարտավորությունը կազմում է 4.734.730 ՀՀ դրամ, որից 3.059.164 ՀՀ դրամ՝ հարկի գումար, 1.675.566 ՀՀ դրամ՝ տույժի գումար **(հատոր 1-ին, գ.թ. 7):**

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ըն-

դուները պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ այլ գործերով ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը կիրառվել է հակասող մեկնաբանությամբ: Ոստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կատարողական վարույթն ավարտելու դեպքում պարտապանին սնանկ ճանաչելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պարտապանը կարող է սնանկ ճանաչվել պարտարհիւրոջ դիմումի հիման վրա այն դեպքում, երբ պարտարհիւրոջ օգտին կայացված դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով հարուցված կատարողական վարույթն ավարտվել է պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով այն պարագայում, երբ հարկադիր կատարողը և (կամ) պահանջարեւն ձեռնարկել են օրենքով թույլատրելի բոլոր հնարավոր միջոցները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ մինչև 09.01.2015 թվականի փոփոխությունները գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ (...) Կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը (նրա ժառանգին) վերադարձնելն արգելք չէ կատարողական թերթը նոր կատարման ներկայացնելու համար: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին:

Գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե՝

1) պահանջատերը դիմում է ներկայացրել կատարողական թերթը, բացառությամբ հայցի ապահովման հիման վրա տրված կատարողական թերթի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի հիման վրա ներկայացված կատարման վերաբերյալ գրությունը կամ կատարողական մակագրության թերթը վերադարձնելու մասին.

2) անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն.

2.1) անհնարին է պարզել կատարողական թերթով նախատեսված պահանջի կատարման համար անհրաժեշտ՝ պարտապանի գույքի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են

ապարդյուն.

3) պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել և հարկադիր կատարողի՝ նույն օրենքի 40 հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով իրականացված հետախուզումը և (կամ) պահանջատիրոջ կողմից պարտապանի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն.

4) պարտապանի գույքը բավարար չէ պահանջատիրոջ (պահանջատերերի) պահանջները բավարարելու համար.

4.1) պահանջատիրոջը գրավոր առաջարկություն է արվել ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականություն համարվող անշարժ գույքից պարտապանի բաժնեմասը առանձնացնելու պահանջ ներկայացնել դատարան.

5) ավարտվել են հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթի պահանջների կատարմանն ուղղված կատարողական գործողությունները.

5.1) դատական կարգով վիճարկվում է հանրային իրավական դրամական պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտը.

5.2) ավարտվել են վարչական մարմնի արգելանք դնելու մասին որոշման պահանջների կատարմանն ուղղված կատարողական գործողությունները:

6) առկա է նույն օրենքի 44.3-րդ հոդվածի 4-րդ, 9-րդ, 10-րդ կամ 12-րդ մասերով նախատեսված որևէ հիմք.

7) պարտապանի գույքի բացակայության կամ անբավարարության պատճառով կամ պարբերական վճարումների վերաբերյալ վճռի կատարման դեպքում բռնագանձումը տարածվել է պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի և այլ եկամուտների վրա, և պահանջատիրոջ օգտին կատարվում են գումարի պարբերաբար վճարումներ.

8) ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է դարձել դատական ակտի կատարումը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը վերադարձնելն արգելք չեն կատարողական թերթը կրկին ներկայացնելու դեպքում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու համար: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նախատեսված հիմքերի վերացման, ինչպես նաև նույն օրենքի 44.3-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 11-րդ մասերով և 44.1-ին հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում հարկադիր կատարողը պահանջատիրոջ դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են կատարողական վարույթի կարճման հիմքերը (*մասնավորապես եթե կատարողական թերթը փաստացի կատարվել է կամ դրանից բխող պարտավորությունը դադարել է օրենքով սահմանված այլ հիմքով, կամ եթե պահանջատերը դիմում է ներկայացրել (...) պահանջների կատարումից հրաժարվելու վերաբերյալ, կամ եթե պահանջատերը և պարտապանը կնքել են հաշտության համաձայնություն, ու այն հաստատվել է դատարանը և այլն*): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարճված կատարողական վարույթը չի կարող վերսկսվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՍԴՈ-1115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատար-

ման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառնություններ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:

Նշված մոտեցումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ձևավորած նախադեպային իրավունքի հետ, որի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մասն անկատար: Ըստ Եվրոպական դատարանի՝ դժվար կլինի պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնեք իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով (*իրև, Hornsby v. Greece գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետ, Mostacciolo v. Italy (No. 2) գործով Եվրոպական դատարանի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետ, Raylyan v. Russia գործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետ, Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետ*):

Բացի այդ, Եվրոպական դատարանը տվել է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*իրև, Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, 31-րդ կետ*): «Օրինական սպասելիքը» առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքի (*իրև, Kopecký v. Slovakia գործով Եվրոպական դատարանի 28.09.2004 թվականի վճիռը, 35-րդ կետ*):

ԸՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով վերոգրյալ իրավական նորմերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման փուլը դատական պաշտ-

պանության ամփոփիչ փուլն է, քանի որ առանց կայացված դատական ակտի կատարման՝ դատական պաշտպանությունը կկրի զուտ հոչակագրային բնույթ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման փուլն ամփոփվում է կամ կատարողական վարույթի ավարտմամբ, կամ կատարողական վարույթի կարճմամբ: Ընդ որում, կատարողական վարույթի ավարտի հիմքերն այնպիսին են, որ որպես կանոն չեն բացառում կատարողական վարույթի վերսկսման հնարավորությունը, մինչդեռ կատարողական վարույթի կարճումը բացառում է կատարողական վարույթի վերսկսման հնարավորությունը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի վերագրյալ դրույթների հաշվառմամբ անդրադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ (...) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը. (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի վերլուծությանը և մասնավորապես արձանագրել, որ հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առնվազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին՝ բավարար անձին սնանկ ճանաչելու համար (*տե՛ս, օրինակ, «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարոյանի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, իսկ պարտապանը ողջամիտ ժամկետում չի կատարում այդ վճռից բխող իր պարտավորությունը, ապա պարտատերն իրավասու է իր

իրավունքների պաշտպանությունն իրականացնելու երկու եղանակով, այն է՝ կամ *սնանկության դիմումով* դիմել դատարան, կամ *օրենքով սահմանված ժամկետում օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնել հարկադիր կատարման*: Ընդ որում, այն դեպքում, երբ վճիռի հարկադիր կատարման ընթացքում պարզվում է, որ գույքը բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապահին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան **60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան** (տե՛ս, ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչությունն ընդդեմ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի թիվ ԿՌ2/0078/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

ՀՀ կառավարությանն առնթված պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչությունն ընդդեմ «Հիդրոէներգաշին» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0137/04/13 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ երբ պարտատերն ի հիմնավորումն վճարային պարտավորության անվիճելիության վկայակոչում է օրինական ուժի մեջ մտած վճիռ և նշում, որ այն գտնվում է հարկադիր կատարման փուլում, միաժամանակ պետք է հիմնավորի հարուցված կատարողական վարույթի՝ իր համար բացասական ելքը, այն է՝ կատարողական վարույթն ավարտվել է [իրավահարաբերության ծագման պահին գործող] «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով [(պարտապահը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում փարածել և հարկադիր կատարողի՝ նույն օրենքի 40-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով իրականացված հերքախոզումը և (կամ) պահանջարհիրոջ կողմից պարտապահի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն)] կամ կասեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով [(եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապահի ողջ գույքի վրա բռնագանձում փարածելու պարագայում պարզվում է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը]:

Ջարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտատիրոջ օգտին օրինական ուժի մեջ մտած դատա-

կան ակտի առկայության պայմաններում պարտատերն ինքն է որոշում ընտրել դատական ակտի կատարման ճանապարհը՝ հարկադիր կատարման, թե սնանկության վարույթի միջոցով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտատիրոջ կողմից ընտրված եղանակն ինքնանպատակ չպետք է լինի, այսինքն՝ եթե պարտատերն ընտրել է սնանկության վարույթով իր պահանջի բավարարում ստանալու հնարավորությունը, ապա չի կարող դիմել նաև դատական ակտի հարկադիր կատարման, որպիսի արգելքը բխում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածից *(այս է՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից կասեցվում են գույքային բռնագանձումներով բոլոր կարարողական վարույթները, արգելվում են կարարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները, իսկ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում է պարտապանի վերաբերյալ հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կարարողական վարույթ)*: Նույն տրամաբանությամբ եթե պարտատերն ընտրել է դատական ակտի հարկադիր կատարման ճանապարհը, ապա քանի դեռ կատարողական վարույթն իր համար բացասական ելքով չի ավարտվել, պարտատերը չի կարող դիմել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով *(վերոգրյալ պարճատարանությունը կիրառելի չէ այն դեպքի նկատմամբ, երբ կարարողական վարույթն ավարտվել է պարտապիրոջ կողմից կարարողական թերթը վերադարձնելու մասին դիմումի հիմքով, քանի որ այս դեպքում կարարողական վարույթի ավարտը պայմանավորված է պարտապիրոջ կամահայրնությամբ, ինչն էլ օրյեկտիվորեն բացառում է կարարողական վարույթը պարտապանի համար բացասական ելքով ավարտված որակելու հնարավորությունը)*:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարողական վարույթը վերջնակա-նապես, առանց վերսկսման հնարավորության ամփոփվում է կատարողական վարույթի կարճման դեպքում: Մինչդեռ կատարողական վարույթի ավարտի դեպքում պահպանվում է վերսկսման հնարավորությունը: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով նաև Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած վե-րոգրյալ իրավական դիրքորոշումները, հարկ է համարում արձանագրել, որ կատարողա-կան վարույթի առկայության պայմաններում պարտատիրոջ կողմից սնանկության դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է գնահատել կատարողական վարույթի ավար-տի հիմքերի գնահատմամբ: Այսինքն՝ եթե կատարողական վարույթն ավարտվել է այնպիսի հիմքով, որն այդ պահին պարտատիրոջ համար բացասական է թեկուզև այն իմաստով, որ պարտատերն իր պահանջի անմիջապես բավարարում չի ստանում *(օրինակ, եթե անհնա-րին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կարարողի և (կամ) պահան-ջարհրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են սպարդյուն)*, ապա պարտատերը չպետք է զրկվի սնանկության դիմում ներկայացնելու հնարավորությունից: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նաև այն հանգաման-քով, որ սնանկության վարույթը, ի տարբերության կատարողական վարույթի, ավելի ճկուն է պարտատիրոջ պահանջների բավարարում ստանալու տեսանկյունից *(մասնավորապես՝ սնանկության կառավարիչն ունի պարտապանի դեբիտորական պարտքերը հավաքագրելու լիազորություն, անհատույց կատարված փոխանցումները հետ ստանալու լիազորություն և այլն)*:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե կատարողական վարույթն ավարտվել է այնպիսի հիմքով, որը տվյալ պահին պարտատիրոջ համար կարող է գնա-հատվել որպես բացասական ելքով կատարողական վարույթի ավարտ, ապա պարտատե-

րը չպետք է գրկվի սնանկության վարույթով իր պահանջի բավարարում ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով, որ հակառակ մեկնաբանության դեպքում կխախտվի պարտապանի և պարտատիրոջ շահերի հավասարակշռությունը, պարտատերը կգրկվի իր օգտին կայացված դատական ակտը կատարելու հնարավորությունից, որի արդյունքում կսահմանափակվեն վերջինիս դատական պաշտպանության և սեփականության իրավունքները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/1938/05/13 վարչական գործով 14.06.2013 թվականի վճռի հիման վրա տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, այն է՝ կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Ընկերության տնօրենը չի հայտնաբերվել, և անհնարին է եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը:

Դատարանը, վկայակոչելով թիվ ԵԿԴ/0137/04/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի հայտնած դիրքորոշումը, դիմումը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ վճիռը գտնվել է հարկադիր կատարման փուլում, իսկ Կոմիտեն չի ներկայացրել որևէ ապացույց կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով համապատասխանաբար ավարտված կամ կասեցված լինելու վերաբերյալ: Դատարանը եզրահանգել է, որ դիմողի կողմից չի հիմնավորվել ՀՀ վարչական դատարանի ՎԴ/1938/05/13 օրինական ուժի մեջ մտած վճռից հետո դիմողի նկատմամբ Ընկերության պարտավորության նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող պարտավորության առկայությունը, որն էական է սնանկության դիմումի քննության համար, իսկ հարկային պարտավորությունների վերաբերյալ միակողմանի կազմված տեղեկանքը և ընկերության անձնական հաշիվների քարտերը չեն կարող հաստատել «Մանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հարկադրված սնանկության հիմքերի առկայությունը:

Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Դատարանի կողմից վճռով նշված պատճառաբանությունները և լրացուցիչ պատճառաբանելով դատական ակտը, գտել է, որ Կոմիտեի կողմից կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով համապատասխանաբար ավարտված կամ կասեցված լինելու վերաբերյալ որևէ ապացույց ներկայացված չլինելու պայմաններում դիմողի կողմից չի հիմնավորվել ոչ թե ՀՀ վարչական դատարանի ՎԴ/1938/05/13 օրինական ուժի մեջ մտած վճռից հետո դիմողի նկատմամբ Ընկերության պարտավորության նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող **պարտավորության առկայությունը, այլ նման պարտավորության անվիճելիությունը:**

Անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Կոմիտեի օգտին առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որը ներկայացվել է կատարման, այնուհետև՝ կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն: Սույն որոշմամբ արտահայտված իրավա-

կան դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում կատարողական վարույթն ավարտվել է պարտատիրոջ համար բացասական ելքով, ուստի՝ պարտատերը չպետք է գրկվի իր օգտին կայացված դատական ակտի կատարումն այլ ճանապարհով ստանալու հնարավորությունից, որպիսի հանգամանքն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Ինչ վերաբերում է թիվ ԵԿԴ/0137/04/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի հայտնած դիրքորոշմանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

ՀՀ դատական օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **նույնանուն փաստերով** այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և ՀՀ վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ **առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար** և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը (տե՛ս, «Արաբկիր Ալկո Լիկյոր-Օղու գործարան» ՍՊ ընկերություն ընդդեմ Սոս Բաղդասարյանի թիվ 3-480(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի որոշումը):

Այսպես, սույն գործի փաստերի համաձայն՝ պարտատերն իր պահանջի բավարարում ընդհանրապես չի ստացել, իսկ կատարողական վարույթն ավարտվել է այն հիմքով, որ անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը: Մինչդեռ թիվ ԵԿԴ/0137/04/13 գործի փաստերի համաձայն՝ վճիռն ամբողջությամբ կատարվել էր, իսկ կատարողական վարույթը՝ կարճվել: Թիվ ԵԿԴ/0137/04/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանը տվյալ գործի փաստական հանգամանքները գնահատել է՝ հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 41-րդ հոդվածները՝ արձանագրելով, որ տվյալ գործով պարտատերը չի հիմնավորել կատարողական վարույթում իր համար բացասական ելքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, սույն գործի նկատմամբ կիրառելով թիվ ԵԿԴ/0137/04/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, անտեսել են երկու գործերի փաստական հանգամանքների միջև առկա էական տարբերությունները, որն էլ հանգեցրել է վեճի սխալ լուծ-

ման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորագրած դատարանը Կոմիտեին գրկել է իր օգտին կայացված դատական ակտով պահանջի բավարարում ստանալու հնարավորությունից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է եղել նույնանման փաստական հանգամանքներ ունեցող թվով երեք դատական գործերով (թիվ ԵՇԴ/0020/04/14, թիվ ԵՇԴ/0039/04/14 և թիվ ԵՇԴ/0041/04/14) և սույն սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի հակասող մեկնաբանություններով կիրառմամբ:

Այսպես, վերոգրյալ երեք դատական գործերով էլ գործի փաստական հանգամանքները և առաջին ատյանի դատարանի եզրահանգումը նույնանման են: Մասնավորապես, նշված գործերի փաստական հանգամանքների համաձայն՝ կատարողական վարույթն ավարտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, քանի որ կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է եղել պարզել պարտապան ընկերության տնօրենի գտնվելու վայրը:

Նշված երեք գործերով էլ ՀՀ սնանկության դատարանը (դատավոր՝ Ա. Կուբանյան) մերժել է սնանկության դիմումը՝ արձանագրելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն չի ներկայացրել որևէ ապացույց կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով համապատասխանաբար ավարտված կամ կասեցված լինելու վերաբերյալ: Ուստի, դատարանը գտել է, որ դիմողի կողմից չի հիմնավորվել օրինական ուժի մեջ մտած վճռից հետո դիմողի նկատմամբ պարտապանի պարտավորության նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող պարտավորության առկայությունը, որն էական է սնանկության դիմումի քննության համար:

Թիվ ԵՇԴ/0020/04/14 գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (դատավորներ՝ Հ. Ենոքյան, Տ. Նազարյան, Գ. Խանդանյան) գտել է, որ «...կատարողական վարույթի ավարտը, այդ թվում՝ պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով, ինքնին հանդիսանում է բացասական ելք պարտապիրոջ համար, քանի որ այն չի հանգեցնում որևէ իրավական հետևանքների, մասնավորապես՝ հարուցված վարույթը անհայտ ժամանակահատվածով մնում է անարդյունք: Նույն մտրեցումն է դրված նաև ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0137/04/13 սնանկության գործով 18.07.2014 թվականին կայացրած որոշման հիմքում, նկատի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը ձևավորված է վճռի՝ կատարման փուլում գտնվելու փաստի հիման վրա»:

Թիվ ԵՇԴ/0039/04/14 գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (դատավորներ՝ Ա. Պետրոսյան, Լ. Գրիգորյան, Դ. Սերոբյան) գտել է, որ «...կատարողական վարույթի ավարտը կամ կասեցումը պարտապիրոջ համար բացասական հետևանք դիրարկելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյո՞ք նշված կատարողական վարույթի միջոցով իրական հնարավորություն գոյություն ունի պարտապիրոջ պահանջների բավարարման համար: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պարտապանի գտնվելու վայրի անհայտ լինելը անորոշ ժամկետով հետաձգում է դատական ակտի կատարումը և կատարողական վարույթի՝ նշված հիմքով ավարտը վկայում է պարտապիրոջ պահանջների չբավարարվելու և դատական ակտի անկատար մնալու մասին:

Հաշվի առնելով գործի փաստական հանգամանքերը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում պարտապանի վճարային պարտավորությունն անվիճելի է, քանի որ այն ճանաչված է օրինական ուժի մեջ մտնող վճռով, ինչը ուղղակիորեն բխում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի բովանդակությունից: Միաժամանակ, սույն պարագայում առկա են դատարանի վճռով պարտապանին սնանկ ճանաչելու բոլոր հիմքերը»:

Թիվ ԵՇԴ/0041/04/14 գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (դատավորներ՝ Ա. Սմբատյան, Մ. Հարթենյան, Ա. Մկրտչյան) գտել է, որ «...կատարողական վարույթի ավարտը, այդ թվում պարտապանի գրնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով, ինքնին հանդիսանում է բացասական ելք պարտավորողը համար, քանի որ այն չի հանգեցնում որևէ իրավական հետևանքների, մասնավորապես՝ հարուցված վարույթն անհայտ ժամանակահատվածով մնում է անարդյունք: Նույն մտրեցումն է դրված նաև ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0137/04/13 սնանկության գործով 18.07.2014 թվականին կայացրած որոշման հիմքում նկարի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը ձևավորված է վճռի կատարման փուլում գրնվելու փաստի հիման վրա»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն սնանկության գործով Վերաքննիչ դատարանը և վերոգրյալ երեք գործերով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը նույն նորմը մեկնաբանել են հակասող մեկնաբանությամբ, որպիսի հանգամանքով էլ հիմնավորվում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորության կիրառումը՝ նպատակ ունենալով ապահովել սույն հարցի վերաբերյալ իրավունքի զարգացումը և միատեսակ ու կանխատեսելի դատական պրակտիկայի ձևավորումը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են

[«Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագա-

յում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵՇԴ/0017/04/15 սնանկության գործով 18.12.2019 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան), գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության Կոտայքի տարածքային հարկային տեսչության դիմումի ընդդեմ «Մագանե» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, որոշել է «Վճարելի բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության»:

Համաձայն չլինելով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵՇԴ/0017/04/15 սնանկության գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրակիակիչ մասերի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք հատուկ կարծիք նույն որոշման պատճառաբանական և եզրակիակիչ մասերի վերաբերյալ:

Սույն գործով Վճարելի դատարանն արձանագրել է, որ վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ այլ գործերով ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը կիրառվել է հակասող մեկնաբանությամբ: Ուստի Վճարելի դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կատարողական վարույթն ավարտելու դեպքում պարտապանին սնանկ ճանաչելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճարելի բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարել նաև անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պարտապանը կարող է սնանկ ճանաչվել պարտադիրոջ դիմումի հիման վրա այն դեպքում, երբ պարտադիրոջ օգրին կայացված դարական ակտի հիման վրա տրված կարարողական թերթով հարուցված կարարողական վարույթն ավարտվել է պարտապանի գրնվելու վայրը պարզելու անհնարինության հիմքով այն պարագայում, երբ հարկադիր կարարողը և (կամ) պահանջարեը ձեռնարկել են օրենքով թույլատրելի բոլոր հնարավոր միջոցները:

Այս համարվեքարում անդրադառնալով վճարելի դատարանի որոշման պարճառաբանական մասին պեքք է նշենք, որ ստորադաս դատարանների դարական ակտերը և վճարելի բողոքում նշված դարական ակտերը պեքք է համարվելին սույն գործի համար առանցքային նշանակություն ունեցող թիվ ԵԿԴ/0137/04/13 գործով 18.07.2014 թվականի ՀՀ վճարելի դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշման հեքք:

ՀՀ կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հար-

կային տեսչությունն ընդդեմ «Հիդրոէներգաշին» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0137/04/13 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ երբ պարտատերն ի հիմնավորումը վճարային պարտավորության անվիճելիության վկայակոչում է օրինական ուժի մեջ մտած վճիռ և նշում, որ այն գտնվում է հարկադիր կատարման փուլում, միաժամանակ պետք է հիմնավորի հարուցված կատարողական վարույթի՝ իր համար բացասական ելքը, այն է՝ կատարողական վարույթն ավարտվել է [իրավահարաբերության ծագման պահին գործող] «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով */(պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել և հարկադիր կատարողի՝ նույն օրենքի 40-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված կարգով իրականացված հերահուցումը և (կամ) պահանջարկից կողմից պարտապանի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն)/* կամ կատեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով */(եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվում է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխարավարձի հազարապարիկի և ավելի չափով բավարար չէ պարտարկից (պահանջարկից) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դարական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտարկից (պահանջարկից) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխարավարձի հազարապարիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտարկից (պահանջարկից) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը):*

Քննարկված նախադեպային որոշմամբ արտահատված իրավական դիրքորոշումը կառուցված է եղել բացառապես դատական ակտի հարկադիր կատարման վարույթում պարտապանի՝ բռնագանձման ենթակա գույքի անբավարարության /բացակայության/, ինչպես նաև կատարողական թերթ ներկայացրած այլ պարտատերերի առկայությամբ պայմանավորված դատական ակտի /ակտերի/ ամբողջական կատարման հնարավորության հետ, որը բխում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից և «Մանկության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից, և դատական ակտի հարկադիր կատարման վարույթում պարտատիրոջ համար «բացասական ելք» իրավական եզրույթն ըստ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման պայմանավորվել և մեկնաբանվել է բացառապես «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի և նույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման համատեքստում:

Հարկ է նշել, որ սույն գործով ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը կիրառել են թիվ ԵԿԴ/0137/04/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, հետևաբար սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, երբ հարկադիր կատարողը չի արձանագրել գույքի անբավարարություն կամ բացակայություն, վճռաբեկ դատարանի նշված նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումը կիրառելի է անվերապահորեն, քանի որ չկա պարտատիրոջ պահանջի բավարարմանը սպառնացող բացասական ելք:

Այս առումով չենք կարող չնկատել, որ սույն գործով կատարողական վարույթում պար-

տապան է հանդիսանում Ընկերությունը և ոչ թե Ընկերության տնօրենը, որի հետախուզումն ու չհայտնաբերումը որևէ աղերս չունեն գույքի բռնագանձման վարույթի հետ: Հետևաբար՝ սնանկ ճանաչելու դիմումը մերժելով՝ դատարանը չէր կարող դիմողին գրկել հարկադիր կատարման ներկայացրած վճռով որոշված գումարի բռնագանձման իրավունքից: Պետք է փաստել նաև, որ դիմողը լիարժեքորեն չի օգտվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով պահանջատիրոջը վերապահված իրավունքներից, որպիսի հանգամանքը չի կարող սեփականության իրավունքի պաշտպանության անվան տակ հիմք հանդիսանալ կատարողական վարույթում պարտապան ճանաչված Ընկերությանը սնանկ ճանաչելու համար:

Վճռաբեկ դատարանը պետք իրավական գնահատական տար այն հանգամանքին, որ վճռաբեկ բողոքում դատարանների կողմից մինևնույն նորմի հակասական մեկնաբանություններով կիրառված լինելու հանգամանքը հիմնավորելու նպատակով ներկայացված դատական ակտերում «պարտատիրոջ համար բացասական ելք» իրավական եզրույթը ստորադաս դատարանները կիրառել են վճռաբեկ դատարանի իրավական մեկնաբանությանը հակասող մեկնաբանությամբ, մինչդեռ սույն գործով այն ճիշտ էր մեկնաբանվել և կիրառվել, ուստիև սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման:

Ինչ վերաբերվում է վճռաբեկ դատարանի որոշմամբ արված վերլուծությանը սույն գործի և թիվ ԵԿԴ/0137/04/13 գործի փաստական հանգամանքների տարբերության վերաբերյալ, ապա պետք է նշել, որ տարբեր գործերով փաստական հանգամանքների տարբերությունները չեն ազդում իրավունքի, իրավական նորմի մեկնաբանման, այդ կապակցությամբ արտահայտված իրավական ընդհանրական դիրքորոշման վրա:

Հարկ է նշել, որ այս դեպքում ընդամենը պետք էր գնահատել, թե վկայակոչված դատական ակտերից, որն է հակասում Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշմանը կամ համապատասխանում դրան, քանի որ հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման առկայության պայմաններում ստորադաս դատարանները պարտավոր են կատարել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով իրենց վրա դրված պարտականությունը՝ հետևելու այդ իրավական դիրքորոշմանը:

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշմամբ պարտատիրոջ համար կատարողական վարույթի ավարտի բացասական ելք է գնահատել այն իմաստով, որ կատարողական վարույթն ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կամ կասեցվել է նույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ կետի հիմքով:

Պետք է նշել, որ Վճռաբեկ դատարանի եզրահանգումը կատարողական վարույթով պահանջի **անմիջական բավարարում** չստանալու յուրաքանչյուր դեպք պահանջատիրոջ համար բացասական ելք գնահատելը վտանգում է սնանկ ճանաչելու համար պարտադիր հիմքի՝ անվիճելիությունը և դրա կետանցի վերաբերյալ ձևավորված իրավակիրառական պրակտիկայի կայունությունն ու որոշակիությունը: Մինչդեռ հարկադիր կատարման ներկայացված դատական ակտի առկայության պայմաններում «պարտապանի կետանց» եզրույթը պայմանավորված է կետանցված պարտավորության հիման վրա կայացված դատական ակտի հարկադիր կատարման վարույթում բացառապես հարկադիր կատարողի գործողություններով:

Ինչ վերաբերվում է վճռաբեկ դատարանի որոշման այն փաստարկին, որ սնանկության վարույթն ավելի ճկուն է, ապա պետք է ասել, որ դա բավարար հիմնավորում չէ այս հարցով

ձևավորված դատական պրակտիկան փոխելու համար, քանի որ սնանկության վարույթի ընթացակարգերի ուսումնասիրությունը և դրա վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկան թույլ չէն տալիս նման եզրահանգում անել զուտ այն հիմնավորմամբ, որ ինչպես պարտապանի, այնպես էլ վերջինիս գույքի և դրա գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում ևս հետախուզումն իրականացվում է ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ընդ որում՝ գույքային և դրամական բռնագանձման վարույթներով պարտապանի գույքի առկայությունը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել, թույլ է տալիս շարունակել կատարողական գործողությունները նույնիսկ պարտապանի բացակայության պայմաններում:

Վերաքննիչ դատարանի կողմից «որպես բացասական ելքով կատարողական վարույթի ավարտ» եզրույթին տրվել է Վճռաբեկ դատարանի կողմից թիվ ԵԿԴ/0137/04/13 սնանկության գործով տրված մեկնաբանություններից տարբերվող, առավել տարածական մեկնաբանություն: Ընդ որում՝ տրված մեկնաբանության տարածականությունը վտանգել է նաև որոշակիության սկզբունքը, այն անթույլատրելի է սնանկության վարույթ սկսելու գործընթացի սկզբունքների առումով:

Նման կերպ, սույն գործով բարձրացված իրավական խնդրին պատասխանելու առումով սնանկության գործով կառավարչի և հարկադիր կատարողի լիազորությունների տարբերություններով չի կարող հիմնավորվել թիվ ԵԿԴ/0137/04/13 սնանկության գործով արտահայտված իրավական դիրքորոշումից շեղումը: Ինչ վերաբերվում է գործի փաստական հանգամանքների տարբերության ազդեցությանը գործի ելքի վրա, ապա վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը բոլոր դեպքերում չի կարող փոխվել ըստ իրավիճակի:

Պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու դեպքում անվիճելի դրամական պարտավորության կետանց իրավական եզրույթը կիրառելի չէ, քանի որ պարտավորության կետանցն արդեն իսկ պայմանավորված է հարկադիր կատարման վարույթի գործընթացներով և չի կարող դրվել սնանկության դիմումի հիմքում, հետևաբար վճռաբեկ բողոքի փաստարկն այն մասին, որ առկա է դատական ակտով հաստատված անվիճելի դրամական պարտավորության 60-օրյա կետանց, հիմնավոր չէ, հաշվի առնելով, որ այդ պարտավորության վերաբերյալ դատական ակտը հարկադիր կատարման ներկայացված լինելու պայմաններում բացակայում են բռնագանձման ենթակա գույքի անբավարարության կամ բացակայության վերաբերյալ հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումներ:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Անտոնյան
Ս. Բարսեղյան
Տ. Պետրոսյան
Է. Սեդրակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ **ԼԴ4/0022/04/18**

2019թ.

Մասնկության գործ թիվ **ԼԴ4/0022/04/18**

Նախագահող դատավոր՝ **Ա. Խատարյան**

Դատավորներ՝ **Մ. Հարթենյան**

Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 26-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ Սարգիս Ոսկանյանի դիմումի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2018 թվականի որոշման դեմ Սարգիս Ոսկանյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ծատիկյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սարգիս Ոսկանյանը պահանջել է իրեն ճանաչել սնանկ:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Աթաբեկյան) (այսուհետ՝ Դատարան) 01.06.2018 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.10.2018 թվականի որոշմամբ Սարգիս Ոսկանյանի ներկայացուցիչ վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.06.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սարգիս Ոսկանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ և 81-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 11-13-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը խուսափել է իրավական գնահատական տալ այն հարցին, թե արդյոք դատական տեղեկատվական համակարգից արտատպված դատական ակտերը հանդիսանում են պարտավորությունների չափի վերաբերյալ հիմք հանդիսացող փաստաթղթեր, ինչպես նաև այն հանգամանքին, թե արդյոք պարտատերերի կողմից տրված՝ պարտավորությունների չափի մասին տեղեկանքները պարտավորության բնույթի մասին բավարար ապացույց են:

Մասնկության գործով դիմումատուի վրա պարտավորության չափի մասին տեղեկանքից բացի նաև պարտավորության հիմք հանդիսացող այլ փաստաթղթեր ներկայացնելու պարտականություն դնելը, ինչպես նաև պարտավորության չափը հաստատող դատական ակտերի բնօրինակներ ներկայացնելու պարտականություն դնելն այն դեպքում, երբ դրանք հասանելի են դատական տեղեկատվական համակարգում, անհամաչափ պարտականություններ են և այն աստիճան ու այն կերպ են դժվարացնում դիմումատուի դատարան դիմելու իրավունքը, որ խաթարում են այդ իրավունքի բուն էությունը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ օրենսդիրը մասնկության գործով դիմումատուի վրա պարտականություն է դրել սնանկության դիմումը և կից փաստաթղթերը ներկայացնել օրենքով սահմանված որոշակի պահանջների պահպանմամբ, իսկ դատարանի վրա պարտականություն է դրել քաղաքացիական գործի հարուցման փուլում ստուգել ներկայացված դիմումի և կից փաստաթղթերի համապատասխանությունը օրենքի պահանջներին ու ըստ այդմ՝ կայացնել օրենքով սահմանված կոնկրետ որոշումներից որևէ մեկը (դիմումն ընդունել վարույթ, մերժել ընդունումը կամ այն վերադարձնել): Ընդ որում, այն դեպքում, երբ դատարանը «դիմումը վարույթ ընդունելու մասին» որոշմամբ փաստում է դիմումի և կից փաստաթղթերի համապատասխանությունը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, ապա այդ հանգամանքը, այլևս, իրավական արգելք է դատարանի համար, որպեսզի վերջինս հետագայում կայացնի մասնկության մասին դիմումը մերժելու վերաբերյալ վճիռ և, ընդհակառակը, դատարանի համար առաջանում է պարտականություն՝ կայացնել սնանկ ճանաչելու մասին վճիռ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.10.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ դիմումը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Սարգիս Ոսկանյանը կամավոր սնանկության դիմում է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ դիմումում որպես կից ներկայացվող փաստաթղթ-

թեր նշելով և ներկայացնելով նաև ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2016 թվականի թիվ ԼԴ1/0250/02/16 քաղաքացիական գործով վճռի, «Ֆինքա» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից 03.07.2014 թվականից մինչև 22.01.2018 թվականն ընկած ժամանակահատվածի համար 22.01.2018 թվականին տրված վարկի քաղվածքի, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.10.2017 թվականի թիվ ԼԴ1/0801/02/17 քաղաքացիական գործով վճռի, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 26.01.2018 թվականի դրությամբ նույն թվականին տրված հաճախորդի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի, Սարգիս Ոսկանյանի ներկայացուցչին ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի Ալավերդի-Թումանյան տարածաշրջանի բաժանմունքի պետ Գ. Անտաշյանի կողմից 23.01.2018 թվականին հասցեագրված թիվ 648 գրության և դրան կից փաստաթղթերի (19 թերթից), Սարգիս Ոսկանյանի ներկայացուցչին ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի Ալավերդի-Թումանյան տարածաշրջանի բաժանմունքի պետ Գ. Անտաշյանի կողմից 06.02.2018 թվականին հասցեագրված թիվ 1091 գրության և դրան կից փաստաթղթերի (16 թերթից), ՀՀ սահմանադրական դատարանի 25.02.2008 թվականի թիվ ՍԴՈ-735 որոշման, ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի թիվ ԵՇԴ/0220/02/11 որոշման պատճենները (**հատոր 1-ին, գ.թ. 4-73**).

2) դատական տեղեկատվական համակարգից արտատպված և կամավոր սնանկության դիմումին կից ներկայացված՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԼԴ1/0250/02/16 քաղաքացիական գործով 14.10.2016 թվականին կայացված վճռի համաձայն՝ հայցը բավարարվել է, պատասխանողներ ԱԶ Սարգիս Սուրենի Ոսկանյանից, Աննա Գեղամի Միքայելյանից և Արսեն Ռաֆիկի Առաքելյանից համապարտության կարգով հոգուտ «ՖԻՆԲԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բռնագանձվել է 3.731,16 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ վճարման պահի փոխարժեքով, որից 3.141,34 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը՝ որպես մայր գումարի գծով գումար, 577,60 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը՝ որպես տոկոսագումարի մնացորդ, 12,22 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով ամսական կետանցված մայր գումարի և տոկոսագումարի նկատմամբ հաշվարկված տույժ: Միաժամանակ վարկի ժամկետանց գումարին հաշվարկել և ԱԶ Սարգիս Սուրենի Ոսկանյանից, Աննա Գեղամի Միքայելյանից և Արսեն Ռաֆիկի Առաքելյանից համապարտության կարգով հոգուտ «ՖԻՆԲԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բռնագանձվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները՝ սկսած 17.03.2016 թվականից մինչև պարտավորության ամբողջ մարումը (...) (**հատոր 1-ին, գ.թ. 11-16**).

3) կամավոր սնանկության դիմումին կից ներկայացված՝ «Ֆինքա» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից 03.07.2014 թվականից մինչև 22.01.2018 թվականն ընկած ժամանակահատվածի համար 22.01.2018 թվականին տրված վարկի (պայմանագրի համար՝ 340826) քաղվածքի համաձայն՝ վարկի մարման վերջնաժամկետ է նշված 06.07.2017 թվականը, իսկ 22.01.2018 թվականի դրությամբ Սարգիս Ոսկանյանի ժամկետանց պարտավորությունների հանրագումարը կազմել է 2.602,37 ԱՄՆ դոլար (**հատոր 1-ին, գ.թ. 17-20**).

4) դատական տեղեկատվական համակարգից արտատպված և կամավոր սնանկության դիմումին կից ներկայացված ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԼԴ1/0801/02/17 քաղաքացիական գործով 13.10.2017 թվականին կայացված վճռի

պատճենի համաձայն՝ հայրը բավարարվել է, պատասխանող Սարգիս Սուրենի Ոսկանյանից հոգուտ «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձվել է վարկային պարտավորության ընդհանուր գումարը՝ 141.529,90 (մեկ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր քսանինը ամբողջ 90) ՀՀ դրամ, որից՝ վարկի հիմնական պարտքը կազմում է 107.510 ՀՀ դրամ, վճարման ենթակա տոկոսները՝ 23.564,80 ՀՀ դրամ, այլ միջնորդավճարների գծով պարտքը՝ 5.800 ՀՀ դրամ (...) (**հատոր 1-ին, գ.թ. 21-25**).

5) կամավոր սնանկության դիմումին կից ներկայացված՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված հաճախորդի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ 26.01.2018 թվականի դրությամբ Սարգիս Ոսկանյանի վարկի մնացորդը կազմել է 107.510,00 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 26-27**).

6) ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը 26.02.2018 թվականին որոշում է կայացրել դիմումը վերադարձնելու մասին՝ պատճառաբանելով նաև, որ «տվյալ դեպքում Սարգիս Ոսկանյանի ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումում վերջինս նշել է, որ ունի պարտավորություններ, մինչդեռ դիմումին կից ներկայացվել են պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների չափի վերաբերյալ պարտատերերի կողմից տրված տեղեկություններ, սակայն չեն ներկայացվել այդ տեղեկությունների հիմք կազմող փաստաթղթերը, դիմումին կից ներկայացվել են դատական ակտերի արտատպված տարբերակներ, որոնցով հնարավոր չէ հաստատված համարել վերոնշյալ փաստերը: Իսկ ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրված փաստաթղթերին, ապա պետք է փաստել, որ դրանցով հնարավոր չէ պարզել պարտապանի կողմից ամուսնության ընթացքում ձեռք բերված և օրենքի ուժով նրան համատեղ սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև այլ պետական մարմիններում գրանցման ենթակա այլ գույքի առկայության կամ բացակայության փաստը (բացակայում են կնոջ կողմից համատեղ ամուսնության ընթացքում գույքի ձեռք բերման վերաբերյալ տեղեկություններ)» (**հատոր 1-ին, գ.թ. 2, 3**).

7) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննելով վերը նշված որոշման դեմ Սարգիս Ոսկանյանի վերաքննիչ բողոքը, 04.04.2018 թվականին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը բավարարելու՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.02.2018 թվականի որոշումը վերացնելու և դիմումը վարույթ ընդունված համարելու մասին՝ պատճառաբանելով նաև, որ «Տվյալ դեպքում դիմումատուի կողմից սնանկ ճանաչելու պահանջի մասին դիմումին կից ներկայացված փաստաթղթերի, մասնավորապես՝ «Ֆինքս» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից 21.01.2018 թվականի դրությամբ պարտապան Սարգիս Ոսկանյանի վարկի քաղվածքի, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 26.01.2018 թվականին տրված հաճախորդի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2016 թվականի թիվ ԼԴ1/0250/02/16, 13.10.2017 թվականի թիվ ԼԴ1/0801/02/17 վճիռների՝ «Դատալեքս» տեղեկատվական ծրագրի միջոցով արտատպված օրինակների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի Ալավերդի-Թումանյան տարածաշրջանի բաժանմունքում պարտապան Սարգիս Ոսկանյանի վերաբերյալ 25.12.2017 թվականին հարուցված թիվ 03917933 կատարողական վարույթի շրջանակներում կայացված որոշումների, էլեկտրոնային հարցումների, պատասխանների պատճենների ուսումնասիրությունից հետևում է, որ Սարգիս Ոսկանյանի ժամկետանց պար-

տավորությունների չափը «Ֆինքա» ՈւՎԿ ՓԲԸ-ի հանդեպ 22.01.2018 թվականի դրությամբ կազմել է 2.602,37 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴՆ/0801/02/17 կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթը՝ Սարգիս Ոսկանյանից հոգուտ «Արդշիքանկ» ՓԲԸ-ի 141.529, 90 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ, ավարտվել է՝ կատարողական գործողությունների ընթացքում բռնագանձման ենթակա պարտապանին պատկանող գույք և դրամական միջոցներ չհայտնաբերվելու հիմքով: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օրինադրույթի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում սեփական սնանկությունը ճանաչելու դիմում ներկայացրած պարտապանն ինքն է կրում սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու, ինչպես նաև դրանք ներկայացնելու անհնարի-նության դեպքում դրա վերաբերյալ պատճառաբանված հիմնավորում ներկայացնելու հետ կապված բոլոր ռիսկերը: Հետևում է, որ տվյալ դեպքում ընդհանուր իրավասության դատարանը զրկված չէր առկա նյութերի հիման վրա դիմումը վարույթ ընդունելու և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաթղթերի ներկայացման հանգամանքին, ինչպես նաև դիմումատուի իրավական պահանջի հիմնավորվածու-թյանը դատաքննությամբ անդրադառնալու հնարավորությունից: Շարադրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ընդհանուր իրավասության դատարանն ան-հարկի սահմանափակել է դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-թյամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական մատչելիության իրավունքը» **(հատոր 2-րդ, գ.թ. 120-122)**.

8) Դատարանը 25.05.2018 թվականին որոշում է կայացրել դիմումը վարույթ ընդունելու մասին **(հատոր 3-րդ, գ.թ. 3, 4)**:

4. Վճռաբեկ դատարանի պարճատաբանությունները և կզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանա-կություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, ու գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կամավոր սնանկության վարույթում պարտապանի կողմից ներկայաց-ված ապացույցների գնահատման առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էա-կան նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատա-կան պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մար-դու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դա-տական ակտը կայացնելիս ստորադաս դատարանը թույլ է տվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդա-րադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ան-

դրադատնայ հետևյալ հարցադրումներին.

1) արդյո՞ք կամավոր սնանկության վարությամբ պարտավորեց-վարկային կազմակերպության կողմից փրված հաճախորդի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը կարող է բավարար գնահատվել պարտավորության բնույթը պարզելու համար,

2) արդյո՞ք դատական տեղեկատվական համակարգից արտարարված վճռի օրինակը կարող է որակվել պարտավորության առկայությունը և դրա չափը հիմնավորող թույլատրելի ապացույց:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը սեփական սնանկության ճանաչման նպատակով պարտավոր է դիմել դատարան, եթե առկա են նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված հիմքերը:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ սեփական նախաձեռնությամբ՝ (կամավոր սնանկության դիմում) եթե պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն): Ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա օրենքի համաձայն բռնագանձում չի կարող տարածվել:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում)՝ եթե պարտապանի հանրային իրավական դրամական պահանջներով կատարման ենթակա պարտավորությունները գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն): Ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա, օրենքի համաձայն, բռնագանձում չի կարող տարածվել:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ կամավոր սնանկության դիմում ներկայացնելու և այն հետ վերցնելու իրավունք ունեն՝ ֆիզիկական անձի անունից՝ սովյալ ֆիզիկական անձը կամ նրա ներկայացուցիչը:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դիմումում պետք է նշվեն նաև պարտատիրոջ դրամական պահանջի չափը, պարտքի, վստասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով, պարտավորության կամ դրա մասի (մասերի) կատարման ժամկետը, առաջարկ՝ ժամանակավոր կառավարչի թեկնածության կամ համաձայնություն՝ ընտրությունը դատարանին թողնելու վերաբերյալ:

«Մսանկության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ պարտապանի կողմից սեփական սնանկությունը ճանաչելու կամ սնանկության վտանգի նպատակով դիմում ներկայացնելու դեպքում դիմումին կից ներկայացվում են (իսկ նույն

օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի «գ» կետով սահմանված դեպքերում պարտապանը պարտավոր է ներկայացնել) հետևյալ փաստաթղթերը՝

բ) պարտապանի պարտատերերի և պարտապանների (այդ թվում՝ այն քաղաքացիների, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար) ցուցակը, նրանց անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և **առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթը և չափը**: Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորությունները:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է պարտապանին սնանկ ճանաչելու երկու ընթացակարգ՝ **սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում)** կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում):

Սեփական սնանկությունը ճանաչելու դիմումի ձևը և բովանդակությունը սահմանված են «Մասնկության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ օրենսդիրը, հաշվի առնելով սեփական սնանկության ճանաչման նպատակով դատարան դիմելու պարտականության ծագման հիմքերը և սեփական նախաձեռնությամբ սնանկ ճանաչվելու հիմքերը, իմպերատիվ ձևով ամրագրել է կամավոր սնանկության դիմողի կողմից պարտատիրոջ դրամական պահանջի չափի, պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերի՝ համապատասխան հաշվարկներով, պարտավորության կամ դրա մասի (մասերի) կատարման ժամկետի, ժամանակավոր կառավարչի թեկնածության վերաբերյալ առաջարկության կամ դատարանի ընտրությանը թողնելու վերաբերյալ համաձայնության մասին դիմումում նշելու պարտականությունը: Օրենսդիրը դիմողի վրա է դրել նաև **առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթի և չափի վերաբերյալ** դիմումին կից ապացույց ներկայացնելու պարտականություն՝ չմասնավորեցնելով ապացույցի այն տեսակը, որով կարող են հավաստվել դիմումի քննության համար նշանակություն ունեցող վերոգրյալ փաստական հանգամանքները: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կամավոր սնանկության դիմումին կից ներկայացված՝ պարտատիրոջ կողմից տրված տեղեկանքը, որը պարունակում է պարտավորության **ծագման հիմքի** վերաբերյալ համապատասխան տեղեկություններ, և որով **բացահայտվում է պարտավորության բնույթը**, ևս կարող է բավարար ապացույց գնահատվել: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սնանկության վարույթի այս փուլում օրենսդիրը կարևորել է միայն պարտավորության բնույթի և չափի բացահայտումը, ինչը պայմանավորված է սնանկության վարույթի հետագա փուլերի, մասնավորապես՝ պարտատերերի կողմից պահանջների ներկայացման փուլի առանձնահատկություններով: Պահանջի հիմքում ընկած փաստական հանգամանքները հիմնավորելու առավել խիստ ապացուցողական շեմ օրենսդիրը սահմանել է այս փուլում՝ պահանջատիրոջ վրա դնելով իր պահանջը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ապացուցման բեռը («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մաս):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ կամավոր սնանկության վարույթի առանձնահատկություններից ելնելով գործում է այն կանխավարկածը, որ **դիմողը չի առարկում** իր՝ պարտատիրոջ հանդեպ ստանձնած պարտավորության գոյության կապակցությամբ, երբ կամավոր սնանկության դիմումին կից դատարան է ներկայացնում պարտավորությունը հավաստող համապատասխան ապացույցներ: Այդ ապացույցները վերաբերե-

լիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից գնահատելուց հետո դատարանը դրանք գնահատում է իրենց համակցության մեջ բավարարության տեսանկյունից՝ պարզելու համար պարտապահին սնանկ ճանաչելու «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 2.1-րդ կետերով սահմանված հատկանիշների առկայությունը:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կամավոր սնանկության վարույթում պարտատիրոջ կողմից տրված տեղեկանքը, որը պարունակում է նաև պարտավորության հիմքի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ, բավարար է պարտավորությունների բնույթը պարզված համարելու համար:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու անհնարինությունը պետք է հիմնավորվի դիմողի կողմից:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը դատավորն ընդունում է վարույթ՝ դիմումն ստանալու օրը (...):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է սնանկության վերաբերյալ դիմումը, եթե չեն պահպանվել նույն օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների պահանջները, և դատավորը հիմնավոր չի համարել համապատասխան փաստաթղթերի ներկայացման անհնարինությունը:

Նշված օրենսդրական կարգավորումները մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ այդ հոդվածների կարգավորման համատեքստից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրն իմպերատիվ ձևով ամրագրել է դիմումատուի պարտականությունը՝ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացնել բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Ընդ որում, փաստաթղթերի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու անհնարինության ապացուցման պարտականությունն օրենսդրի կողմից դրվել է հենց դիմողի վրա: Միաժամանակ դատարանին իրավունք է վերապահվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով վերադարձնել դիմումը, եթե վերը նշված պահանջը դիմողի կողմից չի պահպանվել, և դատավորը հիմնավոր չի համարել համապատասխան փաստաթղթերի ներկայացման անհնարինությունը: Այսպիսով, հաշվի առնելով դատավարության յուրաքանչյուր փուլի դերը, նշանակությունն ու առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի հարուցման փուլի նպատակը տվյալ դեպքում դիմումը վարույթ ընդունելու հարցի լուծումն է: Օրենսդիրը, այդ իսկ նկատառումից ելնելով, սահմանել է, որ այն պետք է ավարտվի որոշակի ակտի ընդունմամբ, այն է՝ դատարանի կողմից դիմումը վարույթ ընդունելու, ընդունումը մերժելու կամ վերադարձնելու մասին որոշում կայացնելով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես դատավարության յուրաքանչյուր փուլ, այնպես էլ գործի հարուցման փուլն ուղղված է յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի իրացման ապահովմանը: Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը պահպանված է համարվում նաև այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու

որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի (*տե՛ս, Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների թիվ ԱՐԴ/0062/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքնության իրավունքն անհրաժեշտ է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որն, ի թիվս այլոց, իրավունքի գերակայությունն ամրագրում է որպես Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մաս: Իրավունքի գերակայության հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որը պահանջում է, *inter alia*, որպեսզի դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի (*տե՛ս, Բրունսդեյկոնն ընդդեմ Ռումինիայի թիվ 28342/95 գանգաբով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, պարբ. 61*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ կամավոր սնանկության դիմումն արդեն իսկ վարույթ ընդունված լինելու պարագայում դիմումին կից ներկայացված՝ դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճռի օրինակի՝ որպես պարտավորության առկայությունը հիմնավորող ապացույցի թույլատրելիության և արժանահավատության հարցին ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-1293 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՈ-1293 որոշմամբ նշել է. «(...) վճռի առարկա իրավանորմի շրջանակներում վկայակոչվող դատական ակտերը բողոքին կցելու պահանջը ոչ իրավաչափ կերպով ծանրաբեռնում է բողոքաբերին: Ավելին, նման պահանջը ոչ միայն ոչ համարժեք սահմանափակում է դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացումը, այլև Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրաիրավական գործառույթի արդյունավետ և ամբողջական իրացման առումով խոչընդոտ է հանդիսանում՝ հնարավորություն չտալով Վճռաբեկ դատարանին օրենքով սահմանված այլ հիմքերի բավարարման պարագայում վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ և իրականացնել արդարադատություն: Վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջ նախատեսելն այն պարագայում, երբ դրանք հասանելի են դատավարության կողմերին և ՀՀ վճռաբեկ դատարանին (այդ թվում՝ համացանցի համապատասխան պաշտոնական կայքէջերից օգտվելու միջոցով), հիմնավոր չէ»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը, վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելով, այն հասանելի է դարձնում ինչպես դատավարության մասնակիցներին, այնպես էլ ցանկացած այլ անձի՝ այդ թվում այլ դատարաններին: Այսինքն՝ դատարանն ունի իրական հնարավորություն վճիռը նույնականացնող համապատասխան բավարար տեղեկությունների (մասնավորապես, վկայակոչվող դատական ակտն ընդունած մարմնի անվանումը, դատական ակտի անվանումը, ընդունման ամսաթիվը, գործի համարը) առկայության դեպքում ստուգել վճռի բովանդակությունը և օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքը: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ կամավոր սնանկության վարույթում որպես պարտավորության առկայությունը հիմնավորող ապացույց դիմումին կից ներկայացվում է դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճռի օրինակը, դատարանը՝ դրա արժանահավատությունը գնա-

հատելիս գրկված չէ ՀՀ դատական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատական իշխանության պաշտոնական կայքից օգտվելու և դրա միջոցով վճռի իսկությունը ստուգելու հնարավորությունից:

Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանի կողմից դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճիռը՝ որպես պարտավորության առկայությունը հիմնավորող ապացույց, ներկայացնելու հնարավորության բացառումը՝ այն ամեն դեպքում անթույլատրելի ապացույց գնահատելով, փաստորեն, ոչ իրավաչափ կերպով ծանրաբեռնում է կամավոր սնանկության դիմողին:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կամավոր սնանկության դիմումը վարույթ ընդունված լինելու և դիմումին կից՝ ի հիմնավորումն վճարային պարտավորության դատական տեղեկատվական համակարգից արտատպված վճիռ ներկայացվելու դեպքում, դատարանը պետք է այն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս օգտվի դատական իշխանության պաշտոնական կայքից և տվյալ ապացույցը մյուս թույլատրելի և վերաբերելի ապացույցների հետ միասին գնահատի դրանց բավարարության տեսանկյունից, պարզելու համար պարտապանի սնանկության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը՝ կայացնելու համար պարտապանին սնանկ ճանաչելու մասին կամ կամավոր սնանկության դիմումը մերժելու մասին վճիռ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործով Դատարանը դիմումի մերժման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ «տվյալ դեպքում պարտապան Սարգիս Ոսկանյանը սեփական սնանկությունը ճանաչելու պահանջով իր դիմումի հիմքում դրել է դատական ակտերի չստորագրված ու արտատպված տարբերակներ, ինչպես նաև պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկանքներ: Սույն գործով դիմումատուի ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումում վերջինս նշել է, որ Սարգիս Ոսկանյանն ունի պարտավորություններ, որը հիմնավորելու համար դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ԼԴ1/0250/02/16 քաղաքացիական գործով վճռի և 2017 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ ԼԴ1/0801/02/17 քաղաքացիական գործով վճռի չստորագրված ու արտատպված տարբերակներ, որոնցով հնարավոր չէ հաստատված համարել Սարգիս Սուրենի Ոսկանյանի՝ պարտատերերի հանդեպ որևէ չափով պարտավորությունների առկայության փաստը: Բացի այդ, դիմումին կից ներկայացվել են նաև «Ֆինքս» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված տեղեկանքներ՝ պարտավորությունների չափի վերաբերյալ, ինչը Դատարանի գնահատմամբ չի կարող հիմք հանդիսանալ պարտատերերի նկատմամբ պարտավորությունների առկայության փաստը հաստատված համարելու համար, քանի որ դիմումատուի կողմից չեն ներկայացվել այդ տեղեկությունների հիմք կազմող պատշաճ փաստաթղթերը: Միաժամանակ Դատարանը փաստում է, որ ներկայացված տեղեկանքները և որոշ գումարների չափը միայն ներկայացված տեղեկանքներում զետեղված լինելը՝ առանց վարկային պայմանագրի և դրա անբաժանելի մասը կազմող պայմանների առկայության (պատշաճ վավերացված վճռի բացակայության դեպքում), չի կարող բավարար համարվել դրամական պարտավորություն ունենալու փաստը հիմնավորված համարելու համար, քանի որ միայն պահանջատիրոջ տված միակողմանի

փաստաթուղթը չի կարող բավարար համարվել պարտավորության չափը և առկայությունը հաստատված համարելու համար: Այսպիսով, վերը թվարկված ողջ ապացույցների համակցված գնահատմամբ Դատարանը հաստատված է համարում այն փաստը, որ պարտապանի մոտ առկա չեն առերևույթ անվճարունակության հատկանիշներ, քանի որ պարտապանի պարտավորություններն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով չեն գերազանցում պարտապանի ակտիվների արժեքը (պարտավորության փաստի բացակայություն)»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Սարգիս Ոսկանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, հիմնավոր է համարել Դատարանի վերը շարադրված պատճառաբանությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցի գնահատումը ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարել որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմումին կից ներկայացված՝ «Ֆինքա» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից 21.01.2018 թվականի դրությամբ պարտապան Սարգիս Ոսկանյանի վարկի քաղվածքը, «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 26.01.2018 թվականին տրված հաճախորդի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը գնահատելիս Դատարանը պետք է պարզեր՝ արդյոք դրանք պարունակում են նաև պարտավորության հիմքի վերաբերյալ համապատասխան բավարար տեղեկություններ՝ պարտավորությունների բնույթը բացահայտելու համար: Մինչդեռ Դատարանը սահմանափակվել է միայն պարտավորության հիմքի վերաբերյալ ապացույցների բացակայության դատողությամբ՝ անտեսելով, որ պարտատիրոջ կողմից տրված միակողմանի տեղեկանքը ևս կարող է բավարար տեղեկություններ բովանդակել պարտավորության բնույթի վերաբերյալ: Նշված հանգամանքն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2016 թվականի թիվ ԼԴ1/0250/02/16 և 13.10.2017 թվականի թիվ ԼԴ1/0801/02/17 վճիռների՝ դատական տեղեկատվական համակարգից արտատպված օրինակների վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դիմումատու Սարգիս Ոսկանյանը, ունենալով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2018 թվականի և ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.05.2018 թվականի որոշումները, որոնցով նրա դիմումներն ընդունվել են վարույթ, ըստ էության, ստացել է որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու դատարանների կողմից որպես այդ հարցի կապակցությամբ կայացված դատական ակտեր, կարող էր համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը «չի վերացվի»: Վճռաբեկ դատարանի վերը նշված հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով իմպերատիվ ձևով ամրագրել է դատավորի պարտականությունը դիմումն ընդունել վարույթ, եթե պահպանվել են նույն օրենքով նախատեսված պահանջները: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ դատարանների կողմից

կայացվել է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, ապա դիմողի մոտ արդեն ձևավորվում է այն համոզմունքը, որ դիմումը ներկայացվել է օրենքի պահանջների պահպանմամբ, այդ թվում պահպանված է նաև օրենքով սահմանված կարգով դիմումին կից ներկայացված փաստաթղթերին ներկայացվող պահանջն առնվազն **թույլատրելիության առումով՝ դրա ներկայացման ձևի տեսանկյունից**: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված փաստաթղթերի պատճենները դիմումին կից ներկայացված լինելու և դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումներ կայացված լինելու պայմաններում Սարգիս Ոսկանյանի մոտ ձևավորվել է այն համոզմունքը, որ դիմումը ներկայացվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջների պահպանմամբ: Այսինքն՝ դիմումի ըստ էության քննության փուլում Դատարանն այլևս չէր կարող ներկայացման ձևի տեսանկյունից թույլատրելիության հարց կրկին բարձրացնել՝ սահմանափակվելով միայն այդ ապացույցների արժանահավատության և բավարարության տեսանկյունից գնահատմամբ: Ընդ որում, ստորադաս դատարաններն այդ փաստաթղթերի արժանահավատության գնահատումը կարող էին իրականացնել՝ օգտագործելով դատական տեղեկատվական համակարգի տվյալները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի իրականացվել լրիվ և բազմակողմանի քննություն՝ գործում առկա բոլոր ապացույցների գնահատման ուղղությամբ, հետևաբար առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի հանգամանքները պարզելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ և 365-րդ հոդվածների ու 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը: Ընդ որում, գործի նոր քննության ժամանակ անհրաժեշտ է հետազոտել դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ Սարգիս Ոսկանյանի կողմից ներկայացված կամավոր սնանկության դիմումում նշված՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իա» կետի համա-

ձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝ պարտապանը՝ սեփական անվճարունակությունը (սնանկությունը) ճանաչելու համար ներկայացվող հայցադիմումներով:

Նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավակարգավորումները, գտնում է, որ վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ սնանկության դատարան նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Մասնկության գործ թիվ
Նախագահող դատավոր՝

Մասնկության գործ թիվ **ԵԱԲԴ/0462/04/16**
2019թ.
ԵԱԲԴ/0462/04/16
Գ. Խանդանյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 27-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ դիմումի «Մանտրա Մակինա Լիմիթեդ» ընկե-
րության (այսուհետ՝ Ընկերություն)՝ «Աշտարակ Կաթ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Կազմակերպու-
թյուն) սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքա-
ցիական դատարանի 17.07.2019 թվականի որոշման դեմ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»
ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցչի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությանը ճանաչել սնանկ:
Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր
իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիաթյան) 19.12.2016 թվականի վճռով դիմու-
մը բավարարվել է:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր
իրավասության դատարանի 17.02.2017 թվականի որոշմամբ Կազմակերպության սնանկու-
թյան գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատվել է մասնակիորեն, նույն որոշ-
մամբ հաստատվել է նաև Բանկի պահանջը՝ 10.803.160,73 ԱՄՆ դոլարի և 21.170.000 ՀՀ դրա-
մի չափով՝ որպես ապահովված պահանջ:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.09.2017 թվականի «Գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով իրականացնելը թույլատրելու մասին» որոշմամբ թույլատրվել է նաև Կազմակերպության պարտավորությունների համար Բանկի օգտին գրավադրված՝ Լոռու մարզի Լոռուց գոմեր հանդամաս հանգրվան-համալիր հասցեում գտնվող, երրորդ անձ Հայկ Ափոյանին պատկանող անշարժ գույքի (5,2հա ընդհանուր մակերեսով հողատարածք և 1.899,34քմ ընդհանուր մակերեսով շենք-շինություն) (այսուհետ՝ Անշարժ գույք) վաճառքը՝ 79.730.000 ՀՀ դրամ մեկնարկային արժեքով:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ա. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 26.02.2019 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Բանկը 03.05.2019 թվականին միջնորդել է Բանկի գրավի առարկա հանդիսացող Անշարժ գույքը, որպես սեփականություն, փոխանցել Սարգիս Վարդանյանին և վերջինին փոխանցվելու դեպքում պարտատերերի ռեեստրում հաշվառված Բանկի պահանջը նվազեցնել գրավադրված գույքի վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի (25.020.124 ՀՀ դրամի) և անշարժ գույքի պահպանման, փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված (վճարման ենթակա) գումարների տարբերության չափով. Բանկը, որպես կառավարչի վարձատրության գումար, վճարել է 1.251.006 ՀՀ դրամ (25.020.124*5%):

Դատարանի 31.05.2019 թվականի որոշմամբ Բանկի միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.07.2019 թվականի որոշմամբ Բանկի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասը, խախտել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունը չի բխում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից: Նման մեկնաբանության արդյունքում խախտվում են ինչպես պարտատերերի, այնպես էլ պարտապանի շահերը, քանի որ հնարավոր է իրավիճակ, երբ մեկնարկային գինը նվազի և հասնի անշարժ գույքի գնահատված արժեքի 5 տոկոսին: Արդյունքում ստորադաս դատարանների մեկնաբանության կիրառման դեպքում ո՛չ պարտատիրոջ պահանջը կբավարարվի, ո՛չ պարտապանի պարտավորությունը կնվազեցվի, այլ միայն կվճարվի կառավարչի վարձատրությունը:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ «մեկնարկային գին» արտահայտության ներքո պետք է նկատի ունենալ լոտի վաճառքի համար նախատեսված գինը, որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին, հետևաբար «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում ամրագրված «գրավի առարկայի արժեք» հասկացությունը չի նույնատու գույքի մեկնարկային գնի հետ: Մինչդեռ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված «գրավի առարկայի արժեք» հասկացու-

թյունը դրանում պարունակող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանելու արդյունքում հնարավոր չէ եզրակացնել, որ օրենսդիրը տարբերակել է այս երկու հասկացությունները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.07.2019 թվականի որոշումը և այն փոփոխել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Դատարանի թիվ ԵԱՔԳ/0462/04/16 սնանկության գործով 19.12.2016 թվականի վճռով Կազմակերպությունը ճանաչվել է սնանկ (**գործի հավելված, գ.թ. 8-13**):

2) Դատարանի 17.02.2017 թվականի որոշմամբ մասնակի հաստատվել է Կազմակերպության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը: Նշված որոշմամբ, ի թիվս այլ պահանջների, հաստատվել է նաև Բանկի՝ 10.803.160,73 ԱՄՆ դոլարի և 21.170.000 ՀՀ դրամի չափով ապահովված պահանջը (**գործի հավելված, գ.թ. 16-73**):

3) Դատարանի 20.09.2017 թվականի որոշմամբ թույլատրվել է նաև Կազմակերպության պարտավորությունների համար Բանկի օգտին գրավադրված՝ Լոռու մարզի Լոռոնց գումեր հանդամաս հանգրվան-համալիր հասցեում գտնվող, երրորդ անձ Հայկ Ափոյանին պատկանող անշարժ գույքի (5,2հա ընդհանուր մակերեսով հողատարածք և 1.899,34քմ ընդհանուր մակերեսով շենք-շինություն) վաճառքը՝ 79.730.000 ՀՀ դրամ մեկնարկային արժեքով (**գործի հավելված, գ.թ. 74-138**):

4) Բանկը 03.05.2019 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ խնդրելով Կազմակերպության պարտավորությունների համար Բանկի օգտին գրավադրված անշարժ գույքը վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի՝ 25.020.124 (քսանհինգ միլիոն քսան հազար մեկ հարյուր քսանչորս) ՀՀ դրամի դիմաց, որպես սեփականություն, փոխանցել Սարգիս Հարությունի Վարդանյանին: Միաժամանակ Բանկը հայտնել է իր պատրաստակամությունը փոխհատուցելու անշարժ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ սեփականության իրավունքով Սարգիս Վարդանյանին փոխանցվող Անշարժ գույքի արժեքի՝ 25.020.124 ՀՀ դրամի 5 տոկոսի չափով (**գործի հավելված, գ.թ. 141-142**):

5) Բանկի կողմից սնանկության հատուկ հաշվին՝ որպես սնանկության կառավարչի վարձատրության գումար, փոխանցվել է 1.251.006 ՀՀ դրամ (**գործի հավելված, գ.թ. 147,151**):

4. Վճռաբեկ դատարանի պայմանադրությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել «ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գին» և «գրավի առարկայի արժեք» հասկացությունների բովանդակությունն այն իրավիճակում, երբ պարտավորների ցուցակում ընդգրկված պարտավորելը միջնորդել է դատարանին որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին փոխանցել գրավի առարկան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովված իրավունքն օրենքի կամ պայմանագրի ուժով, **ի ապահովումն պարտավորության կատարման**, գույքի կամ գույքային իրավունքի կամ պարտավորական իրավունքի նկատմամբ պարտատիրոջ իրավունքն է:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պարտապանին պատկանող գույքի վաճառքն իրականացվում է «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իր միջնորդությունը կառավարիչը ներկայացնում է դատարան՝ այդ մասին երեք օր առաջ տեղեկացնելով պարտատերերին նույն օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կարգով: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, *աճուրդի առաջարկվող մեկնարկային գինը*, աճուրդի անցկացման օրը:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝ *աճուրդ*՝ սակարկությունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին:

լուր՝ աճուրդով վաճառվող կամ մրցույթով առաջարկվող գույք կամ իրավունք, որն ունի համապատասխան նկարագրություն, նույն օրենքով նախատեսված այլ տվյալներ, իսկ աճուրդի դեպքում՝ նաև մեկնարկային գին:

մեկնարկային գին՝ լուրի վաճառքի համար նախատեսված գին, որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գինը հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր է դրանից, ապա պարտատերերի ցանկում ընդգրկված պարտատերն իրավունք ունի իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու գրավի առարկան՝ փոխհատուցելով այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ *գրավի առարկայի արժեքի* հինգ տոկոսի չափով: Այդ դեպքում տվյալ պարտատիրոջ պահանջի չափը չի նվազեցվում գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարի չափով:

Հիմք ընդունելով վկայակոչված նորմերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սնանկության վարույթում առանձնահատուկ ուշադրության է արժանացրել ապահովված պահանջների և դրանց բավարարման հարցը՝ առանձին նորմերով նախատեսելով դրանց հետ կապված հարաբերությունների կարգավորումը: Մասնավորապես, վերը թվարկված կարգավորումների ուժով սնանկության վարույթում ապահովված պահանջատերն օժտված են իրավական հնարավորությամբ՝ ստանալու գրավի առարկան կամ իրենց նշած անձի օգտին, կամ որպես իրենց սեփականություն: Նման կարգավորումը բխում է

ապահովված իրավունքի բնույթից, քանի որ պարտատերը, որը սնանկության վարույթում դարձել է պահանջատեր, պարտապանի հետ որոշակի քաղաքացիաիրավական՝ մասնավորապես պարտավորական հարաբերությունների մեջ մտնելիս ձեռնարկել է միջոցներ ապահովելու իր պահանջի կատարումը՝ հիմնական պարտավորության հետ միասին պարտապանի հետ մտնելով նաև գրավից ծագող հարաբերությունների մեջ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արժևորելով այն հանգամանքը, որ պահանջատերը (ապահովված իրավունքով պարտատերը) ի սկզբանե ձեռնամուխ է եղել իր պահանջի կատարումն ամբողջությամբ կամ մասամբ ապահովելու այլ միջոցներով, մասնավորապես՝ գրավով, օրենսդիրը նրա համար որոշակի գործիքակազմ է սահմանել իր պահանջի բավարարումը հենց այդ ապահովված իրավունքի առարկայի հաշվին ստանալու համար՝ միաժամանակ նախատեսելով որոշակի պահանջներ այդ իրավունքի իրացման համար:

Անդրադառնալով այդ պահանջներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որպեսզի ապահովված պահանջով պահանջատերն օգտվի վերոնշյալ կարգավորմամբ ամրագրված իր հնարավորությունից, նախ և առաջ հարկավոր է, որ ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գինը հավասար լինի ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր լինի դրանից: Այդ նախապայմանին համապատասխանելու դեպքում արդեն պարտատիրոջ առջև դրվում են հետևյալ պահանջները՝

1. *փոխհատուցել այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը,*

2. *փոխհատուցել կառավարչի վարձարրությունը՝ գրավի առարկայի արժեքի հինգ տոկոսի չափով:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանություններ են ձևավորվել երկրորդ պահանջի կապակցությամբ, մասնավորապես՝ տվյալ իրավիճակում կառավարչի վարձատրությունը հաշվարկելիս *գրավի առարկայի արժեքի որոշման կապակցությամբ*, ուստի միասնական դատական պրակտիկա ապահովելու նկատառումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում տեղ գտած՝ **«գրավի առարկայի արժեքի հինգ տոկոսի չափով կառավարչի վարձարրություն»** արտահայտության մեկնաբանությամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով ամրագրված իրավանորմի մեկնաբանման կանոնով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում տեղ գտած՝ **«գրավի առարկայի արժեքի հինգ տոկոսի չափով կառավարչի վարձարրություն»** արտահայտության բովանդակությունը հարկավոր է բացահայտել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի մի շարք կարգավորումների լույսի ներքո՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը:

Այսպես՝ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատերը չի կարող մասնակցել պարտապանին պատկանող իր համապատասխան պարտավորության համար չսպահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխմանը մինչև սպահովված իրավունքի առարկայի իրացումը, քանի դեռ ապահովված իրավունքի առարկայի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին, բացառությամբ դատարանի որոշմամբ համարժեք պաշտպանություն տրամադրելու դեպքերի: Եթե *սպահովված իրավունքի առարկայի արժեքը (մեկնարկային գինը)* հրապարակային սակարկություններով իրացման ընթացքում կամ գույքի կորստի (ոչնչացման, հափշտակության) կամ վնասելու արդյունքում նվազում է ապահովված պահանջի չափից, ապա ապահովված պարտատերը ձեռք է բերում քվեարկության ձայնի իրավունք՝ ապահովված իրավունքի առարկայի արժեքի նվազած չափով:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո գույքը (ներառյալ դեբիտորական պարտքերը, վճարային պահանջի իրավունք վկայող արժեթղթերը և այլ պահանջի իրավունքները) չիրացվելու դեպքում տվյալ պահի դրությամբ բավարարում չստացած՝ պահանջների բավարարման առաջիկա հերթում ընդգրկված պարտատերերն իրավունք ունեն պահանջելու կառավարչից՝ **չկայացած աճուրդի մեկնարկային գնով** գույքը հանձնել իրենց որպես տվյալ խմբի բոլոր պարտատերերի ընդհանուր բաժնային սեփականություն, ըստ իրենց գրանցված պահանջների համամասնական բաժինների, պայմանով, որ պարտատերերը նախքան գնման գործարքի կնքումն անվճարունակության հաշվին կկատարեն գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները, տվյալ գույքի պահպանության, իրավունքի ճանաչման (գրանցման), գնահատման ու իրացման համար կատարված ծախսերը, կառավարչի հավելյալ վարձատրությունը մեկ տոկոսի չափով և գույքի մեկնարկային գնի ու այդ պարտատիրոջ մասով գրանցված պահանջների գումարի տարբերությունը, եթե այն առկա է:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ կառավարիչը պարտավոր է պարտապանի գույքի կազմում ընդգրկված պահանջի իրավունքների (դեբիտորական պարտքերի, վճարային պահանջի իրավունք վկայող արժեթղթերի) աճուրդները սկսել ոչ ուշ, քան լուծարման որոշումից 2 ամիս հետո և 15-օրյա պարբերականությամբ յուրաքանչյուր հերթական աճուրդը կազմակերպել չկայացած աճուրդի *մեկնարկային գնի 10 րոկոս նվազեցմամբ*:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աճուրդը չկայացած համարվելու դեպքում հաջորդ աճուրդի պայմանները, այդ թվում՝ *մեկնարկային գինը*, կարող են փոփոխվել:

Համակարգային վերլուծության ենթարկելով վկայակոչված իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելիս կառավարչի կողմից առաջարկվում է մեկնարկային գին, որը, սակայն, աճուրդը չկայանալու դեպքում փոփոխվում է, այն է՝ յուրաքանչյուր հերթական աճուրդը կազմակերպվում է չկայացած աճուրդի մեկնարկային գնի 10 տոկոսի նվազեցմամբ: Վերոգրյալից հետևում է, որ մեկնարկային գինը՝ որպես հրապարակային սակարկության իրականացման համար անհրաժեշտ պայման, հաստատուն չէ և օրենքով նախատեսված դեպքերում ենթակա է փոփոխման:

Անդրադառնալով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ վկա-

յակոչված հողվածում խոսելով գույքի արժեքի նվազումից՝ օրենսդիրը փաստորեն նկատի է ունեցել գույքի մեկնարկային գնի նվազումը, քանի որ վկայակոչված կարգավորման մեջ նույնացվել են «ապահովված իրավունքի առարկայի արժեք» և «մեկնարկային գին» հասկացությունները: Այլ կերպ ասած՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրն «ապահովված իրավունքի առարկայի արժեք» հասկացության ներքո նկատի է ունեցել ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գինը:

Այսպիսով, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորման վերլուծության արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նախ՝ հրապարակային սակարկություններով գույքի իրացման ժամանակ գույքի արժեքը կարող է նվազել, և երկրորդ՝ գույքի արժեքի նվազում ասելով՝ օրենսդիրը փաստորեն նկատի է ունեցել գույքի մեկնարկային գնի նվազումը, քանի որ վերը վկայակոչված կարգավորման մեջ օրենսդիրը նույնացրել է «ապահովված իրավունքի առարկայի արժեք» և «մեկնարկային գին» հասկացությունները:

Անդրադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորմանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հոդվածով նույն հերթում գտնվող պահանջատերերի (չապահովված պահանջներով պահանջատերեր) համար օրենսդիրը նախատեսել է հնարավորություն մի շարք պահանջների իրականացման դեպքում գույքը վերցնել որպես տվյալ խմբի բոլոր պարտատերերի ընդհանուր բաժնային սեփականություն **չկայացած աճուրդի մեկնարկային գնով**: Սույն կարգավորումից Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ օրենսդիրը նախատեսել է նաև մեկ այլ դեպք, երբ հնարավոր է հրապարակային սակարկություններով վաճառվող գույքը վերցնել ի սեփականություն, ընդ որում՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն, որ օրենսդիրը նպատակ է հետապնդել որոշակի պահանջների բավարարման դեպքում հանձնել գույքը պարտատերերին ի սեփականություն ոչ թե դրա շուկայական արժեքով, այլ **չկայացած աճուրդի մեկնարկային գնով**: Նշվածից կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը հրապարակային սակարկություններով վաճառվող գույքը պարտատերերին ի սեփականություն հանձնելու դեպքում որևէ իրավական արժեք չի տվել այդ գույքի շուկայական արժեքին, այլ կարևորել է **չկայացած, այսինքն՝ վերջին աճուրդի մեկնարկային գինը**:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի մի շարք կարգավորումների բովանդակության լույսի ներքո վերհանելով օրենսդրի կողմից դրանցում ներդրված նպատակը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում տեղ գտած *«գրավի առարկայի արժեքի հինգ տոկոս»* արտահայտության ներքո պետք է նկատի ունենալ իրացվող գույքի *մեկնարկային գնի հինգ տոկոսը*, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր հաջորդ աճուրդի դեպքում մեկնարկային գինը փոփոխվում է՝ նվազում է 10 տոկոսով, *«գրավի առարկայի արժեքի հինգ տոկոս»* ներքո պետք է նկատի ունենալ գրավի առարկայի *վերջին չկայացած աճուրդով առաջարկված մեկնարկային գնի հինգ տոկոսը*:

Վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում տրված «մեկնարկային գին» եզրույթը վերաբերում է վերջին չկայացած աճուրդում առաջարկված մեկնարկային գնին, որը, եթե հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր է դրանից, ապա հնարավորություն է տալիս պարտատերերի ցանկում ընդգրկված պարտատիրոջն իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականու-

թյուն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու գրավի այդ առարկան: Ինչ վերաբերում է նշված իրավունքն իրացնելու համար կառավարչի վարձատրության հարցին, ապա այն պետք է վճարվի գրավի առարկայի՝ վերջին չկայացած աճուրդով սահմանված «գրավի առարկայի արժեքի» հինգ տոկոսից, որտեղ «գրավի առարկայի արժեք» եզրույթը վերը նշված վերլուծությունների համատեքստում նույնանում է «չկայացած աճուրդում գույքի համար սահմանված մեկնարկային գին» հասկացության հետ, որպիսի մեկնաբանությունը բխում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի ընդհանուր տրամաբանությունից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում նկարագրված իրավիճակում պարտատիրոջ պահանջը ենթակա է նվազեցման միայն գրավի առարկա հանդիսացող գույքի մեկնարկային գնի չափով, իսկ գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարների չափով պահանջի նվազեցում չի իրականացվում: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի այն կարգավորումից, համաձայն որի՝ ... այդ դեպքում տվյալ պարտատիրոջ պահանջի չափը չի նվազեցվում գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարի չափով:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ պարտավորների ցուցակում ընդգրկված պարտավորելը կարող է իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին սրանսպ գրավի առարկա հանդիսացող գույքը՝ հետևյալ պայմանների առկայության դեպքում.

1. եթե իրացվող գույքի վերջին չկայացած աճուրդի համար առաջարկվող մեկնարկային գինը հավասար է ապահովված պարտավորելի պահանջի գումարին կամ ցածր է դրանից,
2. եթե ապահովված պարտավորելը փոխհատուցում է այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև
3. եթե փոխհատուցում է կառավարչի վարձատրությունը՝ գրավի առարկայի արժեքի, այսինքն՝ վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի հինգ տոկոսի չափով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործով Բանկն ընդգրկվել է որպես 10.803.160,73 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 21.170.000 ՀՀ դրամի ապահովված պահանջատեր: Ի թիվս այլ գույքի՝ Բանկի պահանջն ապահովված է եղել Հայկ Ափոյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզի Լոռոնց գումեր հանդամաս հասցեում գտնվող անշարժ գույքի՝ հանգրվան-համալիրի գրավով, որպիսի անշարժ **գույքի շուկայական արժեքը** «Վարմօս Ռիելթթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գնահատվել է **79.730.000 ՀՀ դրամ**, իսկ վերջին աճուրդին ներկայացվող անշարժ **գույքի մեկնարկային գինը** սահմանվել է **25.020.124 ՀՀ դրամ**: Բանկը, դիմելով Դատարան, խնդրել է Բանկի գրավի առարկա հանդիսացող ՀՀ, Լոռու մարզի Լոռոնց գումեր հանդամաս հասցեում գտնվող անշարժ գույքը դրա վերջին չկայացած աճուրդում սահմանված մեկնարկային գնի՝ 25.020.124 ՀՀ դրամի դիմաց որպես սեփականություն փոխանցել Սարգիս Վարդանյանին՝ միաժամանակ պատրաստականություն հայտնելով Ընկերության սնանկության հաշվին փոխանցել այդ անշարժ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ կառավարչի վարձատրության գումարը՝ քննարկվող անշարժ գույքի վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի 5

տոկոսի, այն է՝ 1.251.006 ՀՀ դրամի չափով՝ խնդրելով դիմումը բավարարելու դեպքում Ընկերության պահանջը նվազեցնել այդ անշարժ գույքի վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի՝ 25.020.124 ՀՀ դրամի և այդ գույքի պահպանման ու փոխանցման ծախսերի, կառավարչի վարձատրության համար վճարման ենթակա գումարների տարբերության չափով:

Դատարանի որոշմամբ մերժվել է Բանկի կողմից 03.05.2019 թվականին ներկայացված միջնորդությունն այն պատճառաբանությամբ, որ աճուրդի մեկնարկային գնի նվազումը չի կարող դիտվել որպես ապրանքի շուկայական արժեքի նվազում՝ հիմք ընդունելով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված մեկնարկային գին հասկացությունը: Դատարանն արձանագրել է, որ վերաբերելի իրավանորմի տառացի մեկնաբանությունից ուղղակի բխում է, որ «շուկայական արժեք» և «մեկնարկային գին» հասկացությունները չեն կարող նույնանալ և ունենալ նույն իմաստը: Նման պայմաններում, Դատարանը, արձանագրելով, որ գրավադրված գույքի շուկայական արժեքը կազմում է 79.730.000 ՀՀ դրամ, գտել է, որ տվյալ պարագայում Բանկը կառավարչի վարձատրությունը պետք է հաշվարկեր և վճարել նշված գնի 5 տոկոսի չափով:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի որոշումը թողնելով անփոփոխ, նշել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում ամրագրված գրավի առարկայի արժեքի հինգ տոկոսի չափով կառավարչի վարձատրության փոխհատուցում ասելով՝ պետք է ի նկատի ունենալ դեռևս աճուրդ-վաճառքի չներկայացված տվյալ անշարժ գույքի արժեքը, կոնկրետ դեպքում՝ գույքի գնահատման արժեքը: Բանկը կառավարչի վարձատրության փոխհատուցումը պետք է իրականացներ գրավի առարկայի գնահատման արժեքի՝ 79.730.000 ՀՀ դրամի 5 տոկոսի չափով, այսինքն՝ 3.986.500 ՀՀ դրամի չափով, մինչդեռ Բանկի կողմից փոխհատուցումը նախատեսվել է իրականացնել այդ գույքի վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի՝ 25.020.124 ՀՀ դրամի հինգ տոկոսի չափով, այսինքն՝ 1.251.006 ՀՀ դրամի չափով: Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ մեկնարկային գին ասելով՝ պետք է հասկանալ լոտի վաճառքի համար նախատեսված գինը, որն աճուրդի սկզբում առաջարկվում է աճուրդի մասնակիցներին, ուստի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում ամրագրված «գրավի առարկայի արժեք» հասկացությունը չի նույնանում գույքի մեկնարկային գնի հետ, հետևաբար գույքի արժեքն իրավաչափորեն պետք է որոշվի այդ գույքի գնահատման արժեքի միջոցով և ոչ թե մեկնարկային գնի միջոցով:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից սխալ է մեկնաբանվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով ամրագրված կարգավորումը, մասնավորապես՝ այն մեկնաբանվել է տվյալ նորմի՝ սույն որոշմամբ բացահայտված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ, ինչն անդրադարձել է գործի ելքի վրա, ուստի առկա է գործի՝ միջնորդությամբ բարձրացված հարցերի քննության անհրաժեշտություն սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 17.07.2019 թվականի որոշումը բեկանելու և գործը՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի՝ գրավի առարկա հանդիսացող Լոռու մարզի Լոռոնց գումեր հանդամաս հանգրվան-համալիր հասցեում գտնվող, երրորդ անձ Հայկ Ափոյանին պատկանող անշարժ գույքը, որպես սեփականություն, Սարգիս Վարդանյանին փոխանցելու

և վերջինիս փոխանցվելու դեպքում պարտատերերի ռեեստրում հաշվառված «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի պահանջը գրավադրված գույքի վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի (25.020.124 ՀՀ դրամի) և անշարժ գույքի պահպանման, փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված (վճարման ենթակա) գումարների տարբերության չափով նվազեցնելու մասին միջնորդությունը քննարկելու մասով, նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.07.2019 թվականի որոշումը և գործը՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի՝ գրավի առարկա հանդիսացող Լոռու մարզի Լոռոնց գույքի հանդամաս հանգրվան-համալիրի հասցեում գտնվող, երրորդ անձ Հայկ Ափոյանին պատկանող անշարժ գույքը, որպես սեփականություն, Սարգիս Վարդանյանին փոխանցելու և վերջինիս փոխանցվելու դեպքում պարտատերերի ռեեստրում հաշվառված «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի պահանջը գրավադրված գույքի վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի (25.020.124 ՀՀ դրամի) և անշարժ գույքի պահպանման, փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված (վճարման ենթակա) գումարների տարբերության չափով նվազեցնելու մասին միջնորդությունը քննարկելու մասով, ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3928/02/16
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3928/02/16
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Տ. Նազարյան
Ն. Բարսեղյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի նոյեմբերի 04-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.08.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ «Կապա ՀԷԿ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանի՝ գրավի առարկան հավասարաթեք գույքով փոխարինելու, իսկ դրա անհնարինության դեպքում գրավի իրավունքը դադարած ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությանը պարտավորեցնել փոխարինել շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի թիվ G12-005071 պայմանագրում նշված գրավի առարկա հանդիսացող D=1220 տրամաչափի 8000 գծ խողովակներն այլ հավասարաթեք գույքով, այդ թվում նաև՝ դրամական միջոցներով, իսկ դրա անհնարինության դեպքում Բանկի գրավի իրավունքը նշված գույքի նկատմամբ ճանաչել դադարած:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 13.03.2017 թվականի վճռով հայցը՝ գրավի առարկան հավասարաթեք գույքով փոխարինելու պահանջի մասով, մերժվել է, իսկ գրավի իրավունքը դադարած ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.08.2017 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Դատարանի 13.03.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ, 259-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ստորադաս դատարանները եզրահանգել են սույն իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի կիրառման անհնարինության մասին այն իմաստով, որ Բանկն իր դատական պաշտպանությունը և պահանջների բավարարումն իրականացնում է որպես գրանցված պարտատեր թիվ ԵԿԴ/0011/04/13 սնանկության գործով: Մինչդեռ ստորադաս դատարաններն անտեսել են, որ Բանկը ձևական առումով՝ միայն թղթի վրա գոյություն ունեցող գրավի առարկայի հիմքով է ճանաչվել որպես ապահովված պարտատեր:

Բացի այդ, սույն իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի կիրառումը չի բացառվում, քանի որ օրենքը չի նախատեսում որևէ բացառություն՝ գրավառուի կողմից գրավի առարկայի փոխարինման պահանջ ներկայացնելու համար, այդ թվում նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ հոդվածի հիմքով, ուստի այդ հոդվածի կիրառման բացառումն անօրինական է և չի բխում ո՛չ նշված հոդվածների, ո՛չ էլ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի բովանդակությունից:

Ընդ որում, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը գրավի առարկայի փոխարինման հնարավորություն չի նախատեսում, ինչն ինքնին բացառում է Բանկի կողմից սնանկության վարույթի շրջանակներում նման պահանջ ներկայացնելը և, առավել ևս, այդ պահանջի բավարարում ստանալը: Գրավի առարկայի փոխարինման ինստիտուտը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածով, ուստի Բանկը, ղեկավարվելով նշված հոդվածի դրույթներով, իր խախտված իրավունքների վերականգումը փորձել է իրականացնել առանձին քաղաքացիական գործի վարույթով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.08.2017 թվականի որոշումը և այն փոփոխել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի և վարկառու Ընկերության միջև 01.03.2012 թվականին կնքվել է թիվ V12-005329 վարկային պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Բան-

կը վարկառուին տրամադրել է վարկ 900.000 ԱՄՆ դոլար գումարի չափով՝ մինչև 02.03.2015 թվականը մարման վերջնական ժամկետով (**հատոր 1-ին, գ.թ. 17- 19**):

2) Բանկի և Ընկերության միջև 01.03.2012 թվականին կնքվել է թիվ G12-005071 շրջանառության մեջ գտնող ապրանքների գրավի պայմանագիրը (այսուհետ՝ Գրավի պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ որպես Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովման միջոց Ընկերությունը գրավ է դրել Գրավի պայմանագրի 1.2 կետում նշված գրավի առարկան: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ գրավի առարկա են հանդիսանում գրավատուին սեփականության իրավունքով պատկանող շրջանառության մեջ գտնվող D=1.220 մմ տրամաչափի խողովակները (այսուհետ՝ Գրավի առարկա): Գրավի պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ Գրավի առարկայի արժեքը երկկողմանի համաձայնությամբ կազմում է 704.000.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ.12-15**):

3) Թիվ ԵԿԴ/0011/04/13 սնանկության գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) 26.03.2013 թվականի՝ օրինական ուժ ստացած վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հատոր 1-ին, գ.թ. 75-78, www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ**):

4) Թիվ ԵԿԴ/0011/04/13 սնանկության գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.03.2016 թվականի որոշմամբ Բանկի 751.109,35 ԱՄՆ դոլար գումարի չափով պահանջը Ընկերության նկատմամբ ճանաչվել է ապահովված (**հատոր 1-ին, գ.թ. 75-78**):

5) Ընկերության ֆինանսական վիճակի վերլուծության 4-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը ստեղծման պահից մինչև սնանկ ճանաչվելը իրականացրել է ընդամենը մեկ ձեռքբերման և մեկ օտարման գործարքներ: «Հայոտուսգազարդ» ՓԲԸ-ի հետ 05.11.2010 թվականին կնքած պայմանագրի համաձայն՝ 2011 թվականին ձեռք է բերվել 1.220 մմ տրամագծի 10.000 գմ խողովակներ ընդհանուր 605.460.000 ՀՀ դրամ արժողությամբ: 2012 և 2013 թվականների ընթացքում «Ամբերդ» ՍՊԸ-ին օտարվել են վերոնշված խողովակներից ընդհանուր 9.900.000 գմ խողովակներ 871.398.000 ՀՀ դրամ արժողությամբ: Վերլուծության 3.1 կետի համաձայն՝ պարտապանի հաշվեկշռում արտացոլված 5.045.500 ՀՀ դրամը 100 գմ 1.220 մմ տրամաչափի խողովակներ են, որոնք գույքագրման ժամանակ չեն ներկայացվել, սակայն առկա է հայտարարություն գողության վերաբերյալ, և այդ փաստի վերաբերյալ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Կոտայքի քննչական բաժանմունքի քննիչ Լ. Գրիգորյանի կողմից հարուցված է քրեական գործ թիվ 20105212, և կատարվում է նախաքննություն (**հատոր 1-ին, գ.թ. 21-23**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում սնանկ ճանաչված պարտապանի գույքի վերաբերյալ վճեռի ենթակայության մասին Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է

հեղինակ իրավական ինտրին. արդյո՞ք սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավի առարկան հավասարաթեք գույքով փոխարինելու պահանջը կարող է քննվել առանձին քաղաքացիական գործի շրջանակներում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Այլ օրենքներում **(բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն նույն օրենսգրքին:** Նմանատիպ դրույթ նախատեսում է նաև գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե նա ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները: Իրավաբանական անձին դատարանով սնանկ ճանաչելու հիմքերը, կարգը, ինչպես նաև սնանկ ճանաչված իրավաբանական անձի պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե գրավի առարկան ոչնչացել կամ վնասվել է կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքը դադարել է օրենքով սահմանված հիմքերով, ապա գրավատուն պարտավոր է ողջամիտ ժամկետում վերականգնել գրավի առարկան կամ այն փոխարինել այլ հավասարաթեք գույքով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 259-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ է համարվում գրավատուի մոտ թողնված ապրանքների գրավը՝ գրավատուին իրավունք վերապահելով փոխել գրավ դրված գույքի (ապրանքային պաշարների, հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, պատրաստի արտադրանքի և այլն) կազմը և բնական ձևը, պայմանով, որ դրանց ընդհանուր արժեքը չնվազի գրավի մասին պայմանագրում նշվածից: Շրջանառության մեջ գտնվող գրավ դրված ապրանքների արժեքի նվազեցումը թույլատրվում է գրավով ապահովված պարտավորության կատարված մասին համաչափ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավատուի կողմից օտարված՝ շրջանառության մեջ գտնվող ապրանքները ձեռք բերողի սեփականությանն անցնելու պահից դադարում են գրավի առարկա լինել, իսկ գրավի պայմանագրում նշված գրավատուի ձեռք բերված ապրանքները դատում են գրավի առարկա՝ գրավատուի մոտ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես

պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չտոնսահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը: ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ պարտապանին սնանկ ճանաչելը պարտավորությունը ոչ պատշաճ կատարած պարտապանի նկատմամբ դատական այնպիսի միջամտություն է, որի պայմաններում սահմանափակվում է պարտապանի գործողությունների շրջանակը մինչև սնանկության վարույթի ավարտը, որպիսի կարգավորման նպատակը պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովելն է (*տես*, «ԱռէկսիմԲանկ-ԳազպրոմԲանկի Խումբ» ՓԲԸ-ն ընդդեմ Հարություն Վարդանյանի թիվ ԵՄԳ/0049/04/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունները կենտրոնանում են **սնանկության վարույթում: Այդ իսկ նկատառումով «Սնանկության մասին» ՀՀ օրենքում 17.06.2016 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում դրա 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:** Նույն տրամանաբանությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանել է, որ սնանկ ճանաչվելու վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում:

Բացի այդ, սնանկության վարույթում սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ պարտավորությունների կենտրոնացմամբ հնարավորություն է ստեղծվում ապահովելու վերջինիս ակտիվների հավաքագրումը և դրանց հիման վրա **բոլոր** պարտատերերի շահերի ապահովումը՝ օրենքով սահմանված առաջնահերթությամբ վերջիններիս պահանջների բավարարմամբ: Հետևաբար, եթե սնանկ ճանաչված պարտապանն ունի իր օգտին կատարման ենթակա պարտավորություններ, այսինքն՝ տվյալ պարտավորություններով պարտատեր է, ապա պարտավորությունների կատարումը հնարավոր է **միայն սնանկության վարույթի շրջանակներում**, այլ կերպ ասած՝ պարտավորության կատարման արդյունքը պետք է կենտրոնանա սնանկության վարույթում, որպեսզի հետագայում բաշխվի պարտատերերի միջև: Նույն տրամաբանությամբ սնանկ ճանաչված պարտապանի պարտապաններն իրենց պարտավորությունները չեն կարող կատարել հօգուտ սնանկ ճանաչ-

ված պարտապանի պարտատերերի՝ շրջանցելով սնանկության վարույթը: Այլ կերպ ասած՝ չի թույլատրվում սնանկ ճանաչված պարտապանի պարտատիրոջն անմիջականորեն բավարարում տալը սնանկ ճանաչված պարտապանի հետ պարտավորական հարաբերությունների մեջ գտնվող պարտապանի կողմից (յրեն, «Դոն-Ալֆոն» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Յուրիկ Օհանյանի հայցն ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԳ/0254/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով հարուցվող քաղաքացիական հայցերով քաղաքացիական գործերը պետք է քննվեն սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակներում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր: Ընդ որում, նշված գործերը քննելիս կիրառման ենթակա են ինչպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույթները, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավակարգավորումները, եթե դրանք չեն հակասում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներին:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար կարևորում է, որ սնանկության գործերն առաջին աստիճանի դատարանում վարվում են դատավորի կողմից միանձնյա: Հետևաբար գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումն այն մասին, որ գործը հանձնվում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը ենթակա է քննության սնանկության դատարանում, նշանակում է, որ գործը պետք է հանձնվի հենց սնանկության գործը վարող դատավորին՝ հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը՝ պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առկայությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը նույն սնանկության գործի շրջանակում քննելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սնանկության վարույթի առկայության պայմաններում պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առկայությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը պետք է քննի պարտապանի սնանկության գործը վարող դատավորը: Նկատի ունենալով, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը հատուկ կարգավորում չունի այդ վեճերի լուծման ընթացակարգի վերաբերյալ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ վեճերը պետք է քննվեն որպես առանձին քաղաքացիական գործեր՝ գործի առանձին համարով՝ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոնները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Ընկերության միջև 01.03.2012 թվականին կնքվել է վարկային պայմանագիր: Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով 01.03.2012 թվականին կնքվել է Գրավի պայմանագիրը, որով գրավադրվել են շրջանառության մեջ գտնվող խողովակներ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 26.03.2013 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ: Ընկերության ֆինանսական վիճակի վերլուծության 4-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը ստեղծման պահից մինչև սնանկ ճանաչվելը իրականացրել է ընդամենը մեկ ձեռքբերման և մեկ օտարման գործարքներ: Վերլուծության 3.1 կետի համաձայն՝ պարտապանի հաշվեկշռում արտացոլված 5.045.500 ՀՀ դրամը իրենից ներկայացրել է 100 գ.մ 1.220 մ.մ տրամաչափի խողովակներ, որոնք գույքագրման ժամանակ չեն ներկայացվել, սակայն առկա է հայտարարություն գողության վերաբերյալ և այդ փաստի վերաբերյալ ՀՀ Ոստիկանության ՔԳԿ Կոտայքի

քննչական բաժանմունքի քննիչ Լ. Գրիգորյանի կողմից հարուցված է քրեական գործ թիվ 20105212 և կատարվում է նախաքննություն: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.03.2016 թվականին որոշմամբ Բանկի 751.109,35 ԱՄՆ դոլար գումարի չափով պահանջը Ընկերության նկատմամբ ճանաչվել է ապահովված:

Դատարանը, հիմք ընդունելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, արձանագրել է, որ սույն գործով ներկայացվել է գրավի առարկան փոխարինելու պահանջ, որն իրենից չի ներկայացնում ոչ գումարի բռնագանձման և ոչ էլ գույքի հանձնման պահանջ, ավելին՝ ներկայացված պահանջը ենթադրում է միայն Բանկի գրավի առարկայի՝ պարտապանի մի գույքի փոխարինում մեկ այլ գույքով, որը չի կարող հանգեցնել պարտապանի գույքային գանգվածի փոփոխության, որպիսի պայմաններում Դատարանը գտել է, որ գրավի առարկան փոխարինելու պահանջի մասով սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա չէ կարճման: Միաժամանակ Դատարանն արձանագրելով, որ հայցվորն իր իրավունքների պաշտպանությունն իրականացնում է սնանկության վարույթի շրջանակներում որպես գրանցված պարտատեր, ուստի նրա պահանջները պետք է իրականացվեն «Մասնկության մասին» ՀՀ օրենքին համապատասխան, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված գրավի առարկայի փոփոխման հնարավորությունը սույն գործով կիրառելի չէ: Միաժամանակ Դատարանը գտել է, որ հայցը ենթակա է մերժման նաև այն հիմքով, որ չի հիմնավորվել սնանկ ճանաչված Ընկերության մոտ գրավի առարկային հավասարաթեք այլ գույքի կամ դրամական միջոցների առկայությունը:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ արձանագրելով, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում: Վերաքննիչ դատարանն արձանագրելով, որ սույն քաղաքացիական գործը քննվել է սնանկության գործը քննող դատավորի վարույթում, գտել է, որ Դատարանն իրավացիորեն պատճառաբանել է սույն իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի կիրառման անհնարինությունն այն իմաստով, որ հայցվոր կողմը իր դատական պաշտպանությունը և պահանջների բավարարումը իրականացնում է որպես գրանցված պարտատեր թիվ ԵԿԴ/0011/04/13 սնանկության գործով Դատարանի 14.03.2016 թվականի որոշմամբ: Դրանով իսկ հիմնավորվում է Դատարանի կողմից սույն հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71-րդ հոդվածի կիրառումը: Միաժամանակ արձանագրելով, որ սնանկ ճանաչված Ընկերությունն այլ գույք չունի, Վերաքննիչ դատարանը գտել է, որ գրավի առարկան այլ հավասարաթեք գույքով փոխարինելը դառնում է անհնարին:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարու-

թյան օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տե՛ս, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ՝ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տե՛ս, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Սույն գործով ներկայացված պահանջն է՝ Ընկերությանը պարտավորեցնել փոխարինել թիվ 012-005071 շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի պայմանագրում նշված գրավի առարկա հանդիսացող D=1220 տրամաչափի 8000 գմ խողովակները այլ հավասարարժեք գույքով՝ այդ թվում նաև դրամական միջոցներով: Գործով որպես պատասխանող է ներգրավված սնանկ ճանաչված Ընկերությունը՝ ի դեմս սնանկության գործով կառավարչի, իսկ վեճը, ելնելով ներկայացված պահանջի բնույթից, վերաբերում է պարտապանի գույքի կազմում ներառված գույքային, այն է՝ գրավի իրավունքին, ուստի վեճի լուծումն ազդեցություն է ունենալու պարտապանի գույքային իրավունքների ծավալի և պարտատիրոջ պահանջի ապահովվածության վրա: Վերաքննիչ դատարանը հայցը մերժելու մասով Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ՝ արձանագրել է, որ սույն քաղաքացիական գործը սնանկության վարույթում էլ քննվել է: Այդուհանդերձ, վերահաստատելով Դատարանի դիրքորոշումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի կիրառելիության անհնարինության վերաբերյալ՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Բանկն իր պաշտպանությունն իրականացնում է որպես գրանցված պարտատեր թիվ ԵԿԴ/0011/04/13 սնանկության վարույթում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ պատճառաբանությունները միմյանց հակասում են, քանի որ Վերաքննիչ դատարանը մի դեպքում արձանագրել է, որ սույն քաղաքացիական գործը քննվում է որպես սնանկության վարույթի մաս, մյուս դեպքում փաստել, որ Բանկն իր պաշտպանությունն արդեն իսկ իրականացնում է թիվ ԵԿԴ/0011/04/13 սնանկության վարույթում: Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով **քննվել է նույն սնանկության վարույթում**՝ Ընկերության սնանկության գործը վարող դատավորի կողմից: Հետևաբար կարելի է արձանագրել, որ սույն քաղաքացիական գործը ևս սնանկության վարույթի մաս է, ուստի Բանկն իրավունք ուներ սույն հայցադիմումում նշված պահանջը ներկայացնել հենց սույն քաղաքացիական գործի շրջանակներում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև բողոք բերած անձի այն պատճառաբանությանը, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքը գրավի առարկայի փոխա-

րինման հնարավորություն չի նախատեսում, և որ գրավի առարկայի փոխարինման ինստիտուտը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածով, ուստի Բանկը, ղեկավարվելով նշված հոդվածի դրույթներով, իր խախտված իրավունքների վերականգումը փորձել է իրականացնել առանձին քաղաքացիական գործի վարությամբ: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, այդ մասով ուղղելով Դատարանի սխալ պատճառաբանությունը, որով հայցի մերժման հիմքում դրվել է նաև այն հանգամանքը, որ հայցվորի պահանջների բավարարումն իրականացվում է պատասխանող Ընկերության սնանկության վարույթի շրջանակներում, արձանագրել է, որ հայցվորը տվյալ դեպքում իր իրավունքների պաշտպանությունն իրականացրել է հենց սնանկության վարույթի շրջանակներում՝ առանձին քաղաքացիական գործով: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում հայցվորի իրավունքների պաշտպանությունն իրականացվել է հենց նրա մատնանշած տարբերակով, որպիսի պայմաններում էլ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի կողմից դատական սխալ թույլ տալու հանգամանքը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառել է հենց հայցվորի մատնանշած իրավանորմը՝ գալով այն եզրահանգման, որ գործում գտնվող գրավոր ապացույցներով չեն հիմնավորվում հայցը բավարարելու փաստական հիմքերը, քանի որ պարզվել է, որ սնանկ ճանաչված Ընկերությունը, բացի գրավադրված գույքից, այլ գույք կամ դրամական միջոցներ չունի, որպիսի հետևությունը Վճռաբեկ դատարանը համարում է հիմնավոր: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում գտնվող ապացույցներով հաստատված փաստերի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ է, քանի որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներից բացի՝ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն կիրառել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի 2-րդ կետի իրավակարգավորումները և հայցը մերժել է՝ հայցի բավարարման համար էական նշանակություն ունեցող փաստերը գործի ապացույցներով չհաստատվելու, այն է՝ հայցն անհիմն լինելու հիմքով՝ հաշվի առնելով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածների իրավակարգավորումը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի առկայությունը:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը մասամբ թերի և սխալ է պատճառաբանված՝ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ լրացուցիչ պատճառաբանում է Վերաքննիչ դատարանի դատական ակտը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Սույն գործով նկատի ունենալով, որ բողոք բերող անձը վճարել է վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված պետական տուրքը, իսկ բողոքը մերժվում է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.08.2017 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/2408/02/14
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/2408/02/14

Նախագահող դատավոր՝ Ա. Մմբատյան

Դատավորներ՝ Ն. Մարգարյան
Ա. Պետրոսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հունիսի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով Գրիգորի Սաֆարյանի ներկայացուցիչ Կարինե Ղաշանգյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.07.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Գրիգորի Սաֆարյանի հայցի ընդդեմ Սարգիս Ավետիսյանի՝ Սարգիս Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող շինության կառուցապատման հետևանքով Գրիգորի Սաֆարյանին պատճառված վնասները հատուցելու, Սարգիս Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Բաշինջաղյան թիվ 10/2 հասցեում կառուցվող շինությունը քանդելուն կամ Գրիգորի Սաֆարյանի ավտոտնակի օգտագործման համար խոչընդոտ և/կամ հասցվելիք վնասի պատճառ հանդիսացող մետաղյա աստիճանը, ջրահեռացման խողովակը վերացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գրիգորի Սաֆարյանը պահանջել է պարտավորեցնել Սարգիս Ավետիսյանին հատուցել վերջինիս սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի

Բաշինջաղյան թիվ 10/2 հասցեում կառուցվող շինության կառուցապատման հետևանքով իրեն պատճառված վնասը՝ 445.000 ՀՀ դրամի չափով, քանդել այդ շինությունը կամ վերացնել իր ավտոտնակի օգտագործման համար խոչընդոտ և/կամ հասցվելիք վնասի պատճառ հանդիսացող մետաղյա աստիճանը, ջրահեռացման խողովակը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Փիլոսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.02.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.07.2018 թվականի որոշմամբ Գրիգորի Սաֆարյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.02.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գրիգորի Սաֆարյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 47-րդ հոդվածները, 48-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերը, 51-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, 60-րդ հոդվածը, 130-րդ հոդվածի 3-րդ կետը, 130.1-րդ և 131-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ պատասխանող Սարգիս Ավետիսյանը ոչ միայն չի ժխտել պատճառված վնասի առկայության փաստը, այլ նաև պարտավորվել է հատուցել համապատասխան պարտավորագրով, որը կցված է եղել ոստիկանությունում հավաքագրված նյութերին և ներկայացվել է Դատարան:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործի շրջանակներում նշանակված փորձաքննության իրականացման համար հայցվոր Գրիգորի Սաֆարյանը ներկայացրել է տրանսպորտային միջոցը և դրա վերաբերյալ առկա փաստաթղթերը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը, որի վերաբերյալ առկա է նշում փորձագետի եզրակացության մեջ, սակայն Դատարանը, այն բավարար չհամարելով, հայցվորի վրա չի դրել պարտականություն՝ Դատարան ներկայացնելու նաև ապացույց՝ տրանսպորտային միջոցի պատկանելիության վերաբերյալ: Հետևաբար հայցվոր Գրիգորի Սաֆարյանը, հաշվի առնելով, որ փորձագետի եզրակացությամբ ապացուցվում է, որ ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է իրեն, Դատարան չի ներկայացրել այդ հանգամանքը հաստատող այլ ապացույց:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ պատասխանող Սարգիս Ավետիսյանը խուսափել է փորձագետին ներկայացնել շինության կառուցման համար անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ կառուցման նախագիծը, ինչի հետևանքով էլ փորձաքննությունը համապատասխան մասով մնացել է անկատար: Ուստի Դատարանը, հաշվի առնելով փորձաքննությունը մի մասով անկատար մնալու պատճառների վերաբերյալ փորձագետի կողմից եզրակացության մեջ արված նշումները, պարտավոր էր պատասխանողի կողմից խոչընդոտներ առաջացնելու պայմաններում վերջինիս վրա դնել հայցվորի կողմից վկայակոչված փաստի ապացուցման բեռը, իսկ չապացուցման դեպքում դա մեկնաբանել հոգուտ

հայցվորի:

Վերաքննիչ դատարանում սույն գործի քննությունը նախագահող դատավոր Ա. Սմբատյանը նույն գործով որպես գործը քննող դատավոր ներգրավված էր եղել նաև առաջին ատյանի դատարանում, ուստի պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել անկախ այն հանգամանքից, որ կողմը նման միջնորդությամբ հանդես չէր եկել, քանի որ դատավորին բացարկ հայտնելը կողմի իրավունքն է, իսկ դատավորը, ինքնաբացարկի հիմք հանդիսացող հանգամանքների առկայության դեպքում, պարտավոր է սեփական նախաձեռնությամբ ինքնաբացարկ հայտնել: Վերոհիշյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ գործի հանգամանքներն օբյեկտիվորեն չեն հետազոտվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.07.2018 թվականի որոշումը՝ հայցը բավարարել ամբողջությամբ կամ գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Հարթենյանի 11.09.2014 թվականի որոշմամբ Գրիգորի Սաֆարյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ **(հատոր 1-ին, գ.թ. 60):**

2. 22.10.2014 թվականի գրությամբ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Հարթենյանը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության նախագահ Ս. Սարգսյանի 21.10.2014 թվականի թիվ ՆՀ-558-Ա հրամանագրով իր լիազորությունների դադարեցման և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր նշանակվելու հանգամանքը, թիվ ԵԱԴԴ/2408/02/14 քաղաքացիական գործը հանձնել է վերամակագրման **(հատոր 1-ին, գ.թ. 67):**

3. Թիվ ԵԱԴԴ/2408/02/14 քաղաքացիական գործը 11.12.2014 թվականին վերամակագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սմբատյանին, վերջինիս 15.12.2014 թվականի որոշմամբ գործն ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ 24.02.2015 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 66, 72):**

4. 24.02.2015 թվականին կայացած նախնական դատական նիստը նախագահել է դատավոր Ա. Սմբատյանը, դատական նիստին մասնակցել են հայցվոր Գրիգորի Սաֆարյանը, վերջինիս ներկայացուցիչ Վարդան Խեչյանը, պատասխանող Սարգիս Ավետիսյանի ներկայացուցիչ Սամվել Դավթյանը: Նիստի ժամանակ Դատարանը պարզել է գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը, հայցի առարկան ու հիմքը, պահանջները հիմնավորող ապացույցները և գործի մի շարք այլ հանգամանքներ, վիճելի իրավահարաբերության բնույթը, ընդունել է միջնորդություններ՝ գրավոր հայտարարությունը՝ որպես ապացույց թույլատրելու մասին, պատասխանողի ներկայությունը դատական նիստին ապահովելու մասին, կատարել է դատավարական մի շարք այլ գործողություններ **(հատոր 1-ին, գ.թ. 84-86):**

5. 16.04.2015 թվականի գրությամբ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սմբատյանը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության նախագահ Ս. Սարգսյանի 16.04.2015 թվականի

թիվ ՆՀ-272-Ա հրամանագրով իր լիազորությունների դադարեցման և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր նշանակվելու հանգամանքը, թիվ ԵԱԴԴ/2408/02/14 քաղաքացիական գործը հանձնել է վերամակագրման (**հատոր 2-րդ, գ.թ. 1**):

6. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Փիլոսյանի 18.05.2015 թվականի որոշմամբ թիվ ԵԱԴԴ/2408/02/14 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և ըստ էության լուծում է ստացել 06.02.2018 թվականի վճռով (**հատոր 2-րդ, գ.թ. 2, 66**):

7. Վերոնշյալ վճռի դեմ Գրիգորի Սաֆարյանի ներկայացուցիչ Կարինե Ղաշանգյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը մակագրվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Ա. Սմբատյանին (սախագահող դատավոր), Մ. Հաթթենյանին, Կ. Հակոբյանին, և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.04.2018 թվականի որոշմամբ վերադարձվել է (**հատոր 3-րդ, գ.թ. 24**):

8. Սահմանված ժամկետում կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Ա. Սմբատյանի (սախագահող դատավոր), Կ. Հակոբյանի և Ա. Պետրոսյանի 26.04.2018 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ (**հատոր 3-րդ, գ.թ. 55**):

9. Գործի քննության ընթացքում ՀՀ բարձրագույն դատական խորհրդի 14.06.2018 թվականի թիվ ԲԴԽ-16-Ո-28 որոշման հիման վրա պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ 15.06.2018 թվականից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Կ. Հակոբյանի լիազորությունները դադարեցվել են, վերջինիս փոխարեն դատական կազմը համալրել է դատավոր Ն. Մարգարյանը և 26.07.2018 թվականին Դատարանի 06.02.2018 թվականի վճռի դեմ Գրիգորի Սաֆարյանի ներկայացուցիչ կողմից բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով Վերաքննիչ դատարանը (սախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան, դատավորներ՝ Ն. Մարգարյան, Ա. Պետրոսյան) կայացրել է որոշում, որով վերաքննիչ բողոքը մերժվել է (**հատոր 3-րդ, գ.թ. 79-84**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում այլ դատարանում նույն գործի քննությանը մասնակցելու հիմքով դատավորի ինքնաբացարկի առանձնահատկությունների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այլ դատարանում տվյալ գործի քննությանը մասնակցելու հիմքով դատավորի կողմից ինքնաբացարկի հայտնելու առանձնահատկություններին:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի

անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարող է բացարկ հայտնվել, կամ դատավորը սեփական նախաձեռնությամբ պարտավոր է ինքնաբացարկ հայտնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հիմքերով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ: Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ՝ դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանն այլ դատարանում:

Առաջին առյուծի դատարանում գործի քննության ժամանակ գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը (...) դատական քննությունն արդյունավետ իրականացնելու համար կարող է հրավիրել նախնական դատական նիստ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում մասնավորապես՝ 1) պարզում է հայցի առարկան ու հիմքը, 2) անհրաժեշտության դեպքում կողմերին պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները, դատավարական գործողություններ կատարելու կամ չկատարելու հետևանքները, 3) պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը, 4) պարզում է գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը, 5) կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները, 6) կողմերի միջնորդությամբ, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ իր նախաձեռնությամբ, պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը, 7) կողմերի միջնորդությամբ, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ իր նախաձեռնությամբ, լուծում է հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման, ապացույցների ապահովման հարցերը, ինչպես նաև կողմերի այլ միջնորդությունները, 8) քննարկում է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու, մի քանի պահանջների միացման և առանձնացման, արտագնա դատաքննության անցկացման հնարավորության հարցերը, 9) որոշում է ապացույցների հետազոտման կարգը, 10) իրականացնում է գործի արդյունավետ

քննությանն ուղղված այլ գործողություններ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և դրանց վերաբերյալ, ինչպես նաև նույն օրենսգրքի 384-րդ և 385-րդ հոդվածներով նախատեսված հարցերով որոշումները կայացնում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Մահմանադրության 63-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր բազմաթիվ որոշումներում բացահայտել է դատարանի անկողմնակալության գնահատման չափանիշները: Այսպես՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ դատարանի անաչառությունը ենթադրում է գործը քննող դատավորի մոտ կանխակալ կարծիքի բացակայություն, իսկ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ ողջամիտ կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով: Առաջինը սուբյեկտիվ չափանիշն է, որը վերաբերում է քննվող գործի կապակցությամբ տվյալ դատավորի անձնական համոզմունքներին և վարքագծին, իսկ երկրորդը՝ օբյեկտիվ չափանիշը, վերաբերում է առաջարկվող այն երաշխիքներին, որոնք պետք է բավարար լինեն դատավորի անաչառության կապակցությամբ առաջացած ցանկացած ողջամիտ կասկած բացառելու համար: Սուբյեկտիվ չափանիշի համաձայն՝ դատարանի կամ դատավորի անկողմնակալությունը հանդես է գալիս որպես կանխավարկած, հետևաբար, քանի դեռ հակառակն ապացուցված չէ, դատավորը համարվում է սուբյեկտիվորեն անկողմնակալ: Հակառակ դրան՝ օբյեկտիվ անկողմնակալությունը կախված է արտաքին գործոններից, և այս դեպքում դատավորի վարքագիծը երկրորդական նշանակություն է ստանում: Մասնավորեցնելով օբյեկտիվ չափանիշը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն հիմնականում վերաբերում է դատավորի և վարույթի մյուս մասնակիցների միջև աստիճանակարգային կամ մյուս կապերին կամ **դատական գործընթացի շրջանակներում մինևնույն անձի կողմից տարբեր գործառույթների իրականացմանը:** Հետևաբար յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշել՝ արդյոք տվյալ հարաբերությունների բնույթը և սերտության աստիճանը վկայում են այն մասին, որ դատարանն անկողմնակալ չէ (*իրեն, օրինակ, Piersack v. Belgium գործով Եվրոպական դատարանի 01.10.1982 թվականի վճիռը, կետ 30, Grieves v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 16.12.2003 թվականի վճիռը, կետ 69, Kyprianou v. Cyprus գործով Եվրոպական դատարանի 15.12.2005 թվականի վճիռը, կետեր 118, 121, Nicholas v. Cyprus գործով Եվրոպական դատարանի 09.01.2018 թվականի վճիռը, կետեր 49, 53, Ղուլյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 24.01.2019 թվականի վճիռը, կետ 45*):

Օբյեկտիվ չափանիշի տեսանկյունից Եվրոպական դատարանը կարևորել է նաև կոնկրետ գործի քննությանը դատավորի ունեցած դերը, դատավորի կողմից իրականացված գործողությունների շրջանակն ու բնույթը և գտել է, որ դատավորի կողմից գործի նյութերին պարզապես ծանոթ լինելը չի հանգեցնում վերջինիս անաչառության վերաբերյալ ծագած կասկածների ողջամտությանը (*իրեն, Morel v. France գործով Եվրոպական դատարանի 18.10.2000 թվականի վճիռը, կետ 45, Fazli Fazli Aslaner v. Turkey գործով Եվրոպական դատարանի 07.07.2014 թվականի վճիռը, կետ 31*): Վերադաս դատարաններում նույնիսկ երկու այլ

դատավորների հետ գործի քննությունն իրականացնող և գործի քննությունը նախագահող դատավորը չպետք է քննի իր իսկ որոշման դեմ ներկայացված բողոքները (*տե՛ս De Haan v. the Netherlands գործով Եվրոպական դատարանի 26.08.1997 թվականի վճիռը, կետ 51*):

Անկողմնակալության ապահովման մասով ազգային ընթացակարգերի, մասնավորապես՝ դատավորներին գործի քննությունից հեռացնելը կարգավորող կանոնների առկայությունն էական գործոն է: Այդպիսի կանոնները վկայում են այն մասին, որ ազգային օրենսդիրները հատուկ ուշադրություն են դարձնում տվյալ դատավորի կամ դատարանի անկողմնակալության հետ կապված հիմնավոր բոլոր կասկածները վերացնելուն և այդպիսի կասկածների պատճառները վերացնելու միջոցով փորձում են անկողմնակալություն ապահովել: Որպես այդպիսին կողմնակալության բացակայությունն ապահովելուց բացի՝ դրանք ուղղված են կողմնակալության ցանկացած արտաքին հատկանիշ վերացնելուն և այդպիսով նպաստում են, որ ժողովրդավարական հասարակությունում դատարանները հանրությանը վստահություն ներշնչեն: Իրավիճակից կամ կապից է կախված դատավորի անկողմնակալության վերաբերյալ կասկածների առաջացումը: Այդ կասկածների օբյեկտիվորեն հիմնավորված լինելը կամ չլինելն առավելապես կախված է կոնկրետ գործի հանգամանքներից և այն գործոններից, որոնք այդ իմաստով պետք է հաշվի առնվեն (*տե՛ս, Ղուլյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 24.01.2019 թվականի վճիռը, կետեր 47, 51*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես դատարանի անաչառությունն ապահովող կառուցակարգ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է ինքնաբացարկի և բացարկի ինստիտուտը, որի հիմքերն ամրագրված են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ինքնաբացարկ հայտնելու հիմքերից՝ տվյալ գործի քննությանն այլ դատարանում դատավորի մասնակցության հիմքին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում դատավորի կողմից ստորադաս դատական ատյանում նույն գործով ունեցած մասնակցությունը՝ որպես ինքնաբացարկի հիմք, ենթակա է գնահատման՝ հաշվի առնելով ստորադաս դատարանում դատավորի կողմից կատարված գործողությունների շրջանակը և բնույթը, կոնկրետ գործի հանգամանքներն ու առանձնահատկությունները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ ատյանում օրենքով սահմանված կարգով տվյալ գործով քննությունը պետք է իրականացվի և տվյալ հարցով որոշումը պետք է կայացվի կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, ապա կոլեգիալ կազմում ընդգրկված դատավորներից առնվազն մեկի կողմից ինքնաբացարկ հայտնելու անհրաժեշտությունը բավարար է արձանագրելու համար, որ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է.

1. յուրաքանչյուր դեպքում դատավորը չպետք է մասնակցի իր իսկ կողմից կայացված դատական ակտերի դեմ բերված բողոքների քննությանը, նույնիսկ այն պարագայում, երբ այդ բողոքը քննվում է կոլեգիալ կարգով, քանի որ իր իսկ որոշումների դեմ բերված բողոքները քննելով՝ դատավորն իր անաչառության վերաբերյալ առաջացնում է օբյեկտիվ կասկած թե՛ գործի մասնակցի, և թե՛ օբյեկտիվ դիրքորդի մոտ:

2. այն դեպքում, երբ բողոքարկված չէ նույն դատավորի կողմից նախկինում կայացված դատական ակտը, սակայն բողոքում բարձրացվում է տվյալ գործին այլ դատարանում մասնակցելու հիմքով այդ դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ հարց, հարկավոր է գնահատել դատավորի մասնակցությունը, սրորտադաս դատական արյանում նրա կողմից կատար-

ված դատավարական գործողությունները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ԵԱԴԴ/2408/02/14 քաղաքացիական գործը 11.12.2014 թվականին վերանակագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սմբատյանին: Դատարանի 15.12.2014 թվականի որոշմամբ գործն ընդունվել է վարույթ: 24.02.2015 թվականին կայացած նախնական դատական նիստը նախագահել է դատավոր Ա. Սմբատյանը: 16.04.2015 թվականին Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սմբատյանը նշանակվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր և թիվ ԵԱԴԴ/2408/02/14 քաղաքացիական գործը հանձնել է վերանակագրման: Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Փիլոսյանի 18.05.2015 թվականի որոշմամբ թիվ ԵԱԴԴ/2408/02/14 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և ըստ էության լուծում ստացել է 06.02.2018 թվականի վճռով, որով հայցը մերժվել է: 06.02.2018 թվականի վճռի դեմ Գրիգորի Սաֆարյանի ներկայացուցչի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի դատավորներ Ա. Սմբատյանի (նախագահող դատավոր), Կ. Հակոբյանի և Ա. Պետրոսյանի 26.04.2018 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ և բողոքի քննության արդյունքում որոշում կայացնելիս նախագահող դատավոր է հանդես եկել Ա. Սմբատյանը: Վերաքննիչ դատարանի 26.07.2018 թվականի որոշմամբ Գրիգորի Սաֆարյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.02.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով դատավոր Ա. Սմբատյանի կողմից ինքնաբացարկ հայտնելու անհրաժեշտության վերաբերյալ բողոքի հիմքին և հիմնավորմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընգծում է, որ տվյալ գործին այլ դատարանում մասնակցելու հիմքով այդ դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ հարցը լուծելիս հարկավոր է գնահատել դատավորի մասնակցությունը, ստորադաս դատական ատյանում նրա կողմից կատարված դատավարական գործողությունները: Նման պայմաններում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել դատավոր Ա. Սմբատյանի կողմից կատարված գործողությունները ստորադաս դատարանում: Մասնավորապես՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում դատավոր Ա. Սմբատյանը գործն ընդունել է վարույթ և հրավիրել է նախնական դատական նիստ: Նախնական դատական նիստում դատավոր Ա. Սմբատյանը պարզել է վիճելի իրավահարաբերության բնույթը, գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը, հայցի հիմքը և առարկան, պահանջները հիմնավորող ապացույցները և գործի մի շարք այլ հանգամանքներ, ընդունել է միջնորդություններ՝ գրավոր հայտարարությունը որպես ապացույց թույլատրելու մասին, պատասխանողի ներկայությունը դատական նիստին ապահովելու մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլը, հանդիսանալով քաղաքացիական դատավարության արդյունավետության բարձրացմանն ուղղված կառուցակարգ, նպատակ է հետապնդում ապահովելու գործի ժամանակին և ճիշտ քննությունը ու լուծումը: Հաշվի առնելով գործը դատաքննության նախապատրաստելու փուլում օրենսդրի կողմից դատարանին վերապահված գործողությունների բնույթը և շրջանակը՝ ակնհայտ է, որ այս փուլում դատարանը հանգամանալից ուսումնասի-

րում է գործի փաստերը և բացահայտում է վիճելի իրավահարաբերության էությունը: Նշվածից հետևում է, որ նախնական դատական նիստի ընթացքում դատարանի կողմից կատարման ենթակա գործողությունների իրականացման արդյունքում գործը քննող դատավորի համար բացահայտվում են գործի այն հանգամանքները, որոնք անհրաժեշտ են վեճին ըստ էության լուծում տալու համար: Սույն գործով դատավոր Ա. Սմբատյանի կողմից առաջին աստիճանի դատարանում նախնական դատական նիստի ժամանակ կատարվել են գործողություններ, որոնք ուղղված են եղել գործի ըստ էության քննության համար անհրաժեշտ հիմքեր ստեղծելուն և դատավորի մոտ ողջամտորեն կարող էր ձևավորել նախնական կարծիք գործի ըստ էության լուծման վերաբերյալ: Ուստի հաշվի առնելով դատավոր Ա. Սմբատյանի՝ ստորադաս դատական աստիճանում գործի քննությանն ունեցած մասնակցության բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոհիշյալ հանգամանքն օբյեկտիվորեն կարող էր կասկածներ հարուցել վերադաս աստիճանում դատավոր Ա. Սմբատյանի անաչառության վերաբերյալ, հետևաբար սույն գործով առկա է եղել դատավոր Ա. Սմբատյանի կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե առկա է նույն օրենսգրքի 365-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, ով պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը, հիմնավոր համարելով բողոք բերած անձի փաստարկներն առ այն, որ դատավոր Ա. Սմբատյանը սեփական նախաձեռնությամբ պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել, արձանագրում է, որ սույն գործով առկա է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք, այն է՝ վերաքննիչ բողոքը քննվել է ոչ օրինական կազմով, որպիսի պայմաններում բողոքի ըստ էության քննության արդյունքում արված հետևությունները ևս օրինական համարվել չեն կարող, ուստի Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված այլ խախտումների վերաբերյալ փաստարկների գնահատմանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համա-

ձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին նպատակահարմար չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.07.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/3172/02/15
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/3172/02/15
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Մ. Հարթենյան
Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի նոյեմբերի 15-ին գրավոր ընթացակարգով քննելով «Էքսպրես Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Մարիամ Ղուլյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Համլետ Հովսեփյանի, Վարդան Հովսեփյանի, «Վենտուրայն» ՍՊԸ-ի, ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Կարինե Հովսեփյանի՝ գումարի բռնագանձման, բռնագանձումը գրավադրված գույքերի վրա տարածելու պահանջների մասին և ըստ Համլետ Հովսեփյանի, Վարդան Հովսեփյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման, հաշվանջ կատարելու, պայմանագրի դադարման մասին փաստաթղթեր տրամադրելու պարտավորեցնելու, ընկերության գրավի իրավունքը գրավով ապահովված պահանջի դադարման հիմքով դադարեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Համլետ և Վարդան Հովսեփյաններից համապարտության կարգով բռնագանձել 46.572 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ,

որից՝ 37.951,90 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ վարկի մնացորդ, 3.841,34 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ հաշվարկված տոկոս, 1.598,82 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ հաշվարկված ժամկետանց գումարի տոկոս, 2.712,64 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ ժամկետանց գումարի տույժ, 467,30 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ ժամկետանց տոկոսի տույժ, ինչպես նաև սկսած 04.12.2015 թվականից մինչև պարտավորության կատարման օրը թիվ 73/11ՀՎ վարկային և թիվ 7311ՀՎ երաշխավորության պայմանագրերով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների, ժամկետանց գումարի տոկոսի, ժամկետանց գումարի տույժի, ժամկետանց տոկոսի տույժի գումարները, միաժամանակ բռնագանձումը, ի թիվս պատասխանողների այլ գույքերի, տարածելով գրավադրված անշարժ գույքի վրա: «Վենտուրայն» ՍՊԸ-ից և Համլետ Հովսեփյանից համապարտության կարգով բռնագանձել 26.541,92 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից՝ 22.738,75 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ վարկի մնացորդ, 1.951,78 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ հաշվարկված տոկոս, 604,39 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ հաշվարկված ժամկետանց գումարի տոկոս, 1.092,11 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ ժամկետանց գումարի տույժ, 154,89 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ ժամկետանց տոկոսի տույժ, 39.652,55 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից՝ 34.216 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ վարկի մնացորդ, 3.173,98 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ հաշվարկված տոկոս, 695,51 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ հաշվարկված ժամկետանց գումարի տոկոս, 1.317,18 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ ժամկետանց գումարի տույժ, 249,88 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ ժամկետանց տոկոսի տույժ, ինչպես նաև սկսած 04.12.2015 թվականից մինչև պարտավորության կատարման օրը թիվ 128/11ԳԱԲ վարկային, թիվ 12811ԳԱԲ երաշխավորության, թիվ 136/11ԳԱԲ վարկային, թիվ 13611ԳԱԲ երաշխավորության պայմանագրերով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների, ժամկետանց գումարի տոկոսի, ժամկետանց գումարի տույժի, ժամկետանց տոկոսի տույժի գումարները, միաժամանակ բռնագանձումը, ի թիվս պատասխանողների այլ գույքերի, տարածելով գրավադրված անշարժ գույքի վրա:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Համլետ և Վարդան Հովսեփյանները պահանջել են Ընկերությունից բռնագանձել 7.415,4 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, 12.000.000 ՀՀ դրամ և կատարել հաշվանց սկզբնական հայցով ներկայացված գումարի բռնագանձման պահանջի հետ, տրամադրել թիվ 73/11, թիվ 128/11, թիվ 224/11 պայմանագրերի դադարման մասին փաստաթղթերը, ինչպես նաև դադարեցնել Համլետ Հովսեփյանին պատկանող՝ ք. Երևան, Նոյ թաղամաս, թիվ 31/3 հասցեում գտնվող 381,7քմ մակերեսով բնակելի տան և 3.042,7քմ մակերեսով հողամասի նկատմամբ Ընկերության գրավի իրավունքը՝ գրավով ապահովված պահանջի դադարման հիմքով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Թորոսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.03.2018 թվականի վճռով գործի վարույթն ըստ Ընկերության հայցի ընդդեմ Համլետ Հովսեփյանի, Վարդան Հովսեփյանի, «Վենտուրայն» ՍՊԸ-ի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Կարինե Հովսեփյանի՝ գրավի առարկան չբավարարելու դեպքում բռնագանձումը պատասխանողների այլ գույքի վրա տարածելու մասով, կարճվել է, հայցը՝ մնացած մասով, բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.07.2018 թվականի որոշմամբ Համլետ Հովսեփյանի, Վարդան Հովսեփյանի, «Վենտուրայն» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 06.03.2018 թվականի վճիռը մասնակի՝ Ընկերության հայցը բավարարելու, Վարդան Հովսեփյանի և Համլետ Հովսեփյանի

նի հակընդդեմ հայցը մերժելու, համապատասխանաբար դատական ծախսերի մասերով, բեկանվել է, և գործն այդ մասերով ուղարկվել է նոր քննության: Վճիռը՝ մնացած մասով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Համլետ և Վարդան Հովսեփյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը .

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է առաջին արյանում գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 53-րդ, 60-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածները, 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում:

Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ փորձագետի եզրակացություն հանդիսացող փաստաթղթի վերնագրին որևէ օրենսդրական պահանջ ներկայացված չէ, ուստի սույն քաղաքացիական գործով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից կազմված եզրակացության անվանումը՝ «Արձանագրություն», որևէ նորմի խախտում չէ:

Բացի այդ, ըստ էության ճիշտ եզրակացության պարագայում զուտ վերնագրի հետ կապված որևէ հետևանք օրենսդիրը չի նախատեսում և դա հանդիսանում է բացառապես ձևական հանգամանք: Ինչ վերաբերում է փորձագետի եզրակացության բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջներին, ապա եզրակացությունում հստակ նշվել են առաջադրված հարցերի պատասխանները, ինչպես նաև հետազոտությունների արդյունքում արված հետևությունները: Միաժամանակ թե՛ եզրակացության հիմնական տեքստում, թե՛ կցված երկու հավելվածների միջոցով մանրամասն ներկայացված են կատարված հաշվարկները, ուստի կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը եզրակացությունում նույնպես առկա է: Նման պայմաններում անհասկանալի է Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ հետազոտությունների մանրամասն նկարագրություն եզրակացությունում ներկայացված չէ:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն, որ փորձագետները, դատարան ներկայանալով, ինչպես նաև գրավոր դիմում ներկայացնելով, նշել են, թե ինչ մեթոդներով են իրականացրել փորձաքննությունը: Հետևաբար ակնհայտ է, որ կողմը չի ներկայացրել եզրակացության արժանահավատության և հիմնավորվածության վերաբերյալ որևէ օբյեկտիվ կասկած, որևէ փաստ, որը կվկայեր, որ փորձագետների կողմից կատարված հաշվարկները և դրանց արդյունքում կատարված հետևությունները հիմնավոր չեն:

Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել, թե ինչու ներկայացված եզրակացությունը չի համապատասխանում թույլատրելիության և արժանահավատության պահանջներին: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանի կողմից որևէ եզրահանգում չի կատարվել փորձաքննությունն իրականացնող անձի որակավորման և ձեռնհասության, նշված անձի օբյեկտիվության, սահմանված դատավարական կարգի պահպանված լինելու, հետազոտության ընթացքի և արդյունքների պատշաճ դատավարական ձևակերպման հետ

կապված: Նմանապես որևէ եզրահանգում չի կատարվել նաև փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանի, փորձաքննությանը տրամադրված նյութի որակի և բավարարության, ելակետային տվյալների բնույթի, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանի, գործին մասնակցող անձանց՝ փորձաքննությանը ներկա գտնվելու իրական հնարավորության հետ կապված:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանին հաջողվել է դատական նիստի ընթացքում վերացնել եզրակացության արժանահավատության և հիմնավորվածության, ինչպես նաև ՀՀ «Փորձաքննության ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությանը հակասելու վերաբերյալ բոլոր օբյեկտիվորեն հնարավոր կասկածները, ինչի արդյունքում վերացել է կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.07.2018 թվականի որոշումը՝ ամբողջությամբ օրինական ուժ տալով Դատարանի 06.03.2018 թվականի վճռին:

2.1. Համլետ և Վարդան Հովսեփյանների վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանի 25.07.2018 թվականի որոշումը հիմնավոր է, կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահանջներին համապատասխան:

Սույն գործով Ընկերության գործողությունները ձևականորեն են և իրականացվում են այնպես, որ ակնհայտորեն վնաս են պատճառում պատասխանողներին: Այսինքն՝ Ընկերությունը թույլ է տալիս իր իրավունքների չարաշահում, որպիսի պայմաններում վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.1) 11.04.2011 թվականին Ընկերության և Համլետ Հովսեփյանի (վարկառու) միջև կնքված թիվ 73/11ՀՎ վարկային պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը Համլետ Հովսեփյանին տրամադրել է 130.000 ԱՄՆ դոլար հիփոթեքային վարկ՝ ք. Երևան, Մալաթիա-Մեքաստիա համայնք, Նոյ թաղամաս, թիվ 31/3 տան վերանորոգման նպատակով, 60 ամիս ժամկետով՝ մինչև 11.04.2016 թվականը ներառյալ (**հատոր 4-րդ, գ.թ. 36-37**):

1.2) 11.04.2011 թվականին Վարդան Հովսեփյանի (երաշխավոր), Ընկերության (պարտատեր) և Համլետ Հովսեփյանի (պարտապան), միջև կնքված թիվ 7311ՀՎ երաշխավորության պայմանագրի համաձայն՝ Վարդան Հովսեփյանը և Համլետ Հովսեփյանը Ընկերության առջև կրում են համապարտ պատասխանատվություն թիվ 73/11ՀՎ վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման համար (**հատոր 4-րդ, գ.թ. 2**):

1.3) 11.04.2011 թվականին Ընկերության (գրավառու) և Համլետ Հովսեփյանի (գրավատու և վարկառու) միջև կնքված թիվ 73/11ԳՀՎ հիփոթեքի (հաջորդող գրավի) պայմանագրի համաձայն՝ Համլետ Հովսեփյանը գրավադրել է իր սեփականությունը հանդիսացող բնակելի տունը և հողամասը, որը գտնվում է ք. Երևան, Մալաթիա-Մեքաստիա համայնք, Նոյ թաղամաս, թիվ 31/3 տուն հասցեում՝ ի ապահովումն թիվ 73/11ՀՎ վարկային պայմանագրով Համլետ Հովսեփյանի մոտ առաջացած պարտավորությունների կատարման (**հատոր 4-րդ, գ.թ. 55-57**):

1.4) 13.04.2011 թվականի գրավի, հիփոթեքի իրավունքի գրանցման թիվ 0240383 վկայականի համաձայն՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Նոյ թաղամաս, թիվ 31/3 բնակելի տան նկատմամբ 11.04.2011 թվականի պայմանագրի հիման վրա գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը **(հատոր 4-րդ, գ.թ. 58):**

2.1) 28.06.2011 թվականին Ընկերության և «Վետոմայն» ՍՊԸ-ի (վարկառու) միջև կնքված թիվ 128/11ԳԱԲ վարկային պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը «Վետոմայն» ՍՊԸ-ին տրամադրել է 100.016 ԱՄՆ դոլար բիզնես վարկ՝ պաշարների հաստատման և հանքաքարի մշակման գործընթացի կազմակերպման նպատակով, 60 ամիս ժամկետով՝ մինչև 28.06.2016 թվականը ներառյալ **(հատոր 4-րդ, գ.թ. 9-11):**

2.2) 28.06.2011 թվականին Համլետ Հովսեփյանի (երաշխավոր), Ընկերության (պարտատեր) և «Վետոմայն» ՍՊԸ-ի (պարտապան) միջև կնքված թիվ 128/11ԳԱԲ երաշխավորության պայմանագրի համաձայն՝ Համլետ Հովսեփյանը և «Վետոմայն» ՍՊԸ-ն Ընկերության առջև կրում են համապարտ պատասխանատվություն թիվ 128/11ԳԱԲ վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման համար **(հատոր 4-րդ, գ.թ. 1):**

2.3) 28.06.2011 թվականին Ընկերության (գրավառու), Համլետ Հովսեփյանի (գրավատու) և «Վետոմայն» ՍՊԸ-ի (վարկառու) միջև կնքված թիվ 128/11ԳԱԲ հիփոթեքի (հաջորդող գրավի) պայմանագրի համաձայն՝ Համլետ Հովսեփյանը գրավադրել է իր սեփականությունը հանդիսացող բնակելի տունը և հողամասը, որը գտնվում է ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Նոյ թաղամաս, թիվ 31/3 տուն հասցեում՝ ի սպառնալիս թիվ 128/11ԳԱԲ վարկային պայմանագրով «Վետոմայն» ՍՊԸ-ի մոտ առաջացած պարտավորությունների կատարման **(հատոր 4-րդ, գ.թ. 12-15):**

2.4) 01.07.2011 թվականի գրավի, հիփոթեքի իրավունքի գրանցման թիվ 0205830 վկայականի համաձայն՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Նոյ թաղամաս, թիվ 31/3 բնակելի տան նկատմամբ 28.06.2011 թվականի պայմանագրի հիման վրա գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը **(հատոր 4-րդ, գ.թ. 16):**

2.5) 09.07.2011 թվականին Ընկերության (գրավառու), Համլետ Հովսեփյանի և Կարինե Հովսեփյանի (գրավատուներ) միջև կնքված թիվ 128/11ԳԱԲ հիփոթեքի պայմանագրի համաձայն՝ Համլետ Հովսեփյանը և Կարինե Հովսեփյանը գրավադրել են իրենց սեփականությունը հանդիսացող հողամասը, ռեստորանը և պահեստները, որոնք գտնվում են ք. Երևան, Դավթաշեն համայնք, Եղվարդի խճուղի թիվ 8/2 ռեստորանի տարածք հասցեում՝ ի սպառնալիս թիվ 128/11ԳԱԲ վարկային պայմանագրով «Վետոմայն» ՍՊԸ-ի պարտավորությունների կատարման **(հատոր 4-րդ, գ.թ. 26-29):**

2.6) 13.07.2011 թվականի գրավի, հիփոթեքի իրավունքի գրանցման թիվ 0200709 վկայականի համաձայն՝ ք. Երևան, Դավթաշեն համայնք, Եղվարդի խճուղի թիվ 8/2 ռեստորանի նկատմամբ 09.07.2011 թվականի պայմանագրի հիման վրա գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը **(հատոր 4-րդ, գ.թ. 30-32):**

3.1) 14.07.2011 թվականին Ընկերության և «Վետոմայն» ՍՊԸ-ի (վարկառու) միջև կնքված թիվ 136/11ԳԱԲ վարկային պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը «Վետոմայն» ՍՊԸ-ին տրամադրել է 150.024 ԱՄՆ դոլար բիզնես վարկ՝ պաշարների հաստատման և հանքաքարի մշակման գործընթացի կազմակերպման նպատակով, 60 ամիս ժամկետով՝ մինչև 14.07.2016 թվականը ներառյալ **(հատոր 4-րդ, գ.թ. 33-35):**

3.2) 14.07.2011 թվականին Համլետ Հովսեփյանի (երաշխավոր), Ընկերության (պարտա-

տեր) և «Վեոմայն» ՍՊԸ-ի (պարտապան) միջև կնքված թիվ 136/11ԳԱԲ երաշխավորության պայմանագրի համաձայն՝ Համլետ Հովսեփյանը և «Վեոմայն» ՍՊԸ-ն Ընկերության առջև կրում են համապարտ պատասխանատվություն թիվ 136/11ԳԱԲ վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման համար **(հատոր 4-րդ, գ.թ. 3):**

3.3) 14.07.2011 թվականին Ընկերության (գրավառու), Համլետ Հովսեփյանի, Կարինե Հովսեփյանի (գրավատուներ) և «Վեոմայն» ՍՊԸ-ի (վարկառու) միջև կնքված թիվ 136/11-ԳԱԲ հիփոթեքի (հաջորդող գրավի) պայմանագրի համաձայն՝ Համլետ Հովսեփյանը և Կարինե Հովսեփյանը գրավադրել են իրենց սեփականությունը հանդիսացող հողամասը, ռեստորանը և պահեստները, որոնք գտնվում են ք. Երևան, Դավթաշեն համայնք, Եղվարդի խճուղի թիվ 8/2 ռեստորանի տարածք հասցեում՝ ի ապահովումն թիվ 136/11ԳԱԲ վարկային պայմանագրով «Վեոմայն» ՍՊԸ-ի պարտավորությունների կատարման **(հատոր 4-րդ, գ.թ. 48-51):**

3.4) 19.07.2011 թվականի գրավի, հիփոթեքի իրավունքի գրանցման թիվ 0200744 վկայականի համաձայն՝ ք. Երևան, Դավթաշեն համայնք, Եղվարդի խճուղի թիվ 8/2 ռեստորանի նկատմամբ 09.07.2011 թվականի և 14.07.2011 թվականի պայմանագրերի հիման վրա գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը **(հատոր 4-րդ, գ.թ. 52):**

3.5) 07.04.2015 թվականին Ընկերության և «Վեոմայն» ՍՊԸ-ի (վարկառու) միջև կնքված համաձայնագրով դադարեցվել է Ընկերության գրավի իրավունքը ք. Երևան, Դավթաշեն համայնք, Եղվարդի խճուղի թիվ 8/2 ռեստորանի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ **(հատոր 4-րդ, գ.թ. 40):**

3.6) 07.04.2015 թվականին Ընկերության (գրավառու), Համլետ Հովսեփյանի, (գրավատու) և «Վեոմայն» ՍՊԸ-ի (վարկառու) միջև կնքված թիվ 136/11աԳԱԲ և 224/11աԳԱԲ հիփոթեքի (հաջորդող գրավի) պայմանագրի համաձայն՝ Համլետ Հովսեփյանը գրավադրել է իր սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը, որը գտնվում է ք. Երևան, Մալաթիա-Մեքաստիա համայնք, Նոյ թաղամաս, թիվ 31/3 տուն հասցեում՝ ի ապահովումն թիվ 136/11ԳԱԲ և թիվ 224/11ԳԱԲ վարկային պայմանագրերով «Վեոմայն» ՍՊԸ-ի մոտ առաջացած պարտավորությունների կատարման **(հատոր 4-րդ, գ.թ. 4-11):**

3.7) 11.04.2015 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11042015-01-0036 վկայականի համաձայն՝ Երևան, Մալաթիա-Մեքաստիա, Նոյ թաղամաս 31/3 բնակելի տան նկատմամբ 07.04.2015 թվականի հիփոթեքի (հաջորդող գրավի) պայմանագրի հիման վրա գրանցվել է Ընկերության գրավի իրավունքը **(հատոր 4-րդ, գ.թ. 8):**

4) 26.10.2016 թվականին հակընդդեմ հայցվոր Համլետ Հովսեփյանը ներկայացրել է «Փորձաքննություն նշանակելու մասին» միջնորդություն, այն հիմնավորմամբ, որ «թիվ 13136614 քրեական գործի շրջանակներում Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Հ. Վ. Սարգսյանի 02.11.2015 թվականի որոշմամբ նշանակվել էր հանձնաժողովային դատահաշվապական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն: Մինչդեռ փորձագիտական եզրակացությամբ պատասխան չի տրվել այն հարցերին, թե որքանով է սխալ հաշվարկված Համլետ Հովսեփյանի և «Վեոմայն» ՍՊԸ-ի վճարման պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Բացի այդ, ըստ ներկայացված հակընդդեմ հայցի հակընդդեմ հայցվոր կողմը պնդում է, որ ամբողջությամբ կատարել է Ընկերության նկատմամբ ունեցած բոլոր պարտավորությունները և հակընդդեմ հայցով պատասխանողը պետք է իրեն գումար

վճարի՝ ներկայացնելով համապատասխան հաշվարկներ: Նման պայմաններում սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում առաջացել են հարցեր, որոնց պարզման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ դատահաշվապահական և ֆինանսատնտեսական բնագավառում» (**հատոր 3-րդ, գ.թ. 105-109**):

5) Դատարանի 22.11.2016 թվականի «Դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ բավարարվել է հակընդդեմ հայցվորի «Փորձաքննություն նշանակելու մասին» միջնորդությունը և նշանակվել է դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին: Փորձագետներին առաջադրվել են հետևյալ հարցերը.

Հարց 1. Որքան վարկ է տրամադրվել Ընկերության կողմից թիվ 73/11ՀՎ, թիվ 128/11ԳԱԲ և թիվ 136/11ԳԱԲ վարկային պայմանագրերի շրջանակում Համլետ Հովսեփյանին և «Վենտոմայն» ՍՊԸ-ին (միասին և առանձին):

Հարց 2. Որքան վճարումներ են կատարվել Համլետ Հովսեփյանի, «Վենտոմայն» ՍՊԸ-ի կամ ցանկացած երրորդ անձի կողմից Ընկերությանը՝ Համլետ Հովսեփյանի և «Վենտոմայն» ՍՊԸ-ի թիվ 73/11ՀՎ, թիվ 128/11ԳԱԲ և թիվ 136/11ԳԱԲ վարկային պայմանագրերի շրջանակներում վարկային պարտավորությունները կատարելու համար (ըստ յուրաքանչյուր պայմանագրի և ընդհանուր առմամբ):

Հարց 3. Ըստ թիվ 73/11ՀՎ, թիվ 128/11ԳԱԲ և թիվ 136/11ԳԱԲ վարկային պայմանագրերի՝ որքան է կազմում վարկառուներ Համլետ Հովսեփյանի և «Վենտոմայն» ՍՊԸ-ի պարտքը (միասին և առանձին)՝ վարկի մայր գումարը, տոկոսը, տուժանքը Ընկերության կողմից դատարան դիմելու օրվա դրությամբ (ըստ յուրաքանչյուր վարկային պայմանագրի և ընդհանուր առմամբ):

Հարց 4. Ըստ թիվ 73/11ՀՎ, թիվ 128/11ԳԱԲ և թիվ 136/11ԳԱԲ վարկային պայմանագրերի՝ որքան է կազմում վարկառուներ Համլետ Հովսեփյանի և «Վենտոմայն» ՍՊԸ-ի պարտքը (միասին և առանձին)՝ վարկի մայր գումարը, տոկոսը, տուժանքը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից փորձագիտական եզրակացություն տալու օրվա դրությամբ (ըստ յուրաքանչյուր վարկային պայմանագրի և ընդհանուր առմամբ) (**հատոր 4-րդ, գ.թ. 85-89**):

6) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 03.05.2017 թվականին Դատարան է ներկայացվել «Արձանագրություն» վերնագրված 17.03.2017 թվականի փորձագիտական եզրակացությունը, որով Դատարանի կողմից առաջադրված վերոհիշյալ հարցերի կապակցությամբ հայտնվել է հետևյալը.

Հարց 1-ի պատասխան. Ընկերությունը թիվ 73/11ՀՎ, թիվ 128/11ԳԱԲ և թիվ 136/11ԳԱԲ վարկային պայմանագրերի շրջանակում տրամադրել է համապատասխանաբար 130.000 ԱՄՆ դոլար, 100.016 ԱՄՆ դոլար և 150.024 ԱՄՆ դոլար վարկեր: Համլետ Հովսեփյանին և «Վենտոմայն» ՍՊԸ-ին վերոհիշատակված պայմանագրերով տրամադրվել է ընդամենը 380.040 ԱՄՆ դոլարի վարկ (130.000+100.016+150.024):

Հարց 2-ի պատասխան. Թիվ 73/11ՀՎ, թիվ 128/11ԳԱԲ և թիվ 136/11ԳԱԲ վարկային պայմանագրերի շրջանակում Համլետ Հովսեփյանի, «Վենտոմայն» ՍՊԸ-ի կամ ցանկացած երրորդ անձի կողմից Ընկերությանը կատարած վճարումները փորձագիտական եզրակացություն տալու օրվա դրությամբ կազմել են համապատասխանաբար 171.212 ԱՄՆ դոլար, 138.794 ԱՄՆ դոլար և 206.368 ԱՄՆ դոլար, ընդամենը՝ 516.374 ԱՄՆ դոլար (171.212+138.794+206.368):

Հարց 3-ի պատասխան. Ընկերության կողմից դատարան դիմելու օրվա դրությամբ (15.08.2015 թվական) Համլետ Հովսեփյանի և «Վենտուրայն» ՍՊԸ-ի պարտքը Ընկերության նկատմամբ կազմել է.

Համաձայն թիվ 73/11ՀԿ պայմանագրի՝

վարկի մայր գումար՝ 8.692 ԱՄՆ դոլար,

տոկոս՝ 2.357 ԱՄՆ դոլար,

տուժանք՝ 973 ԱՄՆ դոլար,

ընդամենը՝ 12.022 ԱՄՆ դոլար,

Համաձայն թիվ 128/11ԳԱԲ պայմանագրի՝

վարկի մայր գումար՝ 3.092 ԱՄՆ դոլար,

տոկոս՝ 704 ԱՄՆ դոլար,

տուժանք՝ 70 ԱՄՆ դոլար,

ընդամենը՝ 3.866 ԱՄՆ դոլար,

Համաձայն թիվ 136/11ԳԱԲ պայմանագրի՝

վարկի մայր գումար՝ 2.632 ԱՄՆ դոլար,

տոկոս՝ 1.146 ԱՄՆ դոլար,

տուժանք՝ 108 ԱՄՆ դոլար,

ընդամենը՝ 3.886 ԱՄՆ դոլար:

3 պայմանագրերի գծով ընդհանուր պարտավորությունը կազմում է ընդամենը 19.774 (12.022+3.866+3.886) ԱՄՆ դոլար, որից՝

վարկի մայր գումար՝ 14.416 ԱՄՆ դոլար (8.692+3.092+2.632),

վարկի տոկոս՝ 4.207 ԱՄՆ դոլար (2.357+704+1.146),

վարկի տուժանք՝ 1.151 ԱՄՆ դոլար (973+70+108):

Հարց 4-ի պատասխան. Փորձագիտական եզրակացություն տալու՝ 17.03.2017 թվականի դրությամբ Համլետ Հովսեփյանի և «Վենտուրայն» ՍՊԸ-ի պարտավորությունները կազմում են՝

Համաձայն թիվ 73/11ՀՎ պայմանագրի՝

վարկի մայր գումար՝ 37.971 ԱՄՆ դոլար,

տոկոս՝ 4.510 ԱՄՆ դոլար,

տուժանք՝ 34.569 ԱՄՆ դոլար,

ընդամենը՝ 77.050 ԱՄՆ դոլար:

Համաձայն թիվ 128/11ԳԱԲ պայմանագրի՝

վարկի մայր գումար՝ 22.738 ԱՄՆ դոլար,

տոկոս՝ 2.786 ԱՄՆ դոլար,

տուժանք՝ 20.032 ԱՄՆ դոլար,

ընդամենը՝ 45.557 ԱՄՆ դոլար:

Համաձայն թիվ 136/11ԳԱԲ պայմանագրի՝

վարկի մայր գումար՝ 34.216 ԱՄՆ դոլար,

տոկոս՝ 4.790 ԱՄՆ դոլար,

տուժանք՝ 27.068 ԱՄՆ դոլար,

ընդամենը՝ 66.074 ԱՄՆ դոլար:

3 պայմանագրերի գծով ընդհանուր պարտավորությունը կազմում է ընդամենը 188.680 (94.925+12.086+81.669) ԱՄՆ դոլար, որից՝

վարկի մայր գումար՝ 94.925 ԱՄՆ դոլար (37.971+22.738+34.216),

վարկի տոկոս՝ 12.086 ԱՄՆ դոլար (4.510+2.786+4.790),

վարկի տուժանք՝ 81.669 ԱՄՆ դոլար (34,569+20,032+27,068) **(հատոր 5-րդ, գ.թ. 12-24):**

7) Պատասխանող Համլետ Հովսեփյանի ներկայացուցիչը, պատճառաբանելով, որ դատարան ներկայացված «Արձանագրություն» վերնագրված փաստաթուղթը չի համապատասխանում փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջներին, այն է՝ եզրակացությունում բացակայում է նշում կիրառված մեթոդների մասին, 24.07.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում միջնորդություն է ներկայացրել կրկնակի փորձաքննություն նշանակելու վերաբերյալ **(հիմք՝ դատական նիստի արձանագրություն, հատոր 5-րդ, գ.թ. 60-62, լազերային կրիչ՝ հատոր 7-րդ, գ.թ. 30ա):**

8) Դատարանը 08.08.2017 թվականի որոշմամբ մերժել է կրկնակի փորձաքննություն նշանակելու վերաբերյալ Համլետ Հովսեփյանի ներկայացուցչի միջնորդությունը: Մասնավորապես, Դատարանը, հիմք ընդունելով գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետը, պատճառաբանել է, որ «ելնելով արդարադատության արդյունավետության շահերից՝ փորձագիտական եզրակացության անհստակությունները պետք է առաջնային վերացվեն այդ եզրակացությունը ներկայացրած փորձագետին բանավոր բացատրություններ տալու համար դատական նիստին հրավիրելու եղանակով: Այսինքն, (...) եզրակացությունում կիրառված մեթոդների վերաբերյալ նշման բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ Դատարանի կողմից կրկնակի փորձաքննություն նշանակելու համար այն դեպքում, երբ կապառվի կատարված հետազոտության մեթոդների վերհանման օրենսդրի կողմից սահմանված հնարավորությունը» **(հատոր 5-րդ, գ.թ. 71-72):**

9) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Փառանձեմ Գևորգյանի կողմից Դատարանին հասցեագրված 27.11.2017 թվականի գրությամբ հայտնվել է, որ սույն գործով հաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննությունն իրականացվել է փաստաթղթային ստուգման մեթոդով, որն իր մեջ ներառել է ուսումնասիրությունն ըստ ձևի, թվաբանական և ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ ակտերի համապարփակ և անկողմնակալ կիրառմամբ: Փաստաթղթային ստուգման մեթոդի կիրառման գերակայությունը հաշվի առնելու արդյունքում նաև կիրառվել և համադրվել են թիվ ԵԱԴԴ/3172/02/15 քաղաքացիական գործին առնչվող բոլոր ելակետային տվյալները, նրանց ծագման բնույթը, փաստարկվածության աստիճանը՝ նրանց նկատմամբ կիրառելով ՀՀ գործող օրենքները և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերը, որոնք թեկուզ շատ չնչին կարող էին առնչվել թիվ ԵԱԴԴ/3172/02/15 քաղաքացիական գործի փորձագիտական վերլուծությանը **(հատոր 6-րդ, գ.թ. 46-47):**

10) 27.11.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Փառանձեմ Գևորգյանը, փորձագետ Մերի Պոնամարևան, արձանագրող Շուշան Թաչիյանը Դատարանի կողմից նախազգուշացվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին՝ քաղաքացիական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար: Դատական նիստի ընթացքում ի պատասխան պատասխանող կողմի ներկայացուցչի այն հարցին, թե ինչ մեթոդ է կիրառվել «Արձանագրություն» վերնագրված 17.03.2017 թվականի փորձագիտական եզրակացությունը կազմելիս, «Բեյքեր

Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Փառանձեմ Գևորգյանը հայտնել է, որ սույն գործով հաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննությունն իրականացվել է փաստաթղթային ստուգման մեթոդով, իսկ «ինչ գիտական հիմնավորվածություն ունի տվյալ մեթոդը» հարցին՝ պատասխանվել է՝ «լիովին»: Միաժամանակ, Դատարանի այն հարցին, թե ինչ մեթոդ է կիրառվել և ինչ է այն իրենից ներկայացնում, Փառանձեմ Գևորգյանը նշել է, որ տրված եզրակացությամբ կիրառվել է փաստաթղթային և թվաքանակական մեթոդը: Մասնավորապես, «թվաքանակական մեթոդը բխում է ներկայացված փաստաթղթերի մեջ ներառված թվերի համադրությունից, հաշվարկներից և վերլուծությունից: Ինչ վերաբերում է փաստաթղթայինին, ապա այն Դատարանի կողմից ներկայացված և կազմված գործն է, երկու կողմերից պահանջված փաստաթղթերն են, ինչը հնարավորություն է տալիս հիմնավորելու վարկային կազմակերպության կողմից Ընկերությանը և ֆիզիկական անձին տրված վարկերը, երկու կողմի պայմանավորվածությունը (համապատասխան պայմանագրեր) և դրա հիման վրա համապատասխան օրենսդրական դաշտի կիրառում» (**հիմք՝ դատական նիստի արձանագրություն, հատոր 6-րդ, գ.թ. 50-53, լազերային կրիչ, հատոր 7-րդ, գ.թ. 30ա**):

11) Թիվ 13136614 քրեական գործի շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Հ. Վ. Սարգսյանի 02.11.2015 թվականի որոշմամբ նշանակվել է «Հանձնաժողովային դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն» ու դրա կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին՝ հանձնաժողովի կազմում ընդգրկելով նաև ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային քյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին, այդ թվում՝ փորձագետ Գարիկ Զալալյանին, (...):

Փորձագետներին, ի թիվս այլնի, առաջադրվել են հետևյալ հարցերը.

Հարց 1. Ընկերության և «Վենտոմայն» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ 128/11ԳԱԲ, 136/11ԳԱԲ և 224/11ԳԱԲ, ինչպես նաև Համլետ Հովսեփյանի հետ կնքված թիվ 73/11ՀՎ վարկային պայմանագրերում արտացոլված պայմանները համապատասխանե՞լ են արդյոք դրանց կնքման ժամանակահատվածում գործող նորմատիվ իրավական և այլ ակտերի պահանջներին, եթե ոչ, ապա ինչ խախտումներ կան:

Հարց 2. Ճի՞շտ են հաշվարկվել արդյոք «Վենտոմայն» ՍՊԸ-ի, Համլետ Հովսեփյանի ընթացիկ և ամփոփ վարկային պարտավորությունները (ինչպես տոկոսների, այնպես էլ տույժ-տուգանքների, ինդեքսի մասով), եթե խախտումներ կան, ապա ինչո՞ւ են դրանք արտահայտվել:

Հարց 3. Նշված վարկային պայմանագրերով սահմանված պայմանները, հաշվարկներն ու գանձումները (ինչպես տոկոսների, այնպես էլ տույժ-տուգանքների, ինդեքսի մասով) հանդիսացե՞լ են արդյոք վարկառու Համլետ Հովսեփյանի և «Վենտոմայն» ՍՊ ընկերության անունից նշված վարկային պայմանագրերը կնքած անձանց համար ողջամտորեն կանխատեսելի, թե՛ ոչ (**հատոր 1-ին, գ.թ. 98-101**):

12) ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային քյուրո» ՊՈԱԿ-ի 30.06.2016 թվականի հմ. 15-3139 եզրակացությամբ փորձագետներ Եսթեր Զադոյանը և Գարիկ Զալալյանը Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Հ. Վ. Սարգսյանի՝ հանձնաժողովային դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն նշանակելու մասին 02.11.2015 թվականի որոշմամբ փորձագետներին առաջադրված վերոհիշյալ հարցերի կապակցությամբ հայտնել են հետևյալը.

Հետևություն Հարց 1-ի վերաբերյալ. Զուտ հաշվապահական հաշվառման և տնտե-

սագիտական տեսանկյունից կատարված վերլուծությունից ու հաշվարկներից, (...) նշված պայմանագրերի համապատասխան դրոյթները զուտ հաշվապահական հաշվառման, ինչպես նաև տնտեսագիտական տեսանկյունից չեն դիտվում ընդունելի:

Հետևություն Հարց 2-ի վերաբերյալ. Զուտ հաշվապահական հաշվառման և տնտեսագիտական տեսանկյունից կատարված վերլուծությունից ու հաշվարկներից, (...) փորձաքննությամբ փորձագետները հանգել են այն եզրահանգման, որ նշված վարկային պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից ճիշտ չեն հաշվարկվել Համլետ Հովսեփյանի, ինչպես նաև «Վենտուայն» ՍՊԸ-ի ընթացիկ և ամփոփ վարկային պարտավորությունները, մասնավորապես՝ ժամկետանց վարկի գծով տոկոսների հաշվարկման, ժամկետանց վարկային պարտավորությունների գծով տուժանքների (տույժ և տուգանքներ) կիրառման մասերով: (...) փորձաքննությամբ պարզվել է, որ վարկառուների կողմից վճարված գումարները չեն ուղղվել վճարման սկզբնական հաշվառման փաստաթղթերում ամրագրված նպատակին:

Հետևություն Հարց 3-ի վերաբերյալ. (...) նշված վարկային պայմանագրով սահմանված հաշվարկներն ու գանձումները վարկառուների, կոնկրետ դեպքում՝ Համլետ Հովսեփյանի ու «Վենտուայն» ՍՊԸ-ի համար հանդիսացել են ողջամտորեն կանխատեսելի (**հատոր 3-րդ, գ.թ. 53-55**):

13) Պատասխանող Համլետ Հովսեփյանի ներկայացուցիչը 27.11.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում կրկին միջնորդություն է ներկայացրել կրկնակի փորձաքննություն նշանակելու վերաբերյալ, ինչպես նաև միջնորդել է Դատարան հրավիրել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին՝ պատճառաբանելով, որ նշված եզրակացությամբ փորձագետներն արձանագրել են, որ հայցվորի կողմից ճիշտ չեն հաշվարկվել քաղաքացի Համլետ Հովսեփյանի, ինչպես նաև Ընկերության ընթացիկ և ամփոփ վարկային պարտավորությունները (**հիմք՝ դատական նիստի արձանագրություն, հատոր 6-րդ, գ.թ. 50-53, լազերային կրիչ, հատոր 7-րդ, գ.թ. 30ա**):

14) Դատարանը 30.11.2017 թվականի «Դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր կրկնակի փորձաքննություն նշանակելու և փորձագետներին բացատրություն տալու համար դատարան հրավիրելու միջնորդությունները մերժելու մասին» որոշմամբ մերժել է Համլետ Հովսեփյանի ներկայացուցչի՝ կրկնակի փորձաքննություն նշանակելու և 30.06.2016 թվականի ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացությունը տված փորձագետներ՝ Եսթեր Զադոյանին և Գարիկ Զալալյանին դատարան հրավիրելու վերաբերյալ միջնորդությունները: Տվյալ որոշմամբ Դատարանն արձանագրել է, որ վերը նշված փորձաքննությունը սույն գործի քննության ընթացքում չի նշանակվել, նշված փորձագետները դատարանի կողմից, որպես այդպիսին ճանաչված փորձագետներ չեն, հետևաբար չունենալով դատավարական կարգավիճակ, նշված անձինք չեն կարող բացատրություն տալ իրենց կողմից տրված եզրակացության վերաբերյալ (**հատոր 6-րդ, գ.թ. 56-58**):

15) Պատասխանող Համլետ Հովսեփյանի ներկայացուցիչը 30.11.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում միջնորդել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներ Եսթեր Զադոյանին և Գարիկ Զալալյանին դատարան հրավիրել որպես վկա, որը Դատարանի արձանագրային որոշմամբ բավարարվել է (**հատոր 6-րդ, գ.թ. 54-55**):

16) 22.01.2018 թվականին կայացած դատական նիստի ընթացքում որպես վկա հար-

ցաքնված Գարիկ Զալալյանը ցուցմունք է տվել այն մասին, որ «իր կողմից քրեական գործի շրջանակներում տրված փորձագետի եզրակացությանը նշված խնդրի իրավական կողմը փորձագետի լուծման խնդիրը չէ, դա նշվել է միայն փորձագիտական տեսանկյունից, իսկ նշված իրավական խնդրի վերջնական գնահատական տվողը քրեական վարույթն իրականացնող մարմինն է կամ դատարանը: Եզրակացության մեջ հաշվարկը համարել են անընդունելի՝ հաշվի առնելով եզրակացության մեջ նշված օրենքի կոնկրետ հոդվածը, բայց դա չի նշանակում, որ հաշվարկն անընդունելի է ընդհանրապես»: Միաժամանակ ի պատասխան պատասխանողի ներկայացուցչի այն հարցին, թե ինչու է կայացել եզրակացության մեջ նշված սխալ հաշվարկված եզրահանգումը, վկայի կողմից նշվել է, որ «նախաձեռնողի կողմից փորձագետներին չի առաջադրվել հարց որքան է կազմում, այլ ընդամենը ճիշտ է հաշվարկվել, թե ոչ», բացի այդ այն կապված է նախորդ հարցերի և դրանց վերաբերյալ իրավական նորմի հետ կապված եզրահանգումների հետ: «Վենսումայն» ՍՊԸ-ի և Համետ Հովսեփյանի պարտավորությունները ճիշտ են հաշվարկված պայմանագիր-քաղվածքի տեսանկյունից, պայմանագրի դրույթները և պարտավորության վերաբերյալ քաղվածքն իրար համապատասխանում են (**հիմք՝ դատական նիստի արձանագրություն, հատոր 7-րդ, գ.թ. 2-4, լագերային կրիչ, գ.թ. 30ա**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարող են էական նշանակություն ունենալ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 62-րդ հոդվածի 1-ին կետի միատեսակ կիրառության, մասնավորապես՝ փորձագետի՝ փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների վերաբերյալ նշում չպարունակող եզրակացությունը գնահատելիս միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի, 62-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ կետերի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը նախկինում արդարահայրած իրավական դիրքորոշումների համարեքսպում անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք իրավաչափ է դատարանի կողմից կրկնակի փորձաքննություն նշանակելու միջնորդության մերժումն այն դեպքում, երբ փորձագիտական եզրակացությունը թեև չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին,

այդուհանդերձ, եզրակացություններ կայացրած փորձագետները կիրառված մեթոդների վերաբերյալ դատական նիստում փոփոխվել են անհրաժեշտ բացատրություն:

Նախկին օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ (...) 2) փորձագետների եզրակացություններով (...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճիռի հիմքում:

Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նախկին օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:

Նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը կազմվում է գրավոր: Այն պետք է պարունակի՝

- 1) նշում՝ կիրառված մեթոդների մասին.
- 2) կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը.
- 3) հետազոտությունների արդյունքում արված հետևությունները.
- 4) առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում մյուս ապացույցների հետ:

Դատարանը կարող է հրավիրել գրավոր եզրակացություններ կայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար, եթե գործի հանգամանքներից բխում է դրա անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Դատարանը հրավիրում է գրավոր եզրակացություններ կայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար, եթե այդ մասին միջնորդել են կողմերը, կամ միջնորդել է կողմերից մեկը:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ եթե դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ են առաջանում փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ, կամ առկա են հակասություններ մի քանի փորձագետների եզրակացություններում, ապա դատարանը մինչև նույն հարցերի վերաբերյալ կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի (փորձագետների, մասնագիտացված փորձագիտական հաստատության):

ՀՀ վճիռները դատարանը նախկինում կայացրած որոշումներով անդրադարձել է վերը նշված դատավարական նորմերի վերլուծությանը:

Մասնավորապես՝ ՀՀ վճիռները դատարանն առանձնացրել է այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման վերոնշյալ ապացույցի գնահատումը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս: ՀՀ

վճռաբեկ դատարանը գտել է, որ *վերաբերելիության առումով* փորձագետի եզրակացությունը գնահատելիս նախնառաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե փորձագետին առաջադրված հարցերը որքանով նշանակություն ունեն գործի լուծման համար, ապա միայն անդրադառնալ այդ հարցադրումների վերաբերյալ արված եզրահանգումներին: Ընդ որում, հարցադրումների բովանդակությունը ոչ միայն էական նշանակություն ունի փորձագետի եզրակացության վերաբերելիության գնահատման տեսանկյունից, այլև կարևորվում է երկու և ավելի եզրակացությունների պարագայում դրանց միջև առկա հակասությունները վեր հանելու առումով:

Փորձագետի եզրակացությունը *թույլատրելիության տեսանկյունից* գնահատման ենթարկելիս առաջնահերթ կարևորվում է փորձաքննությունն իրականացնող անձի որակավորումը և ձեռնհասությունը, նշված անձի օբյեկտիվությունը, սահմանված դատավարական կարգի պահպանված լինելը, հետազոտության ընթացքի և արդյունքների պատշաճ դատավարական ձևակերպումը:

Արժանահավատության տեսանկյունից փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս պետք է հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը, փորձաքննությանը տրամադրված նյութի որակը և բավարարությունը, ելակետային տվյալների բնույթը, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանը, գործին մասնակցող անձանց՝ փորձաքննությանը ներկա գտնվելու իրական հնարավորությունը, եզրակացության համապատասխանությունը գործում առկա այլ ապացույցներին:

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նպատակների և նշանակման հիմքերի միջև առկա էական և առանցքային տարբերություններին: Մասնավորապես՝ անդրադառնալով կրկնակի փորձաքննությանը, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ առաջին ատյանում գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ կետով օրենսդիրը սպառնիչ կերպով սահմանել է վերջինիս հիմքերը, այն է՝ փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ առաջանալը կամ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությունը:

Անդրադառնալով փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մոտ առաջացած կասկածներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք չեն կարող կրել բացառապես օբյեկտիվ բնույթ, այլ պետք է հիմնավորվեն օբյեկտիվ հանգամանքներով: Մասնավորապես, փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ կասկածների համար օբյեկտիվ հիմք կարող են հանդիսանալ այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, երբ փորձագետի եզրակացությունը հակասում է գործով ձեռք բերված մյուս ապացույցներին, փորձագետի եզրահանգումները ձևակերպված են առանց գործի հանգամանքները հաշվի առնելու, փորձագիտական եզրակացությունը կազմվել է գիտական տեսանկյունից անթույլատրելի մեթոդների կիրառմամբ, եզրակացությունը տրվել է այն անձի կողմից, որը նշված բնագավառում եզրակացություն տալու իրավասություն չունի, եզրակացությամբ հաստատված փաստական հանգամանքները հակասության մեջ են գտնվում գործով ձեռք բերված մյուս ապացույցների, ամբողջությամբ հաստատված այլ փաստական հանգամանքների հետ և այլն:

Ինչ վերաբերում է կրկնակի փորձաքննություն նշանակելու մյուս հիմքին, այն է՝ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությանը, ապա ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ երկու և ավելի եզրակացություններում հակասությունների մասին կարելի է դատողություններ անել միայն այն դեպքում, երբ եզրակացությունները տրվել են ըստ էության միևնույն հարցերի պարզաբանման նպատակով, և առաջադրված միևնույն հարցադրումների վերաբերյալ տարբեր փորձագետներ փորձաքննությունների արդյունքում հանգել են տրամագծորեն տարբեր և իրար հակասող հետևությունների (*տես, «Կանաչապարուն» ՊՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանն ընդդեմ Կարեն Ախիկյանի և մյուսների թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ (...) իրագելվելով, թե ինչ մեթոդներ են կիրառվել փորձաքննություն իրականացնելիս՝ կողմերը և դատարանը հնարավորություն են ունենում, օրինակ, բացահայտելու փորձաքննության ընթացքում անթույլատրելի մեթոդների կիրառման դեպքերը: Ուստի, եթե փորձագետի եզրակացությունը չի պարունակում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով պարտադիր համարվող պահանջները, այդ թվում՝ չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին, ապա նման եզրակացությունը չի կարող համարվել պատշաճ ապացույց՝ մասնավորապես դրա արժանահավատության տեսանկյունից (*տես, Ղուկաս Ավագյանն ընդդեմ Հայկ Միրզախանի Մալխասյանի թիվ ԱԲԴ/0303/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և միաժամանակ նպատակ հետապնդելով զարգացնել վերոհիշյալ դիրքորոշումները՝ վճռաբեկ դատարանը սույն որոշման շրջանակներում հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նախկին օրենսգրքի իրավակարգավորման պայմաններում դատարանները փորձագետի եզրակացությունը որպես ապացույց հետազոտելիս և գնահատելիս պետք է հաշվի առնեն, որ մի դեպքում՝ փորձագետի եզրակացության վերաբերելիությանը, թույլատրելիությանը և արժանահավատությանն առնչվող խոչընդոտները կարող են հաղթահարվել միայն կրկնակի փորձաքննություն նշանակելու միջոցով, մեկ այլ դեպքում՝ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու միջոցով, իսկ մյուս դեպքում էլ՝ Նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով՝ գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար դատարան հրավիրելու եղանակով: Ուստի բոլոր այն դեպքերում, երբ դատական կարգով փորձաքննություն նշանակելուց և փորձագետի եզրակացությունն ստանալուց հետո դատարանը փորձագետի եզրակացությունը վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից գնահատելիս բախվում է որևէ խոչընդոտի և միաժամանակ կողմերը կամ կողմերից մեկը բարձրացնում է այդ խոչընդոտը վերացնելու անհրաժեշտության հարցը (համապատասխան միջնորդություն ներկայացնելու եղանակով), ապա դատարանի պարտականությունն է պարզել, թե տվյալ խոչընդոտը հաղթահարելու համար օրենսդրի սահմանած դատավարական որ գործողությունն է կիրառման ենթակա և, ըստ այդմ էլ, որոշել կողմի ներկայացրած միջնորդության հիմնավորվածության հարցը:

Վճռաբեկ դատարանը նախկինում արտահայտած դիրքորոշումների համատեքստում գտնում է, որ կրկնակի փորձաքննությունը՝ որպես փորձագետի եզրակացության արժանահավատությանն առնչվող խոչընդոտները հաղթահարելուն ուղղված դատավարական գոր-

ծողություն, կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ.

1. դատարանի կամ դատավարության մասնակիցների մոտ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված առաջացել են կասկածներ փորձագետի եզրակացության հիմնավորվածության վերաբերյալ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ փորձագիտական եզրակացության հիմնավորվածության վերաբերյալ կասկածների համար օբյեկտիվ հիմք կարող են հանդիսանալ հետևյալ հանգամանքները.

ա) փորձագետի եզրակացությունը հակասում է գործով ձեռք բերված մյուս ապացույցներին,

բ) փորձագետի եզրահանգումները ձևակերպված են առանց գործի հանգամանքները հաշվի առնելու,

գ) փորձագիտական եզրակացությունը կազմվել է գիտական տեսանկյունից անթույլատրելի մեթոդների կիրառմամբ,

դ) եզրակացությունը տրվել է այն անձի կողմից, որը նշված բնագավառում եզրակացություն տալու իրավասություն չունի,

ե) եզրակացությամբ հաստատված փաստական հանգամանքները հակասության մեջ են գտնվում գործով ձեռք բերված մյուս ապացույցների ամբողջությամբ հաստատված այլ փաստական հանգամանքների հետ և այլն,

2. մի քանի փորձագետների եզրակացություններում առկա են հակասություններ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ ցանկը սպառնիչ չէ և յուրաքանչյուր գործով առկա այս կամ այն հանգամանքը դատարանը պարտավոր է գնահատման ենթարկել և միայն դրանից հետո որոշել կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցը: Ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ փորձագիտական եզրակացությունը կազմվել է գիտական տեսանկյունից անթույլատրելի մեթոդների կիրառմամբ, ապա նման եզրակացությունն անարժանահավատ է և չի կարող դրվել դատական ակտի հիմքում: Հետևաբար նման իրավիճակում առկա խոչընդոտը հնարավոր է հաղթահարել միայն կրկնակի փորձաքննություն նշանակելու միջոցով: Մինչդեռ այն դեպքերում, երբ փորձագիտական եզրակացությունում բացակայում է նշումը՝ կիրառված մեթոդների մասին, ապա նման խոչընդոտը վերացնելու համար դատարանն իրավասու է ղեկավարվել Նախկին օրենսգրքի համապատասխան նորմով և դատարան հրավիրել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին՝ եզրակացությունը կազմելիս կիրառված մեթոդների վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում կարևոր է այն հանգամանքը, որ դատարան հրավիրված փորձագետը նախագգուշացվի ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, քանի որ տվյալ դեպքում փորձագետի կողմից դատական նիստում տրված բանավոր բացատրությունը դատարանի կողմից պետք է հետազոտման և գնահատման ենթարկվի փորձագետի եզրակացության հետ միաժամանակ՝ որպես մեկ ամբողջություն: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարան հրավիրված փորձագետի կողմից փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների վերաբերյալ բանավոր բացատրություն տալուց հետո կողմերը կամ կողմերից որևէ մեկը կներկայացնի փաստարկներ այդ մեթոդների անթույլատրելի լինելու, գիտական հիմնավորվածություն չունենալու կամ նշված մեթոդով փորձագետին առաջադրված հարցի վերաբերյալ եզրահանգման գալու ան-

հնարիչության վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան ապացույցներով կհիմնավորի այդ փաստարկների ողջամտությունը, ապա այս դեպքում արդեն փորձագետի եզրակացությունը գնահատելը կառաջացնի այնպիսի խոչընդոտներ, որոնք հնարավոր կլինի հաղթահարել միայն կրկնակի փորձաքննության նշանակմամբ: Մինչդեռ բոլոր այն դեպքերում, երբ դատարան հրավիրված փորձագետի բանավոր բացատրությամբ պարզվում են փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդները, հաստատվում են այդ մեթոդների թույլատրելի լինելու, գիտական հիմնավորվածություն ունենալու և նման փորձաքննությունների ժամանակ սովորաբար կիրառման ենթակա լինելու հանգամանքները, ապա տվյալ դեպքում փորձագետի եզրակացությունում կիրառված մեթոդների մասին նշման բացակայությունն ինքնին այդ եզրակացությունն անարժանահավատ չի դարձնում, հետևաբար նաև բացակայում է կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Այսպես՝ սույն գործով 11.04.2011 թվականից 14.07.2011 թվականն ընկած ժամանակահատվածում և 07.04.2015 թվականին Ընկերության և պատասխանողների միջև կնքվել են վարկային թիվ 73/11ՀՎ, 128/11ԳԱԲ և 136/11ԳԱԲ պայմանագրերը և դրանք ապահովող երաշխավորության և հիփոթեքի պայմանագրերը, որոնցով պատասխանողներն Ընկերության հանդեպ ստանձնել են համապատասխան վարկային պարտավորություններ:

Վերոհիշյալ վարկային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հիման վրա Ընկերության կողմից ներկայացված հայցի քննության ընթացքում պատասխանող կողմի միջնորդությամբ Դատարանի 22.11.2016 թվականի որոշմամբ նշանակվել է դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն և փորձաքննության կատարումը հանձնարարվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին: Հետագայում «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից Դատարան է ներկայացվել «Արձանագրություն» վերնագրված փորձագիտական եզրակացությունը:

24.07.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում պատասխանող Համլետ Հովսեփյանի ներկայացուցիչը, պատճառաբանելով, որ դատարան ներկայացրած «Արձանագրություն» վերնագրված փաստաթուղթը, չի համապատասխանում փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջներին, այն է՝ եզրակացությունում բացակայում է նշում կիրառված մեթոդների մասին, միջնորդել է նշանակել կրկնակի փորձաքննություն: Դատարանի 08.08.2017 թվականի որոշմամբ մերժվել է վերը միջնորդությունը:

Սույն գործով Դատարանը, վճռով անդրադառնալով պատասխանող կողմի այն դիրքորոշմանը, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից դատարան ներկայացված «Արձանագրություն» վերնագրված փորձագիտական եզրակացություն չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին, ուստի և չի համապատասխանում փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջներին, հետևաբար չի կարող դրվել վճռի հիմքում, արձանագրել է հետևյալը.

«Փորձագետի եզրակացության մեջ մեթոդների մասին նշում պարունակելու օրենսդրական պահանջն ուղղված է կիրառված մեթոդների բացահայտման, դրանց կիրառման թույլատրելիության կամ գիտական հիմնավորվածության հարցը պարզելու, դրա հիման վրա կրկնակի (...) փորձաքննություն նշանակելու հարցը քննարկելու համար: Հետևաբար (...) այն

դեպքերում, երբ դատարանը փորձագետին դատարան հրավիրելու, կիրառված մեթոդները բացահայտելու կամ պարզելու, հստակեցնելու դատավարական գործողությունների միջոցով արդեն իսկ պարզել է կիրառված մեթոդները, բացահայտել դրանց բովանդակությունը՝ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջները, նշված դեպքում կրկնակի (...) փորձաքննության նշանակումը կարող է լինել ինքնանպատակ, հաշվի առնելով (...) որ (...) փորձագետի բացատրությունից հետո այդ մեթոդների ակթոյլատրելի լինելու, գիտական հիմնավորվածություն չունենալու կամ նշված մեթոդով փորձագետի՝ եզրահագման գալու անհնարինության վերաբերյալ փաստարկներ կամ այլ ապացույցներ առկա չեն»:

Միաժամանակ Դատարանն արձանագրել է, որ «սույն գործով առկա չեն (...) եզրակացությունը ոչ արժանահավատ դիտելու հիմքեր, քանի որ գործում առկա չեն այլ ապացույցներ, որոնք հիմք կհանդիսանան փորձագետի եզրակացության մեջ արտացոլված տվյալները կասկածի տակ դնելու համար», հավելելով նաև, որ «քրեական գործի շրջանակներում (...) եզրակացություն տված փորձագետ, սույն գործով վկա Գարիկ Ջալալյանի ցուցմունքով արդեն պարզվել են այն հիմքերը, որոնցով հաշվարկները դիտվել են անընդունելի (...) »:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը մասնակի բեկանելով և անդրադառնալով Դատարանի վերոնշյալ պատճառաբանությունների հիմնավորվածությանը, արձանագրել է, որ «(...) եթե գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետի կողմից դատական նիստում տրված բացատրությունների արդյունքում լրացվում, ամբողջականացվում և հստակեցվում են փորձաքննությանն առաջադրված բոլոր հարցերի պատասխանները, ապա կարող է չնշանակվել լրացուցիչ փորձաքննություն, քանի որ լրացուցիչ փորձաքննությունն իր բնույթով ուղղված չէ սկզբնական փորձաքննության հետ մրցակցելուն, այլ ուղղված է սկզբնական փորձաքննության արդյունքներով տրված եզրակացության մեջ առկա անհստակությունները լրացնելուն, մինչդեռ տվյալ դեպքում բողոքաբերները միջնորդել են նշանակել կրկնակի փորձաքննություն, իսկ կրկնակի փորձաքննություն նշանակելու հիմքերն են՝ փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ առաջանալը կամ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությունը, որը որևէ կերպ չի կարող պարզվել, լրացվել, ամբողջականացվել և հստակեցվել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետի կողմից դատական նիստում տրված բացատրությունների արդյունքում: Այսպիսով, (...) սույն գործում առկա «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 17.03.2017 թվականին կազմված և Դատարանին ներկայացված «Արձանագրություն»-ը չի համապատասխանում փորձագետի եզրակացությանն առաջադրվող պահանջներին, հետևաբար այդ եզրակացության թույլատրելիության, արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ կասկածների առկայության, ինչպես նաև մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայության պայմաններում առկա էր կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն, ինչն էլ անտեսվել է Դատարանի կողմից»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 17.03.2017 թվականին կազմված և 03.05.2017 թվականին Դատարան ներկայացված՝ «Ար-

ձանագրություն» վերնագրված եզրակացությունն արժանահավատության տեսանկյունից կարող էր դրվել դատական ակտի հիմքում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ եզրակացությունը թեև նշում չի պարունակել կիրառված մեթոդների վերաբերյալ, սակայն Դատարանը, ղեկավարվելով գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, դատարան է հրավիրել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետներին՝ բանավոր բացատրություններ տալու համար: Այսինքն՝ կիրառված մեթոդները պարզելուն ուղղված դատավարական գործողություններ իրականացնելու միջոցով բացահայտել է փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդները և դրանց բովանդակությունը, մասնավորապես՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Փառանձեմ Գևորգյանի, փորձագետ Մերի Պոնամարևայի, արձանագրող Շուշան Թաշչյանի կողմից 27.11.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում տրված բացատրությունների (Դատարանի կողմից նաև դատական նիստի շրջանակներում նախագգուշացված լինելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին՝ քաղաքացիական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար) հիման վրա, ինչպես նաև նույն օրը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից Դատարան ներկայացված գրավոր գրությանը պարզվել է, որ հաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննությունն իրականացվել է փաստաթղթային ստուգման և թվաբանական մեթոդով: Միաժամանակ Դատարանի կողմից պարզվել են կիրառված մեթոդների էությունը, դրանց կիրառման ընթացակարգը, գիտական հիմնավորվածության աստիճանը (*յրեն, բաժին 3, փաստ 9, 10*):

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կիրառված մեթոդների վերաբերյալ փորձագետների կողմից դատական նիստի ընթացքում տրված բացատրությունից հետո այդ մեթոդների անթույլատրելի լինելու, գիտական հիմնավորվածություն չունենալու կամ նշված մեթոդով փորձագետին առաջադրված հարցի վերաբերյալ եզրահանգման գալու անհնարինության վերաբերյալ փաստարկներ կամ այլ ապացույցներ պատասխանողների կողմից չեն ներկայացվել:

Անդրադառնալով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից կազմված եզրակացության արժանահավատության և կրկնակի փորձաքննություն նշանակելու հիմքերից մյուսի, այն է՝ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությանը, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Այսպես, սույն գործում առկա՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից կազմված և թիվ 13136614 քրեական գործի շրջանակներում տրված 30.06.2016 թվականի ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացությունների ուսումնասիրությունը վկայում է, որ նշած երկու եզրակացությունների միջև հակասություն առկա չէ այն պարզ պատճառով, որ այդ եզրակացությունները տրվել են ըստ էության բոլորովին տարբեր հարցերի պարզաբանման նպատակով (*յրեն, բաժին 3, 6 և 11 փաստերը*): Ընդ որում, բացի նրանից, որ փորձագետներին առաջադրված են եղել բովանդակային առումով տարբեր հարցադրումներ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միանգամայն տարբեր են եղել նաև վերոհիշյալ փորձաքննությունների իրականացմամբ հետապնդվող նպատակները, մասնավորապես՝ եթե քրեական գործով նշանակված փորձաքննությամբ նպատակ է հետապնդվել բացահայտելու Ընկերության գործողություններում խարդախության հանցակազմի առկայությունը, ապա Դատարանի կողմից նշանակված փորձաքննությամբ նպա-

տակ է հետապնդվել բացահայտելու պատասխանողների՝ Ընկերության հանդեպ առկա պարտավորության չափը:

Ավելին, Դատարանը հաշվի առնելով վերը նշված փորձաքննության *արժանահավատության (մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների)* վերաբերյալ պատասխանող կողմի փաստարկը, բավարարել է վերջինիս միջնորդությունը և թիվ 13136614 քրեական գործի շրջանակներում նշանակված փորձաքննության արդյունքում 30.06.2016 թվականի ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացությունը տված փորձագետներ Եպթեր Զադոյանին և Գարիկ Զալալյանին հրավիրել է դատարան՝ որպես վկա ցուցմունք տալու համար: Արդյունքում, որպես վկա հարցաքննված Գարիկ Զալալյանի ցուցմունքով պարզվել են այն հիմքերը, որոնցով հաշվարկները դիտվել են անընդունելի:

Անդրադառնալով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից կազմված եզրակացության թույլատրելիության և արժանահավատության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա չեն նաև տվյալ փորձաքննությունն իրականացնող անձանց որակավորման և ձեռնհասության, ինչպես նաև այդ անձանց օբյեկտիվության վերաբերյալ կասկած հարուցող ապացույցներ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 17.03.2017 թվականին կազմված և 03.05.2017 թվականին Դատարան ներկայացված «Արձանագրություն» վերնագրված եզրակացությունն արժանահավատ ապացույց է, ուստի իրավաչափ է նաև սույն գործով կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին պատասխանող կողմի միջնորդության մերժումը:

Վճռաբեկ դատարանի վերը նշված հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ սույն գործով Դատարանն ըստ էության իրականացրել է փորձաքննություն նշանակելու և եզրակացություն ստանալու օրենսդրի կողմից սահմանված նպատակները, մինչդեռ պատասխանողների կողմից չեն ներկայացվել հիմնավոր փաստարկներ՝ տվյալ եզրակացությամբ կիրառված մեթոդների անթույլատրելի լինելու, գիտական հիմնավորվածություն չունենալու, նշված մեթոդով փորձագետին առաջադրված հարցի վերաբերյալ եզրահանգման գալու անհնարիանության վերաբերյալ, որպիսի պայմաններում օբյեկտիվորեն բացակայել է նաև այդ հիմքով կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերոհիշյալ հանգամանքները, եկել է սխալ եզրահանգման առ այն, որ սույն գործով առկա է եղել կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն:

Վճռաբեկ բողոքի պատրաստմանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 25.07.2018 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝

Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի 06.03.2018 թվականի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի 25.07.2018 թվականի որոշումը ենթակա է բեկանման և օրինական ուժ է տրվում Դատարանի 06.03.2018 թվականի վճռին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքը պետք է բռնագանձվի հետևյալ համամասնությամբ.

Ա. վերաքննիչ բողոքի համար նախապես չվճարված և Վերաքննիչ դատարանի 20.04.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասով (հատոր 9, գ.թ. 39-40) Համկետ Հովսեփյանից և Վարդան Հովսեփյանից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագանձման ենթակա է՝

1. թիվ 73/11ՀՎ վարկային և թիվ 73/11ՀՎ երաշխավորության պայմանագրերի շրջանակներում 46.572 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը՝ որպես սկզբնական հայցով ներկայացված դրամական պահանջի համար պետական տուրքի գումար,

2. սկսած 04.12.2015 թվականից մինչև վերաքննիչ բողոքի ներկայացման օրը թիվ 73/11ՀՎ վարկային և թիվ 7311ՀՎ երաշխավորության պայմանագրերով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների, ժամկետանց գումարի տոկոսի, ժամկետանց գումարի տույժի, ժամկետանց տոկոսի տույժի գումարների 3 տոկոսը՝ որպես սկզբնական հայցով ներկայացված դրամական պահանջի համար պետական տուրքի գումար,

3. 20.000 ՀՀ դրամ՝ որպես հակընդդեմ հայցով ներկայացված երկու ոչ դրամական պահանջների համար պետական տուրքի գումար,

4. 360.000 ՀՀ դրամ (12.000.000 ՀՀ դրամ x 3%/100), ինչպես նաև 7.415,4 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը՝ որպես հակընդդեմ հայցով ներկայացված դրամական պահանջների համար պետական տուրքի գումար,

Բ. վերաքննիչ բողոքի համար նախապես չվճարված և Վերաքննիչ դատարանի 20.04.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասով Համլետ Հովսեփյանից և «Վենտուրայն» ՍՊԸ-ից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագաձման ենթակա է՝

1. թիվ 128/11ԳԱԲ վարկային, թիվ 12811ԳԱԲ երաշխավորության, թիվ 136/11ԳԱԲ վարկային, թիվ 13611ԳԱԲ երաշխավորության պայմանագրերով 66.194,47 ԱՄՆ դոլարին (26.541,92+ 39.652,47) համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը՝ որպես սկզբնական հայցով ներկայացված դրամական պահանջի համար պետական տուրքի գումար,

2. սկսած 04.12.2015 թվականից մինչև վերաքննիչ բողոքի ներկայացման օրը թիվ 128/11ԳԱԲ վարկային, թիվ 12811ԳԱԲ երաշխավորության, թիվ 136/11ԳԱԲ վարկային, թիվ 13611ԳԱԲ երաշխավորության պայմանագրերով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների, ժամկետանց գումարի տոկոսի, ժամկետանց գումարի տույժի, ժամկետանց տոկոսի տույժի գումարների 3 տոկոսը՝ որպես սկզբնական հայցով ներկայացված դրամական պահանջի համար պետական տուրքի գումար,

Գ. վերաքննիչ բողոքի համար նախապես չվճարված և Վերաքննիչ դատարանի 20.04.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի մասով «Վենտուրայն» ՍՊԸ-ից, Համլետ և Վարդան Հովսեփյաններից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագաձման ենթակա է՝

1. 10.000 ՀՀ դրամ՝ որպես սկզբնական հայցով ներկայացված ոչ դրամական պահանջի համար պետական տուրքի գումար,

Դ. վճարել բողոքի համար Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի մասով «Վենտուրայն» ՍՊԸ-ից, Համլետ և Վարդան Հովսեփյաններից համապարտության կարգով հոգուտ Ընկերության բռնագաձման ենթակա է՝

1. 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես սկզբնական հայցով և հակընդդեմ հայցով ներկայացված դրամական պահանջների համար պետական տուրքի գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես սկզբնական հայցով ոչ դրամական պահանջի համար պետական տուրքի գումար,

Ե. վճարել բողոքի համար Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի մասով Համլետ և Վարդան Հովսեփյաններից համապարտության կարգով հոգուտ Ընկերության բռնագաձման ենթակա է՝

1. 40.000 ՀՀ դրամ՝ որպես հակընդդեմ հայցով ներկայացված երկու ոչ դրամական պահանջների համար պետական տուրքի գումար,

Բացի այդ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կե-

տի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Սույն գործով նկատի ունենալով, որ Հնկերությունը վճարեկ բողոքի համար վճարել է ընդհանուր առմամբ 1.080.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, որից 20.000 ՀՀ դրամը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ, Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ավել վճարված պետական տուրքի գումարը՝ 20.000 ՀՀ դրամի չափով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2018 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 06.03.2018 թվականի վճիռ:

2. Համկետ Հովսեփյանից և Վարդան Հովսեփյանից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագանձել 53.987,4 (46.572 + 7.415,4) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը, 380.000 (20.000+360.000) ՀՀ դրամ, ինչպես նաև սկսած 04.12.2015 թվականից մինչև վերաքննիչ բողոքի ներկայացման օրը թիվ 73/11ՀՎ վարկային և թիվ 7311ՀՎ երաշխավորության պայմանագրերով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների, ժամկետանց գումարի տոկոսի, ժամկետանց գումարի տույժի, ժամկետանց տոկոսի տույժի գումարների 3 տոկոսը՝ որպես վերաքննիչ բողոքի ներկայացման համար նախապես չվճարված և Վերաքննիչ դատարանի 20.04.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումարներ:

3. Համկետ Հովսեփյանից և «Վենտուրայն» ՍՊԸ-ից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագանձել 66.194,47 (26.541,92+39.652,47) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը, ինչպես նաև սկսած 04.12.2015 թվականից մինչև վերաքննիչ բողոքի ներկայացման օրը թիվ 128/11ԳԱԲ վարկային, թիվ 12811ԳԱԲ երաշխավորության, թիվ 136/11-ԳԱԲ վարկային, թիվ 13611ԳԱԲ երաշխավորության պայմանագրերով սահմանված կարգով հաշվարկվող տոկոսների, ժամկետանց գումարի տոկոսի, ժամկետանց գումարի տույժի, ժամկետանց տոկոսի տույժի գումարների 3 տոկոսը՝ որպես վերաքննիչ բողոքի ներկայացման համար նախապես չվճարված և Վերաքննիչ դատարանի 20.04.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումարներ:

4. «Վենտուրայն» ՍՊԸ-ից, Համկետ և Վարդան Հովսեփյաններից համապարտության կարգով ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի ներկայացման համար նախապես չվճարված և Վերաքննիչ դատարանի 20.04.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

5. «Վենտուրայն» ՍՊԸ-ից, Համկետ և Վարդան Հովսեփյաններից համապարտության կարգով հոգուտ «Էքսպրես Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարեկ բողոքի ներկայացման համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

6. Համկետ և Վարդան Հովսեփյաններից համապարտության կարգով հոգուտ «Էքսպ-

րես Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի ներկայացման համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

7. Պետական տուրքի հարցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով համարել լուծված:

8. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵԱԴԳ/3172/02/15 քաղաքացիական գործով 15.11.2019 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2019 թվականի նոյեմբերի 15-ին գրավոր ընթացակարգով քննելով «Էքսպրես Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Մարիամ Ղուլյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Համլետ և Վարդան Հովսեփյանների, «Վենտուայն» ՍՊԸ-ի, երրորդ անձ Կարինե Հովսեփյանի՝ գումար բռնագանձելու, բռնագանձումը գրավադրված գույքերի վրա տարածելու պահանջների մասին և ըստ Համլետ ու Վարդան Հովսեփյանների հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումար բռնագանձելու, հաշվանց կատարելու, պայմանագրի դադարման մասին փաստաթղթեր տրամադրելուն պարտավորեցնելու, ընկերության գրավի իրավունքը գրավով ապահովված պահանջի դադարման հիմքով դադարեցնելու պահանջների մասին, նույն պալատի ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2018 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 06.03.2018 թվականի վճռին:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում էմ իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Համլետ և Վարդան Հովսեփյաններից համապարտության կարգով բռնագանձել վարկի, համապատասխան տոկոսների և տույժերի գումարը՝ բռնագանձումը տարածելով վերջիններիս պատկանող գույքի և գրավի առարկայի վրա, «Վենտուայն» ՍՊԸ-ից և Համլետ Հովսեփյանից համապարտության կարգով բռնագանձել վարկի, համապատասխան տոկոսների և տույժերի գումարը՝ բռնագանձումը տարածելով վերջիններիս պատկանող գույքի և գրավի առարկայի վրա:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Համլետ և Վարդան Հովսեփյանները պահանջել են Ընկերությունից բռնագանձել համապատասխան գումար և կատարել հաշվանց սկզբնական հայցով ներկայացված գումարի բռնագանձման պահանջի հետ, տրամադրել թիվ համապատասխան պայմանագրերի դադարման մասին փաստաթղթերը, ինչպես նաև դադարեցնել Համլետ Հովսեփյանին պատկանող բնակելի տան և հողամասի նկատմամբ Ընկերության գրավի իրավունքը՝ գրավով ապահովված պահանջի դադարման հիմքով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Թորոսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.03.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակորեն՝ վճռվել է, համապատասխանաբար, Համլետ և Վարդան Հովսեփյաններից, «Վենտուայն» ՍՊԸ-ից ու Համլետ Հովսեփյանից համապարտության կարգով հոգուտ Ընկերության բռնագանձել որոշակի գումարներ՝ բռնագանձումը տարածելով համապատասխան գրավի առարկաների

վրա, քաղաքացիական գործի վարույթն ըստ Ընկերության հայցի ընդդեմ Համլետ և Վարդան Հովսեփյանների, «Վենտոմայն» ՍՊԸ-ի ու երրորդ անձ Կարինե Հովսեփյանի՝ գրավի առարկան չբավարարելու դեպքում բռնագանձումը պատասխանողների այլ գույքի վրա տարածելու մասով, կարճվել է, իսկ հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.07.2018 թվականի որոշմամբ «Վենտոմայն» ՍՊԸ-ի և Համլետ ու Վարդան Հովսեփյանների վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 06.03.2018 թվականի վճիռը մասնակիորեն՝ Ընկերության հայցը բավարարելու, Վարդան և Համլետ Հովսեփյանների հակընդդեմ հայցը մերժելու, համապատասխանաբար դատական ծախսերի մասերով, բեկանվել է, ու գործն այդ մասերով ուղարկվել է նոր քննության. մնացած մասով վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Համլետ և Վարդան Հովսեփյանները:

2. Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի 25.07.2018 թվականի որոշման օրինականության սրուգման հարցում որևէ է վճռաբեկ բողոքի հերկյալ հիմքերը.

«Վերաքննիչ դատարանը խախտել է առաջին արյանում գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 53-րդ, 60-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածները, 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածը»:

Որպես բողոք բերած անձի նշված պնդման պարճառարանություններ՝ վկայակոչվել են հերկյալ փաստարկները.

«Վերաքննիչ դատարանը չի իրականացրել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում:

Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ փորձագետի եզրակացություն հանդիսացող փաստաթղթի վերնագրին որևէ օրենսդրական պահանջ ներկայացված չէ, ուստի սույն քաղաքացիական գործով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից կազմված եզրակացության անվանումը՝ «Արձանագրություն», որևէ նորմի խախտում չէ:

Բացի այդ, ըստ էության ճիշտ եզրակացության պարագայում զուտ վերնագրի հետ կապված որևէ հետևանք օրենսդիրը չի նախատեսում և դա հանդիսանում է բացառապես ձևական հանգամանք: Ինչ վերաբերում է փորձագետի եզրակացության բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջներին, ապա եզրակացությունում հստակ նշվել են առաջադրված հարցերի պատասխանները, ինչպես նաև հետազոտությունների արդյունքում արված հետևությունները: Միաժամանակ թե՛ եզրակացության հիմնական տեքստում, թե՛ կցված երկու հավելվածների միջոցով մանրամասն ներկայացված են կատարված հաշվարկները, ուստի կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը եզրակացությունում նույնպես առկա է: Նման պայմաններում անհասկանալի է Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ հետազոտությունների մանրամասն նկարագրություն եզրակացությունում ներկայացված չէ:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն, որ փորձագետները, դատարան ներկայանալով, ինչպես նաև գրավոր դիմում ներկայացնելով, նշել են, թե ինչ մեթոդներով են իրականացրել փորձաքննությունը: Հետևաբար ակնհայտ է, որ կողմը չի ներկայացրել եզրակացության արժանահավատության և հիմնավորվածության վերաբերյալ որևէ օբյեկտիվ

կասկած, որևէ փաստ, որը կվկայեր, որ փորձագետների կողմից կատարված հաշվարկները և դրանց արդյունքում կատարված հետևությունները հիմնավոր չեն:

Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել, թե ինչու ներկայացված եզրակացությունը չի համապատասխանում թույլատրելիության և արժանահավատության պահանջներին: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանի կողմից որևէ եզրահանգում չի կատարվել փորձաքննությունն իրականացնող անձի որակավորման և ձեռնհասության, նշված անձի օբյեկտիվության, սահմանված դատավարական կարգի պահպանված լինելու, հետազոտության ընթացքի և արդյունքների պատշաճ դատավարական ձևակերպման հետ կապված: Նմանապես որևէ եզրահանգում չի կատարվել նաև փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանի, փորձաքննությանը տրամադրված նյութի որակի և բավարարության, ելակետային տվյալների բնույթի, փորձագետի հետևությունների փաստարկվածության աստիճանի, գործին մասնակցող անձանց՝ փորձաքննությանը ներկա գտնվելու իրական հնարավորության հետ կապված:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանին հաջողվել է դատական նիստի ընթացքում վերացնել եզրակացության արժանահավատության և հիմնավորվածության, ինչպես նաև ՀՀ «Փորձաքննության ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությանը հակասելու վերաբերյալ բոլոր օբյեկտիվորեն հնարավոր կասկածները, ինչի արդյունքում վերացել է կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը»:

Որպես բողոք բերած անձի պահանջ նշվել է, որ վերջինս պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.07.2018 թվականի որոշումը՝ ամբողջությամբ օրինական ուժ տալով Դատարանի 06.03.2018 թվականի վճիռին:

4. Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումը.

Վճռաբեկ դատարանը՝

1) վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համատեքստում անհրաժեշտ համարելով անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք իրավաչափ է դատարանի կողմից կրկնակի փորձաքննություն նշանակելու միջնորդության մերժումն այն դեպքում, երբ փորձագիտական եզրակացությունը թեև չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին, այդուհանդերձ, եզրակացություն ներկայացրած փորձագետները կիրառված մեթոդների վերաբերյալ դատական նիստում տվել են անհրաժեշտ բացատրություն,

2) արձանագրելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնելով, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարող են էական նշանակություն ունենալ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) 62-րդ հոդվածի 1-ին կետի միատեսակ կիրառության, մասնավորապես՝ փորձագետի՝ փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների վերաբերյալ նշում չպարունակող եզրակացությունը գնահատելիս միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

3) արձանագրելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի, 62-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ կետերի խախտելու հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում,

4) Նախկին օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 53-րդ հոդվածի 1-ին կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության, 62-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ կետերի վկայակոչմամբ նշելով, որ՝

«այն դեպքերում, երբ փորձագիտական եզրակացությունում բացակայում է նշումը՝ կիրառված մեթոդների մասին, ապա նման խոչընդոտը վերացնելու համար դատարանն իրավասու է ղեկավարվել Նախկին օրենսգրքի համապատասխան նորմով և դատարան հրավիրել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին՝ եզրակացությունը կազմելիս կիրառված մեթոդների վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար»,

«բոլոր այն դեպքերում, երբ դատարան հրավիրված փորձագետի բանավոր բացատրությամբ պարզվում են փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդները, հաստատվում են այդ մեթոդների թույլատրելի լինելու, գիտական հիմնավորվածություն ունենալու և նման փորձաքննությունների ժամանակ սովորաբար կիրառման ենթակա լինելու հանգամանքները, ապա սովյալ դեպքում փորձագետի եզրակացությունում կիրառված մեթոդների մասին նշման բացակայությունն ինքնին այդ եզրակացությունն անարժանահավատ չի դարձնում, հետևաբար նաև բացակայում է կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը»,

արձանագրել է, որ «03.05.2017 թվականին Դատարան ներկայացված՝ «Արձանագրություն» վերնագրված եզրակացությունը թեև նշում չի պարունակել կիրառված մեթոդների վերաբերյալ, սակայն Դատարանը, ղեկավարվելով գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, դատարան է հրավիրել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետներին՝ բանավոր բացատրություններ տալու համար (...) կիրառված մեթոդները պարզելու ուղղված դատավարական գործողություններ իրականացնելու միջոցով բացահայտել է փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդները և դրանց բովանդակությունը», «Դատարանի կողմից պարզվել են կիրառված մեթոդների էությունը, դրանց կիրառման ընթացակարգը, գիտական հիմնավորվածության աստիճանը»:

Վերը նշվածի արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 25.07.2018 թվականի որոշումը րեկանելու և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված լիազորությունը կիրառելու հիմքով Դատարանի 06.03.2018 թվականի վճռին օրինական ուժ տալու համար:

Վճռաբեկ դատարանի դարավոր Գ. Հակոբյանս, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի դարավորների մեծամասնության կողմից արտահայտված կարծիքի հետ՝ կապված Վերաքննիչ դատարանի 25.07.2018 թվականի որոշումը վերը նշված պարճառարանությանը րեկանելու շարճատիթների հետ, շարադրում եմ իմ հարունկ կարծիքն այդ մասի վերաբերյալ:

Այսպես՝

Դատարանում գործի քննության ժամանակ գործած Նախկին օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետը նախատեսել է, որ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Նույն հոդվածի 3-րդ կետը նախատեսել է, որ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքներով:

Նույն օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսել է, որ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են (...) փորձագետների եզրակացություններով (...):

Նույն հոդվածի 2-րդ կետը նախատեսել է, որ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

Նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսել է, որ փորձագետի եզրակացությունը կազմվում է գրավոր: Այն պետք է պարունակի՝

- 1) նշում՝ կիրառված մեթոդների մասին.
- 2) կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը.
- 3) հետազոտությունների արդյունքում արված հետևությունները.
- 4) առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Նույն հոդվածի 3-րդ կետը նախատեսել է, որ փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում մյուս ապացույցների հետ:

Դատարանը կարող է հրավիրել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դրա վերաբերյալ բանավոր բացատրություններ տալու համար, եթե գործի հանգամանքներից բխում է դրա անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը (...):

Նույն հոդվածի 4-րդ կետը նախատեսել է, որ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքերում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով միևնույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության):

Նույն հոդվածի 5-րդ կետը նախատեսել է, որ եթե դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ են առաջանում փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ, կամ առկա են հակասություններ մի քանի փորձագետների եզրակացություններում, ապա դատարանը միևնույն հարցերի վերաբերյալ կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի (փորձագետների, մասնագիտացված փորձագիտական հաստատության):

Նշված օրենսդրական կարգավորումները մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ այդ հոդվածների կարգավորման համատեքստից ելնելով՝ գտնում են, որ Դատարանում գործի քննության ժամանակ գործած Նախկին օրենսգրքով սահմանված է եղել քաղաքացիական գործերով

դատավարության որոշակի կարգ, որի համաձայն՝ գործով ապացույց է հանդիսացել նաև փորձագետի եզրակացությունը: Ընդ որում, այդ եզրակացությամբ հաստատվող տեղեկությունները պետք է ձեռք բերվեին նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով: Այդպիսի կարգ է հանդիսացել նաև այն, որ փորձագետի եզրակացությունը պետք է բովանդակի նշում փորձաքննությունն իրականացնելիս կիրառված մեթոդների մասին: Այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը նման նշում չի պարունակում, ուստի համարվում է, որ այն հակասում է վերը նշված դատավարական կարգին, քանի որ ձեռք է բերվել օրենքի խախտմամբ: Նման պայմաններում այդ ապացույցը չի կարող իրավաբանական ուժ ունենալ և դրվել դատարանի վճռի հիմքում: Նշված հետևությունը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված որոշումներով արտահայտված հետևյալ դիրքորոշումներից:

Այսպես՝

ՀՀ վճռաբեկ դատարանը, առանձնացնելով այն հիմնական չափորոշիչները, որոնք ենթակա են կիրառման փորձագետի եզրակացությունը արժանահավատության տեսանկյունից իրականացնելիս՝ արձանագրել է, որ այդ տեսանկյունից փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս պետք է նաև հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը: Մինևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մոտ առաջացած կասկածներին, գտել է, որ դրանք չեն կարող կրել բացառապես սուբյեկտիվ բնույթ, այլ պետք է հիմնավորվեն օբյեկտիվ հանգամանքներով: Մասնավորապես, փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ կասկածների համար օբյեկտիվ հիմք կարող են հանդիսանալ այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, երբ փորձագետի եզրակացությունը հակասում է գործով ձեռք բերված մյուս ապացույցներին, փորձագետի եզրահանգումները ձևակերպված են առանց գործի հանգամանքները հաշվի առնելու, փորձագիտական եզրակացությունը կազմվել է գիտական տեսանկյունից անթույլատրելի մեթոդների կիրառմամբ, եզրակացությունը տրվել է այն անձի կողմից, որը նշված բնագավառում եզրակացություն տալու իրավասություն չունի, եզրակացությամբ հաստատված փաստական հանգամանքները հակասության մեջ են գտնվում գործով ձեռք բերված մյուս ապացույցների, ամբողջությամբ հաստատված այլ փաստական հանգամանքների հետ և այլն (*տե՛ս*, «Կանաչասպարուս» ՊՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանն ընդդեմ Կարեն Ախիկյանի և մյուսների թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ (...) իրագեկվելով, թե ինչ մեթոդներ են կիրառվել փորձաքննություն իրականացնելիս՝ կողմերը և դատարանը հնարավորություն են ունենում, օրինակ, բացահայտելու փորձաքննության ընթացքում անթույլատրելի մեթոդների կիրառման դեպքերը: Ուստի, եթե փորձագետի եզրակացությունը չի պարունակում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով պարտադիր համարվող պահանջները, այդ թվում՝ չի պարունակում նշում կիրառված մեթոդների մասին, ապա նման եզրակացությունը չի կարող համարվել պատշաճ ապացույց՝ մասնավորապես դրա արժանահավատության տեսանկյունից (*տե՛ս*, Ղուկաս Ավագյանն ընդդեմ Հայկ Միրզախանի Մայխասսյանի թիվ ԱԲԴ/0303/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի

20.07.2017 թվականի որոշումը):

Այսինքն, եթե փորձագետի եզրակացության գնահատում իրականացնելիս հնարավոր չէ հաշվի առնել փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության աստիճանը՝ դրանց վերաբերյալ եզրակացության մեջ նշման բացակայության պատճառով, որի պայմաններում կողմերը և դատարանը զրկվում են փորձաքննության ընթացքում անթույլատրելի մեթոդների կիրառման դեպքերը բացահայտելու հնարավորությունից, ուստի նաև անհնարին է հետևություն անել այդ եզրակացության արժանահավատության վերաբերյալ: Նման պայմաններում ինչպես դատարանի, այնպես էլ դատավարության մասնակիցների մոտ կարող են կասկածներ առաջանալ առնվազն այդ եզրակացության արժանահավատության վերաբերյալ:

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նպատակների ու նշանակման հիմքերի միջև առկա էական և առանցքային տարբերություններին: Մասնավորապես՝ անդրադառնալով կրկնակի փորձաքննությանը, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ առաջին ատյանում գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ կետով օրենսդիրը սպառիչ կերպով սահմանել է վերջինիս հիմքերը, այն է՝ փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ առաջանալը կամ մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների առկայությունը (*տե՛ս, «Կանաչասպարում» ՊՓ-ԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանն ընդդեմ Կարեն Ախիկյանի և մյուսների թիվ ԵԷՂ/1284/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Այսինքն՝ գործի քննության ժամանակ գործած Նախկին օրենսգրքով սահմանված դատավարական կարգի համաձայն՝ կրկնակի փորձաքննություն նշանակելու հիմք է հանդիսացել նաև այն, որ դատարանի կամ դատավարության մասնակիցների մոտ կասկածներ են առաջացել փորձագիտական եզրակացության արժանահավատության վերաբերյալ, որը, վերը նշված դիրքորոշումների համատեքստում, կարող է պայմանավորված լինել փորձագետի եզրակացության մեջ նաև կիրառված մեթոդների մասին նշման բացակայությամբ:

Մինևույն ժամանակ անհրաժեշտ համարելով անդրադառնալ գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դատարան հրավիրելու հիմքերին՝ ցանկանում են նշել, որ Նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետն այդ մասով նախատեսել է որոշակի դատավարության կարգ, որի համաձայն՝ օրենսդիրը դատարաններին իրավունք է վերապահել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետին դատարան հրավիրելու **քացառապես իր տված եզրակացության վերաբերյալ** բանավոր բացատրություններ տալու համար: Ինչ վերաբերում է գրավոր փորձագետի եզրակացությունը տալուց կիրառված մեթոդի մասին նշման բացակայության հիմքով փորձագետին դատարան հրավիրելուն և այդ «բացը» դատական կարգով լրացնելուն՝ ենթադրյալ մեթոդների մասին նրա բացատրությունը լսելուն, ապա նման դատավարության կարգ գործի քննության ժամանակ գործած Նախկին օրենսգրքով սահմանված չի եղել: Ընդ որում, նման կարգավորումը բխել է նաև հենց Նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետի տրամաբանությունից, որի համաձայն՝ գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետը չէր կարող դատարան հրավիրվել գոյություն չունեցող նշման վերաբերյալ բացատրություն տալու համար, և նոր միայն դատարանում փորձեր բացատրել, թե ինչ մեթոդ է կիրառել:

Վերը նշված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստերի նկարմամբ՝ արձանագրում են՝ հետևյալը.

Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է նաև, որ՝

1) 26.10.2016 թվականին հակընդդեմ հայցվոր Համլետ Հովսեփյանը ներկայացրել է «Փորձաքննություն նշանակելու մասին» միջնորդություն (...).

2) Դատարանի 22.11.2016 թվականի «Դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ բավարարվել է հակընդդեմ հայցվորի միջնորդությունը և նշանակվել է դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին (...).

3) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 03.05.2017 թվականին Դատարան է ներկայացվել «Արձանագրություն» վերնագրված 17.03.2017 թվականի փորձագիտական եզրակացությունը, որով Դատարանի կողմից առաջադրված վերոհիշյալ հարցերի կապակցությամբ հայտնվել է հետևյալը (...).

4) Պատասխանող Համլետ Հովսեփյանի ներկայացուցիչը, պատճառաբանելով, որ դատարան ներկայացված «Արձանագրություն» վերնագրված փաստաթուղթը չի համապատասխանում փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջներին, այն է՝ եզրակացությունում բացակայում է նշում կիրառված մեթոդների մասին, 24.07.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում միջնորդություն է ներկայացրել կրկնակի փորձաքննություն նշանակելու վերաբերյալ.

5) Դատարանը 08.08.2017 թվականի որոշմամբ մերժել է կրկնակի փորձաքննություն նշանակելու վերաբերյալ Համլետ Հովսեփյանի ներկայացուցչի միջնորդությունը: Մասնավորապես, Դատարանը, հիմք ընդունելով գործի քննության ժամանակ գործող Նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետը, պատճառաբանել է, որ «ելնելով արդարադատության արդյունավետության շահերից՝ փորձագիտական եզրակացության անստակությունները պետք է առաջնային վերացվեն այդ եզրակացությունը ներկայացրած փորձագետին բանավոր բացատրություններ տալու համար դատական նիստին հրավիրելու եղանակով: Այսինքն, (...) եզրակացությունում կիրառված մեթոդների վերաբերյալ նշման բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ Դատարանի կողմից կրկնակի փորձաքննություն նշանակելու համար այն դեպքում, երբ կապավի կատարված հետազոտության մեթոդների վերահանման օրենսդրի կողմից սահմանված հնարավորությունը».

6) 27.11.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում (...) ի պատասխան պատասխանող կողմի ներկայացուցչի այն հարցին, թե ինչ մեթոդ է կիրառվել «Արձանագրություն» վերնագրված 17.03.2017 թվականի փորձագիտական եզրակացությունը կազմելիս, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Փառանձեմ Գևորգյանը հայտնել է, որ սույն գործով հաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննությունն իրականացվել է փաստաթղթային ստուգման մեթոդով, իսկ «ինչ գիտական հիմնավորվածություն ունի տվյալ մեթոդը» հարցին՝ պատասխանվել է՝ «լիտվին»: Միաժամանակ, Դատարանի այն հարցին, թե ինչ մեթոդ է կիրառվել և ինչ է այն իրենից ներկայացնում, Փառանձեմ Գևորգյանը նշել է, որ տրված եզրակացությամբ կիրառվել է փաստաթղթային և թվաբանական մեթոդը: Մասնավորապես, «թվաբանական մեթոդը բխում է ներկայացված փաստաթղթերի մեջ ներառված թվերի համադրությունից, հաշվարկներից և վերլուծությունից: Ինչ վե-

րաբերում է փաստաթղթայինին, ապա այն Դատարանի կողմից ներկայացված և կազմված գործն է, երկու կողմերից պահանջված փաստաթղթերն են, ինչը հնարավորություն է տալիս հիմնավորելու վարկային կազմակերպության կողմից Ընկերությանը և ֆիզիկական անձին տրված վարկերը, երկու կողմի պայմանավորվածությունը (համապատասխան պայմանագրեր) և դրա հիման վրա համապատասխան օրենսդրական դաշտի կիրառում».

7) թիվ 13136614 քրեական գործի շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Հ. Վ. Սարգսյանի 02.11.2015 թվականի որոշմամբ նշանակվել է «Հանձնաժողովային դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն» ու դրա կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին՝ հանձնաժողովի կազմում ընդգրկելով նաև ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին, այդ թվում՝ փորձագետ Գարիկ Զալալյանին (...).

8) ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 30.06.2016 թվականի հմ. 15-3139 եզրակացությամբ փորձագետներ Եսթեր Զադոյանը և Գարիկ Զալալյանը Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Հ. Վ. Սարգսյանի՝ հանձնաժողովային դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն նշանակելու մասին 02.11.2015 թվականի որոշմամբ փորձագետներին առաջադրված վերոհիշյալ հարցերի կապակցությամբ հայտնել են հետևյալը (...).

9) Պատասխանող Համլետ Հովսեփյանի ներկայացուցիչը 27.11.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում կրկին միջնորդություն է ներկայացրել կրկնակի փորձաքննություն նշանակելու վերաբերյալ, ինչպես նաև միջնորդել է Դատարան հրավիրել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին՝ պատճառաբանելով, որ նշված եզրակացությամբ փորձագետներն արձանագրել են, որ հայցվորի կողմից ճիշտ չեն հաշվարկվել քաղաքացի Համլետ Հովսեփյանի, ինչպես նաև Ընկերության ընթացիկ և անվուրի վարկային պարտավորությունները.

10) Դատարանը 30.11.2017 թվականի «Դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր կրկնակի փորձաքննություն նշանակելու և փորձագետներին բացատրություն տալու համար դատարան հրավիրելու միջնորդությունները մերժելու մասին» որոշմամբ մերժել է Համլետ Հովսեփյանի ներկայացուցչի՝ կրկնակի փորձաքննություն նշանակելու և 30.06.2016 թվականի ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացությունը տված փորձագետներ՝ Եսթեր Զադոյանին և Գարիկ Զալալյանին դատարան հրավիրելու վերաբերյալ միջնորդությունները: Տվյալ որոշմամբ Դատարանն արձանագրել է, որ վերը նշված փորձաքննությունը սույն գործի քննության ընթացքում չի նշանակվել, նշված փորձագետները դատարանի կողմից, որպես այդպիսին ճանաչված փորձագետներ չեն, հետևաբար չունենալով դատավարական կարգավիճակ, նշված անձինք չեն կարող բացատրություն տալ իրենց կողմից տրված եզրակացության վերաբերյալ.

11) Պատասխանող Համլետ Հովսեփյանի ներկայացուցիչը 30.11.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում միջնորդել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներ Եսթեր Զադոյանին և Գարիկ Զալալյանին դատարան հրավիրել որպես վկա, որը Դատարանի արձանագրային որոշմամբ բավարարվել է.

12) 22.01.2018 թվականին կայացած դատական նիստի ընթացքում որպես վկա հարցաքննված Գարիկ Զալալյանը ցուցմունք է տվել այն մասին, որ «իր կողմից քրեական գործի շրջանակներում տրված փորձագետի եզրակացությամբ նշված խնդրի իրավական կողմը

փորձագետի լուծման խնդիրը չէ, դա նշվել է միայն փորձագիտական տեսանկյունից, իսկ նշված իրավական խնդրի վերջնական գնահատական տվողը քրեական վարույթն իրակա-նացնող մարմինն է կամ դատարանը: Եզրակացության մեջ հաշվարկը համարել են անընդունելի՝ հաշվի առնելով եզրակացության մեջ նշված օրենքի կոնկրետ հոդվածը, բայց դա չի նշանակում, որ հաշվարկն անընդունելի է ընդհանրապես»: Միաժամանակ ի պատասխան պատասխանողի ներկայացուցչի այն հարցին, թե ինչու է կայացել եզրակացության մեջ նշված սխալ հաշվարկված եզրահանգումը, վկայի կողմից նշվել է, որ «նախաձեռնողի կողմից փորձագետներին չի առաջադրվել հարց որքան է կազմում, այլ ընդամենը ճիշտ է հաշվարկվել, թե ոչ», բացի այդ այն կապված է նախորդ հարցերի և դրանց վերաբերյալ իրավական նորմի հետ կապված եզրահանգումների հետ: «Վենտուայն» ՍՊԸ-ի և Համետ Հոլստեյնյանի պարտավորությունները ճիշտ են հաշվարկված պայմանագիր-քաղվածքի տեսանկյունից, պայմանագրի դրույթները և պարտավորության վերաբերյալ քաղվածքն իրար համապատասխանում են:

Սույն գործով Դատարանն արձանագրել է, որ փորձագետի եզրակացության մեջ մեթոդների մասին նշում պարունակելու օրենսդրական պահանջն ուղղված է կիրառված մեթոդների բացահայտման, դրանց կիրառման թույլատրելիության կամ գիտական հիմնավորվածության հարցը պարզելու, դրա հիման վրա կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու հարցը քննարկելու համար, ու գտել է, որ այն դեպքերում, երբ դատարանը փորձագետին դատարան հրավիրելու, կիրառված մեթոդները բավահայտելու կամ պարզելու, հստակեցնելու դատավարական գործողությունների միջոցով արդեն իսկ պարզել է կիրառված մեթոդները, բացահայտել դրանց բովանդակությունը՝ պահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջները, նշված դեպքում կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննության նշանակումը կարող է լինել ինքնանպատակ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ բացի մեթոդները զուտ նշված չլինելը փորձագետի բացատրությունից հետո այդ մեթոդների անթույլատրելի լինելու, գիտական հիմնավորվածություն չունենալու կամ նշված մեթոդով փորձագետի՝ եզրահանգման գալու անհնարինության վերաբերյալ փաստարկներ կամ այլ ապացույցներ առկա չեն: Եթե գործի քննության ընթացքում դատարանը հետամուտ է եղել փորձաքննությամբ առաջադրված հարցերի պարզաբանմանը, փորձագետի բացատրության միջոցով պարզել կամ մանրամասնել է կիրառված մեթոդները և փորձագետի եզրահանգման համար հիմք հանդիսացած ելակետային տվյալները, այլ հանագամանքները, դատարանն ըստ էության իրականացրել է փորձաքննություն նշանակելու և եզրակացություն ստանալու օրենսդրի կողմից սահմանված նպատակները: Գործով առկա չեն նաև նշված եզրակացությունը ոչ արժանահավատ դիտելու հիմքեր, քանի որ գործում առկա չեն այլ ապացույցներ, որոնք հիմք կհանդիսանան փորձագետի եզրակացության մեջ արտացոլված տվյալները կասկածի տակ դնելու համար (...): Հավելել է նաև, որ քրեական գործի շրջանակներում (...) եզրակացություն տված փորձագետ, սույն գործով վկա Գարիկ Զալալյանի ցուցմունքով արդեն պարզվել են այն հիմքերը, որոնցով հաշվարկները դիտվել են անընդունելի:

Վերաքննիչ դատարանը, Նախկին օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 60-րդ և 62-րդ հոդվածների, ինչպես նաև Ռազմիկ Սարգսյանը և Լիդա Սևոյանն ընդդեմ Ռաֆիկ Հախվերդյանի թիվ 3-259(ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 02.03.2007 թվականի, «Օրինեթ Սթոն» ՍՊԸ-ն ընդդեմ «Վազ քար» ՍՊԸ-ի թիվ ԱՎԳ-1/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 24.05.2013 թվականի, ՀՀ ֆինանսների նախարարություն

ընդդեմ Սայեն Ղազարյանի և այլոց թիվ ԱՎԴ/0011/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի և Ռաֆայել Ավետիսյանն ընդդեմ Մեյրան Վարդանյանի իրավահաջորդներ Արթուր և Անժելա Վարդանյանների թիվ ԿԴՅ/0133/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշմների վկայակոչմամբ պատճառաբանելով նաև, որ ««Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 17.03.2017 թվականին կազմված և դատարանին է ներկայացված «Արձանագրություն»-ը չի համապատասխանում փորձագետի եզրակացությանն առաջադրվող վերը նշված պահանջներին, հետևաբար թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից այն չէր կարող դրվել դատական ակտի հիմքում», «սույն գործում առկա «Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 17.03.2017 թվականին կազմված և Դատարանին ներկայացված «Արձանագրության» թույլատրելիության, արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ կասկածների առկայության, ինչպես նաև մի քանի փորձագետների եզրակացություններում հակասությունների (...) առկայության պայմաններում առկա էր կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն, ինչն էլ անտեսվել է Դատարանի կողմից և դա այն դեպքում, երբ «Էքսպրես Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի ներկայացրած հայցադիմումում, հայցային պահանջների չափը ավելացնելու վերաբերյալ դիմումում և գործի քննության ընթացքում բռնագանձման ենթակա գումարի վերաբերյալ որևէ հաշվարկ չի ներկայացվել, հետևաբար սույն գործով Դատարանը չի ապահովել գործի փաստական հանգամանքների լրիվ և բազմակողմանի քննություն», «Վենտմայն» ՍՊԸ-ի, Վարդան և Համլետ Հովսեփյանների վերաքննիչ բողոքները բավարարել է, Դատարանի 06.03.2018 թվականի վճիռը մասնակիորեն՝ Ընկերության հայցը բավարարելու, Վարդան Հովսեփյանի և Համլետ Հովսեփյանի հակընդդեմ հայցը մերժելու, համապատասխանաբար դատական ծախսերի մասերով, բեկանել է և գործն այդ մասերով ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

Այժմ, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այն հարցին, թե արդյոք «Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 17.03.2017 թվականին կազմված և 03.05.2017 թվականին Դատարան ներկայացված՝ «Արձանագրություն» վերնագրված եզրակացությունն արժանահավատության տեսանկյունից կարող էր դրվել դատական ակտի հիմքում, արձանագրել է, որ «վերոհիշյալ եզրակացությունը թեև նշում չի պարունակել կիրառված մեթոդների վերաբերյալ, սակայն Դատարանը, ղեկավարվելով գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, դատարան է հրավիրել գրավոր եզրակացություն ներկայացրած փորձագետներին՝ բանավոր բացատրություններ տալու համար: Այսինքն՝ կիրառված մեթոդները պարզելուն ուղղված դատավարական գործողություններ իրականացնելու միջոցով բացահայտել է փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդները և դրանց բովանդակությունը, մասնավորապես՝ «Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Փառանձեն Գևորգյանի, փորձագետ Մերի Պոնամարևայի, արձանագրող Շուշան Թաշչյանի կողմից 27.11.2017 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում տրված բացատրությունների (Դատարանի կողմից նաև դատական նիստի շրջանակներում նախագգուշացված լինելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին՝ քաղաքացիական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար) հիման վրա, ինչպես նաև նույն օրը «Բեյքեր Թիլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից Դատարան ներկայացված գրավոր գրությամբ պարզվել է, որ հաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննությունն իրականացվել է փաստաթղթային ստուգման և թվաբա-

նական մեթոդով: Միաժամանակ Դատարանի կողմից պարզվել են կիրառված մեթոդների էությունը, դրանց կիրառման ընթացակարգը, գիտական հիմնավորվածության աստիճանը»: Մինևսույն ժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 17.03.2017 թվականին կազմված և 03.05.2017 թվականին Դատարան ներկայացված «Արձանագրություն» վերնագրված եզրակացությունն արժանահավատ ապացույց է, ուստի իրավաչափ է նաև սույն գործով կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին պատասխանող կողմի միջնորդության մերժումը:

Հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված վերը նշված իրավական դիրքորոշումները, գործի քննության ժամանակ գործած Նախկին օրենսգրքով սահմանված դատավարական կարգի վերաբերյալ սույն հատուկ կարծիքում նշված իմ մեկնաբանությունները, դրանք կիրառելով սույն գործի փաստերի նկատմամբ՝ գտնում եմ, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները հիմնավոր են, որի պայմաններում հիմնավոր է նաև Դատարանի 06.03.2018 թվականի վճիռը մասնակիորեն՝ Ընկերության հայցը բավարարելու, Վարդան և Համլետ Հովսեփյանների հակընդդեմ հայցը մերժելու, համապատասխանաբար դատական ծախսերի մասերով, բեկանելու ու գործն այդ մասերով նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը, և բացակայում է Վերաքննիչ դատարանի 25.07.2018 թվականի որոշումը բեկանելու ու Դատարանի 06.03.2018 թվականի վճիռն օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու հիմքը, քանի որ կարծում եմ սույն գործով առկա չէ Վերաքննիչ դատարանի կողմից որոշում կայացնելիս թույլ տրված դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Նման պայմաններում, գտնում եմ, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2080/02/16
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2080/02/16
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Տ. Նազարյան
Ս. Թորոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի հուլիսի 26-ին

գրավոր ընթացակարգով քննելով Անի Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.06.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անի Հովհաննիսյանի ընդդեմ «Սպուտնիկ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Անի Հովհաննիսյանը պահանջել է Ընկերության 28.12.2015 թվականի թիվ 17 հրամանը՝ Անի Հովհաննիսյանի հետ 02.08.2011 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին, ճանաչել անվավեր և Անի Հովհաննիսյանին վերականգնել աշխատանքում՝ նախկին պաշտոնում, Ընկերությունից հոգուտ Անի Հովհաննիսյանի բռնագանձել Անի Հովհաննիսյանի միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ավիհյան) (այսուհետ՝ Դատարան) 06.02.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.06.2018 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 06.02.2018 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անի Հովհաննիսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչ Էդուարդ Աղաջանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վճռի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ 13.09.2016 և 17.02.2017 թվականների դատական նիստերի արձանագրությունները կատարվել են բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելն անհնարին դարձնող թերություններով, ինչը վճռի պարտադիր բեկանման ենթակա լինելու հիմք է:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ 13.09.2016 և 17.02.2017 թվականների դատական նիստերի ձայնային արձանագրությունները խոտանված են, մինչդեռ գործի նյութերում առկա՝ վերոնշյալ դատական նիստերի ձայնային արձանագրություններն ամբողջական են և չեն կատարվել բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելն անհնարին դարձնող թերություններով: Նման պայմաններում Դատարանի օրինական վճիռը բեկանվել է գոյություն չունեցող հիմքով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.06.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 06.02.2018 թվականի վճռին:

2.2. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Ներկայացված վճռաբեկ բողոքն անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գտել է, որ դատական նիստերի արձանագրությունները թերի են ու ոչ ամբողջական: Այսինքն՝ դատական նիստերի ժամանակ իրականացված քննության արդյունքներն ամբողջությամբ չեն արտացոլվել էլեկտրոնային կրիչների վրա, ինչի արդյունքում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները, մասնավորապես՝ կողմերի հիմնավորումները, պատասխանները և ապացույցներին վերաբերող դիրքորոշումները բացակայում են:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝
1) Գործում առկա են Դատարանում 13.09.2016 և 17.02.2017 թվականներին կայացած դա-

տական նիստերի արձանագրությունների համակարգչային համառոտագրումները (**հատոր 1-ին, գ.թ. 39-41, 111-113**):

2) Գործում առկա է 13.09.2016 և 17.02.2017 թվականներին կայացած դատական նիստերի ձայնային արձանագրությունները պարունակող էլեկտրոնային կրիչը (**հատոր 2-րդ, գ.թ. 89**):

3) Ընկերության ներկայացուցչի կողմից 15.03.2018 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքում Դատարանի վճիռը բողոքարկվել է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝

- Դատարանը չի կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ և 54-րդ հոդվածները, այն է՝ պատշաճ չի գնահատել գործում առկա գրավոր ապացույցները և վկաների ցուցմունքները, ինչը հանգեցրել է սխալ դատական ակտի կայացման:

- Դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը, 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 223-րդ և 226-րդ հոդվածները, այն է՝ չի պարզել, թե արդյոք պահպանվել են կարգապահական տույժի կիրառման կարգը և դրանից բխող՝ աշխատանքից ազատման հիմքերը:

- Դատարանը թույլ է տվել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220.4-րդ հոդվածի խախտում, այն է՝ հաշվի չի առել, որ 13.09.2016 և 17.02.2017 թվականներին կայացած դատական նիստերի ձայնային արձանագրությունների մի մասը խոտանված է:

- Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածը, այն է՝ հաշվի չի առել, թե արդյոք առկա է հայցվորի աշխատանքի վերականգնման հնարավորություն (**հատոր 3-րդ, գ.թ. 6-25**):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի խախտում, որի արդյունքում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտում, որով և խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ քաղաքացիական գործում էլեկտրոնային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրումների և՛ բացակայությանը, և՛ այն թերություններին, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը՝ վերահասարակելով նաև նախկինում արդարահայրած իրավական դիրքորոշումները:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ

ժամկետում քննության իրավունք:

Կունվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերում, ինչպես նաև դատական նիստերից դուրս առանձին դատավարական գործողություններ կատարելիս վարվում է արձանագրություն: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով: Համառոտագրումը դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են:

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հատուկ համակարգչային ձայնագրման համակարգով արձանագրություն վարելիս դրա համառոտագրումը կատարվում է միաժամանակ՝ համակարգչային եղանակով: Ձայնային արձանագրությունը գործի նյութերին կցվում է լազերային կրիչի վրա: Համառոտագրումը գործի նյութերին կցվում է թղթային կրիչի վրա՝ հավաստված դատական նիստի քարտուղարի ստորագրությամբ:

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատական նիստի արձանագրումը կատարվել է այնպիսի թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը:

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական նիստում գործողություններ կատարելիս վարվում է արձանագրություն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստերի դահլիճում հատուկ համակարգչային ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակյա համառոտագրման ձևով: Համառոտագրումը դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են:

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղա-

քացիական դատավարության օրենսգրքի 163-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հատուկ համակարգչային ձայնագրման համակարգով արձանագրություն վարելիս դրա համառոտագրումը կատարվում է միաժամանակ՝ համակարգչային եղանակով: Դատական նիստի քարտուղարի ստորագրությամբ թղթային կրիչի վրա կատարված համառոտագրումը և ձայնային կրիչի վրա պահված արձանագրությունը կցվում են գործի նյութերին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է դատավարության ընթացքում դատական նիստի արձանագրության ունեցած դերին և նշանակությանը՝ ընդգծելով, որ դատական նիստի արձանագրությունը՝ որպես դատավարական գործողությունների կատարման բոլոր էական հանգամանքները հաստատող փաստաթուղթ, ունի կարևոր ապացուցողական նշանակություն: Մասնավորապես՝ դատավարության կողմերը կարող են հիմնավորել իրենց վերաքննիչ և վճռաբեկ բողոքները՝ հղում կատարելով դատական նիստերի արձանագրությանը, իսկ վերադաս ատյանի դատարանները դատական նիստերի արձանագրությունների միջոցով կարող են ստուգել ստորադաս դատարաններում գործի քննության օրինականությունը, մասնավորապես, արդյո՞ք ստորադաս դատարանի կայացրած դատական ակտը համապատասխանում է այն փաստերին, որոնք հաստատվել են դատաքննության ընթացքում կամ որևէ դատավարական գործողություն իրականացնելիս դատարանը պահպանել է սահմանված դատավարական կարգը: Այսպիսով, դատական նիստի արձանագրությունն անձի դատական պաշտպանության իրավունքի և հատկապես՝ բողոքարկման իրավունքի իրացումն ապահովող կարևորագույն միջոցներից է, ինչով էլ պայմանավորված է դատական նիստի արձանագրության բացակայության դեպքում օրենսդրի կողմից դատական ակտի բեկանման պարտադիր պահանջի սահմանումը (տե՛ս, *Կարեն Սյրեփանյանի ընդդեմ Ջուլետրյա Սմբարյանի թիվ ԵԱԲԴ/2279/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանի վկայակոչված դիրքորոշումն արտահայտվել է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի կապակցությամբ, որը, որպես վճռի պարտադիր բեկանման հիմք, միայն նախատեսում էր գործից դատական նիստի արձանագրության բացակայությունը: Մինչդեռ գործնականում հնարավոր էին իրավիճակներ, երբ դատական նիստի արձանագրումը կատարվել էր այնպիսի թերություններով, որոնք հնարավորություն չէին տալիս վերադաս դատական ատյանին լիարժեք ստուգելու ստորադաս դատական ատյանում կատարված գործողությունների իրավաչափությունը: Այս նկատառումով օրենսդիրը 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում որպես դատական ակտի պարտադիր բեկանման հիմք սահմանել է նաև այն դեպքը, երբ դատական նիստի արձանագրումը կատարվել է այնպիսի թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում դատական նիստի արձանագրումը ենթադրում է ձայնային արձանագրում՝ ամրագրված լազերային կրիչի վրա, և համառոտագրում՝ արտատպված թղթի վրա: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ձայնային արձանագրումը հանդիսանում է դատական նիստի բոլոր տվյալների անընդմեջ արձանագրման հիմնական միջոցը, հետևաբար նաև դատավարության հրապարակայնության

ապահովման միջոցը: Ինչ վերաբերում է թղթային համառոտագրմանը, ապա վերջինս ուղղակի դատական նիստերի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են, որն ունի ուղղորդիչ բնույթ, հետևաբար առանց ձայնային արձանագրման այն չի կարող բավարար պատկեր ստեղծել դատական նիստի ընթացքի վերաբերյալ, չի կարող բավարար չափով ապահովել դատավարության հրապարակայնությունը և ծառայել որպես անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման երաշխիք:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում լազերային կրիչի վրա ամրագրված ձայնային արձանագրման և համակարգչային համառոտագրման միաժամանակյա առկայությունը պարտադիր է յուրաքանչյուր դատական նիստով, և դրանցից որևէ մեկի բացակայությունը ենթադրում է դատական նիստի արձանագրության բացակայություն: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ոչ միայն լազերային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրությունների բացակայությունն է հանդիսանում դատական ակտի պարտադիր բեկանման հիմք, այլ նաև դատական նիստերի ձայնային արձանագրություններում առկա այն թերությունները, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը: Այսինքն՝ լազերային կրիչի վրա ամրագրված դատական նիստերի ձայնային արձանագրությունների միայն առկայությունը բավարար չէ, անհրաժեշտ է, որ դրանք լինեն *պիրանի* և *բավարար* բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար: Հետևաբար լազերային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրությունների խտտանումը, որն անհնարին է դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը, *ipso facto* հանգեցնում է վերանայվող դատական ակտի անվերապահ բեկանման՝ անկախ բողոքում այդ հիմքի վերաբերյալ որևէ վկայակոչումից:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը Դատարանի 06.02.2018 թվականի վճռի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ թեև գործի նյութերին կցված կրիչը պարունակում է 13.09.2016 և 17.02.2017 թվականների դատական նիստերի ձայնային արձանագրությունները, սակայն վերոնշյալ ձայնային արձանագրությունների մի մասի խտտանման արդյունքում դրանք լսելի չեն, ուստի դատական նիստերի ձայնային արձանագրությունները կատարվել են բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելն անհնարին դարձնող թերություններով, ինչը Դատարանի վճռի անվերապահ բեկանման հիմք է: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «Ինչ վերաբերում է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների հետ կապված վերաքննիչ բողոք բերած անձի փաստարկներին, ապա դատական նիստերի արձանագրությունները բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելն անհնարին դարձնող թերություններով կատարված լինելու հիմքով դատական ակտը բեկանման ենթակա լինելու պայմաններում Վերաքննիչ դատարանը դրանց չի անդրադառնում»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում նշել, որ սույն գործով Դատարանը 13.09.2016 և 17.02.2017 թվականների դատական նիստերն արձանագրել է ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով համառոտագրման միջոցով, և դատական նիստերի ձայնային արձանագրություններն ամրագրված են գործում առկա լազերային կրիչի վրա: Վճռաբեկ դատարանը նշված լազերային կրիչի վրա ամրագրված դատական նիստերի ձայնային արձանագրությունների հետազոտման արդյունքում արձանագրում է, որ Դատարանի 13.09.2016 և 17.02.2017 թվականների դատական նիստերի ձայնային արձանագրությունները խոտանված չեն, լսելի են և պիտանի են բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ գործի նյութերին կցված 13.09.2016 և 17.02.2017 թվականների դատական նիստերի ձայնային արձանագրությունները խոտանված են, անհիմն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելն անհնարին դարձնող թերությունները բացակայել են, հետևաբար գործը ենթակա է նոր քննության՝ վերաքննիչ բողոք բերած անձի վկայակոչած նյութական և դատավարական իրավունքի ստորմերի խախտումների հետ կապված բոլոր հիմքերին ու փաստարկներին անդրադառնալու և քննության առարկա դարձնելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը, իսկ այդ առաքելությունը կարող է իրագործվել միայն այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանն անդրադառնա վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին՝ դրանով իսկ բացահայտելով ենթադրյալ դատական սխալի առկայությունը կամ բացակայությունը: Այնինչ տվյալ պարագայում Վերաքննիչ դատարանը, դատական ակտի պարտադիր բեկանման հիմքի առկայության մասին սխալ եզրահանգման գալով, չի անդրադարձել վերաքննիչ բողոքի մնացած հիմքերին և հիմնավորումներին՝ սահմանափակելով բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը՝ արդյունքում թույլ տալով այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Վճռաբեկ բողոքի պատրաստմանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանությամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար՝ Հնկելության կողմից բերված վերաքննիչ բողոքի մնացած հիմքերը քննության առնելու և դրանց հիմնավորվածությունը ստուգելու նպատակով:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ

ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.06.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1107/02/16
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1107/02/16
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հունվարի 08-ին

գրավոր ընթացակարգով քննելով Դոնարա Նազարյանի և Ռուբեն Բաբակեղյանի ներկայացուցիչ Կարեն Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.11.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արտակ Գալստյանի ընդդեմ Արթուր Անդրեասյանի, Դոնարա Նազարյանի, Ռուբեն Բաբակեղյանի, երրորդ անձինք Կարեն Թումիկյանի, «Յունիքանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր), Վեներա Գալստյանի, Երևանի Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանի՝ Կարեն Թումիկյանի, Արթուր Անդրեասյանի և Բանկի միջև 12.04.2011 թվականին կնքված թիվ 849 անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը և դրա հիման վրա Երևանի Բաղրամյան պողոտայի թիվ 77 շենքի 8-րդ բնակարանի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-003 4-94 մատյանի 203 համարի տակ 20.12.2011 թվականին կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու և 07.11.2012 թվականին Արթուր Անդրեասյանի և Դոնարա Նազարյանի միջև կնքված գույքի

առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա 12.11.2012 թվականին թիվ 01-003-01223-0150 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու, Վեներա Գալստյանի, Արտակ Գալստյանի և Կարեն Թումիկյանի միջև 31.08.2010 թվականին կնքված և Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանի կողմից վավերացված՝ սեղանամատյանում 4314 համարի տակ գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Կարեն Թումիկյանի անվամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-003 4-94 մատյանի 203 համարի տակ 02.09.2010 թվականին կատարված պետական գրանցումն առոչինչ ճանաչելու, Արտակ Գալստյանի և Վեներա Գալստյանի սեփականության իրավունքը վերականգնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատարանական նախապարմնությունը.

Դիմելով դատարան՝ Արտակ Գալստյանը պահանջել է անվավեր ճանաչել Կարեն Թումիկյանի, Արթուր Անդրեասյանի և Բանկի միջև 12.04.2011 թվականին կնքված թիվ 849 անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը և դրա հիման վրա Երևանի Բաղրամյան պողոտայի թիվ 77 շենքի 8-րդ բնակարանի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-003 4-94 մատյանի 203 համարի տակ 20.12.2011 թվականին կատարված պետական գրանցումը և կիրառել անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել 07.11.2012 թվականին Արթուր Անդրեասյանի և Դոնարա Նազարյանի միջև կնքված գույքի առուվաճառքի պայմանագիրը, և դրա հիման վրա 12.11.2012 թվականին թիվ 01-003-01223-0150 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, առոչինչ ճանաչել Վեներա Գալստյանի, Արտակ Գալստյանի և Կարեն Թումիկյանի միջև 31.08.2010 թվականին կնքված և Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանի կողմից վավերացված՝ սեղանամատյանում 4314 համարի տակ գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, և դրա հիման վրա Կարեն Թումիկյանի անվամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-003 4-94 մատյանի 203 համարի տակ 02.09.2010 թվականին կատարված պետական գրանցումը՝ վերականգնելով Արտակ Գալստյանի և Վեներա Գալստյանի սեփականության իրավունքը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Ստեփանյան) (այսուհետ՝ Դատարան) 06.05.2017 թվականի վճռով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.11.2017 թվականի որոշմամբ Արտակ Գալստյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 06.05.2017 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Դոնարա Նազարյանի և Ռուբեն Բարակեփյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արտակ Գալստյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը խախտել է իրավասարաբերության ծագման պահին գործող

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով և թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով նույնն են թե՛ գործին մասնակցող անձինք, թե՛ հայցի հիմքը, թե՛ հայցի առարկան: Հետևաբար տվյալ պարագայում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, ինչը հիմք է գործի վարույթը կարճելու համար: Ավելին՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ երկու քաղաքացիական գործերով հայցվորները որպես վերջնական արդյունք ակնկալել են վեճի առարկա հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնում, և նշված պահանջների հիմքում դրվել են միևնույն հիմքերը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.11.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 06.05.2017 թվականի վճիռին:

2.1. Վճուռեկ բողոքի պարասխանի հիմնավորումները.

Սույն գործով Վերաքննիչ դատարանը եկել է իրավաչափ եզրահանգման, քանի որ սույն քաղաքացիական գործով և թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով հայցվորները տարբեր անձինք են, բացի այդ՝ առկա է հայցապահանջների տարբերություն: Նման պայմաններում քաղաքացիական գործի վարույթը չէր կարող կարճվել:

Փաստորեն ակնհայտ է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետը սույն գործով կիրառելի չէր, քանի որ տարբեր են և՛ գործի կողմերը, և՛ պահանջը: Հետևաբար Վերաքննիչ դատարանի սույն գործով կայացրած որոշումն օրինական է, հիմնավոր և բխում է գործի փաստական հանգամանքներից:

3. Վճուռեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճուռեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքը՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն, պատկանել է Վեներա Գալստյանին և Արտակ Գալստյանին (**հատոր 1-ին, գ.թ. 16, հատոր 5-րդ, գ.թ. 30-31**):

2) Թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով ըստ հայցի Վեներա Գալստյանի ընդդեմ Արթուր Անդրեասյանի, Դոնարա Նազարյանի, Ռուբեն Բաբակեղյանի, երրորդ անձ Կարեն Թումիկյանի, «Յունիքանկ» ՓԲԸ-ի, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի, Արտակ Գալստյանի, Կենտրոն նոտարական տարածքի նոտար Է. Դանիելյանի, Նոր-Նորք նոտարական տարածքի նոտար Է. Մակարյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ 31.02.2010 թվականին Արտակ Գալստյանի, Վեներա Գալստյանի և Կարեն Թումիկյանի միջև Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Է. Մակարյանի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագիրը, 12.04.2011 թվականին Կարեն Թումիկյանի, Արթուր Անդրեասյանի և «Յունիքանկ» ՓԲԸ-ի միջև կնքված առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը, 07.11.2012 թվականին Արթուր Անդրեասյանի և Դոնարա Նազարյանի միջև կնքված գույքի առուվաճառքի պայմանագիրը, 02.05.2013 թվականին Ռուբեն Բաբակեղյանի, Կարեն Բաբակեղյանի, Դոնարա Նազարյանի և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված

անշարժ գույքի գրավադրմամբ վարկային պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու՝ Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի նկատմամբ Արտակ Գալստյանի և Վեներա Գալստյանի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հայցը մերժվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 132-158**):

3) Թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2014 թվականի վճռի համաձայն՝ տվյալ քաղաքացիական գործով հայցվոր Վեներա Գալստյանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ, 289-րդ, 303-րդ, 306-րդ և 313-րդ հոդվածները, նշել է, որ հանդիսանում է Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 բնակարանի իրական սեփականատերը, քանի որ 31.08.2010 թվականին իր և Կարեն Թումիկյանի միջև կնքված պայմանագիրը կրել է ձևական բնույթ: Նշված պայմանագիրը կնքելու նպատակը եղել է Կարեն Թումիկյանից հիփոթեքային վարկով բնակարանը նորից իր անվամբ վերաձևակերպելը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայցվոր Վեներա Գալստյանը պահանջել է որպես շինծու գործարքներ անվավեր ճանաչել Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 բնակարանի վերաբերյալ 31.08.2010 թվականի իր և Կարեն Թումիկյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, 12.04.2012 թվականին Կարեն Թումիկյանի, Արթուր Անդրեասյանի և «Յունիբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը, Արթուր Անդրեասյանի և Դոնարա Նազարյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, Դոնարա Նազարյանի, Կարեն Բաբակելյանի և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված անշարժ գույքի գրավի (փոխառության) պայմանագիրը և կիրառել անվավերության հետևանք՝ Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 բնակարանի նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը (**հատոր 2-րդ, գ.թ. 132-158**):

4) Սույն գործով Արտակ Գալստյանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետը, 306-րդ հոդվածի 1-ին կետը և 313-րդ հոդվածի 1-ին կետը, հայցադիմումում նշել է, որ իր և Կարեն Թումիկյանի միջև 31.08.2010 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրը կրել է ձևական բնույթ, քանի որ գործարքի կնքման պահին և հետո առուվաճառքի գործարքի համար իրեն գումար չի տրվել: Սյսինքն՝ նշված պայմանագիրը եղել է կեղծ, քանի որ կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության: Վերոգրյալից ելնելով՝ ի թիվս այլնի, պահանջել է վիճելի բնակարանի նկատմամբ վերականգնել իր և Վեներա Գալստյանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 4-9, հատոր 4-րդ, գ.թ. 20-26**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրա-

վական դիրքորոշումները՝ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով գործի վարույթը կարճելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով կարող է կարճվել գործի վարույթը, եթե գործին մասնակցել են նույն անձինք՝ Կարբեր դատավարական կարգավիճակներով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՄԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՄԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՄԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՄԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչե-

լիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտակալություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնույթագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրևն, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետը*):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրևն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետը*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*յրևն, Khalifaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետը*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն հարաբերակցվում է հայց հարուցելու իրավունքի նախադրյալների հետ: Դրանք այն հանգամանքներն են, որոնց առկայության կամ բացակայության հետ օրենսդիրը կապում է կոնկրետ գործով դատարան հայց ներկայացնելու սուբյեկտիվ իրավունքի ծագումը: Հայց հարուցելու իրավունքի բացասական նախադրյալ է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռի առկայությունը: Այսպես՝

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառու-

թյամբ նույն օրենսգրքի 110 հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի [բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում]:

Համանման կարգավորում է բովանդակում նաև 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով գործի վարույթը կարճելու հիմքին, արձանագրել է, որ գործի վարույթը կարող է կարճվել միայն այն դեպքում, երբ նույնն են օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված և տվյալ քաղաքացիական գործերի

1. կողմերը, այսինքն՝ քաղաքացիական վարույթում հակադիր շահերով օժտված անձինք,

2. հայցի առարկան, այսինքն՝ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը,

3. հայցի հիմքը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները՝ բացառությամբ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

Հետևաբար վերը նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարճվել չի կարող (*տես*, ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Հանրապետության ընդհանուր «Գ. Արշակյան» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/0407/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ օրենսդրի կողմից նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճռի պարագայում դատարան դիմելու իրավունքի սահմանափակումն ինքնանպատակ չէ, այլ նպատակաուղղված է դատավարական իրավունքների չարաշահման կանխարգելմանը, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի, իրավական որոշակիության, դատական խնայողության սկզբունքների ապահովմանը: Շահագրգիռ անձը, դատարան դիմելով, իրացնում է դատական պաշտպանության, արդար դատաքննության իր իրավունքը, որը միաժամանակ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունք է նաև դատավարության մյուս կողմի համար: Հետևաբար չնայած հայցվորի տնօրինչական իրավունքն է հայց հարուցելը, սակայն այս իրավունքն ուղղակիորեն առնչվում է նաև պատասխանողի դատավարական իրավունքների հետ, ուստի օրենսդիրը նախատեսել է որոշակի երաշխիքներ նաև պատասխանողի համար՝ դատական պաշտպանության իր իրավունքն իրացնելու հարցում: Մասնավորապես՝ դատական պաշտպանության իրավունքը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ենթադրում է նաև իրավականորեն որոշակի, կանխատեսելի դատական ակտի առկայություն: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին: Մասնավորապես՝ արձանագրվել է, որ արդար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է

համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի: Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ, ի թիվս այլնի, ներառվում է նաև դրույթն այն մասին, որ կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով (*տե՛ս, օրինակ, Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան ու Միշա Վարդանյանների և մյուսների թիվ ԱՐԴ/0062/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*): Հետևաբար նաև այս սկզբունքի հաշվառմամբ է, որ օրենսդիրն արգելում է նույն հայցով կրկին դատարան դիմելն օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում՝ օրենքով սահմանված որոշակի բացառություններով հանդերձ:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն բողոքի հիմքում բարձրացված հարցադրումը, վերստին հարկ է համարում անդրադառնալ «նույն անձինք» արտահայտության բովանդակության բացահայտմանը: Թիվ ԵԿԴ/0407/02/11 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը «նույն անձինք» արտահայտությունը մեկնաբանել է որպես քաղաքացիական վարույթում հակադիր շահերով օժտված անձինք: Հաշվի առնելով դատական պրակտիկայի միտումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում զարգացնել իր մեկնաբանությունը՝ արձանագրելով, որ տվյալ իրավիճակում հակադիր շահերով օժտված անձինք բացառապես չեն նույնանում դատավարությունում կողմերի՝ հայցվորի և պատասխանողի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց հետ: Գործին մասնակցող անձինք են նաև երրորդ անձինք, որոնք ևս վեճի ելքով կարող են ունենալ նյութական և դատավարական շահագրգռվածություն, իսկ առանձին դեպքերում նաև ընդհանուր շահ՝ հայցվորի կամ պատասխանողի կողմում հանդես եկող սուբյեկտի հետ: Հետևաբար «նույն անձինք» արտահայտության մեկնաբանությունը չի կարող սահմանափակվել միայն դատավարության կողմերով և պետք է ներառի նաև երրորդ անձանց, իսկ որպես ուղղորդող չափանիշ պետք է դիտարկվի հակադիր շահերի առկայությունը գործին մասնակցող անձանց միջև: Նման մեկնաբանությունն արդարացված է, քանի որ դատական պրակտիկայում հանդիպում են իրավիճակներ, երբ վեճի կողմերը, ցանկանալով վերաբացել նախկինում քննված գործը, ձևականորեն փոփոխում են քաղաքացիական դատավարության մասնակիցների դատավարական կարգավիճակը և նոր հայց հարուցում:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու հարցը լուծելիս դատարանը չպետք է միայն հաշվի առնի հայցվորի և պատասխանողի կողմում հանդես եկող անձանց նույնական լինելու հանգամանքը, այլ գործին մասնակցող անձանց կազմը համընկնելու պարագայում, անկախ դատավարական կարգավիճակից, հաշվի առնելով նյութաիրավական հարաբերության բնույթը, պաշտպանության ենթակա օբյեկտը՝ պետք է պարզի, թե արդյոք նույնն են նախկինում քննված և տվյալ պահին քննվող գործերով հակադիր շահերով օժտված անձինք:

Սույն գործով Դատարանը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով կարճելով գործի վարույթը, պատճառաբանել է, որ տվյալ պարագայում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, այն է՝ թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով օրինական ուժի

մեջ մտած վճիռը: Դատարանն արձանագրել է, որ վկայակոչված գործով և սույն քաղաքացիական գործով կողմերը համընկնում են, երկու գործերով ներկայացված հայցադիմումների հիմքում դրված է նույն հիմքը, իսկ հայցի առարկան նույնական է:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը, նշել է, որ սովյալ դեպքում թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով և սույն քաղաքացիական գործով տարբեր է սուբյեկտային կազմը, քանի որ տարբերվում են երկու քաղաքացիական գործերով հայցվորները, այսինքն՝ մի դեպքում որպես հայցվոր հանդես է եկել Վեներա Գալստյանը, իսկ սույն քաղաքացիական գործով՝ Արտակ Գալստյանը: Բացի այդ, տարբեր են նաև պատասխանողին ուղղված նյութափրավական պահանջները, քանի որ թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով հայցվորի պահանջը եղել է Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելը, իսկ սույն քաղաքացիական գործով ներկայացվել է սեփականության իրավունքը վերականգնելու պահանջ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով և թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով դատավարության մասնակիցների կազմը և պահանջը նույնն են: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է հետևյալով.

Սույն գործով որպես հայցվոր հանդես է գալիս **Արտակ Գալստյանը**, որպես պատասխանողներ՝ Արթուր Անդրեասյանը, Դոնարա Նազարյանը, Ռուբեն Բաբակեղյանը, իսկ երրորդ անձինք՝ Կարեն Թումիկյանը, Բանկը, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն, Կադաստրը, **Վեներա Գալստյանը**, Երևանի Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանը:

Թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով որպես հայցվոր հանդես է եկել **Վեներա Գալստյանը**, որպես պատասխանողներ՝ Արթուր Անդրեասյանը, Դոնարա Նազարյանը, Ռուբեն Բաբակեղյանը, իսկ երրորդ անձինք՝ Կարեն Թումիկյանը, Բանկը, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն, Կադաստրը, **Արտակ Գալստյանը**, Երևանի Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանը, Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Է. Դանիելյանը:

Վճռաբեկ դատարանը երկու քաղաքացիական գործերով գործին մասնակցող անձանց կազմի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ դրանք, ըստ էության, համընկնում են (միակ տարբերությունը կայանում է նրանում, որ թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով երրորդ անձ Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Է. Դանիելյանը սույն գործին չի մասնակցում, սակայն նշված հանգամանքն էական նշանակություն ունենալ չի կարող՝ հաշվի առնելով, որ վերջինիս մասնակցությունը նախորդ գործին պայմանավորված է եղել միայն ամանցյալ պահանջի մատով): Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ սույն քաղաքացիական գործով հայցվորն Արտակ Գալստյանն է, իսկ թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով՝ Վեներա Գալստյանը, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ սույն քաղաքացիական գործով Վեներա Գալստյանը հանդես է գալիս որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ, իսկ Արտակ Գալստյանը նույն կարգավիճակով մասնակցել է թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործին: Այդուհանդերձ, դատավարական կարգավիճակի տարբերությունը չի կարող բացառել սույն գործի վարույթը կարճելու «նույն անձանց» պայմանի առկայությունը, քանի որ Վեներա Գալստյանը և Արտակ Գալստյանը վեճի առարկա գույքի ընդհանուր սեփա-

կանության մասնակիցներն են, փոխկապակցված են նյութափրավական շահերով և իրենց դատարան դիմելու իրավունքն իրացրել են նույն առարկայի կապակցությամբ: Մասնավորապես՝ վերջիններս հանդիսացել են Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 բնակարանի համասեփականատերեր, երկու քաղաքացիական գործերով էլ Վեներա Գալստյանը և Արտակ Գալստյանն ակնկալել են վիճելի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնում, ինչից հետևում է, որ վերջիններիս իրավական շահերը փոխկապակցված են, համընկնում են և հակադրվում են գործին մասնակցող մյուս անձանց շահերին: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երկու քաղաքացիական գործերով էլ հանդես են եկել հակադիր շահերով օժտված նույն անձինք, իսկ վերջիններիս կարգավիճակի փոփոխումը կրել է զուտ ձևական բնույթ:

Ինչ վերաբերում է երկու քաղաքացիական գործերով հայցի հիմքին և առարկային, ապա դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Հայցի տարրերը նրա բաղկացուցիչ մասերն են, որոնք որոշում են նրա բովանդակությունը, նրա իրավական բնույթը և հնարավորություն են տալիս անհատականացնել հայցը, այն տարբերել նույնական հայցերից, հետևաբար և լուծել նույն կողմերի միջև, նույն տարրերով հարուցվող հայցերը կրկին անգամ վարույթ չընդունելու հարցը (*յրեն, Անիկ Մասցականյանն ընդդեմ Ռուբիկ Ասատրյանի թիվ ԵԷԴ/0466/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.10.2011 թվականի որոշումը*): Փաստորեն, հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շտրիկով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է «հայցի առարկա» օրենսդրական եզրույթին և նշել, որ հայցի առարկան հայցվորի պահանջն է՝ ուղղված պատասխանողին կամ պատասխանողներին (*յրեն, Լարիսա Բարսայանն ընդդեմ Ալբերտ Հունանյանի թիվ ԵԷԴ/1373/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.05.2011 թվականի որոշումը*):

Նախկինում կայացված որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար (*յրեն, Անիկ Մասցականյանն ընդդեմ Ռուբիկ Ասատրյանի թիվ ԵԷԴ/0466/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.10.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ նշել է, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերի համակցությունն է, որ կարգավորում է վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (*յրեն, Վիգեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Ամփոփելով վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտ-

նում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետում նշված՝ «նույն առարկայի մասին» արտահայտությունը վերաբերում է հայցի առարկային, այսինքն՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջին, որի վերաբերյալ դատարանը դատական ակտ է կայացնում: Ինչ վերաբերում է հայցի հիմքին, ապա այն կարող է նույնացվել և հայցի փաստական հիմքերով, և հայցի իրավական հիմքերով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԱԹԳ/1112/02/13 քաղաքացիական գործով հայցվոր Վեներա Գալստյանը պահանջել է 31.08.2010 թվականին Արտակ Գալստյանի, Վեներա Գալստյանի և Կարեն Թումիկյանի միջև Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Է. Մակարյանի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագիրը, 12.04.2011 թվականին Կարեն Թումիկյանի, Արթուր Անդրեասյանի և «Յունիբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը, 07.11.2012 թվականին Արթուր Անդրեասյանի և Դոնարա Նազարյանի միջև կնքված գույքի առուվաճառքի պայմանագիրը, 02.05.2013 թվականին Ռուբեն Բաբակեղյանի, Կարեն Բաբակեղյանի, Դոնարա Նազարյանի և «Ամերիկաբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված անշարժ գույքի գրավադրմամբ վարկային պայմանագիրն անվավեր ճանաչել և կիրառել անվավերության հետևանքներ՝ ճանաչել Արտակ Գալստյանի և Վեներա Գալստյանի սեփականության իրավունքը: Այսինքն՝ Վեներա Գալստյանի դատական պաշտպանության իրավունքի իրացման վերջնական նպատակն ուղղված է եղել Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի նկատմամբ իր և Արտակ Գալստյանի սեփականության իրավունքի ճանաչմանը, որպիսի պահանջը, սակայն, օրինական ուժի մեջ մտած դատական ակտով մերժվել է:

Սույն քաղաքացիական գործով Արտակ Գալստյանը պահանջել է Կարեն Թումիկյանի, Արթուր Անդրեասյանի և Բանկի միջև 12.04.2011 թվականին կնքված թիվ 849 անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը և դրա հիման վրա Երևանի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 բնակարանի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-003 4-94 մատյանի 203 համարի տակ 20.12.2011 թվականին կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչել, անվավերության հետևանքներ կիրառել և 07.11.2012 թվականին Արթուր Անդրեասյանի և Դոնարա Նազարյանի միջև կնքված գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա 12.11.2012 թվականի թիվ 01-003-01223-0150 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչել, Վեներա Գալստյանի, Արտակ Գալստյանի և Կարեն Թումիկյանի միջև 31.08.2010 թվականին կնքված և Նոր Նորք նոտարական տարածքի նոտար Էդվարդ Մակարյանի կողմից վավերացված՝ սեղանամատյանում 4314 համարի տակ գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Կարեն Թումիկյանի անվամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-003 4-94 մատյանի 203 համարի տակ 02.09.2010 թվականին կատարված պետական գրանցումն առոչինչ ճանաչել, և Արտակ Գալստյանի և Վեներա Գալստյանի սեփականության իրավունքը վերականգնել: Այսինքն՝ այս պարագայում նույնպես Արտակ Գալստյանի դատական պաշտպանության իրավունքի իրացումը նպատակաուղղված է եղել Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչմանը: Ընդ որում, այս պարագայում խմբագրական բնույթի փոփոխություններն օրենքի տեսանկյունից չեն կարող կարևորվել, քանի որ վերջնական արդյունքում Արտակ Գալստյանի և Վեներա Գալստյանի կողմից ակնկալվել է վիճելի գույքի նկատմամբ սեփականության

իրավունքի ձեռքբերում: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երկու քաղաքացիական գործերով հայցվորների նյութաիրավական պահանջները նույնաբնույթ են:

Ավելին, նշված երկու քաղաքացիական գործերով հայցերը նույնանում են նաև իրենց հիմքերով՝ այդ թվում և՛ իրավական, և՛ փաստական: Այսպես՝ թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով 03.06.2014 թվականի վճռի համաձայն՝ տվյալ քաղաքացիական գործով հայցվոր Վեներա Գալստյանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ, 289-րդ, 303-րդ, 306-րդ և 313-րդ հոդվածները, նշել է, որ հանդիսանում է Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Բաղրամյան պողոտայի 77-րդ շենքի թիվ 8 բնակարանի իրական սեփականատերը, քանի որ 31.08.2010 թվականին իր և Կարեն Թումիկյանի միջև կնքված պայմանագիրը կրել է ձևական բնույթ: Նշված պայմանագիրը կնքելու նպատակը եղել է Կարեն Թումիկյանից հիփոթեքային վարկով բնակարանն իր անվամբ վերաձևակերպելը:

Սույն գործով Արտակ Գալստյանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետը, 304-րդ հոդվածի 2-րդ կետը, 306-րդ հոդվածի 1-ին կետը և 313-րդ հոդվածի 1-ին կետը, հայցադիմումով նշել է, որ իր և Կարեն Թումիկյանի միջև 31.08.2010 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրը կրել է ձևական բնույթ: Նշված պայմանագիրը եղել է կեղծ, քանի որ կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

Վերոգրյալից հետևում է, որ երկու քաղաքացիական գործերն էլ հարուցվել են նույն հիմքով, այսինքն՝ հայցվորների կողմից երկու դեպքում էլ հայցի հիմքում դրվել են նույն իրավական և փաստական հիմքերը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 03.06.2014 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով և սույն քաղաքացիական գործով անձինք նույնական են, վեճը վերաբերել է միևնույն առարկային և ունեցել է նույն հիմքերը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում սույն քաղաքացիական գործի վարույթը կարճելու համար անհրաժեշտ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված երեք պայմանների միաժամանակյա առկայությունը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով հայցի ներկայացումը հետապնդում է ոչ թե արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման, այլ նախկինում քննված և վերջնական լուծում ստացած մեկ այլ դատական գործի (թիվ ԵԱԲԴ/1112/02/13 քաղաքացիական գործի) քողարկված վերանայման, վերաբացման նպատակ, ինչն անթույլատրելի է իրավունքի գերակայության բաղադրիչ հանդիսացող դատական ակտերի վերջնականության *res judicata* սկզբունքի տեսանկյունից: Հետևաբար Դատարանը, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով կարճելով սույն գործի վարույթը, կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոգրյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու

համար: Միաժամանակ, նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի 24.11.2017 թվականի որոշումը բողոքարկվել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, ուստի Վերաքննիչ դատարանի որոշումն ամբողջությամբ ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի համաձայն՝ վճարելության կարգով բողոքի քննության ժամանակ Վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի: Վճռաբեկ դատարանը կաշկանդված չէ բողոք բերած անձի պահանջով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող է հանգեցնել գործի սխալ լուծման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ ստորադաս դատարանում առկա է եղել գործի վարույթը կարճելու հիմք:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի 24.11.2017 թվականի որոշումը բողոքարկվել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, ուստի վերը նշված նորմերի հիմնավորումներով գործի վարույթը ենթակա է կարճման ամբողջությամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական

Ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Արտակ Գալստյանից հոգուտ Դոնարա Նազարյանի և Ռուբեն Բաբակելյանի ենթակա է բռնագանձման 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.11.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2017 թվականի վճռին:

2. Արտակ Գալստյանից հոգուտ Դոնարա Նազարյանի և Ռուբեն Բաբակելյանի բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0024/16/17
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0024/16/17

Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան

Դատավորներ՝ Գ. Խանդանյան

Հ. Ենոքյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հոկտեմբերի 01-ին

գրավոր ընթացակարգով քննելով Միքայել Մկրտչյանի ներկայացուցիչ Պայծառ Քոչա-
րյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.10.2018 թվականի
որոշման դեմ՝ ըստ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության Պոլևա-
յա պոչտա թիվ 04436 գորմասի միջնորդության՝ Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայազո-
րային զինվորական դատարանի թիվ 2-19/2017 քաղաքացիական գործով 13.03.2017 թվակա-
նին կայացրած դատական ակտը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և
հարկադիր կատարման միջոցներ կիրառելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության
Պոլևայա պոչտա թիվ 04436 գորմասը պահանջել է ճանաչել Ռուսաստանի Դաշնության
5-րդ կայազորային զինվորական դատարանի թիվ 2-19/2017 քաղաքացիական գործով
13.03.2017 թվականին կայացրած վճիռը և թույլատրել դրա կատարումը Հայաստանի Հան-
րապետության տարածքում:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 04.05.2018 թվականի «Օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը ՀՀ տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու մասին» որոշմամբ նշված միջնորդությունը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.10.2018 թվականի որոշմամբ Միքայել Մկրտչյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.05.2018 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Միքայել Մկրտչյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի (այսուհետ՝ Մինսկի կոնվենցիա) 20-րդ, 55-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247⁷-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ չնայած ՀՀ օրենսդրությամբ սահմանված է օտարերկրյա դատական ակտերը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և կատարումը թույլատրելու հնարավորություն, այնուամենայնիվ դատարանները պարտավոր են պարզել, թե արդյոք պահպանվել են միջազգային պայմանագրի պահանջները: Տվյալ դեպքում Դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է Մինսկի կոնվենցիայի 20-րդ հոդվածի 3-րդ մասը, քանի որ վիճելի գույքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, այսինքն՝ սույն գործը քննվել է Մինսկի կոնվենցիայով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, քանի որ վեճը պետք է լուծվեր ՀՀ դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «վերացնել Վերաքննիչ դատարանի 04.10.2018 թվականի որոշումը կամ բեկանել դատական ակտը՝ գործն ուղարկելով ստորադաս դատարան՝ նոր քննության»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայագորային զինվորական դատարանի 13.03.2017 թվականի վճռով բավարարվել է Պոլևայա պոչտա թիվ 04436 գորամասի հայցն ընդդեմ Միքայել Մկրտչյանի և նրա ընտանիքի անդամներ Հասմիկ Խաչատրյանի, Լենա և Մանյա Մկրտչյանների՝ ծառայողական բնակելի տարածքից վտարման պահանջի մասին: Դատարանը վճռել է ՀՀ Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի թիվ 8 զինվորական ավանի թիվ 17 շենքի 27-րդ բնակարան հասցեում գտնվող ծառայողական բնակելի տարածությունից օգտվելու՝ Միքայել Մկրտչյանի և նրա ընտանիքի անդամներ Հասմիկ Խաչատրյանի, Լենա և Մանյա Մկրտչյանների իրավունքը կորցրած ճանաչել և վերջիններիս պարտավորեցնել ազատել վերոնշյալ բնակելի տարածությունը: Նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 21.06.2017 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 5-7**):

2. Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության Պոլևայա պոչտա թիվ 04436 գործարանի հրամանատարի կողմից 07.12.2017 թվականին միջնորդություն է ներկայացվել դատարան՝ Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայսագորային զինվորական դատարանի 13.03.2017 թվականի վճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 4, 18-19**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել Մինսկի կոնվենցիայի 20-րդ հոդվածի 3-րդ կետի և 55-րդ հոդվածի «դ» կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք օտարերկրյա պետության դատական ակտը Մինսկի կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարող է ճանաչվել և թույլատրվել կատարման, եթե այն կայացվել է ՀՀ տարածքում գրնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կամ գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերով:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247⁶-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության **միջազգային պայմանագրերին համապատասխան**, օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած վճիռները, որոշումները, ինչպես նաև օտարերկրյա պետությունների արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները (այսուհետ՝ դատական ակտեր), որոնք կատարում են պահանջում, ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետության տարածքում: (...) Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանված են օտարերկրյա պետությունների դատական ակտերը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու՝ ՀՀ դատարանների իրավասությունները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247⁷-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելիս Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը պարզում է միայն, թե որքանով է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը համապատասխանում այն պահանջներին, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով:

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը կարգավորվում է նույն օրենսգրքի 52-րդ գլխով: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 353-

րդ հողվածի 2-րդ մասի համաձայն՝ դիմումը քննող դատարանը գործի քննության ընթացքում պարզում է միայն, թե որքանով է օտարերկրյա դատական ակտը համապատասխանում նույն գլխով և ՀՀ միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին:

ՀՀ վճռաբեկ դատարանն ըստ «Ինտերնացիոնալ Ոսկրահինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արքիտրաժային դատարանի 11.02.2011 թվականի վճիռը ճանաչելու և Հայաստանի Հանրապետության տարածքում կատարումը թույլատրելու պահանջների մասին, թիվ ԵԿԴ/0024/16/12 քաղաքացիական գործով 30.04.2015 թվականի որոշմամբ անդրադարձել է օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտի նշանակությանը՝ մասնավորապես արձանագրելով, որ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտի ճանաչումը ՀՀ դատարանների կողմից այդ ակտերին այնպիսի իրավական հատկանիշների տրամադրումն է, որոնցով օժտված են Հայաստանի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, և այդ ակտի իրավական գործողության թույլատրումը Հայաստանի Հանրապետության տարածքում: Այլ կերպ ասած՝ կատարում պահանջող օտարերկրյա դատական ակտը միայն ճանաչման արդյունքում է Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերում պարտադիրության և կատարելիության հատկանիշներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օտարերկրյա պետության դատական ակտը ճանաչելիս և կատարման թույլատրելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ՀՀ ներպետական օրենսդրության, այնպես էլ միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 16.03.1995 թվականին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիրը, որի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 արձանագրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմաբազայի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերը կարգավորվում են կողմերի առանձին համաձայնագրով:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 09.08.1997 թվականին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ» համաձայնագիրը, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ կողմերի իրավասու մարմինները միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի գտնվելու հետ կապված քաղաքացիական, ընտանեկան, քրեական գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով: Համաձայն [Մինսկի] կոնվենցիայի՝ իրավական օգնությունն իր մեջ ներառում է փաստաթղթերի հանձնման մասին խնդրանքների կատարումը և դատավարական, հետախուզական և այլ գործողությունների վարույթը: Նշված համաձայնագիրը մասնավորապես անշարժ գույքի հետ կապված քաղաքացիաիրավական վեճերի իրավասության մասով դրոյթներ չի պարունակում:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև քաղաքացիական գործերով իրավական օգնության հետ կապված հարաբերություններում գործում է Մինսկի կոնվենցիան, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ տվյալ կոնվենցիայի կարգավորումներին:

Այսպես, Մինսկի կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 21.12.1994 թվականին և, ի թիվս այլնի, կարգավորում է պայմանավորվող կողմերի միջև քաղաքացիական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների հետ կապված հարցերը:

Մինսկի կոնվենցիայի 6-րդ բաժինը վերաբերում է որոշումների ճանաչմանը և կատարմանը: Մասնավորապես՝ Մինսկի կոնվենցիայի 51-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, նույն կոնվենցիայով նախատեսված պայմաններով, ճանաչում և կատարում է այլ Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունված հետևյալ որոշումները՝

ա) քաղաքացիական և ընտանեկան գործերով արդարադատության մարմինների որոշումները, ներառյալ՝ նման գործերով դատարանի հաստատած հաշտության համաձայնագրերն ու դրանական պարտավորությունների վերաբերյալ նոտարական ակտերը (այսուհետ՝ որոշումներ) (...):

Մինսկի կոնվենցիայի 54-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ 51-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունները քննվում են այն Պայմանավորվող կողմի դատարաններում, որի տարածքում պետք է իրականացվի հարկադիր կատարումը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունները քննող դատարանը սահմանափակվում է պարզելով, որ պահպանված են նույն կոնվենցիայով նախատեսված պայմանները: Եթե այդ պայմանները պահպանված են, դատարանը որոշում է կայացնում հարկադիր կատարման մասին:

Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «դ» կետի համաձայն՝ 52-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչումը և հարկադիր կատարման թույլտվությունը կարող են մերժվել, եթե գործը, նույն կոնվենցիայի դրույթների համաձայն, իսկ նրանով չնախատեսված դեպքերում՝ այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում որոշումը պետք է ճանաչվի և կատարվի, պատկանում է այդ կողմի մարմնի բացառիկ իրավասությանը:

Մինսկի կոնվենցիայի 20-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը **բացառապես ընդդատյա են գույքի գտնվելու վայրի դատարաններին:** (...)

Վերը նշված կոնվենցիոն և ներպետական իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օտարերկրյա պետության դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու հարցը լուծելիս ՀՀ դատարանները չունեն նշված դատական ակտն ըստ էության վերանայելու իրավասություն և պետք է սահմանափակվեն միայն այն պայմանների առկայության ստուգմամբ, որոնց դեպքում թույլատրվում է համապատասխան որոշման ճանաչումն ու կատարումը, և միաժամանակ պարզեն այն պայմանների բացակայությունը, որոնք հիմք են ճանաչումը մերժելու համար: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Մինսկի կոնվենցիայով նախատեսված անհրաժեշտ պայմանների առկայության և մերժման հիմքերի բացակայության դեպքում է միայն դատարանը որոշում կայացնում կատարում պահանջող օտարերկրյա պետության դատական ակտը ճանաչելու և հարկադիր կատարումը թույլատրելու մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ի թիվս օտարերկրյա պետության դատական ակտի ճանաչումը և հարկադիր կատարումը մերժելու այլ հիմքերի, Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված է, որ օտարերկրյա պետության դատական

ակտի ճանաչումը և հարկադիր կատարման թույլտվությունը կարող է մերժվել, եթե գործը պատկանում է այն պետության մարմնի բացառիկ իրավասությանը, որի տարածքում պետք է ճանաչվի և կատարվի համապատասխան դատական ակտը:

Վերոգրյալի հիման վրա նկատի ունենալով, որ Մինսկի կոնվենցիայի 20-րդ հոդվածի հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը տվյալ գույքի գտնվելու վայրի դատարանների բացառիկ ընդդատությանն են պատկանում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ եթե օտարերկրյա պետության դատական ակտը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների վերաբերյալ, ապա տվյալ դատական ակտի ճանաչումը և հարկադիր կատարումը ենթակա է մերժման:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայագորային զինվորական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով վճռվել է Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի թիվ 8 զինվորական ավանի թիվ 17 շենքի 27-րդ բնակարան հասցեում գտնվող ծառայողական բնակելի տարածությունից օգտվելու՝ Միքայել Մկրտչյանի և նրա ընտանիքի անդամներ Հասմիկ Խաչատրյանի, Լենա և Մանյա Մկրտչյանների իրավունքը կորցրած ճանաչել և վերջիններիս պարտավորեցնել ազատել վերոնշյալ բնակելի տարածությունը: Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության Պոլևայա պոչտա թիվ 04436 գորմանսի հրամանատարի կողմից միջնորդություն է ներկայացվել Դատարան՝ վերոգրյալ դատական ակտը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու մասին:

Դատարանը 04.05.2018 թվականի որոշմամբ նշված միջնորդությունը բավարարել է՝ արձանագրելով, որ տվյալ դեպքում պահպանվել են Մինսկի կոնվենցիայով նախատեսված պայմանները, և սույն կոնվենցիայով նախատեսված միջնորդությունը մերժելու հիմքերը բացակայում են:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, արձանագրել է, որ Դատարանը, պահպանելով Մինսկի կոնվենցիայի պահանջները, հիմնավոր հետևության է հանգել այն մասին, որ վճռի ճանաչումը մերժելու հիմքերը բացակայում են:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները խախտել են Մինսկի կոնվենցիայի 20-րդ հոդվածի 3-րդ կետի և 55-րդ հոդվածի «դ» կետի պահանջները՝ անտեսելով այն հանգամանքը, որ Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայագորային զինվորական դատարան ներկայացված հայցի առարկան Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անշարժ գույքից օգտվելու իրավունքը կորցրած ճանաչելու պահանջն է: Հետևաբար տվյալ վեճն ընդդատյա էր Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանին, քանի որ անշարժ գույքն օգտագործելու իրավունքը, որի դադարման հարցը քննվել է դատական գործով, գույքային իրավունք է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի իմաստով): Մինչդեռ գործը քննվել է Ռուսաստանի Դաշնության դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա է եղել օտարերկրյա դատական ակտի ճանաչումը և կատարումը մերժելու հիմք, որպիսի հանգամանքն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է

բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար՝ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, մասնավորապես՝ օտարերկրյա դատական ակտի ճանաչումը և կատարումը բացառող հիմքի առկայության՝ բացառիկ ընդդատության կանոնի խախտման պայմաններում ճանաչել է օտարերկրյա պետության դատական ակտն ու թույլատրել վերջինիս կատարումը՝ հանգեցնելով Միքայել Մկրտչյանի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների սահմանափակման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վճեի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարբ: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.10.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության Պոլևայա պոչտա թիվ 04436 գորամասի հրամանատարի՝ Ռուսաստանի Դաշնության 5-րդ կայազորային զինվորական դատարանի 13.03.2017 թվականի վճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և հարկադիր կատարման միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մանկության գործ թիվ ԵԿԴ/0612/04/16

2019թ.

Մանկության գործ թիվ ԵԿԴ/0612/04/16

Նախագահող դատավոր՝ Ն. Մարգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի ապրիլի 16-ին

գրավոր ընթացակարգով քննելով Հայկ Ջավախյանի և Վարդան Աբրահամյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.09.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Հայկ Ջավախյանի ընդդեմ Վարդան Աբրահամյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Հայկ Ջավախյանը պահանջել է Վարդան Աբրահամյանին ճանաչել սնանկ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.02.2016 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.06.2017 թվականի որոշմամբ հաստատվել է Վարդան Աբրահամյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 30.07.2018 թվականի որոշմամբ բավարարվել է Վարդան Աբրահամյանի դիմումը՝ ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման ժամկետը երկարաձգելու:

լու մասին:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.09.2018 թվականի որոշմամբ բավարարել է Դատարանի 30.07.2018 թվականի «Ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու ժամկետը երկարաձգելու վերաբերյալ» որոշման դեմ «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈւՎԿ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ վերացնելով Դատարանի 30.07.2018 թվականի որոշումը:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Հայկ Ջավախյանը և Վարդան Աբրահամյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

2. Հայկ Ջավախյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ, 13-րդ հոդվածները, 369-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ բողոքաբերը գրկվել է արդար դատաքննության իրավունքից, մասնավորապես՝ կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում վերաքննիչ բողոքի վերաբերյալ իր պատասխանը ներկայացնելու հնարավորությունից, ինչը բխում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից:

Պարտապանին ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու հնարավորություն տալը, այդ թվում՝ ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման ժամկետը երկարաձգելու միջոցով, բխում է դատավարության կողմերի իրավահավասարության սկզբունքից, որն անհրաժեշտ է նաև պարտատիրոջ շահերի պաշտպանության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի թիվ ԵԿԴ/0612/04/16 սնանկության գործով 18.09.2018 թվականի որոշումը»:

2.1 Վարդան Աբրահամյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ, 13-րդ հոդվածները, 369-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բողոքաբերին գրկել է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու հնարավորությունից՝ խախտելով կողմերի մրցակցության և հավասարության սկզբունքը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր դատավարությունը կազմակերպել այնպես, որ ապահովվի գործին մասնակցող անձանց կողմից վերաքննիչ բողոքի

պատասխան ներկայացնելու իրավունքի իրականացումը:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 59-րդ հոդվածի 1-ին մասը և 60-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումները պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ չի հետազոտել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ անտեսել է, որ պարտապանի կողմից ամբողջությամբ բողոքարկվել է պարտատերերի վերջնական ցուցակը, ինչն օրենքի ուժով արգելք է պարտատերերի առաջին ժողովի անցկացմանը: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ պարտատերերի առաջին ժողովը նշանակվել է պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու վերաբերյալ որոշման բողոքարկման արդյունքում վերջնական դատական ակտի կայացումից հետո՝ 30.07.2018 թվականին, իսկ Վարդան Աբրահամյանը միջնորդությունը ներկայացրել է մինչև ժողովի կայանալը (մինչև 30.07.2018 թվականի ժամը 16:00-ն), ուստի Դատարանն արդարացիորեն բավարարել է միջնորդությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի թիվ ԵԿԴ/0612/04/16 սնանկության գործով 18.09.2018 թվականի որոշումը և ամբողջությամբ օրինական ուժ տալ Դատարանի 30.07.2018 թվականի որոշմանը»:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Վերաքննիչ դատարանի 03.09.2018 թվականի որոշմամբ Դատարանի 30.07.2018 թվականի «Ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու ժամկետը երկարաձգելու վերաբերյալ» որոշման դեմ Ընկերության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: Վերաքննիչ դատարանը որոշել է բողոքի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով և վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացվելիք դատական ակտը հրապարակել 18.09.2018 թվականին (**գործի հավելված, գ.թ. 58-59**):

2) Վերաքննիչ դատարանի 03.09.2018 թվականի որոշումը և դատական ակտի հրապարակման օրվա վերաբերյալ դատական ծանուցագիրը Հայկ Զավախյանին և Վարդան Աբրահամյանին ուղարկելու համար փոստային ծառայությանն են հանձնվել 24.09.2018 թվականին: Վարդան Աբրահամյանին ուղարկված փոստային ծրարը վերադարձվել է՝ «չպահանջված» նշումով, իսկ Հայկ Զավախյանին ուղարկված փոստային ծրարը վերջինս ստացել է 25.09.2018 թվականին (**գործի հավելված, գ.թ. 60, 62, 64, 65, 71**):

3) Վերաքննիչ դատարանի 18.09.2018 թվականի որոշումը Հայկ Զավախյանին և Վարդան Աբրահամյանին ուղարկելու համար փոստային ծառայությանն է հանձնվել 26.09.2018 թվականին: Որոշումը Հայկ Զավախյանը և Վարդան Աբրահամյանը ստացել են 27.09.2018 թվականին (**գործի հավելված, գ.թ. 82, 83, 87, 88**):

4) Հայկ Զավախյանը փոստային առաքման եղանակով վերաքննիչ բողոքի պատասխան է ներկայացրել 27.09.2018 թվականին (**գործի հավելված, գ.թ. 89-92**):

4. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքները վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճարելության կարգով վերանայման ենթար-

կելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս ստորադաս դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ, 13-րդ հոդվածների և 369-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անհրադառնալ վերաքննիչ դատարանի կողմից գրավոր ընթացակարգով վերաքննիչ բողոքի քննությունն իրականացնելիս դատավարության մասնակցի կողմից վերաքննիչ բողոքի պարասխան ներկայացնելու իրավունքի իրացմանն ապահովման խնդրին:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ սույն գործով Հայկ Ջավախյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի հիմքը և հիմնավորումները և Վարդան Աբրահամյանի ներկայացրած վճռաբեկ բողոքի առաջին հիմքը և հիմնավորումները, ըստ էության, նույնաբովանդակ են, նպատակահարմար է համարում դրանց անդրադառնալ ներքոշարադրյալ՝ ընդհանուր պատճառաբանությամբ.

1. Հայկ Ջավախյանի վճռաբեկ բողոքը և Վարդան Աբրահամյանի վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր են հետևյալ պարճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանն ապահովում է, որ գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձինք ունենան յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու հավասար հնարավորություն, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն այնպիսի ապացույցներ, որոնց կապակցությամբ գործին մասնակցող բոլոր անձանց համար ապահովվել է դիրքորոշում հայտնելու հավասար հնարավորություն, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրավունք ունի ներկայացնելու վերաքննիչ բողոքի պատասխան՝ (1) վճռի դեմ ներկայացված բողոքով՝ վերաքննիչ բողոքի պատճենն ստանալու

օրվանից մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ օրը, (2) որոշման կամ վճարման կարգադրության դեմ ներկայացված բողոքով՝ վերաքննիչ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող հինգերորդ օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը գործին մասնակցող անձանց ուղարկվելիս նրանք տեղեկացվում են բողոքին պատասխան ներկայացնելու իրավունքի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 374-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վերաքննիչ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ ելել է եզրահանգման, որ անհրաժեշտ է վերաքննիչ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել վերաքննիչ բողոքում կամ վերաքննիչ բողոքի պատասխանում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը դատական նիստում կամ գրավոր ընթացակարգով քննելու մասին վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում գործին մասնակցող անձինք տեղեկացվում են միայն բողոքի քննության արդյունքով կայացվելիք դատական ակտի հրապարակման օրվա մասին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում, մասնավորապես՝ *Ankerl v. Switzerland* գործով, արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (*տե՛ս, Ankerl v. Switzerland գործով (զանգար թիվ 17748/91) Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի վճիռը, կետ 38*):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր հերթին արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունն այն է, որ դատավարության **բոլոր փուլերում** կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով (*տե՛ս, Լիլիթ Գևորգյան ընդդեմ Սվեդլանա Միքայելյանի թիվ ԵԷԴ/1730/02/11*

քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (յրեն, Մուսաննաս Արարատի Միրզոյանն ընդդեմ Մուսաննաս Միհրանի Միրզոյանի թիվ ԱԲԱԴ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավական հնարավորությանը՝ նշելով, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը, որը հանդիսանում է արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը, պահանջում է որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ արտահայտելու իր դիրքորոշումը տվյալ գործի վերաբերյալ, այդ թվում ներկայացնելու ապացույցներ այնպես, որ կողմերից որևէ մեկը մյուսի նկատմամբ առավելություն չունենա: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքը բացարձակ բնույթ չի կրում, և դրա իրականացման նպատակահարմարության հարցն անհրաժեշտ է որոշել՝ **եյնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից** (յրեն, Ալբերտ Հակոբյանն ընդդեմ «Դավիթ Երթուղային Տարսի» ՓԲԸ-ի թիվ 3-346(ՏԴ) ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ պայմանավորված վերաքննության վարույթի և վերաքննիչ դատարանում գործի քննության առանձնահատկություններով՝ վերաքննիչ դատարանում անձն իր դատավարական իրավունքները, որպես կանոն, իրացնում է **վերաքննիչ բողոքի կամ դրա պատասխանի ներկայացմամբ**՝ հաշվի առնելով, որ բացատրություն տալու անհրաժեշտությունը որոշում է դատարանը: Ամեն դեպքում անձը չպետք է զրկվի իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, որն էլ հիմնականում արվում է **գրավոր եզանակով**՝ վերաքննիչ բողոքում և դրա պատասխանում: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան, ապա այն պատշաճ գնահատման պետք է արժանանա՝ հաշվի առնելով, որ դատավարական նման իրավունքի սահմանումն ինքնանպատակ չէ (յրեն, ըստ Հակոբ Բաշմակյանի դիմումի թիվ ԵԿԴ/0368/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Ամփոփելով և զարգացնելով նախկինում հայտնած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վերաքննության փուլում դատավարության մրցակցության և դատավարության մասնակիցների իրավահավասարության սկզբունքների պահպանությանն այն դեպքերում, երբ բողոքի քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով:

Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը 11.04.2012 թվականի թիվ ՄԴՌ-1020 որոշմամբ եզրահանգել է, որ գրավոր ընթացակարգով գործի քննությունն ինքնին չի կարող խախտել գործի հրապարակային քննության իրավուն-

քը: ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատաքննության գրավոր, ինչպես և բանավոր ընթացակարգերն արդարադատության իրականացման կազմակերպական-ընթացակարգային ձևեր են, որոնք իրավական ամրագրմամբ ներդրվելով արդարադատական պրակտիկայում՝ կոչված են մի դեպքում՝ առանց «բանավոր լուսմների» դատաքննական գործողությունների իրականացման, մյուս դեպքում՝ դրանց կատարմամբ ապահովելու դատական գործերի արդար, արդյունավետ և հրապարակային քննություն, դատական ակտերի կայացում և դրանց հրապարակում: Բոլոր դեպքերում, թե՛ բանավոր և թե՛ գրավոր ընթացակարգով գործերի դատաքննությունը պետք է **անհրաժեշտ երաշխիքներ** ապահովի դատաքննության մասնակիցների իրավունքների իրացման համար: ՀՀ սահմանադրական դատարանը նաև գտել է, որ գրավոր ընթացակարգով դատաքննությունը, [2005 թվականի փոփոխություններով] ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, չի կարող մեկնաբանվել որպես ոչ հրապարակային սկզբունքով արդարադատության իրականացում, առավել ևս՝ մեկնաբանվել որպես [2005 թվականի փոփոխություններով] ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասի նորմատիվ պայմանների անտեսման միջոց, եթե այն իրականացվում է հստակ սահմանված ընթացակարգով՝ **երաշխավորելով դատաքննության մասնակիցների իրավունքների արդյունավետ իրացումը**:

Այլ խոսքով՝ ՀՀ սահմանադրական դատարանը գրավոր ընթացակարգով գործի քննությունը չի համարում արդար դատաքննության իրավունքի սահմանափակում, եթե գործի քննության ընթացքում ապահովվում է դատավարության մասնակիցների կողմից իրենց իրավունքների արդյունավետ իրացումը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Եվրոպական դատարանը նույնպես մի շարք որոշումներով արտահայտված դիրքորոշումներով կարևորել է գրավոր ընթացակարգով գործի քննության ժամանակ դատավարության մասնակիցներին իրենց **իրավունքների արդյունավետ իրացման** հնարավորություն տալու հանգամանքը (*յրե՛ս, օրինակ, Sancakli v. Turkey գործով (գանգադր թիվ 1385/07) Եվրոպական դատարանի 15.05.2018 թվականի վճիռը, կետ 51*):

Եվրոպական դատարանը նաև կարևորել է, որ եթե անգամ վերադաս դատական ատյանն ունի լիազորություն վերանայելու գործն ինչպես փաստերի, այնպես էլ օրենքի հիմքով, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածը ոչ միշտ է պարտադրում հրապարակային քննություն և առավել ևս անձամբ ներկայանալու անհրաժեշտություն (*յրե՛ս, Fejde v. Sweden գործով 29.10.1991 թվականի վճիռ, գանգադր թիվ 12631/87, կետ 31*): Կարևոր է հաշվի առնել բողոքարկման քննության առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, թե **դիմումատուի շահերն ինչպես են փաստացի ներկայացվել և պաշտպանվել բողոքարկման ատյանում**, ընդ որում՝ հատկապես այն հարցերը, որոնք պետք է որոշի տվյալ բողոքարկման դատարանը (*յրե՛ս, օրինակ, Helters v. Sweden գործով 29.10.1991 թվականի վճիռը, գանգադր թիվ 11826/85, կետեր 31-32 կամ Kremzow v. Austria գործով 21.09.1993 թվականի վճիռը, գանգադր թիվ 12350/86, կետ 59*):

Եվրոպական դատարանի արտահայտած վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վերաքննիչ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ օրենսդիրն ապահովել է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտ նախադրյալներ դատավարության մասնակցի համար՝ սահմանելով, որ վերաքննիչ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու մասին վերաքննիչ դատարանը կայացնում է

որոշում **վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո**: Միաժամանակ, որպես վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետ՝ օրենսդիրը սահմանել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ կամ 5-րդ օրը՝ կախված բողոքարկվող դատական ակտի տեսակից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ վերաքննիչ դատարանն իր հայեցողական լիազորությունն իրականացնելիս (տվյալ դեպքում՝ բողոքի քննությունը դատական նիստում կամ գրավոր ընթացակարգով քննելու մասին որոշում կայացնելիս) պարտավոր է այնպես կազմակերպել բողոքի քննության համար նախատեսված ժամկետները (այդ թվում՝ դատական ակտի հրապարակման օրը որոշելիս), որպեսզի դատավարության որևէ մասնակից մյուսի համեմատ չգտնվի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի 03.09.2018 թվականի որոշմամբ Ընկերության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: Նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանը որոշել է բողոքի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով և վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացվելիք դատական ակտը հրապարակել **18.09.2018** թվականին: Վերաքննիչ դատարանի 03.09.2018 թվականի որոշումը և դատական ակտի հրապարակման օրվա վերաբերյալ դատական ծանուցագիրը Հայկ Զավախյանին և Վարդան Աբրահամյանին ուղարկելու համար փոստային ծառայությանն են հանձնվել **24.09.2018** թվականին՝ փաստորեն Վերաքննիչ դատարանի **18.09.2018** թվականի որոշման (որը հենց բողոքի քննության արդյունքում կայացված որոշումն է) հրապարակումից հետո՝ դրանով իսկ գրկելով Հայկ Զավախյանին և Վարդան Աբրահամյանին վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու հնարավորությունից (ընդ որում, Հայկ Զավախյանը փոստային առաքման եղանակով վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացրել է 27.09.2018 թվականին):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը Հայկ Զավախյանին և Վարդան Աբրահամյանին գրկել է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու հնարավորությունից՝ թույլ տալով դատավարության մրցակցության և դատավարության մասնակիցների հավասարության սկզբունքների խախտում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ գործին մասնակցող անձինք գրկվել են բողոքի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու իրավական հնարավորությունից, ինչը հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող՝ մրցակցային վարույթի անհարկի սահմանափակման:

2. Ինչ վերաբերում է Հայկ Զավախյանի բողոքի մյուս փաստարկին՝ կապված ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացնելու անհրաժեշտության հետ, և Վարդան Աբրահամյանի վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտման արդյունքում Հայկ Զավախյանը և Վարդան Աբրահամյանը գրկվել են վերաքննիչ բողոքի պատասխաններ ներկայացնելու հնարավորությունից, որի արդյունքում Հայկ Զավախյանի բողոքի մյուս փաստարկը և Վարդան Աբրահամյանի վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի հիմնավորումներն օբյեկտիվորեն ներկայացված չեն եղել Վերաքննիչ դատարանում և որևէ իրավական գնահատական չեն ստացել դատական այս ատյանի կողմից, Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ վերջիններիս վճռաբեկ բողոքների հիմնա-

վորվածությանը մյուս հիմքով կամ փաստարկով: Վերոգրյալ դիրքորոշումներից ելնելով՝ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նույն դատարան՝ Ընկերության վերաքննիչ բողոքի նոր քննության համար՝ Հայկ Ջավախյանի և Վարդան Աբրահամյանի դատավարական իրավունքների իրացումն արդյունավետ կերպով ապահովելու համար:

Այսպիսով, Հայկ Ջավախյանի վճռաբեկ բողոքի հիմքը և Վարդան Աբրահամյանի վճռաբեկ բողոքի առաջին հիմքը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը՝ Դատարանի 30.07.2018 թվականի որոշման դեմ Ընկերության վերաքննիչ բողոքը կրկին քննելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.09.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 30.07.2018 թվականի «Ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու ժամկետը երկարաձգելու վերաբերյալ» որոշման դեմ «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈւՎԿ ՍՊԸ-ի ներկայացրած վերաքննիչ բողոքի նոր քննության համար:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ/1617/02/18
Նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԳ/1617/02/18
2019թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Է. ՄԵԴԻԱՎՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի 09-ին գրավոր ընթացակարգով քննելով «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի ներկայացուցիչ Հայկուհի Սեդրակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի ընդդեմ ԱԶ Արմեն Մանուկյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը պահանջել է ԱԶ Արմեն Մանուկյանից բռնագանձել 790.441 ՀՀ դրամ՝ որպես պատշաճ կերպով մատակարարված ապրանքների դիմաց չվճարված գումար, ինչպես նաև դրա նկատմամբ հայցադիմումը ներկայացնելու օրվանից մինչև պարտավորության ամբողջական կատարումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով հաշվեգրվող տոկոսներ:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Բալյան) (այսուհետ՝ Դատարան) 24.10.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.03.2019 թվականի որոշմամբ ԱԶ Արմեն Մանուկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.10.2018 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ամբողջ ծավալով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառավարիչ Իսաչիկ Նազարյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը հայցվոր կողմը ստացել է 05.03.2019 թվականին, ուստի վերաքննիչ բողոքի պատասխան կարող էր ներկայացնել մինչև 26.03.2019 թվականը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը 18.03.2019 թվականին կայացրել է որոշում՝ բավարարելով վերաքննիչ բողոքը: Հետևաբար Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու ժամկետի չպահպանման արդյունքում բողոքաբերը զրկվել է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու հնարավորությունից և դրանով իսկ գործի ընթացքի վերաբերյալ իր գրավոր դիմադրությունը հայտնելու իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի թիվ ԱՎԴ/1617/02/18 քաղաքացիական գործով 18.03.2019 թվականի որոշումը և հայցը բավարարել»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Վերաքննիչ դատարանի 18.02.2019 թվականի որոշմամբ Դատարանի 24.10.2018 թվականի վճռի դեմ ԱԶ Արմեն Մանուկյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ, և բողոքի քննությունը նշանակվել է 07.03.2019 թվականին՝ ժամը 10:40-ին **(գ.թ. 46)**:

2) Վերաքննիչ դատարանի 18.02.2019 թվականի որոշումը և դատական նիստի օրվա, ժամի և վայրի վերաբերյալ դատական ծանուցագիրը Ընկերության սնանկության գործով կառավարիչ Իսաչիկ Նազարյանին ուղարկելու համար փոստային ծառայությանն են հանձնվել 28.02.2019 թվականին: Ընկերության սնանկության գործով կառավարիչ Իսաչիկ Նազարյանին ուղարկված փոստային ծրարը վերջինս ստացել է 05.03.2019 թվականին **(գ.թ. 47, 52-53)**:

3) 07.03.2019 թվականի դատական նիստով Վերաքննիչ դատարանն ավարտել է բողոքի քննությունը և դատական ակտի հրապարակման օր է նշանակել 18.03.2019 թվականը **(գ.թ. 54)**:

4) Վերաքննիչ դատարանի 18.03.2019 թվականի որոշումն Ընկերության սնանկության գործով կառավարիչ Իսաչիկ Նազարյանին ուղարկելու համար փոստային ծառայությանն է

հանձնվել 20.03.2019 թվականին, որը վերջինիս կողմից ստացվել է 25.03.2019 թվականին (գ.թ. 62-63):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս ստորադաս դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելիս դատավարության մասնակցի կողմից վերաքննիչ բողոքի պատահաժամանակ ներկայացնելու իրավունքի իրացման ապահովման խնդրին:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանն ապահովում է, որ գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձինք ունենան յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու հավասար հնարավորություն, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն այնպիսի ապացույցներ, որոնց կապակցությամբ գործին մասնակցող բոլոր անձանց համար ապահովվել է դիրքորոշում հայտնելու հավասար հնարավորություն, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրավունք ունի ներկայացնելու վերաքննիչ բողոքի պատասխան՝ վճռի դեմ ներկայացված բողոքով՝ վերաքննիչ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը գործին մասնակցող անձանց ուղարկվելիս նրանք տեղեկացվում են բողոքին պատասխան ներկայացնելու իրավունքի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում բողոք բերած անձը և գործին մասնակցող մյուս անձինք ծանուցվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական կազմում ընդգրկված դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին և նիստին ներկայացած գործին մասնակցող անձանց, որից հետո բողոքի քննությունը համարվում է ավարտված, և հայտարարվում է դատական ակտը հրապարակելու օրը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը *Հայկ Ջավախյանն ընդդեմ Վարդան Արրահամյանի թիվ ԵԿԳ/0612/04/16 սնանկության գործով 16.04.2019 թվականի որոշմամբ* անդրադարձել է վերաքննության փուլում դատավարության մրցակցության և դատավարության մասնակիցների իրավահավասարության սկզբունքների պահպանությանն այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի քննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրն ապահովել է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտ նախադրյալներ դատավարության մասնակցի համար: Որպես վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետ՝ օրենսդիրը սահմանել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ կամ 5-րդ օրը՝ կախված բողոքարկվող դատական ակտի տեսակից: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է, որ վերաքննիչ դատարանն իր հայեցողական լիազորությունն իրականացնելիս (տվյալ դեպքում՝ բողոքի քննությունը դատական նիստում կամ գրավոր ընթացակարգով քննելու մասին որոշում կայացնելիս) պարտավոր է այնպես կազմակերպել բողոքի քննության համար նախատեսված ժամկետները (այդ թվում՝ դատական ակտի հրապարակման օրը որոշելիս), որպեսզի դատավարության որևէ մասնակից մյուսի համեմատ չգտնվի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ *Հայկ Ջավախյանն ընդդեմ Վարդան Արրահամյանի* գործով արտահայտած իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի քննությունն իրականացվում է դատական նիստում: Հետևաբար վերաքննիչ դատարանը բողոքի քննությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքի իրացումը՝ ընդ որում, դատավարության մասնակցի համար ապահովելով օրենքով սահմանված ժամկետի ամբողջ ընթացքում պատասխան ներկայացնելու հնարավորությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի 18.02.2019 թվականի որոշմամբ ԱԶ Արմեն Մանուկյանի բերած վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: Նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանը որոշել է բողոքի քննությունը նշանակել 07.03.2019 թվականին: Վերաքննիչ դատարանի 18.02.2019 թվականի որոշումը և դատական նիստի օրվա, ժամի և վայրի վերաբերյալ դատական ծանուցագիրը Ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազա-

րյանին ուղարկելու համար փոստային ծառայությանն են հանձնվել **28.02.2019** թվականին, որոնք վերջինիս կողմից ստացվել են **05.03.2019** թվականին: Վերաքննիչ դատարանը 07.03.2019 թվականի դատական նիստում ավարտել է բողոքի քննությունը և դատական ակտի հրապարակման օր է նշանակել **18.03.2019** թվականը:

Սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Բազիկ Նազարյանը վերաքննիչ բողոքի պատասխան կարող էր ներկայացնել 05.03.2019 թվականին հաջորդող օրվանից հաշվված 15 օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 27.03.2019 թվականը ներառյալ (հաշվարկում ներառված չեն ոչ աշխատանքային օրերը): Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, դատական ակտի հրապարակման օրը որոշելիս, չպահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 369-րդ հոդվածի պահանջները, առանց վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու օրենքով սահմանված իրավունքի իրացման հնարավորությունը պատասխանողին ընձեռելու, 07.03.2019 թվականին գործի քննությունը հայտարարել է ավարտված և 18.03.2019 թվականին հրապարակել է դատական ակտը՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու 15-օրյա ժամկետը լրանում էր 27.03.2019 թվականին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը Ընկերության սնանկության գործով կառավարիչ Բազիկ Նազարյանին զրկել է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու հնարավորությունից՝ թույլ տալով դատավարության մրցակցության և դատավարության մասնակիցների հավասարության սկզբունքների խախտում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ գործին մասնակցող անձը զրկվել է բողոքի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու իրավական հնարավորությունից, ինչը հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող՝ մրցակցային վարույթի անհարկի սահմանափակման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը՝ Դատարանի 24.10.2018 թվականի վճռի դեմ ԱԶ Արմեն Մանուկյանի վերաքննիչ բողոքը կրկին քննելու նպատակով:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի որոշման բեկանման արդյունքում սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/0150/05/16
2019թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/0150/05/16
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
 Ա. Առաքելյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի մարտի 22-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գառնիկ Վերմիշյանի ներկայացուցիչ Արման Վերմիշյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.06.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գառնիկ Վերմիշյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0067788 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Գառնիկ Վերմիշյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 22.10.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0067788 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 09.06.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.06.2017 թվականի որոշմամբ Գառնիկ Վերմիշյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Գատարանի 09.06.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գառնիկ Վերմիշյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ և 255-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 05.10.2015 թվականի թիվ 0082959 արձանագրությունը կազմվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և Երևան քաղաքի ավագանու 25.12.2012 թվականի թիվ 563-Ն որոշման պահանջների խախտմամբ: Մասնավորապես՝ նշված արձանագրությունը, դրան կից ապացույցը և ծանուցումը Գառնիկ Վերմիշյանին ներկայացվել են ավելի քան մեկ օր ուշացումով: Արձանագրությունը չի կազմվել տեղում, չի ապացուցվել Գառնիկ Վերմիշյանի՝ որպես մեքենայի սեփականատիրոջ իրավախախտում կատարելու փաստը: Արձանագրությունում նշված չէ այն կազմող անձի հայրանունը, բացակայում է իրավախախտում կատարած անձի բացատրությունը, արձանագրությունը չի ստորագրել վարչական իրավախախտում կատարած անձը, առկա չէ արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու մասին նշում, արձանագրության մեջ բացակայում է նշում, որ իրավախախտում կատարած անձին բացատրվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները: Բացի այդ, արձանագրությունում նշված չեն տուգանքի չափը, տուգանքի վճարման համար գործող բանկային հաշվեհամարը և իրավախախտում կատարած անձի անձը հաստատող փաստաթղթերի տվյալները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.06.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժնի պետ Հրանտ Մարգարյանի կողմից 05.10.2015 թվականին կազմվել է թիվ 0082959 արձանագրությունը, որի համաձայն՝ «համադրելով տեխնիկական միջոցի օգտագործմամբ ստացված տեսանկյունում ամրագրված արարքի հատկանիշներն իրավախախտման հատկանիշների հետ, հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում, մասնավորապես՝ «01OS998» պետհամարանիշով «MAZ-DA 626 1.8» մակնիշի տրանսպորտային միջոցը 30.09.2015 թվականին՝ ժամը 12:01-ից մինչև 17:21-ը, 15 րոպեից ավելի ժամանակահատվածով կայանված է եղել Երևան քաղաքի Խանջյան փողոցում գտնվող համայնքային վճարովի ավտոկայանատեղում, ինչի համար վճարված չի եղել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 23.12.2014 թվականի թիվ

264-Ն որոշմամբ նախատեսված տրանսպորտային միջոցի կայանատեղի տեղական տուրքը» (**հատոր 1-ին, գ.թ. 6**).

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պետի տեղակալ Վ. Բարսեղյանի կողմից 22.10.2015 թվականին կայացված «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0067788 որոշմամբ Գառնիկ Վերմիշյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինին պատկանող «01OS998» պետհամարանիշով «MAZDA 626 1.8» մակնիշի տրանսպորտային միջոցը 30.09.2015 թվականին՝ ժամը 12:01-ից մինչև 17:21-ը, 15 րոպեից ավելի ժամանակահատվածով կայանված է եղել Երևան քաղաքի Խանջյան փողոցում գտնվող համայնքային վճարովի ավտոկայանատեղում՝ առանց վճարելու տրանսպորտային միջոցի կայանատեղիի համար սահմանված տեղական տուրքը (**հատոր 1-ին, գ.թ. 7-8**).

3) Ծառայության պետի տեղակալ Վ. Բարսեղյանը Գառնիկ Վերմիշյանի վարչական բողոքի քննության արդյունքում 16.11.2015 թվականին կայացրել է թիվ Վ-43/31 որոշումը, որի համաձայն՝ Գառնիկ Վերմիշյանի բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0067788 որոշումը՝ անփոփոխ (**հատոր 1-ին, գ.թ. 9-14**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով արձանագրության կազմման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդո՞ք ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտման արձանագրությունը պետք է կազմվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կանոնների, մասնավորապես՝ ենթադրյալ իրավախախտի մասնակցության պահանջի պահպանմամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցնե-

րի կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի (16.12.2016 թվականին ընդունված և 09.01.2017 թվականին ուժի մեջ մտած ««Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-236-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերնագրում և ամբողջ տեքստում «տուրք» բառը փոխարինվել է «վճար» բառով) 2-րդ հոդվածի համաձայն՝ ավտոկայանատեղի համար գանձվող տուրքը ավտոտրանսպորտային միջոցը ավտոկայանատեղում կայանելու համար նույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից հաստատված չափով և նույն օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրքի վճարման ձևերը սահմանում է համայնքի ավագանին:

Մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրքը վճարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Մինչև 09.01.2017 թվականը գործող վերը նշված իրավակարգավորումներից հետևում է, որ ավտոկայանատեղի համար գանձվող տուրքը համայնքի ավագանու կողմից հաստատված չափով համայնքի բյուջե գանձվող տեղական տուրք է, որի վճարման պարտականությունը չկատարելու իրավական հետևանքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության կիրառումն է: Ընդ որում, օրենսդիրն ավտոկայանատեղի տուրքի վճարման ձևերը սահմանելու լիազորությունը վերապահել է համայնքի ավագանուն:

Այսպես՝ Երևան քաղաքի ավագանու 23.12.2014 թվականի «Երևան քաղաքային համայնքում տեղական տուրքերի 2015 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 264-Ն որոշման 14-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ Երևանի վարչական տարածքում Երևան քաղաքի ավագանու որոշմամբ կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում տեղական տուրքը սահմանվում է (...) մեկ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ավտոկայանատեղում ժամը 09.00-ից մինչև 24.00-ն կայանելու համար՝ յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 100 դրամ, որի դեպքում փաստացի կայանման ժամանակի թույլենքով հաշվարկն իրականացվում է հետևյալ կերպ՝ ավտոկայանատեղում կայանելու պահից մինչև 15 թույլ տեղական տուրք չի գանձվում, իսկ 15 թույլից ավելի կայանելու համար գանձվում է 100 դրամ՝ յուրաքանչյուր մեկ ժամի համար:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող Երևան քաղաքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը կարող էր համարվել տեղի ունեցած հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը 15 թույլից ավելի ժամանակով կայանվել է Երևան քաղաքի համայնքային վճարովի ավտոկայանատեղում,

2. չի վճարվել համայնքի ավագանու կողմից հաստատված չափով տեղական տուրք:

Այլ կերպ ասած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման դեպքի (զանցանքի) առկայության համար այն դեպքում, երբ համայնքի ավագանու որոշմամբ նախատեսված է համայնքային վճարովի ավտոկայանատեղում որոշակի ժամանակահատված անվճար կայանելու հնարավորություն, անհրաժեշտ է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը սահմանված անվճար ժամանակահատվածից ավելի ժամանակով համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու և համայնքի ավագանու կողմից հաստատված չափով տեղական տուրք չվճարելու փաստերի միաժամանակյա առկայությունը (*տե՛ս, Գեղամ Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/5084/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է հետևյալ հարցերը՝ (...) (2) ճիշտ են կազմվել, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմերի համակցված վերլուծությանը, իր նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ և ղեկավարվելով օրենքով՝ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները: Վերը նշվածն իրականացնելու համար համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս պետք է պատշաճ ձևով լուծի նաև հետևյալ հարցը՝ արդյո՞ք օրենքին համապատասխան են կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը (*տե՛ս Սուրեն Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարույթի ժամանակ օրենսդրի կողմից առաջադրված խնդիրների լուծման համար վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննող համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ յուրաքանչյուր գործ քննության նախապատրաստելիս պարտավոր է պարզել, ի

թիվս այլնի, նաև այն հարցը, թե արդյոք ճիշտ է կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ընդհանուր կանոնները, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները նախատեսված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ և 255-րդ հոդվածներով:

Այսպես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը, տեղեկություններ խախտողի անձի մասին. վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը. այն նորմատիվ ակտը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար. վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան. խախտողի բացատրությունը. գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ: Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը. վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք: Եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, դրանում այդ մասին նշում է կատարվում: Իրավախախտում կատարած անձն իրավունք ունի ներկայացնելու արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, ինչպես նաև շարադրելու այն ստորագրելուց իր հրաժարվելու շարժառիթները: Արձանագրություն կազմելիս խախտողին բացատրվում է նույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, որի մասին արձանագրության մեջ նշվում է արվում:

Վերոգրյալ իրավադրույթներից բխում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը պետք է կազմեն ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ, և վերջինս պետք է ստորագրի այն, իսկ եթե նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու իրավասություն ունեցող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) դրա մասին համապատասխան նշում է կատարում արձանագրության մեջ: Անձը, որին վերագրվում է ենթադրյալ վարչական իրավախախտումը, իրավունք ունի ներկայացնել բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, որոնք կցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը, իսկ այն դեպքերում, երբ նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա կարող է արձանագրությունում շարադրել այն շարժառիթները, որոնք իր կարծիքով հիմք են հանդիսացել արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու համար: Բացի այդ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական

ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն կազմելիս անձին պետք է բացատրեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ նրա իրավունքներն ու պարտականությունները, և դրա մասին նույնպես համապատասխան նշում կատարեն արձանագրության մեջ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ վարչական մարմինը (պաշտոնատար անձը) իրավասու է իրավախախտին ենթարկել վարչական պատասխանատվության միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու վերոգրյալ ընդհանուր կանոնների, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջների պահպանման պայմաններում:

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է տվյալ համայնքի ղեկավարը կամ՝ նրա կողմից լիազորված անձը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողությունը կարող է իրականացվել անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերի միջոցով (նկարահանող, ձայնագրանշանային համակարգեր և այլն): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը որոշում է տվյալ համայնքի ավագանին:

Երևան քաղաքի ավագանին, ղեկավարվելով վերոգրյալ օրենքով իրեն վերապահված լիազորությամբ, 25.12.2012 թվականին ընդունել է «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանելու մասին» թիվ 563-Ն որոշումը: Նշված որոշման՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ հավելվածի համաձայն՝

«(...) 9. Անմիջական հսկողությունն իրականացվում է ավտոկայանատեղի կազմակերպչի նշանակված կամ լիազորած անձի (անձերի) (այսուհետք՝ կարգավարների), իսկ էլեկտրոնային համակարգերով իրականացվող հսկողությունը՝ շրջիկ կարգավարների կամ այլ համակարգերի միջոցով:

10. Կարգավարի (շրջիկ կարգավարի) գործառույթներն են.

1) վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի կայանման համար տուրքի վճարված լինելու փաստի ստուգումը,

2) վճարման բացակայության կամ տվյալ ժամանակահատվածի համար տուրքը վճարված չլինելու դեպքում.

ա. տուգանքի վերաբերյալ արձանագրության կազմումը, եթե կարգավարը (շրջիկ կարգավարը) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձ է,

բ. տուգանքի վերաբերյալ արձանագրություն կազմելու համար Երևանի քաղաքապետարան է ներկայացնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված փաստաթղթերը (սպացույցները), եթե կարգավարը (շրջիկ կարգավարը) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձ չէ (...):

11. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար սահմանված տուրքը չվճարելու տուգանքի վերաբերյալ կազմվող արձանագրություն պետք է ներառի ստնվագն հետևյալ տեղեկարկությունը.

1) փուզանվող անձի կողմից կայանած ավտոտրանսպորտային միջոցի մակնիշն ու հաշվառման համարանիշը,

2) արձանագրություն կազմելու ժամանակը,

3) փուզանքի իրավական հիմքերը,

4) փվյալ ավտոկայանարեղի հասցեն,

5) փուզանքի չափը,

6) փուզանքի վճարման համար գործող բանկային հաշվեհամարը,

7) փուզանքը վճարողի անունը, ազգանունը, արտոագրությունը (հնարավորության դեպքում), նրա անձը հաստատող փաստաթղթի փվյալները:

12. Սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված դեպքում փուզանքի վերաբերյալ արձանագրությունը կազմվում է երկու օրինակից: Արձանագրություններից մեկը դրանք կազմելու օրը, իսկ եթե դա անհնար է, ապա այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը, փոխանցվում է Երևանի քաղաքապետին, իսկ մյուս օրինակը՝ պատշաճ ձևով ուղարկվում է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանած անձին:

13. Սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված դեպքում փուզանքի վերաբերյալ արձանագրությունը կազմվում է երկու օրինակից Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձի կողմից՝ ավտոկայանարեղի կազմակերպչի ներկայացրած փաստաթղթերի (ապացույցների) հիման վրա, որոնցից մեկը նույն օրը, իսկ եթե դա անհնար է, ապա այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը, պատշաճ ձևով ուղարկվում է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանած անձին (...):»:

Վերոգրյալ իրավադրոյթներից հետևում է, որ Երևան քաղաքի ավագանին, սահմանելով Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը, նախատեսել է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտման արձանագրության կազմման այլ կարգ, որը տարբերվում է այդպիսի արձանագրության կազմման՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով ամրագրված կանոններից: Մասնավորապես՝ Երևան քաղաքի ավագանու վերոգրյալ որոշման համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտման արձանագրությունը կազմվում է առանց իրավախախտի մասնակցության և կազմվելուց հետո ուղարկվում է այդ անձին:

Մինչդեռ Վճարել դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կիրառելի է ոչ թե Երևան քաղաքի ավագանու 25.12.2012 թվականի թիվ 563-Ն որոշմամբ սահմանված՝ վարչական իրավախախտման արձանագրությունն իրավախախտի բացակայությամբ կազմելու և հետո վերջինիս ուղարկելու կանոնը, այլ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման արձանագրությունն իրավախախտի ներկայությամբ կազմելու և առձեռն վերջինիս հանձնելու կանոնը: Նշված դատողությունը հիմնված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գործող՝ իրավական ակտերի աստիճանակարգության վրա, որի համաձայն՝ օրենքը (տվյալ դեպքում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը) ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, քան համայնքի ավագանու որոշումը:

Վճարել դատարանը գտնում է, որ արձանագրության կազմման գործընթացին են-

թաղրյալ իրավախախտին մասնակից դարձնելու, արձանագրությունը վերջինիս ներկայությամբ կազմելու օրենքի պահանջը ձևական բնույթ չի կրում, քանի որ ենթադրյալ իրավախախտին իր իրավունքներն ու պարտականությունները բացատրելու՝ արձանագրությունը կազմող պաշտոնատար անձի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում ողջ վարչական վարույթի ընթացքում ենթադրյալ իրավախախտի իրավունքների իրացումն ապահովելու համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ կազմելու իմպերատիվ պահանջը նպատակ է հետապնդում նաև ապահովելու վարչական իրավախախտման պատշաճ սուբյեկտի պարզման հնարավորությունը: Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ կազմելու պայմաններում հնարավոր կլինի պարզել վարչական իրավախախտման սուբյեկտին, որից հետո վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում վերջինիս հնարավոր կլինի ենթարկել վարչական պատասխանատվության:

Անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու վարչական իրավախախտման արձանագրությունը պետք է կազմվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կանոնների, մասնավորապես՝ ենթադրյալ իրավախախտի մասնակցության պահանջի պահպանմամբ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտով՝ Ծառայության պետի տեղակալի կողմից 22.10.2015 թվականին կայացված «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0067788 որոշմամբ Գառնիկ Վերմիշյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինիս պատկանող «ՕՐՏՍ998» պետհամարանիշով «MAZDA 626 1.8» մակնիշի տրանսպորտային միջոցը 30.09.2015 թվականին՝ ժամը 12:01-ից մինչև 17:21-ը, 15 րոպեից ավելի ժամանակահատվածով կայանված է եղել Երևան քաղաքի Խանջյան փողոցում գտնվող համայնքային վճարովի ավտոկայանատեղում՝ առանց վճարելու տրանսպորտային միջոցի կայանատեղի համար սահմանված տեղական տուրքը:

Նշված վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժնի պետ Հրանտ Մարգարյանի կողմից 05.10.2015 թվականին կազմվել է թիվ 0082959 արձանագրությունը, որի համաձայն՝ համադրելով տեխնիկական միջոցի օգտագործմամբ ստացված տեսանյութում ամրագրված արարքի հատկանիշները իրավախախտման հատկանիշների հետ, հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում, մասնավորապես՝ «ՕՐՏՍ998» պետհամարանիշով «MAZDA 626 1.8» մակնիշի տրանսպորտային միջոցը 30.09.2015 թվականին՝ ժամը 12:01-ից մինչև 17:21-ը, 15 րոպեից ավելի ժամանակահատվածով կայանված է եղել Երևան քաղաքի Խանջյան փողոցում գտնվող համայնքային վճարովի ավտոկայանատեղում, ինչի համար վճարված չի եղել

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 23.12.2014 թվականի թիվ 264-Ն որոշմամբ նախատեսված տրանսպորտային միջոցի կայանատեղի տեղական տուրքը:

Դատարանը մերժել է Գառնիկ Վերմիշյանի վիճարկման հայցը՝ պատճառաբանելով, որ սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է Ծառայության պետի տեղակալի կողմից 22.10.2015 թվականին կայացված «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0067788 որոշմամբ նկարագրված իրավախախտման փաստը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Գառնիկ Վերմիշյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության համաձայնելով Դատարանի վերոգրյալ դիրքորոշման հետ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժնի պետ Հրանտ Մարգարյանի կողմից 05.10.2015 թվականին կազմված թիվ 0082959 արձանագրությունում բացակայում է վարչական իրավախախտում կատարած անձի՝ Գառնիկ Վերմիշյանի ստորագրությունը, ինչպես նաև առկա չէ նշում այն մասին, որ իրավախախտում կատարած անձը հրաժարվել է այն ստորագրելուց, բացակայում է նաև նշում այն մասին, որ իրավախախտում կատարած անձին բացատրվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Երևան քաղաքի ավագանու «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանելու մասին» 25.12.2012 թվականի թիվ 563-Ն որոշման հավելվածի 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված՝ արձանագրությունն ուղարկելու պարտականությունը, չի բացառում վարչական մարմնի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված պարտականության կատարումը:

Փաստորեն, Ծառայության պետի տեղակալի կողմից 22.10.2015 թվականին կայացված «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0067788 որոշումն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի խախտմամբ:

Միաժամանակ սույն գործի փաստերի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիճարկման հայցի քննության ընթացքում վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս վարչական ակտի առոչնչության հիմքերը պարզելու և բացատրելու կարևորությանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը.

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ

հարց է կարգավորում.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման, իսկ 3-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ ակտը, որն ընդունվել է՝ օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Վերոգրյալ իրավանքների վերլուծությունից հետևում է, որ ոչ իրավաչափ վարչական ակտերը կարող են հանդես գալ երկու ձևով՝ որպես օրենքին (գերակայող իրավունքին) հակասող և որպես առոչինչ ակտեր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրելով վիճարկման և ճանաչման հայցատեսակները՝ օրենսդիրը սահմանել է անվավեր և առ ոչինչ վարչական ակտերի ոչ իրավաչափ լինելը դատական կարգով հաստատելու երկու եղանակ: Ընդ որում, վիճարկման հայցը քննելիս դատարանը պարտավոր է նախևառաջ անդրադառնալ վարչական ակտի առոչնչության հիմքերի առկայությանը կամ բացակայությանը, քանի որ վարչական ակտի անվավերության նյութաիրավական հիմքերով պայմանավորված՝ անվավեր կարող է ճանաչվել միայն առ ոչինչ չհանդիսացող վարչական ակտը: Այսինքն՝ առ ոչինչ վարչական ակտի վերացման պահանջը չի կարող լինել վիճարկման հայցի առարկա, քանի որ անվավերության հիմքերի պարզման անհրաժեշտությունն առ ոչինչ վարչական ակտի պարագայում բացակայում է: Ավելին, եթե առկա է վարչական ակտի առոչնչ լինելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված հիմքերից որևէ մեկը, ապա այդ վարչական ակտը չի կարող ճանաչվել անվավեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219¹-րդ հոդվածի համաձայն՝ (...) տեղական ինքնակառավարման մարմինները քննում են նույն օրենսգրքի (...) 124.7-րդ հոդվածով (...) նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: (...) Տարածքային կառավարման մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունեն մարզպետները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների անունից՝ համայնքի ղեկավարները, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկման հայցը քննելիս՝ Դատարանը չի անդրադարձել Ծառայության պետի տեղակալի կողմից 22.10.2015 թվականին կայացված «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0067788 որոշման առոչնչության հիմքերի առկայությանը կամ բացակայությանը՝ այն համատեքստում, թե արդյոք Ծառայության պետի տեղակալը իրավասու էր ընդունելու նշված վարչական ակտը: Մինչդեռ սույն գործով վիճարկվող վարչական ակտն ընդունող պաշտոնատար անձի իրավասության հարցի պարզումն այդ ակտի իրավաչափության գնահատման համար ունի որոշիչ նշանակություն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Մինևսույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է վճռի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու անհրաժեշտության մասին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ հարցերը պարզելու նպատակով, ինչպես նաև վիճարկվող որոշման իրավաչափությունն օրենքով սահմանված կարգով գնահատելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

5. Վճռաբեկ դատարանի պարզադատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.06.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/1176/05/17
2019թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/1176/05/17
Նախագահող դատավոր՝ Ա. Թովմասյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Ա. Բաբայան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴԻՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում քննելով Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Տիրան Աբգարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմինե Պետրոսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի 26.01.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0207038 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Արմինե Պետրոսյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանման ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից 26.01.2017 թվականին կայացված թիվ Վ-0207038 «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան) 14.06.2017

թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.05.2018 թվականի որոշմամբ Արմինե Պետրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 14.06.2017 թվականի վճիռը և այն փոփոխվել՝ հայցը բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել Երևանի քաղաքապետարանի 26.01.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0207038 որոշումը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերությունները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ մեքենան կայանատեղում կայանելու համար կայանած անձի կողմից վճարում չիրականացնելու դեպքում վճարման պարտավորությունը կրում է տվյալ մեքենայի սեփականատերը, ընդ որում, միայն այն հանգամանքը, որ իրավախախտման պահին մեքենան չի վարել ինքն անձամբ, չի կարող բավարար հիմք հանդիսանալ սեփականատիրոջ կողմից պատասխանատվությունից խուսափելու համար:

Համադրելով սույն գործի փաստերը և հաշվի առնելով թիվ ՎԴ/1322/05/16 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.06.2017 թվականի որոշմամբ հայտնած դիրքորոշումը՝ նշել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է գործող օրենսդրության պահանջներն ու հիմք է ընդունել միայն տեսության մեջ ընդունված սկզբունքների «ենթադրյալ» խախտման հանգամանքը՝ դրանով փորձելով հիմնավորել Արմինե Պետրոսյանի՝ վարչական պատասխանատվության ենթակա չլինելու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.05.2018 թվականի որոշումը, փոփոխել այն և հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետարանի 19.12.2016 թվականի թիվ 0223062 արձանագրության համաձայն՝ SKODA OCTAVIA TOUR 1.6 մակնիշի 35VT470 պետհամարանիշով տրանսպորտային միջոցը 14.12.2016 թվականին ժամը 11:48-ից մինչև 14.12.2016 թվականի ժամը 12:05-ի ընթացքում 15 րոպեից ավելի ժամանակահատվածով կայանված է եղել Երևան քաղաքի Կապյան փողոցում գտնվող համայնքային վճարովի ավտոկայանատեղում, ինչի համար վճարված չի եղել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 23.12.2015 թվականի թիվ 434-Ն որոշմամբ նախատեսված տրանսպորտային միջոցների կայանատեղերի համար

սահմանված տեղական տուրքը (**հատոր 1-ին, գ.թ. 27**):

2) Ծառայության պետի 26.01.2017 թվականի թիվ Վ-0207038 «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշման համաձայն՝ Արմինե Պետրոսյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի խախտման հիմքով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 5.000 ՀՀ դրամի չափով տուգանքի (**հատոր 1-ին, գ.թ. 04-05**):

3) Արմինե Պետրոսյանի և Արմեն Խաչատրյանի միջև 15.06.2015 թվականին կնքված ավտոմեքենայի վարձակալության պայմանագրի (պատճենի) համաձայն՝ Արմինե Պետրոսյանը 3 տարի ժամկետով, համապատասխան վարձավճարի դիմաց, Արմեն Խաչատրյանի տիրապետմանը և օգտագործմանն է հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող «SKODA» մակնիշի 2013 թվականի արտադրության, «35VT470» համարանիշի ավտոմեքենան (**հատոր 1-ին, գ.թ. 07**):

4) Արմեն Խաչատրյանը, 30.05.2017 թվականի դատական նիստի ընթացքում հարցաքննվելով որպես վկա, Դատարանին հայտնել է, որ ինքը շուրջ 3 տարի, վարձակալության հիմունքներով մշտապես վարում է սպիտակ գույնի «35VT470» պետհամարանիշի SKODA OCTAVIA տրանսպորտային միջոցը (**դատական նիստի արձանագրություն և դատական նիստերի արձանագրության կրիչ, հատոր 1-ին, գ.թ. 36, 44-46**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտի որոշման հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենա նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. տրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (այն անձին, որին ամրակցված է պեդալական կամ համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցը) վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտը կարող է արդյոք անվավեր ճանաչվել այն հիմքով, որ տրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանվել է այլ անձի կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ վկայակոչված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքները: Անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Իսկ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին (*տե՛ս, Արսեն Խաչատրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/4936/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՄԴՌ-920 որոշմամբ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար, մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար:

Մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի (16.12.2016 թվականին ընդունված և 09.01.2017 թվականին ուժի մեջ մտած «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-236-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերնագրում և ամբողջ տեքստում «տուրք» բառը փոխարինվել է «վճար» բառով) 2-րդ հոդվածի համաձայն՝ ավտոկայանատեղի համար գանձվող տուրքը ավտոտրանսպորտային միջոցը ավտոկայանատեղում կայանելու համար նույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի

ավագանու կողմից հաստատված չափով և նույն օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրքի վճարման ձևերը սահմանում է համայնքի ավագանին:

Մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ավտոկայանատեղի տուրք չվճարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Մինչև 09.01.2017 թվականը գործող վերը նշված իրավակարգավորումներից հետևում է, որ ավտոկայանատեղի համար գանձվող տուրքը համայնքի ավագանու կողմից հաստատված չափով համայնքի բյուջե գանձվող տեղական տուրք է, որի վճարման պարտականությունը չկատարելու իրավական հետևանքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության կիրառումն է: Ընդ որում, օրենսդիրն ավտոկայանատեղի տուրքի վճարման ձևերը սահմանելու լիազորությունը վերապահել է համայնքի ավագանուն (*տե՛ս, Գեղամ Միսնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/5084/05/14 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Այսպես, Երևան քաղաքի ավագանու 23.12.2015 թվականի «Երևան քաղաքային համայնքում տեղական տուրքերի 2016 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 434-Ն որոշման 14-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ Երևանի վարչական տարածքում Երևան քաղաքի ավագանու որոշմամբ կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում տեղական տուրքը սահմանվում է (...) մեկ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ավտոկայանատեղում ժամը 09.00-ից մինչև 24.00-ն կայանելու համար՝ յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 100 դրամ, որի դեպքում փաստացի կայանման ժամանակի բոպեներով հաշվարկն իրականացվում է հետևյալ կերպ՝ ավտոկայանատեղում կայանելու պահից մինչև 15 բոպե տեղական տուրք չի գանձվում, իսկ 15 բոպեից ավելի կայանելու համար գանձվում է 100 դրամ՝ յուրաքանչյուր մեկ ժամի համար:

Նախկինում կայացրած որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ Երևան քաղաքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը կարող էր համարվել տեղի ունեցած հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը 15 բոպեից ավելի ժամանակով կայանվել է Երևան քաղաքի համայնքային վճարովի ավտոկայանատեղում,

2. չի վճարվել համայնքի ավագանու կողմից հաստատված չափով տեղական տուրք:

Այլ կերպ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված իրավախախտման դեպքի (գանցանքի) առկայության համար այն դեպքում, երբ համայնքի ավագանու որոշմամբ նախատեսված է համայնքային

վճարովի ավտոկայանատեղում որոշակի ժամանակահատված անվճար կայանելու հնարավորություն, անհրաժեշտ է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը սահմանված անվճար ժամանակահատվածից ավելի ժամանակով համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու և համայնքի ավագանու կողմից հաստատված չափով տեղական տուրք չվճարելու փաստերի միաժամանակյա առկայությունը (*տե՛ս, Գեղամ Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎՂ/5084/05/14 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավտոկայանատեղի համար տուրք վճարողներ են հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի տուրքը չվճարվելու դեպքում ավտոկայանատեղի տուրք վճարող է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն է՝ ապա այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված է ավտոկայանատեղի համար տուրքի վճարման պարտականությունը կրող սուբյեկտների հետևյալ շրջանակը. տեղական տուրքը վճարելու պարտականությունը, որպես կանոն, կրում են ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած ֆիզիկական և իրավաբանական անձինք, սակայն եթե ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի տուրքը չի վճարվում, ապա ավտոկայանատեղի տուրք վճարող է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը): Այսինքն՝ ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի տուրքը չվճարվելու դեպքում այն վճարելու պարտականությունը կրող սուբյեկտն ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերն է (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը), ով էլ ենթակա է վարչական պատասխանատվության օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ ավտոտրանսպորտային միջոցը հանձնելով այլ անձի շահագործմանը՝ դրա սեփականատերը (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը) պետք է ապահովի, որ ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանվելու պայմաններում ավտոկայանատեղի համար սահմանված տեղական տուրքը վճարվի, և կրում է դրա չվճարման բացասական հետևանքների ռիսկը՝ վարչական պատասխանատվության ենթարկվելու ձևով: Փաստորեն, տվյալ դեպքում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը) ենթարկվում է վարչական պատասխանատվության ոչ թե այլ

անձի կողմից, այլ իր կողմից մեղավորությամբ կատարված արարքի՝ օրենքով սահմանված տեղական տուրքը վճարելու պարտականությունը չկատարելու համար, ինչը համապատասխանում է «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքներին:

Անվտոնացված վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունն օրենսդիրն առանց որևէ բացառության դրել է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ վրա (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձի վրա, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը): Այսինքն՝ մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ անկախ այն հանգամանքից, թե տրանսպորտային միջոցի սեփականատերն անձամբ է օգտվել վճարովի ավտոկայանատեղից, թե՛ ոչ, տրանսպորտային միջոցը համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելու պայմաններում որպես ավտոկայանատեղի տուրք վճարող, և ըստ այդմ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության սուբյեկտ օրենսդիրը դիտել է միայն տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը (ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն լինելու դեպքում՝ այն անձին, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Արմինե Պետրոսյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության «Վարչական տույժ նշանակելու մասին» 26.01.2017 թվականի թիվ Վ-0207038 որոշումը: Այդ վարչական ակտով Արմինե Պետրոսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է վարչական տույժ այն բանի համար, որ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «SKODA OCTAVIA TOUR 1.6» մակնիշի «35VT470» պետհամարանիշի տրանսպորտային միջոցը 14.12.2016 թվականին ժամը 11:48-ից մինչև 12:05-ի ընթացքում վճարովի ավտոկայանատեղում 15 րոպեից ավելի ժամանակով կայանված լինելու պարագայում չի կատարվել համապատասխան վճարում:

Արմինե Պետրոսյանը վիճարկման հայցի հիմքում դրել է այն փաստարկը, որ վերոգրյալ վարչական ակտով արձանագրված իրավախախտման կատարման պահին «SKODA OCTAVIA TOUR 1.6» մակնիշի «35VT470» համարանիշի տրանսպորտային միջոցը շահագործվել է այլ անձի՝ Արմեն Խաչատրյանի կողմից: Այդ փաստն ապացուցելու համար Արմինե Պետրոսյանը Դատարան է ներկայացրել իր և Արմեն Խաչատրյանի միջև 15.06.2015 թվականին կնքված ավտոմեքենայի վարձակալության պայմանագրի պատճենը, որի համաձայն՝ Արմինե Պետրոսյանը 3 տարի ժամկետով, համապատասխան վարձավճարի դիմաց, Արմեն Խաչատրյանի տիրապետմանը և օգտագործմանն է հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող «SKODA» մակնիշի 2013 թվականի արտադրության, «35VT470» համարանիշի ավտոմեքենան: Միաժամանակ 30.05.2017 թվականի դատական նիստում որպես վկա հրավիրված Արմեն Խաչատրյանը հայտնել է, որ արդեն երեք տարի վարձակալության հի-

մունքներով և մշտապես վարում է «SKODA OCTAVIA TOUR 1.6» մակնիշի «35VT470» համարանիշի տրանսպորտային միջոցը:

Դատարանը մերժել է հայցը՝ նշելով, որ օրենքով սահմանված տուրքն ավտոկայանատեղում կայանած անձի կողմից վճարված չլինելու դեպքում տեղական տուրքը վճարելու պարտականություն ունեցող անձը՝ վարչական պատասխանատվության սուբյեկտը հանդիսանում է տվյալ տրանսպորտային միջոցի սեփականատերը՝ անկախ այն հանգամանքից, թե ում տիրապետման կամ օգտագործման ներքո է գտնվել տրանսպորտային միջոցը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Արմինե Պետրոսյանի վերաքննիչ բողոքը, անվավեր է ճանաչել վիճարկվող վարչական ակտը՝ պատճառաբանելով, որ Արմինե Պետրոսյանի և Արմեն Խաչատրյանի միջև 15.06.2015 թվականին կնքված ավտոմեքենայի վարձակալության պայմանագրով, դրա հիման վրա «SKODA OCTAVIA TOUR 1.6» մակնիշի «35VT470» համարանիշի տրանսպորտային միջոցը փաստացի Արմեն Խաչատրյանի օգտագործմանը հանձնված լինելու փաստով, որպես վկա հարցաքննված Արմեն Խաչատրյանի ցուցմունքով հաստատվել է, որ վարչական իրավախախտման կատարման պահի դրությամբ «SKODA OCTAVIA TOUR 1.6» մակնիշի «35VT470» համարանիշի տրանսպորտային միջոցը գտնվել է ոչ թե սեփականատիրոջ՝ Արմինե Պետրոսյանի, այլ կնքված վարձակալության պայմանագրի հիմքով Արմեն Խաչատրյանի փաստացի տիրապետման և օգտագործման ներքո, և ըստ դրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումը կատարվել է այլ անձի կողմից:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով թեև հիմնավորվում է, որ վարչական իրավախախտման պահին տրանսպորտային միջոցը վարել է ոչ թե դրա սեփականատերը, այլ երրորդ անձ, այդուհանդերձ վերոգրյալ դիրքորոշման լույսի ներքո, հիմք ընդունելով մինչև 09.01.2017 թվականը գործող խմբագրությամբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը՝ Արմինե Պետրոսյանը:

Նշվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ Ծառայության 26.01.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0207038 որոշումն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի փաստարկներն անհիմն են, իսկ Դատարանն իրավացիորեն վճիռ է կայացրել հայցը մերժելու մասին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 10.07.2018 թվականի թիվ ՄԴՈ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն առ այն, որ այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի գծով արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը, որը չի կարող ներառել այդ արտոնությամբ նախատեսված պետական տուրքի վճարը, ինչպես նաև այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.05.2018 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 14.06.2017 թվականի վճռին:
2. Վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/3166/05/17
2019թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/3166/05/17
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
 Ա. Սարգսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում քննելով Պետական եկամուտների կոմիտեի (իրավանա-
խորդ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե) (այսուհետ՝ Կո-
միտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.07.2019 թվականի որոշ-
ման դեմ՝ ըստ հայցի Ռունար Սալիմովիչի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի աշխատակազմի
իրավաբանական վարչության (այսուհետ՝ Վարչություն) 06.03.2017 թվականի թիվ 344293/02
որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ռունար Սալիմովիչը պահանջել է Վարչության 06.03.2017 թվա-
կանի թիվ 344293/02 «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» որոշումը (այսու-
հետ՝ Որոշում) ճանաչել անվավեր:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան)
26.09.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.07.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 26.09.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասը, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասը, իրավահարաբերության պահին գործող «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, 21-րդ հոդվածի 1-ին պարբերությունը:

Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել առ այն, որ ԵՏՄ անդամ պետությունների հետ փոխադարձ առևտրի վիճակագրական հաշվետվությունը ներկայացնող պատասխանատու սուբյեկտ չի դիտարկել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենին: Մասնավորապես՝ Ռոնար Սալիմովիինը, հանդիսանալով «ԱԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գլխավոր տնօրեն, պարտավոր էր վիճակագրական հաշվետվությունները սահմանված կարգով ներկայացնել Կոմիտե: Հետևաբար հենց Ռոնար Սալիմովիինը պետք է ենթարկվեր վարչական պատասխանատվության «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված տեղեկությունները Կոմիտե չներկայացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.07.2019 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վարչության Որոշման համաձայն՝ Ռոնար Սալիմովիինի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169²-րդ հոդվածի 1-ին պարբերության կիրառմամբ նշանակվել է տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս, հանդիսանալով Ընկերության տնօրեն, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում Կոմիտե չի ներկայացրել 2016 թվականի դեկտեմբեր ամսվա ԵՏՄ անդամ երկրների հետ իրականացրած փոխադարձ առևտրի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունը **(գ.թ. 8)**:

2) Ընկերության կողմից ԵՏՄ անդամ երկրների հետ փոխադարձ առևտուր իրականացնելու, դրա հիման վրա վիճակագրական հաշվետվություններ մաքսային մարմին չներկայացնելու և Ռոնար Սալիմովիինի նշված ընկերության տնօրեն հանդիսանալու հանգամանքները հանդիսանում են անվիճելի փաստեր:

3) Վարչության Որոշումը վերացնելու հայցապահանջի հիմքում Ռոնար Սալիմովիինը դրել է ոչ միայն այն փաստարկը, որ ինքը չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության Ընկերության վրա դրված պարտականությունը չկատարելու համար, այլ նաև վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում առեր-

ևույթ թույլ տրված ընթացակարգային խախտումներին առնչվող մի շարք այլ փաստարկներ, մասնավորապես՝ վիճարկվող վարչական ակտի անհամապատասխանությունը հիմնավորվածության և գրավոր վարչական ակտին ներկայացվող այլ պահանջներին, ինչպես նաև իրավահարաբերության պահին գործող «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանված կանոնների չպահպանվածությունը և այլն (գ.թ. 2-5):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ իրավաբանական անձի կողմից վիճակագրական հաշվետվությունները և վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելու համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք սահմանափակ պարասխանատվությանը ընկերության տնօրենը ենթակա է Վարչական իրավասխարհումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169²-րդ հոդվածով սահմանված պարասխանատվության՝ ընկերության վրա դրված վիճակագրական տեղեկությունները (հաշվետվությունները) մաքսային մարմին ներկայացնելու պարտականությունը չկատարելու համար:

Վարչական իրավասխարհումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավասխարհում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անգոյշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավասխարհումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ իրավաբանական անձանց, օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների պաշտոնատար անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելը կամ սահմանված կարգի խախտումով (սահմանված ժամկետների կամ ամբողջ ծավալի խախտումներով կամ աղավաղումներով) ներկայացնելը՝ առաջացնում է նախագոյացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավասխարհումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ օրենսդիրը վարչական պատասխանատվություն է սահմանել պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված կարգի

խախտումով (սահմանված ժամկետների կամ ամբողջ ծավալի խախտումներով կամ աղավաղումներով) ներկայացնելու համար: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությունում ամրագրված զանցակազմի հատկանիշները հանգում են հետևյալին.

1. զանցանքի օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում պետական վիճակագրության կազմակերպման կարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

2. Զանցանքի սուբյեկտը հատուկ է՝

- իրավաբանական անձանց պաշտոնատար անձը,

- օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձը,

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձը,

- հիմնարկների պաշտոնատար անձը,

- անհատ ձեռնարկատերը:

3. Զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկով.

- պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելը,

- պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը սահմանված կարգի խախտումով, այսինքն՝ սահմանված ժամկետների կամ ամբողջ ծավալի խախտումներով կամ աղավաղումներով, ներկայացնելը:

4. Զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքի առկայությունն է, որը դրսևորվում է դիտարկությամբ կամ անզգուշությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության պահին պետական վիճակագրության կազմակերպման կարգը սահմանված էր «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով, որն ուժը կորցրել է 09.04.2018 թվականին:

Իրավահարաբերության պահին գործող «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է իրավաբանական անձանց, օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների, անհատ ձեռնարկատերերի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական մարմիններ չհանդիսացող պետական հիմնարկների (...), ինչպես նաև քաղաքացիների (վիճակագրական տեղեկություններ տրամադրողներ) վրա:

Նույն օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական վիճակագրության մասին օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների, ինչպես նաև պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց համար առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով: Դիտարկումների համար անհրաժեշտ վիճակագրական հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում տասնհինգ օրվա ընթացքում կատարվում է գրավոր նախազգուշացում: Սահմանված ժամկետից հաշվետվությունները մեկ ամսից ավելի ուշացնելու և գրավոր նախազգուշացման ներկայացումից տասնհինգ օրվա ընթացքում հաշվետվությունը չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով (ոչ արժանահա-

վատ տվյալներ, դրանց ոչ ամբողջականորեն արտացոլում և այլ աղավաղումներ) ներկայացնելու (անկախ ժամկետից) համար վիճակագրական հաշվետվություններ ներկայացնողները ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով (...):

Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասով տնտեսվարող սուբյեկտների համար սահմանված է Հայաստանի Հանրապետության և Միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի վերաբերյալ Կառավարության սահմանած վիճակագրական տեղեկատվությունը ներկայացնելու պարտականություն:

Այսպես՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և Միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի վերաբերյալ Կառավարության սահմանած վիճակագրական տեղեկատվությունը ներկայացվում է մաքսային մարմին՝ Կառավարության սահմանած կարգով՝ ոչ ուշ, քան ապրանքների առաքման (ստացման) ամսվան հաջորդող ամսվա 10-ը:

Կառավարությունը, հիմք ընդունելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասում իրեն վերապահված լիազորությունը, 23.04.2014 թվականին ընդունել է թիվ 447-Ն որոշումը, որով հաստատվել են Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի վիճակագրության վարման կանոնները: Կառավարության այդ որոշումը գործել է սույն գործով վիճելի իրավահարաբերության պահին և ուժը կորցրել է 01.10.2018 թվականին՝ փոխարինվելով Կառավարության մեկ այլ՝ 28.06.2018 թվականի թիվ 737-Ն որոշմամբ:

Կառավարության 23.04.2014 թվականի թիվ 447-Ն որոշմամբ հաստատված կանոնների 5-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի մասին պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձևավորումն իրականացվում է ապրանքների փոխադրման հաշվառման վիճակագրական ձևում (...) արտացոլված տվյալների հիման վրա: Վիճակագրական ձևը հանդիսանում է նույն կանոնների 7-րդ կետում նշված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններին ներկայացվող հաշվետվության ձև:

Նույն կանոնների 7-րդ կետի համաձայն՝ անկախ ապրանքներ տեղափոխող տրանսպորտի տեսակից՝ վիճակագրական ձևը լրացվում է բոլոր ապրանքների համար՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձի կողմից, ով կնքել է գործարքը, կամ ում անունից (հանձնարարությամբ) կնքվել է այդ գործարքը, կամ ով ունի ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունք (այսուհետ՝ դիմող):

Նույն կանոնների 10-րդ կետի համաձայն՝ դիմողը պատասխանատվություն է կրում վիճակագրական ձևի ժամանակին ներկայացման, դրա մեջ արտացոլված տվյալների լրիվության և հավաստիության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտուր իրականացնող սուբյեկտները պարտավոր էին Կառավարության հաստատած կանոններին համապատասխան կարգով, ձևով և ժամկետներում մաքսային մարմին ներկայացնել հավաստի վիճակագրական տեղեկություններ: Ընդ որում, վիճակագրական տեղեկություն-

ների չներկայացնելու կամ սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացնելու կամ ոչ հավաստի տվյալներ պարունակող վիճակագրական ձևով ներկայացնելու համար առաջանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված վարչական պատասխանատվություն, այն է՝ նախագրուշացում կամ տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ խնդրո առարկա հասարակական հարաբերությունները նույն կերպ են կարգավորվում նաև ներկայումս գործող՝ Կառավարություն 28.06.2018 թվականի թիվ 737-Ն որոշմամբ, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի վիճակագրության վարման կանոնները:

Այսպես՝ նշված կանոնների 6-րդ կետով սահմանված է, որ ՀՀ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը (...), ով կնքել է գործարք կամ ում անունից (հանձնարարությամբ) կնքվել է գործարքը, համաձայն որի ապրանքները ԵՏՄ անդամ պետությունների տարածքներից ներմուծվում են ՀՀ տարածք կամ ՀՀ տարածքից արտահանվում են ԵՏՄ անդամ պետությունների տարածքներ, իսկ նման գործարքի բացակայության դեպքում՝ ապրանքների ներմուծման կամ արտահանման պահին տնօրինման, օգտագործման և (կամ) տիրապետման իրավունք ունեցող անձը պարտավոր է նույն կանոնների 8-րդ կետով սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ներկայացնել հավաստի տեղեկություններ պարունակող վիճակագրական ձևեր: ՀՀ մաքսային մարմինները հսկողություն են իրականացնում վիճակագրական ձևերի ժամանակին ներկայացման և դրանցում պարունակվող տվյալների հավաստիության նկատմամբ:

Իսկ նշված կանոնների 12-րդ կետով նախատեսված է, որ ՀՀ մաքսային մարմիններին վիճակագրական ձևը չներկայացնելու կամ սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ ոչ հավաստի տվյալներ պարունակող վիճակագրական ձև ներկայացնելու դեպքում կանոնների 6-րդ կետում նշված անձը կրում է վարչական պատասխանատվություն՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169²-րդ հոդվածի:

Այսպիսով, իրավահարաբերության պահին գործող «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև իրավահարաբերության պահին գործող Կառավարության 23.04.2014 թվականի թիվ 447-Ն որոշման վկայակոչված իրավական նորմերի համակարգային վերլուծությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի վերաբերյալ Կառավարության սահմանած վիճակագրական տեղեկատվությունը՝ որպես պետական վիճակագրական փաստաթուղթ, մաքսային մարմին ներկայացնելու պարտականությունը կրում է փոխադարձ առևտրով զբաղվող իրավաբանական անձը: Միևնույն ժամանակ, տվյալ իրավաբանական անձի կողմից քննարկվող պարտականությունը չկատարելու համար վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտը ոչ թե իրավաբանական անձն է, այլ այդ իրավաբանական անձի համապատասխան պաշտոնատար անձը:

Վճռաբեկ դատարանի նշված դատողությունը հիմնված է այն իրողության վրա, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել միայն ֆիզիկական անձը, այլ ոչ երբեք իրավաբանական անձը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքը չի նախատեսում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իրավաբանական անձի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության սուբյեկտ չհանդիսանալու հանգամանքը հաստատված է նաև կայուն իրավակիրատ պրակտիկայով: Այսպես, օրինակ, դեռևս 2006 թվականին կայացված որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ և 11-րդ հոդվածների բովանդակության վերլուծությունից հետևում է, որ վարչական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական անձինք: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ իրավաբանական անձը չի կարող համարվել վարչական իրավախախտման սուբյեկտ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իմաստով և ենթարկվել պատասխանատվության նույն օրենսգրքով սահմանված կարգով (*տե՛ս, Աշխատանքի պետական տեսչությունն ընդդեմ «Թովմասյան Համլետ» ՍՊԸ-ի թիվ 3-1787(ՏԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի որոշումը*):

Այսպիսով, իրավաբանական անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգի բացակայության պատճառով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ օրենսդիրը պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով ներկայացնելու զանցակազմի սուբյեկտ է համարել ոչ թե իրավաբանական անձին, այլ դրա համապատասխան պաշտոնատար անձին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Ռոնար Սալիմովի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Վարչության Որոշումը: Վարչության Որոշմամբ Ռոնար Սալիմովի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169²-րդ հոդվածի 1-ին պարբերության կիրառմամբ նշանակվել է տուգանք՝ 20.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս, հանդիսանալով Ընկերության տնօրեն, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում Կոմիտե չի ներկայացրել 2016 թվականի դեկտեմբեր ամսվա ԵՏՄ անդամ երկրների հետ իրականացրած փոխադարձ առևտրի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունը:

Դատարանը բավարարել է Ընկերության հայցը և անվավեր է ճանաչել Վարչության Որոշումը: Դատարանը պատճառաբանել է, որ ԵՏՄ անդամ պետությունների հետ փոխադարձ առևտրին վերաբերող գործունեություն իրականացվել է ոչ թե հայցվորի, այլ՝ հայցվորի ղեկավարած ընկերության կողմից: Իսկ վիճարկվող որոշմամբ որևէ իրավական ակտի մատնանշմամբ չի հիմնավորվել, թե արդյոք համապատասխան վիճակագրական հաշվետվության ներկայացման պարտականությունը կրում է հայցվորը:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ «(...) [Որոշումն] առհասարակ չի պարունակում որևէ հիմնավորում՝ համապատասխան վիճակագրական հաշվետվությունը ներկայացնելու պարտականությունը հենց հայցվորի վրա դրված լինելու վերաբերյալ: «(...) [Որոշումից] պարզ չէ, թե ինչ հանգամանքների գնահատմամբ է վարչական մարմինը

որոշել, որ սույն դեպքում պարասիսանարվոթյան սուբյեկտն է հանդիսանում հենց Ընկերության տնօրեն Ռոնար Սալինուլլինը»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով անվիճելի փաստեր են, որ վիճարկվող վարչական ակտի կայացման պահին Ռոնար Սալինուլլինը հանդիսացել է Ընկերության տնօրեն: Ընկերության կողմից Մաքսային միության անդամ երկրների հետ իրականացվել է փոխադարձ առևտուր, և վերջինիս կողմից Մաքսային միության անդամ երկրների հետ իրականացված փոխադարձ առևտրին վերաբերող 2016 թվականի դեկտեմբեր ամսվա վիճակագրական հաշվետվությունները մաքսային մարմին չեն ներկայացվել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ընկերությունը՝ որպես Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրով զբաղվող իրավաբանական անձ, կրում է այդ առևտրի վերաբերյալ Կառավարության սահմանած վիճակագրական տեղեկատվությունը՝ որպես պետական վիճակագրական փաստաթուղթ, մաքսային մարմին ներկայացնելու պարտականություն: Մինևույն ժամանակ, Ընկերության կողմից տվյալ պարտականությունը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտը ոչ թե Ընկերությունն է, այլ դրա համապատասխան պաշտոնատար անձը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտը՝ Ընկերության համապատասխան պաշտոնատար անձը, Ընկերության տնօրեն Ռոնար Սալինուլլինն է:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ (...) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում ստեղծվում է գործադիր մարմին (կոլեգիալ և (կամ) միանձնյա), որն ընթացիկ ղեկավարություն է իրականացնում նրա գործունեության նկատմամբ և հաշվետու է նրա մասնակիցների ընդհանուր ժողովին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընկերության կառավարման մարմինների իրավասությունը, ինչպես նաև նրանց որոշումների ընդունման և ընկերության անունից հանդես գալու կարգը սահմանվում են նույն օրենսգրքին, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքին ու ընկերության կանոնադրությանը համապատասխան:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից (...):

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ ընկերության գործադիր մարմինը (գլխավոր տնօրենը, նախագահը և այլք) ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընկերության գործադիր մարմնի դերում կարող է հանդես գալ միայն ֆիզիկական անձը, բացառությամբ նույն օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված դեպքի:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընկերության գործադիր մարմինը՝

ա) առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

բ) տալիս է լիազորագրեր՝ ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

գ) տալիս է հրամաններ՝ ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր.

դ) իրականացնում է նույն օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ՝ ընդհանուր ժողովի, ընկերության խորհրդի իրավասությանը չվերապահված այլ իրավունքներ:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ընթացիկ ղեկավարությունն իրականացվում է գործադիր մարմնի կողմից: Ընկերության գործադիր մարմինը կարող է հանդես գալ գլխավոր տնօրենի, նախագահի կամ այլ պաշտոնների տեսքով: Ընդ որում, որպես կանոն, գործադիր մարմին կարող է լինել ֆիզիկական անձը: Միաժամանակ, օրենքում, ի թիվս այլ իրավասությունների, սահմանված է, որ ընկերության գործադիր մարմինն առանց համապատասխան լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը այլ սուբյեկտների հետ հարաբերություններում:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրով զբաղվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ այդ առևտրի վերաբերյալ Կառավարության սահմանած վիճակագրական տեղեկատվությունը մաքսային մարմին ներկայացնելու պարտականությունը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի դերում հանդես եկող ֆիզիկական անձն է (գլխավոր տնօրեն, նախագահ և այլն):

Վերոգրյալ վերլուծությունների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված իրավախախտման համար վարչական պատասխանատվության է ենթակա Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրով զբաղվող Ընկերության անունից հաղես գալու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (տնօրենը)՝ Ռուսար Սալիմովինը, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Փաստորեն, սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Վարչության Որոշումը, չէր կարող անվավեր ճանաչվել այն հիմքով, որ վարչական մարմինը չի հիմնավորել Ռուսար Սալիմովինի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169²-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ վարչական պատասխանատվության ենթակա լինելը: Նշված հանգամանքը լրացուցիչ հիմնավորման կարիք չունի, քանի որ այն բխում է թե՛ վերոնշյալ օրենսդրական կարգավորումների բովանդակությունից, թե՛ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հիմքով վարչական պատասխանատվության քննադատում հաստատված կայուն իրավակիրառ պրակտիկայից: Մինչդեռ տվյալ դեպքում Դատարանը Վարչության Որոշումն ան-

վավեր ճանաչելու մասին դատական ակտ է կայացրել բացառապես այդ հիմքով՝ նշելով, որ «(...) բացակայում է հայցվորի կողմից մատչանշված մյուս փաստաթղթերի գնահատման անհրաժեշտությունը (...)»: Իսկ Վերաքննիչ դատարանն իր հերթին համաձայնել է Դատարանի վերոգրյալ դիրքորոշման հետ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ անվավեր ճանաչման ենթակա լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումներն անհիմն են:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի մասցած հիմքերն ու հիմնավորումները քննության առարկա դարձնելու համար գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորճագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.07.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/0602/05/16
2019թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/0602/05/16
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
 Ա. Սարգսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՎՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի մարտի 22-ին
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամտունների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի 05.06.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Անիկոմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարար-
ություն) 11.11.2015 թվականի թիվ 5012965 ստուգման ակտը մասնակի՝ 1-ին և 4-րդ կետերի
մասով, վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է մասնակի 1-ին և 4-րդ կետերի մասով,
վերացնել Նախարարության 11.11.2015 թվականի թիվ 5012965 ստուգման ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան)
28.04.2016 թվականի որոշմամբ՝ Նախարարությունը վերակազմակերպման հիմքով փոխա-
րինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեով:

Դատարանի 29.12.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.06.2017 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 29.12.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կերպը, «Սահմանափակ պարտահանարկությանը ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստանձնացված սրորտաբաժանումների, հիմնարկների և անհար ձեռնարկարկերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հարկային պարտավորություններ առաջադրելու համար հարկային մարմինը հիմք է ընդունում ոչ թե Ընկերության բաժնեմասի օտարման գործարքի կնքման պահը, այլ Ընկերության մասնակիցների վերաբերյալ կատարված պետական գրանցման պահը, որի ուժով Ընկերության բաժնեմասի օտարման գործարքի հիման վրա կատարված մասնակիցների փոփոխությունը ստանում է իրավաբանական ուժ: Փաստորեն, Ընկերության բաժնեմասերում տեղի ունեցած փոփոխությունները ենթակա էին պետական գրանցման, և մասնակիցները կարող են համարվել փոփոխված միայն այդ փոփոխության պետական գրանցման պահից: Հետևաբար Արայիկ Ստեփանյանի մասնակցությունն Ընկերությունում դադարել է մասնակիցների փոփոխության պետական գրանցման պահից, այլ ոչ թե Արայիկ Ստեփանյանի և Էդուարդ Ստեփանյանի միջև կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագրի ստորագրման օրվանից: Հետևաբար հարկային մարմինն իրավաչափորեն է արձանագրել, որ 2012 թվականին Արայիկ Ստեփանյանը միաժամանակ հանդիսացել է Ընկերության 100 տոկոս բաժնեմասի և «Դարմին» ՍՊԸ-ի 40 տոկոս բաժնեմասի սեփականատեր, ինչն էլ նշանակում է, որ վիճարկվող ստուգման ակտով Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումն իրավաչափ է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.06.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերությունն իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 30.10.2000 թվականին, իսկ նրա միակ մասնակիցը (100 տոկոս բաժնեմասով) մինչև 31.07.2014 թվականը հանդիսացել է Արայիկ Ստեփանյանը, ապա՝ Էդուարդ Արայիկի Ստեփանյանը (**հատոր 2-րդ, գ.թ. 31-33**):

2) «Դարմին» ՍՊԸ-ն իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է

28.10.2005 թվականին, իսկ Արայիկ Ստեփանյանը 03.05.2006 թվականից հանդիսանում է «Դարմին» ՍՊԸ-ի մասնակից (40 տոկոս բաժնեմասով) (**հատոր 2-րդ, գ.թ. 34-35**):

3) ՀՀ ֆինանսների նախարարի 24.08.2015 թվականի թիվ 5012965 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում Նախարարության ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից 11.11.2015 թվականին ընդունվել է թիվ 5012965 ստուգման ակտը, որի 4-րդ կետով արձանագրվել է, որ Ընկերության միակ մասնակից Արայիկ Ստեփանյանը 2012 թվականի ընթացքում միաժամանակ հանդիսացել է նաև «Դարմին» ՍՊԸ-ի 40 տոկոս բաժնեմասով մասնակից: Հետևաբար, ըստ ստուգման ակտի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի ուժով Ընկերությունը 2012 թվականի ընթացքում համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող, սակայն ավելացված արժեքի հարկ չի հաշվարկել ու չի վճարել: Ըստ այդմ, Ընկերության նկատմամբ 2012 թվականի համար ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 5.165.613 ՀՀ դրամի չափով, որից 2.026.104 ՀՀ դրամ՝ ապառք, 2.026.104 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 1.108.405 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված տույժ և 5.000 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածով նախատեսված տուգանք: Իսկ ստուգման ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ դրա 4-րդ կետում նկարագրված հիմքով Ընկերությունը 2012 թվականին պետք է հանդիսանար ԱԱՀ վճարող, որպիսի պայմաններում առաջանում է շահութահարկի գծով բյուջեից վերադարձման ենթակա գումար՝ 19.206 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 32-35**):

4) Արայիկ Ստեփանյանի և Էդուարդ Ստեփանյանի միջև 05.11.2011 թվականին կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Արայիկ Ստեփանյանն Ընկերությունում ունեցած իր 100 տոկոս բաժնեմասը 50.000 ՀՀ դրամով վաճառել է Էդուարդ Ստեփանյանին (**հատոր 1-ին, գ.թ. 40**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ավելացված արժեքի հարկ վճարելու՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի ուժով ծագող պարտականության կատարման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև

վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե սահմանափակ պարասիսանսարվությամբ ընկերությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի ուժով համարվում է արդյոք ավելացված արժեքի հարկ վճարող, եթե դրա միակ մասնակիցը, ում միաժամանակ պարկանում է մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալի 20 փոկոսից ավել բաժնեմասը, մինչև հաշվետու տարվա սկիզբը վաճառել է առաջին ընկերությունում իրեն պարկանող 20 փոկոսից ավել բաժնեմասը, սակայն մինչև հաշվետու տարվա սկիզբը բաժնեմասի օտարման պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

Մինչև 01.01.2018 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն, վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 2-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և նույն օրենքի 6-րդ հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք (...):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շեմը) գերազանցող մասի համար:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին), ընդ որում, այս դեպքում կազմակերպություններից ոչ մեկի նկատմամբ ԱԱՀ-ի

շենը չի կարող տարածվել:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում անդրադարձել է մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ իրավադրույթների մեկնաբանությանը: ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում օրենսդիրը նախատեսել էր, որ անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ավելացված արժեքի հարկ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը գերազանցող մասի համար: Միաժամանակ օրենսդիրը նախատեսել էր այն փաստակազմերը, որոնց առկայության դեպքում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված կարգավորումը կիրառելի չէր (*տե՛ս*, «Անջելս Կոր» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԳ/9770/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդպիսի փաստակազմ էր նախատեսված նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետում: Այս կետի համաձայն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթները չեն տարածվում այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին): Փաստորեն, կազմակերպության նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված իրավական հետևանքը կիրառելի է միայն այն դեպքում, եթե տվյալ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) սեփականատեր անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին միաժամանակ չի պատկանում մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին): Հետևաբար ցանկացած իրավասու մարմին մինչև կոնկրետ կազմակերպության նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված իրավական հետևանքի կիրառելիության հարցը լուծելը, պետք է պարզեր՝ արդյոք տվյալ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված իրավադրույթի ուժով կազմակերպության նկատմամբ ավելացված արժեքի հարկի շեմը չի կիրառվում, և այդ կազմակերպությունը համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի,

2) այդ ֆիզիկական անձին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնետնաս, փայաբաժին):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված վերոգրյալ կանոնի ճիշտ կիրառության համար կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե որ պահից է անձը համարվում կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի սեփականատեր (կազմակերպության մասնակից, բաժնետեր կամ փայատեր)՝ հատկապես կազմակերպության բաժնետոմսերի, բաժնետնասերի կամ փայաբաժինների օտարման դեպքում: Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել վերոնշյալ հարցը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների կողմից իրենց պատկանող բաժնետնասերի օտարման համատեքստում:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձի հիմնադիրները կնքում են պայմանագիր, որով որոշում են իրավաբանական անձի հիմնադրման համար համատեղ գործունեության կարգը, իրավաբանական անձին իրենց գույքը հանձնելու և նրա կառավարման իրենց մասնակցության պայմանները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի հիման վրա հիմնադիրները մշակում են ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթը նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի հաստատած կանոնադրությունն է:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության հիմնադիր փաստաթուղթ է հանդիսանում նրա հիմնադիրների (մասնակիցների) կողմից հաստատված կանոնադրությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ (...) ընկերության կանոնադրությունը պետք է պարունակի՝

ա) ընկերության անվանումը.

բ) ընկերության գտնվելու վայրը.

զ) ընկերության կանոնադրական կապիտալի չափը, մասնակիցների բաժնեմասերի չափերը.

դ) տեղեկություններ ընկերության մասնակիցների մասին (...):

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընկերության կանոնադրությունում փոփոխությունները կատարվում են ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության կանոնադրությունում կատարված փոփոխությունները երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում նրանց պետական գրանցման պահից, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին տեղյակ պահելուց հետո:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պահից:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցներն իրավունք ունեն, ի թիվս այլնի, օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի *(նախկինում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենք. օրենքի վերնագիրը փոփոխվել է և այն շարադրվել է նոր խմբագրությամբ 19.03.2012 թվականին ընդունված և 25.07.2012 թվականին ուժի մեջ մտնող՝ ««Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով)* 26-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում, ի թիվս այլ տեղեկությունների, գրառվում են մասնակիցների կազմը և տեղեկություններ նրանց վերաբերյալ, մասնակիցների՝ իրավաբանական անձի մասնակից դառնալու, մասնակցության չափի փոփոխության և մասնակցությունը դադարեցնելու տարին, ամիսը, ամսաթիվը:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ փոփոխությունները համարվում են կատարված դրանք գրանցամատյանում գրառելու պահից (...):

Մինչև 25.07.2012 թվականը գործող խմբագրությամբ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «ը» և «ժ» կետերի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառվում են հետևյալ տեղեկությունները՝ հիմնադիրների (մասնակիցների, անդամների, գործընկերների, բաժնետերերի) կազմը և տեղեկություններ նրանց վերաբերյալ (ֆիզիկական անձանց դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության (հաշվառման) վայրը, իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, գրանցման վկայականի տվյալները, գտնվելու վայրը), կանոնադրական կապիտալում (բաժնեեռվաք կապիտալում, բաժնային ֆոնդում և այլն) հիմնադիրների (մասնակիցների, անդամների, գործընկերների, բաժնետերերի) ներդրումների չափը:

Մինչև 25.07.2012 թվականը գործող խմբագրությամբ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փոփոխությունների պետական գրանցումը համարվում է կատարված՝ քարտում լրացված տեղեկությունները պետական գրանցամատյանում գրառելու պահից (...):

Նախկինում կայացրած որոշումներից մեկում ՀՀ վճարել դատարանը փաստել է, որ ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասն օտարել այլ մասնակցի կամ երրորդ անձի, սակայն բաժնեմասը ձեռք բերողի համար մասնակցության իրավունքը ծագած կհամարվի պետական գրանցման պահից: Ընդ որում, մասնակցի վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ բաժնեմասի չափը պետք է գրանցվի իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում, և փոփոխությունը պետք է արտացոլվի ընկերության կանոնադրությունում: Ավելին՝ օրենսդրությամբ սահմանվում են այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են բաժնեմասի օտարումից ծագող փոփոխությունների գրանցման համար: ՀՀ վճարել դատարանն արձանագրել է, որ նման կարգավորումն ինքնանպատակ չէ: Այսպես՝ ՀՀ վճարել դատարանն արձանագրել է, որ կանոնադրությունն ընկերության իրավական կարգավիճակը սահմանող կարևորագույն փաստաթուղթ է: Կանոնադրությունը կարգավորում է հիմնադիրների (մասնակիցների) ներքին փոխհարաբերությունները, դրանով սահմանվում են, մասնավորապես, ընկերության անվանումը, գտնվելու վայրը, գործունեության նպատակը և առարկան, կառավարման և վերահսկողության մարմինները, շահույթի բաշխման կարգը և այլն: Ըստ ՀՀ վճարել դատարանի՝ ընկերության, ընկերության մասնակիցների, ընկերության կանոնադրության (նաև փոփոխությունների) գրանցումն ինքնանպատակ չէ: Բացի այն, որ պետական գրանցումը հնարավորություն է տալիս միասնական ամբողջական տեղեկատվություն հավաքել պետության տարածքում գործող իրավաբանական անձանց մասին, այն նաև հնարավորություն է տալիս հանրությանը՝ ամբողջական տեղեկություններ ստանալ իրավաբանական անձանց մասին: Դա հատկապես կարևորվում է առևտրային գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, այդ թվում՝ ընկերությունների համար, քանի որ վերջիններիս ապագա հնարավոր կոնտրագենտները հնարավորություն են ունենում տեղեկություններ ձեռք բերել իրենց ապագա գործընկերների մասին՝ բացահայտելով վերջիններիս գործունեության նպատակները, կառավարման մարմինների արդյունավետությունը, մասնակիցների շրջանակը, ինչը ոչ պակաս կարևոր է, քանի որ մասնակիցների շրջանակով պայմանավորված՝ ապագա կոնտրագենտները կարող են հրաժարվել պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել տվյալ իրավաբանական անձի հետ: Հետևաբար ՀՀ վճարել դատարանը կարևորել է, որ անկախ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների կամ հնարավոր մասնակիցների ներքին հարաբերություններից, ներքին պայմանավորվածությունից՝ բաժնեմասը ձեռք բերող անձի իրավունքը ծագում է միայն ընկերության մասնակիցների գրանցամատյանում գրանցվելու, ընկերության կանոնադրությունում փոփոխություն կատարելու և այն գրանցելու պահից (*լրե՛ս, Մասաննա Խաչարյանն ընդդեմ Վիզեն Ալանյան Ավանեսյանի թիվ ԵԿԿ/0779/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճարել դատարանը գտնում է, որ եթե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցն օտարում է իր բաժնեմասը, ապա բաժնեմասի օտարման գործարքի հիման վրա ընկերության բաժնեմասը ձեռք բերած անձը համարվում է ընկերության բաժնեմասի սեփա-

կանատեր (մասնակից) իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում 'նրա' որպես այդպիսին գրանցվելու պահից: Փաստորեն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակից համարվելու հանգամանքը կախված է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում անձի՝ որպես ընկերության մասնակից գրանցված լինելու փաստի առկայությունից կամ բացակայությունից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի ուժով համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող այն դեպքում, երբ իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից կատարված գրանցման համաձայն՝ այդ ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետնասը) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այնպիսի ֆիզիկական անձի, որն իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրանցված է որպես մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնետոմս, բաժնետաս, փայաբաժին) սեփականատեր: Ընդ որում, այդ ֆիզիկական անձին պատկանող՝ նշված իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի օտարման գործարքի առկայությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ նշված իրավաբանական անձանց նկատմամբ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված իրավադրույթի կիրառությունը բացառելու համար, քանի որ իրավաբանական անձանց մասնակիցների փոփոխությունը՝ որպես իրավաբանական փաստ, ծագում է ոչ թե իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի որոշակի մասի օտարման գործարքի կնքման, այլ միայն այդ գործարքից բխող իրավունքների պետական գրանցման պահից: Փաստորեն, մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված իրավադրույթի կիրառության համար սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի (բաժնետնասի) սեփականատեր ֆիզիկական անձի կողմից իր բաժնետնասի օտարման գործարքը որևէ իրավաբանական նշանակություն չունի, եթե այդ գործարքից բխող իրավունքները (մասնակիցների փոփոխությունը) օրենքով սահմանված կարգով չեն ստացել պետական գրանցում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունն իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցում է ստացել 30.10.2000 թվականին, իսկ նրա միակ մասնակիցը (100 տոկոս բաժնետնասով) մինչև 31.07.2014 թվականը հանդիսացել է Արայիկ Ստեփանյանը: Արայիկ Ստեփանյանի և Էդուարդ Ստեփանյանի միջև 05.11.2011 թվականին կնքված բաժնետնասի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Արայիկ Ստեփանյանն Ընկերությունում ունեցած իր 100 տոկոս բաժնետնասը վաճառել է Էդուարդ Ստեփանյանին, սակայն այդ օտարման գործարքից ծագած իրավունքները (Ընկերության մասնակիցների փոփոխությունը) պետական գրանցում են ստացել 31.07.2014 թվականին: «Դարմին» ՍՊԸ-ն իրավաբանական

անձանց պետական ռեզիստորում գրանցում է ստացել 28.10.2005 թվականին, իսկ 03.05.2006 թվականից Արայիկ Ստեփանյանը հանդիսանում է «Դարմին» ՍՊԸ-ի մասնակից՝ 40 տոկոս բաժնեմասով:

ՀՀ ֆինանսների նախարարի 24.08.2015 թվականի թիվ 5012965 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում Վարչության կողմից 11.11.2015 թվականին ընդունվել է թիվ 5012965 ստուգման ակտը, որի 4-րդ կետով արձանագրվել է, որ Ընկերության միակ մասնակից Արայիկ Ստեփանյանը 2012 թվականի ընթացքում միաժամանակ հանդիսացել է նաև «Դարմին» ՍՊԸ-ի 40 տոկոս բաժնեմասով մասնակից: Հետևաբար, ըստ ստուգման ակտի, իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի ուժով Ընկերությունը 2012 թվականի ընթացքում համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող, սակայն ավելացված արժեքի հարկ չի հաշվարկել ու չի վճարել: Ըստ այդմ, Ընկերության նկատմամբ 2012 թվականի համար ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 5.165.613 ՀՀ դրամի չափով, որից 2.026.104 ՀՀ դրամ՝ ապառք, 2.026.104 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 1.108.405 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված տույժ և 5.000 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածով նախատեսված տուգանք: Իսկ ստուգման ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ դրա 4-րդ կետում նկարագրված հիմքով Ընկերությունը 2012 թվականին պետք է հանդիսանար ԱԱՀ վճարող, որպիսի պայմաններում առաջանում է շահութահարկի գծով բյուջեից վերադարձման ենթակա գումար՝ 19.206 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը դիմել է դատարան՝ Վարչության 11.11.2015 թվականի թիվ 5012965 ստուգման ակտի 1-ին և 4-րդ կետերի վիճարկման հայցով, որի հիման վրա հարուցվել է սույն վարչական գործը:

Դատարանը բավարարել է Ընկերության հայցը և անվավեր է ճանաչել Վարչության 11.11.2015 թվականի թիվ 5012965 ստուգման ակտի 1-ին և 4-րդ կետերը: Դատարանը պատճառաբանել է, որ Ընկերությունը 2012 թվականին չի հանդիսացել ավելացված արժեքի հարկ վճարող: Ըստ Դատարանի՝ Արայիկ Ստեփանյանի՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասի նկատմամբ ունեցած իրավունքները դադարել են իր բաժնեմասն Էդուարդ Ստեփանյանին օտարելու մասին պայմանագրի կնքման պահից՝ 05.11.2011 թվականից, քանի որ նշված պայմանագիրը նոտարական վավերացում չի պահանջում և ուժի մեջ է մտել ստորագրման պահից: Հետևաբար, մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետը կիրառելի չէ Ընկերության նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից, որ Արայիկ Ստեփանյանի և Էդուարդ Ստեփանյանի միջև 05.11.2011 թվականին կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագրից բխող՝ Ընկերության մասնակցի փոփոխության պետական գրանցումը կատարվել է 31.07.2014 թվականին:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ համաձայնելով Դատարանի պատճառաբանությունների հետ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դա-

տարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ընկերության հիմնադրումից ի վեր՝ մինչև 31.07.2014 թվականը, Ընկերության միակ մասնակից է հանդիսացել Արայիկ Ստեփանյանը (100 տոկոս բաժնեմասով): Թեև 05.11.2011 թվականին կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագրով Արայիկ Ստեփանյանն Էդուարդ Ստեփանյանին է վաճառել Ընկերությունում ունեցած իր 100 տոկոս բաժնեմասը, սակայն այս գործարքից բխող իրավունքները (Ընկերության մասնակիցների փոփոխությունը) պետական գրանցում են ստացել 31.07.2014 թվականին: Հետևաբար, 05.11.2011 թվականին կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագրի առկայությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ 2012 թվականի հաշվետու տարվա ընթացքում Ընկերության նկատմամբ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված իրավադրույթի կիրառությունը բացառելու համար, քանի որ իրավաբանական անձանց մասնակիցների փոփոխությունը՝ որպես իրավաբանական փաստ, ծագում է ոչ թե իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսի կամ ավելի մասի օտարման գործարքի կնքման, այլ միայն այդ գործարքից բխող իրավունքների պետական գրանցման պահից: Փաստորեն, մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված իրավադրույթի հիմքով Ընկերությանը 2012 թվականի հաշվետու տարվա ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարելու կամ չհամարելու հարցում Ընկերության միակ մասնակից Արայիկ Ստեփանյանի կողմից իր բաժնեմասի օտարման գործարքը որևէ իրավաբանական նշանակություն չունի, քանի որ այդ գործարքից բխող իրավունքները (մասնակիցների փոփոխությունը) օրենքով սահմանված կարգով պետական գրանցում են ստացել իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից 2012 թվականից հետո՝ 31.07.2014 թվականին:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ տվյալ դեպքում առկա են Ընկերության նկատմամբ 2012 թվականի հաշվետու տարվա ընթացքում ավելացված արժեքի հարկի շեղել չկիրառելու և Ընկերությանը 2012 թվականի հաշվետու տարվա ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարելու՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետով սահմանված բոլոր պայմանները. դրանք են՝

1) Ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսից ավելի մասը (100 տոկոս բաժնեմասը) 2012 թվականի ընթացքում պատկանել է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի՝ Արայիկ Ստեփանյանին,

2) Արայիկ Ստեփանյանին 2012 թվականի ընթացքում միաժամանակ պատկանել է մեկ այլ կազմակերպության՝ «Դարմին» ՍՊԸ-ի, կանոնադրական կապիտալի 20 տոկոսից ավելի մասը (40 տոկոս բաժնեմասը):

Այսպիսով, սույն գործով վիճարկվող վարչական ակտով՝ Վարչության 11.11.2015 թվականի թիվ 5012965 ստուգման ակտով, իրավացիորեն է արձանագրվել, որ Ընկերությունը 2012 թվականի ընթացքում հանդիսացել է ավելացված արժեքի հարկ վճարող և պարտավոր էր օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հաշվարկել ու վճարել ավելացված արժեքի հարկ: Հետևաբար, վիճարկվող ստուգման ակտով ավելացված արժեքի հարկի գծով

Ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումն իրավաչափ է, իսկ ստորադաս դատարանները սխալմամբ են հանգել այն եզրակացության, որ Վարչության 11.11.2015 թվականի թիվ 5012965 ստուգման ակտն ընդունվել է մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ե» կետի խախտմամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առկա չեն սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Վարչության 11.11.2015 թվականի թիվ 5012965 ստուգման ակտը, անվավեր ճանաչելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարչության մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դարական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկավարտամետի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել

դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումի համար Ընկերությունը վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրք: Կոմիտեն վերաքննիչ բողոքի համար վճարել է 10.000 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ վճռաբեկ բողոքի համար՝ 20.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ սույն գործով Կոմիտեի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում Ընկերության հայցը ենթակա է մերժման, գտնում է, որ սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է լուծվի հետևյալ կերպ.

- հայցադիմումի համար սահմանված և Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված,

- Կոմիտեի կողմից բերված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված և նախապես վճարված պետական տուրքերի գումարները պետք է հատուցվեն Ընկերության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.06.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «Անիկոմ» ՍՊԸ-ի հայցը մերժել:

2. «Անիկոմ» ՍՊԸ-ի կողմից հայցադիմումի համար վճարված պետական տուրքի հարցը համարել լուծված:

«Անիկոմ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված և նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում:

«Անիկոմ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախատեսված և նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/0930/05/16

2019թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/0930/05/16

Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Ա. Սարգսյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող և զեկուցող

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 01-ին

դռնբաց դատական նիստում քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դա-
տարանի 19.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Այլ Համոա Ռիել Իսթեյթ» ՍՊԸ-ի
(այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի
հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 18.12.2015 թվականի թիվ 5012437 ակտն ան-
վավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության
18.12.2015 թվականի թիվ 5012437 ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Համբարձումյան) (այսուհետ՝ Դատարան)
24.03.2016 թվականի որոշմամբ վերականգնվելու հիմքով ՀՀ ֆինանսների նախարա-
րությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեով:

Դատարանի 08.07.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.12.2016 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 08.07.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդ տարիներին հարկատուի գործունեությունից վսաս ունենալու դեպքում այն փոխանցելու պարտադիր պայման է սահմանել վսասի ստացումը, այլ ոչ թե դրա հայտնաբերումը, իսկ տվյալ դեպքում վսասը ստացվել է 2007 և 2008 թվականներին: Հետևաբար Ընկերությունն իրավահարաբերության պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով կարող էր իր գործունեության արդյունքում ստացված 2007 և 2008 թվականների ծախսերն արտացոլել 2009 թվականի շահութահարկի հաշվարկում, սակայն չէր կարող դրանք դիտել որպես 2009 թվականին ստացված վսաս և փոխանցել 2013 և 2014 թվականներ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.12.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ «կայացնել նոր դատական ակտ»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ֆինանսների նախարարի 10.06.2015 թվականի թիվ 5012437 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում Տեսչության կողմից 18.12.2015 թվականին ընդունվել է թիվ 5012437 ստուգման ակտը:

Նշված ստուգման ակտով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով առաջադրվել է 5.821.946 ՀՀ դրամի չափով լրացուցիչ հարկային պարտավորություն, որից 3.131.520 ՀՀ դրամ՝ ապառք, 1.565.760 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 313.152 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 783.214 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված տույժ:

Ստուգման ակտի համաձայն՝ ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի ստուգմամբ պարզվել է, որ Ընկերության կողմից հարկային տեսչություն ներկա-

յացված 2013 և 2014 թվականների շահութահարկի հաշվարկներում արտացոլված նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասի մեջ ներառված են նաև 2007 և 2008 թվականներին վերաբերող վնասը՝ համապատասխանաբար 141.500 ՀՀ դրամի և 15.516.100 ՀՀ դրամի չափերով, ինչը հանդիսանում է իրավահարաբերության պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտում: Արդյունքում, ըստ ստուգման ակտի՝ Ընկերության կողմից 2013 թվականի հարկային վնասն ավել է ցույց տրվել 141.500 ՀՀ դրամի չափով, իսկ 2014 թվականի հարկային վնասն ավել է ցույց տրվել 15.516.100 ՀՀ դրամի չափով, և հաշվետու տարվա հարկվող շահույթը պակաս է հաշվարկվել 15.657.600 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 6-10, 88**):

2. 2009 թվականի շահութահարկի հաշվարկի համաձայն՝ Ընկերության համախառն եկամուտը կազմել է 39.400 ՀՀ դրամ, իսկ հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված նվազեցումը կազմել է 15.657.600 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 12-15**):

4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը

4.1. Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճարելի բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հաշվետու տարում հայտնաբերված ու նախորդող տարիներում պակաս ցույց տրված ծախսերի և նախորդ տարիներին առաջացած վնասների՝ որպես տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտից կատարվող թույլատրելի նվազեցումների ինքնուրույն տեսակների, հաշվարկման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ րնսրեակարող սուբյեկտի կողմից հաշվեդրու րարում իր գործունեությունից առաջացած ծախսերի և վնասների րոխանցման առանձնահատկություններին:

4.2. Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (օրենքը մասնակի ուժը կորցրել է 01.01.2018 թվականից՝ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն) 2-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը հարկ վճարողների կողմից նույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է (...):

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից (...):

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից թույլատրվում է կատարել նույն գլխով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ): Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով (...): Նույն օրենքի իմաստով՝ (ա) ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությանը 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի համաձայն՝ ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝ հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը:

4.4. ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված իրավանորմերի վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի, և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսվարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օրենքով սահմանված հետևյալ երկու տարրերը. տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, որտեղ համախառն եկամուտը տնտեսվարող սուբյեկտի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից, իսկ թույլատրելի նվազեցումներն օրենքով սահմանված ծախսերն են, կորուստները և այլ նվազեցումները: Նշված երկու տարրերի՝ համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը տնտեսվարող սուբյեկտի մոտ առաջացնում է հարկվող շահույթ, որի հիման վրա էլ հաշվարկվում է օրենքով սահմանված շահութահարկի գումարը: Ընդ որում, տնտեսվարող սուբյեկտի կողմից ծախսերի մասով համախառն եկամուտը թույլատրվում է նվազեցնել, եթե կատարված ծախսերը անհրաժեշտ են եղել կապված եկամտի ստացման հետ և փաստաթղթերով հիմնավորված (*տե՛ս, «ԻՆՏԳՐԱԼՄԵՏ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/3899/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

4.5. Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013

թվականը գործող խմբագրությանը 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետով օրենսդիրը սահմանել էր, որ շահութահարկ հաշվարկելիս տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտից թույլատրելի նվազեցում է համարվում նաև հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը: Ընդ որում, նույն օրենքի իմաստով ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման: Այսինքն՝ մինչև 01.01.2013 թվականը գործող իրավակարգավորումներով սահմանված էր, որ եթե տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարվա շահութահարկը հաշվարկելիս հայտնաբերում է այնպիսի ծախսեր (հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը հանգեցնող՝ ակտիվների արտահոսք, նվազում կամ պարտավորությունների աճ), որոնք պակաս են ցույց տրվել այդ տարվան անմիջապես նախորդող երեք տարիներում, ապա այդ ծախսերը ևս կարող են նվազեցվել հաշվետու տարվա համախառն եկամտից: Այսպես, օրինակ՝ եթե տնտեսվարող սուբյեկտը 2010 թվականի շահութահարկը հաշվարկելիս հայտնաբերում էր այնպիսի ծախսեր, որոնք պակաս են ցույց տրվել 2007, 2008 և 2009 թվականների շահութահարկի հաշվարկներում, ապա այդ ծախսերը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով ևս կարող էին նվազեցվել 2010 թվականի համախառն եկամտից:

4.6. Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ նախորդ տարիներին առաջացած վսասների չափով (...): Հարկատուի գործունեությունից վսասը նույն օրենքով սահմանված նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդող տարիներին հարկատուի գործունեությունից վսաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վսասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ:

4.7. Վերոգրյալ իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում նախատեսել է այնպիսի իրավիճակների առաջացման հնարավորությունը, երբ հաշվետու տարվա համար համախառն եկամտից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումները գերազանցում են տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը, այսինքն՝ տվյալ տարվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտը շահույթ չի ստանում, այլ, դրա փոխարեն, վսասներ է կրում: Ակնհայտ է, որ նմանատիպ իրավիճակներում շահութահարկ չի կարող հաշվարկվել ու վճարվել, քանի որ հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է. բացակայում է շահութահարկի օբյեկտը՝ հարկվող շահույթը:

Մինչև նույն ժամանակ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում օրենսդիրը սահմանել է, որ տնտեսվարող սուբյեկտի մոտ նախորդ տարիներին առաջացած վսասը կարող է փոխանցվել վսասի ստացման տարվան հաջորդող հինգ տարիներ՝ նվազեցվելով այդ տարիների համախառն եկամտից: Փաստորեն, քննարկվող իրավադրույթների ուժով իր գործունեության որևէ տարվա ընթացքում շահույթ չստացած և վսասներ կրած տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն է ընձեռվում վսասի առաջացմանը հաջորդող հինգ տարիների շահութահարկերը հաշվարկել:

լիս այդ տարիների համախառն եկամուտներից նվազեցնել նաև այդ վնասը, այսինքն՝ այդ տարիների շահութահարկերը հաշվարկել ու վճարել՝ հարկվող շահույթներից հանելով նախկինում ստացված վնասը: Նման իրավակարգավորման նպատակն է հարկային քաղաքականության միջոցով խթանել տարվա արդյունքներով շահույթ չստացած և դրա փոխարեն վնասներ կրած տնտեսվարող սուբյեկտին շարունակելու իր տնտեսական գործունեությունը նաև հաջորդ տարիների ընթացքում և վերջիվերջո իր գործունեությունը հասցնելու շահութաբերության մակարդակի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված վերոգրյալ իրավակարգավորման համար էական նշանակություն ունի տնտեսվարող սուբյեկտի՝ իր գործունեությունից կրած վնասի առաջացման տարին, քանի որ այդ վնասը կարող է նվազեցվել միայն դրա առաջացման տարվան հաջորդող հինգ տարիների շահութահարկերը հաշվարկելիս:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի իմաստով վնասի առկայության մասին կարող է խոսվել միայն այն դեպքում, երբ տվյալ հաշվետու տարվա շահութահարկի հաշվարկի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է: Այսինքն՝ քննարկվող վնասն առաջանում է այն հաշվետու տարում, որի շահութահարկի հաշվարկի համաձայն՝ համախառն եկամտից կատարվող նվազեցումները գերազանցում են համախառն եկամտի չափը: Հետևաբար տնտեսվարող սուբյեկտի՝ իր գործունեությունից կրած վնասի առաջացման տարին այն հաշվետու տարին է, որի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամուտն ավելի քիչ է, քան այդ տարվա ընթացքում համախառն եկամտից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումները: Այլ կերպ ասած՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի իմաստով հարկատուի մոտ վնասի առաջացման տարին այն հաշվետու տարին է, որի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է:

4.8. Համադրելով սույն որոշման 4.5-րդ և 4.7-րդ կետերում կատարված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով և նույն օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետով սահմանված իրավադրույթները մեկնաբանում է հետևյալ կերպ.

1) տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարվա շահութահարկը հաշվարկելիս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով կարող էր հաշվետու տարվա համախառն եկամտից նվազեցնել նաև այդ տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը, այսինքն՝ հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը հանգեցնող՝ ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը,

2) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը նվազեցնելու արդյունքում հաշվետու տարվա նվազեցումների ընդհանուր գումարը կարող է գերազանցել տնտեսվարող սուբյեկտի համախառն

եկամուտը, այսինքն՝ կարող է առաջանալ վնաս,

3) հաշվետու տարվան նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը հաշվետու տարվա համախառն եկամտից նվազեցնելու արդյունքում առաջացած վնասը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի և կատարված բոլոր նվազեցումների (ներառյալ նաև՝ հաշվետու տարվան նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերի) բացասական տարբերությունը, կարող է փոխանցվել այդ հաշվետու տարվան անմիջապես հաջորդող հինգ տարիներ՝ նվազեցվելով այդ տարիների համախառն եկամտից:

4.9. Անփոփելիվ վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի գործողության տիրույթում տնտեսվարող սուբյեկտը կարող է հաշվետու տարում իր գործունեությունից առաջացած վնասը փոխանցել այդ տարվան հաջորդող 5 տարիներ, եթե այդ վնասն առաջացել է այն պատճառով, որ հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությանը 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով նվազեցվել են հաշվետու տարվա համախառն եկամտից, ինչի արդյունքում հաշվետու տարվա նվազեցումները գերազանցել են համախառն եկամուտը:

4.10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 18.12.2015 թվականի թիվ 5012437 ստուգման ակտը: Նշված վարչական ակտով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով առաջադրվել է 5.821.946 ՀՀ դրամի չափով լրացուցիչ հարկային պարտավորություն: Ըստ ստուգման ակտի՝ ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի ստուգմամբ պարզվել է, որ Ընկերության կողմից հարկային տեսչություն ներկայացված 2013 և 2014 թվականների շահութահարկի հաշվարկներում արտացոլված նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասի մեջ ներառված են նաև **2007 և 2008 թվականների վերաբերող վնասը՝ համապատասխանաբար 141.500 ՀՀ դրամի և 15.516.100 ՀՀ դրամի չափերով**, ինչը հանդիսանում է իրավահարաբերության պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտում: Արդյունքում, ըստ ստուգման ակտի, Ընկերության կողմից 2013 թվականի հարկային վնասն ավել է ցույց տրվել **141.500 ՀՀ դրամի չափով, իսկ 2014 թվականի հարկային վնասն ավել է ցույց տրվել 15.516.100 ՀՀ դրամի չափով**, և հաշվետու տարվա հարկվող շահույթը պակաս է հաշվարկվել 15.657.600 ՀՀ դրամի չափով:

4.11. Դատարանը բավարարել է Ընկերության հայցը: Դատարանը, որպես անվիճելի փաստ, հաստատված է համարել, որ Ընկերությունն ունեցել է պակաս ցույց տված ծախսեր՝ 2007 թվականի համար 141.500 ՀՀ դրամի չափով, իսկ 2008 թվականի համար 15.516.100 ՀՀ դրամի չափով, որոնք հայտնաբերվել են 2009 թվականին և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությանը 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով ներառվել են 2009 թվականի շահութահարկի հաշվարկում՝ որպես 2009 թվականի հաշվետու տարում հայտնաբերված և դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսեր: Դրա արդյունքում ձևավորվել է Ընկերության՝ 2009 թվականի գործունեությունից ստացված վնասը, որը կարող էր փոխանցվել հաջորդող հինգ տարիներ: Հետևաբար, ըստ Դատարանի, Ընկերության կողմից «(...) 2013 և 2014 թվականների շահութահարկի հաշվարկներում ներառված գումարները հանդիսանում են ոչ թե համապարասխանաբար 2007 և 2008 թվականների վնասը, ինչպես նշվել է վիճարկվող ակ-

տրում, այլ 2007 և 2008 թվականներին պակաս ցույց տրված ծախսերի հաշվին կատարված նվազեցումների արդյունքում գոյացած 2009 թվականի վնասը (...):

4.12. Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանը ևս գտել է, որ Ընկերության մոտ վնասն առաջացել է 2009 թվականի հաշվետու տարում՝ այդ տարվա համախառն եկամտից 2007 և 2008 թվականների շահութահարկի հաշվարկներում 15.657.600 ՀՀ դրամի չափով պակաս ցույց տրված ծախսերը նվազեցնելու արդյունքում: Հետևաբար, ըստ Վերաքննիչ դատարանի, Ընկերությունը մինչև 2014 թվականը ներառյալ հարկվող շահույթը հաշվարկելիս համախառն եկամուտը կարող էր նվազեցնել 2009 թվականի հաշվետու տարում առաջացած վնասով, ինչը և իրավաչափորեն կատարվել է Ընկերության կողմից:

4.13. Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի գործողության տիրույթում Ընկերությունը կարող էր 2009 թվականի հաշվետու տարում իր գործունեությունից առաջացած վնասը փոխանցել այդ տարվան հաջորդող 5 տարիներ, տվյալ դեպքում՝ **2013 և 2014 թվականներ**, եթե այդ վնասն առաջացել է այն պատճառով, որ 2009 թվականի հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում, մասնավորապես՝ 2007 և 2008 թվականներին, պակաս ցույց տրված ծախսերը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով նվազեցվել են 2009 թվականի հաշվետու տարվա համախառն եկամտից, ինչի արդյունքում 2009 թվականի հաշվետու տարվա նվազեցումները գերազանցել են համախառն եկամուտը, այսինքն՝ առկա հարկային վնաս:

Ստորադաս դատարաններն իրավացիորեն են հանգել այն եզրակացության, որ տվյալ դեպքում 2007 և 2008 թվականներին պակաս ցույց տրված ծախսերը 2009 թվականի հաշվետու տարվա համախառն եկամտից նվազեցնելու արդյունքում առաջացած վնասը՝ որպես 2009 թվականի հաշվետու տարվա վնաս, Ընկերությունը կարող էր նվազեցնել 2013 և 2014 թվականների համախառն եկամտից, սակայն հաշվի չեն առել այն հանգամանքը, որ 2013 և 2014 թվականների համախառն եկամտից կրկին նվազեցվել է ոչ թե 2009 թվականի հաշվետու տարում առաջացած վնասը, այլ տվյալ հաշվետու տարում ներառված 2007 և 2008 թվականներին չարտագրված նույն ծախսերը և ունենալով գործի փաստական հանգամանքները ի պաշտոնն պարզելու պարտականություն չեն պարզել գործի քննության համար էական նշանակություն ունեցող այս էական հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից թույլ տրված՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի նշված խախտման հետևանքով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրման ենթակա լինելը կամ չլինելը, ինչպես նաև առերևույթ առաջադրվելիք լրացուցիչ հարկային պարտավորության չափը հնարավոր չէ պարզել սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում, քանի որ այդ հարցերը քննության առարկա չեն դարձել ստորադաս դատարաններում: Հետևաբար Ընկերության կողմից թույլ տրված և սույն որոշման 4.15-րդ կետում նկարագրված՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի

խախտման (2013 և 2014 թվականների համախառն եկամուրներից ապօրինի նվազեցման կատարում) արդյունքում Հնկերության նկատմամբ 2013 և 2014 թվականների համար շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության հանգամանքը պարզելու, ինչպես նաև այդպիսի հարկային պարտավորությունների առկայության դեպքում դրանց չափը որոշելու միջոցով սույն գործով վիճարկվող՝ Տեսչության 18.12.2015 թվականի թիվ 5012437 ստուգման ակտի լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչման հարցը լուծելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճարել դատարանը, նկատի ունենալով այն, որ վճարել բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.12.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/0930/05/16 վարչական գործով 01.08.2019 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 01.08.2019 թվականին քննելով ըստ հայցի «Ալ Համոա Ռիել Իսթեյթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 18.12.2015 թվականի թիվ 5012437 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.12.2016 թվականի որոշման դեմ Կոմիտեի վճռաբեկ բողոքը՝ նույն պալատի ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել՝ բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.12.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս և Գոռ Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դարավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 18.12.2015 թվականի թիվ 5012437 ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Համբարձումյան) (այսուհետ՝ Դատարան) 24.03.2016 թվականի որոշմամբ վերակազմակերպման հիմքով ՀՀ ֆինանսների նախարարությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեով:

Դատարանի 08.07.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.12.2016 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 08.07.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ օրենսդիրը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդ տարիներին հարկատուի գործունեությունից վսաս ունենալու դեպքում

այն փոխանցելու պարտադիր պայման է սահմանել վնասի ստացումը, այլ ոչ թե դրա հայտնաբերումը, իսկ տվյալ դեպքում վնասը ստացվել է 2007 և 2008 թվականներին: Հետևաբար Ընկերությունն իրավահարաբերության պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով կարող էր իր գործունեության արդյունքում ստացված 2007 և 2008 թվականների ծախսերն արտացոլել 2009 թվականի շահութահարկի հաշվարկում, սակայն չէր կարող դրանք դիտել որպես 2009 թվականին ստացված վնաս և փոխանցել 2013 և 2014 թվականներ:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.12.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ «կայացնել նոր դատական ակտ»:

3. Որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճռաբեկ դատարանը նշել է հետևյալը,

1) ՀՀ ֆինանսների նախարարի 10.06.2015 թվականի թիվ 5012437 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում Տեսչության կողմից 18.12.2015 թվականին ընդունվել է թիվ 5012437 ստուգման ակտը:

Նշված ստուգման ակտով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով առաջադրվել է 5.821.946 ՀՀ դրամի չափով լրացուցիչ հարկային պարտավորություն, որից 3.131.520 ՀՀ դրամ՝ ապառք, 1.565.760 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 313.152 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 783.214 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված տույժ:

Ստուգման ակտի համաձայն՝ ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի ստուգմամբ պարզվել է, որ Ընկերության կողմից հարկային տեսչություն ներկայացված 2013 և 2014 թվականների շահութահարկի հաշվարկներում արտացոլված նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասի մեջ ներառված են նաև 2007 և 2008 թվականներին վերաբերող վնասը՝ համապատասխանաբար 141.500 ՀՀ դրամի և 15.516.100 ՀՀ դրամի չափերով, ինչը հանդիսանում է իրավահարաբերության պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտում: Արդյունքում, ըստ ստուգման ակտի՝ Ընկերության կողմից 2013 թվականի հարկային վնասն ավել է ցույց տրվել 141.500 ՀՀ դրամի չափով, իսկ 2014 թվականի հարկային վնասն ավել է ցույց տրվել 15.516.100 ՀՀ դրամի չափով, և հաշվետու տարվա հարկվող շահույթը պակաս է հաշվարկվել 15.657.600 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 6-10, 88**):

2) 2009 թվականի շահութահարկի հաշվարկի համաձայն՝ Ընկերության համախառն եկամուտը կազմել է 39.400 ՀՀ դրամ, իսկ հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված նվազեցումը կազմել է 15.657.600 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 12-15**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները հանգել են հետևյալին.

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ըն-

դուները պայմանավորված է վճարել բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հաշվետու տարում հայտնաբերված ու նախորդող տարիներում պակաս ցույց տրված ծախսերի և նախորդ տարիներին առաջացած վնասների՝ որպես տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտից կատարվող թույլատրելի նվազեցումների ինքնուրույն տեսակների, հաշվարկման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարել անհրադատնալ տնտեսվարող սուբյեկտի կողմից հաշվետու տարում իր գործունեությունից առաջացած ծախսերի և վնասների փոխանցման առանձնահատկությունների:

Վկայակոչելով իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (օրենքը մասնակի ուժը կորցրել է 01.01.2018 թվականից՝ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն) 2-րդ հոդվածը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածը, 7-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածը, 10-րդ հոդվածի 1-ին մասը, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետը, ինչպես նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի վերը նշված իրավանդության վերլուծության վերաբերյալ «ԻՆՏԳՐԱԲՆՏ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/3899/05/14 վարչական գործով ՀՀ վճարել դատարանի 20.07.2017 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետով օրենսդիրը սահմանել էր, որ շահութահարկ հաշվարկելիս տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամտից թույլատրելի նվազեցում է համարվում նաև հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը: Ընդ որում, նույն օրենքի իմաստով ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման: Այսինքն՝ մինչև 01.01.2013 թվականը գործող իրավակարգավորումներով սահմանված էր, որ եթե տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարվա շահութահարկը հաշվարկելիս հայտնաբերում է այնպիսի ծախսեր (հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը հանգեցնող՝ ակտիվների արտահոսք, նվազում կամ պարտավորությունների աճ), որոնք պակաս են ցույց տրվել այդ տարվան անմիջապես նախորդող երեք տարիներում, ապա այդ ծախսերը ևս կարող են նվազեցվել հաշվետու տարվա համախառն եկամտից: Այսպես, օրինակ՝ եթե տնտեսվարող սուբյեկտը 2010 թվականի շահութահարկը հաշվարկելիս հայտնաբերում էր այնպիսի ծախսեր, որոնք պակաս են ցույց տրվել 2007, 2008 և 2009 թվականների շահութահարկի հաշվարկներում, ապա այդ ծախսերը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով ևս կարող էին նվազեցվել 2010 թվականի համախառն եկամտից:

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ

օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ նախորդ տարիներին առաջացած վնասների չափով (...): Հարկատուի գործունեությունից վնասը նույն օրենքով սահմանված նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդող տարիներին հարկատուի գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ:

Վերոգրյալ իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում նախատեսել է այնպիսի իրավիճակների առաջացման հնարավորությունը, երբ հաշվետու տարվա համար համախառն եկամտից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումները գերազանցում են տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը, այսինքն՝ տվյալ տարվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտը շահույթ չի ստանում, այլ, դրա փոխարեն, վնասներ է կրում: Ակնհայտ է, որ նմանատիպ իրավիճակներում շահութահարկ չի կարող հաշվարկվել ու վճարվել, քանի որ հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է. բացակայում է շահութահարկի օբյեկտը՝ հարկվող շահույթը:

Մինչնույն ժամանակ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում օրենսդիրը սահմանել է, որ տնտեսվարող սուբյեկտի մոտ նախորդ տարիներին առաջացած վնասը կարող է փոխանցվել վնասի ստացման տարվան հաջորդող հինգ տարիներ՝ նվազեցվելով այդ տարիների համախառն եկամտից: Փաստորեն, քննարկվող իրավադրույթների ուժով իր գործունեության որևէ տարվա ընթացքում շահույթ չստացած և վնասներ կրած տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն է ընձեռվում վնասի առաջացմանը հաջորդող հինգ տարիների շահութահարկերը հաշվարկելիս այդ տարիների համախառն եկամուտներից նվազեցնել նաև այդ վնասը, այսինքն՝ այդ տարիների շահութահարկերը հաշվարկել ու վճարել՝ հարկվող շահույթներից հանելով նախկինում ստացված վնասը: Նման իրավակարգավորման նպատակն է հարկային քաղաքականության միջոցով խթանել տարվա արդյունքներով շահույթ չստացած և դրա փոխարեն վնասներ կրած տնտեսվարող սուբյեկտին շարունակելու իր տնտեսական գործունեությունը նաև հաջորդ տարիների ընթացքում և վերջիվերջո իր գործունեությունը հասցնելու շահութաբերության մակարդակի:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված վերոգրյալ իրավակարգավորման համար էական նշանակություն ունի տնտեսվարող սուբյեկտի՝ իր գործունեությունից կրած վնասի առաջացման տարին, քանի որ այդ վնասը կարող է նվազեցվել միայն դրա առաջացման տարվան հաջորդող հինգ տարիների շահութահարկերը հաշվարկելիս:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի իմաստով վնասի առկայության մասին կարող է խոսվել միայն այն դեպքում, երբ տվյալ հաշվետու տարվա շահութահարկի հաշվարկի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է: Այսինքն՝ քննարկվող վնասն առաջանում է այն հաշվետու տարում, որի շահութահարկի

հաշվարկի համաձայն՝ համախառն եկամտից կատարվող նվազեցումները գերազանցում են համախառն եկամտի չափը: Հետևաբար տնտեսվարող սուբյեկտի՝ իր գործունեությունից կրած վնասի առաջացման տարին այն հաշվետու տարին է, որի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամուտն ավելի քիչ է, քան այդ տարվա ընթացքում համախառն եկամտից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումները: Այլ կերպ ասած՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի իմաստով հարկատուի մոտ վնասի առաջացման տարին այն հաշվետու տարին է, որի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է:

Համադրելով վերոգրյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով և նույն օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությանը 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետով սահմանված իրավադրույթները մեկնաբանել է հետևյալ կերպ.

4) տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարվա շահութահարկը հաշվարկելիս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությանը 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով կարող էր հաշվետու տարվա համախառն եկամտից նվազեցնել նաև այդ տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը, այսինքն՝ հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը հանգեցնող՝ ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը,

5) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը նվազեցնելու արդյունքում հաշվետու տարվա նվազեցումների ընդհանուր գումարը կարող է գերազանցել տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը, այսինքն՝ կարող է առաջանալ վնաս,

6) հաշվետու տարվան նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը հաշվետու տարվա համախառն եկամտից նվազեցնելու արդյունքում առաջացած վնասը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի և կատարված բոլոր նվազեցումների (ներառյալ նաև՝ հաշվետու տարվան նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերի) բացասական տարբերությունը, կարող է փոխանցվել այդ հաշվետու տարվան անմիջապես հաջորդող հինգ տարիներ՝ նվազեցվելով այդ տարիների համախառն եկամտից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի գործողության տիրույթում տնտեսվարող սուբյեկտը կարող է հաշվետու տարում իր գործունեությունից առաջացած վնասը փոխանցել այդ տարվան հաջորդող 5 տարիներ, եթե այդ վնասն առաջացել է այն պատճառով, որ հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությանը 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով նվազեցվել են հաշվետու տարվա համախառն եկամտից, ինչի արդյունքում հաշվետու տարվա նվազեցումները գերազանցել են համախառն եկամուտը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 18.12.2015 թվականի թիվ 5012437 ստուգման ակտը: Նշված վարչական ակտով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով առաջադրվել է 5.821.946 ՀՀ դրամի չափով

լրացուցիչ հարկային պարտավորություն: Ըստ ստուգման ակտի՝ ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի ստուգմամբ պարզվել է, որ Ընկերության կողմից հարկային տեսչություն ներկայացված 2013 և 2014 թվականների շահութահարկի հաշվարկներում արտացոլված նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասի մեջ ներառված են նաև **2007 և 2008 թվականներին վերաբերող վնասը՝ համապատասխանաբար 141.500 ՀՀ դրամի և 15.516.100 ՀՀ դրամի չափերով**, ինչը հանդիսանում է իրավահարաբերության պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտում: Արդյունքում, ըստ ստուգման ակտի, Ընկերության կողմից 2013 թվականի հարկային վնասն ավել է ցույց տրվել **141.500 ՀՀ դրամի չափով, իսկ 2014 թվականի հարկային վնասն ավել է ցույց տրվել 15.516.100 ՀՀ դրամի չափով**, և հաշվետու տարվա հարկվող շահույթը պակաս է հաշվարկվել 15.657.600 ՀՀ դրամի չափով:

Դատարանը բավարարել է Ընկերության հայցը: Դատարանը, որպես անվիճելի փաստ, հաստատված է համարել, որ Ընկերությունն ունեցել է պակաս ցույց տված ծախսեր՝ 2007 թվականի համար 141.500 ՀՀ դրամի չափով, իսկ 2008 թվականի համար 15.516.100 ՀՀ դրամի չափով, որոնք հայտնաբերվել են 2009 թվականին և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ծը» ենթակետի ուժով ներառվել են 2009 թվականի շահութահարկի հաշվարկում՝ որպես 2009 թվականի հաշվետու տարում հայտնաբերված և դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսեր: Դրա արդյունքում ձևավորվել է Ընկերության՝ 2009 թվականի գործունեությունից ստացված վնասը, որը կարող էր փոխանցվել հաջորդող հինգ տարիներ: Հետևաբար, ըստ Դատարանի, Ընկերության կողմից *«(...) 2013 և 2014 թվականների շահութահարկի հաշվարկներում ներառված գումարները հանդիսանում են ոչ թե համապատասխանաբար 2007 և 2008 թվականների վնասը, ինչպես նշվել է վիճարկվող ակտում, այլ 2007 և 2008 թվականներին պակաս ցույց տրված ծախսերի հաշվին կատարված նվազեցումների արդյունքում գոյացած 2009 թվականի վնասը (...):»*:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանը ևս գտել է, որ Ընկերության մոտ վնասն առաջացել է 2009 թվականի հաշվետու տարում՝ այդ տարվա համախառն եկամտից 2007 և 2008 թվականների շահութահարկի հաշվարկներում 15.657.600 ՀՀ դրամի չափով պակաս ցույց տրված ծախսերը նվազեցնելու արդյունքում: Հետևաբար, ըստ Վերաքննիչ դատարանի, Ընկերությունը մինչև 2014 թվականը ներառյալ հարկվող շահույթը հաշվարկելիս համախառն եկամուտը կարող էր նվազեցնել 2009 թվականի հաշվետու տարում առաջացած վնասով, ինչը և իրավաչափորեն կատարվել է Ընկերության կողմից:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի գործողության տիրույթում Ընկերությունը կարող էր 2009 թվականի հաշվետու տարում իր գործունեությունից առաջացած վնասը փոխանցել այդ տարվան հաջորդող 5 տարիներ, տվյալ դեպքում **2013 և 2014 թվականներ**, եթե այդ վնասն առաջացել է այն պատճառով, որ 2009 թվականի հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում, մասնավորապես՝ 2007 և 2008 թվականներին, պակաս ցույց տրված ծախսերը «Շահութահարկի

մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով նվազեցվել են 2009 թվականի հաշվետու տարվա համախառն եկամտից, ինչի արդյունքում 2009 թվականի հաշվետու տարվա նվազեցումները գերազանցել են համախառն եկամուտը, այսինքն՝ առկա հարկային վնաս:

Ստորադաս դատարաններն իրավացիորեն են հանգել այն եզրակացության, որ տվյալ դեպքում 2007 և 2008 թվականներին պակաս ցույց տրված ծախսերը 2009 թվականի հաշվետու տարվա համախառն եկամտից նվազեցնելու արդյունքում առաջացած վնասը՝ որպես 2009 թվականի հաշվետու տարվա վնաս, Ընկերությունը կարող էր նվազեցնել 2013 և 2014 թվականների համախառն եկամուտներից, սակայն հաշվի չեն առել այն հանգամանքը, որ 2013 և 2014 թվականների համախառն եկամուտներից, սակայն հաշվի չեն առել այն հանգամանքները, որ 2007 և 2008 թվականներին չարտագույցված նույն ծախսերը և ունենալով գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե պարզելու պարտականություն չեն պարզել գործի քննության համար էական նշանակություն ունեցող այս էական հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Ընկերության կողմից թույլ տրված՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի նշված խախտման հետևանքով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրման ենթակա լինելը կամ չլինելը, ինչպես նաև առերևույթ առաջադրվելիք լրացուցիչ հարկային պարտավորության չափը հնարավոր չէ պարզել սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում, քանի որ այդ հարցերը քննության առարկա չեն դարձել ստորադաս դատարաններում: Հետևաբար Ընկերության կողմից թույլ տրված իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի խախտման (2013 և 2014 թվականների համախառն եկամուտներից սպորինի նվազեցման կատարում) արդյունքում Ընկերության նկատմամբ 2013 և 2014 թվականների համար շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության հանգամանքը պարզելու, ինչպես նաև այդպիսի հարկային պարտավորությունների առկայության դեպքում դրանց չափը որոշելու միջոցով սույն գործով վիճարկվող՝ Տեսչության 18.12.2015 թվականի թիվ 5012437 ստուգման ակտի լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչման հարցը լուծելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտել է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս և Գոռ Հակոբյանս, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտված կարծիքի հետ, շարադրում ենք մեր հարուկ կարծիքը վերոգրյալ որոշման վերաբերյալ:

Նախ՝ հարկ ենք համարում ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի և սույն օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» կետի իրավակարգավորումների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները համընկնում են մեր իրավական դիրքորոշումների հետ, սակայն սույն գոր-

ծի փաստերի նկատմամբ այդ իրավանորմերի կիրառման Վճռաբեկ դատարանի հիմնավորումների հետ համաձայն չենք հետևյալ պատճառաբանությամբ.

Ընդունելով հանդերձ, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի իմաստով վնասի առկայության մասին կարող է խոսվել միայն այն դեպքում, երբ տվյալ հաշվետու տարվա շահութահարկի հաշվարկի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է, այսինքն՝ քննարկվող վնասն առաջանում է այն հաշվետու տարում, որի շահութահարկի հաշվարկի համաձայն՝ համախառն եկամտից կատարվող նվազեցումները գերազանցում են համախառն եկամտի չափը, հետևաբար տնտեսվարող սուբյեկտի՝ իր գործունեությունից կրած վնասի առաջացման տարին այն հաշվետու տարին է, որի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտուն ավելի քիչ է, քան այդ տարվա ընթացքում համախառն եկամտից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումները, Վճռաբեկ դատարանն այդուհանդերձ գտել է, որ տվյալ դեպքում Ընկերության կողմից թույլ տրված՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի նշված խախտման հետևանքով Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրման ենթակա լինելը կամ չլինելը, ինչպես նաև առերևույթ առաջադրվելիք լրացուցիչ հարկային պարտավորության չափը հնարավոր չէ պարզել սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում, քանի որ այդ հարցերը քննության առարկա չեն դարձել ստորադաս դատարաններում: Մինևսույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Ընկերության կողմից թույլ տրված իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի խախտման (2013 և 2014 թվականների համախառն եկամտներից ապօրինի նվազեցման կատարում) արդյունքում Ընկերության նկատմամբ 2013 և 2014 թվականների համար շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության հանգամանքը պարզելու, ինչպես նաև այդպիսի հարկային պարտավորությունների առկայության դեպքում դրանց չափը որոշելու միջոցով սույն գործով վիճարկվող՝ Տեսչության 18.12.2015 թվականի թիվ 5012437 ստուգման ակտի լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչման հարցը լուծելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Գտնում ենք, որ Ընկերության նկատմամբ շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրման ենթակա լինել-չլինելու կամ առերևույթ առաջադրվելիք լրացուցիչ հարկային պարտավորության չափը որոշելու հարցը պետք է լուծված լինել վարչական վարույթի ընթացքում և դրա հիմնավորումները պետք է ներառված լինեին վարչական ակտում, քանի որ վարչական դատարանը դատական վերահսկողության է ենթարկում վարչական ակտի իրավաչափությունը, այլ ոչ թե լրացնում է վարչական ակտի պատճառաբանական մասը:

Տվյալ դեպքում սույն գործով վիճարկվող ստուգման ակտում մասնավորապես արձանագրվել է. «(...) ներկայացված սկզբնական հաշվապահական փաստաթղթերի սրուգմամբ պարզվել է, որ Ընկերության կողմից հարկային փեսչություն ներկայացված 2013 և 2014 թվականների շահութահարկի հաշվարկներում արտացոլված նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասի մեջ ներառված են նաև 2007 և 2008 թվականներին վերաբերող վնասը՝ համապատասխանաբար 141.500 ՀՀ դրամի և 15.516.100 ՀՀ դրամի չափերով, ինչը հանդիսանում է իրավահարաբերության պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի

25-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտում: Արդյունքում, ըստ ստուգման ակտի՝ Ընկերության կողմից 2013 թվականի հարկային վճարան ավել է ցույց տրվել 141.500 ՀՀ դրամի չափով, իսկ 2014 թվականի հարկային վճարան ավել է ցույց տրվել 15.516.100 ՀՀ դրամի չափով, և հաշվետու տարվա հարկվող շահույթը պակաս է հաշվարկվել 15.657.600 ՀՀ դրամի չափով» (հատոր 1-ին, գ.թ. 6-10, 88):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (օրենքը մասնակի ուժը կորցրել է 01.01.2018 թվականից՝ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն) 2-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկը հարկ վճարողների կողմից նույն օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և նույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից թույլատրվում է կատարել նույն գլխով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ): Նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով (...): Նույն օրենքի իմաստով՝ (ա) ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման (...):

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» կետի համաձայն՝ ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝ հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը:

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ վերը սշված իրավանորմերի վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ շահութահարկը պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որի հարկվող օբյեկտը ռեզիդենտների համար Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթն է: Ընդ որում, հարկվող շահույթ է հարկատուի համախառն եկամտի, այսինքն՝ հաշվետու տարում անկախ դրանց ստացման աղբյուրներից հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի,

և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսվարող սուբյեկտի հարկվող շահույթը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օրենքով սահմանված հետևյալ երկու տարրերը. տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված թույլատրելի նվազեցումները, որտեղ համախառն եկամուտը տնտեսվարող սուբյեկտի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից, իսկ թույլատրելի նվազեցումներն օրենքով սահմանված ծախսերն են, կորուստները և այլ նվազեցումները: Նշված երկու տարրերի՝ համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների դրական տարբերությունը տնտեսվարող սուբյեկտի մոտ առաջացնում է հարկվող շահույթ, որի հիման վրա էլ հաշվարկվում է օրենքով սահմանված շահութահարկի գումարը: Ընդ որում, տնտեսվարող սուբյեկտի կողմից ծախսերի մասով համախառն եկամուտը թույլատրվում է նվազեցնել, եթե կատարված ծախսերը անհրաժեշտ են եղել կապված եկամտի ստացման հետ և փաստաթղթերով հիմնավորված (*տես, «ԻՆՏԳՐԱՐԱՆՏ» ՄԴԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/3899/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» կետով օրենսդիրը սահմանել էր, որ շահութահարկ հաշվարկելիս տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտից թույլատրելի նվազեցում է համարվում նաև հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը: Ընդ որում, նույն օրենքի իմաստով ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման: Այսինքն՝ մինչև 01.01.2013 թվականը գործող իրավակարգավորումներով սահմանված էր, որ եթե տնտեսվարող սուբյեկտը հաշվետու տարվա շահութահարկը հաշվարկելիս հայտնաբերում է այնպիսի ծախսեր (հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը հանգեցնող՝ ակտիվների արտահոսք, նվազում կամ պարտավորությունների աճ), որոնք պակաս են ցույց տրվել այդ տարվան անմիջապես նախորդող երեք տարիներում, ապա այդ ծախսերը ևս կարող են նվազեցվել հաշվետու տարվա համախառն եկամտից: Այսպես, օրինակ՝ եթե տնտեսվարող սուբյեկտը 2010 թվականի շահութահարկը հաշվարկելիս հայտնաբերում էր այնպիսի ծախսեր, որոնք պակաս են ցույց տրվել 2007, 2008 և 2009 թվականների շահութահարկի հաշվարկներում, ապա այդ ծախսերը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» կետի ուժով ևս կարող էին նվազեցվել 2010 թվականի համախառն եկամտից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ նախորդ տարիներին առաջացած վնասների չափով (...): Հարկատուի գործունեությունից վնասը նույն օրենքով սահմանված նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդող տարիներին հարկատուի գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ:

Վերոգրյալ իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրն իրավա-

հարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում նախատեսել է այնպիսի իրավիճակների առաջացման հնարավորությունը, երբ հաշվետու տարվա համար համախառն եկամտից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումները գերազանցում են տնտեսվարող սուբյեկտի համախառն եկամուտը, այսինքն՝ տվյալ տարվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտը շահույթ չի ստանում, այլ, դրա փոխարեն, վսասներ է կրում: Ակնհայտ է, որ նմանատիպ իրավիճակներում շահութահարկ չի կարող հաշվարկվել ու վճարվել, քանի որ հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների տարբերությունը բացասական է. բացակայում է շահութահարկի օբյեկտը՝ հարկվող շահույթը:

Մինչույն ժամանակ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում օրենսդիրը սահմանել է, որ տնտեսվարող սուբյեկտի մոտ նախորդ տարիներին առաջացած վսասը կարող է փոխանցվել վսասի ստացման տարվան հաջորդող հինգ տարիներ՝ նվազեցվելով այդ տարիների համախառն եկամտից: Փաստորեն, քննարկվող իրավադրույթների ուժով իր գործունեության որևէ տարվա ընթացքում շահույթ չստացած և վսասներ կրած տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն է ընձեռվում վսասի առաջացմանը հաջորդող հինգ տարիների շահութահարկերը հաշվարկելիս այդ տարիների համախառն եկամուտներից նվազեցնել նաև այդ վսասը, այսինքն՝ այդ տարիների շահութահարկերը հաշվարկել ու վճարել՝ հարկվող շահույթներից հանելով նախկինում ստացված վսասը: Նման իրավակարգավորման նպատակն է հարկային քաղաքականության միջոցով խթանել տարվա արդյունքներով շահույթ չստացած և դրա փոխարեն վսասներ կրած տնտեսվարող սուբյեկտին շարունակելու իր տնտեսական գործունեությունը նաև հաջորդ տարիների ընթացքում և վերջիվերջո իր գործունեությունը հասցնելու շահութաբերության մակարդակի:

Գտնում ենք, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված վերոգրյալ իրավակարգավորման համար էական նշանակություն ունի տնտեսվարող սուբյեկտի՝ իր գործունեությունից կրած վսասի առաջացման տարին, քանի որ այդ վսասը կարող է նվազեցվել միայն դրա առաջացման տարվան հաջորդող հինգ տարիների շահութահարկերը հաշվարկելիս:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, (...) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ակտում նշվում են՝ (...) (9) ստուգմամբ բացահայտված խախտումները, **խախտումների նկարագրությունը**, խախտ-

ման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, (10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը (...):

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների վկայակոչված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը պետք է հիմնավորված լինեն. օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավական հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ վարչական ակտն ընդունելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում անդրադարձել է վարչական ակտի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ վարչական ակտը հիմնավորելու՝ վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարչական վարույթի մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը (*յրեն, Գիթա Հեյդարիմարանջեհն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ ՎԳ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ. այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով, գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները: Միաժամանակ վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում (*յրեն, «Ինելկոբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերով ստուգման ակտի բովանդակությանը ներկայացվող պահանջների իրավական վերլուծությանը՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ այդ իրավադրույթների ուժով ստուգման ակտը պետք է ամբողջական և հստակ տեղեկություններ պարունակի ստուգմամբ բացահայտված խախտումների նկարագրության, խախտված իրավական նորմերի և պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերի վերաբերյալ: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստուգման ակտի բովանդակությանն ուղղված նշված օրենսդրական պահանջների պահպանման դեպքում միայն հնարավոր կլինի պարզել տվյալ ստուգման ակտի իրավաչափության հարցը (*յրեն, «Արթիկի «Մրելկումա»» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն ստորնթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու փարածքային հարկային տեսչության թիվ ՎԳ5/0519/05/13 վար-*

չական գործով ՀՀ վճարել դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը, ինչպես նաև անդրադառնալով Վճարել դատարանի որոշման պատճառաբանություններին և եզրահանգմանը՝ հարկ ենք համարում նշել հետևյալը.

Վարչական ակտերի հիմնավորվածության պահանջի վերաբերյալ վերագրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գտնում ենք, որ տնտեսվարող սուբյեկտին նախորդ տարիներին առաջացած վնասը դրա ստացման տարվան հաջորդող հինգ տարիներ փոխանցելու կարգավորումներ սահմանող իրավանորմերի պահանջների խախտում վերագրող վարչական ակտը (ստուգման ակտը) պետք է պարունակի հիմնավորումներ խախտման առկայության, դրա փաստական և իրավական հիմքերի, մասնավորապես՝ հաշվետու տարում տնտեսվարող սուբյեկտի ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումների բացասական տարբերության, այսինքն՝ վնասի վերաբերյալ: Մինչդեռ, սույն գործով վիճարկվող վարչական ակտը չի բավարարում վարչական ակտի հիմնավորվածության վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների պահանջներին, ինչպես նաև չի համապատասխանում ՀՀ վճարել դատարանի վերը հիշատակված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին, քանի որ որևէ հիմնավորում չի պարունակում հաշվետու տարում Ընկերության ստացած համախառն եկամտի և դրանից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումների բացասական տարբերության, այսինքն՝ վնասի վերաբերյալ: Մասնավորապես վարչական ակտում ներառված չեն տվյալներ այն մասին, որ 2007 և 2008 թվականների հաշվետու տարում, ըստ շահութահարկի հաշվարկի՝ համախառն եկամտից կատարվող նվազեցումները գերազանցել են համախառն եկամտի չափը: Այսինքն՝ հիմնավորված չէ, որ 2007 և 2008 թվականների ընթացքում Ընկերության ստացած համախառն եկամտուն ավելի քիչ է, քան այդ տարվա ընթացքում համախառն եկամտից կատարվող՝ օրենքով սահմանված նվազեցումները, հետևաբար իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի իմաստով 2007 և 2008 թվականները որպես Ընկերության մոտ վնասի առաջացման տարի հիմք ընդունելու ստուգումն իրականացնող անձանց եզրահանգումը հիմնագուրկ է, որպիսի պարագայում խոսք չի կարող լինել գոյություն չունեցող վնասը դրա ստացման տարվան հաջորդող հինգ տարիների ժամկետի ավարտից հետո փոխանցելու մասին:

Հարկ ենք համարում նշել, որ Վճարել դատարանի դիրքորոշումն այն մասին, որ Ընկերությունը 2013 և 2014 թվականների համախառն եկամտից կրկին նվազեցրել է ոչ թե 2009 թվականի հաշվետու տարում առաջացած վնասը, այլ տվյալ հաշվետու տարում ներառված 2007 և 2008 թվականներին չարտացոլված նույն **ծախսերը**, չի բխում սույն գործով վիճարկվող վարչական ակտի բովանդակությունից, քանի որ ակտը որևէ նշում չի պարունակում Ընկերության կողմից 2013 և 2014 թվականների համախառն եկամտից 2007 և 2008 թվականներին չարտացոլված **ծախսեր** նվազեցնելու վերաբերյալ: Ընդհակառակը, ակտում արձանագրված խախտումը վերաբերում է Ընկերության կողմից հարկային տեսչություն ներկայացված 2013 և 2014 թվականների շահութահարկի հաշվարկներում արտացոլված նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասի մեջ 2007 և 2008 թվականներին վերաբերող **վնասը և ոչ թե ծախսը** ներառելուն:

Գտնում ենք, որ թե՛ ստորադաս դատարանները և թե՛ Վճարել դատարանը քննարկ-

ման առարկա են դարձրել այնպիսի փաստական հանգամանքներ, որպիսիք սույն գործով վիճարկվող վարչական ակտում ներառված չեն: Այսպես. վերլուծություններ են կատարվել 2009 թվականի հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում, մասնավորապես՝ 2007 և 2008 թվականներին, պակաս ցույց տրված ծախսերը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» ենթակետի ուժով 2009 թվականի հաշվետու տարվա համախառն եկամտից նվազեցնելու և դրա արդյունքում 2009 թվականի հաշվետու տարվա նվազեցումները տվյալ տարվա համախառն եկամուտը գերազանցելու, այսինքն՝ հարկային վնասի առկայության, ինչպես նաև այդ վնասը՝ որպես 2009 թվականի հաշվետու տարվա վնաս 2013 և 2014 թվականների համախառն եկամուտներից նվազեցնելու Ընկերության իրավունքի մասին, այն պարագայում, երբ նման տվյալներ սույն գործով վիճարկվող վարչական ակտը չի պարունակում: Ավելին, եթե անգամ գործի նոր քննության արդյունքում հաստատվի, որ վնասի առաջացման տարին 2009 թվականն է, որպիսի պարագայում այն ենթակա կլինեք նվազեցման 2013 և 2014 թվականների համախառն եկամուտներից, մինևույն է այդ հանգամանքն սույն գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատման առումով որևէ նշանակություն ունենալ չի կարող, քանի որ ակտում արձանագրված խախտումը վերաբերում է 2007 և 2008 թվականներին առաջացած վնասին:

Այսպիսով, գտնում ենք, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտում անհրաժեշտ հիմնավորումների բացակայության պատճառով անհնար է հաստատված համարել այն փաստական և իրավական հիմքերի առկայությունը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր ակտի հիմքում, հետևաբար հնարավոր չէ նաև նման վարչական ակտը գնահատել իրավաչափ, քանի որ տվյալ դեպքում հաստատված չէ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտման փաստը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում ենք, որ տվյալ դեպքում սույն գործով վիճարկվող վարչական ակտով Ընկերությանը չէր կարող վերագրվել նախորդ տարիներին առաջացած վնասը դրա ստացման տարվան հաջորդող հինգ տարիներ փոխանցելու օրենսդրական պահանջի խախտում, քանի որ վարչական ակտը որևէ հիմնավորում չի պարունակում այդ վնասն առաջացած լինելու վերաբերյալ:

Այսպիսով, գտնում ենք, որ վճարել բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, անվավեր ճանաչելով ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսության 18.12.2015 թվականի թիվ 5012437 ակտը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճարել դատարանի լիազորությունը: Ըստ այդմ, գտնում ենք, որ վճարել բողոքը պետք է մերժել, իսկ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.12.2016 թվականի որոշումը պետք է թողնել անփոփոխ՝ սույն հատուկ կարծիքում ներկայացված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Գ. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/6067/05/16
2019թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/6067/05/16
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
 Ա. Թովմասյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴԻՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում քննելով Տիգրան Սահակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ վարչական դատարանի 07.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տիգրան
Սահակյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի
(այսուհետ՝ Կոմիտե)՝ 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումը վերացնելու պահանջի մա-
սին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Սահակյանը պահանջել է վերացնել Կոմիտեի իրավաբա-
նական վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որո-
շումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.03.2017
թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.05.2018 թվականի որոշմամբ Տիգրան Սահակյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.03.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տիգրան Սահակյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասը, սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.05.1997 թվականին, ուժի մեջ է մտել 01.07.1997 թվականին, բացառությամբ 6-րդ հոդվածի վերջին պարբերության և 26-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ ՀՀ հարկային օրենսգրքի (ՀՕ-165-Ն) 445-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն) 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը, 8-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերը, սխալ է կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ, 33-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.04.1997 թվականին, ուժի մեջ է մտել 30.05.1997 թվականին, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ ՀՀ հարկային օրենսգրքի (ՀՕ-165-Ն) 445-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն) 23-րդ, 24-րդ հոդվածները, չի կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ֆիզիկական անձի մտավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն այն դեպքում, երբ նրա կողմից կատարվել են ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի օտարման որևէ ձևով հատուցելի գործարքներ, և այդ գործարքների գինը գերազանցել է 58,35 մլն ՀՀ դրամը:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 35-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածները:*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Կոմիտեն 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշմանն ուղղված վարչական վարույթի լուսմեր չի անցկացրել, ինչի հետևանքով Տիգրան Սահակյանը ոչ իրավաչափ կերպով գրկվել է իր նկատմամբ հարկային պարտավորություններ առաջադրելուն ուղղված վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողությունների միջոցով վարչական մարմնի վերջնական որոշման վրա ազդելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.05.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տիգրան Սահակյանը 13.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրով Օսիկ Այվազյանին է վաճառել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող շինությունը (շինության նպատակային նշանակությունը՝ առևտրի սրահ), որի գինը, համաձայն պայմանագրի, կազմում է 57.000.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 84-85**):

2) Տիգրան Սահակյանը 31.07.2015 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերով Վալերի Սահակյանին է նվիրել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/6 և թիվ 69/7 հասցեներում գտնվող շինությունները (շինությունների նպատակային նշանակությունը՝ հասարակական) (**հատոր 1-ին, գ.թ. 80-83**):

3) 10.08.2016 թվականին կազմված ծանուցագրով Տիգրան Սահակյանը տեղեկացվել է իր կողմից չկատարված, վերը նշված գործարքների կապակցությամբ առաջացած ավելացված արժեքի գծով հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով Վարչությունում վարչական վարույթի հարուցման մասին, և նրան առաջարկվել է եռօրյա ժամկետում Կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ իր գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները: Նշված ծանուցագիրը Տիգրան Սահակյանը ստացել է 15.08.2016 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 86-87**):

4) Վարչության պետի 18.08.2016 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1617/02 որոշմամբ Տիգրան Սահակյանից գանձվել է 14.397.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 88-89**):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ նույնպես անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից հասարակական նշանակության գույքի անհատույց օտարման գործարքներն ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա լինելու հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- արդյո՞ք անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարված գույքի օտարման անհատույց գործարքները կարող են համարվել ապրանքի մատակարարում և առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն.

- արդյո՞ք վարչական մարմինն իրավասու է չանցկացնել լուումներ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված՝ լուումներ չանցկացնելու հայեցողական և պարտադիր հիմքերի բացակայության պայմաններում:

1) վճռարևկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պարզադատարանությամբ.

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու համար ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման իրացման շրջանառության չափը նույն օրենքի կիրառման առումով համարվում է ԱԱՀ-ի շեմ, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների և նույն օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերի՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, որոնց համար նույն օրենքի կիրառման առումով ԱԱՀ-ի շեմ է համարվում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման իրացման շրջանառության 58,35 մլն դրամը:

Նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառվում է նույն օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերում: Նույն պարբերությունում նշված գործարքների մասով ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է՝ (...)

բ. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ԱԱՀ-ի շեմը գերազանցող գումարից, եթե անձի իրականացրած՝ ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ԱԱՀ-ի շեմը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ նույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք, եթե՝ մատուցել են այնպիսի ծառայություններ (բացառությամբ անշարժ գույքի վարձակալության գործարքների) կամ մատակարարել են այնպիսի ապրանքներ, որոնց իրականացումն օրենքի համաձայն չի դիտվում որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը

(շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) **սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:**

Նշված կետով սահմանվել են նաև այն դեպքերը, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները ևս համարվում են ապրանքի մատակարարում:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որի առանձնահատկություններից է այն, որ վերջինս կիրառվում է տնտեսական գործունեության բավականին լայն շրջանակում ընդգրկված գործարքների նկատմամբ, որոնք «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են ապրանքի մատակարարում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկի՝ որպես անուղղակի հարկի հարկվող օբյեկտն ավելացված արժեքի հարկ վճարողների կամ ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն կրող անձանց կողմից իրականացվող օրենքով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքն է (շրջանառությունը): Ընդ որում, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով ավելացված արժեքի հարկով հարկվում են, *inter alia*, ապրանքների մատակարարման գործարքները (գործառնությունները), այսինքն՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելուն ուղղված գործարքները: Որպես կանոն՝ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտը ձեռնարկատիրական գործունեություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) իրականացրած գործարքներն են: Սակայն, բացի վերը նշված անձանց կողմից իրականացրած գործարքների, օրենսդիրը որդեգրել է այն մոտեցումը, որ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող մի շարք գործարքներ որոշակի պայմանների առկայության դեպքում ևս «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտարկվում են որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ (*տես, օրինակ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Ռազմիկ Սեդրակյանի թիվ ՎԳ/0560/05/15 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքներ են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությամբ սահմանված գործարքները:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի *օգտարմը*, (...):

Վերը նշված իրավանքների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի իմաստով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, եթե վերջինս օտարել է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմաս: Ընդ որում, վերը նշված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի շեմ է սահմանվել 58,35 մլն ՀՀ դրամը: Այն դեպքում, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված՝ ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ավելացված արժեքի հարկի շեմը (58,35 մլն ՀՀ դրամ), ապա վերը նշված գործարքների մասով ավելացված արժեքի հարկի պարտավորության մեծությունը որոշվում է գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ավելացված արժեքի հարկի շեմը (58,35 մլն ՀՀ դրամ) գերազանցող գումարից:

Հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետում կիրառված «օտարում» բառի նշանակությունը:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքների (գործառնություններ) թվին դասելով ապրանքների մատակարարումը, միաժամանակ բացահայտում է նաև դրա հասկացությունը: Մասնավորապես, օրենսդիրն ապրանքների մատակարարում է համարել այն գործարքը, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը *որևէ ձևով կապարվող հատուցման դիմաց* այլ անձի փոխանցելու միջոցով: Փաստորեն, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքի մատակարարում են միայն հատուցելի գործարքները, այսինքն՝ այն գործարքները, որոնցով ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվում հատուցման դիմաց:

Մինևույն ժամանակ օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությամբ սահմանել է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող, ապրանքի մատակարարում համարվող գործարքները՝ դրանց թվին դասելով

նաև ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարման գործարքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով սահմանված՝ վերը նշված դրույթն անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե այդ հոդվածի ընդհանուր համատեքստից դուրս, այլ հաշվի առնելով նաև դրանով սահմանված մնացած իրավակարգավորումները, մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությամբ ամրագրված դրույթը, համաձայն որի՝ *սպրանքի մատակարարում կարող են համարվել բացառապես հատուցելի գործարքները*: Փաստորեն, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով սահմանված գույքի օտարումը համարվում է սպրանքի մատակարարում միայն այն դեպքում, երբ այդ գործարքով գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվել որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված հատուկ կարգավորումը նպատակ է հետապնդում սահմանափակել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող այն գործարքները, որոնք վերջինիս համար առաջացնում են ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի համաձայն՝ սպրանքի մատակարարում է համարվում ոչ թե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կնքված գույքի օտարման հատուցելի ցանկացած գործարք, այլ միայն գույքի օտարման այն գործարքները, որոնց առարկան ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմաս է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի ուժով համարվում է սպրանքի մատակարարում և անձի մոտ կարող է առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն միայն այն դեպքում, երբ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի է փոխանցվել հատուցելի գործարքով, այսինքն՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց:

Հետևաբար, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարված՝ վերոգրյալ գույքի օտարման *անհասարույց գործարքները* չեն կարող համարվել ապրանքի մատակարարում և չեն կարող առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տիգրան Սահակյանը 13.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրով Օնիկ Այվազյանին է վաճառել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող շինությունը (շինության նպատակային նշանակությունը՝ առևտրի սրահ), որի գինը, համաձայն պայմանագրի, կազմում է 57.000.000 ՀՀ դրամ: Տիգրան Սահակյանը 31.07.2015 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերով Վալերի Սահակյանին է նվիրել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/6 և թիվ 69/7 հասցեներում գտնվող շինությունները (շինությունների նպատակային նշանակությունը՝ հասարակական): Վարչության պետի 18.08.2016 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1617/02 որոշմամբ Տիգրան Սահակյանից գանձման ենթակա գումարը կազմել է 14.397.000 ՀՀ դրամ:

Սույն գործով Դատարանը, հայր մերժելով, նշել է նաև, որ Տիգրան Սահակյանը, իրականացնելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետով սահմանված գործարք (ապրանքի մատակարարում), այն է՝ Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող շինության (առևտրի սրահի), Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/6 և թիվ 69/7 հասցեներում գտնվող հասարակական նշանակության շինությունների օտարում, որոնց հանրագումարային արժեքը (առաջինի մասով վաճառքի գինը, իսկ մյուսների մասով կադաստրային արժեքը) գերազանցել է օրենքով սահմանված ավելացված արժեքի հարկի շեմը, չի ներկայացրել ավելացված արժեքի հարկի հաշվարկ, ինչպես նաև չի վճարել այդ գործարքներից առաջացած ավելացված արժեքի հարկի գումարը, ինչը, սակայն, նա պարտավոր էր կատարել օրենքի ուժով:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, ըստ էության համաձայնել է Դատարանի պատճառաբանությունների և եզրահանգումների հետ:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների վերոգրյալ պատճառաբանությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Նախ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տիգրան Սահակյանի կողմից գույքի օտարմանն ուղղված երեք գործարքներից առաջինով (13.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագիր) Տիգրան Սահակյանի կողմից Օնիկ Այվազյանին 57.000.000 ՀՀ դրամով վաճառվել է Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող առևտրի սրահը, ինչը դասվում է իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված գործարքների թվին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոգրյալի կապակցությամբ դատավարության կողմերի միջև վեճ առկա է:

Մինևույն ժամանակ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերը նշված գործարքի արժեքն ինքնին չի գերազանցում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված գործարքների համար սահմանված ավելացված արժեքի հարկի

շեմը (58,35 մլն ՀՀ դրամ), իսկ Կոմիտեն վիճարկվող վարչական ակտով ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա գործարքներ է համարել նաև Տիգրան Սահակյանի կողմից իրականացված երկրորդ և երրորդ գործարքները (31.07.2015 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրեր), Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նշված գործարքներն ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա լինելու հարցին՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Ինչպես արդեն իսկ նշվեց, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար սահմանում է ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն միայն որոշակի կատեգորիայի գույքի հատուցելի օտարման գործարքների դեպքում:

Տվյալ դեպքում 31.07.2015 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերով Տիգրան Սահակյանը Վալերի Սահակյանին է նվիրել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/6 և թիվ 69/7 հասցեներում գտնվող հասարակական նշանակության շինությունները, որպիսի գույքը ներառվում է իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված ապրանքների ցանկում:

Անդրադառնալով 31.07.2015 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերի բնույթին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 439-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը, որով կողմն իր պարտականությունների կատարման համար պետք է վճար կամ այլ հանդիպական կատարում ստանա, հատուցելի է: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անհատույց է ճանաչվում այն պայմանագիրը, որով մի կողմը պարտավորվում է որևէ բան տրամադրել մյուս կողմին՝ առանց նրանից վճար կամ այլ հանդիպական կատարում ստանալու:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է նվիրատվության պայմանագրի երկու տեսակ՝ ռեալ, երբ պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը կամ գույքային իրավունքը (պահանջը) հանձնելու կամ գույքային պարտավորությունից ազատելու պահից, և կոնսենսուալ, երբ մեկ կողմը (նվիրատուն) պարտավորվում է մյուս կողմին (նվիրառուին) հանձնել նվերն ապագայում: Նման դեպքում առաջանում է պարտավորական իրավահարաբերություն, որի բովանդակությունն է կազմում նվիրառուի պարտականությունը ապագայում ավելացնել նվիրառուի գույքն իր գույքի նվազման հաշվին մի կողմից և նվիրառուի՝ գույքը պահանջելու իրավունքը մյուս կողմից:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նվիրատվության պայմանագրերին (անկախ դրա տեսակից) բնորոշ է դրանց անհատուցելի բնույթը, այսինքն՝ նվիրատուն, նվիրառուի սեփականությանը գույք կամ իրեն կամ երրորդ անձին ուղղված գույքային պահանջ հանձնելով կամ նվիրառուին իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից ազատելով, չի ստանում նվիրառուի կողմից որևէ հատուցում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձի կողմից իր գույքի նվիրատվությունը՝ որպես անհատույց գործարք, չի համարվում ապրանքի մատակարարում, հետևաբար չի կարող իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի ուժով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող անձի մոտ առաջացնել ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Տիգրան Սահակյանի նկատմամբ ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների առաջադրումն ու գանձումը ոչ իրավաչափ են, քանի որ Տիգրան Սահակյանի կողմից 31.07.2015 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերը իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված գործարքների թվին չեն դասվում, իսկ միայն 13.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրի արժեքը չի գերազանցում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված գործարքների համար սահմանված ավելացված արժեքի հարկի շեմը (58,35 մլն ՀՀ դրամ): Փաստորեն, սույն գործով վիճարկվող՝ Վարչության պետի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «ա» ենթակետի խախտմամբ, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

2) վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պարզադատարանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու (...) հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառույթները (ընթացիկ փուլ): Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ): Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած

վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներ են՝ (ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ, (բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ ետօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց (...) վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուումներ կարող են չանցկացվել, եթե՝ (ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուումներ անցկացվեն, (բ) դիմումն ակնհայտ անհիմն է, (գ) ընդունվում է քանավոր վարչական ակտ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լուումներ չեն անցկացվում, եթե՝ (ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման, (բ) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լուումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լսելու վարչական մարմնի պարտականությունը, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է վերջիններիս հնարավորություն տալ արտահայտվելու տվյալ վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի մասնակիցների լսված լի-

նելու իրավունքի գործնական իրացումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի ընթացիկ փուլում, երբ վարչական մարմինն իրականացնում է գործի փաստերի ուսումնասիրություն և պարզում է կիրառման ենթակա իրավական ակտերը. այս փուլում կատարվում են վարչական ակտ ընդունելու և ուղղված հիմնական գործողությունները, մասնավորապես՝ վարչական գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների բացահայտումը, անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը և գնահատումը, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Բացի այդ, վարույթի ընթացիկ փուլում լուսմները պետք է իրականացվեն այն հաշվառմամբ, որ վարույթի մասնակիցները դեռ հնարավորություն ունենան իրենց դիրքորոշմամբ ազդելու վարչական մարմնի որոշման վրա:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում օրենսդիրը նախատեսել է վարչական վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքից որոշ բացառություններ: Ընդ որում, նշված հոդվածի 2-րդ մասը սահմանում է լուսմներ չանցկացնելու այն հիմքերը, որոնց առկայության դեպքում վարչական մարմինն ունի հայեցողական լիազորություն ընտրելու լուսմներ անցկացնելու կամ չանցկացնելու երկու իրավաչափ լուծումներից մեկը: Վարչական վարույթի ընթացքում լուսմներ չանցկացնելու հայեցողական հիմքերն են.

ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցետեղումը չի պնդում, որ լուսմներ անցկացվեն,

բ) վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած դիմումն ակնհայտ անհիմն է,

գ) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բանավոր վարչական ակտ:

Մինչդեռ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է լուսմներ չանցկացնելու ինպերատիվ հիմքերը, որոնք են՝

ա) անհրաժեշտություն է առաջացել անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման,

բ) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է այլ ձևի վարչական ակտ:

Ընդ որում, լուսմներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում ամրագրված ինպերատիվ հիմքը համահունչ է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված այն իրավակարգավորման հետ, որ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարչական վարույթի ընթացքում լուսմներ չանցկացնելու վերոգրյալ դեպքերը սպառնիչ չեն, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդիրն ամրագրել է, որ օրենքով կարող են նախատեսվել լուսմներ չանցկացնելու հայեցողական և ինպերատիվ այլ հիմքեր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լուսմներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված թե՛

հայեցողական, թե՛ պարտադիր հիմքերի բացակայության պայմաններում վարչական մարմինը պարտավոր է վարչական վարույթի ընթացքում անցկացնել լուումներ՝ ապահովելով վարչական վարույթի մասնակիցների պատշաճ ծանուցումը լուումների ժամանակի և վայրի վերաբերյալ:

Դատարանը Տիգրան Սահակյանի հայցը մերժելիս նշել է նաև, որ հայցվորն ըստ էության լիովին իրացրել է իր լսված լինելու իրավունքը, մասնավորապես՝ ստանալով համապատասխան ծանուցում՝ նա ներկայացրել է առարկություններ, որպիսի առարկությունները վարչական մարմնի կողմից չեն ընդունվել՝ վիճարկվող որոշման մեջ բերված պատճառաբանություններով, իսկ վարչական մարմնի կողմից որևէ առարկության մերժումը (կամ չընդունումը) ինքնին չի կարող համարվել անձի լսված լինելու իրավունքի խախտում:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Տիգրան Սահակյանի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է նաև, որ Տիգրան Սահակյանի ներկայացուցիչ Հակոբ Սաֆարյանի կողմից հարկային պարտավորությունների և կատարված հաշվարկների վերաբերյալ ներկայացված առարկությունները քննարկվել են, սակայն չեն ընդունվել, և վիճարկվող վարչական ակտում ներկայացված առարկությունները չընդունելու վերաբերյալ վարչական մարմնի մանրամասն դատողությունների բացակայությունն ինքնին հիմք չէ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գնահատմամբ սույն գործի փաստերից հետևում է, որ վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում բացակայել են լուումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված թե՛ հայեցողական, թե՛ պարտադիր հիմքերը: Հետևաբար Կոմիտեի վիճարկվող որոշմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լուումների անցկացումը պարտադիր էր: Մինչդեռ Կոմիտեն 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լուումներ չի անցկացրել: Փոխարենը, 10.08.2016 թվականին կազմված ծանուցագրով Տիգրան Սահակյանին առաջարկվել է եռօրյա ժամկետում Կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ իր գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները, ինչը, սակայն, չի կարող փոխարինել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված լուումների՝ լուումներ չանցկացնելու, ինչպես նաև վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու հիմքերի բացակայության պայմաններում:

Փաստորեն, Կոմիտեի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու հետևանքով Տիգրան Սահակյանը ոչ իրավաչափ կերպով գրկվել է իր նկատմամբ հարկային պարտավորություններ առաջադրելուն ուղղված վարչական վարույթի լուումների շրջանակում գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողությունների միջոցով վարչական մարմնի վերջնական որոշման վրա ազդելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Կոմիտեի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումն ընդունվել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի խախտմամբ:

Հետևաբար Կոմիտեի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պար-

տավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է և ենթակա է վերացման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի ուժով:

Այսպիսով, սույն վճարեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճարեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճարեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճարեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճարեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճարեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճարեկ դատարանն արձանագրում է, որ Տիգրան Սահակյանը վճարեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, և քանի որ վճարեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճարեկ դատարանը գտնում է, որ Տիգրան Սահակյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի

հիմքով ենթակա է հատուցման Կոմիտեի կողմից: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեից հոգուտ Տիգրան Սահակյանի ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք և 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար Տիգրան Սահակյանի կողմից նախապես վճարված պետական տուրք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.05.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել. վերացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի 18.08.2016 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1617/02 որոշումը:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հոգուտ Տիգրան Սահակյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրք, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական
և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/6067/05/16 վարչական գործով 25.12.2019
թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան), 25.12.2019 թվականին քննելով Տիգրան Սահակյանի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տիգրան Սահակյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումը վերացնելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճարելի բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.05.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել. վերացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի 18.08.2016 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1617/02 որոշումը:

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Մամիկոն Դրմեյանս և Գոռ Հակոբյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճարելի դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը:

1. Գործի դարավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Տիգրան Սահակյանը պահանջել է վերացնել Կոմիտեի իրավաբանական վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.03.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.05.2018 թվականի որոշմամբ Տիգրան Սահակյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.03.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճարելի բողոք է ներկայացրել Տիգրան Սահակյանը:

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

1) Վերաքննիչ դարարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասը, սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.05.1997 թվականին, ուժի մեջ է մտել 01.07.1997 թվականին, բացառությամբ 6-րդ հոդվածի վերջին պարբերության և 26-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ ՀՀ հարկային օրենսգրքի (ՀՕ-165-Ն) 445-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն) 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը, 8-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ կետերը, սխալ է կիրառել իրավահարաբերության ծագման

պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ, 33-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.04.1997 թվականին, ուժի մեջ է մտել 30.05.1997 թվականին, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ ՀՀ հարկային օրենսգրքի (ՀՕ-165-Ն) 445-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն) 23-րդ, 24-րդ հոդվածները, չի կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառվեն:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ֆիզիկական անձի մոտ ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորություններ կարող են առաջանալ միայն այն դեպքում, երբ նրա կողմից կատարվել են ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի օտարման որևէ ձևով հատուցելի գործարքներ, և այդ գործարքների գինը գերազանցել է 58,35 մլն դրամը:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 35-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Կոմիտեն 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշման ուղղված վարչական վարույթի լուսմներ չի անցկացրել, ինչի հետևանքով Տիգրան Սահակյանը ոչ իրավաչափ կերպով գրկվել է իր նկատմամբ հարկային պարտավորություններ առաջադրելուն ուղղված վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողությունների միջոցով վարչական մարմնի վերջնական որոշման վրա ազդելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.05.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1) Տիգրան Սահակյանը 13.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրով Օսիկ Այվազյանին է վաճառել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող շինությունը (շինության նպատակային նշանակությունը՝ առևտրի սրահ), որի գինը, համաձայն պայմանագրի, կազմում է 57.000.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 84-85**).

2) Տիգրան Սահակյանը 31.07.2015 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերով Վալերի Սահակյանին է նվիրել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/6 և թիվ 69/7 հասցեներում գտնվող շինությունները (շինությունների նպատակային նշանակությունը՝ հասարակական) (**հատոր 1-ին, գ.թ. 80-83**).

3) 10.08.2016 թվականին կազմված ծանուցագրով Տիգրան Սահակյանը տեղեկացվել է իր կողմից չկատարված, վերը նշված գործարքների կապակցությամբ առաջացած ավելացված արժեքի գծով հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով Վարչությունում վարչական վարույթի հարուցման մասին, և նրան առաջարկվել է եռօրյա ժամկետում Կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վար-

չություն ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ իր գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները: Նշված ծանուցագիրը Տիգրան Սահակյանը ստացել է 15.08.2016 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 86-87**).

4) Վարչության պետի 18.08.2016 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1617/02 որոշմամբ Տիգրան Սահակյանից գանձվել է 14.397.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 88-89**):

4. Հատուկ կարծիքի հիմնավորումները.

Գտնում ենք, որ վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է և ենթակա էր մերժման, իսկ երկրորդ հիմքով այն ենթակա չէր քննարկման Վճռաբեկ դատարանի կողմից հետևյալ պատճառաբանությամբ:

1. Այսպես. իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ (...) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու համար ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման իրացման շրջանառության չափը նույն օրենքի կիրառման առումով համարվում է ԱԱՀ-ի շեմ, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների և նույն օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերի՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց, որոնց համար նույն օրենքի կիրառման առումով ԱԱՀ-ի շեմ է համարվում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման իրացման շրջանառության 58,35 մլն դրամը: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառվում է նույն օրենքի 3.1 հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերում:

Նույն պարբերությունում նշված գործարքների մասով ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է՝

ա. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառությունից, եթե անձի իրականացրած ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում գերազանցել է ԱԱՀ-ի շեմը,

բ. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ԱԱՀ-ի շեմը գերազանցող գու-

մարից, եթե անձի իրականացրած՝ ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ԱԱՀ-ի շեմը: (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-ին հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք, եթե նրանց իրականացրած գործարքները, նույն օրենքի համաձայն, համարվում են ապրանքի մատակարարում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:

Նշված կետով սահմանվել են նաև այն դեպքերը, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները ևս համարվում են ապրանքի մատակարարում:

Մասնավորապես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետով սահմանվել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնետնամասի օտարման դեպքերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (հարկման բազան) որոշվում է հետևյալ կարգով՝

1) ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում (բացառությամբ նույն հոդվածով սահմանված դեպքերի) ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (ներառյալ՝ այդ արժեքին օրենքով միացվող այլ վճարումները)՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում: (...)

6) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից

20 և ավելի տոկոսով ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ նույն օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի վարձատրության, պարգևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը: (...)

9) շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), բնակելի կամ այլ տարածքների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է նույն հողվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից, բացառությամբ նույն կետով նախատեսված դեպքի: (...):

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որի առանձնահատկություններից է այն, որ վերջինս կիրառվում է տնտեսական գործունեության բավականին լայն շրջանակում ընդգրկված գործարքների նկատմամբ, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են ապրանքի մատակարարում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերլուծության արդյունքում ՀՀ վճարելի դատարանն իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ ավելացված արժեքի հարկով հարկվող օբյեկտ, որպես կանոն, ձեռնարկատիրական գործունեություն վարող իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) իրականացրած գործարքներն են: Մինևնույն ժամանակ, սակայն, բացի վերը նշված անձանց կողմից իրականացրած գործարքների, օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով որդեգրել է այն մտեցումը, որ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող մի շարք գործարքներ որոշակի պայմանների առկայության դեպքում ևս իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով դիտարկվում են որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ: Նշված գործարքներից են, մասնավորապես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ սահմանված գործարքները (*տես, թիվ ՎԳ/0811/05/15 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 26.12.2016թ. որոշումը*):

Վերոգրյալ իրավանորմերի և ՀՀ վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գտնում ենք, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք, եթե օտարվել է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմաս: Ընդ որում, օրենսդիրը

նշված գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի օտարումն ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք համարելը չի պայմանավորել այդ գույքը կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի օտարումը որևէ հատուցելի եղանակով օտարելու հետ: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը նշված գույքը կամ դրանում իրեն պատկանող բաժնեմասն օտարել է որևէ հատուցելի եղանակով (օրինակ՝ վաճառք, փոխանակություն), թե՛ անհատույց (օրինակ՝ նվիրատվություն), մինչև այն է այդ գործարքն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, և ըստ այդմ՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք:

Գտնում ենք նաև, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետով նախատեսված գործարքների դեպքում իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառման առումով ԱԱՀ-ի շեմ է համարվում ապրանքների մատակարարման իրացման շրջանառության 58,35 մլն դրամը: Նշված գործարքների մասով ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է գույքի մատակարարման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառությունից, եթե անձի իրականացրած ապրանքի մատակարարման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում գերազանցել է ԱԱՀ-ի շեմը՝ 58,35 մլն դրամը, սակայն, եթե անձի իրականացրած՝ ապրանքի մատակարարման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ԱԱՀ-ի շեմը՝ 58,35 մլն դրամը, ապա ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է գույքի մատակարարման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի ԱԱՀ-ի շեմը գերազանցող գումարից:

Հարկ ենք համարում ընդգծել, որ այն դեպքերում, երբ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետում նշված գործարքը կատարվել է անհատույց, այսինքն՝ գույքը կամ դրանում անձին պատկանող բաժնեմասն օտարվել է ոչ հատուցելի եղանակով, այդ գործարքի մասով ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով՝ գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից: Այսինքն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետում նշված գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի ցանկացած եղանակով (հատուցելի կամ անհատույց) օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելիս որպես նվազագույն արժեք առնվազն պետք է ընդունվի տվյալ գույքի կամ դրանում անձին պատկանող բաժնեմասի կադաստրային արժեքը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ օրենսդիրը որպես ընդհանուր կանոն ԱԱՀ-ով հարկվող գործարքներ է համարում այն դեպքերը, երբ ապրանքների մատակարարումն իրականացվում է սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով (իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին պարբերության 1-ին կետ),

սակայն այդ ընդհանուր կանոնից օրենսդիրն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված որոշ գործարքների մասով նախատեսել է բացառություն՝ սահմանելով, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում այն դեպքերում, երբ օտարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույք, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասը՝ անկախ օտարման հատուցելի կամ անհատույց լինելու հանգամանքից (իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետ): Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ օտարելն ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք համարելու դեպքերն օրենսդիրը հստակ պայմանավորել է օտարումը որևէ ձևով կատարվող հատուցման հետ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «բ» ենթակետը շարադրելով հետևյալ կերպ. «Անհար ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում (...) բ) մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հարուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է րվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում, (...)»), իսկ նույն պարբերության «ա» ենթակետը շարադրելիս օրենսդիրը կիրառել է ոչ թե «որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքեր» ձևակերպումը, այլ՝ հետևյալ ձևակերպումը. «Անհար ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝ ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը, (...)»:

Հարկ ենք համարում արձանագրել, որ սույն գործը հարուցվել է Տիգրան Սահակյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Վարչության պետի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումը:

Դատարանը, մերժելով հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, եզրահանգել են, որ Վարչության պետի թիվ 1617/02 որոշումն իրավա-

չափ է և կազմված է օրենսդրության պահանջների պահպանմամբ, քանի որ Տիգրան Սահակյանը, իրականացնելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետով սահմանված գործարք (ապրանքի մատակարարում), այն է՝ Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող շինության (առևտրի սրահի), Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/6 և թիվ 69/7 հասցեներում գտնվող հասարակական նշանակության շինությունների օտարում, որոնց հանրագումարային արժեքը (առաջինի մատով վաճառքի գինը, իսկ մյուսների մատով կադաստրային արժեքը) գերազանցել է օրենքով սահմանված ավելացված արժեքի հարկի շեմը, չի ներկայացրել ավելացված արժեքի հարկի հաշվարկ, ինչպես նաև չի վճարել այդ գործարքներից առաջացած ավելացված արժեքի հարկի գումարը, ինչը, սակայն, նա պարտավոր էր կատարել օրենքի ուժով:

Սույն հատուկ կարծիքում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Ամբողջությամբ հիմնավոր ենք համարում ստորադաս դատարանների եզրահանգումներն այն մասին, որ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի կողմից կայացված թիվ 1617/02 որոշումն իրավաչափ է և այն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են:

Այսպես. սույն գործի փաստերի համաձայն՝ Տիգրան Սահակյանը 13.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրով Օսիկ Այվազյանին է վաճառել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող շինությունը (նպատակային նշանակությունը՝ առևտրի սրահ), որպիսի պայմանագրով նախատեսված անշարժ գույքի գինը կազմել է 57.000.000 ՀՀ դրամ: Այնուհետև Տիգրան Սահակյանը 31.07.2015 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերով Վալերի Սահակյանին է նվիրել Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/6 և թիվ 69/7 հասցեներում գտնվող շինությունները (նպատակային նշանակությունները՝ հասարակական):

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննարկելով Տիգրան Սահակյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը, պարզել է, որ համաձայն ՀՀ կառավարության 30.12.2010 թվականի թիվ 1775-Ն որոշման, ըստ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների՝ Տիգրան Սահակյանի կողմից 13.05.2015 թվականին օտարվել է Երևան քաղաքի Վարդանանց փողոց 69/5 հասցեում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքը, որի պայմանագրի գումարը կազմել է 57.000.000 ՀՀ դրամ, իսկ կադաստրային արժեքը կազմել է 10.198.402 ՀՀ դրամ, 31.07.2015 թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերով Երևան քաղաքի Վարդանանց փողոց 69/6 հասցեում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքը (գույքի կադաստրային արժեքը կազմել է 19.598.935 ՀՀ դրամ) և Երևան քաղաքի Վարդանանց փողոց 69/7 հասցեում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքը (գույքի կադաստրային արժեքը կազմել է 13.441.573 ՀՀ դրամ) անհատույց հանձնվել է այլ անձի, որպիսի գործարքն իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի իմաստով համարվում է ԱԱՀ-ով հարկվող գործարք, սակայն Տիգրան Սահակյանի կողմից՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի սահմանված կարգով չի հաշվարկ-

վել ԱԱՀ-ի գումարը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչություն չի ներկայացվել 2015 թվականի 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը: Միաժամանակ, պարզվել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության կողմից կատարված ժամկետանց հարկային պարտավորությունների մասին հաշվարկի համաձայն՝ ԱԱՀ-ի գծով Տիգրան Սահակյանի չկատարված հարկային պարտավորությունը 01.08.2016 թվականի դրությամբ կազմել է 14.397.000 ՀՀ դրամ, որից ապառք՝ 6.338.102 ՀՀ դրամ, տույժ՝ 2.671.510 ՀՀ դրամ, տուգանք՝ 5.387.388 ՀՀ դրամ: Նշվածի հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետը 18.08.2016 թվականին ընդունել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1617/02 որոշումը, որով որոշվել է Տիգրան Սահակյանից գանձել 14.397.000 ՀՀ դրամ:

Այսպիսով, վերոգրյալ իրավանորմերի և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում գտնում ենք, որ հայցվոր Տիգրան Սահակյանի կողմից կատարվել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության «ա» ենթակետի իմաստով ապրանքի մատակարարում համարվող, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք: Մասնավորապես՝ հայցվոր Տիգրան Սահակյանի կողմից 13.05.2015 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրով 57.000.000 ՀՀ դրամով օտարվել է Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող շինությունը (նպատակային նշանակությունը՝ առևտրի սրահ), իսկ 31.07.2015 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերով անհատույց եղանակով (նվիրատվություն) օտարվել են Երևան քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 69/6 և թիվ 69/7 հասցեներում գտնվող շինությունները (նպատակային նշանակությունները՝ հասարակական), որոնց կադաստրային արժեքները կազմել են համապատասխանաբար 19.598.935 ՀՀ դրամ և 13.441.573 ՀՀ դրամ: Նշվածից հետևում է, որ հայցվոր Տիգրան Սահակյանի կողմից կատարվել է 90.040.508 ՀՀ դրամի (57.000.000 + 19.598.935 + 13.441.573) ապրանքի մատակարարում, որպիսի պարագայում ԱԱՀ-ի շեմը՝ 58,35 մլն դրամը, գերազանցող մասը՝ ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը, կազմում է 31.690.508 ՀՀ դրամ (90.040.508 - 58.350.000), իսկ ԱԱՀ-ի 20 տոկոսն էլ կազմում է 6.338.102 ՀՀ դրամ: Միաժամանակ, հաշվի առնելով, որ Տիգրան Սահակյանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին չի ներկայացվել ԱԱՀ-ի հաշվարկ և վճարում չի կատարվել, հարկային մարմնի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2018 թվականին) 23-րդ և 24-րդ հոդվածներով սահմանված կարգով և չափերով իրավացիորեն հաշվարկվել են տույժեր՝ 2.671.510 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև տուգանք՝ 5.387.388 ՀՀ դրամի չափով:

Նման պայմաններում գտնում ենք, որ Դատարանը հայցը մերժելիս, իսկ Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռն անփոփոխ թողնելիս իրավացիորեն են հաստատված համարել այն փաստական հանգամանքը, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից կատարված՝ Տիգրան Սահակյանի՝ ԱԱՀ-ի գծով պարտավորության հաշվարկներն ամբողջությամբ կատարվել են իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի վերը վկայակոչված նորմերով սահմանված կարգով և դրանք բխում են վերջինիս կողմից կնքված գործարքների

արժեքներից (պայմանագրից և կադաստրային արժեքներից), և եզրահանգել, որ Կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 18.08.2016 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1617/02 որոշմամբ Տիգրան Սահակյանին առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունն իրավաչափ վարչական ակտ է, հետևաբար իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ ընդունված լինելու հիմքով սույն գործով վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին Վճռաբեկ դատարանի եզրահանգումները մեր դիտարկմամբ չեն բխում վկայակոչված օրենքի կարգավորումներից:

2. Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին, այն է՝ վարչական վարույթում Տիգրան Սահակյանի լաված լինելու իրավունքի խախտմանը, ապա գտնում ենք, որ այդ հիմքը չէր կարող քննարկման առարկա դառնալ Վճռաբեկ դատարանի կողմից և նաև հիմք հանդիսանալ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար հետևյալ պատճառաբանությամբ:

Այսպես. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) արտահայտել է այն դիրքորոշումը, որ այն դեպքերում, երբ դատաքննությունը ներառում է հակադիր մասնավոր շահեր, կողմերի հավասարության պահանջը, որն արդար դատաքննություն հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին ողջամիտ հնարավորություն պետք է տրվի ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ՝ ապացույցներ այնպիսի պայմաններում, որոնք նրան չեն դնում էականորեն ավելի նվազ բարենպաստ պայմաններում համեմատած հակառակ կողմի հետ (*տե՛ս, Նելսիդա Նիկողոսյանը և Գվիդոն Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի թիվ 11724/04 և 13350/04 գանգապնեթով ՄԻԵԴ 06.12.2007 թվականի վճիռը, պարբ. 37*):

Վարչական դատավարությունում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի մասնավոր դրսևորումներից մեկն այն է, որ վարչական դատարանը պարտավոր է նախ և առաջ ապահովել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքը, որը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող

գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

Անդրադառնալով նշված սկզբունքի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու («ex officio») սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, հայցադիմումը ներկայացնում են ձևական սխալներով, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները կամ ճիշտ չեն տարբերակում հիմնական ու ածանցյալ պահանջները կամ ներկայացնում են ոչ բավարար փաստական տվյալներ: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ինչպես նաև ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, **ոչ բավարար փաստական տվյալները համալրելու** վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը (*տե՛ս, Ալեքսանդր Կարալովի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում հարկ ենք համարում արձանագրել, որ դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը դատարանը պետք է իրացնի այնպես, որպեսզի դրա արդյունքում, ի թիվս այլնի, ոչ բավարար փաստական տվյալները համալրվելու հետևանքով հայցվորը հնարավորություն ունենա ներկայացնելու իր պահանջները հիմնավորող լրացուցիչ փաստարկներ և ապացույցներ, իսկ պատասխանողը հավասարապես հնարավորություն ունենա առարկել այդ փաստարկների դեմ՝ ներկայացնելով իր առարկությունները հիմնավորող ապացույցներ:

Այդուհանդերձ հարկ ենք համարում ընդգծել, որ յուրաքանչյուր գործով մատնանշման պարտականության կատարումը պետք է կատարվի այն հաշվառմամբ, որ չխախտվի ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից մեկը՝ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Անդրադառնալով նշված սկզբունքի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկով արձանագրել է, որ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով: Դատական պաշտպանության իրավունքի իրացումը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի հիման վրա անձի համար երաշխավորում է նաև հայցի առարկան և հիմքն ինքնուրույն որոշելու իրավական հնարավորություն: (...) Վարչական դատարանը պարտավոր է ինքնուրույն որոշել վեճի լուծման համար կիրառելի ենթակա իրավական նորմերը, ապա ձեռնարկել համարժեք միջոցներ՝ գործն ի պաշտոնե քննելու համար: Այսպես, օրինակ՝ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում նախնական դատական նիստում պարզելով վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական ակտերի շրջանակը, վարչական դատարանը մատնանշման իր լիազորությունն իրացնելիս պարտավոր է քննարկման առարկա դարձնել վարչական ակտի իրավաչափության վրա ազդեցություն ունեցող հնարավոր բոլոր հանգամանքները, այդ թվում՝ արդյո՞ք պահպանվել են այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացակարգային բոլոր կանոնները, և արդյո՞ք ճիշտ են մեկնաբանվել ու կիրառվել վարչական ակտի հիմքում ընկած նյութական իրավունքի նորմերը: Այլ կերպ ասած՝ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը, անկախ հայցվորի կողմից վկայակոչված իրավական հիմքերից, պետք է մատնանշի նաև ողջամտորեն հնարավոր բոլոր այն իրավական նորմերը, որոնց խախտումը կարող է հիմք հանդիսանալ վարչական ակտի անվավերության համար և առաջարկի հայցվորին դրանք համալրել համապատասխան փաստական տվյալներով: Միաժամանակ հաշվի առնելով տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը և դրա կիրառելիությունը նաև վարչական դատավարությունում, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս հետագա դատավարական գործողությունների իրականացման ժամանակ վարչական դատարանը կաշկանդված է շահագրգիռ անձի կամահայտությամբ: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ հայցվորը դատարանի կողմից մատնանշման լիազորության իրականացումից հետո պնդում է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատվի միայն որոշակի իրավական նորմի և ըստ այդմ ներկայացված փաստական հանգամանքների շրջանակներում, վարչական դատարանը գործի հետագա քննությունը պետք է իրականացնի և գործն ըստ էության լուծող դատական ակտում վարչական ակտի իրավաչափությունը գնահատի միայն այդ իրավական և փաստական հիմքերի շրջանակներում: Մինչդեռ այն դեպքում, երբ հայցվորը ևս գտնում է, որ դատարանը վարչական ակտի իրավաչափությունը պետք է ստուգի ամբողջ ծավալով, դատարանը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում պարտավոր է ձեռնարկել ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները վարչական ակտի իրավաչափությունն ամբողջ ծավալով գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներն ու տեղեկությունները ձեռք բերելու ուղղությամբ (*ԿԵՍ Ա/Ձ Գևորգ Գալթյանն ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային պետության թիվ ՎԳ/2976/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վիճարկման

հայցով գործի քննության առանձնահատկություններին՝ արձանագրում ենք, որ յուրաքանչյուր գործով դատարանն ոչ միայն ինքնուրույն որոշում է վեճի լուծման համար կիրառման ենթակա իրավական նորմերը, այլ նաև կողմերի հետ քննարկում և որոշում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը: Նշվածից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ կողմերից մեկն առաջադրում է քննարկման ենթակա որևէ հարց, որի առնչությամբ կարող է առաջանալ ապացուցում պահանջող փաստերի շրջանակ, ապա դատարանը պարտավոր է այն ներառել այդ շրջանակի մեջ և ապացուցման բեռի բաշխման կանոններին համապատասխան կողմերից պահանջել դատարան ներկայացնել անհրաժեշտ ապացույցներ: Մինչդեռ, եթե կողմերը չեն առաջադրում քննարկման ենթակա որևէ հարց կամ չեն վիճարկում որևէ փաստական հանգամանք ու դատարանի գնահատմամբ վեճի լուծման համար նոր փաստեր պարզելու անհրաժեշտությունը բացակայում է, ապա հետագայում դատարանի վճիռը բողոքարկելիս դատավարության մասնակիցներն իրավունք կունենան վկայակոչելու որևէ փաստ միայն այն դեպքում, եթե դատարանը չի ձեռնարկել ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները վարչական ակտի իրավաչափությունն ամբողջ ծավալով գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներն ու տեղեկությունները ձեռք բերելու ուղղությամբ, ինչի արդյունքում դատավարության մասնակիցը գրկվել է քննարկվող հարցի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելու և փաստարկներ ու ապացույցներ ներկայացնելու իրավունքն իրացնելու իրական հնարավորությունից:

Այսպիսով, գտնում ենք, որ եթե վիճարկման հայցով գործի քննության ժամանակ դատավարության մասնակիցը վարչական ակտի իրավաչափությունը չի վիճարկել որևէ հիմքով, իսկ դատարանը, ելնելով գործով պարզված հանգամանքներից, անհրաժեշտ չի համարել նշված հիմքի առնչությամբ որոշակի հարցեր պարզելն ու ապացույցներ պահանջելը, ապա հետագայում դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկելիս դատավարության մասնակիցները չեն կարող վերաքննիչ բողոքում ներառել վարչական ակտի անվավերության նոր հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պայմանավորված է դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն պարզելու («ex officio») սկզբունքի խախտման փաստով:

Գտնում ենք, որ վիճարկման հայցով գործի քննության ընթացքում վարչական ակտի իրավաչափության վրա ազդեցություն ունեցող բոլոր հիմքերը քննարկման առարկա դարձնելու պարագայում միայն կապահովվի վարչական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու հիմնարար սկզբունքի պահպանումը, քանի որ վերջիններս հնարավորություն կունենան քննարկվող հարցի վերաբերյալ արտահայտելու իրենց դիրքորոշումն ու փաստարկները և ներկայացնել ապացույցներ: Այդուհանդերձ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն պարզելու (“ex officio”) սկզբունքի խախտման պատճառով վարչական ակտի իրավաչափությունը դատարանում ստուգվի ոչ ամբողջ ծավալով, ուստի այդ պարագայում դատավարության մասնակիցն իրավունք ունի վերաքննիչ բողոքում ներառել վարչական ակտի անվավերության նոր հիմք և վերաքննիչ դատարանն էլ պարտավոր է անդադառնալ այդ հիմքին:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում անդրադառնալով այն իրավական հարցին, թե կարո՞ղ է արդյոք վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնել այնպիսի հիմքով, որը քննության առարկա չի դարձվել վարչական դատարանում և վկայակոչված չէ վերաքննիչ բողոքում, արձանագրել է, որ վերաքննիչ դատարանը, մի կող-

մից՝ չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից, այսինքն՝ առանց վերաքննիչ բողոքում համապատասխան հիմքի առկայության կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել: Իսկ մյուս կողմից՝ վերաքննիչ բողոքում վարչական դատարանի կողմից քննության առարկա չդարձված հիմքի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել նաև վերաքննիչ բողոքի այդ հիմքը՝ այս պարագայում չսահմանափակվելով վարչական դատարանում գործի քննության շրջանակներով: Փաստորեն, վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու («ex officio») սկզբունքի ուժով վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե՛ ոչ: **Իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում վկայակոչված չէ այնպիսի հիմք, որի վերաբերյալ վարչական դատարանում քննություն չի իրականացվել, ապա վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից և կայացնել դատական ակտ վերաքննիչ բողոքում չվկայակոչված և վարչական դատարանում քննության առարկա չդարձված հիմքով (տե՛ս *Ս/Ձ Գևորգ Գալթյանն ընդդեմ* ՀՀ ԿԱ պետական եկամտային կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության թիվ ՎԳ/2976/05/15 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):**

Այսպիսով, եզրահանգում ենք, որ վարչական դատարանի կողմից քննության առարկա չդարձված, սակայն վերաքննիչ բողոքում նշված հիմքը վերաքննիչ դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել՝ չսահմանափակվելով վարչական դատարանում գործի քննության շրջանակներով: Մինչև նույն ժամանակ, սակայն, վերաքննիչ դատարանը չի կարող քննության առարկա դարձնել այնպիսի հիմք, որի վերաբերյալ ոչ միայն վարչական դատարանում քննություն չի իրականացվել, այլ նաև այդ հիմքով վերաքննիչ բողոք չի ներկայացվել:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի կանոնակարգումը, համաձայն որի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը չի կարող բողոքարկվել վճարելի դատարան, եթե այն **նույն հիմքերով չի բողոքարկվել վերաքննիչ դատարանում**, բացառությամբ սույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի (*դատավարության մասնակից չդարձված անձանց կողմից բողոք ներկայացնելը*), հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ վարչական դատարանի վճռի դեմ որևէ հիմքով կամ հիմքերով վերաքննիչ բողոք ներկայացված չլինելու պարագայում դատավարության մասնակիցը չի կարող այդ հիմքով ներկայացնել վճարելի բողոք, իսկ ներկայացնելու պարագայում էլ ՀՀ վճարելի դատարանն իրավասու չէ այդ հիմքը դարձնել քննարկման առարկա:

Սույն գործի փաստերի համաձայն՝ պահանջելով վերացնել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումը, Տիգրան Սահակյանը վարչական վարույթում իր լսված լինելու իրավունքի խախտումը, որպես անվավերության հիմք, չի վկայակոչել ոչ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով, ոչ էլ ՀՀ վարչական դատարանում գործի քննության ընթացքում և այդ հիմքը ՀՀ վարչական դատարանում քննարկման առարկա չի դարձել: Նշված հիմքը չի վկայակոչվել նաև Տիգրան Սահակյանի

կողմից ներկայացված վերաքննիչ բողոքում: Ավելին, վարչական վարույթում իր լաված լինելու իրավունքի խախտման հիմքը չի վկայակոչվել նույնիսկ Տիգրան Սահակյանի կողմից ներկայացված առաջին վճռաբեկ բողոքում: Նշված հիմքը վկայակոչվել է միայն «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2018 թվականի որոշմամբ արձանագրված սխալները շտկելուց հետո կրկին ներկայացված վճռաբեկ բողոքում, հետևաբար գտնույմ ենք, որ Վճռաբեկ դատարանը չէր կարող քննարկման առարկա դարձնել վարչական վարույթում Տիգրան Սահակյանի լաված լինելու իրավունքի խախտման հիմքը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, քննարկելով և հաստատված համարելով վարչական վարույթում Տիգրան Սահակյանի լաված լինելու իրավունքի խախտման փաստը, անվավեր է ճանաչել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումը, Կոմիտեին գրկելով նշված հարցի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելու և փաստարկներ ու ապացույցներ ներկայացնելու իրավունքն իրացնելու իրական հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանը Տիգրան Սահակյանի լաված լինելու իրավունքի խախտման փաստը հաստատված համարելու հիմքում դրել է այն դատողությունը, որ Կոմիտեն 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լուումներ չի անցկացրել և փոխարենը, 10.08.2016 թվականին կազմված ծանուցագրով Տիգրան Սահակյանին առաջարկվել է եռօրյա ժամկետում Կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչությունն ներկայացնել իր գրավոր բացատրությունները և/կամ առարկությունները, ինչը, սակայն, չի կարող փոխարինել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված լուումներին՝ լուումներ չանցկացնելու, ինչպես նաև վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու հիմքերի բացակայության պայմաններում: Արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Կոմիտեի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու հետևանքով Տիգրան Սահակյանը ոչ իրավաչափ կերպով գրկվել է իր նկատմամբ հարկային պարտավորություններ առաջադրելուն ուղղված վարչական վարույթի լուումների շրջանակում գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողությունների միջոցով վարչական մարմնի վերջնական որոշման վրա ազդելու հնարավորությունից:

Մինչդեռ անդրադառնալով Վճռաբեկ դատարանի վերոգրյալ պատճառաբանություններին՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Նախ՝ ինչպես վերը նշվեց, վարչական վարույթում իր լաված լինելու իրավունքի խախտումը, որպես անվավերության հիմք Տիգրան Սահակյանը չի վկայակոչել ո՛չ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումով, ո՛չ ՀՀ վարչական դատարանում գործի քննության ընթացքում, ո՛չ էլ վերաքննիչ բողոքով, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ այդ հիմքով չէր կարող ներկայացնել վճռաբեկ բողոք:

Երկրորդ՝ ինչպես հայցադիմումում, այնպես էլ սույն գործով վիճարկվող վարչական ակտում առկա է նշում այն մասին, որ Տիգրան Սահակյանի ներկայացուցչի կողմից վարչական մարմնին են ներկայացվել առարկություններ: Մասնավորապես, ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ «Տիգրան Սահակյանից չվճարված հարկային պարտավորությունները զանձելու վերաբերյալ իրականացվել է

վարչական վարույթ, որի ընթացքում Տիգրան Սահակյանի ներկայացուցիչ՝ Հակոբ Սաֆարյանի կողմից ներկայացվել են առարկություններ (...), իսկ վերաքննիչ բողոքում նշել է, որ «Տիգրան Սահակյանի կողմից Տեսչությանն են ներկայացվել գրավոր առարկություններ: (...) Տիգրան Սահակյանը կրկին ներկայացրել է գրավոր առարկություններ իր կողմից իրականացված գործարքները ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք համարվելու կապակցությամբ»: Ընդ որում, ստորադաս դատարաններում հայցվորը վարչական ակտը վիճարկելու հիմքում դրել է ոչ թե այն հանգամանքը, որ ինքը ծանուցված չի եղել վարչական վարույթի լուսնների անցկացման ժամանակի և վայրի մասին, ինչի հետևանքով խախտվել է իր լաված լինելու իրավունքը, այլ՝ այն, որ պատասխանող վարչական մարմնի կողմից չի պատճառաբանվել իր առարկությունները չընդունելը, ինչը ևս վկայում է այն մասին, որ վարչական մարմինն ապահովել է անձի լաված լինելու իրավունքի իրացումը:

Երրորդ՝ թեև տվյալ դեպքում վարչական վարույթում իր լաված լինելու իրավունքի խախտման հիմքով մեր համոզմամբ առհասարակ չէր կարող ներկայացվել վճռաբեկ բողոք՝ նույն հիմքով վերաքննիչ բողոք ներկայացված չլինելու պատճառով, այդուհանդերձ, եթե նույնիսկ ստորադաս դատարաններում չներկայացված ու քննարկման առարկա չդարձված հիմքը ևս Վճռաբեկ դատարանը դարձնում է քննարկման առարկա, ապա այդ հիմքով վարչական ակտն անվավեր ճանաչելու հետևանքով (այլ ոչ թե Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելով ու գործը նոր քննության ուղարկելով) խախտվում է վարչական դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը, քանի որ Կոմիտեն գրկվում է ստորադաս դատարաններում չներկայացված ու քննարկման առարկա չդարձված հիմքի վերաբերյալ առարկություններ և ապացույցներ ներկայացնելու իրավունքն իրացնելու իրական հնարավորությունից:

Անփոփոխելի վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 18.08.2016 թվականի թիվ 1617/02 որոշումն անվավեր ճանաչելու Տիգրան Սահակյանի պահանջը մերժելու մասին Դատարանի վճիռը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի Տիգրան Սահակյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար չէր կարող լինել Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ. Հակոբյան
Մ. Դրմեյան
Գ. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ՎԳԶ/0073/05/16
Ա. Առաքելյան
Հ. Բեդկյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ ՎԳԶ/0073/05/16
2019թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Վ. ԱՎԼԵՆՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դա-
տարանի 25.10.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ինեսա և Իրինա քույրեր» ՍՊԸ-ի
(այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի Գավառի տարածքային հարկային
տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 14.04.2016 թվականի թիվ 5013225 ակտի 3-րդ կետի «բ»
ենթակետը վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարամոթյունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել Տեսչության 14.04.2016 թվա-
կանի թիվ 5013225 ակտի 3-րդ կետի «բ» ենթակետը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 10.11.2016
թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.10.2017

թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.11.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, 9-րդ հոդվածի 1-ին մասը, խախտել է իրավահարաբերության պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկանքը ներկայացնելու՝ Ընկերության պարտավորությունը կբացակայեր միայն այն պարագայում, եթե հարկային հաշիվներն էլեկտրոնային կարգով մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտը հավաստվեին ստացողի կողմից, ինչը տվյալ դեպքում չի կատարվել: Մինչդեռ Ընկերության կողմից հարկային հաշիվների գումարների վճարումն օրենքով չի համարվում ստացողի կողմից էլեկտրոնային հաշիվների ստացման հավաստում: Փաստորեն, Ընկերությունն իրավունք չունի 2013 թվականի սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսների համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներում հաշվանցելու էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները: Հետևաբար այդ գումարների ապօրինի հաշվանցման արդյունքում առաջացել է լրացուցիչ հարկային պարտավորություն, ինչն էլ իրավաչափորեն առաջադրվել է Ընկերության նկատմամբ Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.10.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայրը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության կողմից 14.04.2016 թվականին ընդունված թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետով արձանագրվել է, որ 2013 թվականի սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսների համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներում հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների կազմում ներառվել է ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների գծով մատակարարների կողմից էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները՝ համապատասխանաբար 3.141.035 ՀՀ դրամի և 3.258.624 ՀՀ դրամի չափով, որոնք Ընկերության կողմից հաստատված չեն եղել և ներառված չեն եղել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված տեղեկանքներում, իսկ նույն օրենքի 43.1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկություններ չներկայացնելու դեպքում հարկային հա-

շիփներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա չեն հաշվանցման:

Նշված իրավախախտման, ինչպես նաև Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «ա» ենթակետով արձանագրված իրավախախտման համար Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ ընդամենը 15.215.048 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 13-18**).

2) Ընկերությունը Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է բողոքարկել Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ակտի 3-րդ կետը: Հանձնաժողովը 24.05.2016 թվականի թիվ 10/1 որոշմամբ անվավեր է ճանաչել Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի միայն «ա» ենթակետը, գտնելով, որ ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետի մասով Ընկերության բողոքը հիմնավոր չէ (**հատոր 1-ին, գ.թ. 6-12**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և կզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահի դրությամբ գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից հարկային հաշիվների դուրս գրման վերաբերյալ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմին տեղեկատվության տրամադրման ընթացակարգի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք տնտեսվարող սուբյեկտի վրա կարող է դրվել էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պարտականություն, եթե այդ հարկային հաշիվների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկություններն արդեն իսկ հայտնի են հարկային մարմնին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ապրանք մատակարարելիս կամ ծառայություն մատուցելիս պարտավոր են դուրս գրել նույն օրենքի համաձայն հարկային հաշիվ համարվող հաշվարկային փաստաթուղթ, եթե այդ գործարքը ենթակա է ԱԱՀ-ի 20% (16.67% հաշվարկային) դրույքաչափով հարկման: Հարկային հաշիվը դուրս է գրվում ապրանք մա-

տակարարելու կամ ստացողի կողմից ծառայությունն ընդունելու օրը: (...) Հարկային հաշիվ է համարվում նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով լրացված և դուրս գրված հաշվարկային թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթ: Էլեկտրոնային հարկային հաշիվը էլեկտրոնային փաստաթուղթ է և պաշտպանված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ (...):

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ (...) հարկային հաշիվները դուրս են գրվում՝ (1) էլեկտրոնային եղանակով կամ (2) հարկային մարմնից ձեռք բերված հարկային հաշիվների թղթային ձևերի լրացմամբ: (...) Նույն օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք եռամսյակի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում են տեղեկանք եռամսյակի ընթացքում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ: (...) Նույն մասում նշված տեղեկանքը կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով: (...) Էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններն այդ հաշիվները դուրս գրողի կողմից չեն ներառվում նույն հոդվածով սահմանված տեղեկանքում՝ (1) այն հաշիվների մասով, որոնք դուրս են գրվել ինտերնետային կայքի միջոցով, (2) այն հաշիվների մասով, որոնք դուրս են գրվել առանց ինտերնետային կայքի, և որոնց վերաբերյալ տեղեկատվությունը մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է հարկային մարմին: Էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները չեն ներառվում այդ հարկային հաշիվները ստացողի կողմից ներկայացման ենթակա՝ նույն հոդվածով սահմանված տեղեկանքում, եթե այդ հաշիվների ստացումը էլեկտրոնային կարգով մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտը հավաստել է ստացողը: Նույն հոդվածով սահմանված տեղեկանքը հարկային մարմին չի ներկայացվում, եթե այլ պայմաններում դրանում ներառվելիք բոլոր հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները նույն հոդվածի համաձայն ենթակա չեն ներառման հարկային մարմին ներկայացվող տեղեկանքում (...):

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են՝ (1) արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով (բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի), որոնց դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարվել է վճարում (...): Ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվել է վճարումը (...):

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հար-

կի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի երկրորդ պարբերության համաձայն՝ ձեռքբերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց վերաբերյալ, նույն օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան, հարկային մարմին տեղեկություններ (այդ թվում՝ ճշգրտված) չեն ներկայացվել կամ որոնց վերաբերյալ ներկայացված կամ չներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում հարկային հաշվում արտացոլված տվյալներին (վավերապայմաններին)՝ հաշվանցման ենթակա չեն: Ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնք ներկայացվել են (ներառվել են տեղեկանքում) հարկային հաշվի ստացմանը հաջորդող որևէ հաշվետու ժամանակաշրջանում, հաշվանցվում են տեղեկությունների ներկայացման ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ օրենսդիրը սահմանել է, որ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման, *inter alia*, այն դեպքում, երբ այդ հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմին չեն ներկայացվել նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները: Փաստորեն, օրենսդիրը հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման հնարավորությունը պայմանավորել է այդ հարկային հաշիվների վերաբերյալ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները հարկային մարմին ներկայացվելու կամ չներկայացվելու հանգամանքով:

Իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պետական բյուջե վճարվող հարկատեսակ համարվող ավելացված արժեքի հարկ վճարող անձինք, եռամսյակի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը, ներկայացնում են տեղեկանք եռամսյակի ընթացքում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում տվյալ եռամսյակի ընթացքում ստացված կամ տրամադրված հաշիվներում ներառված հարկվող շրջանառության արժեքը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափը: Ընդ որում, այդ տեղեկությունը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով: Այսինքն՝ օրենսդիրը տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն է ընձեռել ընտրելու նշված տեղեկությունը հարկային մարմին ներկայացնելու եղանակը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե հարկային մարմին էլեկտրոնային եղանակով տեղեկություններ ներկայացնելու կարգի միջոցով վերջինս էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ ստանում է ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն, ապա հարկային մարմին ներկայացվող էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները տեղեկանքում ներառելու պահանջը կարող է հակասել վարչարարության՝ ձևական պահանջները չարաշահելու արգելքի և առավելագույնի հիմնարար սկզբունքներին:

Այսպես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի

5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով:

Համադրելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ հոդվածների պահանջներն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջների հետ, միաժամանակ կատարելով դրանց բովանդակային վերլուծություն՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ եթե տնտեսվարողի կողմից իրեն հասանելի ու արդյունավետ եղանակով հարկային մարմին է ներկայացվում համապատասխան տեղեկություններ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ, որոնք թույլ են տալիս հարկային մարմին ամբողջական տիրապետել էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությանը, ապա արդեն իսկ ներկայացված համապատասխան տեղեկատվությունն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված տեղեկանքում ներառելու՝ ԱԱՀ վճարող անձանց ուղղված հարկային մարմնի պահանջը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածներում ամրագրված վարչարարության հիմնարար սկզբունքների լույսի ներքո չի կարող գնահատվել որպես համաչափ միջամտություն, որպիսի հիմքով այդպիսի միջամտությունը չի կարող համարվել իրավաչափ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում օրենսդիրը, ելնելով ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքից, էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմին տեղեկանք ներկայացնելու պահանջից կատարել է որոշ բացառություններ: Այդ բացառությունները վերաբերում են հետևյալ դեպքերին.

1) էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվները դուրս են գրվել ինտերնետային կապի միջոցով,

2) էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտն էլեկտրոնային եղանակով ներկայացվել է հարկային մարմնին,

3) էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների ստացումը մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտն էլեկտրոնային կարգով հավաստել է ստացողը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերը թվարկված դեպքերում տնտեսվարող սուբյեկտը, ըստ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի՝ չունի էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պարտականություն: Այլ կերպ, եթե առկա է էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պահանջից կատարված վերոգրյալ բացառություններից որևէ մեկը, ապա տնտեսվարող սուբյեկտը պարտավոր չէ այդ հարկային հաշիվների մասին իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկանք ներկայացնել հարկային մարմնին:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտերը պետք է հիմնավորված լինեն. օրենսդիրը սահմանել է, որ վարչական ակտի հիմնավորումներում պետք է անպայման նշվեն համապատասխան վարչական ակտն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը, այսինքն՝ վարչական մարմինը վարչական ակտն ընդունելիս պարտավոր է վարչական ակտում նշել այն բոլոր փաստական հանգամանքները և իրավական հիմքերը, որոնք հիմք են հանդիսացել տվյալ վարչական ակտն ընդունելու համար:

Այսպես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, (...) ներկայացնում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ակտում նշվում են՝ (...) (9) ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, (10) պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերը (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում անդրադարձել է վարչական ակտի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ վարչական ակտը հիմնավորելու՝ վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարչական վարույթի մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը (*տես*, *Գիթա Հեյդարիմարանջեհն ընդդեմ ՀՀ ռադիկալիստության անձնագրային և փիզաների վարչության թիվ ՎԳ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով, գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները: Միաժամանակ վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում (*տե՛ս, «Ինտելոքսակ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերով ստուգման ակտի բովանդակությանը ներկայացվող պահանջների իրավական վերլուծությանը՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ այդ իրավադրույթների ուժով ստուգման ակտը պետք է ամբողջական և հստակ տեղեկություններ պարունակի ստուգմամբ բացահայտված խախտումների նկարագրության, խախտված իրավական նորմերի և պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքերի վերաբերյալ: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստուգման ակտի բովանդակությանն ուղղված նշված օրենսդրական պահանջների պահպանման դեպքում միայն հնարավոր կլինի պարզել տվյալ ստուգման ակտի իրավաչափության հարցը (*տե՛ս, «Արթիկի «Սյունկյումաշ»» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գյումրու փարածքային հարկային տեսչության թիվ ՎԴ5/0519/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վարչական ակտերի հիմնավորվածության պահանջի վերաբերյալ վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների ապօրինի հաշվանցման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը (մասնավորապես՝ ստուգման ակտը) պետք է պարունակի հիմնավորում կատարված հաշվանցման՝ ապօրինի լինելու վերաբերյալ: Եթե ստուգման ակտով տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունն առաջադրվել է այն հիմքով, որ վերջինս էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին չի ներկայացրել իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկանքը, ապա այդ վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, *inter alia*, այն մասին, որ տնտեսվարող սուբյեկտն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի ուժով ունեւ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պարտականություն՝ բացատրելով նշված հոդվածով նախատեսված բոլոր այն դեպքերը, երբ տնտեսվարող սուբյեկտն ազատվում է այդ պարտականությունից: Քննարկվող իրավիճակում հարկային մարմինը պարտավոր է իր ստուգման ակտում հիմնավորել և այդ վարչական ակտի վիճարկման հայցի հիման

վրա հարուցված գործի քննության ընթացքում ապացուցել, որ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը հարկային մարմնին չներկայացնելու պայմաններում տնտեսվարող սուբյեկտն իրավունք չունի կատարելու այդ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցում՝ հաշվի առնելով վարչարարության՝ ձևական պահանջները չարաշահելու արգելքի և առավելագույնի հիմնարար սկզբունքները, ինչպես նաև իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված բացառությունները: Վերոգրյալն այն էական փաստական և իրավաբանական հանգամանքներից մեկն է, որը հիմք է հանդիսանում իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի երկրորդ պարբերության կիրառմամբ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ՀՀ սահմանադրական դատարանը, 28.04.2015 թվականի թիվ ՍԴՌ-1203 որոշմամբ անդրադառնալով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասության՝ սահմանադրականության հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «(...) *շահութահարկի հաշվարկում հաշվարկված վնասն ավել ցույց տալը ոչ բոլոր իրավիճակներում է հանգեցնում հարկի նվազեցմանը: Հերևաբար՝ ոչ բոլոր դեպքերում է այդ իրավահարաբերության պետությանը գույքային վնաս պատճառվում: (...) Այսինքն, տվյալ հաշվետու տարվա ընթացքում շահութահարկի հաշվարկում վնասն ավել ցույց տալը հարկ վճարողի հարկային պարտավորությունների պարզաձև կարարման վրա կարող է չանդրադառնալ, քանի որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի նախորդ տարիներին առաջացած վնասների չափով: Հերթապայում շահութահարկի հաշվարկում սխալը շրկելու և պատճառված վնասն օբյեկտիվորեն ճիշտ ցույց տալու դեպքում հարկատուի հարկային պարտավորությունը չի նվազեցվում: Բացի դրանից, «Շահութահարկի մասին» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դրանց կարգավորմանն ոլորտում պարասխասնարվություն նախատեսող նորմերը սանկցիա են նախատեսում միայն այն պարագայում, երբ իրավահարաբերման օբյեկտիվ կողմ հանդիսացող արարքի (գործողության կամ անգործության) արդյունքում պետությանը, հասարակությանը գույքային վնաս է պատճառվել, այսինքն՝ իրավահարաբերման կազմը նյութական է, այլ ոչ թե ձևական: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորման կիրառման ժամանակ պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, թե արդյոք շահույթի հաշվարկում վնասի պակաս ցույց տալը հանգեցրել է հարկի նվազեցման, թե՛ ոչ, այսինքն՝ արդյոք պետությանը հասցվել է գույքային վնաս, թե՛ ոչ: Հակառակ պարագայում վիճարկվող դրույթը հանդես կգա որպես վարչական պարասխասնարվությանը բնորոշ կանխարգելիչ, դատարարական իրավակարգավորիչ գործառույթ»:*

1 «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 30.09.1997 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.1998 թվականին և, բացառությամբ 8-րդ և 11-րդ հոդվածների նախավերջին պարբերությունների, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասության՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 28.04.2015 թվականի թիվ ՍԴՌ-1203 որոշման կայացման պահին գործող խմբագրությամբ սահմանված էր, որ «*հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում ռեզիդենտ հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տված վնասի 20 տոկոսի չափով*»:

թից բխող պատասխանատվության ինստիտուտը նախարատող դրույթ: Հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գրնում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությանը ամրագրված վեճի առարկա դրույթը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ վնասի ոչ ճիշտ հաշվարկը հանգեցնում է շահութահարկի գծով պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման: Իրավակիրառ սրակտիկայում Կրկյալ դրույթը չի կարող մեկնարանվել և կիրառվել այնպես, որ.

ա/ նույն արարքի համար առաջանա կրկնակի պատասխանատվություն, բ/ Կրկյալը նշանակվի և գանձվի այն պարագայում, երբ Կրկյալը պատճառներով ավելի մեծ ցույց Կրկյալը վնասը չի հանգեցրել հարկային պարտավորությունների չկատարման (...):»:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումների ընդհանուր տրամաբանությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու համար հարկային պատասխանատվություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե այդ իրավախախտումն հանգեցրել է ԱԱՀ-ի գծով պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման, այսինքն՝ պետությանը հասցվել է գույքային վնաս: Իսկ այն դեպքում, երբ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների ապօրինի հաշվանցման արդյունքում ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների մատով պետությանը գույքային վնաս փաստացի չի հասցվել, տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումն իրավաչափ չի կարող համարվել:

Ի վերջո, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրման իրավաչափությունը քննարկել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտության լույսի ներքո՝ հաշվի առնելով այդ իրավադրույթի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այսպես՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախարատված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Շահորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այսպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրա-

կանացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ փուզանքների վճարումն ապահովելու համար»:

Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, որն ըստ էության երաշխավորում է սեփականության իրավունքը, բաղկացած է 3 առանձին կանոններից: Առաջին կանոնը, որը սահմանված է հոդվածի առաջին պարբերության առաջին նախադասությունում, ունի ընդհանրական բնույթ և ամրագրում է գույքի անարգել օգտագործման սկզբունքը: Երկրորդ կանոնը, որը սահմանված է նույն պարբերության երկրորդ նախադասությունում, կարգավորում է սեփականությունից զրկելու հարաբերությունը՝ սահմանելով որոշակի պայմաններ դրա իրավաչափության համար: Երրորդ կանոնը, որը սահմանված է հոդվածի երկրորդ պարբերությունում, ճանաչում է Պայմանավորվող Պետությունների իրավունքը՝ իրականացնելու վերահսկողություն սեփականության օգտագործման նկատմամբ՝ ընդհանուր շահերին համապատասխան կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ փուզանքների վճարումն ապահովելու համար:

Այնուամենայնիվ, ըստ Եվրոպական դատարանի, այդ երեք կանոնները կապված են միմյանց հետ. երկրորդ և երրորդ կանոնը վերաբերում են գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ առանձին միջամտություններին: Հետևաբար այդ կանոնները պետք է մեկնաբանվեն առաջին կանոնով սահմանված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (*լե՛ն Iatridis v. Greece գործով Եվրոպական դատարանի 25.03.1999 թվականի վճիռը, 55-րդ կետը*):

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում մեջբերել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Այսպես, ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության ցանկացած միջամտություն պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (*լե՛ն Lelas v. Croatia գործով Եվրոպական դատարանի 20.05.2010 թվականի վճիռը, 71-րդ կետը*): Հետևաբար առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունը իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (*լե՛ն, James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետը*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (*լե՛ն James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետը*):

Սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության երրորդ պայմանը նախատեսում է, որ միջամտությունը, այդ թվում նաև՝ այն միջամտությունը, որն առաջացել է հարկերի կամ այլ գանձումների վճարումն ապահովելուն ուղղված միջոցի կիրառումից, պետք է ապահովի արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: Այդպիսի հավասարակշռության հասնելու նպատակն արտացոլված է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքում՝ որպես ամբողջություն, որը ներառում է նաև երկրորդ պարբերությունը: Հետևաբար գույքից անարգել օգտվելու իրավունքի ցանկացած միջամտության դեպքում կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է գոյություն ունենա համաչափության ողջամիտ հարաբերակցություն:

Ըստ Եվրոպական դատարանի՝ հարկերի կամ այլ գանձումների բարձրացման արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորությունները կարող են բացասաբար ազդել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված երաշխիքների վրա, եթե դրանք անհամաչափ բեռ են սահմանում հարկ վճարողի նկատմամբ կամ հիմնովին ազդում են նրա ֆինանսական վիճակի վրա (*տե՛ս Zienda Agricola Silverfunghi S.A.S. and others v. Italy գործով Եվրոպական դատարանի 24.06.2014 թվականի վճիռը, 102-րդ կետը*):

Ընդհանրապես, Եվրոպական դատարանի գնահատմամբ, նման բարենպաստ հավասարակշռության հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի միջամտության պատճառով սեփականատերը ստիպված է կրել անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն (*տե՛ս The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 89-րդ կետը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն օրենքով նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու արդյունքում պետությունը որևէ գույքային վնաս չի կրում, ապա այդ իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումը չի համապատասխանում Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականության իրավունքի երաշխավորման վերաբերյալ Եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումներին:

Վճռաբեկ դատարանի այդ դատողությունը հիմնված է այն իրողության վրա, որ նկարագրված իրավիճակում տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումը չի համապատասխանում հարկային պատասխանատվության նպատակին: Հարկային պատասխանատվությունը նպատակաուղղված է տնտեսվարող սուբյեկտի՝ հարկ վճարելու պարտականության պատշաճ և բարեխիղճ կատարումը և պետությանը հասցված գույքային վնասի վերականգնումն ապահովելուն: Մինչդեռ քննարկվող իրավիճակում տնտեսվարող սուբյեկտը չի խախտում հարկ վճարելու իր պարտականությունը և պետությանը որևէ գույքային վնաս չի պատճառում:

Ակնհայտ է, որ եթե էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն օրենքով նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու արդյունքում պետությունը որևէ գույքային վնաս չի կրում, ապա այդ իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումը չի կարող հետապնդել տնտեսվարող սուբյեկտի՝ հարկ վճարելու պարտականության պատշաճ և բարեխիղճ կատարումը և պետությանը հասցված

գույքային վնասի վերականգնումն ապահովելու նպատակ: Տվյալ դեպքում պետության կողմից կիրառվող պատասխանատվության նպատակը էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները օրենքով նախատեսված տեղեկանքում ներառելու պահանջի պահպանման ու այդ խախտումների կանխման ապահովումն է: Իսկ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումը չի կարող համարվել համաչափ միջոց այդ նպատակին հասնելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող իրավիճակում տնտեսվարող սուբյեկտը կրում է անհամաչափ, ավելորդ և չափազանց մեծ ծանրություն, քանի որ ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումը տվյալ դեպքում չի կարող համարժեք լինել իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում նախատեսված տեղեկանքը ներկայացնելու պարտականության պատշաճ կատարումն ապահովելու նպատակին: Եթե էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն օրենքով նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու արդյունքում պետությունը որևէ գույքային վնաս չի կրում, ապա այդ իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումը անհամաչափ բեռ է սահմանում հարկ վճարողի նկատմամբ և անհամաչափ կերպով է միջամտում նրա ֆինանսական վիճակին:

Ամփոփելով վերոգրյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ եթե էլեկտրոնային եղանակով դուրս գրված, սակայն օրենքով նախատեսված տեղեկանքում չներառված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցելու արդյունքում պետությունը որևէ գույքային վնաս չի կրում, ապա այդ իրավախախտման համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումը խախտում է տնտեսվարող սուբյեկտի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետը, որի համաձայն՝ 2013 թվականի սեպտեմբեր, դեկտեմբեր ամիսների համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներում հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների կազմում ներառվել է ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների գծով մատակարարների կողմից էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները՝ համապատասխանաբար 3.141.035 ՀՀ դրամ և 3.258.624 ՀՀ դրամ, որոնք Ընկերության կողմից հաստատված չեն եղել և ներառված չեն եղել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված տեղեկանքներում: Իսկ սույն օրենքի 43.1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկություններ չներկայացնելու դեպքում հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա չեն հաշվանցման: Նշված իրավախախտման, ինչպես

նաև Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «ա» ենթակետով արձանագրված իրավախախտման համար Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ ընդամենը 15.215.048 ՀՀ դրամի չափով:

Մինչև դատարան դիմելն Ընկերությունը նշված ստուգման ակտը բողոքարկել է վարչական կարգով՝ ստուգման ակտը վերացնելու պահանջով դիմելով Հանձնաժողովին: Հանձնաժողովը 24.05.2016 թվականի թիվ 10/1 որոշմամբ անվավեր է ճանաչել Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի միայն «ա» ենթակետը, գտնելով, որ ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետի մասով Ընկերության բողոքը հիմնավոր չէ: Հետևաբար սույն գործով Ընկերության վիճարկման հայցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ներառում է նաև Հանձնաժողովի 24.05.2016 թվականի թիվ 10/1 որոշումը՝ Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետը չվերացնելու մասով, վիճարկելու պահանջը:

Դատարանը բավարարել է Ընկերության հայցը՝ պատճառաբանելով, որ վիճարկվող ակտի 3-րդ կետի «բ» ենթակետում նշված հարկային հաշիվները դուրս են գրվել էլեկտրոնային եղանակով և հասանելի են եղել հարկային մարմնին, բացի այդ Ընկերության կողմից 2013 թվականի սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսներին ստացված հարկային հաշիվների գումարներն ամբողջությամբ վճարվել են այդ հարկային հաշիվները ստանալու ամիսներին: Դատարանը գտել է, որ դրանով Ընկերությունը բովանդակային առումով ապահովել է հարկային մարմնի կողմից հարկային հաշիվների վերաբերյալ ամբողջական և արժանահավատ տեղեկատվության ստացումը: Հետևաբար ըստ Դատարանի՝ Ընկերությունը կարող էր սահմանված կարգով հաշվանցել 2013 թվականի սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսներին ստացված հարկային հաշիվների գումարները:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ իրավաչափ համարելով Դատարանի վերոգրյալ եզրահանգումը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախևառաջ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետը նշում չի պարունակում այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների ապօրինի հաշվանցման համար Ընկերության նկատմամբ ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու վերաբերյալ համապատասխան որոշումը: Վիճարկվող ստուգման ակտը չի պարունակում հիմնավորում այն մասին, որ Ընկերությունն իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի ուժով ունեւ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկանք ներկայացնելու պարտականություն՝ բացատրելով նշված հոդվածով նախատեսված բոլոր այն դեպքերը, երբ տնտեսվարող սուբյեկտն ազատվում է այդ պարտականությունից: Վիճարկվող վարչական ակտով հիմնավորված չէ, որ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը հարկային մարմնին չներկայացնելը տվյալ դեպքում ենթադրում է, որ

Ընկերությունն իրավունք չուներ 2013 թվականի սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսների համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներում հաշվանցելու այդ ամիսներին էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Տեսչությունը տվյալ դեպքում հաշվի չի առել նաև վարչարարության՝ ձևական պահանջները չարաշահելու արգելքի և առավելագույնի հիմնարար սկզբունքները: Այսպես, տվյալ դեպքում Ընկերությունը, օգտվելով իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգից, նախընտրելի է համարել հարկային մարմնին համապատասխան տեղեկությունների տրամադրման էլեկտրոնային եղանակը: Տեսչությունն իր ստուգման ակտով չի հիմնավորել, որ նշված հարկային հաշիվներն էլեկտրոնային եղանակով դուրս գրվելու ու Ընկերության կողմից 2013 թվականի սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսներին ստացված հարկային հաշիվների գումարներն ամբողջությամբ վճարված լինելու պայմաններում հարկային մարմնին ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն չի ստացել այդ հարկային հաշիվների վերաբերյալ:

Փաստորեն, Տեսչությունն իր ստուգման ակտում չի հիմնավորել և սույն գործի քննության շրջանակում չի ապացուցել այն հանգամանքը, որ Ընկերությունն իրավունք չուներ 2013 թվականի սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսների համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներում հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների կազմում ներառելու նաև այդ ամիսներին էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները:

Այսպիսով, Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետով Ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումն իրավաչափ չէ: Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտը՝ 3-րդ կետի «բ» ենթակետի մասով, ընդունվել է իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի երկրորդ պարբերության, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 9-րդ, 55-րդ և 57-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերի խախտմամբ և այդ մասով ենթակա է անվավեր ճանաչման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը, բավարարելով Ընկերության հայցը և անվավեր ճանաչելով 14.04.2016 թվականի թիվ 5013225 ակտի 3-րդ կետի «բ» ենթակետը և Հանձնաժողովի 24.05.2016 թվականի թիվ 10/1 որոշումը՝ Ընկերության բողոքը չբավարարելու մասով, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի նշված վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի

է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պարտաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.10.2017 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ-2/0073/05/16
2019թ.

Վարչական գործ թիվ ՎԴ-2/0073/05/16
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Հ. Բեդկյան
Ա. Բարայան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), դռնբաց դատական նիստում քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.10.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ինեսա և Իրինա քույրեր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի Գավառի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 14.04.2016 թվականի թիվ 5013225 ակտի 3-րդ կետի «բ» ենթակետը վերացնելու պահանջի մասին, 2019 թվականի դեկտեմբերի 25-ին որոշել է «Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.10.2017 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով: Դատական ծախսերի հարցը համարել լուծված»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ Ս. Անտոնյանս Ա. Բարսեղյանս, Տ Պետրոսյանս, Էդ. Սեդրակյանս համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 25.12.2019 թվականին թիվ ՎԴ-2/0073/05/16 վարչական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ, դեկլարավելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

Սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ Տեսչության կողմից 14.04.2016 թվականին ընդունված թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետով արձանագրվել է, որ 2013 թվականի սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսների համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներում հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների կազմում ներառվել են ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների գծով մատակարարների կողմից էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները՝ համապատասխանաբար 3.141.035 ՀՀ դրամի և 3.258.624 ՀՀ դրամի չափով, որոնք Ընկերության կողմից հաստատված չեն եղել և ներառված չեն եղել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված տեղեկանքներում, իսկ նույն օրենքի 43.1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկություններ չներկայացնելու դեպքում հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա չեն հաշվանցման:

Նշված իրավախախտման, ինչպես նաև Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի «ա» ենթակետով արձանագրված իրավախախտման համար Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ ընդամենը 15.215.048 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 13-18**).

Ընկերությունը Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է բողոքարկել Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ակտի 3-րդ կետը: Հանձնաժողովը 24.05.2016 թվականի թիվ 10/1 որոշմամբ անվավեր է ճանաչել Տեսչության 14.04.2016 թվականի թիվ 5013225 ստուգման ակտի 3-րդ կետի միայն «ա» ենթակետը, գտնելով, որ ստուգման ակտի 3-րդ կետի «բ» ենթակետի մասով Ընկերության բողոքը հիմնավոր չէ (**հատոր 1-ին, գ.թ. 6-12**):

Պետք է փաստենք, որ ստուգման ակտի անվավերության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանություններում առկա են ներքին հակասություններ այն առումով, որ մի դեպքում ակտի անվավերությունը պատճառաբանվում է խախտման փաստի բացակայությամբ, մյուս դեպքում՝ օրենքի խախտման հետևանքով փաստացի վնասի բացակայությամբ և իրավախախտման համար վարչական պատասխանատվության անհամաչափության հանգամանքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Ավելացված արժեքի հարկի վճարման, հաշվանցման, հաշվետվությունների ներկայացման ժամկետները, կարգն ու պայմանները սահմանվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով և դրան համապատասխան ընդունված նորմատիվ իրավական այլ ակտերով: Հետևաբար՝ հարկ վճարող սուբյեկտի մոտ այս հարկատեսակով առկա պարտավորությունները կարող են բովանդակային առումով պատշաճ կատարված համարվել, եթե հարկ վճարողի գործողությունները համապատասխանում են օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին: Միայն այս դեպքում կարող ենք ասել, որ պարտավորությունը բովանդակային առումով կատարված է:

Դատարանը վարչական մարմնի գործողությունը հարկատուի կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով կարգավորված իրավահարաբերությունում օրենքի պահանջի ոչ պատշաճ կատարման փաստի արձանագրումը դիտել է որպես վարչարարության ձևական պահանջի չարաշահման արգելքի և պատասխանատվության համաչափության սկզբունքների խախտում: Մինչդեռ օրենքի պահանջներին ուղղակիորեն հակասող գործողությունների կատարման փաստն արձանագրելը չի կարող որակվել ձևական պահանջի չարաշահում, իսկ ստուգման ակտը կազմված է եղել այն անվիճելի փաստի հիման վրա, որ հարկատուի կողմից ավելացված արժեքի հարկի գումարի հաշվանցի իրավական հիմքը տվյալ ժամանակահատվածի համար բացակայել է: Դա նշանակում է, որ տվյալ ժամանակահատվածի համար ավելացված արժեքի հարկի հաշվանցը օրենքի պահանջին համապատասխան է, եթե կատարվել է այդ ժամանակահատվածի համար դրա համար օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով թույլատրված հիմքերի առկայության պայմաններում և ոչ թե ընդհանրապես:

Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1230 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին կատարված հղմանը, ապա պետք է նշել, որ այդ դիրքորոշումները չեն կարող կիրառելի լինել անուղղակի հարկատեսակ համարվող ավելացված արժեքի հարկին առնչվող իրավահարաբերություն-

ների նկատմամբ, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իրավական գնահատականներ են տրվել ուղղակի հարկատեսակ համարվող շահութահարկի հետ կապված հարցին՝ «հարկային վնասին»: Մինչդեռ անուղղակի հարկատեսակ համարվող ավելացված արժեքի հարկի դեպքում «**վնաս**» իրավական եզրույթը բացարձակապես կիրառելի չէ, քանի որ այս դեպքում հարկ վճարողի կողմից կատարվող գործողությունները առնչվում են ավելացված արժեքի հարկի առանձնացմանը, վճարմանը և հաշվանցներին: Տեղին չէ նաև սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և դրա հետ կապված մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի վկայակոչումը, քանի որ Սահմանադրությամբ և դրան համապատասխան օրենքով հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների կատարումը չի կարող դիտվել որպես անձի սեփականության իրավունքի խախտում կամ սահմանափակում:

Ինչ վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար հարկային օրենսդրության խախտման հետևանքներին օրենքով նախատեսված չափով նշանակված վարչական պատասխանատվության համաչափության հարցին, ապա նման հարցադրման իրավաչափությունը դուրս է վճարել բողոքի հիմքերի և հիմնավորումների քննարկման տիրույթից՝ այն առումով, որ բողոք բերած անձը վիճարկել է ավելացված արժեքի հարկի մասով ստուգման ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտը ուժի մեջ թողնելու մասին վերաքննիչ վարչական դատարանի որոշման հիմնավորումները և այս դեպքում հակասահմանադրական չճանաչված նորմատիվ իրավական ակտի կիրառումը բացառող հանգամանքներ առկա չեն:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ վճարել բողոքը ենթակա է բավարարման, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.10.2017 թվականի որոշումը ենթակա է բեկանման, իսկ հայցը մերժման:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Տ. Պետրոսյան
Էդ. Մեղրակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/3530/05/14
2019թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/3530/05/14
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Ա. Աբովյան
 Ա. Բաբայան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴԻՄԵՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 01-ին,
դռնբաց դատական նիստում քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դա-
տարանի 31.10.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աբդուլմաջիդ Աբդուլազիզ Ֆավազ
Ալիոկաիրիի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման և վարչա-
կան վարույթների իրականացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի 07.05.2014
թվականի թիվ 30Իբ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Աբդուլմաջիդ Աբդուլազիզ Ֆավազ Ալիոկաիրին պահանջել է ան-
վավեր ճանաչել Վարչության պետի 07.05.2014 թվականի թիվ 30Իբ որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 27.06.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.10.2017
թվականի որոշմամբ Աբդուլմաջիդ Աբդուլազիզ Ֆավազ Ալիոկաիրիի վերաքննիչ բողոքը

բավարարվել է՝ Դատարանի 27.06.2016 թվականի վճիռը բեկանվել է ու փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արդյունաջիդ Արդյուլազիզ Ֆավազ Ալ-հոկաիրիի ներկայացուցիչ Ալլա Հախնազարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 135-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ապրանքներ տեղափոխող անձը՝ «Մաստերոյթել» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Արդյունաջիդ Արդյուլազիզ Ֆավազ Ալ-հոկաիրին, պարտավոր էր ճշգրիտ տեղեկություններ ներկայացնել «MASSIMO DUTTI» ապրանքային նշանով մակնշված ապրանքների մաքսային արժեքի, այդ թվում՝ դրա բաղկացուցիչ տարր հանդիսացող «MASSIMO DUTTI» ապրանքային նշանի օգտագործման դիմաց վճարվող ռոյալթիների գումարի մասին: Մինչդեռ Ընկերության տնօրենը չի կատարել իր այդ պարտականությունը ո՛չ հայտարարագրման ժամանակ և ո՛չ էլ դրանից հետո:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Ընկերության կողմից «ITX MERKEN B.V» ընկերությանը վճարված ռոյալթիների վճարման հաշիվների դուրս գրման ժամանակ Ընկերությունը կարող էր դիմել մաքսային մարմնին և մաքսային մարմնի կողմից ընդունված հայտարարագրերում կատարել համապատասխան փոփոխություններ: Այդ ժամանակ Ընկերությունը կարող էր ներկայացնել մաքսային արժեքների վերաբերյալ ճշգրտված տեղեկություններ՝ դրանց մեջ ներառելով նաև ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 83-րդ հոդվածի «ե» կետով նախատեսված ռոյալթիների վճարների մեծությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.10.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.06.2016 թվականի վճիռը:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման: Տվյալ դեպքում ռոյալթիի գումարի չափը հայտնի չէր ապրանքների ներմուծման պահին, վերջինս հայտնի է դառնում ապրանքների հայտարարագրումից վեց ամիս հետո և շարունակում է հաշվարկվել յուրաքանչյուր վեց ամիս ժամանակաշրջանի համար: Նման պայմաններում Ընկերությանը պատասխանատվության ենթարկելը, ինչպես նաև ուշ գոյացած ռոյալթիների մասով տույժեր կիրառելը հակասում են իրավական որոշակիության սկզբունքին: Բացի այդ, Ընկերությունը չէր կարող ներկայացնել ճշգրտված տեղեկություններ ռոյալթիների մեծության վերաբերյալ, քանի որ ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 135-րդ հոդվածի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտել միայն 15.05.2014 թվականին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ITX MERKEN B.V.» ընկերության և Ընկերության միջև 01.10.2012 թվականին կնքված ֆրանչայզինգի պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը ստացել է «MASSIMO DUTTI» ապրանքային նշանի օգտագործման իրավունք, որի դիմաց Ընկերությունը պարտավորվել է վճարել նախորդ վեց ամիսների ապրանքաշրջանառության (հարկումից հետո) 3 տոկոսը (**հատոր 1-ին, գ.թ. 62-63**).

2. Վարչության պետի 07.05.2014 թվականի թիվ 30հր որոշման համաձայն՝ Կոմիտեի նախագահի 07.03.2014 թվականի թիվ 100-Ա հրամանի հիման վրա Ընկերությունում իրականացվել է հետբացթողումային հսկողություն, որի արդյունքում արձանագրվել է, որ 01.10.2012 թվականից մինչև 01.02.2014 թվականն ընկած ժամանակաշրջանում Ընկերությունը թիվ 176 մաքսային հայտարարագրերով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել և «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպել է «MASSIMO DUTTI» ապրանքային նշանով հագուստներ, կոշիկներ և այլ պարագաներ: Մինչդեռ Ընկերության տնօրենը նշված հայտարարագրերում ապրանքների մաքսային արժեքի մեջ չի ներառել «ITX MERKEN B.V.» ընկերության և Ընկերության միջև 01.10.2012 թվականին կնքված ֆրանչայզինգի պայմանագրի համաձայն վճարման ենթակա ռոյալթիների գումարը, որը ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 83-րդ հոդվածի «ե» կետի ուժով հանդիսանում է հայտարարագրված ապրանքների մաքսային արժեքի մեջ ներառվող տարր: Արդյունքում Ընկերության կողմից պակաս են վճարվել 15.561.026 ՀՀ դրամի չափով մաքսային վճարներ:

Մաքսային կանոնների նշված խախտման համար Ընկերության տնօրեն Արդույմաջիդ Արդուլազիզ Ալիոկաիրին ենթարկվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ պակաս հաշվարկված մաքսային վճարների 50 տոկոսի՝ 7.780.513 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 58-61**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 135-րդ հոդվածի 5-րդ և 9-րդ մասերի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի էլքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին. արդյո՞ք Ընկերության տնօրեն Արդույմաջիդ Արդուլազիզ Ֆավազ Ալիոկաիրին իրավաչափորեն է ենթարկվել վարչական պատասխանատվության Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների մաքսային հայտարարագրերում այդ ապրանքների իրացման համար անհրաժեշտ պայման հանդիսացող ռոյալթիների դիմաց վճարման ենթակա գումարների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու համար, եթե այդ ռոյալթիների գումարի մեծությունը հայտնի չէր ներմուծված

ապրանքների մաքսային ձևակերպումների իրականացման ժամանակ:

ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 81-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքը գործարքի գինն է, այսինքն՝ այն գումարը, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար:

ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 83-րդ հոդվածի «ե» կետի համաձայն՝ մաքսային արժեքը ներառում է նաև գնորդի կողմից ապրանքների վաճառքի անհրաժեշտ պայման հանդիսացող ռոյալթիների և թույլտվությունների դիմաց մատակարարին ուղղակի կամ անուղղակի վճարված կամ վճարման ենթակա վճարները:

ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ենթակա են հայտարարագրման տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատներում կամ մաքսային կետերում վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով, եթե (ա) դրանք տեղափոխվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով՝ գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ նշելով ճշգրիտ տեղեկություններ՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային հայտարարագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մինչև դրա ընդունումը (...):

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մաքսային հայտարարագիրը կարող է (...) փոփոխվել, եթե ընդունված մաքսային հայտարարագրում կա անճշտություն կամ սխալ (...) և այդ հանգամանքը հանգեցրել է կամ, հայտարարագիրն (...) չփոփոխելու դեպքում, կարող է հանգեցնել մաքսային կանոնների խախտման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտարարագրված ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողումից հետո մաքսային մարմինների ընդունած մաքսային հայտարարագիրը հայտարարագրման ավտոմատ համակարգչային ծրագրի միջոցով կարող է փոփոխվել և (կամ) լրացվել՝ վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով ճշգրտումների փաստաթուղթ կազմելով, որը համարվում է ընդունված հայտարարագրի անբաժանելի մասը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը՝ (...) որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև տուգանք՝ այդ մաքսային

վճարների 50 տոկոսի չափով (...):

Վերոգրյալ իրավադրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար հայտարարատուն պարտավոր է ներկայացնել այդ ապրանքների մաքսային հայտարարագիր, որը պարունակում է ապրանքների ու ընտրված մաքսային ընթացակարգի վերաբերյալ տվյալներ և այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են ապրանքների բացթողման համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրման պարտականության նախատեսումն ինքնանպատակ չէ: Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը, ըստ էության, մաքսային մարմիններին որոշակի տեղեկատվություն տրամադրելու օրենսդրորեն սահմանված եղանակ է: Նման իրավակարգավորման նպատակը հարկեր, տուրքեր վճարելու, պարտադիր այլ վճարումներ կատարելու անձի սահմանադրաիրավական պարտականության պատշաճ կատարման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ապահովումն է, քանի որ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրելու միջոցով լուծվում է տվյալ ապրանքի կամ տրանսպորտային միջոցի ներմուծման կամ արտահանման համար գանձվող մաքսատուրքի վճարման հարցը, ինչպես նաև պարզվում է գանձման ենթակա մաքսատուրքի չափը (*տես, նաև ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Վահե Հարությունյանի և Վահե Հարությունյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ/5170/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքի բաղկացուցիչ տարրերից է նաև այդ ապրանքի վաճառքի անհրաժեշտ պայման հանդիսացող ռոյալթիների դիմաց մատակարարին ուղղակի կամ անուղղակի վճարված կամ վճարման ենթակա վճարները: Ապրանքները և տրանսպորտային միջոցները վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով հայտարարագրման ժամանակ հայտարարագրման է ենթակա մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը, որի մեջ ներառված է ռոյալթիների դիմաց վճարված կամ վճարման ենթակա վճարը: Այսինքն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ ներկայացվող հայտարարագրում պետք է նշվի նաև ապրանքների վաճառքի անհրաժեշտ պայման հանդիսացող ռոյալթիների դիմաց վճարված կամ վճարման ենթակա վճարների մասին:

Օրենսդիրը նախատեսել է մաքսային հայտարարագրերի ներկայացման արդյունքում վրա հասնող հետևանքների կարգավորման մի քանի եղանակ: Այսպես՝ մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ մաքսային մարմնին ներկայացման ենթակա է մաքսային հայտարարագիրը, որում ներառման են ենթակա ռոյալթիների դիմաց վճարված կամ վճարման ենթակա վճարների վերաբերյալ տեղեկություններ: Այնուհետև, ներկայացված հայտարարագրում անճշտության կամ սխալի առկայության դեպքում մաքսային մարմնի ընդունած մաքսային հայտարարագիրը կարող է փոփոխվել: Նշվածից հետևում է, որ ներկայացված հայտարարագրում սխալի կամ անճշտության հայտնաբերման պարագայում օրենսդիրը նշված թերություններն ուղղելու հնարավորություն է ընձեռել: Փաստորեն, իրավահարաբերության ծագման պահին գործող մաքսային օրենսդրությամբ հայտարարատուին հնարավորություն է ընձեռվել մաքսային մարմնին նախօրոք հայտնել վճարման ենթակա ռոյալ-

թիի դիմաց վճարումների մասին, ինչպես նաև հետագայում դիմել մաքսային մարմնին և մաքսային մարմնի կողմից ընդունված հայտարարագրերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ներկայացնելով մաքսային արժեքների վերաբերյալ ճշգրտված տեղեկություններ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը (տվյալ ապրանքը ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության սահման հասցնելու համար վճարված կամ վճարման ենթակա գումարը) ենթակա է հայտարարագրման: Այն դեպքերում, երբ տվյալ ապրանքի առուվաճառքի գնից զատ առուվաճառքի պայմանագրով ռոյալթի վճարելու պայման է նախատեսված, ռոյալթին ևս կազմում է մաքսային արժեքի բաղկացուցիչ մաս և ենթակա է հայտարարագրման: Բացի այդ, օրենսդրորեն ամրագրված է, որ մաքսային արժեքի մաս է կազմում նաև հետագայում վճարման ենթակա ռոյալթիի գումարը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող մաքսային կանոնների խախտման համար օրենսդիրը ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսել է վարչական պատասխանատվություն: Այսինքն՝ հայտարարատուն կարող է ենթարկվել պատասխանատվության, եթե տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չի հայտարարագրել կամ ոչ իր անվամբ է հայտարարագրել կամ հայտարարագրման ժամանակ նշել է ոչ ճշգրիտ տեղեկություններ: Նշված վարչական իրավախախտումն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի դեմ և դրսևորվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ ոչ իրենց անվանամբ հայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու եղանակով: Թվարկված արարքների կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված մաքսային վճարների հիսուն տոկոսի չափով: Ընդ որում, այս պատասխանատվության միջոցը վրա է հասնում այն դեպքում, երբ մաքսային մարմնին ոչ ճշգրիտ տեղեկություններ կայացնելու արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ITX MERKEN B.V.» ընկերության և Ընկերության միջև 01.10.2012 թվականին կնքված ֆրանչայզինգի պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը ստացել է «MASSIMO DUTTI» ապրանքային նշանի օգտագործման իրավունք, որի դիմաց Ընկերությունը պարտավորվել է վճարել նախորդ վեց ամիսների ապրանքաշրջանատության (հարկումից հետո) 3 տոկոսը:

Կոմիտեի նախագահի 07.03.2014 թվականի թիվ 100-Ա հրամանի հիման վրա Ընկերությունում իրականացվել է հետբացթողումային հսկողություն, որի արդյունքում արձանագրվել է, որ 01.10.2012 թվականից մինչև 01.02.2014 թվականն ընկած ժամանակաշրջանում Ընկերությունը թիվ 176 մաքսային հայտարարագրերով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել և «Ներմուծում ազատ շրջանատության համար» մաքսային ռեժիմով ձևակերպել է «MASSIMO DUTTI» ապրանքային նշանով հագուստներ, կոշիկներ և այլ պարագաներ: Մինչդեռ Ընկերության տնօրենը նշված հայտարարագրերում ապրանքների մաքսային արժեքի մեջ չի ներառել «ITX MERKEN B.V.» ընկերության և Ընկերության միջև 01.10.2012 թվականին կնքված ֆրանչայզինգի պայմանագրի համաձայն վճարման ենթակա ռոյալթիների

գումարը, որը ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 83-րդ հոդվածի «ե» կետի ուժով հանդիսանում է հայտարարագրված ապրանքների մաքսային արժեքի մեջ ներառվող տարր: Արդյունքում Ընկերության կողմից պակաս են վճարվել 15.561.026 ՀՀ դրամի չափով մաքսային վճարներ:

Մաքսային կանոնների նշված խախտման համար Վարչության պետի 07.05.2014 թվականի թիվ 30Իբ որոշմամբ Ընկերության տնօրեն Արդուլմաջիդ Արդուլազիզ Ֆավազ Ալիոկաիրին ենթարկվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ պակաս հաշվարկված մաքսային վճարների 50 տոկոսի՝ 7.780.513 ՀՀ դրամի, չափով:

Դատարանը մերժել է Արդուլմաջիդ Արդուլազիզ Ֆավազ Ալիոկաիրիի հայցը: Դատարանը պատճառաբանել է, որ հայցվորը պարտավոր էր հայտարարագրերում տեղեկություններ նշել ապագայում վճարման ենթակա ռոյալթիների մասին: Այնուհետև՝ ռոյալթիների մեծությունը հայտնի դառնալու պայմաններում հայցվորը կարող էր դիմել մաքսային մարմին և մաքսային մարմնի կողմից ընդունված հայտարարագրերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ներկայացնելով մաքսային արժեքների վերաբերյալ ճշգրտված տեղեկություններ, որոնց մեջ կներառվեին նաև ՀՀ մաքսային օրենսգրքի 83-րդ հոդվածի «ե» կետով նախատեսված վճարները: Հետևաբար Դատարանը գտել է, որ Արդուլմաջիդ Արդուլազիզ Ֆավազ Ալիոկաիրին իրավաչափորեն է ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Արդուլմաջիդ Արդուլազիզ Ֆավազ Ալիոկաիրիի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել է: Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ հայցվորը ռոյալթիների դիմաց մատակարարին վճարման ենթակա վճարները չէր կարող ներառել հայտարարագրված ապրանքների մաքսային արժեքներում՝ ելնելով այն իրողությունից, որ հայտարարագրման պահին հայցվորը չէր կարող իմանալ, թե որքան կկազմի ռոյալթիների դիմաց մատակարարին վճարման ենթակա վճարների մեծությունը: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ հայտարարագրում ռոյալթիների դիմաց մատակարարին վճարման ենթակա վճարները ներառելու պարտականությունը հայցվորը կարող էր կատարել հայտարարագրում մաքսային արժեքների վերաբերյալ ճշգրտված տեղեկություններ ներկայացնելու միջոցով: Մինչդեռ իրավախախտում որակված արարքն արձանագրելու, ինչպես նաև վիճարկվող վարչական ակտը կայացնելու պահին վերադաս մաքսային մարմնի կողմից ճշգրտումների փաստաթղթի ձև և ավտոմատ համակարգչային ծրագրի միջոցով ճշգրտումների փաստաթուղթ կազմելու ընթացակարգ սահմանված չի եղել: Հետևաբար Վերաքննիչ դատարանը գտել է, որ Արդուլմաջիդ Արդուլազիզ Ֆավազ Ալիոկաիրին չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունն ուներ օրենքով սահմանված պարտականություն «MASSIMO DUTTI» ապրանքային նշանով մակնշված ապրանքների յուրաքանչյուր ներկրման և «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպման դեպքում հայտարարագիր ներկայացնելիս ճշգրիտ տեղեկություններ ներկայացնել ապրանքների մաքսային արժեքի՝ այդ թվում վերջինիս բաղկացուցիչ տարր հան-

դիսացող և 01.10.2012 թվականի ֆրանսյազինգի պայմանագրով նախատեսված «MASSIMO DUTTI» ապրանքային նշանի օգտագործման դիմաց վճարվող ռոյալթիների գումարի մասին: Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հայտարարագրելիս ռոյալթին՝ որպես մաքսային արժեքի բաղկացուցիչ մաս, օրենքով սահմանված կազով ևս ենթակա էր հայտարարագրման: Այսինքն՝ նույնիսկ եթե Ընկերությունը հայտարարագիր ներկայացնելու պահի դրությամբ քաջատեղյակ չի եղել գոյացած ռոյալթիների հստակ չափի մասին, այնուամենայնիվ Ընկերությունը պարտավոր էր ներկայացվող հայտարարագրում տեղեկացնել դրանց առկայության մասին:

Ավելին՝ «ITX MERKEN B.A» ընկերությանը դուրս գրված ռոյալթիների վճարման հաշիվների դուրս գրման ժամանակ Ընկերությունն ուներ հնարավորություն դիմելու մաքսային մարմնին և մաքսային մարմնի կողմից ընդունված հայտարարագրերում կատարելու համապատասխան փոփոխություններ՝ ներկայացնելով մաքսային արժեքների վերաբերյալ ճշգրտված տեղեկություններ, որոնց մեջ կներառվեին նաև ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 83-րդ հոդվածի «ե» կետով նախատեսված վճարները: Մինչդեռ Ընկերությունը ոչ միայն չի կատարել օրենքով սահմանված իր պարտականությունը, այլ նաև չի օգտվել վճարման ենթակա ռոյալթիների առկայության վերաբերյալ տեղեկությունները նախապես հայտնելու, հայտարարագրում տեղ գտած անճշտությունները և սխալներն ուղղելու օրենսդրությամբ թույլատրելի համարվող եղանակներից: Այդ պարագայում իրավաչափորեն վրա է հասել ներմուծված ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ մաքսային մարմնին ոչ ճշգրիտ տեղեկություն ներկայացնելու արդյունքում առաջացած մաքսային վճարների պակաս հաշվարկման համար ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված համապատասխան պատասխանատվության միջոցի կիրառումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված՝ ներմուծված ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման պահանջներն ի կատար ածելու անհնարինությունը սխալմամբ մեկնաբանվել է այն համատեքստում, որ վիճարկվող վարչական ակտը կայացնելու պահին վերադաս մաքսային մարմնի կողմից ճշգրտումների փաստաթղթի ձև և ավտոմատ համակարգչային ծրագրի միջոցով ճշգրտումների փաստաթուղթ կազմելու ընթացակարգ սահմանված չի եղել: Մինչդեռ անկախ նշված ընթացակարգի սահմանված լինելուց կամ չլինելուց, ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 135-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները բավարար էին, որպեսզի Ընկերությունը, դրանցով առաջնորդվելով, հայտարարագրեր (այդ թվում՝ նաև՝ սկզբնական հայտարարագրերում փոփոխություններ կատարելու միջոցով) խնդրո առարկա ռոյալթիների գումարը:

Փաստորեն, սույն գործով Դատարանը ճիշտ իրավական գնահատական է տվել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման, մաքսային արժեքի բաղկացուցիչ մասը կազմող ռոյալթիների մասին տեղեկությունների ներկայացման ու հայտարարագրում տեղ գտած անճշտությունների կամ սխալների ուղղման ընթացակարգերին: Դատարանը, իրավաչափ համարելով վերոգրյալ մաքսային կանոնների խախտման արդյունքում Աբդուլմաջիդ Աբդուլազիզ Ֆավազ Ալիովի իրեն պատասխանատու

վության ենթարկելը և մերժելով վերջինիս հայցը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նշված պարճառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ դատական ակտին պետք է օրինական ուժ տալ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պար-

բերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում *Գազիկ Ավերիսյանն ընդդեմ ՀՀ նսրիկանության «Ճանապարհային նսրիկանություն» ծառայության թիվ ՎԳ/1390/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշմամբ* արված իրավական հետևությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության հիմքով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված հայցվոր Աբդուլմաջիդ Աբդուլազիզ Ֆավազ Ալիովաի լրացիվ կրող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու հանգամանքից, քանի որ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման համար օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտները չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝ թե՛ վարչական դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի ելքից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ վճռաբեկ բողոքի համար Կոմիտեի կողմից նախապես վճարված պետական տուրքի հատուցման գծով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 31.10.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 27.06.2016 թվականի վճիռին:

2. Վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/4724/05/17
2019թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/4724/05/17
Նախագահող դատավոր՝ Կ. Ավետիսյան
Դատավորներ՝ Կ. Բաղդասարյան
Կ. Մաթևոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՐՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 25-ին
դռնբաց դատական նիստում քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ «ՊԱՊԻՐՈՒՄ ԳԼՈՒԲԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի Հետբացթողումային հսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը, 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-1 և 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-2 որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 16.11.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2018

թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.11.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեն: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 31-րդ հոդվածը, 27.11.2009 թվականին ընդունված (ուժը կորցրել է 01.01.2018 թվականին) «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային օրենսգրք) 195-րդ, 200-րդ և 211-րդ հոդվածները, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 180-րդ հոդվածը, 22.02.2007 թվականին ընդունված (ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.02.2015 թվականի «Առանց ներմուծման մաքսարարքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության փարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» թիվ 112-Ն որոշումը (այսուհետ՝ ՀՀ կառավարության որոշում):

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաքանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության կողմից թվով 31 մաքսային հայտարարագրերով Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվել և ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից տրված առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների հավաստման մասին եզրակացությունների հիման վրա արտոնությամբ ձևակերպվել են տարբեր տեսակի ապրանքներ (թղթի տարբեր տեսակներ):

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Նախարարություն ներկայացված դիմումներում հիմնականում որպես ներմուծվող ապրանքների օգտագործման նպատակային նշանակություն նշվել է «Գրքերի, ամսագրերի, ուղեցույցների, քարտեզների, ատլասների տպագրության համար»:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ապրանք ներմուծողը մաքսատուրքերի վճարումից կարող է ազատվել միայն այն դեպքում, երբ թուղթը ներմուծում է Համաձայնագրով սահմանված նպատակի, այլ ոչ թե՛ ցանկացած այլ նպատակի համար (օրինակ՝ վաճառքի):

Դրանից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Ընկերության կողմից ներմուծված ապրանքները հանդիսանում են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, որոնց օգտագործման և տնօրինման սահմանափակումները սահմանված են մաքսային իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերով:

Բացի այդ, մեկ այլ՝ թիվ ՎԴ/5764/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից կայացված վճռով սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքում վկայակոչված

իրավական նորմերին տրվել է հակասական մեկնաբանություն, որի պայմաններում ներկայացված վճռաբեկ բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պայտասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և չի կարող հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը բեկանելու համար, քանի որ բողոք բերողի վկայակոչած վարչական գործով բերված վերաքննիչ բողոքը վարույթ չի ընդունվել, իսկ այլ գործերով՝ մասնավորապես թիվ ՎԴ/3865/05/16 և թիվ ՎԴ/5896/05/16 վարչական գործերով, Վերաքննիչ դատարանի երկու տարբեր դատական կազմեր կայացրել են սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշմանը համահունչ որոշումներ:

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված լիազոր մարմնի՝ Նախարարության կողմից տրված եզրակացությամբ հավաստվում է ներմուծված ապրանքների բնույթը, այլ ոչ թե սահմանվում է ապրանքի օգտագործման սահմանափակում: Նման սահմանափակման մասին խոսք չկա նաև տրված եզրակացության բովանդակության մեջ:

Ինչ վերաբերում է իրավասու մարմնին տրվող դիմումում նշված «նպատակային նշանակություն» արտահայտությանը, ապա այն վերաբերում է ոչ թե ապրանքների օգտագործման սահմանափակումներին, այլ՝ հավաստմանը:

Տվյալ դեպքում Համաձայնագրի արձանագրությամբ, ՀՀ կառավարության որոշմամբ տրվող եզրակացությամբ կամ որևէ այլ փաստաթղթով սահմանափակումներ նախատեսված չեն, որի պայմաններում Մաքսային միության մաքսային օրենսգրքի նորմերը սույն գործով կիրառելի չեն:

Բացի այդ, թե՛ ՀՀ կառավարության որոշմամբ, թե՛ մաքսագերծման փաստաթղթերով չի սահմանվում Ընկերության՝ իր կողմից ներմուծվող ապրանքներն օտարելու կամ այլ կերպ տնօրինելու իրավունքը սահմանափակող որևէ պայման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերությունը 30.03.2015 թվականից մինչև 28.04.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Նախարարություն է ներկայացրել թվով 31 առանձին դիմումներ՝ խնդրելով տալ եզրակացություն դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի հավաստման մասին (**հատոր 1-ին, գ.թ. 70-100**).

2) Նախարարության աշխատակազմի մշակութային արժեքների պահպանության գործակալության պետ Վ. Գասպարյանի կողմից, ի պատասխան վերը նշված դիմումների, 01.04.2015 թվականից մինչև 03.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում թվով 31 առանձին եզրակացություններ են տրվել դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող մշակութային բնույթի հավաստման մասին (**հատոր 1-ին, գ.թ. 39-69**).

3) 06.05.2015 թվականից մինչև 05.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում

կազմված թվով 31 բեռնային մաքսային հայտարարագրերի համաձայն՝ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվել թղթի տարբեր տեսակներ (**հատոր 1-ին, գ.թ. 101-150**).

4) Վարչության կողմից 15.05.2017 թվականին կազմվել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0008-Ա ակտն այն մասին, որ Ընկերության կողմից 2015-2017 թվականներին վերը նշված թվով 31 մաքսային հայտարարագրերով մաքսատուրքի արտոնությամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների զգալի մասը վաճառվել է մեծածախ եղանակով, այսինքն՝ դրանք օգտագործվել են արտոնությունների տրամադրման համար Համաձայնագրով սահմանված պայմաններին չհամապատասխանող նպատակներով՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ: Բացի այդ, արձանագրվել է նաև, որ Ընկերությունը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծած և ձևակերպած ապրանքները հայտարարագրել է ոչ ճիշտ տվյալներով, որի արդյունքում ապրանքների մաքսային արժեքն ավել է հայտարարագրվել 469.257 ՀՀ դրամով:

Առաջարկվել է մաքսային գործի ոլորտում ընդունել համապատասխան որոշում՝ մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկի ու գանձման վերաբերյալ, Ընկերությանն առաջադրել վերահայտարարագրել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերը կատարված ճշգրտումներին համապատասխան և վճարել օրենսդրությամբ սահմանված մաքսային վճարներն ու տույժերը (**հատոր 1-ին, գ.թ. 14-22**).

5) Վարչության պետ Սիմոն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-1 որոշումը մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկում ու գանձում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով նշված որոշումն ստանալուց հետո 10 օրվա ժամկետում վճարել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերից բխող՝ որոշմամբ առաջադրված համապատասխան մաքսային վճարները (**հատոր 1-ին, գ.թ. 23-31**).

6) Վարչության ստորաբաժանման ղեկավար Սիմոն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-2 որոշումը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրում նշված ապրանքի մաքսային արժեքը ճշգրտելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 32-34**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում սույն որոշման մեջ նշված Համաձայնագրի Արձանագրության «Ը» հավելվածի առարկա ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո դրանց նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ կիրառելու պարտադիր պայմանների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Մինչև 10.04.2018 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Մինչև 10.04.2018 թվականը գործող խմբագրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Վերը նշված նորմերի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են: Վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (որե՛ս, Սվեդլանա Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում դատարանը ձեռնամուխ է լինում վարչական ակտի իրավաչափության գնահատմանը՝ ստուգելով վիճարկվող վարչական ակ-

տի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին (տե՛ս, Հասմիկ Մելքոնյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/8975/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը, 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-1 և 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-2 որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանը, պատճառաբանելով, որ «Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը հակասում է «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» Նյու-Յորքի 22.11.1950 թվականի համաձայնագրին, այդ համաձայնագրի արձանագրության 1-ին կետին, արձանագրության Հավելված Ը-ին, ՀՀ կառավարության թիվ 112-Ն որոշման պահանջներին, այդ որոշմամբ հաստատված առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից ՀՀ տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման կարգին», գտել է, որ այն ենթակա է վերացման ամբողջությամբ: Միաժամանակ Դատարանը, հաշվի առնելով նաև, որ վիճարկվող 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-1 և 15.05.2017թ. 0008-Ո-2 որոշումներն ընդունվել են Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտի հիման վրա և հանդիսանում են վերջինիս հիման վրա կատարված հաշվարկներ, եզրակացրել է, որ որպես հետևանք ենթակա են վերացման նաև վերոհիշյալ որոշումները:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով նաև, որ Կոմիտեի դիրքորոշումն այն մասին, որ ներմուծած ապրանքներն Ընկերությունը չի օգտագործել համաձայնագրով նախանշված պայմաններին համապատասխանող նպատակներով՝ դրանք տպագրության նպատակով օգտագործվելու փոխարեն վաճառվել են, չի համապատասխանում համաձայնագրով և դրա արձանագրությամբ ամրագրված սկզբունքներին, արտոնության կիրառման անհրաժեշտությունը կախված է ներմուծված նյութերի (ապրանքների) բնույթից և (կամ) նպատակային նշանակությունից, այլ ոչ թե ներմուծողի կողմից դրանց օգտագործման նպատակից, գտել է, որ Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտով և դրա հիման վրա ընդունված թիվ 0008-Ո-1 ու թիվ 0008-Ո-2 որոշումներով իրավախախտումը ոչ իրավաչափորեն է վերագրվել Ընկերությանը և դրանք ընդունվել են օրենքի խախտմամբ՝ միաժամանակ ոչ իրավաչափորեն միջամտելով ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով պահպանվող Ընկերության իրավունքներին:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Ընկերության կողմից ապրանքները ներմուծելու ժամանակ գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունվող իրավական ակտերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրած կամ Հայաստանի Հանրապետության Նախագահի հաստատած և ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերը (...):

Նույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներն ու նորմերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

Հայաստանի Հանրապետության համար 23.08.2010 թվականից ուժի մեջ մտած «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 22.11.1950 թվականի Նյու-Յորքյան համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության համար 23.02.2011 թվականից ուժի մեջ մտած արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Պայմանավորվող պետությունները *պարտավորվում են նույն Արձանագրության Ա, Բ, Դ և Ե, ինչպես նաև Գ.1, Զ, Է և Ը հավելվածներում թվարկված նյութերը*, եթե նշված հավելվածները ստորև նշված 16(ա) կետի համաձայն արված հայտարարության առարկա չեն, *ազարեղ մաքսային դուրքերից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից*, ինչպես սահմանված է Համաձայնագրի I հոդվածի 1-ին կետով՝ *պայմանով, որ այդ նյութերը բավարարեն այս հավելվածներով սահմանված պայմանները* և հանդիսանան այլ Պայմանավորվող պետության արտադրանք:

Արձանագրության 8-րդ հոդվածի 14(ա) կետի համաձայն՝ (...) նույն Արձանագրության, ինչպես նաև 18-րդ կետում նշված արձանագրության մեջ գործածվող «պետություն» կամ «երկիր» հասկացությունները վերաբերում են նաև, եթե դա պահանջվում է համատեքստով, մաքսային կամ տնտեսական միություններին, իսկ դրանց իրավասության շրջանակում գտնվող, նույն Արձանագրության գործողության շրջանակին առնչվող բոլոր հարցերի մասով՝ դրանց անդամ պետությունների տարածքներին ամբողջությամբ, այլ ոչ թե այդ երկրներից յուրաքանչյուրի տարածքին: Հասկանալի է, որ նույն Արձանագրության Պայմանավորվող կողմի տարածքում այդ մաքսային կամ տնտեսական միությունները նույնպես կկիրառեն Համաձայնագրի դրույթները Արձանագրության նկատմամբ նույն հիմքով, ինչ նախատեսված է նախորդ կետում:

Արձանագրության «Ը» հավելվածի վերնագիրն է՝ «*Գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար օգտագործվող նյութերը և մեքենաները*», բովանդակությունը՝ «*i) Գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար օգտագործվող նյութեր (ցելյուլոզային զանգված, թափոնների վերամշակումից ստացված թուղթ, թերթային և այլ թուղթ՝ տպագրության համար, տպագրական ներկեր, սոսինձ և այլն):*

ii) Ցելյուլոզային զանգվածի և թղթի մշակման համար նախատեսված մեքենաներ, ինչպես նաև տպագրական և կազմարարական մեքենաներ՝ պայմանով, որ ներմուծող երկրում տվյալ պահին համարժեք տեխնիկական որակի մեքենաներ չեն արտադրվում»:

Նշված նորմերի մեկնաբանության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը վերը նշված միջազգային պայմանագրով 23.02.2011 թվականից պարտավորություն է ստանձնել մաքսային տուրք և ներմուծման հետ կապված այլ վճարներ չկիրառելու Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ստորև նշված հետևյալ ապրանքների համար՝ *ցելյուլոզային զանգված, թափոնների վերամշակումից արացված թուղթ, թերթային և այլ թուղթ՝ տպագրության համար*, տպագրական ներկեր, սոսինձ

և այլն, ինչպես նաև ցելյուլոզային զանգվածի և թղթի մշակման համար նախատեսված մեքենաներ, ինչպես նաև տպագրական և կազմարարական մեքենաներ՝ պայմանով, որ ներմուծող երկրում տվյալ պահին համարժեք տեխնիկական որակի մեքենաներ չեն արտադրվում,

հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) եթե դրանք օգտագործվում են գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար,

2) 1-ին կետում նշված ապրանքները հանդիսանում են այլ Պայմանավորվող պետության արտադրանք:

ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով վերը նշված միջազգային պայմանագիրը, 05.02.2015 թվականին ընդունել է «Առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» թիվ 112-Ն որոշումը, որի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմնին վերապահվել է վերը նշված ապրանքների ներմուծման նպատակային նշանակության վերաբերյալ եզրակացություն տրամադրելու իրավունք՝ նույն որոշման 3-րդ կետով այդ եզրակացությունը համարելով ներմուծման մաքսատուրքից ազատվելու հիմք:

Ընկերության կողմից ապրանքները ներմուծելու ժամանակ գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային ստուգումը մաքսային մարմինների կողմից իրականացվում է ստուգելու համար Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը անձանց կողմից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսային ստուգումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետության մաքսային մարմնի կողմից՝ ստուգման ենթարկվող անձանց նկատմամբ (մոտ), որոնք ստեղծվել և (կամ) գրանցվել են Մաքսային միության այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Ստուգման ենթարկվող անձինք ասելով ենթադրվում են՝
 հայտարարատուն. (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մաքսային ստուգման ժամանակ մաքսային մարմինների կողմից ստուգվում է **պայմանականորեն բաց թողնված ապրանքների** օգտագործման և տնօրինման հետ կապված սահմանափակումների պահպանումը:

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **պայմանականորեն բաց թողնված են համարվում** «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքները, որոնց դեպքում տրամադրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, **որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) փրօրինման հետ կապված սահմանափակումներով:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ **պայմանականորեն բաց թողնված ապրանքները կարող են օգտագործվել միայն արտոնությունների փրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով:**

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքներն

ունեն օտարերկրյա ապրանքի կարգավիճակ և գտնվում են մաքսային հսկողության տակ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ապրանքները համարվում են պայմանականորեն բաց թողնված մինչև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի՝ վճարման ենթակա գումարների վճարման պարտավորությունը դադարելու պահը, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

Վերը նշված նորմերի մեկնաբանությունից բխում է, որ մաքսային մարմինն իրականացնում է մաքսային ստուգում՝ նպատակ ունենալով ստուգելու նաև հայտարարատուների կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետություն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ներմուծվել են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, որոնց դեպքում վերը նշված միջազգային պայմանագրի ուժով տրամադրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ՝ զուգակցված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով, այսինքն՝ այդ ապրանքները կարող են օգտագործվել բացառապես արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով, ապա մաքսային մարմինը ստուգում է դրանց օգտագործման և տնօրինման հետ կապված սահմանափակումների պահպանումը հայտարարատուների կողմից, քանի որ այդ ապրանքները համարվում են մաքսային հսկողության տակ գտնվող:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 30.03.2015 թվականից մինչև 28.04.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմին՝ Նախարարություն է ներկայացրել թվով 31 առանձին դիմումներ՝ խնդրելով տալ եզրակացություն դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի հավաստման մասին: Նախարարության կողմից 01.04.2015 թվականից մինչև 03.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում տրվել են թվով 31 առանձին եզրակացություններ, որոնցով հավաստվել է ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող մշակութային բնույթը: Դրանից հետո Ընկերությունն այդ եզրակացությունների հիման վրա 06.05.2015 թվականից մինչև 05.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծել թղթի տարբեր տեսակներ:

Վարչությունը, իրականացնելով մաքսային ստուգում, 15.05.2017 թվականին կազմել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0008-Ա ակտն այն մասին, որ Ընկերության կողմից 2015-2017 թվականներին վերը նշված թվով 31 մաքսային հայտարարագրերով մաքսատուրքի արտոնությամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների զգալի մասը վաճառվել է մեծածախ եղանակով: Բացի այդ, արձանագրվել է նաև, որ Ընկերությունը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծած և ձևակերպած ապրանքները հայտարարագրել է ոչ ճիշտ տվյալներով, որի արդյունքում ապրանքների մաքսային արժեքն ավել է հայտարարագրվել 469.257 ՀՀ դրամով: Դրա հիման վրա մաքսային մարմինն առաջարկել է մաքսային գործի ոլորտում ընդունել համապատասխան որոշում՝ մաքսային վճարների և

մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկի ու գանձման վերաբերյալ, Ընկերությանն առաջադրել վերահայտարարագրել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերը կատարված ճշգրտումներին համապատասխան և վճարել օրենսդրությամբ սահմանված մաքսային վճարներն ու տույժերը: Այնուհետև Վարչության պետ Սիմոն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-1 որոշումը մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկում ու գանձում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով նշված որոշումն ստանալուց հետո 10 օրվա ժամկետում վճարել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերից բխող՝ որոշմամբ առաջադրված համապատասխան մաքսային վճարները, իսկ 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-2 որոշումը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրում նշված ապրանքի մաքսային արժեքը ճշգրտելու մասին:

Այսինքն՝ մաքսային մարմինը, նպատակ ունենալով ստուգելու Ընկերության կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը, ստուգմամբ բացահայտել է, որ «ներքին ապառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված վերը նշված ապրանքների մի մասը, որոնք հանդիսացել են պայմանակաճանաչման բաց թողնված, և որոնց համար վերը նշված միջազգային պայմանագրի ուժով տրամադրվել են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, չեն զուգակցվել այդ ապրանքների օգտագործման և տնօրինման հետ կապված սահմանափակումներով, այսինքն՝ դրանք չեն օգտագործվել բացառապես արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով՝ չեն օգտագործվել գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար, այլ՝ վաճառքի եղանակով օտարման միջոցով փոխանցվել են երրորդ անձանց:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ անհիմն է Կուրիտեի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքն այն մասին, որ ներմուծած ապրանքներն Ընկերությունը չի օգտագործել համաձայնագրով նախանշված պայմաններին համապատասխանող նպատակներով, և արտոնության կիրառման անհրաժեշտությունը կախված է ներմուծված նյութերի (ապրանքների) բնույթից և (կամ) նպատակային նշանակությունից, այլ ոչ թե ներմուծողի կողմից դրանց օգտագործման նպատակից՝ չի բխում ինչպես վերը նշված իրավական ակտերի վերաբերյալ հայտնված դիրքորոշումներից, այնպես էլ սույն գործի փաստերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճարվել դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնա-

հատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (*լրե՛ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը հստակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը պետք է կատարվի տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերով սահմանված պահանջների պահպանման հարցը պարզելու միջոցով (*լրեն, Հասմիկ Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/8975/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը, սույն գործի շրջանակներում ձեռնամուխ լինելով գնահատելու վիճարկվող վարչական ակտերի իրավաչափությունը՝ ստուգելով դրանց համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, արձանագրում է, որ այդ պատճառաբանությունները չէին կարող հիմք հանդիսանալ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 16.11.2017 թվականի վճիռն անփոփոխ թողնելու համար, քանի որ սույն գործով վիճարկվող վարչական ակտերն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ պայման էր, որ գործի քննությամբ հաստատված համարվեք, որ վարչական ակտերն ընդունվել են օրենքի խախտմամբ ու դրանցով խախտվել են Ընկերության՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները, որպիսի փաստերը վերը նշված դիրքորո-

շումների պարագայում Վճռաբեկ դատարանը հաստատված չհամարեց:

Վճռաբեկ բողոքի պայրասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պայրճատարանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Ընդ որում՝ գործի նոր քննության ժամանակ, հիմք ընդունելով վերը նշված դիրքորոշումները, անհրաժեշտ է պարզել՝ թվով 31 մաքսային հայտարարագրերով մաքսատուրքի արտոնությանը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքներից որքանն է վաճառվել և նոր միայն հետևություն անել վիճարկվող վարչական ակտերը մասնակիորեն անվավեր ճանաչելու կամ հայցը մերժելու մասին:

5. Վճռաբեկ դատարանի պայրճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև նյութ կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/4724/05/17 վարչական գործով 25.12.2019 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 25.12.2019 թվականին քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «ՊԱՊԻԲՈՒՄ ԳԼՈՒԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջների մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանս, Նախշուն Տավարացյանս և Ստեփան Միքայելյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի Հետբացթողումային հսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը, 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-1 և 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-2 որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 16.11.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2018 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.11.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 31-րդ հոդվածը, 27.11.2009 թվականին ընդունված (ուժը կորցրել է 01.01.2018 թվականին) «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային օրենսգրք) 195-րդ, 200-րդ և 211-րդ հոդվածները, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 180-րդ հոդվածը, 22.02.2007 թվականին ընդունված (ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.02.2015 թվականի «Առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներ

րից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» թիվ 112-Ն որոշումը (այսուհետ՝ ՀՀ կառավարության որոշում):

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության կողմից թվով 31 մաքսային հայտարարագրերով Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվել և ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից տրված առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների հավաստման մասին եզրակացությունների հիման վրա արտոնությամբ ձևակերպվել են տարբեր տեսակի ապրանքներ (թղթի տարբեր տեսակներ):

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Նախարարություն ներկայացված դիմումներում հիմնականում որպես ներմուծվող ապրանքների օգտագործման նպատակային նշանակություն նշվել է «Գրքերի, ամսագրերի, ուղեցույցների, քարտեզների, ատլասների տպագրության համար»:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ապրանք ներմուծողը մաքսատուրքերի վճարումից կարող է ազատվել միայն այն դեպքում, երբ թուղթը ներմուծում է Համաձայնագրով սահմանված նպատակի, այլ ոչ թե՛ ցանկացած այլ նպատակի համար (օրինակ՝ վաճառքի):

Դրանից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Ընկերության կողմից ներմուծված ապրանքները հանդիսանում են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, որոնց օգտագործման և տնօրինման սահմանափակումները սահմանված են մաքսային իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերով:

Բացի այդ, մեկ այլ՝ թիվ ՎԳ/5764/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից կայացված վճռով սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքում վկայակոչված իրավական նորմերին տրվել է հակասական մեկնաբանություն, որի պայմաններում ներկայացված վճռաբեկ բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.2 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները.

Վճռաբեկ բողոքն անհիմն է և չի կարող հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը բեկանելու համար, քանի որ բողոք բերողի վկայակոչած վարչական գործով բերված վերաքննիչ բողոքը վարույթ չի ընդունվել, իսկ այլ գործերով՝ մասնավորապես թիվ ՎԳ/3865/05/16 և թիվ ՎԳ/5896/05/16 վարչական գործերով, Վերաքննիչ դատարանի երկու տարբեր դատական կազմեր կայացրել են սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշմանը համահունչ որոշումներ:

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված լիազոր մարմնի՝ Նախարարության կողմից տրված եզրակացությամբ հավաստվում է ներմուծված ապրանքների բնույթը, այլ ոչ թե

սահմանվում է ապրանքի օգտագործման սահմանափակում: Նման սահմանափակման մասին խոսք չկա նաև տրված եզրակացության բովանդակության մեջ:

Ինչ վերաբերում է իրավասու մարմնին տրվող դիմումում նշված «նպատակային նշանակություն» արտահայտությանը, ապա այն վերաբերում է ոչ թե ապրանքների օգտագործման սահմանափակումներին, այլ՝ հավաստմանը:

Տվյալ դեպքում Համաձայնագրի արձանագրությամբ, ՀՀ կառավարության որոշմամբ տրվող եզրակացությամբ կամ որևէ այլ փաստաթղթով սահմանափակումներ նախատեսված չեն, որի պայմաններում **Մաքսային միության մաքսային օրենսգրքի** նորմերը սույն գործով կիրառելի չեն:

Բացի այդ, թե՛ ՀՀ կառավարության որոշմամբ, թե՛ մաքսագերծման փաստաթղթերով չի սահմանվում Ընկերության՝ իր կողմից ներմուծվող ապրանքներն օտարելու կամ այլ կերպ տնօրինելու իրավունքը սահմանափակող որևէ պայման:

3. Վճարակ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1) Ընկերությունը 30.03.2015 թվականից մինչև 28.04.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Նախարարություն է ներկայացրել թվով 31 առանձին դիմումներ՝ խնդրելով տալ եզրակացություն դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի հավաստման մասին (**հատոր 1-ին, գ.թ. 70-100**).

2) Նախարարության աշխատակազմի մշակութային արժեքների պահպանության գործակալության պետ Վ. Գասպարյանի կողմից, ի պատասխան վերը նշված դիմումների, 01.04.2015 թվականից մինչև 03.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում թվով 31 առանձին եզրակացություններ են տրվել դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող մշակութային բնույթի հավաստման մասին (**հատոր 1-ին, գ.թ. 39-69**).

3) 06.05.2015 թվականից մինչև 05.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում կազմված թվով 31 բեռնային մաքսային հայտարարագրերի համաձայն՝ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվել թղթի տարբեր տեսակներ (**հատոր 1-ին, գ.թ. 101-150**).

4) Վարչության կողմից 15.05.2017 թվականին կազմվել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0008-Ա ակտն այն մասին, որ Ընկերության կողմից 2015-2017 թվականներին վերը նշված թվով 31 մաքսային հայտարարագրերով մաքսատուրքի արտոնությամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների զգալի մասը վաճառվել է մեծածախ եղանակով, այսինքն՝ դրանք օգտագործվել են արտոնությունների տրամադրման համար Համաձայնագրով սահմանված պայմաններին չհամապատասխանող նպատակներով՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի (կետի) պահանջների խախտմամբ: Բացի այդ, արձանագրվել է նաև, որ Ընկերությունը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծած և ձևակերպած ապրանքները հայտարարագրել է ոչ ճիշտ տվյալներով, որի արդյունքում ապրանքների մաքսային արժեքն ավել է հայտարարագրվել 469.257 ՀՀ դրամով:

Առաջարկվել է մաքսային գործի ոլորտում ընդունել համապատասխան որոշում՝ մաք-

սային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկի ու գանձման վերաբերյալ, Ընկերությանն առաջադրել վերահայտարարագրել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերը կատարված ճշգրտումներին համապատասխան և վճարել օրենսդրությամբ սահմանված մաքսային վճարներն ու տույժերը (**հատոր 1-ին, գ.թ. 14-22**).

5) Վարչության պետ Սիմոն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-1 որոշումը մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկում ու գանձում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով նշված որոշումն ստանալուց հետո 10 օրվա ժամկետում վճարել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերից բխող՝ որոշմամբ առաջադրված համապատասխան մաքսային վճարները (**հատոր 1-ին, գ.թ. 23-31**).

6) Վարչության ստորաբաժանման ղեկավար Սիմոն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-2 որոշումը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրում նշված ապրանքի մաքսային արժեքը ճշգրտելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 32-34**):

4. Հաղուկ կարծիքի հիմնավորումները.

Գլխում ենք, որ սույն գործով անհրաժեշտ էր անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունների կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, թե ներկրվող ապրանքը հետագայում օգտագործվել է իր նպատակային նշանակությամբ անմիջականորեն այն ներմուծողի կողմից, թե իրացվել է այլ անձանց:

Համաձայնագրի (*Հայաստանի Հանրապետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 23.08.2010 թվականին*) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանավորվող պետությունները պարտավորվում են հետևյալ նյութերի ներմուծման ժամանակ կամ ներմուծման հետ կապված չկիրառել մաքսատուրքեր և այլ վճարներ.

ա) գրքեր, հրատարակություններ և փաստաթղթեր, որոնք նշված են նույն Համաձայնագրին կից Ա հավելվածում.

բ) նույն Համաձայնագրին կից «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներում թվարկված և Պայմանավորվող այլ պետության արտադրանք հանդիսացող՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութեր՝ այդ հավելվածներում նշված պայմանների պահպանման պայմանով:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 23.05.1969 թվականի Վիեննայի կոնվենցիայի (*Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 16.06.2005 թվականից*) «Մեկնաբանման ընդհանուր կանոնը» վերտառությամբ 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջազգային պայմանագիրը մեկնաբանվում է դրա առարկայից և նպատակներից բխող պայմանագրի եզրույթների տրված սովորական նշանակությանը համապատասխան և իրականացվում է միջազգային պայմանագրով և միջազգային իրավունքի նորմերով և

ակզբունքներով սահմանված կարգով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով միջազգային իրավական ակտերի մեկնաբանման կանոններին, նշել է, որ համաձայն Վիեննայի Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 2-րդ կետի՝ պայմանագրի նախաբանը հանդիսանում է դրա անբաժանելի մասը: Ավելին, կոնկրետ միջազգային իրավական ակտը մեկնաբանելիս՝ նախաբանը, որպես կանոն, շատ օգտակար է դրա «ատարկան» և «նպատակը» պարզելու համար (*տե՛ս Golder v. United Kingdom of Great Britain (4451/70) գործով Եվրոպական դատարանի 14.02.1975 թվականի վճիռը, կետ 34*):

Համաձայնագրի նախաբանի համաձայն՝ պայմանավորվող պետությունները, համարելով, որ գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակումը և ընդհանրապես քաղաքակրթությունների ինքնարտահայտման տարբեր ձևերի առավել լայն տարածումը կենսական նշանակություն ունեն ինչպես մտավոր առաջընթացի և միջազգային փոխըմբռնման, այնպես էլ, հետևաբար, ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման համար, համարելով, որ այդ փոխանակումներն իրականացվում են առաջին հերթին գրքերի, հրատարակությունների, ինչպես նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով, (...) ընդունում են, որ այդ նպատակների իրականացմանն արդյունավետ կծառայի կրթական, գիտական և մշակութային բնույթի գրքերի, հրատարակությունների և նյութերի ազատ տարածմանն աջակցող միջազգային համաձայնագիրը (...):

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ գտնում ենք, որ Համաձայնագրի նպատակը բացահայտելու համար առաջնային նշանակություն ունի դրա նախաբանը: Համաձայնագրով սահմանված դրույթները չեն կարող մեկնաբանվել և կիրառվել Համաձայնագրով հետապնդվող նպատակի շրջանակներից դուրս, հետևաբար պայմանավորվող պետությունների կողմից Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները հետապնդվող նպատակների լույսի ներքո չմեկնաբանելը և չկիրառելը կհանդիսանան միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտում, ոչ բարեխիղճ կատարում:

Այս դեպքում Համաձայնագրի նպատակների բացահայտման տեսանկյունից առավել իմաստալից նշանակություն ունի նախաբանի այն մասը, որում այն ստորագրած կողմերը հայտարարում են, որ «(...) գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակումը և ընդհանրապես քաղաքակրթությունների ինքնարտահայտման տարբեր ձևերի առավել լայն տարածումը կենսական նշանակություն ունեն ինչպես մտավոր առաջընթացի և միջազգային փոխըմբռնման, այնպես էլ, հետևաբար, ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման համար (...):»:

Վերոգրյալի արդյունքում արձանագրում ենք, որ Համաձայնագիրը նպատակ է հետապնդում բոլոր ուղղակի և անուղղակի միջոցներով նպաստել գիտական, կրթական և մշակութային բնույթի գրքերի, հրատարակությունների և նյութերի հնարավորին լայնածավալ տարածմանը՝ ի թիվս այնի, 1-ին հոդվածով նախատեսված նյութերի ներմուծման համար մաքսատուրքեր և ներմուծման հետ կապված այլ վճարներ չկիրառելու պոզիտիվ պարտականություն նախատեսելով պայմանավորվող Պետությունների համար: Նույն հոդվածի «բ» կետը ներմուծման համար գանձվող մաքսատուրքի (և ներմուծման հետ կապված այլ վճարների) գծով այդ արտոնության կիրառման համար նախատեսում է 2 պայման.

ներկրվող կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութը պետք է թվարկված լինի Համաձայնագրի «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներից մեկում,

ներկրվող կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութը պետք է հանդիսանա այլ պետության արտադրանք:

Նշված հոդվածի պայմանները սպառիչ են, և Համաձայնագիրը դրա կիրառելիությունը չի պայմանավորում նյութերի ներկրումից հետո դրանք ներմուծող սուբյեկտի կողմից նպատակային նշանակությամբ օգտագործվելու կամ չօգտագործվելու հանքամանքի հետ:

Այսպես՝ հարկ է արձանագրել, որ պայմանավորվող պետությունները Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետով ստանձնել են միջազգային պարտավորություն՝ ազատել մաքսատուրքերից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից Համաձայնագրի հավելվածներում թվարկված նյութերը ներմուծողին՝ պայմանով, որ այդ նյութերը բավարարեն հավելվածներով սահմանված պայմանները և հանդիսանան այլ պայմանավորվող պետության արտադրանք: Իսկ նշված չափանիշներին բավարարող նյութերը ներմուծող սուբյեկտին մաքսատուրքերի և այլ վճարների վճարումից ազատելու համար դրանք հետագայում ներմուծողի կողմից նպատակային նշանակությամբ օգտագործելու պայմանի սահմանումը կհանգեցնի միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման: Այդ իրավիճակը կհանգեցնի նաև Համաձայնագրով ամրագրված սկզբունքների խախտման, քանի որ այդ սկզբունքները հետապնդում են գրքերի, հրատարակությունների, ինչպես նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակմանը և տարածմանը նպաստելու նպատակ: Այդ նպատակին պետք է ծառայի նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի՝ կրթության, գիտության, տեխնոլոգիաների և մշակույթի ոլորտներ առավել դյուրին և մատչելի կերպով մուտք գործելու հնարավորության ստեղծումը: Դա էլ իր հերթին արտահայտվում է Համաձայնագրում նշված կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծման դեպքում մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելու՝ պայմանավորվող Պետության պոզիտիվ պարտավորության անվերապահ կատարմամբ: Ընդ որում, Համաձայնագրով թվարկված՝ կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակմանը և տարածմանը նպաստելու նպատակը կարող է գործնականում կյանքի կոչվել ինչպես այն դեպքում, երբ հրատարակչական գործունեությունն իրականացվում է հենց այդ նյութերը ներմուծողի կողմից, այնպես էլ՝ երբ հրատարակչական գործունեությունն իրականացվում է ներմուծողից տարբերվող այլ սուբյեկտի կողմից: Տվյալ դեպքում ներմուծողը միջնորդի դերակատարություն ունի գրքերի, հրատարակությունների, ինչպես նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակմանը և տարածմանը նպաստելու հարցում:

Այսպիսով, գտնում ենք, որ Համաձայնագրի անդամ պետությունն ունի Համաձայնագրով սահմանված չափանիշներին բավարարող կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծումը մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելու պոզիտիվ պարտավորություն՝ անկախ այն հանգամանքից, թե այդ նյութերը ներմուծողի կողմից անմիջականորեն օգտագործվում են հրատարակչական գործունեության մեջ, թե օտարվում են այլ սուբյեկտների: Այդ պարտավորությունը բխում է Համաձայնագրով մատնանշված հայեցակարգից առ այն, որ Համաձայնագիրն արդյունավետ միջոց է գաղափարների և գիտելիքների փոխանակումը խոչընդոտող մաքսային արգելքների նվազեցման և տնտեսական բնույթի այլ սահմանափակումների կրճատման համար:

Համաձայնագրով ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 05.02.2015 թվականին ընդունված թիվ 112-Ն որոշմամբ մշակվել է առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման կարգը (այսուհետ՝ Կարգ), որը կարգավորում է առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման հետ կապված հարաբերությունները:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ եզրակացություն տրամադրող Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմինը (...) տրամադրում է Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման նպատակային նշանակության վերաբերյալ եզրակացությունը՝ իր իրավասությունների շրջանակներում:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի թիվ 112-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքները, լիազոր մարմնի կողմից տրամադրված եզրակացության հիման վրա, ազատվում են ներմուծման մաքսատուրքից:

ՀՀ կառավարության վկայակոչված որոշմամբ սահմանված իրավակարգավորումներից ևս հետևում է, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծումը մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելը որևէ կերպ պայմանավորված չէ այն հանգամանքով, թե այդ նյութերը ներմուծողի կողմից անմիջականորեն օգտագործվում են հրատարակչական գործունեության մեջ, թե օտարվում են այլ սուբյեկտների:

Հինք ընդունելով վերոգրյալ վերլուծությունները՝ գտնում ենք, որ Համաձայնագրով նախատեսված՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերը չեն հանդիսանում պայմանականորեն բաց թողնված այնպիսի ապրանքներ, որոնց դեպքում մաքսատուրքերի և այլ վճարների համար սահմանված արտոնությունները զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով:

Այսպես՝ իրավահարաբերության պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի (*ընդունվել է 27.11.2009 թվականին, Հայաստանի Հանրապետության համար պարտադիր է 02.01.2015 թվականից, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին*)՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի համաձայն) 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված են համարվում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքները, որոնց դեպքում՝

1) տրամադրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով.

2) օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներն առնչվում են ապրանքների բացթողումից հետո նույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերի ներկայացման հետ (...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշ-

ված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքները կարող են օգտագործվել միայն արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով:

Արգելված է նույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների փոխանցումը երրորդ անձանց, այդ թվում՝ դրանց վաճառքի կամ այլ եղանակով օտարման միջոցով, իսկ այն դեպքում, երբ նշված ապրանքների ներմուծման սահմանափակումները սահմանված են՝ կապված այդ ապրանքների որակի ստուգման և անվտանգության հետ, ապա արգելված է ցանկացած ձևով դրանց օգտագործումը (շահագործումը, սպառումը):

Իրավահարաբերության պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային մարմինների կողմից, եթե մաքսային մարմին են ներկայացվել լիցենզիաներ, հավաստագրեր, թույլտվություններ և (կամ) այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են նույն օրենսգրքին և Մաքսային միության անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերին համապատասխան ապրանքների բացթողման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ համապատասխան՝ նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել ապրանքների բացթողումից հետո:

Վերը նշված իրավանքների վերլուծության արդյունքում արձանագրում ենք, որ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է պայմանականորեն բաց թողնված ապրանքների տեսակները:

Այդպիսի ապրանքներից են, մասնավորապես, Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված այն ապրանքները, որոնց ներմուծման ժամանակ տրամադրվում են մաքսատուրքերի և հարկերի գծով արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով: Այդ ապրանքները կարող են օգտագործվել միայն արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով:

Փաստորեն, Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ ներմուծողին տրամադրված արտոնությունը զուգակցված է եղել ներմուծված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով: Մինչդեռ, եթե նման սահմանափակումներ նախատեսված չեն եղել, ապա Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը կիրառելի չի կարող լինել: Նշված հիմքով կիրառելի չի կարող լինել նաև վկայակոչված հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանափակումը, այն է՝ ապրանքները միայն արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով օգտագործելու պահանջը:

Մյուս կողմից՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այդ ապրանքների նկատմամբ առկա են օգտագործման կամ տնօրինման հետ կապված սահմանափակումներ, որոնք առնչվում են ապրանքների բացթողումից հետո նույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերի ներկայացման հետ:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ ըստ Համաձայնագրի՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար մաքսային արտոնություն տրամադրելու իրավական հնարավորությունը պայմանավորված է բացառապես ներկրված նյու-

թը Համաձայնագրի «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներից մեկում թվարկված լինելու և պայմանավորվող այլ պետության արտադրանք հանդիսանալու հանգամանքով: Այլ կերպ՝ Համաձայնագիրը նշված նյութերի ներմուծման համար մաքսային արտոնության կիրառելիությունը որևէ կերպ չի գուգակցել (չի պայմանավորել) դրանք ներմուծող սուբյեկտի կողմից անմիջականորեն նպատակային նշանակությամբ օգտագործելու կամ չօգտագործելու հանգամանքով: Բացի այդ՝ Համաձայնագիրը կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների նկատմամբ չի սահմանում օգտագործման կամ տնօրինման հետ կապված սահմանափակումներ:

Անփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ Համաձայնագրով նախատեսված կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերը, որոնց ներմուծման դեպքում կիրառվում են մաքսատուրքերի և այլ վճարների գծով արտոնություններ, չեն համարվում պայմանականորեն բաց թողնված ապրանքներ՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ ենթակետերի իմաստով: Հետևաբար Համաձայնագրով նախատեսված կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերը ներմուծվելուց հետո դրանք անմիջականորեն ներմուծողի կողմից նպատակային նշանակությամբ օգտագործվելու կամ այլ անձանց օտարվելու հանգամանքները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ այդ նյութերի ներմուծման համար գանձվող մաքսատուրքի և ներմուծման հետ կապված այլ վճարների գծով արտոնության կիրառելիության համար: Ասվածն էլ իր հերթին նշանակում է, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունների կիրառումը պայմանավորված չէ այն հանգամանքով, թե ներկրվող ապրանքը հետագայում օգտագործվել է իր նպատակային նշանակությամբ անմիջականորեն այն ներմուծողի կողմից, թե իրացվել է այլ անձանց:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 30.03.2015 թվականից մինչև 28.04.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմին՝ Նախարարություն է ներկայացրել թվով 31 առանձին դիմումներ՝ խնդրելով տալ եզրակացություն դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի հավաստման մասին: Նախարարության կողմից 01.04.2015 թվականից մինչև 03.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում տրվել են թվով 31 առանձին եզրակացություններ, որոնցով հավաստվել է ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող մշակութային բնույթը: Դրանից հետո Ընկերությունն այդ եզրակացությունների հիման վրա 06.05.2015 թվականից մինչև 05.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծել թղթի տարբեր տեսակներ:

Վարչությունը, իրականացնելով մաքսային ստուգում, 15.05.2017 թվականին կազմել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0008-Ա ակտն այն մասին, որ Ընկերության կողմից 2015-2017 թվականներին վերը նշված թվով 31 մաքսային հայտարարագրերով մաքսատուրքի արտոնությամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների զգալի մասը վաճառվել է մեծածախ եղանակով: Բացի այդ, արձանագրվել է նաև, որ Ընկերությունը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծած և ձևակերպված ապրանքները հայտարարա-

րագրել է ոչ ճիշտ տվյալներով, որի արդյունքում ապրանքների մաքսային արժեքն ավել է հայտարարագրվել 469.257 ՀՀ դրամով: Դրա հիման վրա մաքսային մարմինն առաջարկել է մաքսային գործի ոլորտում ընդունել համապատասխան որոշում՝ մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկի ու գանձման վերաբերյալ, Ընկերությանն առաջադրել վերահայտարարագրել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերը կատարված ճշգրտումներին համապատասխան և վճարել օրենսդրությամբ սահմանված մաքսային վճարներն ու տույժերը: Այնուհետև Վարչության պետ Սիմոն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-1 որոշումը մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկում ու գանձում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով նշված որոշումն ստանալուց հետո 10 օրվա ժամկետում վճարել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերից բխող՝ որոշմամբ առաջադրված համապատասխան մաքսային վճարները, իսկ 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-2 որոշումը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրում նշված ապրանքի մաքսային արժեքը ճշգրտելու մասին:

Ընկերությունը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը, 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-1 և 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-2 որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանը բավարարել է Ընկերության հայցը՝ գտնելով, որ «Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը հակասում է «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» Նյու-Յորքի 22.11.1950 թվականի համաձայնագրին, այդ համաձայնագրի արձանագրության 1-ին կետին, արձանագրության Հավելված Ը-ին, ՀՀ կառավարության թիվ 112-Ն որոշման պահանջներին, այդ որոշմամբ հաստատված առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից ՀՀ տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման կարգին», գտել է, որ այն ենթակա է վերացման ամբողջությամբ: Միաժամանակ Դատարանը, հաշվի առնելով, որ վիճարկվող 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-1 և 15.05.2017թ. 0008-Ո-2 որոշումներն ընդունվել են Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտի հիման վրա և հանդիսանում են վերջինիս հիման վրա կատարված հաշվարկներ, եզրակացրել է, որ որպես հետևանք ենթակա են վերացման նաև վերոհիշյալ որոշումները:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքն ու Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով նաև, որ Կոմիտեի դիրքորոշումն այն մասին, որ ներմուծած ապրանքներն Ընկերությունը չի օգտագործել համաձայնագրով նախանշված պայմաններին համապատասխանող նպատակներով՝ դրանք տպագրության նպատակով օգտագործվելու փոխարեն վաճառվել են, չի համապատասխանում համաձայնագրով և դրա արձանագրությամբ ամրագրված սկզբունքներին, արտոնության կիրառման անհրաժեշտությունը կախված է ներմուծված նյութերի (ապրանքների) բնույթից և (կամ) նպատակային նշանակությունից, այլ ոչ թե ներմուծողի կողմից դրանց օգտագործման նպատակից, գտել է, որ Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտով և դրա հիման վրա ընդունված թիվ 0008-Ո-1 ու թիվ 0008-Ո-2 որոշումներով իրավախախտումը ոչ իրավաչափորեն է վերագրվել Ընկերությանը և դրանք ընդունվել են օրենքի խախտմամբ՝

միաժամանակ ոչ իրավաչափորեն միջամտելով ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով պահպանվող Ընկերության իրավունքներին:

Սույն հատուկ կարծիքում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործով վիճարկվող վարչական ակտերի կայացման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների օգտագործման նպատակը չի համապատասխանել արտոնությունների տրամադրման համար Համաձայնագրի սահմանած պայմաններին: Մինչդեռ պետք է ընդգծել, որ անհիմն է վարչական մարմնի այն պնդումը, համաձայն որի՝ Ընկերությունը, մեծածախ առևտրի ճանապարհով օտարելով ներկրված ապրանքը, օգտագործել է վերոհիշյալ ապրանքն արտոնությունների տրամադրման պայմաններին չհամապատասխանող նպատակներով, քանի որ մաքսատուրքից ազատված լինելն ուղղակիորեն նպաստում է շուկայում ներկրված ապրանքի անհամեմատ ցածր գին ունենալուն, ինչ էլ իր հերթին նպաստում է գիտական, կրթական և մշակութային բնույթի հրատարակությունների առավել լայնածավալ տարածմանը, այլ կերպ ասած՝ Համաձայնագրի նպատակներին:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրությունից հետևում է, որ ո՛չ Համաձայնագրով, ո՛չ Նախարարության կողմից 01.04.2015 թվականից մինչև 03.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում տրված՝ ՀՀ տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային ապրանքների հավաստման մասին թվով 31 առանձին եզրակացություններով սահմանված չէ ներմուծողի կողմից թղթի օգտագործման պարտադիր նպատակ՝ որպես արտոնությունից օգտվելու պայման: Ըստ Համաձայնագրի՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար մաքսային արտոնություն տրամադրելու իրավական հնարավորությունը պայմանավորված է բացառապես ներկրված նյութը Համաձայնագրի «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներից մեկում թվարկված լինելու և պայմանավորվող այլ պետության արտադրանք հանդիսանալու հանգամանքով: Ընդ որում, Համաձայնագիրը նշված նյութերի ներմուծման համար մաքսային արտոնության կիրառելիությունը որևէ կերպ չի պայմանավորել դրանց ներկրման նպատակային նշանակությամբ օգտագործման կամ չօգտագործման փաստերով:

Այսպիսով, գտնում ենք, որ ապրանքների բնույթի հավաստումը դեռևս չի նշանակում, որ դրանց համար նախատեսված են տնօրինման կամ օգտագործման սահմանափակումներ:

Անդրադառնալով սույն գործով վիճարկվող վարչական ակտերով Ընկերությանը իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում վերագրելուն՝ արձանագրում ենք, որ նշված իրավաւորմը, տվյալ դեպքում, կիրառելի չէ, քանի որ մաքսատուրքի կամ ներմուծման հետ կապված այլ վճարների գծով Ընկերությանը տրամադրված արտոնությունը զուգակցված չի եղել ներմուծված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով:

Այսպիսով Ընկերության կողմից ներմուծված ապրանքները չեն կարող որակվել որպես պայմանականորեն բաց թողնված ապրանքներ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, որպիսի իրավաչափ հետևության հանգել է Վերաքննիչ դատարանը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում ենք, որ

վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա Արտագնա մաքսային ստուգման ակտը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 15.05.2017 թվականի «Մաքսային գործի ոլորտում» թիվ 0008-Ո-1 որոշումը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետքացթողումային հսկողության վարչության 15.05.2017 թվականի «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման» թիվ 0008-Ո-2 որոշումն անվավեր ճանաչելու մասին Դատարանի վճիռը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի Կոմիտեի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէր կարող լինել Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ռ.Հակոբյան
Ն. Տավարացյան
Ստ. Միքայելյան

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/4724/05/17 վարչական գործով 25.12.2019 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 25.12.2019 թվականին քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «ՊԱՊԻՐՈՒՄ ԳԼՈՒԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջների մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն, բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի Հետբացթողումային հսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը, 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-1 և 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-2 որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 16.11.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2018 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.11.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ դատարանը բողոքը քննել է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 31-րդ հոդվածը, 27.11.2009 թվականին ընդունված (ուժը կորցրել է 01.01.2018 թվականին) «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային օրենսգրք) 195-րդ, 200-րդ և 211-րդ հոդվածները, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 180-րդ հոդվածը, 22.02.2007 թվականին ընդունված (ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.02.2015 թվականի «Առանց ներմուծման մաքսատուրքի վճարման» «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի

ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» թիվ 112-Ն որոշումը (այսուհետ՝ ՀՀ կառավարության որոշում):

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության կողմից թվով 31 մաքսային հայտարարագրերով Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվել և ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից տրված առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների հավաստման մասին եզրակացությունների հիման վրա արտոնությամբ ձևակերպվել են տարբեր տեսակի ապրանքներ (թղթի տարբեր տեսակներ):

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Նախարարություն ներկայացված դիմումներում հիմնականում որպես ներմուծվող ապրանքների օգտագործման նպատակային նշանակություն նշվել է «Գրքերի, ամսագրերի, ուղեցույցների, քարտեզների, ատլասների տպագրության համար»:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ապրանք ներմուծողը մաքսատուրքերի վճարումից կարող է ազատվել միայն այն դեպքում, երբ թուղթը ներմուծում է Համաձայնագրով սահմանված նպատակի, այլ ոչ թե՛ ցանկացած այլ նպատակի համար (օրինակ՝ վաճառքի):

Դրանից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Ընկերության կողմից ներմուծված ապրանքները հանդիսանում են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, որոնց օգտագործման և տնօրինման սահմանափակումները սահմանված են մաքսային իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերով:

Բացի այդ, մեկ այլ՝ թիվ ՎԴ/5764/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից կայացված վճռով սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքում վկայակոչված իրավական նորմերին տրվել է հակասական մեկնաբանություն, որի պայմաններում ներկայացված վճռաբեկ բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.2 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները.

Վճռաբեկ բողոքն անհիմն է և չի կարող հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի 25.04.2018 թվականի որոշումը բեկանելու համար, քանի որ բողոք բերողի վկայակոչած վարչական գործով բերված վերաքննիչ բողոքը վարույթ չի ընդունվել, իսկ այլ գործերով՝ մասնավորապես թիվ ՎԴ/3865/05/16 և թիվ ՎԴ/5896/05/16 վարչական գործերով, Վերաքննիչ դատարանի երկու տարբեր դատական կազմեր կայացրել են սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշմանը համահունչ որոշումներ:

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված լիազոր մարմնի՝ Նախարարության կողմից տրված եզրակացությամբ հավաստվում է ներմուծված ապրանքների բնույթը, այլ ոչ թե՛

սահմանվում է ապրանքի օգտագործման սահմանափակում: Նման սահմանափակման մասին խոսք չկա նաև տրված եզրակացության բովանդակության մեջ:

Ինչ վերաբերում է իրավասու մարմնին տրվող դիմումում նշված «նպատակային նշանակություն» արտահայտությանը, ապա այն վերաբերում է ոչ թե ապրանքների օգտագործման սահմանափակումներին, այլ՝ հավաստմանը:

Տվյալ դեպքում Համաձայնագրի արձանագրությամբ, ՀՀ կառավարության որոշմամբ տրվող եզրակացությամբ կամ որևէ այլ փաստաթղթով սահմանափակումներ նախատեսված չեն, որի պայմաններում Մաքսային միության մաքսային օրենսգրքի նորմերը սույն գործով կիրառելի չեն:

Բացի այդ, թե՛ ՀՀ կառավարության որոշմամբ, թե՛ մաքսագերծման փաստաթղթերով չի սահմանվում Ընկերության՝ իր կողմից ներմուծվող ապրանքներն օտարելու կամ այլ կերպ տնօրինելու իրավունքը սահմանափակող որևէ պայման:

3. Որպես վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճարելի դատարանն արձանագրել է հետևյալը.

1) Ընկերությունը 30.03.2015 թվականից մինչև 28.04.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Նախարարություն է ներկայացրել թվով 31 առանձին դիմումներ՝ խնդրելով տալ եզրակացություն դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի հավաստման մասին (**հատոր 1-ին, գ.թ. 70-100**).

2) Նախարարության աշխատակազմի մշակութային արժեքների պահպանության գործակալության պետ Վ. Գասպարյանի կողմից, ի պատասխան վերը նշված դիմումների, 01.04.2015 թվականից մինչև 03.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում թվով 31 առանձին եզրակացություններ են տրվել դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող մշակութային բնույթի հավաստման մասին (**հատոր 1-ին, գ.թ. 39-69**).

3) 06.05.2015 թվականից մինչև 05.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում կազմված թվով 31 բեռնային մաքսային հայտարարագրերի համաձայն՝ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվել թղթի տարբեր տեսակներ (**հատոր 1-ին, գ.թ. 101-150**).

4) Վարչության կողմից 15.05.2017 թվականին կազմվել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0008-Ա ակտն այն մասին, որ Ընկերության կողմից 2015-2017 թվականներին վերը նշված թվով 31 մաքսային հայտարարագրերով մաքսատուրքի արտոնությամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների զգալի մասը վաճառվել է մեծածախ եղանակով, այսինքն՝ դրանք օգտագործվել են արտոնությունների տրամադրման համար Համաձայնագրով սահմանված պայմաններին չհամապատասխանող նպատակներով՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ: Բացի այդ, արձանագրվել է նաև, որ Ընկերությունը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծած և ձևակերպած ապրանքները հայտարարագրել է ոչ ճիշտ տվյալներով, որի արդյունքում ապրանքների մաքսային արժեքն ավել է հայտարարագրվել 469.257 ՀՀ դրամով:

Առաջարկվել է մաքսային գործի ոլորտում ընդունել համապատասխան որոշում՝ մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկի ու գանձման վերաբերյալ, Ընկերությանն առաջադրել վերահայտարարագրել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերը կատարված ճշգրտումներին համապատասխան և վճարել օրենսդրությամբ սահմանված մաքսային վճարներն ու տույժերը (**հատոր 1-ին, գ.թ. 14-22**).

5) Վարչության պետ Սիմոն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-1 որոշումը մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկում ու գանձում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով նշված որոշումն ստանալուց հետո 10 օրվա ժամկետում վճարել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերից բխող՝ որոշմամբ առաջադրված համապատասխան մաքսային վճարները (**հատոր 1-ին, գ.թ. 23-31**).

6) Վարչության ստորաբաժանման ղեկավար Սիմոն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-2 որոշումը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրում նշված ապրանքի մաքսային արժեքը ճշգրտելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 32-34**):

4. Վճոարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճոարեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վճոարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճոարեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտել է, որ տվյալ դեպքում սույն որոշման մեջ նշված Համաձայնագրի Արձանագրության «Ը» հավելվածի առարկա ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո դրանց նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ կիրառելու պարտադիր պայմանների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վկայակոչելով Ընկերության կողմից ապրանքները ներմուծելու ժամանակ գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 21-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները՝ Վճոարեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

Հայաստանի Հանրապետության համար 23.08.2010 թվականից ուժի մեջ մտած «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 22.11.1950 թվականի Նյու-Յորքյան համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության համար 23.02.2011 թվականից ուժի մեջ մտած արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Պայմանավորվող պետությունները **պարտավորվում են սույն Արձանագրության Ա, Բ, Գ և Ե, ինչպես նաև Գ.Ի, Զ, Է և Ը հավելվածներում թվարկված նյութերը, եթե նշված հավելվածները ստորև նշված 16(ա) կետի համաձայն արված հայտարարության առարկա չեն, ազատել մաքսային տուրքերից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից, ինչպես սահմանված է Համաձայնագրի I հոդվածի 1-ին կետով՝ պայմանով, որ այդ**

Նյութերը բավարարեն այս հավելվածներով սահմանված պայմանները և հանդիսանան այլ Պայմանավորվող պետության արտադրանք:

Արձանագրության 8-րդ հոդվածի 14(ա) կետի համաձայն՝ (...) նույն Արձանագրության, ինչպես նաև 18-րդ կետում նշված արձանագրության մեջ գործածվող «պետություն» կամ «երկիր» հասկացությունները վերաբերում են նաև, եթե դա պահանջվում է համատեքստով, մաքսային կամ տնտեսական միություններին, իսկ դրանց իրավասության շրջանակում գտնվող, նույն Արձանագրության գործողության շրջանակին առնչվող բոլոր հարցերի մասով՝ դրանց անդամ պետությունների տարածքներին ամբողջությամբ, այլ ոչ թե այդ երկրներից յուրաքանչյուրի տարածքին: Հասկանալի է, որ նույն Արձանագրության Պայմանավորվող կողմի տարածքում այդ մաքսային կամ տնտեսական միությունները նույնպես կկիրառեն Համաձայնագրի դրույթները Արձանագրության նկատմամբ նույն հիմքով, ինչ նախատեսված է նախորդ կետում:

Արձանագրության «Ը» հավելվածի վերնագիրն է՝ **«Գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար օգտագործվող նյութերը և մեքենաները»**, բովանդակությունը՝ « i) Գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար օգտագործվող նյութեր (ցելյուլոզային զանգված, թափոնների վերամշակումից ստացված թուղթ, թերթային և այլ թուղթ՝ տպագրության համար, տպագրական ներկեր, սուսինձ և այլն):

ii) Ցելյուլոզային զանգվածի և թղթի մշակման համար նախատեսված մեքենաներ, ինչպես նաև տպագրական և կազմարարական մեքենաներ՝ պայմանով, որ ներմուծող երկրում տվյալ պահին համարժեք տեխնիկական որակի մեքենաներ չեն արտադրվում»:

Նշված նորմերի մեկնաբանության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունը վերը նշված միջազգային պայմանագրով 23.02.2011 թվականից պարտավորություն է ստանձնել մաքսային տուրք և ներմուծման հետ կապված այլ վճարներ չկիրառելու Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ստորև նշված հետևյալ ապրանքների համար՝

ցելյուլոզային զանգված, թափոնների վերամշակումից ստացված թուղթ, թերթային և այլ թուղթ՝ տպագրության համար, տպագրական ներկեր, սուսինձ և այլն, ինչպես նաև ցելյուլոզային զանգվածի և թղթի մշակման համար նախատեսված մեքենաներ, ինչպես նաև տպագրական և կազմարարական մեքենաներ՝ պայմանով, որ ներմուծող երկրում տվյալ պահին համարժեք տեխնիկական որակի մեքենաներ չեն արտադրվում,

հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) եթե դրանք օգտագործվում են գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար,

2) 1-ին կետում նշված ապրանքները հանդիսանում են այլ Պայմանավորվող պետության արտադրանք:

ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով վերը նշված միջազգային պայմանագիրը, 05.02.2015 թվականին ընդունել է «Առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծումը կանոնակարգելու մասին» թիվ 112-Ն որոշումը, որի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմնին վերապահվել է վերը նշված ապրանքների ներմուծ-

ման նպատակային նշանակության վերաբերյալ եզրակացություն տրամադրելու իրավունք՝ նույն որոշման 3-րդ կետով այդ եզրակացությունը համարելով ներմուծման մաքսատուրքից ազատվելու հիմք:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ Ընկերության կողմից ապրանքները ներմուծելու ժամանակ գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 3-րդ մասի 3-րդ կետի, Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի մեկնաբանությունից բխում է, որ մաքսային մարմինն իրականացնում է մաքսային ստուգում՝ նպատակ ունենալով ստուգելու նաև հայտարարատուների կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետություն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ներմուծվել են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, որոնց դեպքում վերը նշված միջազգային պայմանագրի ուժով տրամադրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ՝ զուգակցված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով, այսինքն՝ այդ ապրանքները կարող են օգտագործվել բացառապես արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով, ապա մաքսային մարմինը ստուգում է դրանց օգտագործման և տնօրինման հետ կապված սահմանափակումների պահպանումը հայտարարատուների կողմից, քանի որ այդ ապրանքները համարվում են մաքսային հսկողության տակ գտնվող:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 30.03.2015 թվականից մինչև 28.04.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմին՝ Նախարարություն է ներկայացրել թվով 31 առանձին դիմումներ՝ խնդրելով տալ եզրակացություն դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի հավաստման մասին: Նախարարության կողմից 01.04.2015 թվականից մինչև 03.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում տրվել են թվով 31 առանձին եզրակացություններ, որոնցով հավաստվել է ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող մշակութային բնույթը: Դրանից հետո Ընկերությունն այդ եզրակացությունների հիման վրա 06.05.2015 թվականից մինչև 05.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծել թղթի տարբեր տեսակներ:

Վարչությունը, իրականացնելով մաքսային ստուգում, 15.05.2017 թվականին կազմել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0008-Ա ակտն այն մասին, որ Ընկերության կողմից 2015-2017 թվականներին վերը նշված թվով 31 մաքսային հայտարարագրերով մաքսատուրքի արտոնությամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների զգալի մասը վաճառվել է մեծածախ եղանակով: Բացի այդ, արձանագրվել է նաև, որ Ընկերությունը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծած և ձևակերպած ապրանքները հայտարարագրել է ոչ ճիշտ տվյալներով, որի արդյունքում ապրանքների մաքսային արժեքն ավել է հայտարարագրվել 469.257 ՀՀ դրամով: Դրա հիման վրա մաքսային մարմինն առաջարկել է մաքսային գործի ոլորտում ընդունել համապատասխան որոշում՝ մաքսային վճարների և

մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկի ու գանձման վերաբերյալ, Ընկերությանն առաջադրել վերահայտարարագրել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերը կատարված ճշգրտումներին համապատասխան և վճարել օրենսդրությամբ սահմանված մաքսային վճարներն ու տույժերը: Այնուհետև Վարչության պետ Սիմոն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-1 որոշումը մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկում ու գանձում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով նշված որոշումն ստանալուց հետո 10 օրվա ժամկետում վճարել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերից բխող՝ որոշմամբ առաջադրված համապատասխան մաքսային վճարները, իսկ 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-2 որոշումը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրում նշված ապրանքի մաքսային արժեքը ճշգրտելու մասին:

Այսինքն՝ մաքսային մարմինը, նպատակ ունենալով ստուգելու Ընկերության կողմից Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը, ստուգմամբ բացահայտել է, որ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված վերը նշված ապրանքների մի մասը, որոնք հանդիսացել են պայմանականորեն բաց թողնված, և որոնց համար վերը նշված միջազգային պայմանագրի ուժով տրամադրվել են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, չեն զուգակցվել այդ ապրանքների օգտագործման և տնօրինման հետ կապված սահմանափակումներով, այսինքն՝ դրանք չեն օգտագործվել բացառապես արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով՝ չեն օգտագործվել գրքերի, հրատարակությունների և փաստաթղթերի արտադրության համար, այլ՝ վաճառքի եղանակով օտարման միջոցով փոխանցվել են երրորդ անձանց:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ անհիմն է Կոմիտեի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքն այն մասին, որ ներմուծած ապրանքներն Ընկերությունը չի օգտագործել համաձայնագրով նախանշված պայմաններին համապատասխանող նպատակներով, և արտոնության կիրառման անհրաժեշտությունը կախված է ներմուծված նյութերի (ապրանքների) բնույթից և (կամ) նպատակային նշանակությունից, այլ ոչ թե ներմուծողի կողմից դրանց օգտագործման նպատակից՝ չի բխում ինչպես վերը նշված իրավական ակտերի վերաբերյալ հայտնված դիրքորոշումներից, այնպես էլ սույն գործի փաստերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի, 27-րդ հոդվածի 1-ին մասի վկայակոչմամբ և նշված նորմերի վերլուծության վերաբերյալ թիվ ՎԴ5/0029/05/14 և թիվ ՎԴ/8975/05/13 վարչական գործերով համապատասխանաբար 27.11.2015 թվականի և 07.04.2017 թվականի որոշումներով ՀՀ վճարեկ դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճարեկ դատարանը, սույն գործի շրջանակներում ձեռնամուխ լինելով գնահատելու վիճարկվող վարչական ակտերի իրավաչափությունը՝ ստուգելով դրանց համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, արձանագրել է, որ այդ պատճառաբանությունները չէին կարող հիմք հանդիսանալ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 16.11.2017 թվականի վճիռն անփոփոխ թողնելու համար, քանի որ սույն գործով վիճարկվող վարչական ակտերն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ պայման էր, որ գործի քննությամբ հաստատված համարվեր, որ վարչական ակտերն ընդունվել են օրենքի խախտմամբ ու դրանցով խախտվել են Ընկերության՝ ՀՀ Սահմանադրու-

թյամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներն ու ազատությունները, որպիսի փաստերը վերը նշված դիրքորոշումների պարագայում Վճռաբեկ դատարանը հաստատված չի համարել:

5. Հայրուկ կարծիքի պատճառաբանությունները և եզրահանգումները.

5.1. Գտնում եմ, որ սույն գործով անհրաժեշտ էր անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. *կրթական, գիտական և մշակութային բնույթի սպրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունները կիրառելի են արդյո՞ք հետևյալ դեպքերում.*

1) ներկրված սպրանքն օգտագործվել է անմիջականորեն ներմուծողի կողմից իր նպատակային նշանակությամբ,

2) ներկրված սպրանքն օգտագործվել է անմիջականորեն ներմուծողի կողմից, սակայն ոչ իր նպատակային նշանակությամբ,

3) ներկրված սպրանքը ներմուծողի կողմից օտարվել է այլ անձանց, որոնք այդ սպրանքը հետագայում օգտագործել են իր նպատակային նշանակությամբ,

4) ներկրված սպրանքը ներմուծողի կողմից օտարվել է այլ անձանց, որոնք այդ սպրանքը հետագայում չեն օգտագործել իր նպատակային նշանակությամբ:

5.2. Համաձայնագրի (*Հայաստանի Հանրապետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 23.08.2010 թվականին*) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանավորվող պետությունները պարտավորվում են հետևյալ նյութերի ներմուծման ժամանակ կամ ներմուծման հետ կապված չկիրառել մաքսատուրքեր և այլ վճարներ.

ա) գրքեր, հրատարակություններ և փաստաթղթեր, որոնք նշված են նույն Համաձայնագրին կից Ա հավելվածում.

բ) նույն Համաձայնագրին կից «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներում թվարկված և Պայմանավորվող այլ պետության արտադրանք հանդիսացող՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութեր՝ այդ հավելվածներում նշված պայմանների պահպանման պայմանով:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 23.05.1969 թվականի Վիեննայի կոնվենցիայի (*Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 16.06.2005 թվականից*) «Մեկնաբանման ընդհանուր կանոնը» վերտառությամբ 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջազգային պայմանագիրը մեկնաբանվում է դրա առարկայից և նպատակներից բխող պայմանագրի եզրույթներին տրված սովորական նշանակությանը համապատասխան և իրականացվում է միջազգային պայմանագրով և միջազգային իրավունքի նորմերով և սկզբունքներով սահմանված կարգով:

5.3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով միջազգային իրավական ակտերի մեկնաբանման կանոններին, նշել է, որ համաձայն Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 2-րդ կետի՝ պայմանագրի նախաբանը հանդիսանում է դրա անբաժանելի մասը: Ավելին, կոնկրետ միջազգային իրավա-

կան ակտը մեկնաբանելիս՝ նախաբանը, որպես կանոն, շատ օգտակար է դրա «առարկան» և «նպատակը» պարզելու համար (*լոն՝ս Գոլդեր v. United Kingdom of Great Britain (4451/70) գործով Եվրոպական դատարանի 14.02.1975 թվականի վճիռը, կետք 34*):

Համաձայնագրի նախաբանի համաձայն՝ պայմանավորվող պետությունները, համարելով, որ գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակումը և ընդհանրապես քաղաքակրթությունների ինքնարտահայտման տարբեր ձևերի առավել լայն տարածումը կենսական նշանակություն ունեն ինչպես մտավոր առաջընթացի և միջազգային փոխըմբռնման, այնպես էլ, հետևաբար, ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման համար, համարելով, որ այդ փոխանակումներն իրականացվում են առաջին հերթին գրքերի, հրատարակությունների, ինչպես նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով, (...) ընդունում են, որ այդ նպատակների իրականացմանն արդյունավետ կծառայի կրթական, գիտական և մշակութային բնույթի գրքերի, հրատարակությունների և նյութերի ազատ տարածմանն աջակցող միջազգային համաձայնագիրը (...):

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ գտնում են, որ Համաձայնագրի նպատակը բացահայտելու համար առաջնային նշանակություն ունի դրա նախաբանը: Համաձայնագրով սահմանված դրույթները չեն կարող մեկնաբանվել և կիրառվել Համաձայնագրով հետապնդվող նպատակի շրջանակներից դուրս, հետևաբար պայմանավորվող պետությունների կողմից Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները հետապնդվող նպատակների լույսի ներքո չմեկնաբանվել և չկիրառվել կիսանդիսանան միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտում, ոչ բարեխիղճ կատարում:

Այս դեպքում Համաձայնագրի նպատակների բացահայտման տեսանկյունից առավել իմաստավոր նշանակություն ունի նախաբանի այն մասը, որում այն ստորագրած կողմերը հայտարարում են, որ «(...) գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակումը և ընդհանրապես քաղաքակրթությունների ինքնարտահայտման տարբեր ձևերի առավել լայն տարածումը կենսական նշանակություն ունեն ինչպես մտավոր առաջընթացի և միջազգային փոխըմբռնման, այնպես էլ, հետևաբար, ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման համար (...):»:

Վերոգրյալի արդյունքում կարելի է արձանագրել, որ Համաձայնագիրը նպատակ է հետապնդում բոլոր ուղղակի և անուղղակի միջոցներով նպաստել գիտական, կրթական և մշակութային բնույթի գրքերի, հրատարակությունների և նյութերի հնարավորինս լայնածավալ տարածմանը՝ ի թիվս այնի, 1-ին հոդվածով նախատեսված նյութերի ներմուծման համար մաքսատուրքեր և ներմուծման հետ կապված այլ վճարներ չկիրառվելու պոզիտիվ պարտականություն նախատեսելով պայմանավորվող Պետությունների համար: Նույն հոդվածի «բ» կետը ներմուծման համար գանձվող մաքսատուրքի (և ներմուծման հետ կապված այլ վճարների) գծով այդ արտոնության կիրառման համար նախատեսում է 2 պայման.

1) ներկրվող կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութը պետք է թվարկված լինի Համաձայնագրի «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներից մեկում,

2) ներկրվող կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութը պետք է հանդիսանա այլ պետության արտադրանք:

5.4. Հարկ է արձանագրել, որ պայմանավորվող պետությունները Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետով ստանձնել են միջազգային պարտավորություն՝ ազատել մաքսատուրքերից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից Համաձայնագրի հավելվածներում

թվարկված նյութերը ներմուծողին՝ պայմանով, որ այդ նյութերը բավարարեն հավելվածներով սահմանված պայմանները և հանդիսանան այլ պայմանավորվող պետության արտադրանք: Համաձայնագրով ամրագրված սկզբունքները հետապնդում են գրքերի, հրատարակությունների, ինչպես նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակմանը և տարածմանը նպաստելու նպատակ: Այդ նպատակին պետք է ծառայի նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի՝ կրթության, գիտության, տեխնոլոգիաների և մշակույթի ոլորտներ առավել ոյուրին և մատչելի կերպով մուտք գործելու հնարավորության ստեղծումը: Դա էլ իր հերթին արտահայտվում է Համաձայնագրում նշված կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծման դեպքում մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելու՝ պայմանավորվող Պետության պոզիտիվ պարտավորության անվերապահ կատարմամբ: Ընդ որում, Համաձայնագրով թվարկված՝ կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակմանը և տարածմանը նպաստելու նպատակը կարող է գործնականում կյանքի կոչվել ինչպես այն դեպքում, երբ տպագրական գործունեությունն իրականացվում է հենց այդ նյութերը ներմուծողի կողմից, այնպես էլ՝ երբ տպագրական գործունեությունն իրականացվում է ներմուծողից տարբերվող այլ սուբյեկտի կողմից: Տվյալ դեպքում ներմուծողը միջնորդի դերակատարություն ունի գրքերի, հրատարակությունների, ինչպես նաև կրթությանը, գիտությանը և մշակույթին վերաբերող նյութերի միջոցով գաղափարների և գիտելիքի ազատ փոխանակմանը և տարածմանը նպաստելու հարցում:

Այսպիսով, գտնում եմ, որ Համաձայնագրի անդամ պետությունն ունի Համաձայնագրով սահմանված չափանիշներին բավարարող՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծումը մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելու պոզիտիվ պարտավորություն՝ այն պայմանով, որ այդ նյութերը պետք է վերջիվերջո օգտագործվեն տպագրական գործունեության մեջ: Այդ պարտավորությունը բխում է Համաձայնագրով մատնանշված հայեցակարգից առ այն, որ Համաձայնագիրն արդյունավետ միջոց է գաղափարների և գիտելիքների փոխանակումը խոչընդոտող մաքսային արգելքների նվազեցման և տնտեսական բնույթի այլ սահմանափակումների կրճատման համար:

5.5. Համաձայնագրով ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 05.02.2015 թվականին ընդունված թիվ 112-Ն որոշմամբ մշակվել է առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման կարգը (այսուհետ՝ Կարգ), որը կարգավորում է առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման հետ կապված հարաբերությունները:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ եզրակացություն տրամադրող Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմինը (...) տրամադրում է Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման նպատակային նշանակության վերաբերյալ եզրակացությունը՝ իր իրավասությունների շրջանակներում:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի թիվ 112-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքները, լիազոր մարմնի կողմից տրամադրված եզրակացության հիման վրա, ազատվում են ներմուծման մաքսատուրքից:

ՀՀ կառավարության վկայակոչված որոշմամբ սահմանված իրավակարգավորումներից ևս հետևում է, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի (ապրանքների) ներմուծումը մաքսատուրքից կամ ներմուծման հետ կապված այլ վճարներից ազատելը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ նյութերը օգտագործվում են նպատակային նշանակությամբ՝ տպագրական գործունեության մեջ: Այս եզրահանգման համար հիմք են ընդունում այն կարգավորումը, որ ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ լիազոր մարմինը տրամադրում է եզրակացություն կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների նպատակային նշանակության վերաբերյալ: Այսինքն՝ այդ ապրանքների նպատակային նշանակությունը կարևորվում է նաև լիազոր մարմնի կողմից համապատասխան եզրակացություն տրամադրվելու փուլում:

5.6. Մինևույն ժամանակ, գտնում են, որ Համաձայնագրով նախատեսված՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերը չեն հանդիսանում պայմանականորեն բաց թողնված այնպիսի ապրանքներ, որոնց դեպքում մաքսատուրքերի և այլ վճարների համար սահմանված արտոնությունները զուգակցված են **անմիջականորեն ներմուծողի կողմից** այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով:

Այսպես՝ իրավահարաբերության պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի (*ընդունվել է 27.11.2009 թվականին, Հայաստանի Հանրապետության համար պարտադիր է 02.01.2015 թվականից, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի համաձայն*) 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված են համարվում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքները, որոնց դեպքում՝

1) տրամադրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով.

2) օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներն առնչվում են ապրանքների բացթողումից հետո նույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերի ներկայացման հետ (...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքները կարող են օգտագործվել միայն արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով:

Արգելված է նույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների փոխանցումը երրորդ անձանց, այդ թվում՝ դրանց վաճառքի կամ այլ եղանակով օտարման միջոցով, իսկ այն դեպքում, երբ նշված ապրանքների ներմուծման սահմանափակումները սահմանված են՝ կապված այդ ապրանքների որակի ստուգման և անվտանգության հետ, ապա արգելված է ցանկացած ձևով դրանց օգտագործումը (շահագործումը, սպառումը):

Իրավահարաբերության պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի

195-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային մարմինների կողմից, եթե մաքսային մարմին են ներկայացվել լիցենզիաներ, հավաստագրեր, թույլտվություններ և (կամ) այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են նույն օրենսգրքի և Մաքսային միության անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերին համապատասխան ապրանքների բացթողման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել ապրանքների բացթողումից հետո:

Վերը նշված իրավանքների վերլուծության արդյունքում արձանագրում են, որ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է պայմանականորեն բաց թողնված ապրանքների տեսակները:

Այդպիսի ապրանքներից են, մասնավորապես, Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված այն ապրանքները, որոնց ներմուծման ժամանակ տրամադրվում են մաքսատուրքերի և հարկերի գծով արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով: Այդ ապրանքները կարող են օգտագործվել միայն արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով:

Փաստորեն, Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ ներմուծողին տրամադրված արտոնությունը զուգակցված է եղել ներմուծված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով: Մինչդեռ, եթե նման սահմանափակումներ նախատեսված չեն եղել, ապա Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը կիրառելի չի կարող լինել: Նշված հիմքով կիրառելի չի կարող լինել նաև վկայակոչված հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանափակումը, այն է՝ ապրանքները միայն արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով օգտագործելու պահանջը:

Մյուս կողմից՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այդ ապրանքների նկատմամբ առկա են օգտագործման կամ տնօրինման հետ կապված սահմանափակումներ, որոնք առնչվում են ապրանքների բացթողումից հետո նույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերի ներկայացման հետ:

Գտնում են, որ Համաձայնագրով նախատեսված կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերը, որոնց ներմուծման դեպքում կիրառվում են մաքսատուրքերի և այլ վճարների գծով արտոնություններ, չեն համարվում պայմանականորեն բաց թողնված ապրանքներ՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ ենթակետերի իմաստով:

5.7. Անհրաժեշտ են համարում ընդգծել, որ ըստ Համաձայնագրի՝ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար մաքսային արտոնություն տրամադրելու իրավական հնարավորությունը պայմանավորված է բացառապես ներկրված նյութը Համաձայնագրի «Բ», «Գ», «Դ» և «Ե» հավելվածներից մեկում թվարկված լինելու և պայմանավորվող այլ պետության արտադրանք հանդիսանալու հանգամանքով: Այլ կերպ՝ Համաձայնագիրը նշված նյութերի ներմուծման համար մաքսային արտոնության կիրառելիությունը որևէ կերպ չի զուգակցել (չի պայմանավորել) դրանք **ներմուծող սուբյեկտի կող-**

մից անմիջականորեն նպատակային նշանակությամբ օգտագործելու կամ չօգտագործելու հանգամանքով: Այստեղ կարևորն այն է, որ նշված նյութերը վերջիվերջո օգտագործվեն իրենց նպատակային նշանակությամբ՝ տպագրական գործունեության մեջ: Ընդ որում, այդ նյութերը կարող են իրենց նպատակային նշանակությամբ (տպագրական գործունեության մեջ) օգտագործվել ոչ միայն անմիջականորեն դրանք ներմուծող սուբյեկտի, այլ նաև ուրիշ տնտեսվարող սուբյեկտների կողմից, որոնք այդ ապրանքները ձեռք են բերել ներմուծողից:

5.8. Անփոփելով վերագրյալ իրավական վերլուծությունները՝ հանգում եմ այն եզրակացության, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունների կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, թե ներկրվող ապրանքը վերջիվերջո որևէ սուբյեկտի (կամ ներմուծողի, կամ այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից) կողմից օգտագործվել է իր նպատակային նշանակությամբ, թե՛ ոչ:

Այսպիսով, ելնելով Համաձայնագրով հետապնդվող նպատակից՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունները կիրառելի են հետևյալ դեպքերում.

1) ներկրված ապրանքն օգտագործվել է անմիջականորեն ներմուծողի կողմից իր նպատակային նշանակությամբ,

2) ներկրված ապրանքը ներմուծողի կողմից օտարվել է այլ անձանց, որոնք այդ ապրանքը հետագայում օգտագործել են իր նպատակային նշանակությամբ:

Մյուս կողմից, կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունները կիրառելի չեն հետևյալ դեպքերում.

1) ներկրված ապրանքն օգտագործվել է անմիջականորեն ներմուծողի կողմից, սակայն ոչ իր նպատակային նշանակությամբ,

2) ներկրված ապրանքը ներմուծողի կողմից օտարվել է այլ անձանց, որոնք այդ ապրանքը հետագայում չեն օգտագործել իր նպատակային նշանակությամբ:

5.9. Մույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 30.03.2015 թվականից մինչև 28.04.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմին՝ Նախարարություն է ներկայացրել թվով 31 առանձին դիմումներ՝ խնդրելով տալ եզրակացություն դրանցում նշված ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի հավաստման մասին: Նախարարության կողմից 01.04.2015 թվականից մինչև 03.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում տրվել են թվով 31 առանձին եզրակացություններ, որոնցով հավաստվել է ապրանքների՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Համաձայնագրի անդամ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող մշակութային բնույթը: Դրանից հետո Ընկերությունն այդ եզրակացությունների հիման վրա 06.05.2015 թվականից մինչև 05.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծել թղթի տարբեր տեսակներ:

Վարչությունը, իրականացնելով մաքսային ստուգում, 15.05.2017 թվականին կազմել է արտագնա մաքսային ստուգման թիվ 0008-Ա ակտն այն մասին, որ Ընկերության կողմից

2015-2017 թվականներին վերը նշված թվով 31 մաքսային հայտարարագրերով մաքսատուրքի արտոնությամբ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների զգալի մասը վաճառվել է մեծածախ եղանակով: Բացի այդ, արձանագրվել է նաև, որ Ընկերությունը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծած և ձևակերպած ապրանքները հայտարարագրել է ոչ ճիշտ տվյալներով, որի արդյունքում ապրանքների մաքսային արժեքն ավել է հայտարարագրվել 469.257 ՀՀ դրամով: Դրա հիման վրա մաքսային մարմինն առաջարկել է մաքսային գործի ոլորտում ընդունել համապատասխան որոշում՝ մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկի ու գանձման վերաբերյալ, Ընկերությանն առաջադրել վերահայտարարագրել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերը կատարված ճշգրտումներին համապատասխան և վճարել օրենսդրությամբ սահմանված մաքսային վճարներն ու տույժերը: Այնուհետև Վարչության պետ Միսն Սարգսյանը 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-1 որոշումը մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարվող այլ վճարների լրացուցիչ հաշվարկում ու գանձում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով նշված որոշումն ստանալուց հետո 10 օրվա ժամկետում վճարել վերը նշված բեռնային մաքսային հայտարարագրերից բխող՝ որոշմամբ առաջադրված համապատասխան մաքսային վճարները, իսկ 15.05.2017 թվականին կայացրել է թիվ 0008-Ո-2 որոշումը 30.05.2016 թվականի թիվ C14668 բեռնային մաքսային հայտարարագրում նշված ապրանքի մաքսային արժեքը ճշգրտելու մասին:

Ընկերությունը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը, 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-1 և 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-2 որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանը բավարարել է Ընկերության հայցը՝ գտնելով, որ «Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտը հակասում է «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» Նյու-Յորքի 22.11.1950 թվականի համաձայնագրին, այդ համաձայնագրի արձանագրության 1-ին կետին, արձանագրության Հավելված Ը-ին, ՀՀ կառավարության թիվ 112-Ն որոշման պահանջներին, այդ որոշմամբ հաստատված առանց ներմուծման մաքսատուրքի վճարման «Կրթական, գիտական և մշակութային բնույթի նյութերի ներմուծման մասին» 1950 թվականի նոյեմբերի 22-ի համաձայնագրի անդամ երկրներից ՀՀ տարածք կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման կարգին», գտել է, որ այն ենթակա է վերացման ամբողջությամբ: Միաժամանակ Դատարանը, հաշվի առնելով, որ վիճարկվող 15.05.2017 թվականի թիվ 0008-Ո-1 և 15.05.2017թ. 0008-Ո-2 որոշումներն ընդունվել են Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտի հիման վրա և հանդիսանում են վերջինիս հիման վրա կատարված հաշվարկներ, եզրակացրել է, որ որպես հետևանք ենթակա են վերացման նաև վերոհիշյալ որոշումները:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքն ու Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով նաև, որ Կոմիտեի դիրքորոշումն այն մասին, որ ներմուծած ապրանքներն Ընկերությունը չի օգտագործել համաձայնագրով նախանշված պայմաններին համապատասխանող նպատակներով՝ դրանք տպագրության նպատակով օգտագործվելու փոխարեն վաճառվել են, չի համապատասխանում համաձայնագրով և դրա արձանագրությամբ ամրագրված սկզբունքներին, արտոնության կիրառման անհրաժեշտու-

թյունը կախված է ներմուծված նյութերի (ապրանքների) բնույթից և (կամ) նպատակային նշանակությունից, այլ ոչ թե ներմուծողի կողմից դրանց օգտագործման նպատակից, գտել է, որ Վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա արտագնա մաքսային ստուգման ակտով և դրա հիման վրա ընդունված թիվ 0008-Ո-1 ու թիվ 0008-Ո-2 որոշումներով իրավախախտումը ոչ իրավաչափորեն է վերագրվել Ընկերությանը և դրանք ընդունվել են օրենքի խախտմամբ՝ միաժամանակ ոչ իրավաչափորեն միջամտելով ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով պահպանվող Ընկերության իրավունքներին:

5.10. Սույն հատուկ կարծիքում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ հարկ են համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործով վիճարկվող վարչական ակտերի կայացման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների օգտագործման նպատակը չի համապատասխանել արտոնությունների տրամադրման համար Համաձայնագրի սահմանած պայմաններին: Մինչդեռ պետք է ընդգծել, որ անհիմն է վարչական մարմնի այն պնդումը, համաձայն որի՝ Ընկերությունը, մեծածախ առևտրի ճանապարհով օտարելով ներկրված ապրանքը, օգտագործել է վերոհիշյալ ապրանքն արտոնությունների տրամադրման պայմաններին չհամապատասխանող նպատակներով, քանի որ մաքսատուրքից ազատված լինելն ուղղակիորեն նպաստում է շուկայում ներկրված ապրանքի անհամեմատ ցածր գին ունենալուն, ինչ էլ իր հերթին նպաստում է գիտական, կրթական և մշակութային բնույթի հրատարակությունների առավել լայնածավալ տարածմանը, այլ կերպ ասած՝ Համաձայնագրի նպատակներին:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրությունից հետևում է, որ ոչ Համաձայնագրով, ոչ Նախարարության կողմից 01.04.2015 թվականից մինչև 03.05.2017 թվականն ընկած ժամանակահատվածում տրված՝ ՀՀ տարածք ներմուծվող կրթական, գիտական և մշակութային ապրանքների հավաստման մասին թվով 31 առանձին եզրակացություններով սահմանված չէ **անմիջականորեն ներմուծողի կողմից թղթի օգտագործման պարտադիր նպատակ**՝ որպես արտոնությունից օգտվելու պայման: Այսինքն՝ ապրանքների բնույթի հավաստումը դեռևս չի նշանակում, որ դրանց համար նախատեսված են **անմիջականորեն ներմուծողի կողմից** տնօրինման կամ օգտագործման սահմանափակումներ: Հետևաբար, Ընկերությանը չէր կարող վերագրվել Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, քանի որ մաքսատուրքի կամ ներմուծման հետ կապված այլ վճարների գծով Ընկերությանը տրամադրված արտոնությունը զուգակցված չի եղել ներմուծված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով: Այսպիսով Ընկերության կողմից ներմուծված ապրանքները չեն կարող որակվել որպես պայմանականորեն բաց թողնված ապրանքներ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, որպիսի իրավաչափ հետևության հանգել է Վերաքննիչ դատարանը:

Մինևսույն ժամանակ, անհրաժեշտ են համարում ընդգծել, որ Համաձայնագրի նպատակն այն է, որ մաքսային արտոնությամբ ներմուծվող կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքները վերջիվերջո օգտագործվեն իրենց նպատակային նշանակությամբ՝ տպագրական գործունեության մեջ: Ընդ որում, այդ նյութերը կարող են իրենց նպատակային նշանակությամբ (տպագրական գործունեության մեջ) օգտագործվել ոչ միայն անմիջականորեն դրանք ներմուծող սուբյեկտի, այլ նաև ուրիշ տնտեսվարող սուբյեկտների կողմից, որոնք

այդ ապրանքները ձեռք են բերել ներմուծողից:

Հետևաբար, տվյալ դեպքում կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքների ներմուծման համար Համաձայնագրով նախատեսված մաքսային արտոնությունները կիրառելի չէին լինի, եթե ներկրված ապրանքն Ընկերության կողմից այլ անձանց օտարվելուց հետո օգտագործվեր ոչ իր նպատակային նշանակությամբ (չօգտագործվեր տպագրական գործունեության մեջ): Սույն գործով վիճարկվող վարչական ակտերը կարող էին իրավաչափ համարվել, եթե վարչական մարմինը դրանցում հիմնավորեր և սույն գործի քննության ընթացքում ապացուցեր, որ ներկրված ապրանքն Ընկերության կողմից այլ անձանց օտարվելուց հետո օգտագործվել է ոչ իր նպատակային նշանակությամբ: Մինչդեռ սույն գործով բացակայում է որևէ փաստարկ, հիմնավորում կամ ապացույց այն մասին, որ ներկրված ապրանքն Ընկերության կողմից այլ անձանց օտարվելուց հետո օգտագործվել է ոչ իր նպատակային նշանակությամբ (չի օգտագործվել տպագրական գործունեության մեջ):

Փաստորեն, սույն գործով վարչական մարմնի կողմից որևէ կերպ չի հիմնավորվել Ընկերության կողմից ներմուծված կրթական, գիտական և մշակութային բնույթի ապրանքն այլ նպատակային նշանակությամբ, քան հոչակված է Համաձայնագրում, օգտագործված լինելու փաստը: Իսկ այդ ապրանքն այլ անձի օտարված լինելու հանգամանքն ինքնին չի կարող բավարար ապացուցողական հենք ունենալ հաստատելու համար այն փաստը, որ այդ ապրանքն օգտագործվել է ոչ իր նպատակային նշանակությամբ:

5.11. Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում եմ, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 15.05.2017 թվականի թիվ 0008-Ա Արտագնա մաքսային ստուգման ակտը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 15.05.2017 թվականի «Մաքսային գործի ոլորտում» թիվ 0008-Ո-1 որոշումը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 15.05.2017 թվականի «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման» թիվ 0008-Ո-2 որոշումն անվավեր ճանաչելու մասին Դատարանի վճիռը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի Կոմիտեի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէր կարող լինել Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ սույն հատուկ կարծիքում շարադրված պատճառաբանություններով:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ե. Խոնդկարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/1984/05/17
2019թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/1984/05/17
Նախագահող դատավոր՝ Կ. Ավետիսյան
Դատավորներ՝ Կ. Բաղդասարյան
 Կ. Մաթևոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 25-ին
դռնբաց դատական նիստում քննելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության
ներկայացուցիչ Արմեն Արսենյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի
14.03.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարդան Մամիկոնյանի ընդդեմ ՀՀ արդարա-
դատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծա-
ռայության (այսուհետ՝ Ծառայություն), երրորդ անձ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային
ոստիկանություն» ծառայության՝ Ծառայության 05.12.2015 թվականի որոշման՝ կատարողա-
կան վարույթ հարուցելու մասով հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր
կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու, իսկ արգելանք դնելու
մասով՝ նույն որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Վարդան Մամիկոնյանը պահանջել է Ծառայության 05.12.2015
թվականի որոշման՝ կատարողական վարույթ հարուցելու մասով ճանաչել հանրային իրա-

վական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը, իսկ արգելանք դնելու մասով նույն որոշումը ճանաչել անվավեր:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.08.2017 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է և Ծառայությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձվել է 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի գումար, իսկ հոգուտ Վարդան Մամիկոնյանի բռնագանձվել է 3.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճարի գծով դատական ծախսի գումար:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.03.2018 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 16.08.2017 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասը և 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վարդան Մամիկոնյանը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի հիմքով ազատված լինելով հայցադիմումի համար պետական տուրք վճարելու պարտականությունից, պետական տուրք չի վճարել: Հետևաբար, սույն գործով պետական տուրքի մասով որևէ դատական ծախս չի առաջացել, ինչը նշանակում է, որ գործի վարույթը կարճելիս կողմերը, այդ թվում՝ Ծառայությունը, պետական տուրքի վճարման պարտականություն չեն կրում:

Միաժամանակ Ծառայության վրա չէր կարող դրվել նաև ներկայացուցչի վճարը հատուցելու պարտականություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակի՝ դատական ծախսերի մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 14.03.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ ՀՀ վարչական դատարանում դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված, կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ծառայության վարչական ակտերով բռնագանձումների բաժնի հարկադիր կատարողի 19.06.2017 թվականի «Արգելանքները վերացնելու և կատարողական վարույթը կարճելու մասին» որոշմամբ վիճարկվող վարչական ակտին վերաբերող մասով վերացվել են Վարդան Մամիկոնյանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա կիրառված արգելանքները, ինչպես նաև կարճվել է վեճի առարկա կատարողական վարույթը (**հատոր 1-ին, գ.թ. 64**):

2) Վարդան Մամիկոնյանի և անհատ ձեռնարկատեր Մհեր Հակոբյանի միջև 17.02.2017 թվականին կնքված «Իրավախորհրդատվական ծառայությունների մատուցման մասին» թիվ Ճ-0047 պայմանագրի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Մհեր Հակոբյանը պարտա-

վորվել է «մատուցել իրավաբանական խորհրդատվական ծառայություններ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ գործողությունները՝ կապված ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 04.06.2015թ-ի թիվ 1503156787 տուգանքի որոշման (...) բողոքարկման հարցերով»: Պայմանագրի գինը կազմել է 50.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 7**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պետական տուրք վճարելու պարտականությունից հայցվորի ազատված լինելու պայմաններում վերջնական դատական ակտով պետական տուրքի գումարը պատասխանող վարչական մարմնից հոգուտ պետության գանձելու անհրաժեշտության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերագրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք պատասխանող վարչական մարմինը պարտավոր է պետությանը հարուցել հարկադիր կարարողի գործողությունների բողոքարկման նպատակով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով, եթե վարչական գործի վարույթը կարճվում է այդ գործի քննության ընթացքում վարչական մարմնի կողմից կիրառված արգելանքը վերացվելու և կարարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կարարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով կարճվելու պարճատով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգա-

վորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրք վճարողներ են համարվում նույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների (...), դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճարելի բողոքների համար (...):

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում անդրադառնալով վերը նշված իրավական նորմերի մեկնաբանությանը, արձանագրել է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է դատարան դիմելու իրավունքի ֆինանսական սահմանափակման՝ օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու պարտականության հետ: Պետական տուրքն ընդգրկված է դատական ծախսերի կազմում, որի հասկացությունը, տեսակները, դրույքաչափերը, պետական տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից հետևում է, որ պետական տուրքը պետական բյուջե մուծվող պարտադիր վճար է, որը գանձվում է պետական մարմինների մատուցած ծառայությունների կամ կատարած գործողությունների համար: Հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարումն անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման նախապայմաններից մեկն է, քանի որ օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարելու հանգամանքով է պայմանավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ արդարադատությունից օգտվելու հնարավորությունը: Որպեսզի անձը խախտված իրավունքների պաշտպանության համար կարողանա իրացնել դատարան դիմելու հնարավորությունը, նա պետք է նախևառաջ վճարի օրենքով սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք (*յրե՛ս, Հայկ Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/1115/05/16 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճարելի դատարանն իր նախկին որոշումներից մեկում նշել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից (*յրե՛ս, Շամամ Կարապետյանն ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ*

ԱՐԴ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.01.2014 թվականի որոշումը):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 5-րդ պարբերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ (...) հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կատարողական վարույթի ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս հարկադիր կատարողը ոչ միայն կատարում է փաստացի գործողություններ, այլև ընդունում է որոշումներ, որոնք հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարումը, գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 5-րդ պարբերության իմաստով «գործողություն» եզրույթը ներառում է նաև հարկադիր կատարողի կողմից ընդունվող որոշումները, որոնց իրավաչափությունը վիճարկելու նպատակով հայցադիմում ներկայացնելու համար նույնպես ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք ազատված են պետական տուրքի վճարումից: Ընդ որում, պահանջելով ճանաչել անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը՝ անձն, ըստ էության, դատական քննության առարկա է դարձնում վիճելի կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը (տե՛ս, *Վարուժան Ավետիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*): Հետևաբար, նշված պահանջով դատարան դիմելու դեպքում ևս ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 5-րդ պարբերության ուժով ազատված են պետական տուրքի վճարումից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է, բացառությամբ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 10-րդ կետերում նշված դեպքերի: Նշված դեպքերում դատարանը կարող է դատական ծախսերի հատուցման պարտականությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն դնել պատասխանողի վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ վեճն ըստ էության սպառվել է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով լուծվում են նաև

դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքի համար դատական ծախսերի հատուցման առանձնահատկություններին: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն բոլոր դեպքերում, երբ գործի վարույթը կարճվում է այն հիմքով, որ վեճն ըստ էության սպառվել է վարչական մարմնի ակտիվ գործողությունների հետևանքով, ապա հայցվորի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը պետք է դրվի պատասխանողի վրա: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վեճն ըստ էության սպառվելու իրադրության առաջացման հարցում վարչական մարմնի գործողությունների ազդեցությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված հիմքով գործի վարույթը կարճելու պարագայում ստանում է առաջնային նշանակություն, քանի որ վեճն ըստ էության սպառելուն ուղղված վարչական մարմնի ակտիվ գործողությունները վկայում են այն իրողության մասին, որ անձի դատական պաշտպանության դիմելը եղել է արդարացված (*դեմ, Լիլիթ Մուսելյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4084/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ գործի քննության ընթացքում պատասխանող վարչական մարմինը վերացնում է կիրառված արգելանքը և կատարողական վարույթը կարճում է այն հիմքով, որ անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ բացակայում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական ակտն անբողոքարկելի դառնալու հիմքը («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ), ապա այդ պարագայում դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա: Քննարկվող հիմքով կատարողական վարույթը կարճվելու հետևանքով վարչական գործի վարույթը կարճվելու դեպքում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դնելու վերաբերյալ եզրահանգում կատարելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու հիմքի բացակայության պայմաններում հանրային իրավական դրամական պահանջները հարկադիր կատարման չեն կարող ենթարկվել: Հետևաբար, գործի դատական քննության ընթացքում պատասխանող վարչական մարմնի կողմից արգելանքի վերացումը և քննարկվող հիմքով կատարողական վարույթի կարճումը հաստատում են, որ անձի դատական պաշտպանության դիմելը եղել է արդարացված, ուստի դատական ծախսերի հատուցման պարտականությունը պետք է կրի պատասխանող վարչական մարմինը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ դեպքում պատասխանող վարչական մարմնի վրա կարող են դրվել միայն այն դատական ծախսերը, որոնք կատարվել են կամ կատարվելու են հայցվորի կողմից: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված այն օրենսդրական կանոնը, որի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, պարտավոր է հատուցել այն դատական ծախսերը,

որոնք մյուս կողմը կատարել է: Ընդ որում, կողմը պարտավոր է հատուցել մյուս կողմի կրած դատական ծախսերը ողջամիտ չափով, այսինքն՝ միայն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նշված կարգավորումը հստակորեն ընդգծում է դատական ծախսերի հատուցման պարտականության սահմանները, որոնք հանգում են հետևյալին.

1) որպես կանոն՝ դատական ծախսերի հատուցման պարտականությունը կրում է այն կողմը, որը գործի ելքում դատավարական իմաստով պարտվել է, այսինքն՝ այն կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կամ այն կողմը, որի վրա դատարանի կողմից օրենքով սահմանված դեպքերում դրվում է այդ պարտականությունը, օրինակ՝ պատասխանող վարչական մարմինը՝ գործի քննության ընթացքում վարչական մարմնի կողմից կիրառված արգելանքը վերացվելու և կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով կարճվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում,

2) դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կրել է կամ կրելու է դատարան դիմելու (դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու) համար,

3) դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են եղել դատական ծախս կատարած կողմի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործի քննության ընթացքում վարչական մարմնի կողմից կիրառված արգելանքը վերացվելու և կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով կարճվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դրվելու պարագայում վերջինս պարտավոր է հայցվորին հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են եղել հայցվորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Մինչդեռ հարկադիր կատարողի գործողությունները բողոքարկելիս (ներառյալ հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով) հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում հայցվորի դատական պաշտպանության իրավունքն արդյունավետորեն իրականացնելու համար պետական տուրքի գծով դատական ծախս կատարելու անհրաժեշտությունը ողջամտորեն բացակայում է: Հետևաբար, քննարկվող իրավիճակում դատարանը գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ պարտավոր է լուծված համարել հարկադիր կատարողի գործողությունները բողոքարկելու նպատակով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի բաշխման հարցը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

1) Եթե գործի քննության ընթացքում վարչական մարմինը վերացնում է կիրառված արգելանքը և կատարողական վարույթը կարճում է այն հիմքով, որ անբողոքարկելի վարչական ակտի կատարման ժամանակ պարզվել է, որ բացակայում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական ակտը անբողոքարկելի դառնալու հիմքը («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ), և ըստ էության վեճը սպառվում է, ապա այդ պարագայում դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա,

2) Եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելիս դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա, ապա վերջինս պարտավոր չէ պետությանը հատուցել հարկադիր կատարողի գործողությունները բողոքարկելու նպատակով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Վարդան Մամիկոնյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս խնդրել է Ծառայության 05.12.2015 թվականի որոշման՝ կատարողական վարույթ հարուցելու մասով ճանաչել հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը, իսկ արգելանք դնելու մասով նույն որոշումը ճանաչել անվավեր:

Դատարանը կարճել է վարչական գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով և դատական ծախսերի բաշխման հարցը լուծել է հետևյալ կերպ. Ծառայությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձվել է 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, իսկ հոգուտ Վարդան Մամիկոնյանի՝ 3.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճարի գծով դատական ծախսի գումար:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ծառայության վերաքննիչ բողոքը և Դատարանի որոշումը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի այն դիրքորոշումը, որ Ծառայությունից հոգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, իսկ հոգուտ Վարդան Մամիկոնյանի՝ 3.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճարի գծով դատական ծախսի գումար:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վարդան Մամիկոնյանի կողմից ներկայացված պահանջով դատարան դիմելու համար վերջինս օրենքի ուժով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից: Ըստ այդմ, Վարդան Մամիկոնյանը հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի գծով դատական ծախս չի կատարել: Սակայն դատական պաշտպանություն նրան տրամադրվել է, քանի որ կաշկանդված լինելով քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով՝ հարկադիր կատարողի գործողությունների դեմ ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպությունների դատական պաշտպանության իրավունքի անխտջըն-

դոտ իրականացման ապահովման նպատակով պետությունը սահմանել է պետական տուրքի վճարումից ազատման ձևով արտոնություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործի վարույթը կարճվել է գործի քննության ընթացքում Ծառայության վարչական ակտերով բռնագանձումների բաժնի հարկադիր կատարողի նախաձեռնությամբ Վարդան Մամիկոնյանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա կիրառված արգելանքները վերացնելու, ինչպես նաև կատարողական վարույթը կարճելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով: Սույն գործի նման ելքի պայմաններում, Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն, դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի՝ Ծառայության վրա: Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ներկայացված պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում Վարդան Մամիկոնյանը դատարան դիմելու համար պետական տուրքի գծով դատական ծախս չի կատարել և չի կատարելու: Ավելին, հարկադիր կատարողի գործողությունների դեմ Վարդան Մամիկոնյանի դատական պաշտպանության իրավունքն արդյունավետորեն իրականացնելու համար պետական տուրքի գծով դատական ծախս կատարելու անհրաժեշտությունը ողջամտորեն բացակայում է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ծառայությունը պարտավոր չէ պետությանը հատուցել դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից Վարդան Մամիկոնյանն ազատված է օրենքի ուժով, քանի որ ներկայացված պահանջով դատարան դիմելիս պետական տուրքի գծով ծախս չի կատարվել, և այդ ծախսի կատարումը ողջամտորեն անհրաժեշտ չէր, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կրել է, և որոնք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Անվիտիվելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կարճելով սույն գործի վարույթը՝ Դատարանը պարտավոր էր լուծված համարել ներկայացած պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի բաշխման հարցը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Անդրադառնալով 3.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճարի գծով դատական ծախսի գումար բռնագանձելու մասով դատական ակտը բեկանելու վճռաբեկ բողոքի պահանջին, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործը հարուցվել է Վարդան Մամիկոնյանի ներկայացուցիչ Մհեր Հակոբյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս խնդրել է Ծառայության 05.12.2015 թվականի որոշման՝ կատարողական վարույթ հարուցելու մասով ճանաչել հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարման իրավահարաբերության բացակայությունը, իսկ արգելանք դնելու մասով՝ սույն որոշումը ճանաչել անվավեր: Վարդան Մամիկոնյանը ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության գործողությունները բողոքարկելու համար իրավաբանական խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել Մհեր Հակոբյանի հետ, իսկ պայմանագրով մատուցվելիք ծառայությունների գինը կազմել

է 50.000 ՀՀ դրամ: Սույն վարչական գործի քննության ընթացքում վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վերացրել է Վարդան Մամիկոնյանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա կիրառված արգելանքները, ինչպես նաև կարճել է վեճի առարկա կատարողական վարույթը, և սույն գործի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջի հիմքում ընկած հանրային-իրավական վեճն ըստ էության սպառվել է:

Դատարանը 16.08.2017 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով և որոշել է Ծառայությունից հոգուտ Վարդան Մամիկոնյանի բռնագանձել 3.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճարի գծով դատական ծախսի գումար, իսկ Վերաքննիչ դատարանը համաձայնել է Դատարանի եզրահանգումներին:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկելով հայցվորի կողմից իր իրավունքների դատական պաշտպանության համար ներկայացուցչին վճարման ենթակա գումարների հատուցման հարցը և արձանագրելով, որ այն ենթակա է հատուցման պատասխանողի կողմից՝ դատարանի սահմանած չափով՝ ստորադաս դատարանները եկել են իրավաչափ եզրահանգման: Հետևաբար, Ծառայության այն դիրքորոշումը, որ ներկայացուցչին վճարման ենթակա գումարի մասով ևս դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված, չի բխում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներից, իսկ վճռաբեկ բողոքն էլ չի պարունակում ներկայացուցչի վճարի մասով գործը սխալ լուծված լինելու մասին այլ հիմնավորումներ, բացառությամբ Ծառայության՝ ներկայացուցչի վճարի հատուցման պարտականություն չկրելու փաստարկից, ուստի այդ մասով Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել անփոփոխ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզապահությանն և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոքը բերող անձը պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում (*տես*, «Ռեքվիզիտ» ՍՊԸ-ն ընդդեմ «Մեգարոն» ՍՊԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը):

Թեև նշված իրավական դիրքորոշումն արտահայտվել է քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում գտել է, որ այն հավասարապես կիրառելի է նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական գործով կայացված վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելիս անձը հայցում է այնպիսի դատավարական հետևանքների առաջացում, որոնք անմիջականորեն պայմանավորված չեն ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ և ուղղված են վարույթի կանոնավոր ընթացքի ապահովմանը: Այս պարագայում անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված է ոչ թե գործի ըստ էության լուծման իրավաչափության, այլ դրա արդյունքում դատական ծախսերի բաշխման իրավաչափության հարցի պարզմանը: Հետևաբար, վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում, անկախ այն հանգամանքից, թե տվյալ դատական ակտը կայացվել է քաղաքացիական, թե վարչական գործի շրջանակներում, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը (*տես*, նաև Լիլիթ Մոսսեյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/6047/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանի 16.08.2017 թվականի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշումը վերաքննության կարգով, իսկ Վերաքննիչ դատարանի 14.03.2018 թվականի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկվել են միայն դատական ծախսերի մասով, իսկ Ծառայությունը ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ որոշման ուժով ազատված է այդ բողոքների համար պետական տուրքի վճարման պարտականությունից: Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ծառայությունը տվյալ դեպքում վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք

չի վճարել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն՝ պետական տուրքի բաշխման մասով բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2018 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի հարցը համարել լուծված:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել անփոփոխ:

2. Վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
 Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0412/02/18 2019թ.
 Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0412/02/18
 Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
 գեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի մայիսի 30-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «Եղիցի Լույս-ԲՀ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «Արմինե» Ա/Կ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերության ներկայացուցիչ Նարինե Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից հոգուտ իրեն բռնագանձել 1.300.000 ՀՀ դրամ՝ որպես դատական ծախսերի համար նախատեսված գումար:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Խաչիկյան) (այսուհետ՝ Դատարան) 02.08.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.12.2018 թվականի որոշմամբ «Եղիցի Լույս-ԲՀ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ, 302-րդ և 372-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը վճիռը պետք է հրապարակեր 02.08.2018 թվականին, մինչդեռ դատական ակտը տվյալ օրը և դրան հաջորդող ժամանակահատվածում «Datalex.am» կայքում չի հրապարակվել, իսկ բողոք բերած անձն այն ստացել է միայն 2018 թվականի նոյեմբերի 19-ին: Հետևաբար Դատարանը պատշաճ կարգով չի իրականացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Արդյունքում Վերաքննիչ դատարանը հարգելի չի համարել բողոքարկման իրավունքի իրացման ժամկետի բացթողումը՝ թույլ տալով դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 25.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ կարող են էական նշանակություն ունենալ տվյալ իրավադրույթի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի, 302-րդ հոդվածի 2-րդ մասի և 372-րդ հոդվածի 1-ին

մասի 2-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի աուկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. դատարանի կողմից դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելը դիտարկվում է արդյո՞ք դատարանի կողմից դատական ակտը գործին մասնակցող անձին հանձնելու լիազորության պարզա՞նկարարում այն պարագայում, երբ դատարանը դատական ակտի օրինակը հրապարակման հաջորդ օրը չի ուղարկել գործին մասնակցող անձին կամ մինչ այդ առձեռն չի հանձնել:

3.1) ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: Ուղղված լինելով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների երաշխավորմանը, այդուհանդերձ, օրենսդրի կողմից սահմանված են բողոքարկման իրավունքի իրացման որոշակի պայմաններ, որոնցից են ժամկետային սահմանափակումները:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից բողոքարկման իրավունքի և դրա իրացման պայմանների վերաբերյալ հայտնած դիրքորոշումներին: Այսպես՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «(...) պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ,

և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (*յրե'ս, Khalfaoui v. France գործով Եվրոպական դատարանի 14.03.2000 թվականի վճիռը, կետք 36*):

Պետության կողմից սահմանված՝ բողոք բերելու ժամկետային սահմանափակումների վերաբերյալ կանոններն ուղղված են իրավական որոշակիության երաշխավորմանը: Դատավարության կողմերը պետք է գիտակցեն դատավարական նմանատիպ կանոնների կիրառումն իրենց նկատմամբ: Բայց և այնպես այդ կանոնները և դրանց կիրառումը չպետք է խոչընդոտեն դատավարության մասնակիցների կողմից պաշտպանության հասանելի միջոցներն օգտագործելուն (*յրեն, Magomedov and others v. Russia գործով Եվրոպական դատարանի 28.06.2017 թվականի վճիռը, կետք 87*):

Եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է, որ իր առջև դրված չէ ազգային դատարանների փոխարեն գործելու խնդիր: Ներպետական օրենսդրության մեկնաբանության խնդիրների լուծումը նախ և առաջ ազգային դատարանների գործառնություն է, իսկ Եվրոպական դատարանի դերակատարումը պարզելն է, թե արդյոք ազգային դատարանների կողմից տրված մեկնաբանությունները համատեղելի են Կոնվենցիայի հետ: Վերոշարադրյալը հատկապես վերաբերում է դատարանների կողմից դատավարական այնպիսի նորմերի մեկնաբանությանը, ինչպիսիք են, օրինակ, դատավարական փաստաթղթեր կամ բողոք ներկայացնելու ժամկետների սահմանափակումները (*յրեն, Pérez de Rada Cavanilles v. Spain գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, կետք 43*):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի պարտադրում Պայմանավորվող պետություններին ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ: Այնուամենայնիվ, պետությունը, որը հիմնադրել է նման դատարաններ, պետք է հոգա այն մասին, որ այդ դատարանների առջև երաշխավորվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքները: Բացի այդ, ներպետական օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումները կախված են կոնկրետ գործով դատավարության առանձնահատուկ հատկանիշներից, և կարևոր է ուշադրության արժանացնել այդ գործի ամբողջ դատավարական ընթացքը՝ իրականացված ներպետական իրավական համակարգին համապատասխան, և այդ Բարձրագույն դատարանի կողմից ունեցած դերակատարումն այդ գործում, քանի որ բողոքի ընդունելիությանը ներկայացվող չափանիշները կարող են լինել ավելի խիստ, քան հայցադիմումինը (*յրեն, Běleš and others v. The Czech Republic գործով Եվրոպական դատարանի 12.11.2002 թվականի վճիռը, կետք 62*):

Հայցադիմում կամ բողոք ներկայացնելու իրավունքը պետք է իրացվի այն պահից սկսած, երբ համապատասխան անձը ձեռք է բերել իրական հնարավորություն ծանոթանալու դատարանի որոշման հետ, որը շոշափում է նրա իրավունքները կամ օրինական շահերը, կամ նրա համար առաջացնում է որոշակի հետևանքներ: Հակառակ դեպքում, դատարանները կատանային հնարավորություն դատական ակտերի կայացման մասին անձանց ուշացմամբ ծանուցելով էսպես սահմանափակել անձանց կողմից բողոք բերելու իրավունքը, անգամ՝ բացառել այդ հնարավորությունը: Դատական ծանուցումները համարվում են միջոց դատարանի և դատավարության մասնակիցների միջև փոխազդեցություն ստեղծելու համար և ուղղված են դատավարության մասնակիցներին կայացված ակտերի մասին տեղեկացնելուն, ինչպես նաև նրանց՝ այդ ակտերը բողոքարկելու հնարավորություն տալուն: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի սահմանում դատական ակտերի հանձնման կոնկրետ եղանակ, ինչպես, օրինակ, պատվիրված նամակով ուղարկելն է: Սակայն միաժամանակ դատա-

րանի որոշումն անձին պետք է հանձնված լինի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա ստուգել ինչպես դատական ակտը փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը (*յրեն, Ivanova and Ivashova v. Russia գործով Եվրոպական դատարանի 26.04.2017 թվականի վճիռը, կետեր 41, 45-46*):

Դատարանի մատչելիության իրավունքի դրսևորումներից է համարվում կայացված որոշումների մասին պատշաճ ծանուցում ստանալու իրավունքը, մասնավորապես այն դեպքերում, երբ բողոք բերելու իրավունքը սահմանափակված է որոշակի ժամկետներով (*յրեն, Zavodnik v. Sloveńie գործով Եվրոպական դատարանի 21.08.2015 թվականի վճիռը, կետ 71*):

Կողմերը պետք է ունենան հայց կամ բողոք բերելու հնարավորություն այն պահից սկսած, երբ նրանք արդյունավետ կերպով տեղեկացվել են դատական ակտի մասին, որը նրանց համար առաջացնում է հետևանքներ կամ շոշափում է նրանց իրավունքները կամ օրինական շահերը: Որպես դատարանի և դատավարության կողմի միջև կապի միջոց՝ ծանուցումները կողմին հաղորդակից են դարձնում դատական ակտին և նրա հիմքերին՝ դրանով անձին ընձեռելով հնարավորություն ներկայացնելու բողոք, եթե նա անհրաժեշտ կհամարի (*յրեն, Miragall Escolano and others v. Spain գործով Եվրոպական դատարանի 25.01.2000 թվականի վճիռը, կետ 37*):

Վերոշարադրյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի բողոքարկման իրավունքը, հանդիսանալով դատարանի մատչելիության իրավունքի բաղկացուցիչ տարր, կարող է իրացվել այն դեպքում, երբ անձն իրական հնարավորություն է ձեռք բերել ծանոթանալու դատարանի որոշման հետ: Ներպետական օրենսդրությամբ դատական ակտը հրապարակելու, գործին մասնակցող անձանց հանձնելու և նրանց ուղարկելու ընթացակարգեր սահմանելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում այդ միջոցներով ստեղծել բավարար հիմքեր և երաշխիքներ, որպեսզի անձինք կարողանան անխաթար կերպով օգտվելու իրենց դատական պաշտպանության իրավունքից: Ուստի ելնելով այդ նպատակներից՝ դատավարական նորմերով սահմանված՝ դատական ակտը հրապարակելու և գործին մասնակցող անձանց հանձնելու կամ նրանց ուղարկելու ընթացակարգերը պետք է ուղղված լինեն պաշտպանության միջոցներն ավելի հասանելի դարձնելուն, այլ ոչ դրանք ոչ իրավաչափորեն սահմանափակելուն: Վճռաբեկ դատարանը, ամփոփելով Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումները, եզրահանգում է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածը հստակ չի սահմանում, թե դատարանի կայացրած ակտն ինչ կերպով պետք է հանձնվի անձին, սակայն միանշանակ է այն, որ դատական ակտը պետք է հանձնվի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա իրապես պարզելու ինչպես դատական ակտի՝ փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը: Դատական ակտի հանձնման կոնկրետ եղանակ չսահմանելով հանդերձ՝ Կոնվենցիան և դրա կիրառումը պահանջում են, որպեսզի անձի բողոքարկման իրավունքի իրացումը սերտորեն փոխկապակցված լինի դատարանի կայացրած ակտին ծանոթանալու իրական հնարավորության հետ: Այսինքն՝ դատավարական նորմերը պետք է սահմանվեն այնպես, որպեսզի գործին մասնակցող անձանց համար իրական հնարավորություն ապահովեն տիրապետելու դատական ակտի բովանդակությանը, և չարդարացված կերպով չսահմանափակվի նրանց բողոք բերելու իրավունքը:

Ելնելով վերոշարադրյալից՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հանդիսանալով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների բաղադրատարրերից մեկը՝ բողոքարկման իրավունքը կարող է սահմանափակվել պետության կող-

մից, սակայն այդ սահմանափակումները՝ ներառյալ ժամկետայինները, չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

3.2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ, իսկ նույն օրենսգրքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտը հրապարակվում, գործին մասնակցող անձանց հանձնվում և ուղարկվում է ընդհանուր կարգով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզեցված վարույթի կարգով կայացված վճիռը, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելու օրվանից 15-օրյա ժամկետում, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում:

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: Գործին մասնակցող անձանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:

17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ դատարանի վճիռը բոլոր դեպքերում հրապարակվում է դռնբաց նիստում, բացառությամբ որդեգրման գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ մասի հրապարակման դեպքերի:

Վճռաբեկ դատարանը, սույն որոշման 3.1 կետում շարադրված իրավական վերլուծությունների համատեքստում անդրադառնալով և համեմատական վերլուծության ենթարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին և գործող օրենսգրքերի համարժեք կարգավորումները, հարկ է համարում արձանագրել հետևյալը. ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգիրքը սահմանում էր, որ դատական ակտի եզրափակիչ մասը հրապարակվում է դատական նիստում, և հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց, իսկ եթե գործին մասնակցող անձանցից որևէ մեկը չի ներկայացել, ապա վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան: Փաստորեն, սույն կարգավորման համաձայն՝ դատարանի կողմից վճիռն անձին հանձնելու պարտավորությունը պատշաճ կատարված էր համարվում, եթե առձեռն հանձնվում էր գործին մասնակցող անձին, իսկ դրա կատարման անհնարինության դեպքում, որպես այլընտրանք, սահմանված էր պատվիրված նամակով գործին մասնակցող անձանց վճիռն ուղարկելը: Վերգրյալից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգիրքը նախատեսում էր վճռի օրինակը գործին մասնակցող անձանց հանձնելու երկու եղանակ, որոնցից երկրորդն օրենսդիրը դիտարկում էր որպես կատարման ևս մեկ հավասարագոր և հնարավոր տարբերակ առաջինի անհնարինության դեպքում: Գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համա-

ձայն՝ վճիռը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով և վճռի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել: Փաստորեն՝ եթե վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելուց հետո դրա օրինակը չի հանձնվել անձին, ապա հրապարակման հաջորդ օրն այն պետք է ուղարկվի պատվիրված նամակով: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքը ևս որդեգրել է այն մտտեցումը, համաձայն որի՝ առձեռն հանձնվելու եղանակի իրագործված չլինելու պայմաններում պատվիրված նամակով վճռի օրինակն ուղարկելը դիտարկվում է որպես առաջինին համարժեք, դրան փոխարինող միջոց: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի համաձայն վճռի հրապարակումը կատարվում էր դատական նիստով, ապա գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պայմաններում այն իրականացվում է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով, այսինքն՝ դատական նիստ հրավիրելու և նիստում դատական ակտի եզրափակիչ մասը հրապարակելու փոխարեն դատական ակտը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հրապարակման նոր կարգ սահմանելն ուղղված է հանրության ավելի լայն շրջանակներին դատական ակտին հաղորդակից դարձնելուն, ինչպես նաև դատարանների ծանրաբեռնվածության բեռնաթափմանը: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքով սահմանել է նախկինում գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից տարբերվող հրապարակման նոր կարգ, սակայն դատարաններին չի ազատել դատական ակտի օրինակն անձին առձեռն հանձնելու կամ ուղարկելու պարտականությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ օրենսդիրը նախատեսել է հրապարակման նոր կարգ, բայց միաժամանակ պահպանել է դատական ակտի առձեռն հանձնման կամ ուղարկման՝ դատարանի պարտականությունը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելը չի դիտարկել դատական ակտին հաղորդակից դարձնելու դատարանի պարտականության պատշաճ իրականացում, քանի որ հակառակ պարագայում իմաստագուրկ է դառնում հրապարակման այդ կարգին զուգահեռ դատական ակտի հանձնման կամ ուղարկման եղանակների պահպանումը: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներից բխող հրապարակման նոր կարգը չի բացառում և չի դադարեցնում դատարանի՝ վճռի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրը գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականությանը, եթե մինչ այդ այն առձեռն նրանց չի հանձնվել:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորմանը, գտնում է, որ վերոնշյալ մտտեցումը կիրառելի է նաև պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտի նկատմամբ, այսինքն՝ այն դեպքում, երբ առկա է պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտ, դրա օրինակն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն կողմերին չի հանձնվել: Իսկ ինչ վերաբերում է դատական իշխանության կայքի միջոցով պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտի հրապարակմանը, ապա այս եղանակը չի կարող դադարեցնել վճռի օրինակն առձեռն հանձնելու կամ պատվիրված նամակի միջոցով գործին մասնակցող անձանց ուղարկելու

դատարանի պարտականությանը՝ հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը 19.06.2018 թվականին կայացրել է որոշում՝ գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին, որով դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 2018 թվականի օգոստոսի 02-ը: Համաձայն փոստային անդորրագրի՝ պարզեցված վարույթի կարգով գործը քննելու մասին որոշումը բողոքաբերին ուղարկելու համար փոստին է հանձնվել 21.06.2018 թվականին, իսկ վերջինս այն ստացել է 25.06.2018 թվականին: Համաձայն թիվ ԴԴ-23/Ե14909/18 գրության՝ Դատարանի 02.08.2018 թվականի վճիռը ելքագրվել է 06.11.2018 թվականին, և բողոքաբերը Դատարանի 02.08.2018 թվականի վճիռը ստացել է 19.11.2018 թվականին:

Վերաքննիչ դատարանի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են այն պատճառաբանությամբ, որ Դատարանի վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակվել է 02.08.2018 թվականին, և բողոքաբերն օբյեկտիվորեն հնարավորություն է ունեցել ծանոթանալու դատական ակտի բովանդակությանը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանը 19.06.2018 թվականին որոշում է կայացրել գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին, որը բողոքաբերը պատշաճ կերպով ստացել է 25.06.2018 թվականին: Այսինքն՝ վերջինս կարող էր դատական իշխանության պաշտոնական կայքում տեղադրված վճիռի հրապարակմանը հաջորդած օրենքով սահմանված ժամկետում բողոքարկել այն՝ անկախ վճիռի թղթային օրինակը ստացած լինելու հանգամանքից:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավական վերլուծությունները և ելնելով սույն գործի փաստական հանգամանքներից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդության քննության համար էական նշանակություն ունեն և՛ սույն գործով կայացված վճիռը դատարանի կողմից հայտարարված օրը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելու, և՛ վճիռն օրենքով սահմանված ժամկետում Ընկերությանը հանձնված կամ ուղարկված լինելու փաստերը, քանի որ թե՛ վճիռի հրապարակումը, թե՛ դրա ուղարկումը կողմին նպատակ են հետապնդում վերջինիս տեղեկացնելու դատարանի կողմից կայացված դատական ակտի մասին, ինչն իր հերթին ուղղված է բողոքարկման իրավունքի իրացումն ապահովելուն:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատական ակտերի հրապարակման գործող եղանակը, ուղղված լինելով հրապարակայնության սկզբունքի երաշխավորմանը, արդարադատության արդյունավետության բարձրացմանը, առաջնահերթ նպատակաուղղված է բողոքարկման իրավունքի իրականացման համար նախադրյալներ ապահովելուն: Էլեկտրոնային կայքի միջոցով դատական ակտի հրապարակման պայմաններում դատական ակտն անմիջապես հրապարակումից հետո կարող է հասանելի լինել գործին մասնակցող անձանց և ապահովել վերջիններիս բողոքարկման իրավունքի իրականացման համար իրական երաշխիքներ: Այդուհանդերձ, օրենսդիրը, հաշվի առնելով էլեկտրոնային ռեսուր-

սի հասանելիության օբյեկտիվ սահմանափակումները (մասնավորապես՝ միացնող-անջատող կամ ուղղորդող սարքավորումների և այլ ռեսուրսների անհրաժեշտությունը, **Էլեկտրոնային հաղորդակցության ծառայության** վճարովի բնույթը և այլն), դատական ակտի հրապարակման լիազորությանը զուգահեռ սահմանել է նաև գործին մասնակցող անձանց դատական ակտն առձեռն հանձնելու կամ ուղարկելու դատարանի պարտականությունը: Վճռաբեկ դատարանը, բացահայտելով օրենսդրի կամքը, գտնում է, որ միայն նշված պարտականությունների միաժամանակյա և օրենքով սահմանված կարգով իրականացման պայմաններում կարող են լիարժեք նախադրյալներ ստեղծվել բողոքարկման իրավունքի իրականացման համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, արժևորելով դատական իշխանության պաշտոնական կայքում դատական ակտի հրապարակումը՝ որպես դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու միջոց, անհրաժեշտ է համարում ընդգծել, որ բողոքարկման իրավունքի իրականացման լիարժեք նախադրյալներ ստեղծելու տեսանկյունից դատարանի վրա դրված է նաև դատական ակտը գործին մասնակցող անձանց առձեռն հանձնելու կամ ուղարկելու պարտականություն, որպիսի պայմաններում դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու պարտականության պատշաճ իրականացման մասին կարելի է եզրահանգումներ կատարել միայն այն դեպքում, երբ դատարանը պատշաճ իրագործել է վերոնշյալ երկու պարտականությունները, այն է՝

ա) հայտարարված օրը դարսական ակտը հրապարակել է դարսական իշխանության պաշտոնական կայքում,

բ) դարսական ակտի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկել է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ այն առձեռն չի հանձնվել նրանց:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերից պարզ չէ, թե դատական իշխանության կայքում դատական ակտը երբ է հրապարակվել այն պայմաններում, երբ Դատարանը դրա հրապարակման օր էր հայտարարել 02.08.2018 թվականը: Ավելին, գործում առկա չէ նաև ապացույց այն մասին, թե Դատարանը վճիռը երբ է ուղարկել Ընկերությանը՝ փոստային ծառայությանը հանձնելու միջոցով: Տվյալ դեպքում առկա է միայն Դատարանի թիվ ԴԴ-23/Ե14909/18 գրությունը, համաձայն որի՝ Դատարանի 02.08.2018 թվականի վճիռը ելքագրվել է 06.11.2018 թվականին, և հանձնման ծանուցագիրն այն մասին, որ Ընկերությունը դատական ակտի օրինակը ստացել է 19.11.2018 թվականին, որպիսի հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ հետազոտման և համարժեք գնահատման չեն արժանացվել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն առ այն, որ վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակվել է 02.08.2018 թվականին, և բողոքաբերն օբյեկտիվորեն հնարավորություն է ունեցել ծանոթանալու դատական ակտի բովանդակությանը, քանի որ սույն գործով պարզ չէ, թե դատական ակտը երբ է հրապարակվել դատական իշխանության պաշտոնական կայքում, ավելին՝ սույն գործի փաստերից ակնհայտ է դառնում, որ Դատարանի 02.08.2018 թվականի վճիռը ելքագրվել է 06.11.2018 թվականին, և արդյունքում Ընկերությունը Դատարանի վճիռը ստացել է 19.11.2018 թվականին, այսինքն՝ Դատարանը պատշաճ կարգով չի իրականացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իր պարտականությունը, ինչի արդյունքում Դատարանի վճիռը գործին մասնակցող անձին հասու է դարձել դրա՝ վերաքննության կարգով բողոքարկման համար

օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերը չի կարող կրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը Դատարանի կողմից չպահպանելու բացասական հետևանքը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից հրապարակված դատական ակտը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրը գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականության սահմանումն ինքնասպատակ չէ, այլ կոչված է ապահովելու բավարար երաշխիքներ անձի՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքի լիարժեք իրականացման համար: Ավելին, Վերաքննիչ դատարանի վերոշարադրյալ պատճառաբանությունը իմաստագրկում է դատական ակտը գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականության առկայությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության ներկայացուցչի միջնորդությունը ենթակա էր բավարարման, և բաց թողնված ժամկետը Վերաքննիչ դատարանի կողմից պետք է վերականգնվեր իրավունքի ուժով (ex jure), քանի որ առկա է եղել բողոքաբերից անկախ պատճառներով դատական ակտը նրան ուշ հասու լինելու հանգամանքը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Հետևաբար Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի, 302-րդ հոդվածի 2-րդ մասի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ ոչ իրավաչափորեն մերժելով Ընկերության՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը, Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Ընկերության՝ բողոքարկման իրավունքի իրականացման հնարավորությունը՝ արդյունքում զրկելով վերջինիս վերադաս դատարանի մատչելիության իրավունքից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԳ/2711/02/10**
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԳ/2711/02/10**
Նախագահող դատավոր՝ **Ն. Մարգարյան**
Դատավորներ՝ **Ա. Մխիթարյան**
Ա. Մկրտչյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- | | |
|------------------|----------------|
| <i>նախագահող</i> | Ռ. ՀԱԿՈՒՑՅԱՆ |
| <i>գեկուցող</i> | Է. ՄԵԴԻՐԱԿՅԱՆ |
| | Ս. ԱՆՏՈՆՅԱՆ |
| | Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ |
| | Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ |
| | Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ |
| | Գ. ՀԱԿՈՒՑՅԱՆ |
| | Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ |
| | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| | Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ |

2019 թվականի հունիսի 07-ին գրավոր ընթացակարգով քննելով Արմեն Ազիզյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.08.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Սևակ Արզարունու ընդդեմ՝ Նարեգ և Սարո Հարթունյանների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Սարո Հարթունյանի ընդդեմ Սևակ Արզարունու և Արմեն Ազիզյանի՝ Սարո Հարթունյանի կողմից հոգուտ Սևակ Արզարունու և Արմեն Ազիզյանի կազմված և նոտարական կարգով վավերացված (սեղանամատյանի համար՝ 2403) 01.07.2009 թվականի պարտավորագրում արձանագրված «մաքուր շահույթի» 25 տոկոսը մասնակիորեն՝ Արմեն Ազիզյանին հատկացման ենթակա 9 տոկոսի մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Սևակ Արզարունին պահանջել է Նարեգ Հարթունյանից բռնագանձել 151.784.000 ՀՀ դրամ, իսկ Սարո Հարթունյանից՝ 846.263.220 ՀՀ դրամ:
Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Նարեգ և Սարո Հարթունյանները պահանջել

են Սարո Հարթունյանի կողմից հոգուտ Սևակ Արզարունու և Արմեն Ազիզյանի կազմված ու նոտարական կարգով վավերացված 01.07.2009 թվականի պարտավորագրում արձանագրված «մաքուր շահույթի» 25 տոկոսը մասնակիորեն՝ Արմեն Ազիզյանին հատկացման ենթակա 9 տոկոսի մասով, ճանաչել անվավեր:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 02.04.2014 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցի մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան, դատավորներ՝ Ա. Պետրոսյան, Ա. Խառատյան) 13.11.2014 թվականի որոշմամբ Նարեգ և Սարո Հարթունյանների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.04.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.02.2015 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2014 թվականի որոշման դեմ Նարեգ և Սարո Հարթունյանների ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.03.2015 թվականի և 22.04.2015 թվականի որոշումներով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.02.2015 թվականի որոշման դեմ նոր երևան եկած հանգամանքի հիմքով Նարեգ և Սարո Հարթունյանների ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Դատարանի 05.08.2016 թվականի վճռով վերանայվել է 02.04.2014 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը և հաստատվել է թիվ ԵԿԳ/2711/02/10 քաղաքացիական գործով վերոհիշյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.08.2018 թվականի որոշմամբ Արմեն Ազիզյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով ժամկետ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Ազիզյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, սխալ է մեկնարանել «Պերական փոստի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, ինչպես նաև խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասը, 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկով.

Սույն գործով Դատարանը հարկադիր կատարողի դիմումի հիման վրա վերանայել

է օրինական ուժի մեջ մտած Դատարանի 02.04.2014 թվականի վճիռը և հաստատել վճռի հարկադիր կատարման ընթացքում կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է բողոք բերած անձի խախտված իրավունքների վերականգնման պահանջով և ոչ թե՛ դրամական պահանջով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 29.08.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարտավորությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի «գ» ենթակետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ հետևյալ իրավական հարցադրմանը. հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վարույթով կայացված վճիռը բողոքարկելիս արդյո՞ք անձը պարտավոր է վճարել դրամական պահանջի գործերի համար սահմանված համապարասիսան դրույթաչափով պետական փոստը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ:

Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*լրև 'ս, Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգադուվ ՄԻԵԴ 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը:

ՀՀ սահմանադրական դատարանը, 25.05.2010 թվականի թիվ ՍԴԳ-890 որոշման շրջանակներում արձանագրելով, որ պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, ընդգծել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին գրկելու նպատակ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարման պարտականությանը, արձանագրել է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է դատարան դիմելու իրավունքի ֆինանսական սահմանափակման՝ օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու պարտականության հետ: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ պետական տուրքն ընդգրկված է դատական ծախսերի կազմում, որի հասկացությունը, տեսակները, դրույքաչափերը, պետական տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից հետևում է, որ պետական տուրքը պետական բյուջե մուծվող պարտադիր վճար է, որը գանձվում է պետական մարմինների մատուցած ծառայությունների կամ կատարած գործողությունների համար: Հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարումն անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման նախապայմաններից մեկն է, քանի որ օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարելու հանգամանքով է պայմանավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ արդարադատությունից օգտվելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ որպեսզի անձը խախտված իրավունքների պաշտպանության համար կարողանա իրացնել դատարան դիմելու հնարավորությունը, նա պետք է նախևառաջ վճարի օրենքով սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք (*լրև 'ս, Հայկ Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/1115/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոհիշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում

է, որ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման համար անձը ևս պարտավոր է վճարել օրենքով սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք՝ վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման համար՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետ Ա. Հարությունյանը 26.07.2016 թվականին դիմելով դատարան՝ խնդրել է հաստատել սույն քաղաքացիական գործով Դատարանի 02.04.2014 թվականի վճռի հարկադիր կատարման ընթացքում պահանջատեր Սևակ Արզարունու իրավահաջորդ Արթուր Հովսեփյանի, պարտապաններ Նարեգ Հարթունյանի և Սարո Հարթունյանի ներկայացուցիչ Մարտուն Պողոսյանի միջև կնքված հաշտության համաձայնությունը (**հատոր 10-րդ, գ.թ. 81**):

Դատարանի 05.08.2016 թվականի վճռով վերանայվել է Դատարանի 02.04.2014 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը և հաստատվել է թիվ ԵԿԴ/2711/02/10 քաղաքացիական գործով վերոհիշյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը (**հատոր 10-րդ, գ.թ. 99-102**):

Արմեն Ազիզյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք Դատարանի 05.08.2016 թվականի վճռի դեմ: Միաժամանակ վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է 10.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը (**հատոր 10-րդ, գ.թ. 118-120, 122**):

Վերաքննիչ դատարանի 29.08.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ Դատարանի 05.08.2016 թվականի վճռի դեմ Արմեն Ազիզյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ «(...) բողոքին կից ներկայացվել է 10.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարում կատարելու փաստը հավաստող անդորրագիր, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի, 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» կետի դրույթներով, արձանագրում է, որ պակաս է վճարվել վերաքննիչ բողոքի համար հաշվարկվող պետական տուրքի գումարը, որպիսի պարագայում չի ներկայացվել նաև պետական տուրքի վճարման գծով արտոնություն տրամադրելու վերաբերյալ միջնորդություն (...)»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «(...) Դատարանի՝ 05.08.2016 թվականի վճռով հաստատված հաշտության համաձայնությամբ հայցագինը սահմանվել է 209.253.198 ՀՀ դրամ (...)»: Անդրադառնալով վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ բողոքաբերի միջնորդությանը՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ այն քննարկման առարկա կարող է դառնալ բողոքում թույլ տրված խախտումը վերացվելու և կրկին ներկայացվելու դեպքում (**հատոր 10-րդ, գ.թ. 144-146**):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու

դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա, իսկ նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դրամական և ոչ դրամական պահանջներ պարունակող հայցադիմումով պետական տուրքը հաշվարկվում և գանձվում է յուրաքանչյուր պահանջի համար առանձին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների (...), դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճարեկ բողոքների համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է՝

ա) դրամական պահանջի գործերով՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի երեք տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի երեք տոկոսի չափով,

բ) ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով,

գ) հատուկ վարույթների գործերով՝ բազային տուրքի ութապատիկի չափով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 36-րդ գլխի 202-204-րդ հոդվածներով սահմանվել են հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման վարույթը կարգավորող նորմերը, միաժամանակ նշված վարույթն ընդգրկվել է հատուկ վարույթի կարգով քննվող գործերի կազմում:

Համանման կարգավորում է սահմանված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, համաձայն որի՝ դատարանը հատուկ

վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը. ***հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ գործերը:***

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատարան դիմելու համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը սահմանելիս որոշակի տարբերակված մոտեցում է ցուցաբերել դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար՝ հաշվի առելով մի շարք հանգամանքներ, ինչպիսին են՝ ներկայացված հայցապահանջի տեսակը, քննվող գործով վարույթի տեսակը, բողոքարկման ենթակա ակտը և դրա բողոքարկման ծավալը: Մասնավորապես՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ վարույթի կարգով է քննվում տվյալ գործը՝ տարբերակվել են հայցային և հատուկ վարույթի կարգով քննվող գործերի համար սահմանված պետական տուրքի գանձման դրույքաչափերը: Տարբերակված մոտեցում է ցուցաբերվել նաև հայցային վարույթի կարգով քննվող գործերի դեպքում դրամական և ոչ դրամական պահանջների համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի գանձման դրույքաչափը որոշելիս Վերաքննիչ դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն *վարույթի տեսակը, պահանջի բնույթը, բողոքարկվող դատական ակտի տեսակը և բողոքարկման ծավալը*: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ միայն նշված հանգամանքները պարզելու պարագայում է հնարավոր որոշել վերաքննիչ բողոքի համար օրենքով սահմանված և գանձման ենթակա պետական տուրքի դրույքաչափը, ըստ այդմ՝ լուծել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ Դատարանի 05.08.2016 թվականի վճիռը բողոքարկելիս Արմեն Ազիզյանի կողմից վճարման ենթակա պետական տուրքի չափը պետք է հաշվարկվեր և վճարվեր դրամական պահանջի գործերով սահմանված պետական տուրքի դրույքաչափին համապատասխան, հաշվի չի առել, որ սույն գործով վերաքննության կարգով բողոքարկված վճիռը ոչ թե կայացվել է դրամական պահանջով ներկայացված հայցադիմումի քննության արդյունքով, այլ՝ կողմերի հաշտության համաձայնության հիման վրա Դատարանի 02.04.2014 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի վերանայման վերաբերյալ դատական ակտերի հարկադիր կատարողի դիմումի քննության արդյունքում: Ընդ որում, վերոհիշյալ դիմումը քննության է առնվել հատուկ վարույթի կարգով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր կատարողի դիմումով վճռի հարկադիր կատարման ընթացքում կողմերի միջև կնքված հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վարույթով կայացված վճիռը բողոքարկելիս անձը պարտավոր է վճարել հատուկ վարույթի գործերով վերաքննիչ բողոքների համար սահմանված դրույքաչափով պետական տուրք՝ ***բազային տուրքի ութսպարիկի չափով***:

Վերը նշվածը հաշվի առնելով և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով հակընդդեմ հայցով պատասխանող Արմեն Ազիզյանը ոչ թե բողոքարկել է Դատարանի 02.04.2014 թվականի վճիռը, որը կայացվել է դրամական պահանջի քննության արդյունքով, այլ Դատարանի՝ 05.08.2016 թվականի վճիռը, որը կայացվել է հարկադիր կատարողի դիմումի հիման վրա՝ հատուկ վարույթի կարգով գործի քննության արդյունքում: Տվյալ դեպքում բողոքաբերի

կողմից ներկայացվել է 10.000 ՀՀ դրամ վճարված լինելու փաստը հավաստող պետական տուրքի վճարման անդորրագիր, ինչը նշանակում է, որ բողոքաբերի կողմից ամբողջությամբ վճարվել է բողոքարկված դատական ակտի համար օրենքով սահմանված չափով պետական տուրքը, ինչը, սակայն, անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Դատարանի կողմից հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա օրինական ուժի մեջ մտած վճռի վերանայման արդյունքով կայացված՝ 05.08.2016 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելիս Արմեն Ազիզյանը պարտավոր էր վճարել դրամական պահանջով սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, չկիրառելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի «գ» ենթակետը, անհիմն կերպով վերադարձրել է Արմեն Ազիզյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը և վերջինիս գրկելով Դատարանի 05.08.2016 թվականի վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից՝ սահմանափակել է նրա՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը՝ արդյունքում թույլ տալով այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 29.08.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Միաժամանակ նկատի ունենալով, որ 29.08.2018 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանը չի անդարադարձել վերաքննիչ բողոք բերած անձի՝ օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու մասին միջնորդությանը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված որոշումը վերացվելու դեպքում այդ հարցը ենթակա է լուծման բողոքը վարույթ ընդունելու փուլում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.08.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ2/1046/03/16
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ2/1046/03/16

Նախագահող դատավոր՝ Ս. Թորոսյան

Դատավորներ՝ Ն. Բարսեղյան

Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Է. ՍԵՂԻՍՅԱՆ

2019 թվականի հուլիսի 26-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ դիմումի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (իրավահաջորդ՝ «Վեոն Արմենիա» ՓԲԸ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և կատարողական թերթ տրամադրելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Լիլի Իվանովայի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն պահանջել է Մարինե Սահակյանից 35.313 ՀՀ դրամ բռնագանձելու մասին արձակել վճարման կարգադրություն:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ս. Սահակյան) 30.11.2016 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Ընկերությունը 26.06.2018 թվականին դիմում է ներկայացրել դատարան՝ պահանջելով հարգելի համարել կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը և տրամադրել կատարողական թերթ:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Սահակյան) (այսուհետ՝ Դատարան) 12.09.2018 թվականի որոշմամբ դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.12.2018 թվականի որոշմամբ Ընկերության միջնորդությունը՝ դատական ակտի բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ, բավարարվել է, և վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Պետական փոստի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածը և 368-րդ հոդվածի 5-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, կիրառելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը և արձանագրելով, որ վերաքննիչ բողոքին չի կցվել պետական տուրքի վճարումը հավաստող ապացույց, մինչդեռ պետական տուրքը հատուկ վարույթի գործերով բողոքարկման դեպքում կազմում է 8.000 ՀՀ դրամ, հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածը սպառիչ սահմանում է հատուկ վարույթի կարգով քննվող գործերի ցանկը: Այսինքն, տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածը ենթակա չէր կիրառման, քանի որ հայցվորը բողոքարկել էր կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին որոշումը, որը չի վերաբերում հատուկ վարույթի կարգով քննվող գործերին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 05.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետները վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումներով պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու խնդրի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-

րդ հողվածի, 368-րդ հողվածի 5-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրության հիման վրա կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմումի և դրա կապակցությամբ կայացված որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքի համար բողոք բերող անձի վրա կարող է դրվել պետական փոստը վճարելու պարտականություն:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հողվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հողվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (տե՛ս, ի թիվս այլնի, Մուսաննա Արարապի Միրզոյանն ընդդեմ Մուսաննա Միրանի Միրզոյանի թիվ ԱՐԱԳ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը, «Ֆասթ Սիլյա» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամտաբերի կոմիտեի թիվ ՎԳ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Աբրահամյանն ընդդեմ «Արդշինքանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԳ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը):

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով սույն որոշմամբ բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հողվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հողվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադի-

մումների, դիմումների (...), դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է՝

ա) դրամական պահանջի գործերով՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի երեք տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարանի հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի երեք տոկոսի չափով,

բ) ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով,

գ) հատուկ վարույթների գործերով՝ բազային տուրքի ութապատիկի չափով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանել է պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը: Մասնավորապես՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սպառիչ ամրագրվել են ինչպես դատարանի դիմելու համար պետական տուրքի գանձման օբյեկտները, այնպես էլ՝ գանձվող պետական տուրքի դրույքաչափերը: Ընդ որում օրենսդիրը վերը նշվածը սահմանելիս որոշակի տարբերակված մոտեցում է ցուցաբերել դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են՝ ներկայացված հայցապահանջի տեսակը, քննվող գործով վարույթի տեսակը, բողոքարկման ենթակա ակտը և դրա բողոքարկման ծավալը: Այլ կերպ ասած՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ վարույթի կարգով է քննվում տվյալ գործը՝ տարբերակվել են հայցային և հատուկ վարույթի կարգով քննվող գործերի համար սահմանված պետական տուրքի գանձման դրույքաչափերը: Տարբերակված մոտեցում է ցուցաբերվել նաև հայցային վարույթի կարգով քննվող գործերի դեպքում դրամական և ոչ դրամական պահանջների համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ իրավական գնահատական տալով պետական տուրքի գանձման օբյեկտներին, արձանագրել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը պետական տուրքի գանձման օբյեկտ, այսինքն՝ պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողություն է դիտարկում, մասնավորապես, դատարան տրվող հայցադիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների քննությունը: Այդ իսկ նկատառումով ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ պետական տուրքի հաշվարկման հիմքն այն գույքային կամ ոչ գույքային պահանջն է, որով անձը դիմել է դատարան՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ արդյունքում ակնկալելով ներկայացված պահանջի ըստ էության քննություն և լուծում: Այսինքն՝ պետական տուրքի գանձում իրականացվում է ոչ թե դատարանի ցանկացած գործողության, այլ այն գործողությունների համար, որոնց արդյունքում վերջնական դատական ակտի կայացմամբ քննարկվում և լուծվում է ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջը: Հետևաբար, այն դեպքում, երբ դատարան դի-

մած անձը հայցում է դատարանի որևէ գործողության իրականացում, որն անմիջականորեն պայմանավորված չէ *ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ*, այլ ուղղված է վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելուն, թեկուզև այդ գործողության հայցումն իրականացվում է բողոքարկման ընթացակարգի միջոցով, այնուամենայնիվ, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը (*տես, «Ռեքվիզիտ» ՍՊԸ-ն ընդդեմ «Մեգարոն» ՍՊԸ-ի թիվ ԵՇԳ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 11.03.2015 թվականի որոշումը*):

Անդրադառնալով կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարան ներկայացվող դիմումների և դրանց կապակցությամբ կայացված որոշումների դեմ բերված բողոքների համար պետական տուրքի գանձման հարցին՝ Վճարելի դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կատարողական թերթը տրվում է՝ դատարանի վճիռների, դատավճիռների, որոշումների և դատարանի արձակած վճարման կարգադրությունների հիման վրա:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացի-պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահանջատերը բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը ներկայացնում է կատարողական թերթ տված դատարան: Դատարանը դիմումը քննում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Պահանջատերը և պարտապանը պատշաճ ձևով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածով սահմանված են վերաքննության կարգով բողոքարկման ենթակա առաջին աստիճանի դատարանի որոշումները, որոնցից, ի թիվս այլնի, հանդիսանում է նաև կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքով կայացված որոշումը:

Վճարելի դատարանը փաստում է, որ կատարողական թերթի տրամադրումը կոչված է կատարողական վարույթի միջոցով ապահովելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման գործընթացը, ինչն իր հերթին հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդար դատաքնության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի վսաս կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի, դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա, հավանաբար, կհանգեցնի այնպիսի իրողության, որ անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս (*տե՛ս, Բարդոլմի ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսթին ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40*):

Ըստ այդմ էլ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը սահմանել է հատուկ ընթացակարգ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարան տրվող դիմումների համար: Մասնավորապես՝ պայմանավորված այդ դիմումների քննության առանձնահատկությամբ՝ տվյալ դիմումի քննության համար օրենսդիրը սահմանել է առավել սեղմ ժամկետ՝ 10 օր, դիմումը ստանալու օրվանից՝ միաժամանակ իրավունք վերապահելով գործին մասնակցող անձանց բողոքարկելու տվյալ գործերով կայացված դատական ակտը (տվյալ դեպքում՝ դատարանի որոշումը): Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերը նշված վարույթն անմիջականորեն ուղղված չէ որևէ վեճի լուծմանը կամ գործի փաստական հանգամանքների պարզմանը: Տվյալ դեպքում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով գործի քննությունն արդեն իսկ ավարտվել է և դատարանի միակ գործողությունը կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու հարցի պարզումն ու գնահատումն է: Այսինքն՝ վերը նշվածը վկայում է, որ տվյալ վարույթի ընթացքում դատարանի կողմից կատարվող դատավարական գործողությունները կրում են սահմանափակ բնույթ, բացակայում է պետական տուրքի գանձման օբյեկտը, ըստ այդմ՝ նաև պետական տուրք վճարելու պարտականությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումներով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով առկա չէ պետական տուրքի գանձման օբյեկտը, որպիսի պայմաններում դիմողների վրա չի կարող դրվել վերը նշված գործերով կայացված դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու համար պետական տուրքի վճարման պարտականություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, 29.11.2016 թվականին դիմելով դատարան, պահանջել է Մարինե Սահակյանից 35.313 ՀՀ դրամ բռնագանձելու մասին արձակել վճարման կարգադրություն (**գ.թ. 1**): Դատարանը 30.11.2016 թվականին արձակել է վճարման կարգադրություն (**գ.թ. 19**): Ընկերությունը 26.06.2018 թվականին դիմում է ներկայացրել դատարան՝ նշելով, որ Դատարանը չի տրամադրել կատարողական թերթ, հետևաբար խնդրել է հարգելի համարել կատարողական թերթը կատարման ներկայացնելու համար բաց թողնված ժամկետը և տրամադրել կատարողական թերթ (**գ.թ. 25**):

Դատարանը 12.09.2018 թվականի որոշմամբ Ընկերության դիմումը մերժել է՝ պատճառաբանելով, որ թիվ ԱՎԴ-2/1046/03/16 վճարման կարգադրությունն ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 14.03.2017 թվականին, ինչի մասին «ԱրմենՏել» ՓԲԸ-ն տեղեկացվել է 30.03.2017 թվականին, սակայն վերջինիս կողմից օրենքով սահմանված ժամկետում կատարողական

թերթ տրամադրելու վերաբերյալ դիմում չի ներկայացվել, հետևաբար կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը չի կարող համարվել հարգելի (**գ.թ. 36-37**):

Ընկերությունը 14.11.2018 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ պահանջելով «բեկանել Դատարանի 12.09.2018 թվականի որոշումը և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնել»: Միաժամանակ Ընկերության կողմից ներկայացվել է միջնորդություն՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին (**գ.թ. 45-48**):

Վերաքննիչ դատարանը 05.12.2018 թվականի որոշմամբ դատական ակտի բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել է, իսկ վերաքննիչ բողոքը վերադարձրել՝ պատճառաբանելով, որ «ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի, բողոքին չի կցվել պետական տուրքի վճարումը կատարելու փաստը հավաստող ապացույց («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝ պետական տուրքը գանձվում է հատուկ վարույթի գործերով բազային տուրքի ութասպատիկի չափով, այսինքն 8.000 ՀՀ դրամ), չի ներկայացրել նաև արտոնություն կիրառելու վերաբերյալ որևէ միջնորդություն՝ գույքային դրությունը հիմնավորող ապացույցների ուղեկցմամբ»: Միաժամանակ տվյալ որոշմամբ սահմանվել է 15-օրյա ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար (**գ.թ. 59**):

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է հետևյալը.

Սույն քաղաքացիական գործով Ընկերությունը վերաքննության կարգով բողոքարկել է Դատարանի 12.09.2018 թվականի որոշումը, որը կայացվել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով:

Վճռաբեկ դատարանն անհիմն է գնահատում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ ներկայացված վերաքննիչ բողոքի համար պետական տուրքը ենթակա էր վճարման **հատուկ վարույթի գործերով** բազային տուրքի ութասպատիկի չափով:

Այսպես. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը հատուկ վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը.

- 1) իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը.
- 2) շարժական գույքը տիրագործի ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ գործերը.
- 3) անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) գործերը.
- 4) քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ գործերը.
- 5) քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու գործերը.
- 6) երեխայի որդեգրման վերաբերյալ գործերը.
- 7) անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման են-

թարկելու վերաբերյալ գործերը.

8) քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ գործերը.

9) ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու վերաբերյալ գործերը (կոչի վարույթ).

10) հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ գործերը.

11) արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ գործերը:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածում սպառնիչ սահմանել է հատուկ վարույթի կարգով քննվող գործերի ցանկը, որոնց շարքում կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումները չեն ներառվել, այսինքն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելը և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումը չի հանդիսանում հատուկ վարույթի կարգով քննվող գործ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնող անձի վրա չի կարող դրվել հատուկ վարույթի գործերի համար սահմանված դրույքաչափով պետական տուրք վճարելու պարտականություն, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի հիշյալ եզրահանգումը չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վկայակոչված իրավակարգավորումից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի համար պետական տուրքը վճարված չլինելը, ինչպես նաև պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության առկայությունը կամ բացակայությունը որևէ նշանակություն չունեն Ընկերության վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման համար, քանի որ Ընկերությունը վերը շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում պետական տուրքի վճարման պարտականություն չունի՝ բողոքարկման ենթակա դատական ակտի տեսակով և հայցվող գործողությանը պայմանավորված՝ պետական տուրքի վճարման օբյեկտի բացակայության հիմքով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի և 368-րդ հոդվածի 5-րդ մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ ոչ իրավաչափորեն վերադարձնելով Ընկերության վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Ընկերության՝ բողոքարկման իրավունքի իրականացման հնարավորությունը՝ արդյունքում գրկելով վերջինիս վերադաս դատարանի մատչելիության իրավունքից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/2525/02/16

2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/2525/02/16

Նախագահող դատավոր՝ Ն. Մարգարյան

Դատավորներ՝ Ա. Մխիթարյան

Ա. Մկրտչյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հունիսի 20-ին

գրավոր ընթացակարգով քննելով Հրանուշ Երիցյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.10.2018 թվականի «Պետական տուրքի վճարումը տարա-
ժամկետելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մա-
սին» որոշման դեմ՝ ըստ հայցի Կարեն Սուքոյանի ընդդեմ Հրանուշ Երիցյանի՝ գումարի բո-
նագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Կարեն Սուքոյանը պահանջել է Հրանուշ Երիցյանից բռնագանձել 85.043.000 ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար, 85.043.000 ՀՀ դրամի նկատմամբ 18.06.2016 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվարկել ՀՀ քաղաքա-
ցիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ, ինչպես նաև բռնագանձել 200.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Բաղիրյան) (այսուհետ՝ Դատարան) 19.06.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ն. Մարգարյան, դատավորներ՝ Ա. Մխիթարյան, Ա. Մկրտչյան) 30.08.2018 թվականի որոշմամբ Հրանուշ Երիցյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.10.2018 թվականի որոշմամբ Հրանուշ Երիցյանի՝ պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հրանուշ Երիցյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կարեն Սուքոյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասը և 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ պետական տուրքի հասկացությունը, դրա տեսակներն ու դրույքաչափերը, տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, նշված օրենքը պատիչ սահմանում է պետական տուրքի գծով արտոնությունները, որոնց մեջ առկա չէ պետական տուրքը մաս-մաս վճարելու տեսքով արտոնություն, հետևաբար նշված արտոնությունը նաև չի կարող կիրառվել դատարանների կողմից նման լիազորություն չունենալու պատճառով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ պետական տուրքի վճարումը տարաժամկետելու միջնորդության մեջ ուղղակի նշված է եղել պետական տուրքի վճարման հարցը լուծել հետագայում կայացվելիք դատական ակտով: Այսինքն, լինելով մեծահասակ և թռչակառու կին, տվյալ դեպքում վերաքննիչ բողոքում նշելով «տարաժամկետել» բառը, Հրանուշ Երիցյանը նկատի է ունեցել պետական տուրքի հետաձգումը:

Վերաքննիչ դատարանը, կամայականորեն մեկնաբանելով ներկայացված միջնորդությունը, անտեսել է այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոք բերած անձը, խնդրելով պետական տուրքի վճարման հարցը կարգավորել դատական ակտով, ըստ էության ներկայացրել է պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 22.10.2018 թվականի «Պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2.1. Կարեն Սուքոյանի վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանի 22.10.2018 թվականի որոշումն օրինական է և հիմնավորված, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ չեն տրվել վճռաբեկ բողոքում նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները: Մասնավորապես՝ վերաքննիչ բողոք բերած անձի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում վերացված չեն եղել

վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման մեջ մատնանշված բոլոր խախտումները:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն դեպքերին, երբ որպես պետական փոստի գծով արտոնության կիրառում անձի կողմից ներկայացվել է պետական փոստի վճարումը փարաժամկետներու միջնորդություն:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ աստիճանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին աստիճանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի

այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրեն 'u, Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 զանգասրով ՄԻԵԴ 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*յրեն, ի թիվս այլնի, «Ֆասթ Սիլյա» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Աբրահամյանն ընդդեմ «Արդշիրանակ» ՓԲԸ-ի թիվ ԵԿ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը*):

Վճարեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անհրաժեշտ է համակցության մեջ մեկնաբանել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն իրավունք ունեն (...) դիմել համապատասխան պետական մարմիններ՝ **պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար (...):**

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնություններ՝

- ա) պետական տուրքի վճարումից ազատում.
- բ) պետական տուրքի նվազեցում.
- գ) պետական տուրքի դրույքաչափի նվազեցում.
- դ) պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում.

ե) պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, պետական տուրքի վճարումը դասելով դատական ծախսերի թվին, միաժամանակ սահմանել է, որ դրա վճարման չափը և կարգը, այդ թվում՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը, անդրադառնալով պետական տուրքի գծով արտոնությունների կիրառմանը, սպառիչ սահմանել է պետական տուրքի արտոնության կիրառման տեսակները, այն է՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում: Այսինքն՝ օրենսդրորեն հստակ սահմանվել են պետական տուրքի գծով այն բոլոր արտոնությունները, որոնք կարող են կիրառվել դատարանների կողմից, ինչն իր հերթին նշանակում է, որ բացի սահմանված արտոնություններից՝ պետական տուրքի գծով այլ արտոնություն կիրառման ենթակա չէ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պետական տուրքի գծով արտոնությունները կոչված են երաշխավորելու յուրաքանչյուրի սահմանադրորեն երաշխավորված արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքը և նպատակ են հետապնդում վերացնել արդարադատության մատչելիության այնպիսի խոչընդոտները, որոնք պայմանավորված են անձի մոտ համապատասխան միջոցների բացակայության պատճառով դատարան դիմելու, վերադաս աստյան բողոք ներկայացնելու անհնարինությամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ի տարբերություն նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք), որն ընդունվել է 17.06.1998 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականին և ուժը կորցրել է 09.04.2018 թվականին, պետական տուրքի վճարումը «տարածամկետելը»՝ որպես պետական տուրքի գծով արտոնություն, գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներում առկա չէ: Այսինքն՝ որպես պետական տուրքի գծով արտոնություն՝ «պետական տուրքի վճարումը տարածամկետելը», չի կարող կիրառվել դատարանների կողմից: Օրենսդրական նշված զարգացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Նախկին օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում էր, որ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, *պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու* և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, մինչդեռ այդ ժամանակահատվածում գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, սպառիչ սահմանելով պետական տուրքի գծով արտոնությունները, *«պետական տուրքի վճարումը տարածամկետելու»* արտոնության կիրառում նույնպես չէր նախատեսում, ինչի հետևանքով պետական տուրքի վճարումը տարածամկետելու արտոնության կիրառումը դատական պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանման տեղիք էր տալիս: Ըստ այդմ էլ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներով անդրադառնալով *«պետական տուրքի վճարումը տարածամկետելու»* արտոնության կիրառման հասկացությանը, արձանագրել էր, որ օրենսդիրը, ի տարբերություն պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելուն, դատարանի համար առավել լայն հայեցողական լիազորություն է սահմանել պետական տուրքի վճարումը տարածամկետելու կամ հետաձգելու հարցում:

Վերջինս պայմանավորված է դատարանի դերով՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի, որը միաժամանակ պետք է ապահովի անձի արդարադատության մատչելիության իրավունքը (*Կրե'ս, Դավիթ Սասկյանն ընդդեմ Լյուսա Սահակյանի և մյուսների, թիվ ԵԲԳ/0820/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.05.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել էր, որ պետական տուրքի վճարումը տարածամկետելու հասկացությունը և կիրառման կարգը ենթակա են սահմանման «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Մինչդեռ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 27.12.1997 թվականին՝ մինչև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը (17.06.1998 թվական), սահմանելով (հոդված 21) պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները, որպես այդպիսին չի նախատեսել պետական տուրքի վճարման ժամկետի տարածամկետումը: Օրենսդրական նման բացը դատական պրակտիկայում որոշ դեպքերում, ինչպես սույն գործով, հանգեցնում է այդ հիմքով պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունների մերժման:(...)Օրենսդրական բացի հիմքով անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումը չի կարող ապահովել ողջամիտ համաչափություն օգտագործվող միջոցների և նպատակի միջև, ընդհակառակը, կարող է անհաղթահարելի խոչընդոտ հանդիսանալ արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման տեսանկյունից: Հետևաբար, **բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվել է պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդություն, դատարաններն այն պետք է քննարկեն և այդ հարցով որոշում կայացնեն որպես պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն** (*Կրեն, Հայկ Դոնամայլանն ընդդեմ Վարդան, Ավագ Մարգարյանների, Մուսաննա Գաբրիելյանի թիվ ԱՐԱԳ/0043/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.08.2013 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով իր դիրքորոշումը, միաժամանակ արձանագրում է, որ ի տարբերություն Նախկին օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի, որով նախատեսվում էր, որ (...) պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, գործող՝ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 4-րդ մասով այլևս նախատեսված չէ պետական տուրքի վճարումը տարածամկետելու՝ պետական տուրքի գծով արտոնություն: Այսինքն՝ գործող իրավակարգավորման պայմաններում օրենսդիրը, ի թիվս այլնի, սահմանել է միայն պետական տուրքի վճարումը հետաձգելու արտոնությունը: Հետևաբար վերը նշվածը հաշվի առնելով և նպատակ ունենալով ապահովելու արդարադատության մատչելիության իրավունքի լիարժեք իրականացումը, ինչպես նաև հաշվի առնելով, որ «տարածամկետել» բառը մեկ այլ բացատրությամբ կիրառվում է նաև որպես *հետաձգել, երկարաձգել, վճարման կամ կատարման ժամկետը հետաձգել ավելի ուշ ժամանակի* նշանակությամբ¹ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվել է պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդություն, դատարաններն այն պետք է

1 Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացարական բառարան», Հրայր Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1980, «Հայոց լեզվի հունահնչյունների բառարան», Աշոտ Մուրադի Մուքիսայան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1967:

ըննարկեն և այդ հարցով որոշում կայացնեն՝ ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունն ամբողջության մեջ՝ գնահատելով դրա բովանդակությունը: Եվ այն դեպքերում, երբ նման միջնորդության բովանդակությունից հետևում է, որ անձի կամքն ի վերջո ուղղված է պետական տուրքի հետաձգմանը, սպա դատարանների կողմից ենթակա է կիրառման պետական տուրքի վճարումը հետաձգելու՝ օրենքով սահմանված արտոնությունը: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գործող իրավակարգավորումներում, ի թիվս այլնի, նախատեսվել է միայն պետական տուրքի վճարումը հետաձգելու պետական տուրքի գծով արտոնության տեսակը, իսկ «պետական տուրքի վճարումը տարածամեկտեղը»՝ որպես կիրառման ենթակա պետական տուրքի գծով արտոնություն սահմանված չէ:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր՝ նույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պահանջների պահպանմամբ: Վերաքննիչ բողոքը պետք է լինի ընթեռնելի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքում նշվում են (...) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, (...) մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, սպա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե բողոք բերող անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, (...) սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը ներկայացրել է նոր վերաքննիչ բողոք, որում չի վերացրել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված բոլոր խախտումները, կամ բողոքը ներկայացրել է նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ, կամ նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդություն, որը մերժվել է:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերով սահմանվել են վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Ընդ որում, օրենսդիրն ամրագրել է այն բացասական հետևանքները, որոնք կարող են վրա հասնել այն պարագայում, երբ բողոք բերած անձը չի պահպանել վերաքննիչ բողոքի ներկայացման կարգին կամ ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը բողոք բերող անձին հնարավորություն է տվել օրենքով սահմանված ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված թերությունները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու և այն կրկին ներկայացնելու դատավարական նորմերի վերլուծությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոք բերած անձի կողմից չեն պահպանվել վերաքննիչ բողոքին ներկայացվող և օրենքով սահմանված պահանջները, դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա դատարանը տրամադրում է օրենքով սահմանված ժամկետ դրանք վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար: Ընդ որում, նշված ժամկետը բողոք բերած անձին տրամադրվում է օրենքի ուժով և ենթակա չէ որևէ սահմանափակման: ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները, ըստ էության, դասակարգվում են երկու խմբի՝ առաջինն այն պայմաններն են, որոնք վերաբերում են վերաքննիչ բողոքի բովանդակությանը և ներառում են այն տեղեկությունների շրջանակը, որոնք պետք է արտացոլվեն վերաքննիչ բողոքում (...):

Երկրորդն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքին կցվող նյութերի ցանկին: Մասնավորապես՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է (կամ բողոքում ներառվում է) դրա վերաբերյալ միջնորդությունը: (...) *(տե՛ս, Գեորգի Ավետիսյանն ընդդեմ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի թիվ ԵԷԴ/0327/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.03.2018 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կարեն Սուքոյանը պահանջել է Հրանուշ Երիցյանից հօգուտ իրեն բռնագանձել 85.043.000 ՀՀ դրամ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները: Դատարանի 19.06.2018 թվականի վճռով Կարեն Սուքոյանի հայցը բավարարվել է (**հատոր 1-ին, գ.թ. 3-5, հատոր 2-րդ, գ.թ. 78-83**):

Դատարանի վճռի դեմ Հրանուշ Երիցյանի կողմից 20.07.2018 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք (**հիմք՝ փոստային ծրար, հատոր 2-րդ, գ.թ. 94**):

Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 30.08.2018 թվականի որոշմամբ Հրանուշ Երիցյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները, այդ թվում՝ պետական տուրքը վճարված չլինելը, վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար (**հատոր**

2-րդ, գ.թ. 98-100):

Հրանուշ Երիցյանը 04.10.2018 թվականին կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք: Միաժամանակ Հրանուշ Երիցյանը, պատճառաբանելով, որ չի աշխատում, թոշակառու է և սովյալ պահին չունի որևէ հնարավորություն պետական տուրքի գումար վճարելու համար, միջնորդել է տարաժամկետով պետական տուրքի գումարի վճարումը և այդ հարցը լուծել վճռով (**հիմք՝ փոստային ծրար, հատոր 2-րդ, գ.թ. 108-111**):

Վերաքննիչ դատարանը, «Պետական տուրքի վճարումը տարաժամկետելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» 22.10.2018 թվականի որոշմամբ մերժելով պետական տուրքի վճարումը տարաժամկետելու մասին միջնորդությունը և կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը, արձանագրել է, որ «(...) պետական տուրքի վճարման տարաժամկետումը նշանակում է՝ պետական տուրքի վճարում մաս-մաս և որոշակի ժամանակահատվածներում, մինչև որ բողոքաբերը, միջնորդելով տարաժամկետել, չի նշել տարաժամկետ վճարումների չափը և ժամանակահատվածը, ավելին՝ բողոքաբերը խնդրում է պետական տուրքի հարցը կարգավորել դատական ակտով, որը կարելի է ընդունել նաև՝ որպես պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն, իսկ դատարանները չեն կարող ենթադրություններ անել դիմողների պահանջներով, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, պետք է մերժել բողոք բերած անձի միջնորդությունը» (**հատոր 2-րդ, գ.թ. 114-115**):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, մերժելով պետական տուրքի վճարումը տարաժամկետելու մասին միջնորդությունն այն հիմքով, որ բողոքաբերը չի նշել տարաժամկետ վճարումների չափը և ժամանակահատվածը, անտեսել է այն հանգամանքը, որ թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, թե՛ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ պետական տուրքի վճարումը տարաժամկետելու՝ պետական տուրքի գծով արտոնությունը, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոք բերած անձի վրա չէր կարող դրվել նաև օրենքով չսահմանված արտոնության կիրառումը ապահովող գործողությունների կատարում: Ավելին՝ Հրանուշ Երիցյանի կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ըստ էության վերաքննիչ բողոք բերած անձը, միջնորդելով պետական տուրքի վճարումը տարաժամկետել, միաժամանակ խնդրել է դրան անդրադառնալ դատական ակտով: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոք բերած անձի միջնորդությունն ըստ էության ուղղված է եղել պետական տուրքի վճարման հետաձգմանը, հետևաբար որպես պետական տուրքի գծով արտոնություն ենթակա էր կիրառման պետական տուրքի հետաձգումը:

Նման պայմաններում վերը նշվածը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով առաջին հերթին պետք է առաջնորդվեր անձի արդարադատության մատչելիության իրավունքի ապահովման սկզբունքով և ելնել այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակից:

Մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վերաքննիչ բողոք բերած անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը տարաժամկետելու միջնորդություն՝ միաժամանակ խնդրելով նաև պետական տուրքի վճարման հարցին անդրադառնալ վերջնական դատական ակտով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

Վերաքննիչ դատարանը, մերժելով պետական տուրքի վճարումը տարածամկետելու մասին միջնորդությունը, այն չքննարկելով որպես պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն և այդ հիմքով վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելով, սահմանափակել է Հրանուշ Երիցյանի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, անհիմն կերպով է մերժել Հրանուշ Երիցյանի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը՝ վերջինիս գրկելով Դատարանի 19.06.2018 թվականի վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.10.2018 թվականի «Պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/2077/02/16
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/2077/02/16

Նախագահող դատավոր՝ Ն. Կարապետյան

Դատավորներ՝ Ա. Մխիթարյան

Ն. Մարգարյան

ՈՐՈՇՈՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 06-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Արեն Տեպանոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ Սարգիս Նաչարյանի և Սևակ Տոնոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատարավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է համապարտության կարգով Սարգիս Նաչարյանից և Սևակ Տոնոյանից բռնագանձել գումար:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Ֆիդանյան) (այսուհետ՝ Դատարան) 07.10.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Սևակ Տոնոյանից և Սարգիս Նաչարյանից հոգուտ Բանկի համապարտության կարգով բռնագանձել 2.068.350 ՀՀ դրամ, ինչպես նաև ժամկետանց

վարկի գումարի 523.000 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 30.05.2016 թվականից մինչև փաստացի մարումը ներառյալ հաշվարկել և բռնագանձել վարկային պայմանագրի 3.3-րդ կետով նախատեսված տարեկան 36 տոկոսի չափով հաշվարկից առաջացած գումարները, ժամկետանց տոկոսագումարի՝ 182.427,20 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 30.05.2016 թվականից մինչև փաստացի մարումը ներառյալ հաշվարկել և բռնագանձել վարկային պայմանագրի 3.4-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց տոկոսի 0,2 տոկոսի չափով հաշվարկից առաջացած գումարները: Դատարանի 21.03.2018 թվականի որոշմամբ «Կատարողական թերթ տրամադրելու և այն կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին» Բանկի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.02.2019 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Վերաքննիչ դատարանի 07.03.2019 թվականի որոշմամբ Բանկի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածը, 371-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վերաքննիչ բողոքն առաջին անգամ Բանկին վերադարձնելիս, ի թիվս այլևի, վերադարձվել է վերաքննիչ բողոքի պատճենը, և Բանկը, ստանալով այն, կրկին բերած վերաքննիչ բողոքը ներկայացրել է պատճենի տեսքով: Տվյալ դեպքում վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, այն է՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմանը կից չի վերադարձվել Բանկի կողմից ստորագրված վերաքննիչ բողոքի բնօրինակը:

Այսինքն, Բանկին վերադարձվել է ներկայացված բողոքի պատճենը, իսկ բնօրինակը պահվել է քաղաքացիական գործում և նկատի ունենալով, որ բողոքում թույլ տրված խախտումը որևէ կերպ կապված չի եղել վերաքննիչ բողոքի բովանդակության հետ, Բանկի մոտ արդարացիորեն առաջացրել է ներքին համոզմունք առ այն, որ նման պայմաններում նոր վերաքննիչ բողոք ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

Ավելին, Բանկը, չստանալով ներկայացված բողոքի բնօրինակը, իրականում զրկված է եղել այն վերաքննիչ դատարան ներկայացնելու հնարավորությունից, որպիսի հանգամանքն ուղղակիորեն պայմանավորված է եղել հենց վերաքննիչ դատարանի գործողություններով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «վերացնել Վերաքննիչ դատարանի 07.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և գործն ուղարկել նոր քննության»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ աստիճանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին աստիճանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քա-

ղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեն, Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Եվրոպական դատարանի կողմից արտահայտված մեկ այլ դիրքորոշման համաձայն՝ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «(...) պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (*յրեն՝ u, Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի 14.03.2000 թվականի վճիռը, կետ 36*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*յրեն, Սուսաննա Արարայրի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միրհրանի Միրզոյանի թիվ ԱՐԱԳ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրացման կարգը և պայմանները: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր՝ նույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պահանջների պահպանմամբ: Վերաքննիչ բողոքը պետք է լինի ընթեռնելի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքում նշվում են՝(...) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Բողոքին կարող են կցվել բողոք բերող անձի այլ միջնորդությունները: Ներկայացուցչի ստորագրած բողոքին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե գործում բացակայում է լիազորագիրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, (...) սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերած անձին ուղարկվում են վերաքննիչ դատարանի որոշումը, **վերաքննիչ բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ գործին կցելով դրանց պատճենները:** Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ուղարկվում է նաև գործին մասնակցող այլ անձանց:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոնշյալ նորմերով սահմանվել են վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Ընդ որում, օրենսդիրն ամրագրել է այն բացասական հետևանքները, որոնք կարող են վրա հասնել այն պարագայում, երբ բողոք բերած անձը չի պահպանել վերաքննիչ բողոքի ներկայացման կարգին կամ ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Մինևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը բողոք բերող անձին հնարավորություն է տվել օրենքով սահմանված ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված խախտումները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու և այն կրկին ներկայացնելու դատավարական նորմերի վերլուծությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոք բերած անձի կողմից չեն պահպանվել վերաքննիչ բողոքին ներկայացվող և օրենքով սահմանված պահանջները, դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա դատարանը տրամադրում է օրենքով սահմանված ժամկետ դրանք վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար: Ընդ որում, նշված ժամկետը բողոք բերած անձին տրամադրվում է օրենքի ուժով և ենթակա չէ որևէ սահմանափակման: ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները, ըստ էության, դասակարգվում են երկու խմբի՝ առաջինն այն պայմաններն են, որոնք վերաբերում են վերաքննիչ բողոքի բովանդակությանը և ներառում են այն տեղեկությունների շրջանակը, որոնք պետք է արտացոլվեն վերաքննիչ բողոքում (...):

Երկրորդն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքին կցվող նյութերի ցանկին: Մասնավորապես՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է (կամ բողոքում ներառվում է) դրա վերաբերյալ միջնորդությունը: (...) *(տես, Գեորգի Ավետիսյանն ընդդեմ «Հանրապետական անասնաբուժասանհիւրարական և բուսասանհիւրարական լաբորատոր ծառայությունների կենտրոն»*

ՊՈԱԳ-ի թիվ ԵԷՊ/0327/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.03.2018 թվականի որոշումը):

Ի հավելումս վերը նշվածին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը՝ խախտումները վերացնելու համար որոշակի ժամկետի տրամադրմամբ վերադարձնելը նպատակ է հետապնդում հնարավորություն տալ դատական ակտը բողոքարկած անձին վերացնելու մատնանշված խախտումները և բողոքը կրկին ներկայացնել դատարան: Ընդ որում, օրենսդիրը, վերաքննիչ վարույթում սահմանելով վերաքննիչ բողոքը վերադարձնելու վերաքննիչ դատարանի լիազորությունը, միաժամանակ նախատեսել է պարտականություն՝ բողոք բերած անձին ուղարկելու վերաքննիչ դատարանի որոշումը, վերաքննիչ բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու պայմաններում վերաքննիչ դատարանի կողմից բողոք բերած անձին պետք է ուղարկվեն **միայն** վերը նշված փաստաթղթերի **բնօրինակները**՝ գործին կցելով դրանց պատճենները:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է վերաքննիչ վարույթի առանձնահատկությամբ: Վերաքննության վարույթը բաղկացած է մի քանի փուլերից, որոնցից է՝ վերաքննիչ վարույթի հարուցման փուլը, ինչն իր մեջ ներառում է վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացմանը և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուն ուղղված դատավարական գործողությունների ամբողջությունը:

Ըստ այդմ, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման կայացման դեպքում վերաքննության վարույթն այդպես էլ չի հարուցվում, ինչն իր հերթին պահանջում է վերաքննիչ բողոքարկման իրավունքից օգտված անձին վերադարձնելու այն **բոլոր փաստաթղթերի բնօրինակները**, որոնք անհրաժեշտ են նրան հետագայում՝ օրենքով սահմանված ժամկետում և կարգով իր բողոքարկման իրավունքը կրկին իրացնելու համար:

Տեսնաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանի կողմից չի պահպանվել վերը նշված օրենսդրական պահանջը, դատական ակտը բողոքարկած անձը չի կարող կրել դրանից բխող բացասական հետևանքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Բանկի ներկայացուցիչ Աշոտ Հարությունյանը Դատարանի 21.03.2018 թվականի «Կատարողական թերթ տրամադրելու և այն կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին» որոշման դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք (**հատոր 2-րդ, գ.թ. 2-32**):

Վերաքննիչ դատարանի 08.02.2019 թվականի որոշմամբ Բանկի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ «Բանկի դատական պաշտպանության վարչության պետ Աշոտ Հարությունյանին լիազորագիրը տվել է վարչության նախագահ Արսեն Միքայելյանը, սակայն Վերաքննիչ դատարան չի ներկայացվել բնօրինակ կամ պատշաճ վավերացված փաստաթուղթ առ այն, որ Արսեն Միքայելյանը Բանկի վարչության նախագահն է»: Նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ սույն գործում առկա չէ պատշաճ փաստաթուղթ, որը հիմք կտար եզրահանգելու Արսեն Միքայելյանի՝ Բանկի ի պաշտոնն ներկայացուցիչ լինելու, հետևաբար նաև նրա կողմից լիազորված Աշոտ Հարությունյանի՝ որպես Բանկի ներկայացուցչի պատշաճ լիազորություններ ունենալու մասին: Միաժամանակ նշված որոշմամբ սահմանվել է եռօրյա ժամկետ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար (**հատոր 2-րդ, գ.թ. 34-36**):

Բանկը փոստային ծառայության միջոցով 21.02.2019 թվականին դիմումով կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ ներկայացնելով առաջին անգամ ներկայացրած վերաքննիչ բողոքի պատճենը: Նշված վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է Բանկի խորհուրդի 18.10.2013 թվականի թիվ 390-Ա որոշման պատճենը, որի համաձայն՝ 14.10.2013 թվականից Բանկի խորհուրդը Արսեն Միքայելյանին հաստատել է Բանկի վարչության նախագահի պաշտոնում (**հատոր 2-րդ, գ.թ. 46-80**):

Վերաքննիչ դատարանն իր 07.03.2019 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը կրկին վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ Վերաքննիչ դատարանն մուտքագրված վերաքննիչ բողոքը ներկայացված է պատճենի տեսքով, որի մասին Վերաքննիչ դատարանի գրասենյակի կողմից կազմվել է համապատասխան ակտ, ուստի Վերաքննիչ դատարանի գնահատմամբ այն ստորագրված չէ (ստորագրությունը պատճենի ձևով է): Վերը նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ ներկայացված վերաքննիչ բողոքը չի կարող գնահատվել որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված, որպիսի պայմաններում այն ենթակա է վերադարձման՝ առանց ժամկետի սահմանման (**հատոր 2-րդ, գ.թ. 82-83**):

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա՝ Բանկի կողմից *կրկին* ներկայացված *վերաքննիչ բողոքը պատճենի տեսքով է* (**հատոր 2-րդ, գ.թ. 46-56**):

Մինևս այն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Բանկի կողմից *առաջին անգամ* ներկայացված վերաքննիչ բողոքի բնօրինակը նույնպես գտնվում է սույն քաղաքացիական գործում (հատոր 2-րդ, գ.թ. 4-13):

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իր պարտականությունը, այն է՝ Վերաքննիչ դատարանը, իր 07.03.2019 թվականի որոշմամբ կրկին վերադարձնելով Բանկի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը, բողոք բերած անձին չի ուղարկել վերաքննիչ բողոքի բնօրինակը, ինչի հետևանքով բողոք բերած անձը զրկված է եղել վերաքննիչ բողոքը բնօրինակի ձևով կրկին ներկայացնելու հնարավորությունից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը չպահպանվելու դեպքում դատական ակտը բողոքարկած անձը չի կարող կրել դրանից բխող բացասական հետևանքները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերադարձնելով կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է բողոք բերած անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ խաթարելով այդ իրավունքի բուն էությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ սահմանափակումը չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, քանի որ չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իր պարտականությունը չկատարելու հետևանքով Բանկը զրկվել է իր գործի արդար դատաքն-

նության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի ենթադրյալ խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից, քանի որ գործնականում չի ապահովվել բողոքարկման ընթացակարգի միջոցով ենթադրյալ դատական սխալի բացահայտումը և ուղղումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԱՐԴ/2077/02/16 քաղաքացիական գործով 06.12.2019 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան), գրավոր ընթացակարգով քննելով «ՀԱՅԲԻԶՆԵՄԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացուցիչ Արեն Տեպանտյանի վճարելի բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Բանկի ընդդեմ Սարգիս Նաջարյանի և Սևակ Տոնոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, 2019 թվականի դեկտեմբերի 06-ին որոշել է «Վճարելի բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը»:

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորներ Ս. Անտոնյանս և Ա. Բարսեղյանս, համաձայն չլինելով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից 06.12.2019 թվականին թիվ ԱՐԴ/2077/02/16 քաղաքացիական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրավակիչ մասերի հետ, դեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նույն որոշման պատճառաբանական և եզրավակիչ մասերի վերաբերյալ:

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է համապարտության կարգով Սարգիս Նաջարյանից և Սևակ Տոնոյանից բռնագանձել գումար:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Ֆիդանյան) (այսուհետ՝ Դատարան) 07.10.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Սևակ Տոնոյանից և Սարգիս Նաջարյանից հոգուտ Բանկի համապարտության կարգով բռնագանձել 2.068.350 ՀՀ դրամ, ինչպես նաև ժամկետանց վարկի գումարի 523.000 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 30.05.2016 թվականից մինչև փաստացի մարումը ներառյալ հաշվարկել և բռնագանձել վարկային պայմանագրի 3.3-րդ կետով նախատեսված տարեկան 36 տոկոսի չափով հաշվարկից առաջացած գումարները, ժամկետանց տոկոսագումարի՝ 182.427,20 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 30.05.2016 թվականից մինչև փաստացի մարումը ներառյալ հաշվարկել և բռնագանձել վարկային պայմանագրի 3.4-րդ կետով նախատեսված յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց տոկոսի 0,2 տոկոսի չափով հաշվարկից առաջացած գումարները:

Դատարանի 21.03.2018 թվականի որոշմամբ «Կատարողական թերթ տրամադրելու և այն կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին» Բանկի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.02.2019 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Վերաքննիչ դատարանի 07.03.2019 թվականի որոշմամբ Բանկի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Սույն վճռաբեկ բողոքը քննվել է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածը, 371-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վերաքննիչ բողոքն առաջին անգամ Բանկին վերադարձնելիս, ի թիվս այլնի, վերադարձվել է վերաքննիչ բողոքի պատճենը, և Բանկը, ստանալով այն, կրկին բերած վերաքննիչ բողոքը ներկայացրել է պատճենի տեսքով: Տվյալ դեպքում վերաքննիչ դատարանի կողմից խախտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, այն է՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմանը կից չի վերադարձվել Բանկի կողմից ստորագրված վերաքննիչ բողոքի բնօրինակը:

Այսինքն, Բանկին վերադարձվել է ներկայացված բողոքի պատճենը, իսկ բնօրինակը պահվել է քաղաքացիական գործում և նկատի ունենալով, որ բողոքում թույլ տրված խախտումը որևէ կերպ կապված չի եղել վերաքննիչ բողոքի բովանդակության հետ, Բանկի մոտ արդարացիորեն առաջացրել է ներքին համոզմունք առ այն, որ նման պայմաններում նոր վերաքննիչ բողոք ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

Ավելին, Բանկը, չստանալով ներկայացված բողոքի բնօրինակը, իրականում զրկված է եղել այն վերաքննիչ դատարան ներկայացնելու հնարավորությունից, որպիսի հանգամանքն ուղղակիորեն պայմանավորված է եղել հենց վերաքննիչ դատարանի գործողություններով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «վերացնել Վերաքննիչ դատարանի 07.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և գործն ուղարկել նոր քննության»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով Բանկի ներկայացուցչի Աշոտ Հարությունյանը Դատարանի 21.03.2018 թվականի «Կատարողական թերթ տրամադրելու և այն կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին» որոշման դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք (հատոր 2-րդ, գ.թ. 2-32):

Վերաքննիչ դատարանի 08.02.2019 թվականի որոշմամբ Բանկի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ «Բանկի դատական պաշտպանության վարչության պետ Աշոտ Հարությունյանին լիազորագիրը տվել է վարչության նախագահ Արսեն Միքայելյանը, սակայն Վերաքննիչ դատարան չի ներկայացվել բնօրինակ կամ պատշաճ վավերացված փաստաթուղթ առ այն, որ Արսեն Միքայելյանը Բանկի վարչության նախագահն է»: Նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ սույն գործում առկա չէ պատշաճ փաստաթուղթ, որը հիմք կտար եզրահանգելու Արսեն Միքայելյանի՝ Բանկի ի պաշտոնե ներկայացուցչի լինելու, հետևաբար նաև նրա կողմից լիազորված Աշոտ Հարությունյանի՝ որպես Բանկի ներկայացուցչի պատշաճ լի-

ագորություններ ունենալու մասին: Միաժամանակ նշված որոշմամբ սահմանվել է եռօրյա ժամկետ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար (հատոր 2-րդ, գ.թ. 34-36):

Բանկը փոստային ծառայության միջոցով 21.02.2019 թվականին դիմումով կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ ներկայացնելով առաջին անգամ ներկայացրած վերաքննիչ բողոքի պատճենը: Նշված վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է Բանկի խորհրդի 18.10.2013 թվականի թիվ 390-Ա որոշման պատճենը, որի համաձայն՝ 14.10.2013 թվականից Բանկի խորհուրդը Արսեն Միքայելյանին հաստատել է Բանկի վարչության նախագահի պաշտոնում (հատոր 2-րդ, գ.թ. 46-80):

Վերաքննիչ դատարանն իր 07.03.2019 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը կրկին վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ Վերաքննիչ դատարան մուտքագրված վերաքննիչ բողոքը ներկայացված է պատճենի տեսքով, որի մասին Վերաքննիչ դատարանի գրասենյակի կողմից կազմվել է համապատասխան ակտ, ուստի Վերաքննիչ դատարանի գնահատմամբ այն ստորագրված չէ (ստորագրությունը պատճենի ձևով է): Վերը նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ ներկայացված վերաքննիչ բողոքը չի կարող գնահատվել որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված, որպիսի պայմաններում այն ենթակա է վերադարձման՝ առանց ժամկետի սահմանման (հատոր 2-րդ, գ.թ. 82-83):

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործում առկա՝ Բանկի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը պատճենի տեսքով է (հատոր 2-րդ, գ.թ. 46-56):

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Բանկի կողմից առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքի բնօրինակը նույնպես գտնվում է սույն քաղաքացիական գործում (հատոր 2-րդ, գ.թ. 4-13):

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իր պարտականությունը, այն է՝ Վերաքննիչ դատարանը, իր 07.03.2019 թվականի որոշմամբ կրկին վերադարձնելով Բանկի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը, բողոք բերած անձին չի ուղարկել վերաքննիչ բողոքի բնօրինակը, ինչի հետևանքով բողոք բերած անձը զրկված է եղել վերաքննիչ բողոքը բնօրինակի ձևով կրկին ներկայացնելու հնարավորությունից:

Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը չպահպանվելու դեպքում դատական ակտը բողոքարկած անձը չի կարող կրել դրանից բխող բացասական հետևանքները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերադարձնելով կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է բողոք բերած անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ խաթարելով այդ իրավունքի բուն էությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ սահմանափակումը չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, քանի որ չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև առկա չէ համաչափության

ողջամիտ հարաբերակցություն: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իր պարտականությունը չկատարելու հետևանքով Բանկը գրկվել է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի ենթադրյալ խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից, քանի որ գործնականում չի ապահովվել բողոքարկման ընթացակարգի միջոցով ենթադրյալ դատական սխալի բացահայտումը և ուղղումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարել է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ համաձայն չենք, գտնում ենք, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժվեր հետևյալ պատճառաբանությամբ.

Վերաքննիչ դատարանը 07.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրել է, որ 25.02.2019 թվականին մուտքագրված վերաքննիչ բողոքը ներկայացված է պատճենի տեսքով, որի մասին Վերաքննիչ դատարանի գրասենյակի կողմից 25.02.2019 թվականին կազմվել է համապատասխան ակտ:

Վերագրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրակացության, որ վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման այն հիմնավորմամբ, որ այն ստորագրված չէ (ստորագրությունը պատճենի ձևով է):

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարել բողոք բերած անձի պատճառաբանությունները այն մասին, որ վերաքննիչ բողոքը պատճենի ձևով ներկայացնելը պայմանավորված է եղել Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պարտավորությունը չկատարելու հետևանքով:

Գտնում ենք, որ վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումներն այն մասին, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թերությունները շտկված նոր բողոքը չի ստորագրվել և ներկայացվել է պատճենի ձևով՝ Վերաքննիչ դատարանի կողմից սկզբնական բողոքի ու կից փաստաթղթերի բնագրերը չվերադարձնելու պատճառով, բավարար հիմքեր չեն վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վերացնելու համար, քանի որ թերությունները շտկված նոր վերաքննիչ բողոքը ստորագրելու համար և օրենքի պահանջին համապատասխան ստորագրված բողոքը Վերաքննիչ դատարան կրկին ներկայացնելու համար չի կարող էական լինել վերաքննիչ դատարանի կողմից վերադարձված բողոքի բնօրինակի գտնվելու վայրը:

Այլ հարց կարող էր լինել, եթե Վերաքննիչ դատարանը բողոքին կից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները չվերադարձնելով, կրկին ներկայացված բողոքը վերադարձներ, որպես թերություն նշելով դրանց բնօրինակների բացակայությունը, ինչը չենք կարող ասել չստորագրելու դեպքում:

Վերաքննիչ բողոքը, բողոք բերած անձի ստորագրության պատճենի ձևով ներկայացնելը, թույլ չի տալիս դատարանին եզրահանգելու դատական ակտի կողմի բողոքարկելու դատավարական իրավունքն իրացնելու հստակ ցանկության մասին, որն իրականացվում է բացառապես բողոքը ստորագրելով (այդ թվում նաև օրենքով թույլատրելի էլեկտրոնային ձևով):

Հետևաբար՝ գտնում ենք, որ վճռարեկ բողոքը պետք է մերժել, իսկ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը պետք է թողնվեր օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Աստոնյան
Ա. Բարսեղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3194/02/17
2019թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3194/02/17

Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան

Դատավորներ՝ Ա. Խատատյան

Մ. Հարթենյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 27-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արտակ Քոչարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.02.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Երևան համայնքի ընդդեմ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գումարի բռնագանձման, պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, հողամասը Երևան համայնքին վերադարձնելուն պարտավորեցնելու և որպես հետևանք՝ իրավունքի գրանցումը դադարեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատարարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Երևան համայնքը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 2.672.154 ՀՀ դրամ, որից 2.530.729 ՀՀ դրամը՝ 15.06.2017 թվականի դրությամբ հաշվարկված վարձավճարի պարտքի գումար, իսկ 141.425 ՀՀ դրամը՝ նույն ժամանակահատվածի

համար հաշվարկված տույժի գումար, ինչպես նաև 15.06.2017 թվականից սկսված մինչև սույն գործով դատական ակտի կայացման օրվա դրությամբ առաջացող վարձավճարի և դրա ուշացման համար հաշվարկվող տույժի գումարը, լուծել Ընկերության հետ 08.12.2000 թվականին, 22.02.2002 թվականին, 29.12.2003 թվականին կնքված և նոտարական վավերացման ենթարկված պայմանագրերը՝ Երևան քաղաքի Հրազդանի կիրճում համապատասխանաբար 1850քմ, 200քմ և 2050քմ մակերեսներով հողամասերի վարձակալության վերաբերյալ և պարտավորեցնել Ընկերությանը նշված մակերեսներով տարածքներն ազատ վիճակում վերադարձնել Երևան համայնքին, ինչպես նաև վերացնել Ընկերության անվամբ կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումները:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 18.10.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.12.2018 թվականի որոշմամբ Դատարանի 18.10.2018 թվականի վճռի դեմ Ընկերության ներկայացուցչի կողմից բերված վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով ժամկետ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Վերաքննիչ դատարանի 13.02.2019 թվականի որոշմամբ Դատարանի 18.10.2018 թվականի վճռի դեմ Ընկերության ներկայացուցչի կողմից բերված վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Վերաքննիչ դատարանի 28.12.2018 թվականի որոշումը ստանալուց և վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումը վերացնելուց, այն է՝ պակաս մասով պետական տուրքը վճարելուց հետո, սահմանված ժամկետում կրկին ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ սկզբնական ներկայացված փաստաթղթերի ամբողջ ցանկով և պետական տուրքի վճարման անդորրագրով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վերաքննիչ բողոքը կրկին դատարան է ներկայացվել բովանդակային առումով նույնությամբ՝ 07.12.2018 թվականի դրոշմակնիքով, այսինքն՝ կրկին ներկայացվել է սկզբնական վերաքննիչ բողոքը՝ այն դատավարության մասնակիցներին ուղարկված լինելու փաստը հաստատող փոստային անդորրագրերով:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին չի կցվել դրա օրինակը հայցվորին ուղարկելու փաստը հաստատող որևէ ապացույց, իսկ բողոքին կցված փոստային անդորրագիրը վերաբերելի չէ 07.02.2019 թվականին կրկին ներկայացված բողոքին, հաշվի չի առել, որ վերաքննիչ բողոք բերած անձը վերացրել է բողոքում թույլ տված միակ խախտումը և վերաքննիչ բողոքը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել է դատարան: Հետևաբար կրկին ներկայացված նույն բովանդակություն

ունեցող բողոքի պատճենը կողմերին կրկին ուղարկելը չի բխում անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «վերացնել Վերաքննիչ դատարանի 13.02.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ»:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. այն դեպքում, երբ բողոքաբերի կողմից թույլ տրված խախտումը չի առնչվում բողոքի բովանդակությանը, արդյոք խախտումը շրջակայք հետք նոր բողոք ներկայացնելիս վերջինս պարտավոր է բողոքի պատճենները կրկին ուղարկել գործին մասնակցող անձանց:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական վխախտների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*տե՛ս, ի թիվս այլնի, Մուսաննաս Արարաթի Միրզոյանն ընդդեմ Մուսաննաս Միհրանի Միրզոյանի թիվ ԱԲՄԳ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում, անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքին (*մասնավորապես՝ Bellet v. France, 04.12.1995 թվական* -

նի վճիռը, կեսը 36, Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի 16.03.2010 թվականի վճիռը, կեսը 25), փաստել է, որ որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն ունենա (տե՛ս, «Նաիրի Ինչոբանս» ԱՄՊ ընկերությունն ընդդեմ Միեր Մուրադյանի թիվ ԿԳՆ/2503/03/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.05.2019 թվականի որոշումը): Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ **օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը** (տե՛ս, *Dumitru Gheorghe v. Romania* գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կեսը 28):

Եվրոպական դատարանի կողմից արտահայտված մեկ այլ դիրքորոշման համաձայն՝ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «(...) պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (տե՛ս, *Khalfaoui v. France* գործով Եվրոպական դատարանի 14.03.2000 թվականի վճիռը, կեսը 36):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը սահմանում է վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրացման կարգը և պայմանները: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր՝ նույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պահանջների պահպանմամբ: Վերաքննիչ բողոքը պետք է լինի ընթեռնելի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերն ուղարկվում կամ հանձնվում են վերաքննիչ դատարան: Բողոք ներկայացնողը վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկում է գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքում նշվում են՝ (...) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքին [ի թիվս այլնի] կցվում են (...), բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝ չեն պահպանվել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերով սահմանվել են վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Ընդ որում, օրենսդիրն ամրագրել է այն բացասական հետևանքները, որոնք կարող են վրա հասնել այն պարագայում, երբ բողոք բերած անձը չի պահպանել վերաքննիչ բողոքի ներկայացման կարգին կամ ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը բողոք բերող անձին հնարավորություն է տվել օրենքով սահմանված ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված խախտումները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու և այն կրկին ներկայացնելու դատավարական նորմերի վերլուծությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոք բերած անձի կողմից չեն պահպանվել վերաքննիչ բողոքին ներկայացվող և օրենքով սահմանված պահանջները, դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա դատարանը տրամադրում է օրենքով սահմանված ժամկետ դրանք վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար: Ընդ որում, նշված ժամկետը բողոք բերած անձին տրամադրվում է օրենքի ուժով և ենթակա չէ որևէ սահմանափակման: ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները, ըստ էության, դասակարգվում են երկու խմբի՝ առաջինն այն պայմաններն են, որոնք վերաբերում են վերաքննիչ բողոքի բովանդակությանը և ներառում են այն տեղեկությունների շրջանակը, որոնք պետք է արտացոլվեն վերաքննիչ բողոքում (...):

Երկրորդն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքին կցվող նյութերի ցանկին: Մասնավորապես՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է (կամ բողոքում ներառվում է) դրա վերաբերյալ միջնորդությունը: (...) *(տե՛ս, Գեորգի Ավետիսյանն ընդդեմ «Հանրապետական անասնաբուժասանհիպարական և բուսասանհիպարական լաբորատոր ծառայությունների կենտրոն»*

ՊՈԱԿ-ի թիվ ԵԷԴ/0327/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.03.2018 թվականի որոշումը):

Վերահաստատելով վկայակոչված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը, ի թիվս այլնի, վերաքննիչ բողոքին պարտադիր կցվող փաստաթղթերի ցանկում ներառել է նաև վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճենները՝ դատական ակտը կայացրած դատարանին և գործին մասնակցող անձանց ուղարկելու վերաբերյալ ապացույցները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված օրենսդրական կարգավորումը բխում է քաղաքացիական դատավարությունում գործող մրցակցության սկզբունքի էությունից և նպատակ է հետապնդում ապահովելու մյուս կողմի՝ իր գործը հավասար պայմաններում ներկայացնելու դատավարական ընթացակարգը: Այսպես, ստանալով վերաքննիչ բողոքը և ծանոթանալով դրա բովանդակությանը՝ գործին մասնակցող անձն օրենքով սահմանված կարգով իրականացնում է վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իր դատավարական իրավունքը: Ուստի ցանկացած պարագայում դատարանը պարտականություն է կրում ստուգելու՝ արդյոք բողոք բերած անձը բողոքն ուղարկել է գործին մասնակցող այլ անձանց, և արդյոք այն ուղարկվել է ճիշտ հասցեով, քանի որ դրա հիման վրա է դատարանն ապահովում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների պատշաճ իրականացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը, 24.09.2019 թվականի ՄԴՈ-1477 որոշմամբ անդրադառնալով վերաքննիչ բողոքը վերադարձնելու իրավական կարգավորումներին, արձանագրել է, որ «վերաքննիչ բողոքը վերադարձնելու ինստիտուտն ուղղված է բողոք բերող անձի՝ դատական ակտը բողոքարկելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի իրականացման համար արդյունավետ կառուցակարգի սահմանմանը և որևէ պարագայում ձևական բնույթի թերությունները չպետք է խոչընդոտեն դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացմանը: Մյուս կողմից, կարևորելով դատավարական ընթացակարգերին հետևելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ողջամիտ ժամկետում դատաքննության իրականացման սահմանադրաիրավական պահանջը, օրենսդիրը սահմանել է դրույթ, համաձայն որի՝ վերադարձնելուց հետո կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում: Այսինքն՝ վերաքննիչ բողոքի վերադարձման ինստիտուտն ընդհանուր առմամբ ապահովում է բողոքի հետ կապված թերությունների վերացման և այդ ինստիտուտի չարաշահման անթույլատրելիության միջև պատշաճ հավասարակշռությունը»:

Միաժամանակ վերը նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարել շեշտել, որ «օրենսդրի նպատակը ոչ թե բողոք բերած անձին ծանրաբեռնելն է, որևէ չարդարացված պարտականությամբ, այլ երաշխավորելը, որ գործին մասնակցող անձանց հասանելի լինի բողոքի բովանդակությունը, որը վերջիններիս հնարավորություն կտա արդյունավետորեն պաշտպանվել բողոքում ներկայացված պահանջներից, այսինքն՝ գործին մասնակցող անձինքն հնարավորություն կունենան արդյունավետորեն իրականացնելու դատական պաշտպանության իրենց հիմնական իրավունքը»:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքին, այն է՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝ չեն պահպանվել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները, ՀՀ սահմանադրական դատարանը փաստել է, որ «վերոհիշյալ հիմքով (...) վերադարձված

վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում սույն գործով վիճարկվող դրույթները **չպետք է մեկնաբանվեն տառացի՝ զրկելով անձին վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրականացման հնարավորությունից:** (...) կրկին ներկայացվող վերաքննիչ բողոքի հետ կապված կառուցակարգերը չպետք է անհարկի ծանրաբեռնեն անձանց: Այս առումով (...) կիրառելի է նաև Սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 18-ի ՍԴՌ-1363 որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի. «(...) երբ Վճռաբեկ դատարանի մատնանշած թերությունները չեն առնչվի վճռաբեկ բողոքի տեքստին, նույն բողոքի պատճենն [իրավահարաբերության ծագման պահին գործող] օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց կրկին ուղարկելու մասին ապացույցներ ներկայացնելու պահանջն անհարկի ծանրաբեռնում է ոչ միայն բողոքաբերին, այլ նաև համապատասխան կողմերին, որոնք ստիպված են լինելու կրկին ուսումնասիրել նույնաբովանդակ բողոքը: Այդ տեսանկյունից վերադարձնելուց հետո կրկին ներկայացված նույն տեքստն ունեցող բողոքի պատճենը կողմերին կրկին ուղարկելը չի բխում ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից և չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ»:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործով Դատարանի վճռի դեմ Ընկերության ներկայացուցիչը 05.12.2018 թվականին փոստային առաքման եղանակով ներկայացրել է վերաքննիչ բողոք: Միաժամանակ վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է պետական տուրքի վճարման անդորրագիրը՝ 10.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև 05.12.2018 թվականի փոստային անդորրագրերը՝ բողոքը (բողոքի պատճենը) հայցվորին և Դատարանին ուղարկելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 94-101, 122**):

Վերաքննիչ դատարանի 28.12.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքին կցվել է սահմանվածից պակաս չափով պետական տուրքի վճարման փաստը հաստատող ապացույց, իսկ պակաս վճարված մասով պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ բողոք բերած անձի միջնորդությունը ենթակա չէ բավարարման, քանի որ բողոք բերած անձը չի ներկայացրել իր գույքային ծանր դրությունը հաստատող ապացույցները: Նշված որոշմամբ մերժվել է պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ բողոք բերած անձի միջնորդությունը և սահմանվել է տասնհինգօրյա ժամկետ՝ որոշումն ստանալու պահից վերաքննիչ բողոքի խախտումը վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 123-124**):

Ընկերության ներկայացուցիչը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ դրան կցելով և՛ նախկինում ներկայացված՝ 10.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը, և՛ ևս 100.200 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը, ինչպես նաև 05.12.2018 թվականի փոստային անդորրագրերը՝ բողոքը (բողոքի պատճենը) հայցվորին և Դատարանին ուղարկելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 132-141**):

Վերաքննիչ դատարանը, 13.02.2019 թվականի որոշմամբ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Ընկերության ներկայացուցչի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձրել է՝ պատճառ-

նաբանելով, որ «(...) կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին չի կցվել դրա օրինակը հայցվորին ուղարկելու փաստը հաստատող որևէ ապացույց (ինչ վերաբերում է կրկին ներկայացված բողոքին կցված՝ «RR261149394AM» կողք կողո և հայցվորին հասցեագրված թիվ 76 առաքանու փոստային անդորրագրին, ապա դրանով հավաստվում է միայն 05.12.2018թ. սկզբնապես ներկայացված բողոքը նույն օրը հայցվորին ուղարկված լինելու փաստը, և այն վերաբերելի չէ 07.02.2019թ. կրկին ներկայացված բողոքին), մինչդեռ սկզբնապես ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին 28.12.2018թ. որոշմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ««բողոքը կրկին ներկայացնել» արտահայտությունը հարկ է ընկալել տառացի նշանակությամբ՝ այս հնարավորությունից օգտվելու ցանկության դեպքում բողոք բերած անձը կրկին պետք է ներկայացնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող և դրանում նշված փաստաթղթերով ուղեկցվող վերաքննիչ բողոք (...)» (հատոր 1-ին, գ.թ. 182-183):

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Տվյալ դեպքում Ընկերության կողմից առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքի՝ Վերաքննիչ դատարանի 28.12.2018 թվականի որոշմամբ արձանագրված խախտումը չի առնչվել վերաքննիչ բողոքի տեքստին, մասնավորապես՝ վերաքննիչ բողոքը վերադարձվել է պետական տուրքը պակաս վճարված լինելու և պակաս վճարված մասով պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ բողոք բերած անձի միջնորդությունը բավարարման ենթակա չլինելու հիմքով: Հետագայում, վերաքննիչ բողոք բերած անձը Վերաքննիչ դատարանի կողմից սահմանված ժամկետում վերացրել է վերը նշված խախտումը և կրկին ներկայացրել վերաքննիչ բողոք: Միաժամանակ, ի թիվս այլնի, կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքին կցել է նաև բողոքը (բողոքի պատճենը) հայցվորին և Դատարանին ուղարկելու վերաբերյալ 05.12.2018 թվականի փոստային անդորրագրերը:

Սույն գործում առկա ինչպես առաջին անգամ, այնպես էլ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքների ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրանք նույնաբովանդակ են: Ավելին, սկզբնական բողոքի կապակցությամբ արձանագրված խախտումը չի առնչվել բողոքի բովանդակությանը և հետագայում վերաքննիչ բողոք բերած անձի կողմից վերացվել է: Ընդ որում, վերաքննիչ բողոք բերած անձն առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքը (բողոքի պատճենը) 05.12.2018 թվականին փոստային առաքման եղանակով ուղարկել է հայցվորին՝ Երևան համայնքին, և Դատարանին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է և Վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված խախտումը չի վերաբերել վերաքննիչ բողոքի բովանդակությանը, ապա վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել օրենսդրի նպատակը: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանը, 24.09.2019 թվականի ՍԴՈ-1477 որոշմամբ վերլուծելով նշված իրավանորմը, արձանագրել է, որ «վերոհիշյալ հիմքով (...) վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում սույն գործով վիճարկվող դրույթները չպետք է մեկնաբանվեն տառացի՝ զրկելով անձին վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրականացման հնարավորությունից: (...)»: Վճռաբեկ դատարանի վերը նշված հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նույն բողոքը (բողոքի

պատճենը) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց կրկին ուղարկելու մասին ապացույցներ ներկայացնելու պահանջն անհարկի ծանրաբեռնում է ոչ միայն բողոքաբերին, այլ նաև համապատասխան կողմերին, որոնք ստիպված են կրկին ուսումնասիրել նույնաբովանդակ բողոքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության ներկայացուցիչը, ըստ էության, կատարել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ բողոքը (բողոքի պատճենը) գործը քննող դատարանին և դատավարության մյուս կողմին ուղարկելու պարտականությունը, հետևաբար հայցվոր կողմին այն կրկին ուղարկելու մասին ապացույց ներկայացնելու Վերաքննիչ դատարանի պահանջն անհարկի ծանրաբեռնում է բողոքաբերին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, անհիմն կերպով վերադարձրել է Ընկերության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը՝ վերջինիս գրկելով Դատարանի 18.10.2018 թվականի վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից, միաժամանակ սահմանափակելով նրա՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը՝ արդյունքում թույլ տալով այնպիսի դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 13.02.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.02.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ ՍԴՁ/0037/04/16

2019թ.

Մասնկության գործ թիվ ՍԴՁ/0037/04/16

Նախագահող դատավոր՝ Մ. Հարթենյան

Դատավորներ՝ Կ. Զիլինգարյան

Ա. Խառատյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և
վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի փետրվարի 19-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ դիմումի ՀՀ կառավարությանն առընթեր պե-
տական եկամուտների կոմիտեի ընդդեմ «Ամիգո Արմեն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝
Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ
քաղաքացիական դատարանի 09.07.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժե-
լու մասին» որոշման դեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ներ-
կայացուցիչ Արման Մնացականյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմի-
տեն պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ժ. Ասատ-
րյան) 03.05.2017 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.07.2017 թվականի որոշ-

մամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.11.2017 թվականի որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջնորդությունը՝ պահանջի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին, բավարարվել է մասնակիորեն. պահանջի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի չի ճանաչվել, իսկ 500.000 ՀՀ դրամի չափով պահանջը գրանցվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետին համապատասխան հերթում:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Լ. Գրիգորյան, Գ. Խանդանյան, Հ. Ետքյան) 02.03.2018 թվականի որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.11.2017 թվականի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 15.05.2018 թվականի որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջնորդությունը՝ պահանջի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին, բավարարվել է մասնակիորեն. պահանջի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի չի ճանաչվել, իսկ 500.000 ՀՀ դրամի չափով պահանջը գրանցվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետին համապատասխան հերթում:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.07.2018 թվականի որոշմամբ Կոմիտեի՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Կոմիտեի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 09.04.2018 թվականից, 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժը կորցրել է: Հետևաբար այն պարագայում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում, ապա դրա ընդունելության հարցը լուծելիս չեն կարող կիրառվել 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.02.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի կիրառման պայմաններում Կոմիտեի միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, ենթակա կլիներ բավարարման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 09.07.2018 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույլ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի՝ ժամանակի մեջ գործողության առանձնահատկությունների վերաբերյալ կարող են էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունելության հարցը լուծելիս կարո՞ւն են արդյոք կիրառվել 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ սույլ նորմատիվ իրավական ակտով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մասի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը գործող հարաբերությունների վրա, եթե օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 439-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքին ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների, դիմումների և բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերը առաջին ատյանի դատարանում քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավադրույթներով ամրագրված են նորմատիվ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության կանոնները: Ըստ այդմ, ընդհանուր կանոնի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործո-

դուրսընթացում տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա: Այսինքն՝ նորմատիվ իրավական ակտը փաստացի իրավական հետևանքներ է առաջացնում դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած կամ գործող հարաբերությունների համար: Այս ընդհանուր կանոնից կարող է նախատեսվել բացառություն միայն ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով: Օրենսդիրը միաժամանակ սահմանել է, որ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մասի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը գործող հարաբերությունների վրա, եթե օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Այսինքն՝ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը չի կարող իրավական ազդեցություն ունենալ դրա՝ ուժը կորցնելուց հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Նման իրավակարգավորումը նպատակ ունի պաշտպանել հասարակական հարաբերությունների այն մասնակիցներին, ովքեր արդեն իսկ մտել են որոշակի իրավահարաբերությունների մեջ մինչև նոր իրավական ակտի ընդունումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս իրենց վարքագիծն արդեն իսկ համապատասխանեցրել են ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իմպերատիվ պահանջներին:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը որդեգրել է այն սկզբունքը, համաձայն որի՝ իրավական ակտերը կարգավորում են հասարակական հարաբերություններն այնքան ժամանակ, քանի դեռ չեն կորցրել իրենց իրավաբանական ուժը: Իրավաբանական ուժի մեջ գտնվելու հանգամանքով է պայմանավորված իրավական ակտի՝ հասարակական հարաբերությունների վրա ներազդելու հնարավորությունը: Այն ժամանակ, երբ նման ակտը կորցնում է իր իրավաբանական ուժը, դադարում է կարգավորել հասարակական հարաբերություններ, և այդ հարաբերությունների հնարավոր մասնակիցները դադարում են ունենալ իմպերատիվ պարտականություն՝ իրենց վարքագիծը համապատասխանեցնելու արդեն իսկ ուժը կորցրած իրավական ակտի պահանջներին: Միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ օրենսդիրը նշված ընդհանուր կանոնից թույլատրել է շեղում միայն այն դեպքում, երբ օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով անմիջականորեն այլ բան է նախատեսվել: Նման պայմաններում ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը կամ դրա մի մասը կարող է իրավական ազդեցություն ունենալ դրա՝ ուժը կորցնելուց հետո գործող իրավահարաբերությունների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ուժը կորցրած է ճանաչվել 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը: Մինևույն ժամանակ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Անցումային և եզրափակիչ դրույթներ» վերտառությամբ 439-րդ հոդվածը նախատեսել է որոշակի իրավակարգավորումներ, որոնք վերաբերում են արդեն իսկ ուժը կորցրած՝ 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի գործողությանը: Ըստ այդմ, օրենսդիրն անմիջականորեն նախատեսել է միայն երկու դեպք, որպիսի պարագայում կարող են կիրառվել ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը: Մասնավորապես՝ այդ նորմերը կիրառվում են 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերը քննելիս, ինչպես նաև մինչև նույն օրենսգրքի ուժի

մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների, դիմումների և բողոքների վարույթ ընդունելու հարցը լուծելիս: Այդ շրջանակներից դուրս 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը չեն կարող կիրառվել, քանի որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ուժը կորցրած նորմատիվ ակտի կամ դրա մի մասի դրույթներն իրավական ազդեցություն չեն կարող ունենալ դրա՝ ուժը կորցնելուց հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ համադրելով նորմատիվ ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնները 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի անցումային և եզրափակիչ դրույթների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 09.04.2018 թվականի դրությամբ առաջին ատյանի դատարանում քննվող գործերի նկատմամբ ենթակա են կիրառման 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը, սակայն այդ գործերով 09.04.2018 թվականից հետո վերաքննիչ բողոքարկում իրականացված լինելու պայմաններում պետք է կիրառվեն արդեն 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը: Միաժամանակ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բողոքարկված դատական ակտը կայացվել է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի շրջանակներում, ենթադրյալ դատական սխալի առկայությունը պետք է գնահատվի տվյալ դատական ակտի կայացման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի լույսի ներքո՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությանը սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ է ընդունվել 05.12.2016 թվականին (**հավելված 1-ին, գ.թ. 1-2**): «Պահանջի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի համարելու և հիմնավորվածությունը որոշելու մասին» որոշումը Դատարանի կողմից կայացվել է 15.05.2018 թվականին (**հավելված 2-րդ, գ.թ. 12-15**): Նշված որոշումը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ուղարկվել է 30.05.2018 թվականին՝ համաձայն թիվ RR255155271AM փոստային անդորրագրի (**հավելված 2-րդ, գ.թ. 16**): Դատարանի որոշումը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ստացել է 04.06.2018 թվականին (**հավելված 2-րդ, գ.թ. 22**):

Կոմիտեն վերաքննիչ բողոքի հետ միաժամանակ ներկայացրել է միջնորդություն՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ Դատարանի որոշումը ստացել է 04.06.2018 թվականին, որից էլ պետք է հաշվարկվի բողոքարկման ժամկետը (**հավելված 2-րդ, գ.թ. 28-36**): Կոմիտեի վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 25.06.2018 թվականին (**հավելված 2-րդ, գ.թ. 53**):

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կոմիտեի՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը, նշել է, որ Դատարանի որոշումը 04.06.2018 թվականին ստացված լինելու պայմաններում իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարու-

թյան օրենսգրքի իրավակարգավորումների լույսի ներքո վերաքննիչ բողոք կարող էր բերվել մինչև 19.06.2018 թվականը, մինչդեռ այն փոստային ծառայությանն է հանձնվել 25.06.2018 թվականին: Վերաքննիչ դատարանը 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի կիրառելիությունը հիմնավորել է այն հանգամանքով, որ գործը Դատարանում քննվել է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերին համապատասխան:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...) ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Առաջին ատյանի դատարանում դատական ակտի կայացման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված դատարանի որոշումը պատշաճ ձևով ուղարկվում է գործին մասնակցող անձանց՝ որոշումը կայացնելու օրվանից ետոքյա ժամկետում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, վերաքննության կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել

է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*լրեն, Սուսաննա Արարատի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միրհրանի Միրզոյանի թիվ ԱՐԱԿ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վստահացվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*լրեն, օրինակ, Khalfaoui v. France գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետեր 35-36, Papon v. France գործով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետ 90*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հետավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*լրեն, Stubbings and others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետեր 51, 55*):

Ավելին, Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ եթե ներպետական օրենսդրությամբ հստակ սահմանված է դատական որոշումը ծանուցելու՝ իրավասու մարմինների պարտականությունը, ապա դիմողի գանգատարկման իրավունքը չի կարող մերժվել, եթե ուշացումների պատճառն իշխանությունների պարտականությունների կատարումն է եղել, նույնիսկ եթե տեսականորեն դիմողն ունեցել է դատարանի որոշման մասին այլ աղբյուրներից տեղեկանալու հնարավորություն (*լրեն, Davran v. Turkey գործով Եվրոպական դատարանի 03.11.2009 թվականի վճիռը, կետեր 31-47*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը «Մանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասում հստակ նախատեսել է այն դատավարական ժամկետը,

որի ընթացքում սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել վերաքննության կարգով, այն է՝ դրանք կայացվելուց հետո 15-օրյա ժամկետում: Այդ ժամկետից հետո դատական ակտի բողոքարկումը հնարավոր է, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի: Ըստ այդմ, վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները, գտնում է, որ այն դեպքում, երբ բողոքարկման իրավունքի իրացման ժամկետի բացթողումը պայմանավորված է ստորադաս դատարանի անգործությամբ, բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս վերադաս դատարանը պետք է առաջնորդվի անձի իրավունքների դատական պաշտպանության ապահովման անհրաժեշտության և դատարանի մատչելիության սկզբունքներով:

Ընդ որում, այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.06.2016 թվականի թիվ ՍԴՈ-1290 որոշմամբ արձանագրել է, որ նախ՝ պետք է երաշխավորվի օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, ինչպես նաև այն, որ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (*ex jure*) պետք է ճանաչվի հարգելի: Միայն այս պայմաններում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձի համար երաշխավորված կլինեն ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված դիրքորոշումների համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ բողոքարկման ժամկետը բաց թողնելու դեպքում բողոքաբերի կողմից ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և համապատասխան ապացույցներ ներկայացնելը, իսկ վերադաս դատարանի կողմից նշված միջնորդության քննարկումը և ապացույցները գնահատելը, պարտադիր է: *Այն դեպքում, երբ պարզաճ ապացուցված է բողոքարկվող դատարանի ակտը բողոք բերած անձի կողմից իր կանքից անկախ պատճառներով ուշ սրանալու հանգամանքը և բողոքը ներկայացվել է դատարանի ակտը սրանալու օրվանից հաշված օրենքով սահմանված ժամկետում, վերադաս դատարանը բացթողած ժամկետը պետք է վերականգնի իրավունքի ուժով (ex jure) (լրե՛ս, Դոնարա Գրիգորյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, «Լուսանշան» ՊՈԱԿ-ի թիվ ԵԿԿ/2791/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.03.2017 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ՍԿ2/0037/04/16 սնանկության գործն առաջին ատյանի դատարանում քննվել է 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով, քանի որ Ընկերությանը սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ է ընդունվել 05.12.2016 թվականին և 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործի քննությունն առաջին ատյանի դատարանում շարունակվել է: Դատարանը «Պահանջի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի համարելու և հիմնավորվածությունը որոշելու մասին» որոշումը կայացրել է 15.05.2018 թվականին, այսինքն՝ այն ժամանակ, երբ արդեն ուժի մեջ է մտել 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգիրքը: Նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերվել 25.06.2018 թվականին, այսինքն՝ 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործողության շրջանակներում: Հետևաբար այդ բողոքը վարույթ ընդունելու, այդ թվում՝ բողոքարկման ժամկետների պահպանվածության հարցը պետք է լուծվեր 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների լույսի ներքո: Ինչ վերաբերում է ստորադաս դատարանի անգործությամբ պայմանավորված դատական ակտն ուշ ստանալու հանգամանքին, ապա դրան իրավական գնահատական պետք է տրվեր՝ հաշվի առնելով 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը, քանի որ գործն առաջին ատյանի դատարանում քննվել է նշված օրենսգրքի նորմերին համապատասխան: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատարանի որոշումը կայացվել է 15.05.2018 թվականին, սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ուղարկվել 30.05.2015 թվականին, այսինքն՝ 17.06.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված եռօրյա ժամկետի խախտմամբ: Դատարանի որոշումը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացվել է 04.06.2018 թվականին, իսկ վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 25.06.2018 թվականին, այսինքն՝ ստանալու պահից 15-օրյա ժամկետի պահպանմամբ (2018 թվականի հունիսի 9-ը, 10-ը, 16-ը, 17-ը, 23-ը և 24-ը եղել են ոչ աշխատանքային օրեր): Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոմիտեի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, այդ թվում՝ բողոքարկման ժամկետների պահպանված լինելու հարցը պետք է լուծվեր 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների լույսի ներքո: Նման պայմաններում, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի, օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը, ի տարբերություն 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների, որի շրջանակներում ոչ աշխատանքային օրերը ևս հաշվարկվում էին դատավարական ժամկետներում (եթե, իհարկե, ժամկետի վերջին օրը չէր համընկնում ոչ աշխատանքային օրվա հետ, որպիսի պարագայում ժամկետի ավարտման օր էր համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում Կոմիտեի միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ, ենթակա էր բավարարման, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից, որպիսի դատական սխալը հիմք է Վերաքննիչ դատարանի 09.07.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.07.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ ՇԴ/0016/04/18

2019թ.

Մասնկության գործ թիվ ՇԴ/0016/04/18

Նախագահող դատավոր՝ Գ. Խանդանյան

Դատավորներ՝ Լ. Գրիգորյան

Ա. Մկրտչյան

ՈՐՈՇՈՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող և զեկուցող

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի հուլիսի 31-ին

գրավոր ընթացակարգով քննելով Մելադա Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.09.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ դիմումի Գայանե Կիրակոսյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Գայանե Կիրակոսյանը պահանջել է իրեն ճանաչել սնանկ:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Բ. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 16.08.2018 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.09.2018 թվականի որոշմամբ Մելադա Սարգսյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մելադա Սարգսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասը և 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սնանկ ճանաչելու Դատարանի վճիռը վերաբերում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերի և անվճարունակության հատկանիշների առկայությանը կամ բացակայությանը: Հետևաբար տվյալ դեպքում շահագրգիռ անձինք են միայն պարտապանը և պարտատերը, այլ կերպ ասած՝ անձին սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռն անդրադառնում է միայն պարտապանի և պարտատիրոջ իրավունքներին, որպիսի պայմաններում արդարացված է օրենսդրի այն մոտեցումը, որ նշված դատական ակտը կարող են բողոքարկել միայն պարտապանը և պարտատերը (պարտատերերը):

Մինչդեռ, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Մելադա Սարգսյանի հանդեպ Գայանե Կիրակոսյանի պարտքը հաստատվում է 02.10.2014 թվականի թիվ ՇԴ/1349/02/14 վճռով, ինչն էլ հիմք ընդունելով Դատարանն իր կողմից կայացված 16.08.2018 թվականի վճիռն ուղարկել է նաև Մելադա Սարգսյանին՝ պարզաբանելով վճռի բողոքարկման կարգն ու ժամկետները:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, Մելադա Սարգսյանին ճանաչելով բողոքարկման իրավասություն չունեցող անձ, անտեսել է գործում առկա փաստաթղթերը, որոնցից ակնհայտ է, որ Մելադա Սարգսյանը հանդիսանում է նշված վճիռը բողոքարկելու իրավասություն ունեցող անձ: Արդյունքում վերջինս զրկվել է պարտատիրոջ կարգավիճակից և Գայանե Կիրակոսյանի կողմից իր նկատմամբ պարտավորություն կատարելու պահանջի իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «ամբողջությամբ բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 13.09.2018 թվականի թիվ ՇԴ/0016/04/18 սնանկության գործով կայացրած որոշումը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ կամավոր սնանկության դիմումի հիման վրա հարուցված գործով կայացված եզրափակիչ դատական ակտը պարտապիրոջ կողմից բողոքարկելու իրավական հնարավորության հարցին:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր

իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լաված լինելու իրավունք: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը (*յրե՛ս, ի թիվս այլնի, Ժաննա Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի և Վահան Տերյանն ընդդեմ Ժաննա Տերյանի թիվ ԵԱԵԿ/0563/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*յրեն, ի թիվս այլնի, Մուսաննա Արարարի Միրզոյանն ընդդեմ Մուսաննա Միրարանի Միրզոյանի թիվ ԱՐԱԿ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը, «Ֆասթ Սիվայ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Արրահամյանն ընդդեմ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում, անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքին, բազմիցս փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ

դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*Կե 'ս, «Կոնվենյու քանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Քրիստիանե Տոնյանի, Օլասանա Մեսրոբյանի թիվ ԵԿԴ/2357/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2019 թվականի որոշումը*):

Եվրոպական դատարանը նշել է նաև, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ **օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը** (*Կեն, Dumitru Gheorghe v. Romania գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անհրաժեշտ է համակցության մեջ մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռների և նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝ գործին մասնակցող անձինք:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով: Վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ

մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճիռը կարող են բողոքարկել պարտապանը, պարտատերը (պարտատերերը):

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել բացառապես տվյալ գործով պարտապան և/կամ պարտատեր հանդիսացող անձի կողմից, այսինքն՝ որպեսզի անձը կարողանա բողոքարկել իր շահերին առնչվող և իր իրավունքների ու պարտականությունների հետ անմիջականորեն կապված սնանկության գործով կայացված վճիռը, նա պետք է տվյալ գործով հանդիսանա կամ պարտապան, կամ պարտատեր:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրական նման կարգավորումն ինքնանպատակ չէ, այն բխում է սնանկության վարույթի առանձնահատկությունից: Մասնավորապես՝ անձին սնանկ ճանաչելը պայմանավորված է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի և անվճարունակության հատկանիշների առկայությամբ կամ բացակայությամբ, ինչն իր հերթին անդրադառնում է պարտապանի և պարտատիրոջ իրավունքների և օրինական շահերի վրա, որպիսի պայմաններում օրենսդրի կողմից սահմանված կարգավորումը կրում է իմպերատիվ բնույթ, այսինքն՝ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճիռը բողոքարկելու իրավունքը վերապահված է բացառապես պարտապանին կամ պարտատիրոջը:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցների ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չտոնահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը: ՀՀ վճռաբեկ դատարանը նաև փաստել է, որ պարտապանին սնանկ ճանաչելը պարտավորությունը ոչ պատշաճ կատարած պարտապանի նկատմամբ դատական այնպիսի միջամտություն է, որի պայմաններում սահմանափակվում է պարտապանի գործողությունների շրջանակը մինչև սնանկության վարույթի ավարտը, որպիսի կարգավորման նպատակը պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովելն է (*տե՛ս*, «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ն ընդդեմ Հարություն Վարդանյանի թիվ ԵՄԴ/0049/04/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե բողոքը ներկայացրել է այն անձը, որը դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է դատարանների կողմից գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման իրավական վերլուծությանը, ուստի սույն որոշմամբ կրկին դրան չի

անդրադառնում (տե՛ս, ի թիվս այլնի, Վարուժան Ավագյանն ընդդեմ Քնարիկ և Կորյուն Հարությունյանների թիվ ԵԱԲԴ/4311/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.05.2019 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշումը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադառնալով դատարանի ներքին համոզմունքի իրավական վերլուծությանը, արձանագրել է, որ այն չպետք է մեկուսացված լինի գործի փաստական հանգամանքներից և դրանում առկա ապացույցներից, այլ օբյեկտիվորեն պետք է հիմնվի դրանց վրա և լինի գործի բազմակողմանի և օբյեկտիվ քննության արդյունք: Միայն այդ պարագայում դատական ակտը կարող է համարվել օրինական, համոզիչ և հեղինակավոր ոչ միայն դատարանի համար, այլև դատական պաշտպանության դիմած անձանց համար: Նշվածից հետևում է, որ դատական ակտի հիմքում չեն կարող դրվել այնպիսի փաստեր, որոնց վերաբերյալ օբյեկտիվ և բազմակողմանի քննություն չի իրականացվել (տե՛ս, Զարուհի, Գայանե Ավագյաններն ընդդեմ Նսիրա Պերրոսյանի, Մարիա Ավագյանի թիվ ԵԿԴ/4379/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

Հավելելով վերը նշվածին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև նշել, որ ներքին համոզմունքը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա և ոչ մի դեպքում չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից կամայական դրսևորում: Այսինքն՝ ապացույցների գնահատման գործընթացում դատարանը պետք է զերծ մնա շահագրգիռ, կողմակալ և կանխակալ մոտեցում ցուցաբերելուց և դրանք հետազոտի տվյալ վեճի լուծման համար թույլատրելիության, վերաբերելիության, բավարարության և արժանահավատության տեսանկյունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գայանե Կիրակոսյանը Դատարան է ներկայացրել սեփական սնանկությունը ճանաչելու դիմում (**գ.թ. 3-5**):

Դատարանի 16.08.2018 թվականի վճռով դիմումը բավարարվել է (**գ.թ. 70-76**):

Վերաքննիչ դատարանը 13.09.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը մերժելով Մելադա Սարգսյանի վերաքննիչ բողոքի ընդունումը, պատճառաբանել է, որ «բողոքարկվող վճռի դեմ Մելադա Սարգսյանը վերաքննիչ բողոք բերելու իրավասություն չուներ (...) թիվ ՇԴ/0016/04/18 սնանկության գործով բողոքարկվող դատական ակտը վերաբերում է Գայանե Կիրակոսյանի սեփական նախաձեռնությամբ (...) սնանկ ճանաչելուն: (...) սնանկության գործով առկա չէ պարտատերերի և/կամ պարտատիրոջ պահանջների վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ, որով հնարավոր կլիներ պարզել, թե արդյո՞ք Մելադա Սարգսյանը հանդիսանում է Գայանե Կիրակոսյանի սնանկության գործով պարտատեր, որպիսի պարագայում նոր միայն վերջինս հնարավորություն կունենար բողոքարկելու սնանկ ճանաչելու վերաբերյալ (...) դատական ակտը: Վերաքննիչ դատարանը վերստին փաստում է, որ օրենսդրի հստակ պահանջն է՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռը բացառապես պարտապանի և պարտատիրոջ/պարտատերերի կողմից բողոքարկելը»:

Մինչդեռ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքում դրել է պարտատերերի և/կամ պարտատիրոջ պահանջների վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ առկա չլինելու հանգաման-

քը, մինչդեռ սույն գործում առկա ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.10.2014 թվականի թիվ ՇԴ/1394/02/14 վճռի ուսումնասիրությունից հետևում է, որ ըստ հայցի Մելադա Սարգսյանի ընդդեմ Վոլոդյա Կիրակոսյանի, **Գայանե Կիրակոսյանի**, Հովհաննես Կիրակոսյանի և Մեդա Թումանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.10.2014 թվականի թիվ ՇԴ/1394/02/14 վճռով, ի թիվս այլոց, Գայանե Կիրակոսյանից հոգուտ Մելադա Սարգսյանի ընդհանուր առմամբ բռնագանձվել է 14.935.341 ՀՀ դրամ, 858.677 ՀՀ դրամ, 381.733 ՀՀ դրամ, նույն վճռով վճռվել է նաև սկսած 03.10.2014 թվականից մինչև պարտավորության կատարման օրը ներառյալ պարտավորության գումարի՝ 14.076.664 ՀՀ դրամի չվճարված մասի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված չափով տոկոսներ և նույնպես համապարտության կարգով, ի թիվս այլոց, Գայանե Կիրակոսյանից բռնագանձվել է հոգուտ Մելադա Սարգսյանի (**գ.թ. 34-42**):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա են նաև Գայանե Կիրակոսյանի կողմից սեփական սնանկությունը ճանաչելու դիմումին կից ներկայացված ցուցակն ու հայտարարությունը, ըստ որոնց, Գայանե Կիրակոսյանն ընդունել է Մելադա Սարգսյանի նկատմամբ 14.935.341 ՀՀ դրամ պարտավորություն ունենալու հանգամանքը (**գ.թ. 13-14**):

Վերը նշվածը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա ապացույցները վկայում են Գայանե Կիրակոսյանի՝ Մելադա Սարգսյանի նկատմամբ դրամական պարտավորություն ունենալու, ինչպես նաև դրա հիման վրա Մելադա Սարգսյանի՝ Գայանե Կիրակոսյանի պարտատեր հանդիսանալու հանգամանքի մասին, ուստի Մելադա Սարգսյանը, «Մանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, Դատարանի 16.08.2018 թվականի վճիռը բողոքարկելու իրավասություն ունեցող անձ է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մելադա Սարգսյանը վերաքննիչ բողոքը ներկայացնելիս օգտվել է «Մանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ պարտապանին սնանկ ճանաչելու դատարանի վճիռը բողոքարկելու իրավունքից, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելով, խախտել է «Մանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, դրանով իսկ սահմանափակելով Մելադա Սարգսյանի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը, զրկելով վերջինիս իր իրավունքներին առնչվող Դատարանի 16.08.2018 թվականի վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 13.09.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.09.2018 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

Վարչական գործ թիվ **ՎԳ/5503/05/18**
2019թ.
ՎԳ/5503/05/18
Կ. Բաղդասարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող և զեկուցող

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 12-ին

քննարկելով ըստ հայցի Դավիթ Մելքոնյանի և Նորա Խաչատրյանի ընդդեմ ՀՀ կա-
ռավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կո-
միտե)՝ Նորա Խաչատրյանին տրված թիվ 1448651 սեփականության իրավունքի գրանց-
ման վկայականում՝ հողամասի տվյալները բաժնում, սեփականության իրավունքի տեսակի
վերաբերյալ 07.05.2010 թվականին կատարված թիվ 1 ուղղումը ոչ իրավաչափ ճանաչելու
պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 24.09.2018
թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ Նարինե Գաիջյանի ներկա-
յացուցիչ Քրիստինե Գալստյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Դավիթ Մելքոնյանը և Նորա Խաչատրյանը պահանջել են ոչ իրա-
վաչափ ճանաչել Նորա Խաչատրյանին տրված թիվ 1448651 սեփականության իրավունքի
գրանցման վկայականում՝ հողամասի տվյալները բաժնում, սեփականության իրավունքի

տեսակի վերաբերյալ 07.05.2010 թվականին կատարված թիվ 1 ուղղումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 14.05.2018 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանը 26.07.2018 թվականի որոշմամբ մերժել է դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ Նարինե Գաիջյանի դիմումը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.09.2018 թվականի որոշմամբ Նարինե Գաիջյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 26.07.2018 թվականի «Դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու դիմումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նարինե Գաիջյանի ներկայացուցիչը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ իրեն սպառած գործողության վիճարկումը չի բացառում հետագայում հայցվորների կողմից մեկ այլ դատական գործով պահանջի ներկայացում, ուստի Նարինե Գաիջյանի իրավունքներն անմիջականորեն շոշափվում են կամ կարող են շոշափվել սույն գործի քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով: Հետևաբար Նարինե Գաիջյանը պետք է սույն գործով դատավարության մեջ ներգրավվի որպես երրորդ անձ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.09.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածը, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականու-

թյունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երրորդ անձինք այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են կամ մարմինները, որոնց իրավունքները շոշափվում են կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, ինչպես նաև այն մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնց լիազորություններին առնչվում է կամ կարող է առնչվել ընդունվելիք դատական ակտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երրորդ անձինք դատավարության մեջ կարող են ներգրավվել իրենց դիմումի հիման վրա:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դատական ակտը անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է նաև որոշակի անձանց կամ մարմինների վրա, ապա վարչական դատարանը պարտավոր է այդ անձանց (մարմիններին) ներգրավել դատավարության մեջ որպես երրորդ անձ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով երրորդ անձ ներգրավելու հարցին, իր նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում սահմանել է, որ վարչական դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ դատավարության մեջ որպես երրորդ անձ ներգրավել այն անձանց, որոնց իրավունքները շոշափվելու են գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, այսինքն՝ ընդունվելիք դատական ակտն անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է այդ անձանց վրա: Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ անձի արդար դատաքննության իրավունքի էությունից և իրավական բովանդակությունից անկախորեն բխում է, որ դատավարության մասնակից չդարձված անձը պետք է ունենա իր խախտված իրավունքները բոլոր հնարավոր արդյունավետ միջոցներով վերականգնելու իրական հնարավորություն, եթե համապատասխան գործի քննության արդյունքներով կայացված դատական ակտն անմիջականորեն առնչվում է իր իրավունքներին ու պարտականություններին (*տե՛ս, «Բորզեր Քինգ Քոփորեյշն» ՄԳԼ-ի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0475/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրե-

լով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը: Այսինքն՝ նշված հայցատեսակի առարկան այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը, ինչպես նաև կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելն է (յրեն Արմեն Թոմանյանն ընդդեմ Կոտայքի մարզպետի թիվ ՎԳ/8765/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանել է վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողության վիճարկման հնարավորություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողության ոչ իրավաչափ ճանաչումը կարող է առաջացնել, փոփոխել կամ դադարեցնել որոշակի իրավահարաբերություն, կամ ապահովել անհրաժեշտ նախադրյալներ՝ որոշակի իրավահարաբերության ծագման, փոփոխման կամ դադարեցման համար: Վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցը, ինչպես և վարչական դատավարությունում առկա մյուս բոլոր հայցատեսակները, միտված են անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովմանը: Այսինքն՝ վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողությամբ ևս կարող են խախտվել (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով) անձի իրավունքներն ու ազատությունները, որոնց պաշտպանության համար էլ հենց այդ անձը դիմում է դատարան:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողության ոչ իրավաչափ ճանաչումը առաջացնում է իրավական հետևանքներ վարչական դատավարության մասնակիցների համար: Որպես կանոն՝ այդ իրավական հետևանքներն առաջանում են կողմերի՝ հայցվորի և պատասխանողի համար: Միևնույն ժամանակ, վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողության ոչ իրավաչափ ճանաչմամբ կարող են շոշափվել նաև գործով հայցվոր և պատասխանող չհանդիսացող անձանց իրավունքները: Հետևաբար վերջիններս պետք է ներգրավվեն վարչական մարմնի՝ իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի հիման վրա հարուցված գործում՝ որպես երրորդ անձ:

Սույն գործի փաստական հանգամանքներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործը հարուցվել է Դավիթ Մելքոնյանի և Նորա Խաչատրյանի կողմից ներկայացված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի հիման վրա, որով վերջիններս պահանջել են ոչ իրավաչափ ճանաչել Նորա Խաչատրյանին տրված թիվ 1448651 սեփականության իրավունքի գրանցման վկայականում՝ հողամասի տվյալները բաժնում, սեփականության իրավունքի տեսակի վերաբերյալ 07.05.2010 թվականին Կադաստրի կողմից կատարված թիվ 1 ուղղումը: Իրենց իրավական

շահագրգռվածությունը հայցվորները հիմնավորել են ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված գույքային վնասի հատուցում պահանջելու իրենց մտադրությամբ (**գործի հավելված, գ.թ. 3-7**):

Դատարան ներկայացրած դիմումով Նարինե Գաիջյանը պահանջել է իրեն ներգրավել սույն գործով դատավարության մեջ որպես երրորդ անձ՝ իր դիմումը պատճառաբանելով այն փաստարկով, որ ինքը Երևան քաղաքի Նոր-Արեշ 2-րդ փողոցի թիվ 37 բնակելի տան սեփականատերն է, որն իր և հայցվորների՝ Երևան քաղաքի Նոր-Արեշ 2-րդ փողոցի թիվ 37/1 հասցեի բնակելի տան սեփականատերերի ընդհանուր համատեղ սեփականությունն է: Հետևաբար ըստ Նարինե Գաիջյանի, ներկայացված հայցն անմիջականորեն շոշափում է իր իրավունքները (**գործի հավելված, գ.թ. 74-75**):

Դատարանը մերժել է դատավարության մեջ որպես երրորդ անձ ներգրավվելու վերաբերյալ Նարինե Գաիջյանի դիմումը՝ պատճառաբանելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ճանաչման հայցի իրավական հետևանքը դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո հայցվորների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված նպատակներից որևէ մեկին կամ բոլորին հասնելն է, հետևաբար Նարինե Գաիջյանի իրավունքները չեն կարող շոշափվել սույն վարչական գործով, քանի որ հայցը բավարարելու պայմաններում ոչ իրավաչափ է ճանաչվելու արդեն իսկ իրավաբանական ուժ չունեցող և իրեն սպառած գործողությունը, որի ոչ իրավաչափ ճանաչումը չի կարող որևէ կերպ առնչվել որևէ անձի իրավունքներին կամ օրինական շահերին:

Վերաքննիչ դատարանը մերժել է Նարինե Գաիջյանի վերաքննիչ բողոքը՝ համաձայնելով Դատարանի վերոգրյալ եզրակացության հետ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն հանգամանքը, որ հայցվորների կողմից ներկայացվել է իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ, դեռևս չի նշանակում, որ սույն գործով կայացվելիք դատական ակտը չի կարող առնչվել որևէ անձի իրավունքներին կամ օրինական շահերին:

Այսպես՝ ինչպես արդեն իսկ վերը նշվեց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը, ի թիվս այլնի, նախատեսում է կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հնարավորություն նաև այն դեպքի համար, երբ հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում:

Փաստորեն, իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու նպատակ ունեցող անձը կարող է հետագայում պահանջել գույքային վնասի հատուցում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է վարչական մարմինների կողմից ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտերի, նրանց կատարած ոչ իրավաչափ գործողությունների կամ ոչ իրավաչափ անգործության հետևանքով, այսինքն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնով: Հիշյալ օրենքի համապատասխան իրավադրույթների համակարգային վերլուծու-

թյան արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը ձևավորել է այն կայուն նախադեպային դիրքորոշումը, որի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը: Դրանից հետո միայն անձը պարտավոր է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադատության կամ դատական կարգով (*Կրեն, Տորա Մարգարյանի ընդդեմ Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի թիվ ՎԴ/0277/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2009 թվականի որոշումը*):

Անդրադառնալով ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի բավարարման հիմքերի բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Այսինքն՝ վարչական մարմինների պարտականությունների խախտման և վնասի պատճառման միջև պետք է առկա լինի իրավական նշանակություն ունեցող պատճառահետևանքային կապը (*Կրեն, Աշոտ Մարտիրոսյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի իրականացման նախադրյալը համապատասխան վարչական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ ճանաչված լինելն է: Հենց այդ նպատակով էլ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանել է այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով դատարան դիմելու հնարավորություն այն դեպքերի համար, երբ հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում (*Կրեն, Արմեն Թումանյանի ընդդեմ Կոտայքի մարզպետի թիվ ՎԴ/8765/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրեն սպառած գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով հայցվորի կողմից ներկայացված ճանաչման հայցի բավարարման դեպքում հայցվորը հնարավորություն է ստանում վարչական մարմնից պահանջել ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցում, որը, ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի, իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով:

Ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասի՝ եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախկին կամ այլ դրության վերականգնումը՝ որպես ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման եղանակ, կարող է հանգեցնել սեփականության իրավունքով անձին պատկանող գույքի կազմի կամ կարգավիճակի փոփոխության:

Տվյալ դեպքում սույն գործի փաստերից հետևում է, որ Նարինե Գաիջյանը Երևան քաղաքի Նոր-Արեշ 2-րդ փողոցի թիվ 37 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատերն է, իսկ սույն գործով հայցվորները՝ Երևան քաղաքի Նոր-Արեշ 2-րդ փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատերերը: Այդ երկու հասցեներում գտնվող անշարժ գույքերի համար առկա է ընդհանուր համատեղ սեփականություն՝ 0,052հա մակերեսով հողամասի տեսքով (**գործի հավելված, գ.թ. 18-21, 42, 57-60, 61, 62-63**): Ընդ որում, 0,052հա մակերեսով հողամասը ստացել է հայցվորների և Նարինե Գաիջյանի ընդհանուր համատեղ սեփականության կարգավիճակ հենց թիվ 1448651 սեփականության իրավունքի գրանցման վկայականում՝ հողամասի տվյալները բաժնում, սեփականության իրավունքի տեսակի վերաբերյալ 07.05.2010 թվականին Կադաստրի կողմից կատարված թիվ 1 ուղղման միջոցով: Հետևաբար նշված հասցեի բնակելի տան թիվ 1448651 սեփականության իրավունքի գրանցման վկայականում՝ հողամասի տվյալները բաժնում, սեփականության իրավունքի տեսակի վերաբերյալ 07.05.2010 թվականին Կադաստրի կողմից կատարված թիվ 1 ուղղումը ոչ իրավաչափ ճանաչելու հայցի հիման վրա հարուցված գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով կարող են շոշափվել Նարինե Գաիջյանի իրավունքները: Այսպես՝ իրենց համար բարենպաստ դատական ակտ կայացվելու պարագայում հայցվորները ձեռք կբերեն ոչ իրավաչափ վարչարարությամբ վնասի հատուցում պահանջելու իրավունք, որպիսին կարող է հանդիսանալ նաև նախկին դրության վերականգնումը: Վնասի հատուցման այդ եղանակի իրացումն էլ իր հերթին կարող է հանգեցնել հայցվորներին և Նարինե Գաիջյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կազմի կամ կարգավիճակի փոփոխության:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր ոք, ում իրավունքները շոշափվում կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, պետք է որպես երրորդ անձ ներգրավված լինի դատավարության մեջ՝ հնարավորություն ունենալով, անհրաժեշտության դեպքում, պաշտպանել իր իրավունքները: Հետևաբար Նարինե Գաիջյանի կողմից ներկայացված՝ երրորդ անձ ներգրավելու մասին միջնորդությունը ենթակա էր բավարարման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 24.09.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 26.07.2018 թվականի «Դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու դիմումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

Վարչական գործ թիվ ՎԳ/3317/05/17
2019թ.
ՎԳ/3317/05/17
Ք. Մկոյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի մայիսի 14-ին

քննարկելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.06.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ «Փարիզյան սուրճ ֆակտորի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատարարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ տնտեսական գարգացման և ներդրումների նախարարության մտավոր սեփականության գործակալության (իրավահաջորդ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության) (այսուհետ՝ Գործակալություն) կողմից «Վիոլենտ» ՍՊԸ-ի անվամբ թիվ 24788 համարով 26.07.2016 թվականին կատարված ապրանքային նշանի գրանցումը՝ միաժամանակ միջնորդելով վերականգնել հայցադիմում ներկայացնելու բաց թողնված ժամկետը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 25.04.2017 թվականի որոշմամբ բաց թողնված դատարարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Ընկերության միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժվել են:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.06.2017

թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.04.2017 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 51-րդ հոդվածի 1-ին մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը թույլատրում է ինչպես նույն օրենսգրքով, այնպես էլ այլ օրենքներով սահմանված ժամկետների կիրառությունը վարչական դատավարությունում: Տվյալ դեպքում որպես այլ օրենք հանդես է գալիս «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը, որի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասն ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանում է հնգամյա ժամկետ: Վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված երկամյա ժամկետը և ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգամյա ժամկետը միմյանց չեն հակասում. «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումը բացառություն է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված երկամյա ժամկետից: Անգամ, եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի միջև առկա է հակասություն, ապա նման հակասությունը չի կարող սահմանափակել Ընկերության դատական պաշտպանության իրավունքը և չի կարող մեկնաբանվել որպես դատավարական ժամկետները ոչ հարգելի պատճառով բաց թողած լինելու հիմք: Ավելին՝ ամեն դեպքում նյութական իրավունքի նորմին պետք է տրվի առավելություն դատավարական իրավունքի նորմի համեմատությամբ: Հետևաբար, Ընկերությունն ունեցել է ներքին համոզմունք, որ իր իրավունքների պաշտպանության համար ազգային օրենսդրությունը նախատեսում է ոչ թե երկամյա, այլ հնգամյա ժամկետ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ընկերության ներկայացրած միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ տվյալ դեպքում դատավարական ժամկետները բաց են թողնվել այն պատճառով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը դատարան դիմելու համար տարբեր ժամկետներ են նախատեսում: Հետևաբար անթույլատրելի է անձին գրկել դատական պաշտպանության իրավունքից, եթե օրենքներում առկա անհստակության պատճառով վերջինս ընտրել է թույլատրելի վարքագծերից մեկը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափ կերպով Ընկերությանը գրկել է դատական պաշտպանության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 20.06.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել

նոր դատական ակտ՝ «բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ սվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված նյութափրավական հիմքերով և նույն օրենքով կանխորոշված շահագրգիռ սուբյեկտների կողմից ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու իրավունքի իրացման ժամկետային սահմանների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) *ապրանքային նշանի գրանցումը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված նյութափրավական հիմքերով անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցն ի՞նչ ժամկետներում կարող է ներկայացվել վարչական դատարան,*

2) *«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետը պահպանված լինելու փաստը կարող է արդյո՞ք ինքնին (per se) հիմք հանդիսանալ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու համար:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային

պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով (...):

Վկայակոչված իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*սենս, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Մինչդեռ Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես,

որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*տևն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*տևն Khalfaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*): Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*տևն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումները՝ ըստ հայցատեսակների ամրագրելով այն իրավադադարեցնող դատավարական ժամկետները, որոնց ընթացքում համապատասխան սուբյեկտը կարող է դիմել վարչական դատարան:

Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ գուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական գործողությունները կատարվում են նույն օրենսգրքով, այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետներում, իսկ դրանց սահմանված չլինելու դեպքում՝ դատարանի սահմանած ժամկետներում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով

պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Ման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե լրացել են հայցադիմում ներկայացնելու համար նույն օրենսգրքով սահմանված ժամկետները, իսկ ժամկետները վերականգնելու մասին միջնորդությունը վարչական դատարանը մերժել է:

Վերոգրյալ իրավադրույթների համակարգային վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանելով վարչական դատարանում գործի հարուցման հիմքը՝ համապատասխան հայցը, միաժամանակ, նույն օրենսգրքի 72-րդ հոդվածում նախատեսել է այն ժամկետները, որոնց ընթացքում հայցը կարող է ներկայացվել վարչական դատարան: Ամրագրելով վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետները՝ օրենսդիրը հատուկ նախատեսել է նաև բաց թողնված ժամկետները վերականգնելու իրավական հնարավորությունը համապատասխան միջնորդության և հարգելի պատճառների առկայության դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերի համար ամրագրել է, որ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված վերոգրյալ հիմնարար իրավունքների լույսի ներքո:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի կիրառելիության և բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնման հարցին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ, երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության պատճառով:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված դատավարական ժամկետը հար-

գելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները (*Կրենս, օրինակ, ժաննա Միրզոյանն ընդդեմ ՀՀ Կոբայքի մարզի Չորաղբյուր համայնքի ղեկավարի թիվ ՎԳ/0100/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 31.07.2017 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է նաև այն իրավական դիրքորոշումը, որ գրավոր վարչական ակտի ընդունումը բավարար չէ գրավոր վարչական ակտի իրավական համակարգում ի հայտ գալու և գործելու համար. դրա համար անհրաժեշտ է, որպեսզի օրենքով սահմանված կարգով այդ վարչական ակտը մտնի ուժի մեջ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրենսդիրը վարչական ակտը վիճարկելու օրենքով սահմանված ժամկետի հոսքը պայմանավորել է ոչ թե վարչական ակտի ընդունմամբ, այլ այդ ակտի օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու հետ: ՀՀ վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ, գտել է, որ վարչական ակտի վիճարկման պարագայում անձի՝ դատարան դիմելու համար սահմանված ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ վարչական ակտի հասցեատերը տեղեկացել է իր նկատմամբ տվյալ վարչական ակտի ընդունման մասին, այլ խոսքով՝ օրենքով սահմանված կարգով վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո (*Կրենս, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիրայի թիվ ՎԳ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թվականի որոշումը*):

Միևնույն ժամանակ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն ապրանքային նշանի գրանցումը՝ որպես վարչական ակտ, անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական հայց ներկայացնելու ժամկետների կապակցությամբ այլ իրավակարգավորում է սահմանել ապրանքային և սպասարկման նշանների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտում՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում:

Այսպես՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցումը կարող է անվավեր ճանաչվել դատարան ներկայացված համապատասխան հայցի կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա (...):

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի համաձայն հայց կարող է ներկայացնել ավելի վաղ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի կամ նույն մատում նշված ավելի վաղ այլ իրավունքի տիրապետողը՝ ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրվանից կամ նույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ առանց գրանցման պահպանություն տրամադրելու օրվանից հետո՝ 5 տարվա ընթացքում:

Վերոնշյալ իրավադրույթների համակարգային վերլուծությունը վճռաբեկ դատարանին թույլ է տալիս կատարելու հետևյալ դատողությունները.

1) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը ամրագրում է ապրանքային նշանի գրանցումը դատական կարգով անվավեր ճանաչելու նյութաիրավական հիմքերը,

2) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը կանխորոշում է ապրանքային նշանի գրանցումն այդ նյութաիրավական հիմքերով անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու շահագրգիռ սուբյեկտների շրջանակը,

3) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը սահմանում է նույն օրենքով ամրագրված նյութաիրավական հիմքերով և նույն օրենքով կանխորոշված շահագրգիռ սուբյեկտների կողմից ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու իրավունքի իրացման ժամկետային սահմանը, որը հանգում է հետևյալին.

- օրենքով կանխորոշված շահագրգիռ սուբյեկտները կարող են ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայց ներկայացնել դատարան 5 տարվա ընթացքում,

- այդ հնգամյա ժամկետի սկիզբ է համարվում ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրը կամ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանին առանց գրանցման պահպանություն տրամադրելու օրը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու համար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգամյա ժամկետն այն առավելագույն ժամկետային սահմանն է, որի ընթացքում շահագրգիռ անձը կարող է դիմել դատարան՝ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու համար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգամյա ժամկետը նյութաիրավական իրավադադարեցնող ժամկետ է, որի լրանալուց հետո շահագրգիռ անձը զրկվում է ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու համապատասխան հայցով դատարան դիմելու իրավունքից: «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով այդպիսի ժամկետ նախատեսելն ունի գործնական կարևոր նշանակություն. այն հնարավորություն է տալիս վարչական դատարանին ժամանակին բացահայտելու գործի հանգամանքները և կայացնելու ճիշտ դատական ակտ, պաշտպանում է ապրանքային նշանների օգտագործման հետ կապված քաղաքացիական հարաբերությունների կայունությունը, ինչպես նաև ապահովում է մի կողմից՝ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու հայցով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների և մյուս կողմից՝ վիճելի ապրանքային նշանի իրավատիրոջ ու երրորդ անձանց շահերի հավասարակշռումը: Սահմանելով ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետը՝ օրենսդիրն առաջնորդվել է այն կանխադրությամբ, որ այդ ժամկետի ընթացքում շահագրգիռ անձը պետք է ողջամտորեն տեղյակ լինի այնպիսի ապրանքային նշանի գրանցման մասին, որի գրանցումն առերևույթ խախտում է իր իրավունքները, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանը պետական գրանցամատյանում գրանցելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական լիազոր մարմինն ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները հրապարակում է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետը լիովին բավարար է շահագրգիռ անձի կողմից իր խախտված իրավունքների պաշտպանության հայց հարուցելու համար:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ դատավարական գործողություններ կատարե-

լու ժամկետները կարող են սահմանվել ոչ միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, այլ նաև ուրիշ օրենքներով, սակայն դատավարական գործողություններ կատարելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետները գերակայում են այլ օրենքներով սահմանված ժամկետների նկատմամբ: Նշված դատողությունը հիմնված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն իրավադրույթի վրա, որի համաձայն՝ *վարչական դատավարության կարգը սահմանվում է նույն օրենսգրքով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով*: Նշված իրավակարգավորումից հետևում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական կարգը (ձևը) և, մասնավորապես, այդ կարգի մեջ մտնող՝ դատավարական ժամկետները վարչադատավարական գործընթացի համար ունեն առաջնային նշանակություն և որևէ դեպքում չեն կարող անտեսվել կամ չլիիրավել՝ այլ նյութաիրավական օրենքներում դրանցից տարբերվող ժամկետներ սահմանված լինելու պատճառով:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու ժամկետների վերաբերյալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ առաջին հայացքից հակասական թվացող կարգավորումների միջև իրականում որևէ հակասություն առկա չէ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված՝ վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը և ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու համար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգամյա ժամկետն ունեն զուգահեռ կիրառություն ու միմյանց հետ հակասության մեջ չեն մտնում: Այսպես՝ շահագրգիռ անձն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետի ընթացքում իրավունք ունի դատական կարգով վիճարկելու այդ ապրանքային նշանի գրանցումը՝ պահպանելով վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը, իսկ այդ դատավարական ժամկետը բաց թողնված լինելու դեպքում՝ այն վերականգնելու ընդհանուր կառուցակարգը:

Նշված կառուցակարգն առաջին հերթին ենթադրում է, որ վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը բաց թողած անձը պարտավոր է ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն: Նման միջնորդության ներկայացումն օբյեկտիվ իրավական անհրաժեշտություն է և հետապնդում է վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու հարցը քննարկելու և լուծելու միջոցով անձի դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովելու իրավաչափ նպատակ:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված հնգամյա ժամկետը պահպանված լինելու փաստը չի կարող ինքնին (per se) հիմք հանդիսանալ վիճարկման հայց ներկայացնելու բաց

թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու համար: Նշված փաստն ընդամենը հանդիսանում է այն նվազագույն պայմանը, որի առկայության դեպքում դատարանը պարտավոր է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ձևով քննարկման առարկա դարձնել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդության հիմքում դրված հանգամանքները և որոշել դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառի՝ հարգելի լինելու կամ չլինելու հարցը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, համադրելով ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու ժամկետների վերաբերյալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված վերոգրյալ իրավակարգավորումները, հանգում է այն եզրակացության, որ այդ իրավակարգավորումները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն հետևյալ կերպ.

1) «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նյութաիրավական հիմքերով և նույն հոդվածի 1.1-րդ մասով կանխորոշված շահագրգիռ անձինք ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան կարող են դիմել ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրվանից կամ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանին առանց գրանցման պահպանություն տրամադրելու օրվանից հետո 5 տարվա ընթացքում,

2) բացի վերը նշված հնգամյա ժամկետից, շահագրգիռ անձը պարտավոր է պահպանել նաև վիճարկման հայցով դատարան դիմելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը, որը հաշվարկվում է վիճարկվող վարչական ակտի, այսինքն՝ ապրանքային նշանի գրանցման ուժի մեջ մտնելու պահից,

3) եթե ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմած անձը բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը, ապա վերջինս ամեն դեպքում պարտավոր է ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն,

4) ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմած անձի կողմից ներկայացված այդ միջնորդությունը կարող է բավարարվել, եթե անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով,

5) վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը կարող է հարգելի համարվել միայն այն պայմաններում, երբ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետը հայցադիմումը ներկայացնելու պահի դրությամբ լրացած չի եղել, սակայն նշված պայմանի առկայությունն ինքնին (per se) բավարար չէ այդ միջնորդությունը բավարարելու համար,

6) նշված պայմանի առկայության դեպքում, այսինքն՝ եթե «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված հնգամյա ժամկետը լրացած չէ, վարչական դատարանը պարտավոր է քննարկել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին

միջնորդության հիմքում դրված հանգամանքները և որոշել դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառի՝ հարգելի լինելու կամ չլինելու հարցը՝ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդհանուր իրավակարգավորումներով և դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումներով,

7) վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը չի կարող հարգելի համարվել, եթե «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետը հայցադիմումը ներկայացնելու պահի դրությամբ լրացած է եղել,

8) եթե «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու հնգամյա ժամկետը հայցադիմումը ներկայացնելու պահի դրությամբ լրացած է եղել, ապա բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին հայցվորի միջնորդությունն ամեն դեպքում ենթակա է մերժման՝ ժամկետը բաց թողնելու պատճառն անհարգելի համարվելու հիմքով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրմբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով Ընկերությունը 18.04.2017 թվականին դիմել է վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Գործակալության կողմից «Վիոլենտ» ՍՊԸ-ի անվամբ թիվ 24788 համարով 26.07.2016 թվականին կատարված ապրանքային նշանի գրանցումը: Միաժամանակ Ընկերությունը միջնորդել է վերականգնել վիճարկման հայցով հայցադիմում ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված և իր կողմից բաց թողնված երկամսյա ժամկետը: Ընկերությունն իր միջնորդության հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված է երկամսյա ժամկետ, սակայն ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու հայց հարուցելու համար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 1.1-րդ մասով սահմանված է հնգամյա ժամկետ, որի ընթացքում անձը կարող է դիմել դատական պաշտպանության՝ իր խախտված իրավունքները վերականգնելու նպատակով: Հետևաբար, ըստ Ընկերության՝ վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետի բացթողման պատճառը պետք է համարել հարգելի (**գ.թ. 2-7**):

Դատարանը մերժել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Ընկերության միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը: Դատարանը գտել է, որ Ընկերությունը բաց է թողել վիճարկման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը և այդ ժամկետի ընթացքում չի ձեռնարկել իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու ուղղությամբ: Իսկ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգամյա ժամկետը պահպանված լինելու վերաբերյալ Ընկերության փաստարկը Դատարանն անհիմն է համարել, քանի որ ըստ Դատարանի՝ վարչական դատավարության կարգով դատավարական ժամկետները հաշվարկելիս պետք է առաջնորդվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով՝ անկախ այն հանգամանքից, որ «Ապրան-

քային նշանների մասին» ՀՀ օրենքով սահմանված է այլ կարգ:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը և Դատարանի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 25.04.2017 թվականի որոշումը թողել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանը, ըստ էության համաձայնելով Դատարանի վերոգրյալ դիրքորոշման հետ, ընդգծել է, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, իսկ այլ օրենքներով սահմանված ժամկետները տվյալ դեպքում չեն կարող կիրառելի լինել:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Ընկերության կողմից 18.04.2017 թվականին ներկայացված վիճարկման հայցի առարկան «Վիոլենտ» ՄՊԸ-ի անվամբ թիվ 24788 համարով 26.07.2016 թվականին կատարված ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջն է, որի հիմքում դրված են «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված իրավանորմերը:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ Ընկերությունը դատարան դիմելիս պարտավոր էր պահպանել թե՛ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված հնգամյա ժամկետը, թե՛ վիճարկման հայցով դատարան դիմելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամյա ժամկետը, իսկ այդ երկամյա դատավարական ժամկետը բաց թողնված լինելու դեպքում՝ այն վերականգնելու ընդհանուր կառուցակարգը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարան դիմելիս Ընկերությունը պահպանել է ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված հնգամյա ժամկետը: Սակայն Ընկերությունը չի պահպանել վիճարկման հայցով դատարան դիմելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամյա ժամկետը: Նման պայմաններում Ընկերությունը պարտավոր էր ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն. այս դատավարական պարտականությունն Ընկերության կողմից կատարվել է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված միջնորդությունը տվյալ դեպքում ենթակա է քննարկման՝ հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդհանուր իրավակարգավորումները և դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները: Այդ համատեքստում անդրադառնալով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված միջնորդության վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումներին՝ Վճռաբեկ դատարանը դրանք հիմնավոր է համարում: Այսպես՝ միջնորդության մեջ Ընկերությունը որևէ կերպ չի փաստարկել և չի ապացուցել, որ՝ **(ա)** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված երկամյա ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու ուղղությամբ, սակայն իր կամքից

անկախ պատճառներով բաց է թողել այդ դատավարական ժամկետը, կամ (բ) դատարան է դիմել վիճարկվող վարչական ակտի՝ «Վիոլենտ» ՍՊԸ-ի անվամբ թիվ 24788 համարով 26.07.2016 թվականին կատարված ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկանալուց հետո երկու ամսվա ընթացքում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված հնգամյա ժամկետը պահպանված լինելու փաստն ինքնին չի ենթադրում, որ վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը ենթակա է բավարարման: Հետևաբար, բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված միջնորդությունը չէր կարող բավարարվել միայն այն հիմքով, որ Ընկերությունը պահպանել է ապրանքային նշանի գրանցումը վիճարկելու հայցով դատարան դիմելու՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված հնգամյա ժամկետը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում «Վիոլենտ» ՍՊԸ-ի անվամբ թիվ 24788 համարով 26.07.2016 թվականին կատարված ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված և Ընկերության կողմից բաց թողնված երկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու հիմքեր առկա չեն, ինչն էլ իրավացիորեն արձանագրվել է ստորադաս դատարանների կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա էր մերժման, ինչն էլ հանգեցնում է Ընկերության հայցադիմումի ընդունումը մերժելուն: Հետևաբար, տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.06.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

Վարչական գործ թիվ ՎԴ/7479/05/16
2019թ.
ՎԴ/7479/05/16
Ա. Առաքելյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի մարտի 13-ին

քննելով ըստ հայցի «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանի ընդդեմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշումը և թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշումն անվավեր ճանաչելու, և (կամ) Հանձնաժողովին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու, և (կամ) Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշումը և թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշումը, ինչպես նաև նշված հանձնաժողովներին ներկայացված դիմում-բողոքներում հիշատակված տեղամասերի տեղամասային հանձնաժողով(ներ)ի գործողությունները և (կամ) անգործությունն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 10.05.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Կազմակերպության և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանի վճռաբեկ բողոքը

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանը պահանջել են անվավեր ճանաչել Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա և թիվ 34 ընտրատարածքային հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշումները, և (կամ) պարտավորեցնել վերջինիս ընդունել բարենպաստ վարչական ակտ, որով կրավարարվեն հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների պահանջները, և (կամ) ոչ իրավաչափ ճանաչել Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշումը, թիվ 34 ընտրատարածքային հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշումը, ինչպես նաև նշված հանձնաժողովներին ներկայացված դիմում-բողոքներում հիշատակված տեղամասերի տեղամասային հանձնաժողով(ներ)ի գործողությունները և (կամ) անգործությունը, որոնց հետևանքով խախտվել են հայցվորների իրավունքները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) 28.10.2016 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) 04.11.2016 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (դատավոր՝ Ք. Մկոյան) 23.12.2016 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 04.11.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) 13.02.2017 թվականի որոշմամբ Կազմակերպության և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանի միջնորդությունը՝ պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ մերժվել է և հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 13.03.2017 թվականի որոշմամբ կրկին ներկայացված հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.05.2017 թվականի որոշմամբ հայցվորների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.03.2017 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպության և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դարավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ներկայացված են եղել վիճարկման, պարտավորեցման և ճանաչման հայցատեսակներ: Ընդ որում, վիճարկվել են Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշումը և թիվ 34 ընտրատարածքային ընտ-

րական հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշումը, որոնցից առաջինը կայացվել է երկրորդը վերադասության կարգով բողոքարկելու արդյունքում: Հետևաբար թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշման վիճարկման պահանջն իր մեջ ներառում է նաև Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշումը վիճարկելու պահանջը: Այսինքն՝ ստացվում է, որ հայցվորները ներկայացրել են երեք ոչ գույքային պահանջ, որոնց համար պետք է վճարվեր 12.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար, ինչն էլ հավաստող ապացույցները՝ բանկային անդորրագրերը, ներկայացվել են դատարան:

Մինչդեռ Դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ հայցադիմումը վերադարձնելու հիմք առկա չի եղել, կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում, ինչը հաշվի չի առել Վերաքննիչ դատարանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «վերացնել Վերաքննիչ դատարանի 10.05.2017 թվականի թիվ ՎԴ/7479/05/16 վարչական գործով վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշումը»:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է մինչև 09.04.2018 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սույն դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պարտավորեցման հայցում իրավունքի ուժով ներառվող պահանջի համար դատական ծախսերի գանձման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է մինչև 09.04.2018 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անհրադատնապ հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք պարտավորեցման հայցով դատարանն դիմելիս առկա է պետական տուրքի վճարման պարտականություն նաև այն վարչական ակտի վիճարկման պահանջի համար, որով մերժվել է բարենպաստ վարչական ակտի ընդունումը, եթե այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է պարտավորեցման հայցում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների (...) համար (...) պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. հայցադիմումների (...) համար՝ ոչ գույքային պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ բազային տուրքի չափ է սահմանվում 1.000 դրամը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցադիմումին կցվում են՝ օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ գուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչև վարչական հայց ներկայացնելը միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով, ապա հայցը ներառում է նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատավարության շրջանակներում հայցադիմում ներկայացնելու համար, որպես կանոն, անհրաժեշտ է վճարել պետական տուրք, որի վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը դատարան ներկայացվող հայցադիմումների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափը որոշելիս ելակետային է համարել հայցապահանջների բնույթը, այսինքն՝ պետական տուրքի դրույքաչափը պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք ներկայացված հայցապահանջը գույքային բնույթի է, թե՛ ոչ գույքային (ոչ դրամական): Այսպես, ոչ գույքային բնույթի պահանջների հիման վրա հարուցված գործերով դատարան ներկայացվող հայցադիմումների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափը սահմանված է կայուն դրամական միավորի տեսքով, որը հաշվարկվում է բազային տուրքի (1.000 ՀՀ դրամ) հիման վրա և գանձվում է յուրաքանչյուր ոչ գույքային պահանջի համար առանձին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի ուժով հայցադիմումում պետք է նշվի հայցվորի պահանջը, որը կազմում է հայցի առարկան և որի մերժման կամ բավարարման վերաբերյալ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում (*տե՛ս, Արթուր Ավթանդիլյանն ընդդեմ ՀՀ նախկին տուրքային թիվ ՎԴ/1707/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.03.2017 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ գործով փաստել է, որ վարչական գործի հարուցման հիմք հանդիսացող հայցի առարկան երբեմն կարող է իրավունքի ուժով իր մեջ ներառել այն-

պիսի հայցապահանջ, որը հայցվորի կողմից չի ներկայացվել դատարան: Այսպես, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք, վիճարկման հայցով դիմելով վարչական դատարան, հայցում են իրենց իրավունքներին ու օրինական շահերին միջամտող վարչական ակտի վերացում: Ընդ որում, եթե նախքան տվյալ վարչական ակտի վիճարկման հայցով վարչական դատարան դիմելն այն բողոքարկվել է նաև վարչական կարգով, ապա ներկայացված հայցն օրենքի ուժով ներառում է նաև այդ վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ (*տե՛ս, Լուսինե Ավագյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/2191/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.06.2017 թվականի որոշումը*):

Փաստորեն, միջամտող վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջն իրավունքի ուժով ներառվում է սկզբնական վարչական ակտի վիճարկման հայցում՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք միջամտող վարչական ակտի վերացման պահանջով դատարան դիմած հայցվորի կողմից այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջ ներկայացված է, թե՛ ոչ: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ միջամտող վարչական ակտը բողոքարկվել է վարչական կարգով և այդ բողոքարկման արդյունքում ևս կայացվել է միջամտող վարչական ակտ, ապա սկզբնական միջամտող վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով դատարանը պարտավոր է սկզբնական վարչական ակտի իրավաչափության հարցի հետ մեկտեղ քննել և լուծել նաև վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի իրավաչափության հարցը:

Ջարգացնելով վերը նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ նշված կառուցակարգը գործում է նաև այն դեպքում, երբ հայցորդի կողմից ներկայացվել է պարտավորեցման հայցատեսակ: Մասնավորապես՝

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

Վերոգրյալից հետևում է, որ այն դեպքում, երբ ներկայացվել է պարտավորեցման հայցատեսակ, ապա այն ներառում է նաև վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջը: Այսինքն՝ պարտավորեցման հայցատեսակն իր բովանդակությամբ ներառում է նաև վիճարկման պահանջ, ընդ որում, անկախ նրանից՝ հայցվորը ներկայացրել է նմանաբնույթ պահանջ, թե՛ ոչ: Այլ կերպ ասած՝ վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջն օրենքի ուժով ներառված է պարտավորեցման հայցապահանջի մեջ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկման հայցով դատարան դիմելիս վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի՝ որպես ոչ գույքային պահանջի համար պետական տուրք վճարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում՝ անկախ հայցվորի կողմից ներկայացված լինելու կամ չլինելու

հանգամանքից: Նշված կառուցակարգը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ հայցվորի կողմից ներկայացվել է պարտավորեցման հայցատեսակ: Այս դեպքում վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջն օրենքի ուժով ներառված է պարտավորեցման հայցապահանջի մեջ: Հետևաբար այս դեպքում նույնպես բացակայում է անհրաժեշտությունը՝ վճարել պետական տուրքի գումար պարտավորեցման հայցատեսակում ներառված վիճարկման հայցի մասով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կազմակերպությունը և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանը հայցադիմում են ներկայացրել դատարան՝ պահանջելով.

ա) անվավեր ճանաչել Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշումը և թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշումը, բ) և (կամ) պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունել բարենպաստ վարչական ակտ, որով կբավարարվեն հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների պահանջները,

գ) և (կամ) ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշումը և թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշումը,

դ) ինչպես նաև ոչ իրավաչափ ճանաչել նշված հանձնաժողովներին ներկայացված դիմում-բողոքներում հիշատակված տեղամասերի տեղամասային հանձնաժողովների գործողությունները և (կամ) անգործությունը (**հատոր 1-ին, գ.թ. 21-29**):

Դատարանի 13.02.2017 թվականի որոշմամբ հայցվորների կողմից ներկայացված միջնորդությունը՝ պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ, մերժվել է, իսկ հայցադիմումը՝ վերադարձվել: Նույն որոշմամբ Դատարանն արձանագրել է, որ ներկայացվել են թվով չորս ոչ գույքային պահանջներ, որոնց մասով անհրաժեշտ է վճարել սահմանված չափով պետական տուրքի գումար (**հատոր 3-րդ, գ.թ. 3-6**):

Կազմակերպության և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումին կից ներկայացվել են 12.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարումը հավաստող բանկային անդորրագրեր (**հատոր 3-րդ, գ.թ. 23-27**):

Դատարանի 13.03.2017 որոշմամբ կրկին ներկայացված հայցադիմումը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ դատական ակտով արձանագրված են եղել թվով չորս ոչ գույքային պահանջներ, սակայն վճարվել է միայն թվով երեք ոչ գույքային պահանջների մասով պետական տուրքի գումարը, իսկ մյուս պահանջի մասով չի ներկայացվել պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին միջնորդություն (**հատոր 3-րդ, գ.թ. 29-31**):

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կազմակերպության և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանի վերաքննիչ բողոքը, նշել է, որ «ներկայացվել է 4 ոչ գույքային պահանջ, հետևաբար պետական տուրքի գանձման համար որոշիչ նշանակություն ունի այն խնդրի պարզումը, թե պահանջներից յուրաքանչյուրը կարող է այլ լուծում ստանալ, քան մյուսը, այսինքն, որ դրանցից մեկի լուծումը ինքնաբերաբար չի բերում մյուսի նմանօրինակ լուծմանը: Տվյալ դեպքում ներկայացված հայցադիմումի ուսումնասիրությունից պարզվել է, որ թիվ 85-Ա որոշման և թիվ 201-Ա որոշման վիճարկման հիմքում հայցվոր կողմը դրել է նաև վիճարկման այլ՝ ինքնուրույն հիմնավորումներ, որի պարագայում, վեճի՝ ըստ էության քննության արդյունքում, հնարավոր են այդ որոշումների վերաբերյալ տարբեր՝ միմյանցից անկախ լուծումներ: Սա էլ իր հերթին նշանակում է, որ ներկայացված որոշումների անվավերության պահանջներն իրենցից ներկայացնում են ինքնուրույն պահանջներ, որոնցից յուրաքանչյուրի համար ենթակա է վճարման պետական տուրք՝ բազային տուրքի քառապատիկի չափով»

(հատոր 4-րդ, գ.թ. 25-31):

Համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով Կազմակերպությունը և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանը դատարան ներկայացրած հայցադիմումով վիճարկման պահանջի շրջանակներում վիճարկել են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշումը և թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշումը, ընդ որում, Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշումը կայացվել է վերադատության կարգով ներկայացված վարչական բողոքի արդյունքում, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշման վիճարկման հայցն իր մեջ ներառում է Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշման վիճարկման պահանջը:

Բացի այդ, Կազմակերպությունը և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանը ներկայացրել են պարտավորեցման հայց, որով պահանջել են պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունել բարենպաստ վարչական ակտ, որով կրավարարվեն հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների պահանջները: Հետևաբար հայցվոր կողմի ներկայացված վիճարկման պահանջն իր հերթին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ներառվում է պարտավորեցման հայցի մեջ: Հետևաբար նշված երկու հայցատեսակների մատվ ենթակա էր վճարման պետական տուրքի գումար միայն մեկ ոչ գույքային պահանջի չափով:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հաշվի առնելով նաև իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի չափը կազմում է 12.000 ՀՀ դրամ. մասնավորապես՝ պարտավորեցման հայցապահանջի համար՝ 4.000 ՀՀ դրամ, որը ներառում է նաև Հանձնաժողովի 20.10.2016 թվականի թիվ 85-Ա որոշման և թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 08.10.2016 թվականի թիվ 201-Ա որոշման վիճարկման պահանջները, ինչպես նաև ճանաչման պահանջների համար՝ 4.000-ական ՀՀ դրամ: Ուստի Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում ստորադաս դատարանների այն եզրահանգումը, որ Կազմակերպությունը և Կազմակերպության դիտորդ Անի Գևորգյանը սույն գործով հայցադիմում ներկայացնելու համար պարտավոր էին վճարել 4 ոչ գույքային պահանջների համար պետական տուրքի գումար բազային տուրքի քառապատիկի չափով՝ յուրաքանչյուր հայցապահանջի համար առանձին-առանձին (16.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումար):

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով հայցվորների կողմից ներկայացված հայցադիմումը ենթակա չէր վերադարձման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով, քանի որ վերջիններիս կողմից ներկայացվել են համապատասխան չափով պետական տուրքի վճարումը հավաստող ապացույցները: Հետևաբար Վերաքննիչ դատարանի 10.05.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 10.05.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 13.03.2017 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

Վարչական գործ թիվ **ՎԴ/4167/05/10**
2019թ.
ՎԴ/4167/05/10
Կ. Մաթևոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՍԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի հունվարի 15-ին
քննելով ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմի-
տեի (այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ «ԾՈՓՔ ԱՐԱԾԱՆԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝
1.335.522 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վե-
րաքննիչ դատարանի 30.03.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետով
պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջ-
նորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերության
վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Ընկերությունից ՀՀ պետական բյուջե բռ-
նագանձել 1.335.522 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) 03.06.2011 թվականի վճռով
հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (դատավորներ՝ Ա. Արովյան, Գ. Ղարիբյան, Ա.
Առաքելյան) 15.11.2011 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և ՀՀ

վարչական դատարանի 03.06.2011 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.01.2012 թվականի որոշմամբ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.11.2011 թվականի որոշման դեմ Ընկերության ներկայացուցիչ բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 06.06.2013 թվականի որոշմամբ Կոմիտեի Նոր Նորքի հարկային տեսչության դիմումը բավարարվել է՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառները համարվել են հարգելի և վերականգնվել է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.03.2018 թվականի որոշմամբ Ընկերության միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու մասին, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը, 127-րդ հոդվածի 11-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանի 06.06.2013 թվականի «Կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու մասին» որոշումն Ընկերությունը չի ստացել: Ընկերությունը նշված որոշման գոյության մասին տեղեկացել է միայն այն բանից հետո, երբ Ընկերության ներկայացուցիչը 06.03.2018 թվականին դիմում է ներկայացրել գործի նյութերին ծանոթանալու մասին: Ընկերությունը տվյալ որոշումը փաստացի ստացել է 15.03.2018 թվականին, հետևաբար այդ պահից պետք է հոսեն վերաքննիչ բողոք բերելու ժամկետները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 30.03.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակից իրավաբանական անձին

պատշաճ կարգով հանձնելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի, 127-րդ հոդվածի 11-րդ մասի խախտման արդյունքում առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատական ծանուցումները և դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակից իրավաբանական անձին պատշաճ կարգով հանձնելու առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանը նախ անհրաժեշտ է համարում անդրադառնալ սույն բողոքի քննության կապակցությամբ կիրառելի օրենսդրության հարցին: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանի «Կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու մասին» որոշումը կայացվել է 06.06.2013 թվականին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրա՝ դատավարության մասնակիցներին պատշաճ կարգով հանձնելու առանձնահատկությունները պետք է դիտարկվեն իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 28.11.2007 թվականին ընդունված, 01.01.2008 թվականին ուժի մեջ մտած և 07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների լույսի ներքո:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Համանման դրույթներ է պարունակում նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, որի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, իսկ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...) ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից

ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի միջանկյալ ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն *օրենքով նախատեսված դեպքերում*՝ միջանկյալ դատական ակտը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի (...) 2-րդ մասով (...) նախատեսված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարել է դատարանը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահանջատերը բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը ներկայացնում է կատարողական թերթ տված դատարան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *դատարանի որոշումը կարող է բողոքարկվել*:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*տե՛ս, նաև «Տասթ Սիլյա» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎՋ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*տե՛ս, օրինակ, Khalifaoui v. France գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետեր 35, 36, Papon v. France գործով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետ 90*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ,

եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հետավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*Կոնս, Stubbings and others v. The United Kingdom գործով ՄԻԵԴ-ի 22.10.1996 թվականի վճիռը, կետեր 51, 55*):

Միաժամանակ Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ եթե ներպետական օրենսդրությամբ հստակ սահմանված է դատական որոշումը ծանուցելու՝ իրավասու մարմինների պարտականությունը, ապա դիմողի գանգատարկման իրավունքը չի կարող մերժվել, եթե ուշացումների պատճառն իշխանությունների պարտականությունների կատարումն է եղել, նույնիսկ եթե տեսականորեն դիմողն ունեցել է դատարանի որոշման մասին այլ աղբյուրներից տեղեկանալու հնարավորություն (*Կոնս, Davran v. Turkey գործով Եվրոպական դատարանի 03.11.2009 թվականի վճիռը, կետեր 31-47*):

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-րդ հոդվածի 2-րդ մասի իրավանորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հստակ նախատեսել էր այն դատավարական ժամկետը, որի ընթացքում միջանկյալ դատական ակտը կարող էր բողոքարկվել վերաքննության կարգով: Ըստ այդմ, միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող էր բերվել միջանկյալ դատական ակտը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ այդ ժամկետը բաց թողնելու պարագայում կարող էր ներկայացվել ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ իրավական կարգավորումները, արձանագրում է, որ օրենսդիրը միջանկյալ դատական ակտերը 15-օրյա ժամկետում բողոքարկելու ժամկետի սկիզբը պայմանավորել էր բողոքարկվող դատական ակտն ստանալու փաստով: Հետևաբար բողոքարկման ժամկետների պահպանվածության կամ այդ ժամկետները բաց թողնելու մասին հետևություններ կարելի էր անել միայն այն դեպքում, երբ դատարանը պատշաճ կարգով դատական ակտը հանձնել է դատավարության մասնակիցներին, իսկ վերջիններս ստացել են այն: Այսինքն՝ վերադաս ատյանը պետք է նախ գնահատական տա այն փաստին, թե արդյոք ստորադաս դատարանը պատշաճ է հանձնել դատական ակտը դատավարության մասնակցին, և երբ է դատավարության մասնակիցն այն ստացել (հստակ օրը):

Ընդ որում, այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.06.2016 թվականի թիվ ՄԴՌ-1290 որոշմամբ արձանագրել է, որ նախ՝ պետք է երաշխավորվի օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին: Միայն այս պայմաններում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձի համար երաշխավորված կլինեն ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի «Կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու մասին» որոշումը կայացվել է 06.06.2013 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 168-169**): Հետագայում ծանուցման փոստային անդորրագրի համաձայն՝ Ընկերությունը Դատա-

քանի որոշումն ստացել է 13.06.2013 թվականին: Անդորրագիրը պարունակում է միայն այն ստացողի ստորագրությունը և փաստաթղթերն ստանալու ամսաթիվը. ստացողի անձի վերաբերյալ այլ տվյալներ առկա չեն (**հատոր 1-ին, գ.թ. 173**): Ընկերության ներկայացուցիչը 06.03.2018 թվականին դիմում է ներկայացրել Դատարան՝ գործի նյութերին ծանոթանալու մասին: Ընկերության ներկայացուցիչը գործի նյութերին ծանոթացել և կատարել է լուսապատճեններ 15.03.2018 թվականին, որի համար ստորագրել է (**հատոր 1-ին, գ.թ. 175**):

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերությունը՝ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու մասին, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ընդունումը, նշել է, որ Ընկերությունը բողոքարկվող դատական ակտն ստացել է 13.06.2013 թվականին, սակայն «չի ձեռնարկել բավարար և ողջամիտ քայլեր՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար», իսկ «վերջինիս ներկայացրած փաստարկն առ այն, որ բողոքարկվող դատական ակտի մասին տեղեկացել է 15.03.2018 թվականին, չի համապատասխանում իրականությանը»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Դատավարության մասնակիցները կարող են համաձայնվել ծանուցման այլ եղանակի մասին, մասնավորապես ֆաքսով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով, հեռագրով:

«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է փաստաթղթերի հատուկ առաքման իրականացման տեսակները, **փաստաթղթերի** ընդունման, ձևակերպման, **հանձնման ընդհանուր կարգը**:

«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաթղթերի հատուկ առաքումը (այսուհետ՝ հատուկ առաքում) հասցեատիրոջը փաստաթղթերի առաքման հատուկ տեսակ է, որն ապահովում է առաքվող փաստաթղթերի նույնականությունը և ամբողջականությունը: Հատուկ առաքման կարգով փաստաթղթերի առաքումն իրականացվում է իրավական ակտերով սահմանված դեպքերում, ինչպես նաև ուղարկողի ցանկությամբ:

«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձին հասցեագրված առաքման փաթեթը հանձնվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարին կամ գրագրության ընդունման համար պատասխանատու անձին:

«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ նախքան փաթեթի հանձնումը փոստատարը հավաստիանում է, որ փաթեթն հանձնվում է նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված անձին և այդ մասին նշում է կատարում ծանուցագրի վրա՝ նշելով իրեն ներկայացված՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առաքման փաթեթն ստացող անձը ծանուցագրի վրա անձամբ նշում է իր անունը, ազգանունը և հայրանունը, ստացման ամսաթիվը, ստացված էջերի քանակը, որից հետո ստորագրում է ծանուցագիրը և այն վերադարձնում փոստատարին:

Վերոգրյալ նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ դատական ծանուցագրի և դատավարական փաստաթղթերի հանձնումն իրականացվում էր «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե դատական ծանուցագրի պարագայում այդ կարգն ուղղակիորեն անրագրված էր դատավարական օրենսգրքով, ապա դատավարական փաստաթղթերի պարագայում Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի իրավակարգավորումից, որը սահմանում է, որ նշված օրենքն ընդհանրական կարգով սահմանում է **փաստաթղթերի** ընդունման, ձևակերպման, **հանձնման ընդհանուր կարգը**: Հետևաբար դատավարական փաստաթղթերի պատշաճ հանձնման մասին կարելի է եզրահանգում կատարել, եթե այն կատարվել է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի դրույթների պահպանմամբ: Համապատասխանաբար՝ դատավարական փաստաթղթերը հանձնելու ապացույցը՝ հետադարձ ծանուցման վերաբերյալ փոստային անդորրագիրը, պետք է պարունակի «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված վավերապայմանները, մասնավորապես՝ իրավաբանական անձանց դեպքում՝ վկայակոչված հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված վավերապայմանները:

Վերոգրյալից հետևում է, որ իրավաբանական անձին դատավարական փաստաթղթերը հանձնելու պարագայում այն պետք է հանձնվի իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարին կամ գրագրության ընդունման համար պատասխանատու անձին, իսկ այդ փաստն ապացուցող հետադարձ ծանուցման վերաբերյալ փոստային անդորրագիրը պետք է պարունակի իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ գրագրության ընդունման համար պատասխանատու անձի՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները, անունը, ազգանունը և հայրանունը, ստացման ամսաթիվը, ստացված էջերի քանակը, ինչպես նաև նշված անձի ստորագրությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված վավերապայմանների միաժամանակյա առկայության պարագայում միայն կարելի է հետևություն անել դատավարական փաստաթղթերի՝ պատշաճ կարգով հանձնված լինելու հանգամանքի վերաբերյալ:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերության՝ Դատարանի որոշումը ստանալու փաստը ենթադրաբար հիմնավորող հետադարձ ծանուցման փոստային անդորրագիրը պարունակում է միայն այն ստացողի ստորագրությունը և ստանալու ամսաթիվը: Դրանում ստացողի անձի վերաբերյալ այլ տվյալներ առկա չեն:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված փոստային անդորրագիրը չի պարունակում «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված վավերապայմաններից՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ գրագրության ընդունման համար պատասխանատու անձի՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները, անունը, ազգանունը և հայրանունը, ինչպես նաև ստացված էջերի քանակը: Հետևաբար հետադարձ ծանուցման փոստային անդորրագիրը չի կարող համարվել պատշաճ ապացույց՝ դատավարական փաստաթուղթը՝ Դատարանի որոշումը, պատշաճ կարգով դատավարության մասնակցին հանձնված լինելու փաստի վերաբերյալ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երբ դատավարության մասնակցին հասցեագրված ծանուցագրում կատարված նշագրումները չեն բավարարում կամ հասպատասխանում «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի դրույթների

պահանջին, իսկ դատավարության մասնակիցը վիճարկում է պատշաճ կարգով ծանուցված լինելու փաստի առկայությունը, ապա նման ծանուցագիրը չի կարող գնահատվել թույլատրելի ապացույց և դրվել պատշաճ կարգով ծանուցված լինելու փաստի հաստատման հիմքում, քանի որ ինչպես վիճելի իրավահարաբերության գործողության մեջ եղած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի, նույնպես և գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Քննարկվող պարագայում բողոք բերած անձն ինչպես վերաքննիչ, այնպես էլ վճռաբեկ բողոքներում նշել է, որ Դատարանի 06.06.2013 թվականի «Կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու մասին» որոշումն Ընկերությունը չի ստացել, իսկ բողոքարկվող դատական ակտի մասին տեղեկացել է 15.03.2018 թվականին:

Նման պայմաններում 13.06.2013 թվականին պատշաճ կարգով բողոք բերած անձի ծանուցված լինելու փաստի առկայությունը մնում է վիճելի, իսկ այդ փաստի հաստատման համար ներկայացված ծանուցագիրը ոչ թույլատրելի ապացույց է:

Սույն գործի փաստերից հետևում է նաև, որ Դատարանի որոշման՝ Ընկերության կողմից ստանալու օր պետք է համարել Ընկերության ներկայացուցչի կողմից գործի նյութերին ծանոթանալու և լուսապատճեններ անելու օրը՝ 15.03.2018 թվականը: Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավարության մասնակիցը բողոքարկվող դատական ակտին ծանոթացել է 15.03.2018 թվականին, իսկ նշված ժամանակում գործել է 05.12.2013 թվականին ընդունված և 07.01.2014 թվականին ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, արձանագրում է, որ վերաքննիչ բողոք բերելու ժամկետների պահպանվածության հարցի լուծման կապակցությամբ կիրառելի են 05.12.2013 թվականին ընդունված և 07.01.2014 թվականին ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերը, որպիսի իրավակարգավորումների տիրույթում էլ դատավարության մասնակիցը փորձել է իրացնել իր՝ օրենսդրությամբ երաշխավորված դատական ակտի բողոքարկման իրավունքը:

Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ (...) միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց 5 օր հետո:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով (այդ թվում՝ օրացուցային): Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է այն դատավարական ժամկետը, որի ընթացքում կարող են բողոքարկվել վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը, այն է՝ դրանք ստանալուց 5 օրվա ընթացքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը Դատարանի որոշումն ստացել

է 15.03.2018 թվականին, հետևաբար դրա բողոքարկման ժամկետը պետք է ավարտվեր 22.03.2018 թվականին (2018 թվականի մարտի 17-ը և 18-ը ոչ աշխատանքային օրեր են եղել): Ընկերությունը Վերաքննիչ բողոքը բերել է 19.03.2018 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 180-184**), այսինքն՝ դատավարական ժամկետների պահպանմամբ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության կողմից վերաքննիչ բողոք բերելու ժամկետների խախտում թույլ չի տրվել, ուստի դրանք վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու դատավարական անհրաժեշտություն առկա չի եղել, ինչը նույնպես անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 30.03.2018 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

ՎԳ/8117/05/18
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԳ/8117/05/18
2019թ

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի 30-ին

քննելով ըստ հայցի Գագիկ Սիմոնյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ Գագիկ Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հաղթանակ թաղամասի 8-րդ փողոցի թիվ 19/2 հասցեին կից ավել օգտագործվող հողամասը որպես ընդլայնում օտարելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ տրամադրելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 27.10.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Գագիկ Սիմոնյանի ներկայացուցիչ Նարեկ Գասպարյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Գագիկ Սիմոնյանը պահանջել է պարտավորեցնել Քաղաքապետարանին տրամադրել բարենպաստ վարչական ակտ՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Հաղթանակ թաղամասի 8-րդ փողոցի թիվ 19/2 հասցեին կից ավել օգտագործվող հողամասը որպես ընդլայնում օտարելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) 07.08.2018 թվականի որոշմամբ Գագիկ Սիմոնյանի հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան) 03.09.2018 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.10.2018 թվականի որոշմամբ Գագիկ Սիմոնյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.09.2018 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Սիմոնյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը և 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ վարչական դատարանի 07.08.2018 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ հայցվորը չի ծանրաբեռնվել որևէ պարտավորությամբ, այլ դատարանի կողմից ստացել է առաջարկ՝ փոխելու սխալ ներկայացված հայցատեսակը և դրանով պայմանավորված ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն: Հայցվորն իր հերթին չի ընդունել դատարանի կողմից կատարված մատնանշումները՝ առաջնորդվելով տնօրինչականության սկզբունքով և պնդել է սկզբնական ներկայացված հայցատեսակը: Տվյալ դեպքում Դատարանը չէր կարող 07.08.2018 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ մատնանշած առաջարկը դիտարկել որպես թերության մատնանշում, իսկ այն չտեղելը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն, որ հայցադիմումի ընդունումը մերժվել է նաև գործողության կատարման հայցի շրջանակներում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելու հիմքով: Մինչդեռ ՀՀ վարչական դատարանը 07.08.2018 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ ի սկզբանե բաց թողնված էր համարել ոչ թե ներկայացված գործողության կատարման հայցի, այլ փոփոխվելիք պարտավորեցման հայցի դատավարական ժամկետը: Իսկ հայցատեսակը փոփոխելու առաջարկը հայցվորի կողմից չընդունվելու պարագայում պարզապես անհրաժեշտություն չի եղել ներկայացնելու միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ, քանի որ հայցվորը պնդել է սկզբնապես ներկայացված գործողության կատարման հայցը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 27.10.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի

վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու)՝ վարչական դատարանի առաջարկը հայցվորի կողմից չընդունվելու իրավական հետևանքների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) սխալ հայցարեւակով ձևակերպված պահանջ ունենալու համար վերադարձվելուց հետո կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը կարող է արդյոք մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ հայցադիմումի սխալները չվերացնելու հիմքով, եթե կրկին ներկայացված հայցադիմումն ունի պահանջի այն նույն ձևակերպումը, ինչ սկզբնական հայցադիմումը,

2) արդյոք դատարանն իրավասու է մերժել հայցադիմումի ընդունումն այն դեպքում, երբ հայցադիմումը վերադարձնելիս հայցվորին առաջարկվել է ոչ ճիշտ հայցարեւակով փոխարինել պատշաճ հայցարեւակով և այդ փոփոխությամբ պայմանավորված ներկայացնել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն, սակայն հայցվորը հայցադիմումը կրկին ներկայացնելիս շարունակել է պնդել ի սկզբանե ներկայացված հայցարեւակը և հայցարեւակի փոփոխություն չկատարելու պայմաններում չի ներկայացրել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն,

3) արդյոք դատարանն իրավասու է հայցադիմումի սխալը չվերացնելու հիմքով մերժել հայցադիմումի ընդունումը, եթե այդ սխալն արձանագրված (մատնանշված) չի եղել հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը (...) առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված

համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնում է պատշաճ հիմնավորմամբ՝ նշելով բոլոր առերևույթ սխալները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ նույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի սխալները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկը դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքն է, որը նպատակառոտված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ:

Վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի լույսի ներքո ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) կատուցակարգի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել *Վարուժան Ավերիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշմամբ*: Այդ որոշման շրջանակում ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի ուժով վարչական դատարանի վրա դրված է որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականություն: Այդ պարտականության դրսևորումներից մեկը ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելն է: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու վարչական դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի էությունից բխող պարտականությունը վարչական դատավարությունում կարող է իրականացվել թե՛ գործի հարուցման, թե՛ գործը դատաքննության նախապատրաստելու, թե՛ դատաքննության փուլերի ընթացքում: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատարանի կողմից ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու)

վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու պարտականությունը կարող է կատարվել նաև գործի հարուցման փուլում: Հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում նշված դատավարական գործողությունը պետք է կատարվի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման շրջանակներում: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում հայցվորի պահանջը տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ճիշտ հայցատեսակին չհամապատասխանող կերպով ձևակերպված լինելը հիմք է հանդիսանում տվյալ հայցադիմումը վերադարձնելու համար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտման հիմքով: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ հայցադիմումի ընդունելիության փուլում առկա են բավարար հիմքեր հանգելու այն եզրակացության, որ անձի կողմից վարչական դատարան ներկայացված հայցապահանջը ձևակերպված չէ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային համահունչ, ապա տվյալ հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված պահանջ պարունակող հայցադիմում (*տե՛ս, Վարուժան Ավետիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն սպառնալից ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված (*տե՛ս, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Որպես վերոգրյալ իրավական դիրքորոշումների ամփոփում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է հետևյալ եզրակացության.

1) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության դեպքում վարչական դատարանը պարտավոր է առաջարկել հայցվորին ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով (մատնանշել ճիշտ հայցատեսակը),

2) եթե հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության և վարչական դատարանի կողմից պատշաճ հայցատեսակի մատնանշման պարտականության պատշաճ կատարման պայմաններում հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված սկզբնական ոչ ճիշտ հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է կայացնել այդ հայցապահանջի շրջանակներում հարուցված վարչական գործի հետագա ճակատագիրը լուծող դատական ակտ (*տե՛ս, Գագիկ Մաթևոսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության թիվ ՎԴ/0229/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումներից բխում է, որ վարչական դատարանը ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայց-

վորին առաջարկ անելու իր պարտականությունը կարող է կատարել նաև հայցադիմումի ընդունելության փուլում՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ: Այդ որոշմամբ վարչական դատարանը հայցվորի կողմից ոչ ճիշտ հայցատեսակի ընտրությունը որակում է որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով հայցադիմումի բովանդակությանը ներկայացվող պահանջի չպահպանում, այն է՝ բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված հայցապահանջի ներկայացում:

Վճռաբեկ դատարանը, ելնելով վարչական դատավարությունում մեկ այլ հիմնարար դրույթի՝ տնօրինչականության սկզբունքի էությունից, արձանագրում է, որ ստանալով սխալ հայցատեսակով ձևակերպված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը՝ հայցվորը կարող է կատարել, *inter alia*, հետևյալ դատավարական գործողությունները.

1) ընդունել ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ դատարանի առաջարկը և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպել դատարանի կողմից մատնանշված պատշաճ հայցատեսակին համահունչ,

2) չընդունել դատարանի առաջարկը և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպել նույն կերպ, ինչպես որ այն ձևակերպված է եղել սկզբնապես ներկայացված հայցադիմումի մեջ:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի և 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ, մի կողմից, օրենսդիրը հնարավորություն է ընձեռել հայցվորին հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում վերացնելու հայցադիմումում պահանջի ձևակերպման հետ կապված սխալը և կրկին ներկայացնելու այն վարչական դատարան, որի դեպքում հայցադիմումը համարվում է վարույթ ընդունված սկզբնական ներկայացման օրը: Մյուս կողմից, եթե նշված ժամկետում հայցվորը չի վերացնում հայցադիմումում պահանջի ձևակերպման հետ կապված սխալը և հայցադիմումը՝ նշված թերությունը շտկված վիճակում, կրկին չի ներկայացնում դատարան, ապա վարչական դատարանը որոշում է կայացնում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, եթե հայցադիմումի տվյալ սխալը չվերացնելն արգելք է գործի քննության համար (*տե՛ս, Արթուր Ավթանդիլյանը և այլոք ընդդեմ ՀՀ նախկինության թիվ ՎԴ/1707/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.03.2017 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատարանն իրավասու է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով մերժել հայցադիմումի ընդունումը միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ դատարանն արձանագրել է (մատնանշել է) հայցադիմումում առկա համապատասխան սխալը,

2) հայցվորը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո կրկին ներկայացրել է հայցադիմումը՝ չվերացնելով դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ արձանագրված սխալը,

3) տվյալ սխալը չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու համար պարտադիր պայման է հայցադիմումում առկա՝

հայցվորի կողմից չվերացված և գործի քննության համար արգելք հանդիսացող սխալը դատարանի կողմից դեռևս հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ արձանագրված լինելու հանգամանքը:

Փաստորեն, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ նշված սխալները (հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի թերությունները) չշտկելու դատավարական հետևանքն այն է, որ դատարանը կարող է այդ սխալները չվերացնելը գնահատել որպես գործի քննության համար արգելք և այդ հիմքով մերժել կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, եթե հայցվորը չի ընդունում հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ դատարանի կողմից կատարված առաջարկը՝ ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ, և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպում է նույն կերպ, ինչպես որ այն ձևակերպված է եղել սկզբնապես ներկայացված հայցադիմումի մեջ, ապա դա չի նշանակում, որ հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի սխալները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար: Այլ կերպ ասած՝ ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ կատարված առաջարկը չընդունելը և հայցապահանջի ձևակերպման թերությունը չվերացնելը չեն կարող ընկալվել և դիտարկվել որպես գործի քննության համար արգելք: Այդ դեպքում կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով:

Վերոհիշյալ դատողությունները հիմնված են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված և հետևողականորեն պաշտպանվող այն իրավական դիրքորոշման վրա, որ սխալ հայցատեսակի ընտրությունն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ հայցադիմումի ընդունումը մերժելու համար:

Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում բազմիցս ընդգծել է, որ հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի ենթադրում, որ հայցադիմումի ընդունումը պետք է մերժվի հայցը դատարանին ենթակա չլինելու հիմքով (*տես, օրինակ, Գագիկ Մաթևոսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության թիվ ՎԳ/0229/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Վերոգրյալ գաղափարը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ներդրվել է իրավակիրառ պրակտիկայի հիմքում՝ ելնելով այն նկատառումից, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական հայցի տեսակները և դրանց օրենսդրական բնորոշումները չեն կարող խոչընդոտել անձանց արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը: Վարչական հայցի տեսակների գոյության նպատակն այն է, որ հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերն արդյունավետ կերպով քննության առնվեն վարչական դատարանի կողմից՝ հաշվի առնելով միայն տվյալ հայցատեսակին բնորոշ առանձնահատուկ հատկանիշները: Այլ կերպ ասած՝ վարչական հայցի տեսակներն ուղղված են անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովմանը: Վարչական հայցի տեսակների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված բնորոշումները չեն կարող մեկնաբանվել կամ կիրառվել որպես գործիք՝ անձին դատական պաշտպանություն փաստացի չտրամադրելու և վարչական արդարադա-

տուությունից հրաժարվելու համար: Նման մոտեցումը Վճռաբեկ դատարանը գնահատում է որպես դատավարական նորմերի մեխանիկական ընկալման և կիրառման հետևանք, ինչի արդյունքում խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը (*Կրեն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Այսպիսով, ամփոփելով վերոհիշյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սխալ հայցատեսակով ձևակերպված պահանջ ունենալու համար վերադարձնելուց հետո կրկին ներկայացված և նույն պահանջը պարունակող հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել հայցադիմումի սխալները չվերացնելու հիմքով, քանի որ հայցապահանջի ձևակերպման թերությունը չվերացնելը գործի քննության համար արգելք չէ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իմաստով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գագիկ Միմոնյանը 01.08.2018 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Քաղաքապետարանի՝ խնդրելով պարտավորեցնել վերջինիս տրամադրել բարենպաստ վարչական ակտ՝ Գագիկ Միմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Հաղթանակ թաղամասի 6-րդ փողոցի թիվ 19/2 հասցեին կից ավել օգտագործվող հողամասը որպես ընդլայնում օտարելու վերաբերյալ: Ընդ որում, հայցադիմումի մեջ հայցվորը նշել է, որ 01.11.2017 թվականին դիմում է ներկայացրել Քաղաքապետարան՝ վարչական վարույթ հարուցելու և բարենպաստ վարչական ակտ կայացնելու վերաբերյալ: Այդ դիմումին ի պատասխան՝ Քաղաքապետարանից 08.11.2017 թվականին ստացվել է թիվ 18-06/2-70942 գրությունը, որի համաձայն՝ տարածքի քաղաքաշինական կառուցապատման ծրագրերը դեռևս հստակեցված չեն, և հարցին կարող են անդրադառնալ հստակեցումից հետո: Այնուհետև, հայցվոր Գագիկ Միմոնյանը 30.03.2018 թվականին ըստ էության նույն խնդրանքով կրկին դիմում է ներկայացրել Քաղաքապետարան, որի վերաբերյալ որևէ պատասխան գրություն չի ստացվել: Քաղաքապետարանի կողմից անպատասխան է թողնվել նաև Գագիկ Միմոնյանի կողմից 29.06.2018 թվականին ներկայացված դիմումը, որով վերջինս խնդրել է վերանայել 30.03.2018 թվականին ներկայացված դիմումը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Գագիկ Միմոնյանը համարում է, որ տվյալ դեպքում կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասը: Ըստ հայցվորի՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն ուղղված իր դիմումի վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում որոշում չընդունվելու պայմաններում նշված իրավադրույթի ուժով այն համարվում է ընդունված: Ըստ այդմ, Գագիկ Միմոնյանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցով դիմել է դատարան՝ օրենքի ուժով ընդունված վարչական ակտը տրամադրելու պահանջով (**գ.թ. 4-7**):

ՀՀ վարչական դատարանի 07.08.2018 թվականի որոշմամբ Գագիկ Միմոնյանի հայցադիմումը վերադարձվել է: ՀՀ վարչական դատարանը գտել է, որ սույն գործով ճիշտ հայցատեսակը ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման, այլ նույն օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված պարտավորեցման հայցն է: Ըստ ՀՀ վարչական դատարանի՝ Գագիկ Միմոնյանը 01.11.2017 թվականին դիմել է Քաղաքապետարան և ստացել է մերժում Քաղաքապետարանի 08.11.2017 թվականի գրությամբ: Հետևաբար ՀՀ վարչական դատարանը գտել է, որ «(...) կրկին նույն հարցով Քաղաքապետարան դիմելով՝ հայցվորը չի կարող հայցել օրենքով սահմանված

ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը, այլ պետք է ներկայացնի պարտավորեցման հայց (...): Միաժամանակ ՀՀ վարչական դատարանը փաստել է, որ հայցվորը բաց է թողել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ պարտավորեցման հայցով դատարան դիմելու երկամսյա ժամկետը և չի ներկայացրել այն վերականգնելու մասին միջնորդություն **(գ.թ. 22-25)**:

Կրկին ներկայացված հայցադիմումի մեջ հայցվորը պնդել է, որ տվյալ դեպքում պարտավորեցման հայց չի կարող ներկայացվել, քանի որ Քաղաքապետարանի 08.11.2017 թվականի գրությունը մերժում է: Ըստ Գագիկ Սիմոնյանի՝ սույն գործով միակ ճիշտ ճանապարհը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման հայց ներկայացնելն է: Կրկին ներկայացված հայցադիմումը բովանդակում է Գագիկ Սիմոնյանի սկզբնական հայցադիմումի պահանջը և դրան կից ներկայացված է բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդություն **(գ.թ. 31-32)**:

Դատարանը 03.09.2018 թվականի որոշմամբ մերժել է Գագիկ Սիմոնյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքով: Դատարանն իր որոշմամբ նշել է, որ «(...) հայցվորը չի վերացրել դատարանի մատչելի թերությունը, իսկ թերությունները չվերացնելն արգելք է գործի քննության համար: Նախ՝ դատարանն օրինական ուժի մեջ մտած որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ հայցվորը բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժվել է 08.11.2017 թվականի գրությամբ՝ իր բոլոր իրավական հետևանքներով: Երկրորդ՝ եթե նույնիսկ հայցվորն այդ գրությունը չի որակում որպես մերժում, միևնույն է՝ բաց է թողել հայցադիմում ներկայացնելու երկամսյա ժամկետը այն պահից, երբ լրացել է հայցվոր գործողության կատարման համար սահմանված ժամկետը՝ նախատեսված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետով (...): Փաստորեն, Դատարանը գտել է, որ ինչպես ՀՀ վարչական դատարանի 07.08.2018 թվականի որոշմամբ մատնանշված պարտավորեցման հայցի, այնպես էլ հայցվորի պնդած գործողության կատարման հայցի դեպքում վերջինս բաց է թողել դատարան դիմելու ժամկետը և չի ներկայացրել այն վերականգնելու մասին միջնորդություն: Նման պայմաններում ներկայացված հայցի քննությունն անհնար է, ուստի հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման **(գ.թ. 52-53)**:

Վերաքննիչ դատարանը 27.10.2018 թվականի որոշմամբ մերժել է Գագիկ Սիմոնյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի 03.09.2018 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի դիրքորոշումը: Վերաքննիչ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ հայցվոր կողմը կամ պետք է կատարեր ՀՀ վարչական դատարանի 07.08.2018 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման պահանջը (եթե համաձայն էր որոշման հետ) կամ բողոքարկեր այն (եթե գտնում էր, որ որոշման հիմքում դրված եզրահանգումներն անհիմն են) **(գ.թ. 81-85)**:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը ՀՀ վարչական դատավա-

րության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքով իրավասու չէր մերժելու Գագիկ Միմոնյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումն այն պատճառաբանությամբ, որ հայցվորը չի վերացրել ՀՀ վարչական դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 07.08.2018 թվականի որոշմամբ արձանագրված թերությունը: Տվյալ թերությունը վերաբերել է Գագիկ Միմոնյանի կողմից ընտրված հայցատեսակի սխալ լինելուն: Սակայն հայցվորը կրկին ներկայացված հայցադիմումում չի ընդունել ՀՀ վարչական դատարանի առաջարկը և ներկայացված գործողության կատարման հայցը չի փոխարինել պարտավորեցման հայցով: Իսկ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ հայցվորի կողմից ՀՀ վարչական դատարանի այդ առաջարկը չընդունելը չէր կարող արգելք հանդիսանալ գործի քննության համար:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 07.08.2018 թվականի որոշումը ստանալուց հետո Գագիկ Միմոնյանն իրավունք ուներ պնդելու իր կողմից ի սկզբանե ներկայացված հայցատեսակը և պարտավոր չէր ընդունել դատարանի առաջարկը: Գագիկ Միմոնյանը, չընդունելով ՀՀ վարչական դատարանի առաջարկը, պարտավոր չէր բողոքարկել ՀՀ վարչական դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 07.08.2018 թվականի որոշումը, և կարող էր կրկին ներկայացնել իր հայցադիմումը նույն պահանջով՝ առանց իրացնելու ՀՀ վարչական դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 07.08.2018 թվականի որոշումը բողոքարկելու իր իրավունքը: Հետևաբար Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ հայցվոր կողմը կամ պետք է կատարեր ՀՀ վարչական դատարանի 07.08.2018 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման պահանջը (եթե համաձայն էր որոշման հետ) կամ բողոքարկեր այն (եթե գտնում էր, որ որոշման հիմքում դրված եզրահանգումներն անհիմն են):

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, հաշվի առնելով, որ Գագիկ Միմոնյանը կրկին ներկայացված հայցադիմումով շարունակել է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, պարտավոր էր ոչ թե մերժել հայցադիմումի ընդունումը, այլ գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Գագիկ Միմոնյանի կողմից կրկին ներկայացված և սկզբնական հայցադիմումի մեջ նշված նույն պահանջը պարունակող հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել հայցադիմումի սխալները չվերացնելու հիմքով, քանի որ հայցապահանջի ձևակերպման թերությունը չվերացնելը գործի քննության համար արգելք չէ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իմաստով, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գագիկ Միմոնյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել նաև՝ պարտավորեցման հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու պատճառաբանությամբ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Գագիկ Միմոնյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժելիս Դատարանն իրավասու չէր հղում անել այն հանգամանքին, որ հայցվորը չի ներկայացրել ՀՀ վարչական դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 07.08.2018 թվականի որոշմամբ մատնանշված՝ պարտավորեցման հայց ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը: Գագիկ Միմոնյանի մոտ նման միջնորդություն ներկայացնելու պարտականություն կառաջանար այն դեպքում, երբ վերջինս ընդուներ ՀՀ վարչական դատարանի առաջարկը և

կատարեր հայցատեսակի փոփոխություն՝ գործողության կատարման հայցի փոխարեն ներկայացնելով պարտավորեցման հայց:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Գագիկ Սիմոնյանի կողմից կրկին ներկայացված և սկզբնական հայցադիմումի մեջ նշված սույն պահանջը պարունակող հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել պարտավորեցման հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու պատճառաբանությամբ:

Ի վերջո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գագիկ Սիմոնյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել նաև՝ գործողության կատարման հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու պատճառաբանությամբ: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 07.08.2018 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանը չի անդրադարձել այն հարցին, թե արդյոք հայցվորի կողմից պահպանվել են գործողության կատարման հայց ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետները: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործողության կատարման հայցի ներկայացման ժամկետը պահպանած չլինելու հանգամանքը և այդ հանգամանքով պայմանավորված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 07.08.2018 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի կողմից չարձանագրվելու պայմաններում հետագայում այդ հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելը խախտել է իրավական որոշակիության սկզբունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի կողմից 07.08.2018 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման մեջ հայցվորի կողմից գործողության կատարման հայցով դատարան դիմելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության մասին անդրադարձ չլինելու պայմաններում Դատարանն իրավասու չէր Գագիկ Սիմոնյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումին կից նման միջնորդություն ներկայացված չլինելը գնահատել որպես այնպիսի սխալ, որի չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Այսպիսով, Դատարանն իրավասու չէր մերժելու Գագիկ Սիմոնյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումն այն պատճառաբանությամբ, որ հայցվորը բաց է թողել գործողության կատարման հայցով դատարան դիմելու ժամկետը և չի ներկայացրել այն վերականգնելու մասին միջնորդություն:

Ամփոփելով վերոգրյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Գագիկ Սիմոնյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը ենթակա չէր մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, քանի որ կրկին ներկայացված հայցադիմումի մեջ առկա չեն այնպիսի սխալներ, որոնք չվերացնելն արգելք է սույն գործի քննության համար: Մերժելով Գագիկ Սիմոնյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումի ընդունումը՝ Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու:

լու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 27.10.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 03.09.2018 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

Վարչական գործ թիվ ՎԳ/3973/05/15
2019թ.
ՎԳ/3973/05/15
Ա. Բաբայան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2019 թվականի մարտի 29-ին

քննելով ըստ հայցի Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), երրորդ անձ ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի (այսուհետ՝ Համայնք) Ծառայության Արմավիրի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարողի 10.07.2015 թվականի «Գույքը հանձնելու մասին» որոշումը վերացնելու և որպես հետևանք՝ Ծառայությանը հարկադիր կատարողի 10.07.2015 թվականի «Գույքը հանձնելու մասին» որոշման մեջ նշված և Համայնքին հանձնված գույքը (ընդունման բունկեր (1 հատ), տեսակավորման գրոխտ (1 հանգույց), փոխադրիչներ (4 հատ), լվացման կլասիֆիկատոր) Դավիթ Սարիբեկյանին և Ռաֆայել Առաքելյանին վերադարձնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.11.2017 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի ներկայացուցիչ Վահրամ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարունությունը.

Դիմելով դատարան՝ Դավիթ Սարիբեկյանը և Ռաֆայել Առաքելյանը պահանջել են վե-

րացնել Ծառայության Արմավիրի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարողի 10.07.2015 թվականի «Գույքը հանձնելու մասին» որոշումը և որպես հետևանք՝ պարտավորեցնել Ծառայությանը հարկադիր կատարողի 10.07.2015 թվականի «Գույքը հանձնելու մասին» որոշման մեջ նշված և Համայնքին հանձնված գույքը (ընդունման բունկեր (1 հատ), տեսակավորման գրոխտ (1 հանգույց), փոխադրիչներ (4 հատ), լվացման կլասիֆիկատոր) վերադարձնել Դավիթ Սարիբեկյանին և Ռաֆայել Առաքելյանին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) 06.05.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (դատավորներ՝ Ք. Մկոյան, Ա. Առաքելյան, Գ. Ղարիբյան) 18.10.2016 թվականի որոշմամբ Համայնքի վերաքննիչ բողոքը մերժվել է, և ՀՀ վարչական դատարանի 06.05.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 07.12.2016 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 06.05.2016 թվականի վճռի դեմ Համայնքի բերած վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

ՀՀ վարչական դատարանի 06.05.2016 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 07.12.2016 թվականին, և այդ վճռի հարկադիր կատարման նպատակով ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) կողմից 09.01.2017 թվականին տրվել է կատարողական թերթ:

Ծառայությունը դիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով ՀՀ վարչական դատարանի 06.05.2016 թվականի վճռի հիման վրա տրված կատարողական թերթի պահանջը կատարելու համար թույլատրել մուտք գործել Համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 06.08.2009 թվականի թիվ 2633840 սեփականության իրավունքի գրանցման վկայականով նշված շինությունները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 07.07.2017 թվականի որոշմամբ Ծառայության դիմումի քննությունը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.11.2017 թվականի որոշմամբ Դատարանի 07.07.2017 թվականի «Դիմումի քննությունը մերժելու մասին» որոշման դեմ Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Համայնքը և Ծառայությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ մերժելով Համայնքին սեփականության իրավունքով պատկանող շինություն մուտք գործելու վերաբերյալ հարկադիր կատարողի դիմումի քննությունը՝ Դատարանը խախտել է Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև սեփականության իրավունքը, քա-

նի որ կատարողական թերթի պահանջը կատարելու անհնարինության պարագայում վերջիններս գրկվում են սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքը վերադարձնելու հնարավորությունից, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը մտնում է փակուղի: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը չպետք է մեխանիկորեն մերժեր Դատարանի 07.07.2017 թվականի «Դիմումի քննությունը մերժելու մասին» որոշման դեմ Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի վերաքննիչ բողոքի ընդունումը: Վերաքննիչ դատարանը պարտավոր էր առաջնորդվել անձի՝ դատական պաշտպանության և սեփականության իրավունքների պաշտպանության առաջնահերթությամբ և ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 24.11.2017 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը՝ «կայացնելով նոր դատական ակտ»:

2.1. Ծառայության վճարելի բողոքի պատրասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ հարկադիր կատարողի կողմից այլ անձանց պատկանող բնակարան կամ շինություններ մուտք գործելու համար անհրաժեշտ է դատարանի համապատասխան որոշումը: Ընդ որում, նման որոշում պետք է կայացնի հենց կատարողական թերթ տված դատարանը:

2.2. Համայնքի վճարելի բողոքի պատրասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը ենթակա չէ վերացման: Վերաքննիչ դատարանն իրավացիորեն է մերժել Դատարանի 07.07.2017 թվականի «Դիմումի քննությունը մերժելու մասին» որոշման դեմ Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի վերաքննիչ բողոքի ընդունումը, քանի որ այդ դատական ակտը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված չէ որպես բողոքարկման ենթակա դատական ակտ:

3. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը.

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճարելի բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ սվյալ դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննության առնչությամբ ծագող հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան

չհանդիսացող անձին պարկանտղ բնակարան կամ շինություն մտադք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննության առնչությամբ ծագող հետևյալ հարցադրումներին.

- 1) ո՞ր դատարանին է ընդդատյա վերը նշված դիմումի քննությունը,
- 2) ի՞նչ կարգով և ի՞նչ ժամկետներում է քննվում այդ դիմումը,
- 3) այդ դիմումի քննության արդյունքում կայացված դատական ակտը ենթակա է արդյոք բողոքարկման,
- 4) դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է արդյոք բողոքարկման վերաքննության կարգով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և Կոնվենցիան ուղղակիորեն չեն ամրագրում դատական ակտերի կատարման իրավունքը՝ որպես դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքների բաղադրիչ, սակայն դատական ակտերի կատարումը դիտարկվում է որպես այդ հիմնարար իրավունքների կարևոր տարր. այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար:

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՍԴՌ-1115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառնություններ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր

գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված մոտեցումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ձևավորած իրավական դիրքորոշումների հետ, որոնց համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնան անկատար: Ըստ Եվրոպական դատարանի՝ դժվար կլինի պատկերացնել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնեք իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով (*յոնս ՀՈՐՆՍԲԻՅԻ Վ. ԳՐԵՍԵ զործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետը, MOSTACCIUOLO Վ. ԻՏԱԼԻ (No. 2) զործով Եվրոպական դատարանի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետը, RAYLYAN Վ. ՐԱՍՏԻԱ զործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետը, Խաչատրյանի ընդդեմ Հայաստանի զործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտերի կատարման վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվող հայեցակարգային մոտեցման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է. այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ չնայած Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ուղղակիորեն չի ամրագրում դատական ակտի կատարման իրավունքը, այնուամենայնիվ, այն համարվում է արդար դատաքննության իրավունքի անօտարելի տարրը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ու օգտակար՝ երաշխավորելով մարդու խախտված սուբյեկտիվ իրավունքի գործնականում վերականգնումը: Այս տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի վերջնական դատական ակտի կատարման ապահովումը, որը՝ որպես դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բաղկացուցիչ տարր, այդ հիմնարար իրավունքների միջոցով անձանց շտրկվող մնացած երաշխիքների (օրինակ՝ գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննություն, և այլն) հետ հավասարապես պետք է ապահովվի պետության կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դատական ակտերի հարկադիր կատարման միջոցով ապահովվում է պահանջատիրոջ ոչ միայն դատական պաշտպանության և արդար դատաքննության, այլ նաև սեփականության իրավունքը:

Այսպես, Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի մեկնաբանման և կիրա-

նության ոլորտում Եվրոպական դատարանի կողմից ձևավորվել է այն սկզբունքային դրույթը, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի երաշխավորում սեփականությունն ձեռք բերելու իրավունքը: Տվյալ հոդվածի խախտում կարող է արձանագրվել միայն այն դեպքում, երբ հանրային իշխանության վիճարկվող որոշումները վերաբերում են անձի «սեփականությանը»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Այս իմաստով «սեփականություն» կարող է համարվել ինչպես «գոյություն ունեցող գույքը», այնպես էլ այն ակտիվները, ներառյալ՝ պահանջները, որոնց վերաբերյալ անձը կարող է հիմնավոր կերպով պնդել, որ ինքն ունի այդ գույքային իրավունքներն արդյունավետ իրացնելու առնվազն «օրինական սպասելիք» (*իրեն KOPECKÝ v. SLOVAKIA գործով Եվրոպական դատարանի (Մեծ պալատ) 28.09.2004 թվականի վճիռը, 35-րդ կետը*):

Փաստորեն, Եվրոպական դատարանը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացությունը բնորոշել է ընդլայնված կերպով՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*իրեն PRESSOS COMPANIA NAVIERA S.A. AND OTHERS v. BELGIUM գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը*): Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*իրեն BURDOV v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետը, RAYLYAN v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 15.02.2007 թվականի վճիռը, 36-րդ կետը*):

Եվրոպական դատարանը մի շարք վճիռներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պահանջի իրավունքը, եթե այն բավականաչափ հիմնավորված է կատարելի լինելու համար, առավել ևս, եթե բխում է դատական ակտից, համարվում է սեփականություն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով (*իրեն STRAN GREEK REFINERIES AND STRATIS ANDREADIS v. GREECE գործով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, 59-62-րդ կետեր, VASILOPOULOU v. GREECE գործով Եվրոպական դատարանի 21.03.2002 թվականի վճիռը, 22-25-րդ կետեր, TIMOFEYEV v. RUSSIA գործով Եվրոպական դատարանի 23.10.2003 թվականի վճիռը, 45-րդ կետը, BURDOV v. RUSSIA (No. 2) գործով Եվրոպական դատարանի 15.01.2009 թվականի վճիռը, 87-րդ կետը*): Մասնավորապես՝ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուի օգտին կայացրած վճռի կատարմանը հասնելու անհնարինությունը հանգեցնում է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին նախադասությամբ սահմանված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի միջամտության (*իրեն Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 01.12.2009 թվականի վճիռը, 68-րդ կետը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի դատական պաշտպանության և արդար դատաքնության իրավունքների, ինչպես նաև դատական ակտի վրա հիմնված՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքի իրացումն ապահովելու՝ պետության պարտականությունը կարող է լիարժեք կերպով կատարված համարվել միայն այն դեպքում, երբ պետության իրավական համակարգում սահմանված են վերջնական դատական ակտի պատշաճ կատարումն ապահովելու համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք հնարավորու-

թյուն են ընձեռում վերջնական դատական ակտի հասցեատիրոջը հասնելու իր խախտված իրավունքի փաստացի վերականգնմանը: Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում այդ նպատակին է ծառայում դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը:

Նախկինում կայացված որոշումներում ևս ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ Եվրոպական դատարանի դիրքորոշումը միանշանակ է այն հարցում, որ դատական ակտով սահմանված պահանջի իրավունքը պետության կողմից ենթակա է պատշաճ պաշտպանության ոչ միայն դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների, այլ նաև սեփականության իրավունքի ապահովման շրջանակներում: Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը պարտավոր է պատշաճ կերպով կարգավորել դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտի հասարակական հարաբերությունները և ստեղծել կայուն իրավական հիմք դատական ակտերի պարտադիրության և կատարելիության սահմանադրական և կոնվենցիոն սկզբունքների իրացումն ապահովելու համար (տե՛ս «Յունիբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԳ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Անդրադառնալով դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան (տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինն ընդդեմ Անուշ Բապիրյանի թիվ ՎԴԵ/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով:

Այսպես՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են՝ (...) Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատական ակտերը (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթը տալիս է ակտն ընդունած առաջին ատյանի դատարանը՝ պահանջատիրոջ կամ դրա համար հատուկ լիազորված նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կատարողական թերթը կատարվում է այդ գործողությունների կատարման վայրում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ կատարողական գործողությունների կատարման նպատակով

(բռնագանձում, վտարում, բնակեցում և այլն) հարկադիր կատարողն իրավունք ունի անարգել մուտք գործելու պարտապանին սեփականության իրավունքով պատկանող բնակարան կամ այլ շինություն:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ կատարողական գործողությունների կատարման նպատակով այլ անձանց պատկանող բնակարան կամ շինություններ հարկադիր կատարողը կարող է մուտք գործել այդ բնակարանի կամ շինության սեփականատիրոջ (ժամանակավոր տիրապետողի) համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում հարկադիր կատարողը կարող է մուտք գործել բնակարան կամ շինություններ դատարանի համապատասխան որոշման հիման վրա:

Վերոգրյալ իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ դատական ակտերի, այդ թվում՝ նաև՝ վարչական դատարանի դատական ակտերի հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու հիմքը համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը:

Օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանել է կատարողական գործողությունների կատարման վայրի վերաբերյալ կանոնները, որոնց համաձայն՝ պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող դատական ակտը կատարվում է այն վայրում, որտեղ, որոշակի իրավաբանորեն նշանակալի հանգամանքների առկայությամբ պայմանավորված, պետք է կատարվեն այդ գործողությունները: Ընդ որում, օրենսդիրը կարգավորումներ է նախատեսել այն իրավիճակի համար, երբ կատարողական գործողությունները, օրինակ՝ բռնագանձումը, վտարումը, բնակեցումը և այլն, պետք է կատարվեն բնակարանում կամ այլ շինությունում՝ սահմանելով հարկադիր կատարողի կողմից այդ բնակարան կամ շինություն մուտք գործելու թույլատրելիության պայմանները: Այսպես, նշված օրենսդրական կարգավորումներով սահմանված են կատարողական գործողությունների կատարման նպատակով հարկադիր կատարողի կողմից բնակարան կամ շինություն մուտք գործելու հետևյալ կանոնները.

1) հարկադիր կատարողը կարող է անարգել մուտք գործել այն բնակարան կամ այլ շինություն, որը սեփականության իրավունքով պատկանում է պարտապանին. այսինքն՝ հարկադիր կատարողի կողմից պարտապանին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելու համար որևէ թույլտվություն կամ համաձայնություն չի պահանջվում,

2) հարկադիր կատարողը կարող է մուտք գործել պարտապանից տարբերվող որևէ անձի պատկանող բնակարան կամ շինություն միայն այդ բնակարանի կամ շինության սեփականատիրոջ կամ ժամանակավոր տիրապետողի համաձայնությամբ. այսինքն՝ հարկադիր կատարողի կողմից պարտապանին չպատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելու համար պահանջվում է այդ բնակարանի կամ շինության սեփականատիրոջ կամ ժամանակավոր տիրապետողի համաձայնությունը,

3) հարկադիր կատարողի կողմից պարտապանին չպատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելու համար պահանջվող համաձայնության բացակայության դեպքում հարկադիր կատարողը կարող է մուտք գործել այդ բնակարան կամ շինություն միայն դատարանի համապատասխան որոշման հիման վրա. այսինքն՝ եթե կատարողական վարույթում ձեռք չի բերվել պարտապանին չպատկանող բնակարանի կամ շինության սեփականատիրոջ

րոջ կամ ժամանակավոր տիրապետողի համաձայնությունը, ապա հարկադիր կատարողի կողմից այդ բնակարան կամ շինություն մուտք գործելու համար պահանջվում է դատարանի թույլտվություն:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածում ամրագրված վերոգրյալ իրավադրույթի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը կատարողական թերթով պարտապան չհանդիսացող անձի համաձայնության բացակայությամբ վերջինիս պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելու համար պարտադիր է համարում դատարանի թույլտվության առկայությունը: Մինևն ժամանակ օրենսդիրը նշված իրավադրույթով, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի այլ նորմերով կամ որևէ այլ իրավական ակտով չի սահմանել, թե կոնկրետ որ դատարանի կողմից պետք է տրվի կատարողական թերթով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին որոշումը: Օրենսդրական կարգավորումներ առկա չեն նաև կատարողական թերթով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննության կարգի, ժամկետների, ինչպես նաև կայացված դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ: Այլ կերպ՝ օրենսդիրը չի կարգավորել, թե որ դատարանի քննությանն է ընդդատյա և ինչ կարգով ու ինչ ժամկետում պետք է քննվի կատարողական թերթով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումը, ինչպես նաև այդ դիմումների քննության արդյունքում կայացված դատական ակտերի բողոքարկման ենթակա լինելու կամ չլինելու հարցը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավակարգավորման վերը նկարագրված բացն արհեստական խոչընդոտներ է ստեղծում վերջնական դատական ակտի կատարումը պատշաճ ապահովելու համար: Օրենսդրական նման թերի կարգավորման պատճառով վերջնական դատական ակտի հասցեատերը կարող է զրկվել իր խախտված իրավունքի փաստացի վերականգնման հնարավորությունից, քանի որ օրենսդիրը, չկարգավորելով կատարողական թերթով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությունը, քննության կարգը, ժամկետները ու կայացված դատական ակտի բողոքարկման հարցը, դրանով իսկ չի ապահովել անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր այնպիսի դատական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար, որոնց կատարումը ենթադրում է որոշակի կատարողական գործողությունների իրականացում պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարանում կամ շինությունում՝ առանց այդ անձի համաձայնության: Նման պայմաններում քննարկվող դիմումի ընդդատության, քննության կարգի, ժամկետների ու կայացված դատական ակտի բողոքարկման հարցում ծագում է իրավական անորոշություն, ինչն էլ առաջացնում է նույն հարցի կապակցությամբ ստորադաս դատարանների կողմից ոչ միատեսակ մոտեցում ցուցաբերելու վտանգ: Ըստ այդմ, վերջնական դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի օրենսդրական կարգավորման վերոգրյալ թերությունը վերացնելու և անձի դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքների, ինչպես նաև դատական ակտի վրա հիմնված՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքի երաշխավորված իրացումն ապահովելու համար անհրաժեշտ նախադրյալներն ամբողջականացնելու նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն որոշմամբ

հաղթահարել օրենսդրական կարգավորման նշված բացը և որոշակիացնել կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությունը, քննության կարգը, ժամկետներն ու կայացված դատական ակտի բողոքարկման հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրությամբ սահմանված են համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմեր: Խոսքը վերաբերում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ *(ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու* վերաբերյալ դիմումների ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող կանոններին:

(ա) Դատական ակտի կատարման հետաձգման, տարաժամկետման, կատարման եղանակի և կարգի փոփոխման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարաժամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակը և կարգը փոփոխելու մասին դիմումները դատարանը քննում է դրանք ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Պահանջատերը և պարտապանը պատշաճ ձևով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել:

(բ) Կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացի-պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահանջատերը բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին դիմումը ներկայացնում է կատարողական թերթ տված դատարան: Դատարանը դիմումը քննում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Պահանջատերը և պարտապանը պատշաճ ձևով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել:

(գ) Կատարողական թերթի պարզաբանման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթում նշված պահանջները պարզ չլինելու դեպքում հարկադիր կատարողն իրավունք ունի դիմել կատարողական թերթ տված դատարան՝ այն պարզաբանելու համար: Կատարողական թերթի վերաբերյալ պարզաբանում ստանալու մասին դիմումը դատարան է ներկայացվում էլեկտրոնային եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարողական թերթ տված դատարանը հարկադիր կատարողի դիմումը քննում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Հարկադիր կատարողը, պահանջատերը և պարտապանը պատշաճ ձևով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ դիմումի քննության համար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում (...):

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ *(ա) դատական ակտի կատարումը հերքած գելու կամ փարսժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու* վերաբերյալ դիմումների ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող վկայակոչված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները.

1) օրենսդիրը հստակ սահմանել է վերոգրյալ դիմումների ընդդատությունը. այդ դիմումները ներկայացվում են կատարողական թերթ տված դատարան և քննվում են կատարողական թերթ տված դատարանի կողմից,

2) օրենսդիրը սահմանել է վերոգրյալ դիմումների քննության կարգին ներկայացվող նվազագույն պահանջները. դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացվում են պահանջատերը և պարտապանը (կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների դեպքում՝ նաև հարկադիր կատարողը), դիմումը քննվում է անկախ ծանուցված անձանց ներկայանալուց կամ չներկայանալուց,

3) օրենսդիրը սահմանել է վերոգրյալ դիմումների քննության ժամկետները. այդ դիմումները քննվում են դրանք ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում,

4) օրենսդիրը սահմանել է դատական ակտի այն տեսակը, որը կայացվում է վերոգրյալ դիմումների քննության արդյունքում. այդ դիմումների քննության արդյունքում դատարանը կայացնում է որոշում,

5) օրենսդիրը սահմանել է վերոգրյալ դիմումների քննության արդյունքում դատարանի կայացրած որոշումների բողոքարկման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտի բողոքարկմանը վերաբերող հասարակական հարաբերություններն էապես չեն տարբերվում *(ա) դատական ակտի*

կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող վարույթային հարաբերություններից:

Թե՛ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի, թե՛ (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունները ծագում են դատական ակտերի հարկադիր կատարման փուլում վարույթի մասնակիցների կամ այլ շահագրգիռ անձանց իրավունքների պատշաճ իրացման կամ պարտականությունների պատշաճ կատարման ապահովման համար՝ վերջիվերջո նպատակ ունենալով դատական ներգործությամբ հավասարակշռելու հարկադիր կատարման վարույթի մասնակիցների կամ այլ շահագրգիռ անձանց շահերն ու այդ հավասարակշռության միջոցով նպաստելու հարկադիր կատարման ենթակա դատական ակտի պատշաճ կատարմանը: Հիշատակված դիմումների քննությանը վերաբերող հասարակական հարաբերություններն իրենց բնույթով ընթացակարգային (վարույթային) են. այդ ընթացակարգերի էությունն այն է, որ դրանց միջոցով ապահովվում է հարկադիր կատարման ենթակա դատական ակտի հարկադիր կատարման փուլում որոշակի հարցերի կապակցությամբ օրենքով պահանջվող դատական ակտերի կայացումը, ինչը հնարավորություն է տալիս հաղթահարելու հարկադիր կատարման ենթակա դատական ակտի հարկադիր կատարումը սկսելու, շարունակելու կամ ավարտին հասցնելու իրավաբանական կամ փաստացի խոչընդոտները: Այսինքն՝ նշված դիմումների քննության ընթացակարգերում հաշվի է առնվում կատարողական վարույթում ներգրավված հակադիր սուբյեկտների կամ այլ շահագրգիռ անձանց ուշադրության արժանի շահերի ու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը:

Այդ իսկ պատճառով (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունները կարգավորող կանոնները, որոնք վերաբերում են այդ դիմումների ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը, հավասարապես կարող են կիրառելի լինել նաև կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը վերաբերող հասարակական հարաբերությունների սկսումամբ: Այլ կերպ ասած՝ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությունը, քննության կարգը, ժամկետներն ու կայացված դատական ակտի բողոքարկումը կարող են կանոնակարգվել այն նույն կերպով, ինչպես որ կանոնակարգված են (ա) դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետե-

լու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմումների ընդդատությունը, քննության կարգը, ժամկետներն ու կայացված դատական ակտերի բողոքարկումը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ *(ա) դատարանական ակտի կատարումը հերքած գելու կամ տարածամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու* վերաբերյալ դիմումների ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող վկայակոչված իրավական նորմերի կիրառումը կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող հասարակական հարաբերությունների նկատմամբ չի հակասում դրանց էությանը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող հասարակական հարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվեն համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը, այսինքն՝ *(ա) դատարանական ակտի կատարումը հերքած գելու կամ տարածամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու, (բ) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, (գ) կատարողական թերթը պարզաբանելու* վերաբերյալ դիմումների քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունները կարգավորող կանոնները: Ըստ այդմ, հիմք ընդունելով վերը նշված դիմումների քննությանը վերաբերող՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 24-րդ և 35-րդ հոդվածներով նախատեսված իրավական նորմերի բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի ընդդատությանը, քննության կարգին, ժամկետներին ու կայացված դատական ակտերի բողոքարկմանը վերաբերող հասարակական հարաբերությունները պետք է կարգավորվեն հետևյալ կերպ.

1) այդ դիմումը ներկայացվում է կատարողական թերթ տված դատարան և քննվում է կատարողական թերթ տված դատարանի կողմից,

2) դիմումը քննվում է դատական նիստում,

3) դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացվում են հարկադիր կատարողը, պահանջատերը և պարտապանը, ինչպես նաև տվյալ բնակարանի կամ շինության սեփականատերը, իսկ դիմումը քննվում է անկախ ծանուցված անձանց ներկայանալուց կամ չներկայանալուց,

4) դիմումը քննվում է այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում,

5) դիմումի քննության արդյունքում դատարանը կայացնում է որոշում,

6) դիմումի քննության արդյունքում դատարանի կայացրած որոշումը ենթակա է բողոք-

քարկման:

Վճռարեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ՎԳ/3937/05/15 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 06.05.2016 թվականի վճռով Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի հայցն ընդդեմ Ծառայության բավարարվել է և վճռվել է պարտավորեցնել Ծառայությանը հարկադիր կատարողի 10.07.2015 թվականի «Գույքը հանձնելու մասին» որոշման մեջ նշված և Համայնքին հանձնված գույքը (ընդունման բունկեր (1 հատ), տեսակավորման գրոխտտ (1 հանգույց), փոխադրիչներ (4 հատ), լվացման կլասիֆիկատոր) վերադարձնել Դավիթ Սարիբեկյանին և Ռաֆայել Առաքելյանին: Նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 07.12.2016 թվականին, և այդ վճռի հարկադիր կատարման նպատակով ՀՀ վարչական դատարանի կողմից 09.01.2017 թվականին տրվել է կատարողական թերթը **(գործի հավելված, գ.թ. 10):**

Թիվ ՎԳ/3937/05/15 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 06.05.2016 թվականի վճռի հիման վրա 09.01.2017 թվականին տրված կատարողական թերթի պահանջները կատարելուն ուղղված կատարողական գործողությունների ընթացքում անհրաժեշտություն է առաջացել մուտք գործել Համայնքին սեփականության իրավունքով պատկանող շինություն (ավազի լվացման և տեսակավորման արտադրամաս) **(գործի հավելված, գ.թ. 14-17):** Սակայն Համայնքի ղեկավարը չի տվել իր համաձայնությունը հարկադիր կատարողների կողմից այդ շինություն մուտք գործելու համար **(գործի հավելված, գ.թ. 12-13):**

Ծառայությունը դիմել է վարչական դատարան՝ խնդրելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի հիման վրա թույլատրել մուտք գործել Համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 06.08.2009 թվականի թիվ 2633840 սեփականության իրավունքի գրանցման վկայականով նշված շինությունները՝ ՀՀ վարչական դատարանի 06.05.2016 թվականի վճռի հիման վրա տրված կատարողական թերթի պահանջը կատարելու նպատակով **(գործի հավելված, գ.թ. 7-9):**

Դատարանը 07.07.2017 թվականին կայացրել է «Դիմումի քննությունը մերժելու մասին» վերառությամբ որոշում, որով մերժել է Ծառայության կողմից ներկայացված՝ թիվ ՎԳ/3937/05/15 կատարողական թերթի պահանջը կատարելու համար Համայնքին սեփականության իրավունքով պատկանող ավազի լվացման և տեսակավորման արտադրամաս մուտք գործելը թույլատրելու մասին դիմումի քննությունը: Դատարանն իր որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածով նախատեսված՝ կատարողական գործողությունների կատարման նպատակով այլ անձանց պատկանող բնակարան կամ շինություններ մուտք գործելու մասին համապատասխան որոշում կայացնելու իրավասություն վարչական դատարանին վերապահված չէ: Հետևաբար, ըստ Դատարանի, Ծառայության կողմից ներկայացված դիմումը ենթակա չէ վարչական դատարանի քննությանը **(գործի հավելված, գ.թ. 19-24):**

Վերաքննիչ դատարանը 24.11.2017 թվականի որոշմամբ մերժել է Դատարանի 07.07.2017 թվականի «Դիմումի քննությունը մերժելու մասին» որոշման դեմ Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի վերաքննիչ բողոքի ընդունումը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Դատարանի 07.07.2017 թվականի «Դիմումի քննությունը մերժելու մասին»

որոշումը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով, քանի որ այն նախատեսված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածով սահմանված՝ բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի ցանկում: Վերաքննիչ դատարանը միաժամանակ նշել է, որ բնակարանի կամ շինության սեփականատիրոջ (ժամանակավոր տիրապետողի) համաձայնության բացակայության դեպքում այդ բնակարան կամ շինություն մուտք գործելու վերաբերյալ հարկադիր կատարողի դիմումի կապակցությամբ կայացված դատական ակտերի բողոքարկման դեպք սահմանված չէ նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով **(գործի հավելված, գ.թ. 53-56):**

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախևառաջ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունների նկատմամբ սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումից բխում է, որ նշված դիմումի կապակցությամբ կատարողական թերթ տված դատարանի կայացրած որոշումները ենթակա են բողոքարկման:

Մինևսույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործող օրենսդրական կարգավորումները չեն նախատեսում կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական հնարավորություն՝ ինչպես հետաձգված, այնպես էլ անմիջական բողոքարկման շրջանակներում: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը չի նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը: Նման պայմաններում, փաստորեն, բացառվում է վերադաս դատական ատյանի կողմից այդպիսի դատական ակտերի իրավաչափությունը ստուգելու հնարավորությունը, ինչը, սակայն, անհրաժեշտ է կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումը պատշաճ կարգով քննելու և դրա կապակցությամբ իրավաչափ որոշում կայացնելու միջոցով հարկադիր կատարման ենթակա դատական ակտի հարկադիր կատարման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգի լիարժեք կենսագործման նպատակով:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը ևս պետք է ենթակա լինի բողոքարկման վերաքննության կարգով:

Այսպես, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 28.11.2007 թվականի թիվ ՍԴՌ-719, 25.11.2008 թվականի թիվ ՍԴՌ-780, 18.07.2013 թվականի թիվ ՍԴՌ-1037, 15.02.2015 թվականի թիվ ՍԴՌ-1190 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում բազմիցս ընդգծել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*Կրեն, օրինակ, «Ֆաստ Սիլայ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության թիվ ՎԳ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը*): Հայաստանի Հանրապետությունում սահմանված դատական եռաստիճան համակարգը գործում է դատական ներհամակարգային աստիճանակարգության հիման վրա, ինչը ենթադրում է վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայման հնարավորություն (*Կրեն, օրինակ, Անահիտ Եփրեմյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԳ/6478/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2015 թվականի որոշումը*):

Կրկին հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշումներում արտահայտված հայեցակարգային մոտեցումները, ինչպես նաև առաջնորդվելով վերոգրյալ որոշումներում արտահայտված սեփական իրավական դիրքորոշումներով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը ոչ միայն արգելափակում է վերաքննիչ դատական ատյանի մատչելիության իրավունքը, այլև անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքից: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունների կարգավորման կառուցակարգը չի կարող ամբողջական տեսք ունենալ, եթե նշված դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշումը դիտարկվում է որպես վերաքննության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ: Միայն խնդրո առարկա դատական ակտի բողոքարկման իրավական հնարավորության հետևողական իրացման դեպքում է հնարավոր երաշխավորել կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննության վարույթի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի լիարժեք դատական պաշտպանությունը: Ավելին՝ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումը կարևոր դատավարական երաշխիք է վերադաս դատական ատյանների կողմից ստորադաս դատարանի թույլ տված հնարավոր դատական սխալները վերացնելու և դրա միջոցով դատական ակտի հարկադիր կատարման իրավաչափությունը, ինչպես նաև պարտապան չհանդիսացող անձի՝ տվյալ բնակարան-

նի կամ շինության նկատմամբ սեփականության իրավունքի դատական պաշտպանությունն ապահովելու համար:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությունը մերժելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումը և բողոքի քննությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կանոններով, քանի որ հիշյալ որոշումն իր քննությամբ ու իրավաբանական հետևանքներով նման է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին վարչական դատարանի դատական ակտերին:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի 07.07.2017 թվականի «Դիմումի քննությունը մերժելու մասին» որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր երաշխավորել կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննության վարույթի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի լիարժեք դատական պաշտպանությունը: Ընդ որում, Դատարանի 07.07.2017 թվականի «Դիմումի քննությունը մերժելու մասին» որոշման բողոքարկումը և բողոքի քննությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կանոններով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով Դատարանի 07.07.2017 թվականի «Դիմումի քննությունը մերժելու մասին» որոշման դեմ Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի վերաքննիչ բողոքի ընդունումը չէր կարող մերժվել այն հիմքով, որ բողոքարկված դատական ակտը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով: Հետևաբար Վերաքննիչ դատարանի 24.11.2017 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը ենթակա է վերացման, իսկ գործը պետք է ուղարկվի վերաքննիչ ստյան՝ նոր քննության: Գործի նոր քննության ժամանակ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը պարտավոր է նախ՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո լուծել Դատարանի 07.07.2017 թվականի «Դիմումի քննությունը մերժելու մասին» որոշման դեմ Դավիթ Սարիբեկյանի և Ռաֆայել Առաքելյանի վերաքննիչ բողոքի ընդունելիության հարցը: Այնուհետև, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունվելու դեպքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը պարտավոր է ըստ էության քննել այն ու կայացնել համապատասխան որոշում՝ հիմք ընդունելով կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապան չհանդիսացող անձին պատկանող բնակարան կամ շինություն մուտք գործելը թույլատրելու մասին հարկադիր կատարողի դիմումի քննությանը վերաբերող հասարակական հարաբերությունների նկատմամբ սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.11.2017 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ
Նախագահող դատավոր՝

ՎԳ/7711/05/17
ՎԳ/7711/05/17
Ք. Մկոյան

Վարչական գործ թիվ ՎԳ/7711/05/17
2019թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
- Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2019 թվականի փետրվարի 27-ին

քննելով ըստ հայցի Արմեն Նավոյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության ճանապարհային
ոստիկանության (այսուհետ՝ Ծառայություն) Ծառայությանը՝ Արմեն Նավոյանին վարչական
պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 1605532537 որոշումը վերացնելու մասին
որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչա-
կան վերաքննիչ դատարանի 11.12.2017 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու
մասին» որոշման դեմ Արմեն Նավոյանի ներկայացուցիչ Սևակ Գևորգյանի բերած վճռաբեկ
բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Արմեն Նավոյանը պահանջել է պարտավորեցնել Ծառայությանը
ընդունել որոշում՝ թիվ 1605532537 որոշումը վերացնելու մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) 10.08.2017 թվականի որոշմամբ
Արմեն Նավոյանի հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (դատավոր՝ Ա. Աբովյան) 06.10.2017 թվականի
որոշմամբ Արմեն Նավոյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և ՀՀ վարչական դատարանի

10.08.2017 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 10.11.2017 թվականի որոշմամբ Արմեն Նավոյանի կողմից ներկայացված «դիմումը» վերադարձվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.12.2017 թվականի որոշմամբ Դատարանի 10.11.2017 թվականի «Դիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ Արմեն Նավոյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Նավոյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը .

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ որևէ նորմ, որը դատարանին լիազորում է վերադարձնել հայցադիմումի ուղեկցական գրությունը՝ դիմումը, ուստի Դատարանը լիազորություն չի ունեցել վերադարձնել դիմումը: Ավելին, դիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ Դատարանը փորձել է հիմնավորել, որ հայցադիմումը ենթակա է վերադարձման, քանի որ բաց է թողնվել հայցադիմումը կրկին ներկայացնելու համար սահմանված ժամկետը: Այսինքն՝ Դատարանը, վերադարձնելով ներկայացված դիմումը, ըստ էության, վերադարձրել է կրկին ներկայացված հայցադիմումը, այլ ոչ՝ դիմումը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Դատարանը, իր կողմից կայացված ակտը վերնագրելով «Դիմումը վերադարձնելու մասին որոշում», անձին գրկել է այդ որոշումը բողոքարկելու իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 11.12.2017 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և դրա արդյունքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...) ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ աստիճանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին աստիճանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*պե 'u, Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգաբաժնով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վստահացվի այդ իրավունքի բուն էությունը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*պեն, օրինակ, Khalfou v. France գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետեր 35, 36, Papon v. France գործով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետ 90*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոք-

քարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (յրեն, նաև «Ֆասթ Սիլվայ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պեւրական եկամուտների կումիլրեի թիվ ՎԴՅ/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը):

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներում (յրե՛ս, ՄԴՈ-652, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-765, ՄԴՈ-844, ՄԴՈ-873, ՄԴՈ-890, ՄԴՈ-932, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1052, ՄԴՈ-1115, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1196, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1220, ՄԴՈ-1222, ՄԴՈ-1257, ՄԴՈ-1289) կարևորելով իրավակարգավորման մի շարք սկզբունքներ, նաև արձանագրել է, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների լույսի ներքո պետք է մեկնաբանվի նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 137-րդ հոդվածը: Մասնավորապես՝

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ կողմերն իրավունք ունեն նույն **օրենսգրքով նախատեսված դեպքերում** բողոքարկելու դատական ակտերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև **նույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ** վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն դատավարության մասնակիցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետևյալ միջանկյալ դատական ակտերը.

- 1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.
- 2) հայցադիմումը վերադարձնելու մասին.
- 3) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.

5) վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.

6) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.

7) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին.

8) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.

9) նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը.

10) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ նույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.

11) ինքնաբացարկի մասին դատական ակտերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101.2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական տուգանք կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի (...) որոշումը կարող է բողոքարկվել համապատասխանաբար վերաքննիչ (...) դատարան այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման:

Վերոգրյալ նորմերի համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ կողմերն անմիջական կարգով իրավունք ունեն բողոքարկելու միայն այն միջանկյալ դատական ակտերը, որոնց բողոքարկման հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է այն միջանկյալ դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Ընդ որում, նշված միջանկյալ դատական ակտերի շարքը սպառիչ է, ինչը նշանակում է, որ այն դատական ատերը, որոնք նախատեսված չեն այդ ցանկում, չեն կարող բողոքարկվել վերաքննության կարգով: Նշված շարքում նախատեսված չէ միայն դատական տուգանք կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը, սակայն դրա՝ վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101.2-րդ հոդվածի 3-րդ մասով:

Հարկ է նշել, որ բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի հստակ նախատեսումն ինքնանպատակ չէ. այն մի կողմից ապահովում է իրավական որոշակիության սկզբունքն այնքանով, որքանով դատավարության մասնակիցներին որոշակի է դառնում, թե որ միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով, իսկ մյուս կողմից նման սահմանափակումն ապահովում է դատավարության բնականոն ընթացքը, քանի որ հակառակ պարագայում յուրաքանչյուր միջանկյալ դատական ակտի բողոքարկման դեպքում դատավարության բնականոն ընթացքը կարող է խաթարվել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման սահմանափակումը հաղթահարելի է հետաձգված բողոքարկման կառուցակարգի միջոցով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներից մեկով նշել է, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել է վարչական արդարադա-

տության բնագավառում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները, (21.02.2007 թվականին ընդունված) ՀՀ դատական օրենսգրքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել է վարչական դատարանի և վարչական վերաքննիչ դատարանի կառուցվածքային առանձնահատկությունները և գործառության հատկանիշներն ու հնարավորությունները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է նաև ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկի՝ բողոքարկման իրավունքի իրականացման կարգը և պայմանները: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում օրենսդիրն ամրագրել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Բողոքարկումն այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկելու վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու մյուս հնարավորությունը «հետաձգված բողոքարկումն» է (տե՛ս, *Ասահիպ Եփրեմյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԳ/6478/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2015 թվականի որոշումը*):

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը, որի նպատակն արդարադատության պատշաճ իրականացման ապահովումն է: Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման անմիջական և հետաձգված կարգեր: Անմիջական բողոքարկման են ենթակա այն միջանկյալ դատական ակտերը, որոնց չբողոքարկման արդյունքում օբյեկտիվ արգելքներ են առաջանում գործի հետագա քննության համար, և կարող են հանգեցնել արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման: Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված միջանկյալ դատական ակտերի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101.2-րդ հոդվածով սահմանված դատական ակտի համար սահմանել է **անմիջական բողոքարկման կարգ**: Իսկ նշված դրույթներով չնախատեսված մնացած բոլոր միջանկյալ դատական ակտերի համար կարող է գործել «**հետաձգված բողոքարկման**» կարգը, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Հետևաբար այն պարագայում, երբ բողոքարկվել է այնպիսի միջանկյալ դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման և ընդգրկված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ցանկում կամ դրա համար ուղղակի բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ, վերաքննիչ դատարանն իրավասու է կայացնել որոշում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին:

Սույն գործով ՀՀ վարչական դատարանը 10.08.2017 թվականի որոշմամբ վերադարձրել է Արմեն Նավոյանի կողմից ներկայացված հայցադիմումը (**հատոր 1-ին, գ.թ. 18-19**):

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 06.10.2017 թվականի որոշմամբ Արմեն Նավոյանի վերաքննիչ բողոքը մերժել է և ՀՀ վարչական դատարանի 10.08.2017 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողել է անփոփոխ (**հատոր 1-ին, գ.թ. 61-65**):

Արմեն Նավոյանի ներկայացուցիչ Սևակ Գևորգյանը ուղեկցական դիմումով 01.11.2017

թվականին հայցադիմումը և կից փաստաթղթերը փոստային առաքմամբ կրկին ներկայացրել է ՀՀ վարչական դատարանը (**հատոր 2-րդ, գ.թ. 11**):

Դատարանը 10.11.2017 թվականի որոշմամբ, վկայակոչելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասը, վերադարձրել է Արմեն Նավոյանի կողմից կրկին ներկայացված հայցադիմումին կից ներկայացված **դիմումը**՝ պատճառաբանելով, որ «դիմումին կից հայցադիմումի օրինակը ներկայացվել է սահմանված տասնհինգօրյա ժամկետի խախտմամբ: Հետևաբար դիմումին կից ներկայացված հայցադիմումի օրինակը չի կարող համարվել կրկին ներկայացված հայցադիմում» (**հատոր 2-րդ, գ.թ. 12**):

Վերաքննիչ դատարանը 11.12.2017 թվականի որոշմամբ Դատարանի 10.11.2017 թվականի «Դիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ Արմեն Նավոյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է՝ պատճառաբանելով, որ Դատարանի «Դիմումը վերադարձնելու մասին» 10.11.2017 թվականի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ (**հատոր 2-րդ, գ.թ. 29-30**):

Վերոգրյալ իրավական դրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցադիմումն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, վարչական դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- 1) հայցադիմումը վարույթ ընդունելու մասին.
- 2) հայցադիմումը վերադարձնելու մասին.
- 3) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.
- 4) հայցադիմումը վերահասցեագրելու մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում, որը հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ետօրյա ժամկետում ուղարկում է հայցվորին: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և *միջանկյալ դատական* ակտերին ներկայացվող պահանջների, դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման, վճռի պարզաբանման վրա տարածվում են *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապարասիան կանոնները*, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն՝

- 1) դատարանի անվանումը, դատարանի կազմը, գործի համարը, որոշումը կայացնելու ամսաթիվը, վեճի առարկան.
- 2) գործին մասնակցող անձանց անունը (անվանումը).

3) հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվում.

4) շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ.

5) եզրահանգումը քննարկվող հարցով.

6) որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետը, եթե այն ենթակա է բողոքարկման:

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն՝

1) առաջին ատյանի դատարանի անվանումը, դատարանի կազմը, գործի համարը, որոշումը կայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, հայցի առարկան,

2) գործին մասնակցող անձանց անունը (անվանումը),

3) հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվում,

4) հիմնավորումները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ,

5) քննարկվող հարցի վերաբերյալ եզրահանգումը,

6) որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետը, եթե այն ենթակա է բողոքարկման, իսկ եթե որոշումը բողոքարկման ենթակա չէ, ապա նշում այդ մասին:

Վերոգրյալ նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ հայցադիմում ներկայացվելու պարագայում դատարանը լիազորված է կայացնել չորս բնույթի որոշում, այն է՝ հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերահասցեագրելու մասին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նշվածը վերաբերում է նաև կրկին ներկայացված հայցադիմումների դեպքերին: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի ձևակերպումից, որի բովանդակությունից բխում է, որ օրենսդիրը հայցադիմումը վերադարձնելու անհրաժեշտությունը պայմանավորել է դրանում որոշ թերությունների առկայությամբ, որոնք շտկելուց հետո հայցադիմումը կրկին կարող է ներկայացվել դատարան: Այսինքն՝ դատարանը նման պայմաններում նույնպես ստանում է հայցադիմում, որը կրկին է ներկայացվել թերությունները շտկելուց հետո: Նշվածից հետևում է, որ այն պարագայում, երբ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումից հետո հայցադիմումը կրկին է ներկայացվել, ապա այդ դեպքում ևս դատարանը լիազորված է կայացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Արմեն Նավոյանի կողմից ներկայացված հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի 10.08.2017 թվականի որոշմամբ վերադարձվել է: Նշված դատական ակտը բողոքարկվել է վերաքննության կարգով: Վերաքննության վարույթն ավարտվելուց հետո հայցադիմումն ուղեկցական դիմումով կրկին ներկայացվել է դատարան: Դատարանը, հիմնավորելով, որ հայցադիմումը չի կարող համարվել կրկին ներկայացված, քանի որ ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված տասնհինգօրյա ժամկետի խախտմամբ, վերադարձրել է ներկայացված **դիմումը**:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանն իր 10.11.2017 թվականի որոշմամբ անդրադարձել է Արմեն Նավոյանի կողմից ներկայացված հայցադիմումը կրկին ներկայացնելու հնարավորությանը, վերլուծություններ է կատարել հայցադի-

մումը կրկին ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետի վերաբերյալ, մինչդեռ որոշումը վերնագրել է «Դիմումը վերադարձնելու մասին» և վերադարձրել է Արմեն Նավոյանի կողմից ներկայացված դիմումը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ հայցադիմումը կրկին ներկայացվելու պարագայում դատարանն իրավագոր է կայացնել որոշում այն վարույթ ընդունելու, վերադարձնելու, ընդունումը մերժելու կամ վերահասցեագրելու վերաբերյալ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի կողմից կայացվող որոշումների էությունը կարող է բացահայտվել միայն դրա բովանդակության ուսումնասիրության արդյունքում: Մասնավորապես, հարկ է պարզել հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվել, շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, եզրահանգումը քննարկվող հարցի վերաբերյալ: Ընդ որում, օրենսդիրը որպես դատական ակտի բովանդակային տարր չի սահմանել տվյալ դատական ակտի վերտառությունը, հետևաբար դրա առկայությունը որևէ կերպ չի կարող պայմանավորել դատական ակտի էությունը:

Վերոգրյալը վերաբերում է նաև նշված ակտերի բողոքարկման հնարավորությունը որոշելուն: Այլ կերպ ասած՝ դատական ակտի բողոքարկման հնարավորությունը և ըստ այդմ, ի թիվս այնի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների ցանկով նախատեսված լինելու հանգամանքը նույնպես պետք է բացահայտվի՝ ելնելով այդ որոշման ամբողջությունից և ելակետային հիմք ընդունելով որոշման բովանդակությունը:

Վճռաբեկ դատարանը Դատարանի «Դիմումը վերադարձնելու մասին» որոշման բովանդակության ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ Դատարանը, ըստ էության, վերադարձրել է ուղեկցական դիմումով կրկին ներկայացված հայցադիմումը: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Դատարանը որոշման պատճառաբանական մասում անդրադարձել է Արմեն Նավոյանի կողմից ներկայացված հայցադիմումը կրկին ներկայացնելու հնարավորությանը, վերլուծություններ է կատարել հայցադիմումը կրկին ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետի վերաբերյալ: Հետևաբար նշված որոշումը ենթակա է բողոքարկման՝ որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դատական ակտ:

Նման պայմաններում Դատարանի «Դիմումը վերադարձնելու մասին» 10.11.2017 թվականի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու հիմքով վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելով՝ Վերաքննիչ դատարանը կիրառել է սահմանափակում, որը կրում է խիստ ձևական բնույթ և որով խախտվել է ողջամիտ հարաբերակցությունը ձեռնարկվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև, ինչը խաթարում է ՀՀ Սահմանադրությանը և Կոնվենցիայով երաշխավորված անձի՝ դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.12.2017 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

ՀՈՒՆՎԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

ՀԱՏՈՐ XIII

Տպագրված է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում
(Time to Print օպերատիվ տպագրության սրահ)

ՀՀ, ք. Երևան 0001, Խանջյան 15/55
Հեռ.՝ (+374) 10 547 656, 11 547 656, 99 547 656
Էլ. փոստ՝ info@task.am